Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

**Правила пользования**

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

**О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

Digitized by Google

OL 45421.56.5 (2)

Harvard College Library

FROM THE BEQUEST OF

JAMES WALKER, D.D., LL.D.

(Class of 1814)

FORMER PRESIDENT OF HARVARD COLLEGE

"Preference being given to works in the Intellectual and Moral Sciences."

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

# ՆԱԽՆԵԱՑ

---

## ՈՍԿԵԲԵՐԱՆ

Digitized by Google

Digitized by Google

# ՅՈՎՀԱՆՆՈՒ

## ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

### ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

## ԹՂԹՈՑՆ ՊԱՒՂՈՍԻ

---

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

---

*ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՄԱՅԵՑՒՈՑ, ՀԱՏԱԾՔ,*
*ՃԱՌՔ ԵՐԿԲԱՅԱԿԱՆՔ*



*Ի ՎԵՆԵՏԻԿ*

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1862 ՌՅԺԱ

Digitized by Google

OL 45421.16.5 (2)

~~IV. 10064~~

~~43571.33~~ ✓

HARVARD COLLEGE
OCT 31 1901
LIBRARY

Walker fund

John Chrysostom
on Epistles of Paul

HARVARD
UNIVERSITY
LIBRARY
FEB 25 1970

Digitized by Google

# ՅՈՎՀԱՆՆՈՒ

## ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

### ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ

### Ի ԹՈՒՂԹՍՆ ՊԱՒՂՈՍԻ

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՑ

## ՃԱՌ ՀԻՆԳԵՐՈՐԴ

. . . . . . . . . . . . . . . . [1]

պատասխանանի տուեալ լինին ,, ։ Արդ յետ այսր ամենայնի ամբաս-նութք զանօրէնութիւն և բազմապատիկ ապարաք, բերել այլ չարիս գործեցաք ։ Արդ զի՞նչ փոխանակ այսորիկ հատուցց մեզ ։ Ոչ մեղադրելոյ տանջելոյ առ մեզ և ոչ հրեշտակս և ոչ հալածելոյ, այլ զնոյն ինքն զորդին միածին ։ Մարմնաւ-ւոր եկն. տանջանք և ոչ այսպէս զինչ զբարութեանն ետես, այլ և ի մեծագոյն վաստակ, և կայ մնալ նոյնպէս աղա-չելով զմեզ յետ որդւոյն ապաշխարհն, և աղաչէ և զամե-նայն ինչ առնէ վասն առ իւր դարձուցանելոյ զմեզ ։ Արդ զայս Պաւղոս զուշէ ասելովն. "Վասն "Որ լինի ... բարե-խաւսեցի ... ի կեանս աղաչել մեզ, հաշտեցարուք ընդ նմա ,, ։ Եւ ոչ ինչ յաղթահարեցաւ զմեզ հաշտեցուցց ։ Իսկ նա և ոչ այսպէս եթող զմեզ ի ձեռաց, այլ կայ մնայ զգեհենին սպառնալով և զարքայութիւնն աւետարանե-լով, զի զանձն այսպէս ձգեսցէ զմեզ առ ինքն. իսկ մեք նոյնպէս կացաք մնացաք անհաւանք ։ Զինչ չար քան

1 [illegible]

զայնպիսի գաղափարութիւն կայցէ. զի եթէ մարդոյ ու-րուք գործեալ էր զայսպիսի ինչ երախտիս առ մեզ, բա-զում անգամ կամիցաք լինել նորա ծառայք. իսկ որ այս-չափ երախտիս արար, 'ի բաց դառնամք և չհաւանիմք։ Ո՜ ծուլութեանս, ո՜ տխրութեանս, որ հանապազ 'ի չարիս և 'ի մեղս կամք։

Եթէ դէպ լիցի փոքր բարի ինչ գործիցեմք, որ-պէս ապախտաւոր ծառայք, խնդրեմք փոխարէնս վար-ձուցն այսրէն, թէպէտ և ունիցիմք զվարձս յանձնել ըղ-բարին, որ են իսկ մեծ վարձք թէ յաջող գործիցես։ Իսկ որ զսուրբն հակառակն առնիցէ և հաւատարիս պա-հանջիցէ յայնցանէ որ առնիցէ՝ նորա վարձքն բանքն իւր իսկ են որպէս և ապաշնորհ ծառայիցն։ Մեզ պարտ և պատշաճ է զամենայն ինչ վասն Քրիստոսի առնել, և ոչ վասն վարձուց ինչ, այլ վասն նորա միայն։ Արդէն վասն գեհեն սպառնացաւ և արքայութիւն աւետարա-նեցաւ, որպէս զի սիրեսցի 'ի մէնջ. և սիրեսցուք զնա որպէս պարտն է սիրել։ Քանզի այս են մեծ վարձք, սա քան զթագաւորութիւն եւս հեշտութիւն է, սա ինքն է սուրբ փափկութիւն և փառք և պատիւ, սոյն ինքն է լոյս և բազում երանութիւն զոր ոչ կարէ բան յանդի-մանս կացուցանել և ոչ միտք հասու լինել։

Բայց ոչ գիտեմ եթէ ուստի եկի յայսպիսի բանս. մարդիկ որ ոչ զիշխանութիւն և զփառս զայժմու ժամա-նակեայս կարեն արհամարհել, վասն Քրիստոսի զար-քայութիւնն հրամայեմ արհամարհել. բայց սակայն մեծամեծ և սքանչելի մարդիկն այնոքիկ և յայսպիսի սիրոյ 'ի չափս հասին։ Լուր որպէս Պետրոսն բոցաւորի-զեր սիրով նորա; զի և քան զանձն և քան զկեանս և քան զամենայն ինչ զնա նախամեծար համարէր. և յու-ժամ ուրացաւն, ոչ եթէ վասն գեհենին ողբայր, այլ զի զփափագելին իւր ուրացաւ, և քան զամենայն գե-հենս նմա այն դառն և դժնեայ էր։ Եւ զայս յառաջ 'քան զհոգւոյն շնորհսն ցուցանէր, և յանկ հանապազ տռամա էր և չառնէր ժոյժ և ասէր. "Ո՞ւր երթայցես". և յառաջ քան զայս՝ թէ "առ ո՞ երթիցուք". և գար-ձեալ "թէ հետևեցայց քեզ ուր և երթայցես"։ Քանզի զամենայն ընդ ամենայնի նա էր նոցա, և ոչ զերկինս և ոչ զերկնից արքայութիւն նախապատուագոյն համա-

Digitized by Google

րեցին. և ասէին՝ թէ ընդ այնր ամենայնի դու ես մեր: Այլ դու զարմանաս թէ Պետրոս այնպէս սիրէր, ուր և մարգարէն ասէր. « Ո՜րինչ կայ իմ բնաւ յերկինս, և կամ յերկրի զի՞նչ կամեցայ ՚ի քէն »: Այլ զոր ասէն այսպիսի ինչ է. ոչ զվերինս և ոչ զներքինս և ոչ այլ ինչ իմիք, այլ բայց միայն քեզ եմ ցանկացեալ: Այս է հաճոյական սէր: Եթէ այսպէս սիրիցեմք, ապա ոչ միայն զառժամանակեանս, այլ և ոչ զհանդերձեալսն ինչ ինչ վարկանիցիմք առ սիրովն նորա, և զարքայութիւն ինչ այսպէս շահիմք փափկանալով սիրովն նորա:

Այլ զիա՞րդ, ասէ, զուցէ այսմ հնար լինել: Եթէ զմտաւ ածիցեմք եթէ որքան թշնամանեցաք զնա յետ բիւր բարութեանցն, և նա կայ և աղաչէ զմեզ. քանիցս անգամ զանց առնեմք զնովաւ, և նա ոչ առնէ զմեզ անտես, այլ զհետ մտեալ գիրկս արկանէ և յինքն ամփոփէ: Եթէ զայս ամենայն զմտաւ ածեալ խորհիցեմք, կարեմք վառել ՚ի մեզ զխափանումն սիրոյ նորա: Ո՛ր թէ ոք մարդ արհամարհեալ իցէ և այր թագաւոր զնա սիրիցէ, չհամարի ինչ այլ մեծ և հեշտական սէր քան զայն: Իսկ յորժամ տէրն հակառակն է և անասելի և անճառելի գեղեցկութիւն այն և փառք և մեծութիւն այնր որ զմեզ սիրեաց, և մեր բազում անգամ արհամարհեալ, զիա՞րդ ոչ իցեմք բիւր տանջանաց արժանիք, յորժամ այսպիսի արհամարհեալ և անարգք՝ յագնայիալ մեծէ և ՚ի սքանչելեաց սիրիցեմք բազում առաւելութեամբ, և այսպանեմք զսիրովն նորա: Ոչ ինչ է կարօտ մերոցս, և ոչ այսպէս դադարէ ՚ի հաճոյական սիրոյն զոր առ մեզն ունի. իսկ մեք յոյժ կարօտ եմք նորայովքըն, և ոչ այսպէս հարկանեմք բուռն զսիրոյ նորա, այլ զինչս նախամեծար համարիմք քան զնա և զմարդկայինս զհաճոյսն և զմարմնոյ հեշտութիւնս և զզօրութիւնս և զփառս. իսկ նա ոչ ինչ նախ քան զմեզ նախամեծար համարեցաւ: Ո՛ր որդի ունէր միածին և սերտ, և ոչ յոյն խնայեաց վասն մեր. իսկ մեք այլ ինչ բազում նախապատուեմք քան զնա: Նա սորեմն յերաւորապանացեալ է մեզ գեհեն, ոչ միայն մի, այլ և երկու և երեք և բիւրք չեն բաւական առ այս: Ո՜րինչ ունիմք ասել յորժամ զսատանայի զհրամանսն նախամեծար համարիմք քան զՔրիստոսի զօրէնսն և փրկութեան մե-

րեց ոչ խնայեսցէ, որ նախապատուեսցուք զպարգեւս շնորհա-
թեն քան զայն որ զնոյն ինչ վասն մեր յանձին կրեաց։

Այլ արդ կայցուք 'ի համապատուութեան, որ մեզ պահա-
պէտք լիցուք. առ 'ի զայս ամենայն զինուս առնելով, փութա-
առաջնորդեսցուք նմա 'ի ձեռն գործոցն բարեաց, որ չեղեք
բաւական մեզոյն բանիւք փառաւորել. որպէս զի վայելչ-
լեսցուք 'ի փառսն որ առ 'ի նմանէն։ Որոց լիցի մեզ ա-
մենեցուն հասանել շնորհօք եւ մարդասիրութեամբ տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում փառք Հօր հան-
դերձ Հոգւովն սրբով այժմ եւ յաւիտեանս. ամէն։

# ՃԱՌ ՎԵՑԵՐՈՐԴ

«Ապա եթէ դու Հրեայ անուանեալ ես եւ յենեալ ես յօրէնսն եւ պարծիս յԱծ եւ գիտես զկամս նորա եւ ընտրես զլաւն եւ խրատեալ ես յօրինացն»։

Յորոց եթէ չէր ինչ նուազ հեթանոսն առ 'ի յառաջե-լոյ որպէս զի զօրէնս կատարել. եւ պարծեցեալ համարձա-կութիւնն տարեալ, զնէ առաջ այսու հրեան եւ զմեծարելոյն եթէ զօրավիճի միայն ունելին առ հեթանոսս։ Եւ յայտ արարեալ էր անուն նորա, որպէս եւ այժմ քրիստոնեայս. քանզի 'ի կոչմանէն էր բազում զանազանութիւն եւ յայն-ժամ. ուստի եւ աստ խոկ առնէ սկիզբն եւ զխոնարհեցուցանէ զնոսա։ Եւ չասէ թէ Հրեայ ես, այլ թէ «անուանեալ ես եւ պարծիս յԱծ». այս ինչ է, եթէ սիրեցար 'ի նմա-նէ, եւ յառաջ քան զայլ մարդիկ պատուեցար։ Ապա-նօր թուի ինձ թէ 'ի բաց ընկենոյ զնոցա զամբարտա-ւանութիւն եւ զփառացն զմոլութիւն. որոց ընկալեալ զփրկութեանն զօրէնսն՝ զանց առնէին զնոքօք, եւ ոչ 'ի լոսւ անձինն արկեին զնա 'ի կեր. որոյն վասն ասէ՝ թէ «Գի-տես զկամս նորա եւ ընտրեալ ես զլաւն»։ Սակայն եւ այս առանց գործոց նուազեալ գտանի, վասն որոյ եւ հա-ւատեալ խոկ զնէ զայս. քանզի չասաց եթէ գործես, այլ եթէ գիտես եւ ընտրես, եւ ոչ եթէ վարիս նոքօք եւ առնես։

«Յուսացեալ ես 'ի քեզ»։ Պարծեցեալ առս չարաց

եթէ առաջնորդ կուրաց լինիս, այլ եթէ վստահ ես 'ի քեզ. այսպէս, ասէ, մեծամտես: Այս վասն զի բազում էին ամբարտաւանութիւնք Հրէիցն և անզգամութիւնք, առաւել վասն յանձնառու լինելոյ բանս բարբառի Պաւղոս, զոր նոքայն ամբարտաւանութեամբն ասէին: Այլ արդ տես յաւելուածովին զիարդ ասէ նոցին՝ եթէ "Իմաստնագոյն իսկ դու 'ի մէջ ծնեալ ես, և դու զնոյն ուսուցանես". այսպէս մեծամտեալն առ ամենեսեան զոր Պաւղոս յանդիմանեալ կշտամբէ, զառաջ մերկացուցեալ զնոցա զամբարտաւանութիւնն 'ի բաց մերժէ. մանաւանդ թէ այսու իսկ զկծեցուցանէ զնոսա, և եւս ծանրագոյն գործէր զմեղադրութիւն նոցա:

"Վստահ ես, ասէ, 'ի քեզ առաջնորդ լինել կուրաց, լոյս որք 'ի խաւարի են, խրատիչ անմտաց, ուսուցիչ տղայոց, ունել զկերպարանս գիտութեան և ճշմարտութեան յօրէնս": Տե՛ս որ ինչ առ Հեթանոսն՝ ըստ այնմ և աստ գործէ. քանզի անդ ասաց. "արդ դատաւոր դու զընկերն՝ զքեզ ինքն դատապարտես". զնոյն և աստ ասէ՝ թէ "Որ ուսուցանես զընկերն, զքեզ ինքն ոչ ուսուցանես": Այս անդ խստագոյն բարբառի, իսկ աստ մեղմով և հանդարտութեամբ 'ի կիր արկանէ զբանն: Որպէս վասն չարաց եթէ մեծ տանջանաց արժանի ես դու, որ այսպիսի ինչ քեզ ընծայեցուցեր, և ոչ 'ի լաւ անձն վարեցար. որպէս 'ի հարցմանն 'ի դէմս յառաջ մատուցանէ զբանն, ասէ. "Որ ուսուցանես զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես": Հայեաց յիմաստութիւն Պաւղոսի. քանզի զառաւելութիւն Հրէիցն յայտ առնել կամէր, զամբաստան ածեալ եղեալ՝ եթէ ոչ յանձանց ինչ փութացեր այն, այլ 'ի վերին պարգևացն. եթէ ծուլացեալ ինչ, ասէ, 'ի բաց բառնայ 'ի քէն. և ոչ օգտէ միայն, այլ և յաւելուած եւս տանջանաց ընծայեցուցանէ: Վասն զի ոչ եթէ Հրէայն անուամբ կոչեցեալ և կալ 'ի գըրեանն ընդունելոյ և ոչ այնոքիւն ամբարտաւանեսցէ զոր այժմ թուեցոյց՝ եղև նոցա օգուտ, այլ 'ի վերին պարգևացն: Այս տակաւին 'ի սկզբանն այսպէս ասէր՝ եթէ չէր ինչ օգուտ 'ի բնութեան զօրէնսն, եթէ գործք չիցեն մերձ. "Օ՛ն ոչ եթէ լսելիքն օրինացն արդարասցին, ասէ, առաջի Այ": Իսկ այժմ բազում ինչ մանաւանդ յաւելանէ՝ եթէ ոչ լսելիքն օրինացն միայն, այլ և որ եւս

առաւել է քան զլուծումն, այսինքն վարդապետութիւնն. եթէ չէ ինչ անշնորհակ եթէ ոչ գործիցէ զոր ուսուցանէն. և ոչ այսչափ միայն, այլ և առաւել ևս:

Այլ բարւոք 'ի կիր արկ զբանն. և չասաց եթէ ընկալար զօրէնսն, այլ եթէ յանգուցեալ ես յօրէնսն: Վասն զի ոչ ինչ աշխատեցաւ և վաստակեաց հրէայն 'ի խնդիրս և յելս և 'ի գործս օրինացն, այլ դիւրութեամբ յայտնէր նոցա զճանապարհն որ յառաքինութիւնն տանէր: Նոյն ասկայն և հեթանոսն ունէր զբնութեանն օրէնսն մտացն, որով յայտնէ իսկ զնոսա եթէ առանց օրինացն լինելոյ գործեցին զամենայն. բայց ասկայն անդ բազում դիւրութիւն: Նա՝ եթէ ասիցես՝ ոչ լսել միայն, այլ ուսուցանել բազ օրինացն, և այս քեզ և մեզ յաւելուած տանջանաց գտանի: Այլ զի այստու մեծամտէին, ամենայն իսկ եցոյց եթէ արժանի են ծաղր լինելոյ: Զորժամ ասիցէ՝ թէ "Առաջնորդ կուրաց, խրատիչ անզգամաց, վարդապետ տղայոց", զնոցա զամբարտաւանութիւնն ասէ. վասն զի յոյժ 'ի կիր արկանէին զիւրեանց զհպարտութիւնն առ եկամուտսն յայս անուանց. սաստիկ գայթին իսկ 'ի մեծամտութիւն: Վասն որոյ և յանձնակն իսկ որ թուէին թէ գովանք ինչ իցեն նոցա, զայսոս մեղան, ասէ. և ցուցանէ թէ մեծ մեղադրութեան պատճառք են ասացեալքս: "Ունիս զկերպարանս գիտութեան յօրէնսն": Զոր օրինակ եթէ որ զպատկեր թագաւորական ունիցի, ոչ այլ ինչ գրէ և կերպարանէ, այլ որ ինչ նմանն հաւատացաւ. և նմանապէս եթէ առանց օրինակի իսկ կարէ 'ի նմանութիւն թագաւորութեան ածել:

Նոյն յորժամ ասաց զառաւելութիւն հրէիցն թէ որպէս պատուեցան առ 'ի յԱյ, ճառէ և վասն անօրէնութեանն նոցա, զոր և մարգարէքն առ մեղադրութեն 'ի մէջ բերէին: "Որ ուսուցանես, ասէ, զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես. որ քարոզես չգողանալ, գողանաս. որ ասես ոչ շնալ, շնաս. որ գարշիս 'ի կռոցն, սեղանակողոպտես գտար": Այլ քանզի յոյժ իսկ գարշելի և պիղծ էին ինչքն որ կռոցն առաջի դնէին, բայց ասկայն ընչասիրութեան բռնաւորութիւն, ասէ, հաւանեցոյց զձեզ և զայս ևս օրէնս առ ոտն հարկանել: Նա և զևս ծանրագոյն դնի. "Որ օրինօքն պարծիս, ասէ, յան-

Digitized by Google

ցանկալի պարգևացն զԱ՛ծ անարգես ,,։ Անխնայ մեղադրու-Թիւնս զնէ, մանաւանդ Թէ երեք խակ իցեն. զի անար-գեցին ևեԹ որով պատուեցան, և եԹէ որ զնոսայն պա-տուեաց՝ զնա անարգեցին, որ է մեծին անարգուԹեան ապերախտուԹիւն։

Նոյն զի մի կարծիցի եԹէ չարախօսէ ինչ զնոցանէ, զմարգարէն եցոյց եԹէ մեղադրիչ է զնոցանէ. այժմ փոքր մի փուԹով լալ իրբև զլալս ինչ առնէ իրացն, իսկ առաջ 'ի մէջոյ բազում ինչ Տեառն. այժմ զԵսայի մարգարէ, և յետ սորա զԴաւիԹ 'ի մէջ ածէ և այլ ևս բազում վկայս։ Ո ի մի կարծիցես, ասէ, Թէ ես ինչ չարախօսեցի զՆեզն զայս ասելով, այլ լուր զինչ ասէ Դաւիթ, Թէ "Անուն Այ վասն ձեր հայհոյի 'ի հե-Թանոսս,,։ Նշանակէ այլ կրկին մեղադրուԹիւն. քանզի ոչ, ասէ, ինքեանք միայն Թշնամանեն զԱծ, այլ և զայլս ևս 'ի նոյնս յորդորեն։ Ոչինչ օգուտ 'ի վարդա-պետուԹենէն իցէ յորժամ զինքեանս չուսուցանեմք։ Ի սկզբանն զայս միայն ասաց, իսկ աստ 'ի հակառակս շրջե-ցեալ զբանն. ասէ՝ ոչ զմեզ ինքեանս և ոչ զայլ զոր ու-սուցանեմք գործել ինչ բաց օրինացն. և որ ևս դժնդակն է. զի ոչ եԹէ միայն չուսուցանեմք գործել բաց օրի-նացն, այլ որ ինչ սմին հակառակն է՝ հայհոյել զԱ՛ծ զոր օրէնքն ոչ հրամայեն։

Այլ ԹլփատուԹիւն մեծ է, ասեն. և ես խոստովա-նիմ. այլ յայնժամ, յորժամ ունիցի և զներքինն Թլ-փատուԹիւն յինքեան։ Իսկ աստ զաւ տես զգուշելական զիմաստուԹիւնն Թէ որպէս 'ի դէպ ժամանակի սկսանի սկիզբն առնէ Տեառն վասն սորին։ Վասնզի ոչ եԹէ անդէն 'ի սկզբանն անկանի առաջի մարդկան և Տեառն. Այս էր վասն չհանդիպելոյ զայս. վասն զի բազում և առաւել էր պա-տուհասանելին այնորիկ. այլ յորժամ յաղԹեաց և եցոյց ԵԹէ ընդդիմակացք են օրինացն և հայհոյիչք են Այ, յայնժամ ապա առնել զկարգն սորասանելով զնոսա յինքն նուաճէ, և մերկացուցեալ զնախապատուուԹիւն նոցին և ապա մինչ 'ի ներքս և Տեառն՝ Թէ չեն ինչ հա-շուեալ այնուհետև ԹլփատուԹիւնն. և համարձակեալ զնէ զայս ասացեալ՝ Թէ "ԹլփատուԹիւն օգնէ, ասէ, եԹէ զօրէնս գործեսցես,,։ Ո ի մարԹ էր նմա և ապացոյցս հանել զնա արտաքս, և առնել ապացոյց՝ Թէ

Digitized by Google

զինչ է Թլփատութիւն, մինչ է ուղղութիւն ինչ էոյն ա-
նօրէնացն իւրոց և կամ բարւոյ յօժարութեան ցուցիչ,
քանզի և ունելով Հաւատի լինի: Նա և յանապատին
իսկ բաղդումն ժամանակս փոփոխելեան կացին անթլ-
փատք. և այլուստ ևս բաղդումն անգամ զայնս է զտա-
նել թէ չէ ինչ յայժ կարևոր: Բայց ասկայնս ոչ եթէ
ասա ինչ Հանէ զնոսա արտաքս, այլ ուստի սպասումն է՝
յԱբրահամէ, քանզի զառաւելութիւն իւրոյ յաղթու-
թեանն այսու եցոյց որ նոցա նշանաւոր Հայրապետն էր:
Այլ մանաւանդ եթէ կարող իսկ էր տալ և զայս՝ թէ
և մարգարէքն զնոյն անթլփատս կոչէին: Նա այս ոչ
եթէ Թլփատութեան ինչ մեղադրութիւն է, այլ որք
ոչ ՚ի պէտսն վարէին նովաւ:

Այլ և զոր խնդրէին ցուցանել այս ինչ է, թէ ՚ի
պէտս առաքինի վարուց և ոչ մի ինչ զօրութիւն ունի
Թլփատութիւնն. և ապա կազմէ մեզ և զնէ: Նա ոչ ասէ
զՀայրապետն այժմ ՚ի մէջ, այլ նախ այլ ուստեք յայտնի
առնէ և ապա զնին զնա բերէ. Բայց յորժամ վասն
Հաւատոցն ձգաէ զբանն, այսպէս ասէ՝ թէ "զինչ գտ Հա-
յրապետն Աբրահամ, Թլփատութեամբն թէ անթլ-
փատութեամբ,,: Նա յորժամ առ Հեթանոսս և ան-
Թլփատս ճառեաց, չառնելով ինչ այսպիսի, զի մի յայժ
ծանրաբեռնի արասցէ զլսողսն: Իսկ յորժամ ընդ Հա-
ւատոյն կռուիցի, յայնժամ մեծ վասն ընդդէմ: Նա
վասն զի նոքա ընդ անթլփատսն կռուէին, սորին վասն
ապա և աս յայժ զբանս ՚ի նոյնս մածանէ և այսպէս ա-
սէ՝ թէ "Թլփատութիւն օգնէ թէ զօրէնսն գործի-
ցես. ապա եթէ սա օրէնսն յանցաւոր իցես, Թլփա-
տութիւնն քո անթլփատութիւն եղև,,:

Երկուս անթլփատութիւնս ցուցանէ աստ, և եր-
կուս Թլփատութիւնս, զոր օրինակ և երկուս օրէնս.
քանզի գոն օրէնք և բնականք, է և գրով. այլ և ՚ի մէջ
սոցին այն՝ որ գործովքն լինի: Մեծ ծայպէս զերիս եցոյց
զսոսա, ՚ի մէջ ասէ. "Քանզի յորժամ, ասէ, Հեթա-
նոսք որ զօրէնս ոչ ունին,,: Ո՞ր օրէնս, ասա ինձ:
Ոչ զգրովն. "բնութեամբ զօրինացն գործեսցեն,, ասէ:
Ո՞ր. որ գործովքն են: "Նոքա որ զօրէնսն ոչ ունին,,
և տաճեն ըստ օրինացն ինքեանք իսկ: Որպէս. քանզի
բնութեամբ օրինացն վարին; "Նոքա ցուցանեն զգործս

օրինացն ,, ։ Օրինաց նորինաց . որ 'ի ձեռանց գործոց ։ Վասն զի այն օրէնքն , ասէ , արդարացեալք են որ զգործն առնեն . Իսկ այն նախադասեալ է որ ըստ բնութեանն , եւ միւսն ըստ գործոցն ։ Այլ զնա որ զգործն են չհամաձայնքն ինչ այսպիսիք որ ըստ բնութեան օրէնքս են ։ Նոյն յայտ է թէ երկրորդ իսկ կարգաւոր օրէնքն են , թէպէտ եւ այնք երկու իցեն՝ զգործն եւ ըստ բնութեանն ։ Այլ որ ըստ գործոց օրէնքն են ոչ կամն 'ի միտս , ոչ ինչ մեծարեն , այլ եւ [illegible] եւ մեծ գործեն ։ Այլ զայն զոր անուանէ , եւ զհոգւոյն բնութեանն ։ Այլ զայս ինքն իսկ երբեք յայտնեաց 'ի բնականսն . այսպէս ասէ՝ թէ " Ամենայն զ[illegible] զգեցեալք , զորս ինքն զ[illegible] ,, . իսկ որ զգործ օրէնքն են , " Որ ըստ բնական չ[illegible] ,, ։

Այսպէս եւ թլփատութիւն երկու՝ մին 'ի բնութենէ , իսկ միւսն 'ի գործոց , մին մարմնով եւ միւսն յօժարութեանն ։ Նայեցեալ ինչ է զոր ասէ . թլփատութիւն որ [illegible] , այս մարմնոյ թլփատութիւն . գործոց որ ըստ օրինացն գործ , այս է սրտի մտաց թլփատութիւն ։ Ըստ այսմ եւ Պաւղոս խօսեցաւ , մնացեալ թէ ըստ այսմ եւ օրէնքն իսկ ։ Տես այժմ զիարդ թարգմանէ եւ [illegible] ։ Վասն զի չասաց թէ [illegible] է թլփատութիւնն , ընդդիմանայն է թլփատութիւնն , [illegible] է թլփատութիւնն . այլ զինչ . " Թլփատութիւն օգնէ , եթէ ըստ օրինացն գործիցես ,, ։ Մարթեցաւ թէպէտ եւ յանձին [illegible] թէ խոստացեալ եւ չ[illegible] նել եւ առնել թէ ըստ է թլփատութիւն , այլ [illegible] , յարժամ եւ զօրինացն ապահովութիւն [illegible] ։

" Իսկ արդ եթէ յանցաւոր առ օրէնսն գտանիցիս , թլփատութիւն քո անթլփատութիւն եղեւ ,, ։ Այլ զի մի կարծիցէ եթէ թշնամանէ ինչ զնա , այլ յարժամ մերկացուցանէ զնա 'ի [illegible] , յայնժամ ասէ 'ի բաց մերժէ . եւ ոչ եթէ թլփատութեանն է թշնամանք , այլ որք ծուլութեամբն [illegible] զնա կորուսին ։ Օր օրինակ որք 'ի [illegible] եւ թէ յանկարծ որ 'ի նոցանէ 'ի յանցանաց ըմբռնեսցի , եւ [illegible] նախ 'ի բաց բառնայցէ 'ի նմանէ եւ [illegible] , այսպէս եւ Պաւղոս արար ։ Վասնզի ասաց " յանցաւոր առ օրէնսն գտանիցիս ,, . եւ [illegible] " թլփատութիւն քո անթլփատութիւն եղեւ ,, ։ Այլ յարժամ եցոյց թէ

անթլփատն՝ զատոյ հրէայն, յայտնեալ ասէ առանձինն ա-ռնելոյն հաստատութեամբ. «Արդ յորժամ, ասէ, թլփատութիւն զարդարութիւն օրինացն պահիցէ, ոչ ապաքէն անթլփատութիւն նորա ՚ի թլփատութիւն փո-խի»։ Տես զինչ գործէ. չասէ թէ անթլփատութիւնն թլփատութեանն յաղթէ, վասն զի յոյժ ծանր թուէր այս լսողացն. այլ թէ թլփատուն քան անթլփատուն նուազէ.

Արդ և ՚ի խնդիր իսկ արկանէ թէ զինչ թլփատու-թիւն ինչ է, և կամ զինչ անթլփատութիւն. և ասէ՝ թէ թլփատութիւնք գործք են բարիք, և անթլփա-տութիւնն գործք են չարիք. Այլ զառաջինն փոխէ զան-թլփատութիւնն ՚ի թլփատութիւն. և այսպիսի ընդ-դիմադրութեամբք ցուցցէ զգործս անթլփատիցն պի-տանի, և թլփատելոցն թէ յապականելի վարս են. և ապա այսպէս մեղաց ընկերաց զնոսա յանթլփատութի-ւնսն և զյաղթութիւն իսկ տայ անթլփատութեանն. Այլ չասաց թէ անթլփատին, այլ յիրաւ փոխի այսպէս ասելով. «Ոչ ապաքէն անթլփատութիւն նորա ՚ի թլ-փատութիւն համարեսցի». որ և լաւագոյնն էր, զայս եղ. Այսպէս և վերագոյն իսկ չասաց թէ թլփատութիւն քան անթլփատութիւն համարի, այլ թէ եղև։

«Այլ դատի որ ՚ի բնէ անթլփատն էր»։ Տեսանես զի երկուս անթլփատութիւնս դնէ, զմին ՚ի բնութենէ և զմիւսն ՚ի յօժարութենէ. սա այժմ զբնութեանն զեա դնէ, և չյաւէ ՚ի գործս, այլ ձեռնտու առ օրէնսն կա-տարել. «Զքեզ որ գրով և թլփատութեամբ յան-ցաւոր ես օրինացն»։ Տես վերագոյն զիմաստս նորա. չասաց թէ որ ՚ի բնէ անթլփատն էր՝ զթլփատութիւնն դատի. քանզի խիստ էր յաղթութիւնն զոր անթլփա-տութեանն ետ. ոչ զի զթլփատութիւնն պարտեալ ցու-ցանիցէ, այլ զնոյն իսկ զՀրեայն որ զնա ունէր՝ խնայելով, զի մի ՚ի ձեռն բանիցն կարծեցէք լսողացն։ Այլ չասաց՝ եթէ քեզ որ զօրէնս ունիս և զթլ-փատութիւնն, այլ մանաւանդ և մեղմագոյն. «Զքեզ ասէ, որ գրով և թլփատութեամբ զանց յանցաւոր օրինացն». այսինքն է թէ լաւ է անթլփատութիւն քան զայսպիսի թլփատութիւն, քանզի արդար է և օգնէ, և առ օրէնսն եկաց, և երևելի[1] նշան կատարէ։ «Ոչ ան-

1 Ցորենակէն ՚ի գրոց․ երգան լուսա յուսովն։

զի և յաղթութիւնն յայնժամ լինի՛ զօրացեալ, յորժամ ոչ հերքեալ 'ի հրէէ, այլ յանթլփատութենէ յաղթի. զոր օրինակ յորժամ ասիցէ "Ո՞րք նմանեցայք յարե-ցեն և դատապարտեսցեն զձեզ զայս": Ապա ուրեմն ոչ եթէ զօրէնսն 'ի բաց լինել մերժէ, զոր և ընդունելին իսկ, այլ զայնոսիկ որ զօրէնսն թշնամանեցին:

Ապա այսուհետև յորժամ կարգեաց զայս և յար-դարեաց, համարձակեալ ճառէ թէ զինչ իցէ հրեայն. և ցուցանէ ոչ եթէ զհրեայն կամ զթլփատութիւնն, այլ եթէ զոչ հրեայն և զանթլփատն հանէ: Եւ թուի թէ օգնական ինչ լինի նմա, այլ 'ի բաց լուծանէ զպա-տիւն աստուածգիտութեանն զոր 'ի հանդէր և 'ի մէջն բերելոց էր: Եւ ցուցանէ թէ ոչ միայն 'ի մէջ ինչ չէ հրէին և անթլփատին, այլ և միւսազգին իսկ ասէ անթլփատն թէ միայն յինքն հայեսցի, և զոր ցուցանէ թէ անթլ-փատ[1] է. վասն որոյ ասէ՝ թէ "Ոչ որ յայտնի հրեայն է": Նոյնս յանդիմանէ զնոսա եթէ զամենայն ինչ 'ի ցոյց գործեն: "Այլ որ 'ի ծածուկ հրեայն է, ասէ. և թլփատութիւն սրտի հոգւով և ոչ գրով": Զայս ասելով զամենայն զմարմնականսն արտաքս հանեաց: Եւ քանզի թլփատութիւնն յայտնի էր, և շաբաթքն և օ-րէնքն և մաքրութիւնքն, և զայս ամենայն ակնարկեալ ասաց միով բանիւ. "Քանզի ոչ, ասէ, թէ որ յայտնի հրեայն է": Այլ վասն զի բազում բանք էին վասն թլփատութեանն, ուստի և զշաբաթն իսկ թոյլ տային լուծանել, ապա ուրեմն յիրաւի բազում բանս արկա-նէ վասն նորին: Նոյնպէս թէ "հոգւով", յառաջ ճա-նապարհորդէ եկեղեցւոյ կարգաց, և զհաւատսն 'ի ներքս ածէ. քանզի և սա 'ի սիրտս և հոգւով է և զգովու-թիւնն՝ յԱյ ընդունի:

Եւ էր վասն չցուցանէ համարձակ այսպէս, եթէ հե-թանոսն որ ուղղէ զիւր զվարսն քան զհրեայն որ ըստ օրինացն փնտռեաց՝ չէ ինչ նուազ. այլ ասէ. հեթանոսն որ ուղղէ զվարս իւր, լաւագոյն քան զհրեայն որ ըստ օրի-նացն անցանէ. զի սոցանց երկրպագութեան գործէ զպար-տութիւնն: Քանզի յորժամ զայս խոստովանեցին, ապա 'ի հարկէ 'ի բաց մերժեցաւ զամենի թլփատութիւն.

1 [illegible]

նա եւ յաւուրանէ լինի՝ թէ ամենայն առաքէ վասն որոյ ոմանք են ։ Ցուցանէ յորժամ ասէ Հեթանոսս իցէ եւ առանց օրէնս առաքեալ զամենի, եւ Հրեայն նախկինք հանդերձ ամենեցուն, ապա ուրեմն զառաջարկեցելոյ կարգ Հրէութեան ։ Այլ Հեթանոսս դարձեալ ոչ զկռապաշտութիւն ասէ, այլ զաստուածպաշտութիւն, եւ որք ամենեքեան ազատն եղեն յօրինաւոր եւ ’ի հրէական խորհրդոցն՝ ասէ ։

“Զինչ աւելի է Հրէին”։ Սակայն ոչ զամենայն ինչ եհան ի առաջարկանելեաց՝ զխելամտութիւն օրինացն եւ զմարգարէութիւն օրինացն եւ զանուն Հրէութեան եւ զթլփատութիւն եւ զայլն ամենայն առաւելութիւն՝ թէ “Մի որ յայտնի Հրեայն է, այլ ’ի ծածուկ”, ասա դարձեալ զարժանաւորութիւնն զխրատ առնէ եւ առ այլն յառնէ ։ Այլ զի իցէ այս զհակառակութիւն. զի եթէ ոչ ինչ օգուտ է, ասէ, այս, էր վասն կոչեցաւ ազգ եւ թլփատութիւն տըւաւ ։ Այլ արդ զինչ գործիցէ եւ կամ զխրատ լուծանիցէ զայս ։ Զոր վերջագոյնն խակ երկեալ. եւ զոր օրինակ անգ ոչ զնոցա զարժանաւորութիւն ինչ ասաց, այլ զԱյ երախտաւորին յիշեաց եւ ոչ զնոցին ինչ առաքինութիւն. քանզի Հրեայն կոչելով եւ զխոսելով զկամքն եւ ընտրել զնոսա չէր նոցա առաքինութեանն, այլ Այ պարգեւացն, զոր եւ մարգարէքն նախասացելով զնոսա ասէր՝ թէ “Ոչ որպէս ամենայն ազգի այսպէս եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա”. եւ Մովսէս դարձեալ ասէր. “Հարցէք եթէ եղեւ երբէք ըստ բանիս այսմիկ, եւ լուաւ ազգ ձայնի Այ կենդանւոյ ’ի միջոյ հրոյ եւ կեցեալ”, զայս եւ առաւ առնէ Պաւղոս ։

Յորժամ Հռովմայեցւոց վասն թլփատութեանն, ցուցանէ թէ թլփատութիւն ոչ ինչ օգուտ է առանց վարուց, այլ ասէ՝ թլփատութիւնն օգնէ հանդերձ վարուք, եւ մերժեալ զայնս անկարկէ. եւ դարձեալ. “Այլ թէ յանցաւոր օրինացն զանցանես”, եւ ցուցանէ եթէ ոչ ինչ է, բեր օգուտ թէ թլփատեալ ես. այլ թէ “թլփատութիւնն քո անթլփատութիւն եղեւ”։ Նոյն այնմ եւ զայն եւս զնէ՝ թէ “զառնի անթլփատութիւնն, ոչ թէ զթլփատութիւնն, այլ զնէդ որ յանցաւոր օրինացն եղեր”. օրինացն նորոց եւ զմարդկութիւն առաջարկանէ. Այլ զայն զարժանաւորութիւնս եւ առաւ զործել. ասէ. “Զինչ աւելի է Հրէին”. եւ ցուցանէ թէ ոչ ինչ, այլ զուգընթաց եղեւ բանին, եւ որ ինչ ’ի կարգին զայս այնու ’ի բաց մերժէ

գէտս, և նոցա եթէ առանձինն են յաղագս նախադասահաւա-
թեանն պատուելի. և եթէ՛ որպէս, ես ցուցանեմ քեզ յայ-
ժամ զզանազանութիւնն 'ի մէջ բերելով. «Ո՞ր ինչ աւե-
լի է, ասէ, Հրեայն կամ զինչ օգուտ 'ի թլփատութե-
նէն. Բազում ինչ ամենայն իրօք. նախ զի հաւատա-
ցին նոցա պատգամքն էր»: Տեսանես զոր ինչ յայտնեաց
առաջ, զնոյն և այժմ. և ոչ ասէ զնոցա ուղղութիւնս,
այլ զԱյ երախտաւորութիւն: Բայց զինչ էր հաւատացանն.
զօրինացն նոցա ընծայեցան օրէնքն, զի այսպէս առաջ-
նորդ զոր զնոսա և հաւատարիմ, մինչև պատգամս են 'ի
վերուստ յերկնից նոցա բերելեալ: Եւ զիտակ եթէ ո-
մանք հաւատացան ոչ եթէ Հրէիցն, այսինքն թէ հա-
ւատացան օրէնքն. Բայց ոչ կայ առաջ յանկատասի որ
ինչ 'ի կարգին. քանզի յառաջ բանաքննեալ զնոսա զայս
ասէ, և ցուցանէ թէ բազում անգամ վայելեցին 'ի վե-
րին խնամոցն և բազում անգամ ապաշխարհեք գտան: Իսկ
արդ և առաքինութիւնքն նոյ զայնս ցուցանէ:

«Իսկ եթէ ոմանք, ասէ, անհաւատք եղեն», և այլքն
հաւատացին, զիարդ ասիցեն ոմանք եթէ հաւատարիմ
եղեն պատգամացն: Եւ զինչ ասէ. վասն զի ամ հաւա-
տացին նոքա, և ոչ եթէ նոքա պատգամացն հաւատացին.
առ՝ եթէ ոչ՝ ասա զիարդ ունիցի առաքինեալ բանն, և 'ի
նոյնս յարեալ ասէ եթէ «ոմանք անհաւատք եղեն».
բերէ ամին և զայս ցուցանէ, քանզի յաւել զարմէսալ 'ի
նոցին ամբաւ. «Միթէ անհաւատութիւն նոցա զԱյ
հաւատսն խափանեսցէ, մի լիցի»: Եւ յորժամ ասէ թէ
հաւատացին, զինչ զարտաքսեալ քարոզէ: Եւ զու աստ
տեսցես զմխիթարութիւն նոցա. քանզի զանարգութիւն
նոցա ոչ անգոսնեն 'ի նոցունց խաչ մեռանելն, այլ որպէս
զխնամարկութեանցն 'ի մէջ բերէ. որպէս զի ասիցէ՝ թէ
զինչ օգուտ 'ի թլփատութենէն եղև նոցա, վասն զի ոչ
արկին զնա 'ի լաւ անդր 'ի կիր: Հաւատացան նոցա օ-
րէնքն, և նոքա ոչ հաւատացին: Սակայն և ոչ այսպէս
առաքինեա կշտամբէ զնոսա, այլ որպէս զանձն լոկ կամի ա-
ռանց մեղադրութեան իւրոց ցուցանել, և այսպէս 'ի նո-
սա ինչ շրջէ զամենայն զմեղադրութիւնս եթէ անհա-
ւատք գտան: Եւ արդ զի առ նա. միթէ զերախտիսն
զոր գործեաց առ նոսա արգել ինչ և կամ թէ զարձանն
նոքա 'ի անարգութենէն, զոր պատասխան հաւանեցին՝ որ.

չէր ինչ պատուհ. Նոյա ուրեմն այս էր զոր ասէրն. "Մի՞թէ անհաւատութիւն նոցա զԱյ հաւատոն խափանիցէ, քաւ լիցի ,,: Որպէս զի ասիցէ որ՝ թէ ես զայս անուն պատուեցի, և նա անշնորհակալ եղև. այնպէս և աստ՝ թէպէտ և նոքա ոչ հաւատացին, ասէ, այլ ինձ մեղադրութիւն չբերէ և ոչ արատէ ինչ զիմ զմարդասիրութիւնս, այլ զնոցա զանզգայութիւնն յանդիմանէ. Նաև Պաւղոս ոչ եթէ միայն զայն ասէ թէ ոչ միայն չմերձենայ մեղադրութիւնն առ Ած 'ի նոցա անհաւատն լինելոյ, այլ և մեծագոյն ցուցանէ զնորա պատիւն և զմարդասիրութիւնն. յորժամ և հանդերձեալ են անարգել զնոսա, յայնժամ երևի պատուեալ: Տեսանե՞ս որպէս եցոյց զնոսա պատժապարտ մեղադրութեանն որով նոքայն զուարճանային. զի և ինքն Ած այսչափ և այսքան ինչ պատուիւ եւտ նոցա[1], որպէս և զհանդերձեալսն յառաջագոյն տեսանէին, և ոչ առին 'ի միտ. բայց սակայն սա ոչ հրաժարեաց յիւրմէ քաղցրութենէն, և նոքա զնա թշնամանեցին որ պատուեացն և որով պատուեցան:

Այլ վասն զի ասաց եթէ ոմանք ոչ հաւատացին, երևի թէ ամենեքեան իսկ չհաւատացին. և զի մի դարձեալ, զնոսա պատմութեանն ասելոյ, կարծիցի ոմանց թէ յոյժ չարախօսեսցէ զնոցանէ իբրև զթշնամի, 'ի կարգի մտածութեան և խորհրդապէս դնէ իմն վասն ճշմարտութեանն եղելոյ. այսպէս ասէ՝ թէ "Եղիցի Ած ճշմարիտ և ամենայն մարդ սուտ ,,: Այլ զոր ասէն այսպիսի ինչ է. ոչ ասեմ, ասէ, թէ ոմանք չհաւատացին, այլ թէ կամին չհաւատալ ամենեքեան: Նաև ճշմարիտն լինելոյ՝ թէպէտ և գործի այս բազում անգամ 'ի յափշտակութենէ մտաց, և արդեօք ոմանց ծանրաբեռն ինչ կարծիցի զոր ասեմս և լի կարծեօք, այլ մանաւանդ աստի իսկ արդարանալ Ած: Զինչ է արդարանալն: Թէ դատաստան և քննութիւն լինի այնմ որ 'ի նմանէն հրէից եղև, և որ ինչ 'ի հրէից՝ նմանն եղև, յաղթութիւնն որ յԱյ և արդարութիւն նորա ամենայն: Այլ յորժամ եցոյց զայն յայտնապէս առաջին ասացելովքն, յայնժամ ապա և զմարգարէն իսկ 'ի մէջ բերէ

1 Պակասէր յօրինակին եւտ նոցա. յաւելաւ 'ի յունէն:

Digitized by Google

ղոյնս թուեալ և ասէ. «Որպէս արդարասցիս 'ի բանս քո և յաղթեսցես 'ի դատել քում»: Նմանցի նա իւրքն յիւրմէ կողմանէ զամենայն ինչ արար, այլ նոքա ոչ եկին 'ի լաւն:

Նոյն յայտնապէս զարմացեալ յայլ ընդդիմախօսութիւնս յառնու և բերէ 'ի մէջ: «Ոք ի թէ անիրաւութիւն մեր զԱյ արդարութիւն յանդիման կացուցանէ, զի՞նչ այլ ասեսցուք, միթէ անիրաւ ինչ է Ած որ ածէ զբարկութիւն, ըստ մարդկան ասեմ. քաւ լիցի»: Նոյն զանպատեհն անպատեհիւքն լուծանէ: Եւ զի այս անյայտ կարի էր առասպելածս, հարկ էր նմա յայտնապէս եւս ասել: Եւ զի՞նչ իցէ զոր ասէն. պատուեաց զ՛Քրիստոս Ած, և նոքա թշնամանեցին զնա: Այս զօրծէ նմա յաղթութիւն և ցուցանէ զբազում մարդասիրութիւն նորա, և զի այսպիսիք էին և պատուեաց: Նոյն ուրեմն, ասէ, վասն զի թշնամանեցաք մեք զնա և յանցեաք, վասն այսորիկ յաղթեաց Ած և արդարութիւն նորա պայծառ երևեցաւ, էր վասն, ասէ, տանջէ զմեզ որ պատճառք եղաք նորա յաղթութեանն թշնամանելովն մերով զնա: Եւ արդ զի՞նչ լուծանէ զայս. այլով անպատեհիւ, որպէս ասացին: Ոք ի թէ պատճառք, ասէ, դու եղեր յաղթութեանն և յետ այսորիկ տանջէ, անիրաւութիւն է. իսկ եթէ ոչ է անիրաւ, բայց տանջէ, ապա ոչ եւս պատճառք եղեր նորա յաղթութեանն.

Եւ տես զառաքելական երկիւղածութիւնն. վասն զի ասաց, «Միթէ անիրաւ ինչ է Ած որ ածէ զբարկութիւնն», յաւելեաց 'ի նոյն՝ թէ «ըստ մարդկան ասեմ»: Որպէս զի յորժամ ոք ասիցէ թէ ըստ մարդկան մտաց խօսի զայս: Նմանցի բաղդատէ և 'ի մէջն հաստատէ թէ իցեն արդարք, բայց գեր 'ի վերոյ զասանէ արդարութեան նոյ, ուրեմն և այլ հիացմանց և անճառելի բանս: Եւ ապա վասն զի կարի անյայտ էր, երկբայող անզամ զարմացեալ զնոյն ասէ. «Ոք ի թէ ճշմարտութիւն Այ յիմում ստութեամբս առաւելաւ 'ի փառս նորա, զի՞ եւս իբրեւ զմեղաւոր դատիմ»: Ոք ի թէ Ած, ասէ, մարդասէր և արդար երևեցաւ և բարերար, ուստի դու անիրաւն եղեր, ապա ոչ միայն չպարտիս պատժել, այլ և երախտիս եւս գտանել: Իսկ ասել եթէ այս անպատեհութիւն գոցէ 'ի նմա և. վասն բազմաց և յաղագս բազում իրաց զոր

տանելին և բերելին յայտնանալ յանձնելոյ զչարն զի բարին եկեսցէ, և պատճառ այն բարւոյն ուրեմն չարն լինի։ Այլ սակս հարկ է յերկրաքանչիւրոցն մի ինչ երևել. կամ 'ի տանջելն անխրատ զտանել կամ յաչս տանջելն. քանզի ասեն թէ 'ի մերձ չարեացս ունի զյաղթութիւն. վասն զի երկրորդն այսորիկ յայժ տասնել անզգամեհք են։

Սոփէս և եցոյց զնոյն իսկ զհարս նոյն, թէ և առ նոցաք այսպիսի ինչ աւանդութիւն էր, և զհեթանոսացն զմերղադրութիւն, շատ և բաւական համարեցաւ առացելոյն՝ որք զայսպիսի դէմս արարին բանին. Նոյնպէս յայնժամ ընդ հեթեսն արկեալ զմեղ ասելն՝ թէ արասցուք զչարն զի եկեսցէ բարին։ Զորին վասն յայտնոյպէս իսկ եղ զայս ասելովն՝ թէ "Արասցուք զչարն զի եկեսցէ բարին. որոց յիրաւի են դատապարտութիւնքն"։ Այլ վասն զի ասէր Պաւղոս՝ թէ "Ուր առաւել եղեն մեղքըն, առաւել եւս յաւելան շնորհքն", այսպանելով զայն և յայլ ինն բացաւորեցին զատեցուածն. ասէին՝ առաս արեմն վասն մեղաց ընդունելիք զայս զի վայելեսցուք 'ի բարեաւն։ Իսկ Պաւղոս ոչ այսպիսի ինչ ասէր, այլ ուղղելով զնոյնս ասէր. "Ո՛ լիցի. կացցուք մնասցուք 'ի մեղսն, զի շնորհքն բազմասցին. քաւ լիցի"։ Զասն անցեալ ժամանակին, ասէ, առասցի զայս. և մի 'ի խուկումն զնոյն արասցուք։ Նամեցեալ յայնպիսի կարծեաց ազատել զնոսա, ապա ասաց որ եւս հըղարագունն էր. "Որք մեռաք մեղացն, ասէ, զիա՞րդ եւս կեցցուք 'ի նմին"։ Այլ հեթանոսացն յայժ դիւրով ինն ընթանայր, վասն զի վարք նոցա կարի ապականեալք էին. իսկ հրէիցն թէպէտ և վարքն կարծէին անխափանք եղեալք, այլ մեծ ինն, առաւստաս ունէին զօրէնսն և զթլփատութիւնն և զնմ ընդ նոսա խօսեցաւ և անհնեցուն վարդապետս զայս։ Զասն այսորիկ յայտնանալ մերկապոյս զնոսա, անխտրաւանդ եցոյց իսկ եթէ վասն այսորիկ և տանջին, 'ի նոյնս իսկ և զնանն փակեաց. Ոչ թէ այսորիկ չտանջին, ասէ, որք զայսն զարծեցին, ապա աղխուհեան հարկ է ըղհաշտեցական բանն զայն 'ի մէջ բերել՝ թէ "արասցուք զչարն զի եկեսցէ բարին"։ Իսկ եթէ այս անհնարինթիւն է, ապա և որք զայսն ասեն՝ պատժելոց են. քանզի զի զայս յայտ արար յասելոյն, "Որոց դատապարտութիւնն յիրաւի են". յայտ է, ասէ, թէ զարին։ Իսկ եթէ

որք առաւելն առանձնաբար արժանի են, մանաւանդ եւս առաւել որք գործեն իբրեւ զմեղաւորս՝ արժանի են. քանզի ոչ եթէ մարդ որ լինէ որ զատեն եւ կարծիս ինչ կարիցէ զատանել ըստ հարցուածին, այլ ըստ արդար որ զամենայն ինչ արար: Այս եթէ յիրաւի զատի, անիրաւ է այն զոր առաքեան հեղգանալով զմեզ՝ թէ արասցուք ըն-չար զի եկեսցէ բարին. քանզի զամենայն ինչ ըստ զօրծեաց եւ գործէ առ 'ի պայծառացուցանել զփառս մեր եւ ամենայն ուսանս ուղղել:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Այս արդ մեք եւս այսուհետեւ ծանուցեալ յաւելացուք, եւ այնպէս զՀեթանոսս կարեմք մերժել 'ի մեղսութենէ: Իսկ յորժամ բանիւք խոնարհութեամբ եւ գործով ամենայն զատեսցեմք, որով բարւոք խօսիցեմք ընդ նոսա վասն աստուածութեան. քանզի պատուիրանի մեզ առ իբրաքանչիւր որ մեզ՝ թէ որ վասն ոչ ուղղեսցեր, զիա՞րդ վասն մեծամեծացն արժանի զատար ուսուցանել. որ չեւ եւս զիտասցեր թէ յափշտակութիւն չար է եւ ագահութիւն, ձրաբէս վասն երկնաւոր իրաց փիլիսոփայես: Այլ արդեօք գիտասցես թէ չար է այն՝ այլեւքն է յափշտակութիւն, ապա ուրեմն մեծ մեղապարտութիւն՝ զի գիտեան եւ անփոյթ առնես: Այս զինչ ասեմ զՀեթանոսաց, որ եւ ոչ մեր իսկ ընտանիք օրէնքս Նոքին մեզ յաւաղիւր Համարձակութեան վայելել մեզ, յորժամ վարք մեր ապականեալք զատանին. քանզի "մեղաւորին, ասէ, ասաց Տէր՝ ընդէ՞ր դու պատմես զարդարութի իմ":

Աւարեցան երբեմն 'ի գերութիւն Հրեայքն, եւ պարսկացն շուրջ զնոքօք կալով աղաչէին զնոսա երգել զՏէրայլին զօրՀնութիւնն զայնոսիկ. իսկ նոքա ասէին՝ զիա՞րդ օրՀնեսցուք զօրՀնութիւնս տեառն յերկիր օտար: Ոչ եթէ 'ի բարբարոսական աշխարՀին չէր արժան երգել, բազում անգամ մանաւանդ 'ի բարբարոսական ազգին. վասն զի քան զբարբարոսն չար է անօրէնն: Որք գերիքն եւ ծառայքն էին 'ի մարդկանէ՝ յօտար երկրի օրէնքն 'ի լռութեան պատուիրէին, առաւել եւս քան զայնոսիկ որք մեղացն ծառայք են եւ յայլ 'ի կռապաշտութիւնս դարձան, զորս ընկենուլ իսկ

պարտ է ։ Այլ քանզի նոքա զերգարանսն ասէին, որ էին նուագարանք, քանզի ասէ՝ թէ «Ուռենեաց նոցա կախեցաք զերգարանս մեր», այլ և ոչ այնպէս յանձին առնուլին երգել ։ Նոյնպէս և մեք, թէպէտ և բերան ունիցիմք և լեզու՝ որ է գործարան բանին, չէ արժան համարձակել մինչդեռ ևս քան զբարբարոսացն ևս բանտագոյն ծառայէ մեղացն ։

Աղէ ասա ինձ, զինչ անխս ասել առ հեթանոսս որ յափշտակեալ է և ագահեալ ։ Ասեմ՝ թէ հրաժարեա ՚ի կռապաշտութենէ և ծանիր զԱծ, մի արծաթոյ և մի ոսկւոյ երկիր պագաներ և մի յարեր ՚ի քեզ ։ Արդեօք չծիծաղիցի՞ զքեւ և ասիցէ. դու որ ասես զայդ՝ նախ ցոյց եթէ չկարիս այդպիսեօք, և ապա ուսո. վասն զի չեն իսկ զոյգ նմին կռապաշտին և քրիստոնէին ամենայն այսմիկ խնամ տանել ։ Այս զիարդ կարիցեմք զայլս անջատել ՚ի կռապաշտութենէ յորժամ զմեզ ինքեանս ոչ կարիցեմք ազատել. վասն զի քան զընկերացն՝ մեզ ինքեանց մերձաւորք եմք ։ Այս յորժամ զմեզ ոչ կարեմք ազատել, զիարդ զայլս ածիցեմք ՚ի հաւան ։ Զի թէ որ իւրում անձին բարիոք վերակացու չկարէ լինել և ոչ եկեղեցւոյ խնամ տանել, որպէս ասացեալ այն որ իւրում անձինն վերակացու չկարէ լինել՝ զիարդ զայլս ածիցէ յուղղութիւն ։

Այլ մի ինչ զայն ասեր՝ թէ չերկրպագեմ ոսկի կռոց. այլ զայն ինչ ցոյց՝ եթէ զնոյն ոչ գործես զոր ոսկին հրամայէ ։ Այլ վասն զի այլ և այլ են կռապաշտութեանն օրինակք, և ոմն զմամոնայ վարկանի տէր, և այլ ոմն զորովայնն Աստուած, իսկ միւս ևս զծնեալ՝ զցանկութիւնն ։ Այլ արդեօք չզոհես նոցա զուարակս որպէս և այլ կռապաշտքն. այլ որ ևս դժնդակն է՝ զայն գործես, զքո իսկ զանձինդ զենուս և զոհես ։ Այլ արդեօք չկրկնիցես ծունր և երկիր պագանիցես. այլ ևս առաւել հնազանդիս. և յանձն առնուս զոր միանգամ հրամայեսցէ քեզ ոսկին և որովայնն և ցանկութեանն բռնաւորութիւն ։ Վասն զի և կռապաշտքն վասն այսորիկ են զազրելիք և պիղծք, զի զախտս մեր ածացուցին. զցանկութիւնն Աֆրոդիտէս անուանեցին, իսկ զբարկութիւնն Արէս, իսկ զարբեցութիւնն Դիոնիսոսի ասացին ։ Իսկ եթէ ոչ քանդակես կուռս դու որպէս և նոքայն, այլ բազում

յօժարութեամբ նոցին իսկ ցանկութեամբ ընկճիս՝ յայ-ժամ զանդամն Քրիստոսի առնես անդամ պոռնկի, և զայս ես լուանաս քոյով անօրէնութեամբն։

Վասն որոյ աղաչեմ, գիտելով զանպատեհութեանն զառածելութիւն, փախերուք 'ի կռապաշտութենէ. վասն զի այսպէս Պաւղոս կոչեաց զագահութիւնն։ Փախերուք մի միայն յընչիցն ագահութենէ, այլ և 'ի ցանկութենէ չարեացն և 'ի հանդերձիցն և 'ի ոսկեղինացն բազմախորտիկաց և յայլոցն ախորժելեաց։ Վասն զի բազում և յոյժ դառնագոյն տանջոց եմք մեք վրէժս որք ոչ հաւատամք օրինացն, որպէս և ասէ՝ թէ “Ծառայ որ գիտէ զկամս տեառն իւրոյ և ոչ առնէ, բազում տանջեսցի„։ Նոյն արդ յայտնապէս զատապարտանէ փախիցուք և լիցուք աղքատասէրք անձանց և ընկերաց. զամենայն չարիս 'ի բաց հալածեսցուք յանձանց և զհեռ երթիցուք ատարինութեանն, և այսպէս հասանեսցուք հանդերձելոց բարութեանցն։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

## ՃԱՌ ԵՕԹՆԵՐՈՐԴ

“Ո՞րդ են իսկ առաւել իցեմք. ամենևին և ոչ ինչ. քանզի յառաջագոյն իսկ մեղադրեցաք եղեալք հրէից և հեթանոսաց ամենեցուն ընդ մեղօք լինել. որպէս և գրեալ է՝ թէ ոչ գոյ արդար և ոչ մի, և ոչ գոյ որ իմանայ, և ոչ ոք է որ խնդրէ զԱստուած. ամենեքեան խոտորեցան 'ի միասին և անպիտանացան. ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն, և ոչ ոք է մինչև 'ի մի. գերեզմանք բացեալ կոկորդք նոցա, լեզուաւք իւրեանց նենգաւորք եղեն. թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա. որոց բերանք անիծիւք և դառնութեամբ լի են. երագ են ոտք նոցա հեղուլ զարիւն. բեկումն և թշուառութիւն 'ի ճանապարհս նոցա, և զճանապարհն խաղաղութեան ոչ ծանեան. ոչ է երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա„։

Մեղադրեալ եղև հրէից, մեղապարտաց և զհեթանոսս. ապա ըստ կարգի էր առնել զարդարութեանն որ 'ի հաւատոցն։ Քանզի յորժամ ոչ որ ըստ բնութեան օրէնքն են՝ շահ ինչ գործեցին, և ոչ որ գրովն տուեալ՝ աւելի ինչ գործեաց, այլ և յոյժ ծանրացան այնոցիկ որք ոչ զնոսա 'ի լաւ անդր 'ի կիր արկին, և մեծամեծ տանջանաց ցուցին արժանաւորս զինքեանս, կարևոր էր այնուհետև շնորհացն փրկութիւն։ Իսկ ասա այժմ զայն, ասէ Պաւղոս, և ցոյց։ Այլ չև ևս վստահանայր ասէ ածել 'ի հրէից, զի մի զարհուրիցին ինչ և անընդունակք գտանիցին բանին։ Այլ դարձեալ 'ի մեղադրութիւն դարձուցանէ զբանն, և նախ ամբաստանէ զնոցանէ, զԴաւիթ յառաջ բերէ զայս ասելով բազում անգամ, զոր Եսայի փոքր մի բանիւք եցոյց, և այսպէս զօրաւոր կապէ զնահանջումնն, որպէս զի մի 'ի բաց ստիպիցէ լսողն, և մի դարձեալ յորժամ 'ի հաւատոն կըրթիցէ զբանն՝ այնուհետև 'ի բաց խայտառացէ լսողն, բաւական համարի զմարգարէին զմեղադրութիւն. որպէս զի ամենեքեան իսկ զչար գործէին, ասէ. և եթէ ոչ երբէք խառնեցին ընդ չարն զբարի ինչ, այլ միայն 'ի չարիսն մտանէին։ Իսկ ոչ այսչափ միայն, այլ և յոյժ համարձակութեամբ և աներկիւղ զայս գործէին։

Digitized by Google

Նոյնս զի մի ասիցեն՝ թէ առ այլս ասէին զայս առա-ջին, յաւելեաց ՚ի նոյնս. «Գիտեմք, ասէ, զոր ինչ օ-րէնքն ասեն՝ այնոցիկ որ ընդ օրինօքն են խօսին»։ Նաև այսոքիկ և յետ Եսայեայ զՊաւղոսի ընդրէ ՚ի մէջ և ցու-ցանէ թէ նա բաստ այսմ կարգի ասաց։ Եւ զինչ կա-րեւոր էր, ասէ, այս՝ այլոց մեղադրութեանցն ՚ի մեր ուղղութիւն առաւելլ զմարդկանէն։ Քանզի և օրէնքն խօսի ձեռաց առանց և ոչ այլոց։ Եւ ոչ վասն առաքելոցն ցու-ցանէ թէ զԳիտեմք զոր ինչ մարգարէքն ասեն. այլ թէ զԳիտեմք զոր ինչ օրէնքն ասեն։ Նաև զի զհին կտակարան ամե-նայն օրէնս կոչել սովոր է Պաւղոս։ Եւ այլուր գրա-ձեալ ասէ. «Ո՞չ լսէք յօրինացն թէ Աբրահամ եր-կու որդիս ունէր»։ և աստ զսաղմոսն օրէնս կոչեաց յասելն՝ թէ «Գիտեմք զոր ինչ մասնաւոր օրէնքն ա-սեն»։ Եւ ցուցանէ թէ ոչ ընդդիմակ ինչ է առաջեալ զմեղադրութիւնս զայս, այլ զի հաւատոցն յառաջ ձա-նապարհորդեսցէ բանս։ Ո՛րչափ զի աղբեան հնոյն առ նորս էր ազգակցութիւն. զի և առաքելականքն և յանդի-մանիչքն վասն այսորիկ եղեն, զի այնչափ որոց ընկեն, բացցի [1] զաւան հաւատոյն։

Եւ վասն զի այս կարգս զՔրիստոսի՝ մեծամեծութիւնն առ Ինքնեանս, զոր և յառաջին խօսս ասէր՝ թէ «Տեղեա են ինձ առաքելութեանն և ընդունելոյ զաւրութիւնն խնդրելն հաւատալ, առաքելութեանն ոչ ոչ հնազան-դեցան», յաւելեալ օրինացն և մարգարէն՝ ՚ի վերայ կործանելոց զնոցա մնամբութիւնն՝ զկենցեալ զայսու հաւատութեանն, զի զանասնոց զիւրեանց զմեղս ըն-ծայեն ամբիցեն և զամբարհաւանութիւնն զամենայն ՚ի բաց մերժեսցեն և զիւրեանցեն զխնդրեալսն վասն մերձին վասնորդեսն. որպէս զի բաղում յօժարութեամբ ընթացցին առ այն որ նոցա զխօսութիւն մեղացն առնէր, և զշնորհսն ՚ի ձեռն հաւատոյն ընկալցին։ Նոյն և այժմ առա Պաւղոսի ակնարկեալն ասէր. «Գիտեմք զոր ինչ մանաւ-անդ օրէնքն ասեն. զի ամենայն բերան խցցի և դա-տապարտ լիցի ամենայն աշխարհ Այ»։ Նոյն եղցեց զնո-ւա թէ ՚ի գործոց հաւատարմականութեանն ամենայն չքա-նալ եալ զարմն, և միայն բանիւք ամենայնհաւանեսցեք...

[1] Ցերեկանալիք բայց ՚ի նմանագրէն. ուղղեցաւ ՚ի յունէն։

անեթանան։ Նման որոյ և տիրապէս 'ի կիր արկանէ զասացուածն՝ թէ ամենայն բերան խցցի. այսինքն է նացա անամօթիցն. և զզժտաբրնեալ զմեծաբանութիւն նոցա յայտնէ, զոր օրինակ հեղեղ ինչ սաստիկ՝ այսպէս հոսէին բերանք նոցա. այլ եխից զայն մատրգաբէն։ Յորժամ ասիցէ Պաւղոս՝ թէ ամենայն բերան խցցի, ոչ զայս ինչ, ասէ, ասեմ թէ վասն այսորիկ մեղան. զի խցցին, այլ զի յանդիմանեսցին մի ազգամանաւ յորժամ մեղանչիցեն։ Այն ինքն յասելն՝ թէ դատապարտ լիցի ամենայն աշխարհ այ, ոչ եթէ Հրէայք միայն, այլ ամենայն բնութիւն իսկ։ Ասելն՝ թէ ամենայն բերան խցցի, զնոցանէ ակնարկէ. թէպէտ և ոչ յայտնապէս ինչ եդ այսպէս, զի մի խոշորագոյն ինչ թուիցի բանն։ Իսկ յասելն՝ թէ դատապարտ լիցի ամենայն աշխարհ այ, միանգամայն իսկ զՀրէից և զհեթանոսաց ասաց։ Զէ ինչ փոքր և այս առ 'ի զիջուցանել զնոցա զհպարտութիւնն, յորժամ և աստ եցոյց թէ ոչ ինչ աւելի ունիցին նոքա քան զհեթանոսս, այլ 'ի զոյգ հաւասարակ տայ զբանն փրկութեան։ Վասնզի դատապարտն ասել տիրապէս առ այնաւիկ ասի որք ոչն կարեն բաւական լինել առ 'ի պատասխանատուութիւն, այլ այլոց օգնականութեան կարօտ են. որպիսիք էին և մերքս կարօտեալ 'ի մեղս էաք մինչև առ փրկութիւնն աստուածեան եկաք։

"Վասնզի օրինօքն է գիտութիւն մեղաց" ասէ. Պատճառ մխեալ յօրէնսն և խնայէ. ոչ եթէ զնմանէ է մեղադրութիւն ասացուածս, այլ զՀրէիցն ծուլութեանէ։ Բայց ապականն փութացաւ և աստ, քանզի հանդերձեալ էր որ վասն հաւատոց բանն 'ի նորքա ածել, և ցուցանէ թէ յոյժ տկարացեալ էք։ Օր մեծաբանեսս, ասէ, օրինօքն. սա իսկ զքեզ, ասէ, յամօթ առնէ, այն իսկ և զմեղս քո դէմ յանդիմանն կացուցանէ։ Ոչ չարաց այսպիսի ինչ խաչորագոյնս, այլ եւս հանդարտագոյնս պատճառէ՝ թէ օրինօքն է գիտութիւն մեղաց։ Թէ պարգևս եղէ, ապա և պատիժք մեծամեծք, այլ առ 'ի Հրէիցն ակնարկէին միայն։ Օրէնքն և 'ի ծածուկ լռեալ՝ յանդիմանէին միայն զմեղսն, որով մարթ էր քեզ ցուցանել յայտնապէս։ Իսկ ապա այսուհետև փախչել 'ի մեղացըն՝ քոյ էր. յորժամ ոչ փախեար, ապա ձգեցեր զքեզ 'ի տանջանս, և այսպէս օրինացն ուղղութիւնք զատան քեզ պատճառք դատապարտութեան։

Digitized by Google

Այլ յորժամ ածեցոյց զերկիւղն, յայնժամ առաջ ճառէ և զշնորհացն և բազում կարգաւորութեամբ ցուցանէ զփրկութիւն զմեղացն թողութեան և ասէ. «Արդ առանց օրինացն իսկ արդարութիւնն Այ յայտնեալ է»: Մեծամեծս բարբառեցաւ, և բազում յարգարմանս պէտք են: Զի թէ որ օրինօքն կէին, ասէ, ոչ զերծան 'ի տանջանացն, այլ և յոյժ ծանրաբեռինք եղեն, ապա զիա՛րդ իցէ առանց օրինացն ոչ միայն 'ի տանջանացն զերծնուլ, այլ և արդարանալ ևս: Այլ երկուս ծանրագոյնս եդ աստ, և զարդարանալն, և զի առանց օրինացն հասանեմք այսմ բարութեան: Որոյն վասն չասաց արդարութիւն միայն, այլ թէ Այ արդարութիւն. 'ի պատուոյ երեւացն և զշնորհսն մեծացուցանէ և զօրաւոր զխոստմունսն. քանզի ամենայն ինչ կարողութի է նմա: Այլ չասաց թէ տուաւ, այլ թէ յայտնի է, զի զնորաձևութեանն զմեղադրութիւն 'ի բաց կորեսցէ. քանզի որ ինչ յայտնին՝ որպէս զհին և զծածուկ ինչ յայտնի: Այլ ոչ այսչափ միայն, այլ և որ ըստ կարգին է՝ զայնս յայտնէ՝ թէ չէին առժամայնք և նորք այսորիկ:

Բայց եթէ յայտնեալ է. ապա յարէ 'ի սոյն՝ թէ «Վկայեալ յօրինացն և 'ի մարգարէիցն»: Մի՛ վասն զի այժմ տուան՝ խռովլիցիս ինչ որպէս զնոր և զօտար ինչ իրս: Տեսանե՞ս՝ անդուստ 'ի վերուստ իսկ ասէ, զի օրէնքն և մարգարէքն գուշակէին զնմանէ յառաջ. և զկէսս եցոյց յօրինուած այսորիկ, և զկէսս զհանդերձեալն ցուցանէ: Յառաջին 'ի բանսն զԱմբակում մարգարէ ածէ 'ի մէջ որ ասէն՝ թէ «Արդարն 'ի հաւատոց իմոց կեցցէ». իսկ յետ այնր բանից զԱբրահամ և զԴաւիթ և զայլս զամենեսեան որք զայսպիսիս առ մեզ ասացին: Այլ քանզի բազում բանք էին վասն աբանցս այսոցիկ առ Հրէիցն և յոյժ պատիւք. վասն զի մին հայրապետ և մարգարէ էր, իսկ միւսն թագաւոր և մարգարէ. քանզի վասն սորին իրաց իսկ ընկալեալ էր նոցա աւետիս, և առ երկոսեան եղեն խոստմունքս այս: Վասն զի և Մատթէոս յորժամ սկիզբն առնէ աւետարանին, նախ զերկոսին զնոսա յիշէ, և ապա 'ի կարգի յառաջ բերէ զայլ զնախնիսն ասելովն «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի». և ոչ յապաղեաց առել յետ Աբրահամու և Սահակայ և Յակոբայ զԴաւ-

ւիթ, այլ ըստ Աբրահամու խոկայն եւ զաւակին Դաւթի դնէ։ Իսկ այս է զարմանալի զի յառաջ քան զԱբրահամ զԴաւիթ անուանէ, այսպէս ասէ. «Որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու», եւ յաջորդաւ սկսաւ ասել զԱբրահամ եւ զՅակոբ եւ զայլսն ամենեսեան։ Սմին այսորիկ եւ առաքեալ զօրէն նոցա համաձայնեալ յեղյեղու եւ ասէ՝ թէ «Արդարութիւնն յայտնի է վկայեալ յօրինացն եւ ի մարգարէիցն»։

Ապա զի մի ոք ասիցէ՝ ոչ լինէր նոցա մեծարեալ եւ զխտիր յառաջինկայսն առաքինեցինք, ցուցանէ եթէ փոքր մի եւ մեք նոցա տեսանել լինիցիմք յայս լինել՝ պհատուոյն ասէ։ Իսկ իբրեւ ասաց՝ արդարութիւն Այ, յաւել «Ի ձեռն հաւատոց յամենեսեան եւ ի վերայ ամենեցուն որք հաւատան»։ Աստ դարձեալ ի վտանգի կայ հրեայն ոչ ինչ աւելի ունելով քան զայլսն, այլ ընդ ամենայն տիեզերս ի համար մտեալ։ Զի մի այնպիսի լինի դիպեցի, ամենեւին յիշեցեալ զահն, եւ զառաջինն ածեալ ասէ՝ թէ «Ոչ է խտիր. վասն զի ամենեքեան մեղան»։ Իսկ մի լինի ասեր, ասէ, թէ այս անուն հեթանոսն եւ այս անուն սկիւթացի եւ միւսն թրակացի, վասն զի ի նոյնս են ամենեքեան։ Թէպէտ եւ օրէնս ընկալար, եւ յօրինացն իսկ ուսար եւ գիտացեր զմեղս, այլ ոչ եթէ չգործել։

Այլ զի մի ասիցեն՝ թէպէտ եւ մեղաք՝ այլ ոչ որպէս նոքայն, յաւել եւ զայն եթէ «Նուազեալ են ի փառացն Այ»։ Թէպէտ եւ ոչ այնպէս մեղար որպէս զնոսայն, այլ ի փառացն նմանն նոցին նուազեալ գտար. քանզի յընդդիմակացն անտի ես, եւ ընդդիմակութիւնն առաւել մեծ թանաց է եւ ոչ փառաւորչաց։ Այլ մի երկնչիր, ոչ վասն այսորիկ ասացի զայս զի զձեզ ի յուսահատութիւն արկից, այլ զի ցուցից զանտանն մարդասիրութիւն։ Վասն որոյ եւ ասէ իսկ՝ թէ «Արդարացեալք ձրի նորին շնորհօք ի ձեռն քաւութեանն որ ի Քրիստոս Յիսուս, զոր յառաջ եդ Այծ ի քաւութիւն արեամբն նորա ի հանդէս արդարութեանն նորա»։ Տես որչափ լինի կազմէ զապացուցումնն։ Նախ ի պատուոյն երեսաց. քանզի ոչ եթէ մարդ ոք իցէ որ զայս գործիցէ, եւ վհատիցիս. Այծ ամենազօր. Այ է արդարութիւնն։ Երկրորդ անգամ յօրինացն եւ ի մարգարէիցն. քանզի ասէ՝ «վկայեալ յօրինացն եւ ի մարգարէիցն»։ Իսկ մի, ասէ, վասն զի

աստանօր օրինաց բանս՝ զարհուրելիս ինչ . զի օրինացն իսկ այն համարձակ թուէր : Արդարոց անգամ 'ի զոհից հնոյ օ-րինացն . վասն այնորիկ ասաց՝ թէ արեամբն նորա : Սերտոքին յիշեցուցանէր նոցա զպղծութեանցն զայնոսիկ և զղուտարակացն . զի թէ անմաքրոյն զենումն մեղս լու-ծանէր, որպէս և ասացեալ բազում անգամ արդ ա-րբունս : Այլ ոչ լոկ ասաց թէ փրկութիւն, այլ թէ առ 'ի փրկութիւն . որպէս զի մի և զդարձեալ անկանել մեզ 'ի նոյն ծառայութիւն . և քաւութիւն վասն որոյն իսկ կոչեցան, զի թէ օրինակքն այսչափ հզօր էին, որպէս և առաւել ճշմարտութիւնս : Ոչ այսու ցուցանէ և յայտնի առնէ դարձեալ թէ ոչ կրտսեր ինչ և նոր եր :

Այլ յորժամ ասաց՝ եթէ զոր յառաջն եդ ա՟ծ, և եցոյց զհօր զուղղութիւնն, զնոյն ինքն եցոյց և զորդւոյ . քանզի հայր յառաջ եդ, իսկ ինքն արեամբն զամե-նայն յարդարեաց՝ զգեղեցիկ ասէ : " Ի հանդէս արդա-րութեան նորա ,, ասէ : Ոչ ինչ իցէ ցուցումն արդարու-թեան նորա : Որպէս ցուցումն զանձանց . ոչ միայն զի ինքն հարուստ է, այլ և զայլս որք մերձ են առ նա՝ մե-ծացուցանէ, և կենդանութիւնն՝ ոչ միայն ինքն կեն-դանի է, այլ և զմեռեալս կենդանարարէ . և զօրու-թիւն՝ ոչ միայն զի ինքն զօրաւոր է, այլ և տկարացե-լոցն տայ ուժ : Այնպէս և արդարութեանն հանդէս՝ ոչ թէ ինքն միայն է արդար, այլ և որք 'ի մեղսն են՝ յան-կարծ յինքն յափշտակէ և արդարս գործէ : Զայնս ա-րա թարգմանեալ յայտնեաց թէ զինչ է հանդէս ար-դարութեան նորա . " Լ՟ա 'ի գոյ նորա արդար, և ար-դարացուցանէ զայլս 'ի հաւատոցն Յիսուսի ,, : Մի՞թէ այ-սուհետև երկբայանար . վասն զի ոչ 'ի գործոցն, այլ 'ի հաւատոցն արդարացաք . և մի 'ի բաց փախիցէք յայս ար-դարութենէն . վասն զի կրկին են սորա բարութիւնքս, զի և թեթև է և ամենեցուն առաջիկայ : Մի՞թէ ամաչեր և խորշիր ինչ : Ո՛ր և ինքն իսկ զնոյնս գործեաց, ո՛-չափ ինչ ոք ասիցէ, նա զուարճանայ . իսկ դու ընդէ՞ր ա-մաչեալ ծածկես և ամօթ վարկանիս զայն որով անձն քո փառաւորի : Սերագոյն այսու զնոցայն յորժամ ասաց՝ թէ 'ի հանդէս արդարութեան ա՟յ, որ ինչ լինին :

Դարձեալ և երկիւղիւ մեծ զծաւալագոյնսն և խրա-խուսցուցանէ յառաջ մատչել առ նա ասելով՝ թէ " Առ յա-

ռաջագոյն մեղացն գործելոց„: Տեսանեմս զիարդ հա-նապազորդ յիշեցուցանէ նոցա զյանցանսն: Առաջագոյն ասէր՝ թէ օրէնքն է գիտութիւն մեղաց, և զհետ սո-րա՝ թէ ամենեքին մեղաք. իսկ աստ ևս յաճախագոյն: Այլ ոչ ասաց վասն մեղացն գործելոց, այլ թէ վասն յառաջագոյն, այսինքն զմեռելութիւն: Քանզի ոչ ինչ կայր յոյս առողջութեան. այլ որպէս մարմին անդա-մալուծեալ կարօտ է վերստին շնորհացն, այսպէս և հո-գի մեռեալ: Մանաւանդ թէ ևս դժնեայ, որպէս թէ ըստ կարգի դնիցես՝ մեծ պատճառք գտանին մեղադրու-թեան: Այլ զի՞նչ իցէ այս, 'ի ներելն այ վասն յառա-ջագոյն մեղացն գործելոց: Քանզի և ոչ ասել ոք ունի, ասէ, թէ ոչ վայելեցաք 'ի ներելն և 'ի քաղցրութիւնն: Որ է “այժմու ժամանակիս„, առաւել տեսակ զօրու-թեան և մարդասիրութեան այ: Քանզի յորժամ ան-յոյսքն եղաք և զվճիռ մահու ընկալաք յանձինս մեր, և աճեցին մեղքն, յայնժամ եցոյց զիւր զօրութիւնն, զի ուսցիս զառաւել զարդարութիւն նորա. զի եթէ 'ի սկզբանն իսկ եղեալ էր այս, ոչ այսպէս զքանչելի և հրա-շափառագոյն երևէր, որպէս այժմ յորժամ ամենայն բժշկութեան օրինակքն յանդիմանեցան:

Այլ արդ զի՞նչ ասէ: “Ո՞ւր են պարծանքն, արգե-լան. որո՞վ օրինօք, 'ի գործո՞ցն. ոչ, այլ օրինացն հաւա-տովքն„: Մեծ ջան էր ցուցանել Պաւղոսի թէ այս-պիսի ինչ հաւատքն զօրեցին զոր և ոչ անգամ զմտաւ-ածել կարացին օրէնքն: Այլ իբրև ասաց՝ թէ արդարա-ցուցանէ այ զմարդն 'ի հաւատոցն, բուռն հարկանէր դարձեալ զօրինացն: Այլ չասէ թէ ո՞ւր են ուղղութիւնք հրէիցն և կամ ո՞ւր արդար իրքն, այլ թէ ո՞ւր են պար-ծանքն: Յամենայն ուրեք ցուցանէ թէ ջատագով օրի-նացն է, որպէս թէ բազում ինչ քան զայլսն ունելով և գործ ինչ ոչ վճարել: Այլ յորժամ ասաց եթէ ո՞ւր են պարծանքն, չասաց թէ ապականեցաւ և կորեաւ, այլ թէ փակեցաւ. մանաւանդ թէ արդ իսկ է, զի ոչ իսկ ունի ժամանակ: Որպէս և յորժամ զդատաստանեն լուեալ զհրամանսն՝ ոչ ևս ունի այսուհետև ժամանակ դատաստանի 'ի վերայ այնոցիկ որ յապաշխարութիւնն, այսպէս աստ և վճիռն 'ի բաց բարձաւ 'ի քէն և յամե-նայն հանգերձեալ բարութիւնսն վայելելոյ. և 'ի ժամա-

նել շնորհացս այսպիսի որով ըռւծան գործակցացքս, ոչ եւս ունին նոցա ժամանակի տապալարկութեան զուգութեան օրինացն։ Այլ եթէ հակառակեալ ինչ կամիցին, յառաջ քան զգալուստն պարոս էր. իսկ 'ի գալ այնորիկ որ հաւատանքին կեցոյց, 'ի բաց բարձաւ եւ ժամանակ միջանին նոցա, որպէս յանդիմանեալ յամենեցունց՝ եթէ շնորհօքն ապրեցաք։ Որոյն վասն եւ այժմ իսկ եկին, զի մի տարցեն թէ 'ի սկզբանն եկեալ էր՝ հնար դոյր եւ օրինօքն եւ ընտանի մերայք ուղղութեանքն ապրել։ Այլ արդ խոցեալ զպայծառի զանաւոն զաւերածս նոցա, զոր յամենայն ժամ յանդիմանէ յայտնապէս, չէ բաւական նոցա այն զի տարբեցինն 'ի ձեռն շնորհաց նորա։ Որ եւ վերագրին ասէր՝ թէ 'ի հանդէս արդարութեան նորա, եւ 'ի սմին յարեաց՝ թէ յայժմու ժամանակիս։

Իսկ եթէ ասեմք հակառակեցեն, ընդդիմին գործեն արաց մեծ ինչ մերժեցեալ իցէ եւ չիցէ բաւական առ 'ի պատասխանատուութիւն դատաստանին, այլ դատապարտեալ էր եւ հանդերձեալ է տանջել, եւ 'ի շնորհաց թագաւորին թողեալ լինի նմա ձրի, եւ նա անշտանօթ ացեալ զհեռ նեղանձն պարծելով ասիցէ՝ թէ չիք ինչ իմ մեղուցեալ։ Յառաջ քան զգալ շնորհացն եւ նեղանձն պարտ էր ցուցանել զայս. իսկ յորժամ այնք եկին եւ օգնեցին, չունի եւս այսուհետեւ ժամանակ պարծանաց։ Որ եւ առձեռայն իսկ եղեւ, զի ընտանեցաւ իսկ ընկալեալ էր նացա. վասն այսորիկ եւ եկն իսկ առ նոսա, եւ 'ի գալն նորա բարձան պարծանք նոցա։ Այլ որք ասէին վարդապետ լինել աղայոցն եւ յօրէնսն պարծէին եւ խրատիչ անզգամաց անուանէին, զայս նոցին զատան կարօտք ուսման եւ փրկութեան, եւ չունին այնուհետեւ պատճառս պարծանաց. զի թէ յառաջ քան զայս թլփատութիւնն անթլփատութիւն եղեւ, մանաւանդ թէ եւս առաւել այժմ չունի ժամանակ։

Ուստի՝ թէ արգելան, եւ եցոյց թէ որպէս։ «Որո՞վ արգելան, ասէ. յորո՞ց օրինաց, 'ի գործո՞ցն. ոչ, այլ 'ի հաւատոցն օրինաց»։ Ահաւասիկ եւ զհաւատոյն օրէնս կոչեաց՝ զատանկարգելով զանուանն, որպէս զի սփոփեցէ զայնոսիկ որ կարծէին թէ նորաձեւութիւն ինչ իցէ։ Այլ ո՞ր իցեն 'ի հաւատոցն օրէնք. շնորհօքն ապրել։ Այսուհետեւ ցուցանէ զինչ զօրութիւնն. զի ոչ միայն փրկեաց՝

այլ և արդարացուցանէ և 'ի պարծանս եւս ած, ոչ հարստա-
ցոյց զործոց՝ այլ զՀաւատոյն միայն խնդրեաց ։ Ոչ այս ա-
սերով և զՀաւատացեալ Հրէայսն արտաքսէ և հալածէ, և
զանՀաւատսն ընդունիցանէ, զի կարասցէ առ ինքն ձգել ։
Ոչ թէ յանկարծ դիպող ինչ Հաւատացելոցն մեծա-
մեծել և յօրէնսն հալել, այլ իցէ թէ զնոյն ինքն զաւերանն
եւսից և զանձն իւր ինքեան ամբաստանան կարգեաց և ըն-
պարծանան փակեաց. իսկ անհաւատն դարձեալ վասն ա-
րին իսկ խոնարհել կարէ և մերձենալ 'ի Հաւատսն ։ Տե-
սեր որչափ ինչ է առաւելութիւն Հաւատոյն, զիա՞րդ 'ի բաց
մերժեաց զպատճառանս և ոչ պարծել անգամ ներեաց նոցա ։

"Այլ արդ Համարեսցուք մարդոյ Հաւատովք արդա-
րանալ առանց գործոց օրինաց "։ Յորժամ եցոյց եթէ
վերագոյնք են որ 'ի Հաւատոյն են քան որք 'ի Հրէիցն,
յայնժամ ապա բազում Համարձակութեամբ վասն այ-
սորիկ ձայնէ. և որ կարծէր թէ յայտնանէ շփոթեցան,
դարձեալ բժշկէ ։ Այլ քանզի երկու էին որով առա-
ջնէին Հրէայքն, նախ առաւելին զի ոչ պարծանօքն արդա-
րացան, որպէս զի թէ ընդէր չեղեն այնպիսի՝ պատճառաւք
մեզ պարծանօքն արդարանալ. իսկ միւսն եւս այն՝ որ զան-
թելցեացն 'ի նորին արդարութեանէ արժանի առնել վայել-
լելոյ, որք զայնչափ ժամանակս ընդ օրէնօքն էին մնացեալք.
որ եւս առաւել քան զանօրէնսն էին շփոթեալք ։ Վասն
այնորիկ զայն վերոյ ասացեալ կարգեալ, ապա յայս փոխի, որ
այսպէս խռովեցուցանէ զՀրէայսն այժմ. զոր Աբրահա-
մու յետ Հաւատոյն մեղադրէր ընկերին վասն Աբրաամու և
վասն նորին խօսեց ։ "Ոչ ինչ ասեմք, ասէ, Համարեսցուք
Հաւատովք արդարանալ մարդոյ "։ Այլ չասաց թէ Հրէին
և կամ որ ընդ օրինօքն իցեն, այլ ընդ յայտնակ Հանեալ
զբանն և տիեզերաց դրան բացեալ փրկութեան, ասէ
"մարդոյ", Հասարակ բնութեանն զանուն 'ի կիր ար-
կանէ. ապա յայտնանէ առեալ պատճառս՝ փոխի յայլ ։
և զդիմադրութիւնն լուծանէ ։

Այլ քանզի ընդունելի խորհրդոց իսկ էր Հրէիցն լսել
այն՝ թէ ամենայն մարդ 'ի Հաւատոց արդարանայ, և
զայս լուեալ դժկամակ լինէին և գայթակղէին, յարէ
'ի սոյնս՝ "Եթէ զի Հրէից միայն է Ած"։ Որպէս զի ա-
սիցէ՝ թէ ընդէ՞ր քեզ անպատեհք ինչ թուիցին ամե-
նայն մարդկան փրկութիւն. միթէ մասնաւո՞ր ինչ է

ա̃ծ ։ Եւ այսու ցուցանէ՝ թէ այսու կամէին զնա 'ի հեթանոսացն խտրադասել Հրեայքն, ապա այսու զնոյն ընդ-փառան ազդարարէին ։ մանաւանդ թէ և ոչ թողացուցանէին իսկ ուսանել ումեք թէ ամենեցուն է նա ա̃ծ ։ Իսկ եթէ ամենեցուն իցէ, որպէս զի և է իսկ ․ ապա եթէ է ամենեցուն, յայտ է թէ ամենեցուն խնամ տանի ․ ապա յայտ է թէ զամենեսեան առ հասարակ կեցուցանէ 'ի հաւատոյն ․ վասն այսորիկ ասէ՝ թէ " Հրէից միայն իցէ ա̃ծ և հեթանոսաց ոչ ․ այո և հեթանոսաց ",։ Ցանուցանէ ոչ եթէ մասնաւոր է ա̃ծ որպէս հեթանոսաց առասպելաբանութիւնքն, այլ ամենեցուն հասարակ և նոյն ինքն մի ․ վասն որոյ և ասէ՝ թէ մի է ա̃ծ, այսինքն թէ նոցա և սոցա նոյն ինքն մի է ։

Իսկ ասա՝ եթէ վասն հնոյն ինչ ասիցես իմն մեծարա խնամոցն թէ էր ինչ այլակերպութիւն, սակայն և այսպէս յայտ առնէ թէ քեզ օրէնքս տուան գրով, և նոցա բնութեամբ իսկ ․ որով և թէ կամիցին՝ և յաղթել իսկ կարէին քեզ, վասն զի ոչ ինչ նուազ քան զքեզ ունէին ․ վասն որոյ 'ի սոյնս իսկ յարեալ ակնարկէ իսկ զառաջիկայսն՝ եթէ զի արդարացուցանէ զթլփատութիւն 'ի հաւատոց, ապա և զանթլփատութիւնն 'ի ձեռն հաւատոյ ․ Յառաջնումն վասն թլփատութեան և անթլփատութեան յիշեցոյց՝ եթէ և ոչ մի ինչ այլակերպութիւն կայ ․ զոր եթէ յայնժամ, եւս բազում առաւել չիք ․ զոր և յայտնապէս իսկ յարդարեալ այժմ․ եցոյց՝ եթէ երկաքանչիւր կողմանքն հաւատոյ կարօտ են, զի ասէ ․ " Ո՛չ օրինօքն ինչ խափանեսցէ հաւատովք, քաւ լիցի, այլ զօրէնսն հաստատեմք ",։ Տեսե՞ր զառաջնորդեալ զիմաստութիւն առաքելոյն և զանեզրութիւնս ․ զի յորժամ ասաց թէ հաստատեմք, եցոյց թէ լուծեալն ոչ կայ հաստատուն ։ Եւ տես զՊաւղոսի զօրութեանն զպատուակալութիւն թէ որպէս կարգեաց ամենայն առաւելութեան որպէս կամեցաւ ․ և ցուցանէ առա ոչ միայն թէ չլուծանէ զօրէնսն, այլ միաբանէ ընդ հաւատոյն և օգնական առնէ ցուցանէ ։ Որպէս զի զնա իսկ ցուցանէ առաջնորդ լինել հաւատոցն, որպէս զի յառաջեալ իսկ զայնս վկայէ ․ քանզի ասէ " վկայեալ յօրինացն և 'ի մարգարէիցն ",, ընդ նմին և սա անձամբ զնա վհատեալ՝ հաւատոյն կարգեաց ․

Այս զխորհուրդ հաստատելով, ասեմ, զօրհնեալն զգործս, և նա վասն զամենայն գործէր կարգէր․ զի զմեղաւորն արդարս արասցէ։ Այս վասն զի նա ոչ կարաց զայս առնել՝ այլ հնարհքն, “Ամենեքեան, ասէ, մեղան”, իսկ հաւատացն եկեալ զայն զամենայն ուղղեաց, վասն զի միաբանականն ընդ հաւատալն արդարանամք, այսպէս ուրեմն հաստատեաց զօրհնեալն զկամս, և վասն որոյ նա զամենայն ինչ գործէր՝ առ զայս 'ի կատարումն էած․ ապա ուրեմն ոչ խափանեաց զնա, այլ կատարեաց։ Այժմ առակէն իսկ եցոյց՝ թէ և առանց օրհնացն կարող էք արդարանալ․ և արդ եթէ զայս ոչ կարացէին օրէնքն գործել, և եթէ հաւատքն չկամէին ընդ օրինացս, վասն զի այս իսկ զհրեայսն կամեցուցանէ՝ կարծելն զայս եթէ հակառակ ինչ իցեն հաւատքն օրինացն, ցուցանէ զայն զոր ոչ յանձնէ ինչ կամի հրեայն՝ ոչ միայն թէ չիցէ հակառակ, այլ մանաւանդ պատերազմակից և գործակից օրինացն են հաւատքս, զոր մանաւանդ ցանկային իսկ լսել։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Այս արդ վասն զի հնարհքն արդարացաք, և 'ի վերայ այնորիկ արժան է մեզ փոյթս զառնել և ցուցանել առաքինութիւն, եթէ զմեծ բարութեանն՝ այսինքն զսէրն բազում փութով պահեսցուք 'ի մեզ։ Սէր է ոչ մերկ բանիւք և ոչ զարդարեալ խօսից հաւանեալ, այլ վերակացութեամբ և գործոց առնել․ որպիսի ինչ զաղքատութիւն լուծանել, աղքատացեալցն խնամ տանել, որք 'ի վիշտս իցեն՝ օգնական լինել, որք 'ի նեղութեանն են՝ վերակացու լինել, որք լան՝ ընդ նոսա լալ, որք խնդան՝ ընդ նոսին զոյգ խնդալ․ քանզի և այս 'ի սիրոյ է։ Ոչէ առանց փոքր թուի խնդալ ընդ խնդացողսն, այլ և յոյժ մեծ և զարմանալի է և փիլիսոփայութեան մասունք է այս ամենայն։ Այս զբազումս զառաւելեալս զի 'ի դժուարին հանդուրժելոյ վշտացն, և զայս առնել առժամայն վհատեն․ քանզի բազումք են որ լան ընդ լացողսն, և որք խնդան ընդ նոսա՝ չլինին խնդակիցք, այլ և արտասուեն ևս յորժամ այլք խնդասցեն, որ է չարակնութեան և նախանձու։ Ապա ուրեմն չէ փոքր առ-

Digitized by Google

ղութիւն յորժամ՝ եղբայրն խնդայ և դու ընդ նմա խըն-
դայցես. այլ և քան զերկասին մեծ է. այս ոչ միայն լալ
ընդ լացողսն, այլ և որ 'ի վիշտսն վերակացու լինի, և ա-
ռաւել ևս մեծ է: Ուրախութեան զիւրեանց զի 'ի վիշտսն
օգնականն լինելին վշտացելոյն և զայդ ընդ նաւին վշտանան.
և յորժամ ընտանիք զաւան, 'ի բաց կացին և հրաժարե-
ցան. քանզի և այսպիսի է չարակնութեանն բանաւորու-
թիւն: Նա զի մեծ աշխատութեանց և քրտանց, և միւսն
յօժարութեան և կամաց միայն, բայց սակայն զզգուշա-
բաղդաւորն բաղդուեք ընկալեալ, իսկ զպիտակարացին զայս ոչ
տեսին յանձին. այլ հայլին և կարիքին յորժամ անտանի-
ցեն զեղբայրն ընտանի զանելոլ և պատուեալ կամ զեկե-
ղեցին բարեպաշտին օգնեալ թէ բանիւ և եթէ այլով օրի-
նակաւ. և սոքա այնպիսիքն ևս դժնեայք լինին: Ասան
զի և ոչ միայն ընդ եղբարն այնուհետև, այլ և ընդ ...
կամացն պատուերագաթ այնպիսեաց:

Արդ զայս գիտելով դադարեա յախտէն. թէ-
պէտ և զեղբայրն ոչ կամիցիս, գոնեա զքեզ խիղճ ազա-
տեա 'ի բերք չարեաց: Ընդէ՞ր պատերազմ 'ի խորհուրդ
մուծանես, ե՛ր վասն զհոգիդ խռովութեամբ լնուս, ե՛ր
վասն զձմեռն գործես, վասն է՞ր զմերձին ներքին սա-
նես, որպէս կարէս միւսիցես. այսպէս անկեալ կաս՝ թո-
ղութիւն մեղաց խնդրել: Ոչ եթէ որք յընկերացն
մնացեալ իցեն և ոչ թողուցուն ուրեանց մեղուցելոցն
գլխադնեա նոցա, և ոչ նա թողու զմեղս նոցա. իսկ որք
զծն իցեն յայլոց ինչ մնացեալ և 'ի նոսա ձեռնարկել
մեղանչել կամիցին, այպիսի ինչ թողութիւն գտցի նո-
ցա. քանզի մերձին անօրէնութեան նոցա ցուցակ է
այս: Ո՛յ այսպիսիքս սատանայիւ ընդ եկեղեցւոյ իսկ մար-
տնչին, մնանանանգ թէ ևս դանաւագոյն սոքա. 'ի նմա-
նէ զիւրովլ է զգուշանալ, իսկ սոքա զկերպարանս սր-
բոյն զգեցեալ 'ի ծածուկ զհուրն բորբոքեն, և նախ զիւ-
քեանս այրեանեն 'ի հնոցն. և զայն ասեն ախտացեալ
են՝ որում ոչ արժանի ու մեռք միայն անհնարին է, այլ
և որ ևս ծաղր և ծանակ է: Ո՛չ սատանա և դադարս,
ասա ինձ, և կամ վասն է՞ր եղբարցեալ անցեալ կաս.
զի՞նչ ինչ չարիք գործեցան զի պայծառ և երևելի եղե-
եղբայրն և ընտանի: Ա՛յ եթէ այսպէս է, հրճուել պարտ
էր և խնդալ և փառաւորել, որպէս զի անդամն քո լու-

սաւոր և երևելի զօրաւ։ Այլ տրտմիս զի Տէր փառաւորի։ Այլ տես ուստի ձգի պատերազմն։

Այլ ոչ, ասէ, Թէ Տէր, այլ հրեշտակն էր։ Սասն նորա իսկ մատուցան առ Տէր փառք. ապա մերժեն և զն պատերազմն առաջի նորա։ Ոչ, ասէ, այս ինչ տրտմեցուցանէ զիս, այլ և զՏէր կամէի փառաւորել։ Եթէ այդպէս իցէ, խնդա ընդ եղբօրն ընտիր գործոցն, և այնպէս փառաւորի ՚ի ձեռն քո Տէր, և ամենեքին ասիցեն՝ օրհնեալ Տէր որ այսպիսի ծառայս ունի, որ յամենայն չարակնութենէ և ՚ի նախանձուէ ազատեալք և մերժեալք են, և միմեանց լաւութեամբքն հաճեալք են և քաղցրացեալք։ Իսկ զինչ ասիցեմ Թէ եղբայր, այլ Թէ և պատերազմող որ իցէ և կամ Թշնամի. և Տէր նովաւ փառաւորի, բարեկամ պարտէաք առնել զնա. իսկ դու զբարեկամն Թշնամի գործես, մանաւանդ զի Տէր փառաւորի ՚ի ձեռն առաքինութեան նորա։ Իսկ եթէ որ զմարմինդ քո առողջացուցանէր յորժամ ախտացեալ էր, Թէպէտ և Թշնամի որ էր զառաջինն, յետոյ բարեկամ համարէիր ախտահեան. իսկ որ զՔրիստոսի մարմինն զարդարէ, այսինքն է զեկեղեցի, Թէպէտ և բարեկամ իցէ՝ Թշնամի վարկանիս, և այսպէս ապա ՚ի ձեռն այլոցն զպատերազմն Քրիստոսի մատուցանես։ Սասն այսորիկ Թէպէտ և նշանս ինչ որք առնիցէ և կամ զկուսութիւն պահիցէ, և պահօք և գետնախշտութեամբ զինքն մաշիցէ, և զինչ առնիցեմք, Թէպէտ և առ հրեշտակս իսկ հասանիցէ այսպիսի առաքինութեամբքն և քան զամենեսեան սուրբ իցէ, և զնախանձ և զչարակնութիւն յանձին կրիցէ, քան զշնացօղն և զաւազակն և քան զգերեզմանակողոպտօն ես անօրինագոյն գտանի։

Իսկ զի մի յաճախ ասացելովքս աղտաղտանիցեմք զբանս, ապա զայն ած զմտաւ զոր և ձեզ դիւրին է իմանալ։ Եթէ որ հուր և բրինձ առեալ և այնպիսի ինչ գործէր ՚ի տունս և զեկեղեցիս ՚ի բաց կործանէր, ոչ ամենեքին որ մերձն կային քարկոծ առնէին իբրև զպիղծ և զանօրէն։ Իսկ արդ զինչ ծախիչ է քան զհուրս զայս, ով որ համեմատէ այնմ բոցոյ, զչարակնութեանն ասեմ և ընդ նախանձուէն, որ ոչ զքարեղէն շինուածս կործանէ և ոչ զոսկի սեղան մանրէ, այլ և որ են պատուականն է քան զոսկի և զոսկի սեղանն, զվարդապետութիւն

իսկ՝ որ շինողն է ժողովրդեանն՝ քակեն և 'ի բաց կոր-
ծանեն, որպիսի՞ ներելոյ և թողութեան արժան ի-
ցեն այնպիսիքն։ Այլ մի՛ ոք ինձ զայն ասիցէ՝ թէ բա-
զում անգամ ձեռնարկեաց և ոչ զօրեաց։ Առն զի 'ի
բարուցն գտանին իրքն. վասն զի և Սաւուղ սպան զ'Դա-
ւիթ, թէպէտ և ոչ պատահեաց։ Ո՛չ ածես զմտաւ՝ ա-
սա ինձ, եթէ ոչխարացն Քրիստոսի նենգես յորժամ
ընդ հովուին պատերազմիս և ցրուես զոչխարսն վասն ո-
րոց և զարիւնն իւր եհեղ Քրիստոս, և զամենայն ինչ
առնոյր մեզ առնել և աշխատել, սոյնպէս և հրամայեաց։
Այլ կամ զայն գիտի՞ք ոչ, յիշես զի տէրն քո զքո փառսն
խնդրեաց և ոչ զիւրն. իսկ դու ոչ զտեառն, այլ զքոյդ.
և եթէ զնորայն խնդրէիր, ապա և քուդ ժամանէիր.
և վասն զի զքոյն նախ յառաջ խնդրես, սորին վասն և
ոչ կարես հասանել։

Այլ արդ զինչ է այսորիկ բժշկութիւն և առողջու-
թիւն։ Եթէ միահամուռ ամենեքին աղօթս առնիցեմք,
և միանգամայն միաձայն առաքիցեմք առ Տէր, որպէս և
վասն այսահարացն. քանզի և սոքա եւս առաւել ան-
կեալ կան 'ի չուառութիւն, և մանաւանդ զի 'ի յօժա-
րութենէ իւրեանց է մոլորութիւնս այս. վասն այսորիկ
աղօթից կարօտ է ախտս այս և բազում խնդրուածոց։
Զի որ ոչ սիրէ զեղբայրն, թէպէտ և ինչս ծախիցէ և
կամ 'ի նահատակութիւն պայծառանայ՝ ոչ ինչ աւելի
վճարէ. յորժամ պատերազմիցի ընդ այնմ՝ որոյ չիք
ինչ մեղուցեալ նմա՝ զմտաւ ած թէ որպիսում տանջա-
նաց արժանի լիցի այնպիսին, և քան զհեթանոսս եւս
չար։ Զի եթէ 'ի սիրելն մեր զսիրելիսն մեր՝ ոչ ինչ
աւելի ունել մեզ ասաց քան զհեթանոսսն, իսկ որ ընդ
սիրելիսն չարակնիցէ և նախանձիցի՝ ո՞ւր գտանիցի կամ
զո՞ր ներել թողութեան ունիցի։ Սա և քան զպատե-
րազմն եւս գժնեայ իցէ, այսինքն չարակնութիւն. վասն
զի պատերազմն 'ի լուծանել պատճառանացն վասն որոյ
էր պատերազմն՝ ընդ նմին և թշնամութիւնն իսկ լու-
ծանի։ Իսկ չարակնութիւն և նախանձ ոչ կարեն եր-
բէք լինել բարեկամ ուրուք. երբեմն յայտնապէս ցու-
ցանէ զկռիւն և երբեմն 'ի ծածուկ. և յայնժամ պատե-
րազմի թերևս և պատճառս ոք ունի ասել, իսկ այս պա-
տերազմ 'ի մոլորութենէ միայն և 'ի սատանայականն

Digitized by Google

բարուց։ Սպախումն ինչ չարութեան որ կարէ նմանե-ցուցանել զայնպիսի անձն. որ իժ և կամ մի քարբ այն-պիսի Թոյնս ունիցի. չիք ինչ անսուրբ և անօրէն քան զայնպիսի անձն։

Այն այս իսկ կործանեաց զեկեղեցի, ծնաւ զհեր-ձուածս, զեղբարս զայլ գլխեաց և Թանալ եւս 'ի հարա-զատին յարեան, և զգթութեանն զգեհեա 'ի բաց ընկեցաց և զխնհու դրունս եբաց և զանէծան զայն 'ի գործ իսկ արկ։ Իսկ այնչափ զծեռաց է ախտս այս, զի ոչ զծնողաց ուզ և ոչ զեղբարց զհարազատութիւն և զգութ եւս յիշել հեղցն, այլ այսպէս զնա փառաւոր կազմեաց և յայնպիսի խնամութիւն ած, մինչ զի և ի՞նչ ասացել զնա և ասել՝ թէ «Ի քեզ դարձն նորա և դու տիրեսցես նմա». տակայն զնա և ոչ այն կարաց արգելուլ յիրացն, թէ-պէտ և զպատուարադացն մեղադրութիւն եթող և զեղ-բայրն հնազանդեցոյց նմա։ Որք այնպէս անբժշկելի է ախտս այս չարակնութեան և նախանձու, մինչև բնաւ դեղ կազմեալ՝ զիւր զընտանի ներխութիւնն բժշկեաց։

Ո՞ր վասն ողբաս և արտասուես, ով հեքդ և թշուառա-կան, զի պատուեցաւն նա։ Ոչ այս սատանայական մնաց է։ Իսկ զի եղբայրն ընտիր գտաւ, այլ մարթ է քեզ զայնց ունել զնախանձու է. որպէս զի թէ կամի-ցիս յաղթել, մի սպանաներ և մի 'ի միջոյ բառնար. այլ թողցես թող կեայ, զի պահեսցիս իւրքն ձանկութեան, և յաղթեսցես մինչդեռ կենդանին է. և այսպէս զասնի քո պսակն պայծառ։ Իսկ այժմ յորժամ սպանաներդ, զդատն զամբաստանութեան զմեղին 'ի վերայ քո հաներ։ Ոչ ոչ ինչ յայսպիսեացս ձանձրացեն չարակնութիւն և նա-խանձ։ Ո՞ր վասն այսչափ հարեալ ես յապականեցա 'ի փառս։ Մերկացաք միայն բնակեմն յափշտակեալ 'ի վերայ երկրի։ Սակայն և ոչ արգել զնա յիրացն. այլ զամե-նայն 'ի բաց Թօթափեալ 'ի հօգւոյն, և զուգեալ ընդ սատանայի պատերազմէր ընդ եղբօրն. քանզի նա իսկ էր պատերազմակից Սատանի և զօրավար։ Իսկ վասն զի ոչ շատացաւ այնու զի եղև մարդն մահկանացու, և մա-հուն օրինակաւ մեծագոյնս ածէր յառաջս կատարմա-նաց, և եղբայրասպան հաւանեցուցանէր լինել։ Տենչէր և այրէր թէ երբ լինիցի նմա տեսանել զիրսն 'ի գործ ելեալ, որ ոչ երբէք յառաջ մերձակէր չարեաց։ Սակայն

յարժամ կալանաւոր զոր թշնամին ունիցի, և նորա զմը-
ծիռ մահու ընկալեալ՝ առաւ կամէր թշնամին սպանանել՝
թէ զի էր մինչև 'ի քաղաքս եկեալ էր մտեալ էր և
ոչ հատանել 'ի սերգի մահուանն, այնպէս և սատանայ
յայն յայնժամ գործէր։ Սակայն թէպէտ և լուաւ թէ
'ի հող դառնալոց է մարդն, ոչ շատացաւ այնու, այլ
երկնէր ունելի ինչ սպանանել՝ զորդի քան զհայր յառաջ
մեռանել և եղբայր զեղբայր խողխողել, 'ի տխեղծ հա-
ւանի քանութեանն ապականել։ Տեսե՞ր որչափ առաքի-
ւորեաց նախանձ. տեսե՞ր որպէս եղեց զանխայզ բարս սա-
տանայի, և այսպիսի ոսզան ամենայն արեամբ յօրի-
նեաց առաջի նորա որպէս և ինքն խոկ խնդրէր։

Որախիցուք այսուհետև յախտէ չարակնութեանն և
'ի նախանձուէ. Ոչ անդր չէ և չէ խոկ հնար 'ի հրոյն յայն-
մանէ փախչել որ պատրաստեալն է սատանայի, թէ ոչ
զերծանիցուք յայսպիսի հիւանդութենէ։ Իսկ զիարդ
մարթիցի զերծանել, ասեն։ Եթէ զմեռաւ ածիցեմք զայն
որպէս Քրիստոսն սիրեաց զմեզ և հրամայեաց մեզ զմի-
մեանս սիրել։ Որպէս սիրեաց զմեզ. զարիւն իւր պա-
տուական եհեղ վասն մեր մինչդեռ թշնամիքն էաք և
մեծամեղք։ Զայն և դու արա առ եղբայրն. վասն
այսորիկ ասէր. "Պատուիրան նոր տամ ձեզ զի սիրեսջիք
զմիմեանս որպէս ես սիրեցի զձեզ"։ Սահմանաց
եթէ և ոչ այս խոկ հատանէ 'ի չափն յայն, քանզի նա
վասն թշնամեաց գործեաց զայս։

Այլ ոչ կամիս զարիւնդ քո հեղուլ վասն եղբօրն,
ընդէ՞ր և զհոգայն հեղուս և զանց առնես զսկսելութեանն
օրինացն. քանզի նա զոր ինչ գործեաց՝ ոչ որպէս զպար-
տական, այլ դու եթէ զայս գործես՝ զպարտսն վճարես.
Քանզի և այն որ զբիւր տաղանդն պարտէր և զհարիւր
դահեկանն պահանջէր, ոչ միայն վասն այնորիկ տան-
ջէր զի պահանջէրն, այլ զի և 'ի ձեռն երախտեացն
չեղաւ բարւոք և ոչ հայեցաւ 'ի տերն և հեռեւեաց
կամաց տեառն և 'ի բաց եթող զպարտսն. զի և պարտք
խոկ էին որ 'ի ծառայէն լինէին։ Զամենայն զինչ և
ածիցեմք մեք՝ որպէս պարտականք զպարտսն վճարեմք.
առ որ վասն և ինքն խոկ ասէր՝ թէ "Յորժամ զամե-
նայն ինչ արասցէք, ասասջի՛ք՝ անպիտան ծառայք եմք,
զոր ինչ պարտէաք արարաք"։ Ուստի և մեք

ցուցանեմք, թէպէտ ինչս տայցեմք կարօտելոց, պարտաւոր լինիմք. և ոչ զի սկսանք միայն երախտիս առնել, այլ և ՚ի նմին յամեսցուք: Այլ արդ ընդէ՞ր զերկուս զքեզ յայտնանէ որ զքեզ տեղւոյն կամի առնել ամենայնի: Սորին վասն քեզ հրամայեաց տալ այլոց, զի դու ինքնին քեզէն ունիցիս. մինչ միայն ունիս, և ոչ դու իսկ չունիցիս. իսկ յորժամ ընկերին տայցես, ապա և դու առնուցուս:

Այլ արդ զի՞նչ զոյգ կայցէ այսմ ոտիրոյ. զարիւնն իւր եհեղ նա վասն թշնամեաց, իսկ մեք և ոչ ինչս երախտաւորացն. նա զիւր իսկ զարիւնն, իսկ մեք և ոչ զինչս. նա յառաջ քան զմեզ, իսկ մեք և ոչ յետ նորա. նա վասն մերոյ փրկութեան, մեք և ոչ վասն մերոյ օգտի: Չանգիր ոչ եթէ նման ինչ յօգուտ լինիցի ՚ի մերումս մարդասիրութենէն, այլ զամենայն իսկ զշահս ՚ի մեզ դարձուցանէ: Սորին վասն և հրամանն տալոց տալ, զի մի անկցուք յընչիցն: Որ օրինակ եթէ ոք մանկան արծաթ տայցէ փոքր մի և հրամայէ պահել ըզգուշութեամբ, և կամ ուրեք ՚ի ծառայիցն առանց ունոյթ ինչ, և մինչդեռ պահիցէ՝ մատուցեալ այլ ոք յափշտակիցէ, զնոյն և մեզ առնէ: Տուր, ասէ, կարօտելոց, զի մի ոք յափշտակիցէ զայն ՚ի քէն. առայժմ ինչ է կամ զրպարտողք կամ աւազակք կամ գող. և յետ ամենեցուն այսոցիկ մահ: Մինչդեռ քեզէն միայն ունիս զինչսն, չեն ՚ի զգուշութեան. ապա եթէ ինձ տաս զնոսա ՚ի ձեռն աղքատաց, ես քեզ պահեմ զնոսա ամենայն զգուշութեամբ, և ՚ի ժամանակի ընդունելութեան բազում աւելորդութեամբ հատուցանեմ քեզ. առնում ՚ի քէն ոչ զի ծախեցից, այլ զի բազմապատկեցից զինչսն. և զամենայն հաւատարիմ պահեցից, և ապա յայնմ ժամանակի տամ ցքեզ յորժամ ոչ մահն կարասցէ և ոչ խիղ:

Այլ արդ ո՞վ ոք քան զմեզ իցէ անմտագոյն, որք և ոչ յետ այսչափ խոստմանց տամք նմա փոխ: Մի՞ է վասն այնորիկ իսկ եմք չքաւորք և մերկք և աղքատք երթամք առ նա. քանզի զոր ինչ հաւատացաք մեզ՝ չունիմք եթէ ոչ զնա այնմիկ աւանդեսցուք՝ որ ամենայն զգուշութեամբ պահելն խոստացաւ: Սորին վասն և զմեղքին զդատապարտութիւնս եմք ընդունելոց: Այլ յորժամ առաքանի-

ցինքս, զի՞նչ կարիցեմք առնել վասն կզաստեանս այսորիկ, զո՞ր քաղաքս տասն զնիցեմք, զո՞ր պատուասիրանատրութիւն՝ յորժամ ասիցէ թէ ընդէ՞ր չետուք ինձ զնինջան, չհատուցէ՞ք թէ պարձեալ մեծա տասուելութեանց ընդդունիմ։ Եւ ո՞ր բան ունիցի զայս եթէ մինչեւ քո տըւեալն եր ինձ՝ եւսու քեզ. եւ յորժամ ինձն տայիր, տայս յայտ է թէ եւս քաղում ամուսիր։ Ո՞չ արդեօք զերեսզ եւ զմիտսզ բերկրեցէ առնել ընկերդ. տա՛պ մանաւանդ վասն այսորիկ իսկ արժան է տալ քեզ, զի անդ եւ մեծագոյն զքեզ բերկրիցէ, զոր ոչ ոք երբեք 'ի քէն հանել կարիցէ։ Իսկ արդ 'ի բիւր չարիս հաւանեցուցանեն զքեզ ինչքն. վասն զի որպէս գշուն լինք այնպէս լքքի առ մեծատանանս սատանայ։ Օրը օրինակ եթէ մանուկ հաց 'ի ձեռին ունիցի եւ կամ պզպակուն, եւ երթեալ շուն յափշտակիցէ զայն 'ի ձեռաց մանկանն, սոյնպէս եւ սատանայ ընդ մեծատանեանս գործէ։ Նա արդ տացուք զինչսն 'ի ձեռս հօրն մերոյ երկնաւորի, զի յորժամ տեսանէ զայն սատանայ, 'ի բաց հերքի եւ գնայ 'ի մէնջ, եւ 'ի մերժելոյն նորա 'ի մէնջ՝ տայս հայրն մեր տայ մեզ զամենայն զգեղջութեանս յորժամ ոչ եւս կարիցէ իշխան յափշտակել այսորիկ զհանդերձեալսն խափանել 'ի մէնջ։

Եւ այժմ որպէս շուն զի պարապէ մանկանն եւ ձանձրացուցանէ, այնպէս եւ մեծատունք չեն ինչ ընդհատ յայնպիսի իրաց։ Պարզապէս նոքա առ նոսա սատանայ եւ լսէ զի ամենեցուն բերանք հայհոյեն զնոսա, եւ որպէս զշունն լինք հալածեն, եւ ոմանք ձգեն յայսկոյս եւ յայնկոյս, եւ ոմանք վայս, եւ այլք այլք գոյժ արկանեն։ Եւ ոչ այսչափ ինչ միայն է որ 'ի մարդկանէս լինի նոցա, այլ եւ յախտից չեն ազատք, յարավայնաբանութենէ եւ 'ի փառամոլութեանց, յարբեցութենէ եւ յամենայն գեխութենէ։ Այնպէս եւ փոխ ինչ տայցեն ումեք, զայնուհետեւ 'ի խայլ արկանեն որք զքաղցումն առնուին տայցեն եւ բարերարք իցեն, եւ այնպէս ընդդէմ իմն գործեն զնոսա. վասն զի զբարերարն ամենայն թողեալ որ ոչ միայն հարկաւոր, այլ հարկաւորապէս մեզ շնորհէ, այլ այնոցիկ տան փոխ՝ որք եւ ոչ զգլուխն բազում անգամ տայցեն այսրէն։

Զինչ ինչ արդեօք որպիսին մեզ հատուցանէ, զի

այնչափ բազում ծախս գործեսցէ, աղքատ և առաքինութիւն. զինչ մեզ փառասիրութիւն շնորհէ, զնախանձ և զգա-րանկութիւն. զինչ մեզ ընչից խնայումն ընձեռէ, հոգս և վարանս. զինչ մեզ դարձեալ զեխութիւնն և ան-առակութիւնն ընծայեն, զգեհենն և զթիւնաւոր որդուն-ըն. Այսպիսի են փոխատուք մեծատանցն, այլք են որ յարտաքինս խաւարին տան նոցա զգլուխս փոխոցն, 'ի տոցանէ իսկ են աստէն չարչարս և անհնարութիւն դառն տանջանացն. Այսցին, ասա ինձ, կամիս տալ զփոխն որք այսպէս զքեզ տանջեն, և ոչ հաւատացս զայս Քրիս-տոսի որ զերկինս առաջի քո եդ և զանմահ կեանսն և զանճառելի զբարութիւնսն. Իսկ արդ զի՞նչ պատասխա-նատրութիւն ունիցիմք. Յո՞ր աղագաւ, ասա ինձ, ոչ կամիցիս տալ այնմ, որ եան քեզ մինչև 'ի քէն առնել էր, որ և յետ առնլոյն՝ դարձեալ աճեցուցանէ եւ՝ և տայ. արդեօք յա՞յն տալս զի յետ բազում ժամանա-կաց տայ՝ չհաւատաս. Մանաւանդ թէ աստէն իսկ 'ի մեծոյ տայ. քանզի անսուտ է որ ասացն "խնդրեցէք զարքայութիւն և այս ամենայն յաւելցի ձեզ":

Տեսե՞ր զառաւել առատութիւնն նորա. Այն, ասէ, քեզ պահի անեղծ և ոչ ծախի. և զայս, ասէ, առաւել ընդ կարգի յաւելուածոյ առաւելութեանն տամ, և առանց այսր և զայս ես որ յետ բազում ժամանակաց առնլոյ են՝ աճեցուցանեմ, ասէ, քեզ մեծութիւն. Նաև ան-տարիկ յերկարել զժամանակն և յետ բազում ամաց տամ, զի վաշխն բազմասցի. Ոչինչ ունեանասցէ և սա 'ի փոխատուութենէ. յաճախութեանն իսկ անփոցին որք յետ բազում ժամանակաց հատուցանեն՝ տան զփոխ-սըն, զի զառկախուն բազմացուսցեն. Իսկ որ անդէն առ-ժամայն զամենայն անդէն հատուցանէ՝ 'ի բաց եհատ և զընթացս վաշխիցն. իսկ որ զբազում ժամանակաւ ունի, բազում առնէ և տոկոսիս. Այլ արդ ընդ մարդկան զմե-նսիւք զժկամակք որք առնուն և յապաղեն, այլ և ի-մաստասիրեսցուք եւս վասն աճեցուցանելոյ զինչսն. իսկ առ-նծ այնպէս փախիցուք զատանիսն, որպէս զի վասն սորին իսկ իրաց զանձնագիրսն և յապաղեսցեն տալ զի յետ բա-զում ժամանակաց տայ, և այս զի աստէն իսկ տայ որ-պէս ասացն:

Այլ հանդերձ առասպելակս և այլ ինչ մեծագոյնս մա-

տնտեսարարէ, զի անօգուտ տանջէ զանձինս. քանզի մեծութեան սորայն և գեղեցկութեան ընծայելին այսորիկ զերազանցէ քան զմտերմական զհեշտանս զաշխարհիս։ Վասնզի և չէ իսկ հնար առաքինութեանց մերձենալ և առ ժամանակեայ զանխթութեամբ զառաքինին զայն ընդունել. վասն զի այժմու ժամանակս և զնոսա մեր լի են չարութեամբք և խռովութեամբք և բազում բարս օրինակաց ունին, և ոչ կարեն զանշարժ և զհաստատուն և զանհասանելի զայն զառաքինութիւն ընդունել։

Արդ եթէ ոք յանկարծ քեզ ոսկի պարգևէր որ յօտար աշխարհէ բերեալ էր և չէր հնար առ քեզ ինքն բերել զնկիկն՝ յօժարեալ ոչ ծառայ ունէր և ոչ զուղտ ոք, և առաքէր առ քեզ և ասէր՝ եթէ պատրաստական եմ և կամիմ հանել զքեզ՝ եկ, ո՞չ ապաքէն թերևս անձամբ աղաչէիր զնա և ասէիր՝ եթէ մի յապաղութիւն կոչէր զիս, այլ մինչդեռ առ իս իսկ բերցես և տացես ինձ։ Իսկ զհոգևորականն զայն և զանճառելին և զանհասանելին առատէն կամիս ընդունել. և ո՞ր քան ունիցի զայս։ Ո՛չ է եթէ ասաէն առնուս, ապաքինանալով առնուս. իսկ եթէ այժմ ժամանակի առնուս, անպատրաստ հաստատեալ է քեզ զայն և անխորտն յայլմանէ։ Արդ եթէ առնուցուս, կարօղ ընդունելի. իսկ այլ՝ եթէ անոր, ոսկի ընտրիր. բայց ստակայն և ոչ առ ոք ինչ զելէ զքեզ։ Վասն որոյ յետ անո՞ւ խառնամանցն և այլ ինձ յաւել. այսպիսի ինչ ասէ. անձինս ոչ որ անտի իբրև է ունեցեալ, հարիւրապատիկ առցէ 'ի յաւիտենից յայսմիկ և 'ի հանդերձելումն զհեշտանսն յաւիտենական ժառանգեսցէ։ Ո՞չ եթէ չառնուցուք հարիւրապատիկ, մեք եմք պատճառք, զի ոչ առաք փոխս այնմիկ որ կարողն է պաշտպանել զմեզ տալ։ Այլ արդ ոչ եմ տեսանեմ, ասէ, անձինսնք՝ ստացեալս առ իս հարիւրապատիկ։ Այլ արդ զի՞նչ է, մինչդեռ եթէ փոքր եմ ու և մեծագոյնս ընկալայ։

Այլ արդ ասէ առա ինձ, զի՞նչ մեծագոյնս եմ Պետրոս, ո՞չ զուռկանն միայն և զնաւակին և զերկիցն կարթեան. իսկ նա զանձինսն տիեզերաց առանս երեաց առաջի նորա, և զերկիր և զծով տարածեաց առաջի նորա, և ամենեքեան ցանկային ընդունել զնա 'ի տունս իւրեանց. մինչդեռ եթէ՝ զիւրեանց իսկ զինչսն վաճառեալս և առ նորա ոտսն բերէին, և ոչ 'ի ձեռս ախորժամ

Digitized by Google

իշխեսցեն զնել արկանել, այլ այսպիսի առաքաւորութեանն եւ 'ի պատուոյ նորա խորշեսցին ։ Նոյն այն, ասէ, Պետրոս էր ։ Եւ առ այս զինչ իցէ, այլ զաւ. վասն զի ոչ եթէ Պետրոսի միայն խոստացաւ զայս, եւ ոչ եթէ ասաց՝ քեզ տացեմ, Պետրէ, ասացեալ հարկաւորապէս միայն զբա- այլ զինչ ասէ, թէ "Ամենայն որ որ եթող զտունս կամ զեղբարս, հարիւրապատիկ առցէ աստ"։ Վասն զի ոչ եթէ երեւոյթ ինչ ընտրութիւն առնէ, այլ զգործոցն զկազմութիւն խնդրէ ։

Նոյն զինչ ասեմ, ասէ, զի մանկանցն բազմութիւն կան հօրք 'ի վերայ կանոն ինձ, եւ ցանկամ մեծատունս առ- նել զնոսա ։ Ո՞ր վասն ապաքէն գործես զնոսա. զի ե- թէ զամենայն մեծութիւնս նոցա թողցես, անմերձակա- ցուս իսկ արարեր զնոսա. այլ եթէ զԱծ առնիցես նոցա ժառանգորդ եւ մատակարար, բազում գանձս թողուր նոցա ։ Որ օրինակ յորժամ մեք զանձանց վերջ խաղա- ղիցեսցուք՝ մեծ չլինի վերջ ժառանգին, իսկ յորժամ 'ի նոսա թո- ղուցուք՝ եւս տաւել քան որում ոսկին անփոփեսցուք՝ ըմբռ- նէ, սոյնպէս եւ յինչս լեալ զաւակի ։ Յորժամ մեք զայս- մանէ խափանեսցեմք, նա մերժէ զիւր այցելութիւն 'ի մէնջ. իսկ այլ եթէ առ նա զարձուցանիցեմք զամենայն, եւ զինչս եւ զմանկունս ամենայն զզուշութեամբ կարգե- ցէր ։ Եւ զինչ զարմանք են եթէ առ Ած այսպիսի ինչ իրք լինիցին, որ եւ առ մարդիկ զայդոս տեսանեմք ։ Ոչ ե- թէ ոչ աղաչիցես զոր յայտնեսցանէ որք մերձ առ քեզ կայ- ցեն յորժամ վախճանեսցին առ 'ի խնամ տանել մանկանցն, եւ բազում անգամ կամիցի, բայց խորշի յերեւոյ- թէ առ ամօթոյ լինելոյ զինչն յանդուգն մատուցանել. այլ յոր- ժամ պատուեսցես զնա եւ անուանես ժառանգորդ որ- դւոցն քոց եւ զամենայնն հօրն 'ի նա ընծայեսցես, յայն- ժամ այսպէս եւ նա ահեղութեամբ եւ մեծ հոգաբարձութեամբ ցուցանէ առ նոսա վասն քո պատուելոյն ։

Եւ արդ եթէ կամիս թողուլ մանկանցդ քոց մեծու- թիւն բազում, թող նոցա զԱծ զխնամութիւնն. զի թէ մինչ ողջն էր քո աշխատեալ եւ չարչարեալ նոցա չանէք եւ մարմինս առեալ եւ զկեանս պարգեւեաց, իսկ յորժամ տեսցէ զայսպիսի առատութիւն քո եւ զառաքինութիւն, եւ զատոս յետ քո նոցա յանձն առնիցես, ո՞րպէս ոչ առ- դիւնք բանայցէ առաջի նոցա զամենայն մեծութիւնս ։

Digitized by Google

Օրէթէ Սոփիա փոքր միակերպարանեալ յայլուստ, և մասն զի եւս զինեալ զայն եթէ քան զանձնիշխանութեան զնա նախըն-մեծար հասարակաց, կայ և հնձան 'ի վերայ որոց այ-րայից եղոց ; այլոց զօրու ան թէ միջնորդ եւս տալ ածելոյ Սողոմոնի ցուցանել ամառնութիւն ։

Այլ արդ մի զայն անձանց զմիտս թէ որպէս մեծա-տուն լինել մարթացանք թողուլ որդւոյն, այլ թէ որ-պէս առաքինիս յարդարեցաք զնոսա ։ Ոչ ամենայն յոր-ժամ յառաջ 'ի մեծութիւն, և ոչ մի ինչ բաւականութեան բարս կարեն ցուցանել ապաքինեալ յիմիջիցն տառապելոյ-թիւն . այլ եթէ տեսանիցեն զինքեանս թագաւոր յայտ-նեալ է, կարեն ածել զմիտս թէ բազումք աղքատութեան ատեացան զառաքինութիւն, և մեծութեան անձանց իւրեանց զանազան հասարակացն ։ Այլ արդ մի թողուք նոցա մեծութիւն զի թողցես զառաքինութիւն ։ Ապա զի յայտ անմտութեան իսկ է այս, զի մինչ կենդանիքն էին շտապէին զնոսա անկեալ ամենայն ընչիցն, և արդ բա-զում ինչ 'ի աղքատութեանն թողեր պատճառս որ անձ ճանաչել 'ի հեշտութիւնս ։ Այլ մինչ կենդանիքն էիր, թերևս կարէիր և ուսուցանել նոցա յորժամ չարաչար զինչս 'ի կեր արկանելոյն 'ի զգաստացուցանել և սանձել զնոսա և նուաճել . իսկ այժմ 'ի վախճանելն յետ անվերա-կացութեան և երկրաւորութեան թէ և զինչս բազ-մութիւն թողուցես նոցա, 'ի բուն քաղաքականութիւն մեղաց զմտաւորականն զայնուսիկ և զհեշտս, յաւելլով հուր 'ի հուր և ձէթ հեղուցես 'ի վերայ կենդանեացն որք են 'ի գծնեալ հնոցին ։

Այլ եթէ կամիցիս ամենայն զզուշութեամբ աւանդել զնոսա մեծատունս, թող նոցա զԱծ պարտապան և ոչ ընծայեալ զանդրհասութիւն . զի թէ նոքա առանց ցուցեն զինչս և որոց տայցեն՝ չգիտիցեն այլ ուրեք տանել 'ի ձեռն, այլ բազում ինչ զինչս կամ զպարապոութիւն ուրուք և կամ անհոգութիւն ։ Իսկ թէ քո յառաջեալ զայն փոխ տայցես Այ, ամենայն հաւաստեաւ զանձանս, և յորժ ժառանգեն է անվրդով ընդունել ։ Այս և շնորհս նա վարկա-նի և 'ի պարտապանութեան լինել և այսպէս հատուցանէ յեւ մեծ ամենայն զինչսն . մեծամեծաւս որոց պարտապանն է, զնոսին ևս տալ առնէ . Որպէս այսու հետև զնա քեզ պարտապա-նեա՝ քանզի ոչ ինչ այնչափ փութաս յորժամ բա-

Digitized by Google

զոմ պատրաստականս անձինն, որպէս Պետրոս խնդրեալ յորժամ ումեք պատուիրեցի։ Այլ արդ եթէ կամիցիս զնա քեզ բարեկամ առնել, յամենայն ժամ փոխս առաքեսցես, զի այնու ուրախ լինիցի նա 'ի քեզ. վասն զի որոց չարաչարեն լինի, 'ի բաց կայ և մերժի 'ի նոցանէ. իսկ որոց պատրաստականն է, ընդ առաջ ընթանայ և 'ի գիրկս ընդունի։

Այլ արդ զամենայն ինչ հնարեսցուք առնել, որպէս զի զնա մեզ պատրաստական տեսցուք. վասն զի ժամանակս իսկ այս է փոխս տալոյ, և այժմ իսկ են պէտք ընչից։ Իսկ արդ՝ եթէ այժմ ոչ տայցես աղքատին, և ոչ յետ սատի անդր երթայցես կարելի տալ։ Նա է քաղցեալ, նա է ծարաւեալ, քանզի ծարաւի է քոյոյ փրկութեան. վասն այսորիկ և խնդրէ, որպէս վասն և մերկ իսկ շրջի, զի վաճառէ քեզ զանմահ կենդանին. մի այսուհետև անտես առնելի զնա։ Մի եթէ ինքն կամի կերակրել, այլ զքեզ կերակրէ. և ոչ եթէ զգենուլ փութայ, այլ ըզքեզ զգեցուցանէ և զպատմուճանն զայն զոսկեհուռն զթագաւորական քեզ պատրաստէ։ Չտեսանիցես և զբժիշկսն որք խնամածութն են քան զայլսն, յորժամ որք 'ի ցաւս աշխատեալք իցեն, և հրամայիցեն 'ի բաղանիսն տանիլ և լուանալ, և խնդրեալք ընդ հիւանդին լուանիցին, զի քաղցրագոյնս գտցեն զնոսա. այնպէս և սա գործէ վասն քո աշխատեցելոյդ. Որպէս վասն ոչ հարկաւ և բռնութեամբ խնդրէ 'ի քէն զինչ և կամ պահանջէ ինչ, զի ես առաւել մեծ բարգաւաճ յաւելուածով տացէ քեզ. և զի ուսցես թէ ոչ առ պէտս ինչ ունելոյ խնդրէ 'ի քէն, այլ վասն ուղղելոյ զքո պէտսն։ Որպէս վասն յանդորր և յարհամարհեալ կերպարանս շրջի և զայլս ձգէ. թէպէտ և խոնարհեսցիս մի տայցես, ոչ զարծուցանէ 'ի բաց. և եթէ անարգես, չհեռանայ, այլ զարձեալ մերձենայ առ քեզ, վասն զի յոյժ ջերմեալ է 'ի սէր մեր և ջանայ մերում փրկութեան։

Այլ արդ այսուհետև արհամարհեսցուք զինչսն, զի մի արհամարհեսցուք մեզ 'ի Քրիստոսէ. արհամարհեսցուք զինչսն, զի նովին իսկ ընչիւք հասցուք։ Զի եթէ մեք պահեսցուք զնոսա աստ, բայց եթէ կորուսանեմք զնոսա և աստ և անդ. իսկ եթէ ծախեսցեմք զնոսա 'ի բարի, բազում առաւելութեամբ յերկնաւորն 'ի կեանս հանդերձ բազում ընդունելութեամբ և շահիւք ընդու-

նիցիմք ։ Այլ արդ եթէ որ կամիցիմք լինել մեծատուն, ծախեսցէ զի ընտրեսցի, ցրուեսցէ զի ժողովեսցէ ։ Ապ՛ եթէ նոյն ինչ և չքնաղ երևեսցի այս, տես զայն զոր սերմանեն և զմտաւ ած, տես զի և նա չկարէ ինչ աւելի ժողովել եթէ ոչ զոր ունին ցրուեսցէ ։ Այլ արդ սերմանեսցուք այսուհետև և մեք և մշակեսցուք յերկինս, որպէս զի բազում առատութեամբ հնձեսցուք և յաւիտենական կենացն արժանաւոր գտցուք և 'ի նորին բարութիւնս վայելեսցուք շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հօր հանդերձ Հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

## ՃԱՌ ՈՒԹԵՐՈՐԴ

"Իսկ արդ զի՞նչ ասասցուք զգտանելն Աբրահամու նահապետին մերոյ ըստ մարմնոյ. զի եթէ ի գործոց էր արդարացեալ, ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Ած„։

Ասացաք թէ զատապարտ եղև զամենայն աշխարհ Ած, և եթէ ամենեքին մեղան և պարծանքն արգելան, և եթէ չիք այլ ունակք փրկութեան, այլ միայն 'ի հաւատոցն։ Այժմ և ցուցանել կամի փառօքս եթէ ոչ ամօթոյ ինչ է փրկութիւնս այս, այլ պատճառ փառաց. զի և մեծագոյն քան զայն՝ որ 'ի գործոց։ Նաև զի ամօթալից փրկութիւն չունէր ինչ, այլ և մեծատանսն պատճառս, և զայս ես 'ի միջոյ բառնալ զոյնս անկանէ, ոչ փրկութիւն միայն, այլ արդարութիւն կոչեաց։ Ասացոյ ինչ է զոր ասէն, թէ "Արդարութիւնն Այ նովաւ յայտնի„։ Այլ որ այսպէսն փրկի, բազում համարձակութեամբ ապրի։ Այլ ոչ արդարութիւն միայն ասէ, այլ եթէ յայտնումն արդարութեան Այ։ Նոյնպէս կեալ, ասէ, 'ի ցուցումն արդարութեանն երևի և յայտնի լի լուսաւորապէս և ապացուցանէս. Նոյն առհասարակ և յառաջիկայից զայնս յարգարէ և կարգէ և 'ի համբերութեանն յառաջ մատուցանէ զբանն, զոր և միշտ առնել սովորն է առ 'ի յայտնելոյ, զի դա զի վասն Հ[illegible] կեալ է յա-

Digitized by Google

ասացեալքն, զոր և ՚ի վերադասեան փոյթս գործէր՝ ասէ “Զի՞նչ աւելի է հրէին”. և դարձեալ թէ “Ո՞ւր են պարծանքն՝ արգելան”. և աստ ասէ “Զի՞նչ ասիցեմք զԱբրահամ նախահայրն մեր”։

Այլ վասն զի ՚ի վայր և ՚ի վեր զայս խօսի յեղանակէին հրեայքն՝ ասէ հպարտացեալ էր և են բարեհամ և զթլփատութիւնն նախ նա ընկալաւ, կամի ցուցանել առաքեալ թէ և նա նոյն ինքն ՚ի հաւատոյն արդարացաւ. որ և էր իսկ բազում և առաւել յաղթութիւն Պաւղոսի. Քանզի որք զգործսն ոչ ունիցին և ՚ի հաւատոցն միայն արդարանան, չէ ինչ կարի անպատեհ։ Իսկ որ ուղղութիւնս ինչ չունիցին բոլորովին, այլ միայն ՚ի հաւատոյն ապաւինին և նովիմբք արդարանան, այն են մեծ սքանչելիք, նովիմբ իսկ և զօրութիւն հաւատոցն յայտնի երևի ամենեցուն։ Վասն այսորիկ զամենայնիւ զանց արարեալ զնա միայն անուանէ, հայր զնա կոչէ ըստ մարմնոյ, և արտաքս հանէ զնոսա ՚ի սերտ ազնուականութենէ ազգականութեան նորա, և յառաջ ճանապարհ հարթէ հեթանոսաց առ նորա մերձաւորութիւնն։ Ապա զինչ ասիցէ. “Եթէ Աբրահամու գործովք էր արդարացեալ, ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Ած”։ Ասաց թէ արդարացուցանէ զթլփատութիւնն ՚ի հաւատոց Ած և զանթլփատութիւնն ՚ի ձեռն հաւատոյ, և յարդարեալս զսոյն բաւականս յառաջինսն, և Աբրահամու իսկ մեծագոյնս եցոյց զնա՝ ասէ խոստացաւ նմա, և առնէ պատերազմ ՚ի մէջ հաւատոյն և գործոցն. և ամենայն ջան և աշխատութիւն է, որպէս զի զարդարութիւն նորա ցուցցէ։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և յոլովամ պարկեշտութեամբ ընդ զայս և յառաջին հայր զնա անուանէ, որով և հարկ իսկ էր նոցա հաւանել ամենայնի վասն նորա։ Մի՛ ինձ, ասէ, զհրէից միայն ասեր, և մի զայս ունելն և մի զայն անունն ածեր ՚ի մէջ. ես, ասէ, ՚ի գագաթն ամենեցուն հասանեմ և զնմանէ բուռն հարկանեմ, որ և սկիզբն իսկ ընկալաւ թլփատութեանն, և նովաւ ցուցանէ ամենեցուն, և ՚ի նմանէ իսկ առ սկիզբն թլփատութիւնն։

“Զի թէ Աբրահամու գործովք էր արդարացեալ, ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Ած”։ Այլ վասն զի անյայտ է ասացուածս, ապա հարկ էր նմա յայտնի առ-

նոյն։ Այնպէս ՝նա պարծանք, մեծ 'ի հաւատոց և ոչ եւս 'ի գործոց։ Նոյնպէս ասէ՝ «Թէ 'ի գործոց էր արդարացեալ, ունէր պարծանս, այլ ոչ առ Ած»։ Երեւի այսուհետ թէ կարող էր և 'ի հաւատոցն ունել պարծանս, այլ եւս մեծագոյնս։ Այլ բացուած՝ խել զօրութիւն Պաւղոսի առաքելոյ յորժամ զայսպիսի զպատճառ յընդդիմախօսութենէ առաջիկայացեալ շրջիցէ. որպիսի իմն ունէին 'ի գործոյն փառաւորութիւն պարծանս և համարձակութիւն, զոյնս եւս բազում առաւելութեամբ 'ի հաւատոցն եցոյց։ Զի որ գործովքն պարծի, զիւր ընտանի աշխատութիւնն յառաջ բերէ. իսկ որ 'ի հաւատոցն Այ յարգարութիւն մեծարեալ, մեծամեծ պարծանաց պատճառս ցուցանէ. վասն զի փառաւորեսցէ և մեծացուսցէ զԱծ, զոր ոչ երբեք ընդունելութիւն երեւելեաց յանձին առ, զհաւատսն նախն որ 'ի նա, և զմեծամեծ սէրն որ առ նա է՝ ցուցանէ. և զզօրութիւն նորա յայտնի և լաւ առաւել քարոզեսցէ. վասն զի այս առաւելեալ գործ է և փիլիսոփայական բարուց և բարձրագոյն մտաց։ Այսպէս զի չարաչարեալքն և չզգաստացեալքն ամենեցուն իսկ զիտոյցն է։ իսկ հաւատալն թէ ամենահնարաւոր Հա... Հնարաւորք նա... դէր 'ի վերայ է քան զամենայն ընդունելութիւն միտաց, և որք յայտ վասն նորա զանազանեցին. վասն զի և սէրս սիրոյ նշան այս իսկ է։

Վասն զապաւստանեալն զԱծ և կատարեալ զապաւստանութեան նորա՝ այս մեծագոյն է որք Հաւատացին խոստանալիքն առ նա. քանզի նա լաւ միայն նախ և կատարեալ զապաւստանութեան. իսկ սա լաւս և իմաստ զխնամս նորա ծառայութեան, և քան զգործովքն՝ Համատեղութեան եւս առաւել սրբութեան և փառաւորեսցոյ։ Այսպէս պարծանք միայն ուղղութեան են. իսկ առ զԱծ իսկ փառաւորէ և բարձրացեալն իսկ նորա է։ Պարծի, վասն զի առաւել քան զամենայն զամենայն զօրութիւն զեր 'ի վերայ՝ որ 'ի նորա փառացն իսկ ամենայնի. որպէս վասն իսկ ասէ՝ Թէ առ Ած ունի այսպիսի պարծանս։ Այլ ոչ վասն այսորիկ միայն, այլ և վասն այլոյ իրիք պարծի Հաւատացեալն. ոչ միայն զի զԱծ սիրեաց սիրով սիրելեաց, այլ զի և վասն նորա և 'ի նմանէ 'ի բազում սէր և պատիւ վայելեսցէ։ Այլ որպէս օրինակ նա զինքն մեծագոյն սիրելեաց՝ մեծամեծ ամենայն զինտենէ զմտաւ։ վասն զի այս իսկ է նշան սիրոյ, ամենայն և Ած իմաստասիրեաց զնա. և որ ընդ նմա չարչարեաց և վեր-



Digitized by Google

ժողովն պարտապանեալն էր, ոչ միայն չառնելեաց եւ արդաւանաց, այլ եւ աղքատագոյնս եւս. եւ պատճէն եւս այնպէս, որպէս թէ մեծի ուրուք իրք արժանի գտաւ։

«Ընդունելի որ գործէին՝ չհամարին վարձքն ըստ շնորհացն, այլ ըստ պարտուցն»։ Իսկ արդ այս մեծ իմն իցէ։ Իսկ ոչ երբեք. զի անդ որ հաւատացեալն համարիցի, քանզի ոչ համարէր եթէ ոչ եւ իւր ինչ տալոց լինել էր։ Արդ էր զի եւ ստ ունելի զմեծ պարգեւացն, եւ պարգեւական ոչ զոյգն իսկ, այլ մեծ եւ բազմապատիկն իսկոյն՝ ցուցանել զիւր զառատութիւն եւ զհրաշագործութիւն բարերարն։ Իսկ ոչ լոկ անուն եթէ որ հաւատացէ, այլ թէ «Որ հաւատայն յայն՝ որ արդարացուցանէ զամբարիշտն»։ Ահա ուր պաշտէ իմն իցէ հաւատացողն եւ հաւատացեալն թէ կարող է նա որ յամբարշտութենէ արդարացուցանէ՝ զմեզ յանկարծօրէն եւ առժամայն ոչ թէ ի տանջանացն միայն ազատէ, այլ եւ արդարս գործէ եւ որդեգրէ առաքինութեան արժանիս ցուցանել։ Իսկ արդ մի կարծիցես զայս նուաղ ինչ. զի ամենայն ոչ ըստ շնորհացն համարեալ։ Իսկ զորոյս այս է որ պայծառացուցանէ զգործն հաւատոյն, մինչեւ այսպիսի ինչ վայելչեաց ի շնորհս, որպէս զի այսուհետեւ կարող ցուցանել զհաւատն։ Արդ էր զի եւ փոխարէնն առաւել մեծ է քան զվաստակն. զի ոչ որ վարձքն միայն առնել լինի, այլ եւ արդարութիւն որ առաւելն է քան զվարձսն. քանզի իրք բազմապատկեալ է արդարութիւն քան զվարձսն։

Իսկ իւրեւ ընդ այց զԱբրահամ, ասաց եւ զԴաւիթ ի մէջ բերէ եւ ցուցանէ թէ վկայէ եւ նա ի նոյն արժանի։ Իսկ արդ զինչ ասիցէ Դաւիթ եւ կամ զո՞ երանէ. որ գործով կէին արդարացեալ, եթէ որք հաւատովքն վայելեցին ի թողութեանն եւ ի շնորհացն հաճոյ գտան, եթէ որ ի գործոց եւ վաստակոց առեալ անդէն։ Նոյն երանութիւն յարժանի առնել, զորոյ ինչ առնէ բարութեանց առնել. զոր օրինակ արդարութիւն առաւել քան զվարձսն է, այնպէս եւ երանութիւն քան զարդարութիւն մեծագոյն է։

Արդ ետես եւ եցոյց զարդարութիւն լաւագոյն քան ըզգործսն, եւ ոչ թէ Աբրահամ զայս միայն առ զարդարութիւն, այլ եւ Դաւիթ, ամենայն պարգեւսն՝ այլ ոչ առ ի մեծ, արդ եւ այլով օրինակաւ յայտնի կարծի զայս ...

կեղծաւոր գործել. և զԱստուածութիւն ’ի մէջ բերելով և զօգնու ’ի հաւատոց արկեալ և այսպէս ասէ՝ թէ “Ահաւասիկ և Դաւիթ զարդարութիւնն երանել ասելով, թէ երանի որոց թողան մեղքն„։ Այլ համարիս թէ յաւելուլ ոչ կաւանն, վասն այսորիկ զմիաբանութիւնն ’ի մէջ բերէ։ Այլ ոչ ասաց՝ թէ երանի որոց հաւատացին յարդարութիւն զանձն. Այլ զի գործէ զայս և ոչ թէ առ չլինել մեղ, զի և զբազում առաւելութիւնն ցուցանիցէ։ Ոչ իթէ սոյն երանին է որ զթողութիւնն ընկալաւ ’ի շնորհացն, առաւել բազմաւ ամենայն մեծամեծաց թէ որ արդարացուցանէ և զծանրութիւն եցոյց։ Քանզի որ երանութիւն է, ամենայն անեղծ և պատուականաց ’ի բաց չինջն և բազմամ փառաց գործէն. Քանզի հրամանատար[1] է և փառձաց[2] և փառաց երանութիւն։ Այլ այսպիսի է սորին առաւելութիւնն, մինչև անգամ իսկ զնէ զնա և ասէ՝ թէ “Որ գործեսն, վարձքն ոչ համարին ըստ շնորհացն„։ Որ է իսկ հաւատացելոյն առաւելին բանն, զայն որով մեկացութեանն յարդարութեան ասելովն՝ թէ “Որպէս Դաւիթ ասէ, թէ երանի որոց թողան մեղք իւրեանց„։ Ապա, ասես, զաս, զի ոչ ըստ պարտուց, այլ ըստ շնորհաց առնէ զթողութիւնն։ Արդ առաքեալն ասէ երանի. զայս ասելով ոչ երանէ զայն ընդ վայրէ, եթէ ոչ էր առաւել զփառսն յայտնեալ վայելէր։

Այլ քանզի թէ թլփատութիւնն այս ’ի վերայ թլփատութեանն է. այլ զինչ, թէ “երանութիւնն այս„. որ և առաւելեն է, “Ի վերայ թլփատութեանն է թէ ’ի վերայ անթլփատութեանն„։ Տեսանես զիմաստութիւնն մեծ բարերարութիւն այս և ընդ ումս հաստատեաց, եթէ ընդ թլփատութեանն թէ ընդ անթլփատութեանն։ Այլ արդ ասէ զառաւելութիւնն. ցուցանէ զինքն թէ ոչ միայն չխափանեն յանթլփատութեան, այլ և երեւեցուցին նաև զանթլփատութիւնն ցուցանէ։ Այլ որ երանեցելքն ’ի թլփատութեանն էր Դաւիթ և ընդ թլփատեալսն խօսէր, [illegible] Աբրահամ ’ի յանթլփատութիւնն [illegible]։ Այլ [illegible] զարդարութիւնն և զերանութիւնն, [illegible]

1 Այլքն ունին նաև յաւելուածս. 2 Բարեկամքն [illegible] յաւելուած։

Digitized by Google

մի եցոյց, և խնդրէ թէ զիարդ Աբրահամ արդարացաւ ; յայտ է թէ յերանութենէ արդարոյն արդարացաւ Աբրահամ : Արդ տեսցուք որպէս արդարացաւ, մինչ անթլփատն էր, թէ թլփատութեամբն :

«Ընդ թլփատութեամբն, ասէ, ասեմք համարեալ զհաւատսն յարդարութիւն զԱբրահամու» : Եւ երրորդն զայրոյն ասէ . «Ոչ ինչ ասեն գիրք, թէ հաւատաց Աբրահամ յանձ, և համարեցաւ նմա յարդարութիւն» : Ասա և զառաջին խակ ասէր 'ի մէջ ապաւհեաւն, և ցուցանէ յանթլփատութենէն լինել զզօրութիւնն . ապա յայտնեանէ ընդդիմախօսութիւնս իմն խնդրէ ասելով : Ոչ եթէ մինչ անթլփատն էր, ասէ, արդարացաւ Աբրահամ, ապա էր վասն թլփատութիւնն 'ի ներքս անկաւ : «Նշան առ, ասէ, և կնիք զարդարութեանն որ 'ի հաւատոցն . որ և մինչդեռ յանթլփատութեանն էր Աբրահամ, ընկալաւ զարդարութիւն» : Տեսանես որպէս եցոյց 'ի կարգի պանծալութեան զհրեայսն զօղ, և ոչ զանթլփատութիւնն, և զառաջ յառաջ քան զնոսա : Ոչ եթէ արդարացաւ մինչդեռ անթլփատն էր և զանեցաւ և զանթլփատութիւնն զինի ընկալաւ, ապա առեալն յետոյ եհաւատ հրեայն : Հաւատոյն յայտ եղև թէ անթլփատացն նախ էր Աբրահամ որ հաւատով հաւանեցաւ, և ապա եհաւատ թլփատութիւնն, վասն զի կրկնեան նախահայրութեն ասնուն : Տեսանես զհաւատոյն լուսաւորիչս . զի մինչ չև նորա եկեալ է, ոչ կարաց ապաշխարել հայրապետին : Տեսանես զի չէ ինչ խափանիչ առ թլփատութիւնն : Անթլփատ էր և չարդարեցաւ 'ի հաւատոց . ապա ուրեմն կրտսեր է թլփատութիւն քան զհաւատս, որ և քան զանթլփատութիւնն ևս : Իսկ ոչ կրտսեր միայն քան զհաւատսն է, այլ և յոյժ նուաղ քան զնա էր և 'ի վայր, և այսքան ինչ որպէս նշան ինչ իրաց և ոչ նոյն ինքն վասն որոյ նշանն է, որպիսի ինչ և զօրականացն կնիքն է :

Իսկ էր վասն, ասէ, կնքոյն պէտս ունէր : Ոչ եթէ նա ինչ պէտս ունէր : Իսկ էր վասն ընկալաւ զայն : Զի 'ի լինել նմա հայր հաւատացելոց և որք յանթլփատութենն և հաւատան, և որք 'ի թլփատութեան, և ոչ լոկ որ 'ի թլփատութենէն : Իսկ յաւել 'ի սոյն՝ թէ «Որոց ոչ 'ի թլփատութենէն միայն» . սոյնպէս և ոչ յան-

թլփատութեանն։ Այլ ոչ զի անթլփատն էր՝ էր հայր անթլփատութեանն, թէպէտ և արդարացաւ նախ յանթլփատութեանն, այլ վասն զի հաւատոցն նորա նախանձաւորք գտան առաւել քան զայնոսիկ որք 'ի թլփատութեանն. Զի թէ ոչ զհաւատոյն ցուցանիցեն, ոչ եղեն նոցա նախնի. Թլփատութիւն ընկալաւ, զի երկուցանիցէր մեզ ունողաց զնա նախնի. որպէս զի մի և անթլփատքն 'ի բաց մերժեսցին զթլփատեալսն, և մի որ 'ի թլփատութենէն պարծեսցին հայրապետութեամբն ինչ 'ի վերայ անթլփատիցն։ Տեսանեմն զիարդ յառաջ ածէ ածէին զնա հայր։ Այլ որպէս պատրիարքութեանն քարոզէ թլփատութեանն զարդարութիւն, սոյնպէս մի և անթլփատութեանն յառաջնորդութիւն ունէր քան զթլփատութիւնն. Իսկ յորժամ զնա ընդունին, յայնժամ կարէ լինել նախնի [illegible] զնա, յորժամ զհետ երթիցէ նորին հաւատոցն. և մի հակառակիցէ և մի ընդդէմ կայ յորժամ զօրէնսն 'ի ներքս ածիցէ։ Արմատք հաւատոյքն, ասա ինձ. անթլփատութեանն։ Պարածեալ զինքն ցուցանէ զհետևելոյն հաւատութեանն, և յետցուցանէ զծանուցեալ արդարութեանցն։ Այլ բարւոք ասաց՝ թէ զհետոցն, զի նախանձ նորին հաւատոցն 'ի մեռելոցն յարութեան մարմնոյն. քանզի նա վասն որդւոյն իսկ ընկալաւ զհաւատսն։

Իսկ արդ յորժամ զանթլփատութիւնն 'ի բաց հանիցեն, առաւ ասացիս յայտնապէս զի և ոչ 'ի թլփատութենէն իցէ ինչ քեզ օգուտ։ Այլ թէ ոչ զհետ երթիցես հաւատոցն, թէպէտ և բազում անգամ իցես թլփատեալ, ոչ կարիցես լինել զաւակ Աբրահամու։ Որով զի և վասն այսորիկ իսկ առ զթլփատութիւնն, զի մի զերեալ անթլփատն արտաքոյ համարիցէ, և մի զու զարձեալ 'ի նախանձ զայլս արտահանիցիցես. վասն զի քեզ եղեն նոքա այլ օգնականն և ոչ նմա։ Նա նշանակ առ, ասեն, զայնս հաւատոյ, և այս վասն քո. իսկ այժմ և ոչ այս ինչ է. Վասն զի յայնժամ զու արդեօք ունէիր մարմնաւոր նշանակին, արդ զգաստ հէօնն չեն ինչ պէտք այսպիսումն, վասն զի 'ի հաւատոցն, ասէ, ոչ կարէ 'ի միջոյ առնուլ զբաց անմեղկութ զառաւելութիւն թլփատութեան էր. բայց մանկացն զայս և այսմ յառաջնոյն ունէին։ Այլ վասն զի ընդ հակառակութեան զառաւելութիւն քարոզեալ

ցայր, և ոչ ՚ի միում առնուլ կարգացէր, առաւել քան զմարմ-
նաւոր Թլփատութիւն. զի յորժամ խոնարհեցար ՚ի մարմ-
նաւորս յայս, առ փոքր փոքր մի խոտորեցար գալ և ՚ի
հոգևոյն մխիթարութենէն, և բարձրացեալ փութով. ապա
ընկալցիս զնոյն որպէս զմեծ ինչ շնորհս, և անկանիս խորա-
մանկաց զանձամբ նախանձոյն. Այլ զայս ոչ եթէ ՚ի Թլ-
փատութեանն միայն կարգեցից զնա, այլ և յայլսն ա-
մենեսին. յորս ինչ. ՚ի գոհութեան և ՚ի շնորհս, և ՚ի յաւելուածս.

Այլ զի վասն քո առ զԹլփատութիւն, բայց բայց կարո-
ղին որ ինչ էին, ասէ. «Աշխատ և կանաչ ընթացայք», նա և
զպատճառն ևս զնէ անխափան՝ թէ «առ ՚ի լինել նոցա
հայր Թլփատութեանն»: Նոյն պարտ ասացեալ է նոցա և
զինքն հաւատքն Թլփատութիւն ընդունելով մինչ և միայն մկրտու-
թեան և ոչ ինչ առաւել զձեռքեր քան. Մինչ զի նշան մի-
այն էր յայտնեալ՝ այսինքն է խրատն վասն այսր նշանն է՝
և ոչ նոյն ինքն իրք որ էին հաւատքն. իսկ յորժամ զայս
ոչ ունիցիս, և ոչ նշանն այսուհետև կարէ նշան լինել.
Այլ ուրուք իցէ նշանն, եթէ ուրուք կնիքն՝ ոչ ինչ զօրեն
՚ի կնքեալսն. Որ որդւոց եթէ ոչ զհայրն իւր ցուցա-
նիցէ կնքելով և ՚ի նմանէ ոչ ինչ զօրեն, այսպէս լինի
Թլփատութիւնն յորժամ հաւատքն ՚ի նմանէ ոչ կայ-
ցեն. Որ եթէ արդարութեանն նշանակ է և զարդա-
րութիւնն ոչ ունիցիս, և ոչ զնշանն ունիցիս. քանզի
վասն այնորիկ ընկալար զնշանն, զի խրատն ՚ի կնքեալ լի-
նիցիս. այսպէս ընդունիցիս զնշանն, որպէս զի նախա-
հանդերձեալ ես խնդրել զնոյն. և եթէ առանց նորա
կարող էիր խնդրել, ապա ոչ էր պէտս ինչ նշանին. Ոչ
եթէ զայս արդարութիւն միայն քարոզէ Թլփատու-
թիւնն, այլ և զանԹլփատութեանն արդարութիւն.
ապա ուրեմն ոչ ինչ այլ քարոզէ Թլփատութիւն, այլ
զայն միայն՝ թէ չէ պէտք Թլփատութեան.

«Ոչ թէ յորինեալ է ծառայութիւն, ընդունի-
նոյն էր հաւատքն և խաղաղ ասացեալն». Այս որդ և-
ցոյց եթէ կարևոր էր հաւատքն և երկրորդ. քան զԹլ-
Թլփատութիւն և զօրաւոր քան զորբեմն, և եթէ զա-
քէնուն իւր հաւատոյն. Ո՞ր եթէ անհնարին մեղան,
Նոյն է թէ միոյ անԹլփատեալ էին արդարացան, ապա
ուրեմն և երկրորդքն առ. Ո՞ր եթէ որդիքն է զինու-
Թիւն մեղաց, առանց որդեգրութեան արդարութիւն յայտ-

[illegible]

ուր թողութիւն՝ անդ քաւութիւն, եւ ուր քաւութիւն՝ անդ եւ ոչ մի ինչ պատճառք տանջանաց։ Այլ յորժամ տանջանքն ՚ի բաց մերժեալ գտանին եւ արդարութիւն ընկալեալ ՚ի ձեռն հաւատոցն, ոչ ինչ արգելու խափանի մեզ առ ՚ի լինելոյ ժառանգ աւետեացն։

“Վասն այսորիկ ՚ի հաւատոցն, ասէ, զի ըստ շնորհացն. առ ՚ի լինելոյ հաստատուն աւետեացն ամենայն զաւակին”։ Տեսանե՞ս զի ոչ միայն զօրէնսն հաստատեցին հաւատքն, այլ աւետեացն եւս բնաւ անխափանել. իսկ օրէնքն այսուհետեւ ընդդիմամ են, եւ զշնորհատուն խափանեն, յորժամ ժառանգակիցն զնոյն պատճառեն եւ զաւետիսն արգելու։ Վասն այսորիկ եղեւ ոչ միայն թէ աւետեացն չէին հաւատոքն, այլ եւ յոյժ կարեւորք, մինչեւ ապրել իսկ անհնարին է առանց նոցա։ Իսկ օրէնքն ընդարձակութիւն գործեցին, վասն զի անմեղադրելին աւելին ընդդիմօքն. իսկ սա եւ ոչ սկիզբն սոյն լինել բարկութեան։ “Ուր ոչ օրէնք, ասէ, եւ ոչ յանցանք”։ Տեսանե՞ս զի ոչ միայն զերծեալ զմեղս ջնջեն հաւատքն, այլ եւ ոչ բնաւ անգամ թոյլ տալ։ Վասն այսորիկ ասէ՝ թէ “ըստ շնորհացն”. այսինքն է լուծ. եւ ոչ յավիթենացն, “այլ ՚ի լինել հաստատուն ամենայն զաւակին աւետեացն”։ Երկուս բարութիւնս դնէ աստ. զի եւ հաստատութեան սերմանն, եւ զի ամենայն զաւակին, եւ զի արտաքոյ զաւակացն հրէայն է թէ հեթանոսացի ինչ ընդ հաւատոյն, եւ ժողովէ զնա ՚ի հեթանոսացս, որով ցուցանէ թէ այս հաւատացեալն է քան զոքն։ Ոչ ինչ, ասէ, մնացեալ զերեզ հաւատոյն. մի հակառակէր, այլ եւ ՚ի մասնաւորէ իսկ օրինացն փոխէր զերեզ։

Այլ վասն զի ասաց՝ թէ ամենայն զաւակին, մերկէ թէ որում զաւակի. “Որք ՚ի հաւատոցն են”, ասէ. Այլ մերձեցուցանէ առ հեթանոսս զազգակցութիւն, եւ ցուցանէ թէ ոչ կարեն մերձանալ Աբրահամու՝ եթէ ոչ նմանն նմին հաւատան։ Հաւատոյն երկու ինչ երեւցոյց գործեալ հաւատոցն. եւ զազգականութիւն արդարութեանն ամենայն հաւատացելոց գործեաց, եւ եւս մեծագոյն եցոյց զմեծութիւն քան զամենայն ձեռնագործսն. վասն այսորիկ եւ ոչ լոկ ասաց թէ Աբրահամու, այլ եւ հօրն մերում, որ էր հաւատացելոցն ամենեցուն էր. Աբրահամ՝ միայնաւորն հրէից զաւակացն ասացեալ. “Որպէս եւ գրեալ է, ասէ, թէ

հայր ազգաց բազմաց առաջի եդի զքեզ»։ Տեսանեմն ան-
գամն ՚ի վերայ ամենակարողութեանն լուսոյ։ Ո՜վ խորք, ա-
ռէ, խոնարհեցուցանողն կամ ամբարձեալցուցանողն և հաստատու-
ցանողն վասն առաջին լուսոյ։ Ո՞ այս յառաջադրութիւն յայտ-
նութեան եղեալ, և չէ ինչ վասն նորա առաջնոյ լուսոյ։

Արդ յայսմ ինձ փոխի, և ինքն իւր ցուցանէ զայսպիսի-
ուս զարգացութեանն զօրութեան, և յայտ մեծութեանն
աստուածայինս կարողն զիրսն։ Իսկ զինչ ինչ զոր ասէն,
թէ «Առաջի նորա առաջի Աստուծոյ»։ Իսկ զոր ասէն
այսպիսի ինչ է. որպէս նմա չէ մասն իւիք նմա, այլ ա-
մենեցուն հայր, այսպէս և Աբրահամ։ Իսկ զաւակնան,
որպէս նմա հայր է ոչ ըստ բնութեան ազգակցութեան,
այլ ըստ ընտանի հաւատոցն, այսպէս և սա. ընդու-
թիւնս առաջ մեզ հայր ամենեցուն։ Իսկ վասն զի ոչ ինչ
կարծէին փոքրագոյն զազգակցութեան որք զԱստուածայինն
ամենայն յայտնեաւ, ցուցանէ թէ սա մերձաւորն է, և առ-
նա մերձաւորագոյն զնամին։ Իսկ ընդ այսմ ասացեալ և զայն
յայտնէ՝ թէ փոխարէնն ընդ հաւատոցն զայն առ զեր-
նեն հայր ամենեցուն, այն որ ՚ի պատուիրանութեանն երե-
ւեալն ընտանեաւ էր։ Վասնզի առաջինն ասելով՝ ոչ եթէ
զգուշանայ ինչ յայտնէ կամ զառաջինն, այլ զառաւելութիւն
ճշմարտութեան իւր. զի յառաջիկայսն ասելով՝ նորին նմա է։

Իսկ արդ որ ընդունելիք են, ասա ինձ, յինքենէ հայր
լինել. զայս և խոստացեալքն որ ՚ի ներքոյ կարգէ ասա-
ցեալ։ Այլ հաւատացելոցն և զանազանութեանն այն էր՝ զի
զոր ոչն անուանէ ընդ բնութեամբ, զայսն նոյ ճշմարտութեան ընկալաւ։
Ոչ՝ եթէ կամիս հաւատալ, եթէ աստուածապաշտ հայր-
ապետն, հաւատա թէ և հայր է ամենեցուն. «Առաջի
այնորիկ որում հաւատացեր, ասէ, նոյ»։ Իսկ ոչ այսպէս
միայն, այլ և զայն ևս եդ. «Որ կենդանի առնէ զմե-
ռեալս և կոչէ զոչինչսն իբրև զէսս»։ Ո՛ թէ վասն յա-
րութեան յաւուրսն խոստմանն ասել ընդ, որպէս յայտ է թէ
և վասն հանդերձելոցն ակնածանաց զաւակնաց։ Ո՛ թէ
կարողութիւն էր նորա զմեռեալս կենդանի առնել, և զոչն-
չեղեալս գոլ ՚ի մէջ ածել, ապա կարողութիւն է նորա և
զայս ընել զինքն ընտանեաց որպէս ինձ առնել զնոսա։ Իսկ
որովհետև ոչ էսսն թէ ՚ի մէջ ածել զզգալսն, այլ եթէ
կոչէ՝ զդիւրութիւնն յայտ առնէ։ Ո՛ թէ որպէս
մեզ դիւրին է զգալսն կոչել, այսպէս և նմա դիւրին է և
եւ առնել դիւրին է յոչ գոյէ հաստատել։

[illegible]

ագեալ ինչ և կամ յերկրպագս եղև, և այնպէս արարելոց ունելը։ Նման ուսանելեաց առաւ հեշտեալ, որպէս զի թէ բերք ինչ ամէն անձկալութեան թէ ամենապատճառ մեզ. և լանջն չառնու յանձն, ոչ եթէ իրացն ինչ բնութեան է անկարութիւնն, այլ անձնարգելութիւն չընդունելեացն։

“Զօրացեալ հաւատովք,” ասէ. Տես զԱբրահամու զօրէ հակառակութիւնն. զի մեան զործելեացն և հաւանութելոցն եր բանն, ցուցանէ մտանութեամբ զնորա առնուլ կարօղ զօր զօրութեանն և բազում ուժոյ, և ոչ թէ փոքր ինչ աշխատութիւն։ Նա այսպէս ասէ ասա մերձ կարող ցուցանէ թէ ոչ մինչև որ զգգատնութիւն ազդեաց՝ այլ եթէ զայրապէսն ինչ, և զի թէ որ զհաւատոցն ցուցանէ՝ տանել զօրութեան կարող է։ Զի որ օրինակն աշխատեսն ուժոյ որ զգեստացուցանէ՝ որով կարացէ ընդդէմ կալ անտանելի խորհրդոցն, այսպէս և սա աշխատ տեսն զօրաւոր հոգւոյ, որպէս զի կարիցէ արտաքս մղել ՚ի մտացն զանհաւատ խորհուրդսն։

Զխնդրս զօրացոյց Աբրահամ, ասէ. Հաւատովք, և խորհրդովքն անձգամ զիրսն ոչ շղջեաց. այլ եթէ ոչ կարծանելը։ Նա զխնդրս արգելեալ զհաւատովն. “Կայր փառս Աստ, ասէ, և հաստատեցաւ ՚ի միտս իւր՝ թէ որ խոստացաւն, կարող է առնել։” Նորա ուրեմն չարակամելն ՚ի խոյզ և ՚ի խնդիրս չիք իրս՝ փառաւորել է զնա, որպէս և որ ՚ի խնդիրս արկանել՝ մեղանչէ։ Զի եթէ զառաջինսն խնդրել և ՚ի քննիլ արկանել չէ զնա փառաւորելոյ իրք, իսկ որ զմիածնոյն ծնունդն ՚ի բազում քննութիւնս արկանեն, որպէս զթշնամանող զոք՝ զմեղմին և զգժնեայ զտանջանս ընդունելոց են։ Զի թէ զօրինակ յարութեանն նորա չէ սպառ քննել, որչափ ևս առաւել զանճառաբնին զայն և զատակարգին։ Նա չասաց եթէ հաւատաց լոկ, այլ եթէ հաստատեցաւ խոկ. քանզի այսպէս են հաւատքն, որ քան զտեսիլ աչաց ևս յայտնագոյն դարձէ զմիտսն։ և չէթ այլ խորհուրդք որ կարիցեն մտանել և շարժել զնա այնուհետև։ Քանզի որ բանիւքն միայն հաւատայ, կարէ զալիշխիլ առ հաւատս լինելը. իսկ որ հաւատովքն է հաստատեալ, արտաքսեալ անհաւատացանէ զխորհ ուրերեն; և ոչ ընդունիւն զյաղթ զրոյց և զանհաւատութիւն։

Նոյն թէ ՚ի հաւատոցն արդարացաւ, և եթէ զնա

՚ի հաւատոյն փառաւորեաց, որ մանաւանդ վարուցն վեր առաւելին խօսի է այս. «Լուսաւորեսցէ, ասէ, լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է»։ Նա և ահաւասիկ այս ՚ի հաւատոյն եղև յայտ։ Որպէս զի և որպէս գործքն կարօտ են ուժոյ, այնպէս և հաւատքն. քանզի առ բազում անգամ և մարմինն բաժանեալ զատանի քրիստոնեայն, խօսի անդ մերկ ազատ է աղքատութիւն. արդ յայտ խօսի է թէ մեծ ջանս ունի յարժամ ամենահաւատութեան ապաստանեալ ՚ի վերայ յարութեանն, և ոչ մեկնել ընդդէմ խօսեցի։ Տեսանեմս զի առաքելոյն կարօտ է. սակայն վասն մեծ առատութեանցն ցուցանէ զառ, այսինքն զպարգևելն առ Ած, և զի կարօտ է ուժոյ և ախտաւորութեան զարդարեալ փառաւորելն զԱծ։ Արդ՝ թէ որ խոստացաւն կարող է առնել, թուի ինձ թէ և վասն հանդերձելոցն յառաջ անհնարինս ասաց. զի ոչ եթէ զառժամանակեայսն միայն խոստացաւ, այլ և զհանդերձեալսն. քանզի այս որդեգրութեան էր ակնարկ։ Նոյն ... և Հրեշտակաց մեծագոյն է զՀաւատալն և Նոյնպէս¹ և Հերով։ Զօրացեալ բարեպաշտն զվեր զՀաւատալոյն, մեծ զսքանչ կարեւոր բարեպաշտել զնոյն զանհաւատութիւն՝ որ այսչափ հեղգ և փոքրոգիս զոսկր և անմխիթարս և աղօթս և ոչ մի ինչ լսելութիւնս ունիցի։ Զի որպէս հաւատոյն բարձր և զէր ՚ի վերայ քան զամենայն անձին է, այնպէս և թերահաւատն լինել յամենայն անարգ յանդգնութեան ՚ի կարգս ինչ զենէ զմեզ։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Արդ սոյն ... ՚ի բաց թողեալ ընդ հայհոյութեանն նախանձեսցուք, և փառաւորեսցուք զԱծ որպէս և նոյն նոյնպէս փառս։ Զի ինչ ասէ որ ասէն՝ թէ ետ նմա փառս։ Խորհեցաւ զնորա զարդարութիւն և զամենազօրութիւն զօրութիւն, և զոր լուաւն ՚ի նմանէ՝ զայն ՚ի միտ առ, այսպէս հաստատեցաւ վասն խոստմանցն։ Փառաւորեսցուք և մեք այսպէս զնա և հաւատովք և գործովք, որպէս զի վարձս ընկալցուք՝ առ ՚ի նմանէ փառաւորելոյ։ «Զի զու

1 Յօրինակին գրեալ էր նախաստէ։

առաքելոյս իմ, ասէ, փառաւորեցից ։ Խնդրեսջիք և այլ ինչ վասնորոյ ոչ կարգին, նոյն ինքն փառաւորեսցին զնոյն առժանիս լինելոյ՝ մեզ մեծ շնորհ է։ Ոչ եթէ որք զթագաւորին զօրհնեն մանրադէպ՝ այնու միայն շարադարեն, Թէպէտեւ և այնու ինչ ոչ շահեսցին, այլ զանուն անձ ազգային ինչ, փառք են յաղթանակ 'ի ձեռն մեր փառաւորելոյն զմեր անձին։ Այս կամ՝ ուրեմն առաւելագոյնս այնոցիկ արժանի են յաւրոց 'ի ձեռն Հայրենի նա։ և զայսն ինքն զփառաւորութիւնս՝ վասն մեր կամի զի լիցի, զի նա ինքն չէ կարօտ ինչ փառաց։

Արդարեւ ինչ կարծեսցես զայլ ընդ մեզ ոչ և մանրդէպ, արդեօք որպէս ընդ մեզ և ընդ որդին, կամ որ մեզ Հրեշտակս առ որդին։ Այլ չէ ինչ առաւել քան նախանձութեան, Թէպէտ և այսչափ ինչ 'ի մեզ երգի, վասն զի և առնել իւրն անհնարին է։ Այս արդ արդեօք կամիցիր զու ընդունել փառս 'ի յարգանաց մեծամեծաց և զարմանանալեօ. և ոչ երբեք։ Իսկ աւադ եթէ զու որ փառաւորդ ես ցանկացող ոչ կամեսցես զայս, իսկ որ յամենայն առաւել աղաւան է և զեր 'ի վերոյ քան զամենայն՝ զխնդրել իւրն առ 'ի քէն կարօտ փառաց։ Այլ Թէպէտ և ոչ ինչ է կարօտ առ 'ի մէնջ, այլ վասն մեր, և այս հեշտ թուի նմա. զի եթէ ծառայ լինել հաւատացելոց վասն մեր, որպէս զի զարմանալի է և զայլն ամենայն յանձն առնու վասն որդեն իւրոյ։ Եւ ինչ անպատճառ վարկանելիս որ միանգամ 'ի դէմս փրկութեան մերոյ լինի։

Այս արդ զայս գիտելով փախիցուք յամենայնս մեղաց վասն որոյ նոյն Հայհոյի։ "Որք յերեսաց ածի, ասէ, փախիցէ 'ի մեզանէ "։ Եթէ մերձենալ առ նա ընդունելի[1] զերեզ. ոչ եթէ ինքն առ մեզ գայ, այլ մեք նախ զանձինս անձանց մատնեսցուք։ Այսց ասելով նոյն և զայս եւս կարգելեաց, որպէս զի մի բանաւթեամբ յաղթեսցէ առատնեաց. և եթէ ոչ որք կայցէ առ նմա և տայցէ զօրութիւն և, ասացեալ մեզ, ոչ ինչ կարէ վճարել։ Մանա այսպիսիս զերեսաց զնա որպէս զաւուրդ և զբանտարկ մի, զի մի զոք առցէ մերկ և կապուտ յիւր անձն. և եթէ ոչ անդստին եթէ ընդ անվախ անհնարին զնմանէ, ոչ կարէ մերձենալ առ մեզ. անխափան և ստուգապէս ամենայն ոչ ինչ է, այլ՝ եթէ ոչ մեզ։ Որպէս ուրեմն այնպէս են մեզ փափաք

1 Յայնն խոյմն կամ խնդրէ։

նոցին հաւատոց և սաղմոսարանին փոխութեանն և հոգևոր սաւսերգին. զի ոչ եթէ մարդկան ընծայեցուցանք միայն. այլ թէ և 'ի վերայ կամ իցէ յարմարել 'ի բանս ասացուք զգլուխ նորա, և համապատասխան մերունք խակ աղօթիցն խորհրդականացն ընդ առաջ մեր բանք: Վասնզի անսանել է և ուխտ և առաքինասիրաց մտաց, բայց առաւել և այնպէս յաղթէ. և պատասխանի չունիմ մեք եւս, և բարձրագոյն զաստել բան զնորա վայրան. զի և ոչ առնելանալ բարձրագոյն կարգէ, այլ 'ի վերայ քարոզի. և առաջին օրինակ օձն է: Ով իսկ եթէ 'ի սկզբանն զնա այնպէս կարգեալ ծնօ, մինչ առ աստուածոց այժմ: Որ եթէ առաքինութիւն զայն եթէ զինչ է 'ի սուրբ կենաց նորա, եւ զեղ և զայն թագաւորել և համբերութեամբ զուարճանալ զարթնոյ պատուիրանացն:

Այլ արդ զինչ իցէ 'ի առաքինութեան կանոնն և երկրաւորաց մարմնոյ. 'ի հեշտութենէ 'ի հարստութենէ և յամենայն խակ երկրաւորացն. Ասեն պարզապէս յայտնել առաքինութիւն զոր առ երկինս թագաւոր, նորա և առաքինին զի կայ է և խակ ոչ իւրն այնչափ ամբարտաւան, երկրորդ անզգամ թշնամին և ձեռնարկէ՝ երագ 'ի վերայ հասնի. չունի ասա, մի երկիւղիւ. չգոյն թէ նորա, մի զայրանայցէ. 'ի վերայ երկրի առաջ և ընդ երկրաւորաց. մի ինչ վասն համբերութեան ընդ երկրաւորս, և ոչ երբեք իշխէ մտանել առ քեզ: Այս և ոչ զիարդ խակ մերկ զէմ յանդիմանն պատուիրանացն, այլ որպէս օձ 'ի փուշ թագաւոր առաքինութեանն, համապատասխան մեծութեանն բանի և թագաւոր: Ով եթէ համարձակ զգուշանն, փափուկ երագ և զուարճանալ զնա. Թէ թողլով զխորհս աստուածայինս թագաւորութեանն, իսկոյն խորգալի: Վասն և զնա խակ առ մեզ հոգևորական թագաւորութիւնն, այսպիսին է ասացեալ ամբարտաւան մերոյ Յիսուսի Քրիստոսի և զգուշութեան խորհրդոյ. Որ է մեր թագաւորութիւն. որ ոչ միայն 'ի փոխեալ առաքելոց 'ի մերկ երկնիցն հանէ, այլ և 'ի հուրն խակ դժոխոց զգեցեալն կամենալոյ. Այլ ոչ այսչափ միայն, այլ և զմեր բանս ողջացուցանէ:

Իսկ այժմ՝ եթէ ասասցես՝ եթէ բարձրութեանց չոյժքացուցանէ, յետ միաւորեցն թագաւորութեանն առաջի և ոչ յայտնեսցէ որ զհիւանդութիւնն բժշկեա: Ասեն զի և զմիջոց խակ ընդ Յիսուս բարձրացեալ մեղաց և նեղութեանց և ոչ իւրն օգնական.

իսկ առաւօտեանն կլինն՝ անկանել և 'ի մեռելածին նորա ոչ մեր-ձեցաւ, այլ միայն զորդւոցն նորա բաժանեաց հայրենիս՝ և ա-ժառանգն զաւակաց այնպիսեաց յանձնեցաւ զանձինս: Նոյն ա-նուանն և զիւրայն կայսերութեանցն է. և անուանց և Հիւսիսեան-ցաւթեանց:

Այս արդ սկսաւ ամենայն զօրագլուխք, առաջինք և ազգապետք ամենայն զենմ: Նոյնպէս և Պոմպէոս եղև մեծ և զօրաւորութիւն. և զի 'ի սոյն իսկ 'ի քաղաքին և հայրենեաց մեզ էր, այլ հռոմայեցին այլ ընդ այլոց կառավարեալս զօրս. և զգուշացեալ էր առաւելութեամբ մեծութեան նորա, մինչև հանդերձ նորա մեծամեծ զօրութեամբ աշխարհին: Այս արդ որոց առաւել ժամանակաւ թէ աշխարհի զօրութիւն, յաղթեալ նորա հաւատովն և հանդերձ զենն հա-րուստեան աշխարհին, մեր և ոչ արդ թէ անկանել զօրաց իւրեանց յաղթութեանց: Այս արդ զինչ եղեն դաշանցն [illegible]: բաղձալ և արդի արդի է ընդունութեան բա-րեաց որպէս բարի կարգի քաղաքաց ազգի և հայրենեաց մեզ: Աստ զի նախնի մեզ և ծնունդ և այլոց և յաղթութեան բնու-թեան և զհռոմայեցւոց զօրս յետոյ ձգեալ որպէս և մեր, այլ այլոց առաւելութիւն եղ մեծ և զօրաւոր և [illegible] քանի զամենեցուն, նախանձողաց և օրինաց և հաւատոց:

Այս արդ նախնեացն այնքան ձեռն, և առաջնորդ և մեր բազմաց առաքել 'Աղեքսանդրի. քաղաքս զանձանց իսկ այս-մեք նոր վասն մեր: Աստ այսպիսիք և կառավարող զզօրաց բանից զայս, և ոչ կարեմք թէ անկանել և զաւակաց լինի. այլ յաղթեցին մեզ 'ի ձեռն ամենայն կամաց: Դիպեցաւ ոչ կարեմք զնոսա արդէն և առաւել 'ի ձեռն իւրոյ Հռովմայեց-ւոց, այլ զթագաւորն զինուորս և մեզ հայրենեաց զօրաց փառաւորութեան և ամենայն բարութիւն զօրաց նոցա զօրացն: Աստ որոյ այնպէս է ասացեալ և զօրացուցանել զմեզ անդ զանձանց և հաւատալ հոգևորական առաջինն: Այս յաղթեալ այսպէս զառնել յաղթութեան զնոս, առաջ հնազանդ և մեծութեան հզօրագոյն Կիլիկիոյ: Այս յաղթեալ այս այսպէս յարդարեցան, և զհրեշտակս առաւելեալ խաղաղու-թեան և զհրեշտակացութեան և զզօրականս:

Այս արդ եղիցուք նախնեացն անդրանիկ և առաջնորդք զնոսա զի և 'ի մեր սրբոյ առաքելոյն զհնազանդ զօրս. մեր նախնեացն եղև ոչ իսկ անձանց առաջնորդ. այլ միայն զմեզ ուղիղ կառավարեալք և արժանաւոր առաքելոյն զանձինս նոր

րաս շօշափելեացն, և նոա ինքնին ընդ առաւել ընթանալոյ մեծ։ Այլ քանզի վասն համաձայնութեանցն կամի փորձել զմեզ, սակայն վասն ընթանալոյ ընդ առաւել։ Այսպէս զի և Պետրոսի զտեղութիւնն ոչ այնչափ առաւելոյն, եթէ ոչ այնչափ առաքինութիւնս էր կատարեալ. այնպէս և զմերն յաժամ անտանելի, զի՞նչ ևս ոչ զարմանալի։ Այլ եթէ Ս. Իգնատիոս հնչեցոյց մեզ, առաջ յայնժամ հոգին համարձակ 'ի վերայ և լինելոցիցն այնուհետև քան զերկրաւոր բանագոյն. ոչ եթէ զարտաքսական մարմնոյն կամ զպատանի զմեռանել 'ի մեզ, այլ զարտաքսական և զպատանի և զհրեշտակաց անկրին բնակելոյ 'ի մեզ և զնալոյ։

Ոչ այս առնեմ ոչ զի զմեռանելոյ յարութեան և ոչ զպատմեալ զպարգևս արքայութեան, այլ որ քան զամենայն նշանաւ զպայծառակերպ մեծագոյն է զայն յուցցուք՝ զակերն։ Այսպէս զի որ այս բարութիւն է, և Ներսէսաս խոկալն համարձակ համբերել հարց, և հոգւոյն շնորհ առնելով առնել։ Նաև զի "որ խելն, ասէ, երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա". որ և յայտ մեծամասնութեան երբ էն քան զայն որ զանհրաժեշտ մեծագոյն ասելն։ Այլ ոմն որ այնչափ թշնամանական հայցէ, ասէ, որ ոչ կամեցի զՔրիստոսի անձն 'ի մէջն. մեք որ ընդ մեծամեծ համբերութեամբ և ամենայն իրեք։

Այլ արդեօք ասիցէ ոք այժմ զի՞նչ թէ զինչ խօսիմ. առնում և զամենաչարաչար զմեզ ընդ մեզ զարդարանս և ընդ նմին ընդ յարկաւ ընդ եկեղեցեաւս եթէ ամենեցուն և 'ի նմին միաբանութեամբ և 'ի նմին համաձայնութեամբ միաբանութեամբ, և ընդ նմին հովանաւոր այնպէս զօրեսցէ, և միաբան զառաջնորդ 'ի քէն ընտրեցէ. և զու ասէ թէ պատուիրանք և կանոնք, և բնաւ յերկինս զայցելութիւն իրաց։ Այս ոչ մեծն և 'ի հիացումն զասեմ. անտանելի և քաջ խոկ զխօսել եթէ ընդ նմին ընդ յարկաւ եթէ ամենեցուն և նմին ընդ հովանաւ։ Մանաւանդ եթէ վասն այնորիկ ողջամ խոկ որ այնչափ երբ զմեզ ժողովեցին և մեք երկրպագեմք։

Այլ զօր երկրպագութիւն առաւօտու առնեն, ասեն։ Նա և ոչ մի ինչ. խոկ յարաժամ առաւօտ արձանագրեցեք, այսպէս այս անուն զայս անուն շարադրեաց. խոկ այլ անձն թշնամանեաց յաղթանակաց. խոկ միւսն զոր անուանեաց, ազատ է, յափշտակել, բանագնացել զմեծութիւն. այլ խոնարհ շաղապատանք,

իսկ միւսն բազում նենգութիւնս գործէ։ Իսկ եթէ հնար էր մերկացուցանել զդէմս ձեր, ապա յայնժամ տեսանէիր հաւաստեաւ զայս ամենայն 'ի ներքս, և ապա գիտէիր թէ ոչ մոլիմ զայս ասելով։

Ո՞չ տեսանիցէք զզօրականսն զի յորժամ խաղաղութեան ժամանակ է զիարդ 'ի բաց դնեն զզէնսն, և մերկք և առանց վառուածի շրջին և առանց պատերազմի անցանեն ընդ տեղիսն. իսկ յորժամ զինուն վառիցին, յայնժամ ապա պահապանս և յառաջապահս և գիշերապահս և հրայրեցութիւնս հանապազորդ. և ոչ ևս այնուհետև խաղաղութեան է ժամանակն, այլ պատերազմի։ Նոյնպէս և առ մեզ գտանի լինել. պահեսցուք զանձինս 'ի միմեանց և երկնչիցուք, և 'ի միմեանց ականջս զընկերացն բամբասանս խցիցուք. և յորժամ տեսանեմք եթէ ոք մերձենայ առ մեզ, յայնժամ լռեմք, ապա և 'ի միջոյ բառնամք զամենայն, որ ոչ վստահանալոյ է, այլ երկիւղի։

Բայց զայս առնեմք, ասէ, ոչ առ 'ի փնտռել զնոսա, այլ զի մի զոք փնտռեսցուք։ Վասն այսորիկ իսկ հեծեմ և երկնչեմ զի 'ի մէջ կենդանի եղբարց այնպիսի պահպանութեան կարօտ եմ, որպէս զի մի փնտռեցից 'ի միմեանց. և հրայրեցութիւնք պիտոյին, և պահապանս և յառաջապահս կարգիցեմք։ Իսկ պատճառք ստութեանն և նենգութեանն է՝ սիրոյն 'ի բաց մերժումն 'ի մէնջ. սաստիկ և պատերազմ անհաշտ լինի։ Սորին վասն գտանեմ զի բազումք 'ի հեթանոսս վստահ լինին մանաւանդ քան 'ի քրիստոնեայս։ Իսկ արդ զի՞նչ ասիցեմք, որպիսում անօթոյ է այս արժանի, որչափ արտասուաց, որքան ողբոյ։

Իսկ զի՞նչ առնեմ, ասէ, զի չարաբարոյ է այս նիշ և դժնեայ։ Իսկ ո՞ւր է փիլիսոփայութիւնն քո, այսինքն է իմաստասիրութիւնն. ո՞ւր և առաքելական օրէնքն են որ հրամայեն զմիմեանց զծանրութիւն բառնալ։ Զի եթէ զեղբայր չգիտես 'ի կիր արկանել և օգնել, իսկ օտարին ապա և ուստի՞ կարիցես բարի առնել և օգտել զնա. զի եթէ զքո զանդամն ոչ գիտացեր շահել, զիա՞րդ յօտարացն 'ի քեզ կարասցես յանգուցանել և շահել զոք։ Բայց զի՞նչ գործեցից, յոյժ մղձկեալ եմ առ 'ի բխել արտասուս, զի թէպէտ և աղբիւր իսկ յորդահոս



Digitized by Google

բխէր յաչացս ըստ բանի մարգարէին այնորիկ. քանզի բազում իսկ Ճակատս յայնմ դաշտի տեսանեմ քան յայնժ, եւ չար և դժնդակ: Վասնզի նորա զգաղափարան տեսեալ ասէր. «Որովայն իմ, որովայն իմ ցաւէ». իսկ ես իբրև 'ի միոյ զօրավարէ տեսանեմ զամենեսին վանեալ, և ասա զինչ. ընդդէմ միմեանց սրեալք և զիմեանս խածանեն և պատառեն որպէս գայլոց անզգամս, զոմանս վասն ընչից, զոմանս վասն փառաց և զոմանս ըղի և ընդվայր. այլ և ծաղր եւ առնեն և բերք վէրս ածեն 'ի վերայ միմեանց և այպանեն. և մեռեալս զտանեն ես զատնագոյն մեռելութիւնս քան որք 'ի պատերազմունսն գործին, և զեղբայրական անուննն մերկ բանիւք միայն ունին: Այլ ոչ ունիմ իսկ արժանապէս երգակութեանս այսմիկ գտանել և կամ [illegible] ածել ողբակցութիւնս:

Խաչեցարուք այսուհետև խաչեցարուք յիրաւի, և փափագեցէք հոգևոր սեղանոյս այսմիկ որում առ հասարակ հաղորդիմք ամենեքեան, այնմիկ՝ որ վասն մեր սպանաւ Քրիստոս, նմին զենմանն որ 'ի վերայ սեղանոյս կայ: Մնացուք յորժամ հաղորդիմն ազի, ոչ ես լինին ուսացուք առ այնոսիկ որոց հաղորդեցանն, այլ փախի զգաղուն սեղանն. և որ քան զզազանս ես վայրենագոյնք, ես հանգարտագոյնս քան զոչխարս գործէ: Իսկ մեք այսպիսում սեղանոյ բաժանորդք լինիմք և այսպիսում կերակրոյ հաղորդիմք, և վասնիմք հակառակ միմեանց: Ո՜վ որ պարտն էր՝ որ հակառակորդն մեր ամենեցուն էր սատանայ՝ ընդ նմա կռուել, 'ի միմեանս դարձուցաք: Վասն զի ոչ մեք առ հասարակ վասնիմք ընդդէմ նորա. այլ ընդ նմա միաւորեալ, և մեք ընդ միմեանց, վասն զի նա է զօրավար և վերակացու պատերազմին: Այս ընդդէմ այսպիսում Ճակատու պէտս ունիմք մեք: Իսկ այժմ զնա թողեալ, ընդդէմ եղբարց յուղեմք զաղեղունս: Ո՜վ զաղեղունս, ասեն: Որ 'ի բերանոյն և 'ի լեզուոյն լարի. զի ոչ միայն ձգունս նետից գործեն հարուածս, այլ և բանքն ես առաւել չար աղեղն վէրս գործեն քան զնետիցն:

Այս զիարդ կարիցեմք, ասէ, լուծանել զայսպիսի պատերազմ: Եթէ ածիցես զմտաւ յորժամ զեղբօրէն չար ինչ խօսիցիս՝ թէ վայ, զուցէ տիղմ ինչ բխեցեմ 'ի

քերանցս. և ապա յայնժամ առնուցուս 'ի միտ՝ թէ զանգամն Քրիստոսի այլոց յաչաց հանես և զքո մարմինդ ուտես, և զահագին զդատաստանն զայն զանեղբական քեզ գժնդակս պատրաստես։ Քանզի նա որ 'ի քէն արձակի, ոչ թէ զվիրաւորեալն, այլ զքեզ ապական

Բայց ծառայեաց ինչ արդեօք քեզ եղբայրն և չար արար։ Յոգւոց հան և մի չար ինչ ասեր. արտասուեա մի վասն քոյդ վնասուն, այլ վասն նորա կորստեանն, որպէս և քո տէրն զՅուդայ արտասուէր. և ոչ զի ինքն խաչելոց էր՝ յայն սակս, այլ զնա որ մատնիչն լինելոց էր։ Թշնամանեաց զքեզ և հայհոյեաց. աղաչեա զնա, որպէս զի երագ քաւիչ եղիցի նմա։ Եղբայր քո է, անդամ քո կոչի. ընկալեալ երկուեանք երկնեցան և վասն նորա, 'ի նոյն իսկ 'ի սեղան նմանապէս քեզ կոչեցաւ։

Բայց ասասցես, ասէ, ձոխանայ բարկութեանս, և չունիմ ժոյժ։ Սակայն այսորիկ իսկ են քեզ մեծ վարձք, զորին վասն և զգաստութիւն արժան է քեզ 'ի բաց մերժել։ Քանզի խոցեաց զնա սատանայ և զազդոյ ըղմերան ընկալաւ. մի և դու վիրաւորեր զնա, մի և դու ընդ նմա նմանեցեր եղծօրն։ Մինչ դու զօրաւոր կաս, կալեա և զնա առողջացուցանել. իսկ աղէ՛ եթէ և դու ևս անկանիցիս փոխանակ անդրէն թշնամանելով զնա, ապա այնուհետև ո՞վ զքեզ յարուցանիցէ. այն որ վիրաւորեցաւն, այլ չէ բաւական մինչդեռ անկեալ կայ 'ի գետնի. իսկ զո՞ւ որ այժմ զինքդ անկար յետ նորա. և զիա՞րդ որ քեզ ինքեան չկարացեր բաւական լինել, այլոց ձեռն կարկառես յօգնականութիւն։ Այլ այսուհետև առաքինութեանց և յառաջ մատո զվահանն, և զնա որ մեռեալ է՝ ձգեա և հան 'ի պատերազմէն քայլ երկայնմտութեանց։ Խոցեաց զնա արտմութիւն, մի և դու խոցեր, այլ և զառաջինն նետն 'ի բաց հան։

Ապա եթէ այսպէս սիրիցեմք զմիմեանս, իսկոյն ամենեքին առաժամայն ողջք գտանիցիմք. իսկ թէ հակառակ միմեանց զինիմք, այնուհետև և ոչ ինչ պէտք սատանայի 'ի կորուստ մեր։ Սակայն զի քան զամենայն պատերազմունս դժնեայ և զառնագոյն այն է որ 'ի ցեղակցութենէն լինի. և ևս դժնեայ քան զպետականութիւնն՝ որպէս զի ասացեալ ևս է պատիւ արգարութեանն մե-

Digitized by Google

րոյ, մանաւանդ թէ ազգակցութիւնս այս մեծ է իսկ քան զայն :

Սպան երբեմն զԱբէլ եղբայրն և զազգակցութեանն արիւնն եհեղ. այլ այս մահ եւս դառնագոյն քան զայն է. զի որչափ մերձաւորութիւնս այս մեծ է, սաստկութեամբ այս քան զայն : Սան զի նա զմարմինն տապաստ արկ, իսկ դու ընդդէմ հոգւոյն արեցեր զատարն : Այլ չար ինչ կրեցեր զառաջինն, և այն զինչ է. վասն զի ոչ եթէ ըկրելն է չար, այլ որ զչարն առնէ՝ այն է չար. Տես այսպիսի ինչ է. սպան Կայէն, սպանաւ Աբէլ. արդ ո՞վ ոք էր մեռեալ. որ յետ մահուանն գոչէր "Ձայն արեան եղբօր քո, ասէ, գոչէ առ իս յերկրէ", եթէ որ կենդանւոյն զեղբայրն և սատանէրն : Նանզի սա էր զոր աղօրմելի բազում անգամ քան զմեռեալս էր տեսանել. զի լաւ է մեռանիլ քան զմեռանել, թէպէտ մինչև 'ի մահ իսկ է :

Ուսիր և զայն թէ որպիսի չարիք են մեռանելն զայրս, թէպէտ մինչև յարիւն ոք զօրեցէ դործել զչար : Սեբաւորեաց և 'ի վայր կործանեաց նա զեղբայրն. սա ո՛ տանջէր : Բարձաւ 'ի միջոյ և սպանաւ առանց իրաւանց Աբէլ, և 'ի վախճանելն կշտամբէ և ասէ և յանդիմանէ. իսկ նա 'ի կենդանութեանն լուռ կայր և ամաչէր և զչարէր յամենեցունց և ընդդէմ իւր գտանէր զիրսն. վասն զի ոչ զոր ինչ կամէրն զայն կարաց յօրինել : Սպանանէ զնա, քանզի և եւս սիրեցեալ յԱյ ակն ունէր թէ և 'ի սպանանելն և 'ի սիրոյն 'ի բաց մերժէ զնա : Իսկ նորա եւս առաւել սիրեցեալ զնա, և յետ մահուանն խնդրէր զնա Ած. "Ո՞ւր է, ասէ, Աբէլ եղբայր քո" : Ոչ եթէ շիջուցեր 'ի սպանանելն զսէրն, այլ եւս առաւել վառեցեր. և ոչ եթէ նուազեցուցեր ինչ զպատիւն սպանմամբն, այլ յոյժ յորդորեցեր : Այառաջ քան զսպանութիւնն հնազանդեցոյց զնա քեզ Ած. իսկ յորժամ ծախեցերն զնա, արդ և մեռեալն զքեզ տանջէ. վասն զի այսպիսի սէր է իմ առ նա, ասէ : Ո՞վ էր արդ որ դատապարտեալ գտանէր, որ չարչարէրն, թէ որ չարչարեցաւն. որ այսչափ վայելեաց յԱյ երախտիս, եթէ որ զչքնաղ և զզարմանալի և զանհնարին զպատասստանն ընդունէր : Զերկեար, ասէ, 'ի նմանէ մինչ կենդանին էր, ունիս երկնչել յետ վախճանի նորա. ոչ

դողայիր մինչ հանդերձեալն էիր տանել զսուրն 'ի նա, տացէ զքեզ դողումն հանապազ. յետ հեղլոյ զարիւնն: Մինչ կենդանին էր, ծառայ քո էր և չկամէիր. յետ վախճանին տէր քո գտաւ ահաւոր և սոսկալի:

Այլ արդ զայս գիտացեալ, սիրելիք, փախիցուք 'ի նախանձուէ, շիջուսցուք զչարութիւնն և տացուք միմեանց փոխ զձեռն, զի այսու ընդունիցիմք զբարւոք պտղաբերութիւնն յառժամեայն կենցաղումս և 'ի հանդերձեալ կեանսն շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր համ-դերձ հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

## ՃԱՌ ԻՆՆԵՐՈՐԴ

“Այլ զի գրեցաւ ոչ եթէ վասն նորա միայն՝ եթէ համարեցաւ նմա յարդարութիւն, այլ և վասն մերոցս համարելոց է, որք հաւատամք յայն որ յարոյց զՅիսուս զՏէր մեր 'ի մեռելոց”:

Բազում և մեծամեծ ասաց վասն Աբրահամու և վասն հաւատոյն նորա և վասն արդարութեան և վասն պատուոյն զոր առ յԱյ. Այլ զի մի ասիցէ լսողն եթէ զի՞ առ իս՝ նա ինքն արդարացաւ, տանի կացուցանէ զմեզ մերձ առ հայրապետին դարձեալ. վասն զի այսպիսի է հոգեւորականն բանին զօրութիւն: Մինչև որք 'ի հեթանոսաց առժամայն եկեալքն՝ որոց չէր ինչ վաստակեալ, ոչ միայն հրէին հաւատացելոց եցոյց ոչ ինչ ունել նուազ զհեթանոսսին, այլ թէ և ոչ քան զհայրապետն իսկ: Մանաւանդ եթէ պարտ է զարմանալի ինչ և մեծագոյն ասել, եթէ այսչափ ինչ է մեր բարի ազգակցութիւնս, որպէս զի նորա հաւատքն մերոյս օրինակ լինէին: Այլ ոչ ասաց, թէ նմա հաւատացաւ՝ այլ և մեզ, զի մի 'ի խոր հուրդս արկանիցէ ինչ զլսողն. այլ ճշմարտութեամբ բար-բառի զԱծայինն օրէնսն, և 'ի գրոց առնէ ամենայնի վճիռ: Ո՞ր վասն գրեցաւ, ասէ. զի և մեք հաւատացուք՝ եթէ նոյնպէս արդարանամք. քանզի 'ի նոյն իսկ

Digitized by Google

հաւատացայք Աստուծոյ և մեք և վասն նորին իրաց, թէպէտ և զդէմսն և զկերպարանսն ոչ տեսաք ։

Այլ իբրև ասաց զհաւատոյն մերոց, ապա ճառէ և զանեզրական զնոյն զմարդասիրութիւնն զոր միշտ և ցանկ յեղյեղու, և զխաչն 'ի մէջ բերէ, զոր և այժմ յայտ արար ասելովն. “Որ մատնեցաւն վասն յանցանաց մերոց, և յարեաւ առ 'ի զմեզ արդարացուցանելոյ„ ։ Տես որպէս ասաց զպատճառս մահուն, զնոյն ինքն և ցուցակ յարութեանն գործէ ։ Զի՞ր վասն խաչեցաւն, ասէ ։ Ոչ վասն անձին ինչ մեղաց, և յայտ 'ի յարութենէն է. զի եթէ մեղաւոր ոք էր և պատժապարտ, ապա ոչ կարէր յառնել. և եթէ յարեաւ, որպէս և յարեաւն իսկ, յայտ է թէ չէր մեղաւոր ։ Այլ եթէ չէր մեղաւոր, ընդէ՞ր խաչեցաւ. վասն այլոց. և եթէ վասն այլոց, ապա ճշմարիտ և յարեաւ ։ Զի մի ասիցես թէ զիարդ կարիցեմք որք յայնչափ բազում մեղաց եմք պարտականք՝ արդարանալ, եցոյց եթէ զամենայն իսկ միանգամայն ջնջեաց զմեղս, և 'ի հաւատոցն Աբրահամու որով արդարացաքն և 'ի փրկչական չարչարանացն ։ Այլ զի հաւատասցէ զբանն զմեղացն թողութեան՝ ասաց զմահուանէ նորա, ապա ճառէ և զյարութենէն ։ Այլ ոչ եթէ վասն այնորիկ մեռաւ, ասէ, զի պատժապարտս տանջանաց և դատապարտութեան գործեսցէ զմեզ, այլ զի ազատեսցէ յայնպիսի իրաց զախեղճս. սորին վասն մեռաւ և յարեաւ, զի զարդարութիւն գործեսցէ 'ի մեզ ։

“Այլ արդարացեալք 'ի հաւատոցն, խաղաղութիւն կալցուք առ Աստուած 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի„ ։ Զինչ է՝ խաղաղութիւն կալցուք ։ Ասենք ոմանք՝ մի ինչ ամբոխեսցուք և մի ինչ հակառակեսցուք յորժամ զօրէնսն 'ի ներքս կամիմք ածել ։ Բայց ինձ թուի թէ վասն առաքինութեան ճառեալ խօսի ընդ մեզ, վասն զի բազում ինչ վիճեցաւ վասն հաւատոցն, և որ 'ի գործոցն արդարութիւնն էր՝ առաւելի եդ. ապա զի մի ոք ասիցէ եթէ ծուլութեան պատճառք ասացուածն է, ասէ՝ “Խաղաղութիւն կալցուք առ Աստուած„. այսինքն է մի ևս մեղիցուք և մի դարձեալ անդրէն յառաջին վարսն դարձցուք. այս է որ առնէ պատերազմ ընդ մեզ և ընդ Աստուծոյ ։

Այլ զիա՞րդ գոյ հնար, ասէ, ոչ ևս մեղանչել ։ Որպէս

Digitized by Google

յաստիճանումն եղև հնարաւոր յորժամ այնչափ ունէաք զդատապարտութիւն մեղաց և միանգամայն յամենայնէ ազատեցաք 'ի ձեռն Քրիստոսի, ապա ևս առաւել այժմ զոր հնար կայ մեզ 'ի նմին արդարութեն։ Ասն զի չէ զոյգ նմին չառնուլ զխաղաղութիւն և զուրախալն զինեալ ունել. որքն վասն որ դժնդակն թուէր, 'ի յոյժ զիւրութիւն եկ։ Այլ արդ կայ մեզ 'ի նմին զիւրութեն և ուղղութեան յանձն առնուլ և նմին պարապել։ Այլ այսու թուի ինձ թէ ոչ միայն զդիւրութիւն ակնարկէ, այլ զևս լաւագոյնն՝ զհաշտութիւնն, զի իւրովքն հաշտեցոյց։ Նաև ընծայնէր եթէ և զայլն ևս երախտիս առ 'ի մեզ։

Այլ զի մի թուիցի ամենց եթէ ձրի զամենայնիւն հաշտեցոյց ընդ հօր, վասն այսորիկ ասէ. "Որով զընծայութիւնն իսկ ընկալաք 'ի հաւատոցն"։ Զի՞ եթէ մինչ հեռաւորքն էաք՝ մերձակայս արար զմեզ, քաղում առաւելութեամբ զմերձակայս ընդունիցի։ Դու և զայն ած զմեռու զիւրոյ ամենայն ուրեք զերկոսին դնէ և զհօրայն և զմերս։ Այլ նորայն պէսպէս և ազգի ազգի, զի և մեռաւ վասն մեր և զմեզ հաշտեցոյց ընդ հօր և մերձեցոյց առ նա և շնորհս ետ անբաւս. իսկ մեք զհաւատոյն միայն ընծայ մատուցաք. վասն որոյ ասէ՝ եթէ "Հաւատովք 'ի շնորհս յայսոսիկ"։ Զո՞ր շնորհս, ասա ինձ. զի արժանի եղաք գիտութեանն այ և դարձաք 'ի մոլորութենէ և զճշմարտութիւնն ծանեաք և ամենայն իսկ բարութեանցն արժանի գտաք 'ի ձեռն մկրտութեանն։ Որքն վասն մերձեցոյց զմեզ, զի զայս ամենայն շնորհս ընկալցուք. ոչ զի միայն լոկ մեղացն թողութիւն լիցի 'ի հաշտել անդ, այլ զի և 'ի բիւր պատիւս վայելիցեմք։ Այլ ոչ այսչափ միայն յայսմ եկաց մեաց, այլ և այլ իմն խոստացաւ՝ զանճառականն զայն և որ քան զամենայն միտս և զբանս գերազանց են բարութիւնքն այն։ Այլ զերկոսին դնէ. յորժամ ասէ զշնորհըս զայս, զմերձաւորսն յայտ առնէ զոր ընկալաքս. իսկ յորժամ ասէ՝ թէ "պարծիմք յոյսով փառացն այ", այսու զամենայն զհանդերձեալսն ցուցանէ։

Այլ քաջիկք ասաց "յորում հաստատեալ եմք". վասն զի այնպիսի են այ պարգևքն, չզոյ կատարումն, չունի եզր և վախճան. այլ ևս մեծագոյն անձէ հանա-

Digitized by Google

պաղ, որ առ մարդիկ այնպիսի ինչ ոչ գտանի երբէք ։ Այսպիսի ինչ է զոր ասեմս. Էաւ ոք զխիզախանութիւն և զփառս և զհարստութիւն, այլ չկայ 'ի նմին համապաղ, խնկոյն և վաղվաղակի անկանի. Թէպէտ և մարդ չհանիցէ 'ի նմանէ զայն, սակայն մահ 'ի վերայ հասեալ զամենայնն անջատէն 'ի նմանէ ։ Իսկ զայն և ոչ մի ինչ յափշտակեսցէ. վասն զի ոչ մարդ և ոչ ժամանակ և ոչ բազմութիւն ինչ իրաց և ոչ նոյն ինքն սատանայ և ոչ մահ յորժամ 'ի վերայ հասանիցէ՝ կարէ հանել զնա 'ի մէնջ ։ Այլ և յորժամ մեռանիցիմքն, յայնժամ առաւել զզուշութեամբ ունիցիմք զնա, և բազում եւս միշտ առ մեզ մնայ և վայելեմք 'ի բարութիւնսն, որպէս զի հանդերձելոցն հաւատացեալք 'ի մերձակայես, և զոր ընկալաքս հաստատեսցուք, և այնց հաւատամք զի զայս ընկալաք ։ Վասն այսորիկ և ասաց իսկ՝ թէ “Պարծիմք յուսով փառացն այ”, զի ուսցիս թէ որպիսում ազւոց արժան է ընդունել զհաւատսն ։ Ոչ միայն վասն տուելոցն, այլ և վասն հանդերձելոցն յոյս, այսպէս հաստատուն և անյայտ է քան զտուեալսս. և վասն նորա պարծիմք իսկ ։ Որքին վասն և փառս կոչեմք, ասէ, զի յայս փառս ամենայն կատարի, քանզի 'ի ձեռն նորա գործի ամենայն ։

Իսկ զինչ ասիցեմք եթէ հանդերձեալ բարութիւնքն արժանի են պարծանաց. նոյն ինքն որ աստէն յաշխարհիս մեզ չարիքն թուին, և նեղութիւնքն որ հասանեն 'ի վերայ վասն նորա, բաւական է զուարձացուցանել զմեզ և ուրախ առնել. վասն որոյ և զնովիմբ ածեալ ասէր՝ թէ “Ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք եւս 'ի նեղութիւնս մեր” ։ Զմտաւ ած թէ որչափ ինչ իցեն հանդերձեալքն, յորժամ որ տրտմականքն թուիցին՝ զուարճանամք վասն նորին յուսոյ. քանզի այսպիսի են այ պարգեւքն, և չիք ինչ 'ի նոսա վհատութիւն ։ Քանզի արտաքին իրաց մրցումն ջան ունի և կսկիծ վիրաց և ընդ իւղ և ընդ փոշի թաթաւումն. իսկ ապա պսակացն բերումն և բազմութեանն գովութիւնք զհեշտութիւն մատուցանեն նմա ։ Իսկ աստ ոչ ինչ այսպիսի էր, այլ 'ի մրցարանին խնկոյն և ջանն 'ի վերայ ։ Վասն զի բազում փորձութիւնք յառնեն 'ի վերայ նոցա յայնժամ, և զի արքայութիւնն յուսով միայն էր խոստացեալ նո-

Digitized by Google

ցա, և որ գժնեայն է՝ այն աստէն առ ոտս, և հեշտու-
թիւնքն անհնկալութեամբ, այս զտեսարաց զչիլան լուծա-
նել կարող էր յառաջ քան զպատկն։ Իսկ ապա յոր-
ժամ յետ պատկացն և զյաղթութիւնն ևս առնուին,
յայնժամ ապա ասէին՝ թէ և 'ի նեղութիւնս պարծել
պարտ է։ Այլ չասաց թէ պարտ է պարծել ձեզ, այլ թէ
պարծիմք մեք. ուրովք կերպարանօքն և զայս ևս 'ի ներքս
ածէ։

Ապ' եթէ զարմանալի ինչ թուի ասացուածն, որք սո-
վածս և շղթայիւքն զնա տանջէինն և թշնամանէինն, և
նա պարծել համարէր այնու, վասն այսորիկ մեծագոյնս
կազմէ և յարդարէ. պարտ է, ասէ, պարծել ոչ միայն
'ի հանդերձեալսն, այլ և յառժամանակեայ չարչարանս
և 'ի նեղութիւնս. քանզի նոցա ինքեանց առանձինն և
նեղութիւնքն բարութիւն թուէին։ Իր վասն արդեօք.
զի համբերութեամբն օծանէին։ Վասն որոյ և ասէր
իսկ թէ "Պարծիմք 'ի նեղութիւնս". ապա և զպատ-
ճառսն յաւելու ասելովն՝ թէ "Նեղութիւնքն զհամ-
բերութիւն գործեն"։ Տես դարձեալ զհակառակու-
թիւնն Պաւղոսի զիարդ անզրէն 'ի հակառակսն շրջէ
զբանսն։ Այլ վասն զի նեղութիւնքն զյուսահատութիւնս
ածելոց էին վասն հանդերձելոցն, իսկ նա ասէ՝ այժմ
արժան է վստահանալ և համարձակել յորժամ 'ի նե-
ղութիւնս եմք, և ոչ յուսահատել 'ի հանդերձելոցն։

"Նեղութիւնք զհամբերութիւն գործեն, ասէ, իսկ
համբերութիւն զհանդէս, հանդէս զյոյս, յոյս ոչ եր-
բէք ամաչեցուցանէ"։ Ո՛ ի ոչ, ասէ, բարձիչ միայն չլի-
նին նեղութիւնքն, այլ և կազմիչ։ Ունին և պտուղ ինչ
յառաջ քան զհանդերձեալսն նեղութիւնքն, այսինքն
է զհամբերութիւնն և զընտիրն գործել որ 'ի փորձու-
թիւնսն են։ Այլ կարէ իմն և առ հանդերձեալսն ըզ-
յոյսն 'ի մեզ սնուցանել, քան զոր ոչ ինչ կայ այլ քաղց-
րագոյն, զնա կազմէ մեզ բարւոք ուղեկից։ Զիք ոք որ
բարիոք համատատեալ իցէ, թէ կարիցէ անհաւատ լի-
նել վասն հանդերձելոցն. զոր օրինակ և որք ապակա-
նեալ միտս ունիցին և միշտ 'ի չարիս կեցցեն, ոչ կամի-
ցին լսել վասն դատաստանին և փոխարէնս ընդունելոյ։

Այլ զիա՞րդ, ասեն, յուսո՞վ իցեն մեր բարութիւնքն.
այս յուսով, այլ և ոչ մարդկային որ առժամայն կոր-

Digitized by Google

ծանի և յամօթ առնէ զյուսացեալսն. վասն զի բազում անգամ ակն ունիմ թէ հասանիցեմք որում ցանկացեալն եմք, և ապա կամ 'ի կենդանութեան և կամ 'ի մահուան այլ ինչ իրք շրջիցին, և նա մնայ անյոյս: Իսկ մերքս ոչ ինչ այսպիսի, այլ հաստատուն և անշարժ է յոյսն: Վասն զի և որ խոստացաւն՝ միշտ կենդանի է. իսկ մեք որ վայելելոցս եմք յայսպիսի յոյս՝ թէպէտ և մեռանիմք, դարձեալ յառնելոց եմք. և չիք ինչ բոլորովին որ զմեզ յամօթ առնել կարիցէ որպէս թէ ընդունայն ինչ և ընդվայր և 'ի վերայ խարխուլ հիման հաստատեալ իցեմք 'ի յոյսն մեր, այլ 'ի վերայ վիմին հաստատնոյ եդեալ է զհիմունս մեր:

Իսկ իբրև վճարեաց զնոսա 'ի բազմադարձութենէն բանիւքս այսոքիւք, և ոչ կայ մնայ յառժամանակեանս միայն, այլ և զհանդերձելոյն կրկին ճառէ, տեսեալ զտկարագոյնսն և որք զառժամանակեանս խնդրէին և ոչ շատացան այսպիսի օրինակօք հաւատալ, զոր օրինակ ասացէն իսկ 'ի մերձակայիս: Իսկ զի մի ոք ասիցէ թէ ոչ կամիցի մեզ շնորհել Աստուած, զի կարող է և միշտ է և կենդանի է՝ զայս ամենեքին գիտեմք, ասէ. բայց եթէ կամիցի տալ՝ այն ուստի՞ է յայտ: Յեղելոցս, ասէ: Յորմէ՞ եղելոցս. զսէրն զոր եցոյց վասն մեր: Զի՞նչ արար, ասէ. զհոգին սուրբ ետ: Վասն որոյ և ասէր իսկ՝ եթէ "Յոյս ոչ ամաչեցուցանէ". և զայս ասելով՝ 'ի տեսակ իսկ ած զաստուածն՝ եթէ "Սէրն այ". և չասաց թէ տուեալն, այլ թէ "զեղեալ 'ի սիրտս մեր", զառատիկն և զառաւելն յոյժ առնէ: Որ մեծ է քան զամենայն ընծայս, զայն մեզ շնորհեաց. ոչ երկին և ոչ երկիր և ոչ ծով, այլ որ քան զայս ամենայն պատուականագոյն է՝ հրեշտակս 'ի մարդկանէ և որդիս այ և եղբարս Քրիստոսի կազմեաց և յարդարեաց զմարդիկ: Իսկ ո՞վ է որ զայս շնորհեաց. հոգին սուրբ: Ապա թէ ոչ կամէր մեզ մեծագոյնս յետ աշխատութեանցն շնորհել պսակս, և ոչ յառաջ քան զաշխատութիւնս զայսչափ զբարութիւնս պարգևէր: Այլ խոպանացեալս և նուաղեալս եգիտ զմեզ և պատուեաց, և ոչ միայն պատուեաց՝ այլ միանգամայն զաղբիւրն ամենայն բարութեանց զեղոյց 'ի մեզ. և այս յառաջ քան զջանսն մեր, թէպէտ և յոյժ ոչ էաք արժանի: Իսկ արդ մի յուսահատ լինիր, վասն զի ունիս

Digitized by Google

մեծ ջանադրով զսէրն. վասն այսորիկ և սա ինքն ասէր՝ թէ յայսմ ոչ անմնչեցուցանէ. և ոչ եթէ մերոց ինչ ուղղութեանց, այլ ա̃յ զամենայն վարկանի։

Այլ յորժամ ասաց զսուրբս Հոգւոյն, մինչ դարձեալ 'ի Ձեռս խաչին. այսպէս ասէ. "Քանզի Քրիստոս 'ի ժամանակի 'ի վերայ ամպարշտաց մեռաւ. հազիւ 'ի վերայ արդարոյ ոք մեռանիցի, իսկ վասն բարւոյ արդեօք և համարձակեսցի ոք մեռանել։ Յայտնեաց ա̃ծ զսէրն իւր առ մեզ"։ Այլ զոր ասէն՝ այսպիսի ինչ է. զի թէ վասն մարդոյ ուրուք որ 'ի գլուխ առաքինութեանն հասեալ իցէ, ոչ կամիցի երբեք մեռանել վասն նորա, զմիամաած զանեաանն քո զսէրն, յորժամ ոչ վասն արդարոյ, այլ վասն մեղաւորաց 'ի ժամանակին խաչեցաւ. որպէս և զայն իսկ 'ի սոյն յարէ՝ թէ "Մինչ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ, ապա մանաւանդ եւս առաւել յորժամ արդարացաք արեամբն նորա՝ ապրեսցուք 'ի բարկութենէն։ Զի եթէ մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ ա̃յ մահուամբ որդւոյ նորա, ապա եւս առաւել 'ի հաշտելն ապրեսցուք կենօք նորա"։ Թուի թէ ամենայն բանք ասացուածին մի և նոյն իցէ. որք հաստատեալ միտ դնիցեն, ոչ է մի և նոյն։ Տես այսպիսի ինչ է. կամի հաւաստացուցանել զնոսա վասն հանդերձելոյն, և նախ յառաջադրոյն յարդարութենէ պակասեցուցանէ զնոսա, ասէ՝ թէ հաստատեցաւ 'ի միտս իւր՝ թէ որ խոստացաւն ա̃ծ, կարող է առնել. ապա 'ի շնորհացն որ առաւն. դարձեալ 'ի նեղութեանցն թէ բաւական են ածել 'ի յայսն զմեզ. և 'ի Հոգւոյն դարձեալ զոր ընկալան, և 'ի մահուանէ նորա, ապա և 'ի մերմէ չարեացն զոր յառաջին ունէաք՝ կարգմէ զայս։

Այլ որպէս ասացին՝ թուի թէ մի և նոյն իմն երևի ասացուածն, և զատն երկու և երեք և եւս բազում։ Նախ զի մեռաւն. երկրորդ անգամ զի 'ի վերայ ամբարշտաց. երրորդ անգամ զի հաշտեցոյց և զի արդարացոյց և եթէ անմահս եւս արար, զի և որդիս եւս զործեաց և ժառանգորդս։ Նաև ոչ 'ի մահուանէն յաղթաւել արժան է, այլ և 'ի պարգևացն որ առւան մեզ 'ի ձեռն մահուանն։ Զի թէպէտ և մեռանելն 'ի վերայ մեր որ այնպիսիքն էաք՝ մեծ էր, իսկ յորժամ երևի յայտնապէս թէ և մեռաւ և պարգևեաց, և զի այսպի-

որ ինչ են պարգեւքն՝ որ եւ զամենայն զլեալ զմեղաց ծածկեն, եւ զկոյս զանզգայսն կարող են ածել ՚ի հաւատս։ Վասն զի եւ չէ այլ ոք որ հանդերձեալն է փրկել զմեզ, այլ նա որ սիրեացն զմեզ մինչդեռ մեղաւորքն էաք, որ եւ զինքն իսկ մատնեաց։ Տեսանես որչափ ինչ ունի զաստուածութիւն կարգիս այսորիկ առ ՚ի հանդերձեալ յոյսն յոր եւ ածելոցն էր զմեզ։

Յառաջ քան զայս երկու ինչ դժուարինք էին առ ՚ի փրկութիւն մեզ. վասն զի եւ մեղաւորք էաք, եւ ՚ի ձեռն տէրունական մահուն արդարանաց. եւ անհաւատալի իսկ թուէր յառաջ քան զլինելն, եւ բազում սիրոյ կարօտ էր որպէս զի լիցի։ Իսկ այժմ յորժամ այս կատարեցաւ, առաւ եւ այն ամենայն դիւրաւ վճարեսցի. վասն զի բարեկամք նորա եղաք, եւ կրկին մեռանելոյ չունի պէտս։ Յորժամ մինչդեռ թշնամիքն էաք այնպէս սիրեաց զմեզ մինչեւ յորդին իւր ոչ խնայեաց, իսկ յորժամ բարեկամն եղաք՝ որչափ ինչ յաւելցէ, յորժամ որդւոյն այնուհետեւ չեն ինչ պէտք ՚ի մահ գալոյ։ Ապա՝ եթէ մեք ոչ կամեցիցեք, ոչ եթէ զի չկարիցէ, այլ վասն զի չկամեցիցեք՝ չկեցուցանէ. զոր անհնարին է առնել վասն զի եթէ չկարիցէ, յորմէ հետէ զորդին ետ եւ ծանեաք զնա եթէ յամենայնի կարող է եւ իւրով կարողութեամբն՝ մեղաւորս գոլով մեզ՝ արդարացոյց։ Ապա զինչ իցէ մեզ առնել եւ խափան առ ՚ի ժամանել հանդերձելոցն։

Եւ մի դարձեալ յորժամ լուար ամբարիշտս եւ մեղաւորս եւ տկարս՝ ամաչիցես եւ խորշեսցիս, այլ լուր զինչ ասէն. «Ոչ միայն այս, այլ եւ պարծիմք եւս յԱծ, ասէ, ՚ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով այժմ զհաշտութիւն ընկալաք»։ Զինչ իցէ՝ թէ «ոչ միայն»։ Ոչ միայն, ասէ, ապրեցաք, այլ թէ պարծիմք եւս յայս ՚ի սոյնս. զոր կարծեն ոմանք թէ արժան է թաքուցանել, որք յայսպիսի չարութեան կեցեալ էաք եւ զկնի ապրեցաք։ Եւ այս ուստի էր, բայց թէ ՚ի յոյժ սիրելոյն նորա զմեզ զորս փրկեացն։ Մեծ նշան իսկ էր այս սիրոյ, զի ոչ հրեշտակք եւ ոչ հրեշտակապետք, այլ իւրով միածնաւն կեցոյց. որպէս զի եւ կեցուցանելն իսկ եւ սքանչելի կեցուցանելն այն է զի իւրով միածնաւն, եւ ոչ թէ իւրով միածնաւն միայն, այլ եւ արեամբն նորա, որ եւ բիւր մեզ պարծանաց պսակս յօրինէ։

Ոչ ինչ առաւել քան զայն մեծ գտանի յորժամ սիրեսցի յԱյ և կամ սիրեսցես զնա. այս քան զհրեշտակս պայծառագոյնս գործէ, այն և քան զհրեշտակապետս առաւել ևս պայծառ, այն և քան զիշխանութիւնս և զպետութիւնս, սա և քան զարքայութիւնն իսկ մեծ է. որոյ վասն և Պաւղոս քան զայն ամենայն զսա առաջին դնէ: Սորին աղագաւ և զանմարմնականսն երանեմ, զի սիրեն և 'ի հնազանդութեան կան նմին: Յոր աղագաւ և մարգարէն զարմացեալ հնչէր՝ թէ «Զօրք զօրութեանց որ առնեն զբան նորա». այնպէս և զսերովբէիցն Եսայի քարոզէր և ցուցանէր եթէ միշտ առ արքունական աթոռոյն մերձ կան և տեսանեն զփառս նորա, որ է մեծ սիրոյ նշանակ:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Նախանձեսցուք այժմ և մեք ընդ վերինն զօրութիւնս. և մի միայն մերձ յաթոռն փառաց փութասցուք կալ, այլ և բնակել ընդ նմա որ յաթոռն նստիցի. քանզի նոյն մինչ աստեայքն՝ սիրեաց և զսէրն իսպառ կատարէ, վասն զի և զարեգակն ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց, և տեղայ 'ի վերայ արդարոց և մեղաւորաց: Իսկ դու գանեայ յետ սիրելեացն սիրեա, վասն զի սիրէ զքեզ 'յոյժ: Իսկ եթէ սիրէ, ասէ, ընդէ՞ր գեհենոս և տանջանս և պատիժս սպառնացաւ: Վասն սորին իսկ սիրոյ որով սիրէն զքեզ: Քանզի կամի 'ի բաց հատանել զանօրէնութիւն 'ի քէն, և որպէս սանձիւք իմն երկիւղիւն արգելու զքո զդիւրով զհոսումն. զամենայն ինչ առնէ և հնարի, և հեշտականօքն և տրտմականօքն, առ 'ի ժողովել զքեզ որ 'ի վայրդ հոսիս, և առ ինքն 'ի վեր տանել կամի, և յամենայն չարեաց մերժել՝ որ քան զգեհենն ևս դառնագոյն է: Իսկ թէպէտ անգամ արդեօք կամիցի 'ի չարիս կեալ քան զմին օր տանջել, չեն ինչ զարմանք. վասն զի այսուքիկ անկատար մնաց են և անբժշկելի ախտի և արբեցութեան:

Քանզի և մանուկ տղայ յորժամ տեսանիցէ զբժիշկն եթէ խարան կամ հատումն մերձ 'ի նա տանիցի, փախչի և 'ի բաց սլանայ, ողբալով ասէ. լաւ է թէ յամենայն ժամ մարմինս իմ նեխութեամբ ծախիցի, և մի

առժամեայն այսպիսի այրանանց վայելել յառաջնութեան ։ Իսկ որ միտս ունիցին առեն՝ թէ քան զխոստմանն հաստատուն բարի է ։ Սոյնպէս և այժմ լաւ են սպասաւորքն քան զտանուտէրսն, քանզի մին զառաջնութիւն գործէ, իսկ միւսն զկարօտս և զհանապազորդ հիւանդութիւն ։ Այլ զի քան զհիւանդութիւն առողջութիւնն լաւագոյն է, ամենեցուն յայտնի է. վասն զի և զաւազակս ոչ յորժամ զկողմն քերիցեն՝ յայնժամ արտասուեմք, և են իսկ արտասուաց արժանի, այլ յորժամ զորմն փորիցեն և զմահս գործիցեն ։ Ո՛չ եթէ լաւագոյն է առէ քան զմարմին, որպէս և էն իսկ, սակս վասն սորա կարևորական պարտ է հեծել և ողբալ. իսկ եթէ չզգայցեն ինչ, և այն ևս առաւել սգոյ արժանի է ։ Վասն զի և որ յանատակ՝ ի սէրս հարեալ են, քան զջերմնակալսն ևս ողորմելոյ արժանի են, և քան զարբեցողս ևս առաւել խոշտանգին ։

Այլ եթէ այս, ասէ, դժնեայ ինչ իցէ, ընդէ՞ր համբիմք ընդ այսպիսի իրս ։ Վասն զի մարդկան՝ լաւ առակարկողին, բազում ինչ որ ընդդէմ է՝ հաճոյ թուի, և ընդ այս համեալք՝ զխարտաչն զանց առնեն. զոր և 'ի կերակուրսն է տեսանել և յառաջինութեան և 'ի վարս նախանձու և 'ի հեշտութեան վայելչութեան և 'ի կանայս և 'ի տունս և որ յայլսն յամենեսին լինիցի ։ Ո՞ր հեշտութիւն է, ասէ ասա ինձ, ընդ կանամբք խառնակել եթէ ընդ արուս, ընդ կանամբս թէ ընդ իշակէզ՝ որ լսին ձարիք ։ Նայց սակայն զբազումս գտանեմք որք զկանանցք զանց առնեն և ընդ անբան անասունս խառնակին, և զարուաց մարմինս անարատեն և զանակալնն յանբնականս զարձուցանեն. բայց սակայն են յամենեցունց ատեցեալք և վարատեալք, և անհնարին տանջանաց ակն ունին ։ Նոյն նոցա, ասէ, այն իմն հեշտ թուի ։ Սորին վասն են թշուառականք քան զամենեսին, զի զանհեշտալիսն հեշտալիս վարկանին. սոքա և զտանջանսն աւելի քան զայլսն ուզերձեն անձանց իւրեանց ։ Զի՞նչ ինչ անհնարին այլ քան զայսպիսի միտս. զի եթէ չէր որովք մեղանչէին, սակս ոչ յաւելուր նոցա չար 'ի վերայ չար. և ոչ այնպիսի դժնեայ տանջանօք ծախէր. քանզի որ զամենայն ինչ արար առ 'ի չքմեղացանել զմարդն, զինչ կամիցի արդեօք զաձօւմն չարեացն ։ Նաս ոչ ուրեմն թէ

Digitized by Google

տանջելն չար է զյանցաւորսն, այլ ոչն տանջելն զայն-պիսիսն. զոր օրինակ և առ հիւանդացեալսն լինի, որք ոչն կամին առողջանալ: Չիք այլ ինչ պատճառք նոցա, բայց միայն անպատեհ ցանկութիւնքն:

Անպատեհս յորժամ ասեմ, զփափկութեանցն ա-սեմ և ընդվայր փառացն և զմեծութեանցն և զամենայն առ հասարակ որ միանգամ աւելի քան զպէտսն իցեն լինիցին: Նաև որ այսպէս կեայ, քան զամենեսին զինքն երանելի վարկանիցի, յետոյ գտանիցի հէք և թշուա-ռական քան զամենայն մարդիկ, իբրև զորիկին ոք զբա-րբարոյ և զգազանաւոր իշխան 'ի ներքս մուծեալ յիւր ո-գին զցանկութիւնս: Վասն այսորիկ և աշխատութե՟ տարար մ̃ծ զառժամանակեայ զկեանս, զի յայնպիսի ծառայութենէ զերծուսցէ զմեզ և 'ի մաքուր ազատու-թիւնն առաջնորդեսցէ մեզ. սորին վասն և գեհեն սպ-առնացաւ և աշխատութեամբ փակեաց զկեանս մեր առ 'ի պնդել զթուլութիւն մեր: Սոյնպէս և Հրեայքն մինչդեռ 'ի կաւին և յաղիւսագործութեանն կապեալ էին, պարզամիտս մատուցանէին և զմ̃ծ խնդրէին հանա-պազ. իսկ յորժամ յազատութիւն վայելեցին, ապա տրտն-ջեցին և բարկացուցին զՏէրն. և բազում ինչ հնարս հնարէր վասն նոցա, և նոքա ոչ կարծէին 'ի չարեացն:

Նաև արդ զինչ ասիցես, ասէ, որք 'ի նեղութեանցն յետոյ զգաստանայցեն և ոչ կարիցեն համբերել: Ոչ ե-թէ նեղութիւնքն գործիցեն զայն, այլ խորեանց ծու-լութիւնն և տկար միտքն. զոր օրինակ եթէ ոք ախ-տացեալ ստամոքս ունիցի և ոչ կարիցէ ընդունել զդառ-նութիւն դեղոցն որ զնայն սրբեսցեն, ոչ եթէ զդեղսն ինչ ամբաստանիցեմք, այլ զհիւանդութիւն անդամոցն: Սոյնպէս և աստ զդիւրաբեկ զպարսն ամբաստանեմք, վասն զի ոչ եթէ 'ի նեղութեանցն գառնայցէ, այլ ցանկութիւն հանգստեան գործէ զայս: Ի եթէ զկքեալն և զհա-տեալն պնդէ և յինքն յարէ նեղութիւնն, որչափ ևս առաւել զայն որ կամիցի բևեռել ընդ նորա ջերմութե՟:

Զիա՞րդ կարիցեմ, ասէ, չվհատել 'ի նեղութեանցն: Յորժամ զմտաւ ածիցես՝ թէ կամաւ և եթէ ակամայ պարտ է համբերել, և եթէ գոհութեամբ առնիցես զայն, յայնժամ շահեսցես զմեծամեծ զօգուտսն. իսկ ապ՝ եթէ վհատիցես և յերկբայս լինիցիս և մտանես-

Digitized by Google

ցես զքեզ տրտնջման, եւս մեծագոյնս քան զնեղութիւնս պատահիցեն թշուառութիւնքն, և առաւել եւս շահանդաղ գործիցես ոգւոյդ:

Այլ արդ զայս զմտաւ ածելով պատրաստ լիցուք, զի զոր ինչ 'ի հարկէ լինիցի՝ զայն յօժարութեամբ խոկ արասցուք: Որպիսի ինչ է զոր ասեմ. որդի ուրուք վախճանեցաւ, և կեանքն և ամենայն մեծութիւնն մեռաւ. այլ՝ եթէ զմտաւ ածիցես թէ որ ինչ եղեն իրքն՝ լուծումն չիք, բայց կայ այլ տարազ մխիթար ինչ գտանել թշուառութեանն, 'ի բարւոք ծախել զինչսն և առաքինութեամբ համբերել որ ինչ դիպեցաւն, և փոխանակ տրտնջմանն գոհութիւնս մատուցանել քում տեառնն, և ապա այսպէս զոր ոչն կամէիր զչարիսն զոր եկին 'ի վերայ քո, դու քոյին յօժարութեամբդ զքեզ յաղթութիւն զարդարեցեր:

Տեսանես զորդի քո յափշտակեալ 'ի քէն, յայնժամ ասա՝ Տէր ետ և Տէր առ: Տեսանես զմեծութիւնն հանեալ ուրուք 'ի քէն, ասա և դու՝ Թէ մերկ եկի ես յորովայնէ մօր իմոյ և մերկանդամ երթալոց եմ: Տեսանիցես զամբարիշտս և զանօրէնս թէ 'ի բարեկենդանութեան են և զարդարս 'ի տանջանս և 'ի կշտամբանս, և ոչ գիտիցես զպատճառս իրացն որ լինիցին. ասա և դու՝ Թէ անասնապէս եմ առաջի քո, սակայն ես յամենայն ժամ ընդ քեզ եմ: Իսկ այլ՝ եթէ զպատճառսն խնդրիցես, ած զմտաւ Թէ հաստատեցաւ օր յորում հանդերձեալ է դատել զտիեզերս ամենայն և զժամանագործոյն 'ի բաց մերժէ յիւրմէ. և յայնժամ ապա իւրաքանչիւր ոք ըստ արժանին ընդունի որպէս Ղազարոս և մեծատունն: Զմտաւ ած և զառաքեալսն, քանզի և նոքա չարչարեալք և խաշտանգեալք և հալածեալք և բիւր ինչ չարչարեալք խնդային, զի վասն անուանն արժանի եղեն անարգանաց: Սոյնպէս և դու այժմ եթէ հիւանդանայցես, համբերեա քաջութեամբ և ոչ պարգևս խոստացիր զայն, ապա և դու սոյնպէս ընդ նոսին առնուցուս վարձս:

Այլ զիարդ, ասէ, որ 'ի հիւանդութեանն իցէ՝ կարիցէ գոհանալ զտեառնէ: Եթէ ունիցիս սէրտ սէր ընդ նմա՝ մարթի: Զի թէ որք 'ի հնոցին անկան երեք մանկունքն և այլք ամենք 'ի տանջանս և ամենք յայլ ինչ 'ի

տանջանս և 'ի նեղութիւնս էին, և ոչ երբեք դադա-րէին 'ի գոհանալոյ և յօրհնելոյ, այս ևս բազում մա-նաւանդ որք յախտս և 'ի հիւանդութիւնս են՝ կա-րող են զայս առնել։ Քանզի չէ և չէ իսկ ինչ որում ոչ յաղթէ յօժարութիւնն. մանաւանդ որք մի՛յն փափա-գիցեն՝ նոցա ոչ հուր, ոչ երկաթ, ոչ աղքատութիւն, ոչ հիւանդութիւն, ոչ մահ, և ոչ այլ ինչ 'ի սոյնպիսեացս երևելի դժնեայ նոցա. վասն զի հարկեալք հարուածեալք են 'ի սէր նորա, և զա̃մ իւիք զանց արարեալ առ երկինս թռչին, և քան զնոսա որք անդն շրջին՝ չեն ինչ ընդհատք 'ի նոցանէ. սորին վասն ոչ զայլ ինչ տեսանեն կամ հա-մարին, ոչ զերկինս և ոչ զերկիր, ոչ զծով, այլ մի միայն զգեղեցկութիւնն փափագելն այսինքն է առ փառս նորա։ Այլ ոչ առժամանակեան տրտմութիւնքն կարեն զնո-սա խանգարհեցուցանել. և ոչ հեշտականքն մեծամեծին ինչ և բարձրանան, որպէս թէ ունիցին զքաղցրականն և զհանգստեանն իրս։

Եկայք և մեք նախանձաւորք այնմ սիրոյ որում չիք այլ ինչ զոյգ, և վասն առժամանակէիս և վասն հան-դերձելոցն սիրեսցուք. մանաւանդ եթէ յառաջ իսկ քան զայս վասն բնութեան սիրոյս, որով կարեմք յայսմ կենցաղոյս և 'ի հանդերձեալ դատաստանացն և յար-քայութիւնն վայելել։ Մանաւանդ եթէ չէ իսկ մեծ ոչ 'ի գեհենէն զերծումն և ոչ արքայութեան վայե-լումն առ որ հանդերձեալս եմ ասել. վասն զի քան զայս ամենայն մեծ է որ զՔրիստոս սիրէ և 'ի նմանէ սիրես-ցի միանգամայն։ Զի թէ առ մարդիկ այսպէս դիպեսցի, յորժամ տեսանեմք զսիրելիսն՝ ամենայն իսկ բա-րութեամբք լնումք, իսկ առ ած յորժամ երկուքեան իրք դիպեսցին՝ ո՞ր բան և կամ որպիսի միտք կարեն յան-դիմանս կացուցանել զերանութիւ այնպիսի հոգւոյ։ Ոչ ինչ և ոչ մի ինչ զփորձ առնու՝ թէ փորձաչէ կարիցեմք 'ի վերայ հասանել հոգևորական այնմ ուրախութեան և երանելի կենացն և բիւր բարութեան զանձուցն. Այլ արդ զամենայն ինչ թողեալ զայնմ սիրոյ բուռն հար-ցուք յուրախութիւն անձանց մերոց. ձգեսցուք զնա 'ի փառս փափագելոյն ած և Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ, ընդ որում փառք հօր հանդերձ հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ՃԱՌ ՏԱՍՆԵՐՈՐԴ

"Զի որպէս 'ի միջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին եւ 'ի մեղաց անտի մահ, եւ այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ որով ամենեքին մեղան"։

Զոր օրինակ ճարտարք 'ի բժշկաց զպատճառս ախտիցն միշտ խնդրեն մինչեւ 'ի նոյն իսկ յաղբիւր չարին հասանեն, այնպէս եւ երանելին Պաւղոս։ Ասաց՝ թէ արդարացայք, եւ եցոյց 'ի հայրապետէն եւ 'ի հոգւոյն եւ 'ի մահուանէն Քրիստոսի՝ եթէ ոչ էր հանդերձեալ արդարացուցանել՝ ոչ մեռանէր. կազմէ եւ այլ ուստեք, որպէս զի այսպիսի օրինակօք եւ զառաջիկայն յայտնեսցէ, այսինքն է 'ի մահուանէն եւ 'ի մեղացն։ Զիարդ եւ կամ որով օրինակաւ խնդրէ թէ եմուտ մահ եւ զօրացաւ։ Ի ձեռն միոյն մեղաց։ Զինչ է՝ թէ որով ամենեքին մեղան։ Զի յորժամ նայն անկաւ, եւ որք ոչն կերան 'ի ծառոյն՝ եղեն ամենեքին 'ի նմանէն մահկանացուք։

"Վասն զի մինչեւ յօրէնսն մեղք էին յաշխարհի. բայց մեղք ոչ համարէին, ուր ոչ գոյին օրէնք"։ Մինչեւ յօրէնսն՝ ոմանք ասեն զայնմ ժամանակէ էր ասացեալ որ յառաջ քան զտալ օրինացն էր, որպէս առ Աբէլիւ, որպէս առ Նոյիւ, որպէս առ Աբրահամու եւ մինչեւ Մովսէս ծնեալ լինէր։ Ո՞ր մեղք էին յայնժամ յաշխարհի։ Ոմանք ասէին՝ այն որ 'ի դրախտին գործեցաւ. վասն զի չեւ եւս, ասեն, էր լուծեալ, այլ եւ ծաղկեալ եւս երեւէր պտուղն նորա. վասն զի առ հասարակ ամենեցուն հասոյց զմահն, եւ զօրացեալ 'ի վերայ բռնութիւն առնէր։ Ի՞ր վասն եւ զայն յարէ, "թէ մեղքն ոչ համարէին, օրէնքն ոչ էին"։ Ընդդիմամարտութենէ Հրէիցն առնու զայս. յորժամ ասաց զմեղսն, ապա եւ զխնդացոյն եւս երեւեր 'ի մէջ. գուցէ ասիցեն թէ զիարդ յառաջ քան զօրէնսն ծախէր մահ զամենայն մարդիկ, որ եւ ինձ թուի մանաւանդ առաքելական մտաց ասացուածս։ Իսկ զինչ իցէ այս որ ասէն՝ թէ մինչեւ յօրէնսն մեղք էին յաշ-

խարհի։ Նմանապէս թուի թէ ՚ի տալ օրինացն և մեղացն զօրացեալ ՚ի յանցուածոցն, և ցայն վայր զօրէր մինչև օրէնքն էին. քանզի և չէր իսկ, ասէ, հաստատուն լինել մեղացն մինչ ոչ զօրէնսն ունիցին։ Ապա՛ եթէ այս մեղք որ յօրինաց առաւել են ծնեալ զմահ, զիա՞րդ առաջին մարդիկն մինչև օրէնքն եկեալ էին՝ մեռանէին. զի եթէ ՚ի մեղաց ընկալաւ մահ զարմատն, օրէնքն ոչ ուրեք երևէին և մեղքն ոչ համարէին, ապա զիա՞րդ զօրացեալ լինէր մահ։ Աստի յայտ իսկ է՝ եթէ ոչ յայս օրինաց ՚ի յանցուածոց ՚ի մեղաց, այլ յԱդամայ յանհնազանդութենէն. վասն զի նա գրաւեալ ունէր զամենայն մարդիկ։ Իսկ ուստի՞ յայտ լիցի այս. անտի զի և յառաջ քան զօրէնսն մեռանէին։

“Իսկ զի թագաւորեալ էր մահ յԱդամայ մինչև ՚ի Մովսէս և ՚ի վերայ չյանցուցելոցն ըստ նմանութեան յանցուածոցն Ադամայ, որ է օրինակ հանդերձելոցն”։ Վասն այսորիկ և Ադամ Քրիստոսի օրինակ էր. զի որպէս նայն որ յինքենէն՝ թէպէտ և ոչ կերան ՚ի ծառոյն՝ եղև պատճառք մահու ՚ի ձեռն յանցանաց իւրոց, նոյնպէս և Քրիստոս՝ որք յիւրմէն թէպէտ և չէին արդարութիւնս ինչ գործեալ՝ եղև առաջնորդ արդարութեան, և ՚ի ձեռն խաչին զամենայն ինչ շնորհեաց մեզ։ Վասն այսորիկ ՚ի վեր և ՚ի վայր զմիոջէս ևեթ ձգանէ և ցանկ զայնս բարբառի. “Որպէս ՚ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին”. և “Եթէ միոյն յանցանօք բազումք մեռան”. և “Ոչ որպէս միոյն մեղուցելոյ պարգևքս”. և “Դատաստանն ՚ի միոջէ ՚ի դատապարտութիւն”. և դարձեալ “Զի թէ միոյն յանցանօք մահ թագաւորեաց ՚ի ձեռն միոյն”. ևս “Ապա ուրեմն որպէս ՚ի ձեռն միոյն յանցանաց”. և դարձեալ “Որպէս թէ յանհնազանդութենէ միոյն մարդոյ յանցաւորք բազում եղեն”։ Իսկ չթողու ՚ի բաց զմինս. զի յորժամ ասիցէ ցքեզ հրեայն թէ զիա՞րդ կարէր միոյն ուղղութեամբն Քրիստոսի աշխարհ ամենայն ապրել, կարիցես և դու անդրէն ընդդէմ պատասխանի տալ նմա՝ թէ զիա՞րդ միոյն անհնազանդութեամբ Ադամայ տիեզերք դատապարտեցան։ Մանաւանդ թէ չեն ինչ զոյգ միմեանց նմանն մեղքն և շնորհքն, մահ և կեանք, և ոչ զոյգ միմեանց սատանայ և ած, այլ բազում ինչ կայ ՚ի

Digitized by Google

միջի ։ Նոյնպէս յորժամ յիրաց 'ի բնութենէն և 'ի նմանէն որում այսպիսեան վայելել էր, կարի վայելչագոյն էր ընդ այսպէս կերպացուցանել քան տանջել, աւելի է առաւելութիւն և յաղթութիւն, զոր քան ունիցիս առ անհնարաստութիւնն, ասա ինձ ։

Այլ զի եցոյց զայն զոր ինչ ասացի ըստ բանից կարգի յայտ առնէ առաքեալն՝ թէ "Ո՞չ որպէս յանցանքն, նոյնպէս և շնորհքն. զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան, առաւել ևս առաւել շնորհքն Այ և պարգևք շնորհաց միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի 'ի բազումս առաւելան,,։ Այլ զոր ասէն այսպիսի ինչ է. զի թէ մեղքն այնչափ զօրեցին, և միոյ մարդոյ մեղք, իսկ շնորհն և Այ շնորհքն, և ոչ Այ հօր միայն, այլ և որդւոյ, և զիա՞րդ ոչ թուի մեծագոյն ինչ. բազում անգամ այս առաւել քան զայն ։ Վասն զի զայլ ըստ այլոց տանջելոյ ոչ յոյժ պատշաճ թուի. իսկ այլ 'ի ձեռն այլոց փրկելոյ՝ վայելուչ, մանաւանդ թէ ընդունելի. զի թէ այն եղև, ապա ևս առաւել այս ։ Այլ զի ընտանի իսկ և ընդունելի առակ եցոյց զիրս, և զայնս կարգէ դարձեալ զի դիւրընկալ առնիցէ ։

Այլ զի հանդերձեալ իսկ էր զայն կարգել, մանաւանդ զի և կարևոր իսկ էր, 'ի յաջորդաց անտի կարգէ. Այլ զիա՞րդ, ասէն, կարգեսցէ զայս ։ "Ոչ որպէս միոյն յանցանօք, ասէ, պարգևքս. քանզի դատապարտեան 'ի միոջէն և դատապարտութիւն, իսկ շնորհքս 'ի բազմաց յանցուածոց յարդարութիւն,,։ Այլ զինչ իցէ այս զոր ասէն. վասն զի զմահ և զդատապարտութիւն միանգամայն զօրեցին մեղքն և 'ի ներքս ածին, իսկ շնորհքն ոչ միայն զայն մեղս ջնջեցին, այլ և որ յետ նորայն եմուտ ։ Այլ վասն այնորիկ յորժամ ասէ "այսպէս, և այնպէս,,, զի մի զնոյն չափ զբարկութեանն և զմեղացն վարկանիցես, և մի դարձեալ կարծիցես յորժամ լսես զԱդամայ լոկ միայն զնորա զմեղսն ջնջեալ զոր նորայն եմոյծ, վասն այնորիկ ասաց՝ թէ բազմաց յանցուածոց թողութիւն եղև. Ուստի յայտ իսկ է թէ յետ բազում անչափ մեղացն այնոցիկ որ 'ի դրախտին գործեցան՝ յարդարութիւն եկաք ամենեքին. զի ուր արդարութիւն է, հարկ է թէ և կեանք զօրեն և բիւր բարութիւնք. զոր օրինակ ուր մեղքն են՝ մահ գործի, այն-

Digitized by Google

որպէս ուր արդարութիւն է՝ կեանք. քանզի արմատ իսկ կենացն արդարութիւն է։ Իսկ զի առաւել ծաւալեցան այժմ արդարութիւնքն՝ յայտ իսկ է, և զի ոչ միայն զառաջինն զմեղսն եբարձ՝ այլ և զամենայն իսկ, եցոյց աւելովն՝ թէ «Շնորհն ՚ի բազմաց յանցանացն յարդարութիւն». ուստի կարևոր իսկ համարեցաւ զայս ցուցանել և զմահ արմատաքի խլել։ Պէտք են աստ այլում իրիք յարդարման. և եցոյց թէ քան զառաջինն մեծ է երկրորդս, և զնոյն զայս դարձեալ։ Վասն զի զառաջինն ասաց. զի թէ միոյն մեղք ապականեն զամենեսին, ապա եւս առաւել միոյ շնորհք կարեն փրկել զամենեսին։

Իսկ յետ այնորիկ եցոյց՝ թէ ոչ այն մեղք լոկ ընջեցան ՚ի ձեռն շնորհացն, այլ և այլոց ամենայն որ զկնի նորին. և ոչ միայն մեղքն բարձան, այլ և արդարութիւն տուաւ. և ոչ այնչափ եղև Քրիստոս օգուտ մարդկան, որչափ Ադամ վնասեաց, այլ և առաւել զարմանալի մեծամեծս յարդարեաց։ Իսկ վասն զի Ճառեաց զայսպիսի իրաց Պաւղոս, տես որպէս ուսոյց կազմել և յարդարել զբանն. և որպէս կազմեսցէ զայս։

«Զի եթէ ՚ի ձեռն միոյն յանցանաց, ասէ, մահ թագաւորեաց միովն, ապա եւս առաւելութիւն շնորհացն և պարգևացն արդարութիւն ընկալեալ՝ կենօք թագաւորեսցեն ՚ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի»։ Իսկ զոր ասէս այսպիսի ինչ է, զի եթէ զմահ զինեաց, ասէ, ընդդէմ ամենայն աշխարհաց՝ ուստն ՚ի ծառոյն միոյ մարդոյն միոյ։ Զի թէ մահ այնքան զօրութիւն առ միոյն յանցանօքն, իսկ եթէ զառաւելիցն ոմանք յայնմ ՚ի մեղաց մեծագոյնս ինչ ընկալեալ ՚ի ձեռն շնորհացն և արդարութեան, ապա զիա՞րդ կարիցեն պատժապարտք մահու գտանել։ Վասն այնորիկ ոչ ասաց շնորհս միայն, այլ եթէ առաւելութիւն. զի ոչ եթէ որչափ պէտք էին առ ՚ի մեղացն ընջելոյ միայն ընկալաք զշնորհսն, այլ եւս առաւելութեամբ բազում։ Քանզի և ՚ի տանջանացն զերծաք և զչարիսն զամենայն մերկացաք և վերստին վերածնեալք եղաք, և ՚ի թաղել հին մարդոյն մեք յարեաք և փրկեցաք և յորդեգրութիւն եկաք և արդարացաք և եղաք եղբարք միածնին և ժառանգակիցք և մարմնակիցք նորին կարգեցաք և յանդամս նո-

րա կատարիցէ և որպէս 'ի գլուխ մարմնոյ այնպէս միա-ւորիցէ ։

Արդ զայս ամենայն առաւելութիւն շնորհաց կոչեաց Պաւղոս. և ցուցանելով թէ ոչ միայն զեղ առաւք ընդ-դէմ մերոցն, այլ և առողջութիւն և գեղեցկութիւն և պատիւ և փառս և մեծութիւն բազում, որ քան զմեր բնութիւնս գերազանցեալ գտանի ։ Նա յայտնէ մի մի իւրաքանչիւր որ կարէ ընծանել զմահ. թող թէ յոր-ժամ ամենայն միահամուռ զուգընթացս երևի եղեալ, ոչ հետք ուրեք նորա այնուհետև, և ոչ հովանի ուրեք երևի, այլ ամենայն եղծանի ։

Որ օրինակ եթէ ոք ումեք տան խերևէշ պատրաս-ցի և նա զնա 'ի բանտս արկանիցէ, և ոչ միայն զնա, այլ և զկին և զմանկունս և զծառայս վասն նորա, ապա ե-կեալ այլ ումեք ոչ միայն զտանն խերևէշն հանիցէ, այլ բիւր տաղանդս ոսկւոյ շնորհիցէ և 'ի թագաւորա-կան 'ի սրահն մուծանիցէ զբանտարգեալն և յաթոռս բարձրագոյնս պատուոյն նստուցանիցէ և հաղորդս մեծ-նագոյն պատուոյն արասցէ և ամենայն իսկ երևելեացն որ յարքունիսն իցեն, ապա այնուհետև ոչ կարէր յի-շել զխոյս տանն խերևէշին զոր առեալ էր 'ի փոխա-տուէն, որպէս և առ մեզ գործեցաւ ։ Նաղուամ և մե-ծամեծ պարգևս հանճեաց զմեր Քրիստոս, և այսչափ ինչ առաւել որպէս ցայտ մի փոքր առ անեզրական ան-դունդս ծովուն ։ Ո՞ի այսուհետև երկբայանար ինչ, ով մարդ, զայսչափ մեծութիւն բարութեանց տեսանելով, և մի խնդրեր իսկ եթէ զիարդ որպէս զկայծակն՝ մա-հու և մեղաց շիջաւ զօրութիւն. վասն զի որպէս զծով համատարած ծաւալեցան շնորհք նորա ։ Նոյն այս Պաւ-ղոս սքանչացեալ ասէր, թէ զառաւելութիւն շնորհացն և զարդարութիւն ընկալան, կենօք թագաւորեսցեն ։

Նա խորև զայս յայտնապէս եցոյց, զարձեալ զմա-ղթութիւնսն զառաւջինն իսկ 'ի կէր արկանէ առ 'ի ցուցանել զնոսա 'ի հաւասարութիւն, և ասէ՝ զի թէ յանցուածովք նորա տանջեցան ամենեքին, ապա ուրեմն կարող են այ-սու արդարանալ. վասն որոյ ասէ. "Որ որպէս 'ի ձեռն միոյն յանցանաց յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ արդարութիւն կենաց ,, ։ Նա կրկին հանդիմանայ զայնս

ձայնել. «Ընդէր որպէս 'ի ձեռն անհնազանդութեան միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն, սոյնպէս և հնազանդութեամբ միոյն արդարք բազում եղեն»։ Այլ թուի ինձ եթէ չիցէ փոքր խնդիր յաստուածաբանս. եթէ որ առաջնոյն հաւատացեալ քննեսցէ, և այս գիրքն է առ 'ի լուծանել։

Այլ արդ որպիսի՞ ինչ է խնդիրն յառաջ թէ 'ի ձեռն անհնազանդութեան միոյն մեղաւորք բազումք գտան։ Վասն զի 'ի մեղանչելն նորա և լինել մահկանացու, և որք 'ի նմանէ ծնան՝ այսպիսի լինել և նոցա չէր անհնարին. իսկ յանհնազանդութենէ նորա այլոց մեղաւորս լինել որպէս արդեօք լինիցի այս բան կարգի։ Ընդէր գտանի այնուհետև այն՝ թէ ոչ է դատաստանի պարտականն, թէ ոչ ընտանի յիւրոց մեղացն լինի մեղաւոր։ Այլ արդ զինչ իցէ որ ասէն՝ թէ մեղաւորք բազումք։ Թուի ինձ եթէ պատժապարտք տանջանաց և դատապարտեալք մահուամբ։ Այլ զի 'ի մեռանելն Ադամայ ամենեքին եղեն մահկանացուք, յայտնապէս բազում իրք եղեն։

Իսկ զխնդիրն թէ վասն էր ինքն այս եղև՝ ոչ ևս յաւել, վասն զի ոչ ինչ վարէր առժամանակեանն. քանզի ընդ Հրեայսն գեռ պայքարէր որք հակառակէին և այսպէս ասէին վասն միոյն արդարութեան։ Յաղագս այսորիկ և եցոյց իսկ թէ զիարդ միոյն դատապարտութի յամենեսեան ժամանեաց. իսկ եթէ էր վասն եղև այս՝ չյաւել ինչ. վասն զի չէր ինչ 'ի խնդիր աւելորդաց, այլ միայն կարևորացն հոգ տանի։ Բայց ոչ թէ լոկ ընդ Հրեայսն միայն հարկաւորեցուցանէ զաւելորդն չխնդրել, այլ զամենեսեան իսկ. սորին վասն և չձայնեաց։

Իսկ եթէ որք 'ի մէնջ խնդրիցեն ուսանել, ասեմք այսպէս՝ թէ ոչ միայն չվնասեցաք ինչ 'ի մահուանէն նորա և 'ի դատապարտութենէն եթէ արթունք լինիցիմք, այլ և շահիմք ևս՝ մահկանացու լինել մեր. զառաջինն՝ զի մի մահկանացու մարմնով այլ մեղիցուք. երկրորդ անդամ զի բիւր ինչ ունիցիմք փիլիսոփայութեան իրս, և 'ի չափու ունել զինքն և զգաստանալ և ամփոփ լինել և յամենայն չարեաց հրաժարել. և զառժամանակեանս որ երևի և որում ակն ինչ ունիցիմք՝ հաւատալ եթէ զայս ամենայն մահ լուծանէ։ Այլ յետ այսորիկ, մանաւանդ եթէ յառաջ ևս քան զայս, և այլ բազում ե-

Digitized by Google

մեծ բարութիւնս, որ են մարդասիրութեան նշանք. առաքելոցն բարբառոյ. այսու Պետրոս առաջադրեցաւ, նոյնպէս Աբրահամ զորդին պատարագեաց, որպէս Յովհաննէս վասն Քրիստոսի գլխատեցաւ, այսպէս և երեք մանկունքն, որպէս և Դանիէլ։ Ո՛չ եթէ կամեցին, ոչ միայն մահ, այլ և ոչ նոյն իսկ տառապանք կարէ մեզ վնասել։ Եւ առաւել այսպիսի և զայն ևս արժան է ասել՝ թէ և անմահութիւն ևս ընդունելոց է զմեզ. և որդ. փոքր մի յայժմու ժամանակիս խորամանկաց, և յետ այսպիսի բարգաւ հեշտութեանց վայելելոց ՚ի հանդերձեալ բարութիւնսն։ Որպէս ՚ի վերջ մահու իմն եւեթ յաժամանակեայ կենցաղումս. ՚ի ձեռն [illegible]՝ նեղութիւնք, հիւանդութիւնք, փորձութիւնք, աղքատութիւնք և այլք որք առաքինականացն թուին՝ խորամանկ, որպէս զի զառանցեալս [illegible] առ ՚ի յընդունելոյ զհանդերձեալ բարութիւնսն։

"Օրէնքն մտին, զի յանցանքն բազմասցին"։ Եւ վասն զի երբեմն եթէ յՕրինաց դաստիարակեցաւ ամենայն աշխարհ, իսկ Քրիստոսիւ փրկեցաւ և ՚ի դատապարտութենէն զերծաւ, ժամ է արդ նմա [illegible] վասն օրինացն և վասն նորին փառացն ՚ի բաց բարձմանն։ Ոչ ասէ, թէ չզործեցին ինչ օրէնքն շահ միայն և կամ ոչ օգնեցին, այլ և աճեցաւ ևս ախտն յարձակմամբ նոցա ՚ի ներքս եկին։ Եւ եթէ վասն այսորիկ տուան օրէնքն զի բազմասցին յանցանքն, այլ տուան զի բարձցէ և ծախեսցէ զյանցանսն։ Նոյն ընդ հակառակ իմն [illegible] իրքն. ոչ եթէ ՚ի բնութենէ օրինացն, այլ յընդունելեացն ծուլութենէ։

Եւ ընդէ՞ր չասաց թէ օրէնքն տուան, այլ թէ օրէնքն մտին։ Ցուցանէ եթէ առ փոքր մի ժամանակ ունէին պէտս նոցա, և ոչ եթէ տիրապէս կամ վերջնականութեամբ ինչ. զոր և առ Գաղատացիսն զնոյն այսպէս ասէ՝ թէ "Յաւուրս մինչև հասարակն երկեալ էին, ամփոփեալք փակեալք ՚ի հանդերձեալ հաւատոյն յայտնելոյ"։ Որպէս թէ ոչ իւր, այլ այլում ումեմն պահէր զհաւատսն։ Եւ քանզի բանդագուշեալք իմն էին Հրէայքն և լուծեալք և առ այս շնորհս [illegible], յայն սակս տուան օրէնքն նոցա, որպէս զի զնոսա մեծագոյնս յանդիմանեսցէ և ուսուսցէ զնոսա թէ որպիսիք ինչ իցեն, և զմեղաւորութիւնն աճեցուսցէ։

Digitized by Google

Դարձեալ այնպէս զնոսա․ մի՛ զարհուրիր, ասէ, զի ոչ եթէ առ 'ի բարգաւաճուցանել զտանջանսն տուաւ այս, այլ զի եւս առաւել շնորհքն երեւեսցին ։ Վասն որոյ և յաւելու իսկ 'ի այնմ՝ թէ "Ուր առաւելան մեղքն, առաւել եւս յաւելան շնորհքն„ ։ Այլ ոչ ասաց լոկ եթէ յաւելան, այլ թէ առաւել եւս յաւելան․ զի ոչ միայն 'ի տանջանացն զերծոյց, այլ և 'ի մեղաց, և կեանս շնորհեաց և զայլն ամենայն զոր բազում անգամ ասացաք․ զոր օրինակ եթէ ոք զջերմախտ ոք ոչ միայն յախտէն ազատիցէ, այլ և գեղեցիկ և ուժեղ և պատուական արասցէ․ կամ զքաղցեալ ոք դարձեալ ոչ միայն կերակրեսցէ, այլ և բազում եւս ընչից տանիցէ զնոսա տէր, և յիշխանութիւն մեծութեան հասուցանիցէ ։ Այլ զիա՞րդ առաւելան, ասէ, մեղքն ։ Որ բժիշկ պատուիրանս ետուն օրէնքն՝ զամենայնիւ անցին, վասն այնորիկ առաւելան մեղքն ։ Տեսանե՞ս որչափ ինչ 'ի մէջ է շնորհացս և օրինացս․ քանզի մինն յաւելեալ եղև դատապարտութեան, իսկ միւսն յաճախութեան շնորհաց ։

Այլ ինքն ասաց զանբաւ առատութիւնն, խնդրէ դարձեալ զակիզբն և զարմատն զմահուն և զկենացն ։ Այլ ո՞ր իցէ արմատ մահու․ մեղք․ վասն որոյ և ասէ և թագաւորեալ զնա ցուցանէ․ "Որպէս, ասէ, թագաւորեցին մեղք 'ի մահու, այնպէս և շնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ 'ի կեանսն յաւիտենից 'ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի„ ։ Զայս ասելով եցոյց զնա 'ի կարգի թագաւորականի, իսկ զմահն 'ի կարգի զինուորի ընդ նորա իշխանութեամբ կեցեալ և 'ի նմանէն իսկ վառեալ ։ Արդ զինուորն իսկ յայտնի է եթէ 'ի բաց բարձումն մահու արդարութիւն է․ և ոչ միայն զէնընկեց առնէ զմահ, այլ 'ի բաց իսկ բառնայ և ամենևին զթագաւորութիւն նորա լուծանէ, որպէս զի և մեծ իսկ է այս քան զայն․ զի ոչ եթէ մարդով և սատանայիւ, այլ ընդ շնորհացն գործին իրքն, և 'ի վայելչականն յայն հանէ զկեանս մեր և յանեզրական բարութիւնն, զի առաւել եւս ուղղիս պատուաւորութիւնն ։ Քանզի և յանցանքն յորժամ եկին և 'ի մերձակայ իսկ կենացս զմեզ զրկեցին․ իսկ յորժամ շնորհքն եկին՝ ոչ միայն զմերձակայս, այլ և զանմահ և զյաւիտենականն կեանսն մեզ շնորհեցին․ այսոր ամենայնի պարգևիչ Քրիստոս է ։ Մ՛ի այսուհետև

յերկրայս իմն ընծայեցին վասն կենացն՝ ունելով զարդա-րութիւն. վասն զի մեծ իսկ է արդարութիւն քան ըզ-կեանս, զի և մայր սորին իսկ է:

«Եւ զխօսքդ՝ կացցուք մնասցուք անդրէն 'ի մեղսն զի շնորհքն բազմասցին, քաւ լիցի»: Պարծեցաւ 'ի առա-ռակին բանին երանել և ոչ ձոխութեամբ իմն յառաջ բե-րել, զի մի ծանրացեալ իմն ուսմունք թուեսցի, այլ ըստ աւանդութեան կարգին առնէ: Եւ այսպէս բազմապատ-տիկ գործէ զբանն, որպէս զի մի դժուարեսցին իմն նո-քա. վասն որոյ և ասէ իսկ՝ թէ «Հանդերձեալ կարգաւորս զբեցի առ ձեզ փոքր 'ի շատէ»: Նոյն եթէ չէր զայս այսպէս ասացեալ, յոյժ խրթնագոյն թուէր նոցա բանն:

Նոյն իսկ և ասաց և եցոյց եթէ յոյժ առաւել են շնորհքն որ զմեծամեծ մեղսն բժշկեցին, յայտնապէս թը-ւէր անմտացն եթէ հրամայէ մեզ ուրեմն յաւել 'ի մեղսն, զի առաւել երևեսցին շնորհքն՝ վասն զի մեծամեծս մեղաք, մի եւս 'ի բաց կացցուք 'ի մեղացն զի եւս առաւել յաճախեսցին շնորհքն. և զի այսպէս ասէին, ոմն որ-պէս չղջէ զղխնադրութիւնն. նախ զայն զի չառնու յանձն ասելովն թէ «քաւ, մի լիցի», զոր և յանդգնաբանիցն ա-ռաջ է առնել. ապա և մինս դիպնողարմն 'ի մէջ բերէ. «Որք մեռաք, ասէ, մեղացն, զիարդ դարձեալ կեցցուք նոքա»: Զինչ է մեռաքն. 'ի նմանէ կողմանէ, որպէս և ինքն իսկ ասաց, զմխիթարն ընկալաք անձանց քոյն, եթէ վասն զի մեռաք նմա հաւատովք և մկրտութեամբն. զոր մանաւանդ եթէ արժան իսկ է ասել եթէ և ըստ կար-գին իսկ կայ այս յայտնապէս: Զինչ է թէ մեռաք նմա. այսինքն է մի եւս հնազանդել նմա: Զայս մկր-տութիւնն արար միանգամ զմեռանելն նմա. ապա պէտք են այնուհետև մերով փութով ուղղել զնա հանապազ. որպէս և բիւր անգամ իմն հրամայեսցէ, մի եւս հնա-զանդել նմա, այլ կալ մնալ անշարժ որպէս և զմե-ռեալ: Եւ որպէս այլուր ասիցէ՝ թէ նոյն ինքն մեղքն մեռան, այլ զայն դիւրավ կամեցեալ ցուցանել զառա-քինութիւնն՝ զայս դնէ. իսկ աստ զարթուցանել կամի զլսողն, առ նոյն ինքն 'ի մահն մերժեցուցանէ զբանն:

Եւ վասն զի անյայտ էր ասացուածն, մեկնէ դարձեալ զնոյն, և դժուարինս բանս 'ի կիր արկանէ: «Եթէ ոչ գիտիցէք, ասէ, եղբարք, զի որք մկրտեցաք 'ի Քրիս-

տոս Յիսուս, 'ի մահ անդր նորա մկրտեցաք, զոր Թա-
ղեցաք ընդ նմին մկրտութեամբ 'ի մահ»։ Զինչ է՝ Թէ
'ի մահ անդր նորա մկրտեցաք. այսինքն՝ Թէ մեք մե-
ռաք որպէս և նայն։ Քանզի խաչ է մկրտութիւնն. որ-
պէս խաչն և Թաղումն Քրիստոսի, նոյնպէս և մեզ
մկրտութիւնն եղև, Թէպէտ և ոչ 'ի վերայ նորին. քան-
զի նա մարմնով մեռաւ և Թաղեցաւ, իսկ մեք մեղաց
զերկուսեան։ Վասն որոյ և չասաց իսկ Թէ տնկակիցք
մահու, այլ եթէ նմանութեան մահու նորա։ Թէպէտ
և այս մահ անուանի և այն, այլ ոչ ինչ նմին իրաց եր-
կուքեան. այլ Քրիստոսի ըստ մարմնոյ, և մերս մեղացն.
և որպէս այն ճշմարիտ, նոյնպէս և այս ճշմարիտ։ Այլ
պարտ է և յանձանց ինչ ընծայ լինել. և դարձեալ 'ի
նոյնս յարեալ ասէ՝ Թէ «Որպէս յարեաւ Քրիստոս
'ի մեռելոց փառօք Հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգութեան
կենաց շրջեսցուք»։ Այս յետ պարկեշտութեանց կեալ
'ի կեանս, և զյարութեանն ձևս ակնարկէ. զինչ. հա-
ւատացե՞ր, ասէ, Թէ յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց,
ապա և քումն հաւատա. քանզի վասն այնորիկ եղև,
քանզի և քոյն խաչ է և Թաղումն։ Զի եթէ մահուան
հաղորդ գտար, ապա և առաւել մանաւանդ յարու-
Թեան և կենացն։ Վասն զի յորժամ մեծամեծ մեղքն
լուծան, չէ պարտ յերկբայս լինել վասն նուազ ինչ ի-
րաց այնուհետև Թէ որպէս մահ խափանի։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Այլ արդ այսուհետև զմտաւ ած զոր ինչ լուար զու-
քեզէն։ Յառաջ քան զհանդերձեալն այլ իմն յարու-
Թիւն պահանջէ 'ի մէնջ այժմ՝ զնոր առաքինութիւնն
ըստ այժմու կենցաղոյս, որ 'ի վարուցն փոփոխմանէ գոր-
ծի. յորժամ պոռնիկն զգաստ լինի և ագահն ողոր-
մած և խիստն հեզ, և այսպէս ապա և այս յարութիւն
լինի՝ ակնարկելով զայն յարութեանն։ Այս զինչ, ա-
սեն, յարութիւն լինիցի այժմ. յորժամ մեղքն մե-
ռանին և արդարութիւնն զօրանայ և հին կեանքն եղ-
ծանին և նորս այս հրեշտակական յառաջ մատչի և 'ի
գործ անկանի. իսկ նոր կեանս յորժամ լուիցես, բազում
և մեծամեծ փոփոխմանց 'ի խնդիր լինել։

Digitized by Google

Բայց ես հեծեմ և արտասուեմ մեծապէս յորժամ զմտաւ ածեմ թէ որպիսի խնամատարութիւն պահանջէ 'ի մէնջ Պաւղոս, և որպէս մեք տուաք զանձինս ծուլութեանց. յետ մկրտութեանն յառաջին ծուլութիւն անդր եղաք և յԵգիպտոս կրկին դարձաք և զսխտորն յիշեցաք յետ մանանայից. Վասն զի ափսոսալիք են որ զօր մկրտութեան յառաջացեալն, դարձեալ 'ի յառաջին վարուն ձեռնարկել կամիցին. Բայց և յորժամ մկրտեցիմք, ոչ եթէ աւուրս թուով կարգեալ է գործոց բարութեան, այլ զամենայն իսկ ժամանակս կենաց մերոց այնպիսի առաքինութիւնս պահանջէ 'ի մէնջ Պաւղոս. Իսկ մեք յառաջին 'ի փոխան անդր դառնամք. յետ հրաժարելոյն զմեղս երկրպագութեամբ հալածելոյ, յանդգնաբար 'ի մեղաց ծերութիւն զանձինս կարգեմք. Քանզի և ընչիցն ունենչանք և անպատեհ ցանկութեանցն ծառայել և ամենայն մեղք զհնութիւնս առնեն գործել. Իսկ հնացեալն և ծերացեալն մերձ է յապականութիւն:

Քանզի չէ և չէ իսկ հնար զմարմին 'ի բազում ժամանակաց այնպէս լուծեալ տեսանել, որպէս զհոգի 'ի բազում մեղաց նեխեալ և որդնեալ անկեալ, և 'ի վերջին աղճատմանն տանի հասուցանէ՝ զանպատեհս բարբառելով որպէս զծերացեալ զոք և զմտախաբ և ամենայն չարեացն լցեալ մոլութեամբքն և մտացածնութեամբք. և զախտն 'ի վերայ աչացն ունիցի, և մարդկան դարշ և պիղծ երևեսցի, և սատանայի դիւրաւ ձեռնարկեսցի. Քանզի այնպիսի են մեղաւորացն ոգիք. այլ ոչ և արդարոցն, այլ նորոգին և պնդին, և 'ի նմին հասակի 'ի ծաղկի են հանապազ, և առ ամենայն պատերազմունս և կռիւս պատրաստ գտանելով.

Իսկ մեղաւորացն ոգիք թէպէտ և փոքր մի ընդդիմահարութիւն պատահիցէ, խոնարհին անկանին և կորնչին. և զայս մարգարէն յայտ առնէր ասելովն. «Որպէս հողմ զփոշի զոր հանէ 'ի վերայ երեսաց երկրի». այնպէս դիւրահասք են և անընդդունակք ամենայն առաջիկայից յասոյն. Զի որք 'ի մեղսն կան, ոչ տեսանեն ուղղորդ և ոչ լսեն հաստատութեանն և ոչ բարբառին պարզապէս, այլ բազում մաղձիւք լի են, բազում և 'ի բերանոյն հանեն շողիք. և երանի թէ շողիս, և ոչ այլ ինչ անպատեհս. արդ այժմ աւասիկ քան զամենայն ողինց հա-

մինչեւ ևս չարախօսութիւն յառաջ բերել 'ի բերանոյն. Եւ ևս գժնեայ այն է, զի և ոչ թքանել զայլոցն շաղփս 'ի բերանոցն կամին, այլ ձեռօք ընդդաւնին և զարձեալ սովորիմք վարել, քանզի թանձր է և դժուարահաս: Արդեօք գարշելիք ինչ 'ի պատմութեանս, ապա ևս առաւել 'ի գործոցն պարտ է նախկալ: Ոչ եթէ 'ի մտրմնի յորում այսպիսի ինչ իրք պատահիցին՝ զարշթուի, ապա մանաւանդ բազում անգամ 'ի հոգիսն:

Այսպիսի ինչ էր և այն որդին՝ որ զամենայն զիւրն ծախեաց անառակութեամբ և 'ի վերջին թշուառութիւնն 'եհաս, և քան զամենայն աղձատելս և ախտացելոյ ևս յանզգայութեան անկեալ գնէր. այլ քանզի յանկարծակի կամեցաւ լինել երախտաւորդ բարուքն միայն և փափախմամբ իւրոյն, և վասն զի և ասաց՝ թէ դարձայց անդրէն առ հայր իմ, այս բան շնորհեացնան զամենայն բարութիւնս. մանաւանդ եթէ ոչ լոկ միայն բանիւն, այլ ընդ բանիցն և զգործսն եւս յաւել: Վասն զի չասաց լոկ եթէ դարձայց առ հայրն իմ և յապաղեաց, այլ ասաց թէ դարձայց, և նոյն ժամայն դարձաւ, և զբազում զճանապարհն զայն աշխատեցաւ և եկն:

Նոյն և մեք արասցուք. թէպէտ և յարտաքինս սահմանսն ուրեք երթայցեմք, դարձցուք անդրէն 'ի տունն հայրենի, և մի զանգաղեսցուք երկայնութեամբ ճանապարհին. միայն եթէ կամիցիմք, դիւրավ լինի մեզ վերջին ճանապարհորդութիւնն և երագ, միայն զօտարն և զայլազգին 'ի բաց թողցուք, այսինքն զսատանայ և զմեղս՝ որ զմեզ հեռի առնէ 'ի հայրենեաց տանէն: Եւ արդ թողցուք զնոսա զի երագ դարձցուք 'ի հայրենի տունն մեր. քանզի գթած է հայրն, և այնպէս գթած, զի և զընտանին ոչ ինչ առաւել սիրէ քան զմեզ որք դառնամքս 'ի մեղաց, մանաւանդ թէ ևս առաւել զմեզ որպէս յայնժամ հայրն զնոյն պատուեաց, քանզի և առաւել ևս ցանկացեալ էր նմա իբրև կորուսելոյ որդւոյ:

Եւ զիարդ դառնայցեմ, ասէ. սկիզբն արա իրացն միայն, և ամենայն ինչ դիւրաւ վճարի. կաց հակառակ չարին, և զամենայն ինչ կատարեցեր: Որ օրինակ որք հիւանդութեամբքն աշխատին, յորժամ ոչ ծանրագոյն ունիցին՝ գիտեմք թէ սկիզբն է առողջութեան, այսպէս և 'ի չարիսն լինի, մի յառաջեր այլ 'ի նոսա, և

ահա կատարումն եղև չարեացն։ Խնայեա և զերկուս աչուրս միայն և կամ զերկոսին մերժեա 'ի չարեացն, որպէս դիւրավ իսկ թողու 'ի բաց, որպէս յետ երիցն և տասն յաւելուս, որպէս և քսան և հարիւր, յետ այսորիկ զա_ մենայն ժամանակս քո։ Քանզի որչափ յառաջես՝ դիւ_ րագոյն տեսանես զճանապարհն, որպէս և 'ի նոյն իսկ 'ի գլուխ ելանիցես, և իսկոյն իսկ 'ի բազում բարութիւնս վայելիցես։ Զի և յանժամ յորժամ անառակն այն դարձաւ, փողք և քնարք և սարք և ցնծութիւն և ժա_ ղով ամենեցուն. և որ սիրելին, վասն ընդվայր ծախիցն և վասն հեշտ փափկելոց մանկանն ոչ ինչ պահանջեաց վրէժս և ոչ այսպիսի ինչ արար, այլ որպէս զզենաւոր զօր տեսանել և ոչ բանիւք անդադար նախատեր զորդին. մա_ նաւանդ թէ և ոչ յիշեաց իսկ վասն առաջին զնացիցն, այլ և զերդու զինվաւ և ողջունեաց զնա և զզարդարանս եղեն և զպատմուճանն զգեցոյց և 'ի մեծայ բազում ու_ խարհաց կարգեաց։

Այս արդ զայսպիսի օրինակ ունելով լինիցուք և մեք վստահք և մի երկեսցուք յանդգնութիւն։ Քանզի ոչ խնդրայ այսպէս տէր կոչելով որպէս հայր, և ոչ ծառայ անուանել որպէս զորդի. մանաւանդ եթէ զայս իսկ կամի նա։ Վասն այսորիկ և զամենայն ինչ գործեաց զոր ինչ գործեացն, զի և 'ի միածինն անգամ ոչ խնայեաց, որպէս զի և մեք զորդեգրութիւն ընկալցուք. զի մի որ_ պէս զտէր միայն, այլ որպէս զհայր սիրեսցուք զնա։ Խնայեաց և դիպեցի այս 'ի մէնջ, որպէս զպատուաւորիցս նորա բարեկամս և զուարձանակս և զամենայն ինչ նմա վարկանիմք, որ չէին կարող մերայոցս ինչ։ Զայս առ Աբրահամու արար. "Այս եմ, ասէ, Աստուած Աբրահամու և Իսահակայ և Յակոբայ"։ Այս մանաւանդ այսու ծա_ ռայեցն էր զուարձանալ. իսկ այժմ տեսանեմք զտէր զի զորովս առնէ։ Սորին վասն և ցՊետրոս ասէր. "Սիրես զիս առաւել քան զսոսա". ցուցանէ թէ ոչ խնդրէ ինչ յառաջ քան զայս 'ի մէնջ։ Սորին վասն և Աբրահա_ մու զորդին յաղջակէզս հրամայեաց հանել, զի ցուցա_ նէ ամենեցուն թէ յոյժ սիրի 'ի հայրապետէն. այս յոյժ սիրել 'ի սիրելեաց անտի գործի։ Վասն այսորիկ և ցառաքեալսն ասէր՝ թէ "Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս, չէ ինձ արժանի"։ Սորին վասն և

որ քան զամենայն ինչ ընտանեգոյն է մեզ հոգին, զոր երկրորդեր իւրոյ հոգւոյն. վասն զի բազում և յոյժ առաւելութեամբ կամի սիրել 'ի մէնջ։ Նաև զի և մեք յորժամ ատեսանեմք զոք եթէ ոչ յոյժ սիրիցէ զմեզ, ասեմք թէ չեմք կարօտ նորա սիրոյն, թէպէտ և մեծ ոք և երևելի իցէ։ Նաև յորժամ ջերմ զոք և սերտ սիրով ատեսանիցեմք, թէպէտ և անարգ և կամ փոքր ոք իցէ, որ սիրիցէն, մեծագոյն փառս վարկանիցիմք զսիրելն սա 'ի նմանէ։ Նաև որպէս և նա ոչ զսիրելին միայն սա 'ի մէնջ, այլ և զչարչարելն ևս վասն մեր զանարգանացն զայն զչարչարանս փառս կոչէր, վասն զի այն սիրոյն վասն էին փառք։

Նաև առաւել մեք թէ վասն նորա չարչարիցիմք, ոչ վասն սիրոյն միայն, այլ վասն մեծ ցանկութեան և պատուոյն փառս կոչեմք, և է իսկ։ Որպէս 'ի մեծագոյն պատիւ ընթացցուք այսուհետև յորժամ վասն նորա նեղութիւնս համբերիցեմք։ Որպէս ոչ զաղքատութիւն և ոչ զախտս և ոչ զխոշտանգանս և ոչ զդժպատեհութիւնս և ոչ զնոյն ինքն զմահ համարիցիմք ծանր ինչ և դժուարընկալ, յորժամ վասն նորա այսպէս ամենայնի համբերեմք։ Թէ արթունք իցեմք, մեծագոյն քան զամենայն ինչ շահիցիմք այսուհետև. որպէս յորժամ ոչ լինիցիմք զգոյշ և արթունք, և ոչ յայլ յիմարէ շահիցիմք ինչ։

Այս արդ սէրս որպիսի ինչ է. խաղաղաւորեաց ինչ որ զմեզ և պատերազմեցաւ. առաւել ուրեմն արթուն զմեզ յորդորէ և պատրաստական առնէ քեզ նմանող լինել նմա։ Զի եթէ սիրիցես զթշնամին քո, եղեր նմանող այնմիկ որ զարեգակն ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց։ Նաև այլ ոմն զինչսն յափշտակեաց 'ի քէն. եթէ քաղցրութեամբ համբերես, որք յաղքատան ծախիցեն զինչսն՝ զնոյն վարձսն առնուցուս և դու. քանզի «Յափշտակութիւն ընչից ձերոց, ասէ, խնդութեամբ ընկալարուք, գիտացեալ եթէ լաւագոյն ինչ վարձ ունիք որ յերկինսն կան մնան»։ Որպէս ինչ որք չար զքէն և նախատեսցեն. եթէ ձեռնարկու իցէ այս կամ այս, քեզ պսակ մեծագոյն բարեաց, եթէ համբերութեամբ բազմապատկեսցես անտի. և քանզի որ զմարտիրոսեն, բազում աւելի լինի մեզ վարձուց. «Խնդացէք և ուրախ լերուք, ասէ, յորժամ ասիցեն զամենայն բանս չար զձէնջ սուտ, զի վարձք ձեր

բազում են յերկինս ,, ։ Այլ յորժամ ճշմարիտ ասիցեն, և յայնժամ յոյժ օգտիցեմք, միայն եթէ հանդարտութեամբ տանիցիմք տառապելոցն. վասն զի և փարիսեցին ճշմարտելով զմաքսաւորէն ասէր թէ չար է, այլ փոխանակ մաքսաւորի արդար արար ։ Այլ զի՞ օգուտ է զիւրաքանչիւր ինչ ասել, արժան է երանել 'ի Յոբայ ճգնութենէն և զամենայն զայն համառօտաբար ուսանել ։ Սոյն այսօրինակ և Պաւղոս ասէր. “Ոչ ինչ 'ի մեր կոյս է, ո՛չ ինչ մեր հակառակ ,,. որպէս զի փութայր ցուցանել թէ և 'ի սրտմտեցուցչացն բազում շահս օգտիցեմք։ Իսկ եթէ 'ի ծուլութիւնս համանիցիմք, և ոչ որք օգտուն մեզ զօրածեն՝ լինիցիմք ինչ պիտանի ։ Ոչ ինչ օգուտ եղև Յուդայի մերձաւոր լինել Քրիստոսի. կամ զի՞նչ Հրէիցն՝ օրէնքն, և կամ Ադամայ՝ դրախտն, և կամ որ յանապատին էին՝ Մովսէս ։ Սոյն այսորիկ զամենայն ինչ 'ի բաց թողեալ, և միում միայն տանել հոգ թէ որպէս զմեր կեանս մաքրակարգեսցուք ։

Այլ եթէ զայս բարուք կարգեսցեմք, և ոչ ինչ իսկ սատանայ կարէ մեզ առաջի կալ. այլ և նա իսկ մեծ օգուտ գործէ մեզ և արթունս յորդորէ ։ Նոյնպէս և զեփեսացիսն զարթոյց Պաւղոս պատմելով նոցա զխայթենութեանն. իսկ մեք ննջեմք և խորդամք, և այն զի ընդ այնպիսւոյ ընդ դառին ունիմք պատերազմ ։ Այլ եթէ յանկարծ իմանայաք թէ օձ բունեալ է 'ի մահիճսն, բազում փոյթ տանէաք մինչև զնա սպանանէաք. իսկ սատանայ բունեալ 'ի հոգիս մեր, ոչ ինչ փարփանիմք չար և գժնեայ, այլ անհոգ կամք յորդայսեալ ։ Իսկ պատճառք այնմիկ զի՞նչ իցէ. զի մարմնաւոր աչօք չկարիցեմք տեսանել զնա. վասն այսորիկ արժան է արթուն և զգաստ լինել ։ Ո՛չ ի զերևելի պատերազմն և պահել զգուշին է. իսկ յաներևութէն ոչ կարեմք զիւրով զերծանել, եթէ ոչ յամենայն ժամ վառեալք և պատրաստք գտանիցիմք. և մանաւանդ զի չգիտէ իսկ յաջողակի պատերազմել, յաղագս այսորիկ և զիւրով ընթանայ. այլ կերպարանօք որոյն բազում անգամ 'ի մարմնոյն ընթացեալ մածանէ ։ Նոյնպէս և զկինն Յոբայ կալեալ կերպարանօք գթոյ, ծածկելով զիւր չարութիւն՝ զնա մատոյց խորհրդակից. այսու օրինակաւ և ընդ Ադամայ խօսեցեալ կեղծաւորութեամբ և խնամածութեամբ և

ըստ կարծի իմն խօսէր՝ եթէ "Նմանայցեն ասէ ձեր յօ-րում աւուր ունիցէք 'ի ծառայս,,: Սոյին և զՅեփ-թայայ հաւանեցոյց, պատճառանօք բարեպաշտութեան սպանանելով զդուստրն իւր և զանօրէն զողջակէզսն մատուցանել:

Տեսե՞ր զիարդ զմեքենայսն, զխորագէտս զդէպս պա-տերազմինն. որպէս այսուհետև զգեզ, և ամենայն ուսուցք վասնես և ամրոցս զանձին քո հոգևորական զի-նուքն և 'ի վերայ հասիր հաստատեա նորա մեքե-նայիցն, զի ըմբռնեսցես զնա և զխորամանկ անդր-ցես: Ասեն զի և Պօղոս այսպէս յաղթեաց նմա, զի ամենայն հաստատեաւ 'ի վերայ եհաս նորա մեքենայի-ցն. վասն որոյ և ասէր՝ թէ "Ոչ մտածութեանց նորա չեմք անտեղեակք,,: Այսպէս և մեք այսուհետև ուսցուք և փախիցուք 'ի նենգութենէ նորա, զի այնպէս կարիցեմք զնշան յաղթութեան կանգնել ընդդէմ նորա, որպէս զի յայժմու ժամանակիս և 'ի հանդերձելումն քարո-զիցեմք յաւիտեան, և անպական բարութեանց հասանի-ցեմք շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յի-սուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ հո-գւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

## ՃԱՌ. ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

"Զի եթէ տնկակիցք եղաք նմանութեան մահու նո-րա, այլ և յարութեանն նորա լինիցիմք,,:

Զոր յառաջագոյն ճառեալ ասէի, զնոյն և այժմ ա-սեմ եթէ հանապազ 'ի տօլօրական 'ի բանն եկանէ: Եւ որպէս յայլ 'ի Թուղթսն յերկուս բաժանէ զաստա-ցուածսն. առաջինսն զաւանդութիւնն որոշէ, իսկ միւ-սոյն զբարուցն զխնամածութիւն: Այլ ոչ այնպէս և աստ. այլ միշտ ընդ նոյնս խառնեալ զսոյնս գործէ, որպէս զի դիւրընկալ լինիցի բանն: Երկուս մեռելու-թիւնս ասէ լինել աստ երկուս մահս, և զմինն Քրիս-տոսի ասէ լինել մկրտութեամբ, իսկ միւսն 'ի մերոյ պարտի լինել 'ի ձեռն այսպիսի փութոյ: Ասեն զի ա-

ռաջին թաղումն մեղացն՝ նորա պարգևացն եղև. իսկ յետ մկրտութեանն կալ մնալ մեռեալս մեղացն՝ մեր պարտ է լինել փոյթ. և մանաւանդ եթէ առ իսկ զմեծ տեսանելիք բազում օգնականս։ Վասնզի ոչ միայն զայս զօրէ մկրտութիւնն՝ զառաջին զմեղսն եղծանել, այլ և առ հանդերձեալսն զզգուշագոյնս գործէ զմեզ։ Եւ զոր օրինակ անդ զհատուածն ընծայեցեր՝ զի մի եղծցի, նոյնպէս և առ զյօժարութեանդ փոփոխումն ցոյց, զի մի դարձեալ աղտեղացուսցես զքեզ։ Օ՜այս և որքան ապա-ցոյցք իմն են՝ ուսուցանելով զմեզ ասէր. «Օ՜ի եթէ անկակիցք եղաք նմանութեան մահու նորա, ապա և յարութեանն նորա լինելոց եմք»։

Տեսեր որպէս բարձրացոյց զխօսքն և եհան զնա ի վա-կոյն առ տէրն իւր, և բազում փութով եցոյց զնմանութիւնն։ Սորին վասն և չասաց թէ մահու՝ զի մի ընդդէմ ինչ ասիցես, այլ եթէ նմանութեան մահու. քանզի զի ոչ եթէ էութիւնն իւր մեռաւ, այլ որ ի մեղաց մարդն, այսինքն է չարիքն։ Եւ չասաց թէ հաղորդեցաք նմանութեան մահու նորա. այլ զինչ. այլ թէ անկակիցք եղաք, զի յանտուանէ անկացն զնոյն պտղաբերութիւն ցուցցուք ի մեզ։ Օ՜ր օրինակ մարմինն նորա թաղեալ ի յերկրի պտուղ տիեզերաց բերէր զփրկութիւն, սոյնպէս և մեք ի մկրտութեանն զարդարութեան զորդեգրութեան զբիւր բարութեանց, որպէս և յետ յարութեանն ի միտ առցուք զնորա պարգևսն։ Եւ քանզի մեք ի ջուր թաղիմք, իսկ նա յերկրի. և մեք վասն մեղաց, իսկ նա ըստ մարմնոյ թաղեցաւ, յաղագս այսորիկ չասաց լոկ եթէ անկակցութեան մահուն, այլ եթէ նմանութեանն մահու։ Եւ վասն զի և այն մահ էր և այս, այլ ոչ ընդ նմին իրօք։

«Օ՜ի եթէ մահուան նորա, ասէ, անկակիցք եղաք, ապա և յարութեանն լինելոց եմք»։ Յարութիւնն աստ զհանդերձեալ յարութիւնն ասէ։ Վասնզի ի վերագոյնսն զմահուանէն ճառեալ ասէր. «Թէ ոչ գիտէք, եղբարք, զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցաք»․ և ոչ ինչ վասն յարութեանն յայտնապէս ճառեաց անդ, այլ վասն վարուց յետ մկրտութեանն հրամայեաց և նորոգութեանն կենաց շրջել։ Իսկ աստ բանն հարեալ զբանիւն ցուցա-

նէ մեզ զյարութիւնն ։ Այլ զի ուսցիս եթէ ոչ վասն այնորիկ որ 'ի մկրտութեանն լինի յարութիւնն, այլ վասն հանդերձելոցն՝ ասաց "Զի եթէ տնկակիցք եղաք նմանութեան մահու նորա,, , և չասաց եթէ նմանութեան յարութեան նորա, այլ եթէ յարութեան ։ Զի մի ասիցես՝ եթէ յորժամ ոչ մեռաք որպէս մեռաւն, զիարդ յառնիցեմք որպէս յարեաւն, առին վասն զմահուանէն յիշեաց ։ չասաց եթէ տնկակիցք մահու, այլ եթէ նմանութեան մահու ։ իսկ զյարութենէն չասաց՝ եթէ նմանութեամբ յարութեանն, այլ եթէ նմին իսկ յարութեանն լինիցիմք ։ Այլ այսու բանիւ ցուցանէ՝ եթէ չև ևս եղև այն յարութիւնն, այլ հանդերձեալ է ։ Ապա կամեցեալ արժանի հաւատարմութեան զբանս առնել, ցուցանէ այլ յարութիւն եղեալ աստ յառաջ քան զայն, որպէս զի և 'ի մօտաւորացս և 'ի հանդերձելոցն հաւատասցես ։

Այլ խոյս տայ եթէ տնկակիցք լինելոց եմք յարութեան նորա, յարեաց 'ի նոյնս՝ եթէ "Զայս գիտասջիք զի հին մարդն մեր խաչակից եղև, զի խափանեսցի մարմին մեղաց,, ։ Միանգամայն իսկ զպատճառն և զհանդերձեալ յարութեանն դնէ ։ Այլ ոչ ասաց եթէ խաչեցաւ, այլ եթէ խաչակից եղև, որպէս զի մերձեցուսցէ զմկրտութիւնն 'ի խաչն ։ վասն որոյ և վերագոյն ասէր՝ թէ "Տնկակից եղեալ նմանութեան մահու նորա, զի խափանեսցի մարմին մեղաց,, ։ ոչ եթէ զմարմինս զայս այսպէս կոչէ, այլ զչարիսն ամենայն ։ Զոր օրինակ մարդ հին, կոչէ զամբողջականն զմեղսն, նոյնպէս և մարմին մարդոյ յայտնանէ որ յազգի ազգի մասանց մեղացն զոր ունի յինքեան՝ զայն կոչէ խափանելի մարմին ։ Այլ զի ոչ ընդ վայր ինչ է ասացուածս, նմին իսկ Պաւղոսի որ յաջորդաց անտի քննեաց՝ լուր ։ Քանզի յորժամ ասաց "Զի խափանեսցի մարմին մեղաց,, , զնոմիտս եած զայն ։ "Մի ևս ծառայել մեզ մեղաց,, ։ Ոչ եթէ զայս մեռուցանել կամէր և ոչ եթէ զմեզ եղծանել և մեռուցանել, այլ զի մի մեղանչիցեմք ։

Ապա ևս յառաջ մատուցեալ յայտնագոյն իսկ ասէ՝ թէ "Որ մեռանին, Արդարացեալ է 'ի մեղաց,, ։ Նման ամենեւին մարդոյն ասէ զայս ։ Զոր օրինակ որ մեռանիցին վճարեալ իցէ յառաջիկայ մեղացն գործելոյ,

Digitized by Google

վասն զի մեռեալ անկեալ դնի և ոչ կարէ մեղանչել այնուհետև, սոյնպէս և յորժամ 'ի մկրտութենէն ելանիցեմք. վասն զի մի անգամ մեռաւ անդ, պարտ է մեռեալ անշարժ կալ մեղացն: Բայց այսուհետև եթէ մեռար, մնա 'ի նմին մեռելութեան. վասն զի և իւրաքանչիւր ոք յորժամ մեռանի, ոչ ևս կարէ այսուհետև մեղանչել. իսկ աստ եթէ մեղիցէ, ժամանացուցանէ ըզպարգևսն ա̃յ:

Այլ իբրև պահանջեաց 'ի մէնջ այսպիսի փիլիսոփայութիւն, աստ և զպտուղն նորա մատուցանէ առերագն. "Եթէ մեռաք ընդ Քրիստոսի": Զի և այս յառաջ քան զպտուղն մեծագոյն պսակ է՝ հաղորդս գտանել մեզ տեառնն: Այլ զինչ ասէ. ոչ միայն այս, այլ և այլ ինչ ձգնութեանդ ընծայ մատուցանեմ: Այլ զինչ իցէ այն. կեանքն յաւիտենից. քանզի "Հաւատամք, ասէ, թէ և կենակիցք լինիմք նորա": Այլ ուստի յայտ իցէ այս. "Զի Քրիստոս յարուցեալ է 'ի մեռելոց, ոչ ևս մեռանի" ասէ: Այլ դու տես դարձեալ զյաղթութիւն նորա թէ որպէս 'ի հակառակորդացն կազմէ դարձեալ: Այլ քանզի սովորութիւն էր ոմանց խռովել վասն մահուն և խաչին, ցուցանէ թէ մանաւանդ այսու պարտ է պարծել: Այլ մի, ասէ, զի լուար թէ մեռաւ՝ մահկանացու զնա կարծիցես, որոյն վասն անմահ մնայ. վասն զի մահու մահ՝ նորա մահն եղև: Այլ քանզի մեռաւ, վասն այնորիկ ոչ ևս մեռանի. զի և զոր մեռաւն, "զայն մահ մեղացն մեռաւ":

Զինչ իցէ մեղացն մեռաւ. այսինքն է թէ և ոչ 'ի յայնմ չէր պարտական, այլ վասն մերոց մեղացն. որպէս զի զնա ծախեսցէ և հատցէ զջիլս նորա և զմ̃ծ զօրութիւնն, վասն այսորիկ մեռաւ: Տեսանես զիարդ երկեցոյց: Զի եթէ երկրորդ անգամ ոչ մեռանիցի, ապա և աւազան երկրորդ չիք. և եթէ աւազան երկրորդ չիք, ապա և դու առ մեղանչել մի դիւրահոս լինիր: Զայս ամենայն ասաց առ այնոսիկ որք յերկար կեալ ասէին՝ թէ արասցուք զչար զի եկեսցէ բարի. և դարձեալ թէ կացցուք մնասցուք 'ի յանցանս զի շնորհքն բազմասցին: Վասն այսորիկ կամեցեալ արմատաքի խլել զայսպիսի չար արմատ՝ զայս ամենայն դնէ: "Իսկ որ կենդանին է, ասէ, կենդանի է ա̃յ". այսինքն է առանց

լուծանելոյ, որ ոչ ևս ըմբռնի ՚ի մահուանէ։ Ոչ է և թէ զառաջինն զմահն իբրև ոչ եթէ պարտական ինչ էր և մեռաւ, այլ վասն այլոց մեղաց, ապա մանաւանդ ևս առաւել այժմ ոչ մեռանի յորժամ զնոյն եղծ. զոր և հեբրայեցւոցն գրելով ասէր՝ թէ «Մի անգամ ՚ի կատարումն յաւիտենից յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ է»։ Եւ զոր օրինակ կայ մնայ. մարդկան մի անգամ մեռանելն, սոյնպէս և Քրիստոս մի անգամ մատուցաւ առ ՚ի բազմաց զմեղս վերացուցանելոյ. իսկ յերկրորդումն առանց մեղաց յայտնելոց է այնոցիկ որ ցանկանայցեն նմա ՚ի փրկութիւն։ Եցոյց և ըստ այ̃ կենացն զօրութիւն և զմեղացն զայժ։ Ըստ այ̃ կենացն, զի ոչ ևս մեռանիցի. իսկ ըստ մեղացն, զի անմեղ գնաց կամելով մեռանել վասն այնոցիկ որ պարտականն էին մահու, ապա զիարդ ոչ կորուսանիցէ զմահ։

Ապա յորժամ խաւսեաց զկենացն նորա, զի մի ոք ասասցէ թէ մեզ զինչ օգուտ իցէ յասացելոցս, յարեաց ՚ի նոյն՝ թէ «Այնպէս և դուք համարեցարուք զանձինս մեռեալս մեղացն և կենդանիս այ̃»։ Եւ բարւոք ասաց՝ թէ համարեցարուք, վասն զի անադան ՚ի կիր արկ ըղձանս զայս. վասն այսորիկ իսկ ՚ի դէմս ածէ զասացուածս։ Եւ զինչ վարկանիցիմք, ասէ։ Մեռեալս լինել մեղացն և կենդանիս լինել այ̃ «՚ի Քրիստոս Յիսուս ՚ի տէր մեր»։ Ոչ հնար այսպէս կեալ, զամենայն զառաքինութիւնս կատարէ, վասն զի զնոյն ինքն զՅիսուս ունի ինքեան գործակից. այս է զոր ասէն՝ եթէ ՚ի Քրիստոս Յիսուս։ Ոչ է եթէ մինչ մեռեալքն եաք՝ յարոյց, ապա մանաւանդ ևս առաւել զկենդանիս կարող է պահել։

«Մի ևս թագաւորեսցեն մեղք ՚ի մահկանացու մարմինս ձեր առ ՚ի հնազանդել ձեզ ցանկութեանց նորա»։ Եւ չասաց եթէ մի կեցցէ մարմինն և մի գործեսցէ, այլ եթէ մեղք մի թագաւորեսցեն։ Քանզի ոչ եկն եթէ զբնութիւնս ՚ի բաց հատցէ, այլ զի զգաւրս ուղղեսցէ։ Ապա ցուցանէ թէ ոչ ՚ի հարկէ և բռնութեամբ կամք ՚ի հնազանդութեան մեղացն՝ այլ կամաւք. չասաց եթէ մի բռնադատեսցի՝ որ ՚ի հարկէ իմն թուի, այլ եթէ մի թագաւորեսցէ։ Եւ անպատեհ իսկ էր այնոցիկ որ ՚ի յերկինս ունէին զթագաւորութիւն զմեղս իւրեանց թագա-

ւոր անուանել, և որք թագաւորականք Քրիստոսի ե-ղեն՝ հաճոյ թուեսցի մեղացն գերիք լինել. զոր օրինակ եթէ ոք զթագ ՚ի գլխոյ ՚ի բաց ընկենուցու, և մատու-ցեալ առ կին մի որ մուրացիկ շրջիցի և պատառատանս զգեցեալ իցէ՝ և նմա կամիցի ծառայել, այնպիսիս և սո-քա գործեն.

Արդ զի ծանր համարէին յաղթել մեղացն, տես դի-պէս թեթևացոյց և զաշխատութիւնն ասելով յա-ւելն՝ թէ “ ՚ի մահկանացու մարմինս ձեր,,։ Այսու ե-ցոյց եթէ առ ժամանակեանս են աշխատութիւնքն և ՚ի սոյն երագ լուծանելին միանգամայն, և զառաւելին զբա-րիսն մեզ յիշեցուցանէ և զմահու զարմանսն։ Այլ սոսա և ՚ի սկզբանն իսկ եցոյց եթէ մահկանացու եղև։ Այլ պարտ է թէպէտ և մահկանացու մարմինն ունիցի՝ մի մե-ղանչել, և զայս իսկ հնար։ Տեսեր զառաւելութիւն շնոր-հաց մեծութեանն ոչ. վասն զի Ադամ չև ևս ունէր. մահկանացու մարմին և անկանէր. իսկ դու զպատժա-պարտն մահու ունիս, և պսակել կարող ես։

Այլ որպէս թագաւորեսցէ մեղք ՚ի մարմնի, ասէ։ Ոչ ընտանի իւրում զօրութեամբն, այլ ՚ի մարդկան ծու-լութէ. վասն այսորիկ ասաց՝ թէ մի թագաւորեսցէ. և զոր օրինակ այսպիսի թագաւորութե ցուցանէ, ՚ի սոյն յարեալ ասէ՝ թէ “ Հնազանդել ձեզ ցանկութեանց նորա,,։ Ասեն զի չէ պատիւ ինչ եթէ զամենայն իշ-խանութեանս շնորհիցէ, այլ վերջին ծառայութեան է անարգութեան հրամանքն. զի եթէ զոր ինչ կամիցիս գործիցես, յայնժամ յամենայն ազատութենէ հեռի ես. սակս եթէ արգելցիս, յայնժամ մանաւանդ պա-հիցես զընտանի քո զպատիւն։

“ Այլ մի պատրաստէք, ասէ, զանդամս ձեր զէն անօ-րէնութեան մեղաց, այլ զէն արդարութեան,,։ Արդ ուրեմն ՚ի մէնջ է մարմինս մեղաց և առաքինութեան, զոր օրինակ և զէնն յուրաքանչիւր ՚ի կողմանցն վարի. Այսպիսի ինչ է. յորժամ զօրական ոք առաքինի վա-ռեալ իցէ զէնուք և զիւր զգաւառն պահիցէ, և միւսն աւազակ ոք և սովորելի զէնուք վառեալ և մահու զոր-ծիցէ և զայլոց տունս աւանուցու. ապա ոչ եթէ որ ձու-լեաց զզէնսն և կամ զէնուն ինչ մեղս է, այլ նորա որ չարաչար զնա ՚ի կիր եարկ։ Զայս և վասն մարմնոյ է

Digitized by Google

իմանալ. եթէ այսպէս վարիցի և կամ այնպէս, այն ուրոյն յօժարութիւն է և ոչ եթէ ընտանի իւրոյ բնութեանն: Զի եթէ զայլոյ գեղ զննիցէ և պաճուճանիցի, զէն անփորձութեան եղև ամփին. ոչ եթէ յընտանի իւրոյ զարդուածոյ անտի, քանզի ակն տեսանել է զարդ և ոչ եթէ չարաչար տեսանել, այլ ՚ի չարաչար խորհրդոյն ընդպաշեալ զհրաման. իսկ արդ եթէ ամենահաւաքցես զնա, ընդ զէն արդարութեան: Այնպէս և զկերպ և զձեռն և զամենայն իսկ անդամսն: Նա բարինք իսկ արդար զի զմեղսն անխրատութիւն կոչեաց. զի եթէ ոք իւրում ընկերին մեղիցէ՝ անխրատ գտանի, իսկ որ յառաջ քան զընկերին իւր անձին մեղանչիցէ՝ որպէս չիցէ անխրատ այնուհետև:

Ապա այնուհետև մերժեալ զմեղ ՚ի մեղաց անտի մերձեցուցանէ յառաքինութիւնն, և ՚ի այսոս յարեալ ասէ. «Այլ պատրաստեցէք զանձինս ձեր այ որպէս ՚ի մեռելոց ՚ի կենդանիս»: Տես որպէս մերկ յանուանէն հրամայէ. անդ զմեղսն ասաց, իսկ աստ զմեծ: Ցուցանէ թէ դժոխք ՚ի մէջ իցէ թագաւորութեանն, որպէս զի յնմ իսկ ՚ի նեքբելոյ ՚ի բաց ասասցէ զզօրականն որ եթողն զմեծ և ցանկացաւ ընդ հնազանդութեանն մեղաց թագաւորին կարգիլ: Նա ոչ եթէ այսչափ միայն, այլ և յաղթողականն իսկ զոյնս կազմեալ ասէ՝ թէ «Որպէս ՚ի մեռելոց ՚ի կենդանիս»: Նա այսուիկ ցուցանէ զնորա զժտնտութիւնն, և զայն զպարգևացն զմեծութիւն: Զմտաւ ածէք, ասէ, թէ որպիսիք էիք, և զինչ այժմս եղերուք: Զինչ էին. մեռեալք և կորուսեալք, կորուստ զոր երբէք ոչ կարէին ուղղել. զի և չէր իսկ որ որ օգնել կարէր: Նա զինչ այժմս եղերուք, յայտնանէ. կենդանիք ՚ի մեռելոց՝ զանմահ կենդանութիւն: Ի ձեռն ո՞յր ուրուք. ՚ի ձեռն ամենազօրին այ: Ապա ուրեմն և հնազանդել ընդ ամենայն արժան է ամենայն յօժարութեամբ, և այնպէս որպէս թէ ՚ի մեռելոց կենդանիս գործեալ զմեզ:

«Նա զանդամս մեր զէն արդարութեան» արժան է պահել: Արդ յայտ է թէ չէ չար անդամքս յարժամ և զէն արդարութեան կարող է լինել: Նա յարժամ ասաց զէն, ցուցց թէ պատերազմ զժնեայ կայ ՚ի մէջոյ մեր. վասն որոյ և յոյժ զօրաւոր զրահից պիտոյ են մեզ

և մնաց առաքինեաց, որ ընդդէմ այսպիսի պատերազմի կարգեցեալք կան. և նախ քան զամենայն զօրավարքն պէտս ունին։ Այլ ամենայն զօրավարն պատրաստ կայ միշտ առ 'ի պատերազմելոյ լինել յամենայն ժամ, և ինքն առանց ձեռնարկելոյ կայ և մնայ, և զգէնսն զօրաց կազմեաց։ Նոյնպէս այսուհետև մերոյ յօժարութեանս պէտք են միայն, որով բարւոք ձեռնարկեսցէ, և զօրավարին հաւատացեալք և զգէնսն վասն վերին զաւրութեան կարգեցեալք 'ի մեզ, որպէս և հրամանս տայ վասն մեծամեծացն, վասն զինուց, վասն պատերազմին և վասն ճակատուցն։

Այս յորժամ զայս ամենայն յառաջագոյն յիշեցոյց Պաւղոս, տես զիարդ քաջալերէ զզօրականսն և օծանէ զյօժարութիւնս ասելովն. "Ի մեղք ձեզ ոչ եւս տիրեսցեն. քանզի չէք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք"։ Այս եթէ մեղք մեզ ոչ տիրեսցեն, էր փոխանակ այսպիսի ինչ երաշխաւորութիւնս պահանջեաց 'ի մէնջ ասելովն եթէ "Մի թագաւորեսցեն մեղք 'ի մահկանացու մարմինս ձեր". և զգուշացոյց եթէ "Մի պատրաստէք զանդամս ձեր զէնս անօրէնութեան մեղաց"։ Իսկ զինչ իցեն առաջեալքս. սերմանալէս իմն անկեալ զբանն, զոր յետ այ 'ի հաւկ իւր առաջ կամի ածել, և բազում կարողութեամբ յարդարէ զայն։ Այս զինչ արդեօք իցէ բանս այս որ ասացէ։ Այսինքն է թէ մարմինք ձեր յառաջ քան զՔրիստոսի գալուստն ոչ ինչ յոյժ ընդդիմանակցութիւնս դժնեայս ունէին. իսկ յորմէհետէ անմահք անուանեցաք, ապա և բազմութեան պատերազմն հզօրք երևեցան 'ի մեզ. վասն որոյ և ոչ յոյժ ինչ թեթև թըւէր նախ յորժամ մեք յառաքինութիւնն ընթանայաք. Վասնզի յայնժամ ոչ հոգւոյն յայտնապէս օգնականութիւն և ոչ մկրտութեանն մեռելութիւն ազդէր ինչ, այլ որպէս երիվար ինչ դժուարընթաց միայն 'ի մեղքն ընթանայրն յանցանել ըստ գործովք օրինացն. թէպէտ և ոչ գովէին զնոս մեղացն, այլ բանիւք միայն. Իսկ Քրիստոս յորժամ եկն, դժուարագոյնս եղև, վասն որոյ և յաւել եւս և մեծագոյնս քան զոսա եդ աշխատութիւնս, որում ինքն իսկ հայթայթ է օգնութեանցն. վասն որոյ ինքն իսկ ասէր. "Եթէ ոչ առաւելուցու արդարութիւնն ձեր քան զդպրացն և զփարիսեցւոցն, ոչ

մտանիցէք յարքայութիւնն երկնից „։ Բայց զայս յա-ջորդագոյն տանէ յայտ. սակայն զայն փոքր մի և առաւ ե-ցոյց. յորժամ մեք ոչ խոնարհեցուցանեմք, ոչ կարիցեմք մեզ մեղքն 'ի վերայ դիմել։ Ոչ անմեղի չեն օրէնքն միայն, այլ և շնորհքն, թէպէտ և զառաջինն եթող և առ հան-գերձեալսն զգուշացոյց. վասն զի նա յետ աշխատու-թեանցն զպսակն խոստացաւ, իսկ սա նախ պսակեաց և ապա 'ի նահատակութիւնն կոչեաց։

Բայց իմն թուի թէ ոչ զամենայն զհաւատացելոցն զվիճակս անհնարինէ ասա, այլ հաւանութիւնս իմն առնէ ընդ մկրտութիւնն և ընդ օրէնսն, զոր և յայլում վայ-րի ասէ՝ թէ "Գիրն սպանանէ և հոգին կեցուցանէ „։ Նախ զի օրէնքն յանդիմանեն զյանցաւորսն, իսկ շնորհ-քըն քաւեն զյանցանսն։ Որպէս զի նորա յանդիմա-նութեամբն հաստատեսցին մեղքն, նոյնպէս և սորա թո-ղութեամբն չլինիցին ընդ մեղօք. որպէս զի կրկին առա-ւել քան զառաջինն այս է՝ հրաժարելն 'ի նմանէ յորժամ ոչ ընդ օրինօքն իցեմք, և 'ի շնորհսն վայելիցեմք.

Այլ կամի զի փոքր մի ոգի առցէ լսողն. և զզգուշու-թիւնս մատուցանէ և ափոփանօք յառաջ բերէ զբանն և ասէ այսպէս՝ թէ "Արդ զինչ. մեղիցուք զի չեմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք. քաւ լիցի „։ Նախ 'ի բաց հանէ՝ յոյժ անպատեհս ցուցանելով զայրացուցմունս, և դարձեալ 'ի մտածութիւն իմն չըղջէ զբանն և ցուցա-նէ թէ բազում դիւրութեամբ է ջանն, այսպէս ասէ. "Ո՞չ գիտէք թէ որում պատրաստէք զձեզ ծառայս 'ի հնազանդութիւն, ծառայք էք որում լսէքն, եթէ մե-ղացն 'ի մահ, և կամ լսելութիւն արդարութեանն 'ի կեանս „։ Զև ես ասեմ, ասէ, զգեհենէն և ոչ զպատ-ժոցին տանջանացն այնոցիկ. այլ զառաւել զամօթոյն, յորժամ ծառայք լինիցիք և կամօք ծառայք և մեղաց ծառայք. և վասն այսպիսի վարձուց, որպէս զի դար-ձեալ մտանիցիք։ Զի եթէ յառաջ քան զմկրտու-թիւնն զմահ գործեաց զմարմնաւոր, և այնչափ առող-ջութեան կարօտ էր թագաւորն՝ մինչև տեառնն ամենայ-նի 'ի մահ իջանել և այսպէս լուծանել զչարիսն, իսկ յետ այսչափ պարգևաց և ազատութեան զձեզ կա-մօք դարձեալ խոնարհեցուցեալ 'ի նոյն յառաջինսն զինչ իրս ոչ գործիցէ ընդ քեզ.

Մ՛ի այսուհետեւ յայսպիսի խորհրդոց ընթացցուք, եւ մի կամիք քեզ մատն լինիցիս. քանզի 'ի պատերազմի երբեմն եւ ակամայ իսկ մատն լինին զօրականքն. իսկ աստ եթէ ոչ դու քեզ ինքեան անձնամատան լինիցիս, ոչ քեզ ոք հարկաւորութիւն ինչ ածէ։ Սնեցար վայելչութեամբքն, երկեր եւ 'ի ճգնութեանցն, եւ դիր առ մխիթարանս զերկնաւորան, զմահ եւ զպարգեւութիւն. մահ ոչ եթէ այսպիսի ինչ, այլ որ ես դժնդակն է։ Օ՜ն եթէ ոչ ես մեռանիցի Քրիստոս, ապա ո՞վ իցէ որ լուծանիցէ զմահն զայն. եւ ոչ ոք։ Ապա ուրեմն հարկ է հանապազ եւ փառաւորել եւ չարչարել. վասն զի եւ երկբաւոր մահս իսկ ոչ մերձենայ այսուհետեւ, որպէս եւ առաջ, յորժամ մարմինն հանգչիցի եւ հոգին բաժանիցի։ Ասէ. «Յետին թշնամին խափանի մահ»։ Ուստի ցուցանէ թէ անմահ են տանջանքն. իսկ յարդարութենէն, ասէ, ծաղկին բարութիւնքն։

«Այլ այ̃ շնորհքն, ասէ, զի էիք ծառայք մեղաց՝ հնազանդեցարուք 'ի սրտէ, որում ընծայեցուցէք զձեզ յօրինակս վարդապետութեան»։ Ակնածեցոյց 'ի ծառայութենէն եւ երկեցոյց 'ի ճգնութենէն, մանաւանդ զի եւ հրաման իսկ ետ. դարձեալ վերստին ուղղէ զնասա յիշատակօք երախտեացն։ Սան այսպիսի եցոյց թէ 'ի մեծամեծ չարեաց ապրեցոյց, եւ զի թէ ոչ իւրեանց ինքնաշխատութեամբքն, եւ թէ հանդերձեալքն եւս դիւրին են։ Որ օրինակ եթէ ոք ընդ բանաւորի ումեք 'ի գերութենէ փրկիցի եւ մերթ յիշեցուցանէ նմա զբանաւորութենէն եւ ասիցէ թէ մի 'ի նոյն բանաւորութե̃ ընթանալ, այնպէս եւ Պօղոս յարդարէ յայտնապէս, եւ յանցեալ 'ի չարեաց անտի՝ վասն ախտորիկ եւ գեհենայ իսկ զայ̃։ Ո՛չ եթէ 'ի մարդկայինն ինչ ուժոյ էր այն՝ միանգամայն ապրել զմեզ 'ի չարեաց, այլ այ̃ շնորհացն եւ կամացն եւ զօրութեանն։

Եւ բարւոք ասաց եթէ որում հաւատացէքն 'ի սրտէ. վասն զի ոչ եթէ 'ի հարկէ ինչ ցուցաւ եւ ոչ բռնադատեցարուք ինչ, այլ կամօք եւ յօժարութեամբ հրաժարեցէք։ Այս եւ գովութիւն իսկ էր, միանգամայն մատուցանել։ Եւ ոչ միայն իւիք հարկ 'ի վերայ կացեալ, զո՞ր նորոգել ունիցիք եւ կամ զո՞ր պատասխանատուութիւն յորժամ անդրէն յառաջինն ընթանայցէք։ Այլ զի

և ուսցիս թէ ոչ նոցա բարեմասնութեանն միայն, այլ յայն շնորհացն ամենայն լինի, ասաց եթէ "Հնազանդեցարուք 'ի սրտէ". յարեաց 'ի նոյնս՝ թէ "որում ետուք զանձինս յօրինակ վարդապետութեան"։ Վասն զի հնազանդութիւն 'ի սրտէ զանխշխանութիւնն յայտնէ. իսկ որում աւանդեցարուքն՝ զԱյ զօգնականութիւնն ակնարկէ։ Օ՛ր ինչ է օրինակ վարդապետութեանն. ուղիղ կալ համաձայնական վարուք։

"Իբր արդ ազատեցայք 'ի մեղաց՝ ծառայեցէք արդարութեան"։ Երկուս իմն շնորհս ցուցանէ աստ զԱյ՝ զազատելն 'ի մեղացն և զծառայելն արդարութեանն, որ քան զամենայն ազատութիւնս լաւագոյն է։ Վասն զի և զծոյլս իսկ արար ած, որպիսի ինչ՝ եթէ ոք զմանուկ տղայ և զորբ առեալ 'ի բարբարոսաց յիւր գաւառն տանիցի, և ոչ միայն 'ի գերութենէն զերծուցանիցէ զնա, այլ և հայր եւս խնամածու լինիցի նմա և 'ի մեծ պատուի հանիցէ, սոյնպէս և առ մեզ կրեցաւ. քանզի ոչ եթէ 'ի հին չարեացն միայն ազատեաց, այլ և 'ի հրեշտակական վարսն մերձեցոյց և ճանապարհ կարգաւորութեան եցոյց մեզ զարդարութեանն զգուշութիւն, և զհին զմեղսն եսպան և մեռոյց զպարձեալ զհին մարդն, և 'ի կեանսն յաւիտենականս և անմահս դաստիարակեաց զմեզ։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Կացցուք մնասցուք այսուհետեւ 'ի նոյն կեանս։ Բազումք կարծեն եթէ կենդանիք իցեն և շնչիցեն, և քան զմեռեալս եւս յանզգայութեան անկեալ գտնին։ Վասնզի և ազգի ազգի իսկ են օրինակ մեռելութե. և է մի նախ և առաջին մարմնոյ մեռելութիւն, որպէս և Աբրահամու զի մեռեալ էր և չէր մեռեալ, ըստ այնմ թէ "Աստուած Աբրահամու". և "Աստուած չէ մեռելոց, այլ կենդանեաց"։ Իսկ միւսն ոգւոյ մեռելութիւն, զոր և Քրիստոս ակնարկէր ասելովն՝ թէ "Թոյլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց"։ Իսկ միւսն որ և գովելին իսկ է, որ 'ի ձեռն իմաստասիրութեանն լինի, զորմէ Պաւղոսն ասէր՝ թէ "Մեռուցէք զանդամս ձեր զերկրաւորս"։ Եւ միւսն որ յայսմ իսկ եղեւ պատճառ՝

մկրտութեանն, որպէս և ասէր՝ եթէ "Հին մարդն մեր խաչակից եղև նորա": այսինքն թէ մեռաւ: Այլ արդ զայս գիտելով՝ յայսմ 'ի մեռելութենէ փախիցուք, որ և մինչ կենդանիս եմք մեռանիմք, և 'ի սմանէ հրաժարեսցուք որ հաղորդն ամենեցուն մահն եհաս 'ի մեզ: Իսկ զայլ ևս զերկուսն՝ որ մին է երանութեանն՝ որոյ յոյժ սաստ, իսկ միւսն որ 'ի մէնջն և յոյժ ուղղեցաւ: Այլ հանձեսցուք և նախանձեսցուք զայս զերկասեան առնել, զոր երբեմն Դաւիթ երանէ ասելով՝ թէ "Երանի որոց թողան մեղք նոցա": Իսկ ըստ միւսն Պաւղոս զաւրանայր. Գաղատացւոցն գրեալ ասէր՝ թէ "Որք Քրիստոսականքն էին, զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին": Իսկ զայն որ 'ի լծակցութենէ, զոր և դիւրինն իսկ է արհամարհել, զոր և Քրիստոս իսկ ասէր՝ թէ "Մ՛ի երկնչիք 'ի սպանանելեաց մարմնոյդ որ զհոգի ոչ կարեն սպանանել": այլ ահաւոր այն է, "և յայնմանէ իսկ երկերուք որ զհոգի և զմարմին 'ի գեհենի կորուսանէ":

Սմին այսորիկ փախիցուք յայսմանէ և զհետ մտցուք մեռելութեանն որ երանելին և զարմանալին է. որպէս զի և յայլ ևս յերկուցն 'ի միոյն փախիցուք և 'ի միւսոյն երկիցուք: Քանզի չէ ինչ մեզ օգուտ եթէ զարեգակն տեսանիցեմք, և ուտիցեմք և ըմպիցեմք, եթէ ոչ գործք բարիք մերձ իցեն: Քանզի զինչ օգուտ իցէ թագաւորի, ասա ինձ, թէ թագ զգեցեալ իցէ, և զէն և զարդ զանձամբ արկեալ իցէ, և 'ի ծառայիցն որ 'ի հնազանդութեան իցեն՝ ամենեցուն առաւել թշնամանիցի և անարգանիցի: Նոյնպէս և քրիստոնէին չէ ինչ շահ եթէ զհաւատսն ունիցի և զշնորհսն որ 'ի մկրտութենէն, և ինքն ամենայն ախտից հնազանդեսցի, առաւել ևս սա թշնամանեսցի, և մեծ յոյժ ամօթ է. որպէս նա որ զթագն ունիցի և զծիրանիսն՝ ոչ միայն թէ չօգտի ինչ 'ի պատմուճանէն, այլ և զնա ևս յամօթ առնէ իւրով ընտանի թշնամանօքն: Նոյնպէս և հաւատացեալքն որ ապականեալ կեանս կեան, ոչ միայն եթէ չիցէ փափագելի ումեք, այլ և այլոց կատականաց է, քանզի ասէ. "Որք առանց օրինացն մեղան, առանց օրինացն և կորիցեն. և որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն և դատեսցին": և հեբրայեցւոցն գրեալ ասէր՝ թէ "Անարգեալ ուրուք զօրէնսն Մովսէսի, առանց ողորմութեան

տանջիւ երկուց կամ երից վկայից մեռանէր. ապա զիա՞րդ չթուիցի գժնեայ տանջանաց արժանի լինել որ զորդին Այ առ ոտն եհար,,։ Մանաւանդ եթէ յիրաւի իսկ. քանզի հնազանդեցուցի քեզ զամենայն ախտս 'ի մկրտութեանն, զի՞նչ եղև այժմ զի այդչափ թշնամանեցեր զշնորհսն և եղեր այլ ընդ այլոյ. սպանի և թաղեցի և կենդանացուցանե՝ք որպէս զորդունս, ընդէ՞ր այլս ծնար. վասն զի եւս քան զորդունսն մեղք են չար. վասն զի սոքա ըզմարմինս, իսկ նա զոգիսն ծակոտէ և եւս չար ժահահոտութիւնս գործէ։

Իսկ մեք չզգամք ինչ, վասն որոյ և ոչ մաքրել զնա փութամք. քանզի և ոչ արբեալն գիտիցէ թէ որպէս շարժիցի և շուրջ գայցէ զնովաւ տեղին. իսկ որ չէն արբեալ, նա հաւաստեաւ իսկ գիտէ զայն զամենայն։ Նոյնպէս և 'ի մեղսն գործի. որք զգաստութեամբն կեան, նոքա գիտեն հաւաստեաւ զտիղմն և զաղտսն որ անտի գործիցին. իսկ որ 'ի պոռնկութիւն զինքն տայ, որպէս յարբեցութենէ ծանրացեալ, զնոյն ինքն թէ ախտանայցէ՝ չգիտիցէ։ Մանաւանդ թէ այս եւս գժնեայ է քան զչարիսն, զի և 'ի միտ անգամ չառնու տանել որք 'ի մեղսն անկանիցին, վասն զի այնպիսի իսկ բնութեանն իւրեանց ծանրութիւնն մեծ է, այլ 'ի տղմին թաւալին և վարկանին թէ յիւրս անուշունս վայելեն, վասն որոյ և ոչ հրաժարել կարեն յախտէն։ Որդամբք լի են և որպէս ականբք պատուականօք այնպէս զուարճանան. վասն այսորիկ և ոչ սպանանել կամին զնոսա, այլ սնուցանեն եւս և աճեցուցանեն յինքեանս; և այնքան մինչև առ հանդերձեալ յաւիտենական տանջանսն զնոսա յորդունսն։ Վասն զի և այնր որդանց սոքա են առիթք, և ոչ միայն առիթք, այլ և հարք իսկ են նոցա որք ոչն երբէք վախճանին. քանզի ասէ՝ թէ “Որդն նոցա ոչ վախճանեսցի„։ Սոքա և զգեհենին լուցանեն որ ոչն երբէք շիջանի։

Արդ զի մի՛ լիցի այս, զաղբիւրն չարեաց 'ի բաց մաքրեսցուք և զհնոցն շիջուսցուք և զարմատն չարութեան 'ի ներքուստ 'ի բաց խլեսցուք. քանզի և ծառ յորժամ կորի 'ի վերուստ, ոչ ինչ աւելի գործեսցէր թէ արմատն 'ի խոնարհ մնասցէ, և այնպէս դարձեալ շառաւիղս բերէ արմատն չարութեան։ Ասէր զայս 'ի բարւոք տնկո-

Digitized by Google

ղէն որ զամենայն հաւատաւ գիտէ և զհոգեւորական այգին բարիոք դարմանէ, և զնոյն տիեզերս մշակեաց։

Եւ արդ զինչ իցէ այսր ամենայնի չարեացս արմատ. ընչից ցանկութիւն. «Արմատ ամենայն չարեաց, ասէ, արծաթսիրութիւնն է»։ Ուստի կռիւք և թշնամութիւնք և ամբաստանք և կարծիք չարեաց և թշնամանք. ուստի մահք և գողութիւնք և գերեզմանակրտութիւնք։ Սորին վասն ոչ միայն քաղաքք, այլ և գաւառք և ճանապարհք, շէնք և անշէնք, լերինք և բլուրք և դաշտք և ամենայն իսկ առ հասարակ միանգամայն լի են արեամբք և սպանմամբք։ Նա և 'ի ծովու իսկ գտանին այսպիսի չարիք, քանզի և անդ դառն մոլորութիւնք պաշարեն զմիմեանս, և նոր իմն միտս անյագութեան ստանան։ Սորին վասն և՛ բնութեան օրէնքն եղծան և ազգականութեանն դաշինք լուծան և սրբութեանն ադարութիւն կորեաւ։

Քանզի ընչից բանաւորութիւն ոչ միայն հակառակ կենդանեացս զինեաց զաջն, այլ և որք գնացինն առաւ մահուամբ՝ ընդ նոսա ոչ հաշտեցան. այլ և զշիրիմս բանան և պիղծ ձեռքն իւրեանց զմեռեալսն կողոպտեն. և ոչ որք վճարեցան 'ի կենցաղոյս ակամայ թոյլ տան, զի զմեռեալ յայնժամ ապրեսցին 'ի նենգութեանցն։ Եւ ուր և զստանես չարիս կամ 'ի տան կամ 'ի հրապարակի կամ 'ի դատաստանի կամ 'ի խորհրդարանի կամ առ թագաւորի և ամենայն ուստեք՝ առատ տեսանես բանեալ։ Քանզի այս չարիք են որ զամենայն տիեզերս մահուամբ լցին. սոյն և զգեհենին վառեաց. սա և քան զանապատն և զանկոխն եւս խաղաղապոյնս եցոյց զքաղաքս, մանաւանդ թէ եւ չար քան զայն։ Վասն զի անդ 'ի դարանակալսն եղեալ՝ դիւրավ է զգուշանալ, և զի ոչ հանապազորդ գտանի ինչ այնպիսի. իսկ աստ 'ի մէջ քաղաքի նմանն նոցին, մանաւանդ թէ եւ առաւել դժընդակ. ուստի և առ 'ի պահելն և զգուշանալն այս դժուարին է քան զայն, և զի ամենայն համարձակութեամբ իշխեն գործել զայս և ոչ ինչ խորշին երբէք։ Քանզի զօրէնսն որ 'ի բաց հրամայեն ընջել զայսպիսի գիրսն, ընդ նոսա իւրեանց պատերազմակից առնեն, և այսպէս այսպէս զարշելի սպանմամբ լնուն զքաղաքս։

Եւ արդ չիցէ՝ սպանումն, ասա ինձ, և եւս չար քան

Digitized by Google

զապականութն՝ յորժամ տեսցես մատանիցես զագգաւոն եւ բանտարգել առնիցես, եւ յետ տեսլոյն եւ տանջանս եւս մատուցանիցես. եւ ապա նոցա բազում պաշտպանս առաջի եդեալ: Այլ դու թէպէտ քեզէն չառնիցես, սակայն պատճառս տաս նոցա որք զգործսն ունիցին տանջելոյ՝ մանաւանդ եթէ դու քեզէն իսկ տանջես: Քանզի մարդասպանն միանգամայն իսկ յորժամ ցցէ զսուրն՝ առ փոքր մի ժամանակ տրտմեցուցանէ, եւ յորժամ սպանանէ՝ չկարէ ինչ այլ չարչարանս նմա յառաջ բերել: Իսկ դու զպարապութիւնս զխարդախութիւնս զնենգութիւնս, եւ զայլսն խաւար գործես նմա. եւ ապա ցանկայ մխուհեալ բիւր անգամ մեռանել քան թէ իցէ կենդանի:

Այլ արդ զմեռու ած քանզի մահ գործես, մանաւանդ թէ որ եւս դառնագոյն է՝ զի յափշտակես եւ ապահես, եւ այն զի ոչ յաղքատութենէ նեղեալ եւ ոչ ՚ի սովոյ վտանգեալ ես. այլ զի զծիրս զամանս բազում ոսկւով օծանիցես, եւ զտանն զվերնայարկս եւ զսեանցն խոյակս: Այլ արդ արդեօք զգեհենի այս չիցէ արժանի, յորժամ զեղբայրն եւ որ անձամբ բարութեանցն ընդ քեզ հաղորդեցաւ եւ նման քեզ պատուեցաւ ՚ի տեառնէն ամենեցունց, զի զքարինս զարդարեսցես եւ զյատակս տանն եւ զամբառն անասնոցն զմարմինս՝ որք եւ ոչ զգան ինչ այսպիսի զարդու, ՚ի բիւր ՚ի թշուառութիւնս արկանես: Բազում անգամ եւ շանն իսկ խնամ տանիս. իսկ եղբօրդն՝ մանաւանդ թէ զՔրիստոս իսկ վասն շանցն եւ զորոց յառաջագոյն ասացաք ՚ի վերջին աղքատութիւն եւ ՚ի սովու վտանգեալ արգելուս:

Այլ արդ զինչ չար քան զայսպիսի չքնութիւն կայցէ, եւ կամ զինչ դառնագոյն քան զայնպիսի անօրէնութիւն. քանզի գետք հրեղէնք բաւական են այնմ աւուր: Քանզի որ ընդ պատկերին իմ եդեւ՝ նա անցեալ կայ երկիթացեալ եւ լի ամօթով վասն քո անագորոյն մտացդ. իսկ զերեսս ջորւոցն որ զքո կինն բարձեալ բերեն՝ բազում ոսկւով պայծառացուցանես, եւ զմորթն եւ զփայտն եւ զձեղունն նորա, մանաւանդ թէ որդանեայն-զարդարես զայն: Թէպէտ աթոռ ինչ կազմել եւ կամ ոտիցն պատուանդան՝ զամենայն ինչ յոսկւոյ եւ յարծաթոյ կազմես, իսկ Քրիստոսի անդամն վասն որոյ յերկ-

նից եկն և զիւր պատուական արիւնն եհեղ՝ և ոչ զփա-ռաւոր՝ կերակրիկն զտանել վայելել առ քում ագահու-թեանդ։ Այլ մահճիճքն ամենայն ուրեք արծաթով են զարդարեալ. իսկ սրբոցն մարմինք և 'ի կարեաց 'ի հար-կէն չքաւորեալ գտանին։ Այլ քան զամենեսեան զՄիրա-տոս անարգ համարեցար, քան զծառայսն և քան զըն-տանիս և քան զմահճիճսն և զաթոռսն և զպատուականաւանն և զայլն ամենայն զկահն։

Իսկ եթէ սակաւս զայսոսիկ լսելով, 'ի բաց կաց 'ի գործոյն, և ուսանես զի ոչ ինչ վնասիցեն քեզ սատա-ցեալքս։ Հրաժարեա և 'ի բաց լեր յայսպիսի մոլութե-նէ. քանզի և է իսկ մոլութիւն յորժամ յայսպիսի իրս փոյթք գտանիցիք։ Վասն որոյ զայս 'ի բաց թողեալ նայեսցուք զոնեայ անաղան ուրեք յերկինս, և յիշես-ցուք զհանդերձեալ օրն և զմտաւ ածցուք զահաւոր ըն-դատաստանն և զգաղտնեացն զհատուցումն և զանվրէպ զհաշիւն։ Խորհեսցուք զայն թէ զամենայն զայս տե-սանէ ա͞ծ և համբերէ, և ոչ առնէն իսկ առաքէ կայծա-կունս 'ի վերուստ. և ոչ եթէ այսմ միայն արժանի եմք, այլ և զայն ևս չարանէ. զոր, զի և ոչ ծովու տայ եղա-նել 'ի վերայ մեր և ծածկել, և ոչ երկրի հերձեալ ընդ մէջ և զմեզ ընկլուզել. ոչ զարեգակն շիջոյց և ոչ զեր-կինս 'ի վայր կործանեաց հանդերձ լուսաւորօքն, և ոչ զամենայն ինչ եբարձ 'ի միջոյ և կորոյս. այլ եւս 'ի կար-գի կալ և մատակարարել մեզ արարածոցս։

Այլ զայս զմտաւ ածեալ զբազում մարդասիրութիւն նորա՝ զարհուրեսցուք 'ի նմանէ, և յանմտանի մեր ա-գահանութիւնն եկեսցուք։ Վասն զի այժմ չեմք ինչ ընդ-հատ յանբան անասնոց, այլ մանաւանդ թէ ևս 'ի վայր. քանզի նոքա սիրեն զազգակցութիւնն և բաւական է նոցա հաղորդութիւն բնութեանն առ միմեանց գութն։ Իսկ դու յետ բնութեանն և իւր պատճառս ունիս որ ժո-ղովէ զքեզ և ածողէ առ ընտանի քո անդամսն։ Յայն-ժամ պատուեցար բանիւ, մինչդեռ հաղորդն էիր բա-րեպաշտութեան և իւր բարութեանցն՝ վայրենագոյն քան զնոսա գտար. որ անմտութեամբն էր ընդ վայր-ծախքն՝ յայնս բազում փոյթս ցուցեր, իսկ զպատճառն ա͞յ և սովով և մերկութեամբ անտես առնէիր և արձա-կէիր 'ի քէն, մանաւանդ թէ չարաբանութեամբ իսկ և

Digitized by Google

բամբասանօք ։ Զի եթէ վասն փառաց ինչ գործէիր զայն, ապա եղբօրն պարտ էր հոգ տանել առաւել քան մարդոյն. քանզի որչափ 'ի լաւ երախտիսն քո վայելէ, այնքան ինչ պայծառագոյն յօրինէ զփութոյ քո զպսակըն ։ Իսկ դու զհակառակսն իմն գործես. Թէպէտ և բիւր չարախօսս ունիս, չզգաս ինչ ։ Ո՞վ որ իցէ որ քեզ չար չասիցէ. ո՞վ որ ոչ գրեսցէ զքո զվերջին զանօրէնութիւնդ և զմարդատեցութիւնդ, յորժամ տեսանիցեն զաղքատականն անարգեալ և զանաստունսն պատուեալ, և յետ անասնոցն զի և զտունսն ընուցուս ։ Ո՞չ լուար առաքելոցն որ ասէին՝ եթէ որք առաջինն զբանն ընկալան, զտունս և զգեօղս վաճառէին, զի զեղբարսն կերակրեսցեն. իսկ դու և զտունս և զգեօղս յափշտակես, որպէս զի զձիսն և զփայտսն զարդարիցես և զորմսն և զձեղունսն և զյատակն ։

Այլ ևս դառնագոյն այն է յորժամ ոչ արք միայն, այլ և կանայք ևս զնոյն մոլութիւն մոլին, և զարսն իւրեանց վարժեն յայնպիսի ընդ վայր աշխատութիւնս ամենայն ուրեք, մանաւանդ քան 'ի կարևորսն ծախել ։ Իսկ եթէ ոք յանկարծ յանդիմանեսցէ վասն այսպիսի ինչ իրաց, պատրաստեն իւրեանց բանս պատասխանատուութեան՝ լի բազում բամբասանօք. և այս լինի, ասեն, և այն ։ Ո՞չ զարհուրիս զայդպիսիդ բարբառելով, ընդ ձիսն և ընդ ջորիսն և ընդ մահիճսն և ընդ աթոռսն և ընդ պատուանդանսն զՔրիստոս 'ի համար մուծանել. մանաւանդ թէ և ոչ ընդ նոսա իսկ, վասն զի սոցա բազում մասունք են անդ, իսկ նմա հազիւ թէ փոքր ինչ մասն տայցես ։ Ո՞չ գիտես թէ ամենայն ինչ նորա է՝ և դու և քոյդ ամենայն. ո՞չ գիտես թէ զմարմինդ նա ստեղծ և զշունչդ նա շնորհեաց և զաշխարհս զամենայն յօրինեաց, իսկ դու և ոչ փոքր մի ինչ ընդ այսչափ երախտեաց հատուցանես նմա ։ Այլ յորժամ փոքր մի խուղ 'ի վարձու տաս ումեք, ամենայն հաւաստեաւ պահանջես զվարձսն. իսկ զնորա զամենայն զարարածս ընկալեալ և յաշխարհի յայսպիսում 'ի նորա բնակեալ, և ոչ փոքր մի վարձ կամիս հատուցանել նմա, այլ սնափառութեան զամենայն ընձեռեցեր և զքոյսն և զքեզ. քանզի և անտի իսկ առ սկիզբն այս ամենայն ։ Միթէ ձին լաւ ինչ իցէ քան զառաքինու-

թիւն, և կամ զարդն որ զնովաւ, և կամ մարդն որ 'ի վերայ նորա գտանի, թէ և անարգ իսկ իցէ ։ Յորժամ տեսողքն հայիցին, ապա թողեալ զնա 'ի ձիոյն 'ի զարդն չքեղն զտեսանելիսն, և 'ի ծառայսն որ զհետ երթան և որք առաջի ընթանան պերճութեամբ ։ ապա յորժամ այնպէս բերեալ լինի բազմութեամբն, ատեան և 'ի բաց դառնան որպէս և 'ի հասարակաց թշնամւոյ ։ Նոյն ոչ որ և զհոգին զարդարէ՝ այնպիսի ինչ պատահիցի նմա ։ այլ և մարմին և հրեշտակք և տէրն հրեշտակաց և ամենեքեան իսկ զպսակն բոլորեն ։

Այս արդ եթէ փառաց ես ցանկացող, մերժեա յայդմանէ որ այժմդ գործես ։ և մի զտունն, այլ զոգիդ զարդարեա, զի լինիցիս պայծառ և երևելի ։ զի յորում այժմդ ես, չիք ոք քան զքեզ անարգոյն և անարգ ։ իսկ յորժամ ոգիդ զխաղաղութիւն ունիցի, ապա և տանն գեղեցկութիւն յառաջանայ ։ Իսկ ապա եթէ չունիցիս յանձին յիմոց ասացուածոցս, լուր զոր ինչ արար ոմն յարտաքնոցն, ապա զանէ ամաչեա 'ի նորա փիլիսոփայութէն ։ Քանզի ասեն՝ թէ ոմն 'ի փիլիսոփայիցն 'ի տուն ուրումն թագաւորազն ուրուք մտեալ՝ բազում ոսկւով պայծառացուցեալ տունն, և տեսեալ 'ի կճեայց անտի ճառագայթեալ, և 'ի սեանցն գեղեցկութենէ, հայեցեալ և յատակս տանն և զայն պէսպէս շարուածովք ծաղկագոյնս և շուշանանմանս զարդարեալ, ապա 'ի տանն տեառնն յերեսս եթուք փիլիսոփայն ։ Իսկ որ շուրջն կային սկսան մեղադրել զնա և ասեն՝ թէ զինչ է, զի գործեցեր զայսպիսի զանարգութիւն, որ և ոչ ուրեք թքեր, այլ յերեսս տեառնդ ։ Այս նորա պատասխանի տուեալ ասաց ։ վասն զի զոր ձեր պատուեալ էր, ես անպատուել ոչ կարեմ, զորմունս կճովք և ոսկւովք, զյատակդ ծաղկապէս զաշտաւղ, զերեսս զորա զտի մերկ 'ի զարդուէ ։ զոր ձեր չէր պատուեալ, և ոչ ես պատուեցի ։ Այս այնպէս յանդիմանեաց զնոսա և պատկառեցոյց ։

Տեսանես զիարդ եղեն ծաղր և այպն կատականաց ։ վասն զի որ արտաքին զարդարանքս են, 'ի բազմաց զիւրաւ արհամարհին ։ մանաւանդ թէ յիրաւի իսկ ։ Առն զի զքո զկենակիցն այսպիսիս գործես, որպէս զի պատառոտուն և աղտեղի հանդերձս զգեցեալ է և անխնամ

լինել ամենեւին, և զաղախինն պայծառ և ազգի ազգի զարդուք զարդարես։ Իսկ արդեօք զայրանայցես ինչ ընդ բանսդ և թշնամանս զիրսն վարկանիցես։ Ոչ այն և ոչ դուզն ած զմտաւ. յորժամ զորմն և զյատակսն և զայլն ամենայն զարդարիցես, և թէ ողորմութիւն չառնիցես և զայլն ամենայն իմաստասիրութիւն յանձին ունիցիս, ոչ ինչ վնասես, մանաւանդ եթէ ևս դժնեայ քան զայն գտանիս զոր յառաջին ասացաք։ Այսոն զի 'ի մէջ ոսկեղէն և աղախնոյ չիք ինչ, իսկ մարմնոյ և հոգւոյ բազում ինչ է 'ի միջի. զի եթէ ընդ մարմինն և ընդ հոգին, ապա յայտ է թէ ընդ հոգի և ընդ տունն ևս առաւել, և դարձեալ ընդ հոգի և ընդ աթոռս և ընդ պատուանդանս բազում ինչ կայ 'ի միջի ընտրութիւն։

Իսկ արդ զո՞ր պատասխանատրութիւն ունիցիս յորժամ զայս ամենայն արծաթով պատիցես, և զնա 'ի պատառոտուն սեռանիցես և բրդգզեալ և քաղցեալ և ընդ վերոյ և բուր շանց պատառեալ. և յետ այսոր ամենայնի ապա և զուարճանայ ևս մանաւանդ պարտաքին զարդուքն մեծատանն, որ մանաւանդ վերջին անմտութեանն և մոլորութեանն է և նախատանաց և ամօթոյ և անարգանաց, որ և 'ի վերջին իսկ 'ի տանջանսն տանի պատուհասի զարդարուածս։ Այսոն որոյ, աղաչեմ, զայս ամենայն իմացեալ զարթիցուք զոնեայ անագան ուրեք և 'ի մեր միտս եկեսցուք, և զարտաքինս զարդն զայն յոգւոյ մեր փոխեսցուք. այնպէս և նա անկապուտ մնայ և զմեզ զոյգ հրեշտակաց գործէ և զանճառն զօգուտն մեզ ընծեալ։ Որում լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր համանգերձ հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

# ՃԱՌ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

"Մարդկօրէն ասեմ վասն տկարութեան մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս անօրէնութեան յանօրէնութիւն, նոյնպէս և այժմ պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս արդարութեան 'ի սրբութիւն"։

Եւ վասն զի բազում հաւաստեաւ պահանջեաց 'ի վերուց և մեռանել հրամայեաց յաշխարհէ և սպանանել զմեղս և անշարժ մնալ 'ի մեղացն ազդմանէ, և կարծի թէ մեծ ինչ կամի ասել որ գերազանցէ քան զմարդկային բնութիւն, ցուցանել կամեցաւ արդ՝ թէ ոչ ինչ ուժգին և քան զչափն աւելի պահանջեաց՝ որոց այսպէս վայելեալ էր 'ի շնորհսն, այլ յոյժ չափով և թեթևագոյն 'ի հակառակորդաց անտի կարգէ զնա, և ասէ այսպէս՝ թէ "ըստ մարդկութեան ասեմ". որպէս յորժամ ասիցէ՝ եթէ 'ի մարդկային խորհրդոց ձայնեմ. որպէս զի ասասցես՝ թէ 'ի տկարութենէ եղելոցն։ Վասն զի այս չափաւորութեան յորջորջումն զմարդկայինն յայտնէ. զոր և այլուր ասէ՝ թէ "Փորձութիւն 'ի ձեր վերայ ոչ է եկեալ, բայց 'ի մարդկանէ". այսինքն է չափաւոր և փոքր։

"Որպէս պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս յանմաքրութիւն անօրէնութեան, նոյնպէս և այժմ պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս արդարութեան 'ի սրբութիւն"։ Թէպէտ բազում ինչ է 'ի մէջ տեսանն, բայց սակայն զմիօրինակ պահանջէ մեզ հնազանդութիւնն։ Պարտ էր ևս առաւել ընծայ լինել, և այսչափ ինչ առաւել որպէս զի սորա տէրութիւնս մեծ է քան զնորայն. բայց սակայն, ասէ, ոչ առաւել պահանջեմ վասն տկարութեանդ ձերոյ։ Եւ ոչ ասաց թէ վասն յօժարութեանդ ձերոյ, այլ վասն մարմնոյ ձերոյ. զի աւանց ծանրանալոյ զբանն գործեցէ։ Եւ զի՞նչ է զի զմին անմաքրութիւն ասէ, իսկ զմիւսն մաքրութիւն. և զայն անօրէնութիւն, իսկ միւսն արդարութիւն։ Եւ ո՞վ ոք,

Digitized by Google

ասէ, որպէս թշուառական իցէ մինչև ոչ այսչափ փոյթ յանձին ունիցի ընծայել և ծառայել Քրիստոսի որչափ մեղացն և սատանայի։ Զայս թէ այդպէս է, լուր յաջորդացն և տեսցես 'ի միտ յայտնապէս թէ և ոչ փոքր ինչ ընծայեմք։ Այլ վասն զի այսպէս մերկ ասաց, չթուի հաւատալի և ոչ դիւրընկալ, և ոչ հնչէր յականջս լսողացն՝ թէ էր ասացեալ նորա թէ ոչ այնքան ծառայեցէք Քրիստոսի որպէս մեղացն և սատանայի, յաջորդացն կազմէ և առնէ հաւատարիմս յորժամ զծառայութիւնն զայն 'ի մէջ ածիցէ և ցուցանէ թէ որպէս ծառայեցին։

«Քանզի յորժամ, ասէ, ծառայքն էիք մեղացն, ազատեալք էիք յարդարութենէն»։ Այլ զոր ասէն՝ այսպիսի ինչ է, թէ մինչ 'ի մեղսն կէիք և յամպարշտութեանն, և յետին չարութեամբ կէիք և հնազանդէիք, այսինքն է թէ ոչ ինչ բարիս գործէիք և արդարութիւ։ Այս է զոր ասէն՝ թէ «ազատացեալք էիք յարդարութենէ»․ այսինքն է թէ չկայիք 'ի հնազանդութե, այլ օտարացեալք էիք բոլորովին․ քանզի և ոչ լսել իսկ կամէիք զօրինակ ծառայութե որ առ արդարութիւնն, և ոչ ընտրութիւն ինչ կամէիք առնել արդարութեանն և մեղացն․ ամենևին իսկ, ասէ, զձեզ մատնեցէք 'ի չարիս։ Այսպէս և այժմ, ասէ, յորժամ փոխեցարուք առ արդարութիւնն, ամենևին իսկ տուք զձեզ առաքինութե․ մի ինչ ունել զչարութեան մեղացն ըստ առաջին գործոցն․ զանէ զոյգ չափով որպէս անդն՝ ծառայեցէք սրտի մտօք։ Զի ոչ թէ տէրութեանն միայն այնչափ ինչ է 'ի մէջի այնր և այսր, այլ և ծառայութեանն իսկ բազում ընտրութիւն է․ զոր և ինքն իսկ բազում համարձակութեամբ յայտ առնէ և ցուցանէ թէ ձեր յայնժամ ծառայելին և կամ ձեր այժմ։ Այլ չև ևս ճառէ զվնասուէն որ յերրացն եղեալ էր, այլ միայն զամօթոյն յիշեցուցանէ նոցա։

«Զինչ պտուղ ունէիք յայնժամ որով այժմդ ամաչէք»։ Այնպիսի էր ծառայութիւնն, ասէ, մինչև այժմ յիշատակօք իսկ ամաչէք․ ապա յայտ է թէ գործովքն ևս առաւել։ Իսկ այժմ, ասէ, երկպատիկ շահէք, զի զերծայք յամօթոյն և 'ի միտ առէք թէ որպիսի ոք էիք։ Որպէս և յայնժամ երկպատիկ վնասէիք

և արժանի անօթոյ գործս գործեն, և ոչ գիտեմք և խոստանայիք թէ անօթ է, որ և քան զառաջինն ես մեծ էր, բայց սակայն կոչէք մնացէք 'ի ծառայութեան.

Այլ արդ եղոյց այժմ զառաւելութիւն միաստուն որ եղև և զանօթոյն, ապա և զնոյն խոկ զկրան յանդիմանսն կամի հաւցուցանել: Այլ զինչ իցեն ելքն, ասէ. "Այլ վախճանն նոցա մահ է": Այլ վասն զի անօթոյն անուան ոչ կարէր ծանուցանելի թուէր, որ զամենայն յայտնեաց՝ յայտ եղև, այսինքն է զանհնարինն ասէր. որ և առաջինն խոկ ասացուածն բաւական էր: Տես որչափ ինչ առաւելութիւն էր չարեացն՝ որ ոչ 'ի տանջանացն միայն չզերծուցանէր, այլ և անօթոյն խոկ առնէր: Արդ զինչ ակն ունիցի այնպիսի գործոց վարուց հատուցումն ընդունել, յորժամ յերջանիկսն միայն, և այն զի ազատեցաք 'ի տանջանացն՝ փախչիս և խորշիս, և այդ յետ այդչափ շնորհաց, որ և այժմ աւաղելի յանօթ հանդերձս յորժամ յիշես զառաջինն զվարսն: Այլ և ոչ մտքն այսպիսեաց ինչ:

"Այժմ, ասէ, ազատեցեալք 'ի մեղաց և ծառայեալք այ՝ ունիք զպտուղ ձեր 'ի սրբութիւն, և վախճանդ նոցա կեանք յաւիտենից": Այն պտուղն անօթ էր և յետ հրաժարելոյն 'ի նոցանէ, խոկ այս պտուղ սրբութիւն. քանզի ուր սրբութիւն է, անդ ամ համարձակութիւն է. նոցա վախճանն մահ է, խոկ սորա վախճանն կեանք յաւիտենից: Տեսանես զիարդ զկէսն տուեալ ասէ և զկէսն յուսոյն խոստացեալ, և 'ի տուեալսն և որ յուսոյն է, և այն հատուցանելով լինի, որպէս 'ի սրբութիւն կեանքն: Ոչ ինչ ասիցես թէ յուսով միայն խոստացեալ է, ցուցանէ թէ տուեալն խոկ եսու զշահն. նախ և առաջին այն է զի վճարեցի զքեզ 'ի չարեացն և յանչափ մեղացն, որոց և յիշատակն խոկ անդր յանօթ բերէ. երկրորդ ծառայել ձեր արդարութեանն. երրորդ սրբութիւնն յորում վայելեցէքն. չորրորդ կենացն յոր ժառանգիցէք, և կենաց ոչ առժամանակեան, այլ յաւիտենական. և սակայն և զայս ունանիցէք զկամաւորոյն ծառայել ձեզ: Սորին վասն և տէրն առաւել ես պարգևեաց ձեզ. և ծառայութեանն բազում ինչ ընդ մէջ է, և երևելի առաւել յայնմանէ եղելոց որում ծառայեքն, և ոչ ինչ առնել պահանջէ 'ի ձէնջ.

Digitized by Google

Այլ արդ իբրև զծառայութեանն յիշեաց և զԹագաւորէն, զանազանութիւն բերէ 'ի մէջ, ասէ. «Թոշակ մեղաց մահն է, իսկ շնորհքն Այ կեանք յաւիտենից 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր»։ Այլ իբրև ասաց թէ Թոշակ մեղաց մահ է, 'ի հեշտագունեան իմն դառնայ, և ոչ թէ 'ի նախկին կարգի յամէ։ Վասնզի և ոչ իսկ ասաց թէ պտուղ ուղղութեանց ձերոց, այլ շնորհքն Այ. և եցոյց եթէ ոչ ընտանի իւրեանց ուղղութեամբքն կարացին զերծանել 'ի պատժոց, և ոչ դարձեալ պարգև ինչ առին զոր ընկալանն և կամ 'ի փոխարէնս ինչ երախտեացն, այլ շնորհօքն այս ամենայն գործեցան։ Որպէս զի և յայսմ իսկ առաւելութիւն է, ոչ զի զերծոյցն միայն, այլ և եւս մեծագոյնս պարգևեաց՝ այնու զի որդւովն գործեաց զայս ամենայն։

Այլ իբրև ձաղեաց զշնորհս, ապա այնուհետև և զօրէնսն կամի խափանել։ Ոչ է ինչ երկրորդեան ծուլագոյն գործիցէն զնոսա, 'ի միջի անդ դնէ զխարս անթլփատութեան, և ամենայն ուստեք զպարթուցանէ 'ի խնամ առաքինութեան զկրօնսն։ Յորժամ ասէ՞ եթէ Թոշակ մեղաց մահ է, բարիոք երկեցուցանէ դարձեալ և առ հանդերձեալսն զգուշագոյն գործէ. որով զգուշացուցանէ նոցա և փառն առաջին գնացիցն, նախկինն և գոհացող առնէ զնոսա և զգուշագոյնս առ ամենայն վարս, և արդ հանդուցանէ զանօրինականն բանն խրատու, և ապա ինքն դարձեալ 'ի հաւատոյն ձևոյ մերձ ասելովն. «Եթէ ոչ գիտէք, եղբարք, զի ընդ գիտողս օրինացն խօսիմ»։ Այլ վասն զի ասաց թէ մեռաք մեղացն, ցուցանէ թէ օրէնքն չտիրէ նոցա, և ապա յայտ է թէ և ոչ մեղք. և այնպէս հեշտացուցեալ զբանն, 'ի մարդկայինն կերպարանէ առնէ յայտնի։ Այլ թուի մի ինչ ասացեալ, բայց երկուս դնէ ուղղելով զյառաջիկայսն. մի այն է զի 'ի մեռանել առն չէ ընդ օրինօք աւանն կինն այնուհետև, քանզի չէ ոք որ արգելու. երկրորդ անգամ ասա ոչ եթէ միայն այրն վախճանեցաւ, այլ և կինն. որպէս զի կրկին ընկալցին զազատութիւն։ Ոչ է եթէ 'ի վախճանել առնն հրաժարեաց յիշխանութենէ նորին կինն, իսկ յորժամ և կինն եւս վախճանիցի, առաւել եւս ազատանայ. զի եթէ 'ի միոյն մեռանելոյ ազատի յիշխանութենէն, յորժամ և նա եւս մեռանիցի՝ յայտ է թէ

երկոքեան միաբանին ։ Այլ արդ հանդերձեալ է եղանել յայսպիսի օրինակս ինչ հանդերձ գովելով զլսողն, ըն-կիզլն առնէ ճառին. "Ո՞չ գիտէք, եղբարք, ասէ, զի ընդ գիտունս օրինաց խօսիմ": Զոր յոյժ գիտէք իսկ և որ յայտնին է, զնոյն և ես ամենայն զգուշութեամբ խօսիմ: "Զի օրէնքն տիրեն մարդկան ցորքան ժամանակս կենդանի է": Այլ ոչ ասաց առն և կամ թէ կնոջ, այլ թէ մարդոյ՝ որ հասարակաց իսկ է երկուց կենդանեացն անուն. "Քանզի և որ մեռանին, արդարացեալ է, ասէ, 'ի մեղաց": Ապա ուրեմն կենդանեացն կան օրէնք 'ի վերայ. իսկ որք մեռանին՝ ոչ ինչ կարէ նոցա հրամանս տալ: Տեսանես զիարդ եցոյց կրկին զազատութիւն:

Այլ յորժամ յառաջագոյն ակնարկեաց զբանն, ապա 'ի կնոջն 'ի կերպարանս շրջէ զբանն և այսպէս ասէ՝ եթէ "Կին առնակին 'ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօքն. ապա եթէ մեռանիցի այրն, խափանին օրէնք առնն 'ի կնոջէն: Ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շուն կոչի եթէ լինիցի առն այլում. իսկ յորժամ մեռանիցի այրն՝ ազատեալ է, ոչ համարիցի շուն եթէ կամիցի լինել առն այլում": Հանապազորդ զայնս յեղյեղու և բազում զգուշութեամբ իսկ, վասն զի յոյժ վտանգ է ասել իսկ կարգել զայնս. քանզի 'ի կարգի առն զօրէնսն եդ, և 'ի կարգի կնոջ զամենայն զհաւատացեալս: Ոչ եթէ ըստ առաջարկութեան ինչ յարէ. քանզի ըստ կարգի զայն էր ասել՝ թէ, եղբարք իմ, ոչ ևս տիրեն ձեզ օրէնքն, քանզի մեռան օրէնքն: Ոչ ասաց այսպէս, այլ յառաջարկութեամբ բանին ցուցանէ զյաջորդսն. որպէս զի մի ծանրագոյնս առնիցէ ըզբանն՝ զկնոջ զվախճան բերէ 'ի մէջ ասելովն՝ որպէս թէ "Եղբարք իմ, և դուք մեռարուք օրինացն": Քանզի յորժամ այս և այն լիցի և ազատութիւն շնորհիցի, զինչ խափան է շնորհել զիրսն յորժամ օրինացն մեռան ինչ ոչ լինիցի:

"Քանզի կին առնակին 'ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք": Ու՞ր իցեն այժմ որք զօրէնսն բամբասեն. լուիցեն զայս յորժամ 'ի վտանգաւորան եմուտ Պաւղոս, ոչ ջնջեաց 'ի բաց զնորա պատիւն, այլ և մեծամեծս ևս խօսի զնորա իշխանութենէն. զի և 'ի կենդանութեան նորա կապեալ կայ Հրեայն, և շունք կո-

Digitized by Google

չին որք յանցանեն և թողուն զնա մինչդեռ կենդանին է։ Իսկ եթէ յորժամ վախճանեցաւ և թողին, չեն ինչ զարմանք, և առ մարդիկ յորժամ լինիցի այսպիսի ինչ՝ է մեղադրութեան արժանի։ "Իսկ ապա եթէ մեռանիցի այրն, ասէ, արձակեալ է յօրինաց առնն"։ Տեսանե՞ս զիարդ յօրինակէն ցուցանէ թէ վախճանեցան օրէնքն. այլ և ոչ յաջորդովքն զայնս գործէ։ "Ապա ուրեմն, ասէ, մինչ կենդանի է այրն, շուն կոչի եթէ լինիցի առն այլում"։ Տեսանե՞ս զիարդ յամէ 'ի մեղադրութեան այնոցիկ որք անցանեն զօրինօքն մինչդեռ կենդանիքն են օրէնք։ Եւ յորժամ զնայն դադարեցոյց, ապա այնուհետև ամենայն զգուշութեամբ շնորհէ նոցա զհաւատոն, և ցուցանէ թէ ոչ ինչ վնասեցան առտի օրէնքն. ասէ. "Մինչդեռ կենդանի է այրն, շուն կոչի կինն եթէ լինիցի առն այլում"։ Այնպէս և դուք, եղբարք. ըստ կարգի այն էր ասել, եթէ 'ի վախճանի օրինացն չհամարել շուն թէ լինիցի առն այլում. Ոչ ասէ այսպիսի ինչ, այլ զինչ՝ թէ "Մեռայք օրինացն"։ և եթէ մեռեալք եղերուք, չէք ընդ օրինօք։ Զի եթէ 'ի վախճանել առնն չէ կինն ընդ օրինօք առնն, ապա մանաւանդ ևս առաւել դուք 'ի վախճանել օրինացն ազատեալ էք յայսպիսի իրաց։

Տեսե՞ր զիմաստութիւնն Պաւղոսի. և եթէ օրինացն այս կամք էին, քանզի չարգելու լինել այլում առն 'ի վախճանել առաջնոյն, ո՞րպէս արգեօք որ մինչ կենդանին իսկ է՝ հրամայէ գիր արձակման տալ։ Այլ չդնէ զայս այժմ, վասն զի մանաւանդ մեղադրութիւն իսկ էր կնոջն. զի թէպէտ և ներէր, այլ չէ ազատ 'ի պատճառանաց։ Յորժամ 'ի կարևորացն և 'ի լաւագունիցն անի զյաղթութիւնն՝ չներէ զաւելորդսն, քանզի չէ ինչ կարօտ։ Զի յայնժամ իսկ է զարմանալի յորժամ նոյն ինքն օրէնքն ազատեն զմեզ 'ի մեղադրութենէն յորժամ 'ի բաց կամք 'ի նոցանէ, զի ցուցանէ թէ և ինքեանց օրինացն կամք էին այն, զի լիցուք մեք Քրիստոսի։ Քանզի և օրէնքն իսկ մեռան և մեք մեռաք, և կրկին եղև իշխանութեանն բարձումն։

Եւ ոչ եթէ զայս միայն բաւական համարի, այլ և զպատճառս ևս դնէ. և ոչ լոկ եդ զանուն մահուն, այլ դարձեալ զայնս գործելով՝ զխաչն 'ի մէջ բերէ, և ոչ

ցուցանէ զմեզ վրիժապարտս։ Նա չասաց լոկ եթէ ազատեցայք, այլ թէ 'ի ձեռն տէրունական մահուն։ «Մեռարուք, ասէ, օրինացն 'ի ձեռն մարմնոյն Քրիստոսի»։ Նա ոչ միայն զսա հրաման տայ, այլ և յառաւելութենէ երկրորդ առնն. վասն որոյ և յարեաց իսկ 'ի սոյն՝ թէ «Լինել ձեզ այլում, այսինքն որ 'ի մեռելոյն յարեաւ»։ Ապա զի մի ասիցեն թէ ոչ կամիմք երկրորդ առն լինել, վասն զի օրէնքն չտանեն շուն զայլիսն, եթէ կամիցին երկրորդ առնն ամուսնանալ։ Նա արդ զի մի այսպիսի ինչ ասիցեն, 'ի սկզբան յիշեաց անտի իսկ պարտ է, մեզ կազմել. զոր օրինակ և այլ ուրեք յայտնապէս ասէ՝ թէ «Չէք անձանց տեառք. գնոց գնեալ էք, ասէ, մի լինիք ծառայք մարդկան». և դարձեալ թէ «Մինն 'ի վերայ ամենեցուն մեռաւ». ըղսոյնս և աստ ակնարկէ ասելովն թէ «Ի ձեռն մարմնոյ նորա»։

Ապա և հրամայէ իսկ ձրիութեամբ 'ի լաւագոյն 'ի յոյս անդր յենուլ, և ասէ այսպէս. «Օ՛ի պտղաբերք լիցուք այ». վասն զի յայնժամ մահու էիք պտղաբերք, իսկ այժմ այ։ «Քանզի մինչ մարմնովն էիք, կարիք մեղացն 'ի ձեռն օրինացն ազդէին յանդամս ձեր առ 'ի պտղաբերել լինել ձեզ մահու»։ Տեսե՞ր զշնորհաց զառաջին առնն։ Նա չասաց թէ մինչ էաք յօրէնսն, վասն զի ամենայն ուրեք խնայէր 'ի նոսա, զի մի ինչ կռուան տայցէ հերձուածողացն. այլ ասէ թէ մինչ էաք 'ի մարմնին, այսինքն 'ի չարութեանն 'ի գործս մարմնաւոր վարուցն։ Քանզի ոչ եթէ զայն ինչ ասէ թէ յառաջ քան զայս մարմնով էին և այժմ առանց մարմնոյ։ Նա ոչ ասէ պատճառք ինչ էին օրէնքն մեղացն, և ոչ ազատէ 'ի մեղադրութենէ զգործեալսն. զոր և զդառն յանդիմանչի և զչարախօսի կարգ ունէր, և մերկ դէմ յանդիմանս ցուցանէր զմեղսն։ Քանզի ոչ եթէ որք ոչ ինչ կամէին բնաւ հաւանել ինչ՝ հրամայէր, այլ յաւելու և յանդիմանէ զյանցաւորսն միայն. վասն այնորիկ չասաց թէ կարիք մեղացն որ յօրինացն եղեն, այլ թէ 'ի ձեռն օրինացն. այսինքն է թէ որ օրինօքն երևեցաւ և ծանուցաւ։ Նա զի մի դարձեալ մարմնոյն աք ինչ ունիցի մեղադրութիւն, յայն սակս չասաց թէ զոր ազդեն անդամք, այլ թէ որ ազդէր յանդամս մեր։ Ն[illegible]

ցուցանէ զսկիզբն չարեացն յաղդմանէ խորհրդոցն, և ոչ եթէ յանգամոցն յաղդմանէ։ Վասնզի հոգին զարուեստականի զկարգ ունի. իսկ մարմինն զքնարի, այնպէս հնչէ որպէս նմա հարկն առնէ արուեստականն։ Ապա ուրեմն ազատ են անդամքն ՚ի մեղապարտութենէ՝ զնանակս վարկանել և զանուն ածել։

"Այժմ, ասէ, ազատեալք յօրինացն"։ Տեսանե՞ս դարձեալ զիարդ և սաստ խնայէ և մարմնոյ և օրինացն։ Ոչ ասաց թէ խափանեալ են օրէնքն, այլ զի՞նչ. մեք, ասէ, խափանեցաք։ Եւ ո՞րպէս մեք խափանեցաք. ՚ի մեռանել հին մարդոյն՝ մեղացն և թաղել, որ ունէրն և տիրէրն, քանզի զայս յայտ առնէր ակնարկելովն՝ թէ "՚ի մեռանել այնորիկ որ ունէրն". որպէս զի յորժամ ասիցէ թէ կապանքն որով խափանեալն էաք՝ մեռան և ՚ի բաց լուծան, որպէս զի որով ունէրն՝ մի ևս կարասցէ ինչ առնել, այսինքն են մեղքն։ Այլ մի յորսայսեալ իբրև ծառայողս լինիր վասն զի բաժանեցար. այլ արդ ծառայ ես դարձեալ, ոչ նման նմին, "այլ նորոգութեամբ հոգւոյն և ոչ հնութեամբ գրոյն"։ Զի՞նչ է զոր ասէն. հարկ է զայս բացատրագոյն գնել, զի մի յորժամ յանդգատանս խնդրոյն մտանիցեմք՝ շփոթիցիմք ինչ։ Վասնզի, ասէ, յորժամ մեռաւն Ադամ և մարմինն որպէս եղև մահկանացու և չարչարելի, և բազում նուազութիւնս և ախտս ծանրագոյնս ընկալաւ ըստ բնութեանն, և որպէս խիստ երիվար որ ոչ լսիցէ նահանջման սանձոց, այնպէս և նա զինքն կարգեաց. իսկ Քրիստոս եկեալ ՚ի ձեռն մկրտութեանն մեզ զայն դիւրագոյնս յօրինեաց և թևով հոգւոյն զմեզ վերացոյց։ Վասն որոյ իսկ այսորիկ ոչ մի և նոյն աշխատութիւն կայ մեզ և հնոյն. վասն զի ոչ այսպէս դիւրընթաց էր նոցա որպէս և մեզ։ Սորին վասն ոչ եւեթ սուրբ ՚ի պատուիրանէ կամի եթէ լինել մեզ միայն, այլ ասէ՝ և բարեկամաց իսկ մի. և ոչ թէ զզգաստութիւն միայն հանէ ՚ի մէնջ, այլ և զչարաց հայեցուածոյն, և զանատակ զայլոց զդեղոյն քննել խափանել հրամայէ. և ոչ դարձեալ թէ երդմնահարս միայն չլինել, այլ ամենևին իսկ ատանց երդմանն հրամայէ մեզ լինել բարեկամացն. և զթշնամիսն հրամայէ մեզ սիրել, և յայլսն ամենևին ևս երկայնագոյնս գործեաց զպատուաւորութիւնն։ Արդ և զի հեռեն սպառնացեալ որք ոչն հա-

ւանիցեն կատարել զայսոսիկ։ Ո՞չ ցուցէ թէ ոչ յառաքելութենէ յայսոսիկ ինչ որ գործիցեն՝ եղեն առացեալք, այլ ինքն իսկ ուղղեաց։ Ո՞չ միթէ որք զխաւաթիւնն պահիցեն և կամ զանտառացուածութիւնն յանձն առեալ՝ այնու շատացին. այլ զամենայն ինչ զայսպիսի զուգութիւնս պարտիք յանձինս ցուցանել, քանզի կարևոր պիտանի այսոքիկ են իսկ։ Նա՛ա յայտ իսկ է եթէ որք ոչ առնիցեն զայն, մերժին զդատաստանն ընդունելոց են։ Ա՛սան այսորիկ ասէր. “Եթէ ոչ առաւելուցու արդարութիւնն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոցն, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից„։ Նա՛ա ուրեմն որ յարքայութիւնն ոչ մտանէ, 'ի գեհենն երթալոց է յայտ է։ Սոյնն վասն և Պօղոս ասէր՝ թէ “Մ՛եղք ձեզ ոչ տիրեն. քանզի չէք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք„. և աստ դարձեալ թէ “Ն՛ա 'ի ծառայել մեզ նորոգութեամբ հոգւոյն և ոչ հնութեամբ գրոյն„։ Ք՛անզի չէր գիրն որ դատապարտ առնէր, այլ հոգին է որ օգնէ։ Ա՛սան այսորիկ առ հնոյն եթէ յանկարծ երևէր ոք որ զխօսութիւն պահէր, յոյժ հիացումն իրքն թըւէին. իսկ այժմ ընդ ամենայն տեղիս համատարած եղեն իրք կուսութեան։ Սոյնպէս և զմահ յայնժամ սակաւ արք կարացին արհամարհել. իսկ այժմ և 'ի գեւղս և 'ի քաղաքս բազմութիւն մարտիրոսաց նահատակութեամբ ճառագայթեն. և ոչ միայն յարանց, այլ և 'ի կանանց գտանէն բազումք։

Նա ապա այնուհետև իբրև զայս ասաց, այց առնէ այլում ընդդիմադրութեան որով զայս լուծանիցէ, և 'ի լուծմանէ առնուր կաղմէ զոր ինչ կազմիցէն. վասն որոյ և ոչ յառաջագոյն մուծանէ 'ի լուծմունսն, այլ անդրատին իսկ յընդդիմաբանութիւն, զի 'ի հարկաւորէ լուծմանն զպատճառն զոր ինչ կամիցի՝ յաւելու առնուր առցէ, զի և ս յաճախագոյնս արասցէ զմեծագործութիւնն։ Նա քանզի ասաց թէ նորոգութեամբ հոգւոյն և ոչ հնութեամբ գրոյն, ապա 'ի սոյնս յարէ զայն. “Ո՞ինչ ասեմք, ասէ, օրէնքն մե՞ղք իցեն. քաւ լիցի„։ Նա վասն զի յառաջ քան զայս էր ասացեալ եթէ կարիք մարմնոյ մեղացն որ օրինօքն ազդէին յանդամս մեր. և եթէ մեղք ձեզ ոչ տիրեսցեն. և ուր ոչ են, ասէ, օրէնք և ոչ յանցանք. և եթէ օրէնքն մտին զի բազմասցին յանցանքն.

Digitized by Google

և եթէ օրէնքն զբարկութիւն գործեն. և արդ վասն զի թուէր ամենից թէ այսու ամէն զօրինացն անարգանաւն ինչ լինել, առ ուղղելոյ զայսպիսի մտածութիւն դնէ զայսպիսի զխնամարկութիւն և ասէ. “Միթէ օրէնքն մեղք իցեն. քաւ լիցի”: Յառաջ քան զկապելն յարդարեաց զլուծումն ընդդանեալ, և զգայթակղութիւն ուղղեցոյց: Նոյն այսուհետև լսել և վասն մերձաւորութեան նորա հաստատէին, և խնդրէին 'ի նմանէ ուսանել. զոր կարծէին եթէ հիացումն իմն թուի, և ապա այնուհետև և ոչ կարծիս ինչ ունի զատողէն, վասն որոյ և զդիմադրութիւն զայն յառաջադոյն կազմեալ եդ: Պատճառ և չասաց իսկ եթէ ասեմք, այլ եթէ զինչ ասիցեմք. որպէս զի կամացն և բարւոյն տաղքի կացեալ, և հաղորդ ամենեցունց զեկեղեցին 'ի մէջ բերէ. և ոչ թէ յիւրմէ ինչ, այլ յաստացելոց անտի որ լուա կարգին և յերաց անտի ճշմարտութէ յայտնի զխնամարկութիւնն: Այլ զի գիրն սպանանէ, չկարէ ոք ընդդիմել ասել ինչ, ասէ: Այլ զի օգնին կեցուցանէ, և այս յայտնի իսկ է և ոչ ոք կարէ հակառակել: Նոյն եթէ այս այժմ ամենեցուն քաջայայտ է, զինչ ոք ասիցէ վասն օրինացն՝ թէ մեղք իցեն. քաւ լիցի: Այլ այսպէս լուծանէ զզարմացումն իւրացն: Տեսանես զիարդ եկաց ընդ ատեանն և զնոցա պատիւն յինքն յափշտակեաց և այս, դարձեալ 'ի լուծումն անդր ընթանայ: Այլ զինչ իցէ լուծումնն:

Օրէնքն, ասէ, չեն մեղք. “այլ զմեղս ոչ գիտէի, ասէ, եթէ ոչ օրինօքն”: Տեսանես զխնամատական զգաղհանճումնն: Զի չէին օրէնքն, դիմադրութեամբ յօրինեաց, որպէս զի 'ի բաց բարձցէ զնա: Այլ զայս չնորհէ Հրէիցն՝ թէ զնուաղագոյնս 'ի յանձին կալարուք գործել: Այլ զինչ իցէ կրասերն այն՝ եթէ “Զմեղս ոչ գիտէի, եթէ ոչ օրինօքն. և ոչ զցանկութիւն ճանաչէի, թէ ոչ օրինացն էր ասացեալ՝ թէ մի ցանկանայցես”: Տես որպէս առ փոքր մի ոչ միայն չարախօս ցուցանէ զնոսա մեղացն, այլ և խոստմնութեան նոցա կարգէ. և ոչ եթէ յանձանց ինչ չար էին օրէնքն՝ քաւ լիցի, այլ 'ի բարւոյն. և յաղագս բարւոյ տուեալք, բայց յաստաճառհութենէ Հրէիցն կարծեցան այնպիսի ինչ: Պատճառի այսու և զմանկըեցուցին զարդարն ինա, որք բամբասէին զօրէնսն:

Այլ իբրև ասաց եթէ զմեղս ոչ գիտէի եթէ ոչ օրինօքն, և զցանկութիւն ոչ ճանաչէի եթէ ոչ օրինացն էր ասացեալ թէ մի ցանկանայցես, և 'ի սոյն յարեալ ասէ՝ թէ «Պատճառս առեալ մեղքն պատուիրանաւն և գործեցին յիս զամենայն ցանկութիւնս»։ Տեսանես որպէս ազատէ զնա յամենայն բամբասանաց, քանզի ասէ՝ պատճառս առեալ մեղքն պատուիրանաւն. և ոչ ասէ թէ օրէնքն աճեցուցին զցանկութիւնն, այլ և որ եւս հակառակն թուի՝ զոր ինչ կամէաքն ամենայն եղև, որ մանաւանդ տկարութեանն էր և ոչ չարութեան. քանզի յորժամ ցանկանամք և արգելեալ լինիմք, մանաւանդ և աճէ եւս ցանկութեանն բոց։ Այլ ոչ եթէ օրինացն ինչ էր այս. քանզի նա արգել առ 'ի յերթալոյ յիրս մեղացն, այսինքն է 'ի ծուլութենէ մեղացն եղև այն և 'ի չար բարուց անտի՝ որք զբարիսն յանպատեհս 'ի կիր արկանեն։ Այսպէս ուրեմն ոչ եթէ բժշկին է մեղադրութեան արժանի, այլ հիւանդին որ դեղոցն չարաչար վարեցաւ։ Մի՛թէ վասն այնորիկ տուան օրէնքն զի զցանկութիւնն բորբոքեսցեն. ոչ, այլ զի շիջուսցեն։ Այսպէս ուրեմն ոչ եթէ նա, այլ մեք եմք մեղադրութեան արժանի։ Վասն զի և ոչ զջերմակածն և որ ցուրտ ըմպելոյն ընդ վայր ցանկանայցէ, և որք չտայցեն երկուցեալ 'ի վնասակար անտի՝ թէ գուցէ հեշտութեամբ ըմպելոյն աճեցուցանիցէ զցաւն, միթէ մեղադրութեանն արժանի իցէ որ չետն, և ոչ երբէք. քանզի բժշկին է արգելուլն, իսկ հեռանալն այնմանիկ ըմպելոյ աշխատեալ հիւանդին։

Այլ զինչ, միթէ մեղքն անտի առին պատճառս յօրինացն. քաւ լիցի. քանզի բազումք 'ի չարաց 'ի բարւոք կարգաւորութեանն զիւրեանց զչարութիւնն աճեցուցանեն։ Այսպէս և զՅուդաս սատանայ կորոյս յընչասիրութիւնն արկանելով, և գող արար զնա որ ինչ աղքատացն էր. և ոչ եթէ այնորիկ վնաս էր որ նմա զարկղն հաւատաց, այլ իւր չար բարքն։ Այլ Այս զԱդամ կողմեաց ուտել 'ի ծառոյն և այնու եհան զնա 'ի դրախտէն. այլ և ոչ անդ ծառն եղև պատճառք յանցանացն, թէպէտ և նովաւ եղև յանցումն։ Տես ո՞րպէս յոյժ 'ի կիր արկանէ զբանս վասն օրինացն. և մի ինչ զարմանար, քանզի յոյժ ջերմութեամբ Պաւղոս հաստատուն

կեայ վասն օրինացն, և չթողու և ոչ այլոյ ինչ պատճառս գտանել և կամ կասկած ինչ առնուլ յառաջելոցս. վասն զի բազում փոյթ յանձին ունէր վասն զայժմուս յարդարելոյ։ Եւ արդ մի մերկ միայն քննէր զասացեալսն 'ի նմանէն այժմ, այլ և զպատճառսն ևս առաջի դնէր վասն որոյ զայսն ասաց. յառաջ բերէ և զհրեականն մոլորութիւնն, զմտաւ ածէ և զնոցա 'ի սակս կռուին զոր լուծանելն փութայր։ Որ բազմաց կարծիք կան թէ ընդդէմ օրինացն ինչ չնչէր. ոչ զի զնա ինչ ստգտանիցէ, այլ զի զայլսն լուծցէ յայժ 'ի մեղադրութենէ օրինացն։

Զայն զոր ասացն՝ թէ պատճառս առին մեղքն, նաւաւ ցուցանէ թէ և 'ի նորումս այսպիսի ինչ գտանի ասացեալ։ Եւ բիւր օրէնք էին և վասն բազում և մեծամեծ իրաց. ապա պարտէին ուրեմն և այնք 'ի բաց ելանել. և ոչ եթէ վասն ցանկութեանն միայն, այլ և վասն ամենայն չարեաց։ Զի "եթէ չէր իմ եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ ունէին". ապա ուրեմն առիթ առին մեղքն զպատճառսն և զմեծամեծ տանջանսըն։ Եւ դարձեալ Պաւղոս վասն շնորհացն ճառեալ ասէր. "Որչափ ինչ տանջանաց արժանի վարկանիցիք զայն որ զորդին այ առ ոտն եհար"։ Ապա ուրեմն զդըժնեայ զտանջանացն առիթ ունի զպատճառսն 'ի մեծամեծ երախտեացն։

Աստի և հեթանոսացն ասէր՝ թէ առանց պատասխանատուութեան են, զի և բանիւ պատուեցան և զգեղեցկութիւն արարածոցս տեսեալ և 'ի սոցին իսկ յայսցանէ կարող էին առ արարչագործն յառաջադէմ լինել. այլ ոչ 'ի լաւ անդր արկին զիմաստութիւնն այ 'ի կիր։ Տեսանես որչափ ամենայն ուրեք զչարեացն զպատճառսն մեծամեծս տանջեալս 'ի բարութենէ իրացն գործելոց։ Այլ ոչ երբէք մեք կարեմք բամբասել զայ զմեծամեծ բարութիւնսն և զերախտիսն, այլ և սքանչանամք եւս մեծապէս, և յետ այսորիկ և ընդ բարսն որ փոխանակ հակառակորդացն 'ի բարիս 'ի կիր արկանիցեն. և եթէ մեղադիր ոք լինիցի, զայս և զօրինացն գտանեմք լինել. այս հնարաւոր և դիւրին է, իսկ այն դըժուարին է։ Զիարդ ասէ՝ թէ զցանկութիւն ոչ ճանաչէի, թէ ոչ օրինացն էր ասացեալ. մի ցանկանայցես.

Digitized by Google

զի թէ ոչ գիտէին զցանկութիւն մարդիկ մինչև զօրէնսն առեալ էին, ուստի եղև ջրհեղեղն, ուստի սոդոմայեցւոցն հրայրեցութիւնք։ Այլ զինչ ասէ. զատարածումնն։ Վասն այսորիկ չասաց թէ գործեաց յիս զցանկութիւնն, այլ թէ զամենայն ցանկութիւն. զյոյժն ակնարկէ ասել։ Այլ զինչ օգուտ յօրինացն թէ զախտն աճեցուցանէ, ասէ. և ոչ ինչ, այլ և յոյժ բազում վնաս։ Այլ չէ այս օրինացն մեղադրութիւն, այլ ծուլութեան ընդունելեացն։ Թէպէտ և մեղքն գործեցան, սակայն, ասէ, 'ի ձեռն օրինացն. ոչ եթէ օրէնքն յայն փոյթ ինչ ունէին, այլ մանաւանդ թէ որ ինչ հակառակն է. այլ զօրաւոր եղեն մեղքն յոյժ 'ի ձեռն օրինացն։ Այլ սակայն և ոչ այս օրինացն ինչ մեղադրութիւն է դարձեալ, այլ նոցա անմտութեանն։

«Քանզի առանց օրինացն մեղքն մեռեալ էին»․ այսինքն է ոչ այսպէս ծանօթ և յայտնի։ Գիտէին և յառաջ քան զօրէնսն մեղանչումնն. իսկ ապա յորժամ օրէնքն տուան, ևս հաւաստեաւ 'ի վերայ հասին. վասն որոյ և մեծագոյն մեղադրութեան գտան պատժապարտք։ Քանզի չէր իսկ զոյգ նմին զբնութիւն ունել ամբաստան, և յետ բնութեանն և զօրէնսն ևս, որ յայտ յանդիմանն զամենայն քարոզէր համարձակ։ «Ես, ասէ, կենդանի էի երբեմն»։ Երբ. յառաջ քան զՄովսէս։ Տես որպէս փութացուցանէ յորմէ արարն և յորմէ չարարն, յերկոցունց ծանուցեալ զմարդկայինն բնութիւն։ Յորժամ, ասէ, առանց օրինացն կենդանի էի, ոչ այնպէս դատապարտէի։ «Այլ 'ի գալ պատուիրանին մեղքն կենդանացան և ես մեռայ»։ Այսու թուի թէ մեղադիր ինչ լինիցի օրինացն. իսկ եթէ ոք հաւաստեաւ միտ դնիցէ, ոչ եթէ ամբաստան միայն չէ զօրինացն, այլ և գովող ևս գտանի նոցա. զի ոչ եթէ զչգոյ ինչ հաստատէ, այլ զծածկեալն յայտնէ, որ և գովութիւն իսկ է օրինացն։ Զի եթէ յառաջ քան զնա անզգայութեամբ մեղանչէին, իսկ 'ի գալ նորա և ոչ յայնժամ ազդումն լինէր, ապա յայտնապէս սովաւ գիտէին թէ մեղաք. ուստի և ոչ փոքր ինչ է սա առ 'ի չարեացն հրաժարումն։ Իսկ ապա եթէ ոչ կամեցան 'ի բաց կալ 'ի չարեացն, ապա այս չէ ինչ առ նա որ զամենայն ինչ վասն նոցա գործեցին օրէնքն, այլ ամենայն ամբաստանութեն

վասն նորա մահուն է՝ որք աստանօր յուսոյն եղծին և ա-պականեցին զկեանս.

Նշանակէ և ոչ բանիւ ինչ արժանի էր այն որ ինչ գործէին 'ի նոցանէ, և որով պարտն էր օգնել՝ նոցին քրիստոնէից. վասն որոյ և ասէ իսկ՝ եթէ "Գտաւ ինձ պատուիրանն որ 'ի կեանս էր, նոյն եղև ինձ 'ի մահ": Այլ չասաց թէ եղև մահ կամ ծնաւ զմահ, այլ թէ գտաւ 'ի մահ: Այդ և հրաշափառագոյն անդրանկութիւն Թագաւորութեան գտանի, զի 'ի նոցա գլուխ անցըէն գործոյցանէ զամենայն: Այլ եթէ զնորա միայն ամենեքին կամիցին գիտել հաւատաւ, 'ի կեանս եղև այս, ասէ, և ասաց իսկ. այսպէս եթէ մահն ասացի գործեցաւ, որք ընկալան զպատուիրանն՝ նոցա մեղսգործութիւն է և ոչ եթէ որ առ 'ի կեանս առնէր զնոսա: Այս նոյն ինքն յայտնապէս և որ 'ի կարգին էր՝ ասաց, և այնու յայտնեաց՝ թէ "Մեղքն պատճառս առեալ պատուիրանաւն խաբեցին զիս՝ և նովին սպանին": Տեառնն զի ամենայն ուրեք զմեղացն բանն հարկեալ ամենայն իրիք կամի զօրէնսն ազատել յամբաստանութենէն. վասն որոյ 'ի սոյնս յարեաց առնելով՝ թէ "Օրէնքն սուրբ են և պատուիրանն սուրբ և արդար և բարերար": Իսկ ասա եթէ կամիցիք, և որ ինչ 'ի կարգին է զբանն 'ի մէջ անցաք որ 'ի մէջն առաքեաց:

Նշանակէ ոմանք ասեն թէ ոչ վասն Մովսէսի օրինացն զայս ասացեալ է. այլ ոմանք ասեն թէ վասն բնական օրինացն, իսկ կէսք ասեն վասն պատուիրանին որ 'ի դրախտին առաւ: Այլ զի ամենայն ուրեք մտածութիւն Պաւղոսի այն էր առ 'ի զօրէնսն դադարեցուցանելոյ, իսկ առ այնաւրիկ և ոչ մի ինչ բան ունի, մանաւանդ եթէ յիրաւի իսկ. վասն որոյ հրեայքն դադարին և սարսափին և հակառակէին առ շնորհսն: Իսկ զպատուիրանն որ 'ի դրախտին առաւ, ուրեք թէ օրէնս երբեք կոչեցին, ոչ նա և ոչ այլ ոք նմին նման: Այլ զի այսպէս յայտնի առաքեալն, եկցուք անցըէն 'ի նորին բանսն:

Այլ վասն զի 'ի վաղուց կարգի խօսեցաւ ընդ նոսա, յարէ 'ի սոյնս առնելով այսպէս. "Եթէ ոչ գիտէք, եղբարք, զի ընդ գիտողս օրինացն խօսիմ՝ թէ օրէնքն տիրեն մարդոյ յորչափ ժամանակս կենդանի իցէ. Այսպէս և դուք զի մեռայք օրինացն": Զի թէ վասն բնա-

կամ օրինացն առնիցէ զայս, զատանիցեմք զի ոչ Յիսուս անիցի զնա։ Այլ եթէ ճշմարիտ այսպէս իցէ, ապա զատանիցիմք քան զամբաւն անաստուածս անաստուածագոյնք։ Բայց չէ և չէ իսկ այս։ Զի որ 'ի դրախտին գործեցաւ, և ոչ հակառակել ամէք այլոց է վասն նորա, և մի աւերելոց աշխատութիւնս ինչ անձանց սատանայցեմք։ Այլ զխնդիր ասիցէ՝ թէ "զմեղս ոչ գիտէի, թէ ոչ օրինօքն"։ Ոչ զմեղաւ առաջնորդութեանն ասէ, այլ զհաւատարմաւ զգիտութիւնն յայտնէ. զի թէ զմեղական օրինացն ասէ զայս, ապա ընդէր յաղթողքն զայս բան 'ի կիր արկանէր. ասէ. "Այլ առանց օրինացն երբեմն էի կենդանի"։ Վասնզի ոչ Ադամ և ոչ այլ ոք 'ի մարդկանէ եկեաց երբէք առանց բնական օրինացն. զոյգ իսկ ընդ ստեղծուածին զնոյնս զնէ ած 'ի բնութեանն ընդունելից, և զգուշացուցիչ ամենայն բնութեանն կարգեաց։ Այլ առանց այնորիկ չերևէր ուրեք եթէ զբնութեանն օրէնս պատուիրան կոչէ. և զմիւս պատուիրանն և արդար և սուրբ կոչէ, և հոգևորական և սուրբ անուանէ։ Վասնզի բնական օրէնք չտուան մեզ 'ի հոգւոյն. վասն զի բարբարոսք և հեթանոսք և ամ իսկ ազգք մարդկան ունէին զօրէնս զայս։ Այլ ուրեմն յայտ է՝ թէ զմովսիսական օրինացն ասէ, և 'ի վեր և 'ի վայր ձգանէ, վասն որոյ և սուրբ իսկ կոչէ զնա ասելով թէ "Օրէնքն սուրբ են և պատուիրանն սուրբ և արդար և բարերար"։ Զի թէպէտ պիղծք և անմաքուրք եղեն հրեայքն և անիրաւք և զրպարտողք, չխափանէ ինչ այն զառաքինութիւն օրինացն, որպէս զի և ոչ զնոյն հաւատոյն այլոց անհաւատութիւնն. ապա ուրեմն յայտ եղև թէ վասն Մովսէսի օրինացն ասացեալ է զայս։

Այլ արդ զինչ է. "Բարին, ասէ, ինձ մահ եղև. քաւ լիցի. այլ մեղքն, զի երևեսցին մեղքն". այսինքն է զի յայտնեսցի թէ որչափ ինչ չարիք էին մեղքն և կամ ծուլացոյն յանձառութիւնն և առ 'ի յուսմն մխիթարութեան, և նոյն ինքն գործքն և մեղքն առաքինութեանն գործին։ Այսր ամենայնի պատճառք չարեաց ծուլութիւնն է։ Բայց ամենեցունց օրէնքն և ցուցանեն զնոյն շնորհացն զառաւելութիւն՝ թէ յորքան 'ի չարեաց ազատեաց զազգս մարդկան։ Զի թէպէտ և բժշկական դեղովքն եւս զծնեալ խնդրանն, և վասն արդեօք ընկեցիկ առնեւաց։

Որով 'ի սոյն յարեալ ասէր. « Ոչ ի առաւել լինել մեղքն մեղուցելոցն 'ի ձեռն պատուիրանին »: Տեսանե՞ս զիարդ ամենայն ուրեք զօրէնսն պատուէ. և որով թուի թէ մեղադիր լինիցի օրինացն, այնու աճեցուցանէ զառաքինութիւն օրինացն: Վասնզի և ոչ փոքր ինչ անհնարինեաց և եցոյց թէ որչափ չարիք էին մեղքն, և զամենայն իսկ զթոյնսն եցոյց և 'ի մէջ եբեր. վասն զի զայս յայտնի առնէր ասելովն. « Ոչ ի եղիցին մեղքն մեղաւոր 'ի ձեռն պատուիրանին »: Այսինքն է զի երևեցի թէ որքան ինչ չարիք էին մեղքն և սատանակիցք: Այլ այս 'ի պատուիրանէն երևեցաւ. 'ի սմանէ և առաւելութիւն չարչարին յայտնեցաւ առ օրէնսն: Այլ մի ինչ յայս հայիր թէ յաւելք եղեն որք լինելոյն զօրէնսն. այլ զայն ած զմտաւ թէ օրէնքն չածեն 'ի հրամանս չարին, այլ և զյառաջագոյն զգործեալսն փութայր 'ի բաց կտրել: Իսկ եթէ ոչ զօրեաց, ինքն պատկի 'ի բերոցն. և մեծագոյն երկրպագէ Քրիստոսի զօրութիւնն, որպէս զչարիսն և զդժուարամարտ եղծ և արմատաքի 'ի բաց խլեաց:

Իսկ մեզ յորժամ լսիցես, մի անձնաւոր ինչ զօրութիւն կարծիցես, այլ վարս չարս զկնեալսն և որ միշտ լինի. որ և ոչ յառաջ քան զլինելն չգոյր երբեք, և յորժամ լինի՝ դարձեալ եղծեալ ապականի: Սորին վասն և օրէնք տուան. իսկ օրէնքն չլինի բացբարձիչ բնութեան օրինացն, այլ առ 'ի յուղղել զբարս յօժարութեանն 'ի չար գործոցն: Ոչ այս և արտաքին օրէնսդիրքն ճարտար գիտէին, և ամենայն իսկ մարդկային բնութիւն գիտէ՝ թէ որ 'ի ծուլութենէ միայն գործին չարիքն՝ յայնմանէ միայն կամին ամփոփել, և ոչ եթէ որ ըստ բնութեանն ժառանգութիւնն է 'ի բաց բառնալ. վասն զի բնութիւնն անշարժ մնայ, զոր բազում անգամ և յայլ ճառս ասացեալ է մեր առ ձեզ:

## ՑՈՐԴՈՐԱԿ

Արդ որոց զայսպիսի խնդիրս 'ի բաց թողեալ, զընտանի զմեր զբանն 'ի մէջ ածցուք, և սովորականն իրսքն վարժեսցուք զլսելիս ձեր. մանաւանդ թէ և սոյն իսկ ինքն չէ փոքր աշխատութիւն: Վասնզի զբարիսն 'ի բաց

խլեմք և զառաքինութիւն 'ի ներքս ածեմք։ Վասն այսորիկ իսկ յայտ համարձակ ուսուցանեմք՝ եթէ ոչ բնութիւն ինչ են մեղքն։ Այլ որք խնդրենն թէ ուստի են մեղքն, ոչ միայն 'ի բանից, այլ և յիրացն կարեմք ըմբերանել զնոսա. զի որք նոցայն հաղորդ են, ինքեանց իսկ բնութիւն իրքն թուին. իսկ յորժամ զերծանեն 'ի նոցանէն, ոչ ինչ ևս բնութիւնն ինչ երևի։ Այլ մի զայդ ձևալ յայն ինչ հայեսցուք թէ աշխատութիւն է առաքինութիւնն. այլ հնար գոյ զնա ուղղել, թէ կամիցիմք և փութայցեմք, ապա և թեթև և դիւրին մեզ երևի։ Իսկ ապա եթէ զհեշտութենէ մեղացն ինչ առիցես, ապա և զվախճանէն. քանզի նա 'ի մահ կործանէ, որպէս առաքինութիւնն մեզ 'ի կեանս առաջնորդէ. մանաւանդ թէ կամիցիմք, և յառաջ իսկ քան զվախճանն զերկոսեանն քննեսցուք, և գտանեմք զմեղսն զի բազում երկունս ունի, և առաքինութիւնն հեշտութիւն։

Զինչ ինչ, ասա ինձ, ցաւագին քան զխեղճ չարեացն մտացն կայցէ, և զինչ հեշտագոյն քան [illegible] բարութեանց։ Վասն զի չէ և չէ իսկ ինչ որ այնպէս զմեզ սովոր է ճնշել և մաշել որպէս զի զակնկալութիւն չարեաց. և ոչ այնպէս դարձեալ թեթևաթռիչս և երագունս զմեզ առնիցէ որպէս զխորհուրդս բարիս։ Զայս և այժմ առ մեզ իսկ տեսանեմք զի դիւրի այսպէս։ Զի աղքատիկ որք 'ի նեղափողոցն շրջին և մուրանան, առ 'ի չգիտելոյ զխեղճ մտաց 'ի բերկրութեան են. իսկ որ 'ի բանտսն բնակեալ են և դատապարտութեան ակն ունին, թէպէտ և 'ի բիւր փափկութեան վայելեսցեն՝ վշտագին և ողորմելի կեանս կեան քան զամենեսեան. վասն զի ակնկալութիւն չարեացն չտայ զգալ զհեշտութիւն կերակրոցն։

Այլ զինչ ասեմ զբանտարգելեալսն. ուստի և այնոքիկ որ զտարաշխարհսն հատանիցեն և կամին մեծանալ և 'ի շահս բազումս վայելել, և եթէ այնպէս խեղճ մտաց 'ի ներքս կայցէ, թէպէտ և բազում շահս 'ի ներքս ժողովէ՝ չկարէ երբէք բերկրել։ Նոյն յայտ է թէ որ միշտ իւրով ձեռօքն զարուեստիցն գործիցէ և 'ի տան նստիցի և միայն 'ի բերկրութեան են, թէպէտ և հանապազ աշխատի, քան զնոսա վերագոյն գտանի։ Այլ զմիայնակեացսն վասն որոյ իսկ երանեմք, և ոչ զայնո-

ոսին որ 'ի կրպակն փութան, արբենան փափկանան ուրախայնամբք լինին, և յետոյ հէքք և թշուառականք քան զամենեսին գտանին. և զի մեծագոյն քան զհեշտութիւն կերակրոցն այն է՝ որ 'ի վախճանի նոցա թշուառութիւն զնոսա ընդունի: Իսկ ապա եթէ հեշտալի ինչ վարկանիցես զայնպիսի կեանս, յիշեա զհանապազորդ զբանն զոր վերատին իմ ասացեալ է առ ձեզ՝ եթէ չէն ինչ զարմանք յորժամ չկամիցի ոք փախչել 'ի չարեաց՝ որ դառն և ժանտ զգործելոյս կարգեն. և զայնպիսի նոյս որպէս անեզր և անվախճան ինձ կարծեն, այսմիկն է զհեշտութիւն: Այլ արդ վասն այսորիկ պարտ է ինչ երանել զնոսա. այլ և յոյժ ողբելոյս վարկանել, զի և գիտել անգամ չետուն նոցա չարիքն թէ մեղանչեն:

Ո՞ւր ինչ առիցեմք վասն շնացելոյն, որ վասն սակաւ մի ցանկութեան յանվայելուչ ծառայութիւն զինքն արկանէ և զինչս ծախէ, և հանապազ երկիւղն և ամօթն 'ի վերայ կայ, և զկեանսն Կայենի յանձն առնու. մանաւանդ թէ դժնեայ ևս քան զնորայն՝ յորժամ և աստ երկիւղիւ կեայ և անդր դողութեամբ երթայցէ. վասն զի և 'ի բարեկամաց և 'ի թշնամեաց ստգտեալ լինի, և որք գիտիցեն և որք չգիտիցեն. և յորժամ հանգչիցի, և յայնժամ չկարէ զերծանել յայնպիսի չար խղճէ խորհրդոց. այլ երազս տեսանէ նա արհաւրօք, և ստեղծանէ առաջի նոցա ցնորս իմն: Այլ և ոչ ցածն և պարկեշտն այնպիսի ինչ կրէ, այլ 'ի հանգստեան և քաղցում ազատութեամբ մանաւանդ զիւր կեանսն անցուցանէ: Այլ արդ դիր ընդդէմ միմեանց զփոքր ցանկութիւնն զայն և զբազմութիւն զաւէկոծութեանն որ 'ի վախճանին դիպիցի նմա, և ապա փորձեա զմիւս ևս՝ որ 'ի ձեռն սակաւ մի ձգնութեան և պահոց միշտ 'ի խաղաղութեան վայելէ, և ապա տեսանես՝ թէ ճշմարիտ հեշտութիւն այս է և ոչ մեղքն:

Իսկ որ յափշտակելն կամիցի և այլոց ընչից աչս եդեալ, ո՞չ քաղցում աշխատութիւն կրէ. շուրջ գայ, ատրկէ ծառայէ, ազատաց և ծառայից շողոքորթէ, դռնապանաց մերթ առանէ և մերթ երկեցուցանէ, անամօթանայ, դարձեալ աղաչէ, տքնի դողայ սարսէ, յամենեցունց կասկածէ: Այլ և ոչ նա որ զինչսն արհամարհէ՝ այնպիսի ինչ կրէ, այլ մանաւանդ ևս առաւել 'ի

հեշտ և 'ի համգամեան կեանս կեայ և ամենայն զգու-շութիւն ։ Նոյնպէս և զայլս 'ի չարեաց եթէ ոք քննես-ցէ, բազում շփոթութիւն և խառնակութիւն գտանէ 'ի ներքս ։

Իսկ յառաքինութեանն թէպէտ և զառաջինն աշ-խատութիւն ինչ թուիցի, այլ յետ փոքր միոյ քաղցր և հեշտական քան զամենայն, որ և զաշխատութիւնն իսկ կարող է թեթևացուցանել ։ Իսկ 'ի մեղսն հակա-ռակ իմն իրքն գործին. յետ ցանկութեանցն ողբք և տանջանք, որ և առաւել իսկ եղծանեն զհեշտութիւնն ։ Զոր օրինակ որք պատակէն ածեն ունին՝ ոչ ինչ զգան ըզ-մերձակայ ծանրութիւնն, այնպէս և որ յետ հեշտու-թեանցն տանջանաց ածեն ունին՝ ոչ կարեն շահել զու-րախութիւնն մաքուր, այլ երկիւղիւն յամենայն ժամ զարհուրեալ գտանին. զոր մանաւանդ թէ ոք հաւա-տեաւ քննեսցէ, գտանէ յայտնապէս 'ի վերայ և յա-ռաջ քան զտանջանսն անկեալ ահն, և պաշարէ 'ի նմին իրաց զոր յանդգնեցան գործել չարիսն. քանզի նոյն իսկ մեղքն եղեն նոցա երկուղք մահու ։

Իսկ արդ եթէ կամիցիք, այսպիսիք և զնոսա քննես-ցուք որք զայլոցն կամիցին յափշտակել և զագահութիւն ընչիցն ժողովել. և զերկիւղն յանձանց 'ի բաց մերժե-ցին և զաշխատութիւն գողմանն և զջան և զերկիւղն և զայլն ամենայն որ առանց իրիք մեծացաւն ։ Իսկ արդ թողցուք զայն 'ի բաց զոր ինչ գործեաց յափշտակու-թեամբ. բայց սակայն համարեաց թէ յարգար սնու-ցանելոց ունիցի զմեծութիւնն, և վստահ է թէ զգու-շութեամբ պահէ զայն՝ որ չէ հնար, բայց սակայն լիցի ըստ բանիդ ձերում ։ Արդ յորպիսի հեշտութիւնս վայե-լէ այնպիսին, զի զինչ շատ ունի. այլ նոյն իսկ իրք ընչիցն չտան նմա ուրախ լինել երբէք ։ Քանզի մինչ կամիցի քան զայլսն զընկերսն աւելի ունել, յայնժամ ևս քան զևս բազմանան չարչարանք մտացն. վասն զի ցանկութիւն՝ յորժամ իրքն 'ի գլուխ երթան՝ յայն-ժամ ևս ցանկութիւնն. զի և ծարաւեալքն յորժամ ըմ-պիցեն, յայնժամ շիջուցանեն զծարաւն. իսկ մինչդեռ ծարաւեալքն են, թէպէտ և զամենայն աղբիւրս և զգետս ծծեն մտօքն, ևս քան զևս բորբոքի ծարաւն ։ Նոյնպէս և դու այժմ թէպէտ և զամենայն աշխարհի զինչս առ-ցես և պղտում ևս ցանկանայցես, և ևս առաւել բորբո-

քեզ զնոցա ցանկութեանն ։ Ոչ արդ մի այսուհետեւ ըղ-ձանութիւն ընչիցն վարկանիցես քեզ հեշտութիւն , այլ զմեծամեծն համարեսցես քեզ հեշտութիւն ։ Ո՛ր է թէ ցանկանայցես մեծանալ , ոչ երբեք կարիցես ցածու-ցանել զչարչարանս մտացդ . քանզի անյագ մեղսաւոր է և պահանջող . և որչափ հեռի լինիս 'ի ճանապարհէն , այնքան և զմայլեալ և պշահան շահեցար ։ Ապա ուրեմն ոչ եթէ օրինակ միայն է այս , այլ և խոր իսկ մոլութեն և վերջին անմտութեան գործ ։

Հրաժարեսցուք այսուհետեւ 'ի սկզբանն իսկ ամենայն գործոյն , մանաւանդ զի և մի մերձեսցուք իսկ յայնպի-սի ցանկութիւնս . ապա եթէ հարկ լինիցի մերձենալ ուրեք , զառաջինն իսկ 'ի բաց առնեսցուք . զոր և առաք-եալն Պօղոսն խրատէ վասն պոռնիկ կնոջն . ասէ՝ թէ " 'Ի բաց փախիր և մի յամեր և մի մերձենար 'ի դուռն տան նորա " ։ Այսպէս և ես յաղագս ընչասիրու-թեանն պատուիրեմ . քանզի թէ փոքր մի անկանիցիս 'ի խորս անդնդոց առօրէնութեանն այնորիկ , դժուարա-կարիցես 'ի ծանծաղ ելանել ։ Զոր օրինակ 'ի պտոյտսն որ շուրջն զալով պաշարեն զմեզ՝ չկարիցեմք դիւրաւ զերծանել , այսպէս մանաւանդ թէ ևս դժնդակ է 'ի խորս ցանկութեանն անկանել , և դիւրավ 'ի նմանէ զեր-ծանել ոչ կարեմք ։ Վասն որոյ աղաչեմ՝ անդէն 'ի սկզ-բանն զգուշասցուք և փախիցուք 'ի չարեացն մինչդեռ փոքրն է և սկիզբն , քանզի մեծագոյնք 'ի նմանէ ծնա-նին . և զհանապազորդ օրն մեղուցեալ ուսցուք խոստո-վան լինել . ապա եթէ ծուլանայցեմք , առ փոքր փոքր զամենայն կորուսանէ ։

Սա և զառաջինն իսկ եղեւ յաշխարհ , այն և մեզ պատ-ճառք պատուհասացն , առ և զամենայն յօժարութիւն առ-նէ , որպէս զի մի զմեղսն խոստովան լիցուք ։ Սոյնպէս և մարդիկն մեծամեծս անձնացուցանէ զախտս յորժամ ըղ-ձորսն անտես առնիցեմք ։ Սոյնպէս և Յուդա եթէ չէր մտան լինել անզղջանկութեանն , ապա չզգամնէր ա-նարժան օրհնութեանն . և եթէ չէր գտեալ անարժան օրհնութեանն , չմտաբերէր յերգակցութիւն ։ Սոյնպէս և Կային թէ չէր ցանկացեալ նախանձու-թեանն և զայն ոչ միայն թողեալ էր , ապա ոչ ընդու-նէր զերկրորդն . և զարձեալ յորժամ երկրորդն զառաջ ,

խրատուն լուեալ էր, ոչ երկնչէր զապականութենէ. և յետ զապականութեան զգածելոյ եթէ եկեալ էր յապաշխարութիւն յարժամ մեծ վնաս կոչեցան, և չէր այնուհետև անամօթութեանն ասեալ զպատասխանատուութիւն, ոչ այնչափ չարիքն զայլին 'ի վերայ.

Նաև արդ զի եթէ յառաջ քան զորքննածուլութիւնն առ փոքր փոքր յառաջեա չարեացն ելից, զմնաս ած եթէ զինչ գործեցաք մեք որ առ մեծ աշխատութիւնս կոչեցաք՝ թէ ոչ ամենայն զգուշութեամբ պահեցաք զանձինս, և զկայծակն չարեաց յառաջ քան զկատակն չիջուցանիցեմք յառաւելագոյն։ Ոչինչ իցէ զոր ասեմ. Ոտնցանենս երդումն հանապազ. մի յայտնեսցէ ևեթ կարծիցես, և զերդմունս եւս խափանեսցես 'ի քէն, և չեն ինչ քեզ պէտք աշխատութեան այնուհետև. վասն զի յոյժ զժուարագոյն է երդնուլն քան եթէ անցանել զերդմամբն, որպէս և ասէն իսկ՝ թէ "Մի երդնուցուս մի երդնուլ"։ Թշնամանիցես եւ և բամբասեալ և բանսարկու. զերեսս քեզ առանձինս արկեր, մի բարկանար և մի աղաղակեր ամենեւին, և զայդ ընդ ապաժամոյն է առաջին եւ 'ի բաց բարձեալ լինի։ Պէտք իցեն և անպատակ. զիր դարձեալ քեզ առհասարակ 'ի չհայելոյ քեզ 'ի զեղ կանանց, և մի 'ի թէատրոնս ընթանայցես և մի 'ի հրապարակաց զզեղ օտար զննիցես. քանզի յոյժ դիւրին է 'ի սկզբանն իսկ չզննել մտօք զեղեցկութեան կանանց, քան զննել և զյանկութեանն զնեռս 'ի ներքս ընդունել, որ զժուարեա և լի խռովութեամբ երկունք. Սակայն թէ սկզբանն 'ի սկզբանն Ջանալ. մանաւանդ թէ ոչ Ջան ինչ պէտք են մեզ՝ եթէ ոչ պատերազմին դուռս բանայցեմք և ըղձս չարեաց 'ի ներքս ընդունիցիմք. Արդ այսպէս և Պ զանմաքուր զհայեցուածս 'ի կանանց զառածապարտաւնեց, զի առաւել եւս զմեզ հրաժարեցուցանէ յաղխատութենէն. զի մինչև ընդ գլխաւորութիւն դարձեալ իցէ, հանիցեմք զանձինս մեր յանդորրութիւն, զոր և զիւրին իսկ գործեաց։

Ոչինչ հարկ իցէ, ասէ առա, իբրև ինչ առնելի անձնել և դրկամախառն լինել ատոփին, որ և առանց ձեռնարկելոյ իսկ կարող եւ նշան յաղթութեան կանգնել, թէ կամիցիս և յառաջ քան զհիցեն ամենայն զպատերազմն։ Վասն զի չէ այնչափ աշխատութիւն չհայելն 'ի գեղեցիկ կա-

նանց, քան ըղձալեացն և զննելոյ. մանաւանդ թէ այն չունի ինչ աշխատութիւն և երկրորդս բազում քրտամբք և աշխատութեամբք լի է: Իսկ արդ յորժամ ջանն փոքր է, մանաւանդ թէ ոչ ջան ինչ և աշխատութիւն, և շահն եւս մեծ է, և արդ ընդէ՞ր մի թուլացեալք յանդունդս խորոց ընկղմել զանձինս՝ զլիւր չարեացն ասեմ: Իսկ արդ ոչ եթէ չհայելն միայն 'ի գեղ կանանց դիւրին է, այլ և սուրբս և մաքուրս գտանել յայնպիսի ցանկութեանց. որպէս և որք նայեցինն՝ հանդերձ բազում աշխատութեամբք և լի արտասուօք զերծանիցին յախտէն, մանաւանդ եթէ հազիւ իսկ կարասցեն զերծանել: Վասն զի որ ոչն կամիցի տեսանել զգեղեցիկ դէմ կանանց, միանգամայն իսկ և յառաժամայն ցանկութենէ սուրբ և մաքուր գտանիցի. իսկ որ ցանկայն տեսանել, և հարեալ պակշոտեալ իցէ 'ի գեղ ցանկութեանն նոցա, նախ ապա այնուհետև 'ի վայր կործանեալ զխորհուրդն և մաշեալ զինքն ցանկութեան և բազում անգամ պղծեալ, յայնժամ ապա հազիւ կարասցէ ողջացուցանել զվէրսն և զպիսն որ 'ի ցանկութենէն գործեցան, մանաւանդ եթէ կարիցէ իսկ ոչ երբէք բժշկել:

Վասն այսորիկ և Քրիստոս, զի մի այսպիսի ինչ կրիցեմք, ոչ զսպանումն միայն արգելու, այլ և զբարկութիւնն. և ոչ զշնութիւնն միայն, այլ և զյարատ հայեցուածն որ 'ի ցանկութիւնն գրգռէ. և ոչ զերդմնահարութիւնն միայն, այլ և զնաւին չերդնուլն յաւել եւս: Իսկ ոչ եթէ յայսմ ինչ եկաց չափ առաքինութեանն. այլ զայս օրէնս գրեաց, և յեւս մեծագոյնս ապա յառաջ մատեաւ: Յորժամ հրաժարեցոյց 'ի սպանմանէն, ապա 'ի բարկութենէն եւս հրամայեաց մաքուրս գտանել, հրամայէ այնուհետև և առ չարչարանս պատրաստ գտանել մեզ. և ոչ այնչափ միայն կամի կացեալ գտանել զմեզ, որչափ ինչ նենգիչն կամի, այլ եւս առաւել 'ի յաղթել մոլութեանցն նոցա մեր ընտանի փիլիսոփայութեամբն: Ո՞չ անտի չասաց լոկ թէ ոք յապտակ ածիցէ յաջ ծնօտդ՝ համբերս քաջութեամբ, այլ որ մեծն և երևելին է՝ զմիւսդ եւս դարձո առն. որ է իսկ պայծառ յաղթութիւն, առաւել եւս քան զոր ինչ կամիցի նենգաւորն շահել. և զբոր ատ համբերող ցանկութեան նորա քո առատ երկայնամտութեամբդ անցանելս, և ապա պարտեա

և զնորա մեծութիւնն շիջուցանես, և ընդ առաւօտուն ևս ընդունիս զու վարձս, և ընդ երկրորդին վասն զի զհամարձակութեան բարեկութիւնն 'ի բաց ընկեցեր ։

Տեսանե՞ս զի ամենայն ուստեք մեզ եղև օգուտք չիցել ինչ չար, ոչ եթէ որք մեզն չար առնեն ․ մանաւանդ եթէ ոչ պարզաչարութեամբ կրել միայն, այլ և զխորամն չարչարել և միամտութեամբ՝ մեք ինքեանց ունիմք իշխանութիւն ։ Ինչ որ մանաւանդ պատուհասից արժան է, զի ոչ միայն չվնասիմք ինչ եթէ արթունք իցեմք 'ի լկանաց, այլ ևս մեծ շահ երախտեաց գտանեմք յարժամ անխռովիցեմք ինչ յընկերացն ։ Այլ արդ ասա, թշնամանեաց ոք զքեզ ․ առեր ևս կամեցող քոց, կարող ես ըզթշնամանս զայս քեզ զանձն վարկանել ․ զի եթէ փոխանակ ամպրէն թշնամանիցես, երկպատիկ զամօթն ․ իսկ եթէ օրհնիցես զթշնամանողն, առաս այնուհետև տեսանիցես զամենեսեան որ շուրջ զքև իցեն՝ զի առասեն զայլութեան քեզ յօրհնութեն ։ Տեսանե՞ս զի յորոց վնասիմքն, 'ի բազում երախտաւոր վայելեմք եթէ կամիցիմք ։ Այսպէս և 'ի զանձն և յինչսն և յայլսն յամենայնս է տեսանել ։ Նոյն ասա եթէ հակառակ ամենայն զարծիցեմք և վրէժս պահանջիցեմք յայնցանէ յորոց չարչարեցաքն, չառնումք ինչ վարձս ։ Իսկ ասա եթէ նոքին հակառակիցեմք և զթշնամանողն երախտաւոր վարկանիցիմք, բազում պսակս կազմեմք մեզ ։

Այլ արդ եթէ ոք յանկարծ եկեսցէ և առիցէ զքեզ թէ այս ինչ թշնամանեաց զքեզ և առ ամենեսեան չարախօսել չդադարէ երբեք զքէն, գովեա առաւել նորա զայն զոր նա ասացն ․ զայս զի թէ վրէժս խնդրել կամիս առանց 'ի նմանէ, այնպէս զխորամ հատուցանես խրատն ։ Ասա զի և որք լսեն ինչ, թէպէտ և յոյժ անմտագոյնք իցեն, զքեզ գովեն, բայց զնա ատեն այնուհետև, և քան զամենայն զազրալի չար և վայրենի համարեն ․ վասն զի նորա ոչ ինչ 'ի քէն անխռով եղեալ, և որ թշնամանեցոյց զքեզ ․ իսկ քո չարչարեալ 'ի նմանէ, և ոչ ինչ տարեալ ընդ միտ զատեցելոյն ․ Այսպէս կարեմք զացանել եթէ հակառակ իմն խոցս զարծիցեմք ․ Ո՞րպէս որ խածանելն զինեղեղն, զմեծամեծս իսկ ընկալեալ անձնիւն աղտեղութեան ․ իսկ որ ծաղրի եղև և չեղև ինչ զժկամակ, զի լինին իսկ յայնմ մեծ պնակալցն աղանդեաց 'ի կարծեացն ։

Եւ արդ տես որպէս ընտրեա յայսմանէ բարի պտուղ. Նախ և առաջին այն՝ զի զերծուցանես զքեզ յամենայնէ և 'ի խառնակութեանց. ապա՝ մանաւանդ եթէ այս իսկ իցէ Նախ և առաջին՝ այնու հետև թէ և մեղս իսկ ունիցիս, 'ի բաց մերկացար. զոր օրինակ և մաքսաւորն որ բամբասանաց փարիսեցւոյն հեզութեամբ տանէր: Ընդ այսպիսի փիլիսոփայութեան իրս կազմեաց և յարդարեա զոգիդ քո 'ի սոյնս խոկալ, և բիւր գովութիւնս յամենեցունց ընդունիս և վայելես, և յառաջին առացելոցն ազատ և սուրբ գտանիս: Իսկ ապա եթէ և զնա ևս կամիցիս 'ի լաւութիւն ածել, և այսու ևս առաւել լինի քո բարեմտութիւդ: Բայց սակայն և ա՟ծ իսկ տանջէ զայնպիսիսն վասն զչարն խօսելոյ, և յառաջ քան ըզտանջանսն զայնոսիկ՝ քոյին իսկ հեզ իմաստասիրութիւդ ազդոյ վէրք լինին ընդդէմ նորա: Քանզի ոչ այնպէս ինչ սովոր է զկծել զթշնամանողսն, որպէս յորժամ թշնամանիցիմք և ծաղր վարկանիցիմք զթշնամանսն. որպէս զի այս փիլիսոփայական օգւոյ է բարութիւնս: Այնպէս և 'ի կարճամտութենէ փոքրոգի գտանիմք, և հակառակ սմին իրքն գործին, և որք մերձակայքն են՝ վարկանին եթէ մեք իցեմք պատճառք ասացելոյն, և զհոգին ազմկով լնումք և զթշնամին ուրախ առնեմք և զա՟ծ զայրացուցանեմք և յառաջին 'ի մեղանս յաւելումք ևս:

Եւ արդ զայս ամենայն զմտաւ ածելով փախիցուք 'ի կարճամտութենէ խորխորատէն և առ նաւահանգիստ երկայնմտութեանն ընթասցուք. որպէս զի և աստ գտցուք հանգիստ անձանց մերոց որպէս և Քրիստոսն ասաց, և հանդերձեալ բարութեանցն արժանի գտցուք շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ հոգւոյն այժմ. և միշտ և յաւիտեանս. ամէն:

Digitized by Google

# ՃԱՌ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

“Գիտեմք զի օրէնքն հոգեւոր են, այլ ես մարմնաւոր եմ ընդ մեղօք վաճառեալ”:

Այս վասն զի ասաց եթէ մեծամեծ չարիք գործեցան և մեղք զօրագոյնք եղեն 'ի գալ պատուիրանին, և յոր ինչ փութային օրէնքն՝ այն կատարեցաւ, և որ ինչ հակառակքն թուէին, և իբրև 'ի բազում հարցմունս էարկ զլսողսն, ասէ այնուհետև ուստի իրքն գործեցան: Նախ ազատէ զօրէնսն 'ի չարաչար կարծեացն. զի մի յորժամ լուիցես եթէ 'ի ձեռն պատուիրանին մեղքն՝ պատճառս առին, և 'ի գալն նորա մեղքն կենդանացան, և եթէ նովին խաբեցին զիս և սպանին, և զօրէնսն կարծիցես այսպիսի չարեաց լինել պատճառս, նախ զամենայն պատասխանատուութիւն մեծաւ առաւելութեամբ կորզէ: Եւ ոչ եթէ միայն 'ի մեղադրութենէ ազատէ զնա, այլ և գովութիւն իմն մեծ մատուցանէ: Եւ զայս ոչ եթէ առ 'ի շնորհս ինչ առնել նոցա ասէ, այլ ըստ հասարակաց հաշուոյն: “Գիտեմ, ասէ, զի օրէնքն հոգեւոր են”: Որպէս յորժամ ասիցէ՝ թէ խոստովանիմ թէ այս այսպէս իցէ, և յայտնի է թէ հոգեւոր են, և այսքան ինչ հեռի են առ 'ի մեղացն պատճառս լինելոյ, և յերկուց չարեացն անպարտք: Տեսանես զի ոչ միայն 'ի բամբասանաց ազատէ զօրէնսն, այլ և գովէ ևս ամենայն առաւելութեամբ. քանզի յորժամ հոգեւոր զնա անուանեաց, վարդապետ զնա առաքինութեան կարգեաց, և եցոյց և մեղացն պատերազմիչ և ընդդիմակաց: Այսու օրինակաւ են հոգեւոր, մերժեալ յամենայն մեղաց, զոր և օրէնքն իսկ ուղղէին երկեցուցանէին խրատէին տանջէին խորհրդակիցք լինէին յամենայնի առաքինութեան:

Եւ ուստի, ասէ, եղեն մեղք յորժամ վարդապետն այսպիսի զարմանալի էր. յաշակերտացն 'ի ծուլութենէ: Վասն որոյ 'ի սոյնս յարեալ ասէր՝ թէ “Ես մարմնաւոր եմ”, որ առ օրինօքն և յառաջ քան զօրէնսն

Digitized by Google

վարք էին մարդկան։ Զամենայն բովանդակէ այժմ ընդ մեղօք վաճառեալ. յետ մահուանն, ասէ, ապա և ախտիցն հոյլք մտին ՚ի ներքս։ Վասնզի յորժամ մահկանացու եղև մարմինն, ընկալաւ զցանկութիւնն, ապա հարկ է թէ և զբարկութիւն և զտրտմութիւն և զայլն ամենայն՝ որ բազում փիլիսոփայութեան կարօտ էր, որպէս զի մի հոսանք յորձանացն ընկղմեսցեն զմիտսն ՚ի խորս մեղացն։ Նոյն ինքն օրէնքն չէին մեղք, այլ անչափքն որք ոչ նոքօք սանձահարեցան՝ նոքա գործեցին զմեղսն։ Ախորժելի ինչ, որպէս յօրինակէ իմեքէ ընձեռեալ նոցա զցանկութիւնն, ոչ եթէ ցանկութիւնն ինչ մեղք իցեն, քաւ լիցի. այլ յորժամ յանչափս անկանիցին, յորժամ զամուսնութեան օրէնս չկամիցին ունել, այլ և յայլոց եւս ՚ի կանանց վերայ յարձակիցին, յայնժամ ապա իրքն շնութի՛ կատարին։ Եւ այս ոչ եթէ ՚ի ցանկութենէն ինչ, այլ յուրեանց անյագութենէն։

Եւ տես զիմաստութիւնն Պաւղոսի. զի յորժամ գովեաց զօրէնսն, ապա յառաջին ժամանակս անդր խակոյն ընթացաւ։ Եւ ցուցանէ թէ որպէս յայնժամ ազգ մարդկան մատակարարէր և կամ զիա՛րդ յորժամ զօրէնսն ընկալան, որով ցուցանէր յայտնապէս թէ կարևոր էր գալուստ շնորհացն, զոր և ամենայն ուստեք իսկ փութայ յօրինել։ “Ընդ մեղօք վաճառեալ եմ„ ասէ։ Եւ զայս ոչ եթէ որ առ օրինօքն էին միայն ասէ, այլ և որ յառաջ քան զօրէնսն վարքն վարէին և զսկզբանէ իսկ զմարմնոցն։ Նա և զօրինակն իսկ ասէ զվաճառմանն և զտրոցն։

“Քանզի զոր գործեմն, ասէ, ոչ գիտեմ„։ Զինչ իցէ. այսինքն է տգիտանամ։ Եւ երբ եղև այս, քանզի ոչ ոք երբէք ուրեք տգիտութեամբ մեղաւ։ Տեսանես զի եթէ ոչ երկիւղածութեամբ ընդունիմք զառաքելական ասացուածն և առ նորին միտս ընթանամք, բիւր ինչ անպատեհք ՚ի ներքս մտանեն. զի եթէ տգիտութեամբ մեղանչէին, ապա և ոչ դատաստանի արժանի էին, որպէս և վերագոյնն ասաց՝ թէ “Առանց օրինացն մեղքն մեռեալ էին„։ Ո՛չ զայն ինչ յայտ առնէ՝ թէ ոչ գիտէին թէ մեղք իցեն. այլ գիտէին, թէպէտ և ոչ այսպէս հաւաստեաւ. վասն որոյ և տանջէին իսկ, այլ ոչ այսպէս ինչ յոյժ խստագոյնս։

Digitized by Google

Այս դարձեալ թէ «Զցանկութիւն ոչ ճանաչէի», ոչ բոլորովին զանգիտութենէն ասէ, այլ զյայտնագոյն գիտութիւնն կամի ցուցանել։ Ասէ՝ թէ գործեցին յիս զամենայն ցանկութիւնս. ոչ զայն ինչ ասէ թէ զցանկութիւն պատուիրանն արար, այլ գիտելով իմն զցանկութիւնն մեղք ՚ի ձեռն պատուիրանին ՚ի վերայ ածին։ Այնպէս և աստ ոչ զբոլորովին անգիտութենէն ասէ. «Քանզի զոր գործեմն, ասէ, ոչ գիտեմ»։ Ապա զիա՞րդ մտօք ընդ օրէնսն այ հաճեալ եմ ըստ ներքին մարդոյն. զի՞նչ իցէ որ ասէն՝ թէ չգիտեմ։ Ցնորիմ, ասէ, երագ յափշտակելին միտքս, ՚ի խարդախութենէ խաբանիմ, չգիտեմ որպէս գթեմ։ Զոր և մեր սովորութիւն է ասել՝ թէ չգիտեմ զիարդ այս անուն եկն և զիս յափշտակեաց։ Այլ ոչ եթէ զանգիտութիւն առաջի դնեմք ինչ, այլ խաբէութիւն իմն և պատրանս և խենգութիւն երևեալ։

Ասէ. «Ոչ զոր կամիմն զայն գործեմ, այլ զոր ատեանն զայն առնեմ»։ Ապա զիա՞րդ չգիտէիցես զոր ինչ գործեսն. զի թէ կամիս զբարին և ատեաս զչարն, այսաքիկ կատարեալ գիտութեան են։ Ուստի յայտ է՝ թէ և «զոր ոչն կամիմ» յաւել, ոչ զի զանձնիշխանութիւն ՚ի բաց բարձցէ՝ քաւ լիցի, և կամ ՚ի վտանգէ և ՚ի բռնութենէ իրքն գործին. զի եթէ ոչ կամօք, այլ ՚ի հարկաւորութենէ մեղանչեմք, և դարձեալ առաջս տանջանացն արժանի լինել չառնու յանձն բանս։ Այլ որպէս չգիտեմն ասաց, ոչ թէ զանգիտութիւնն յայտնեաց՝ այլ վասն որոյ ասացաքն, սոյնպէս և զոչն կամեմն յաւելով՝ ոչ հարկաւորութիւն ինչ եցոյց, այլ թէ չէ գովելի որ ինչ լինի։ Ապա եթէ զայս չասէր յայտ առնելով՝ թէ զոր ոչ կամիմ զայն գործեմ, պարտ էր յարել ՚ի սոյնս՝ թէ ՚ի հարկէ և ակամայ գործեմ զայս. քանզի այս կամաց և իշխանութեան ընդդիմակաց է։ Իսկ այժմ չասաց ինչ այսպիսի, այլ փոխանակ նորա զայն եդ՝ թէ «զոր ատեանն՝ գործեմ». և զի ուսցիս թէ յորժամ ասացն թէ զոր ոչն կամիմ, ոչ եթէ զանձնիշխանութիւնն ինչ մերժեաց։ Այլ զի՞նչ է «զոր ոչն կամիմ». զոր ոչ գովեմ, զոր ոչ ընդունիմ, զոր չախորժեմ. զոր և ոչ միջնորդաւ ինչ բերէ զյաղթողն, յարեալ ՚ի սոյնս դարձեալ ասէ. «Զոր ատեանն՝ զայն գործեմ»։

«Իսկ եթէ զոր ատեամն զայն առնեմ, վկայեմ օրինացն թէ բարիոք են»: Տեսե՞ր զմտացն զանազանութիւն, զի և 'ի գործոն ընտանի զիւր զազատութիւնն պահէր: Ոչ է թէպէտ և անցանէ լինի ընդ այնպիսի միտս, այլ հանդերձ ատելութեամբ. զոր և ըստ բնական օրինացն ասաց, զնոյն գովութիւն և որ ըստ գրոյն առեալ՝ մատուցանէ: Ոչ է բարիոք են, ասէ, օրէնքն՝ անարի յայտ է, զի ես զանձնէ ինձէ ամբաստանեմ. և զոր նոյն ատեմ, ես զայն գործեմ: Իսկ եթէ պատճառք մեղաց էին օրէնքն, ապա զիարդ հաճէր ընդ նոսա և ատէր զայս զոր ինչ նոքա հրամայէին՝ զայն ատեայր. «Վկայեմ օրինացն, ասէ, թէ բարիոք են»:

«Իսկ այժմ ոչ եթէ ես գործեմ զայն, այլ բնակեալ յիս մեղքն: Գիտեմ զի ոչ բնակեալ է յիս, այսինքն է 'ի մարմնի իմում բարի ինչ»: Ոչ այս գնելով և որք զմարմինս բամբասեն՝ զնոցանէ անկանէ, և յետ պարարշագործութեանէն ատարագուցանել կամին զմարմինս: Իսկ արդ զինչ ասիցեմք. մանաւանդ եթէ զայն իսկ զոր յառաջագոյն վասն օրինացն ձայնել ասէաք: Իսկ որպէս անդ ասաց՝ թէ ամենեքին ընդ մեղօք եղեն, այնպէս և աստ. չասաց թէ նոյն ինքն մարմինս գործէ, այլ որ ինչ հակառակին թուէր. «Ոչ է ոչ եթէ ես գործեմ զայն, ասէ, այլ բնակեալն յիս մեղքն»: Նա թէ ասիցէ՝ թէ ոչ բնակեալ 'ի մարմնի իմում բարի ինչ, չէ այսու մեղադրութիւն ինչ մարմնոյ. քանզի ոչ բնակեալ է 'ի մարմնի իմում բարի ինչ. զայս ասելով՝ ոչ եթէ չար ինչ եցոյց զմարմինն: Իսկ արդ եթէ ոք հակառակեսցի ինչ, մեք և զայս դիւրաւ լուծանեմք:

Իսպառավանիւք ընդ հոգւոյն զօղ զմարմինս, թէպէտ և նուաստագոյն քան զնա իցէ, այլ ոչ ընդդէմ հակառակ ինչ և ոչ պատերազմող և ոչ դարձեալ չար. այլ որպէս քնար է երգողին և որպէս նաւ ուղղչին, այնպէս և մարմինն 'ի հնազանդութեան կայ հոգւոյն. և ոչ եթէ ընդդիմակացօղ ինչ վարի, այլ և յոյժ միաբանի: Ոչ ոք և Պաւղոս իսկ եցոյց ասելով՝ զի զիշխանութիւն պետութեան ոգւոյն ես, և յերկուս բաժանեաց զմարդն՝ հոգի և մարմին, ասելով զի անզգայագոյն մարմինս է և յանմտնայն իմաստութենէ թափուր և զուգադատակձարդարողին: Արդ որպէս զի ոք եթէ ասիցէ՝ թէ ոչ գիտա-

բէն և ոչ փայլ խմիջօք զարդարեալ, այլ խոնարհութեամբն և զգնահատելագոյն, ոչ եթէ ամբաստան ինչ զգործոյն եղև օրինաց երգեն, այլ կամեցաւ ցուցանել եթէ որչափ ինչ 'ի միջի իցէ ընդ արուեստաւորն և ընդ գործին: Այսպէս և Պաւղոս առաց՝ թէ ոչ բնակեաց 'ի մարմնի իմ բարի, այսինքն է բարի ինչ, ոչ եթէ զմարմնոյ ինչ ամբաստան եղև, այլ զհոգւոյն զառաւելութիւն կամեցաւ յայտ առնել. քանզի նա է որ զամենայն ընծայեաց առնա և խոստովանութիւն և զգնահատութիւն: Որ և Պաւղոս ցուցեալ զհոգւոյն իշխանութիւն, և յերկուս բաժանեաց զմարդն հոգի և մարմին անուանելով. և որպէս ասացաքն՝ թէ անզգայագոյն մարմինն է և թափուր յիմաստութենէ և ընդ առաջնորդութեամբ, և ոչ եթէ ինքն առաջնորդ. իմանականն հոգին է, և նա գործել և 'ի չգործել միանգամայն 'ի վերայ հասանէ: Իսկ ապա եթէ ընդգծեալ որպէս զձի և ոչ ունի զերասանակն չէ մեղապարտութիւն մարմնոյն միայն, այլ և հոգւոյն՝ առ յանփութացանել զմարմինն յինքն, զի մի՛ զոր ինչ կամեցաւն 'ի գործ ածիցէ:

“Զի կամելն առաջի կայ ինձ, ասէ, և գործել զբարին ոչ գտանեմ”: Պատճառեալ ասա առաց թէ չգիտեմ, ոչ եթէ զանգիտութենէն ինչ ասէ և կամ զանփութութենէն, այլ զխորագիտութենէ և զգուշութենէ որ 'ի մեղաց առնուն գործին: Եւ ապա կամեցեալ զաստուածային յայտ առնել, ձայնէ և զղջացման:

“Եւ եթէ զոր կամիմն զբարին զայն առնեմ, այլ զոր ոչն կամիմ զչարն զայն գործեմ. ապա եթէ զոր ոչն կամիմ զայն առնեմ, ոչ ևս ես գործեմ զայն, այլ բնակեալ յիս մեղքն”: Տեսանես զիմաստ և զմտութիւն հոգւոյն և զմտութիւն մարմնոյն ազատեաց 'ի մեղապարտութենէն, և զմտացն իսկ զմեղապարտութիւնն և զամբաստանութիւնն 'ի չար գործս փոխէ: Զի եթէ չկամիցէ զչար գործն՝ ազատեալ է հոգին, և եթէ ոչ ինքն իցէ որ զայն գործիցէ՝ ազատեալ է և մարմինն, և այսուհետև ամենայն իսկ չար յօժարութեան խոյզ են: Քանզի ոչ այս բնութիւն է ոգւոյ և ոչ այն բնութիւն մարմնոյ և վարուց, այլ գործ այլ են. իսկ չարժամն իրացն 'ի մէնջ լինի, և յոր կողմն կամիցիմք՝ առնեմք և ածեմք: Քանզի միայնքն ընդդիմակայք այլ առեալ են. իսկ

Digitized by Google

խորհելն և չարժուածն տուեալ 'ի խորհուրդս՝ մերոց բարուցս և յօժարութեանն է ։

"Արդ գտանիցեմ զօրէնսն թէ զոր ինչ կամիցիմ առնել զբարին, և ինձ չարն առաջի կայ,,։ Այսպէս իմն թուի պատգուածս․ և զի՞նչ լիցէ զոր ասելն կամի։ Այսինքն եթէ գովեմ զօրէնսն ըստ ներքին մտացս, և գտանեմ զնա զի և նա զիս գովէ որ զբարիս կամիմ առնել, և գտանեմ գործակից, և յաւելու յիմ 'ի բարիոք յօժարութիւնս․ զի որպէս ես նմա վկայեմ, այնպէս և նա գովէ զիմ բարիոք յօժարութիւն բարուցս։ Տեսե՞ր զիարդ եցոյց որ ինչ բարին էր և որ ինչ ոչ՝ սոյնպէս և անդստին 'ի սկզբանէ ունէին ամենեքեան զծանօթութիւն և զգիտութիւն․ իսկ զօրէնսն Մովսէսի գովէ, և ինքն յօրինացն գովի։ Զանզի և ոչ վերագոյն ասաց զայն եթէ ուսուցանեմ արտաքոյ օրինացն զոք, այլ թէ վկայեմ օրինացն․ այսինքն թէ խոստովանիմ որպէս զի բարիոք ունի զկարգն, սոյնպէս և նա զիս որ կամիցիմ զբարիս գործել։ Այսինքն է զբարին կամել և զմեղսն 'ի բաց հանել՝ զայդ և վերստին իսկ յառաջ գիտէին։ Իսկ օրինացն եկեալ, և ամբաստան լինէին զայնցանէ որք 'ի չարիսն կէին, և բարեգործացն մեծ գովողք լինէին։ Տես զիարդ ամենայն ուրեք զհրամանս նոցա 'ի կիր արկանէ, և ակնարկէ թէ յաւելուած իմն էր իւր վկայութիւնն զնոցանէն․ բայց սակայն ոչ ինչ մեծարի այսու։ Թէպէտ և գովէ, թէպէտ և վկայէ զօրինացն, և որք կամիցին զբարին առնել, և չարն առաջի կայ, այս ամենայն 'ի գործոցն 'ի բաց բարձումն լինի․ որպէս զի օրէնքն՝ ըստ առաջին ասացուածին՝ յորժամ բարի ինչ գործիցես՝ գործակից լինի միայն, զոր օրինակ և սա նոցա ջատագով։ Իսկ ասա զի անյայտագոյնս եդ զայս, յառաջէ 'ի մեկնութիւնն, որպէս զի ևս յայտնագէս առնիցէ, և ցուցանէ թէ որպէս չարն առաջի կայ և կամ որպէս որք կամիցին զբարին առնել՝ միայն են նոցա օրէնքն օրէնք։

"Հաճեալ եմ, ասէ, ընդ օրէնսն այ ըստ ներքին մարդոյն,,։ Զանզի գիտէի և յառաջ քան զայս զբարին, ասէ, յորժամ և գրովն ես գտի զնա՝ գովեցի։ "Տեսանեմ և այլ օրէնս հակառակ զինուորեալ օրինաց մտաց իմոց,,։ Օրէնս ասա զինուորեալ՝ զմեղսն կո-



Digitized by Google

չեւաց, ոչ վասն բարեկարգութեան ինչ, այլ վասն յոյժ հնազանդութեան որք նմայն հաւատային: Զոր օրինակ և զմամոնայն տէր կոչէ և աստուած զորովայն, ոչ եթէ վասն ընտանի իւրեանց ինչ պատուոյն, այլ վասն բազում հնազանդութեան այնոցիկ որք ծառայեցինն նոցա, սոյնպէս և աստ օրէնս կոչէ զմեղսն վասն նոցա որք այնչափ ծառայէին նմա և երկնչէին 'ի բաց թողուլ զնա. զոր օրինակ որք զօրէնսն ընդունեցին՝ զարհուրին 'ի բաց թողուլ զօրէնսն: Ապա ուրեմն, ասէ, այս որ հակառակ կայր բնութեան օրինացն: Զսոյնս և մտացն օրէնս անուանեաց, որ 'ի ներքոյ իսկ ածէ այնուհետև մարտս և պատերազմունս, և զջան ընդդիմամարտութե բնութեան 'ի կիր արկանել: Զի Մովսէսի օրէնքն թէպէտ և տուեալ էին, սակայն յետոյ եղան. բայց սակայն և սա և նա անդ ուսուցանէր և անդ գովէր, և յայսպէս պատերազմաց ոչ ինչ մեծ վճարեցին: Քանզի անչափ իմն էր մեղացն բռնաւորութի, մինչև յաղթեալ և տիրեալ ունէր: Զոր և Պաւղոսի յայտ արարեալ զուժգին զպարտութիւնն ասէր. «Տեսանեմ այլ օրէնս հակառակ զինեալ օրինաց մտաց իմոց և գերեալ զիս»: Եւ ոչ ասաց թէ յաղթեալ ինչ միայն, այլ թիւրեալ զիս օրինաց մեղացն. և չասաց թէ յարձակման մարմնոյ, և ոչ դարձեալ թէ բնութիւն մարմնոյ, այլ թէ օրէնք մեղացն, այսինքն է բռնաւորին զօրութիւն:

Եւ զիարդ ասիցէ՝ թէ «Որ են յանդամս իմ». և այս զինչ իցէ: Քանզի ոչ եթէ այսու ինչ զանդամսն մեղաւոր առնէ, այլ մանաւանդ թէ որոշէ իսկ 'ի մեղացն. քանզի այլ՝[1] որ յումեմն է, և յորում իցէն իսկ նոյն ինքն: Զոր օրինակ պատուիրանն չէին մեղք, թէպէտ և 'ի ձեռն նորա պատճառս առին մեղքն, սոյնպէս և ոչ մարմնոյն բնութիւն չար է՝ թէպէտ և նովաւ ընդ մեղմարտնչի: Ապա եթէ զոր դուքդ ասիցէք է՝ յայտ է եթէ և ոգի չար է, մանաւանդ եթէ և առաւել սա քան զմարմինն, որպէս զի և տիրապէս իսկ սա ունի զառաջնորդութիւն գործոյ: Այլ չէ իսկ և չէ այս: Քանզի և ոչ սքանչելիք ինչ են եթէ բռնաւոր ոք զթագաւորական զտաճարան հանիցէ. ապա ոչ եթէ տունն ինչ եղև

1 Յօրինակին գրեալ էր այլում ամէ. ուղղեցաւ ըստ յունին:

բանաւորի և մեղադրութեան արժանի, այլ անձ- նայն անհաստատութեան և մեղադրութեան արժա- նի այնպիսիք են՝ որք զԹագաւորական տեղին այլս ա- ւազակաց տային։ Սոյնպէս և Թշնամիք ճշմարտու- Թեանն գործեն այժմ. յետ այնչափ յափշտակութիւն և յանօրէնութիւն անկանելոյ, որ և ոչ զգան անգամ. և ոչ միայն զմարմինն բամբասեն, այլ և զօրինացն ամ- բաստանեն։

Այլ արդ զի՞նչ ասիցեմք. եթէ մարմինք չար են, ապա բարիք են օրէնքն, զի ընդդէմ զինուորի և հակառակ կայ սմա։ Իսկ եթէ օրէնքն չիցեն բարիք, յայտ է ե- Թէ մարմինս բարիք է, մարտնչի ընդ նմա ըստ նոյա բանիցն և պատերազմի։ Այլ երկոքեան, ասեն, սատա- նայի են՝ և մարմինն և օրէնքն, և ընդդէմ հակառակու- Թեան միմեանց կամին 'ի ներքս մտանել։ Տեսանես որ- չափ անհաւատութեամբ և անօրէնութեամբ լի են։ Այլ և ոչ եկեղեցւոյ աւանդութիւն այսպիսի ինչ, վասն զի զմեղսն միայն դատապարտէ, և զերկաքանչիւր զօրէնսն յԱյ ասէ տուեալ և զՄովսէսին և զայն որ ըստ բնու- Թեանն, և ընդ այսմ պատերազմ և ոչ եթէ ընդ մարմ- նոյ. վասն զի ոչ մեղք են մարմինն, այլ գործ նոյ, և յոյժ իսկ առ առաքինութիւնն պիտանի է մեզ Թէ արթունք կացեմք։

« Այլ տառապեալ եմ ես, ո՛վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ աստի յայսմանէ »։ Տեսանես որքան ինչ բռնա- ւորութիւն է մեղացն։ Ոչ Թէպէտ և հաճեալ եմ ընդ օրէնսն, այլ միւսքս յաղթեն։ Քանզի և չունի իսկ ոք ասել Թէ ատեամ զօրէնսն, և կամ 'ի բաց բառ- նամ 'ի նոցանէն, և վասն այսորիկ ես դժնեայ գործեն մեղքն։ Այլ հաճեալ եմ և վկայեմ օրինացն և առ նա իսկ ապաւինիմ. և յորժամ փախստական առ նա անկայ, այսինքն առ օրէնսն, և ոչ յայնժամ զօրեաց ապրեցուցանել զիս. իսկ Քրիստոս մինչև փախուցեալ իսկ էի 'ի նմանէ, փրկեաց զիս և ապրեցոյց։ Տեսանես քանիօն է առաւելութիւն շնորհացն։ Այլ զայս այս- պէս չէր ինչ առաքեալն. միայն ակնարկեաց և մեծա- գոյնս եհան յոգւոյ. որպէս յորժամ յանապատի ոք չքաւորի յօգնականութենէ, այսպէս իմն եցոյց զՔրիս- տոսի զօգնականութիւնն առ մեզ գործեալ, և ասէ այս-

Digitized by Google

պէս՝ թէ «Այր տառապեալ եմ ես, ո՛վ ապրեցուսցէ զիս ՚ի մարմնոյ մահուս այսմիկ»: Օրէնքն ոչ զօրեցին, մինչ չեղեն բաւական, և արդ զի՞մարդ ասէիր թէ բարիոք են և կամ զի՞մարդ գովէիր զօրէնսն. և ոչ այնչափ միայն, այլ պատերազմակից ևս եղեր նոցա առ ընդդիմակացսն. քանզի ասաց՝ թէ հակառակ զինուորեալ մտաց իմոց, եցոյց արդ թէ և նոքա ընդդիմակացք են. Այլ արդ ուստի իցէ մեզ յոյս փրկութեան:

«Գոհանամ զԱյ իմոյ, ասէ, ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ»: Տեսանե՞ս որպէս եցոյց կարևոր զգալուստ շնորհացն, և զոյգ հաւատոյ հօր և որդւոյ զուղղութիւնսն կազմեալ: Թէպէտ և զհօրէ գոհանայ, այլ և պատճառ գոհութեանս այսորիկ առ ինքն է. Այլ արդ յորժամ լսիցես՝ թէ ո՛վ ապրեցուսցէ զիս ՚ի մարմնոյ աստի մահուս այսորիկ. մի կարծիցես զմարմնոյն չարախօսել զնա..... քանզի և ոչ ունել անպատեհ վարկանէին: Այլ առանց այսորիկ և այլ բազում քան զնոյնս որ յօրէնսն էր և յառաջ քան զօրէնսն գիտէին կազմել և ուղղել ՚ի բնական օրինացն խրատեալք: Այլ այսպէս աշխատեցաւն որ ըստ հնոյն վարէին՝ ըստ կարգի չափաւորութեան առ փոքր փոքր ՚ի ներքս ածելով զնոսա: Իսկ արդ եթէ և այսպէս ոչ կամեցան, նոցին ծուլութեան է մեղադրութիւն: Վասն այսորիկ և Պաւղոս գոհանայ զի ոչ ինչ այսպիսի հաւատոյս պահանջեաց Քրիստոս. և ոչ միայն զմերոց չարեացս չպահանջեաց զվրէժս, այլ և պիտանիս գործեաց զմեզ առ ՚ի լաւ անդր ընթանալ: Վասն որոյ և ասէր. «Գոհանամ զԱյ իմոյ ՚ի ձեռն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Այլ զփրկութիւնն թողու զոր խոստացաւն. ուստի և զայս կազմեաց և յայլ իմն փոխի, զորմէ ևս առաւել ինչ ասէ՝ թէ ոչ միայն յառաջինմէն ազատեցաք, այլ և որ հանդերձեալքն էին ՚ի վերայ գալ՝ և նոցա իսկ անըմբռնելիք գտաք: Քանզի ասէ՝ թէ «Ոչինչ դատապարտութիւն որք ՚ի Քրիստոս Յիսուս, որք ոչ մարմնովն գնան»: Այլ յառաջնումն չասաց ինչ այսպիսի, մինչև վերստին յիշեցոյց նոցա յառաջինն կարգաւորութենէ: Այլ ասաց՝ թէ «Ապա ուրեմն ես անձամբ ծառայեմ օրինացն Այ, իսկ մարմնով օրինացն մեղաց»: Այլ իբրև զայս ձևացեաց, ապա յարեաց ՚ի սոյն աս-

Digitized by Google

լով թէ "Ուրեմն չէ ինչ դատապարտութիւն որք 'ի Քրիստոս Յիսուս": Եւ քանզի ընդդէմ կայր այն նորա՝ որ յետ մկրտութեանն բազում մեղք լինէին, սորին վասն հաւաստեաւ ասէ զբանն այսպէս. և ոչ եթէ լոկ հարեւանցի ինչ միայն ասաց՝ եթէ 'ի Քրիստոս Յիսուս, այլ ասաց՝ թէ որ ոչ ըստ մարմնոյ գնայցեն: Եւ ցուցանէ թէ 'ի մերմէ ծուլութենէ եղև այս ամենայն, զի կարող էաք ուղղել զայս ամենայն՝ ոչ ևս գնալ ըստ մարմնոյ, որ յայնժամ դժուարին թուէր:

Ապա և այլ ևս ինչ 'ի յաջորդացն կազմէ ասելովն. "Վասնզի օրէնք հոգւոյն ազատեցին զիս" ասէ: Հոգւոյն օրէնս աստ զՀոգին իսկ կոչէ: Ո՛ր օրինակ օրէնս մեղաց զմեղսն ասէ, մանաւանդ և զՄովսիսի իսկ օրէնսն այսպէս սովոր է կոչել, յորժամ ասիցէ՝ թէ օրէնքն հոգևոր են: Եւ արդ զի՞նչ ինչ կայցէ 'ի միջի. մանաւանդ եթէ մեծ և բազում ինչ. զի նա հոգևոր, իսկ սա օրէնք հոգւոյն, որ և բաշխէ զշնորհսն որք ընդունիցին մեծաւ առատութեամբ: Վասն որոյ կենաց օրէնս կոչէ զնա առ 'ի բաժանել յօրինաց մեղացն, և ոչ եթէ 'ի մովսիսական օրինացն: Վասնզի յորժամ ասէ՝ թէ ազատեցին զիս յօրինաց մեղաց և մահու, ոչ ինչ զՄովսէսի օրինացն ասէ զայս աստ. վասն զի ոչ երբէք զնա օրէնս մեղաց անուանեաց, այլ բազում անգամ սուրբ և արդար և բարերար կոչեաց և ջնջիչ մեղաց. այլ զայնմանէ ասաց որ հակառակ մտացն զինեալ էին օրէնքն: Ո՜վ այնմ օրինօք զդառնագոյն զպատերազմն եբարձ՝ սպանանելով զմեղսն, և հոգւոյն շնորհօք զաշխատութիւն մեր թեթևագոյնս գործեաց. Նախ պսակեաց զմեզ, և ապա բազում պատերազմակցութեամբն իւրով ձգէ զմեզ 'ի տեղի մրցարանին:

Եւ զոր միշտ սովոր է առնել, և այժմ յորդւոյ 'ի հոգին սուրբ փոխի, և 'ի հոգւոյն դարձեալ յորդի և 'ի հայր, և յերրորդութեանն վարկանի զամենայն զմերս: Ուստի և աստ զնոյնս գործեալ ցուցանէ ասելովն՝ թէ "Ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ աստի մահու": Եցոյց զի հօր 'ի ձեռն որդւոյ արարեալ զայս, ապա դարձեալ և զհոգին սուրբ ընդ նմին ինքն ընդ Քրիստոսի. քանզի ասէ՝ թէ "Օրէնք հոգւոյն կենաց 'ի Քրիստոս Յիսուս ազատեցին զմեզ": Ապա դարձեալ զհայր և

զորոշի յիշէ՝ թէ «Որ անկարն է ըստ օրինաց, ասէ, որ տկարանայրն վասն մարմնոյ, ած զիւր որդին առաքեաց նմանութեամբ մարմնոյ մեղաց և վասն մեղաց, և դատապարտեաց զմեղս 'ի մարմնի»: Դարձեալ թուէր ինչ ումանց թէ ամբաստանիցէ զօրինացն և խոտէ. իսկ աստ եթէ ոչ հաւաստեաւ միտ դնիցէ, և յոյժ իսկ գովէ զօրէնսն, և զուգեալ ընդ Քրիստոսի կամացն ցուցանէ, և զայժմուս նոցին յառաջագոյն գուշակեալ: Վասն այսորիկ և չասաց իսկ եթէ չարիք օրինացն, այլ թէ որ անհնարինն և անկարն էր օրինացն. և դարձեալ թէ որով տկարանայրն: Նա չասաց թէ որ խորամանկութեամբն նենգէր, և ոչ դարձեալ զտկարութիւնն ինչ նմա վարկանի, այլ մարմնոյ, յաւելու՝ թէ «որ տկարանայրն վասն մարմնոյ»: Մարմին դարձեալ աստ ոչ եթէ զբնութիւնս զայս և ոչ որ 'ի հնազանդութեանս կայ, այլ զմարմնաւորագոյն զմտածութիւնսն կոչէ. վասն որոյ զմարմինն և զօրէնսն ազատէ 'ի բամբասանաց, և ոչ այսու միայն, այլ և յաջորդակացն իսկ: Զի եթէ հակառակ ինչ էին օրէնքն, ապա ո՞րպէս Քրիստոս յաղթականութիւն օրինացն գայր և զարդարութիւն նորին լնոյր և ձեռն կարկառ առ 'ի դատապարտել զմեղս 'ի մարմնի. քանզի այսուքիւք տկարանեալք էին, վասն զի 'ի վաղնջուց իսկ 'ի հոգւոյն հնացեալ էին օրէնքս դատապարտութեամբ:

Նա արդ զինչ, մեզ մեծամեծս օրէնքն կատարեցին, և զփոքունսն մեզ միածինն. և ոչ երբէք. մանաւանդ թէ և զայն ևս մեծ գործեաց, որ զբնական օրէնսն ետ, նոյն և որ 'ի ձեռն գրոյն էր յաւել: Այլ ոչ ինչ օգուտ 'ի մեծամեծացն, յորժամ և ոչ նուազութիւնքն անգամ կազմէին: Քանզի զինչ օգուտ իցէ, ասա ինձ, եթէ տեսանիցեմք զգործս և նոցին ոչ նմանիցեմք: Ոչ ինչ օգուտ, այլ և մեծ դատապարտութիւն ևս: Նոյն ուրեմն յայտ է թէ սա է որ զհոգին և զմարմինն առ հասարակ ազատեցոյց, այնինքն է շնորհքն՝ որ և զմարմինս բարիոք նուաճեաց: Քանզի ուսուցանելն դիւրին է. իսկ յորժամ ճանապարհ ևս ցուցանես որով դիւրագործ այս լինի, այն է մեծ և չքնաղ:

Վասն այսորիկ իսկ եկն միածինն և ոչ հրաժարեաց զառաջինն մինչև ոչ յայսպիսի դժուարութենէն զեր-

ծոյց զմեզ։ Այլ այն իսկ է մեծ նշանակ յաղթութեան զի ոչ միայն մարմին առ, այլ զայն որ կարի վշտացեալ էր՝ զմերս։ Որպէս օրինակ եթէ ոք 'ի հրապարակի կին աղքատ և մուրող և անմեծութիւն անարգ և գան ընկալցէ յումեքէ և ողբայցէ, և տեսեալ զնա որդւոյ թագաւորի և մատուցեալ ապրեցուցանիցէ զնա և ազատեսցէ զնա 'ի նեղչաց անտի, այնպէս և Քրիստոս արար, և որդի մարդոյ յանձն առնու անուանիլ և յանդիմանեալ կացոյց զինքն և դատապարտեաց զմեղսն. և ապա այսպէս տեսեալ նորա զայն արարեալ, ինքն եկն և յանձն առ զզգեստն, մանաւանդ թէ զանձին իւրով եւս հարուածս մահու. և այսպէս դատապարտեալ զնա հեռաւորագոյն արար։ Ոչ եթէ որ տանջեցաւն մարմինն կորեաւ, այլ որ տանջեցին զնա մեղքն՝ որ է մեծ և սքանչելի։ Այլ քանզի թէ 'ի մարմնի չէր եղեալ յաղթութիւնն, չթուէր ինչ այսպիսի սքանչելիք, վասն զի և օրէնքն զայնս գործէին. այլ զարմանքս այս են զի մարմնով յաղթութիւն գործեցաւ։ Այլ որ բիւր անգամ եղեալն էր կախեալ մեղացն, նոյն ինքն զնշան յաղթութեանն պայծառ ընդդէմ նոցին կանգնեաց։

Այլ տես որպիսի ինչ հրաշափառագոյն իրք գործեցան. մի այն իսկ՝ զի չյաղթեցին մեղք մարմնոյ նորա. իսկ միւս ևս՝ զի յաղթեցաւն և զի 'ի նմին իսկ 'ի մարմնոյն յաղթեցաւ, քանզի և չէ իսկ զոյգ նմին չյաղթիլ և դարձեալ յաղթել այնմիկ որ միշտն յաղթէր նմա. իսկ երրորդն այն՝ զի ոչ միայն յաղթեաց, այլ և տանջեաց ևս։ Քանզի չմեղանչելովն յաղթեաց, իսկ մահուամբն ևս առաւել յաղթեցաւ և դատապարտեցաւ՝ այսինքն է մահ. քանզի տեսանէր զնա մարմնով և կարծէր եթէ դիւրաւ արհամարհեսցէ զնա որպէս և զառաջինսն։ Այլ այսպէս լուծաւ զօրութիւն նորա, սոյնպէս և մեղքն 'ի բաց ջնջեցան։ Քանզի մինչ որպէս զմեղաւորս զնոսա ընդունէր, տիրէր 'ի վերայ վախճանելոցն ըստ սահմանելոյ բանին իւրոյ. իսկ յորժամ զանեղծ զմարմինն եգիտ, որ և մահու իսկ մատնեցաւ, որպէս զի զրպարտող զոք դատապարտեաց զմահ և զմեղս։ Տեսանե՞ս որպիսի յաղթութիւն գործեցաւ. նախ և առաջին զի չպարտեցաւ մարմինն 'ի մեղաց, երկրորդ զի յաղթեաց նմա և դատապարտեաց. և ոչ միայն զի

Digitized by Google

դատապարտեացն, այլ զի իբրև զյանցաւոր դատապար-
տեաց։ Նախ յանդիմանեաց զնա արդարութեամբն, և
ապա դատապարտեաց. և ոչ եթէ լոկ իշխանութեամբ
և զօրութեամբ, այլ և արդարութեամբ վարուք։ Քանզի
զի զայս յայտ արար ասելովն՝ թէ վասն մեղաց, և թէ
“դատապարտեաց զմեղս 'ի մարմնի„. որպէս զի յոր-
ժամ ասիցէ ոք թէ նախ յանդիմանեաց զմեծամեղսն և
ապա դատապարտեաց։ Տեսանե՞ս զի ամենայն ուրեք
զմեղացն դատախազէ և ոչ զմարմնոյն. այլ զսա և պսա-
կեալ իսկ ցուցանէ՝ և զվճիռն ընկալեալ։

Իսկ ապա եթէ ասիցէ՝ թէ “Նմանութեամբ մարմ-
նոյ մեղ զորդին իւր առաքեաց„, յաղագս այսորիկ այլ
մարմին կարծիցես զնորայն՝ վասն զի ասաց մեղս, վասն
այսորիկ և զնմանութիւնն եդ։ Այլ ոչ եթէ այլ մարմին
ունէր Քրիստոս, այլ նման մերոյ մեղաւոր մարմնոյս,
թէպէտ և առանց մեղաց, բայց սակայն բնութեամբ
նոյն մերս։ Ահաւասիկ և աստ եցոյց յայտնապէս թէ
չէ չար մարմնոյս բնութիւն, և ոչ այլ մարմին փոխա-
նակ առաջնոյն առ Քրիստոս, և ոչ զնոյն իսկ զօր առ՝
փոխեաց զբնութիւնն յայլ, այլ զնոյն իսկ զսա ուսոյց
պատերազմող. թէպէտ և եթող 'ի նմին բնութեան
կալ, որպէս զպսակ յաղթութեան 'ի գլուխ կապիցէ
ընդդէմ մեղացն, և ապա յայնժամ յարուցէ զնա անա-
պականն և անմահ գործիցէ։

Այլ զի առ իս այս, ասէ, թէ այս ամենայն մարմնով
գործեցաւ։ Մանաւանդ եթէ առ քեզ իսկ իցէ. վասն
որոյ 'ի նոյն յարեալ ասէր. “Զի արդարութիւն օրի-
նացն կատարեսցի 'ի մեզ որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք„։
Իսկ զի՞նչ իցէ արդարութիւնն. կատարումն, ուղղու-
թիւնն։ Զի՞նչ կամիցի և նա և կամ զի՞նչ հրամանս
տայցէ. անմեղս լինել։ Իսկ այս ամենայն այժմ Քրիս-
տոսիւ ուղղեցաւ մեզ. և քանզի ընդդէմ կալ և յաղ-
թել՝ նորա եղև մեզ, իսկ վայելել 'ի յաղթութենէն
մերմէ, և ապա ուրեմն չէ պարտ կրկին մեղանչել։ Այլ
չմեղանչիցեմք որպէս։ Թէ չլինիցիմք յորսայսեալք և
լուծեալք ամենևին. վասն որոյ և յաւել իսկ 'ի նոյն
զայն թէ “որք ոչ ըստ մարմնոյն գնան„։ Որպէս զի մի
յորժամ լսիցես թէ փրկեաց զմեզ Քրիստոս 'ի պա-
տերազմէ մեղացն, և թէ արդարութիւն օրինացն յա-

ւելոյ 'ի մեզ և զմեղացն դատապարտութիւն նշանեաց 'ի մարմնի, լուծանիցէս զամենայն պնդակազմութիւնն : Այն աշխարհիկ և անդ իսկ ասաց թէ չէ դատապարտութիւն ուրեմն, յաւել և զայն՝ թէ որք ոչ ըստ մարմնոյն գնան. և աստ դարձեալ թէ զի արդարացեալ գտցի առաւելութեամբ օրէնքն իմ: Այլ յասելն նորա զայս այսպէս՝ յարեաց 'ի սոյնս, մանաւանդ եթէ ոչ զայս միայն, այլ և այլս բազումս :

Այլ իբրև ասաց թէ զի արդարութիւն օրինացն առաւելոյ 'ի մեզ որք ոչ ըստ մարմնոյն գնայցեմք՝ այլ թէ ըստ հոգւոյ, ապա ցուցանէ թէ ոչ միայն հեռանալ 'ի չարեացն պարտ է, այլ և 'ի բարիս գործել ձեռնամուխ լինել. քանզի տալ զպսակն՝ նորա է, իսկ արժանի ընդ քեզ կազմել՝ քոյին փութոյդ: Քանզի և որպէս արդարութիւն օրինացն էր 'ի չլինել քեզ պատժապարտ անիծիցն, զոյնս եկն յայտնեաց քեզ Քրիստոս: Մի այսուհետև մնան լինիր այնչափ պարգևացն, այլ մեծա հաստատութեամբ 'ի նմին պահելով զգանձս զայս: Ցուցոյց քեզ աստ՝ թէ չէ բաւական աւազանն միայն առ 'ի փրկութիւն, թէ ոչ յետ աւազանին և վարս արժանի պարգևացն ցուցանիցես: Այլ զայս ասելով դարձեալ ջատագով լինի օրինացն: Քանզի յետ հաւատալոյն մերոյ 'ի Քրիստոս, զամենայն ինչ պարտ է շահել և գործել, որպէս զի արդարութիւն նորա մնասցէ 'ի մեզ, և մի երբէք եղծցուք զայն:

“Քանզի, ասէ, որք մարմնոյն են, զմարմնոյն խորհին”: Այլ և ոչ այսու իսկ զմարմինն մեղադրէ. զի մինչև զիւր զընտանի զկարգաւորութիւնն պահիցէ, ոչ ինչ անպատեհ լինիցի. իսկ յորժամ զամենայն ինչ նմա համարիցիմք, և յիւրոց ընտանի սահմանացն արտաքս ելանիցէ, և ընդդէմ հոգւոյն կայցէ. ապա յայնժամ ամենայն եղծանի և կորնչի, և ոչ եթէ 'ի բնութենէն ինչ լինի այն, այլ յանփութութենէն և յիւրմէ անկարգութենէն: “Իսկ հոգևորքն զհոգևորսն. քանզի, ասէ, խորհուրդ մարմնոյ մահ է”: Այլ չասաց եթէ բնութիւն մարմնոյ և կամ էութիւն անդամոց, այլ խորհուրդ, զոր ուղղելն իսկ դիւրին է և 'ի բաց բառնալ: Այլ զայս ասէ ոչ եթէ մարմնոյն ինչ առանձին խորհուրդ է, քաւ լիցի, այլ զթանձրագոյն մտացն յարձակումն ցուցանէ,

և յառաւութիւն իսկ վճռոյն կոչէ, զոր օրինակ և մարմին զաւանդական մարդն և զհոգին սովոր են կոչել։ Իսկ ըղխորհուրդն հոգւոյն, Թէպէտ դարձեալ և աստ զհոգևոր բանական մտացն ասէ, որպէս և յառաջին ասէր՝ Թէ "Որ քննէ զամենայն, գիտէ զինչ խորհուրդ է հոգւոյն"։ Այս ցուցանէ բազում անգամ յայտնանէ բարութիւնս և յայժմուս և 'ի հանդերձելումն։ Ո՛ր եԹէ չար խորհուրդք՝ որ ինչ են 'ի ներքս ածեն մարմնաւոր կամք, այս մանաւանդ ևս ասասել քեւր բարութիս հոգևոր խորհուրդք ընձեռեն, զոր և յայտ իսկ արարեալ ասելովն Թէ "Սէրն և խաղաղութիւն"։ Նա 'ի կղզին իմն 'ի մէջ արկանելով առաջնոցն՝ ասելով Թէ "խորհուրդ մարմնոյ մահ է". և անջրպետ իմն առ 'ի յաջորդին զայս դնէ՝ Թէ "խաղաղութիւն". և 'ի այնս յարեաց անդէն՝ Թէ "խորհուրդ մարմնոյ Թշնամութիւն է առ ած", որ քան զմահ ևս դժնդակագոյն է։ Իսկ ասյս ցուցանէ Թէ որպէս մահ և Թշնամութիւն է։

"Քանզի օրինացն այ, ասէ, ոչ հնազանդի, նա և կարէ իսկ ոչ"։ Այլ[1] մի ինչ խռովեսցիս յորժամ լսիցես Թէ "նա և կարէ իսկ ոչ". վասն զի դիւրին ունի զլուծումն մտածութեանս այս։ Խորհուրդ մարմնոյ աստ զհողեղէն և զԹանձր զխորհուրդսն կոչէ, որք առ երկրաւորս իսկ միայն կապեն զմտքեանս. զայսպիսեացն ասէ Թէ ոչ կարէ հնազանդել այ։ Այլ ո՛ր յայս փրկութեան կայցէ, ասէ, Թէ չկարէ՝ որ չարն է՝ լինել լաւ։ Ոչ զայս ինչ ասէ. այս եԹէ ոչ՝ զիա՞րդ նոյն ինքն Պաւղոս եղև այնպիսի լաւ. որպէս աւազակն, կամ զիա՞րդ Մանասէ և կամ նինուէացիքն, և որպէս Դաւիթ անկեալ՝ վերստին զմիտքն ստացաւ, և կամ որպէս Պետրոս յորժամ ուրացաւն՝ զմիտքն դարձեալ վերստին նորոգեաց, և կամ զիա՞րդ պոռնկացեալքն դարձեալ 'ի Քրիստոսի ձայնհուկան խառնեցան, և կամ գաղատացիքն յորժամ 'ի շնորհացն անկեալ՝ դարձեալ անդրէն 'ի նոյն լաւութիւնսն եկին։

Այլ արդ 'ի միտ առ Թէ ոչ զայն ինչ ասէ որպէս զի անհնար է չարին բարի լինել, այլ զայն ասէ որք անդէն 'ի չարիսն մնայցեն՝ նոքա են որ չկարեն հնազանդել այ.

1 Պակասէր յօրինակին Նա մի . . . իսկ ոչ». յաւելաւ 'ի յայլմէն։

իսկ որք փախչին և զաղանան, նոցա և հնազանդեալն դիւրին է։ Վասն որոյ և չասաց իսկ թէ մարդ չկարէ հնազանդել ինձ, այլ եթէ չար գործք չկարեն լինել բարի. որպէս զի յորժամ ասիցես թէ պոռնկութիւն չկարէ անուանիլ զգաստութիւն, և ոչ չարութիւն առաքինութիւն։ Զոր և յաւետարանին իսկ ասէր՝ թէ " Ոչ կարէ ծառ չար պտուղ բարի առնել,,, ոչ եթէ 'ի չարեացն յառաքինութիւն դառնալ արգել, այլ որք անդէն 'ի չարիսն կան՝ ասաց, եթէ ոչ կարէք պտուղ բարի բերել։ Քանզի և չասաց իսկ եթէ ոչ կարէ ծառ չար բարի լինել. իսկ զինչ, այլ եթէ պտուղ բարի չկարէ առնել մինչդեռ 'ի չարիսն է։ Իսկ զի դառնալ և բարի լինել կարողութիւն է, զայս և աստ եցոյց և յայլ առակին, յորժամ թողուցու զորոմն զի լինիցի ցորեան. վասն որոյ և խլել իսկ չետ հրաման, այլ արգել. " Մի՛ գուցէ, ասէ, և զցորեանն ընդ նմին խլիցէք 'ի բաց,,. այսինքն է թէ հանդերձեալ են ոմանք 'ի նոցանէ ցորեան լինել։

Խորհուրդ մարմնոյ այժմ աստ զմեղսն ասէ. իսկ խորհուրդ հոգւոյ զշնորհացն որ տուանին և զգեցմանն ըստ բարիոք մերում յօժարութեանն՝ որք ընտրութեամբ գնա 'ի կիր արկանեմք ըստ քաղցրութեան։ Իսկ ոչ ուրեք աստ վասն անձնաւորութեան էութեան ճառեաց, այլ վասն առաքինութեան և մեղաց։ Վասն զի զոր ինչ ոչ զօրեցին օրէնքն, այս այժմ կարողութիւն եղև քեզ, ասէ, ուղիղ գնալ և առանց գթելոյ և բաւան հարկանել զշնորհացն օգնականութենէ։ Քանզի ոչ է այն միայն բաւական չգնալ ըստ մարմնոյ, այլ և ըստ հոգւոյն պարտ է գնալ. և ոչ դարձեալ այն միայն բաւական է մեզ 'ի փրկութիւն խոտորել 'ի չարէ, այլ պարտ է և բարիս գործել մեզ։ Իսկ այս յայնժամ լինի յորժամ ըղձունչս ոգւոյն տայցեմք, և զմարմինս հաւանեցուցանիցեմք զընթանալ զկնի զկարգն ճանաչել. ապա այսպէս կարեմք և զնա հոգևոր գործել։ Իսկ եթէ ծուլանայցեմք, և զշունչն այնուհետև մարմնաւոր առնեմք։

Քանզի ոչ եթէ 'ի հարկէ բնութեանն էր զպարգևն, այլ ազատութեան և յօժարութեան ընծեռեաց. ապա առ քեզ է առնել զայս և կամ զայն։ Քանզի 'ի նմանէն կողմանէ ամենայն ինչ կատարեցաւ. վասն զի

Digitized by Google

և ոչ զխնտուռքն ընդդէմ օրինաց մտաց մերոց մեղքէն, և ոչ զիտեն զմեզ որպէս զառաջինն, այլ ամենայն լուծեալ խափանեցաւ և ընկղմեցան ախտք, զարհուրեալ և դողացեալ ախտքն 'ի շնորհաց հոգւոյն։ Նաև ապա եթէ դու քեզէն զլոյսն շիջուցանիցես և զկառավարն 'ի բաց հանիցես և զնաւավարն հալածիցես, ապա այնուհետև քեզ անձին քում քեզէն յարուցանես զմրրիկ ձմեռանւոյ և զալէկոծութեան։

Այժմ դիւրագոյն եղև առաքինութիւնն, վասն որոյ և բազում հաւատարիք են խոստովանութեան. աղէ ասիր և ած զմտաւ զժամանակն զայն մինչդեռ օրէնքն ունէին որպիսի ինչ 'ի մարդիկ գործէին և որպիսի ինչ այժմ յորժամ շնորհս ծաւալեցան։ Վասնզի որ ինչ անհնարինքն կարծէին առաջինոցն, այսինքն է կուսութիւն և զմահ արհամարհել և զայլ ևս բազում ախտից, այս այժմ ընդ ամենայն տիեզերս ուղղեալ գտանի, և ոչ թէ 'ի մէնջ միայն, այլ առ սկիւթացիսն և առ թրակացիսն և 'ի հնդիկս և 'ի պարսիկս և յայլ ևս բազում բարբարոսս. ծաղկեալ են կուսանացն կարգ և մարտիրոսացն բազմութիւնք և միայնակեացացն դասք, այլ և բազում ևս առաւել գտանին քան զամուսնացեալսն. և պահոց կարգք և անստացուածութեան առաւելութիւն, զոր օրէնքն որ նոքօք վարեցան՝ և յերազի անգամ չկարացին զայս առնել և վճարել։ Իսկ արդ տեսանելով թէ քան զփող ևս առաւել գոչէ 'ի բաց ճշմարտութիւն, մի թուլանար և մի մեղսոտն լինիր այնքան պարգևացն. զի և ոչ կարողութիւն է յետ հաւատոյն ծուլանալ։ Եթէ ապրել կամիցիս, դիւրին է պատերազմն. այլ զի յաղթիցես մրցելով և ոչ զի նիրհիցես և ննջիցես, և ոչ զի դարձեալ զմեծութիւն շնորհացն առնիցես իբրև ծուլութեան յառաջին տղմին թաւալելով։ Վասն որոյ և զնա վկայ ածեալ ասէր՝ թէ "Որ մարմնովքն են, այ հաճոյ լինել ոչ կարեն"։

Իսկ արդ զինչ, կոտորեսցո՞ւք զմարմինս, ասէ, զի լինիցիմք այ հաճոյք և ելանիցեմք 'ի մարմնոյս, և մարդասպա՞նս մեզ հրամայես լինել և գալ յառաքինութիւն։ Տեսանե՞ս քանի անպատեհ մտածութիւնք ծնանին՝ թէ մերկ զբանն ընդունիցիմք։ Վասնզի մարմին աստ ոչ զնոյն ինքն զմարմինն ասէ և կամ զնորին բնութիւն,

Digitized by Google

այլ զմարմնաւոր վարուց և զերկրաւորաց՝ որ փափկութեանցն և զեխութեանցն լի են, որ բոլորովին իսկ զմարդն մարմին գործեն ։ Որ օրինակ և ուր հոգւովն են թեթևացեալ և զմարմինն հոգևոր գործեն, սոյնպէս և որք այնպիսեացն ծառայեն որովայնի և հեշտութեան, և զհոգին մարմին առնեն. ոչ եթէ զէութիւնն ինչ շրջեն, այլ զազատութիւն ազգականութեանն նորա կորուսանեն ։

Եւ այս իսկ է օրինակ ասացելոցս՝ ուսանի և ՚ի հնումն բազում ուրեք գտանեմք, նշանակելով զմարմին զթանձրագոյն և զհողեղէն վարս և անպատեհ ցանկութեամբք լցեալս ։ Վասն զի և առ Նոյիւ ասէր՝ թէ " Ո՛չ մնասցէ հոգի իմ ՚ի մարդկանս յայսոսիկ առ ՚ի լինելոյ դոցա մարմին "։ Ոչ և ինքն իսկ Նոյ մարմին զգեցեալ էր. և չէր նմա մեղադրութիւն թէ ընդէ՞ր մարմին զգեցեալ են, քանզի այսպիսիկ ըստ բնութեան են. այլ զմարմնաւոր զվարսն ՚ի բաց կամէր բառնալ ։ Վասն այսորիկ և Պաւղոս ասէր՝ թէ " Որք մարմնաւորն են, Այ հաճոյանալ ոչ կարեն "։ Եւ յարեաց ՚ի սոյն դարձեալ թէ " Դուք չէք մարմնով, այլ հոգւով "։ Եւ ոչ դարձեալ թէ յախտաւան ինչ մարմնոյ ասաց զայս, այլ զայնպիսի զմարմնոյ՝ որք քարշին և ընդ ախտից բռնութեան կայ ՚ի հարկի ։

Եւ էր վասն չասաց այսպէս և ոչ ընտրութիւն ինչ եդ ՚ի միջի ։ Բարձրացուցանել կամէր զլսողն, եցոյց զայն եթէ չէ ՚ի մարմնի որ ուղիղն վարի. զի եթէ որ ՚ի մեղսն չէր, յայտ է ամենեցուն թէ հոգևոր էր ։ Վասն այսորիկ զմեծն դնէ, զի ցուցցէ թէ ոչ միայն զի ՚ի մեղսն չէ, այլ և ոչ ՚ի մարմնի այնուհետև երևի թէ իցէ հոգևոր մարդ. հրեշտակ իսկ եղեալ ասաէն և յերկինս համբարձեալ երևի, և զմարմինն լոկ արկեալ զիւրև ։

Իսկ ապա եթէ վասն այնորիկ ամբաստանես զմարմնոյ զի մարմնաւորն անուանեաց զվարսն մարմնաւորս, ապա պարտ է քեզ և զերկիր մեղադրել, վասն զի բազում անգամ և սա չար կոչի, որպէս և աշակերտացն ասէր Տէրն՝ թէ " Դուք չէք յաշխարհէ աստի "։ և դարձեալ ցիւր եղբարսն ասէր. " Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ, իսկ զիս ատեայ, զի ես վկայ եմ նորա թէ գործք իւր չար են "։ Բայց և զհոգին իսկ օտարացուցանեմք յայն. վասն

զի որք 'ի մոլորութեանն կեցին, ընչաւորս կոչեաց զնոսա։ Ոչ չէ և չէ իսկ այս. քանզի ոչ լոկ յառաջացուածս բանին ապարտ է հայել, այլ զմիտս բանին ամենայն ուրեք կարևոր է քննել և հաւաստեաւ 'ի վերայ հասանել ասացելոցն։ Վասնզի ոսկի բարի է և միւսն չար, և երկոքեան 'ի միջոցի՝ որպիսի ինչ շաւիղ և մարմինն 'ի միջոցի են, և սոսա և նոսա դիւրին է առ 'ի լինել բարի. իսկ հոգին միշտ բարի, և ոչ այլ տարազ ինչ երբէք կարէ լինել։ Այլ զարմացեալ թէ խորհուրդ մարմնոյ՝ այսինքն է չար վարքն, որ միշտն չար՝ նա ոչ կարէ այ օրինացն հնազանդել։ Իսկ ապա եթէ 'ի լաւ անդր խոնարհեսցի հոգին և մարմինն, եղեն մասին հոգւոյն. իսկ եթէ զարմացեալ չար և դժնեայ ինչ, զասաւ հաղորդ իսկ սատանէն կորստեանն. ոչ եթէ բնութիւնն ինչ շնչոյ և մարմնոյ զայն ունէր, այլ իշխանական բարուքն երկոքեան զայն ընտրեցին։ Այլ զի այսպէս ունի զօրինակս, և ոչ զմարմնոյ ամբաստանութենէ ինչ ասացեալ։

Զարմացեալ եթէ կամիցիք ձեռնարկեսցուք յառաջուածս բանիցն և հաւաստեաւ քննեսցուք։ "Դուք, ասէ, չէք մարմնով, այլ հոգւով"։ Այլ արդ զիարդ չէին մարմնով, այլ անմարմինք շրջէին. և ո՞ր բան ունիցի զայս։ Տեսանեմս զի զմարմնաւոր զվարսն ակնարկէ։ Այլ էր վասն չասաց՝ թէ դուք չէք մեղօք. զի ուսանիցես եթէ ոչ միայն զմեղաց բանաւորութիւն շիջոյց Քրիստոս, այլ և զմարմինն թեթև և հոգևոր գործեաց. ոչ եթէ զբնութիւնն փոխեաց, այլ թևաւոր արար զնա։ Որ օրինակ յորժամ 'ի հուր մերձենայցէ երկաթ, և ինքն երկաթն հուր լինի և պահէ զիւր զընտանի զբնութիւնն, այնպէս և որ հաւատացեալն է և զհոգին ունի, և մարմին նորա փոխի յայլ ազդումն և բոլորովին իսկ հոգևոր լինի, և յամենայն կողմանց խաչեալ, և զոյգ ընդ հոգւոյն 'ի վեր թռչի։ Որպիսի էր իսկ և նորա մարմինն որ զայն խօսէր. որ զամենայն փափկութիւն և զցանկութիւնս ծաղր առնէր, և փափկանայր սովով և տանջանօքն և կապանօքն, և ոչ ցաւէր ինչ և ոչ միշտ վարկանէր զչարչարանսն։ Այլ զայս յայտ առնէր ասելովն՝ թէ "Առժամայն իսկ թեթևութիւնն նեղութեանս"։ Այսպէս բարիոք էր և առաքինի, մինչև զմարմինն եւս խրատեաց զոյգ ընդ հոգւոյն ընթանալ։

«Օք եթէ Հոգի ա՟յ բնակեալ է 'ի ձեզ»: Օքին և զԹէն ընդ բազում տեղիս դնէ ոչ երկբայելոյ վասն, այլ և յոյժ հաւատալոյ իրք են, և փոխանակ այսր զքին և զԹէն դնէ. որպէս յորժամ ասիցէն. «Օք թէ արժանի է առաջի ա՟յ հատուցանել նեղութիւն նեղչացն ձերոց». և դարձեալ. «Որչափ ինչ անցք անցին ընդ ձեզ ձրի. թէ իցէ ձրի»: «Եթէ ոք զՀոգի ա՟յ չունի, սա չէ նորա»: Եւ չասաց եթէ դուք չունիք, այլ յայլս դարձոյց զտրտմականն. սա չէ նորա՝ ասէ: «Իսկ եթէ Քրիստոս 'ի ձեզ է». Դարձեալ Քրիստոս նոյնս ասէ. և զտրտմականն եդոյց եթէ փոքր մի և զիջականն, իսկ փափագելին՝ երկաքանչիւրոց, այլ և բազմաց, որպէս զի զայն ծածկելով զայս ասիցէ՝ եթէ զՀոգին քարոզեսցի զՔրիստոս անուանելով: Ցուցանէ թէ որ զՀոգին ունի, ոչ միայն զանուն Քրիստոսի ունի և Որդի անուանի, այլ զնոյն ինքն զՔրիստոս ունի. քանզի չէ երբէք յորժամ Հոգին մերձ լինի, թէ և[1] Քրիստոս չիցէ մերձ: Քանզի ուր մի անձն յերրորդութենէն մերձ է, բովանդակ երրորդութիւն շուրջ պատեալ կայ. վասն զի անքակ են 'ի միմեանց, և միաւորին ամ՟ հաւատեաւ:

Եւ զինչ իցէ զոր ասէն՝ «Եթէ Քրիստոս 'ի ձեզ է, ապա մարմին մեռեալ է վասն մեղաց և Հոգին կենդանի է վասն արդարութեան»: Տեսանե՞ս որչափ չարիք են 'ի չընդունելոյ զՀոգին սուրբ. մահ, թշնամութիւն առ ա՟ծ, և ոչն կարել հնազանդել օրինացն ա՟յ, և չունել մեզ զՔրիստոս որպէս պարտն է և զբնակելն նորա 'ի մեզ:

Եւ արդ տես որչափ ինչ բարութիւնք են յորժամ զՀոգին ընդունիցիմք. յորժամ Քրիստոսի լինիցիմք, զնոյն ինքն զՔրիստոս ընդունիմք և ընդ հրեշտակս խօսակից լինիմք. քանզի այս է զոր ասէն՝ թէ «Սպանէք զանդամս ձեր». զկենդանութիւն զանմահ կենացն որք ասացէն իսկ ընկալաք զյարութեան զգրաւականն, որով դիւրով ընթանամք զառաքինութեան ընթացսն: Վասն զի չասաց եթէ դատարկացի մարմինդ 'ի մեղաց լոկ, այլ թէ մեռեալ լիցի. ընդարձակել կամեցաւ զդիւրակոյն զընթացսն մեր. քանզի առանց իրաց և աշխատութեան այսպիսին պսակի այնուհետև: Վասն այսորիկ և

1 Ոմն Քրիստոս ևս:

Digitized by Google

զմեղացն ձայնս յաւել, զի ուսցիս և զգուշասցիս, և ոչ եթէ զանուանութիւն մարմնոյն միանգամայն 'ի բաց եբարձ. զի եթէ այս լինեալ էր, ապա և զհոգւոյն բնութիւն 'ի բաց բառնալ էր։ Այլ չասէ այսպիսի ինչ, այլ կամի թէ կեայ և շարժի և գործէ. այլ մեռեալ կամի զի իցէ, որպէս զի զՔրիստոս յինքեան կարիցէ ունել. և ապա այն լինիցի նշան թէ 'ի մեզ հոգին սուրբ է, յորժամ զկարգ սահմանի իւրոյ բարւոք պահիցէ մարմինն, և ոչ եւս աղխիցէ 'ի գործառութիւն մեղաց։ Նա արդ մի վհատիցիս 'ի մեռելութիւն, զի ունիս զճշմարիտ կեանսըն՝ զոր և ոչ մի ինչ մահ կարիցէ փոխանակել։ Վասն զի այսպիսի են հոգւոյն կեանք. չանկանի ընդ մահուամբ այնուհետեւ, այլ ծախէ զմահ և սպանէ, և զոր առն՝ անմահ պահէ։ Վասն որոյ և չասէ թէ մարմինն մեռեալ է և հոգին կեայ, այլ թէ կենդանութիւն, զի ցուցցէ թէ և այլոց կարող է զնոյն շնորհել։

Նաև դարձեալ անդէ զկարգն առեալ զպատճառս կենդանութեանն, և օրինակ այսպիսի՝ արդարութիւնն. քանզի յորժամ մեղք ուրեք չիք, և ոչ մահ ուրեք գըտանի. և յորժամ մահ ուրեք չերևի, յայտ է թէ անլուծանելի կեանք կեան։ "Ոյ եթէ հոգի այնորիկ որ յարոյցն զՅիսուս բնակեալ է 'ի ձեզ, ապա և որ յարոյցն 'ի մեռելոց զտէր մեր Յիսուս Քրիստոս կենդանացուսցէ և զմարմինս ձեր առ 'ի բնակել 'ի ձեզ հոգւովն"։ Դարձեալ վասն յարութեանն յուշէ ձայնս. մանաւանդ թէ այս իսկ յայս օծանէ զբանն, և հաստատէ այնուիկ որ ինչ Քրիստոսին գործեցաւ։ Մի՛ զարհուրիր, ասէ, թէ մեռեալ անկեալ է մարմինդ. ընկալ զհոգին և խնկոյն յարիցէ։ Նա զիարդ, որք ոչն ունիցին զհոգին՝ մարմինքն ո՞չ յարիցեն. և ո՞րպէս ասիցէ՝ թէ "Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի բեմին Քրիստոսի"։ Նա ասացի դարձեալ ձայնք գեհեննին հաւատարիմ լինին. եթէ ոչ յառնեն, յայտ է թէ գեհեն չիք. և արդ որպիսի ինչ զոր ասիցէն։ Ո՛չ յառնել ամենեքին յառնեն, այլ ոչ ամենեքեան 'ի կեանս, այլ ոմանք 'ի տանջանս և ոմանք 'ի կեանս։ Սորին վասն չասաց թէ յարուսցէ, այլ թէ կենդանացուսցէ՝ որ 'ի վերն է քան զյարութիւն, զոր արդարոցն միայն է պատրաստեալ։

Digitized by Google

Զայս և զդատաստանս ապառնւոյն այնորիկ յայտնէ առաքեալն՝ "Եւ 'ի բնակելոյ հոգւոյ նորա 'ի ձեզ"։ Զի թէ հալածիցես, ասէ, զհոգւոյն շնորհս մինչդեռ աստ ես, և ոչ ամբողջ ունիցիս զնա 'ի քեզ, երթիցէ 'ի քէն. և թէպէտ և յարիցես՝ կորստեան մասնիս, վասն զի չառնու յանձն ծագել 'ի քեզ հոգին յորժամ տեսանիցէ թէ մատնեցար գեհենին։ Այնպէս և չառնու յանձն շիջեալ լապտերօք զքեզ ընդունել և 'ի ներքս տանել 'ի հոգևոր առագաստն որպէս և զայն զկուսանսն։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Եւ արդ մի տալ այժմ կենդանանալ մարմնոյդ, զի անդ կենդանասցի. մեռո զդա աստ, զի մի յաւիտեան մեռանիցի։ Զի եթէ աստ պահես զդա կենդանի, անդ ոչ կենդանանայ. իսկ եթէ մեռանի, յայնժամ կենդանի լինի։ Նոյն և 'ի հասարակաց յարութեանն գործի. նա պարտ է նախ մեռանիլ և թաղիլ, և ապա անմահ յառնել։ Նոյն և յաւազանին գործեցաւ. քանզի խաչեցաւ նախ և թաղեցաւ, և ապա յարեաւ։ Նոյնս զայս և 'ի տէրունական մարմնին. քանզի և նա նախ խաչեցաւ և մեռաւ և թաղեցաւ, և ապա յարեաւ։ Նոյնս և մեք այժմ արասցուք, 'ի գործս նորա յամենայն ժամ սպանցուք զմեզ. ոչ եթէ զմահութիւնս ինչ ասեմ, քաւ լիցի. այլ զյարձակմունս չար գործոցն։ Քանզի և այսորիկ կեանք են, մանաւանդ թէ այն իսկ են ճշմարիտ կեանք յորժամ ոչ մարդկօրէն ինչ վարիմք և երկրաւորս, և ոչ ցանկութեանց ծառայեմք։ Եւ եթէ ոք զայսորիկ չկարիցէ ընդ իւրև հնազանդել, նա և կեալ չկարէ անխռովութեամբ 'ի վհատութենէ որ յիրացն լինիցի, և երկիւղ և վտանգ և բիւր բազմութիւնք ախտիցն 'ի ներքս անկեալ հեղձուցանեն։ Եւ եթէ մահու ակն ունիցին, յառաջ քան զժամ մահու մեռեալ գտանի. և կամ թէ հիւանդութեանց և ախտից կարծիք ըմբռնեն և թշնամեաց և կամ աղքատութեան և կամ այլ ինչ յորոց ակն ունիցին, կորեաւ և եղծաւ վաղվաղակի։ Եւ արդ զինչ քան զայնպիսի կեանս հիքագոյն կայցէ։

Այլ ոչ որք հոգւովն կեան՝ այսպիսի ինչ կրիցեն, այլ

և երկնայինն և արարածութեան և վաղանցուկ մինչ միայնոյ և քան զամենայն իսկ փափագմունս վերադոյն գտանի : Նոյնպէս ոչ մինչ ամենեւին երեւի նմա իրքն, այլ և մեծագոյն այն՝ զի յորժամ լսէ, արհամարհէ : Այլ այն ճշմարտ լինիցի : Թէ բնակէ հանապազ հոգին 'ի մեզ . քանզի ոչ լոկ ասաց թէ բնակեսցէ առ փոքր մի, այլ թէ ցանկ հանապազ . վասն այսորիկ և չասաց իսկ եթէ որ բնակեաց հոգին, այլ եթէ բնակեսցէ, զմիշտ առ մեզ մնալն ցուցանէ : Նոյն ուրեմն կենդանի մանաւանդ նա է որ զմեզն մեռուցանէ 'ի վարուցն . վասն որոյ և ասէ՝ թէ « Հոգին կենդանի է 'ի ձեռն արդարութեան » :

Այլ զի և յայտնագոյն ասացուածքն լինիցին, երկուս մարդս ասասցուք 'ի մէջ, մին կարգեալ անառակութեամբք և ցանկութեամբք և խաբէութեամբք կենցաղոյս, իսկ զմիւսն մեռեալ այսոցիկ . և ասասցուք մանաւանդ թէ ո՞վ իցէ կենդանի : Այլ դարձեալ 'ի սոցունց երկոցունց կամ զմին հարուստ և նշանաւոր՝ որ զբազում զուսանս կերակրէ և զփողաբշտոս, և զօրհն իսկ զօրն յայնմ անցուցանէ յըմպելիս և յանառակելիս և 'ի զեղխանսն[1] . իսկ միւսն աղքատութեամբ կեայ և պահօք և այլ ևս խստամբերութեամբք և խոնարհութեամբ, և երեկուեան միայն 'ի կարեւոր կերակուր անդր վայելիցէ փոքր մի, և եթէ կամիցիս՝ և զերկուս և զերիս աւուրս համբերեաց թէ կայցէ նօթի : Արդ ո՞ յերկոցունց 'ի նոցանէ թուեսցի ձեզ թէ կենդանի իցէ . գիտեմք զի բազումք զնա վարկանիցին որ փափկանայն և զրոյց զբուրան . իսկ մեք զնա որ ամենայն չափաւորութեամբ վայելէ : Այլ արդ քանզի կեանք և հակառակութիւն 'ի միջի է, 'ի տուն իսկ յերկոցունց մտցուք 'ի նմին ժամու . 'ի փափկութեանն յորժամ քեզն թուեսցի թէ կենդանի իցէ մեծատունն, և մտեալ 'ի ներքս տեսանեմք զերկաքանչիւրոցն զկեանս : Այլ վասն զի 'ի գործոցն երեւի թէ ով է կենդանի և կամ ով մեռեալ, որ զմարհանկոն և զգիրն քննէ, թէ որ յաղօթս և 'ի պահոն իցէ . և դարձեալ որ յերկրաւոր իրսն իցէ, թէ որ արթունն և զուարթունն իցէ և ընդ ոյ դեռ խոսկցի : Քանզի զնա յարբեցութեանն ընկղմեալ՝ ոչ մինչ

1 Յօրինակին գրեալ էր 'ի զխաղախանսն :

լուսաւորին ջահն զմտաւորն սեղանովք, թէպէտ և ցերե-կոյն անդ դեգերեալ նստիցիք, և յետ արբեցութեան առաւ քան իսկ ըմբռնել զնոսա, և մանաւանդ քան զայն-պիսի իրս՝ զմահն զլխովին կամիցի։ Իսկ միւսն ևս 'ի գի-շերի արթուն և զուարթուն գտանի։ Այլ արդ զո՞ր վար-կանիցիմք կենդանի. որ յանզգայութեա՞նն անկեալ դնէր և ծաղր ամենեցուն լինէր, թէ որ զուարթունն էր և ընդ ա̃յ խօսէր։ Այս թէ որ մերձենայ և բարբա-ռի, լսել ինչ չկարէ որպէս 'ի մեռելոյ. իսկ սա թէ-պէտ և 'ի գիշերի մտանէ և կամ 'ի տուընջեան, ցանկայ լսել զձայնն, քանզի հրեշտակական է և ոչ մարդկա-կան, և լսէ զիմաստութիւնն վասն երկնայինն իրաց։ Տեսանե՞ս զի մինն առաւել քան զկենդանիսն կենդանի է, իսկ միւսն քան զմեռեալ ևս առաւել ողորմելի ան-կեալ դնի. թէպէտ և խլրտիցէ՝ այլ ընդ այլս տեսա-նէ, և քան զշամշեալսն և զմոլիսն ևս թշուառականա-գոյն է։ Զնա թէպէտ և թշնամանիցէ ոք, ողորմիմք այնմ որ թշնամանեցաւն, և սաստեմք այնմ որ թշնա-մանեացն։ Իսկ յայսպիսեացս թէպէտ և վարատեալ զոք և թշնամանեալ տեսանեմք, ոչ միայն չխոնարհիմք առ 'ի գութս, այլ և վարկանիմք ևս թէ առաւել ար-ժանի է այնպիսում իրաց։ Այլ արդ այսպիսի կեանք կեա՞նք իցեն, որ քան զբիւր մահ ևս դժնեայ և դառն է։ Տեսանե՞ս զի ոչ միայն մեռեալ է որ փափկանայն, այլ քան զմեռեալսն ևս դժնեայ և քան զդիւահարսն ևս դիւագոյն։ Քանզի միում ողորմիմք, իսկ զմիւսն ա-տեամք. և միւսն 'ի ներելութեան վայելէ, իսկ միւսն տանջանս ընդունի վասն որոյ ախտացաւն։ Զի թէ ար-տաքուստ այնպէս ինչ իցէ ծաղրալից նեխեալ զշաղխն ունելով 'ի քեզ և զխնեհատ նեխութիւնս, զմտաւ ած զթշուառական հոգիդ թէ որպէս 'ի գերեզմանի յայս-պիսում 'ի մարմնի թաղեալ դնի։ Այսպիսի ինչ է տե-սանել որպէս զի թէ իցէ աղջիկ ոք գեղեցիկ զարդա-րեալ և զգաստ և ազատ և բարեազգի, և աղախին բար-բարոսաց լինիցի և հալածական և թշնամանեալ յետ այնչափ կազմածոց և իշխանութեանց։ Այլ արդ ո՞ ոք ոչ որ միտս ունիցի ցանկայ բազում անգամ մեռանել, քան թէ մի օր զայնպիսի կեանս կեցցէ։ Զի թէպէտ և յոր-ժամ տեսն լինիցի և յայնպիսի յանաւակ արբեցու-

թենէ յարիցէ, սակայն և ոչ այնպէս վայելէ 'ի յատակ զգաստութեան. վասն զի դեռ ամիզ և մռափուղ որ-պէս 'ի ձմեռանւոյ որ յարբեցութեանն զարթեցաւ՝ ա-ռաջի աչացն կայ։ Բայց սակայն թէպէտ պարտ էր նմա յատակ նայել, այլ զինչ օգուտ է յորժամ ոչ ինչ տեսութիւն նորա 'ի պէտս գործիցի, այլ 'ի քամ-բասանս և յամօթ. այնքան ինչ է յիրացն շահ մինչև զգայ ոչ անգամ յորժամ ծաղրն կայցէ։ Եւ յորժամ տիւն իսկ լինիցի, այնպիսի իմն մխիթարութիւն զտա-նէ՝ զծառայիցն տրտունջ և զկնոջն զամօթ և զբարե-կամացն զմեղադրութիւն և զթշնամեացն ծաղր առնել զոր ոչ ինչ զգայ։ Եւ արդ զինչ ինչ ողորմելի քան զայնպիսի կեանս կայցէ որ զօրն բոլոր այդն կատակա-նաց լինիցի յամենեցունց, և երեկուանն դարձեալ զնոյն ամօթ նախատանաց կրիցէ։

Եւ արդ զինչ, կամիցիս թողեալ զսոսա առցուք 'ի մէջ զագահն. վասն զի և այս ևս դառնագոյն արբեցու-թիւն է և մահ, և քան զմահ ևս դառնագոյն, որպէս և արբեցութիւն այս ևս դժնեայ է քան զայն. քանզի և չէ իսկ այսպէս չար գինւոյ արբեցութիւն քան զընչիցն ցան-կութիւն։ Վասնզի անդ այնքան ինչ է վնասն և յայն կատարի՝ անզգայ լինել արբեցելոյն, և նորուն անձին է կորուստն միայն. իսկ այս արբեցութիւն 'ի բիւր ոգիսն ազդէ վնասն, և պէսպէս ամենայն ուրեք բորբոքէ զպա-տերազմունս։ Եւ արդ բեր և զայս և զայն կշռեսցուք առ միմեանս և տեսցուք թէ իւ զատանին հաղորդ մի-մեանց, և այսպէս երկոցունց արբեցութեանց արա-ցուք հանդէս այսօր։ Իսկ առ երանելի կեանսն և հո-գևոր կենդանութիւնն մի ևս մերձեսցին այսպիսիքս առ այժմ, այլ առ միմեանս քննեսցին։ Եւ զսեղանն ևս 'ի մէջ բերցուք որ բիւր սպանմամբք լի է։ Եւ արդ իւ ի-ւրք հաղորդին միմեանց և կամ իւ նմանիցին. այնու ինչ արդեօք ըստ բնութեան ախտին։ Ըստ այս և զզա-նազանութիւն արբեցութեանն. քանզի մին 'ի գինւոյ, իսկ միւսն 'ի ցանկութենէ ընչիցն լինի, և սոսա նմանն նմին լինի, քանզի երկոքեան անպատեհ ցանկութիւնքն պատրին։ Վասնզի որ գինւովն արբենայ, որչափ ինչ շատ ըմպէ տոչորիւքն, սոյնպէս և թմբրի միայն. իսկ որ յինչսն հարբեալ իցէ, որչափ ինչ առաւելու, քան զնոյնս

եւս առաւել վառէ զնոյն ցանկութեանն, եւ եւս դժնեայ զպատրաստումն իւր պատրաստէ. այսպիսի ինչ է արբեցութիւնն, եւ այլ ոչինչ: Դարձեալ արծաթասէրն յափշտակէ. եւ այն ոչինչ իցէ: Վասնզի նա ախտանայ զոր ինչ`բնութեանն իւրք ունին. վասն զի գինւոյն բնութիւն ջերմ է, եւ զընդարձակոյս զխոնաւութիւն մարմնոյն յինքն ձգելով գործէ արբեցոյն զծարաւն: Իսկ նա ուստի. թէ ոչ յայտնամանէ թէ առաւելով կամք յինչսն, եւ առաւել յայնժամ աղքատագոյն քան զամենեսին իսկ զինքն վարկանի. քանզի անյագ է ախտն եւ լոկ օրինակաւ երեւի թէ մարդ է:

Այլ արդ եթէ կամիցիս, զննեսցուք զնոսա եւ յետ արբեցութեանն: Մանաւանդ եթէ զարծաթասէրն չէք երբէք զգաստանալ լուրջ, այլ միշտ յարբեցութեան կայ: Այլ արդ մինչ յարբեցութեանն երկոքեան են, տեսցուք եւ այց արասցուք խրացն՝ եւ արդ ո՛ ոք 'ի սոցանէ ծաղր կայցէ, եւ կերպարանեսցուք զերկոսեան եւ գրեսցուք զայն: Այլ տեսցուք որ երեկոր խելաթափ 'ի գինւոյն եղեալ էր եւ զաչսն բացեալ ոչ զոք կարէր տեսանել, այլ լոկ ընդ վայր կործէր զամենայն ինչ շուրջ եկեալ, եւ որք պատահէին՝ գրթի հարկանէր, եւ յարիւնեալ ծակատեալ եւ մերկապէս խայտառակեալ, եւ կնոջն մերձ կալով եւ զաւակք եւ աղախնացն եւ ծառայիցն այսպէս կատականաց առնելով: Այլ արդ բեր եթէ թուի եւ զագահն 'ի մէջ եւ տես որ ինչ 'ի նմանէն գործի. եւ ոչ միայն ծաղու արժանի է, այլ եւ անէծից եւ սրտմտութեան եւ բազում չանթից 'ի վերուստ:

Բայց սակայն տեսցուք թէ ուստի եւ ծաղրն լինի: Այլ նման նմին իսկ չտեսանէ զամենեսին, ոչ զբարեկամս, ոչ զթշնամիս. եւ այնպէս նման նմին բացեալ աչքն՝ կափուցեալ զտեսանի. եւ զոր օրինակ նա գինւոյն ցանկայ, նոյնպէս եւ սա զամենայն ոսկի տեսանէ: Այլ փոխանն եւս դառնագոյն սորա քան զնորայն. զի ոչ եթէ կերակուր ընդ բերան փսխէ, այլ բանս հայհոյութեան, թշնամանաց, պատերազմաց, մահուան, բիւր ինչ անդրուստ 'ի ներքուստ[1] կազմեալ փայլատակունս գլխոյն իւր եհան: Այլ որպիսի ինչ իցէ մարմին արբեցոյն՝ զանձնացեալ եւ լուծեալ, նոյնպէս եւ սորա ոգիքն:

1 Ցոյնն յերկնուստ:

Digitized by Google

Մանաւանդ թէ ոչ սորա ոգիքն և ոչ մարմինն յախտէս յայսմանէ կարիցեն զերծանել, այլ մանաւանդ թէ ծախէ և մաշէ եւս առաւել քան զգինւոյն զարբեցութիւն՝ հոգքն, տրտմութիւնն, տքնութիւնն՝ որ առ փոքր փոքր ուտէ զմարմինն նորա և ծախէ։ Վասնզի գինւոյն բարբեղութիւն գոնէ յետ գիշերոյն կարէ զուարթանալ։ Իսկ սա յամենայն ժամ արբեալ է 'ի տանջանս և 'ի գիշերի. և յորժամ արթունն է, քան զամենայն եւս քնով կապեալ գտանի. քանզի և որ զմտաւորսն գործեն և թէ այլ ինչ քան զայս առաւել և ծանր և դժնեայ իցէ՝ եւս չար դառնագոյն չարչարի սա աստէն։

Եւ արդ սա ինձ, այնպիսի կեանք կեա՞նք իցեն, այլ ոչ եթէ մահ, մանաւանդ թէ եւս դժնեայ քան զմահ և ողորմելի։ Վասնզի մահ զմարմինն հանգուցանէ, և 'ի ծաղր առնելոյ և 'ի նշաւակաց և 'ի մեղաց անջատէ. իսկ այս արբեցութիւն յամենայն յայնոսիկ արկանէ, զլսելիսն խնու, զաչսն կափուցանէ և զմիտսն կապէ 'ի խաւարի։ Վասնզի ոչ լսել և ոչ խօսել ընդ ումեք յանձն առնու, այլ վաշխս և տոկոսիս տոկոսեաց և զանամօթութեան շահն և զառեցեալ վաճառականութեան հաշուին և զանազանութեան[1] զշահն և զծառայականս. և որպէս շունք ընդդէմ ամենեցուն զօղանջեն, զամենեւին ատեան, յամենեցունց 'ի բաց գնացեալ, ընդ ամենեսին մարտնչին առանց իրիք պատճառանաց, յաղքատացն վերայ յարնեն, ընդ մեծատունս չարակնեն և ընդ ումեք իսկ չեն կամակից։ Թէպէտ և կին ունիցի և որդիս և բարեկամս, եթէ ոչ յամենայն ուստեք շահեսցի ինչ, չթուի ինչ քաղցր. բնութիւն իւր պատերազմող եղեւ, և այլքն եւս առաւել։

Եւ արդ զինչ չար քան զայնպիսի մոլորութիւն կայցէ, և կամ զինչ հէք և թշուառական քան զնա, յորժամ ինքն անձին իւրում այնպիսի խռովս իւր կազմեսցէ և զանհանգստութիւնս և խորամանկս և բիւր խորխորատս։ Մարմին ունելով՝ որ միայն սակաւուք ծառայիցէ, թէպէտ և 'ի քաղաքային մատակարարութիւնս ոք զքեզ արկանիցէ՝ փախչիս յերկիւղէն, վասն զի զամենայն ինչ սրովայնի ծախիցես։ Իսկ արդ և առանձին իսկ կազմես այնպիսի ծախս. և ոչ եթէ ծախս միայն,

1 Յօրինակին զանազանաբանեան. Եղաւ ընդ յաճախս

այլ եւ յառաջոյն սպասաւորութիւնս հարկանես յարժամ մեծամեծացն ծառայիցես․ եւ ոչ եթէ զկնչան միայն այնպիսի բանսարկու իշխանին եւ կամ զաշխատութիւնս մարմնոյ եւ զտանջանս հոգւոյդ եւ զցաւս, այլ եւ զքո խակ զարբեցող մատուցանես։ Իսկ զինչ աւելի քեզ լինիցի, հեքեղ եւ թշուառականդ, յայնպիսի բամբասականն ծառայութենէ։ Զառաւանիս զորս ցանկ հանապազ 'ի շիրիմսն տանիցին, մերկք եւ ունայնք 'ի թաղումն երթիցեն․ եւ ոչ ինչ կարացեալ առնուլ յիւրոց անտի, այլ եւ զայն եւս որ զգեցեալն ունին՝ որդւոցն տանին անդր։ Հայեաց ընդ այն զամենայն որ, որպէս զի կարասցես թեթեւացուցանել զախտն, զի մի անտի եւս փրասեսցես յորժամ զծանրագին եւ զպատուական զհանդերձս պատանացն քեզ կազմիցես․ քանզի եւ յայժ դժնեայ է ախտս այս եւ դառն հիւանդութիւն։ Այնպէս եւ մեք հանապազ յեկեղեցւոջ զայս ձայնեմք, եւ ընդունիք զձեւլիս ձեր, զի զանէ 'ի հանապազ լսելոյ անտի կարիցէք լինել լաւք։

Այլ մի հակառակիք․ քանզի ոչ եթէ միայն 'ի հանդերձեալ աւուրն, այլ եւ յառաջ քան զայն այսպիսի պէսպէս ախտք հասուցանեն չարչարանս 'ի վերայ։ Որպէպէս եւ զհանապազորդ զկապելոց ասեն, եւ կամ որ յերկար ախտիւքն մշտանան եւ կամ թէ որք սովամահն լինիցին եւ եթէ այլ ինչ այսպիսիք իցեն, ոչ կարես ցուցանել թէ այսպէս ինչ տանջեցան ասանէն որպէս յինչան հարեալ իցեն։ Զինչ ինչ քան զայն դառնագոյն կայցէ յորժամ զամենեսին ատեցէ եւ ինքն յամենեցունց ատիցի, յորժամ չէ ումեք կամակից եւ ոչ տեսանել զոք կամիցի եւ ոչ յագիցի երբէք զհանապազորդ զծարաւն, ընդ այն կաւեալ յամենայն ժամ․ մանաւանդ թէ եւս դժնդակ քան զոռնն է այն յամենեցունց ըստգիւտ լինել, զհանապազորդ զարտմութիւնս, զոչ երբէք դադարեցականն, զհանապազորդ զխռովութիւնսն եւ զաղմուկսն։ Զայս ամենայն եւ որ ինչ աւելի քան ըզայնս ագահութիւնն ածկեաց, եւ զմինն միայն կամիս շահել, այսինքն է զմամոնայ։ Զի թէպէտ եւ զամենայն ինչս սպառեալ ունիցի, ոչ զգայ ցանկութեանն, վասն զի ամենայնին անկշտայ․ եւ եթէ իմերեւէ մի կորուսանիցէ, քան զամենեւին զինչսն վարկանի ողորմելի, եւ թուէ

թէ յամենայն 'ի կենայն իսկ անկաւ : Այլ արդ զխորհրդ կարիցեմք բանիւք զայս չարիս յանդիմանն կացուցանել : Իսկ թէ ասա զայսպիսի ինչ, զմտաւ ած յետ առաջի անցողք երթալոյն, զարտաքս համաւրէն յաղքատութեանն, զմրմնջումն գեհենին, զհանապազորդ զկապանսն, ըզխաւարն արտաքին, զորդնն զթունաւոր, զկրճտումն ատամանցն, զնեղութիւնն, զհրեղէն գետն, զհնոցն որ ոչ երբէք շիջանի :

Այլ արդ զայս ամենայն 'ի մի վայր ժողովեալ զմտաւ ած զի կարասցես կալ ընդդէմ ցանկութեան ընչիցն խորհրդոց, զի արմատաքի իսկ խլեսցես զախտն զայն, որպէս զի զմշտնջենաւորն զմեծութիւնն ընկալցիս և 'ի դըժնեայ յաւիտենական յաղքատութենէն զերծցես, և մերձակայից և հանդերձելոց բարութեանցն արժանի գտցիս : Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ հոգւոյն սրբոյ այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն :

## ՃԱՌ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

“Ապա ուրեմն, եղբարք, պարտապան եմք ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ. զի եթէ ըստ մարմնոյ կեցէք, մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք, կեցջիք ”:

Ցոյց թէ որչափ ինչ գործեն հոգևոր վարք, և եթէ Քրիստոսի բնակութիւնս առնեն զմեզ, և թէ կենդանացուցանէ զմահկանացու մարմինս և առ երկինս թռուցանէ, և թէ զճանապարհս առաքինութեան դիւրին գործէ : Ապա կարեւոր համարի 'ի սոյնս յարել և զխրատն ասելով՝ թէ չպարտիմք կեալ ըստ մարմնոյ. այլ այսպէս չասաց ինչ յայտնի, այլպէս դիմօք և յոյժ ըղձաւոր ասաց՝ թէ պարտապան եմք հոգւոյ. քանզի ասելն թէ չեմք պարտապան մարմնոյ՝ զայս յայտ առնէ : Այլ ամենայն ուրեք զնոյնս կարգէր և ցուցանէր թէ որ ինչ յԱյ առ մեզն եղեն՝ չեն ինչ պարտուց իրք, այլ մերկ

շնորհացն մերոյն. իսկ յետ ստացելոյ 'ի մէջ՝ առ նա որ ինչ եղեն, ոչ էր առատ ընծայութեան, այլ պարտուց: Վասնզի և յորժամ ասէ "Գնոյ գնեցայք, մի լինիք ծառայք մարդկան", զայսոր ակնարկէ. և յորժամ դարձեալ գրէ՝ թէ "Չէք անձանց տեարք", զայսոր յայտ առնէ. և այլուր դարձեալ զնոյն յիշեցուցանէ ասելով՝ "Մինն 'ի վերայ ամենեցուն մեռաւ, ասէ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ էին. զի որ կենդանիքն իցեն, մի իւրեանց իցեն կենդանիք": Զայսոսիկ զայս և առա կարգեալ ասէ՝ թէ պարտական եմք:

Նոյն իբրև ասաց՝ թէ չեմք պարտապան մարմնոյ, և զի մի ոք զրաւացեալսն ձեզքեցէ¹ և 'ի մարմնոյ բնութենէ տանիցի, ոչ ըստ անզգեաւ եթող զբանն և լռեաց, այլ յառաջ մատուցանէ և ասէ՝ թէ "ըստ մարմնոյ կեալ". վասն զի և բազում ինչ եմք պարտապան մարմնոյ՝ սնուցանել, խնամ տանել, հանգուցանել, ողջացուցանել յորժամ 'ի հիւանդութեան իցէ, զգեցուցանել և այլ բիւր ինչ սպասաւորութեան պէտք են: Արդ զի մի ասիցեն թէ զայսպիսի խնամ 'ի բաց բարձ 'ի նմանէ, ասաց թէ չեմք պարտապան մարմնոյ, անդրէն մեկնէ իսկ ասելովն՝ թէ ըստ մարմնոյ կեալ. զայն բառնամ 'ի նմանէն, ասէ, որ փութայն զմեզ 'ի մեղս ածել. որպէս զի ողջացուցանել իսկ փութամ զնա, զոր և յառաջագոյն յայտ արար՝ թէ մարմնոյ խնամ մի առնիցէք. և չզադարեաց յայսմ, այլ զայլն ածեալ ասէր՝ թէ առ 'ի ցանկութիւնս: Սոյնպէս և աստ խրատէ ասելովն թէ զարմանն տանել մարմնոյ պարտական եմք, այլ ոչ եթէ ըստ մարմնոյ կեալ. այսինքն զի մի արասցուք զնա տէր կենաց մերոց. եղև նա 'ի պէտս կարևորս, այլ ոչ եթէ վերակացու և առաջնորդ կենաց մերոց, այլ հոգւոյն օրինաց ընթացունակ.

Նա ասաց իբրև անձրևաբերեալ զայս առ երկոսեան և կազմեալ զմեզ պարտականս հոգւոյն, ասաց ցուցանէ թէ ում եմք պարտապան, այսինքն երախտաւորացն: Նա զայս ոչ եթէ զանցելոց զերախտաւորացն ասէ, որ մանաւանդ զարմանալի է խնամատարութիւն նորա, այլ զհանդերձելոցն ասէ: Թէպէտ և բաւականք առաջիններն էին, բայց սակայն չդնէ առ այժմ զայն և ոչ ձայնէ ինչ զնմ-

1 Ի լուսանցս օրինակին ծնէ̃նէ:

րաւ երախտեացն զայնմանէ, այլ ի հանդերձելոցն մի-այն. քանզի եւ ոչ տուան իսկ մխիթարանայն այս երախտիք որպէս հանդերձեալքն եւ որոց աչքն ունիմք որ սակար են զարթուցանել զաղաղումն:

Ապա իբրեւ զայս ասաց եւ, նախ 'ի տրտմականացն երկեցուցանէ, այսինքն 'ի չարեացն որ գործեցան մեծաց գեռ ըստ մարմնոյ կեցին. այսպէս ասէ. "Զի թէ ըստ մարմնոյ կեցէք, մեռանելոց էք": Զմահն զայն ակնարկելով մեզ անմահն՝ որ 'ի գեհենին տանջանքն եւ պատուհասքն են: Այլ եթէ ոք հաւատացեալ քննիցէ, տեսցէ իսկ զտանէ զայնպիսին մեռանել, զոր եւ յառաջագոյն յայտնապէս ձեզ գիրն ցուցաք: "Իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեցջիք": Տեսանե՞ս զի ոչ եթէ վասն բնութեան մարմնոյ ասէ, այլ վասն մարմնաւոր գործոց. քանզի եւ չասաց իսկ, թէ հոգւով կեցջիք զբնութիւն մարմնոյ սպանանիջիք, այլ թէ զգործս. մանաւանդ թէ եւ ոչ զգործս իսկ զամենայն, այլ զչարիսն միայն: Զորս եւ յառաջագոյն իսկ յայտ արար. թէ զայս առնիցէք, ասէ, կեցջիք: Արդ տես այսր ա-մենայնի իսկ ունէր փոյթ ցուցանել. Քանզի եւ առ-աւելն եւ լսելն եւ բարբառելն եւ գնալն՝ այս ամենայն գործք են. եւ եթէ զայս սպանանիցեմք եւ զկեր-ցեղս 'ի կերոյ, գտանի թէ քան զհարիւրապատիկս եւս զբեռ-նեալ զդատապարտութիւնս: Այլ զի՞ր, ասէ, զգործս հոգւոյն սպանանել. որ 'ի չարիսն զմեզ շարժեն եւ 'ի մեղսն տանիցեն, զորս եւ սպանանել զմտաւ չէ հնար առանց հոգւոյն: Իսկ զայլսն թէ սպանանիցեմք, զանձինս սպանանեմք, իսկ զմեղսն վասն հոգւոյն օրինաց սպանանեմք. քանզի յորժամ սա մերձ է առ մեզ, զամենայն, աւելորդութիւնս նուաստացուցանէ եւ ցածուցանէ եւ զախտսն ընթացրէ, եւ ոչ ինչ է որ մեզ 'ի մեռելոյ յառնիցէ: Տեսանե՞ս որպէս 'ի հանդերձելոցն զմեզ յորդորէ, որպէս յառաջին իսկ առաքէ, եւ ցուցանէ ընդ մեզ պատուիրանս եւ ոչ լինելոց երախտեացն: Զի, ասէ, այս միայն ուղղութիւն հոգւոյն որպէս զի զառաջինն զմեղսն միայն եթող, այլ եւ 'ի հանդերձեալսն զխրակացին զմեզ ձեռնտուել եւ անմահ կենացն արժանաւոր զմեզ առնել:

Ապա եւ այլ ինն վարձ յաւելու ասելովն. "Զի որք

հոգւոյն իմոյ վարկին, նոքա են, ասէ, որդիք իմ„: Արդ զարմանալի և զմեծագոյն պատիւ քան զաստուածոյ ցուցանէ: Այսպէս որոյ և չասաց թէպէտ լոկ թէ որ հոգւոյն իմոյ կեանս, այլ թէ որք հոգւոյն իմոյ վարկին: Այսպէս ցուցանել այսու՝ թէ նա եղիցի ամէն կենդանի մերոց, որպէս նասուվարին նաեւ բնու և կատարեալքն երանաւէտ ձիոյն: Բայց ոչ եթէ զմարմինս միայն, այլ և զնոյն խերն պշտանչն ազատակ յամենայն 'ի չար կարծեաց: ոչ զի մի առաջնորդեացէ շունչն մարմնոյս, այլ զի 'ի հոգւոյ անտի անիցի և նա զիշխանութիւնն և 'ի նմանէն առնուցու զօրութիւն: զի մի 'ի պարզև առաջանոյն վաստահացեալ՝ յետ այնուրիկ ծուլանայցես ինչ 'ի բարւոք կարգաւորութենէն: Խնդրեալ և միրասութիւն առնուցուս, մի ծուլանայցես հոգւոյն վարել յետ այնորիկ: և եթէ ծուլանայցես, կորուսանես զասուեալ քեզ զպարգևն և զորդեգրութիւն զպատերիցութիւն: Այսպէս այսորիկ չասաց թէ որք զհոգւգին առին, այլ թէ որք հոգւոյն վարկին: այսինքն է որպէս զի զամենայն խակ զկրս կենցաղոյս ըստ նորա հրամանացն վարիցեմք, այնու լինիմք որդիք իմ:

Բայց վասն զի զպատիւս զայս Հրէիցն առեալ էր՝ յորժամ ասիցէ "Ես ասացի թէ աստ. իցէք և կամ որդիք բարձրելոյն ամենեքեան„, և զարմանալ թէ "Որդիս ծնայ և բարձրացուցի„, և կրկին՝ թէ "Որդի իմ անդրանիկ Իսրայէլ„, և Պաւղոս ասէ՝ թէ "Որոց որդեգրութիւն„, ապա պատրաստէ այնուհետեւ ցուցանել թէ որչափ 'ի մէջի իցէ այսր և այնր պատուոյ: Թէպէտ և անուանակցութեամբ մի, այլ ոչ եթէ իրօք և գործովք այնոքիկք: Բայց յայտնի զորինակս յաղթութենէն առնէ և 'ի որոց անտի և որ հանդերձեալն է լինել: և զհամեմատութիւնս իմն 'ի մէջ բերէ թէ զինչ առաջինն էր որ նոցայն առեալն էր և զինչ այժմս հոգւոյն ծառայութեն: վասն որոյ 'ի սոյնս յարեալ ասէ: "Ոչ ի ոչ առէք, ասէ, զհոգին ծառայութեան միւսանգամ յերկիւղ„: Ապա թողեալ խորև զխտրոց իմն 'ի մէջի՝ ասէ այսպէս: "Առէք զհոգին ազատութեան„: և զեւս մեծագոյնն յաւել՝ թէ "զորդեգրութեան„: Այսպէս զի այն յիմաստութիւն իմն հակառակ՝ ասաց: "Այլ առէք զհոգին որդեգրութեան„: Այս յայտնի է, խակ հոգին ծառայութեան անգայտ է: կարեւոր էր զայս յայտ-

Digitized by Google

նապէս ցուցանել, այլ ոչ չքաւորեալ 'ի պատուհասէն. վասն զի չընկալան Հոգի սուրբ ժողովուրդն Հրէից: Եւ արդ այս իցէ, ասէ, զգիրն այսպէս կոչեաց, քանզի Հոգեւոր էր. որպէս և զօրէնսն Հոգեւոր անուանէ և զջուրն որ 'ի վիմէն և զմանանայն. „Քանզի ամենեքին, ասէ, զնոյն Հոգեւոր կերակուրն կերան և ամենեքին զնոյն Հոգեւոր ըմպելի արբին„: Եւ զվէմն առա Հոգեւոր անուանէ ասելով. „Ըմպէին 'ի Հոգեւոր վիմէն որ երթայր ընդ Հետ նոցա„: Քանզի 'ի վեր քան զբնութիւնն էր ամենայն որ կատարէր, վասն այնորիկ Հոգեւոր անուանեաց զնա, և ոչ եթէ Հոգի առին որք Հաղորդէին այնմիկ յայնժամ:

Եւ զխնդիր յայնժամ գիրն այն գիր ծառայութեան էր. անցանէ իսկ ընդ բոլոր կարգաւորութիւնս, և առաջնէ զայս յայտնի: Վասն զի կշտամբանքն անդէն առասս մերձ, և վարձքն անդէն երագ, թէպէտ և փոքր և չափով էր. զոր օրինակ և որք զՀանապազորդ ռոճիկսն տայցեն իւրեանց ծառայիցն, այլ առկայն աՀն և երկիւղն Համապազորդ առաջի աչաց անձէ, սոյնպէս և նոքա ունէին զմարմնոց որդութիւն և ժուժկալութիւն մինչև 'ի գործոն: Իսկ մերքս ոչ այսպիսի ինչ, այլ և զմիտսն և զխորՀուրդսն պարտապան եմք մաքուր ունել. քանզի չասաց մեզ թէ մի ապականեր միայն, այլ թէ և բարկանալ ես մի: Եւ դարձեալ չասաց թէ մի շնար միայն, այլ թէ և նայիր մի անպատեՀս. որպէս զի մի առ աՀի գեՀեննին անկցեմք զայս, այլ ցանկութիւն իսկ զիրաւն վարկանիցիմք. քանզի այն իսկ կամք են առաքինութեանն և այլոցն ուղղութեանցն: Քանզի ոչ աւետարանեցաւ մեզ երկիր որ բղխէ զկաթն և զմեղր, այլ միածնին ժառանգակիցս առնէ, 'ի մերձակայից զմեզ Հրաժարեցուցանէ: Եւ մանաւանդ զայն խոստացաւ տալ մեզ զոր որք որդիքն եղեն այ՛ ընդունելոց են, անտանելի և մարմնական ինչ ոչ, այլ ամենայն Հոգեւոր: Սակայն թէպէտ և անուանէին և նոքա որդիք, այլ իբրև զծառայս. իսկ մեք ազատք եղաք յորժամ զորդեգրութիւն ընկալաք և երկնից եւս ակն ունիմք. և նոցա 'ի ձեռն այլոց խօսէր, իսկ մեզ ինքն անձամբ. և նոքա աՀիւն և դողութեամբն յամենայն ժամ տանջէին 'ի վարսն, իսկ մեք յօժարական Հոգւով և ցանկութեամբք առնեմք:

Այլ զայս յայտ արտաքինք առնէին որք և քան զգրոց հրամանս ևս զանցանէին: Նոքա որպէս փորձկանք և ապաշնորհք ոչ երբեք դադարէին 'ի տրտնջելոյ, իսկ մեք 'ի հաճութիւնս հօրն նայիմք. նոքա և յարժամ զերախտաւորն ընդունէին՝ հայհոյէին, իսկ մեք և յարժամ վշտանաւորքն գոհանամք. թէպէտ և չարչարիմք յարժամ մեղանչելոցն, սակայն և այսմ ընտրութիւն կայ. քանզի ոչ որպէս նոքայն խոշտանգեալք և այրեցեալք և ծայրակոտոր լեալք 'ի քահանայիցն, ոչ եթէ այնպէս զարձուցանեմք և մեք զյանցաւորսն, այլ բաւական է այսպիսումն արտաքսել 'ի հայրական սեղանոյս և յերեսաց 'ի բաց մերժեալք սակաւ ժամանակօք ինչ: Այլ հրէիցն բանիւք միայն էր որդեգրութիւնն, իսկ աստ և իրքն իսկ զհետ եկին, միայն որ 'ի մկրտութեանն սրբութիւն լինի, և դարձեալ հոգւոյն տուութն և այլոց բարութեանցն բաշխումն: Այլ զնոցայն այսպէս կատարականաց առնեմք, և զմերս իրքն զպարեստահմիկ զօք ցուցանեմք և զնոցայն խառնեմք, վասն զի առ երկիւղի գործէին զա̃մ. իսկ մերս հոգևոր որդեգրութիւն, այնպէս և ծառայութիւնս մեր երևի թէ այլ ինչ իցէ, և զի ունիմք զհոգի որդեգրութեան. զո՞ր ինչ. զայն՝ “Որով աղաղակեմք աբբայ հայր„: Այլ որչափ ինչ իցէ այս՝ գիտեն խորհրդականք որք խորհրդապէս կատարեն յաղօթս զխորհուրդս, զի նախ զայս բան հրամայեն 'ի կիր արկանել:

Այլ արդ զի՞նչ, ասէ, միթէ նոքա չկոչիցե՞ն հայր զա̃ծ. չլսիցե՞ս Մովսէսի որ ասէն թէ “Թողեր զա̃ծ որ ծնաւն զքեզ„. և կամ դարձեալ Մաղաքիա զի՞նչ նախատէ զնոսա և ասէ. “Ո՞չ ա̃ծ մի արար զձեզ և հայր մի է ձեր ամենեցուն„: Թէպէտ և զայս կամ աւելի քան զայնս ասիցէ, սակայն չգտանեմք ուրեք թէ այսպիսի բանիւք կարդային առ ա̃ծ և ոչ աղօթէին այսպէս: Իսկ մեք ամենեքին և քահանայք և աշխարհականք և իշխանք և որք ընդ իշխանութեամբն այսպէս տամք հրաման աղօթելոյ, և զայս զձայն առաքեմք յառաջ յետ զքանչելի երկանցն այնոցիկ և զարմանալի և միայն հրաշափառագոյն ծննդեանն:

Այլ թէպէտ և կոչէին երբեմն և նոքա յիւրեանց միտաց միայն, իսկ առ շնորհօք 'ի հոգևորական ազդմանէն միայն: Վասնզի որպէս հոգի իմաստութեան է ս-

րով յիմաստքն իմաստունք գտան, և այս յայտ 'ի վար- դապետութենէ անտի լինի. այլ և հոգի զօրութեան է՝ ըստ այնմ զի ոսկաղքն մեռեալս յարուցին և դևս հա- լածականս տանէին, և հոգի շնորհաց և բժշկութեան է և հոգի մարգարէութեան և որպէս հոգի լեզուաց է, նոյնպէս և հոգի որոշեգրութե: Եւ որպէս 'ի մարգարէս հոգի մարգարէութէ է, որով որք ունէին զնա յառաջագոյն ասէ զհանդերձեալսն, և ոչ եթէ ինքն յինքնանէ մնաց ինչ բարբառէր, այլ 'ի շնորհաց անտի որով զազդուածն ընդունէր, նոյնպէս և հոգի որոշեգրութեան՝ որք ունէին զնա՝ հայր կոչէին զնա 'ի հոգւոյն ազդմանէ. Իսկ ապա եթէ ոք կամի ցուցանել սերտ զանազան որոշեգրութեանն, զոր և յերբայեցւոց լեզուն 'ի կիր արկ. և ոչ ասաց մի- այն հայր, այլ թէ աբբայ հայր՝ որ սերտ իսկ որդւոց ձայն է առ հայրս.

Եւ արդ իբրև ասաց զընտրութիւն տարբերութեանց 'ի շնորհացն որ տուան յառաքելութենէն, ցուցանէ ապա և այլ օրինակս իմն զատանել որոշեգրութեանն զայսո- բիկ. զորպիսի ինչ: Զայս զնոյն ինքն զհոգին ասէ թէ “վկայէ հոգւոյս մերում թէ եմք որդիք այ”: Եւ ոչ եթէ միայն 'ի բանից յանմանիցս ցուցանել զորոշեգրու- թիւն, այլ և 'ի պատճառէն սուտի ձայնս ծնանի. Վասն զի հոգւոյն ազդմամբ զայս ասեմք. որպէս և այլուր ևս յայտնագոյնս ցուցանէ՝ թէ “Առաքեաց այ զհոգի որ- դւոյ իւրոյ 'ի սիրտս մեր որով աղաղակեմք աբբայ հայր”: Զինչ է այն զոր ասէ՝ թէ ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում. Այսինքն թէ՝ Մխիթարիչն է, ասէ, որ զշնորհսն ետ մեզ. քանզի ոչ եթէ շնորհացն ձայնն, այլ տուչին շնորհաց մխիթարչին. քանզի նա ուսոյց զմեզ այսպէս բարբա- ռել 'ի ձեռն շնորհացն: Եւ արդ զինչ երկբայութիւն է այսուհետև. զի եթէ մարդ ոք էր կամ հրեշտակ և կամ հրեշտակապետ և կամ այլ ոք 'ի վերին զօրու- թեանցն որ զայս մեզ խոստանայր, էր ինչ արդեօք երկ- բայանալոյ արժանի. իսկ ապա եթէ վերին էութիւնն և անճառելի բնութիւնն շնորհեաց մեզ զայս և այսպէս աղօթել, որ շնորհեաց մեզ մխիթարիչն՝ մեզ վկայէ, ապա որպիսի ինչ երկբայութիւն կարիցէ մտանել 'ի մեզ վասն պատուոյն: Զի եթէ այր թագաւոր յօ- ժարամ պատուով զոք ձեռնադրիցէ և քարոզ առաջի առաջ-

ցէ կարգաւ և պատուովք յառաջնեցունց, չիցէ որ յա-
պատուաւորացն ընդդէմ կալ և անպատուել. որչափ եւս առաւել յորժամ զմեզ ա̄ծ:

«Իսկ եթէ որդիք, ասէ, ապա և ժառանգք»: Տեսանե՞ս որպէս առ փոքր փոքր աճեցուցանէ զպարգեւսն: Վասն զի մարթի լինել որդի և ժառանգ ոչ. և քանզի ոչ ամենայն որդիք ժառանգք լինին, վասն այնորիկ յարեաց զայս՝ թէ և ժառանգք: Իսկ Հրեայքն յորժամ և ոչ զայս ունէին զորդեգրութիւն, 'ի ժառանգութենէ իսկ արտաքս ընկեցեալ գտանէին, որպէս և առաց իսկ առ նոսա թէ «Զչարս չարաւ կորուսցէ և զայգին տայցէ 'ի ձեռս այլոց մշակաց». և յառաջ քան զայս 'ասէր իսկ առ նոսա, թէ «Բազումք եկեսցեն յարեւելից և յարեւմտից և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Իսահակայ և ընդ Յակոբայ. իսկ որդիք արքայութեանն արտաքս ընկեսցին»: Բայց ոչ յայս վայր միայն, այլ զմեծագոյնն դնէ. զորպիսի՞ ինչ, թէ ա̄յ ժառանգ եմք. վասն որոյ յարեաց 'ի սոյն ասէր, «Ժառանգք ա̄յ»: Բայց և որ եւս առաւելն է՝ թէ «Ժառանգակիցք Քրիստոսի»: Տեսանե՞ս որպէս հակառակեցաւ մինչև մօտ ընմեզ առ տէրն տարաւ: Այլ վասն զի ոչ ամենայն որդիք ժառանգք ասեն, ցուցանէ թէ եմք որդիք և ժառանգք: Վասն զի ոչ է ամենեցուն ժառանգ լինել. իսկ մեք մեծամեծաց իրաց եմք ժառանգք, և ցուցանէ թէ ունիմք զայս և եմք ժառանգք ա̄յ. և դարձեալ զի ժառանգքն ա̄յ լինին, այլ և ոչ միածնին ժառանգակիցք, ապա ցուցանէ թէ մեք և զայս ունիմք: Այլ հայեաց յիմաստութիւնն. քանզի զտրտմականսն ամփոփեաց այնու զի ասէրն՝ թէ զինչ փորձիցեն որք զմարմնոյն կեանս կեան, որպիսի ինչ թէ մեռանելոց են, վասն զի բաւէ եհար զհեշտականսն, ապա յանդորր բազում հանէ զբանն և ցուցանէ զպարգեւսն: Թէ և որդի լինել անբաւ էին շնորհքն, զմտաւ ած թէ որչափ եւս յորժամ և ժառանգակից լինիցիմք:

Այլ ցուցանէ թէ ոչ շնորհացն է միայն պարգեւն, և առնէ իսկ անդէն նմին հաւատարիմ զասացուածն. յարէ 'ի սոյն. «Զի եթէ չարչարիցիմք ընդ նմին, և փառաւորիցիմք»: Զի տրտմականացն հաղորդ գտաք նմա, այլ և հեշտականացն եւս առաւել. այսինքն է զի թէ

մինչ չէր եւս ուղղութիւն գործեալ եւ այնպիսի չար- հաց հաղորդ գոլով, իսկ յորժամ եւ աշխատեցաք այ- պէս եւ չարչարեցաք՝ զփառս ոչ գտանիցիմք հաղորդ։ Այս եցոյց թէ փոխանակողք իմն են կրկին, եւ հաւատարմու- գոյն առնէ զի մի որ հակառակեսցէ, եցոյց դարձեալ եւ չարհացն զօրութիւն ունելով. որպէս որք հակառակին կայցեն, հաւատարիմք գտցուք, եւ որք ընկալաք մի ա- մաչեսցուք որք զպարգեւսն ամբողջ պահեմք. եւ զի ասա- ցիս թէ քան զմեզ որք փոխին առաքելոյ, նա յաղթէ մեզ. Այս զիէնն յայս առնէ ասելովն թէ "Զչարչարիմք ընդ- նմա զի եւ փառաւորեսցուք"։ իսկ զմիւսն յաւելեալ ա- սէ՝ թէ "Զի ոչ արժանի չարչարանք այժմու ժամանա- կիս առ հանդերձեալ փառսն որ յայտնելոց է ՚ի մեզ"։

Իսկ յառաջիկայն զբարուցն ուղղութիւն պահանջէր զհոգեւորականն զոր ասէր՝ թէ ոչ պարտիմք ըստ մարմ- նոյ կեալ, զորպիսիս մինչ որպէս զի բարկութեան եւ ցան- կութեան, ընչից եւ սնափառութեան եւ չարակնութեան յաղթեսցուք։ Իսկ աստ զի վասն նորին իսկ չարհացն յիշեաց զատուելոցն եւ զհանդերձելոցն, եւ վերացոյց եւ բարձրացոյց յուսովն եւ մերձ առ Աստուած կացոյց եւ ժառանգակից եցոյց միածնին, ապա այնուհետեւ վս- տահ է ՚ի նոսա եւ ՚ի տրտմականսն մեծանալ։ Քանզի չէ իսկ զոյգ որ ՚ի մեզ տխուրս կրէին՝ յաղթել եւ այժմ տանջանաց, առնել փորձութեանցն սովոյն, հալածա- նացն, կապանացն, շղթայիցն, զվարելն այսր անդր. որ տառապել եւ քաղց եւ առաքինի ոգւոց է տանել այսպիսի իրաց։ Այլ եւս որպէս միանգամ ՚ի բաց բառնայ զմե- ծամեծութիւն աշխատելոցն. յորժամ ասէ զյաղ- թութիւնն աշխատութեանցն մեծապէս գործեալ, ա- ռաւել[1] յորդորէ, եւ ոչ թողլ տայ մնալ մեծամեծել. թէպէտ եւ յաղթեմք, ասէ, այլ առաւելի կայ պսակն։ Այլ այլուր այսպէս ասէ. "Քանզի առժամայն թեթեւ նեղութեանս մերոյ ըստ առաւել մեծութեան զծան- րութիւնն զայն ՚ի փառս գործէ մեզ"։ Այլ քանզի առ փիլիսոփայագոյնսն էր բանն նորա, իսկ ապա զթեթեւա- գոյնսն ասէ, որպէս զի սփոփեսցէ զնոսա փոխանորդաւ

1 Գաղափարք յօրինակին առաւել յորդորէ, եւ ոչ թողլ տայ. եւ զկնի նո- այլուր այսպէս ասէ. յաւելեալ ՚ի յուսնեն։

հանդերձելոցն։ Նա՛ չասաց եթէ առ հանդերձեալն հան-գըստականն, այլ որ եւս մեծն է՝ թէ առ հանդերձեալ փառսն. քանզի որ հանգիստ է, յայտ է թէ փառք. եւ որ փառք են, յայտ է թէ եւ հանգիստ։

Նա ասաց վասն զի հանդերձեալ ասաց, ցուցանէ թէ առհա է իսկ. վասն զի չասաց թէ որ հանդերձեալն է լինել, այլ որ հանդերձեալն է յայտնել. որպէս եւ այ-լուր յայտնապէս ասէ՝ թէ "կեանքն մեր ծածկեալ են ընդ Քրիստոսիւ յԱծ"։ Արժան է այսուհետեւ վասն նորա, զի կամի այնպիսիս որք անկն ածնիցին վասն աշխա-տութեանցն առնուլ. իսկ եթէ հանդերձելովքն տրտ-մեցի, առաւել այսուհետեւ իսկ պարտ է ուրախ լինել։ Որպէս զի մեծ ինչ է եւ անհասանելի եւ գերազանցէ քան զա-մենայն միտս եւ զմերձակայս եւ անդր համբաւի։ Քան-զի եւ ոչ ընդ վայր ինչ ասաց՝ եթէ չարչարանք ժամա-նակեանս. այլ զի ցուցցէ թէ ոչ որպիսութեամբն յաղ-թէ այն։ Նա այս զինչ իցէ զի փակէ առ ժամանակեան չարչարանօքս. որպէս զի ժառանգորդք դոցունք հանդեր-ձեալ բարութեանցն, առ անմահկանացուն ձգէ ըղ-բանս. զոր բանիւ չունէր յանդիման կացուցանել, յա-ղագս այնորիկ որ ինչ մեզ ծանօթն է փառաց անուանն՝ զայն անուանեաց. զի թէ ծայր ամենայն բարութեանց եւ գլուխ այս թուի լինել։ Ներացուցանէ եւ այլ պէս զլսողսն, եւ յարարածոցս իսկ աճեցուցանէ զբանն եւ եր-կուս կազմէ վասն հանդերձեալ ասացուածին, եւ վասն կարծեաց մերձակայիցս եւ վասն ցանկանալոյ հանդեր-ձելումն. եւ երրորդ յետ այսորիկ, մանաւանդ թէ եւ ա-ռաջին իսկ, զի ցուցցէ թէ որչափ ինչ փոյթ է այ վասն ազգի մարդկան, եւ թէ որպէս զմեր բնութիւնս պա-տուեաց։ Նա յետ այսորիկ զամենայն փիլիսոփայական աւանդութիւնն հանդերձ աշխարհաւս այսուիկ ծանոյց նոցա, որպէս զարդխոստայն ինն եւ զողղայոյ զաղփաղփ-մունս՝ այսոքիւք իսկ ՚ի վայր կործանէ զնոցա զաւանդու-թիւնսն։ Նայլ զի եւս յայտնագոյն լիցի այս, նմին իսկ առաքելական ձայնին լուիցուք։

"Քանզի ակնկալութիւն արարածոցս, ասէ, յայտ-նութեան որդւոյն այ սպասէ. քանզի ընդունայնութե՛ արարածք հնազանդեցան ոչ կամաւ, այլ յաղագս այ-նորիկ որ հնազանդեցոյցն յուսով"։ Նա զոր ասէն

արտաքինաբնիչ է, թէ արարածքս այս յոյժ երկնային արա-
ւնեն և ունին ունելին բարութեանն զոր այժմ իսկ տես-
ցուք. «Նմանգի յոյժ առաւելուն անճառելութիւն է։ Այլ և
յայտնապէս իսկ էր՝ զայն եղ, և 'ի կերպարանս ամենայն
զամենայն զաշխարհս, զոր և մարգարէքն յառաջագոյն
ասացին՝ գետոց ծափս հարկանել, և լերանց և բլրոց
խայտալ. ոչ զի զայդպիսիկ չնչաւորս խնդասցուք, քանզի լի-
ցի, և կամ նոցա խորհուրդ իմն օգնութեան առասցուք,
այլ թէ անշունչքն անգամ զհետ երթանցեն և հնա-
զանդիցին։ Այն այս ինչն և 'ի տրամաբանութեան բնական ան-
գամ զտանելի, յորժամ այգիք տուգ. ունիցին և գինի, և
լերինք և աշխարհաւանք սնանիցին ողջագունն. այսպէսք պա-
ռաւելութիւն չարեացն 'ի մեր տեսցուք։ Ի նոցին գէտն
և առաքելոյ այժմ նմանեցուցանէ զարարածս և ասէ՝
հեծել նոցա և երկնել. ոչ եթէ հեծութիւն իմն լինի
յերկրէ և յերկնից զայս ասէ, այլ զի զհամօրերծելոց բա-
րութեանց յուցանէ զառաւելութիւնն և զքանակութիւնն
որում առնուն ունելիս և ազատելոց 'ի չարեացն յոր ունելիքն։
«Նաև զի ընդունայնութեան արարածքս, ասէ, հնա-
զանդեցան ոչ կամաւ, այլ վասն այնորիկ որ հնազան-
դեցոյցն զնա»։ Զի՞նչ որ ասէն՝ թէ ընդունայնութեան
հնազանդեցաւ. ապականացու եղեն, ասէ. Ընդէ՞ր և
էր վասն. վասն քո մարդոյդ։ Այսն զի մարմինն ու-
նէր մահկանացու և չարչարելի, և երկիրս զանէծս ըն-
կալաւ, և փշաբեր և տատասկաբեր եղև։ Իսկ զի եր-
կինք ընդ երկրիս հնացան, և զի 'ի լաւագոյն 'ի կարգն
յետոյ դարձցին՝ լուր մարգարէին որ ասէ՝ «Ի սկզբ-
բանէ դու զերկիր հիմնեցուցեր, և գործք ձեռաց քոց
երկինք են. նոքա կորնչին և դու մնաս կաս. ամենեքին
իբրև հանդերձ հնասցին և իբրև զվերարկու գալա-
րեսցես զնոսա և փոխեսցին»։ Եւ Եսայի իսկ զայսմ
յայտ առնէ ասելովն թէ «Հաստատեաց զերկինս 'ի
վեր և զերկիր 'ի խոնարհ, զի երկինք իբրև զծուխ
հաստատեցան և երկիր իբրև զհանդերձ հնասցի և
բնակիչք նորա զոյգ ընդ նմին կորիցեն»։ Տեսանե՞ս որպէս
ընդունայնութեան ծառայեցին արարածքս, որպէս ապա-
ծեալ թէ զնորոգ առաքելոցն յապականութենէն։ «Նաև
զի մին ասէ՝ թէ «իբրև զվերարկու գալարեսցես զնո-
սա և փոխեսցին», իսկ Եսայի՝ թէ «բնակիչք նորա

նոյնպէս կործանեսցեն ,,։ Ոչ զապականելն զկորուստն ասէ. քանզի և ոչ ընտանիքն նորա՝ այսինքն մարդիկ՝ այսպիսի ինչ կրեն, այլ զանձամանանակերպս, և յետ այնորիկ յանապականութիւն փոխեսցին որպէս և արարածքս, վասն որոյ և զամենայն ինչ առաջ զի զայս յայտ արասցէ. որպէս և Պաւղոս յառաջագոյն ասէր։ Բայց սակայն և այժմ վասն նորին ծառայութեան Քաւեալ ասէր, և ցուցանէ թէ եր վասն այս եղև, զնէ և զպատճառն։

Եւ արդ զիարդ, միթէ խարդախեցաւ ինչ յամենքե զի զայսպիսիսն կրեաց. և ոչ երբէք, այլ վասն իմ միայն եղև. և արդ եթէ վասն իմ եղև, որպէս և եղևն, և արդ զինչ զրկանիցի յորժամ եսն ուղղիցիմ։ Նաև ոչ եթէ վասն արդարութեան և անիրաւութեան քանի պէտք ինչ իցեն առ անշունչսն և անզգայսն։ Բայց սակայն Պաւղոսի կամեցեալ զիրսն 'ի դէմս ածել, 'ի կերպարս զարդարելոյ զբանն, բայց սակայն Ջինոյ և այլոցն բանիւք սփոփել զլսողն։ Որպիսիւք ինչ և կամ զինչ իցէ զօր ասէն։ Չարչարեցաւ, ասէ, ախտացաւ վասն քո և ապականացու եղև. այլ սակայն ոչ ինչ զրկեցաւ, քանզի զի անապականն լինի զարձեալ վասն քո։ Ոչ յորժամ ասիցէ թէ ոչ լուայ զհնազանդութիւնն, մի կարծիցես թէ զարհուրելս կարծիս եցոյց ասելովն. այլ զի ուսցիս թէ 'ի Քրիստոսի խնամոց ամենայն եղև ամենայնն, և ոչ եթէ յարարածոց ինչ ուղղութէ։ Իսկ կամ որով յաւել զորմէ ասիցէն՝ թէ զի "և ինքն իսկ արարածք ազատեսցին ,,. զինչ է թէ և ինքնանք։ Ոչ եթէ զամիայն, ասէ, այլ որ քան զքեզ նուաստն և 'ի վայրն է, և ոչ ունին հաղորդութիւն խորհրդոց և զգայութեց, և նոքա հաղորդք զտանին քում բարութեանցն։

"Ի ազատեսցին, ասէ, 'ի ծառայութենէ ապականութեան ,,։ Այսինքն է ոչ ևս մնայ յապականութեան, այլ զհետ գայ քոյդ նորոգութեան մարմնոյդ։ Իսկ զոր օրինակ 'ի քո լինելն ապականացու՝ և արարածքս ապականացու եղեն, նոյնպէս և 'ի քո յանապականութիւնն կարգելով՝ և նոքա ընդունին զնոյն զօր և ցուցանէ իսկ ասելովն՝ թէ "Յազատութիւն փառաց որդւոցն այ ,,, այսինքն է թէ 'ի ձեռն ազատութեանն։ Ոչ օրինակ եթէ զայնեակ որ զորդի թագաւորի մնուցանիցէ, և յորժամ նա 'ի հայրենի իշխանութիւնն ե-

ւանիցէ, ընդ նմին և զայնոսիկ զորս վայելէ 'ի բարու-
թիւնս, որպէս և արարածքս, ասէ: Տեսանես ըզ-
մարդն ամենայն ուրեք յառաջ պատուեալ և վասն նո-
րա զամենայն եղեալ: Տես դարձեալ որպէս օտարէ
զաշխատեալսն և ցուցանէ զնոյն զանճառ մարդասիրու-
թիւնն: Դու, ասէ, վասն քո չարչարիս. իսկ արարած-
քըս ոչ եթէ վասն իւրեանց ինչ, այլ վասն քո: Եւ ոչ
եթէ միայն օտարէ, այլ և հաւատարմացուցիչս ինչ զա-
սացեալսն ցուցանէ: Զի թէ արարածքս յաւուր՝ որ
վասն քո եղեն ամենայն, ապա եւս առաւել դու. որով
արարածքս վայելեն 'ի հանդերձեալ բարութիւնն, այս-
ինքն է յանապականութեանն: Որպէս և մարդիկ
յորժամ որդին հանդերձեալ իցէ երեւել 'ի պատիւ
ինչ, և ծառայիցն պայծառ հանդերձս ագուցանեն 'ի
փառս որդւոյն, սոյնպէս և Աստուած անապականու-
թիւն զգեցուցանէ արարածոցս յազատութիւն փառաց
որդւոյն:

“Գիտեմք եթէ արարածք ամենայն հեծեծեն և երկ-
նեն մինչեւ ցայժմ”: Տեսանես որպէս յանդիմանէ ըզ-
լսողսն չլինել 'ի վայր քան զարարածս, և մի յաժա-
մանակեանսն միայն յամել: Եւ ոչ եթէ միայն զայս
չունել յանձին չէ պարտ, այլ և հեծել եւս վասն հան-
դերձեալ գնալոյն աստի. զի թէ արարածքս զայս առնի-
ցեն, ապա մանաւանդ քեզ որ բանիւդ ես պատուեալ:
Այլ չեւ եւս է մեծ առ 'ի յանդիմանութիւնն. ապա և
զայն եւս յաւելու՝ թէ “Ոչ միայն, այլ և մեք իսկ որ
զպտուղ հոգւոյն ունիմք, անձամբ յանձինս զմեզ հե-
ծեմք ընդ նոսա”. այսինքն է որ զհանդերձելոցն ճա-
շակս առաք: Թէպէտ և քարեղէն որք իցէ, ասէ, բա-
ւական են առաւելքն իսկ զարթուցանել զնոսա և 'ի
մերձակայէս հրաժարեցուցանել և առ հանդերձեալսն
թռուցանել և մեծամեծս վարկանել զպարգեւսն, և որ
այսպէս և այսպիսի ինչ պտուղն իցէ: Եւ եթէ պտուղն
այնպէս ինչ է՝ մինչեւ մեղացն թողութիւն նորա եղեւ,
և արդարութիւն սերմանեցաւ և սրբութիւն ժամանե-
ցին, իսկ յայնժամ զդեւս հալածեսցեն և զմեռեալս յա-
րուսցեն, ստուերիւքն միայն և հանդերձիւքն զախտս
բժշկէին, ապա զմտաւ ած թէ [illegible] ինքեանց հա-
չափ ինչ: Իսկ եթէ արարածքս որ 'ի բանէ զրկեալ են,

և ոչ ինչ զխտոյեալ[1] այսպիսի իրք՝ հեծեծեն, ապա մե- նաւանդ բազում անգամ մեզ պարտ է հեծել։

Այլ զի մի՛ տայցէ պատճառս գտանել հերձուածո- ղացն՝ թէ զարարածս ինչ չար համարի, հեծեծեմք ասէ, ոչ եթէ զմերձակայսն ինչ ամբաստանեմք, այլ 'ի հան- դերձեալսն ձեպիմք. քանզի յայտ արար ասելովն՝ թէ "Որդեգրութեան ակն ունիմք,,։ Ո՜ ինչ գործես, ասա ինձ, 'ի վեր և 'ի խոնարհ զնոյն յեղյեղուիր գոչելով համապազ՝ թէ եղաք իսկ որդիք, և այժմ յուսով ասես զայնպիսի բարութիւնսն, և գրես թէ պարտ է ունել ակն։ Այլ արդ կամեցեալ զայսպիսի մտածութիւնս ուղ- ղել՝ ասէ. "Ո՜ փրկութիւն մարմնոց մերոց,,. այսինքն զկատարեալ զփառսն։ Այժմ անյայտ են, ասէ, մեր իրքն մինչև 'ի վերջին շնչոյն ժամ. քանզի բազում էին որդիք և գտան անշնորհք և գերիք։ Իսկ ապա եթէ քաղցր յուսովն զերծանիցիմք աստի, ապա յայնժամ լինին պարգևքն անշարժ և յայտնի ես մեծագոյն, ոչ ես երկուցեալ 'ի մահուանէ և 'ի մեղաց, և ոչ փոփո- խումն ինչ ընդունի. վասն զի յայնժամ լինի հաստա- տուն պարգևն յորժամ և մեր մարմինքս անմահ լինի- ցին և 'ի բիւր ախտից ազատանան. յայնժամ և փրը- կութիւն է, և ոչ միայն փրկութիւն, այլ չդառնալ իսկ յառաջին գերութիւնն։ Այլ զի մի՛ դարձեալ պար- տասիցիս ինչ յորժամ համապազ փառս լսիցես, և ոչ ինչ յայտնապէս երևի, քանզի փոքր մի մասամբ ակն- արկէ քեզ զհանդերձեալսն փոփոխմամբ մարմնոյդ քո և ամենայն արարածոյս փոփոխմամբ, զոր և յայլուր յայտնապէս ցուցեալ ասէր՝ թէ "Որ նորոգեսցէ զմար- մին խոնարհութեան մերոյ կերպարանակից լինել մարմ- նոյ փառաց նորա,,. և այլուր դարձեալ ասէր. "Յոր- ժամ ապականացուս այս զգեցցի զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն որ գրեալ է՝ թէ ընկլաւ մահու յաղթութիւն,,։ Ցուցանէ թէ յետ ապականութեան մարմնոյս և ամենայն վարք իրացն եղծանին, որ է և այ- լուր եդեալ՝ թէ "Անցանելոց է վայելչութիւն աշխար- հիս այսորիկ,,։

"Քանզի յուսով ապրեցաք,, ասէ։ Այլ զի 'ի հանդեր-

1 Յօրինակին [illegible]։

ձեռամբն շքեղաց զգանձն առեալ ցանն, թուէր թէ մեծամ անցուցանէր ինչ զակար զկտրանն յուսով զնոյն զդարութիւնսն, նախ կարծէ թէ մերձաւորքն տեսանելիք են յայտնապէս, եւ բարձրացեալ ինչ ձեռնտու վասն անուանց շնորհացն, եւ թէ զայնր զպարգեւութեանց առաքէ ինձ ըղձայնուղ. եւ արդ մի զամենայն առանէն խնդրեսցուք եւ մեզ ընկալցուք բարերարհանութեանն մերում, այլ յուսով, ասէ, "քանզի յուսով ապրեցաք": Իսկ զոր առնէն այսպիսի ինչ է. մի, ասէ, զամենայն ինչ աստէն խնդրեսցեմք, այլ եւ յուսալ: Զայս միայն ընծայ մատուցաք մեք՝ հաւատալ նմա համբերեալ խոստմանցն, եւ այսպէս ճանապարհաւ միայն ապրեցաք. եթէ զայս կորուսանիցեմք, զամենայն ինչ զմեր փրկեալ եղծանեմք.

Իսկ արդ հարցանեմ զքեզ, ասէ սա, ոչ բնաւ վտանգ ժուժ մեղաց էիր պարտական, ոչ յուսահատեալ, ոչ զմնձեան իսկ հատեալ էր 'ի մերայ. քո զդատապարտանս, ոչ ամենեքին իսկ չկային քեզ ճանապարհ փրկութեան. եւ արդ իւ ապրեցար, բայց միայն յուսովն ի՞ւ եւ հաւատալ նմա վասն խոստացելոյն եւ վասն առնելոյս, եւ այլ առ եղէ ինչ չկարես ընծայ լինել: Իսկ այսպէս եթէ այսպէս ապրեցար, զնոյն եւ այժմ կալ. զի թէ այսքան բարութիւնս ետ քեզ առանէն, ապա դիւրաւ իմն յայտ է թէ եւ ոչ վասն հանդերձելոցն ստէ քեզ: Զի թէ զմեռեալս եւ զկորուսեալս էառ, եւ զգերիս եւ զթշնամիս բարեկամ արար եւ որդի եւ ազատ եւ արդար եւ ժառանգակից, եւ այսչափ ինչ քեզ շնորհեաց՝ որում եւ ակն ինչ ոք չունէր, ապա երբ յետ այսչափ պատուոյ սիրոյցել զքեզ իւր ընտանեցեալ ատանիլ այսքիկս, ոչինչ իսկ կարծիցես:

Իսկ արդ մի առնիցես ինչ՝ դարձեալ յուսով, դարձեալ աներկբայութեանք, դարձեալ համբերութեամբ. քանզի 'ի սկզբանէ իսկ այսպէս ապրեցար, զայս միայն զօժիտ մատուցեր փեսային, զնոյն եւ այժմ կալ առ քեզ եւ պահեա: Զի եթէ զամենայն աստէն խնդրեսցես, կորուսանես զքո զօրութիւն որով քո փրկեցաւ: Վասն որոյ 'ի նոյնս յարեալ ասէր՝ թէ "Յոյս տեսանելի չէ յոյս. զի որ տեսանէ ոք զի՞ եւս յուսայ. իսկ արդ եթէ զոր ոչն տեսանեմք յուսամք, համբերութեամբ ակն ունիմք": Թէ զամենայն աստէն հանդերձելոց ես խնդր-

րել, ապա զինչ պէտք են յուսոյ։ Եւ արդ զինչ է յոյսն. վստահ լինել 'ի հանդերձեալսն։ Եւ արդ զինչ մեծ խնդրէ 'ի քէն ած, վասն զի ինքն բաղձալին շնորհէ զամենայն բարութիւնս։ Զ՝ի միայն խնդրէ 'ի քէն զյուսալն, որպէս զի և ընծայ լինիցի և զու վասն քոյին փրկութեան, զոր և ախորժելով իմն 'ի սոյնս յարէ. “ Զի թէ զոր ոչն տեսանեմք յուսամք, ասէ, համբերութեամբ ակն ունիմք „։ Զի որ օրինակ զաշխատեալն և զտառապեալն և որ զմիք զվաստակս վաստակեալ իցէ՝ վարձուց ակն ունի և հանգստեան, այսպէս և որ յուսայն՝ պսակէ ած։ Վասն զի համբերութեանդ անուն բազմաց անուն է և բազում ժուժկալութեան. բայց շնորհեաց և զայս յուսացելոյն, որպէս զի մխիթարեսցէ զաշխատեալ հոգին։

Ապա ցուցանէ թէ և 'ի թեթև իրս յայսմիկ 'ի բազում օգնականութիւնս վայելեցաք՝ ասէ. “ Այնպէս և հոգին օգնէ տկարութեանս մերում „։ Քանզի սկիզբն 'ի քէն լինի համբերութեանն, իսկ ապա 'ի կատարումն և յարգ ածել հոգւոյն բաշխման է։ Տեսէ՞ր զի յարուցանէ զքեզ յուսովն, և նովաւ դարձեալ զաշխատութիւնսն թեթևացուցանէ։ Ապա զի և ուսցիս թէ ոչ միայն յաշխատութիւնսն և 'ի ջանսն մերձ էին 'ի քեզ շնորհքն, այլ որ թուինն դիւրագոյնք և թեթևագոյնք՝ և յայս ևս գործակից է քեզ և ամենայն ուրեք պատերազմակից քեզ գտանի, վասն այսորիկ ասէր՝ թէ “ Զոր յաղօթս կամք, որպէս պարտ է չգիտեմք „։ Զայս ասէր որպէս զի ցուցցէ զհոգւոյն սրբոյ զբազում նախախնամութիւնն վասն մեր. խրատէ զնոսա միանգամայն մի կարծել զայն միայն օգուտ որ ինչ 'ի մարդկային միտսն անկանիցի։ Քանզի կարևոր և հարկ էր նոցա որք տանջեալքն և հալածեալքն էին և բիւր դժնդակ չարչարանս կրէին՝ հանգիստ խնդրել, և զայն ևս զպարգև առնուլ յայ և համարէին թէ բարի ինչ է՝ ասէ, մի՛ զամենայն ինչ որ մեզ հաճոյն կարծիցեմք՝ թէ օգուտ այն իցէ. թէպէտ և մեք վարկանիցիմք, սակայն և յայամ կարօտ եմք հոգւոյն օգնականութեան. այսպէս իսկ տկար է մարդ, և առանձին ինքեան կարէ և ոչ ինչ։ Վասն որոյ զնովիմբ իսկ ածեալ ասէր՝ թէ “ Զոր կամքն յաղօթս, ոչ գիտեմք

որպէս պարտն է ,,: Որպէս զի մի անարգեսցէ աշակերտացն անգիտութեամբքն, եղեց թէ և վարդապետքն նոյնպիսիք են: Այլ զի ոչ ասաց թէ ոչ գիտեն, այլ թէ ոչ գիտեմք. և զի ոչ զինչ անելոյ վասն ասաց զայս, յայտնեաց 'ի յաջորդաց անտի: Վասնզի անպատեհ աղօթիւք խնդրէր ուսանել զՔրիստոս. և ոչ զի փափագեցին՝ եհաս ինչ: Այլ վասն խայթ մարմնոյն յորժամ խնդրեաց՝ այսպիսիքն են միշտքն, զոր բազում անգամ աղաչեաց 'ի բաց առնել, և բարերարին իսկ չեհաս խնդրոյն: Մովսէս և Եղիաս 'ի հնումն վասն պաղատանացն աշխարհին՝ աղաչեաց զնոյն ուսանել, և Երեմիաս վասն Հրէից, և Աբրահամ յաղագս սոդոմայեցւոցն բարեխօս լինէր, և ոչ կարացին հասանել խնդրոյն:

“Այլ ինքն Հոգին բարեխօս լինի վասն մեր 'ի հեծութիւնս անմռունչս ,,: Նոյնպէս իմն է առաւելութեամբ. բազում և պէսպէս պարգեւքն որ գործէին յայնժամ, զազգաբերեաց այժմ և չասաց ինչ: Այսմ արդ կարեւոր համարեցաւ ուսուցանել մեզ զկարգադրութիւնս այնբացն որ 'ի ժամանակին յայնմիկ էին, և այսպէս ապա յայտնի լինէր բանս: Այլ զի՞նչ էր յայնժամ ժամու կարգաւորութիւնն նոցա: Պէսպէս և ազգի ազգի պարգեւս բաշխէր Տէրն միլրտելոցն յայնժամ, զոր և Հոգի իսկ կոչէին. “Վասնզի և Հոգիք մարգարէից, ասէ, մարգարէիցին հնազանդեալ ,,: Սմա ունէր մարգարէութեան շնորհս և յառաջագոյն ասէր զհանդերձեալսն, և միւսն իմաստութեան ուսուցանէր զաստուածն, և այլ ոմն բժշկութիւն և ողջացուցանէր զախտացեալսն, իսկ միւսն զօրութեան և յարուցանէր զմեռեալսն, և այլ ոմն լեզուս և խօսէր ազգի ազգի ձայնիւք. և յետ այսր ամենայնի էր և աղօթիցն շնորհ, զոր և զնա իսկ Հոգի անուանէին. և որ զայսն ունէր, և 'ի վերայ բազմութեանն աղօթս մատուցանէր: Վասնզի բազում անգամ անգիտանամք առ 'ի չգիտելոյ զօգուտն մեր, և որ չէին օգուտ զայն խնդրեմք, առաւ գայլն շնորհք աղօթիցն. իսկ մի ոմն յայնժամ ժամանակի զպարգեւն և զօգուտն առ հասարակ ամենայն եկեղեցւոյն նա մատուցեալ խնդրէր, և զայլոց խրատէր: Հոգի այժմ ասէ զայնպիսի շնորհսն կոչէ, և զշունչն որ ընդունէր զայնպիսի զշնորհս և աղօթէր հեծութեամբ Հոգւոյն: Վասնզի որ այս-

դիմեալ չարչարանաց արժանի լինէր, մնացեալ կայր բազում զգաստանք և հեծութեամբ, որպէս և մինչև անկանէր առաջի Այ, և զպարգևն և զոգւոյն հառաչակաց եկեղեցւոյ խնդրէր. զոր այժմեան խորհրդակատարն կացուցեալ վասն ամենայն բարեպաշտութեան ժողովրդեանն առնէ զաղօթս։ Որպէս զայս կամեցեալ այժմ Պաւղոսի յայտ առնել՝ ասէ. «Այլ ինքնին Հոգին բարեխօս լինի վասն մեր ի հեծութիւնս անմռունչս»։

«Իսկ որ քննէն զսիրտս»։ Տեսանե՞ս զի ոչ վասն անփորձութեան է բանս, այլ վասն հոգևոր խնամոց՝ զի եթէ այս չէր, ապա պարտ էր ասել՝ թէ որ քննէն զհոգին։ Բայց զի ուսցիս թէ վասն հոգևոր մարդոյ է բանս որ զշնորհսն ունէր զաղօթիցն, զարձեալ ի նոյն յարեալ ասէ. «Իսկ որ քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն», այսինքն մարդոյ հոգևորի. «Քանզի ըստ Այ բարեխօսէ վասն սրբոց»։ Ոչ եթէ չգիտէր Ած և ի նմանէ ուսանի զխորհուրդն, այլ զի զմեզ խրատեսցէ աղօթել։

ՅՈՐԴՈՐԱԿ

Բայց այս լինի զի մեք ուսցուք աղօթել, զոյնս և խնդրել պատշաճսն յԱյ, որպէս զի բարեխօս եւս լինի այն որ մերձենայն, և վարդապետս ընտիր և առաքինիս։ Վասն զի որ ունին իսկ զշնորհսն և զամենայն պարգևսն շնորհէ ամփոփ. «Որ ունիցի զայս սովորութիւն, ասէ, արդեօք մի և նոյն Հոգի»։ Ոչ վասն մերոյ իսկ խրատու լինի այս, և այսու յուցանի սէր Հոգւոյն թէ և մինչև ցայս վայր զիջանէ բան մեր. ուսանի և ընդ այն իսկ լինի այն որ աղօթէին, վասն զի ըստ Այ լինիցին աղօթքն։ Տեսանե՞ս քանի ինչ խորհուրդ գիտաց, և վասն նոցա մերոյն և վասն պատուականին որ եղէն ի նոսա։

Օ զինչ զինչ չգործեաց վասն մեր Ած. արարածս զաշխարհս վասն մեր, չարչարել մարդկանցն թոյլ ետ վասն մեր, ի գերութիւն առաքեաց զնոսա վասն մեր, ի հնոց արկանել մանկանց, ընդ չարեաց համբերել եցոյց, մարգարէս վասն մեր արար զնոսա, առաքեալս վասն մեր. զՄիածինն իւր վասն մեր ետ, զսատանայ վասն մեր տանջէ, ընդ աջմէ իւր նստուցանէ զմեզ, նախատեսեցաւ վասն մեր,

Digitized by Google

կանխեղի "Նախատինք նախատողաց քոց, ասէ, անկանին 'ի վերայ իմ"։ Վասն յետ այսպիսի փափաքելոյ մերոյ 'ի նախանձն չարեաց 'ի ձեռաց և հեռացաւ, այլ և աղաչէ եւս, և զայդ յորդորէ զմեզ անդրանիկ, որպէս զի չնորհեսցէ. որ և 'ի Սաղմոսի օրհնեալ գործեցաւ. քանզի և անդ ասէ զնա՝ թէ "Սնոտ զիս և ընկեցիր զգոյս". որպէս զի զնա ուրեք 'ի պարզաւորաց վասն նոցա։ Եւ և այժմ իսկ զնոյնս գործէ. վասն այսորիկ և չնորհէ աղօթից առաքեալ լինին։ Բայց զայս զի ոչ ինքն ինչ աղաչանաց կարօտ է, այլ զի մի մեք ձրի փրկեսցուք և խոսումն զօրանայցեմք։ Եւ վասն այսորիկ բազում անգամ վասն Պօղոսի ասէ և վասն այսօր անուան և այնքան անուան հաշտեցուցանէ լինել նասա, որպէս զի պատճառս տայցէ հաշտելոյ։ Այլ զինչ մեծագոյն քան զայն. որչափ ինչ մարդասիրութիւն եցոյց եթէ ոչ վասն այսօր անուան կամ այնքան անուանց, ասէ, այլ և ինքն ասէ՝ թէ վասն նոցա չարչարեալ բարեխօսութիւն 'ի վերայ ձեր. տանջանս և ոչ այսպէս փոյթ զգաստ. Որպէս զի մի տայցէ պատճառս ծուլութեանն առաքելոյն իւրոց հաշտութեանն։ Սորին վասն ցԵրեմիա ասէր. "Մի աղաչեր վասն ժողովրդեանս այսորիկ, զի ոչ լսեմ քեզ"։ Եւ զի զնա կամէր զի դադարեսցէ ինչ յաղաչելոյն որ յայժմ ցանկայր մերում փրկութեանս, այլ զնա կամի երկեցուցանել. զոր և մարգարէութիւն տեսեալ ոչ երբէք դադարեաց յաղաչելոյ։

Այլ զի ուսցիս թէ ոչ կամէր մերժել զնոսա, այլ զի առհասարակ ամենեցուն զնոսա՝ ասէր դարձ։ Այլ ապա լուր զինչ ասէ. "Ո՞չ տեսանես, ասէ, զինչ գործեն սոքա"։ և առ քաղաքն զարձեալ յարժամ ասէր. "Ահա լուացիր, ասէ, անձամբ և յանձնեցեր զքեզ բարկութեան, ... և անյապաղ ծառայեցաւ յանդիմանութեան պատուիրանաց"։ Եւ ոչ զի 'ի յառաջ հաստատութիւն արարեալ զնոսա ասէ զայս, այլ զի 'ի զղջումն եկեսցեն։ Որպէս և առ նախնեացս ասաց զայն. առանց իրիք ժամանակի զիջեալ պատուհասիս քաղցրացելոյ, և ոչ ունէր ամենեւին անհնարութիւն հեշտ յայտ, որով երկեցոյցն իսկ և յառաջագոյն երկեռեցաց։ Նոյնպէս և առա զայնս. զայսա երկեցուցանէ և զմարդասիրութեան նշանաւոր յորդորէ, զի զանձն ամենայն լսելեաց։ Նոյն ասէր իւրս կամքն մարդկան նախատելոյ յանդիմանելի յանիմաստ և ոչ այլոց իրացն զարմանալոյն ինչ և խորա-

առնէին ՝ զհնազանդութիւն առնուլ զիւրեանս կեալ անձանց նմին. և կրկ-
նեւ ոչ առնուին յանձն՝ անձնատուութեան եղեալ ինքեանք
յԵգիպտոս զաւանդեալսն, միանգամ և ոչինչ ներքոյ նոցա:
Եւ խնդրէ 'ի նոցանէ և յԵգիպտոսն զաւանդեալսն և անձ-
նատուութեան լինելոյ անարժանութեանն, սակայն և ոչ ոչին-
չինչ հաւանեցան: Նախէ ընդ նոսա դառն և զմարգա-
րէսն, զի մի խաղաղ առաջնորդեալ դառնայցին: Եւ քանզի
զի նոքա ևս ոչ լուան, այլ նա ինքն չոգաւ ընդ նո-
ցա աղաչելով և աղօթելով 'ի չարեացն դիմաց. նոքա ևս
քանի միանգամ մեղանչէին: Եւ զոր օրինակ հայր որ գթած
յորժամ որդի ամենեցուն զժառանգութեան և չկարէ առ ա-
մենայն իրս, և այսպէս ոչ կամեցեալ զալ 'ի հաւանն՝ ինքն
չելին զհետ նոցա յամենայն տեղիս զի զնա կարիցէ ապ-
րել, նոյնպէս և սա ոչ միայն յԵգիպտոս զԵրեմիա ա-
ռաքէ ընդ նոսա, այլ և 'ի Բաբելոն զԵզեկիա յղէր ընդ
նոսա. և նա ոչ կայր ընդդէմ, քանզի գիտէր զիւր ըղ-
ձերն զի յոյժ սիրէր զնոսա. զոյնս և ինքեանք արա-
րեալ կատարէին: Որպէս հայր որ եթէ որդի անպիտան
ունիցի, և ծառայ բարեմիտ յորժամ տեսանիցէ թէ
հայրն ողբայ վասն որդւոյն՝ ողորմի, նոյնպէս և նոքա:

Զինչ ինչ չկրէին 'ի նոցանէ, հալածէին, նախատ
լինէին, ողոցէին և բիւր չարչարանս կրէին. և յետ այսր
ամենայնի դարձեալ ընթանային առ նոսա: Քանզի
Սամուէլ ոչ պակասեաց 'ի աղալոյ զՍաւուղ, և այն զի
դժնեայ ևս նախատինս կրեաց 'ի նմանէ և զանկշռելի
զամօթ. բայց սակայն և ոչ զմի ինչ յայտնեցաւ յի-
շեաց և կամ զմտաւ ինչ եած: Իսկ զՀրէիցն բազմու-
թեանն զրով խօսք արձանացոյց Երեմիա զողբսն. և Պաւ-
ղոս զօրավարին տալով նմա հաշտութիւն և ազատու-
թիւն արձակել, և նա կամէր և յառաջագոյն պատի-
վարկանէր քան յընտանի երկրին կալ՝ ընդ ժողովրդեանն
'ի գերութիւն երթալ և յօտարութեան տառապել:
Զնոյնս և Մովսէս գործեաց. թողեալ զթագաւորա-
կան պատիւն և առ նոցա տառապանսն ընթանայր: Եւ
Դանիէլ զքսան օր միանգամայն նօթի կայր, զի զԱծ
ընդ նոսա հաշտեցուցանիցէ: Եւ երեք մանկունքն 'ի
Բաբելոն էին, և զայնչափ անհատ զաւակս զնոցին աղաչելով զմարմին
նոցին՝ և նոքա պաշտամամբ վասն նոցա մատուցանէին
առ Աստուած, ոչ վասն խաղաղութեան ինչ աղօթից ևս որ փրկեցան,

այլ քանզի յայնժամ էր յորժամ ունէին զՀռովմայեցւոց կութիւնն, վասն այնորիկ աղաչէին վասն նոցա, յաղագս որոյ և ասէին՝ թէ "Հնազանդ լերուք բռնաւորաց և տեձանիք տառապանաց ընդդիմանողք լիցուք ,,: Նաև առաքելն և Օրէնս դադարեցուցանէն պատուաւորաց, և Նշխեցեալ ողբալը և արտասուելով կոծեր, և Երեմի ասէր. "Խրատէք զնա որպէս զի զառանձնականս լացէք ,,: Նա յառաջ քան զայս վասն զի աղաչէր վասն թշուառութեանցն Հաւատարձակայեցն ոչ իշխէր, յաւելումն իմն աւելի ասելով՝ թէ "Միւս ցնորք ունէր ,,. քանզի զթած էր աստնայն առաջ սրբոցն: Նաև որոյ և Պօղոս ասէր՝ թէ "Օգնեցարուք իրերաց ընդ որս եսք էք, սուրբք և սիրեցեալք զգութ, ողորմութիւն, քաղցրութիւն, զխոնարհութիւն ,,:

Նա ասէ Հաւատարեալ զմիտս քանզի, և որպէս Հանապազ կամի լինել զմեզ ողորմածս. քանզի չասաց լոկ թէ ողորմեցարուք, այլ թէ գթեցարուք. զի որպէս Հանդերձն միշտ ընդ մեզ է, այնպէս և ողորմութիւնն: Նա չասաց լոկ թէ ողորմածութիւն, այլ թէ գութ, ողորմութիւն, որպէս զի բնութեամբ զգթոյն նմանեսցուք: Նաև մեք զՀանապազական առնելով. մաղթեսցուք որ խնդրել զգամիրական, թշնամանեալք բամբասեալք, խաբեբայք կոչեցեալք: Ողորմեա, այր դու, չզարհուրես վասն Հացի խաբեբայ կոչել: Նայց ասելով թէ այդէս և խաբէութիւն իմ աղքատներին քեզ թուիցի, սակայն վասն և ողորմել արժան է. որպէս զի այնչափ Ճնշեալ է առնելն միջնչև զայսպիսին կերպարանս զգեցեալ: Նա այս մերոյ անողորմութեանն է մեղադրութիւն, որպէս զի թէ զիւրաւ իւրն առնլոյ, աստ ոչ Հարկաւորէին բնաւ մերքնոյս խաբանաց: Նա առաջ զայս վասն այնորիկ ասացի, որպէս զի կարասցեն զմեզ զանազանել և զխնամս բարւոք կարգել: Ով ի թէ արժանաւոր ասել խնդրողին, թերևս ունէր փոքր ինչ պատճառանս քանզի. իսկ աստ եթէ վասն կերակրոյ այնպիսից կերակրոյն, ընդդէմ ընդ մեզ խնամատարելոս և ու ելոց Հաւաստիս պատճառելոյ, վասն և զանազանելոյ կոչես զնոսա: Ով ի թէ պարապ է ասել զայս, ինձ պարապ է ասել և ոչ այլոց: Նա յորժամ մատուցես խնդրել քաւութիւն մեղաց յԱյ, յիշեա և զոր զայն բանն և ծանիր թէ յիրաւի և զոր չլինիս ըսկեզբ յԱյ զոր ողորմել անխնայէ՝ ի

քեն. այլ սակայն ոչ երբեք լռեալ այսպիսի բանս յիմ
ոգւոյ իմիք՝ Թէ 'ի բաց կաց: Այլ զի սատանի եկեղեցւոյ
յեկեղեցեացս իսկ զատ հանապազ և օրհնութեանց մերոց լսես,
իսկ առաջ 'ի հրապարակի և զարծաԹ և զոսկի և զզան-
կութիւն և զսերունս և զամենայն իսկ քան զմեր ըղ-
հրամանեան զնոսա պատուէս. և սոսա խոնարհ լինին, իսկ
յետ առողջութեան վազել և սոսանել. հրաժարեա պատու-
հեալ և սառն և մի մերձենար առ իս: Օայս և այլս
աւելի եւս քան զայս արժանի եմ լսելոյ. բայց սակայն
ոչ զեր յայսպիսեացս նախատանաց իմոց երբեք, այլ և
երկայնամտէ եմ, և որ իմոց խելս է՝ զամենայն իմոց լսա,
և քան զայս խնդրեմ՝ բազում սոյ:

Այլ արդ զայս ամենայն անտանելով լցցուք զաղքա-
տութիւն կարօտելոցն, և մի իմոց հաւատոյս քննեսցուք.
Թէպէտ և խաբեբայ իցէ իմոց ատնիցեն: Ողորմութեան
փրկութեան և մեք կարօտ եմք, ներման և մարդասի-
րութեան և բազում ողորմութեան: Որանզի չէ և չէ
իսկ հնար՝ թէ հաւատեաւ որք զմերս պահանջիցէ՝ ե-
թէ կարիցեմք ապրել. արդ հարկ է տանջել և կորնչել,
զի մի և մեք հաւատեաւ պահանջիցիմք վրէժս. քան-
զի ունիմք և մեք մեղս մեծագոյն քան զներումն թողու-
թեան: Որպէս զի և յորժամ նոցա ողորմիմք, մանաւանդ
թէ մեք իսկ գտանեմք զներումն ողորմութեան. զի թէ-
պէտ բազում անգամ առատանամք, ոչ երբէք կարի-
ցեմք այնպիսի մարդասիրութիւն ցուցանել որչափ մեք
պէտս ունիմք 'ի մարդասիրէն ա̃յ: Այլ արդ որպէս չիցէ
այս անպատեհ, յորժամ մեք կարօտ եմք այսչափ իմոց
իրաց, և զնոսա զմեր ծառայակիցսն բազում հաւա-
տեաւ քննեմք. քանզի ոչ եթէ զնա անարժան համա-
րիս քում երախտեացն, այլ զքեզ ինքն անարժան կաղ-
մես ա̃յ մարդասիրութեանն: Օի թէ դու 'ի ծառայակ-
ցէն այսպիսի հաւատոյս պահանջես, մանաւանդ թէ
ա̃ծ եւս առաւել 'ի քէն:

Այլ արդ մի պարուհեալ բարքաւեսցուք հակառակ
մեզ. այլ Թէպէտ առ վստահութեան կամ առ ծուլու-
թեան մերձեցելոն խնդրել, մեք յօժարութեամբ տա-
ցուք. քանզի և մեք բազում իմոց առ ծուլութեան մե-
ղանչեմք, և չարահամբէ սակայն 'ի մեզ ա̃ծ, այլ
սոյ ժամանակ ապաշխարութեան մեզ, մատուցանէ հա-

Digitized by Google

նաւապարար, խորտակեն և ապականեն և զայլն ամենայն քաղցրոյս, որպէս զի և մեք նախանձաւորք նմին լինիցիմք ազատել այնպիսեացն։ Լուծցուք այսուհետև զայնպիսի զանազանութիւն, 'ի բաց հանցուք 'ի մէնջ զդժպատեհագոյն զբարսն, վասն որոյ անձանց մնացականաց. քանզի նոցա երախտիս առնելք։ Վասնզի նոցա արժանաւոր մասին պատիժ և հաց և հանդերձ, իսկ մեզ զմեծագոյն զփառսն մեծապէս շահամարանելք զոր չէն հնար բանիւ յանդիմանել կացուցանել. քանզի մարմնոյ անապականն առնլով փառաւորիցէք և թագաւորակիցք Քրիստոսի գտանիցեք։ Այս արդ այն որպիսի ինչ իցէ, միթէ այսու կարասցուք հասու լինել. մանաւանդ եթէ յայտնապէս և ոչ ինչ։ Ոսկեայ առակաւ բառ մերում տկարութեան մերձենալ փառաւորեալքն առ բարութիւնն նորա որք առ մեզն գործեցան, փոքր մի այսու առնել զմտածութիւն, որպէս զի հանդիպացուք յանդիմանն կացուցանել զառաւելեալս վասն այնր բարութեանց։

Այս արդ առաւ ինձ, եթէ ոք զքեզ ծերացեալ և աղքատութեամբ կեղեքեալ զամենայն աւուրս և խոստանայցէ առնել զքեզ երիտասարդ յանկարծակի, և 'ի նոյն ինքն յաւուրս 'ի տիրական ծաղկի հասակին հասուցանել, և յայտ առնել և գեղեցիկ քան զամենեսին կացուցանել, և թագաւորութեան զամենայն տիեզերաց տալ յանձն հաճոյս; և թագաւորութիւն որ զկնի խաղաղութեան ունիցի, և արդ զինչ ինչ վասն այնպիսի խոստմանց չառնէիր և կամ աշխատէիր որպէս զի զայն շահէիր։ Իսկ արդ այժմ առաւել Քրիստոս ոչ եթէ այնպիսի ինչ, այլ մանաւանդ զևս մեծագոյն քեզ խոստացաւ. քանզի զի ոչ որչափ ինչ 'ի մէջ է երիտասարդութեան և ծերութեան, այնքան լոկ է 'ի մէջ ապականութեան և անապականութեան, այլ ևս առաւել. և ոչ որքան թագաւորութեան և աղքատութեան 'ի մէջ իցէ այնր փառաց և մերձակայիս, այլ որչափ երազ առ Ճշմարտութիւն ունիցի։ Մանաւանդ եթէ չև ևս ինչ ասացի, քանզի և չէ մեզ իսկ բաւական բանիւ յանդիմանել կացուցանել զառաւելութիւն զանազանութեանն, զկենդանին և զառժամանակեայս. վասն զի փոփոխականացն խաբէութեանն և ոչ զմիւս իսկ կարեմք առնել զառաւելութիւն մեծութեանն զայնն։

Մանկանց զհայրդ որ կարէ զամենամանկութեանս հանել, մարմնոյ ընդ այնմ որ վախճան ոչ ունիցի։ Այլ այնչափ 'ի միջի կայ ընդ աստուածածնականս և ընդ հանդերձելոց կեանցն, որչափ ինչ 'ի մէջ խաւարութեան և պատերազմի է ընտրութիւն, և անապականութեան առ կոչս մի հաւերժէն, և կամ մանուկ մարդկարար ընդ ամենայն ինչ կամէ։ Թէպէտ և բաղդատել ինչ որ ասիցէ, չկարէ հաստատել յանմիտութեան կարացուցանել. Թէպէտ և զգեղեցկութիւն ճառագայթից արեգականն ասիցես, չկարես այնպիսի ինչ համեմատել որպէս յայտնածն մարմնոյ արդարոցն ծագիցեն. Թէպէտ և զահագին զփայլատակմանցն ինչ ասիցես, չև ևս ինչ առաջի արժանի բան այնմ մարմնոյ լուսաւորութեան։ Եւ արդ զայսպիսի զարդութիւն զհայրդ ոչ նախանձեցաւ վարկանիցիք, քան զինչ և զանօրէնս. մանաւանդ թէ քան զայլս իսկ արժան է նախանձելոյ զայն հանդերձել։

Իսկ եթէ այժմ որ յաղթութիւն մնացականն զգեղ և ամենայն համարձակութեամբ առաւել ամենեցունց որ շարժին կայսեր առաջին քեզ խօսել ընդ թագաւորին և նախքն ոտնագատաւորաց լինել, ոչ վարկանիցիս զայնքան քան զամենայնեան երանելիս։ Յերկինս հանդերձեալ ես երանել և մերձ առ ամենեցունց թագաւորին պատրաստ ես կալով և որպէս զհրեշտակս պայծառանալով ես և անճառելի փառացն արժանի հաղորդելոց ես, տակաւին և այսպէս յամենայնի և հանապազորդս զինչս նախանձեցար վարկանելով քան զառն որոյ և զկերակուր խակ մեր սպառնեալ յանձանձից մերկացեալ և խոյսոյ և ցնծալ և 'ի վեր թըռչել առ հեշտութեանն։ Այլ յարժամ իշխանութեան ինչ առնուցաս, որ գաղութեան պատճառք են մահաւանդ, քանզի ոչ երբէք առեալ ես զայն շահս, այլ և զոր ունիս՝ վասն իշխանութեանն առաս և լինիս և զայլոցն զխիթս առնուս, և եթէ լիցի քեզ զկին և զորդիսն խակ 'ի գլուխ ունել՝ չզանգտարկս, որպէս զի միայն իշխանութեանն հասցես. իսկ արքայութեանն երկնից առաջին կալով և իշխանութեան որ ոչ երբէք փոփոխի, վասն զի Աստուծոյ հրամանեալ ոչ եթէ մանուկ ինչ և անկիւն որպէս յաշխարհիս, այլ զաշխարհս խակ զերկինս, և զառ զանդրագոյս և յաւիտեան. և ոչ իմանաս զի եթէ որ մեզ երևի երկինս այսչափ գեղեցիկ և

վայելուչ է, որ առ օրինակ ինչ է ասել, . . . . .[1] իսկ ըղ-ձեան ծածկեն ճառագայթք պայծառութեան նորա։ Եւ արդ ո՞ր քան կարիցէ յանդիմանն կացուցանել զայնպի-սի զերանութիւն, զճառագայթ ուժն լուսոյն և կամ ըն-փռաւոյն։ Այս իմն, վայ իմն, ով անձն իմ, զինչ գոր-ծեցեր յայնժամ։ Հաւատացէք ինձ, ով սիրելիք, զի արտասուք հեղուն յաչաց իմոց և մեծապէս հեծեմ յորժամ զմտաւ ածեմ թէ յորմէ բարութենէ ան-կայք և կամ յորպիսի երանութեանց օտարացայք։ Սա-կայն ես զանձնէ խիթէ առնեմ զայս, և ոչ եթէ մեծ և զարմանալի գործեմ զայս։ Եւ մի ոք ինձ այժմ ա-սասցէ վասն գեհեննին, զի յոյժ դառն քան զգեհեննն է յայնպիսի բարութեանց արտաքսանելն և 'ի փառացն անկանելն, որ քան զսիւր տանջանս ևս դժնեայ է յայն-պիսի բազում բարեաց օտարանալն։ Նոյն սակայն և այժմ իսկ յանցաւորս հարկաւոր եմք և ոչ տանուտք 'ի մեջ զատանանացի զմխոռող չարաչարութիւնս, որ 'ի ձեռն փոքուն զմեծամեծամն բառնայ 'ի մէնջ, և շնորհէ կամ զի զտակիյն յափշտակիցէ 'ի մէնջ, մանաւանդ թէ զեր-կինս իսկ յափշտակէ 'ի մէնջ, և ցուցանէ զառաւելն՝ զի հանցէ 'ի մէնջ զճշմարիտն և բարեպաշտ երանալ ցուցանէ։ Նոյն զի սպառէս իսկ են մերձաւոր կենաց մեծութիւնք. զի յորժամ ածեն լինիցի, ցուցանիցէ քան զամենեսին զնոսա անարգագոյն։

Եւ արդ զայս ամենայն խնդրեալք զանեալ անարգանս ուրեմն փոխեցաք 'ի նորա նեղութենէն և առ հան-դերձեալսն փոխեցաք։ Մանկունք շունչքն առնել թէ չգի-տէք զժամանակեան զկարուցս զերս, զորոց իւրն. ես տառել քան զիրօղ զոչեն զաժամանակին գործա-ութիւնն, ծառք, զանօթն, զկոտնդուկն, զխորխողաս կորստեանն։ Եւ արդ զո՞ր պատասխանատուութիւնս տա-նիցիմք յորժամ որ լի ամօթով և աշխատութեամբք են՝ բազում փութով զհետ երթամք, իսկ որ զդրշչո՞ և զփառաւորսն և պայծառս ասէ զմեզ՝ յայնմանէ փախչիմք, և բաղդատելին իսկ զմեզ յնկէլէ բանաւորու-թեան 'ի ձեռս մտանեցաք և 'ի դառն ծառայութիւն զմեզ տուաք։ Եւ այս են չարիք զի ոչ գիտեն անգամ թէ պարտ է ազատել յայսպիսի ծառայութենէ։

[1] Թուի թէ մի անկեալ է յօրինակէն։

Դու արդ որովհետեւ գիտացէք և ուսայք զգեղեցիկ զայն զաղատութիւն, 'ի բաց խզեցէք զկապանսն, և հեռի ստեր 'ի ծուղակացն. և մի բնակեսցէ ոսկի 'ի տունս ձեր, այլ որ և մեծագոյնն է՝ աղքատութիւն և մարդասիրութիւն փոխանակ ոսկւոյն եղիցին. քանզի այսոքիկ են որ տան մեզ համարձակութիւն առ Ա̃ծ. իսկ ոսկին ամօթոյ աշակերտս գործէ զմեզ, և յոյժ տայ չնչել ընդդէմ՝ սատանայի: Դու արդ ընդէ՞ր զինես զթշնամին հակառակ քեզ, և զօրագոյն քան զքեզ առնես զնա: Զինեա զաջն քո հակառակ նմա, և զամենայն զտան քո զգեղեցկութիւն ամփոփեա յոգիսդ քո, և զամենայն զմեծութիւնն ժողովեա 'ի միտս քո, և փոխանակ ոսկի զմէջիցն[1] եղիցին քեզ երկինք և անդ պահեսցի, և մեք ամենեքին առաւել անդր արկանիցեմք զմերսն: Քանզի յոյժ լաւագոյն քան զոսկին մերքն են և քան զպատականս պարկեշտագոյնք: Դու արդ ընդէ՞ր զմերս թողեալ յայլս ամենայն թափես զփոյթս, ուստի որոց առնեմն, առնուլ ինչ չիք քեզ 'ի նոցանէ: Նազումն անգամ թերևս մինչև աստէնդ իսկ ես՝ չկարիցես զգուշանալ. վաճառաշահութիւն մեծ այն է՝ որ ոչ միայն աստ, այլ և 'ի հանդերձելումն յուցանէ զվաճառաշահութիւնն. քանզի և զգիւղս և զտունս և զոսկիդ ընդ ուղւոյդ տար անդր, ուր վախճան չիք մեծութեանն: Դու զիա՞րդ, ասէ, մարթիցի լինել այնմ: Որ և գոյ իսկ հնար, այլ և յոյժ դիւրութեամբ իսկ. եթէ յերկինս փոխիցես զմեծութիւնն 'ի ձեռն աղքատացն, զամենայն իսկ 'ի քո ոգիսդ գանձեցեր այնուհետև. թէպէտ և մահ հասանիցէ, չկարիցէ զայն 'ի քէն 'ի բաց բառնալ, այլ երթայ ընդ քեզ անդր մեծութիւնն: Զայսպիսի գանձս ունէր Տաբիթայ. վասն այսորիկ ոչ տունն և որմքն քարոզէին զնա և կամ քարինքն և սիւնքն, այլ այրեացն մարմինք զոր զգեցուցանէրն, և արտասուքն որ վասն նորայն հեղուին՝ զմահ փախուցին և զնա վերստին կենդանացուցին:

Այսպիսի շտեմարանս կազմեսցուք և մեք անձանց, սոյնպիսի շինուածս շինեսցուք զտունս մեր. որպէս զի Ա̃ծ մեր գործակից լիցի և մեք իսկ անձանց օգնական

1 Յօրինակին զմէջէցն:



Digitized by Google

լիցուք։ Վասնզի նա 'ի չգոյէ 'ի գոյ ած զքաղցեալսն, իսկ դու 'ի գոյսն եկեալս և քաղցեալս մի թողուլ սովամահ լինել, և յայլոցն ևս տառապանաց ազգացս՝ աղաչելով ամենայն ուստեք զտաճարն այ. և ապա այսպէս լիցի զոյգ յօգուտ և 'ի փառաւորութիւն բանին։ Իսկ ապա եթէ ոչ հաւաստեաւ հասեր 'ի վերայ թէ որպիսի զարդու զարդարեաց զքեզ յորժամ հրամայեաց կերակրել զքաղցեալսն, զայն ապա ած զմտաւ առանձինն։ Ոչ է յանկարծ երկինք 'ի վայր կործանեալ էին յերկիր, և քեզ տայր իշխանութիւն համատարել զնոսա և ուղղել, ոչ ապաքէն ևս առաւել զերազանցեալ քան զամենայն միտս վարկանէիր զպատիւն զայն։ Իսկ արդ աւասիկ ևս մեծագոյն պատուի արժանի արար զքեզ. զի չէին երկինք պատուականագոյն քան զայն որ քեզդ հրամայեաց կազմել. վասն զի քան զմարդ յերևելեացս չիք ինչ պատուականագոյն այ և ոչ զոյգ նմին. քանզի և զերկինս և զերկիր և զծով վասն նորա արար և 'ի նմա ուրախ է բնակել քան յամենայն արարածս։ Այլ սակայն և մեք զայն ամենայն գիտելով և ոչ մի ինչ խնամ չտանիմք տաճարին այ, այլ զնոսա թողեալ 'ի խնամոց՝ անձանց մեծամեծ տունս և ապարանս շինեմք։ Նման այսորիկ և թափուր իսկ եմք յամենայն բարութեանց և յոյժ քան զաղքատսն անանկագոյնք. վասն զի զայսպիսի զտունս զեղեցկացուցանեմք զոր չեմք կարող տանել ընդ մեզ յորժամ փոխեսցեմք աստի։

Այլ արդ զայս 'ի բաց թողեալ զայն տաճարն շինեսցուք և նորոգեսցուք որ ընդ մեզ անդր գալոց են. քանզի և յորժամ լուծանին մարմինք աղքատացն, դարձեալ յառնեն անապականք։ Այս որ զայսն հրամայեաց ած 'ի մէջ ածիցէ զնոսա և որք զխնամսն տարան նոցա՝ գովէ և ապշանայ թէ զիարդ որ մերձ 'ի լուծանել էին մարմինքն՝ յանկարծ կազդուրեցուցեր և կարողացուցեր և նորափետուր զարդարեցեր, երբեմն 'ի սովոյ, երբեմն 'ի մերկութենէ և յայլոց դժուարութեանց ամենայն օրինակաւ ուղղեցեր։

Այլ արդ որովհետև այսչափ զօրութիւնք առաջի կան մեզ, պարտիմք և մեք ընթանալ յայսպիսի խնամածութիւնս աղքատացն։ Այլ արդ զինչ վայելուչ է այս առ այն, յորժամ Քրիստոս ոչ ունիցի տեղի իջևանի, այլ

Թափառականն շքեղ և ոսար և մորկ, և զու բարբա-ռանս և բազմանիս Ճոճանչակներս, յորինս շատրուանօք և բիւր անձնական կազմեալ 'ի զարդ և ընդ փայլ, և Արիս-տանի փոքր յարկէկ մի. ոչ շնորհես, խակ ազատաւորց և անօգնեղաց մեծութեան զարդարես հովանաւորս և պա-տուհանիւք ամփոփեսցուք, և արդ զինչ քան զայնպիսի մոլորութիւն չար կացցէ և կամ զինչ դառնագոյն քան զայն. վասն զի և է խակ մեղմին մոլորութիւն, և մա-նաւանդ եթէ որչափ ինչ առեցէ ոք՝ չկարիցէ լնուլ ար-ժանին առնել։ Բայց սակայն թէ կամիցիք, զայս հնար, թէպէտ և դժնեայ իցէ ախտն՝ 'ի դիւրին հարկանել. և ոչ եթէ կարողութիւն միայն է, այլ և յոյժ դիւրին. և ոչ եթէ դիւրագոյն միայն, այլ և երագ խակ զերծա-նիմք յաշխարհի ծառայութեանց և 'ի մարմնաւորական ախտից որչափ[1] և մեծ իցէ բժիշկն։ Իսկ արդ մերձեսցուք առ նա և աղաչեսցուք, որպէս զի մերձեսցի առ մեզ և շօշափեսցէ զախտացեալ անդամս մեր։ Բայց փոքր մի և յանձանց պարտ է մեզ նպաստ լինել. զոր-պիսի՞ ինչ. զկամս բարիս և զյօժարութիւն ուղղել։ Քանզի չէ ինչ այլ ումեք կարօտ 'ի մէնջ. եթէ զայս միայն դտանիցէ 'ի մեզ, զնուրան զամենայն առաջի մեր դնէ և ընձեռէ։ Իսկ արդ մատուսցուք 'ի մէնջ զընծայս, որպէս զի առ սա սուրբ և յստակ փայլեսցուք և հանդերձեալ բարութեանցն ժառանգեսցուք շնորհօք և մարդասիրու-թեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հօր համանգերձ Հոգւոյն սրբով այժմ և յաւի-տեանս. ամէն։

## ՃԱՌ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

«Բայց գիտեմք, որոց սիրեն զԱծ, յամենայնի գործա-կից լինի 'ի բարիս»։

Թուի ինձ թէ առ այնոսիկ որք 'ի վշտացն էին՝ զա-մենայն զայս վասն նոցին առաջարկեալ է ասացեալ. մա-

1 Յօրինակին որչափ և մեծ իցէ բժիշկն։

նուաստ թէ ոչ զայս միայն, այլ և փոքր մի յառաջա-
գոյն քան զայսն էր ասացեալ։ Վասնզի և զայն՝ թէ "չեն արժանի չարչարանք ժամանակեանս առ հանդերձեալ փառսն որ յայտնելոց են 'ի մեզ", և զամենայն զարա-
րածոց ասաց թէ հեծեն, և յաւելու թէ "յուսով ապրեցաք", և թէ "համբերութեամբ ակնունիմք", և եթէ "զոր կամքն յաղօթս, որպէս պարտն է ոչ գիտեմք", և արդ զայս ամենայն առ նոսա ասացեալ խրատէ զնոսա մի վարկանել թէ զրկեալ ինչ իցեն յերկրաւոր օգտէ անտի. զայս կամի 'ի բաց պարտուրել, և զայն ուսանդէ նոցա զոր հոգւոյն կամք են։ Վասնզի և բազում ինչ լաւ թուէր նոցա հեշտութիւնն, ուստի և բազում վնասք գործեցան իսկ, հանգիստն և հրաժարել 'ի վըտանգիցն և դիւրութեամբն կեալ, որ թուէր թէ այս իցէ բարի և օգուտ նոցա։

Այլ զինչ զարմանք են թէ նոքա, ուստի և երանելոյն Պաւղոսի իսկ այն ինչքն այս հաճոյ թուէր. բայց տակայն ուսաւ յետոյ թէ որ ինչ սոցին հակառակքն են, այն է բարի և հաճոյ, և ուսեալ գոհանայր. յորժամ երիցս զտէր աղաչէր զի 'ի բաց արասցէ 'ի նմանէ զնեղութիւնն, և յորժամ լուաւ 'ի նմանէ թէ "շատ են քեզ շնորհք իմ, քանզի զօրութիւն իմ 'ի տկարութե՛ կատարի", խայտայր այնուհետև հալածանօքն և թըշնամանօքն և անկշռելի չարչարանօքն. վասն որոյ "հաճեալ եմ, ասէ, ընդ թշնամանս, ընդ հալածանս, ընդ վիշտս". զոր և աստէրն իսկ թէ "զոր կամքն յաղօթս, որպէս պարտ է չգիտեմք". և զամենեսեան խրատէ հոգւոյն սրբոյ յանձն առնել զայն. ցուցանէ թէ ա՛յ այն հաճոյ թուի, և եթէ յոյժ խնամ տանի մեզ հոգւոյն սուրբ։

Այլ իբրև օծ յամենայն կողմանց զնոսա, ապա յարէ 'ի նոյնս և զօրաւոր զառասցուածն առ 'ի բաւական լինելոյ գիտել նոցա զխորհուրդն. "Վասնզի գիտեմք, ասէ, թէ որք սիրեննն զա՛ծ, յամենայնի գործակից լինի 'ի բարիս"։ Իսկ յորժամ զա՛մ ասէ, և որք թուին թէ տրտմականքն իցեն՝ և զայնցանէ ակնարկէ։ Որպէս նեղութիւնք ինչ իցեն կամ աղքատութիւնք կամ բանտք կամ սովք կամ մահք և կամ այլ ինչ յայսպիսեացս իցէ, կարող է ա՛ծ փոփոխանակ վշտացն դիւրութիւն գործել. և որ թուէին

թէ մեծ ջանք իցէ, թեթեւագոյն մեզ յօրինել զայն և 'ի մեր յօգնութիւն դարձուցանել ։ Վասն որոյ և չասաց թէ որք սիրեն զնա, չկրեն ինչ դժնեայ կիրս, այլ թէ գործակից լինի 'ի բարիս. այսինքն է զնոյնս ինքն զդժնեայ զկիրսն արկանէ 'ի կիրս առ'ի ցուցանել զնոսա ընտիր խորհրդոց նենգչացն. որ մանաւանդ ևս մեծագոյնն է՝ քան զարգելուլն զգալն նեղութեց 'ի վերայ՝ զեկեալսն երագ լուծանել 'ի բաց՝ այն զօրաւոր է ։ Այնպէս և 'ի հնոցին Բաբելոնի գործեաց. ոչ արգել զնոսա յարկանելոյ անդր, և ոչ դարձեալ յորժամ անկան սուրբքն այնորիկ՝ շիջոյց զբոցն, այլ թոյլ ետ վառելոյ, որպէս զի նոքիմբք իսկ իրօքն սքանչելագործիցէ ։ Զոր օրինակ և առաքելովքն նշանագործէր. այլ այս յամենայն ժամ ։ Զի թէ մարդիկ որ զփիլիսոփայութիւն ուսեալ են՝ կարեն որ ինչ ըստ բնութեանն իցեն 'ի հակառակս անդր 'ի կիր արկանել, և որք յաղքատութեանն կեան ևս շահաւէտք երևին քան զմեծատունսն և անարգութեամբ պայծառանան, ապա մանաւանդ ևս առաւել ած որք սիրեն զնա՝ և քան զայսոսիկ ևս առաւել մեծագոյնս գործէ ։

Միոյ իրիք միայն պէտք են, այսինքն թէ սրտիւ ողջ զնա սիրիցէ, և այլն ամենայն դիւրաւ գայ զհետ ։ Զոր օրինակ այսպիսեացս և որք կարծեն թէ վնասակարք ինչ իցեն՝ օգուտ գործեն, նոյնպէս և որք ոչն սիրիցեն զնա և որք թուինն եթէ օգուտ ինչ իցէ՝ բազում վնաս գործէ ։ Եւ այս 'ի Հրէից իսկ անտի յայտ է, որոց և նշանքն ցուցան 'ի վարդապետութենէն՝ փիլիսոփայութիւն և առաքելութեանցն ուղղութիւնք. և քանզի ինքեանք ժանդք և անպիտանք էին, վասն վարդապետութեանն դիւրահար կոչէին զնա, իսկ վասն սքանչելեացն՝ հակառակ նմա, և վասն նորին իսկ նշանացն բազում անգամ և սպանումն իսկ մատնեցին ։ Իսկ առաքեալքն զնա ընդ խաչն բեւեռեալ տեսանէին և հայհոյեալ և բիւր չարչարանս կրեալ, և ոչ միայն չվնասեցաւ ինչ, այլ և զևս մեծագոյնս շահեցաւ ։ Տեսե՞ր որպէս որք սիրեն զած՝ գործակից լինի 'ի բարիս ։

Եւ իբրև ասաց զմեծ բարութենէն և որ յայժմ պերագանցէ քան զմարդկային բնութիւնս, ապա զի մի անհաւատ այսպիսի ինչ իրք թուիցին նոցա, 'ի յանցե-

լոց ամենայն ասելն հաւատարիմ զաւակցելովն : « Իսկ յա-ռաջադրութեան կոչեցելոցն » : Տեսանես անդէն իսկ ասէ 'ի կոչմանն ամենայն զաւակցելովն : Այլ էր վասն 'ի սկզբանէն իսկ չկոչեցելոց զամենեսեան եւ ոչ զնոյն ինքն ըզ-Պաւղոս իսկոյն ընդ այլոն ամենեսեան. որ կարծի բազ-մաց եթէ միայն ինչ եղեւ յառաջադրութեամբն, բայց սակայն 'ի ձեռն իրացն ցուցաւ թէ ընտիր եղեւ : Յառաջադրութի-ւն վասն այնորիկ ասէ, որպէս զի մի զամենայն ինչ որ կոչեցայն՝ նմա վարկանիցիս, եւ զի մի դարձեալ ընդ-դէմ բերիցեն մեզ հեթանոսք եւ Հրեայք եւ ասիցեն՝ զի եթէ կոչումն միայն բաւական էր՝ էր վասն ամենե-քեան ոչ ապրեցան, վասն այսորիկ ասէ թէ ոչ կոչումն միայն, այլ եւ յառաջադրութիւն կոչեցելոցն զփրկու-թիւն գործեցին. վասն զի ոչ եթէ ակամայ ինչ եղեւ կոչումն կամ 'ի հարկէ եւ 'ի բռնաւորութենէ : Այս զամենեսեան իսկ առ հասարակ կոչեաց, այլ ոչ հնազանդե-ցեան ամենեքին :

« Զի զոր յառաջագոյն սահմանեաց կերպարանա-կիցս լինել պատկերի որդւոյն իւրոյ » : Տեսանես զպատուոյն զմեծութիւն. քանզի որ ինչ միածինն բնութեամբ էր, զնոյն եւ մեք եղաք շնորհօք : Բայց սակայն ոչ շատա-ցաւ այսու միայն ասելովն՝ թէ կերպարանակիցք, այլ եւ այլ եւս յաւել՝ թէ « Լինել նմա անդրանիկ » . եւ ոչ եթէ եւս : Այլ ոչ եթէ յայսմ կայ միայն, այլ եւ յետ այնորիկ դարձեալ եւ այլ ինն ածէ զնախկինս ասելովն՝ թէ « Ի մէջ եղբարց բազմաց » : Այլ արդ զայս ամենայն վասն անտեսութեան նորա խնդրեր ասացեալ, քանզի ըստ ճշմարտութեան միածին էր. միայն ած զմտաւ թէ որչափ ինչ շնորհեաց մեզ : Այլ արդ մի ինչ յերկբայս լինիցիս վասն հանդերձելոցն. քանզի եւ այլ ուսանէք ցու-ցանէ զփութանակ նորա առ մեզ եւ ասէ՝ թէ անդուստ 'ի վերուստ յօրինեալ կարգեալ էր զիրսն : Այսու զի մար-դիկ յիրաց ամենայն եղելոց ուսանիցեն զդարձն, իսկ ոչ 'ի վաղուց իսկ այս հաճոյ էր, եւ 'ի վերուստ 'ի սկզբանէ իսկ զայս մեզ կանխեալ էր. ասէ. « Այլ զորս կոչեաց, զնոյն եւ արդարացոյց » 'ի ձեռն աւազանին վերստին ծննդեանն. « Եւ զորս արդարացոյց, զնոյն եւ փառա-ւորեաց » . այսինքն է շնորհօքն եւ 'ի ձեռն որդեգրութեանն :

« Այլ արդ զինչ ասիցեմք առ այս » : Որպէս զի ասիցէ՝

թէ մի առէր ինձ այժմ փառս վշտացն ինչ այնուհետև և յամենեցունց նեղութեանցն: Ո՛ր թէպէտ և հանդերձելոցն ումեմք անհաւատք լինին, այլ առաւել իսկ 'ի մեծոյս տուեան բարութիւնցն, չունիցին ինչ տալ պատասխանի. զորպիսի ինչ 'ի վերուստ յոյս առ քեզ ըղձերն, զարդարեցուցանելն, զփառաւոր առնելն: Վասնզի այսոքիկ յայտնեցանէ որ տրտմականքս քեզ թուէին, առնուլ քեզ պարգևեցան. և զոր ամօթոյ և նախատանացն վարկանէիր՝ զխաչն, զչարչարանսն, զկապանսն, մանաւանդ եթէ այսոքիկ են որ զաշխարհս ուղղեցին որով և ինքն իսկ չարչարեցաւ. և որք տրտմականքն թըւէին՝ այնոքիւք վարժեաց յազատութիւն զամենայն մարդկային բնութիւնս: Այնպէս և որք սոցին համբերեն, տային և փառս և գովեստ զատանեն յորժամ նոքին չարչարանօք վարիցին:

« Ո՛ր թէ ա՟ծ 'ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ »: Այսինքն է թէ ո՞վ ոք չիցէ մեր հակառակ. Ամենեքին. քանզի և տիեզերք մեր հակառակք են, և բռնաւորք և ռամիկք և ազգականք և քաղաքացիք: Բայց սակայն որքա որ հակառակք մեզ են, այնքան ինչ 'ի բացեայ են 'ի նենգելոյ զմեզ՝ մինչև ակամայ իսկ պատճառք պսակացն մեզ լինին և ընձեռիչք բիւր բարութեանց. վասն զի ա՟յ իմաստութիւնն զնենգիչսն 'ի մեր փրկութիւն և 'ի փառս դարձուցանէ: Տեսանե՞ս զի ոչ ոք գտանի մեզ հակառակ: Վասնզի և զառաքինին զՅոբ սոյն գործեաց պայծառ՝ վառեալն սատանայի ընդդէմ նորա. վասն զի և զբարեկամս հակառակ նմա կազմեաց, և զկինն և զընտանիսն և զվէրսն և բիւր ևս այլ մեքենայս կազմեաց սատանայ և շարժեաց ընդդէմ նորա, բայց սակայն ոչ ինչ կարաց հակառակ նմա առնել: Իսկ այս չև էր ինչ մեծ. թէպէտ և յոյժ մեծ էր, այլ և որ մեծագոյն էր՝ զի և յինքենէ և յիւրոցն առ հասարակ անկաւ. և քանզի ա՟ծ էր 'ի նորա կողմն, վասն այնորիկ և որ թուէր թէ հակառակ նմա իցէ՝ 'ի նորա կողմն գտանէր լինել: Այսպէս ինչ և առաքելովքն դիպէր. քանզի անդ և Հրեայքն և որք 'ի հեթանոսացն էին և սուտ եղբարքն և իշխանք և ռամիկք, և սով և աղքատութիւն և այլ ինչ բիւր էր ընդդէմ նոցա, և ոչ ինչ թուէր հակառակ նոցա. մանաւանդ եթէ նոքիմբք իսկ եղեն այնո-

քիւք պայծառք և երևելիք և մեծամեծ առաջի այ և մարդկան :

Ածէ ած զմտաւ որպիսի բանս բարբառեցաւ Պաւ-ղոս վասն հաւատացեալ մարդոյ և որոյ զանձն յաշխար-հիս հաւատեաւ 'ի խաչ հանեալ է. զոր և ոչ նոյն ինքն որ զԹագն 'ի գլուխն ունիցի՝ կարէ առնել զայնպիսի անհոգութիւն : Վասնզի ընդդէմ նորա և քաղաքք և բարբարոսք զինեն, և պատերազմունք զհետ երթան, և որք զմարմինն պահեն և բազում նենգութիւնս գործեն և իշխանացն պատերազմ միշտ հանապազ 'ի վերայ յառ-նէ, և այլ բիւր ինչ է տեսանել : Իսկ զհաւատացեալսն և որք հաւատեաւ այ օրինացն վարին, նմա ոչ մարդ և ոչ դև և ոչ այլ ինչ զամենայն կարիցէ լինել : Որ թէ զինչ յափշտակիցես 'ի նմանէ, վարձուց պատճառս զիրսն վարկանի. իսկ եթէ չարախօսեսցես ինչ զնմանէ և համբաւ յոռի հանիցես զնմանէ, պայծառագոյն և լուսաւոր արարեր զնա առաջի այ. իսկ արդ եթէ սո-վու զնա փակիցես, և առաւել փառք են նմա և փա-ռաւորութիւն մեծ. իսկ եթէ որ քան զամենայսն դառ-նագոյն թուիցի քեզ՝ այսինքն է մահ՝ և մատնիցես զնա նմա, մարտիրոսական պսակ նմա բոլորեցեր : Արդ զինչ ինչ զոյգ կայցէ այնպիսում կենաց յորժամ ոչ ինչ հակառակ նմա երևեսցի, այլ և որ թուեսցին թէ նենգիցեն նորա իցեն՝ ոչ ինչ նուազ գտանիցին քան զբե-րախտաւորսն գործել նմա զօգուտն : Վասն այսորիկ և ասաց իսկ. "Եթէ ած 'ի մեր կոյս է, ո՞վ է մեր հակա-ռակ" :

Ապա ոչ համարի բաւական զատացեալսն միայն, այլ և զմեծագոյն նշանն որ վասն մեր է՝ զսէրն, և զոր հա-նապազ և միշտ յեղյեղոյր, զայնս և յայսմ վայրի դնէ, այսինքն է զմահածնին տնօրէնութիւն : Վասնզի ոչ արդարա-ցոյց միայն, ասէ, և փառաւորեաց և կերպարանակիցս արար նորա պատկերին, այլ և յորդին անգամ ոչ խնայ-եաց վասն քո՝ ասէ : Վասն որոյ 'ի սոյն յարեալ ասէր. "Եթէ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենե-ցուն մատնեաց զնա, զիարդ ոչ զոյգ ընդ նմին զամենայն շնորհեսցէ մեզ" : Ապաքէն զի առաւելութեանն և բա-զում ջերմութեանն զմանն 'ի կիր արկանէ, որպէս զի ցուցցէ զսէրն նորա : Արդ արդ զնոյնս պարգևս զմեզ առ-

ինքն մերձեցուսցէ. զի յորժամ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր մատնեաց զնա, տես որչափ ինչ էին բարերարութիւնքն։ Յորժամ յիւր որդին ոչ խնայեաց, այլ ետ և մատնեաց զնա յայնժամ, ապա զիա՞րդ արդեօք ոչ զոյգ ընդ նմին զամենայն ինչ շնորհեսցէ մեզ։ Նաև զոր ասէն այսպիսի ինչ է. զի եթէ զորդին իւր շնորհեաց մեզ, և ոչ լոկ շնորհեաց, այլ և 'ի սպանումն մատնեաց, էր ապա վասն այլոցն երկբայանաս. ընդէ՞ր յերկմիտս լինիս յստացուածոցն յորժամ ընդ քեզ ունիս. քանզի որ զմեծն ետ թշնամեացն, ո՞րպէս արդեօք զնուաղագոյնսն չտայցէ սիրելեացս։

“Նաև արդ ո՞վ իցէ որ ընդդէմ մեղադիր լինիցի ընտրելոց այ,,։ Ո՞չ առ այնոսիկ ասէ՝ որ ասէին թէ չէին ինչ օգուտ հաւատքն, և անհաւատ լինին յանկարծօրէն փոփոխմանն, այսինքն 'ի մեղաց յարդարութիւն։ Եւ դու տես զիարդ երագագոյն ըմբերանէ զնոսա 'ի պատուոյ կոչելեացն։ Եւ չասաց թէ ո՞վ է որ ընդդէմ մեղադիր լիցի ծառայից այ և կամ թէ հաւատացելոց այ, այլ թէ ընտրելոց այ. քանզի ընտրութիւն առաքինութեան նշանակ է։ Զի թէ աստ զբազումս յորժամ ընտրէն և միախուռն ընթանան և 'ի պէտս ինչ ոչ գտանիցին, և ոչ 'ի խնդիր ոք և 'ի փոյթ արկանէ, այնուհետև այսպն լինի թէ մեղադիր ևս ոք նմին լինիցի, ապա ևս առաւել յորժամ ած ընտրեսցէ զոգիս և ոչ պիտանիք լինիցին՝ գտանիցին ծաղու և մեղադրութեան արժանի։

“Զի եթէ ած է որ արդարացուցանէ, ո՞ ոք դատապարտ առնիցէ,,։ Եւ չասաց եթէ ած է որ թողու ըզմեղս, այլ որ ևս մեծն էր՝ ած է որ արդարացուցանէ։ Իսկ յորժամ դատաւորն այսպիսի ինչ իցէ, ի՞մ իմիք արժանի որ չարախօսն իցէ՝ գտանիցի։ Ապա եթէ այդպէս է, և ոչ 'ի փորձութեանցն պարտ է զանգիտել, վասն զի 'ի մեր կողմն է ած, և յայտ յորոց գործեացն՝ արար, և ոչ եթէ 'ի շատախօսութենէ հրէիցն։ Վասն զի և ընտրեաց զմեզ և արդարացոյց, և այն են զարմանք զի մահուամբ որդւոյն իւրոյ արդարացոյց։ Ո՞վ իցէ որ դատապարտ առնիցէ՝ այ զմեզ պսակելով, Քրիստոսի վասն մեր սպանեալ, և ոչ եթէ սպանեալ՝ այլ և յետ այնորիկ բարեխօսէ վասն մեր։

Digitized by Google

“Քանզի Քրիստոս է, ասէ, որ մեռաւն, մանաւանդ եթէ յարուցեալ իսկ է և է ընդ աջմէ այ, որ և բարեխօս իսկ է վասն մեր„: Որ թէպէտ և ընտանի իւրով պատուովն է, այլ ոչ ինչ անփոյթ առնէ զմերմէ նախախնամութենէն, այլ և բարեխօսէ ևս վասն մեր: Վասն զի ոչ բաւական համարեցաւ զպատուութիւնն իւր միայն, այլ միշտ կայ և պահէ զսէրն իւր առ մեզ, որ մանաւանդ մեծի իսկ խնամոց նշանակ է. որ ոչ միայն իւրով հնազանդութեամբն զայն գործեաց, այլ և զայլ-օրն ևս վասն նորին իրաց աղաչէ: Քանզի զայս ինչ կամեցաւ յայտ առնել առաքեալն՝ թէ բարեխօսէ վասն մեր. մարդկօրէնս իմն ճառեալ զիջանելոյ վասն ասէ, որպէս զի զսէրն մարթիցէ ցուցանել: Զայս եթէ զչխնայելն այսպիսի ինչ չիմանամք, բազում իրք անպատեհք յառնեն 'ի մեզ: Իսկ զի ուսցիս թէ այսպիսի ինչ է զոր յարդարելն կամի, յառաջ ասաց թէ է ընդ աջմէ այ, և յայնժամ ապա յարեաց 'ի նոյնս՝ թէ և բարեխօս իսկ է վասն մեր: Իսկ այսու եցոյց զզուգապատուութիւնն և զհաւասարութիւնն. զի յորժամ լուիցես եթէ բարեխօսէ, մի նուաղութեան ինչ՝ այլ սիրոյ միայն երևեցի ամենայն: Զի որ ինքն կեանք է և աղբիւր ամենայն բարութեանց, և համագերձ իշխանութեամբ իւր և հօր իւրոյ, և զմեռեալս կենդանացուցանէր և զայլն ամենայն գործէր, որպէս արդեօք պաղատանաց կարօտէր առ 'ի յօգնել զմեզ զյուսահատեալս և զդատապարտեալս. ընտանի իւրով իշխանութեամբն յայնպիսի դատապարտութենէ զերծոյց զմեզ, և արդարս և որդիս արար զմեզ և 'ի վերին պատիւս եհան զմեզ, և որում երբէք ակն ոչ ունէաք՝ զայն գործով իսկ եցոյց, որպէս արդեօք յետ այսչափ ուղղութեանց և զմեր զանութիւ ցուցանելոյ 'ի վերայ թագաւորական աթոռոյն, զխնդր առ դիւրագոյնս բարեխօսութեան կարօտասցին: Տեսանե՞ս զիարդ ամենայն ուսանեք ցուցանէ թէ զբարեխօսելն ոչ վասն այլ իրիք ասէ, այլ զի զջերմ և զհանապազորդ զանձումն սիրոյն որ վասն մեր եցոյց: Աւասիկ և հօր երևի աղաչելն զմարդիկ զի հաշտեսցին ընդ նմա. “Վասն Քրիստոսի բարեխօսեմք, ասէ, որպէս այ իսկ աղաչելով„: Իսկ մարդկան բարեխօսելով վասն Քրիստոսի և առ մարդիկ, ոչ ինչ անմարթանա վարկանիմք այնմ

պատուոյ, այլ զմիմեանս յանձն առաջնորդելոյն ընտրեցեալքն՝ սա-հմանեն է զՀրամանս սիրոյն։ Օրինօք և այժմ առնիցեմք։

Զի յորժամ լսիցեմք զառաքեալն եթէ Հոգին բարեխօսէ վասն մեր 'ի հեծութիւնս անմռնչս, եթէ և Քրիստոս մեռաւ և բարեխօսէ վասն մեր, թէ և Հայր յիւր որդին ոչ խնայեաց վասն քո, եթէ ընտրեաց ըզքեզ և արդարացոյց, և արդ էր վասն զարհուրիս և զաղաս որ յայսպիսի սէր վայելեցեր և յայդքան խնամս։ Զի վասն այսորիկ իսկ եղոյց զառաքեալ զմերոյն նախախնամութիւնն, որպէս զի համարձակ պատմեսցէ զաստուածայինն։ Զի չասէ թէ պարտ է և ձեզ զնոյն սիրել, այլ որպէս եթէ զնորա խնամոցն զյօժարութիւնն ասէ։

«Ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի» ասէ։ Զի չասաց թէ Այ. վասն զի այսպէս առաւելոց իրքն ընթացեալ են և Քրիստոս և Ած անտեսանէ զնա։ «Նեղութիւն թէ անձկութիւն, հալածանք կամ սով, մերկութիւն թէ վիշտք կամ սուր»։ Տես զիմաստութիւն զերանելւոյն Պաւղոսի. քանզի չասաց զայնպիսիսն որով զօրհանապազն վարիմք ընչիցն ունեւորք և փառացն ցանկութեանքն և բարկութեանն բանաւորութեամբք. այլ մանաւանդ որ ևս բանաւորութիւն քան զայնս էր, և որ զմնութիւնն իսկ բաւական էր բանադրօսել և զՀաստատուն զխորհուրդս եղեալ բազում անգամ և ակամայ իսկ այսպիսի ինչ դիպեսցի՝ նեղութիւն և անձկութիւն. զի թէպէտ և դիւրին են առ թուել, այլ առակայն բնաւ ամենի մի մի ինչ յառաջելոց նեղութեանցն։ Վասնզի յորժամ ասէ նեղութիւնք, զբանտարանն ասէ և զկապանս և զզրկանութիւնս, արտաքսս տառապաննացն միւսեին, և զայլն ևս թշուառութիւնս և զտառապանանս զամենայն, և միով բանիւ առ հասարակ իսկ զամենայն անպատմելի խորոց ակնարկէ, և բազմադիմի միով բանիւ յանդիմանին կացուցանէ։ Նայց սակայն զամենեքումբք զայնողիք եկեալ առնէ։ Սանձ որոյ և որպէս Հարցանեն խնդիր ընդդիմակացանութիւնս մատուցանէ, որպէս զի յայտ առնէ առ ելանողն՝ թէ այսպէս սիրեցեալք և այսչափ վայելեալք 'ի խնամսն՝ չիք ինչ որ զմեզ մեկնել կարասցէ։

Նորա զի մի թողցի թէ 'ի ձեռաց ինչ թուղթ ինչ այն, և...

մանկունս զոյնս բարբառելով, որպէս ասէին՝ թէ «Վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխարս ’ի սպանումն,, : Նոյնպէս է թէ յառաջնմանմք պատրաստեալք յամէն չարչարանս : Նոյն սակայն այսչափ և այսքան պատերազմունս և նոր յերգարկութիւնս բաւականութիւն մեզ վշտացն ’ի մխիթարութիւն տուաւ . մանաւանդ թէ ոչ բաւական միայն, այլ եւս մեծագոյնս : Զի ոչ եթէ վասն մարդկան և կամ վասն երկրաւոր ինչ իրաց զայս Ճգնիմք, այլ վասն անմեռնցուցող թագաւորին սոէ : Նա ոչ այսչափ միայն զինքեանս, այլ և այլոց եւս յօրինեաց պսակս պէսպէս և բազմատեսակս : Նա քանզի զի մարդիկ էին և բնիւ մահուց համբերէին, ցուցանելով եթէ ոչ ինչ յայսցանէ բարբարիմն նուաղէ : Զի թէպէտ և ըստ բնութեանն վիճակեալ էր մահկանայն մեռանել, իսկ զյօժարութեանն զօրհանապազ զնոյնս չարչարել՝ արկ ’ի կամսն նոց . ուստի յայտ իսկ է թէ այնչափ վայելեցաք ’ի պսակն զոր ընդունելոց եմք որպէս զի յամենայն ժամ մեռանել մեզ չածեմք ինչ զմահս, մանաւանդ թէ եւս առաւել քան զնոյնս : Վասն զի է և ’ի միում աւուր միանգամ մեռանել և երկիցս և բազում անգամ . զի որ յայտնի պատրաստ գտանիցի, միշտ զկատարեալ զվարձս ընդունի : Զնոյնս և մարգարէին ակնարկեալ ասէր՝ զամենայն օր : Վասն որոյ և առաքեալ զնոյնս ’ի մէջ ածեալ առ մեծագոյնսն զնոսա զարթուցանել :

Զի եթէ ’ի հնումն, ասէ, Ջանիւք զաշխատութիւնն ունէին վասն երկրին, և յայլն ամենայն զմերձակայ ժամանակս զլուծանելի զերկրն այնպէս արհամարհէին զկենաց և զնեղութեանցս և զվշտացս, զոր ներել թողութեանց ունիմք մեք որ յերկնից և ’ի վերին արքայութեանն և անճառելի բարութեանցն թուլացեալ փափկանօք, որ ոչ և ’ի նոցա չափսն կարացաք հասանել : Նոյց սակայն չառաց զայսօրինակ ինչ, վասն զի մտաց ըստզին եթող զայս, որպէս զի վկայութեանմբն չառացի միայն . և եցոյց եթէ պատարագ իսկ լինելոց է այնպիսի մարմինն, և եթէ չէ պարտ խուսելի և ոչ տրտմել ինչ յորժամ զմ այնպէս մատակարարիցէ : Նա պիտոյ են զնոյնս յառաջ մատուցանէ : Նա զի մի ոք ասիցէ թէ ընդ զայս ինչ խնամատարէ, յառաջ քան զփորձութիւն

զերգն իսկ 'ի մէջ բերէ ասելովն՝ թէ "Համարեցայք որպէս ոչխարս 'ի սպանումն"։ զՀանապազորդ զառաքելոցն զմահս անխնայելի։ Տեսանե՞ս զզօրութիւնն և զՀեզութիւնն։ Զոր օրինակ, ասէ, նոքա ոչ ընդդիմանային յորժամ սպանանէին զնոսա, նոյնպէս և ոչ մեք։

Այլ քանզի մարդկային մնաց էր տկարութեան զայրՀարել 'ի փորձութեանցն, տես որպէս դարձեալ յարուցանէ զլսողն և բարձրաթռիչ առնէ շողալ ասելովն. "Այլ յայսմ ամենայնի, ասէ, առաւել յաղթեմք նովաւ որ սիրեացն զմեզ"։ Քանզի սքանչելիքն այն իսկ են ոչ զի յաղթեմքն միայն, այլ զի նենգչօքն ևս յաղթեմք. և ոչ միայն յաղթեմք, այլ և յոյժ դիւրաւ և առանց քրտանց և աշխատութեանց։ Զի ոչ եթէ իրացն համբերել միայն, այլ և զաւրան բարիոք յօրինել ասէ, որով նշան յաղթութեան ամենայն ուրեք ընդդէմ թշնամւոյն կանգնեմք. մանաւանդ եթէ յիրաւի իսկ, քանզի ա̃ծ է որ զոյգ ընդ մեզ պատերազմի։ Այլ արդ մի՛ անհաւատ լինիցիս եթէ չարչարեալքս չարչարողացն յաղթեմք և կամ Հալածեալքս զՀալածիչսն ըմբռնեմք և որք մեռանիմքս զկենդանիսն պարտեմք. զի յորժամ զզօրութիւնն ա̃յ և զմարդկան ընդ նմին դնիցես 'ի միջի, չէ այնուՀետև ինչ որ խափան կարիցէ լինել առ 'ի զարմանալի և Հրաշափառագոյն և առաւել պայծառ զյաղթութիւնն առնել։ Այլ ոչ լոկ յաղթել, այլ և յոյժ բազում սքանչելեօք. և որպէս ուսանելն իմն նենգչացն թէ չէ առ մարդիկ նոցա պատերազմն, այլ առ անմարտնչելի զօրութիւնն այն։

Այլ դու տես զՀրեայսն իսկ, անդէն 'ի միջի իւրեանց ցուցանէին և 'ի վարանս մտեալ ասէին՝ զի՞նչ արասցուք զարսն զայսոսիկ. քանզի սքանչելիք իսկ այն էին զի մինչդեռ 'ի բուռն իսկ ունէին որպէս զպատժապարտսն և ծեծեալս՝ 'ի վարանս անՀնարինս մտեալ էին, նոքին իսկ այնու պարտեցան որով անկն ունէին յաղթել։ Այլ ոչ բռնաւորք և ոչ ռամիկք և ոչ դիւացն փաղանգք, և ոչ նոյն ինքն սատանայ կարաց նոցա գեր 'ի վերոյ լինել, այլ 'ի բազում և 'ի մեծամեծ իրացն նոցա պարտեալ գտանէր. և զոր ինչ Հնարս Հնարէր Հակառակ նոցա, գտանէր զայն ա̃մ 'ի նոցա կողմ լեալ, զոր և Պաւղոսի տեսեալ ասէր՝ թէ "Այսու ամենայնիւ առաւել ևս յաղթեմք"։

Digitized by Google

«Այր իմն եւ չքնաղ էր օրինակ յաղթութեանն այնորիկ. հակառակօքն իմն զօրանային եւ ոչ երբէք պարտեալ գտանէին, այլ այնպէս որպէս զի ինքեանքն լիցին սիրողք պատերազմին՝ այնպէս համարձակութեամբ ՚ի ներքս վազէին:

«Յաւաստեալ եմ, ասէ, թէ ոչ մահ եւ ոչ կեանք, ոչ հրեշտակք, ոչ իշխանութիւնք եւ ոչ զօրութիւնք, ոչ որ կանն, ոչ հանդերձեալքն, ոչ բարձրութիւնք, ոչ խորութիւնք եւ ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյն Այ որ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի տէր մեր»: Մեծ է առացուածն. այլ մեք չեմք արժանի, վասն զի այսպիսի սէր չունիմք ՚ի մեզ: Բայց սակայն թէ եւ մեծ է, կամեցաւ ցուցանել թէ չէ ինչ առ սիրոյն այնորիկ զոր Ած զնոյն սիրեաց. վասն այնորիկ եւ յետ նորա զիւրն դնէ, զի մի ոք կարծիցէ թէ մեծագոյն իմն առաջ զինքենէ: Եւ զոր ասէն այսպիսի ինչ է. զինչ ասեմք մեք, ասէ, զառժամանակեայս չարել եւ կամ զվարուցս զայսոցիկ զժառանգութենէ. Թէպէտ եւ զհանդերձելոցն որք առնիցէ եւ զմահ եւ զզօրութեանն իւր, որպէս զմահ եւ զկեանս, զզօրութիւնս, որպէս զհրեշտակս եւ զհրեշտակապետս եւ զամենայն իսկ զվերին զարարածս, այս ամենայն իսկ, ասէ, փոքր թուի ինձ առ Քրիստոսի սիրոյն: Քանզի ոչ՝ եթէ եւ մահ որ սպառնայր ՚ի հանդերձեալ անմահութեանն, սակայն եւ այնպէս ոչ ոք կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի. եւ կամ եթէ կեանսն որ խոստանայր անվերջականս, եւ ոչ զայն իսկ առնուլ յանձն: Եւ արդ զինչ պարտ է ասել զթագաւորսն որք ՚ի վայր աստ իցեն եւ կամ զհիւպատոսն եւ կամ զայս անուն եւ կամ զայն անուն. Թէպէտ եւ զհրեշտակաց իսկ ասիցես ինձ, եւ զամենայն իսկ զանմարմնական զօրութեանցն եւ կամ զամենայնէ որ կանն եւ կամ զամենայն իսկ զհանդերձելոցն, ամենայն ինչ փոքր է երկրաւոր թուի, եւ երկնայինք եւ որ յերկիրս եւ որ ընդ երկրաւ եւ որ ՚ի ներքոյ երկնից՝ առ նորա սիրոյն ոչ ինչ վարկանի.

Եւ սակս զի չունէր բաւական այնպիսի ինչ որով զիւր զփափագանսն յանդիմանել կարացուցանէր, այլ ուստեք ըզսոյնս յանդիմանել կարացուցանէր առաւելագոյն՝ թէ «Եւ ոչ այլ ինչ արարած»: Եւ զոր ասէն այսպիսի ինչ է. Թէ-

պէտ և այնքան այլ ևս արարածք եղեն որչափ տեսանե-լիքս և կամ որք իմանալիքն են, ոչ կարէին զիս անջա-տել 'ի սիրոյն Քրիստոսի: Ո՜ այս սէր ոչ եթէ հրեշ-տակք ինչ յայն ձեռնարկէին, քաւ լիցի, և կամ այլ վերին զօրութիւնքն կամէին զնա որոշել 'ի սիրոյն Քրիս-տոսի, քաւ լիցի, և ոչ երբէք. այլ կամեցեալ զիւր ա-ռաւել սէրն ցուցանել զոր ունէր ընդ Քրիստոսի: Քան-զի ոչ եթէ զՔրիստոս սիրէր վասն այնց որ ինչ քրիս-տոսինքն էին, այլ զՔրիստոս իմն վասն Քրիստոսի սի-րէր և առ նա հայէր միշտ. և կասկածէր թէ գուցէ եր-բէք անկանիցի 'ի սիրոյ նորա. որ և քան զգեհեննն ևս աւելի թուէր նմա, և կալ մնալ 'ի նոյն 'ի սէր փափա-գելի՝ քան զարքայութիւնն երևէր:

## ՑՈՐԴՈՐԱԿ

Եւ արդ որում ներելոյ և թողութեան արժանի գտա-նիցիմք մեք, յորժամ նա և ոչ ընդ երկինս զարմանայ առ Քրիստոսի փափագմամբն, իսկ մեք զտիղմ և զկա-նախամեծար քան զՔրիստոս վարկանիցիմք. և նա վասն նորին սիրոյ և 'ի գեհեննն յանձն առնոյր անկա-նել և արտաքոյ արքայութեանն լինել, թէպէտ և ա-ռաւել իսկ կայլին երկրորդեան. իսկ մեք և ոչ զառժամա-նակեայս կարեմք արհամարհել: Եւ արդ իցեմք ար-ժանի գոնեայ օրոյ ուրիցն որք այսչափս հեռացեալ եմք 'ի նորա մեծութենէն. քանզի նա և զարքայութիւնն իսկ չհամարէր ինչ առ Քրիստոսիւ, իսկ մեք զնա իսկ արհամարհեմք, և միայն լոկ բազում բանս ճառեմք վասն նորա: Եւ երանի թէ գոնէ և զայս. բայց այժմ և ոչ զայս իսկ, այլ և զարքայութիւնն ևս առաւել մեր եղեալ՝ և մեր զայն 'ի բաց թողեալ զստուերաց և զե-րազոց զամենայն օր զհետ ընթանամք.

Եւ այն զի ամ մարդասէր է և հեզ, և այսպիսի իմն արար որպէս զհայր ոք որդեսէր, և որդին զժկամակ լի-նիցի ինչ ընդ հօրն խօսս զոր համառապաղ առնայն ար-ցէ, այլ տարապ իմն խնամատարեսցէ: Սոյնպէս և մեզ քանզի չունիմք զփափագումն նորա 'ի միտս մեր կա-մօք, բազում և այլ իրս արկանէ առաւել մեր, որպէս զի զմեզ կարասցէ յինքն յանկուցանել: Բայց սակայն և

ոչ այսպէս առնսուք նմա, այլ 'ի բաց արտաքսեմք և 'ի մեն-կուսոյ 'ի շաղփաղփութիւնս յարիմք: Այլ և ոչ Պօղոս այսպիսի ոք էր. այլ որպէս զբարետոհմիկ մանուկ ոք և ազատ և հայրասէր՝ զհայրենիսն միայն խնդրէր, իսկ զայլմանէն զամենայնն ոչ այնպէս կարի փոյթ առնէր: Քանզի ոչ եթէ առ հասարակ զհայրն և որ ինչ նորայքն էին՝ պատուէր, այլ յորժամ զհայրն տեսանէր, զայլսն չհամարէր ինչ. այլ լաւ համարէր հալածել և չարչարել ընդ նմա, քան եթէ զատանել 'ի նմանէն և փափկանալ:

Նոյն արդ զարհուրեցուք այսուհետև որք և ոչ զինչ կարեմք արհամարհել վասն Քրիստոսի, այլ վասն անձանց իսկ պարտիմք արհամարհել: Պօղոս միայն էր որ սէրն և ճշմարիտ սէր ունէր ընդ Քրիստոսի և զամենայն զչարչարանս յանձին կրէր ոչ վասն արքայութեան ինչ և ոչ վասն անձին պատուոյ, այլ վասն առ նա բարեմտութեանն միայն: Իսկ զմեզ ոչ Քրիստոս և ոչ քրիստոսեանքն կարեն առ իւրեանս ձգել յերկրաւոր իրաց, այլ որպէս օձ կամ քարբ և կամ խոզ և եթէ այլ ինչ միանգամայն 'ի սոյնպիսեացս ընդ տիղմ և ընդ ցեխ քարշիմք: Նոյն արդ ի՞ւ իւիք իցեմք մեք ընդհատ յայնպիսի սողնոց, որք այսպէս և այսչափ և այսպիսի օրինակս ունիմք, և տակաւին ընդ երկիր պշուցեալ հայիմք, և ոչ առ փոքր մի յանձն առնումք 'ի վեր յերկինս նայել:

Այլ սակայն ած և զորդին իւր եւս, այլ դու անգամ և ոչ հաց կամիցիս տալ այնմիկ որ վասն քոյն մատնեցաւ, որ վասն քո սպանաւ: Հայրն վասն քո իսկ 'ի նա ոչ խնայեաց, և այն զի սերտ իսկ որդին էր. իսկ դու տեսանես 'ի սովոյ մաշեալ զնա և զանց առնես. և մանաւանդ զի 'ի նորայոցն իսկ տաս և ծախես, և յերկուանաս 'ի նա ծախել: Նոյն արդ զի՞նչ ինչ քան զայնպիսի անօրէնութիւն չար կայցէ: Մատնեցաւ վասն քո, սպանաւ վասն քո, շրջի քաղցեալ վասն քո. 'ի նորայոցն տաս՝ զի դու օգտեսցիս, սակայն և այնպէս չտաս: Նոյն արդ ո՞րպէս չիցեմք քան զամենայն քարինս եւս անզգայագոյնք, որ այսքան և այսպիսի իրօք ձգէ զմեզ առ ինքն, և մեք տակաւին 'ի սատանայական յանօրէնութեանն վերայ յամառեալ կամք: Նոյն նա չհամարեցաւ բաւական միայն

զխրախճն և զանհոգն, այլ և աղքատ եւս լինել յանձն կալ և օտար և Թափառական և 'ի բանտ մտանել և ընդ հիւանդութեամբք անկանել, որպէս զի գոնէ այնպիսի իրօք կակղացուսցէ զքեզ: Ո՛վ իբր եթէ վասն չարչարանացն նորա չզղջիցես ինչ լաւութիւն, գոնէ վասն աղքատութեանն ողորմեսցիս. և եթէ չկամիցիս վասն աղքատութեանն ողորմել, գոնէ վասն ախտիցն գթասցիս, գոնէ վասն բանտին և կապանացն խոնարհեսցիս: Իսկ ապա եթէ այսոքիկ եւս չառնիցեն զքեզ մարդասիրագոյն, գոնէ 'ի ձեռն թեթեւագոյն խնդրոյն լեր պիտանի. քանզի ոչ ինչ խնդրէ 'ի քէն բազմագինս ինչ և մեծամեծս, այլ հաց միայն և յարկ և բանից մխիթարութիւն: Իսկ ապա եթէ յետ այսորիկ մնաս նոյնպէս վայրենագոյն, գոնէ վասն արքայութեանն լիցիս լաւագոյն, և կամ վասն լաւագոյն խոստմանցն: Իսկ ապա եթէ և զայս ինչ չհամարիցիս, գոնէ վասն նորին իսկ քոյին բնութեանդ խոնարհեսցիս և գթասցիս. յորժամ մերկ տեսանիցես, յիշեսջիր զմերկութիւնն զայն զոր մերկացաւ նա 'ի վերայ խաչին վասն քո. իսկ եթէ վասն այնորիկ չկամիցիս, գոնէ վասն այսորիկ որ յաղքատութենէս մերկացեալ է՝ ողորմեսցիս: Կապեցաւ յայնժամ վասն քո տէրն, այլ և այժմ վասն քո, որպէս զի կամ այնու կամ այսու կակղեցուսցէ զկամս քո, թերեւս առասցես ունէք ողորմութիւն:

Պահեցի վասն քո յայնժամ, այժմ դարձեալ քաղցեայ վասն քո. ծարաւեցի յորժամ կախեցայ զխաչէն, ծարաւի եմ և այժմ դարձեալ 'ի ձեռն աղքատացն, որպէս զի այնու և կամ այսու կարացից զքեզ ինքն յիս ածփոփել և առնել զքեզ մարդասէր վասն քոյին փրկութեան: Վասն այսորիկ և բիւր պարտուց երախտեաց եւս ինձ՝ պարտական. և ոչ որպէս զպարտական պահանջեմ զքեզ, այլ իբրև զպարգևիչ պսակեմ, զարքայութիւնն ընծայեմ փոխանակ փոքունցս այսոցիկ: Քանզի չասեմ եթէ լուծ զիմ աղքատութիւնս և կամ հարստս ինձ մեծութիւն, թէպէտ և աղքատացայ վասն քո. այլ սակայն հաց միայն խնդրեմ և հանդերձ՝ և սակաւս փոքր մի սփոփանս: Իսկ թէպէտ 'ի բանտ մտանիցեմ, չառնեմ քեզ հարկ զկապանսն լուծելոյ և 'ի բանտէն հանելոյ, այլ զմինն միայն խնդրեմ, որպէս զի տեսա-

ցես միայն կատարեալ վասն քո, և բաւական համարեցայ ինձ զերախտիսն քո, և վասն այնքան աղօթից փոխարէն՝ զերկիրս քեզ պարգևեմ։ Այլ այն զի ես ինձէն ինձ ընդդէմն և զկար զկատարածն քո լուծի, այլ ինձ այն բաւական է թէ կամիցիս զիս կատարեալ ընդունել։ Այսպէս եմ և առանց այնր ինձ պատկեր զքեզ. այլ կամիմ զի պատուականն իմ զանձիցես զա, որպէս զի ընկալցի քեզ համարձակութիւն պատճէ։ Այսն այսօրինակ թէպէտ և կարող եմ անձամբ կերակրել, այլ չքինիմ յանձին խնդրելով, և առաւել դրանց քոց զերեկեալ կամ; և զձեռն ձգեալ ’ի յաճնում՝ և զաչս առատատանօք լցեալ. քանզի ’ի քէն ցանկամ կերակրիլ, քանզի ակրեմ զքեզ յոյժ. և մեղանցդ քո ցանկացեալ եմ, որպէս ամլութիւն ինձ է սիրոյ. այլ և զաւարձանամ ևս այսպիսիք, և ամեապան ինձ ամենայն ախեղերաց կարգեալից զքեզ, և յամուանէ կոչեցից զքեզ և մեծացուցից զքեզ, և առաջից ցայնոսիկ որ շաւրջն կայցեն՝ թէ մատուցէք առ իս զիմ կերակրիչն։

Այլ մեք զի յօժամ կերակրեցիցեք յաւմեքէ, ամենչեռնք ինձ և ամենածեանք. ինձ նա վասն զի յոյժ ակրէ ընմեզ, թէպէտ և մեք ըմպեցեալք, նա ինքն առաւել քան զիւրս ևս հեղեցուցանէ զզօրութիւն մեր, և ոչ ամենթ վարկանի առել եթէ մերկ էի և զգեցուցէք զիս, և կամ քաղցեալ էի և կերակրեցէք։

Այլ զայս ամենայն զանուս ածելով, մի միայն զանձնք լիցուք, այլ և ’ի վախճանն ինձ զառաւեցեալն ածցուք։ Ո՛նանդի զինչ օգուտ է այժմ ’ի զանձութեանցդ և յամն բանիցդ և ’ի Հայթեացդ. զի մի միայն խնդրեմ ’ի ձէնջ զյուղուցածն զարծոյն և ’ի ձեռան իրայն զհնազանդութիւն։ Ո՛չ յո է իմ զանձութիւնն, այն և ձեզ շահս. առ և քան զթագն ևս պայծառագոյն ինձ երևի։ Այդու յառաջեալ անդր՝ ինձ և ձեզ առ համարակ յօրինէ զպատկերն ’ի ձեռան ազգաստացն. որպէս զի և առանձն ’ի մերձաւոր ժամանակիս քաղցր յուսով մնամիցեմք և ’ի հանդերձեալ կեանս երթալով ընդ բազմութեան արժանի գտցուք. Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հօր Հանդերձ Հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

# ՃԱՌ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Արդեօք ո՞չ ինչ 'ի վեր քան զբնութիւն վասն սիրոյն Պաւղոսի և Քրիստոսի յառաջագոյն ասացաք ձեզ. այլ և էր իսկ մեծ և զարմանալի և գեր 'ի վերոյ քան զամենայն զբանս և զմիտս։ Բայց սակայն զոր ասելոցս եմք, և առաւել է քան զայն՝ որչափ նորոյն քան զմերս։ Եւ զի թէպէտ և այսչափ ինչ առաւելութիւն է, բայց սակայն մեք մնացաք յընթերցուածս այսր աւուր՝ որ քան զառաջինսն ես պայծառագոյնս և լուսաւոր երևի. զոր և իսկ զմտաւ ածեալ, յասացուածէ անտի յայս յանդիման կացոյց։ Եւ վասն զի 'ի մեծագոյնս իմն հանդերձեալ էր մտել և բազմաց անհաւատալի թուէին իրքն, վասն այնորիկ նախ հաստատէ զորոց հանդերձեալն էր ճառել, զոր և բազմաց իսկ սովորութիւն է զայն առնել վասն անհաւատն լինելոյ ոմանց։ Եւ վասն զի չէին հաստատեալք, վասն այնորիկ ասէ՝ թէ "Ճշմարիտ ասեմ 'ի Քրիստոս և ոչ ստեմ, զի և միտք իմ իսկ վկայեն ինձ, թէ տրտմութիւն մեծ է ինձ և անպական ցաւք սրտի իմոյ, զի ուխտիւք խնդրէի ես ինքն նզով լինել 'ի Քրիստոսէ"։ Զի՞նչ խօսիս, ով Պաւղոս. 'ի Քրիստոսէ՞ 'ի փափագելոյն քումմէ յորմէ ոչ արքայութիւն ոչ գեհեն որոշել զքեզ կարէր, յորմէ ոչ երևելիքս և ոչ իմանալիքն և ոչ այլ ինչ այնպիսիք, իսկ այժմ աղօթես 'ի նմանէ նզով լինել։ Զի՞նչ եղև քեզ, մի թէ շրջեցա՞ր ինչ և կամ փոխեցար և լուծեա՞լ կորուսեր զայնպիսի փափագումն սիրոյն։ Ոչ, ասէ, քաւ լիցի. մի ինչ յերկուանար, ասէ, մանաւանդ եթէ առաւատանամ իսկ նովիմբ այնուիկ։ Եւ ապա ո՞րպէս աղօթես նզով լինել և օտարանալ խնդրես, և բաժանումն այնպիսի զոր յետոյն ոչ կարիցես գտանել. վասն զի յոյժ, ասէ, սիրեմ զնա։ Ե՞ւ և որո՞վ օրինակաւ. քանզի յօրինակի անդ, ասէ, իրքն բնակեն։ Մանաւանդ եթէ հաճոյ թուեսցի, նախ ասասցուք եթէ զինչ նզովքն էին, ապա հարցանեսցուք զնա վասն այդր իրացն,

և զանձկալելի և զհրաշափառագոյն զսէրն նորա անսուտ ճանաչեսցուք ։

Այս արդ զինչ իցեն նզովքն ։ Լուր սմին իսկ որ ասէ ․ «Որ ոք ոչ սիրեսցէ, ասէ, զտէր մեր Յիսուս Քրիստոս, նզովեալ եղիցի» ․ այսինքն է թէ բաժանեսցի ամենեւին և որոշեսցի և օտարասցի ։ Որ օրինակ և որք զնուէրսն նուիրէին նմա, ոչ ոք իշխէր մերձենալ և ոչ ձեռն առնուլ և ոչ հուպ լինել, այնպէս և որոշեալն յեկեղեցւոյ յամենեցունց ՚ի բաց կտրի և ՚ի բաց հեռացեալ գտանի, և փոխանակ այնր անուան օտար իմն անուն առանայ, բազում աւելի յամենեցունց ՚ի բաց ընկէց բաժանի և օտարանայ ։ Վասն նուիրացն առաւել ոչ ոք իշխէր հպանել ․ իսկ որ կտրեն յեկեղեցւոյ հակառա֊կորդս բաժանին ամենեքեան ՚ի նմանէն ։ Արդեօք զի ա֊բաշուսն ոչ զոյգ և միապէս է և սորա և նորա, այլ բա֊զում ինչ է օտարութիւն սորա քան զնորա ․ և օրինակ բաժանմանն ոչ է զոյգ, այլ յոյժ հակառակ այսպիսի ։ Վասնորոյ ՚ի միոյն ՚ի բաց հեռանայցեն, որպէս զի յոյժ մարմնոյն ՚ի վերայ բաղձեալ նուիրացն չիշխեսցեն հպել ․ իսկ զմիւսն որպէս զօտարացեալ յոյժ և ՚ի բաց ձգե֊ցեալ յեկեղեցւոյ այնպէս որոշեսցեն ։ Ուստի և Պաւ֊ղոս յայտ առնէր ասելովն եթէ «Աղօթիւք իսկ խնդրե֊քէի նզովս լինել ՚ի Քրիստոսէ» ։ Այս ոչ եթէ ըղձ ա֊սաց թէ կամէր միայն, այլ եւս առատութեամբ ասէ, և այնչափ զի և աղօթիւք եւս խնդրէր ։

Իսկ արդ եթէ խառնեցուցէ ինչ զքեզ որ ակամա֊գոյնդ իցես զայս առնելով, ոչ միայն զիւրսն անձեր զմտաւ, այլ և զպատճառս սորա թէ էր վասն կամի զայս առնել, և արդ կարիցես ուսանել զառաւելութեան սիրոյն նո֊րա զհանգամանս ։ Վասն զի և երբեմն և թլփատէր իսկ ․ և արդ ոչ եթէ ՚ի մերկ լինելոյն հայրենեաց, այլ ՚ի միւսումս և ՚ի պատճառս վասն որոյ և զայն գործէր, և վասն այսորիկ մանաւանդ իսկ զքանչանաւոր լինէր ։ Ո՛չ ոչ միայն թլփատէր, այլ և զզոհս եղերծ, և զհա֊մարտոյց ․ և չև եւս վասն այսորիկ ասեմ եթէ հրէաբար վարէր, այլ մանաւանդ եթէ այնուհետև իսկ մնացեալ ՚ի հրէութենէն, և մաքրեալ զինքն՝ սիրոյ ծառայ զատոյ Քրիստոսի ։ Այս զոր օրինակ յորժամ տեսանեն զնա զի թլփատէր և զզոհս մատուցանէր, ոչ կարեն զատա֊

խափել զնա վասն այնորիկ թէ անդրէն հրեշտակ, այլ մանաւանդ առէին թէ այնու եղեր արժանի պատկերին՝ որով տառապացաւն ’ի հրեշտակութենէն, որպէս և յորժամ լուիցես թէ ցանկանայր նզով լինել ’ի Քրիստոսէ՝ մի ինչ վառանդեսցիս և խորհեսցիս ; այլ վասն որոյ իսկ այնորիկ պարտիս զնա ամենայն համարձակութեամբ զովել յորժամ զպատճառսն ուսցիս՝ թէ էր վասն զայն կամիցի ։

Զի եթէ ոչ զպատճառսն իրացն քննիցեմք, ապա և զՄովսէս մարդասպան վարկանիցիմք, և զԱբրահամ դարձեալ ոչ միայն մարդասպան, այլ և որդեսպան ։ Եւ զՓենեհէս և զՊետրոս ընդ սպանողսն դատեսցեմք ։ Այլ զինչ ասեմք զորոցն զայնցանէ, ուր և զամենեցունցն իսկ զո՞յ դատեսցեմք՝ եթէ չէ պահեալ զայսպիսի զկանոնս, և բազում ինչ անպատեհս կարծեմք ’ի հրամանացն, որ քաւ և մի երբէք լիցի ։ Այլ ’ի վերայ այսր ամենայնի և զպատճառսն և զդարսն և զժամանակն և զամենայն ինչ վասն որոյ գործն գործի՝ ժողովեալ առատախոհականութեամբ ձեզ մատուցանեմք յորժամ զգիրսն պատմիցեմք, զոր և այժմ իսկ վասն երանելոյն Պաւղոսի առնեմք ։

Այլ արդ զինչ իցեն պատճառք նորա իրացն, զարձեալ ասէ վասն փափագելոյն Յիսուսի ։ Այլ ոչ ասէ թէ վասն նորա աղօթեմ, ասէ, նզով լինել ’ի նմանէ վասն եղբարց իմոց և ազգականաց ։ Այլ այս նորա խոնարհութեանն էր ։ վասն զի չվարկանէր մեծ ինչ առնել, և Քրիստոսի զայս նման չնորհեալ ։ Վասն որոյ ասէր՝ թէ ազգականաց իմոց, որպէս զի թագաւորէ զաւազակ ինչ ։ Այլ զի զամենայն ինչ վասն նոցա կամէր, լուր յաղօթացն ։ զի յորժամ ասաց թէ վասն ազգին իմոյ, յարեաց ’ի սմին՝ թէ “Որոց որդեգրութիւնն և փառքն և կտակարանքն և օրէնսդրութիւնն և պաշտօնն և աւետիքն ։ որոց հարքն, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ՝ որ է ’ի վերայ ամենեցուն ած՝ օրհնեալ յաւիտեանս ամէն ,, ։ Այլ արդ այս զինչ է ։ զի եթէ վասն այլոց հաւատալոյ ինքն նզով կամէր լինել, ապա պարտ էր և վասն հեթանոսաց զնոյնս առնել ։ իսկ եթէ վասն հրէիցն միայն աղօթէր նզով լինել, ցուցանէ ապա եթէ ոչ վասն Քրիստոսի ինչ կամի զայս, այլ առ նոքա ընտրութեանն ։

Այլ թէպէտ և վասն հեթանոսաց իսկ կամիցի զայսպիսի ինչ ասել, ոչ այնպէս զօրէ երևելին իրքն. իսկ յաղ- ժամս վասն Հրէիցն միայն կարէ զայն, առաջ երևի մա- քուր և յայտնի եթէ վասն Քրիստոսի փառացն փա- թայր զայն գործել. Այլ գիտեմք եթէ մեծագոյն իմն թուին ձեր տասցեալքս. բայց առաւելն թէ չափաւորա- ցիք, 'ի մասայ իսկ համաշխարհական յայտնապէս ասել զառաջացումն ։

Քանզի ոչ եթէ լոկ ընդ վայր առաց զոր ինչ առաջն, այլ վասն զի ամենեքեան առելին և զնոյն մեծագործեալ քննէին՝ եթէ որդիք են՞ արժանի եղեն կոչել Հրեայքն և որքան ընկալան, և նախ քան զամենեսեան զնոսա ծանեաւ, և այսուհետև և այսքան ինչ վայելեցին 'ի փառսն, և նախ քան զամենայնս նոքա ծառայեցին նմա, և աւետիս ըն- կալան, և հարքն նոցա բարեկամք էին, և որ քան զա- մենայն մեծ էր և նախ և առաջին զի հարք և նախնիք եղեն Քրիստոսի, այս է զոր ասէ՝ թէ "յորոց Քրիս- տոս ըստ մարմնոյ,,. Արդ այժմ առաքեալս անկան և ա- նարգեցան, և փոխանակ նոցա մնոյն այնոցիկ որոց եր- բեք չէր ծանուցեալ զնա մարգարէն 'ի հեթանոսաց։ Այլ քանզի զայս այսպէս ասէին և հայհոյէին զնմ, և իբրև լսէր զայսմանէ Պաւղոս արտաքսեցեալ լինէր, զի ցաւէր նոքա կարի՝ վասն այս փառացն, յայնժամ աղօ- թէր նզովել լինել, որպէս թէ լոկ ինչ հնար լինէր նոցա ապրեցանոց, և զայսպիսի զհայհոյութիւն 'ի բաց լուծա- նելոյ, . . . . . .[1] և առ հասարակ իսկ միաբանութեամբն ըն- թացեալ ընդ վերինսն, այնպէս և ընդ առաքելոց, ընդ հանդերձեալսն և ընդ երևելեաց և ընդ աներևութեան, ընդ տրամաբանութեան և ընդ հեշտութեան և ընդ իւրաքան- չիւր ոք. և ոչ ինչ ամենևին եթող, ամենայն այնու չյա- գեցաւ, այլ և այլ իմն աշխարհ որ չէին արարք՝ կամէր յանդիման կացուցանել, որպէս զի մեծ իմն առաց, և յետ այնր ամենայնի առաջ և զաւարմանակերպ զան- հաւանելն յիշեաց։ Այլ ասեն թէ զանդրդարձեալ յայտնա- նէ. չէ և չէ իսկ այս, այլ յորդորանք որ յառաջ թացեալ էին՝ նմ ազգականի մտաւորութիւնք. զի եթէ զայնուգամէ ինչ ասէր, որպէս արդարև նզովել կամէր լինել 'ի Քրիստոսէ.

1 Թուղթն ահա պակասաւոր յօրինակին.

քանզի այնպիսի մահ մանաւանդ առնէր զնա զաւակից Քրիստոսի և ՚ի նորին ՚ի փառսն վայելել:

Այլ են ամենք որ յանդգնին և զայս առնել: Եւ եթէ զանհնարինն լինէր, ասեն, առնէր. այլ և զնա ծառայելոցն յանդգնեցին առնել՝ թէ սպանդ իւրն և նուէրս կամէր լինել Քրիստոսի: Իսկ արդ ծով ոք այնպիսի, թէպէտ և յոյժ ՚ի վաստակաւորաց իցէ և կամ յառաւել ՚ի ծուլից, չառաջնորդեսցէ աշխատութեամբ իւրոց, զոր նա վասն աղքատականացն հանդերձեալ էր առնել: Իսկ արդ ՚ի բաց թողեալ զառաքելականն զկատարելութիւնն և զամենայն շնորհատուութիւնս, քանզի և պատասխանատուութեան իսկ այնպիսիքն չէին արժանի, որպէս և ոչ մանկունքն որ աշխարհիկքն իցեն, ՚ի նոյն ինքն յառաջացեալ բանիցն դարձեալ եղբարք և փափկացուցք յանդգնութեան սիրոյն, և ամենայն հեշտութեամբ ՚ի նոյն խորս զուգեսցուք, և զնոյն զանձագրական սիրոյն զմտաւ ածցուք. մանաւանդ եթէ բնաւ ինչ ոք առնիցէ, չկարէ բնաւ արժանին առնել, վասն զի քան զամենայն անդամս յորդորեալս և քան զարարչեալ զնոց Եւս ջերմագոյն է սէրն այն, և ոչ ոք բնաւ արժանին կարիցէ ինչ առնել բանիւ. այլ նա միայն գիտէ զայն՝ որ ամենայնի հաւատարիմ զնա ստացաւ:

Նոր այսուհետև զնոյն բան դարձեալ ՚ի մէջ ածցուք. զո՞ր. զայն զոր ասացն՝ թէ “Աղօթս առնէի ես ինքն նզով լինել ՚ի Քրիստոսէ„: Իսկ արդ ո՞ ոք իցէ այն. նա ինքն, եսն, նա որ վարդապետն եղև ամենեցուն, որ զբիւր ուղղութիւնս յանձին ցուցանէր, որ բիւր պսակացն ակն ունէր, որ այնպէսն փափագէր նմա որ քան զամենայն ինչ զնորա սէրն նախամեծար վարկանէր, որ զօրհանապազ նորա սիրոյն հրակիզեալ բոցբոջէր, և զամենայն ինչ կրտսեր և ՚ի վայր համարէր առ նորա սիրոյն և գթոյն: Քանզի ոչ եթէ հանդերձեալ էր սիրել ՚ի Քրիստոսէ՝ միայն առնէր զայս, այլ վասն իւրոյ յոյժ սիրոյն. և մանաւանդ եթէ այս իսկ էր և յայս միայն հայէր, որպէս զի բարւոք նորա սիրոյն յագեսցի: Իսկ թէպէտ աղօթէ զայս, այլ ոչ թէ այսպիսի ինչ հանդերձեալ էր լինել և կամ նզով լինել. հանդիմանայ ապա այնուհետև պատասխանատրութիւն առնել մեղադրութեանցն, և զհռչակելին յամենեցունց ՚ի մէջ հրամայէ ածել: Իսկ յառաջ քան ըզ-

յայտնի առնելն՝ յայսպիսի պատասխանատուութենէ մսի, և զսէրն յառաջագոյն ցուցանէ յորժամ ասիցէ՝ «Ուէ որոց որդեգրութիւնն և փառք և օրէնսդրութիւն և պաշտօնն և աւետիքն»: Այլ ոչ այլ ինչ ասէ զայս, եթէ ոչ զի ա՟ծ կամէր զնոսա կեցուցանել. և զայս յայտ առաւելագոյն արար, յորոց Քրիստոս, ասէ, ըստ մարմնոյ և որ ինչ առ հարսն աւետիքն եղեն: Իսկ նոքա, ասէ, անագորոյն մտօքն իւրեանց ընդդիմահարեցին իւրեանց երախտաւորին. վասն որոյ և զայն ևս դնէ որ ա՟յ պարգևացն է յայտնիչ՝ և ոչ եթէ նոցա ինչ գովութիւն:

Այլ քանզի և որդեգրութիւնն այ եղև՝ շնորհացն էր, և փառքն և աւետիքն և օրէնքն, և զամենայն ինչ իմացեալ և զմտաւ ածեալ՝ թէ որչափ ինչ փութացաւ ա՟ծ հանդերձ որդւովն կեցուցանել զնոսա, ուժգին մեծագոչեալ ասէր՝ թէ «Որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն»: Ընդ ամենեցուն զգալութիւնս իմքն առաքելոյն մատուցանէ միածնին ա՟յ. զի թէպէտ և այլքն, ասէ, հայհոյեցին, այլ մեք որ զանձառելին նորա գիտացեալք և զանեզրական զխնամատութիւնն, և զգաղտնի նախախնամութիւնս նորա ՚ի միտ առեալ, գիտեմք եթէ ոչ հայհոյութեան՝ այլ փառաբանութեան արժանի է:

Այլ ոչ շատացաւ այսու մտօք միայն առաքելովն, այլ ևս յառաջ մատուցեալ՝ խորհուրդ իմն աւելի յանձին ցուցանէ և յոյժ իմն ՚ի կիր արկանէ զբանն. և ոչ յառաջեալ ձայնէ առ նոսա այսպիսի ինչ իրս, մինչև զկարծիսն ՚ի բաց բառնալ ՚ի նոցանէն, զի մի կարծիցեն թէ որպէս ընդ թշնամիս ինչ վիճիցի ընդ նոսա, զոր և յառաջ իսկ ասէր՝ թէ «Եղբարք, իմ կամք սրտի և աղօթք առ ա՟ծ՝ վասն նոցա փրկութեան են»: Այլ աստ դարձեալ յետ այլոց ասացուածոցն և զայն ևս կարգէ՝ զմին կարծել գոլ թշնամիս նոցա և նախանձ ինչ ունել նոցին, վասն որոյ և ոչ եղբարս և ազգայինս հրաժարեաց անուանել զնոսա: Ոչ թէպէտ և վասն Քրիստոսի ասէ զոր ինչ ասացն, այլ սակայն և առ նոսա տարածանէր զխնամն, և յառաջ հորդէ ճանապարհ բանին և յամկարծեաց կամի ազատ առնել վասն այնորիկ՝ զոր հանդերձեալն էր ասելոց, և յայնժամ ապա մխի ՚ի բազում բանս խնդրոյն, վասն զի և էին իսկ ՚ի խնդիր բազումք առացելոցն. Էր վասն ամենայն ընկալեալ զաւետիսն արտաքս

անկան, եւս այլոցն ամենեւին եւս ուրեք չէր լուեալ, և յառաջ քան զծնանել այլոցն։ Եւ արդ զայսպիսի զանհնարինն կամեցեալ լուծանել այժմ, յառաջ քան զգիտաղութիւնն՝ մեզ լուծումն առնէ։ Ոչ ի մի որք ասիցէ թէ զոր առաւել հզօր փառացն էր քան զմերն, և քում օգնականութեանդ կարօտ է զի մի բանն նորա անկցի, վասն այնորիկ կամիս լինել նզով, առ այս ամենայն ասէր հաստատութեամբ՝ ոչ անկանի ինչ բանն այ, ասէ, այլ զի ցուցից զպարգեւս սէրն իմ զոր ունիմ առ Իսրայէլ, և այսպէս կատարեմ զելս իրացն։ Եւ ոչ ինչ, ասէ, նուազ գտաւ բանն այ, և ցուցանեմ թէ հաստատուն կան աւետիքն զոր ած ասաց Աբրահամու՝ թէ «Ի քեզ և զաւակի քում տաց զերկիրս զայս»։ և դարձեալ թէ «Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք»։

Եւ արդ տեսցուք ո՞ որք իցեն զաւակք նորա. քանզի ոչ եթէ ամենայն որ 'ի նմանէն են՝ զաւակ նորա իցեն, վասն որոյ և ինքն ասէր. «Վասն զի ոչ ամենեքեան որ յԻսրայէլէն՝ Իսրայելեանք իցեն, և ոչ որ զաւակ Աբրահամու են՝ ամենեքեան նորա որդիք իցեն»։ Իսկ ապա եթէ ուսցիս թէ ո՞յք իցեն զաւակ Աբրահամու, տեսանիցես զի տուեալ են աւետիքն զաւակի նորա, և ապա առնուցուս 'ի միտ եթէ ոչ անկաւ բանն այ ինչ։ Եւ արդ ասա ո՞ որք իցեն զաւակքն։ Ո՛չ ասեմ յանձնէ, ասէ, այլ նոյն ինքն 'ի հնումն մեկնէ զայս առակըս՝ թէ «Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ»։ Եւ զինչ է Իսահակաւն, մեկնեա մեզ. այսինքն է «Ոչ ի ոչ որդիք մարմնոյ են՝ նոքա են որդիք այ, այլ որդիք աւետեացն՝ նոքա համարին 'ի զաւակ»։ Եւ դու տես զիմաստութիւն Պաւղոսի և զմեծարգութիւն մեծութեանն. չասաց թէ որդիք մարմնոյն այնոքիկ են զաւակ Աբրահամու, այլ եթէ որդիք այ. այսու զմերձակայս ընդ հնոյն միաբանէ։ Եւ չասէր թէ լոկ Իսահակ էր զաւակ Աբրահամու։ Եւ զոր ասէն այսպիսի ինչ է, եթէ որք ըստ օրինակին Իսահակայ են, նոքա են որդիք այ և զաւակ Աբրահամու։ Վասն այսորիկ իսկ ասաց՝ եթէ «Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ». զի ուսանիցիս և 'ի միտ առնուցուս թէ որք ըստ այսմ օրինակին կոչին զաւակ Աբրահամու։

Եւ արդ որպէս ծնաւ Իսահակ․ ոչ ըստ օրինաց բնութեան և ոչ ըստ զօրութեան մարմնոյ, այլ ըստ զօրութեան աւետեացն, որպէս և ասէն՝ թէ «Ի ժամանակի յայսմիկ եկից, և եղիցի որդի Սառայի»։ Նոյնպէս յայտ է թէ այս աւետիքս ապերեալ և բերին Աստուծոյ ստեղծանն զԻսահակ։ Ոչ թէ կարէր և 'ի հարկէ կայր արգանդին որպէս ըստ կարգի կանանց, այլ ոչ եթէ նախքին բնութեան էր, այլ աւետեացն բանն եւ զօրութիւն առ 'ի ծննդեանցն զանձուկն։ Նոյնպէս և մեք ծնանիմք 'ի ձեռն բանին այն․ քանզի յաւազանէ ջրոյն բանին այն է որ ծնանի զմեզ և վերստին ստեղծու․ վասն զի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ մկրտեալ ծնանիմք․ և այն ոչ եթէ ըստ բնութեան իմիք, այլ ըստ աւետեացն այն է՝ մկրտութիւնս։ Եւ զոր օրինակ յառաջ անուանեալ զծնունդն Իսահակայ և յայնժամ առ 'ի կատարումն, նոյնպէս և զմեր յառաջ քան զ[illegible] ժամանակս վերստացեալք 'ի ձեռն աւետեացն մարգարէիցն, և յետ այնորիկ 'ի գործ եկն առ և կատարեցաւ։ Տեսանես որպէս թէ երկոցունց և կամ զիարդ մեծագունս յօրինեաց զաւետիսն, մանաւանդ զի և յոյժ բազում զիւրաքն։

Իսկ առաջ եթէ ասիցեն Հրէայքն՝ զինչ է թէ «Ի Իսահակ կոչեսցին քեզ զաւակ», և ոչ յԻսահակայ ծնեալ էին՝ զիս մարգարէիցն 'ի զաւակ, առաջ որպէս էր և զերդանգեցուցանէ և զամենայն իսկ զայլսն որդի անուանեն, քանզի նախնին նոցա Իսրայէլ՝ էր որդի Իսահակայ։ Իսկ այժմ ոչ միայն չանուանին, այլ և յոյժ իսկ օտարացեալք դատաւին։ Տեսանես զի չեն որդիք մարմնոյն որդիք նոյ, այլ և 'ի նմին իսկ 'ի բնութեան որ 'ի ձեռն մկրտութեանն վերստին առաջնորդեալ ծննդեանն։ Իսկ առաջ եթէ զարդարանսն իմն ասիցես, ասեմ և ես քեզ առել վասն Յակոբայ․ այլ որպէս առա աւետեացն իմն Հօրն է, նոյնպէս և ամենայն աւետեացն իմն աւետեացն․ վասն զի բանն զնորա և ծննդեան էր արգանդին վասն ամուլութեանն և ծերութեանն։

Եւ արդ ուսցուք մեք հաստատուն զմեր բարեպաշտութիւնն և արժանի նմին յաջողութ վասն առաքինութեանն․ վասն զի և չունի իսկ իմն մարմնաւոր և ոչ երկնաւորեաց․ նոյնպէս մի և մեք։ Զանազան ոչ բանն և ոչ կամք մարմնոյ և ոչ առ զանկութեանն զիրկս ապականե-

Digitized by Google

լով և ոչ 'ի հեշտութիւն անկողնոյն ինչ ծնաք, այլ յետ մարգարէութեանցն ամենայն ինչ վճարեցաւ։ Եւ զոր օրինակ նոքա 'ի հասակաց անտի յուսահատք էին առ որդեծնութիւնն, սոյնպէս և մեք հնացեալք ծերութեամբք մեղաց կարեմք՝ եթէ կամիմք՝ վերստին նորոգել։ Եւ յանկարծօրէն երևեցաւ Իսահակ մանուկ, և ամենեքին նովաւ եղաք որդիք ա̃յ և զաւակ Աբրահամու։

" Եւ ոչ այսչափ միայն, այլ և 'ի Ռեբեկայ 'ի միոջէ անկողնոյ ունելով Իսահակայ հօր մերոյ,,։ Մեծ էր խնդիրն. վասն որոյ 'ի բազում խորհուրդս յուզէ և 'ի կիր արկանէ, և ամենայնուստ ձեռնարկէ լուծանել ըզհիացումնն։ Զի թէ հրաշափառագոյն և նոր ինչ էր յետ այսչափ ինչ իրաց անկանել յաւետեացն նոցա, ապա ևս առաւել այն է մեզ մտանել 'ի նոցա բարութիւնսն, որ ոչ ինչ այնպիսեաց ակն ունէաք։ Եւ յանկարծօրէն սոյնպէս ինչ մեզ դիպեցաւ, որպէս ինչ եթէ իցէ ոք որդի թագաւորի, և ընդունիցի աւետիս որպէս թէ զիշխանութիւնն հօր առնլոց իցէ, և նա 'ի յոռութիւնս հատանիցի և ընդ անարժանս զինքն կարգիցէ. և այլ ոք դատապարտեալ և բիւր չարեօք լի, և 'ի տանէ կապանաց ելեալ առնուցու զիշխանութիւնն նորա առժամայն։ Եւ արդ զի՞նչ ունիցի ասել. եթէ անարժան էր որդին. մանաւանդ եթէ սա ևս անարժան։ Ապա ուրեմն պարտ էր կամ պատուել 'ի միասին և կամ տանջել։ Այսպիսի ինչ առ Հրեայս և առ հեթանոսս եղև, մանաւանդ եթէ ևս առաւել սքանչելիք։ Զի ամենեքեան անարժանք էին, յայտ արար ասելովն՝ թէ " ամենեքին մեղան և նուազեցան 'ի փառացն ա̃յ,,։ Իսկ նոր և չքնաղ այն էր, զի ամենեցուն անարժանք գտանելով՝ հեթանոսք միայն ապրեցան։

Եւ յետ այսորիկ և այլ ինչ մտածութիւն ասէ. զի եթէ չէր հանդերձեալ, ասէ, ա̃ծ լինել զաւետիսն, է՞ր վասն և խոստանայր։ Մարդիկ որ զհանդերձելոցն փորձ ինչ ոչ գիտէին և բազում անգամ խաբեալք, և որում չէինն արժանի առնլոյ՝ այնպիսի ինչ պարգև աւետարանեցաւ, իսկ որ զմերձակայսս և զհանդերձեալսն հաւատեաւ յառաջն գիտէ՝ նմա ամենայն ինչ առաջի կայր, և յայտնի էր եթէ անարժանս զինքեանս կաղմեցին

խոստմանցն, և վասն այսորիկ չէին ինչ առնելոց յառաջնե֊լոցն, և էր վասն, առնէ, խոստացաւ: Սա և դու զխօսս երկուց գրոց Պաւղոսի՝ ցուցանելով թէ մի իցէ Կորնթացւոց որում խոստացաւն զայն. քանզի այսորիկ ցուցանելով, առաքս և նա 'ի մէջ դայ եթէ լեալ էին աւետիքն ամե֊նայն, զոր և ինքն խօսի յայտ արարեալ ասելովն՝ թէ «Սէ ամենեքեան որ յԿորնթացւոց են, խորհեսցիք իցեն»: Վասն այսորիկ և ոչ զՅակոբ անուանէ գնէ, այլ զԿո֊րնթեցին, որ առաքելութեան արժանացեալ էր և վկայէին պար֊գևացն և այլ աւետութեանն խորհրդակից:

Այլ զինչ է զոր ասէն, եթէ «Մանկանքն մարմին և նուաղեալ են 'ի փառացն այս»: Ոչ թէ ամենեքին մեր֊ղան, այլա զխօսս եկեղեցի առաքին և այլքն կարծէին: Վասն զի չկամեցան մերձենալ առ նա. 'ի նորա կողմանէ ամե֊նեքեան ապրեցան, վասն զի զամենեսին կոչեաց: Նոյն առաքեալն չզինէ այժմ զայս ինչ, այլ և ս առաւելութեամբ արնէ զլուծումն, և այլով իմն օրինակաւ մեւս և ս խոր֊գիր 'ի մէջ բերէ, և զոր օրինակ յառաջինն եղեն մեղ֊զանչ նարմնոյն այլով անձնարին իրօք: Այլ քանզի խոստ֊ըեցին 'ի նմանէն թէ մարթս 'ի Քրիստոսի արդարութեան ամենեքեան վայելեսցեն, և նորա զՔրիստոս 'ի մէջ ածեալ ասէր. «Ոչ թէ միոյն յանցանօք մահ թագաւորեաց. ապա և ս առաւել որք զառաւելութիւն շնորհացն ընկալ֊լան՝ կենօք թագաւորեսցեն»: Այլ առաքեալ զՔրիստոսն չլուծանէ, իսկ զնորայն լուծանէ. և այսու ցուցանէ իսկ եթէ աւելի իմն բան ունի յաղագս այսորիկ՝ որ վասն նոցայն մեռաւ, զի ցուցցէ թէ իշխանութիւն ունի որ֊պէս և կամի: Քանզի միայն մեղանչելով և բազմաց վասն նորա ատամիջեալ՝ ոչ թուի բազմաց լսա կարգի լեալ. իսկ միայն ուղղութեամբք բազմաց արդարանալ՝ յայտ լսա կարգի է, մանաւանդ եթէ այս վայել է: Նոյն առաքեալն և այժմ չեղուծ զչքաւորութիւն նոցա. այլ որ֊չափ անդրայն եթող զասացուածն, այնքան ընդերանէ զՔրիստոսն. ապա այնուհետև 'ի մեւսն ևս փոխի, առ֊ատի և առաքեալքն յայտնի լինէին: Այլ հիացումն իմն մտածութեանց ակնարկէ առ 'ի լուծանելոյ զխնդիրն:

Քանզի առ Հրեայսն էր նորա ջանն. և զօրինակսն զայն զոր յառաջագոյն եբեր 'ի մէջ, ոչ յայտ ինչ լու֊ծանէ, վասն զի չէր ինչ այնոցիկ պարտական, որպէս առ

Հրէայն պատուիրապահին. ուսուր և զնոյն իսկ զամենայն անտի առնէ յայտնապէս ։ Ոչ է զարմանալ, ասէ, եթէ 'ի Հրէից ոմանք ապրեցան և ոմանք ոչ ապրեցան այժմ. ուսուր և վերագոյն իսկ այնա 'ի Հայրապետէն անտի զնոյն լինել. Ո՛ր վասն, ասա ինձ, Իսահակ միայն անուանի զաւակ, ուսուր և Իսմայելի նա էր Հայր և այլոց բազմաց։ Այլ յաղախնէն մօրէ էր նա։ Արդ այս զի առ ծնեալն. բայց սակայն ոչ ինչ հակառակին հանել զնա վասն մօրն։ Իսկ վասն Քետուրայ, ասէ, զինչ ասիցես, ո՞չ ազատ էր և ազատ որդիս ծնաւ. իսկ ապա ընդէ՞ր ոչ պատուեցան գահերիցութեամբն որպէս Իսահակ։ Արդ զինչ ասիցեմ զնոցանէն, ուր և Ռեբեկա իսկ Իսահակայ միայն եղև կին և երկուս մանկունս ծնաւ և զերկոսեան Իսահակայ, և որք ծնան՝ 'ի նմին հօրէ և 'ի նմին մօրէ ծնան, և զնոյն զերկուսն լուծին և զոյգ ունէին զհայրն և զմայրն. առ այսոքիւք զի և երկաւորիք եւս էին, և առ հասարակ զամենայն ինչ ունէին։ Արդ չունիս ասել աստ եթէ աղախին էր մայրն որպէս առ Իսմայելիւն, և այսպէս 'ի նմին 'ի մօրէ ծնեալ, և ոչ եթէ այլ և այլ մարս ունէին որպէս և Քետուրն և Սառայն, որք 'ի նմին ժամու հաղորդեցին երկանցն։ Վասն այնորիկ և Պաւղոսի յայտնի յօրինակն եղեալ ասէր՝ թէ ոչ միայն առ Իսահակ այսպիսի ինչ դիպեցաւ, "Այլ և 'ի Ռեբեկայ 'ի միոջէ անկողնոյ, ասէ, Իսահակայ հօր մերոյ որ չև եւս էին ծնեալ և ոչ գործեալ բարի ինչ կամ չար, որպէս զի ըստ ընտրութեանն յառաջադրութիւնն այ հաստատեսցի ոչ 'ի գործոց, այլ 'ի կոչեցելոյն, քանզի ասացաւ նմա՝ թէ մեծն նուաղին ծառայեսցէ, որպէս և գրեալ է թէ զՅակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի"։

Ո՞ր վասն, աղէ ասա ինձ, ոմն սիրի և ոմն ատի, ոմն ծառայէ և ոմն ազատանայ. վասն զի ոմն չա՞ր էր և ոմն բարի։ Մանաւանդ զի և յառաջ իսկ քան զծնանելն ոմն պատուէր և ոմն դատապարտ լինէր. վասն զի մինչև ծնեալ էին՝ ասէր այ, թէ "երէցն կրտսերոյն ծառայեսցէ"։ Արդ էր վասն ասէ զայս այ. քանզի չէր իբրև զմարդ ոք որ կայ մնայ վախճանի իրաց ինչ՝ և ապա իմանայ ըզբարին և զոչ բարին. իսկ նա և յառաջ քան զծնանելն գիտէր ո՛ր բարին էր և որ ոչն այնպիսի։ Այսպէս և առ

խորհրդականացուցելքն լինելը յետ քարոզում պղծանելութեան : Այլ զինչ ասեն , ասէ , վասն Սոդոմայ և Գոմորայ՝ թէ ամէն քաղաք էր և ամէն չար : Այլ առ խորհրդականութիւն խրատ , վասն զի հաղորդ մեղացն զառանց ամենեցունց . քանզի առ հասարակ պատգամ երկիր որթուն ամենեցուն , բայց ամենայն ամենայն զանձն ողորմութեան և ամենայն ոչ .

«Որ անցք ասէ թէ ողորմեցայց որում ողորմեցայց , և գթացայց յոր գթացայց» . Սոյն և ՚ի մերում աւետարանն է ասացեալ : Որ անցք զինչ ասիցես վասն փարաւոնի զի անմեղանչէ , այնչափ մեծամեծ պատուհասին եաւ . և արդեօք ասիցես թէ խոստ էր և անհնազանդ : Այլ արդ նա՛ մեզ անյն , և այլ որ ոչ երբէք . և արդ օրէնք ամենեքեան յայտ անօրինակ անմեղանչութեան : Սինչ և առ Հռովմայեցին յորժամ զոչ ժողովուրդն ժողովուրդ կոչէ , այլ և ոչ զմարդն զամենեցուն ձեռն պատուասց արժանաւոր առնէ . քանզի զի ասէր , «Ինձ խնդիր կարել զանազ ծառա , մնացորդք մնալոյ ասացեալն» : Այլ էր վասն մնացորդք մնալոյ : Տեսանեմ պահպանել մնացորդութեանն երկից զատուցելոյն . մնացեալոց եթէ յիշմանի խօսի : Որ անցք յորժամ արկանիցեն զանցանս ՚ի պակասութիւն պատասխանատուութեան , մի խնդրոյն վարդապետի անդրէն առնէր լուծումն խնդրոյն . Թէպէտ և պատճառս ասացեալ գրեն տրամադրութեան , էր վասն ամենայն ձեռն ՚ի քեզ հղեա , և զինքն ելս ընդդիմանալով զործեա :

Այլ արդ ասէ առաջին , ով Հռովմայեցի , այսչափ պատմութեանց ՚ի լուծանելոյ զպատասխանատուութեան , և զինչ մեզ վասն կոչմանն հեթանոսաց քարոզեա օրէնքն . և մնացցուն զի ես խօսի ուսուցիչ պատճառս արդարութեան ամենայն , որով հեթանոսք արդարացան և զօրք անկանը : Այլ արդ զինչ խնդրն պատճառքն : Որ անցք մեղք ՚ի հաւատոց , խօսի դրաւ ՚ի գործոց օրինաց . և յայնժամ հակառակեալ կայքն , վասն այսորիկ և ամենայն ունակ մնացեալքն : «Որ անցի , ասէ , ասէր են իմ արդարութեանն և զխորհրդոց զարդարութիւնն կամին կացուցանել , քանզի իմ արդարութեանն ոչ հնազանդեցան» :

Այլ արդ լուծումն այսպիսի խնդրոյ զհետին ՚ի մերում խօսք զամենեցուն արժան է ասել , վասն զի այսպիսի իմն յառաջ անէ զառաջադրութեան երանելին Հօգւոյն . ասէ : Սիրելի զի յայսմիկ և լուսաւոր զառաջադրութեան աւանդէ , և զոր-

Digitized by Google

բաշխմունքն որք յառաջելոց անտի քննել մարթասցուք. Եւ այնմ հաստատ լիցուք թէ ամենայն փոյթն Պաւղոսի վասն այնորիկ էր՝ առ 'ի ցուցանել զամենայն զառաջեալսն՝ թէ զարժանին ած միայն գիտէ, եւ 'ի մարդկանէ եւ ոչ որք, թէպէտ եւ յոյժ վարկանիցի զանձնէ թէ գիտեմ, այլ բազում ուրեք անկանիցի յայսպիսի հաշուէ: Իսկ որ զանձառելի զխորհուրդսն մեր հաւաստեաւ գիտէ եւ քննէ, նա միայն գիտէ յայտնապէս թէ ո՞յք իցեն արժանի պսակաց եւ ոյք տանջանաց եւ պատուհասութեանց: Ասն այսորիկ բազումք առ 'ի մարդկանէ կարծեցան թէ բարիք իցեն, եւ տանջեաց յորժամ յանդիմանեցանն. իսկ զորս [1] չարեաց կարծիս ունէին, եւ զնոսա պսակեաց եթէ չէին այնպիսիք. ոչ եթէ 'ի ծառայական լինել 'ի բարոյիցն, այլ յընտանի յիւրոց իրաւանցն զհաւատոյն եւ զանկշռելի զհամբերն բերէ, եւ ոչ կայանայ մինչեւ իրքն 'ի գլուխ ելանիցեն, եւ ապա ընտրեսցէ զյոյսն եւ զուղիղն. այլ յառաջ քան զլինելն գիտէ: Իսկ արդ զի մի անյայտ դարձեալ զբանին ասանիցեմք, անդրէն 'ի նոյն յառաքելական բանն դարձցուք:

"Իսկ ոչ այսչափ միայն, ասէ, այլ եւ 'ի Ռեբեկայ 'ի միոջէ անկողնոյ Իսահակայ հօր մերոյ": Կարէի, ասէ, ասել եւ 'ի սոցանէ որ 'ի Աբրահամու էին, այլ չասեմ, որպէս զի մեծաւ առաւելութեամբ զնշան յաղթութեն առից. այլ զայնս ածից 'ի մէջ, ասէ, որ միոյ հօր են եւ միոյ մօր: Ասն զի երկոքեանն 'ի Ռեբեկայ էին եւ յԻսահակայ 'ի սերմ որդւոյն եւ յընտրելոյն, եւ որ յառաջ քան զամենեսին պատուեցաւ, վասն որոյ ասացեալն էր՝ թէ "Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ". այնմ ասացաւ, որ մերն ամենեցուն հայրն եղեւ. եւ եթէ մեր հայր նահապետն եղեւ, սորա որդի էին եւ որք 'ի նմանէն են հարք լինել, այլ ոչ եղեն: Տեսանես զի ոչ առ Աբրահամու միայն այն լինէր, այլ եւ առ նորին որդւոյն, եւ ամենայն ուրեք հաւատքն եւ առաքինութիւնն պայծառանան, եւ զհաւատոյ ազգականութիւնն նա գործէ: Իսկ աստի ուսանիմք եթէ ոչ միայն վասն օրհնաց ծննդեանն, այլ եւ վասն արժանի լինելոյ նորին առաքինութեան ծննդոցն՝ այնու լինին որդիք նորա: Ոչ եթէ

1 Օրինակին յորս:

ըստ օրինաց ծննդեանն միայն էր, սակայն պարտ էր և Ես-աւայ վայելել որպէս զՅակոբն. քանզի նա և 'ի մե-ծեալ և յառնել առաջածնեալ էր։ Ո՛չ ոչ եթէ այսմ մի-այն էր խնդիր, այլ և բարուցն՝ որում ոչն խոկ ժառանգ-նեաց, զորոյ և զկարգն ես մեզ վարդապետս յօրինէ։ Այս ցուցանէ թէ ոչ չար էր և ոչ բարի, վասն այնորիկ յառաջ պատուեցաւ, որպէս զի մի խոկասցես հաւատա-ցեալս կայցես այն՝ թէ զիարդ բարիք են որք 'ի հեթանո-սաց են առաւել քան որք 'ի Թլփատութենէն։ Ոչ ի-թէպէտ և այնպէս ունէին խոկն զճշմարտութիւն, այլ չև ևս ունէ զայն, քանզի ծանրատաղտուկ իմն թուէր. այլ յոյն յառաջգիտութիւն ածեալ զամենայն ընթերցց. ըստ որում թէպէտ և յայժ ոք մեղադրեսցէ, զիջեսցէ պատե-րազմել։

« Մինչև ծնեալ էին, ասէ, առաջասացաւ նմա՝ թէ մեծն ծառայեսցէ կրտսերոյն »։ Այս ցուցանէ թէ ոչ ինչ օգուտ մարմնաւոր բարեբախտութեան է, այլ զհոգւոյն առա-քինութիւն պարտ է խնդրել, զորոյ և զգործն յառա-ջագոյն գիտէ Աստ. վասն որոյ և ասէ իսկ՝ թէ « Մին-չև ծնեալ էին և մինչև գործեալ էր բարի ինչ կամ չար, զի ըստ ընտրութեանն յառաջադրութիւն այ հաս-տատեսցի, առաջասացաւ նմա թէ երէցն կրտսերոյն ծառայես-ցէ »։ Ո՛չ յառաջգիտութեանն այ էր, որ և անդէն յերկանց խոկ ընտրեաց 'ի միմեանց. որպէս զի, ասէ, երևեսցի ընտրութիւնն այ ըստ յառաջգիտութեանն եղեալ. յառաջադրէ օրէն զբարին և զչար նոցին կորովեացն եսաւ և քարոզեաց։ Այս արդ մի ինչ ասէր, ասէ, թէ ըն-տրեաց ընթերցայ և զմարգարէն, և ծառայեցի այսպէս ժամանակս. քանզի որ գիտէ զկորձ հոգւոյն, նոյն ինքն գիտէ որք են արժանի փրկութեանն և որք ոչ իցեն։ Այս արդ ներբեալ անհասանելի ընտրութեան նորա. քան-զի նա ինքն միայն գիտէ հաւատացեալ որք արժանի են պսակելոյ։

Ըստ որում կարծեիր դու, ասէ սա, գիտել թէ Մա-թէոս այնպէս լաւ լինելոց իցէ յեա այնպիսի զգործն ցուցանելով։ Ոչ որ զանձնաւորեալն գիտէ և որ զմիտս միոյ և զխորհուրդս մինչև ծնեալ իցեն հաւատար գիտէ և քննէ թէ եւք պիտանիք լինելոց և եթէ ոչ, նոյնպէս և զմարգարէն որ 'ի մէջն Թագաւորն էր՝ զէ-

տէր. և զպղովքն զամենեքումբք զանց արարեալ՝ ընդ նորա միայն ընդ գեղեցկութիւն սքանչացեալ ընտրեաց, և զյօժարութեանն զբարեպաշտութիւն տեսեալ եդ ՚ի նմա յիւրոց շնորհաց անտի, և այնպէս ընտիր զնա ամենեցուն յայտ յանդիման եցոյց: Ո՛չ թէ յայլ յարուեստն որք առժամանակեան են և ըստ իւրաքանչիւր իրաց գիտեն քննել, ոչ եթէ որք միանգամայն չինականքն և տգէտքն առաջի կայցեն՝ արկանիցեն ՚ի համար և կամ ՚ի նոցանէ ինչ ընտրիցեն ՚ի յառաջիկայ իրս անդր, այլ զորոց զփորձն հաւաստեաւ գիտեն յայտնապէս: Բազումք և ՚ի շինականաց իսկ ընտիրք. երևեցան և պատուեցան, իսկ այլոց անփորձ գտեալ անարգեցան: Այլ և բազումք զայս և ՚ի ձիոն առնէին և յականսն պատուականս. և այլոց ևս արուեստագէտքն այնպիսի ինչ քննութիւն իրաց առնեն: Ո՛չ եթէ նոքա այնպէս գիտեն ընտրել զականսն և զձիսն և զգործիս արուեստիցն, ապա ևս առաւել մարդասէրն Ած, որոյ անեզրական իմաստութիւնն է, որ միայնն գիտէ զամենայն յայտնապէս. ոչ եթէ ՚ի մարդկային մտաց ինչ ուսանի, այլ իւրով ընտանի իմաստութեամբն հաւաստեաւ և աներկբայելի զամենեցունց զիւրաքանչիւր ուրուք բերէ զհամար: Վասն այսորիկ և զմաքսաւորն ընտրեաց և զաւազակն և զպոռնիկն. իսկ զքահանայսն և զծերսն և զիշխանսն անարգեալ արտաքս եհան: Նոյնպէս և առ մարտիրոսօքն այսպիսի իմն դիպեալ լինէր. քանզի բազումք յոյժ յանարգացն ՚ի ժամանակի նահատակութեանն պսակեցան, և ընդդէմ իմն իրքն գործէին. և որ ՚ի բազմաց կարծէին եթէ մեծ և սքանչելիք իցեն, և ՚ի ժամանակի նահատակութեանն գթեալք ՚ի վայր կործանեցան:

Այլ արդ մի այսուհետև հաւաստիս պահանջեր յարարչէն, և մի ասեր եթէ այս անուն տանջի և այս անուն պսակի. քանզի գիտէ ինքն հաւաստեաւ զամենայն ինչ առնել, վասն որոյ և ասէր՝ թէ "զՅակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի": Այլ յիրաւի իսկ. վասն զի դու ՚ի վախճանէ անտի իրացն գիտացեր, իսկ նա յառաջ քան զլինելն գիտէր յայտնապէս. քանզի ոչ եթէ զգործոյն զտեսիլ խնդրէ Ած միայն, այլ և զյօժարութեանն զբարեպաշտութիւն: Վասն զի այսպիսին թէ-

պէտ և յանկարծօրէն ինչ ըմբռնմանն մերձանչէ, երագ իսկ անդէն վերստին կարէ ստանալ. Թէպէտ և ժամանակ մի յամրեցէ 'ի չարիսն, երագ իսկ ամենեցուն ա̃ծ որ զամենայն գիտէ, յիշեցուցանէ նմա. զոր օրինակ և որ յայնպիսիսն է միշտ ապաշխարեալ, Թէպէտ և բարիս ինչ վարկանիցի գործել, զամենայն կորուսանէ հանդերձ չար գործովքն և մտօքն որ զայնպիսիսն գործէ։ Վասն զի և Դաւիթ սպան և շնացաւ, և քանզի ոչ խորհրդեամբ և միշտ զնոյնս խոկալով գործեաց, այլ յանկարծօրէն 'ի յափշտակութենէ իմն իրքն գործեցան, վասն այսորիկ իսկ երագ առժամայն 'ի բաց կարաց լուանալ։ Իսկ փարիսեցին ոչ ինչ յայսպիսեացս յանցգնեցաւ գործել, այլ յոյժ ձոխաբանէր բարեգործութիւքն, ապա չար յօժարութեամբն զամենայն կորոյս։

“Այլ արդ զինչ ասիցեմք, միթէ անիրաւութիւն ինչ իցէ առ 'ի յա̃յ. քաւ լիցի”։ Այլ եթէ այդպէս իցէ, լուր և որ ինչ ըստ կարգին է։ Վասնզի անդ առաքինութիւն և չարութիւն ընտրեցին. իսկ աստ մեղքն ամենեցուն իսկ հրեիցն էին, վասն զի առ հասարակ իսկ արարին զորթն ամենեքին իսկ. բայց սակայն ոմանք 'ի նոցանէ տանջեցան, ոմանք ոչ տանջեցան. վասն որոյ և ասէր իսկ՝ թէ “Ողորմեցայց որում ողորմեցայց, և գթացայց յորս գթացայցն”։ Վասնզի ոչ եթէ քո է, ասէ Մովսէսի, գիտել զիք արժանի իցեն մարդասիրութեանն, այլ ինձ թողացո, ասէ, զայն։ Իսկ եթէ Մովսէսի չէր զայն գիտել, ապա ևս առաւել ձեզ։ Վասն այսորիկ և ոչ այնպէս լոկ եդ զասացեալսն, այլ առ ով ասացն՝ և զնա ևս յիշեաց. քանզի Մովսէսի ասէ, որպէս և զկերպարանսն արժանի հաւատարմութեան ցուցանելով յանդիմանեսցէ զնոսա։

Այլ ապա իբրև աստ զլուծումն չքաւորութեան նոցա, դարձեալ ընդ մէջ կարէ զասացուածսն, և այլ իմն դիմադրութիւնս 'ի մէջ մուծանէ ասելով՝ թէ “Ոչ որ կամիցին և ոչ որ ընթանայցէն, այլ ըստ ողորմութեանն ա̃յ։ Վասնզի ասէ գիր ցՓարաւոն՝ թէ 'ի սոյն իսկ յայս զարթուցից զքեզ, որպէս զի 'ի քեզ ցուցից զզօրութիւն իմ և պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր”։ Զի որպէս անդ, ասէ, ոմանք պատժեցան և կէսք տանջեցան, սոյնպէս և աստ. սակայն պահէր։

Digitized by Google

Որպէս գործեաց այլ իմն գլխաւորութիւն 'ի ներքս ածէ. "Որպէս ուրեմն ում կամի ողորմի և ում կամի խըստանայ, մեղ ևս, ասէ, ընդէ՞ր դնիցէ, քանզի կամացն նորա ո՞վ կարէ ընդդիմանալ,,: Տեսանե՞ս որպէս փութացաւ զայս ասել ամենայն ուրեք չքաւորութիւն պատասխանատուութեան նոցա: Այլ ոչ զլուծումն անդամ 'ի մէջոյ առնէ. վասն օգտի նոցա իմն գործէ զայս: Այլ նախ ըմբերանէ զայնպիսիկ որք ասէինն զայսպիսիսն. "Այլ արդ, ասէ, դու ո՞վ ես մարդ որ պատասխանի տայցես այ,,: Առնէ զայս յայն սակս, որպէս զի զընդվզայրաքննութիւնսն 'ի բաց ձևիցէ և զբազում յուզախնդիրսն, և սանձս 'ի բերան եդեալ խրատեսցէ. զնոսա 'ի մէտ ածել՝ եթէ զինչ ած իցէ և զինչ մարդ, և եթէ որչափ անհասանելի են տեսչութիւնք նորա և կամ որպէս գեր 'ի վերոյ քան զմեր զմիտս և զխորհուրդս գտանին, և եթէ զի պարտ է յամենայնի նմա հաւատալ: Այլ յորժամ առ այս կազմիցէ զլսողն և յինքն ամփոփիցէ կամ հարթիցէ զնորա զբարսն, յայնժամ ապա բազում ուղղութեամբ յայտնէ նմա զլուծումն, և դիւրընկալ առնիցէ զբանն: Այլ չասէ թէ անհնարինք են զայնպիսիսն լուծանել. այլ զի՞նչ, թէ անօրէնութիւն է զայսպիսի ինչ խնդրել. պարտ է, ասէ, ամենայնի հաւատալ զոր ինչ ածն առնիցէ և ոչ եթէ 'ի քննիս ինչ արկանել, թէպէտ և զմիտս նորա չգիտիցեմք. վասն որոյ և ասէր՝ թէ "Դու ո՞վ ես որ պատասխանի տաս այ,,:

Տես որպէս անարգեաց զնոսա, և զխարդ վիճոյց զայտումն հպարտութեանն նոցա: Դու ո՞վ ես, ասէ, միթէ հաղո՞րդ ինչ ես իշխանութեանն այնմիկ և կամ դատաւո՞ր նստար այ. քանզի առ նորա համեմատութեամբն դու ոչ ինչ կարես լինել, ոչ այս ինչ և ոչ այն. այլ և ոչ իսկ ինչ ես, քանզի ասելն եթէ ոչ ինչ ես՝ ևս մեծ է քան զայն յորժամ ասիցէ թէ դու ո՞վ ես. զայն ասէ՝ թէ ոչ ուստեք: Այլ և այլ իմն զայրացմութիւնս ցուցանէ հարցուածովն. և չասաց թէ դու ո՞վ ես որ պատասխանի տաս այ, այլ թէ դու ո՞վ ես որ ընդդէմ պատասխանիդ առնես. այսինքն է թէ որ ընդդիմաբանեսդ և ընդդէմ կաս: Քանզի ասելն եթէ այսպէս պարտ է և ոչ այնպէս, ընդդիմաբանութիւն է.

Digitized by Google

Տեսէ՞ր որպէս երկեցոյցն, որպէս վիրաւորեացն եւ որպէս 'ի դողութեան կալաւ զնոսա: Այս ընտիր եւ առաքինի վարդապետի է, որ ոչ յամենայն ժամ զցանկութիւն աշակերտացն կատարէր, այլ մանաւանդ զի զնոսա առ իւր ընտանի բարոյն ձգիցէ եւ զփուշան նախ 'ի բաց խլիցէ եւ ապա զսերմն ցանիցէ, եւ մի իսկոյն անդէն առ ժամայն առ հարցումն նոմ ուրեք պատասխանի առնիցէ:

“Միթէ ասիցէ՞ ստեղծուած զստեղծիչն իւր թէ ընդէ՞ր այսպէս արարեր զիս. միթէ ո՞չ ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն 'ի նմին զանգուածոյ առնել անօթս զոմն 'ի պատիւ եւ զոմն յանարգանս”: Բայց ոչ եթէ զանձնիշխանութիւն ինչ 'ի բաց եբարձ ասելովն, այլ եցոյց եթէ մինչեւ ցորչափ ինչ պարտ է հնազանդել մեզ այ: Քանզի որք յայ զհաւատոյն պահանջեն, չեն ինչ ընդհատ 'ի կաւոյ. քանզի ոչ եթէ ընդդէմ ինչ ասել նմա չէ պարտ, այլ եւ ոչ 'ի խնդիր լինել եւ խօսել եւ կամ ձիկ հանել եւ ոչ շշնջել ինչ ամենեւին եւ կամ զմտաւ ածել, այլ նմանել այնպիսի անշնչոյն եւ հետեւել ձեռաց բրտին՝ երթալ ուր եւ կամիցի զմեզ տանել: Այս օրինակի վասն, եւ ոչ 'ի ցուցումն ինչ առաքինութեանն, այլ 'ի հաստատութիւն հնազանդութեան եւ 'ի լռութեան: Իսկ զայս ամենայն ուրեք պարտ է մեզ պահել եւ 'ի միտ ածնուլ՝ թէ ոչ զամենայն զօրինակսն բոլորովին պարտ է մեզ ընդունել, այլ զպիտանիսն միայն ընտրել եւ որ մեզ օգտակարքն են, եւ զայլն ամենայն 'ի բաց թողումք: Որպէս յորժամ ասիցէ՝ թէ “Բազմեցար ննջեցեր իբրեւ զառիւծ”. այսինքն է զանկռութիւնն եւ զահաւորութիւն միայն ընդունիցիմք, եւ ոչ եթէ զգազանապէսն եւ կամ զայլ ինչ որ ինքեան առիւծուն ընտանի բարք իցեն: Իսկ դարձեալ յորժամ ասիցէ՝ թէ “Պատահեցից նոցա իբրեւ զարջ”, զաան-ջանական զիրսն յայտ առնէ. իսկ յորժամ ասիցէ՝ թէ “Աստուած մեր հուր ծախիչ է”, զծախումն որ 'ի տանջանացն լինիցի՝ յայտ առնէ: Այնպէս եւ աստ զկաւն եւ զբրուտն եւ զանօթսն կարեւոր էր 'ի կիր արկանել:

Իսկ յորժամ դարձեալ զնոյն իրս ածեալ ասիցէ. “Միթէ չունիցի՞ իշխանութիւն բրուտն կաւոյն առնել 'ի նմին զանգուածոյ անօթս զոմն 'ի պատիւ եւ զոմն յանարգանս”, մի վարկանիցիս եթէ վասն արդարութեան

ինչ ճառեաց ասիցէ զայս Պաւղոս, և մի դարձեալ 'ի բարուց ինչ հարկաւորութենէ, այլ առ 'ի ամենեւաթին իշխանութեանն զանազանեալ. զի թէ ոչ այսպիսի ինչ իմանայցեմք, բազում անպատեհ իրք մերձենան։ Վասնզի զվարուց իսկ աստ ճառեաց զբանն վասն բարւոյ և որք ոչն են բարիք, և զմարդն կամի առանց իրիք պատճառանաց ցուցանել։ Սորին վասն և Պաւղոս պատերազմեալ ամենայն ուրեք կամէր ցուցանել՝ եթէ զլխաւորութիւնն միայն ցուցանելով, լինի գործակից ա̃ծ և պսակէ։ Եւ ոչ այլ ինչ այժմ աստ կամի յարդարել, այլ միայն հաւանեցուցանել զլսողսն և բազում առաւելութեամբ կամի զնոսա ա̃յ ընծայեցուցանել, և ամենեւին ոչ ինչ երբէք պահանջել հաւատոյս 'ի նմանէ։ Որ օրինակ և բրուտն, ասէ, 'ի նմին զանգուածոյ զոր ինչ կամի առնել առնէ, և չիք ոք որ ընդդէմ ասիցէ ինչ, սոյնպէս և ա̃ծ 'ի նմին յազգէ մարդկան զոմանս պսակէ և զոմանս տանջէ և զայլսն պատուէ, և մի ինչ 'ի քննիս անկանիր և մի բազում խնդիրս յուզել. այլ երկիր պագ նմա միայն և նմանեա կաւոյն. և զոր օրինակ նա երթայ զհետ ձեռաց բրտին, սոյնպէս և դու բարուցն այնորիկ որ զայսպիսին մատակարարէ. քանզի ոչ ինչ ընդ վայր և լոկ գործէ, թէպէտ և դու տգէտ ես անճառ իմաստութեան նորա։ Եւ արդ զիարդ նմա ներես՝ այսինքն է բրտին՝ 'ի նմին զանգուածոյ առնել ազգի ազգիս՝ և չլինիս մեղադիր, իսկ յա̃յ հաւատոյս պահանջես վասն տանջելոցն և որք պատուելինն, և չթողու ցնս զգիտելն՝ թէ որ արժանի իցեն պատուոյն և որք չիցենն։ Այլ արդեօք ասիցես՝ թէ 'ի նմին զանգուածոյ են, այսինքն է յէութենէն, ապա ուրեմն պարտէին և յօժարութեամբն սոյնպիսիք գտանել։ Ասաէ քանզի մոլորութեամբ լի է բանս։ Եւ զոր առ բրտին ոչ իշխեցին ասել վասն պատուականին և անարգին, աստ համարձակութեամբ իմն առաջարկութիւն առնեն բանին՝ վասն տանջանաց և պսակացն։ Եւ արդ զինչ իցէ, յանձնակամութիւն ելեալք զայս ասեն. բայց մեք սակայն թէ հուն ինչ իցէ զամենեսեան ածցուք 'ի խրատ, և ցուցցուք թէ ըստ իւրաքանչիւր յօժարութեան իրքն վճարին. բայց սակայն զայս միայն առաջի դիցուք ասելով՝ թէ մի ինչ ընդդէմ ասասցուք ա̃յ, այլ զամենայն

ինչ նորա անհասանելի խնամոցն թողցուք ։ Վասնզի միշտ իսկ օրինակի մեծի պէտք են վասն տառաշխիկայիցն, վասն որոյ և 'ի մէջ իսկ ածէ զայն, որով մարթէր զարթուցանել զլսողսն. զի եթէ չէր մեծ ինչ և առաւել, ապա ոչ ցանկ զայն 'ի կիր արկանէր, որով կարողն էր յանդիմանել զընդդիմակացսն ։

Այլ արդ յորժամ զընդվզող յանդգնութիւնս նոցա ընդերանեաց, ապա մեծաւ իսկ առաւելութեամբ ածէ զնովիմբ զլուծումն. և զինչ իցէ լուծումն ։ "Իսկ ապա եթէ կամէր ա̃ծ ցուցանել զբարկութիւն իւր և յայտնի առնել զզօրութիւն իւր զոր համբերէր բազում երկայնմտութեամբ անօթոյն բարկութեան պատրաստելոցն 'ի կորուստ, զի յայտնի արասցէ զմեծութիւն փառացն իւրոց 'ի վերայ անօթոցն ողորմութեան զոր յառաջագոյն պատրաստեաց 'ի փառս նորին. զոր և կոչեաց իսկ զմեզ ոչ միայն 'ի Հրէից, այլ և 'ի հեթանոսաց„ ։ Այս զոր ասէն այսպիսի ինչ է. անօթ բարկութեան էր Փարաւոն, մարդ որ զիւր զբարկութիւնն բորբոքէր 'ի ձեռն ընտանի իւրոյ խստասրտութեանն ։ Այլ քանզի 'ի բազում երկայնմտութեանն ա̃յ վայելեաց և չեղև ինչ պիտանի, այլ կաց մնաց նոյնպէս առանց ուղղելոյ, վասն որոյ ոչ միայն անօթ բարկութեան կոչէ զնա, այլ եթէ պատրաստեալ 'ի կորուստ, այսինքն է յիւրոց ընտանի կամացն պատրաստեցաւ 'ի կորուստ ։ Վասնզի ոչ եթէ ա̃ծ ինչ պակասեցոյց 'ի նմանէ զուղղութիւնն, այլ ինքն իւրովք կամօքն պատրաստեցաւ 'ի կորուստ, և զրկեալ գտաւ յամենայն ներելոյ և 'ի թողութենէ. զի թէպէտ և յառաջագոյն գիտէր զայն ա̃ծ, այլ համբերէր բազում երկայնմտութեամբ առ 'ի ածել զնա յապաշխարութիւն. զի եթէ զայս ոչ կամէր, ապա և ոչ երկայնամտէր իսկ ։ Այլ քանզի ոչ կամեցաւ գալ յապաշխարութիւն և լինել պիտանի երկայնմտութեամբն, այլ պատրաստեաց զինքն ընդդէմ բարկութեանն, ապա այնուհետև արկ 'ի կիր և ա̃ծ զայն ինչ՝ որով զայլսն մարթէր ուղղել նորա տանջանօքն, որպէս զի նորա կորստեամբն այլք փութագոյնք եղիցին առ 'ի խրատն, և զիւր զզօրութիւնն ցուցանիցէ ։ Ոչ է ոչ կամք ա̃ծ այսպիսի ինչ իրօք ցուցանել զիւր զզօրութիւնն, այլ խնամօքն և բարեգործութեամբք զոր առ մեզ, և այս ամե-

Digitized by Google

նայն ուրեք անդուստ 'ի վերուստ իսկ երեւէր ։ Զի եթէ Պաւղոս չկամի երեւել այնպէս զօրաւոր, "Ոչ զի մեք, ասէ, ընտիրք երեւեսցուք, այլ զի դուք զբարիս գործիցէք,,, ապա մանաւանդ եթէ եւս սաստել ամենեցունցն ած ։ Երկայնամտեաց զի յապաշխարութիւն ածիցէ զնա, իսկ նա ոչ կամեցաւ ապաշխարել յայնչափ 'ի բազում ժամանակս ։ Իսկ ապա ած զինչ. միանգամայն եցոյց նմա զքաղցրութիւն իւր, ընդ նմին յայտնեաց և զզօրութիւն իւր ։ Վասն զի ոչ կամեցաւ ինքն օգտել և ոչ յայնչափ երկայնմտութենէն, և որպէս առանց ուղղելոյ կաց մնաց, ընկալաւ զտանջանսն, որով յայտնի եղև զօրութիւնն նյ, սոյնպէս և որք բազում մեղան և ապաշխարեցին՝ ողորմեցաւ, և այսու յայտնի եղև մարդասիրութիւն նորա, այսինքն է ողորմութիւն ։

Եւ չասաց թէ մարդասիրութիւն, այլ փառք որով ցուցանէն իսկ թէ մանաւանդ իսկ են փառք նյ, և յառաջ քան զայն ամենայն զայս փոյթ յանձին կալաւ ։ Զի յորժամ ասիցէ թէ զոր յառաջն պատրաստեաց 'ի փառս իւր, ոչ եթէ նյ միայն է այս՝ ասէ, ապա թէ ոչ զինչ արգել էր ամենեցուն միանգամայն ապրել ։ Այլ և 'ի մէնջ իսկ խնդրէ, և այսու ցուցանէ զնյ զյառաջգիտութիւնն, և զանջրպետութիւնն որ 'ի միջի կայր ընդ Հրէայս և ընդ հեթանոս՝ 'ի բաց բառնայ ։ Սակայն և աստ ոչ փոքր ինչ կազմէ զբանսն զպատասխանատրութիւն. և ցուցանէ թէ ոչ միայն 'ի Հրէից ոմանք կորեան և ոմանք ապրեցան, այլ և առ հեթանոսս նոյն եղև. վասն որոյ և. չասէ թէ ամենայն հեթանոսք, այլ թէ 'ի հեթանոսաց. սոյնպէս և ոչ զամ Հրէայսն, այլ եթէ 'ի Հրէից ։ Եւ զոր օրինակ Փարաւոն անօթ բարկութեան եղև իւրով ընտանի չարութեամբն, սոյնպէս և սոքա անօթք ողորմութեան ընտանի իւրեանց բարեմտութեամբն. զի թէպէտ և մեծ մասնն նյ էր, այլ և ամենայնն իսկ, բայց սակայն փոքր մի և ինքեանք նպաստ եղեն յիրսն. վասն այնորիկ և չասաց իսկ անօթք ողորմութեան և համարձակութեան, այլ թէ ողորմութեան, ցուցանէ թէ ամենայն իսկ նյ էր ։ Վասն զի և զայն զոր ասէրն իսկ թէ "Ոչ որ կամիցին և ոչ որ ընթանայցէն,,, զի թէպէտ և 'ի կարգի ընդդիմաբանութեան եդեալ իցէ, բայց սակայն և 'ի Պաւղոսէ

յորժամ ասի այս, չունի ինչ պակասութիւն։ Զի յոր-ժամ ասիցէն՝ թէ ոչ որ կամիցին և ոչ որ ընթանայ-ցեն, ոչ եթէ զանձնիշխանութիւնն 'ի բաց բառնայ, այլ ցուցանէ՝ զի թէպէտ և ամենայն ինչ քո է, այլ կա-րօտ ես վերին պարգևացն. և թէ պարտ է և կամել և ընթանալ, և վստահ լինել ոչ 'ի մեր ընտանի ջանս և 'ի վաստակս, այլ յԱյ մարդասիրութիւնս. զոր և այլուր իսկ ասէր՝ թէ "Ոչ ես, այլ շնորհքն Այ որ ընդ իս"։

Եւ բարիոք ասաց՝ թէ զոր յառաջին պատրաստեաց 'ի փառս։ Եւ քանզի այսու իմն նախատ լինէին զի շնոր-հօքն ապրեցան, և ամօթ և նախատինս իմն անձանց վարկանէին, յաղագս այնորիկ մեծաւ առաւելութեամբ բառնայ զայսպիսի կարծիս 'ի միջոյ. զի թէ Այ այնպիսի իրք փառք բերէին, ապա ևս առաւել նոցա՝ որով Ածն փառաւորեցաւ։

Եւ հայեաց 'ի բարեմտութիւնն և յանսպառ իմաս-տութիւնն Պաւղոսի. զի կարող էր և առանց զՓարաւո-ւոն 'ի մէջ բերելոյ և զնորին զպատիժն՝ 'ի նոցունց իսկ 'ի Հրէից անտի որք մերժանն՝ առնել յայտնի զբանն և ցուցանել թէ որոց այնպիսի հայրքն էին՝ ձեզ իսկ ար-րեցին մեղքն. և ապա զինչ, ոմանք կորեան և ոմանք ողորմութիւն գտին, և հաւանեցուցանէ զնոսա՝ մի ինչ զարմանալ թէ և 'ի հեթանոսաց ոմանք ապրեցան առ Հրէիցն կորստեամբն. այլ զի մի ինչ ծանրագոյն զբանն գործեսցէ, վասն այսորիկ զիրս տանջանացն 'ի բարբա-րոսէն յայտնանէ բերէ 'ի մէջ, որպէս զի մի հարկաւո-րեսցի կոչել զնոսա անօթս բարկութեան. իսկ զողոր-մութեան անօթսն 'ի բազմութենէ Հրէից անտի բերէ 'ի մէջ։ Եւ յայս և զԱյ իսկ բաւական էր զարմանալ. զի բազում անգամ ետես զնոսա պատրաստ առ 'ի կո-րուստ, և միշտ զիւր զերկայնմտութիւնն և զներողու-թիւնն ցուցանէր առ նոսա. և ոչ միայն երկայնմտու-թիւն, այլ թէ բազում երկայնմտութիւն. բայց սա-կայն չկամեցաւ զայսպիսի ինչ զփորձ իրացն 'ի Հրէից անտի առնել։

Եւ արդ ուստի՞ իցեն, ասէ, ոմանք անօթ բարկու-թեան և այլք ողորմութեան. յընտանի իւրեանց յօ-ժարութենէն։ Իսկ Ած որ յոյժ բարերարն է՝ յերկա-քանչիւրս ցուցանէ զիւր զքաղցրութիւնն. և ոչ եթէ

փրկելոցն միայն ազգին, այլ և փառաւորի յիւրմէ կողմանէ. քանզի յերկայնմտութեանն և նա և սոքա միապէս վայելեցին: Իսկ ապա եթէ չարչրեցաւ, իւր ընտանի մտացն էր ամենայն վնասն, քանզի յանձակոյս կողմանէ անտի չգտան ինչ նուազ իրք առնմա որով մարթն էր տալել:

Իսկ արդ առաւ մեզ զլուծումն խնդրոյս 'ի ձեռն իւրաց աւրաք, որպէս և այլ աւասկք արժանի հաւատարմութեան զբանն կազմիցես: Իսկ ապա զինչ գործիցէ. բերէ զմարգարէսն 'ի մէջ և ցուցանէ թէ նոքա իսկ անդուստ 'ի վերուստ յառաջագոյն զնոյնս գոչէին. քանզի Ովսիա, ասէ, զայսոսիկ դրեալ նշանակէր առեղծս այսպէս. "Կոչեցից զոչ ժողովուրդն ժողովուրդ իմ և զչսիրեցեալն սիրեցեալ": Իսկ զի մի ասիցեն թէ անարգելով զմեզ՝ զմեօք զանց առարեր, և զՈվսիա կոչեցեր վկայ և ասես թէ վերստին գոչէր և ասէր՝ թէ կոչեցից զոչ ժողովուրդն ժողովուրդ իմ: Քանզի որք էին որք չէին ժողովուրդ, յայտ է թէ հեթանոսք. և որք էին դարձեալ չսիրեցեալքն, նոքին ինքեանք հեթանոսք. բայց սակայն ասաց զնոցանէն թէ ժողովուրդ և սիրեցեալ. և ոչ այսչափ միայն, այլ եթէ որդիք եւս Այ. քանզի ասէ՝ թէ "Նոքա կոչեսցին որդիք Այ կենդանւոյ": Իսկ ապա եթէ ասիցեն թէ զայս որք 'ի հրէից անտի հաւատացին՝ զնոցանէ ասէ, սակայն և այսպէս հաստատուն լինի բանս: Զի եթէ վասն ապաշնորհացն որ այնչափ վայելեցին 'ի խնամսն և օտարացան և զժողովուրդն լինել կորուսին՝ այսչափ փոփոխմունք եղեն մինչև դարձեալ պիտանիք լինիցին, ապա զինչ խափան և արգել այնոցիկ էր որ յետ ընտանանալոյն ընդ նմա ոչ եւս օտարացան, այլ 'ի սկզբանէ օտարք գոլով՝ յետոյ կոչեցան և ապրեցան, և 'ի ձեռն իւրեանց հնազանդութեանն նմին պատուի արժանիք գտան:

Իսկ արդ 'ի մէջ ածեալ զՈվսիա և չվարկանի զնա միայն բաւական, այլ և զԵսայի եւս 'ի մէջ ածէ և ցուցանէ զուգաձայն ընդ նմին բարբառեալ. ասէ. "Եսայի աղաղակէ վասն Իսրայէլի". այսինքն թէ ամենայն համարձակութեամբ վերաձայնէ և ոչ ինչ պատկառէ: Իսկ արդ դուք, ասէ, այժմ ընդդէր լինիք մեղադիրք. յորժամ նա զփողոյն զիւր զձայնն պայծառացու-

ցանէ ։ Եւ արդ զի՞նչ աղաղակիցէ Եսայի․ ասէ․ «Եթէ իցէ թիւ որդւոցն Իսրայէլի իբրեւ զաւազ ծովու, մնացորդք միայն ապրեսցին»։ Տեսանե՞ս զիարդ ասանիկ նա ոչ զամենեցուն ասէ թէ ապրեսցին, այլ որք արժանիքն միայն իցեն ապրանացն ։ Վասնզի չփափագեմ ինչ բազմութեան, ասէ, ոչ զուարճանամ ինչ ընդ շախողն բազմութեան ազգիդ այդորիկ, այլ զայնոսիկ միայն կամիմ փրկել՝ որք զանձինս իւրեանց արժանիս փրկութե յօրինեցին ։ Եւ ոչ եթէ ընդ վայր լոկ ինչ յիշեաց զաւազ ծովու, այլ կամեցեալ յուշ առնել նոցա զՏէին աւետեացն որոց անարժանս զինքեանս կացուցին ։ Եւ արդ ընդէ՞ր այժմ ամբոխիցիք յորժամ լուիցէք թէ անկեալ էք 'ի խոստմանց անտի, զոր և ամենայն մարգարէքն յայտ առնեն՝ թէ չեն ամենեքին ապրելոց, այլ սակաւք և նուազունք ։

Սյա և զօրինակ փրկութեան ասէ ։ Տեսե՞ր զմարգարէական հաւաստիան, ապա 'ի վերոյ ասէ և զառաքելական զիմաստութիւնն թէ որպիսի վկայութիւնս 'ի մէջ բերէ, որ յայտ իսկ և 'ի պատշաճ իրաց անտի էր 'ի ձայն ։ Ոչ եթէ զայս միայն եցոյց թէ սակաւք են ապրելոց և ոչ ամենեքին, այլ թէ որպէս ապրեսցին՝ զայն եւս յաւել ։ Եւ արդ զիա՞րդ իցեն ապրելոց և կամ որպէս ամ զնոսա արժանիս առնիցէ երախտեացն ։

«Բան մի հատկիրճ և համառօտ արդարութեամբ. զի զբանն համառօտ արասցէ Տէր 'ի վերայ երկրի»։ Եւ զոր ասէն այսպիսի ինչ է, եթէ չեն ինչ պէտք ձանձրապարհորդութեան և աշխատութեան և ոչ օրինական իրացն տառապանք ինչ, այլ թէ յոյժ երագահասութեամբ է փրկութիւնն մեր. քանզի այսպիսի իմն են հաւատքն որ 'ի ձեռն փոքր բանի շնորհէ մեզ զփրկութիւն ։ Եւ արդ զի՞նչ իցէ այն փոքր բանն ։ «Զի եթէ խոստովանեսցիս բերանովդ քով զտէր Յիսուս և հաւատասցես 'ի սրտի քում թէ ած յարոյց զնա 'ի մեռելոց՝ կեցցես»։ Տեսե՞ր թէ զի՞նչ է բանն համառօտ զոր առնիցէ տէր 'ի վերայ երկրի ։ Սյս են մեծամեծ սքանչելիքք զի փոքր բանս այս ոչ եթէ փրկութիւն միայն, այլ և արդարութիւն եւս շնորհեաց մեզ ։

«Եւ որպէս յառաջագոյն ասէր Եսայիաս. եթէ ոչ տէրն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ

զՍոդոմ լինէաք և Գոմորայ նմանեալ էաք ,,: Դարձեալ աստ այլ ինչ ցուցանէ՝ թէ և ոչ նոքին ինքեանք սա-կաւքն անձամբ ինչ կարացին ապրել. այլ թէ և նոքա ևս էին կորնչելոց և զատուցելոց զկիրան կրէին, այս-ինքն է թէ զընտրելին զաստուածային ընդունելին : Այս-պէս նոքայն արժանաւորեալ ամենևին յերկրէն կորեան և ոչ դոյզն մի անգամ մնաց նոցա զաւակ, սոյնպէս, ա-սէ, և մեք այնպէս էաք լինելոց եթէ չէր նՅ զբազում քաղցրութիւնն 'ի կիր արկեալ առ մեզ և 'ի ձեռն հաւատոցն ապահեալ զնոսա : Այն այսորիկ և յառաջէն 'ի գերութիւնն իսկ եղեն. քանզի բազումք և յոլովք վարեցան 'ի գերութի և կորեան, և սակաւք ապրեցան :

“ Արդ զի՞նչ ասեմք, ասէ, զի հեթանոսք որ ոչ էին մտեալ զհետ արդարութեան, ժամանեցին արդա-րութեան ,,: Այս է յայտնի լուծումն բանիս այսորիկ : “ Արդարութեանն այնմիկ ժամանեցին, ասէ, որ 'ի հա-ւատոցն էր. իսկ Իսրայէլ մտեալ էր զհետ օրինացն ար-դարութեան, և յօրէնսն արդարութեան ոչ ժամա-նեաց ,,: Այս վասն զի յիրաց անտի եցոյց՝ թէ ոչ ամե-նեքին որ յԻսրայէլէն են՝ Իսրայէլեանք իցեն, և 'ի նախ-նոյն Աբրահամու և յԻսահակայ և 'ի մարգարէիցն, և զսո-րապէս լուծումն 'ի մէջ բերէ և յանդիմանէ զնոցա չքաւորութիւնն 'ի ձեռն Մովսէսի և Եսայեայ : Այս յոր-ժամ ամենեցուն զամբաստանութիւնն, ապա ցուցանէ թէ երկու ինչ խնդիրք են, մի զի հեթանոսք հասին հաւա-տոցն արդարութեան, և զի չէր զհետ մտեալ՝ և ժամա-նեաց, այսինքն է թէ չէր ինչ փոյթ արարեալ զայն-մանէ : Այսպէս և դարձեալ զՀրէիցն նման ասին զնէ երկուս և յերկոցունց չքաւորեալ զնոսա . մի այն՝ զի Իսրայէլ չժամանեաց, և միւսն ևս դարձեալ զի փու-թացաւ և ոչ կարաց հասանել : Վասն որոյ և զասա-ցուածն յայտնապէս ինքն արկանէ 'ի կիր . քանզի չա-սաց եթէ ունէր զարդարութիւն՝ այլ թէ ժամանեաց, և միւսն ևս դարձեալ զի փութացաւ և ոչ կարաց հա-սանել : Վասն զի նոր և հրաշափառագոյն այն իսկ էր, զի որ զհետն մտեալ էր՝ չեհաս, իսկ որոյ չէր բնաւ եր-թեալ զհետ՝ սա դիւրաւ ըմբռնեաց : Այս թուի թէ շնորհէ ինչ նոցա զայս ասելովն՝ թէ զհետ մտեալ էր օրինացն արդարութեան . և ևս 'ի վերջոյ զաղէտ զմեծ-տայ նոցա :

Այս քանզի յոյժ զօրաւոր ունէր զլուծումն բանին առնել, յաղագս այսորիկ ոչ ինչ զանգիտեաց ևս դըժուարագոյն առնել զընդդիմախօսութիւն։ Սորին վասն և չյիշէր ինչ ընդ նոսա այժմ վասն հաւատոց և կամ զատոց արդարութեանցն, այլ ցուցանէ թէ և յառաջ քան զհաւատոյն իսկ իւրեանց ընտանի օրինացն պատրեալք և դատապարտեալք գտան։ Վասն զի զաւ, ասէ, ով Հրեայդ, և ոչ զայն արդարութիւն գտեր անգամ որ յօրինացն էր, վասն զի անցեր զնոքօք և պատժապարտս անիծիցն գտար. իսկ արդ որք ոչ օրինացն հաւատացին, այլ և մեծագոյն Ճանապարհ գտին արդարութեան, այսինքն որ 'ի հաւատոցն արդարութիւն էր, զոր վերագոյնն իսկ ասէր. "Այթէ Աբրահամու գործովքն էր արդարացեալ, ունել ունէր պարծանս, այլ ոչ առ ած",. Եցոյց թէ այս արդարութիւն մեծագոյն քան զայն է։ Զառաջինն ասէր թէ երկու իմն էին անհնարինք, իսկ այժմ երեք խնդիրք եղեն. մին զի եթէ հեթանոսք գտին զարդարութիւն, և զի չեղև խընդիր և եգիտ, և զմեծագոյն ևս քան զօրինացն արդարութիւն եգիտ։ Նոյնպէս և այսորիկ դարձեալ և առ Հրեայսն հիացումն իմն թուի 'ի դիմադարձաց անտի, և զի Իսրայէլ էր և չեգիտ. և զի փութով խնդրեաց և չեհաս, և եթէ ոչ նուազ ինչ անդ ըմբռնեցաւ։

Այս արդ իբրև արկ զլուծումն 'ի բազմախոհամածութիւնս և ընդ որ կարծին հիմնայր, ածէ զնոյնիմն երագ փութով և զլուծումնն, և զպատճառն ասէ զամենայն ատացելոցն։ Այս զինչ իցեն պատճառքն. "Այթէ ոչ 'ի հաւատոց, ասէ, այլ 'ի գործոց օրինաց",։ Այս է յայտնապէս լուծումն ամենայն պատու ատացելոցն. զի եթէ խնկոյն անդէն 'ի սկզբանն էր ատացեալ, ոչ այնպէս դիւրընկալ կարէր առնել։ Այս վասն զի բազում մտածութեամբք յարդարեաց և օրինակս եբեր և նախ բերը ուղղութիւնս 'ի կիր արկ, և ապա այսուհետև արար զնա դիւրաւ ուսանել, որով և դիւրընկալ իսկ մանաւանդ գործեաց զնա։ Վասն զի այս են, ասէ, պատճառք կորստեան նոցա։ "Զի ոչ 'ի հաւատոց, այլ 'ի գործոց օրինացն կամեցան արդարանալ",։ Այս չասաց թէ 'ի գործոց լոկ, այլ թէ 'ի գործոց օրինացն. Եցոյց թէ և ոչ զայն արդարութիւն անգամ ունէին։

Digitized by Google

“Քանզի գթեցին, ասէ, նոքա առ վիմին գայթակղութեան որպէս և գրեալ է. ահա դնեմ 'ի Սիոն վէմ գլորման և քար գայթակղութեան, և ամենայն որ հաւատասցէ 'ի նա՝ մի՛ ամաչեսցէ”: Տեսե՞ր դարձեալ որչափ համարձակութիւն ունին հաւատքն և ընդհանրական պարգևս. քանզի ոչ վասն Հրէիցն միայն ասի, այլ վասն ամենայն իսկ առ հասարակ ազգի մարդկան. ամենայն ոք թէպէտ և Հրեայ, ասէ, և կամ հեթանոս և կամ սկիւթացի և կամ թրակացի և կամ այլ ուստեք, և հաւատասցէ միայն, 'ի բազում համարձակութեան վայելէ: Իսկ սքանչելիք այն են մարգարէին, զի ոչ եթէ հաւատան ամենք՝ զայն ասաց միայն, այլ թէ ոմանք և չհաւատան. քանզի գթեցին, ասէ, որ է անհաւատութեան: Որ և վերագոյնն իսկ եցոյց զկորուսեալսն և զփրկեալսն ասելովն “Թէ լինէր թիւ որդւոցն Իսրայէլի իբրև զաւազ ծովու, մնացորդքն միայն ապրեսցին”. և դարձեալ “Եթէ ոչ տէրն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրև զՍոդոմ լինէաք”. և եթէ “Կոչեաց ոչ միայն 'ի Հրէից, այլ և 'ի հեթանոսաց”. զոյնս և աստ ասէ՝ թէ ոմանք հաւատան և ոմանք գայթակղին: Եւ գթելն յայնմանէ լինի յորժամ չնկատիցեմք յառաջ զճանապարհն, յորժամ բերան բացեալ ընդ այլ ուրեք նայիցիմք յիմարելով: “Գթեցին, ասէ, առ վիմին գայթակղութեան”: Քար և վէմ գայթակղութեան զայն ասէ որ 'ի բարուցն անհաւատից վախճան լինիցի:

Որքա՞ն եղև ձեզ յայտնի ասացուածն, եթէ կարօտ էք ևս բազում յայտնութեանց: Ինձ այսպէս թուի՝ թէ որք անձանց միտ դնիցեն, զոյգ ընդ մեզ գիտիցեն զասացեալսն. իսկ արդ եթէ ոմանք մոռանայցեն, պարտ է նոցա որոց պատահեն ծանօթիցն՝ հարցանել և դիւրաւ ուսանել: Սորին աղագաւ և ես երկայնաձիգ արարի զպատմութիւն բանիցս, որպէս զի մի ընդ մէջ հատանիցեմ զհանապազորդ սովորութիւնն և յոլի ցուցանիցեմ զյայտնութիւն ասացուածին:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Վասն որոյ աստանօր հանգուցանեմ զբանս և ոչ ինչ 'ի սովորականացն ձեզ ճառեմ այժմ, որպէս զի և մեր սովորութիւնն էր միշտ, այժմիկքն է վասն ընկլից, վասն ողորմութեան, վասն ոխս չունելոյ. որպէս զի մի դարձեալ մխացուցանիցեմք զյիշատակս ձեր բազմութեամբ ասացելովքն: Քանզի և ժամ իսկ է մեզ փութալ այսուհետև 'ի հայրենի տունն և 'ի հանգիստն մեր ամենեցուն, և անդր ամենայն խորք փակել մեզ զբանն 'ի փառաբանութիւն ամենեցունցն այ առ հասարակ ամենեցունց հաղորդական հանգստեանքն՝ մեք որ ուսուցողքս եմք և դուք որ լսողքդ էք՝ առ հասարակ փառս մատուցանիցուք հօրն հանդերձ միածնի որդւովն և կենդանարար սուրբ հոգւովն, քանզի նորա իսկ է արքայութիւն և զօրութիւն, տէրութիւն և իշխանութիւն և հանապազորդ փառաբանութիւն յամենայն արարածոց իւրոց այժմ և յաւիտեանս. ամէն:

## ՃԱՌ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

“Եղբարք, իմ կամք սրտի և աղօթք առ Ած վասն նոցա են 'ի փրկութիւն„:

Հանդերձեալ է դարձեալ զկծեցուցանել զնոսա յոյժ առաւել քան զառաջինն. որով դարձեալ 'ի բաց բառնայ զծանրաբեռն զկարծիսն, և բազում իմն ողջութիւնս 'ի կիր արկանէ: Մի, ասէ, 'ի բանս միայն հայեցիք և մի 'ի մեղադրութիւնսն եթէ, այլ յայն զի ոչ թշնամութեան մտօք զայսպիսիսն բարբառիմ: Քանզի և չէ իսկ զնոյնս ինքեանս ցանկալ ապրեցուցանել. և ոչ միայն ցանկայ, այլ և աղօթս եւս առնէ, և դարձեալ առեալ 'ի բաց դառնալ: Վասն որոյ զկամսն սաստ՝ ըղյոյժն ցանկութեանէն ասէ: Իսկ աղօթ առնէ և զայն թէ որպէս առնէ զխնդրուածոն սրտի մտօք. զի ոչ եթէ ընկ 'ի տանջանացն կամի զերծուցանել զնոսա միայն, այլ

որպէս զի և ապրեսցին՝ և բազում փոյթ ցուցանէ և աղօթս ևս առնէ։ Այլ ոչ եթէ յայսմ միայն, այլ և որ լոկ կարգին է՝ յայնմանէ ցուցանէ զիւր զբարեմտու-թիւնն զոր ունէր առ նոսա. զի որով հնարն էր, այնու հակառակի և բանադատէ՝ գոնէ ստուեր ինչ պատաս-խանատուութեան գտանել նոցա, և չկարէ զօրել՝ յաղ-թեալ 'ի բնութենէ իւրացն։ Այլ ապա զինչ։

“Վկայեմ նոցա, ասէ ; զի զնախանձն Այ ունին, այլ ոչ գիտութեամբ„։ Ապա ուրեմն այս ներելոյ արժանի է և ոչ եթէ մեղադրութեան. զի եթէ վասն մարդկան չէցեն 'ի բաց ձեռքեալք, ապա ողորմութեան արժանի են և ոչ տանջանաց։ Այլ տես որպէս խնամոտութեամբ 'ի պէտս անգը 'ի կիր արկանէ զբանն և ցուցանէ նոցա զընդդիմալի զյամառութիւնն, քանզի ասէ. “Տգէտ էին Այ արդարութեանն„։ Դարձեալ թուի թէ ներելոյ ինչ արժանի իցէ բանս. այլ յաջորդն մեղադրութեամբ լի է, և զամենայն զպատասխանատրութիւն նոցա 'ի բաց բառնայ։ “Քանզի զիւրեանց զարդարութիւնն, ասէ, խնդրեն կացուցանել„։ Ի՞ր վասն. “զի արդարու-թեանն Այ ոչ կամեցան հնազանդել„։ Զայս ասէ առ 'ի ցուցանել թէ զյաղթելն կամէին միայն, և եթէ յիշ-խանասիրութենէն մանաւանդ քան 'ի տգիտութենէն մո-լորեցան, և զի եթէ ոչ զնոյն ինքն զօրինացն զարդա-րութիւն հաստատեցին. Քանզի ասելն թէ խնդրեն կացուցանել՝ զայն ինչ յայտ առնէ. բայց սակայն այս-պէս համարձակ չէր զայն։ Այլ և ոչ ասաց իսկ եթէ յերկաքանչիւր արդարութեանց անտի անկան, բայց յայժ խնամոտութեամբ իմն ակնարկեաց ընտանի իւրով հանճարուն։ Զի եթէ զիւրեանցն կամէին կացուցա-նել, ասէ, բարեաւ իսկ յայտ է՝ թէ չկարացին հաս-տատել, և եթէ Այ արդարութեանն չհնազանդեցան, ապա յայտ է թէ անկան իսկ անտի։ Իւրեանց արդա-րութիւն զայն կոչէ զոր ոչ ևս զօրէին օրէնքն կատա-րել վասն քրտանցն և աշխատութեանցն։ Իսկ զայս ար-դարութիւն Այ վասն այնորիկ կոչեաց՝ առ 'ի բոլորովին իսկ վերին շնորհացն գոլ, և Այ արդարացուցեալ ձրի զմեզ և ոչ եթէ վաստակօք ինչ։ Այլ որք սովոր են միշտ հոգւոյն սրբոյ հակառակել, նոքա յամառեին օրի-նօքն արդարանալ և չկամէին մերձենալ 'ի հաւատոն.

Այլ յորժամ չմերձենան 'ի հաւատսն, և ոչ արդարութեանն նորա հաղորդ գտանին. և դարձեալ օրինացն չկարացեալ զնոսա արդարացուցանել, ապա ամենայն ուստեք անկեալ գտանիցին:

«Քանզի կատարումն օրինացն, ասէ, Քրիստոս է յարդարութիւն ամենայն հաւատացելոց»: Տեսե՞ր ըզՊաւղոսի զիմաստութիւնն, քանզի վարդապետութեանն էր քանն. զի մի որք 'ի Հրէից հաւատացեալքն էին՝ վարկանիցին թէ զկէսն ունիցին՝ և 'ի կիսոյն նուաղեալք իցեն և անօրէնութիւն ինչ համարիցին զայն. քանզի և չէր իսկ պարտ զայն երկիւղ ունել 'ի մտի, և մի զարձեալ յանձանց ինչ ակն ունել առ 'ի զայն ուղղելոյ և առնել՝ զի թէպէտ և այժմ ոչ կարասցուք, այլ է երբեմն զի կատարեսցուք: Բայց ահա զիարդ կոչէ և ցուցանէ թէ մի է արդարութիւնն, և 'ի նոյն ինքն յայն վերաբերէր. և որ զայս արդարութեան զհետ երթայ որ 'ի հաւատոցս է, ապա և զայն կատարէ. իսկ որ զայս անարգէ, և յայնմանէ հանդերձ նովաւ անկանի: Զի եթէ կատարումն օրինաց Քրիստոս է, և յորժամ ըզՔրիստոս չունիցի, թէպէտ և զայն համարեսցի թէ ունիցի, ոչ ինչ ունի. իսկ որ զՔրիստոս ունի, թէպէտ և ոչ ինչ կարաց ուղղել ըստ օրինացն, զամենայն ինչ ընկալաւ: Քանզի կատարումն բժշկութեան առողջութիւն է. զոր օրինակ որ կարողն է առողջ առնել, թէպէտ և չգիտիցէ ինչ զբժշկականն զարուեստն՝ զամենայն ինչ լիով գիտաց. այնպէս և որ չգիտիցէն բժշկել, թէպէտ և մերձաւոր զինքն արուեստին վարկանիցի, յամենայնէ անկեալ է: Այնպէս և առ օրէնսն և առ հաւատսն է խնամել. վասն զի որ զայս ունի, և զայն կատարեալ ունի. իսկ եթէ այսր արտաքոյ իցէ, ապա յերկաքանչիւրոցն իսկ օտարացեալ գտանի:

Այլ արդ զի՞նչ կամէին օրէնքն: Արդարացուցանել զմարդիկ, այլ ոչ զօրեցին. վասն զի ոչ ոք զնոսա կարաց կատարել: Քանզի այս իսկ էր օրինացն կատարումն, և այսմ ամենայնի ակն ունէր, սորին. վասն և ամենայն ինչ լինէր՝ տօնքն և պատուիրանքն և զոհքն և այլն ամենայն, որպէս զի մարդն արդարասցի: Այլ զայսր ամենայնի զկատարումն ակնարկեաց Քրիստոս մեծագոյն իմն 'ի ձեռն հաւատոցն: Մի՛ երկնչիր ինչ,

ասէ, որպէս թէ զանցանէս ինչ զօրինօքն. վասն զի առ հաւատոյն մատեար: Զայնժամ զանցանէս զնոքօք, այսինքն է ըստ օրինօքն, յորժամ վասն օրինացն՝ Քրիստոսի չհաւատաս. որպէս զի յորժամ Քրիստոսի հաւատաս, և զօրէնսն կատարես, մանաւանդ թէ և առաւել յորժամ զմեծագոյն արդարութիւն ընկալար: Ապա քանզի այն յայտնապէս վճիռ իսկ էր, 'ի դրոց այնուհետև հաւատարիմ առնէ զիրսն:

«Մովսէս, ասէ, գրէ որ յօրինացն արդարութիւնն է»: Եւ զոր ասէն այսպիսի ինչ է, թէ Մովսէս ցուցանէ մեզ զարդարութիւնն որ յօրինաց անտի է թէ որպիսի ինչ իցէ և կամ զիարդ: Եւ արդ որպիսի ինչ իցէ և կամ յումմէ՞ իմեքէ լինէր հաստատուն: Ի կատարելոյն զպատուիրանն. քանզի ասէ՝ թէ «Որ արասցէ զնոսին՝ կեցցէ նովիմբ»: Եւ այլ ազգ չէր հնար արդարանալ յօրինացն, բայց եթէ զամենայն՝ ոք կատարէր. և այս չեղև ումեք հնար 'ի մարդկանէ: Ապա ուրեմն անկաւ արդարութիւն այն որ 'ի հաւատոցն էր:

Այլ ասա մեզ զմիւսն, ով Պաւղէ, զայն արդարութիւն որ 'ի շնորհաց անտի է: Եւ արդ ո՞ր իցէ այն և կամ ուստի՞ հաստատեցաւ: Իւր նովին իսկ որ յայտնապէս զայս 'ի դրոց յայտ առնէ: Եւ վասն զի յանդիմանեաց զնոսա, փոխի դարձեալ 'ի նոյն յայս և ասէ՝ թէ «Որ հաւատոցն արդարութիւնն է, այսպէս ասէ.՝ Մի ասեր 'ի սրտի քում թէ ո՞վ ելանիցէ յերկինս, այսինքն է զՔրիստոս 'ի խոնարհ ածել. և կամ ո՞վ իջանիցէ յանդունդս, այսինքն է զՔրիստոս 'ի մեռելոց 'ի վեր ածել: Այլ զի՞նչ ասէ. մօտ է բանն 'ի բերան քո և 'ի սրտի քում, այսինքն է բանն հաւատոց զոր քարոզեցաք: Զի եթէ խոստովանեսցես բերանով քով տէր զՅիսուս և հաւատասցես 'ի սրտի քում թէ ա͞ծ զնա յարոյց 'ի մեռելոց՝ կեցցես»: Որպէս զի մի ասիցեն Հրեայքն թէ զիա՞րդ գտին նոքա զմեծագոյն արդարութիւնն, որոց և զնուազն երբէք չէր ծանուցեալ, վասն այսորիկ խորհուրդս իմն ընդդիմաբանութեան 'ի միջի դնէ և ցուցանէ թէ թեթևագոյն ճանապարհ գտին նոքա քան զմեզ: Վասն զի ձեր արդարութիւնն որ ըստ օրինացն էր, ասէ, զամենայն զկատարումն պահանջէր, և ապա թէ յայնժամ հազիւ կեցին. իսկ որ 'ի հաւա-

տոյն արդարութիւնն է, ոչ այսպիսի ինչ ասէ, այլ զինչ. «Եթէ խոստովանեսցես բերանով քով տէր զՅիսուս, և հաւատասցես ՚ի սրտի քում թէ ա՟ծ յարոյց զնա ՚ի մեռելոց՝ կեցցես»:

Ապա զի մի թուեսցի դիւրին առաջադրածն՝ արհամարհելի և նուազ ինչ, կրկին ընդարձակէ զբանն վասն նորին իրաց. քանզի ոչ անդրէն իսկ առժամայն ՚ի սոյն յայս եկն զոր ասացաքս, այլ զինչ ասիցէ՝ թէ «Որ ՚ի հաւատոց արդարութիւնն է՝ այսպէս ասէ. մի ասիցես ՚ի սրտի քում թէ ով ելանիցէ յերկինս, այսինքն է զՔրիստոս իջուցանել. կամ ով իջանիցէ յանդունդս, այսինքն է դարձուցանել զՔրիստոս ՚ի մեռելոց ՚ի վեր ածել»: Եւ զոր օրինակ տարակուսութեան ՚ի ձեռն գործոց հակառակ կայ ծուլութիւն, և զաշխատութիւնս լուծանել յոյժ պէտք են ոգւոյն արիութեան՝ որպէս զի մի մեղկիցի, և սոյնպէս յորժամ հաւատայցէ՝ են խորհուրդք որ ամբոխեն զբազմաց միտս, և պէտք են ամպիսումն երիտասարդական և յոյժ զօրաւոր ոգւոյ, որպէս զի կարիցէ ՚ի դիմի հարկանել այնպիսի խորհրդոց: Սորին վասն և նա իսկ զայսպիսիս ՚ի մէջ եբեր:

Եւ զոր յորժամ վասն Աբրահամու ճառեալ ասաց, զսոյն և աստ գործէ: Զի անդ եցոյց եթէ ՚ի հաւատոյն արդարացաւ, զի մի կարծիցեն թէ ՚ի զուր ինչ և ընդ վայր ապականեցաւ առանց իրիք իրաց, բարձրացուցանէ զհաւատոյն զգնութիւն ասելով՝ թէ «Որ յանյոյսն յուսով հաւատաց առ ՚ի լինել նմա հայր ազգաց բազմաց, և ոչ տկարացաւ հաւատովքն. Թէպէտ և հայեցաւ ՚ի մեռելութիւն մարմնոյ իւրոյ և ՚ի մեռելութիւն արգանդին Սառայի, սակայն յաւետեացն ա՟յ ոչ երկմտեաց անհաւատութեամբ, այլ ետ փառս ա՟յ և հաստատեցաւ ՚ի միտս իւր թէ որ խոստացաւն՝ կարող է առնել»: Եցոյց եթէ ուժոյ պէտք են և բարձրագոյն ոգւոյ՝ որ զայնպիսի յոյսն ընդունել մարթասցէ, որպէս զի մի ինչ խափան լիցի ՚ի տեսանելեացս: Զսոյնս այժմ աստ. գործէ և ցուցանէ թէ փիլիսոփայական վարուց պէտք են և մտաց՝ որ մանաւանդ քան զերկնից. բարձրութիւնն գերազանցեն: Վասն որոյ և չասաց իսկ եթէ մի ասեր, այլ թէ մի ասիցես ՚ի սրտի քում, այսինքն է և մի զմտաւ ածեր անգամ յաղագս երկբայութեան ինչ

և առնել քեզ ընդդէմ հակառակ։ Այլ զիա՞րդ դուցէ հնար, ասէ. գոյ և կարի իսկ քաջ. մանաւանդ զի այս իսկ առանձինն է հաւատոցն՝ յորժամ զառաւելն զամենայն թողեալ, և որ ՚ի վեր քան զամենայն բնութիւն է՝ խնդրեսցես, և զտկար զխորհուրդս ՚ի բաց մերժեսցես, ապա յայն ՚ի զօրութէ անտի զամենայն ինչ ընկալեալ։

Այլ ոչ եթէ զայն միայն առնէին Հրեայքն, այլ թէ և ՚ի հաւատոցն ոք չկարէ ապրել։ Իսկ Պաւղոս յայլ իմն առնէր զեղելոյ իրսն. որպէս զի յորժամ ցուցցէ թէ այնչափ մեծ են հաւատքն, մինչև յետ իրաց ինչ գործելոց նոյին հաւատոց պէտք են, և այսու ցուցանէ թէ յիրաւի պահպիչն նոցա որք հաւատովքն արդարացան։ Այլ ձևոս իմն որ ՚ի հնումն կայրն ՚ի կիր արկանէր. քանզի փութայ միշտ ՚ի նորաձևութեանցն նոցա և ՚ի կասայ մեղադրութեանն զոր առ հաւատոյն առնէին՝ յայնմանէ փախչել։ Վասն զի որ ինչ հաւատոցն էր՝ զայն առնէ առատ, իսկ զնոյն պատուիրանսն Մովսէսի առաց իսկ նոցա. և այսու ցուցանէ նոցա թէ յոյժ իսկ անբաւ վայելեցին ՚ի խնամսն այս։ Վասնզի չէ առնել, ասէ, թէ յերկինս պէտք են ելանելոյ և կամ ընդ համատարած մեծ անդունդս հատանել անցանել. և այնպէս գտանել զպատուիրանսն. այլ զայնչափ զմեծն և որ զժուարինն թըւէր՝ յոյժ դիւրին և հարթ գործեաց մեզ ած։

Այլ արդ զի՞նչ իցէ. „Մերձ է, ասէ, բանն ՚ի բերան քո„. այսինքն է թէ դիւրին է. քանզի ՚ի սրտիդ քում և ՚ի լեզուիդ կայ փրկութիւնն. և չեն պէտք երկայն ճանապարհ գնալ և ոչ ընդ անդունդս նաւել և ոչ ընդ լերինս անցանել և կամ աշխարհեաւն ապրել։ Այլ թէ չկամիցիս իսկ բնաւ ճանապարհորդել ուրեք, և ՚ի նեղքս ՚ի տան իսկ նստելով գտանես զփրկութիւնն. քանզի ՚ի բերան քում և ՚ի սրտի քում են պատճառք փրկութեան։

Ապա և այլուստ ես դիւրագոյն ցուցանէ զհաւատոցն բան և ասէ այսպէս՝ թէ „Աստուած յարոյց զնա ՚ի մեռելոց„։ Նախ առ զպատուոյն զմեծութիւն, և ապա տեսանես թէ ոչ մի ինչ տուտ կամակորութի կայ յիրսն։ Ապա ուրեմն թէ տէր է, այն ՚ի յարութենէն յայտ եղև. զոր և յորժամ սկիզբն իսկ արար թղթոյս, զայնմանէ նախ ճառեաց՝ թէ „Յահմանելոյ որդւոյն այ ՚ի

յարութենէ մեռելոց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Այլ զի յարութիւնն եւս գլուխն է, յայտ 'ի զօրութենէ այնորիկ է որ յարեաւն, թէպէտ եւ յայդ յերկբայ ոք լինիցի։ Իսկ արդ յորժամ մեծ է արդարութիւնն այն՝ որ 'ի հաւատոցն է եւ փրկողի եւ դիւրընկալ եւ այլով իւիք չիք արդարանալ, արդ զիա՞րդ չիցէ այս վերջին անմտութեան մոլորութիւն 'ի դժուարինսն ձեռնարկել, եւ զհարթն եւ զդիւրինն 'ի բաց մերժել յանձանց. վասն զի եւ ոչ անել իսկ ունին թէ որպէս 'ի ծանրաբեռն լծոյ իւրեանց 'ի բաց կացցեն։

Տես որպէս զրկեալ գտանելին յամենայն ներելոյ. քանզի որպիսում պատասխանատուութեան արժանի իցեն յորժամ զծանր իւրեանց զհետ մնացեալ իցեն եւ մշտա-տագնապելին, իսկ որ դիւրինն եւ թեթեւն է՝ զանց առնեն. մանաւանդ որով կարօղն էին կեալ՝ եւ զայն եւս շնորհէր նոցա, զոր օրէնքն ոչ զօրեցին։ Այլ արդ այս ոչ այլ ինչ է, բայց միայն հակառակող մտաց եւ որ առ մեծ երկպառակութիւն առնէ։ Վասն զի օրէնքն ծանրատաղտուկք էին, իսկ շնորհս դիւրինք. օրէնքս թէպէտ եւ բիւր անգամ հակառակեցեն[1], չկարեն արդարացանել. իսկ շնորհքն եւ դիւրեանցն եւ զօրինացն զարդարութիւն պարգեւեն։ Այլ արդ ո՞ր բան հանճարական գտանի 'ի նոսա յորժամ վասն օրինացն հակառակիցեն եւ շնորհացս ընդդիմանիցեն գտանելին ընդ վեր եւ ընդ վայր։ Այլ արդ քանզի մեծագոյնս իմն ձայնեաց, դարձեալ 'ի դրոց առնէ զառաջացեալսն հաւատարիմ։

«Քանզի ասէ գիր՝ ամենայն որ հաւատայ 'ի նա, մի ամաչեսցէ. քանզի չիք խտիր ոչ Հրէի եւ ոչ հեթանոսի, վասն զի նոյն տէր է ամենեցուն, բաւական յամենեսին որ կարդան առ նա. քանզի ամենայն որ կարդասցէ զանուն տեառն՝ կեցցէ»։ Տեսնե՞ս որպէս զհաւատոցն եւ զխոստովանութենէն 'ի մէջ բերէ զվկայութիւնն. զի ասելն թէ ամենայն որ հաւատասցէ 'ի նա, այնու զհաւատոն եցոյց. իսկ ասելովն թէ ամենայն ոք որ կարդասցէ զանուն տեառն՝ զխոստովանութիւնն յայտնեաց։ Այլ արդ դարձեալ զհաստատական զհաւատոյն յայտ յանդիմանս քարոզէ, եւ զնոցա զհպարտութեան զպատճառն զի-

1 Օրինակին գրեալ էր յանս յառաջեցեն։

ճուցանէ. և զոր ես յառաջ 'ի ձեռն միայնութեան ե-ցոյց, զայն և աստ փոքր բանիւք վերոյին յիշեցուցա-նէ: Այլ զարմացեալ յայտնէ թէ չիք ինչ 'ի միջի ընդ Հրէայն և ընդ անթլփատն, քանզի չիք ինչ խտիր, ա-սէ, Հրէի և հեթանոսի: Այլ զոր ինչ ըհօրէ ասաց յաղագս նախնի իրաց յօրինակին, զայն աստ զորդւոյ ասէ. որպէս և յառաջինն ճառեալ ասէր` թէ «Հրէից մի-այն իցէ Ած և հեթանոսաց ոչ. այո և հեթանոսաց, վասն զի մի է Ած», սոյնպէս և այժմ ասէ` թէ «Նոյն ինքն տէր է ամենեցուն որ կարդան առ նա»: Տեսանե՞ս զիարդ ցուցանէ զնա յայտ փառաւորեալ մերում փրկու-թեն, զոր և խոր իսկ մեծութն զայսպիսի իրս վարկանի:

Այլ արդ մի մեծամտեսցուք և մի զայս ածցուք զմտաւ եթէ խոր վարկանիցի, և զղջանայցեմք ինչ և 'ի յուսա-հատութիւն անկանիցիմք. վասն զի խոր ընտանի հա-րազատութիւն զմեր փրկութիւնն Հաշուի, և մեզ զայն զմեծութիւն պարգևէ որ ոչն երբեք դադարէ 'ի մեծա-ցուցանելոյ. քանզի սոյն իսկ այս մեծութիւն 'ի բա-զում բաշխեաց զպարգևսն: Այլ մանաւանդ զի այս իսկ ամբոխէր զնոսա` 'ի զահերիցութեան վայելել քան զա-մենայն տիեզերս կամէին, իսկ այժմ ոչ այնպիսի ինչ յորժամ 'ի Հաւատոց անտի Հաստատեսցիմք յաղթաս, չվարկանիմք եթէ քան զընկերան ինչ աւելի ունիցիմք: Իսկ անդ յայնժամ միշտ զմարգարէսն 'ի մէջ բերէ որով մարթէին թողել և հանել 'ի մտաց նոցա զայնպիսի զախ-տս` և զուգապատիւ առ ընկերան լինել. քանզի ասէ` թէ «Ամենայն որ հաւատասցէ 'ի նա, մի ամաչեսցէ»: Այլ հանապազ զամենայնսն դնէ, որպէս զի մի առիցեն ընդ-դէմ ինչ:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Այլ չիք ինչ զառանցագոյն քան զունափառութիւն, մա-նաւանդ թէ նա իսկ է որ ամենևին զնոսա կորոյս. վասն որոյ և Մովսէս իսկ ասէր ցնոսա` թէ «Ո խորդ կա-րէք դուք հաւատալ որ 'ի միմեանց խնդրէք զփառս, և զփառս միոյն Այ ոչ խնդրէք»: Այս ախտ է որ յետ կորստեանն ծաղր ևս կացուցանէ, և յառաջ քան զան-տի տանջանացն աստէն իսկ բիւր չարեաց պաշարէ զմեզ:

Այլ արդ եթէ կամիցիք հաւատալ իսկ ուսանել, թո-
ղում 'ի բաց զերկինս ուստի նայն զմեզ հանէ, և զգե-
հեննն յոր արկանելոցն է զմեզ, և արդ զիւնն իսկ առա
քննեսցուք զամենայն։ Զինչ ինչ քան զնա ծանր-
կայցէ, և կամ զինչ քան զնա անվայելուչ և զձուա-
րին զառնիցի։ Այլ զի ծանրէ է ախտս այս, յայտ ան-
տի է զոր 'ի զաւր և ընդվայրն ծանրեանց 'ի թատերսն և
'ի ձիընթացսն կառավարսն՝ և յայլսն ևս յայնպիսեան
ընդվայր և յանմիտ յառաջնութիւնս, 'ի տանցն շի-
նուածսն 'ի պայծառս և 'ի մեծապէնս և յայլս ամե-
նայն՝ զոր մեծաւ առաւելութեամբ յօրինեն իւրեանց
անմտութեամբն, զոր չէ հնար այժմ բանիւ յանդի-
մանս կացուցանել։ Այլ զի ծանրէ է ախտն այն և բազ-
մաթոյն, անտի յայտ է զոր ինչ ուսուցանեն ամենք.
վասն զի որ զնայն յանձին կրէ, հարկ է զի յափշտա-
կող և ագահ գտանիցի. որպէս զի զայնպիսի զազան
կերակրիցէ, յայլոց յարքարս զիւր ձեռս մխեալ յափշ-
տակիցէ։

Այլ զինչ առեմ եթէ զաւրարն. զի ոչ եթէ զինչս
միայն, այլ և զոգիսն իսկ ուտէ այնպիսի հուր. և ոչ
միայն զատժամանակեանս, այլ և հանդերձեալսն իսկ
գործէ մեզ զնաս. քանզի մայր գեհենին է փառասի-
րութիւն և զգոյն նորա թարգմանէ և զթոյնս որդանցն որ է։
Այլ երանի թէ գոնէ 'ի վախճանին արգել ինչ լի-
նէր ախտին, ապա ոչ այնչափ ինչ լինէր կարի չար։
Վասն զի այլ ամենայն ախտքն 'ի հասանել մահուն
լուծանին, իսկ փառասիրութիւնն յամառեալ հանգ-
ուսկի և յետ վախճանին զիւր զմտութիւնն յանդիմանս
կացուցանել 'ի մեռեալ մարմնի անդ։ Յորժամ զգե-
րեզմանն պայծառս և զարդարեալս՝ և զամենայն զիւր ըն-
կեանսն յայն ծախիցէ, և այնպէս կանգնեալ զյիշա-
տակ գերեզմանին, և զպատանսն ազգի ազգիս և փա-
փուկս և մեծագինս նկարեալ մետաքսեայն բազում փութով
յառաջագոյն պատրաստեն. և զմեռեալսն յաղագս
խնրեկչի միոյ և պատառոյ հացի լուծանեն, հանեն 'ի
թշնամանս զաղքատս որ մերձենան առ նոսա. իսկ 'ի
վախճանի իւրեանց բազում առատութեամբ յօրինեն
մեռեալս որդանցն։

Այլ արդ զինչ այլ ինչ բանաւորագոյն քան զայսպիսի

ախտ կայցէ։ Վասն զի յայսմ ախտէ և անպատեհ ունելք ծննդին. քանզի բազումք ոչ եթէ տեսլեան երեսացն ցանկան և ոչ դարձեալ խառնակման ցանկութեան, այլ միայն առ պարծանս փառասիրութեան. որպէս զի ասիցեն՝ եթէ զայս նիշ զանուանի ընկեցի 'ի շնութիւն։ Այլ զինչ պէտք են զամենայն ասել, որ ինչ անուանի բասանին չարիքն։ Այս իսկ ինքն գլխովին կամքի բեր անդամ անաղտոտ բարբարոսացն ծառայել, քան փառասիրութեանն մի անգամ. վասն զի նոքա շատան ինչ այնպիսի հրամանս գերեացն որպէս փառասիրութիւնն իւրոց հնազանդելոցն։ Այլ արդ զինչ հրամայիցէ. ամենեցուն, ասէ, ծառայ լեր, թէպէտ և երևելի ոք իցէ քան զքեզ և կամ 'ի վայր. ամենեցուն շողոքորթեա, որպէս զի առնուցուս փառս. արհամարհեա զոգիդ, մի ինչ փոյթ առներ զառաքինութենէ, ծաղր արա, արհամարհեա զազատութիւն, սպան զքո զփրկութիւն. Թէպէտ և բարիս ինչ գործիցես, մի ըստ այ հաճոյիցն, այլ առ 'ի ցոյց բազմաց, որպէս զի կորուսցես զպսակն որ անուանի քեզ լինիցի. Թէպէտ և աղօթիցես ումեք և կամ պահիցես, զաշխատութիւնս առ յանձն, բայց զվարձս շահին փութա կորուսանել։ Այլ արդ զինչ ինչ քան զայնպիսի հրամանս անօրինագոյն կայցէ. Զպատի առ ակիզբն չարակնութիւն, ատելի և ամբարտաւանութիւն, 'ի նմանէ ծնաւ պատկեր արծաթսիրութեանն։ Քանզի զգասս ծառայիցն և զորս 'ի բարբարոսացն գնես զմանկունսն՝ յոսկի հանդերձս, և սեղանաքայծս կուտես և փաղաքշողս, և արծաթապատ կառս յօրինես և զայլն ամենայն՝ որ քան զորս ես ծաղրականքն են. որ ոչ եթէ առ հեշտութեան ինչ և կամ վասն պիտոյից լինին, այլ առ փառասիրութեան միայն։

Այս, ասէ, գիտեմք թէ չար է ախտս այս և ամենեցուն քաղցրայր է. բայց թէ որպէս փախչել մարթի 'ի նմանէն՝ զայն պարտ է ասել մանաւանդ։ Թէ հաստատեալ գիտես 'ի միտս թէ սոյզ ոճնեայ է ախտն, ակիզբն արարեր առաքինութեան վաղուց գիտելով զայն։ Վասն զի որ յախտէին կայ, երբեմն խնդրէ զբժիշկն. և եթէ զայն ուսցիս հաւաստեաւ թէ ախտս են իրքն՝ կարես ապրել։ Իսկ արդ եթէ այլ ճանապարհ խնդրեսցես որով յախտէն կարասցես փախչել, ես քեզ ցու-

ցանկամ. Նայեաց 'ի վեր առ ած յամենայն ժամ և բաւական վարկանիցիս զայն փառս որ 'ի նմանէն քեզ շնորհիցին: Մխեպեա և ատեանիցես զախտն զի խոցոտիցէ զքեզ և զրգռիցէ՝ զի ասասցես ծառայակցացն քոց զուղղութիւնս, խորհեաց դարձեալ զայն և ասասցես ընդդէմ մտացդ՝ եթէ յետ ասելոյն ոչ ինչ շահ լինի, այլ և վնաս. և շիջո զանպատեհ զցանկութիւնն: Այլ դարձեալ ցհոգիդ ասա՝ թէ ահա ցայսքան ժամանակս երկնէիր յայտնել ումեք զքո ուղղութիւնս, և ոչ կարացեր պահել 'ի լաւութեան, այլ յամենեսեան խոկ տարածեցեր, արդ զինչ աւելի քեզ յայտնելոյ եղև: Նաև և ոչ ինչ, խոկ վնաս բազում, և ընդ վայր թափեցեր զարդիւնս զոր բազում ջանիւ և աշխատութեամբ ժողովեցեր:

Ընդ այսոսիկ և զայն եւս ած զմտաւ՝ եթէ եղծանելի են բազմացն հաշիւք և խրատունք. և ոչ եթէ եղծանելիք միայն, այլ և երագ խոկ թառամին: Որ թէպէտ և առժամանակ մի զքաղցրանան ինչ, և փոքր մի ժամանակ 'ի վերայ անցեալ՝ ամենեցունց մնացորդք լինին, և լոկ միայն զի որ յոյս շնորհեալ էր քեզ պատիւն՝ յափշտակեցին 'ի քէն և զիւրեանցն ոչ զօրեցին պահել առ քեզ: Որ թէպէտ և զիւրեանցն տուեալ էր քեզ, բազում թշուառութիւն խոկ էր այն, զի զերկնաւորն ընդ երկրաւորս փոխանակէիր. խոկ յորժամ և այս եւս 'ի մէնջ 'ի բաց հանեսցի, զո՞ր պատասխանատուութիւն ունիցիմք յորժամ վասն չկալեացս զհաստատունն վաճառիցեմք, և վասն սակաւ մի գովութեանց զանշահ զբարութիւնսն կորուսանեմք: Որ թէպէտ և բազումք իցեն որ գովիցեմն, մանաւանդ եթէ այնու խոկ եմք ողորմելիք զի 'ի բազմաց զգովութիւնս խնդրեմք:

Իսկ արդ եթէ զքաղցրանաս ինչ ընդ ասացեալսն, լուր Քրիստոսի որ զայսպիսի զհաւանար բերէ 'ի մէջ. "Վայ, ասէ, ձեզ յորժամ բարի ասիցեն զձէնջ մարդիկ": Մանաւանդ եթէ յիրաւի խոկ. քանզի ամենայն արուեստք զիւրաքանչիւր զարուեստագործն կարգեն զատուորս, և զխորդ զառաքինութեանս զհանդէս բազմաց հրամայես. այլ ոչ եթէ յառաջ քան զամենայն զնա, մանաւանդ եթէ նախ՝ քան ամենայնի խնամ տանել՝ որով պատկերն կարեմք: Այս զայս զքանս այժմ

Digitized by Google

զրկեսցուք և յարձն և 'ի զուրս և 'ի մետս, և միշտ հա-
նապազ ասասցուք յանձինս մեր՝ թէ վայ մեզ յորժամ
բարի ասասցեն զմէնջ ամենայն մարդիկ։ Քանզի նո-
քին իսկ որք ասենն զբարին, 'ի վերջոյ դարձեալ բամ-
բասեն որպէս զնախանձոտս և զփառասէրս և զցանկացո-
ղս 'ի նոցանէ գովութեանցն. իսկ մեծ ոչ ինչ այսպէս,
այլ յորժամ տեսանիցէ զքեզ հարեալ 'ի փառաց որ 'ի
նմանէն են, յայնժամ մանաւանդ գովէ զքեզ և զար-
մացեալ յայտ յանդիման քարոզէ զիրսն։ Իսկ մարդիկ
ոչ այսպիսի ինչ, այլ փոխանակ ազատի՝ ծառայ առնեն
զքեզ, և վասն մերկ բանին զոր շնորհեն քեզ սուտ
գովութեանն՝ յափշտակեն 'ի քէն զճշմարիտ վարձսն,
և քան զարծաթագնեան ես մանաւանդ զքեզ 'ի հնա-
զանդութեան կացուցանեն. վասն զի նոքա ըստ կարգի
ունին զհնազանդութիւնն իւրեանց տերանցն, իսկ դու
առանց հրամանի և կարգի ծառայես։ Վասն զի և ան-
տառ իսկ ոչ հրաման առնուլ 'ի նմանէն. այլ միայն եթէ
ճանաչես թէ որով բերկրի փառասիրութիւնն, և ապա
այնուհետև և զոր ինչ չհրամայեն՝ և զայնս ես գործես։
Իսկ արդ որպիսում գեհենի չիցեմք արժանի յորժամ
զընդունայն զՋանսն և առանց հրամանի իսկ յօժարու-
թեամբ կատարեմք. իսկ մեծ որ զօրհանապազ բողոքէ
և հրամայէ և խրատէ՝ և ոչ այնպէս լսեմք նմա։

Բայց սակայն թէպէտ և փառաց ինչ տենչանայցես,
փախիր 'ի մարդկային գովութեանցն, և ապա յայն-
ժամ հասանես փառաց. 'ի բաց դարձիր յայնցանէ որք
զքեզն բարեբանեն, և ապա յայնժամ վայելեսցես 'ի
բիւր գովութիւնս և յԱյ և 'ի մարդկանէ։ Քանզի չեմք
սովոր զարմանալ ընդ այնպիսի ոք՝ որպէս որք փառացն
տենչանայցեն, և ոչ դարձեալ զարմանալ և գովել՝ որ-
պէս որք արհամարհիցեն զգովութիւնսն։ Զի եթէ
մեք այսպէս, ապա ևս առաւել ամենեցունցն մեծ. և
յորժամ նա զքեզ փառաւորեսցէ և գովիցէ, ո՞ որ քան
զքեզ երանելի կայցէ։ Զի որչափ 'ի մէջ իցէ փառաց
և անարգութեան, այնչափ վերին փառացն և մարդկայ-
նոցս է ընտրութիւն. մանաւանդ թէ ես բազում ինչ
և անբաւ։ Զի եթէ այնպէս յաւի և դժուարատես է
ախտն այն՝ մինչև առանձինն իսկ մեզ ամօթանս ածէ,
իսկ յորժամ 'ի մէջ ընկերացն զնա քննիցես, ապա

կարես 'ի միտ առնուլ թէ որչափ ինչ իցէ օգտութիւն նորա։ Ո՜ր օրինակ կեն ոք այլ ընդ այլ, և 'ի հրապարակի անամօթեալ՝ յայտ յանդիման զինքն ամենեցուն մատնէ, սովորաբար և փառասիրութեանն ծառայք. մանաւանդ եթէ քան զայն այս ուժգին է։ Քանզի փառս բաղձալ անգամ ամենք 'ի հոգևորաց անտի որք հարեալ էին 'ի սէր նորա, արհամարհեցին և ոչ ինչ համարեցան. իսկ դու զքեզ իսկ ամենեցուն առաջի եդիր՝ հացկատակաց և աւազակաց և որք զքսակս ընչից հատանիցեն. քանզի այսպիսի գովութեանց այսպիսի թէատրոն յօրինեցաւ ձեզ։ Այլ յորժամ առանձին միայն ես՝ և ոչ իմիք արժանի վարկանիս զնոսն, և յորժամ գովողքն առ քեզ ժողովեսցին՝ զնոցա զբանսն քան զքո զփրկութիւնն նախամեծար համարիցիս, և քան զամենեսին զնոսա անարգ գտանիցիս։ Այլ զիարդ չիցես անարգագոյն որ ընկերացն գովութեանց կարօտ ես, և չհամարեալ զքո անձինդ միայն բաւական՝ թէ և ոչ յընկերացն առնուցուս փառս։

Այլ արդ չածիցես զմտաւ և զայն, աղէ ասա ինձ, հանդերձ առաւելովքս, զի եթէ երևելի իցես և ամենեցուն շնորհաւոր և յանկարծ մեղիցես ինչ՝ բիւր չարախօսս ունիս. իսկ եթէ աննշան ոք իցես, 'ի զգուշութեան պահիս։ Ոչ, ասէ, այլ և յուղղութիւնսն բազումք սքանչանան։ Այլ այն իսկ են անհնարինն չարիք, զի ոչ միայն 'ի մեղանչելն, այլ և յուղղութիւնսն գործել մտանէ զքեզ փառասիրութիւնն. և յորժամ բազում անգամ խափանէ զքեզ և չտայ 'ի միտ առնուլ զվարձուցն կատարումն։ Դժնեայ և ամենայն անարգութեանց լի է եթէ ոք 'ի քաղաքավարութեան իւրացն փառաց ցանկանայցէ. իսկ յորժամ և 'ի հոգևորսն այս իրքս լինին, ասա այնուհետև որ ներել թողութեան կայցէ մեզ յորժամ և ոչ այնքան պատիւ կարիցեմք առնուլ որչափ մեք 'ի ծառայիցն պատուեցիմք։ Քանզի և ծառայն զաչս առաջարձեալ միայն 'ի տէրն հայի, և վարձկանն առ գործոյն տէր՝ որ հանդերձեալն է հատուցանել նմա զվարձսն, և աշակերտն ընդ վարդապետն հայի։ Իսկ դու զամենայն ինչ ընդ հակառակս գործես. զի զայն որ 'ի վարձու կալեալ զքեզ Տէր՝ զնա թողուս որ տէրն քո է՝ և ընդ քո ծառայակիցսն պղուցեալ հայիս.

ցես. եւ այն զի զայն եւս գիտիցես եթէ ած եւ յետ այսր
ամենայնի յիշէ զուղղութիւնս քո 'ի վախճանի, իսկ մատու-
ցիկ լոկ 'ի մերձակայ ժամանակիս. եւ յերկինս ունիս
թէ առաւել, այսինքն տեսարան, եւ արդ նստիս 'ի խո-
նարհ, վերկրաւոր տեսողս ժողովես: Եւ սակայն մեր-
ցող առաւելեան նահատակն՝ սաստ նահատակի, որպէս զի
անդ ընտիր գտանիցի: Իսկ դու 'ի վեր կամիցիս մեցել
եւ փութաս 'ի վերայ՝ սոսա պսակիլ: Եւ արդ զինչ քան
զայսպիսի իրս անօրէնութիւն կայցէ:

Եւ արդ եթէ համձոյ թուեսցի ձեզ, տեսցուք եւ զպր-
սակսն. քանզի անն յամենապատուականութէ ունի եւ միւսն
առ ընկերին չարակնութենէ եւ այլ անն 'ի փառաշքշու-
տայն երախտեաց եւ ամենայն յընչիցն ագահութենէ, իսկ
միւսն եւս 'ի ծառայական սարկանացն: Եւ զոր օրինակ
մանր մանկտի յորժամ խաղայցեն, խառնեղէն պսակս
պսակեն զմիմեանս, եւ պսակեալն չգիտիցէ՝ թէ որք
զինչն զան՝ ծաղր առնիցեն զնա, սոյնպէս եւ այժմ որք
զովեսնն զքեզ՝ ապա առանձին ծաղր անգամ այսպէս
առնիցեն զքեզ, զխառն քեզ 'ի գլուխ եդեալ: Եւ ե-
րանի թէ խոտ միայն. իսկ այժմ որ ամենայն վնասիւք
լին է զայնպիսի պսակն զնեն քեզ, եւ զամենայն իսկ
զուղղութիւնսն քո առ համարակ կորուսանեն: Եւ արդ
զմտաւ ած զնորա յառաւթիւնսն եւ փախիր 'ի վնասուէն:

Քանի՞ գովողս կամիս ստանալ, ասա ինձ. հարիւր
եթէ երկիցս քան զնոյնս եւ կամ երեքկինս կամ չորեք-
կինս. եւ եթէ կամիցիս մանաւանդ եթէ տասնեակս
քան զնոյնս եւ կամ քսան, եւ լինիցին քեզ երկու հա-
զարք եւ կամ երեք հազարք, եւ եթէ կամիցիս եւ բիւրք
իսկ՝ որ զկայթիւն եւ զպայթիւն առաջի քո հարկանի-
ցեն: Եւ ոչ ինչ ագռաւ քան զմերին բարբառն լաւա-
գոյն գտանիցին. մանաւանդ եթէ ածիցես զմտաւ զը-
հրեշտակացն տեսիլս, եւ քան զորդանոցն այնպէս արհա-
մարհելիք գտանին առքա, եւ քան զպարզիտասայն եւս
տեղապագոյն գովութիւնք նոցա, եւ ծիսոյ եւ յանուրջս
ինչ տեսլեանց նմանեսցի: Եւ արդ լուր որպէս Պաւղոս
զխարդ նորաքանչ հաւատեալս զորդարեալ ոչ միայն զայն
չխնդրէր, այսինքն է զմարդկայնին զփառսն, այլ եւ վասն
յուսոյն աղօթելով իսկ ասէր՝ թէ "Ինձ քաւ լիցի պար-
ծել, բայց միայն 'ի խաչն տեառն մերոյ Յնի Քնի":

Այնմ պատրաստեա և դու լեր նախանձաւոր, որպէս զի մի բարկացուցանիցես զտէրն քո. վասն զի զմեծ թըշնամանես յորժամ զայսպիսիս գործես ինչ, և ոչ եթէ զքեզ միայն։ Նոյն արդ ասէ առա, եթէ յանկարծ էիր պատկերագիր նկարիչ դու և ունէիր աշակերտ զոք, և ապա նորա թողեալ 'ի ցուցանելոյ զարուեստին զգործ և առեալ զծրագրութիւն երանգոյն որ 'ի տախտակին և զայն արտաքոյ ամենայն անցաւորացն առաջի դնէր և ցոյց տանէր, միթէ կարէիր հեզութեամբ տանել իրացն. և ոչ երբէք։ Ո՞չ է եթէ 'ի ծառայակցացն այսպիսի թշնամանք լինին, ապա եւ առաւել յամենեցունցն մեծ անցանելն թշնամանքն։

Ապա եթէ կամիցես և այլ ուսանել, որով կարիցես զիրսն արհամարհել, բարձրացիր թեւօք միտաւորք և արհամարհեա զերկրաւորս, և անձինս զճշմարիտ փառացն զհանդամանութիւն[1]. լցիր հոգևորական իմաստութեամբն, ասա առ ոգին քո որպէս և Պաւղոս առէր՝ թէ "Ո՞չ գիտես զի զհրեշտակս դատիցեմք„, և յարուցեալ զզաստատայի. ապա և սատանելով խոկ առա՝ զի թէ զհրեշտակս դատես, զիարդ առնուցուս յանձն ընդ ոտինձս և ընդ անօսութս հաստատել և ընդ կզաւորեմ տանել զամբաւթիւն և ընդ միմեանս[2] որ են զերծ կատարուածքն և ընդ զադանամարտն և ընդ կատամնոտեկսն. վասն զի զայսպիսի զգալութեանց զհետ նորա են մնեալ։

Նայ դու բարձրագոյն քան զնոցա զամբոխսն և զզայութիւնսն յօրինեա քեզ թեւս, և նախանձեա ընդ անապատակին քաղաքացին ընդ Յովհաննէս, և ուսիր թէ որպէս նա զանց առնէր զամենայն բազմամբոխիցն, և որք փառաբանէին նմա և մաղթէին՝ և նա ոչ ինչ զառնոյր յիրացն։ Ուսուցէ և առաւանէր զամենայն բնակչաց պատկերատիպացուցն իբրև զազգակութիւն ամեաց ծովաշուրջ զեղեալ զնովաւ զժողովուրդն և զքանդակեցեալ հիմամայքն 'ի վերա նորա, բայց առակայն ոչ կարաց զառաքեն նոցա թուլացուցանել զմիտս նորա, այլ եւ ընդդէմ կռուէր, և իբրև ընդ ունիտքնի միոյ ուղղոյ այնպէս

1 Այզաղէս յօրինակին. Թերևս ... ։ Հանդերձեալ. յոյժն պէտ կամ ...

2 Յօրինակին ... ։

խօսէր ընդ այնչափ բազմութեանն, նա և զարհուրե-
ցուցանէր ևս աւելագոյն՝ թէ օձք ծնունդք իծից: Այլ այն
զի հասարակ իսկ առ նա ընթանայցեն, և զքաղաքս և
զգիւղս թափուր թողուցին, որպէս զի կարասցեն տեսա-
նել զսուրբ և զպատուական զգլուխն զայն. բայց սա-
կայն զնա ոչ ինչ յայնցանէ կարաց մեղկել, վասն զի
հեռի էր 'ի փառասիրութենէ և ազատ յամենայն յամ-
բարտաւանութենէ:

Այնպէս և Աստեփանինոս տեսանէր զբազմութիւն սամ-
կլին, ոչ զի պատուէին զնա, այլ զի մեղադնէին հակա-
ռակ նմա և կրճնէին զատամունսն, և նորա բարձրա-
ձայն զանեալ քան զնոցա չարութիւնն՝ ասէր այսպէս.
"Խստապարանոցք և անթլփատք սրտիւք և ականջօք":
Նոյնպէս և Եղիա մինչդեռ զօրքն մերձ կային և թա-
գաւորն, ամենայն իսկ բազմութեանն ասէր՝ թէ "Մինչ-
չև յո՞րբ յերկուս հետս կաղայք": Իսկ մեք ուսուցիկ
յամենայն ժամ կաղամք, բուծանեմք զանաղանաբայծս
և զաղաջիկս, և զայնպիսի զծառայական զպաշտօնս և ըզ-
պատիւս խնդրեմք որք ոչ կան մեան հաստատուն: Նա-
զանգս այնպիսի ամենայն ինչ վեր 'ի վայր կործանեցաւ.
նորին վասն ամենայն իսկ իրք քրիստոնէից 'ի գերու-
թիւն մատնեցան, և ամենայն հոգք մեր այն են թէ
որպէս 'ի բազմաց փառս մարթասցուք գտանել:

Այլ արդ հանցուք արտաքոյ սահմանաց մերոց այժմ
զփառացն զախտ, և յայնժամ կարեմք զգալ բարիոք
ազատութեանն և վայելել 'ի խաղաղ նաւահանգըս-
տեանն: Ոչ զինչ փառասէրն յանէկծութեան բնակէ,
քանզի միշտ զաղայ և սարսէ և զբաղում զանեալս ո-
դորմ. իսկ որ այսր ախտի բանաւորութեան արտաքոյ
գտանիցի, 'ի խաղաղ նաւահանգստեան է հանգուցեալ,
և 'ի սուրբ և յստակ ազատութեան վայելէ: Ոչ և
ոչ նա որ փառացն ցանկայ. զի նա քանի ծանօթս ևս
ունիցի, զամենեսեան զնոսա իւր տեարս ունի. քանզի 'ի
հարկէ ամենեցուն ծառայէ: Այլ արդ փախիցուք
փառացն ախտիկ որ սոցա փառքն են, որպէս զի ազատե-
ցուք և զերծցուք յայնպիսի բունածառայութենէ: Ոք
զոր օրինակ որք 'ի մարմնոյն զեղեցկութիւն հարեալ
իցեն, եթէ դէպ լիցի յանկարծօրէն՝ ևս գեղեցիկ ե-
րեսս տեսանել, խիկոյն յաւաշինաց անտի 'ի բաց հրա-

ժարեն, որպէս և որ առ 'ի մէնջ փառացն են ցանկա-ցեալք, եթէ յանկարծ զմտաւ ածիցեն զպայծառութիւն երկնաւոր փառացն, ապա կարեն վասն նորա արհամարհել զայս փառս:

Այլ արդ փութասցուք զայն զփառսն տեսանել և ամենայն հաւաստեաւ ջանասցուք զնա. որպէս զի տեսանելով զգեղեցկութիւն նորա, կարիցեմք փախչել 'ի սիրելութենէ երկրաւոր փառացս և 'ի բազում հեշտութեան անպատում փառացն վայելել: Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր համագերձ հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

## ՃԱՌ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

«Իսկ զիա՞րդ կարդասցեն յոր ոչ հաւատացին, և կամ զիա՞րդ հաւատասցեն զորմէ ոչ լուան, և կամ զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ, և կամ զիա՞րդ քարոզեսցեն եթէ ոչ առաքեսցին, որպէս և գրեալ է»:

Պարծեալ 'ի բաց բառնայ 'ի նոցանէ զներումն: Այլ զի ասացեալ էր յառաջագոյն զնոցանէ՝ թէ «Վկայեմ զի ունել ունին զնախանձն ա̃յ, այլ ոչ գիտութեամբ», այսինքն է թէ կարի յոյժ տգէտ են ա̃յ արդարութեն և յաղագս նորին այնորիկ չհնազանդեցան, ցուցանէ այնուհետև թէ և ընդ տգիտութեանն դատ ունին առ ա̃յ: Այլ չասէ ինչ այսպէս յայտնի. բայց կազմէ և 'ի դէմս հարցմանն յառաջ բերէ զբանն, և ևս յայտնագոյնս կարծէ զյանդիմանութիւնն 'ի ձեռն զիմաստութեանն և լուծմանն, և ամենեւին իսկ ջանայ մաքրել զանդաստանս մտացն: Տես որպիսի ինչ է զոր ասէն: Ընդդատին 'ի վերուստ առաց, ասէ, մարգարէն՝ թէ «Ամենայն որ կարդասցէ զանուն տեառն՝ կեցցէ»:

Բայց թերևս ասիցէ ոք արդեօք՝ թէ զիա՞րդ կարէին կարդալ առ այն որում ոչ հաւատացին: Այլ դարձեալ հարցումն զիմաստութեամբ հանդերձ 'ի նմանէ, և եթէ էր վասն չհաւատացին: Այլ դարձեալ այլ ընդդի-

մադրութիւնք, որպէս զի ասիցէ ոք՝ թէ զիա՞րդ կարէին հաւատալ զորմէ չէին լուեալ։ Այլ դարձեալ լուծումն առնէ և ցուցանէ՝ թէ քարոզեցին, և բազումք առաքեցան 'ի սոյն իսկ։ Այլ իբրև յայտ առնէ թէ սոյք առաքեցան առ նոսա, յայնժամ ապա բերէ զմարգարէն 'ի մէջ որ ասէ. "Որքա՛ն զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան՝ և որ զբարութիւնս աւետարանեն"։ Տեսանե՞ս որպէս յօրինակէ քարոզութեան ցուցանելին և քարոզքն. քանզի ոչ եթէ այլ ինչ ամենայն ուրեք ճառէին, այլ զայն ասէին՝ զԱյ զբարութեանցն և զնորին զխաղաղութեանն որ առ մարդիկս եղեն։ Ապա թէ չհաւատայք, ասէ, ոչ եթէ մեզ չհաւատայք, այլ Եսայեայ որ յառաջ քան զբազում ամս ասէր՝ թէ և առաքեսցուք և քարոզեսցուք և դոքա զորմէ ասացաքն։ Ապա եթէ ապրելն 'ի կարդալոյն էր և կարդալն 'ի հաւատալոյն, իսկ հաւատալն 'ի լսելոյն և լսելն 'ի քարոզելոյն, իսկ քարոզելն յառաքելոյն, ապա ուրեմն և առաքեցան և քարոզեցին։ Ընդ նոսա և մարգարէն ևս հանդիսանայ ցուցանել նոցա, և ամենայն համարձակութեամբ քարոզէ և ասէ՝ եթէ սոքա են զորս յառաջ քան զբազում ժամանակս քարոզէաք ձեզ, զորաց և զոտսն 'ի գովութիւն առնուաք վասն քարոզութեանն։ Ապա ուրեմն բարւոք իսկ եղև յայտնի՝ եթէ որք չհաւատացինն, նոցա եղև մեղադրութիւնն միայն, իսկ յԱյ կողմանէ ամենայն ինչ կատարեցաւ։

"Այլ ոչ ամենեքեան հնազանդեցան աւետարանին։ Եսայի ասէ. Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում։ Ապա ուրեմն հաւատք 'ի լսելոյ են և լուր 'ի բանէն Քրիստոսի"։ Այլ դարձեալ այլ զդիմադրութիւնս բերէ 'ի մէջ և ասէ՝ թէ և Եսայիա նոցին առաքեցաւ, թէ և Ած իսկ յղեաց զնա առ նոսա, որում պարտէին ամենեքեան լսել և հնազանդել։ Տես զիմաստութիւնն Պաւղոսի. յորժամ խառվէինն և ամբոխէինն, զայնպիսի զբանս արկանէ 'ի կէս որ ամբոխայն և խռովութեանն ջնջիչ էր։ Ո՞ր վասն, ասէ, դայթակղեցիք, ով Հրեայդ, յետ այսպիսի և այսքան վկայութեանց և իրացն տեսակաց՝ եթէ ոչ ամենեքեան հնազանդեցան աւետարանին։ Այս ինքն այլ աստուածային բաւական իսկ էր հաւատարիմ առնել զայն՝ եթէ ոչ ամենեքին հնազանդեցան աւետարանին։

Digitized by Google

Վասն զի զայնս զայսօրիկ մարգարէն յառաջագոյն անդուստ 'ի վերուստ գուշակէր։ Այլ դու տես զանհեղեկան զիմաստութիւնն նորա թէ զիարդ եւս առաւելն ցուցանէ քան զայն՝ որում նոքայն ակն ունէին եւ յուսային ընդդէմ կալ։ Ոչինչ ասիցէք, ասէ, թէ ոչ ամենեքեան հնազանդեցան աւետարանին. եւ զայն զայս անդուստ 'ի վերուստ յառաջագոյն գուշակեաց Եսայիաս. մանաւանդ եթէ ոչ զայս միայն, այլ եւ բազումս։ Դուք, ասէ, մեղադիր լինիք եթէ ընդդէմ ամենեքին ոչ հնազանդեցան աւետարանին. իսկ Եսայիաս եւս առաւելն քան զայնս ասէ։ Այլ զինչ իցէ զոր ասէն. "Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում"։

Ապա իբրեւ 'ի բաց ընկեց զամբաստանութիւնն՝ յանդիմանելն կացուցանելովն նոցա զբանս մարգարէին, դարձեալ բուռն հարկանէ զառաջինն կարգէն։ Այլ քանզի ասաց եթէ պարտ է կարդալ, եւ որք կարդանն հաւատալ, եւ որք հաւատանն նախ լսել, եւ որք հանդերձեալքն են լսել ըզքարոզսն ընդունել եւ զքարոզսն յառաքչէն, եւ ապա այսպէս եցոյց եթէ առաքեցան եւ քարոզեցին, եւ դարձեալ այլ իմն հանդերձեալ է դիմադրութիւնս 'ի ներքս մուծանել՝ պատճառս առեալ յառաջագոյն յայլմէ մարգարէէ մեղադրութեանց, զոր եւ ելոյծ իսկ յառաջ քան զիրողս մի զայս, եւ այժմ դարձեալ զնոյն իմն անդրէն զուգէ ընդ առաջինսն։ Այլ քանզի 'ի մէջ ած զմարգարէն որ ասէն՝ թէ "Տէր, ո՞վ հաւատաց լրոյ մերում", ապա ժամ էր այնուհետեւ նմա բուռն հարկանել ըզվկայութեանցն եւ ասել. "Ապա ուրեմն հաւատք 'ի լսելոյ են"։ Այլ զայս ոչ եթէ լոկ ինչ եդ, այլ վասն զի յիւրաքանչիւր ժամանակս նշան խնդրէին Հրեայքն եւ զյերեւութս յարութեանն, եւ կարի իմն յայսօրիկ բերանաբացք յաքանչէին[1], եւ ասկայն մարգարէքն զայս ինչ ոչ ասէին, այլ զայն՝ թէ միայն 'ի լրոյ պարտ է մեզ հաւատալ. վասն որոյ եւ յառաջագոյն իսկ զայս կաղմեալ ասէր "Ապա ուրեմն հաւատք 'ի լսելոյ են"։ Ապա քանզի նուաղագոյն իմն թուէր այս, տես որպէս հանէ զնա 'ի վեր։ Ոչ միայն լուր ասացի, ասէ, եւ ոչ եթէ մարդկային բանիցս լսել եւ հաւատալ, այլ մեծա-

1 Ցոյնն բերանաբաց էին։

զայն լուր առաջի. քանզի լուրն 'ի բանիցն էր: Մի եթէ զմեր ինչ ասէի, ասէ, այլ զայն որ յառաջն էր՝ զայն ուսոյց և պատմեաց, որ քան զնշանսն ևս մեծագոյն է: Ասա զի և էր և առաքեալ և սքանչելագործութեանն միանգամայն պարտաւորէ հաւատալ, քանզի և գործքն և սքանչելիքն 'ի նոցա բանիցն լինէին. վասն զի երկինք և այլ ամենայն արարածք այնպէս հաստատեցան:

Իսկ յորժամ եցոյց եթէ պարտ է հաւատալ մարգարէիցն զի միշտ զնոյն զբանս խօսէին, և քան զլուրն այլ մի ինչ ասելի խնդրեր, յարէ դարձեալ այլ ինչ զխնադրութիւնս զորոց Հրէայցն, և ասէ. «Այլ ասեմ՝ միթէ ոչ լուան»: Ո՛չինչ է, ասէ, եթէ ատեցան որք քարոզեցինն, և քարոզեցին զոր ինչ հրամայեցանն: Ապա և մեծապէս իսկ առնէ զլուծմունս ընդդիմախօսութեանցն և ասէ. «Մանաւանդ եթէ ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա և 'ի ծագս տիեզերաց բանք նոցա»: Իսկ արդ զինչ ասես, ասէ, միթէ ոչ լուան: Ո՛ր տիեզերք և ամենայն ազգք երկրի լուան, իսկ դուք որ մերձ էիք և որ այնչափ ժամանակս ընդ ձեզ շրջեցան քարոզքն, ուստի և էինդ իսկ, և ոչ լուարուք. և ո՞ր քան ունիցի զայս: Ո՛ր եթէ ծագք երկրի և տիեզերք ամենայն լուան, մանաւանդ թէ ևս առաւել դուք:

Ապա դարձեալ այլ ևս զխնդրութիւն յաւելու: «Այլ ասեմ, ասէ, միթէ Իսրայէլ ոչ գիտաց». և կամ եթէ լուան և ոչ իմացան և ոչ գիտացին և ոչ առին 'ի միտ, և զի նոցա էին առաքեալ: Իսկ արդ միթէ ներումն ինչ թողութեան գտանիցե՞ն վասն այնպիսի տգիտութեան. և ոչ երբէք. քանզի և Եսայի իսկ ծրագրեալ ասէր նոցա. «Իբրև՛ զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան». և յառաջ քան զսա ինքն իսկ օրէնսդիրն. վասն որոյ 'ի սոյնս յարեալ ասէր՝ թէ «Նախ Մովսէս ասէ՝ ես նախանձեցուցից զձեզ ոչ ինչ ազգաւ, և անմիտ ժողովրդեամբ զկծեցուցից զձեզ»: Ուստի և յայսմանէ պարտ էր ճանաչել զքարոզսն. և ոչ միայն զի հաւատարիմք եղեն և կամ զի խաղաղութիւն քարոզէին նոցա և զբարութիւնս զայն աւետարանէին և կամ զի ընդ ամենայն ծագս տիեզերաց սերմանէին ըզբանն աւետարանին, այլ և յայսմանէ ևս զի և զնուաստագոյնս քան զնոսա որք 'ի հեթանոսացն էին՝ յառա-

Խաղայն գիտակէին եթէ առաւելագոյն քան զնոսա պա-
տուէին ։ Քանզի որոց ոչն երբէք լուեալ եւ ոչ ծանուցին ծառա-
նեացն իսկ՝ յանկարծակի զաստուածային փիլիսոփայութիւն
ուսանէին, որ եւ է իսկ զկծեցուցանելոյ զնոսա եւ ի նա-
խանձ յարուցանելոյ՝ յիշատակէ զմարգարէութիւն Մով-
սիսի որ ասէ. "Ես նախանձեցուցից զձեզ ոչ ինչ ազ-
գաւ"։ Քանզի ոչ եթէ մեծութիւն պատուոյն միայն
բաւական էր զնոսա ի նախանձ ածել, այլ թէ եւ որ
այնչափ անարգք էին հեթանոսք եւ ոչ յազգ համարեալ
արժանի էին, եւ յանկարծ յայնպիսի բարութիւն վայելե-
լեցին ։

"Ես նախանձեցուցից զձեզ, ասէ, ոչ ինչ ժողովր-
դեամբ՝ եւ ազգաւ անմտով բարկացուցից զձեզ"։ Ո՞վ
քան զհեթանոսս կայր անմիտ երբէք եւ կամ՝ անարգա-
գոյն ։ Տեսանես զիարդ ամենայն իրօք ծանօթ եղեալ
եւ ի վերուստ իսկ առաւել մի նշան նոցա վասն ժամա-
նակիս այսորիկ առ ի փարատելոյ զկուրութիւնն նոցա ։
Քանզի ոչ եթէ ի փոքր անկեան ուրեք գործեցան այն-
պիսի իրք, այլ ընդ երկիր եւ ընդ ծով եւ առ համարօղ
իսկ ընդ ամենայն տիեզերս ։ Տեսանեն ի բերել բարու-
թեանս վայելեալ զայնմանէ որ յառաջ նոցա առ համար-
հեալքն էին, այսինքն է հեթանոսք. ասա զայս
էր ի մեր առնել նոցա եթէ այն ազգ է՝ զորմէ Մով-
սէսն ասաց, թէ նախանձեցուցից զձեզ չինչին ազգաւ ։
Եւ առոգ ոչ ինչ իսկ, Մովսէս միայն ասաց զայս, թէ եւ
այլ ոք ։ Նոյն յետ նորա եւ Եսայիաս. զնոյն որոց եւ
Մովսէսի ասէր. եւ նախ զՄովսէս զնէ եւ ցուցանէ թէ
երկրորդ անգամ զոյ առնել զայս, եւ նա յայտնագոյն
եւ համարձակ զնէ ։

Եւ որպէս վերագոյն ասէր՝ թէ "Եսայի աղաղա-
կէ", այսպէս եւ աստ թէ "Եսայի համարձակի իսկ եւ
ասէ"։ Եւ զոր ասէն այսպիսի ինչ է. բռնադատեալ եւ
համարձակեալ, որպէս թէ մի համարձակէր ինչ կործանել
ասացուածն ; այլ մերկ դէմ յանդիմանն առաջի ալոյ նո-
ցա զիւրան կացուցանէ. մանաւանդ եթէ հալածեալ իսկ
եւ վտանգեալ ընդ այն յամենայն ժամ յօրժամ յայտնա-
պէս զայն ասէր՝ թէ որ երեւեցայ էք յխնդրողէ ի
ձերաքէ փրկութեանն, եւ ոչ առնուեր անձին ենթադրել ձեզ
նորին թշուառութեանն. եւ այս, ասէ, չէ ինչ կարի իմաս-

տութեան աստուածայնոյ ։ Այլ ասիցես, ասէ, բազում առաւելութեամբ խօսի զանիրաւս ձեր, յայտնի իսկ է հանապազորդ յառաջագոյն ասէր զամենայն ։ Զո՞ր ինչ. և զձեր զանփութիւնն և զնոցա զանուանս, այսպէս ասելովն. «Գտայ որ զիս ոչ խնդրէին. յայտնի եղէ որ զինէն ոչ հարցանէին» ։ Արդ ուրեմն յայտ է թէ չէ զայս ըն-դունելոյն ասացեալ, այլ զոր 'ի հեթանոսացն էին՝ որոց ոչ երբէք էին զնա ծանուցեալ ։ Զի զոր Մովսէսն նշանագրելովն ասաց՝ թէ ոչ ինչ ժողովրդեամբ և ազ-գաւ անմտաւ, այնպէս և աստ 'ի նորին պատճառանաց ասէ յայտ զնոցա զապարանծութիւն անխոհութեանն. որ անխոստովանութիւն մեծ իսկ անմտութիւն էր զՀրէիցն՝ թէ որք ոչն խնդրէին գտին՝ և որք խնդրէինն կորուսին ։

«Իսկ առ Իսրայէլ ասէ. զօր ամենայն ձգեցի զձեռս իմ առ ժողովուրդն անհաւան և ընդդիմախօսն» ։ Տե-սե՞ր որպէս զչքաւորութիւնն որ 'ի բանիցն խնդրեալ էր՝ զատանի թէ 'ի սկզբանէ իսկ 'ի մարգարէսն կայցեն իրքն և յայտ համարձակ ունէր զդաւանեալն ։ Այլ արդ զի՞նչ եղէ այն. ըստ Պաւղոսի, ասէր զառաջինն՝ թէ «Զի՞նչ ասեմք, զի հեթանոսք որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդարութեան. իսկ Իսրայէլ զհետ մտեալ էր արդարութեան օրինացն, և յօրէնս արդարութեան ոչ ժամանեաց» ։ զայսոսիկ և Եսայի ա-սէր՝ թէ «Գտայ որք զիս ոչ խնդրէին. յայտնի եղէ որ զինէն ոչ հարցանէին» ։ Նոյն իրքն է բան այժմ ա-ռաջուածին՝ թէ «Հեթանոսք որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդարութեան» ։

Արդ ցուցանէ թէ ոչ մյ շնորհացն միայն էր որ ե-գիտ, այլ և բարուցն ընդունելեաց. որպէս և նոցա ան-կումնն 'ի հակառակութենէ անհաւանութեանն եղև, և բան այնմ զոր 'ի այնս իսկ յարելով ասէ՝ թէ «Առ Իսրայէլ ասէ. զօր ամենայն ձգեցի զձեռս առ ժողո-վուրդն անհաւան և ընդդիմախօսն» ։ Որ ասեն զամե-նայն զառաւօտին ժամանակեան կոչէ. իսկ զձեռաց ձգումն զկոչելն և յինքն ամփոփելն և զաղաչելն յայտնէ ։ Այլ ապա այսուհետև զայն ևս ցուցանէ՝ թէ ամենայն իսկ մեղադրութեանն նոցա էին պատճառք. ասէ. «Առ ժո-ղովուրդն անհաւան և հակառակող» ։ Անմտին նոցա, ասէ, և որ աղաչէրն զնոսա՝ չհաւանէին նմա. և ոչ

եթէ միայն չհաւանեցան, այլ և ընդդէմ եւս կացին. և զայն ոչ մի անգամ միայն և երկիցս և երիցս, այլ զամենայն իսկ ժամանակս: Նոյն այնք որոց չէր զնա երբեք ծանուցեալ՝ կարացին զնա ըմբռնել կոչել: Եւ չասէ այնպէս թէ նոքա զօրեցին զնա յանձնեալ կոչել, այլ 'ի բաց ընկէց զհեթանոսացն զմեծամտութիւն; որպէս զի մի վարկանիցին զամենայն ինչ յանձանց գործեալ, այլ զայն որ զատ նոցա և որ յայտնեցին եղև, և տայ զմիւսն եւս յանձանց նոցաս եղեն: Նաև զի մի ասիցեն նոքա՝ թէ էր վասն մեզ չեղև յայտնի, ասէ՝ ոչ միայն յայտնի եղէ ձեզ, այլ կացի մնացի տարածեալ զձեռս իմ աղաչել զձեզ. զհօր զթամբ և զմօր զորդեսիրի զխնամս ցուցի առ ձեզ:

Տեսանե՞ս որպէս յայս տարի որ յառաջագոյն անհնարին թուէր առ 'ի լուծումն, զայն դիւրաւ եղոյծ, և եցոյց թէ նոցա առաքեն եղեն պատճառք կորստեան, և որպէս ամենայն ուսանէք չէն արժանի ներելոյ և թողութեան. վասն զի լուան և 'ի մեա ասին զառաջնեալսն, սակայն և ոչ այնպէս կամեցան մերձենալ առ նա: Նոյն նա որ եւս մեծագոյն ոգին ունէր առ 'ի յարուցանել զնոսա 'ի հակառակեւն և ընդդէմ ասելն, որով կարէր զնոսա յինքն ածանել, ապա իբրև այնու եւս չաղգէր, այլ խնամ յաւելու. որպիսի՞ ինչ. զկծեցուցանելն զնոսա և նախանձեցուցանելն: Եւ յայտ բանաստրաց ասեն է, զայն ընէ և ցուցանէ թէ որչափ ինչ ունի զօրութի և կամ ոյժ բնութիւն նախանձուն առ 'ի լուծանել զամենայն հակառակութի, և զանկեալսն վերստին զօրանէ կանգնել:

Այլ զի՞նչ պարտ է զմարդկանէ ասել զայս, որ և յանասունս անգամ յանքանս և 'ի տխեղծ հաւուց մանաւանդ մանկանց բազում զօրութիւն ցուցանէ: Որինչի բազում անգամ աղաչէ հայր զմանուկ, չառնու յանձն, չլսէ հօրն, այլ կայ մնայ 'ի նմին յամառութեան. իսկ ապա յորժամ տեսանիցէ՝ թէ առեալ հօրն այլ մանուկ գգուիցէ, ապա առանց հօրն կոչելոյ այնու հետև ընթանայ 'ի հայրական գոգն. և զոր ոչ վճարեցին աղաչանքն, զայն նախանձն կատարեաց: Այնպէս և աստ արար. քանզի զի ոչ եթէ աղաչեաց միայն և զձեռս տարածեաց առ 'ի յընդունել զնոսա, այլ և զնախանձընդդէմ զախտն

զարթայց ընդդէմ նոցա. զի զանէ յորժամ տեսանիցեն զայնս որք քան զնոսա նուաղագոյն և կրտսերագոյնքն իցեն, նոքօք զբօսնիցին 'ի նախանձ' ոչ 'ի դոյզն ինչ 'ի բարութեանց, այլ որ յոյժ մեծն էր: Սոյնն վասն և զլեռնաւորագոյն զախտն զնէ, այսինքն է զնախանձն, որով կարիցէ զբզակել զնոսա և ածել յայնպիսի մեծ և կարևոր բարութիւնսն, զոր և յանուրջս և յերազի անգամ չէր տեսեալ երբէք. այլ նոքա և ոչ այնպէս լուան: Եւ արդ որչափ նորեալ և թողութեան արժանի լինիցին, որք այնպիսի սաստկութեանն ցուցին զհակառակութիւն: Եւ ոչ միոյ իմիք: Եւ այժմ չասէ ինչ զայն այսպէս յայտնի, բայց 'ի միտս լսողին թողու զամենայն զստացեալսն. և ինքն դարձեալ զայնս 'ի յանցորդաց անտի կազմէ հանդերձ իւրով սովորական իմաստութեամբ:

Որ և յառաջինսն ասէր՝ զիմաստութիւն 'ի նորքս մեծամեծելով և վասն օրինացն և վասն ժողովրդեանն որ մեծագոյն անհաստատութիւնն ունէին զնոցանէն, և աստ 'ի լուծումն զիմաստութեանցն դառնայր, և այնչափ տայր նորումն իրացն որչափ ինքն կամէր, որպէս զի մի ծանրատաղտուկ զբանսն առնիցէ, զայնս և աստ գործէ գրելով. "Ասեմ, ասէ, միթէ մերժեաց Ած զժողովուրդ իւր զոր յառաջն ծանեաւ. քաւ լիցի": Եւ կերպարանօք իմն մեծամեծէ զհիացումնն 'ի նորքս, և յառաջինն յաստուածոյ անտի առնէ սկիզբն, և զահագին զայսպիսի զաստուածանմանս դնէ առ 'ի դիւրընկալ առնելոյ այնուհետև. և զորս առաջնովքն կազմէ ցուցանել, զայն և այժմ կազմէ աստ. զորպիսի ինչ: Միթէ պէտ և սակաւք իցեն որ ապրեցանն, սակայն ուխտքն հաստատուն կան: Յաղագս այնորիկ չասաց լոկ թէ ժողովուրդն, այլ յաւելու՝ թէ զոր յառաջագոյնն ծանեաւ:

Այս և օրինակաւ իսկ յայտ առնէ զչմերժումնն ժողովրդեանն ասելով թէ "Եւ ես իսրայելացի եմ յազգէ Աբրահամու 'ի ցեղէ Բենիամենի": Եւ, ասէ, որ վարդապետս եմ, որ քարոզս եմ: Եւ քանզի թուէր թէ ընդդէմ ինչ իցէ այս առաջնոյ ասացուածին այնորիկ՝ թէ "Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում", և դարձեալ եթէ "Որ ամենայն զօրեցի զձեռս իմ առ ժողովուրդն անհաւան և ընդդիմախօսն", և չշատացաւ այնու միայն՝ թէ քաւ լիցի, այլ և միւսանգամ եւս կազմէ դարձեալ և.

սկիզբն ասաց առաքեալն. «Ոչ մերժեաց, ասէ, Աստուած զժողովուրդ իւր»: Այլ ասէ. չէ ինչ կարի յառաջագիտութեամբ, այլ վճռիւ միայն։ Իսկ արդ ասեն զասացեալն զյառաջագիտութեանն և զմիւսն ևս որ զկնի նորաւն է։ Մանզի և առաքեալն այն է ցուցանելն թէ և ինքն անտի է. ապա ուրեմն թէ կամէր զնոսա մերժել և զքարոզելն ամենեցուն տուեալ ամենայն տիեզերաց եղեն հաւատացեալք, և բազմագոյն խորհուրդն իսկ անտեսութեան և մատակարարութեան, ոչ զոսա 'ի նոցանէն ընտրէր. այս մին և առաջին կարծութիւն։ Իսկ երկրորդ յետ առաջնոյն ասելն՝ թէ զժողովուրդ իւր զոր յառաջն ծանեաւ. այսինքն է թէ յայտնի և համարձակ գիտէր թէ սիրելիք 'ի սկզբա իրացն և զհաւատոյն ընդունելոց են. քանզի և երեքհազարքն և հինգ հազարքն և բիւրքն 'ի նոցանէն էին հաւատացեալքն. Որպէս զի մի ոք ասիցէ՝ թէ զոր միայն ես ժողովուրդ. և վասն զի զոր կոչեցաք, ամենայն ազգն կոչեցան. յաղագս այնորիկ յաւելոյ 'ի սոյն, թէ «Ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր զոր յառաջն ծանեաւ». որպէս զի ասիցէ՝ թէ ասէիմ ընդ իս երիս հազարս և հինգ հազարս, ասէիմ և բիւրս։ Իսկ արդ այսոքիկ են ժողովուրդն և զաւակն այն՝ որ աստեղաց երկնից էր նմանութեամբ և ծովային աւազոյն. և այսպէս խորհեցէր զմեզ զամենեսեան անարգել, և զնոսա զնես ժողովուրդ զաւակաւոն որ ընդ քեզ են, և յայտնապէս փառաբանութիւն փակեցէր զթիւն մեր և 'ի մեռելոյ յայս վերատահացուցէր զմեզ, որ ասէիրդ թէ կատարելոց են աւետիքն Աբրահամու. ամենեքեան կորեայք, և 'ի սակաւս և 'ի նուազս եկին իւք փրկութեանն։ Օրինակ զմեծաբանութիւն և զհպարտութիւն, որ ըստ բանիւքն իմաստասիրեցերն, և ոչ իւք ուրեք ինչ գտանի, յաւնուքս յանձն և չհաւանելեաց։ Իսկ արդ զի մի զարդալիսն ինչ կրիցեն, տես որպէս 'ի յառաջագոյն իսկ ասաց զլուծումն. և ընդդիմադրութիւն ոչ գնէ, այլ նախ քան զդիմադրութիւնն լուծանէ ասելն. 'ի հետ 'ի պատասխանութեանց անտի կարգէ զայն։ Իսկ արդ զինչ իցէ լուծանելոյ

«Ո՞չ գիտիցէք, ասէ, յԵղիա զինչ ասէ գիր. որպէս ատենախօսէ ընդդէմ Իսրայէլի. Տէր, զմարգարէս քո կոտորեցին և զսեղանս քո կործանեցին, ես միայն մնացի և այժմ զիմ ևս զանձն խնդրեն։ Այլ զինչ ասէ

նմա պատասխանին անդրէն . Թողի ես ինձ յինքեան եօթն հազար այր որք ոչ խոնարհեցուցին ծունր Բահաղու : Նոյնպէս ուրեմն այնպէս յայժմու ժամանակիս մնացորդք ըստ ընտրութեան շնորհացն եղեն „ : Իսկ զոր ասէն այսու պիտոյ ինչ է : Ոչ մերժեաց ած զժողովուրդ իւր . զի եթէ մերժեալ էր , ապա և ոչ զոք ընդունէր . իսկ եթէ զամենս ընկալաւ , ապա յայտ է եթէ ոչ մերժեաց . և եթէ զամենս , ասէ , ընկալաւ , ապա պարտ էր զամենեցուն իսկ ընդունել : Այլ ոչ երբէք , քանզի և առ Եղիայիւ 'ի վերայ եօթն հազարացն միայն հաստատէր զփրկութիւն . նոյնպէս և այժմ բազում բազումք են հաւատացող : Իսկ ապա եթէ դուք տգիտանայք , չէն ինչ զարմանք . վասն զի և որ մարգարէանայրն այնպիսի և այնքան սքանչելի այր՝ տգիտանայր . այլ ած այնպէս իմն անօրինէր զիւր իրսն և զմարգարէին տգիտութիւն :

Այլ դու տես զիմաստութիւնն Պաւղոսի որպէս առ 'ի կազմելոյ զառաքելական՝ ծածուկ 'ի նոցանէն ամենցուցանէ զամբաստանութիւնն որ զնոցանէն . յաղագս այսորիկ իսկ յիշեաց զամենայն վկայութիւնն , որպէս զի խայտառակեսցէ զնոցա զանագորոյնութիւնն , և ցուցանէ թէ այսքիկ անդստին 'ի վերուստ իսկ էր կազմեալ : Այլ եթէ զայս չկամէր , այլ լոկ զայն կամէր ցուցանել թէ սակաւք են ժողովուրդն , պարտ էր ասել թէ և առ Եղիայիւ եօթն հազար միայն մնացին . իսկ նա առանիկ անդստին 'ի վերուստ գիտէ զվկայութիւնս զամենայն : Այլ ամենայն ուրեք փութայր ցուցանել թէ ոչ ինչ օտար գործք գործեցան Քրիստոսի և առաքելովքն , այլ ըստ սովորութեանն և ըստ միշտ խոկմանն : Այլ զի մի զարմեալ ասիցեն թէ իբրև զմոլար զոք սպանաք ըզՔրիստոս , և կամ զառաքեալսն իբրև զմոլորեցուցիչս հալածեցաք , յայն սակս բերէ զմոլարութիւնն զայն 'ի մէջ . „ Տէր , զմարգարէս քո կոտորեցին և զսեղանս քո քակեցին „ :

Այլ ապա զի մի կարի ծանր զբանն առնիցէ , այլ վկայութիւնն 'ի մէջ բերէ և գնէ զպատասխանն . ոչ որպէս թէ կամիցի ինչ անձեցուցանել զամբաստանութիւնն , այլ իբրև յայտնապէս իմեմն փութայ չքաւարեցուցանել զնոսա վասն առաջինն եղելոցն 'ի նեղելոյ և 'ի մոլութենէ : Այլ տես որպէս ընդարձակէ զամբաստանութիւնն

որ յերկրաւորաց սնոտի լինի. զի ոչ եթէ Պօղոս է որ ամբաստան լինի և ոչ Պետրոս և Յակոբոս և Յովհաննէս, այլ որ մեծամեծաց ամենեցուն նոցա զարմանալի թուէր, որ գլուխն էր մարգարէիցն, որ ա̃յ բարեկամն էր, որ այնպիսի նախանձ նախանձեցաւ վասն նորա մինչև սովոյ և մահուն, որ մինչև ցայսօր չև ևս է վախճանեալ: Այս արդ զինչ ասիցէ նա. "Տէր, ասէ, զմարգարէս քո սպանին և զսեղանս քո բրեցին, և մնացի ես միայն, և այժմ խնդրեն զանձն իմ": Այս արդ զինչ ինչ քան զախորժելի գաղթականութիւն դառնագոյն կայցէ. պարտ էր նոցա աղաչել զնա վասն յանցանացն, իսկ նոքա զնա և կամէին սպանանել, որպէս զի ամենայն ուրեք առանց պատասխանատուութեան գտանիցին: Նա- զի ոչ եթէ եթող զանձն 'ի վերայ նոցա, այլ ած հասոյց զնոսա 'ի կռութիւն, և նախատինքն նոցա 'ի բաց լուծանէին, և դևք անանչեցեալ լինէին, և Աստուծոյ մեծ զօրութիւնն յայտնապէս քարոզէր, և Թագաւորն խոնարհէր. իսկ նոքա յանդգնութեամբ 'ի լուպանանէին յայլ սպանումն մարգարէիցն և զիւրեանց զվարդապետսն և զուղղիչս բարուց նոցա խոկային 'ի միջոյ բառնալ: Այս արդ զինչ ունիցին ասել. միթէ և նոքա՞ մոլորք էին և խաբեբայք, միթէ և զնոսա՞ ևս չգիտէիք ուստի իցեն: Այլ որոմնեցուցանէին զմեզ, ասէ: Այլ երբեմն և քաղցրագոյն ինչ խօսէին ընդ ձեզ: Այս արդ միթէ և սպանմունքն երբեք որոմնեցուցին զձեզ և կամ բարկացուցին: Տեսանե՞ս որպէս 'ի հակառակութենէ սեռակք թշնամեաց երևին: Այլքն վասն և այլուր գրէր Պօղոս Թեսաղոնիկեցւոցն՝ թէ "Զնոյն չարչարեցարուք և դուք 'ի ձերոց ազգակցացն որպէս և նոքա 'ի Հրէիցն, որք և զտէրն Յիսուս սպանին և զիւրեանց մարգարէսն, և զմեզ հալածեցին, և ա̃յ չեղեն հաճոյք, և ամենայն մարդկան հակառակք գտան". Զոր և աստանօր իսկ ակնարկէ ասելովն թէ "և զսեղանս կործանեցին և զմարգարէսն ծախեցին":

"Այլ զինչ ասէ նմա անդրէն պատասխանին. Թողի ինձ, ասէ, եօթն հազար այր որք ոչ խոնարհեցուցին ծունր Բահաղու": Այս արդ զինչ ըղձանէ, ասեն, այժմու ժամանակս: Այլ և կարի իսկ յոյժ ըղձանէ է առ մերձաւորս ժամանակաւ. որով և ցուցանէ իսկ թէ զոր-

ժամանակն մեծ միշտ ատակ է փրկել և կեցուցանել, և զի ամենայն ազգաց ՚ի վերայ կան աւետիքն: Զայս անդուստ իսկ ՚ի վերուստ եցոյց առաքեալն. «Եթէ իցէ թիւ որդւոցն Իսրայէլի իբրև զաւազ ծովու, մնացորդք միայն ապրեսցին,,. և «Եթէ ոչ տէրն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրև զՍոդոմ լինէաք,,. ցուցանէ ասա և ՚ի սոյն յարէ առաքեալն. «Նոյնպէս և յայժմու ժամանակիս մնացորդք ըստ ընտրութեան շնորհացն եղեն,,: Տես զիարդ զիւրաքանչիւր ասացելոցն զհաստատութիւն ամբողջ պահէ, և զԱյ շնորհացն և զփրկելոցն զհաւատարմութիւն: Զասելն՝ թէ ըստ ընտրութեանն, զնոցա զընտիրն գտանել ասէ. իսկ ըստ շնորհացն՝ զԱյ զպարգևսն յայտնեաց:

«Իսկ եթէ ըստ շնորհացն, ոչ ևս ՚ի գործոց. ապա եթէ ոչ՝ շնորհքն ոչ ևս շնորհք լինին,,: Իսկ եթէ ՚ի գործոց, ապա ոչ ևս են շնորհք, և կամ գործքն ոչ ևս են գործք: Իսկ դարձեալ ՚ի վերայ դիմէ ՚ի հակառակութեանն Հրէից հանդերձ ասացելովքս, և ասա ևս չքաւոր առնէ զնոսա ՚ի ներել պատասխանատուութեան: Զանիրաւ ասել, ասէ, թէ մարգարէքն կոչէին զմեզ, և Այ աղաչէր, և գործք իրացն գոչէին, և նախանձ իրացն բաւական էր զմեզ յինքն ամփոփել: Իսկ քանզի զանեսակ գործոյն պահանջէաք և ջան ուղղութեանց, յաղագս այնորիկ ոչ կարացաք մերձենալ առ նա: Զէ և չէ իսկ զայս ասել. որպէս արդեօք Այ պահանջէր ՚ի ձէնջ, որ և շնորհօքն իւրովք միշտ իսկ հանդերձեալ էր ձեզ հովանի լինել: Այլ զայս ասաց զի կամեցաւ ցուցանել թէ յոյժ ցանկացաւ փրկութեան ձերում. որ ոչ միայն զիւրն փրկութիւն ընծայէր նոցա, այլ և այն մեծ փառք թուէին առ ՚ի ցուցանել զիւր զմարդասիրութիւնն: Իսկ էր վասն երկևար առ ՚ի մերձենալ որ ոչ պահանջէին գործս. էր վասն ընդդէմ կալ և հակառակիլ յորժամ շնորհքն առաջի կային, և օրէնս ինչ ՚ի մէջ բերել ընդ վայր և ՚ի զուր. զի նոքօք չկարէին արդարանալ, և զնոր զպարգևսն յուսացուցանել նոքօք: Զի եթէ յամենայն և ասես՝ անուր է փրկութիւն, ՚ի բաց բառնաս զպայծառ շնորհն Այ:

Բայց զի մի համարեսցին եթէ օտար ինչ իցէ այս, յառաջիկայ բանն հարկանէ զեօթն հազարացն, և ցու-

ցանէ թէ և նորա շնորհօքն արդարեցան։ Նշանակեալ ասէ՝ թէ "որպէս և յայժմու ժամանակիս մնացորդքն ըստ ընտրութեան շնորհացն են", զայն ցուցանէ թէ և նոքա շնորհօքն արդարեցան։ Եւ ոչ միայն այս, այլ և ասէ՝ թէ "թողլի ինձ", այս և յայտնագոյն է եթէ մեծ մասն նորա իսկ է։ Իսկ եթէ շնորհօք, ասէ, ընդէ՞ր ոչ ամենեքեան առ հասարակ արդարեան։ Որ 'ի յաջն կամեցաւ։ Վասն զի շնորհքն որք կամին՝ զնոսա կեցուցանեն՝ և ոչ եթէ որք ոչն կամին և 'ի բաց դառնան 'ի նմանէն, և հանապազ պատերազմին և ընդդէմ կան նոցա։ Տեսանե՞ս զի ամենայն ուստեք զայն կազմէ՝ եթէ ոչ անկաւ ինչ բանն էր, և ցուցանէ թէ յարժանիս անդր եկին հասին աւետիքն, զի թէպէտ և սակաւք են նոքա, կարեն լինել ժողովուրդ էր. զոր և 'ի սկզբանն իսկ թղթին մեծաւ առաւելութեամբ ցնէ զայս իսկ՝ թէ ոմանք չհաւատացին։ Եւ չեկաց յայսմ միայն, այլ և այլ ինչ յաւելու յայս ասել՝ թէ "Եղիցի [illegible] րիս և ամենայն [illegible]"։ Արդ կազմէ զայս և 'ի շնորհացն ցուցանէ զայս, և զանձանս մինչև փրկեալս և զանձանս կորուսեալս։

## ԾԱՐԴՈՐԱԿ

Եւ արդ պահպանեսցուք մեզ զբարիս, զի 'ի վերինս անտի զգուշ. յորմէ ոչ կարասցուք գործովքն արժանել, ապաքէն գոնէ ինչ պարգևօքն. Եւ արդ գոհասցուք ոչ բանիւք միայն, այլ և գործովք և վարուք. քանզի այս իսկ է գոհութիւն յորժամ զայնպիսի ինչ գործիցեմք որով Աստուած փառաւոր լինիցի, յորժամ յայնմանէ փախիցուք ուստի զերծաքն։ Եւ վասն զի թշնամանեցաք զԹագաւորն, և նա փոխանակ վրէժս պահանջելոյ 'ի մէնջ պատուեաց զմեզ. արդ եթէ դարձեալ թշնամանեսցուք, 'ի վերջին ապաշնորհութիւն անկցուք վարուքս, և յիրաւի արժան ուրեմն զվերջին զդատապարտութիւն ընդունիցիմք, և ևս մեծագոյն քան զառաջինն։ Վասն զի ոչ այնպէս ապերախտս և ապաշնորհս ցուցանեն զմեզ առաջին թշնամանքն, որպէս յետ պատուոյն և բազում երախտեացն. Եւ արդ փախիցուք յայնմանէ յորմէ զերծաքն. և մի քերթանալ միայն գոհասցուք, այլ մի և վասն մեր առաւ-

ցէ. «Ժողովուրդս այս շրթամբք իւրեանց պատուեն զիս, և սիրտք նոցա հեռացեալ մեկուսի են յինէն»:

Այլ արդ չիցէ՞ այս անարգանս՝ յորժամ երկինք պատմեն զփառս Այ, և դու՝ վասն որոյ երկինքդ եղեն՝ որ փառաւորիչդ եղեր, այնպիսի վարս յանձին ցուցանես որպիսեաւք հայհոյեսցի Ած արարիչն քո վասն քո: Յաղագս այսորիկ ոչ մեղաւոր այն միայն որ հայհոյեն, այլ և դու այնուհետև պատճառակից ես ամենեցունց: Այլ զի երկինքն ոչ եթէ ձայն ինչ արձակեն և փառաւորեն զԱծ, այլ զայլս ՚ի ձեռն իւրոց կերպարանացն ՚ի փառաբանութիւն կոչեն, բայց սակայն ասի թէ նոքա պատմեն զփառս Այ: Այսպէս և որ զսքանչելի վարսն ունիցին, թէպէտ և լուռ կացցեն, զԱծ փառաւորեն՝ այլոց ՚ի ձեռն նոցա փառաւորելով. քանզի ոչ եթէ այնպէս յերկնից սքանչելի երևի Ած, որպէս ՚ի մաքուր վարուց մերոց. Վասն զի և յորժամ ընդ հեթանոսս մտանիցես, ոչ եթէ զերկինս ՚ի մէջ բերես, այլ զմարդիկ՝ որ քան զգազանս բանաւորութեանք և բարեկարգութեանք եղեն՝ յանկարծ հաւանեցան իմաստունք լինել հրեշտակաց. և զայսպիսի զգեղեցկութիւն բարուցն բերես ՚ի մէջ և խնամես զանձինս նոցա:

Այս և մարդն իսկ յորժ լուռ և գեղեցիկ է քան զերկինս, և կարող է քան զնոսա գեղեցկութեամբ ևս պայծառ առաւել զգալի իւր: Քանզի երկինք ամենայնի յաւուր ժամանակս և ոչ յորժ կարացին զոք հաւանեցուցանել. իսկ Պաւղոս առ սակաւ մի ժամանակս քաղաքաց և զամենայն աշխարհ առեալ ձգեաց. վասն զի ստացեալ էր այնպիսի ոգի որ չէր ինչ ՚ի վայր քան զերկնայինսն, զամենեսեան կարող էր յինքն առնել: Իսկ մերքս և ոչ անգամ երկրիս չեն արժանի, և նորայն ևս մեծագոյն է քան զերկինս, այնպէս կայր և պահէր զիւր առհմնագրութիւն և զկանոն, և քան զամենայն բարձունս երկնից՝ զեր ՚ի վերոյ թռուցեալ սերաբանեալ և այնպէս խօսէր ընդ Քրիստոսի: Այլ և գեղեցկութիւն նորա այնպիսի իսկ էր, որպէս զի զԱծ խնդրեալք քաղաքեր: Ընդ առաւելութեան հրեշտակք սքանչացան յորժամ եղեն. իսկ ընդ Պաւղոս՝ ինքն Աստուած ասելով՝ թէ «Անօթ ընտրեալ է նա ինձ»: Այլ զերկինս բազմաց անգամ առնէք ծածկէին, իսկ զՊաւղոսի զմիտս և ոչ մի ինչ ՚ի փոփոխու-

թեանցն կարող ծածկել. այլ 'ի մէջ մառախլացն ձմե-ռանւոյն պայծառագոյն ևս քան յամառնայնոյն միջօրէին ծագեալ լուսաւորէր: Նոյն զինչ կարծիցես յառաջ քան զամենայն զմութն. վասն զի որ 'ի նմանէն ծագէր արեգակնն, ոչ եթէ այնպիսի ինչ ճառագայթս արձակէր զոր ընթացք փորձութեանն կարէին մթացուցանել առհաւ մի գանէ, մանաւանդ թէ ևս առաւել յայտժամ ծագեալ ճառագայթէր. վասն որոյ և ասէր՝ թէ “Շատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի„:

Այս արդ նախանձեցաւք ընդ նա այժմ, և չեն ինչ առ մեզ ապա զարմանալի ոչ երկինքս եթէ կամիցիմք, և ոչ արեգակն և ոչ ամենայն զարդք՝ երկնից. վասն զի սոքա վասն մեր և ոչ եթէ մեք վասն նոցա եղաք: Այս արդ ցուցցուք զմեզ արժանիս նոցա որ վասն մերն եղեն: Այս եթէ նոցա անարժանք երևեցաւք, ապա զիարդ կարասցուք արժանի գտանել արքայութեանն: Այս և անարժանք ամենայնքին զարեգակն տեսանեն, և քանիք իցեն որ կեանն և զնա հայհոյեն. այնոքիկ և անարժանք յարարածս յամենեսին վայելեն և հայհոյեն զարարածս: Այն և որդի որ զհայր հայհոյէ, անարժանի գտանի. իսկ եթէ ոք 'ի ծառայիցն ընտիր գտանիցի և բարեմիտ, յիրաւի վայելէ 'ի խնամսն: Յաղագս այսորիկ արարածքս 'ի բազում փառս վայելեն, և մեք 'ի տանջանս և 'ի պատիժս յուղարկիմք: Որչափ ինչ հեզք և թշուառականք լինիցիմք յորժամ արարածքս որ վասն մեր եղեն՝ յազատութիւն փառաց որդւոյն այ 'ի կերպարանս փոխին, և մեք որ որդիքս այ եղաք վասն բազում ծուլութեան մերոյ 'ի կորուստ և 'ի գեհենն յուղարկիմք, յաղագս այնորիկ արարածքս 'ի բազում ազատութեան վայելեն:

Այս արդ զի մի ինչ այսպիսի մեզ դիպեսցի, մաքուր ստասցուք զոգիս մեր և պահեսցուք զնոսա որպէս և առաքն. մանաւանդ թէ ևս առաւելեսցուք զնոցա զպայծառութիւնն: Իսկ եթէ աղտեղութիւն ինչ ունիս, մի յուսահատ լինիր. “Թէ իցեն, ասէ, մեղքն ձեր իբրև զձանձախարիթ, որպէս զձիւն սպիտակ արարից. և եթէ իցեն իբրև զորդան, քան զասր ևս լուսաւորագոյն առնեմ„: Յորժամ տն այսպիսի աւետիս տայ, մի յեր-

Digitized by Google

կուտանայ. այլ զայն միայն արա, որով զնորա առաւելութիւն կարես 'ի քեզ ձգել. և թէպէտ ըստ ինչ զարմացեր զժխեալ և զգլխացեալ' ընդունիս. Այլ արդ այս զինչ է. միթէ 'ի դժոխս գնացեր ուր չիք խոստովանութիւն. այլ դեռ ես կաս 'ի մարմնի, և չև ես է լուծեալ այնպիսի տեսարան. կարող ես և վերջին միջնորդութեամբ մխաբել զամենայն պատուհասիցն. Մի ես ըմբռնեցար անդէն որ մեծատանն, և ոչ լուար թէ վիհ մեծ է 'ի մէջ մեր և ձեր. չև ես է եկեալ փեսայն եթէ որ երկիցէ առ քեզ փակի յիւղոյն, այլ կարող ես դեռ գնել և անդր շտեմարանել. չէ որ այժմ որ ասէ' թէ դարձի չիցէ մեզ և ձեզ բաւական. այլ բազում են այժմ դեռ, որ վաճառեն զիւղն' մերկքն, քաղցեալքն, հիւանդքն և որ 'ի բանտս բնակեն. կերակրեա զնոսա, զգեցո զնոսա, յայց և 'ի խնդիր ել որք անկեալքն դնին. և այսպէս տեսանես թէ ես առաւել քան զաղքատս բղխէ իւղն.

Այլ արդ մինչև եկեալ կայցէ առ մեզ որ զհաշիւն առնիցէ, և յառաջ քան զօրն զայն արկ 'ի կիր զժամանակին զգաստութեան, և պատրաստեա ընդ մէջ արա հանապազօրեան և ասա ցպատրաստութիւնն քո որ ունի զհաշիւր մեր Տէրութեան' թէ կա զգիր քո և արա փոխանակ հատուցման յիշեան. արա և յիշեա և յայտ ամենայն տեսանելիս առանձինն, նորոգեա այսմ տեսանելի: Այլ զայսուհետ քեզ առ անձինս և բազում աղքատաց պատուիրեա մինչ մինչդեռ ունիս ես առնելոյ զայս. քանզի չև ես հասեալ է վախճանն 'ի վերայ եթէ զայդ ապաշխարեա վասն այսորիկ, այլ մինչդեռ իշխանութիւն ես բազում անձինս և կարող ես և զայդ առնել յայսպիսի միտս. խոկ յորժամ անդր երթիցես, չկարիցես զոր ինչ պատկանի առնել. և մանաւանդ թէ յիրաւի խոկ: Արդ որ այսպիսի յաւելուած ժամանակաց ընկալար, և ոչ բազում անձինք և ոչ այլոց օգուտ ինչ եղեր, այսպէս մնայցէ արդեօք յորժամ ընդ ձեռամբ զպատուասիրին անկանիցիս' կարիցես հանդիպել. այնպիսի շնորհաց.

Այլ արդ զայս ամենայն գիտացեալ բանն հարցանք յայժ զգիրկութեանն մերանէ, և մի միայն ընդ այս մեզ սպաբառութեամբ անցաւոր կենցաղոյս: Բանզի է և է խոկ և յորժամ 'ի վերջին շունչ անդր հասանիցեմք' հաւոյ լինել այ. զոյ հնար և 'ի կատակէ անտի ընտանիր զատանել.

ոչ այնպէս որպէս միոյ կենդանւոյն էիր, բայց առաւել 'ի տառապանացն յայտնապէս մնաս համբերես նմա. զոյ հնար և զնա ընդ քո ժառանգաւորսն և բաժանորդ առնելով ժառանգութեանն: Զկերակրեցեր զնա կենդանւոյդ, զանէ յորժամ զնացեր զ, զանէ յորժամ չէր առեր ըն-կերցի՝ առ ը նմա փոխ 'ի քոյոցն: Ո՞ սրտդառնէր է, չհա-տատաւորանէ ինչ առ քեզ: Ո՞ եծաղոյն փափաքանն յայնժամ ունէր. Թէ միոյ կենդանւոյն էիր և կերակ-րեալ էիր զնա, որպէս զի քո վարձքն աճեցեալ էին. արդ յորժամ զայն չարարեր, զանէ յերկրորդս եկեալ ժառանգակից թող և զնա ընդ քո ընդ որդիսն: Իսկ ե-թէ յայսմ ևս դանդաղեցիս, գոնեա ած զի նորա հայրն ժառանգակից արար զքեզ նմա, և կարես ընծայել զանխայրութիւնն: Ո՜վ որ պատասխանատուութիւն ունի-ցիս յորժամ և ոչ որդւոյն քոյ հաւասար առնիցես զնա զայն որ զքեզ երկնիցն հաղորդակից արար և առանձին վասն քո: Իսկ զի նա զամենայն ինչ զոր և արար, ոչ որպէս պարտս ինչ հատուցանէր, այլ միայն զշնորհ զպար-գևան կամեցաւ ցուցանել. Իսկ դու յետ այնչափ երախ-տեաց և պարտաւորան ևս գտար: Նայց առաքեալն ոչ խրթէ զպարտսս պահանջել զայն, այլ որպէս շնորհս ընդունիմ 'ի քէն, և այնպէս աղաչէ զքեզ և ընդունի 'ի ձեռաց քոց:

Իսկ արդ առ ը նմա այժմ յընկալցիր որ քեզ անպիտան է պատուհասէ և որում չէր առեր, և առ և նա քեզ զպարգայութեան որում զու միշտ պէտան ունիս: Հա-ղորդ նմա ... և առաջին իսկ զինի հոգաբարձու. զի եթէ առնիցես զնա բաժանակից որդւոցն քոց, ապաքէն զար-բութիւնն նորա, ընծայես զամենայն նենգութիւնն, 'ի դիմի հարկանի այնոցիկ որք խարդախեցին կամեցին զնո-սա, [illegible] զնոսա: Իսկ եթէ նո-քա յանձնարար ոչ կարացին պահանջել զայն, որ ինչ 'ի կորուստ գրեալ է, նա պահանջէ[1] և չառաց երբեք պա-տասխան: Բայց թէ և այնպիսի ինչ դիպեցաւ՝ ինձն իսկ բազում առաւութեանց ընդ զայն ինչ որ 'ի կորուստ գրեալ էր, վասն զի միանգամայն իսկ պատուեցեր[2] զնա գրելով ընդ որդիսն քո: Իսկ արդ թող զնա նոցա ժա-

1 Պակասէր յօրինակին նա պա-հանջէ. յաւելաւ 'ի յանձնէ:

2 Յօրինակին պատուիրեցեր. ե-դաւ բառս յանձնէ:

տանջելոյ և հալածելոյ. զի դու առ նա հանդերձեալ ես երթալ, և նա դատի զդատաստանս քո որ ինչ ասա է:

Այլ տանջանք այսպիսիս հէքք և թշուառականք են, մինչ զի ոչ որդիս ունին և ոչ ժառանգս, և ոչ տնտուն յանձն նոցա թողուլ զժառանգութիւնն, այլ փաղաքշողաց և սեղանաբարուծաց և այլոց անուանս և այնմ անուանս, մնացուածոյ քաղաքի յօժարութեամբ տացս շնորհեն քան Քրիստոսի, որպիսի երախտիս նոցա պարգևեաց. քան զոր ինչ այլ չար անմտութիւն չիցէ: Քանզի այսպիսիքն քանանքն և քարինքն որովք խաղաղեն և առաւել զանձն, որոց թէ նոցին նման անշունչ կոչեսցես; չկարես համբերեալ զախտակիր զանձգայութիւն. և ոչ պատուէր և կերպարանս զտանիցեսք առ ՚ի յանդիմանն կացուցանել զախտակիր մարդութիւն և զանձգայութիւն: Այլ արդ որում նորեցոյ և թողութեան արժանիք գտանիցեն ախտաքին՝ որ մինչդեռ կենդանիքն են և ոչ կերակրեցին զնոսա, յորժամ հանդերձեալքն են ի միւս երթալ առ նա, անգամ և յայնժամ յինչից անտի որում չեն այժմ տեարքն՝ չկամին նոցա զանէ սակաւ մասն շնորհել. այլ այնպէս թշնամիք և պատերազմողք անձանց գտանին, մինչև որ պէտ չտուեալ նոցա շնորհեաց, և ոչ փոքր մի տանն նոցա:

Զանապանեն զի բաղումք ՚ի մարդկանէ և ոչ այդպէս առնել փախճանի արժանի եղեն, այլ յանկարծակի յաւ փրկչականեցան. իսկ զքեզ ած և ազգականաց ՚ի տես գալ և զմերձաւորս ծանուցել և խօսել վասն առացուածոցն որպէս և կամիցիս և զամենայն տանն խօս զրել ՚ի կտակի արար զքեզ տէր: Այլ արդ զո՞ր պատասխանատուութիւն ունիցիս յորժամ և զայս պարզևս ՚ի նմանէ ընկալար, և մանն եղեր նորատաւոցն և ընդդէմ կացեր համբառակ նախանեացն հաւատոց: Քանզի նոքա կենդանւոյն իսկ վտանգեալք զամենայն և բերեալս դնէին առ ոտս առաքելոցն. իսկ դու և ՚ի վախճանին դոյզն մասն ինչ ոչ թողուս կարօտելոցն. առաքինութիւն և համբերութիւն այն շնորհ էր քեզ, յորժամ ՚ի կենդանութեան ընծայեալ զաղքատութիւնն. իսկ արդ եթէ զայն ոչ կամեցար, գոնէ ՚ի վախճանին արա ինչ քաջութիւն. թէպէտ և չիցէ այն կատարեալ ունել վասն Քրիստոսի, բայց սակայն դու տուր վասն սիրոյ: Ո՞չ ի

Թէպէտ և զզաւհեղեղուԹիւնն ընդ զառաջնոյն չիմացեալս ասնաւ , չէ փոքր և այն 'ի Թիւ և 'ի համար խառնել ընդ նոսա , որպէս զի մի կարգեսցին ընդ ալբն և մի ընդ ձախմէն զասնիցին ։ Իսկ արդ Թէ զայս եւ չասնիցես , որ բան կարիցէ զքեզ զերծուցանել , յորժամ ոչ մահուն երկիւղ և ոչ ընչիցն այնոսհետև անպատկառուԹիւն և ոչ որդւոցն զզուշուԹիւն և հաւատարիմ Թողուլ , և ոչ քում անձինդ համբարեցեր անդ համբարս , որով կարէիր 'ի ներքուստ ածել զմարգարտեղս . և արդ յոյժ ապատասան երԹիցես անդր ։

Վասն որոյ աղաչեմ մանաւանդ միանգամայն կենդանիքս եւեթ , լիցուք վերակացուք կարօտելոցն . յոնչից անտի բազում մասունս հանցուք նոցա ։ Իսկ արդ եԹէ իցեն ամանք այնպէս փոքրոգիք և վհատողք , զանէ 'ի վախճանէ անտի եղիցին մարդասէրք . վասն զի միանգամ կենդանին էիր , որպէս զանմահ ինչ բաւան հարկաւոր այնոց ունէիր զստացուածսն . իսկ յորժամ խմացար ԹԷ մահկանացու եղեր , զանէ այժմ լոյծ զայնմանէ զաւանդուԹիւն , որպէս զմահկանացուէ զքէն հաց կոչ յանձին . մահաւանդ եԹէ պարտական իսկ ես , զի յանմահ կեանսն համբարպաշտող վայելելոց ես ։

Զի Թէպէտ և սարսափելի և լի զարհուրանօք է զոր համբերձեալս եմ ասել , սակայն հարկ է ասել ։ Ո՞րք 'ի համար ընդ քո ծառայսն և զաւերն քո . աղաւնիս ընծառայսն , աղաւնես և զՔրիստոս 'ի սովը վասնզի , 'ի կապանաց և 'ի մերկուԹենէ ։ Սարսափեցի՛ր արդեօք յորժամ լուար զայս , արդ եւ սաստկել յայնժամ զարհուրեսցիս յորժամ ոչ զայնս առնիցես . զի աստ լսել բանս ընդդարմացոյց զքեզ , իսկ յորժամ անդր երԹիցես՝ եւ զԺնդականպաշտս ես լսելոց , և զանկշռելի և զանասելի տանջանսն ունիս տեսանել ։ Զինչ առնիցես յայնժամ , առ ով ապաւինեսցիս , զով կոչեսցես քեզ վկայակից և օգնական . զՔրիստոս , այլ ոչ լսիցէ քեզ . իսկ զկուսանոն զայնոսիկ , այլ և նոքա չտան քեզ յիւրեանց իւղոյն . իսկ արդ զո՞վ , զհայրն կամ զմայրն , այլ նոքա չեն անձանց տեարք . Թէպէտ և յոյժ սուրբք ոք իցեն , չկարեն զայնպիսի վճիռ լուծանել ։

Նա արդ զայս ամենայն խորհեալ ընդ միտս մեր , որ միայն տէրն և իշխանն է առ 'ի ջնջել զմեր ձեռագիրն

Digitized by Google

և զայսն¹ զայն չկշռուցանել, նմա մաղթեա, զնա աղաչեա և պարարեա խաղաղ առաքինութեամբ, կերակրեա, զգեցո հանապազորդ, որպէս զի և առաւել քաղցր յուսով երթիցես անդր. և յորժամ անդր հասանիցես՝ 'ի յաւիտենականն կեանսն վայելեսցես: Զորոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօքն և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հօր հանդերձ Հոգւոյն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

## ՃԱՌ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

. . . . . . . . . . . . . . . . . .[2]

անգամ ունէին այնպիսումն դժնեայ իրաց, զոր և իւր խոկ մարդասէրն ածնարկեալ: Այլ չասաց ըստ թէ ըղթիկունս նոցա առ հասարակ կորացո միայն, այլ թէ հանապազորդ և միշտ: Իսկ ասա եթէ հակառակեսցես, ով հրեայ, և ասասցես՝ թէ վասնզի ունիցին իւրք ծառայութեանն, յառաջնոյ անտի որ 'ի վերայ քո եկին՝ ունիր և զայժմուս: Իջեր դու յԵգիպտոս. այլ եղեն ամք երկերիւր, և հնգետասանամեայ ապաստանեաց զքեզ ած յայսպիսի ծառայութէ, և այն զի ամբարիշտ էիր և պատանեկե-իր զդժնդակ պատուհասութիւնն: Ո երբեմ Եգիպտոսէ և պատգեր երկիր որթուն և զեններ զորդիսն քո Մոլ-քեզովլոյ. զտաճարն պղծեցեր, և որ ինչ միանգամ մեղք և անօրէնութիւնք էին՝ յանձին կատարեցեր. զնոյն ինքն զընութիւն նոցա ապականեցեր, զերանց զղաշտաց զըլլոց զաղբերաց զգետոց զպարտիզաց՝ առ հասարակ իսկ զայս ամենայն լցեր անօրէնութեամբ; վասն զի նոցա զոհէիր. ամենայն առաւելութեամբ կատարեցեր զչարիսն և զանօրէնութիւնս: Բայց սակայն զեօթանասուն ամ միայն մատնեցար բաբելոնացւոցն վասն այնր, և դարձեալ յառաջին ազատութիւնն վերստին կոչեաց զքեզ, և զտաճարն և զքաղաքն այդրէն վերստին քեզ պարգևեաց և զհին կարգաւորութեանն զիրս և զկերպարանս. դարձեալ և մարգարէք և շնորհք Հոգւոյն:

1 Յօր. զայն զայս. եդաւ ըստ յունին: 2 Թուղթք երկու պակասին:

Մանաւանդ թէ և ոչ 'ի ժամանակի գերութեանն Թագաւոր 'ի ձեռաց, այլ և անդ Դանիէլ և Եզեկիէլ, և Երեմիա յԵգիպտոս, և Մովսէս յանապատին: Այլ յետ այսորիկ դարձեալ առաջին չարեացն զեղգար և 'ի հեթանոսականն կրօնս անցք փոխեցաւ առ Անտիոքաւ ամբարշտաւ, բայց սակայն և զայն զերծս առն միայն: Զի թէպէտ և փոքր ինչ յառաջ քան զԱնտիոքաւ մատնեցաւ, սակայն նշան յաղթութեան 'ի ձեռն Մակաբայեցւոյն կանգնեցեր: Իսկ այժմ այսպիսի ինչ և ոչ ինչ, այլ ամ ինչ նախին հակառակն եղև. ընդ էր մանաւանդ և զարմանալ իսկ արժան է, զի չարիքն կատարումն առին, և տանջանքն և խոշտանգանքն աճեցին[1]. և ոչ փոքր մի յոյս ակնկալութեան ուրիշ փոփոխման: Քանզի ոչ եթէ եօթանասուն ամաց միայն և կամ հարիւր և կամ երկու քան զայս, այլ երեք հարիւր, մանաւանդ թէ եւս բազում, և ոչ զառուերն անգամ զայնպիսի յուսոյ կարէք երբէք գտանել. և այն զի ոչ զկուռս պաշտէք և ոչ զայլոյն ինչ գործէք զոր յառաջագոյնն յանդգնէիք:

Այլ արդ զի՞նչ իցէն այսր պատճառք. և ոչ ինչ, այլ զի մերժեաց զարքունական ճշմարտութիւնն և զօրէնսն փակեցին շնորհքն, զոր անդուստ 'ի վերուստ իսկ յառաջագոյն գուշակէր մարգարէն և ասէր՝ թէ “Ողջոյն նոցա հանապազ առ հասարակ կորուսցէ„: Տեսէ՞ք զանդրդարձութեանն պճնաւորիս, զիարդ և զանհաւատութիւն նոցա յառաջագոյն ծանուցեաց և զհակառակութիւն յայտնեաց և զհատեալն 'ի վերայ նոցա զդատապարտութիւնն եցոյց և զանեզրական զտանջանացն ետ ծանօթս: Այն զի բազում էն 'ի թանձրամանաց որ յերկրպագս ընկէն վաղու հանդերձելոցն, և 'ի մերձակայսիցս կամին գիտել զհանդերձեալսն, տեսէն իսկ յերկայնութենէ կողմանցն իւրով զօրութեամբն եցոյց Քրիստոս զօրինակսն. զի որք 'ի հեթանոսացն հաւատացին՝ զնոսա 'ի վեր քան զերկինս բարձրացոյց. իսկ որք 'ի Հրէից անհաւատքն եղեն, 'ի վերջին թշուառութիւն անդր իջոյց խայտառացեալս, և անլուծանելի չարեացն մատնեաց:

Այլ իբրև յայժ զկծեցոյց զնոսա և ուսոյց անհաւատք եղեն և ուսոյց չարչարեցանն և որով պատուէին հաւատալ, դարձեալ սփոփէ զնոսա ասացելովքն և զրէ այս-

1 Պակասէր 'ի մերն անցեալն յաւելաք 'ի յունէն:

ակես. «Միթէ յանցեան զի անկցին. քաւ լիցի»: Նորժամ եցոյց զնոսա բիւր չարեաց պատժապարտս, առաջ մխիթարութիւն իմն զնոսա ածէ: Այլ դու տես զիմաստութիւնն Պաւղոսի. զմեղադրութիւնն 'ի մարգարէից անտի եբեր, և զմխիթարութիւնն յանձնէ դնէ: Պրիտեսջք, ասէ, թէ նոքա մեղանչիցեն, և չէ ոք որ ասէ թէ ոչ, այլ և յոյժ իսկ: Այլ արդ տեսցուք թէ այնպիսի է յանցումն այն, և եթէ առանց բժշկութեան իցէ. և կամ թէ չունիցի ինչ ուղղութիւն. այլ չէ այսպիսի որպէս այժմուս: Տես որպէս դարձեալ վիրաւորէ զնոսա և 'ի դէմս մխիթարութեան ցուցանէ զնոսա մեծամեծ մեղաց պատժապարտս: Տեսցուք զմխիթարութիւնն զոր վասն նոցայն անուանեցին ասել. և արդ որպիսի ինչ իցէ մխիթարութիւնն այն. «Նորժամ լրումն, ասէ, հեթանոսաց մտցէ, յայնժամ ամենայն Իսրայէլ կեցցէ» ըստ ժամանակի երկրորդ գալստեանն և 'ի վախճանին: Այլ չասէ անզգեղէն խակոյն զայս, վասն զի յոյժ համարձակեր 'ի վերայ նոցա, և ամբարտաւանութիւնս ընդ ամբարտաւանութիւնս խառնէր և զմարգարէ 'ի վերայ մարգարէի բոլորէր՝ որք գոչէին առ նոսա՝ զԵսայիաս, զԵրեմիաս, զԴաւիթ, զՈվսէէ, զՄովսէս և միանգամ և երկիցս և բազում անգամ:

Այս առաջ զի մի այսու ամենայնիւ 'ի յուսահատութիւն արկանիցէ զնոսա և թուիցի նոցա թէ փակեաց ինչ զճանապարհն որ առ Հաւատն էր և որք 'ի հեթանոսաց հաւատացեալքն էին, զի մի դարձեալ և նոքա յամբարտաւանութիւն հպարտութեան եկեսցեն և վըհատեսցին ինչ հաւատոցն բանիւ, սփոփէ զնոսա դարձեալ աւետեաւն՝ թէ «Նոցա յանցանքն փրկութիւն հեթանոսաց»: Պարտ է մեզ ոչ լոկ ընդ վայր լսել զասացեալսն, այլ իմանալ և զբարս և զխնամս առաքելոցն, և եթէ զինչ փութայցէ ուղղել. վասն որոյ աղաչեմ զձեր սէրդ: Ո՛վ եթէ սրտի մտօք ընդունիցիմք զասացեալսն, և ոչ 'ի միում իմիք ինչ յայտնապէս զտանեմք զժուարինս: Բանզի փոյթ այն էր յայնժամ, որ յաւացելոց անտի հպարտութիւնն ծնանէր առ այնոսիկ որք 'ի հեթանոսացն էին հաւատացեալք, զայնպիսի դէմ ախտ կամէր 'ի բաց ընջել, որով և նոքայն զգուշութ͞բ կեցին. զհրեայսն աղատէր 'ի վհատութենէ, որպէս զի

բաղում յօժարութեամբ մերձեցաք առ շնորհսն։ Այլ արդ յայտնի մեզ հաւատացեալ, անմտութեան իսկ լուծցուք զոր ինչ 'ի կարգիս է ասացեալ։

Այլ արդ զինչ ասիցես եւ կամ ուստի յայտ առնիցես եթէ չյանցեան զանբժշկելի յանցանսն եւ կամ թէ չմերժեցան իսպառ իսկ։ Ի հեթանոսացն, զոր ասաց առաքեալ. "Ուրեմն թէ նոցա յանցանքն փրկութիւն հեթանոսաց առ 'ի նախանձեցուցանել զնոսա"։ Այլ ոչ այս բան լոկ որ առ այս է, այլ եւ յաւետարանին զոյն իսկ անկարելին առակքն։ Մանաւանդ եւ որ հարսանեացն առակ որդւոյն եւ յորժամ կոչնականքն չկամեցան գալ, յայնժամ ապա առաքեաց յանցս ճանապարհացն եւ կոչեաց։ Այլ դարձեալ յորժամ զայգին մշակեաց, եւ քանզի սպանեալ մշակքն զժառանգն, յայնժամ ապա եւս զայգին այլոց։ Այլ առանց առակաց իսկ ասէր Քրիստոս՝ թէ "Ոչ եկի բայց միայն առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի"։ Իսկ Փիւնիկի առաջին եւս քան զեւս աղաչէր եւ հաւանեցուցանէր բազում ինչ, եւ նա դարձեալ ասէր՝ թէ "Չէ բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց"։ Նոյնպէս եւ Պաւղոս առ ընդդիմակաց հրէայսն. "Ձեզ նախ կարեւոր էր խօսել զբանն այդ, եւ վասն զի անհաւատս զձեզ եւ անարժան զանձինս վարկանիք, ահաւասիկ դառնամք 'ի հեթանոսս"։

Այլ անմտութիւն իսկ յայտ առնէ եթէ ըստ կարգի իւրաց այն էր, զի նախ նոքա մտցեն եւ ապա այլք 'ի հեթանոսացն իցեն։ Այլ քանզի անհաւատութիւնն նոցա փակեաց զճանապարհ իւրացն, անհնազանդութիւն նոցա եւ յանցանք առաջին նախ սոցա 'ի ներքս գալ։ Որոյ վասն եւ Պաւղոս ասէր՝ թէ "Նոցա յանցանքն փրկութիւն հեթանոսաց առ 'ի նախանձեցուցանել զնոսա"։ Իսկ ապա եթէ 'ի կարգէ անտի արտաքսեցուցանէ, եւ չիցեն, ասէ, որպէս յառաջագոյնն էին՝ մի ինչ զարմանար, վասն զի կամի սփոփել զվիրաւորեալ ոգի նոցա։ Այլ զոր ասէն այսպիսի ինչ է. եկին առ նասա Յիսուս եւ չընկալան զնա, թէպէտ եւ բիւր ինչ աքանչելագործեաց, այլ 'ի խաչ հանին. ձգեաց ապա հեռաւ իսկն զհեթանոսս, զի գոնէ նոցա պատուովն նախանձ զհեծեցուցանիցէ զանպզգայութիւն նոցա, որպէս յառաջին իսկ հաւատաւորթէին հաւանեցուցէ զնոսա մերձենալ առ ինքն։ Այն

զի պարտ էր զնոսա ընդունել նախ և ապա զմեզ. վասն որոյ և ասէր իսկ. "Վասնզի զօրութիւն Այ է 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոց, նախ Հրէից և ապա հեթանոսաց": Այլ քանզի 'ի բաց խայտառակեցին առաքելոյն, երկրորդք եղեն յայնժամ: Տես որպէս զնոսա զխնամացուցանէ պատուականս միայն, թէ յորժամ նոքայն չկամեցան՝ յայնժամ կոչեաց զմեզ. երկրորդ վասն այնորիկ, ասէ, կոչեցարուք, ոչ զի դուք միայն ապրիցիք, այլ զի և նոքա ընդ ձեր փրկութիւն նախանձեալք լաւագոյնք լինիցին:

Այլ զիարդ, եթէ վասն Հրէիցն չէր, ընդ զմեզ և կոչեաց և փրկեաց: Ոչ նախ քան զնոսա, այլ ըստ կարգի հնազանդութեանն: Դա և յորժամ ցուցանէրն ասէր, չասաց լոկ եթէ երթայք առ ոչխարսն կորուսեալս տանն Իսրայէլի, այլ թէ "երթայք առաւել": ցուցանէ թէ և յետ այնորիկ առ նոսա պարտ է նախ երթալ: Այլ զարմանալ Պօղոս չասաց թէ ձեզ կարգեալ էր խօսել զբանն, այլ թէ առ ձեզ նախ կարգեալ պարտ էր խօսել զբանն. ցուցանէ թէ և առ մեզ ասացաւ: Այլ երկրորդ անպատճառ և եղև և առաքեալ, որպէս զի մի անօթեքն այնոցիկ ունիցին բարուրեալ իւր և ասասցեն թէ հարկանեցի զմեզ կոչեցեն և յայն տեղի չհաւատացաք: Զիարդ արդ առաջին կոչեցն իսկ և որ զամենայն յառաջ զետէր Քրիստոս, առ նոսա նախ եկն:

"Իսկ արդ եթէ յանցանքն նոցա, ասէ, մեծութիւն աշխարհի է և նուազութիւն նոցա փրկութիւն հեթանոսաց, ապա զիարդ ոչ և լրութիւն նոցա ևս առաւել": Զայս առ չհորդորս իւր ասացեալ ասէր զնա. Ոչ թէ եւ և բնաւ անկեալ յանցանքն նոցա, ոչ կարէին հեթանոսք ապրել, թէ չէր զհաւատսն ցուցեալ. այլ որպէս և ոչ Հրէայքն կորնչէին, եթէ չէին անհաւանք և հակառակորդք եղեալ: Այլ որպէս ասացի՝ ադրորիկ իւր զնոսա յաւելուլութիւն կարգելութեամբ վասն հակառակելոյ եթէ կամեցին կարող էր փոխել 'ի փրկութիւնն ամենայն: Զի եթէ ընդդիմակացութեամբն նոցա յայնչափ 'ի փրկութեան վայելեցին այլք, և յարատաքանանալն նոցա այնչափ բարերութիւնք հոչեցան, ապա զմտաւ ած եթէ զինչ լինիցի յորժամ դառնայցեն: Այլ չասաց այսպէս յայտնի՝ թէ յոր ժամ դարձցին, և չասաց կրկին թէ մեծութիւն զարդ նոցա և կամ փախուստ նոցա և կամ

ուղղութիւնս նոցա, այլ թէ «և ոտանել զբանս նոցա». այսինքն է յորժամ հանդերձեալ են անձնուքն աղբել. Զայս ասաց առ 'ի ցուցանել թէ և յայնժամ անձնաւքեան 'ի շնորհացն են ապրելոց, և 'ի պարգևացն մեր անձանցն իսկ լինի:

«Իսկ ձեր ասեմ հեթանոսացդ. ցորչափ ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առնեմ, զի թերևս նախանձեցուցից զոմանս 'ի մարմնոյ իմ և ապրեցուցից զոմանս 'ի նոցանէն»: Պատճառաւ փութայ զոմանս 'ի չար կարծեացն մերժել. և թուի թէ ասպարանէ ինչ զայնոսիկ որք առ 'ի հեթանոսացն էին, և գիջուցանէ զնոցա մեծամտութիւնն, և մխել բանիւ զկծեցուցանէ զՀրէայսն, և շիջի խնդրել ժողովել զնոսա և սփոփել զայնոսիկ զկորուսեալսն նոցա. և ոչ ինչ գտանէ ըստ իրացն բնութեան: Նաւակն զոր ասաց իսկ, յայտ է եթէ մեծամեծ անպատուութեանն արժանի են. և վասն զի խնդրեանք զամենեսին ոչ յաջողեցինն, այլ յառաջինեցին ընկալան, յաղագս այսորիկ 'ի Հրէից առակ՝ առ որս 'ի հեթանոսաց անտի էին՝ փոխի, և 'ի միջի դնէ զառաջուած բանսն, և կամի ցուցանել թէ էր վասն զայս անձնացն ասէ, որպէս զի զնոսա խրատեսցէ զիջանել: Պատճառ զձեզ, ասէ, վասն երկուցս այսորիկ, մի զի հարկ 'ի վերայ կայ վասն պաշտամանս որ ընծեռեալ է ինձ. իսկ մանաւանդ զի ձեզ զայս ապրեցուցանեմ: Եւ չասաց եթէ զհրամանս իմ և զառաքելական, այլ եթէ զպաշտօնս իմ:

Եւ ասաց ցուցանել զնոսա հաւասարութիւն, զանէ թէ մարթէս հաւատացեալ, և ոչ առ զանձնեցեալն ասէ, այլ զամենեսին 'ի նոցանէն, քանզի այնպէս էին խորամ. Եւ յայսմ առաւել ևս առաւել պայծառացուցանէ զհեթանոսս. զի թէպէտ պատմակաց փրկութեան նոցա նորա եղեն, և ոչ եթէ խնդրեանք յանձանց ինչ. վասն զի նոքա զառաւ անհաւատութեամբն, իսկ սոքա զնոսա 'ի հաւատոց անտի եղեն առաջնորդք բարութեանց. Աւասիկ թուի թէ զայդ իմն կարծիս, այլ զպատճառ ինչ հեթանոսք ունին: Եւ արդ զինչ ասիցես, ով Հրէայդ. եթէ չէր իմ, ասէ, արտաքս ելեալ, ոչ իսկ 'ի ժամանն կոչէր զձեզ: Զայն ասէ և որ հեթանոսն է՝ քեզ. եթէ չէր իմ ապրեալ հաւատովքն, ոչ կարէիր նախան-

Digitized by Google

ձել զաւ։ Այս եթէ կրաւորս և զայն ուսանել եթէ զինչ է զոր տասցեն, զի հեթանոսքս բազում ինչ ունին, այս է. եւ, ասէ, զքեզ հաւատովք փրկեմ, թող դու ընդդէմ կացցես և ինձ ձեռնտուութիւն ցուցցես։

Այլ յորժամ կարի կոծեցայց զնոսա, դարձեալ զառաջինն զգանելոյն բանն հարկանէ և ասէ. «Զի եթէ անկումն նոցա հաշտութիւն աշխարհի է, իսկ ընդունելութիւն նոցա զինչ իցէ, եթէ ոչ կենդանութիւն ՚ի մեռելոց»։ Այլ և այս իսկ մեծ զարմանալագունն է զնոցանէն. զի այլք նոցա մեղօքն շահեցին, իսկ նոքա և ոչ այլոց ուղղութեամբքն կարացին ինչ շահել օգուտ։ Իսկ սորա, ասէ, թէ ՚ի հարկէ ինչ իրքն այսպիսի զիրկեցան, մի ինչ զարմանայք՝ որպէս զի զոտա կարծէ զինքն ուցանել. և նոցա յօժարութիւն տալ, այսպէս. կերպարանէ ըղբանն. զոր և յառաջագոյն ասացի։ Ոչ եթէ սա և բնաւ անդգամ արտաքս ընկեցեալ եղեն Հրէայքն, և հեթանոսաց թէ չէր հաւատս ցուցեալ՝ ոչ ինչ օգտէին, այլ սա մերժս ՚ի սկզբանց կոչեցի ինձ կայ և օգնական լինել աշխարհելոցն։ Տես և որպիսի բանիւք միայն շնորհէ նոցա զախտախաւնսն։ «Զի եթէ արտաքսանկուածն նոցա հաշտութիւն աշխարհի է»։ Այլ արդ այս զինչ օգուտ է Հրէից. իսկ ընդունելութիւն նոցա զինչ իցէ, եթէ ոչ կենդանութիւն ՚ի մեռելոց. Այլ այս չէ ինչ առ նոսա, թէ ոչ միայն մեռ. այնմանէ այլք ընկալեալք եղեն։ Այլ զոր ասէն այսպիսի ինչ է. զի եթէ յորժամ բաղկացան նոցա, այսչափ ինչ արդարեւ այլոց, ապա յորժամ հաշտեսցի ընդ նոսա, որպիսի ինչ ոչ շնորհեսցէ։ Այլ որպէս յարութիւն մեռելոց ոչ եթէ վասն ընդունելութեան նոցա է, այնպէս և ոչ փրկութիւն մեր այժմ վասն նոցա ինչ է. այլ արտաքս ընկեցեալ զսոսա առ ամբարհաւաճութեանն իւրեանց. աղբերցուք մեք հաւատովքն և ՚ի վերինն շնորհացն։ Այլ յայտնեաց նոցա օգուտ ինչ ոչ կարէ լինել, եթէ ոչ զբնաւանի մերձաւորութիւն առ հաւատոյն ցուցանիցեն։ Այլ զայս ըստ առակաբանութեանն ասէ։

Այս յառաջ մատուցանէ զբանն յայլ իմն գովութիւն. մանաւանդ եթէ և ոչ գովութիւն իսկ, այլ թուի առանց թէ իցէ ըղձ. նմանեցեալ Ջերմապ բաժնեալ ուրք այսպէս մխիթարեն իմն զաշխատեալ հիւանդացն ողքան բնու-

Digitized by Google

թեան Հիւանդութեանն առանձին կամիցէ։ Այլ արդ զինչ ասէ. « Ո ի եթէ սիրելին տարր է՝ և զանգուածն, և արծաթոյ տարր՝ և ոսկին »։ Մեծագոյն ասա և արծաթ կայէ որ ՚ի յԱբրահամէն և ՚ի Սահակայ և ՚ի Յակոբայ ըն- մարգարէիցն նահապետացն և որք ՚ի Հնումն ընտրեալք գտան անմեղեքեան. Իսկ ոսկին որք ՚ի նորագունեն Հաւատացին։

Այս վասն զի ընդդէմ կայր նոցա որքն՝ բազմաձայն ան- Հաւատան լինել, և զոր անդ ժողովս զարձեալ ընդ մեզ կարէ զգասն և ասէ. « Ո ի եթէ սանդիքն յաւուրց անուրի բեկանեցան »։ Այս սակայն մեծագոյն ասէր թէ բազմաց կարեւան և ամպարս ապրեցան. և արդ զինչ ՚ի մերոյ կարաւորացն զանձանցդ զանձուն եղիր, որ յայտնի ասկաւաց նշանակեալ է։ Ահա եւ անձին խնդ հանդիսական պայծ առնել, ասէ, այլ ուղղագոյն յանձնել փառաւ և մեծութին առանձնապէս զանկերտացն. Տէրանանեաւ զիարդ հանդիսացաւ այլ կարգել կոչմունք յանձնումն ասենն խնդամ. քանզի կու մի միաբերուն զնոսա, թէպէտ և առաւել խնայելոյ զնոսա զերծեալ։ Պատ անս և զխնամատութիւն նորա՝ թէ զիարդ արդ թուին թէ ՚ի նոցա կողմն իցէ ամփոփանաց վասն, զերծէ զնոսա ՚ի ճաճուկ, և յամենայն սպառնա- խոնարհութենէ ցուցանէ զնոսա զերկեալ՝ յարգանաց ՚ի սիրելանէն։ Այլ ՚ի միտ առ զպարութիւն առաջին, յոր ժամ զարմանան քաղքը ունելի և ՚ոչ նանանիցէ նոսա, և զպարութիւն զանգուածոյն յարժամ ոչ նանանէ խափանան։

« Իսկ եթէ սանդիք յաւուրց անուրի բեկանեցան »։ Այս- պիսիս առաջին թէ կամի զնոսա սփոփել, վասն նոյնպէս ոչ յանձնէ, այլ ՚ի նորանէ խոկ անձէ զգասնն ՚ի մեզ։ Աս- կայն և առաւ անդրայս խորք մարմնեցուցանէ զնոսա և ցու- ցանէ թէ յԱբրահամու ազգականութենէն ամենայն. քանզի այս էր զոր փառաւորն առնել թէ ոչ խնդ հաղոր- դութեան ունին ընդ նոսա։ Ո ի թէ արծաթոյ տարր էր, և նոքա չէին տարր, ապա ուրեմն հեռի են նոքա յար- մանոյն։

Այսպէս թուի թէ դարձեալ միաբանութիւն զնմանեացն, դար- ձեալ մարմնեցուցանէ զնոսա մեղաւորութեանն առ այնմանէ որք ՚ի հեթանոսացն. քանզի ասէ՝ թէ « Ս- անդիք յաւուրց բեկանեցան », յարէ ՚ի սոյնս. « Այս զոր որ վայրենի ձիթենւոյ էիր, պատուաստեցար »։ Ո ի

որչափ անարգք և նուաստք թուին որք 'ի հեթանո-
սացն են, մանաւանդ այնքան չար թուի հրէին 'ի նո-
րայն նման փափկանաց. և նոյն այնչափ յանդգնութե-
նէ առաւել է ամօթ; որչափ սա 'ի փափկանկացս անկեալ պա-
տիւն: Ոչ ասա զիղխութիւնն. չասաց եթէ սիրե-
ցաւ, այլ եթէ պատահեցաւ. յայսմ զարմանալ և ո
չար մոլորեցուցանէ զհրէայսն և ցուցանէ թէ 'ի նո-
րա 'ի ծառան որք 'ի հեթանոսացն էին պատահեցան,
և նոքա ընդ երկիր քարշեալք:

Սան որոյ և ոչ մինչև ցայս վայր եկաց, և ոչ ասաց լոկ՝ թէ որովհետև պատահեցաւ՝ զամենայն մնացեցեր, և մանաւանդ զի յայտնի իսկ արարեր զորա զամենայն: Բայց սակայն յամէ 'ի բարեմտութեանս յայսմիկ և գտանէ ևս ընտիր իմն ասելով՝ թէ "Հաղորդ եղեր արմատոյն և պարարտութեան ձիթենւոյն": Նա կարծի թէ ըստ յաւելուածոյ կարգի իմն է եդեալ զայս. բայց ոչ ինչ մնաց նմա այս, այլ զամենայն ունի. զի զոր ինչ ասացն ունին, յարմարեալ անտի քաղեցին: Ո՛ր յորժամ լսիցես՝ թէ պատահեցաւ, նաև ինչ փափկանկեցին հաստատութեանցն առ բանն ասացն, այլ որպէս անձնուցանէ զնոսա ասելովն՝ թէ "Հաղորդ արմատոյն և պարարտութեան ձիթենւոյն եղեր", այսինքն է 'ի նոցին բարեպաշտութիւնն կարգեցար. 'ի նոյն ինքն 'ի բնութիւնն:

Տայ զգուշացուցանէ և ասէ. "Մի՛ պարծիր առ ոստովքն": Ոչ կարծիք թէ սփոփէ իմն զայս զհրէայսն, նա այսու իսկ ցուցանէ զնոցա նուաստութիւնն և զանարգութիւնն: Զգուշացո այսպէսիկ չասաց թէ մի պարծիր, այլ թէ մի հակառակ նոցա պարծիր, որպէս զի մի զնոսա հերձցես. վասն զի 'ի նոցայն կաս և 'ի նոցայոցն վայելես: Տեսանես զի թուի թէ զնոսա առգաւանիցէ, այլ զնոսա ևս չար զինչ է այսուիկ:

"Ապա եթէ պարծիս առ նոքօք, ասէ, ոչ եթէ դու զարմատն 'ի վեր ունիս, այլ արմատն զքեզ": Այս արդ այս զինչ իցէ առ ոստովքն որք փշրեցանն. և ոչ ինչ: Նա զոր յառաջագոյն ասէր՝ թէ սուրբ իցէ իմն նոցին է մեծութիւնն որ նմանին զնոսա ասել, և անդրէն իսկ որք առ 'ի հեթանոսացն՝ ձգէ զարմատզարմն, և նոցա զաղգն զմեծութեան սոյ. ասաց՝ եթէ "Մի

պարծիր առ ոստովքն » . և « եթէ պարծեսցիս , ոչ եթէ դու զարմատն 'ի վեր ունիս » . Եցոյց հրէիցն եթէ պարծանաց արժանի է որ ինչ եղև , թէպէտ և չէ պատ- պարծել . զարթեայց վասն և յորդորեաց 'ի հաւատսն և 'ի կարգի խորհրդականի հասարակաց վասն , այսինքն է որք 'ի հեթանոսացն էին . Եցոյց և զհրէիցն զվնասն զոր ընկալան , և եթէ փոխարէն այլք ունին ։

« Արդ ասես , ասէ , ոստքն փշրեցան , զի ես պատուաստեցայց » ։ Պարծեցաւ ըստ կարգի դիւրադրութեն իւն զնէ զայս և ընդդէմ առաջնոյն իւր կարգէ և յայտ առնէ թէ որ փոքր մի յառաջ ասաց , ոչ եթէ 'ի վաղուց ինչ պատրաստեալ էր , այլ որպէս թէ ձգեցաւ իւր վասն ։ Ոչ էին յանցանքն նոցա փրկութիւն հեթանոսաց , և ոչ պարծեցաւ խոստացեալ նոցա մեծութիւն աշխարհի ։ Եւ եթէ վասն այսորիկ առաքեցաք զի նոքայն անկանն , այլ որ ես հաւատարիմ թուլին նոցա . որով և ցուցանէ թէ և 'ի հեթանոսս յառաջէր էր նախախնամութիւնն իւր ։ Ոչ թէպէտ և թուլի այլ առարաղ ինչ կերպարանեալ զբանն , բայց առեալն զամենայն իւրն ընկալեալ դիւրահաւատութեանն յորինէ , որպէս զի զնոսա կարեսցէ զերծուցանել յայնպիսի ծանրաբարոյութենէ 'ի կարծեացն և զիւրընկալ զբանն առնիցէ ։

« Ոստոքն » . զանձեաց զառաջնոյնն . ասաց և երկիցուցանէ ասելովն՝ թէ « Անհաւատութեամբ փշրեցան , և դու հաւատովք հաստատեցար » ։ Հաւատովք ասա պարծեցաւ այլ զօրութիւն , և զհրէից երկիւն , ամբարտաւանութիւն ։ Այլ և զայսպ զփչուցանէ զայրացեալ հըպարտութեան , յորժամ 'ի նոյնա և ասէ՝ թէ « Մի մեծամտեր , այլ երկեր » ։ Եւ եթէ ըստ բնութեան ինչ էին , այլ հաւատոց և անհաւատութեան ։ Այս թուի թէ պարծեցաւ կամի ընծայեցուցանել զայսմաւիկ որք 'ի հեթանոսացն էին . բայց ուսուցանէ զհրէայսն թէ չէ պատ- որք ըստ բնութեան աղգականքն ընդ նոսա հայել . վասն որոյ զանձինս ածեալ ասէր՝ թէ մի մեծամտեր . և չասաց եթէ խոնարհեաց , այլ թէ երկեր , քանզի ամբարտաւանութիւն արհամարհութեան և ծուլութեան գործէ ։

Այս վասն զի հանդերձեալ էր յետոյ ուրեմն զթըշուառութիւնս նոցա , որպէս զի պատմեաց ծանրանալոց ըղբանն առնիցէ , այսպէս դնէ 'ի կարգին՝ որպէս թէ որք

’ի հեթանոսացն խզեն՝ նոցա սատանայիցէ առնելով. «Ո՛չ ի թէ ամէն որ լաւ յանուն թեան առաջին էին՝ ոչ խնայեաց»։ և չասաց եթէ և ’ի քեզ ոչ խնայէ, այլ թէ «Կորիցէ և ’ի քեզ ոչ խնայեսցէ»։ ’Ի բաց կարէ զառաքինութիւն բանին, և ասայ կալ ’ի Ջանի Հաւատացելոյն, զնոսա ձգելով առ ինքն և զնոսա զիջուցանելով ’ի մեծամեծութենէն։

«Իսկ արդ սա զգուշութիւնս և զհաստատութիւնս տոյ. ’ի վերայ անկելոցն զհաստատութիւն, և ’ի վերայ քո զգուշութիւնն՝ եթէ կացցես ’ի նմին քաղցրութեան, ապա եթէ ոչ՝ և դու կորեսցիս»։ Իսկ չասաց եթէ սա զուղղութիւնս քո, սա զձանս փառաւորեալս քո, այլ եթէ զնոյն զանարդարութիւնն։ Յուցանէ թէ ’ի վերին ճանապարհացն եղև, և զդուշացուցանէ հաստատութեան կալ և երկիւղիւ. քանզի իբր պարծանացն նոցա ասացին կատակածել։ Իսկ արդ վասն զի քաղցր եղև քեզ անդրն քո, յաղագս այնորիկ երկիւղ. քանզի ոչ լինին անշարժ բարութիւնքն՝ եթէ ծուլասցես[1], զոր օրինակ և ոչ նոցա չարիքն՝ եթէ զապաշխարեսցեն։ Նոյնպէս և դու, ասէ, եթէ ոչ կացցես մնասցես ’ի հաւատոն՝ ’ի բաց կորիցես։

«Այնպէս և նոքա թէ ոչ մնասցեն ’ի նմին անհաւատութեան՝ կերկին պատուաստեսցին»։ Ո՛չ եթէ ամէն կորեաց զնոսա ’ի բաց, այլ խնդրեաց փրկելոյն. զի ոչ եղեն ’նա մերժեալ զնոսա, թէպէտ և բազում ժամանակ մնացին։ Տեսանե՞ս որչափ է յօժարութեան անձնիշխանութիւն. քանզի նոյն թագուցին իշխանութիւն։ Իսկ չիք ինչ քան զայն անշարժ՝ ոչ քո լաւութիւնն և ոչ նոցա մեղքն։ Տեսանե՞ս զիարդ և զնոսա մխիթարեալս կանգնեաց, և զնոսա կարի պանծացելոյ դիւրեաց։ Ո՞ր ինչ զնոսա, ասէ, այնու ինչ ’ի բաց մերժեցես՝ զի ընդունակութիւնն ոչ լաւ ապ, և մի զարգանալ դու ’ի քաղցրութենէն միայն ապաստան լինիր։ Նա այնորիկ ընդնոսա ստացուածքն իւր ’ի բաց հանին, որպէս զի ցանկացողին անկրգելն ’ի նոյն կարգ եկանել. յաղագս սորին ’ի վերայ քո զգուշութիւնս եդեալ, քանզի կացցես մնասցես ’ի նմին։ Իսկ չասաց թէ ’ի հաւատոն, այլ թէ ’ի նմին քաղցրութեան. այսինքն է զի արժանի լինի ինչ մարդասիրութեանն փրկեսցես. չէն հաւատոց ինքեանց միայն։

1 Օրինակին ծուլասցիս. նշան բառ յունին։

Տեառնն մարդկա չէր թող զնոսա անփորձելայ, և ոչ առ-
ցա մեծամեծել, այլ և նախանձեցոյց կա ընդ նոսա. և
զարմնեալ 'ի սոցանէն առոյ Հրէից զնոցին ուխտին, որ-
պէս զի յառաջադոյն նոքա իսկ ունէին զխորհ զայն։
Այս որք 'ի հեթանոսացն էին, 'ի Հրէից անտի երկե-
ցուցանէ անցիւքն որ ընդ նոսա անցին, որպէս զի մի մե-
ծամտեսցեն առ նոքօք. իսկ զՀրեայսն 'ի հեթանոսաց
անտի յարդարէ։ Նոքա' 'ի բաց կորեացին և դու եթէ
ծառպացես. որպէս և Հրեայն կորեցաւ 'ի բաց, և զար-
մեալ պատուատուր եթէ կենդանի է, որպէս և դու պա-
տուատեսցես։ Խոնարհապէս իմն բարբառելին զբանն որք
'ի հեթանոսացն էին' առ նոսա շլէ, զոր միշտն սովոր է
առնել։ Զնոցա ինչ 'ի գործառնութենէ առ 'ի զանկարագործութեան
ուղղելոյ. Օգտակար և 'ի վախճանի թշշխո ձևանէ,
յորժամ վասն կերպակերացն խորհրդոյ բերելովէ 'ի մէջ.
առաջ և յանցելոցն իսկ զայնս յօրինէ, և ոչ լոկ 'ի հան-
դերձելոցն միայն' որ մնացեալ անհաւատ իսկ առնելոց
զկորուսն. և հարկ էր այնուհետև զնոպ հոգացն զնմ
շարժել և ընդդէմ ինչ առնել, յաղագս այնորիկ նախ
յաղ զօրութենէն ցուցանէ զանհնարին իրացն։ Զի թէ-
պէտ և կորեցան և 'ի բաց հանեցան և այլք նորացոցն
ժառանգեցին, և մի այնպէս յուսահատեսցին, ասէ.
“Կարող է Աստ. զարմնեալ պատուաստել”. նա և 'ի մեր
կա քան զայսն երեւց այսու։ Իսկ առաջ եթէ զկարգ ի-
րացն ինչ խնդրեսցես և խորհրդոց հետեւութիւն, առաւել
յանձնէ իսկ որքանի մեծ և բաղդատ պատուհասութեանն։
“Զի եթէ դու, ասէ, որ ըստ բնութեան վայրենի
ձիթենւոյն էր' անտի հատար, և յանդիմ յարեւ առաւել
եւս ընդ բնութեան 'ի բարւոք ձիթենւոյն պատուաստե-
ցար, որչափ եւս առաւել սոքա որ ըստ բնութեան
աճեցին յիւրաքանչիւր ձիթենւոյն որ ըստ բնու-
թեանն է”։ Զի եթէ որ չէին ըստ բնութեանն' զօ-
րեղին հաստատել առնել, որչափ եւս առաւել զայնոսիկ որ
ըստ բնութեանն են։ Զի թէ նա որ ըստ բնութեանն
էր 'ի հարցն' կորեցաւ, և դու որ չէիր ըստ բնութեան'
եկիր առ Աբրահամ, որչափ եւս առաւել նոքա կարող
էին զընտանի պատուէն յմեքեանն առնուլ. վասն զի հե-
թանոսականն չար էր ըստ բնութեանն, զի բնութեամբ
իսկ էին վայրենի ձիթենիք. իսկ բարին 'ի նոցանէն որ-

տուիչոյ բնութեանն եղև, վասն զի արտաքոյ բնութեանն պատուաստեցար. Ի՛րբ աւանդէ. իսկ Հրէիցն Հակառակ անձին, վասն զի բնութեամբ իսկ բարիքն էին: Ո՛չ ի ոչ եթէ յօտարս յարգեալ պատուաստեալս որպէս Հեթանոսն, այլ 'ի քո իսկ յընտանի արմատն Հաստատեալս, եթէ կամիցիս դառնալ: Այս արդ ինքն իսկ իցէ արժանի յորժամ Հեթանոսք զոր ոչ բնութեամբն ունէին կարացին կարգել, և զոր որ բնութեամբ իսկ ունէին չզօրեցին ուղղել, այլ զոր ունէին՝ և այնմ ձանձր եղեն:

Այս ասաց քանզի տեսոյց թէ "ոչ եթէ ըստ բնութեան", և եթէ "պատուաստեցար", զի մի կարծիցեն ասելք ինչ ունել քան զՀրէայսն, դարձեալ միայն ուղղէ առաջիկ՝ թէ և նոքա պատուաստելոց են. "Որչափ եւս առաւել նոքա, ասէ, որք ըստ բնութեանն են՝ պատուաստեսցին յիւրեանց ընտանի ձիթենիսն". Եւ եթէ "Կարող է Աստուած պատուաստել զնոսա": Այս և յառաջ քան զայս ասէր. զի եթէ ոչ միացեն 'ի նմին անՀաւատութեան, ասէ, պատուաստեսցին ըստ բնութեան, որպէս և որք ոչ ըստ բնութեանն: Յորժամ լսիցես առաջեալ 'ի նմանէն զայս Համառօտ, մի զայնմանէ զանշարժ զբնութիւնս կարծիցես ասացեալ նորա, այլ ըստ բանիցն կարգի: Այս և անուանցն իսկ անմահութիւն յայտնի առնէ. քանզի ոչ եթէ ըստ բնութեան ինչ է լինել բարի և ոչ բարի, այլ բարւոյ և յօժարութեան միայն է:

Տես զիարդ զխոյթն[1] զիարդ տառնակ տաղտկանալոյ առնէ զասացուածն: Այս զոր կարծիցես, ասէ, թէ ոչ կայցեն 'ի Հաւատսն. և նոքա պատուաստեսցին, եթէ ոչ կացցեն 'ի նմին անՀաւատութեանն: Ոտնակոխանացն թողեալ զՀեշտականսն կարգէ, և 'ի սոյն իսկ նիւթ մեծ յոյս յօրինացն Հրէիցն եթէ կամիցին. վասն որոյ և 'ի սոյնս յարեալ ասէ. "Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտ իցէք խորհրդոյս այսմիկ, զի մի իցէք իմաստունք յանձինս ձեր": Խորհուրդս ասէ զանծանօթն և զանճառելին ասէ և բազում պքանչելիքն. և ոչ միայն այսչափ, այլ և յոյժ հրաշափառագոյն, որպէս և այլուր ասէր՝ թէ "Ահա խորհուրդ մի ասեմ ձեզ. ամե-

1 Յօրինակին եղծեալ էր բառս:

նեղլին ոչ նմանեցայք, այլ անմեկնելինաւորութեանցն հաւանեցայք ,,։ Եւ արդ զի՞նչ լինի խորհուրդն. «Զի կուրութիւն 'ի մասնէ եղև 'ի վերայ Իսրայէլի ,, ասէ։ Նա այժմ թուի թէ բամբասանս զեղծանէ, այլ մխիթարանս զաւուրն որք 'ի հեթանոսացն էին։ Եւ զոր ասէն այսպիսի ինչ է, զոր և յառաջագոյն իսկ ասէր՝ թէ ոչ բոլորովին իսկ եղեն անհաւատ, այլ մասամբ ինչ. զոր օրինակ և յորժամ ասիցէ՝ «Եթէ ոք տրտմեցոյց, ոչ եթէ զիս տրտմեցոյց, այլ 'ի մասնէ ինչ, որպէս զի մի ծանրացայց ձեզ ,,. և եթէ «Որպէս ձեզ փոքր մասամբ ինչ ,,, այսպէս և աստ զայն ասէ զոր և վերագոյնն ասաց՝ թէ «Ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր զոր յառաջն ծանեաւ ,,. և դարձեալ թէ «Եւ արդ զի՞նչ, յանցանօքն զի կործանեսցին. քաւ լիցի ,,։ Այսպէս և աստ ասէ՝ թէ ոչ բոլորովին իսկ զամենեսեան զհեթանոսս լինելոց ձգեաց, այլ բազումք հաւատացին և բազումք գեռ ևս հաւատան։

Եւ ապա քանզի մեծ իմն աւետարանաց, բերէ 'ի վկայութիւն և զմարգարէն որ այսպիսին առաց։ Եւ յորժամ ասացն թէ կուրութիւն եղև, չերկեր ինչ վկայութիւն 'ի մէջ. քանզի անմտեցան յայտնի էր թէ զի հաւատացեալն և կեցցեն, զի Եսայի զարձեալ բերէ 'ի մէջ որ զոչէն և ասէն՝ թէ «Եկեսցէ 'ի Սիոնէ փրկիչ և դարձուսցէ զամբարշտութիւնս 'ի Յակոբայ ,,։ Եւ առանցին նշանակաւ իսկ զնէ զփրկութիւնն, որպէս զի մի որ յառաջին ժամանակին ձգեացէ զայն և ընդ մի-մեանս ընծեցէ՝ ասէ. «Եւ այս նոցա որ յինէն ուխտ՝ յորժամ ընկեցից զանօրէնութիւնս նոցա ,,։ Եւ ոչ յորժամ թլփատեսցին կամ զոհիցեն, և ոչ յորժամ զայն անմեկնոյն ըստ օրինացն առնիցեն, այլ յորժամ թողութեանս մեղացն հասանիցեն։ Եւ արդ որ ինչ այժմն աւետարանեցաւ, ոչ երբեք եղև 'ի վերայ նոցա յայնժամ և ոչ վայելեցին ինչ յայսպիսում. այլ այս անմեկնոյն 'ի ձեռն մկրտութեանն 'ի մեզ կատարեցաւ, յաղագս որոյ և զամենեսեան ածեալ ասէր՝ թէ «Ընդէ՞ր են քահանայք և կոչումն նոյ ,,։

Եւ ոչ այսու միայն մխիթարէ զնոսա, այլ և ան-ցիցն իսկ որ ըստ կարգին ինչ անց ընդ նոսա, զայն իմն յառաջագոյն զնէ այսպէս ասելով թէ «Ըստ աւետա-րանին թշնամիք են վասն ձեր. իսկ ըստ ընտրութեանն

ուտելիքք վասն հացին ,,։ Որպէս զի մի՛ հաղորդակցացն այն որ 'ի հեթանոսացն է և առիթ լիցի եւս հաստատութեան կացի, մի՛ խնդիր զյետագայն ինչ առնել, այլ որ ինչ այժմն եղև։ Բայց սակայն և այս ամփոփէ զնա և զխոնարհեցուցանէ ըստ կարգի ասելովն՝ թէ ըստ աւետարանին թշնամիք են վասն ձեր. զի յորժամ դուքն կոչեցարուք, նոքա ևս յանհնազանդք եղեն։ Բայց սակայն ած և ոչ այնպէս արգելուլ զձեր զկոչումն, այլ կացուցանէ ամենեցուն զոք 'ի հեթանոսացն են գալ 'ի հաւատս, որպէս զի առաջ և նոքա եկեսցեն։ Ճշմարտէ արդ նոցա և այլ իմն պարգև ասելովն՝ թէ "ըստ ընտրութեանն սիրելիք են վասն հարցն ,,։ Իսկ արդ այս զի՞նչ իցէ. առաջի թշնամիք և անարժանք, և անտի սիրելիք. այստի ոչ ինչ օգուտ է նոցա նախնեացն առաքինութիւն՝ եթէ ոչ հաւատասցեն։

Բայց սակայն որպէս ասացի իսկ՝ ոչ եթէ եւս զազգարէ քաներուք մխիթարել զնոսա և սրտապնդել, որպէս զի կարիցէ յինքն կորզել զնոսա. յաղագս որոյ և այլ ևս առնէ կարգէ զբարւոք առաջեալոյն։ Իսկ զոր ասէն այսպիսի ինչ է. "Որպէս դուք անհաւանք եղերուք այ, և այժմ ողորմութիւն գտէք նոցա անհաւանութեամբն, այնպէս և նոքա այժմ անհաւանք եղեն առ ձերով ողորմութեամբդ, որպէս զի և նոքա ողորմութիւն գտցեն։ "Քանզի զայդ առ հասարակ փակեաց ած զամենեսին յանհնազանդութիւն, զի ամենեցուն ողորմեսցի ,,։ Ցուցանէ աստ եթէ յառաջագոյն իսկ էր կոչեալ զհեթանոսս. և իբրև նոքա ոչ կամեցան, ընտրեաց իւր զհրէայսն, յետ այնորիկ և նոցա նոյն իրք պատահեցան. և իբրև ոչ հաւատացին հրէայքն, դարձեալ զհեթանոսս մատեաց առ ինքն։ Իսկ ոչ եթէ յայնժամ վայրի զատեցի առնու և կամ 'ի նոցանէ յարատեւութեան զամենայն շրջէ. այլ յայն՝ թէ և նոքա ողորմութիւն գտցեն։ Զհեթանոսն դրշամբ ինչ ընծայեաց զոք 'ի հեթանոսացն էին, քանզի ինչ յառաջ քան զհրէայսն։ Իսկ քանզի դուք, ասէ, երբեմն անհաւանք եղերուք այ, մատեան առ ած հրէայքն. դարձեալ իբրև նոքա անհաւանք եղեն, դուք մատեայք առ նա. բայց սակայն ոչ իսպառ կորնչին։ "Քանզի զայդ առ հասարակ փակեաց ած զամենեսին յանհնազանդութեանն ,,։ Այսուինքն է յանդիմանեաց եղց եթէ անհաւանք եղեն.

ոչ զի 'ի նմին անհաւատութեան կացցեն, այլ զի՛ ընդ այլոց հաւատակութեամբն փրկեսցէ, զսոսա նոքօք և զնոսա սոքօք։ Այլ դու տես. անհաւատք եղերուք դուք, ասէ, զառաջինն, և նոքա փրկեցան. դարձեալ նոքա եղեն անհաւատք, և դուք ապրեցարուք. ոչ զայնպիսի փրկութիւն ունիք դարձեալ առաւել եղանիք որպէս և Հրեայքն, այլ զայն որով և զնոսա կարող էք 'ի ձեզ կորզել զմոլորեալսն 'ի նախանձումն է։

«Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեան Այ, որպէս զի առանց քննելոյ են իրաւունք նորա»։ Նաև 'ի վեր յառաջին ժամանակս եւ և 'ի վերջուստ ուսաւ զայս զանազանութիւնն յորմէ հետէ աշխարհ եղև մինչև ցայժմու ժամանակս։ Այլ զմտաւ ածէ թէ զիարդ պէսպէս զամենայն մատակարարեաց, և զահի հարեալ սքանչանայր և 'ի վերայ գոչէր, զի հաւատացուսցէ զլսողսն թէ Աստուածային է զոր ասացն. նա և ոչ զահի հարեալ գոչէր՝ եթէ չէր առաջի եղեալ։ Այլ զի խորք են՝ գիտաց, բայց թէ որչափ խոր՝ ոչ գիտաց. և առաջի սքանչելի է զօրութեան որ ոչ զամենայնն գիտէր։ Այլ զահի հարեալ զարմանայր ընդ քաղցրութիւնն նորա, ըստ իւրում կարողութեանն 'ի ձեռն երկուց կարգաւորական անուանեաց այսոցիկ քարոզեաց զնա՝ մեծութեան և խորութեան։ Այլ զահի հարեալ, զի և կամեցաւ և կարաց, այնպէս և հակառակօքն զհակառակսն կազմէ։

«Որպէս զի առանց քննելոյ են իրաւունք նորա»։ Քանզի ոչ միայն հասու լինել անհնար է, այլ և ոչ քննել ոք կարող է։ «Եւ առանց զննելոյ են ճանապարհք նորա», այսինքն է տնօրէնութիւնն։ Քանզի և նա ոչ միայն չգիտէ, այլ և ոչ խնդրել կարողութիւն է։ Այլ ոչ ես գիտեմ, ասէ, զամենայն. այլ փոքր մի մասն և ոչ եթէ զամենայն. ինքն միայն գիտէ զիւրն յայտնապէս։ Զի ասեն որոց 'ի սոյնս յարեալ ասէր՝ թէ «Ո՛ գիտաց զմիտս տեառն և կամ ո՞ խորհրդակից եղև նմա և կամ ո՛վ ետ նմա փոխ յառաջագոյն և հատուցանիցէ նմա»։ Այլ զոր ասէն այս է՝ թէ որպէս իմաստուն է, չէ յայլմէ իմացեալ իմաստունն, այլ ինքն իւր է աղբիւր բարութեանց։ Այլ այնքան ինչ զօրեաց և պարգևեաց մեզ. չէառ յայլմէ ումեքէ փոխ և ետ մեզ, այլ ինքն յանձնէ բխեաց. և ոչ եթէ երախտեաց ումեք

պատրաստական է որպէս թէ առեալ ինչ յումեքէ, այլ ինքն է իշխան բարութեանց, մանաւանդ եթէ այն իսկ է գեղումն մեծութեանց որ չէին կարօտ այլում. յաղագս որոյ զառաքելն ածեալ ասէ՝ թէ "Ի նմանէ և նովաւ և 'ի նոյն ամենայն,,: Ինքն եգիտ, ինքն արար, ինքն ըն-դունի. վասն զի մեծատուն է և չէ կարօտ յայլմէ ինչ առնուլ, և իմաստուն է և ոչ ունի պէտս խորհրդակ-ցի, այլ և ոչ գիտել ոք կարէ զխորհուրդսն, այլ ինքն միայն մեծատուն է և իմաստուն: Վասն զի քան զբազում մեծատունս որք 'ի հեթանոսաց են՝ և շահաւէտս առ-նէ սա զոր կամի, և քան զբազում իմաստունս հրէից զձկնորսսն 'ի նոցանէն նոցա վարդապետս կարգեաց:

Այս ասա իբրև զահի հարեալ, գոհութիւնս մատու-ցանէ նմա ասելովն՝ թէ "Նմա փառք յաւիտեանս. ա-մէն,,: Քանզի յորժամ մեծ ինչ և չքնաղ ասիցէ, զքանչացեալ՝ զբանն 'ի փառս կատարէ: Զայս և վասն որդւոյ առնէ, քանզի և անդ զարմացեալ զնոյն գործէ զոր և աստ առնէ. "Յորոց Քրիստոս ըստ մարմնոյ, որ է 'ի վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս,,:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Նմին և մեք նմանողք լիցուք և փառաւորեսցուք զԱծ զարմանս տանելով վարուցն մերոց, և մի 'ի նախնեացն առաքինութիւն ապաստանք լիցուք՝ առնլով զՀրէայսն օրինակ մեզ. քանզի չէ և չէ իսկ այսպիսի ազգակա-նութիւն քրիստոնէից, այլ հոգւոյն մերձաւորութիւն: Նովաւ և սկիւթացին Աբրահամու որդի լինի, և ա-ռանց սորա և զաւակն իսկ Աբրահամու քան զսկիւթա-ցին եւս օտարացեալ գտանի: Արդ մի 'ի հարցն ուղ-ղութիւնս ապաւինիցիք. զի թէպէտ և յոյժ զարմա-նալի ծնողս ունիցիս, չէ քեզ այն բաւական 'ի փրկու-թիւն կամ 'ի պատիւ և 'ի փառս, թէ ոչ դու լինիցիս նոցին ծնունդ ըստ բարուց բնութեանց. այնպէս և ե-թէ յոռի ծնողս ունիցիս, չդատապարտէ ինչ այնու ըզ-քեզ և յամօթ առնէ, մանաւանդ եթէ քեզէն իսկ զքեզ ուղիղ կարգիցես:

Այս արդ ո՜ ոք քան զհեթանոսս էր անարգ. բայց սա-կայն հաւատովքն նոքա իսկոյն սրբոց ազգականք եղեն:



Digitized by Google

Ո՞ր ընտրանեգոյն քան զհրեշտակս. այլ վասն անհաւատութեանն ստորացան։ Քանզի այն ազգականութիւն բնութեանն է և 'ի հարկէ ըստ ամենեցուն ազգականութեան. վասն զի ամենեքին յԱդամայ եղաք մեք, և չիք որ 'ի մեզ առանց ազգականութեան և ըստ Ադամայ և ըստ Նոյի թանձին և ըստ երկրիս ըստ հասարակաց ամենեցուն մօրս։ Իսկ[1] սայն՝ որք արժանիք լինին ազգականութեան թանձին 'ի հոգւոյ անտի. քանզի չէ ամենեցուն առա լինել ազգական, այլ հաւատացելոցն միայն. և ոչ եղբարս կոչել որք զնոյն երկանոն լուծանեն ընդ մեզ յարգանդէն, այլ որք զնոյն հոգւոր նախանձն ցուցանեն։ Նոյնպէս և Քրիստոս որդիս Այ կոչէ զամենս. նոյնպէս և որդիս սատանայի 'ի հակառակորդաց անտի, և անհաւատս կոչէ զնոսա և որդիս գեհենի և կորստեան։ Այնպէս և Պաւղոսի որդի Տիմոթէոս էր յառաքինութենէ, և սէրս և սիրելի որդի անուանեաց. իսկ քեռ իւրոյ որդւոյն և ոչ ուրեք յիշէ անուանն։ Նա զի մին ըստ բնութեան իսկ էր նորա մերձաւոր, այլ չեղև ինչ օգուտ այն. իսկ միւսն և բնութեամբ և տեղեաւ յոյժ 'ի բացէ՝ քանզի Լիւստրացւոց քաղաքակից էր, այլ սակայն քան զամենեսին մտերմագոյն և մերձաւորագոյն գտաւ։

Եղիցուք և մեք այժմ որդիք արքային, մանաւանդ եթէ որդիք Այ եղիցուք։ Նա զի զոյ հնար որդիս Այ լինել, լուր Քրիստոսի զինչ ասէ. "Եղիջիք կատարեալ, որպէս և հայրն ձեր որ յերկինս է"։ Աստ այսորիկ և հայր կոչեմք զնա յորժամ աղօթեմքն. ոչ եթէ ըղձնորհացն միայն յիշեցուցանեմք անձանց, այլ և զառաքինութենէ, որպէս զի մի ինչ անարժանս այսպիսի ազգականութեան գործիցեմք։ Նա արդ զիա՞րդ, ասէ, լինիմք որդիք Այ. հրաժարել յամենայն ախտից, հանդարտութիւն ցուցանել առ այնոսիկ որք թշնամանեն զմեզ և վնասելս կամիցին. քանզի և հայրն քո այսպէս առնէ առ իւր հայհոյիչսն։ Յաղագս այսորիկ բազում ինչ բազում ուրեք չասէ՝ թէ որպէս լինիջիք որդիք հօրն ձերոյ, այլ յորժամ ասացն թէ "Աղօթս արարէք 'ի վերայ ըլկեչացն ձերոց և բարի արարէք ատելեաց ձերոց",

1 Ցոյնն իսկ [illegible] 'ի [illegible]։

յայնժամ առաւ յաւելուլ զպատիւքս կարգաւորութեան զայս։ Քանզի ոչ այլ ինչ մատուցանէ այնպէս զմեզ առ Ած և նմանս առնէ, որպէս զուղղութիւնս զայս։ Յաղագս այսորիկ և Պաւղոս ասէր՝ թէ «Լինիջիք նմանողք իմ»․ ընդ այսմ լինելոյ ասէր։ Քանզի ամենայն իսկ ուղղութեանս պէտս ունիմք, մարդասիրութեան և հանդարտութեան. վասն զի և մեք իսկ բազում մարդասիրութեանս պէտս ունիմք. քանզի զօր հանապազ բազում ինչ մեղանչեմք, և յաղագս այսորիկ բազում իւղոյ պէտք են մեզ։ Իսկ զշատն և զնուաղն ոչ եթէ ըստ չափոյ արդեանց համեմատէ, այլ ըստ դրից զօրութեան տուողացն։

Այլ արդ մի մեծատունն մեծամտեսցէ և մի աղքատն ՚ի վայր կործանեսցի, որպէս զի փոքր ինչ ետ. իցէ արդեօք ուրեք զի սա իսկ շատ տայ քան զնա։ Այլ ոչ դարձեալ երկեւղի զինքն արժան է վարկանել վասն աղքատութեանն. քանզի և դիւրաւ իսկ զողորմածութիւնն աղքատն առնէ։ Քանզի որ զբազում զինչս ստացեալ է, ամբարհաւանէ և եւս աւելի ստանալ ցանկայ քան զոր ունին. իսկ որ սակաւն ունի, յերկուցունց յայս ՚ի բնութեանցս զերծեալ գտանի, որով և բազում իսկ պատճառս բարեգործութեան ունի սա։ Քանզի և ՚ի բանտ սա դիւրաւ երթայ և հիւանդաց ՚ի տես և բաժակ մի ջուր ցուրտ տալ. իսկ նա զայս ամենայն արհամարհէ և չհամարի իւր արժանի, վասն զի բռնակալեալ է մեծութեամբն։ Այլ արդ մի վհատիր յաղագս աղքատութեանդ, քանզի զերկնից իսկ զշահն աղքատութիւնն քեզ դիւրաւ գործէ։ Թէպէտ և չունիցիս ինչս, ցաւակից հոգի ունիս, և ընդ այսոցիկ քեզ վարձք առաջի կան։ Յաղագս այսորիկ և Պաւղոս հրամայէ եւս լալ ընդ լացողսն, և ընդ կապեալսն զոյգ ընդ նոսին կապիլ հրամայէ. քանզի ոչ եթէ որք լայցեն միայն ընդ այլսն՝ այն միայն բերիցէ զմխիթարութիւն յորժամ բազում ունիցի վշտակիցս, այլ են և այլ ինչ նեղութիւնք. և չէ ինչ նուազ քան զտուրս ընչիցն՝ այն որ մերատին բանիւքն կարէ ստանալ զցաւակցեալսն։ Վասն այսորիկ և ինչս հրամայեաց տալ Ած կարօտելոցն, ոչ զի զաղքատութիւնն միայն ուղղիցեմք, այլ զի և զմեզ ուսուսցէ ցաւակից լինել որք ՚ի չարչարանսն իցեն։ Այլ արծաթասէրն ատելի ոչ յայնմանէ միայն է զի զաղքատն անտես առնէ, այլ

զի և զանձն եւս յանապականութիւն կոչէ և 'ի բազում անմահութիւն. զոր օրինակ և որ զինչ արհամարհիցէ վասն աղքատաց և վասն նոցին փափագանացն, այնպիսին ողորմած և մարդասէր կոչի: Իսկ Քրիստոս խոկ յորժամ երանէ զողորմածն, ոչ միայն զայնոսիկ որք ընչիւքն ողորմին, այլ և որք յօժարութեամբն զայս առնեն՝ երանէ և գովէ:

Իսկ արդ զայսպիսի զպատուհաս գիրս կարդեսցուք վասն խնդրոյ, և ամենայն խոկ բարութիւնքն մերձենան: Ո՛ր որք ողորմած և մարդասէր բարս ունին, Թէպէտ և ինչս ունին, յօժարութեամբ բաշխեն. և կամ 'ի մերձն թշուառութեան տեսանիցեն, լան և ողբան ընդ նմին. և եթէ տեսանիցեն զոք զմասնաւոր յաւելեալ՝ վերակացու լինին. և կամ 'ի խաղաղութեան զոք տեսանեն, ձեռն կարկառեն. քանզի զամէն բարութեան ունին զմարդասէր և զողորմած հոգին, և անտի բխեն զօգուտ եղբարցն, և ընդ այնր ամենայնի վայելչէն աստուածայնոյ յանձինս վարձուց առնուլ: Որոց և մեք այժմ արժանի գտցուք, և նախ քան զամենայն զհոգիս մեր հեզս և հանդարտս յօրինեսցուք, զի այնպէս և մինչ աստ եմք բիւր բարութիւնս գործիցեմք և 'ի հանդերձեալ բարութիւնսն վայելեսցուք: Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հայր հանդերձ Հոգւոյն Սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

## ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ

“ Աղաչեմ զձեզ, եղբարք. գթութեամբքն Այ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Այ, զբանաւոր պաշտօնդ ձեր ,, :

Աղաչեմ ինչ ճառեաց վասն Այ մարդասիրութեանն, եցոյց զնորա զանբաւ զխնամսն և զանճառելի զբարերարութիւնն. և խելք ոչ կարօղ քննել և հասու լինել, ապա այնուհետև զայս ասացի արկանէ առ 'ի հաւանեցուցանել զայնոսիկ, որոց զերախտաւորսն ընկալեալ

էր, որպէս զի արժանի պարգևացն վարս պատրաստ ցու-
ցանիցեն։ Այլ որ այսպէսն էր և այսպիսին ոք, չհրա-
ժարէ յաղաչելոյ. և այս զի ոչ ինքն համարձակեալ էր
վայելել յայն, այլ որով նոքայն մարթէին օգտել։ Այլ
արդ զինչ խորհիցեն եթէ նա չհրաժարէր յաղաչելոյ,
ուր և զգթութիւնն իսկ այ առաջի դնէ։ Վասն զի բիւր
բարութիւնք մեզ ՚ի գթութեանցն այ եղեն, ասէ, նո-
վաւ հաշտեցարուք, ՚ի նա ապաւինեցարուք. քանզի
զնոսա իսկ առնի ընդ իս ՚ի պաղատանս, որպէս զի մի ա-
նարժանք ինչ նոցա գտանիցեմք։ Որոյն վասն, ասէ, նո-
քիմբք իսկ աղաչեմք որ ապրեցարուքն։ Ո՜ր օրինակ
եթէ ուրուք մեծամեծ երախտիս ընկալեալ իցէ յու-
մեքէ՝ և այսպէս անփոփոխեալ աղաչիցէ ՚ի նմանէն, և որոյ
զերախտիսն արարեալ իցէ՝ նա մատուցեալ աղաչիցէ զնա։
Այլ արդ էր վասն աղաչիցես. «Պատրաստել, ասէ,
զանձինս ձեր պատարագ կենդանի սուրբ հաճոյ այ զբա-
նաւոր պաշտօնն ձեր»։ Այլ քանզի զենումն ասաց, մի
ոք համարեսցի եթէ զմարմինս հրամայեաց պատարագել,
երագ իսկ ած զնովիմբ և ասէ՝ թէ կենդանի։ Նոյն ա-
զատէ զնա ՚ի հրէականացն. ասէ՝ սուրբ և հաճոյ այ
զբանաւոր պաշտօնն ձեր։ Զի այն մարմնաւոր էր և
չէր կարի հաճոյ այ. «Ո՞ խնդրեաց զայս ՚ի ձեռաց ձե-
րոց», ասէ։ Բազում և այլ ուրեք երևի ընդդէմ կա-
ցեալ այնոցիկ, այլ ոչ եթէ յայսմ. զի և յորժամ
զայնս տայրն, զայս խնդրէր. վասն որոյ և ասէր՝ թէ
«Պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս».
և դարձեալ թէ «Օրհնեցից զանուն այ իմոյ օրհնու-
թեամբ». և թէ «Հաճոյ եղիցի այ քան զորթ մա-
տաղ որ բերէն զեղջիւրս և զկճղակս». և այլուր մեր-
ժէ զնոսա ՚ի բաց և ասէ. «Ոչ ուտեմ ես զմիս զուա-
րակաց քոց, և ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ. այլ
զեն այ զենումն օրհնութեան և հատո բարձրելոյն զա-
ղօթս քո»։ Նոյնպէս և Պաւղոս հրամայէ պատարա-
գել զմարմինն զենումն կենդանի։

Այլ զիարդ լինիցի, ասէ, մարմինն այնպիսի զենումն։
Մի՛ ինչ չարութեանս տեսցէ ակն, և եղև զենումն
այնպիսի. մի ինչ զանպատեհս խօսեսցի լեզու, և եղև
պատարագ. մի ինչ գործեսցեն ձեռք զանօրէնութիւն,
և եղև ողջակէզ։ Մանաւանդ եթէ չիցէ այս բաւա-

կան, այլ և բարւոյ գործոց պէտք են, որպէս զի ձեռնն ողորմութիւնս առաքեսցէ, իսկ բերանն օրհնեսցէ զհալածիչսն, իսկ լսելիքն ամենայնի բանիցն լսելութեան պարապեսցին. քանզի պատարագն չունի ինչ պիղծ և անսուրբ, պատարագ պտուղ կոչեալ է։ Այնպէս և մեք այժմ և 'ի ձեռաց և յոտից և 'ի բերանոյ և յայլեւսն ամենայնէ հանցուք պտուղ Այ։

Այսպիսի պատարագ հաճոյ է Այ, և ոչ եթէ հրէիցն որ պիղծն էր. "Պատարագ նոցա, ասէ, հաց սգոյ իբեանց"։ Այլ ոչ եթէ մերս։ Զի նա յորժամ զենուին՝ մեռեալ գտանէր, իսկ այս զենումն կենդանութիւն գործէ. քանզի յորժամ մեռուցանեմք զանդամս մեր, յայնժամ կարեմք կենդանի լինել։ Նոյն ինքն են այսմ զենմանս օրէնքս, որին վասն և հրաշափառագոյն է հրոյս այսորիկ օրէնք. քանզի չէ փայտի կարօտ, և ոչ այլոց նիւթոց 'ի ստորայսոցս, այլ ինքն ինքեամբ իսկ վառի հուրս մեր և ոչ այրէ և ծախէ զողջակէզսն, այլ մանաւանդ կենդանագործէ զնոսա։ Զայսպիսի զզենումն անգուստ 'ի վերուստ իսկ խնդրէր Այ. վասն որոյ ասէր իսկ մարգարէն՝ թէ "Պատարագ Այ հոգի մաքրեալ". և երեք մանկունքն զայնս մատուցանէին ասելով՝ թէ "Ոչ իշխան և ոչ մարգարէ և ոչ տեղի պտղաբերութեան առաջի քո, և գտանել ողորմութիւն, այլ անձամբք բեկեալովք և ոգւովք խոնարհութեան լիցուք ընդունելի"։ Տես զկարգ զիւրաքանչիւր որք յառաջեցելոցն որպէս հաւատեաւ 'ի կեր առնանէ ասա։ Ոչ ասաց թէ սպանէք զմարմինս ձեր զենմամբ, այլ թէ պատարագեցէք. որպէս զի ասիցէ՝ թէ մի ինչ հաղորդութիւն ունիցիք ընդ նոսա, վասն զի այլում ընծայեցէք զնոսա։

Ասեն զի և որք զպատերազմականն զերկրաւորն պատարագ ունէին, չունէին ինչ նոքա ընդ այլսն հաղորդութիւն. այնպէս և դու այժմ պատարագեցեր 'ի պատերազմ ընդդէմ սատանայի զանդամս քո, և գիտես եթէ ահագին է Ճակատն այն և յոյժ ահեղ բանակն նորա, և արդ մի ձգեր և խառնակեր յաշխարհական պաշտամունս նորա։ Նա և այլ ինչ ցուցանէ այսու թէ պարտ է ընկեր և ազատանել զատանել աշխարհութեանն. զի թէ պէտս յանձինս պատրաստեալ եմք կալոց, ոչ ներկրա-

Digitized by Google

ւոր մարդոյ ումեք, այլ նմա իսկ Թագաւորին ամենե-ցունցն մեզ եմք կալոց յանդիման. ոչ զի պատերազմեցի մերոյն ախոյեանին, այլ զի և զԹագաւորն իսկ ունի նըս-տեալ 'ի վերայ: Ոչ համարի ամօԹ նստել յանդիման մեր, այլ կարի իսկ կամի զայն. և զոր Թագաւոր չառ-նու յանձն որ մեր ծառայակիցն է, զայն որ Հրեշտա-կաց տէրն է՝ յանձն առնու:

Իսկ արդ քանզի համբերձեալ եմք յանդիման կալ, և պատրաստ և զինուած լինել, զամենայն զօրութ 'ի բաց արասցուք: Քանզի մինչ բիծ և արատ ունիցիմք մեք, չկարեմք լինել պատրաստ և զինուած. քանզի և ոչ այն կարէ զինուած լինել զպոռնկականն տեսանե-լով, և ոչ ձեռն պատրաստ յանդիման կալ յափշտա-կելոյն և զրկելոյն, և ոչ ոտք կաղապէս գնալոյն որք 'ի Թատերսն ընԹանայցեն, ոչ որովայն որ փափկուԹեան ծառայէ և զհեշտուԹեան ցանկուԹիւնն բորբոքէ, ոչ սիրտն որոտմուԹեամբ ըղձանալ և պոռնկական խան-դաղօք, ոչ լեզու զպիղծսն և զաղտեղիսն բարբառելով: Այսն որոյ պարտ է յամենայն կողմանց արատոյն և բծին զգուշանալ որ լինին 'ի մարմինս մեր:

Զի եԹէ որք զհին զողջակէզսն մատուցանէին՝ ա-մենայն իրօք զգուշանային, և ոչ զակնատն և ոչ զկո-Թանն և ոչ որ քոսոտն էր և կամ շրԹնատն՝ չհրա-մէին զայն մատուցանել, ապա մանաւանդ եւս առաւել մեզ, որք ոչ անբան ոչխար, այլ զանձինս իսկ մատու-ցանեմք, եւս առաւել հաւատեաց պէտք են և ամե-նայն ուստեք զտանել սուրբս և մաքուրս, որպէս կարդա-ցուք և մեք առնել ըստ Պաւղոսի առելոյն՝ Թէ "Իսկ ա-ւասիկ նուիրեալ եմ և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ,,: Այսն զի և էր իսկ նորին սուրբ և մաքուր քան զամենայն պատարագս. յաղագս այնորիկ իսկ և նուէր կոչէ զինքն: Իսկ արդ յաջողի այս եԹէ 'ի բաց մերկա-նամք զհին մարդն, և եԹէ մեռուցանեմք զանդամս զերկրաւորս, և եԹէ 'ի խաչ հանիցեմք զանձինս աշ-խարհիս: Ապա ոչ սրոյ պէտս ունիմք և ոչ սեղանոյ և հրոյ. մանաւանդ եԹէ ունիմք իսկ այսմ ամենայնի պէտս, բայց սակայն չէ ձեռագործ, այլ անդուստ 'ի վերուստ գայ մեզ ամենայն, և հուրն 'ի վերուստ և սուրն, և սեղանն է մեզ երկնից լայնուԹիւնն: Զի Թէ Եղիայի

Digitized by Google

զշօշափելի զզոհսն մատուցեալ՝ զամպարս բացոյ 'ի վե-րուստ իջեալ զամենայն ծախեցին՝ զջուրն և զփայտն և զքարինսն, այսպ և ստուեր քև լիցի այս։ Նոյնպէս և ունիս ինչ հոտական և երկրաւոր, յորժամ զպատա-րագն մատուցանիցես ուղիղ մտօք, իջեալ հուր հոգւոյն սրբոյ և զերկրաւորն զայն 'ի բաց ծախէ, և զպատա-րագն զամենայն ընդունի և սրբէ։

Ո՞ր ինչ է բանաւոր պաշտօնն։ Հոգևորական պաշ-տօնութիւնն, վասն որոյ ըստ Պօղոսի կամացն։ Ո՞ր օրինակ եթէ որ 'ի տանն իւր սպասաւորեսցէ և սրբիցէ, որչափ ինչ որ և իցէ՝ ամփոփի յայնժամ և զգաստա-գոյնս լինի, այնպէս և մեզ զամենայն ժամանակս պարտ է լինել որպէս զսուրբ պաշտօնեայս. և լինի այն՝ թէ զօրհանապազ մատուցանիցես նմա զենումն, և քահա-նայ քում մարմնոյդ լինիցիս ըստ հոգւոյդ առաքինու-թեան. յորժամ զգաստութիւն և պարկեշտութիւն մատուցանես, յորժամ զողորմածութիւն և յորժամ զհեզութիւն և զանոխակալութիւն. քանզի այսպիսի են որով մատուցանես զբանաւոր պաշտօնն, այնպիսի է ոչ ինչ ունելով մարմնական և ոչ թանձրագոյն ինչ և շօշափելի։

Բարձրագոյն զկարգն անուանէր այսպիսիք, և զիւրա-քանչիւր որ՝ քահանայ իւր մարմնոյն եղիցի, այդ՝ ասէ և զօրինակն որով կարող էին զայս ուղղել։ Նոյն արդ զինչ իցէ օրինակն։ "Մի՛ զդէդ, ասէ, ընդ յաւիտենիս այսմիկ կերպարանիք, այլ նորոգեցարուք 'ի նորոգութիւն մտաց ձերոց"։ Քանզի ընդ երկիր քարշին կերպարանք յա-ւիտենիս այսորիկ, և անարգք և առժամանակեայք են, և չունին ինչ բարձրագոյնս և ոչ ցանկալիս և ոչ ուղ-ղութիւն ինչ, այլ ամենայն ինչ խոտորնակ է։ Նոյն արդ եթէ կամիցիս ուղիղ գնալ, մի՛ տպաւորեր զքեզ ըստ օրինակի անցաւոր կենցաղոյս. քանզի չէ ինչ 'ի սմա որ ամբողջ և հաստատուն կայ մնայ. յաղագս այսորիկ և կերպարանս կոչեաց. և այլուր դարձեալ ասէ. "Անցա-նելոց են կերպարանք աշխարհիս այսորիկ"։ Քանզի ոչ ինչ հիմնաւոր և հաստատուն ունի, այլ ամենայն առժամեայ է. սորին վասն և յաւիտենիս այսորիկ ա-սաց, կամեցեալ ցուցանել թէ առժամանակեանք են և անհաստատուն կերպարանք։ Նոյնպէս և զմեծութենէ

ախտիցս կամ զփառաց կամ զմարմնոյ գեղեցկութենէ կամ զփափկութենէ և կամ այլ ինչ 'ի այնպիսեացս՝ զոր կարծիցես եթէ մեծամեծք ինչ իցեն, կերպարանք միայն են և ոչ եթէ իրաց ճշմարտութիւն, ստուեր միայն է և երևումն և ոչ մշտնջենաւոր ինչ հաստատութիւն։ Այլ դու, ասէ, մի կերպարանիր այսօրիւք, այլ նորոգեաց, ասէ, 'ի նորոգումն մտացդ։ Ցուցանէ թէ աշխարհիս կերպարանք միայն է. իսկ առաքինութեանն ոչ են կերպարանք, այլ նորոգումն ճշմարիտ՝ որ ըստ բնութեան իսկ ունի զգեղեցկութիւնն և չէ կարօտ արտաքին աճառացն գեղեցիկ երևել և 'ի կերպարանացն՝ որ զոյգ ընդ երևելին եղծանին. վասն զի ամենայն այսօրինակ նախ քան զերևելին լուծանին։

Արդ եթէ զօրինակն 'ի բաց ընկենուցուս, երագ իսկ առ պատկեր ճշմարտութեանն հասանիցես. քանզի չիք ինչ քան զմեղս տկարագոյն, և ոչ այլ ինչ քան զնա երագ հնանայ։ Եւ առաս զի մարդկան սանձին իմն էր յընթանալ իւրեանց կամացն զօրհանապազ մեղանչել, յայն սակս մխիթարէ զլսողն ասելով՝ եթէ ցանկ հանապազ նորոգեա։ Զոր և մեք 'ի տունս շինուածոցն առնեմք՝ զխարխուլն և զհնացեալն միշտ կազմեմք. այնպէս և զոգիս մեր զարմանեսցուք։ Մեղար այսօր, հնացուցեր զքո հոգին. այլ մի յուսահատ լինիցիս և մի միշտ 'ի վայր կործանեալ կայցես, այլ կանգնեա և նորոգեա զնա ապաշխարութեան արտասուօք և խոստովանութեամբ և որդասեայն բարեգործութեամբ, և մի երբէք պակաս գտանիցիս զայսպիսիս առնելոյ։

Եւ զփորձ կարիցեմք, ասէ, զայս առնել. «Առ 'ի ընտրել ձեզ զկամս, և եթէ զինչ են կամքն այ բարին և հաճոյն և կատարեալն»։ Այսօրիւք, ասէ, նորոգեաց, որպէս զի ուսջիք եթէ զինչ են կամքն այ. յայնժամ կարէք նորոգել յորժամ ուսանիցիք թէ ինչ է օգուտն և կամ զինչ կամիցի ած։ Զի թէ զայս գիտիցես և զիրացն ուսանիցիս ճանաչել զբնութիւն, այնուհետև բուռն հարկանիցես զառաքինութե ճանապարհէն։

Եւ ո՞ ոք տգիտանայ, ասէ, զբարին և զօգուտն, և կամ թէ զինչ կամիցի ած։ Այլք 'ի մերձակայս են հարեալք, և զհաստատութիւն նախանձելի իմն վարկանին և զաղքատութիւնն եղկելի, որք զմեծութեան զհետ

Digitized by Google

մնեալ են և առ արտաքին փառսն զեղրան բարձեալ կամ հիացեալ, որք մեծամեծ զանձինս կարծիցեն, որք տունս պայծառս և մեծազարդս շինիցեն և գերեզմանս բազմածախս և ճարճատչազարդս, և զծառայից զերկս ունիցին և զազատութիւն ներքինեացն շուրջ զինքեամբ պատիցեն: Այդքա են որ զինքեանց զօգուտն և զինչ զկամսն անգիտանան. և երկոքեան այսոքիկ մի իմն են:

Վասն զի զօգուտն և զբարին մեզ Ած կամի, և զոր ինչ Ած կամի՝ այն է մեզ բարին և օգուտն, և արդ որ են կամք այդ: Աղքատութեամբ կեալ, 'ի խոնարհութե կեալ, զփառս արհամարհել, ժուժկալութեամբ կեալ և ոչ փափկութեամբ, նեղութեամբ և ոչ հանգստութեամբ, տրտմութեամբ և ոչ ծաղու՝ զեխանս և այլովքն ամենեքումբք զորս օրէնս գրեաց: Այլ բազումք որք զայսոցիկ զհետ ոչ չօգան և այնչափ հեռի են յիրացս, կարծեն թէ այն է մեզ օգուտ և այս կամք, այսինքն է մեծութիւնն. վասն այնորիկ և ոչ մերձենալ անգամ կարեն այնպիսիքն յառաքինութեանն աշխատութիւնս, նա և զիտեն իսկ ոչ եթէ զինչ իցէ առաքինութիւն. և քան զնա մեղքն իմն զարմանալիք թըւին նոցա և քաղցունք, և զպոռնիկս փոխանակ ցածուն և զգաստ կանանց յանձինս կուտեն: Իսկ արդ երբ կարիցեն այնպիսիքն մերձել 'ի յաւիտենից յոյսմանէ.

Վասն որոյ պարտ է նախ քան զայլսն նմա զխրատուսն իւրացն 'ի մեզ հաստատուն պահել. թէպէտ և ոչ փոխիցեմք յառաքինութիւն, գոնեայ գովիցեմք զառաքինութիւն. թէպէտ և չփախչիցիմք 'ի մեղացն, գոնեայ չար կոչիցեմք զմեղսն: Ոչ թէ այսպէս պահիցեմք անշփոթ զճշմարտութեան սահմանադրութիւնն, այլա յուղի անկեալ և զգործոյն իսկ բուռն կարեմք հարկանել. Վասն այսորիկ և սա ինքն այսպէս հրամայէր աղաչել. «Խնդրել ձեզ, ասէ, զլաւն, և եթէ զինչ են կամք այդ»: Այս ինձ թուի թէ և 'ի Հրեայսն կամի մնել որք զօրէնսն ունէին, քանզի և 'ի հինն կարգաւորութեանն էին կամք այդ, ոչ եթէ նախերիցութեամբն, այլ վասն նոցա տկարութեանն թոյլ եւս: Իսկ կատարեալն և հաճոյն՝ նոր կարգաւորութեամբս է: Քանզի և յորժամ բանաւոր պաշտօն կոչեաց զայս առ 'ի խորհրդ 'ի մէջ արկանելոյ ընդ հինն և ընդ այս, այսպէս անուանեաց:

Digitized by Google

“Ասեմ, ասէ, ՚ի ձեռն շնորհացն որ տուեալ են ինձ, որ է յամենեսին ՚ի ձեզ, մի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ խորհել ՚ի զգաստանալ իւրաքանչիւր ոք, որպէս բաժանեաց ած բաժին հաւատոցն”։ Ո առաջինն ասէր՝ թէ աղաչեմ զձեզ գթութեամբն այ. իսկ աստ դարձեալ ասէ՝ ՚ի ձեռն շնորհացն։ Տես զառաքելոյն բարեկարգութիւն. ոչ ուրեք զինքն արժանի հաւատարմութեան վարկանի այսպիսում խրատու և խորհրդակցութեան. այլ երբեմն զգթութիւնն առնու ընդ իւր և երբեմն զշնորհսն։ Ոչ եթէ զիմ ինչ բանս ասեմ, ասէ, այլ զայն որ յայնմ է։ Եւ չասաց եթէ ասեմ ձեզ ՚ի ձեռն իմաստութեանն այ և կամ ՚ի ձեռս օրէնսդրութեանն այ, այլ թէ ՚ի ձեռն շնորհացն այ. միշտ համապազ զերախտեացն յիշեցուցանել նոցա, որպէս զի ևս բարեբարոյս առնիցէ զնոսա. և ցուցանէ թէ այնմ ևս պարտական էին, այսինքն է ասացելոցն ունկնդրութեան։

“Ամենեցուն որ ՚ի ձեզդ են”։ Ոչ եթէ այսմ առնուն և կամ այնմ անուան, այլ իշխանաց և որք ընդ իշխանութեամբ են, աղքատաց և ծառայից, ազատաց և իմաստնոց, արանց և կանանց, ծերոց և երիտասարդաց. ամենեցուն հասարակաց են օրէնքս այս, քանզի տէրունական իսկ է այս։ Եւ անաղարտ զբանն գործէ, ամենեցուն իսկ առ հասարակ առաջի դնելով զայսպիսի զվարդապետութիւն որք էին պարտականք և որք չէին. որպէս զի նոցա առաւելին այլք զիւրեա ուղղեսցեն և ընդունիցին զխրատն։ Եւ արդ զի՞նչ կամիցիս ասել, ասա ինձ. զայն՝ թէ “Մի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ”։ Ո մայրն ամենեցուն բարեաց կամի ցի ՚ի ներքս մուծանել զխոնարհութիւնն, իւրում վարդապետին նմանեալ։ Որ օրինակ և յորժամ նա ՚ի լեառնն ել և հանդերձեալ էր զաւետարականն զբանն յօրինել զխրատու, աստի նախ արար սկիզբն և զայս եդ հիմն վարդապետութեանն ասելով այսպէս՝ թէ “Երանի աղքատաց հոգւով զի նոցա է արքայութիւն երկնից”, սոյնպէս և սա յաւանդութենէ անտի ՚ի կարգաւորական ՚ի բանն փոխեցաւ։

Եւ իբրև ուսոյց բարձրագոյն իսկ զառաքինութենէն և զքանչելի զզենումն և զպատարագն զայն ՚ի մէջ պա-

համօրէնեաց, ապա կամի առ սակաւ սակաւ զայն բովան-դակել, և խրատէ 'ի դէպս իմիք և 'ի խոնարհութենէն առնէ սկիզբն և ասէ. «Մ՛ի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ, քանզի այս են կամք իմ, այլ խոր-հել 'ի զգաստանալ»: Իսկ զոր ասէն այսպիսի ինչ է. ընկալարուք զմիտս իմաստութեան, ոչ զի յանձնապաստա-նութեան զնա 'ի կիր արկանիցեմք, այլ 'ի զգաստու-թիւն: Զգաստութիւն այժմ աստ ասէ ոչ լոկ խորհուրդ ընդ մէջ արկանելով ընդ պղծութիւն և ընդ առաքի-նութիւն, և կամ լոկ թէ զերծանել յանառաքինութիւն, այլ և արթուն և առողջ լինել պարտ է մտօքն. քանզի և այսոքիկ զգաստութիւն կոչին՝ որք անխռով և ողջ զխո-րհրդոց զխելսն պահեցին: Այդոց եթէ որ ոչ 'ի չափա-ւորութեանցն զմիտսն, և ոչ զգաստանալ կարէ, այսինքն է չկա-րէ հաստատուն և ողջ կալ, այլ շաղփաղփի և կարի այնպիսին և քան զամենայն պատկերս ևս մոլեկան է: Զգաստութիւն զխոնարհութիւնն կոչեաց:

«Իւրաքանչիւր որպէս և բաժանեաց Ած, ասէ, ըզ-չափ հաւատոյն»: Վասնզի առ ըրբ շնորհացն զբաշխումն յանձնապաստանութիւն ածին և 'ի սոցանէ և 'ի կողմն-թացեալսն, և տես զիմաստ և զպատճառս ախտին յայտ առնէ և առ փոքր փոքր ձգէ տանի: Վասնզի ասաց՝ թէ պարտ է խորհել և 'ի զգաստանալ. յարեաց 'ի սոյն՝ թէ «Որպէս Ած բաժանեաց իւրաքանչիւր ըստ չափոյ հաւատոյն». հաւատս աստ զշնորհսն կոչէ: Իսկ իբրև ասաց թէ բաժանեաց Ած իւրաքանչիւր ըստ չափոյ հա-ւատոյն՝ սփոփեաց այսու զայն որոյ փոքունցն առեալ էր, և որոյ 'ի մեծամեծսն վայելեալ էր՝ զնա զսիրտ և չետ հպարտանալ. զի թէ Ած բաժանեաց և չէ ինչ 'ի քումմէ ուղղութենէ, էր վասն մեծամտես:

Իսկ եթէ որք զհաւատոյն չափէ շնորհս կոչեալ, այսու ևս մեծապայծառ ցուցանէ խոնարհեցուցեալ զամբարտա-ւանութիւն: Զի եթէ շնորհացն պատճառք են հա-ւատքն, յորում նշանքն լինին և այն յԱյ է, իսկ դու ընդէ՞ր մեծամտիցես. զի թէ նորա չէր եկեալ և մարմ-նացեալ, ոչ ինչ յարգեայ լինէին հաւատքն: Նա ապա ու-րեմն ամենայն սկիզբն բարութեանց 'ի նմանէ է: Իսկ եթէ նա բաժանէ, ապա գիտէ որպէս բաշխէ. քանզի զամենեսին նա արար և ամենեցուն միապէս խնամ տա-

Digitized by Google

նի: Այս որպէս տալն 'ի մարդասիրութենէ եղև, այս-
պէս և ողքան տալն արժան է: Նմանդի ոչ եթէ գլխա-
ւորապէս ինչ ցուցաք զբարերարութիւնս՝ որ է տուումն
պարգևացն, վասն այնորիկ չափով լոյս բաւելոյ ամե-
նեին. զի թէ անարգել կամէր զմեզ, ամողէն 'ի սկզբանն
իսկ չտայր: Իսկ արդ եթէ փրկել և պատուել փու-
թացաւ, յաղագս այսորիկ իսկ եկն և այսչափ բարու-
թիւնս բաշխեաց, և արդ էր վասն ամենեւին և աղմկիս
և 'ի մարդութիւն դարձուցանել զիմաստութիւնն, մե-
ծագոյն քան զանութիւն յանօթ ատենս զքեզ: Նման-
զի որ լոյս բնութեան մարդութիւնն է, այնմ չկայ ինչ
մեղադրութիւն. իսկ որ յիմաստութենէ յիմարութիւն
է, այսպիսին և 'ի ներելոյ զրկեալ գտանի և մեծամեծ
տանջանս ածէ 'ի վերայ իւր:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Այսպիսիքս են որ իմաստութեամբն մեծամեծիցեն
և 'ի վերջին ամպարշտութիւնս անկանիցին. քանզի
չառնէ այլ ինչ մոլոր զոք որպէս զհպարտութիւն: Սա-
տոյ և մարգարէն այսպէս կոչէր զամբարտաւանն զայն ա-
սելովն թէ "Անմիտն զյիմարութիւն խօսի,,: Այս զի
'ի բանիցն իսկ ուսցիս զնորա յիմարութիւնն, լուր զինչ
ասէն. "Ի վերայ աստեղաց երկնից, ասէ, եդից զա-
թոռ իմ, և եղէց նման բարձրելոյն. առից ձեռամբ ի-
մով զաշխարհս որպէս զբոյն և որպէս զձուս մնացեալս
բարձից,,: Այս արդ զինչ յիմարութիւն քան զայս բան
կայցէ: Այս զի իւրաքանչիւր ոք յասացելոց բանից ան-
տի իսկոյն լի են նախատանօք, թէպէտ և յասացելոցն
'ի մէջ ածիցեմք զիւրաքանչիւրոցն՝ ոչ կարեմ ճանաչել
յառաջ և 'ի միտ առնուլ զբանս յիմարին. և այսպէս
մի է ամենեցուն նոցա պակասամտութիւն: Ոչ և այլ
միւս եւս բարբարոս ասէր՝ թէ "Աստուած եմ ես և
ոչ մարդ,,. և միւս եւս դարձեալ. "Միթէ կարող իցէ
սա փրկել զձեզ և ազատեցուցանել 'ի ձեռաց իմոց,,. և
եգիպտացին՝ թէ "Ոչ գիտեմ զտէրն և զԻսրայէլ ոչ
արձակեմ,,. և որ 'ի մարգարէէն անտի ասացեալ ամ-
բարտաւանն էր՝ այնպիսի սա էր, մինչև ասէր 'ի սրտի իւ-

Digitized by Google

բան՝ թէ չիք ած. և Կայէն՝ «Միթէ պահապա՞ն ի-
ցեմ ես եղբօրն իմում»։

Այս արդ հարցանէր արդեօք ճանաչել յառաջ և 'ի միտ առնուլ զբանս մոլորութեանն. քանզի ամենակարհա-ւաճութիւն 'ի չափաւորութէ անհասանելի է և յորմէ եղեն, վասն որոյ և ամենակարհաւաճութիւն իսկ առի՝ որ և մոլորաց իսկ և ամենարարատաւանս գործէ։ Ոչ թէ սկիզբն իմաստու-թեան երկիւղ տեառն է, այլ ուրեմն սկիզբն մոլորութեան է չճանաչել զանէր. զի թէ ճանաչելն իմաստութիւն է, և չգիտելն յիմարութիւն, այս 'ի հպարտութենէ ուրեմն է չգիտելն զանէր. այլ ուրեմն հպարտութիւն վերջին մոլորութիւնն է։ Եւ յաղագս այնր էր և Կայէն, թէպէտ և ոչ առ ած, այլ առ մարդիկ յամենակարհաւաճութենէն անմիտ գտաւ. այլ յետոյ մեծաւ կարօտութեամբն։ Յորժամ անկցի ոք 'ի չափաւոր մտաց անտի, խենէշ և տկար ոգին 'ի հիւանդութենէն լինի։ Զոր օրինակ և մարմին թէ զչափաւոր զխառնուածն կորուսանիցէ, դը-ժուարընկալ եղեալ այնուհետև ամենայն ախտիւքն ծախիցի. նոյնպէս և հոգի յորժամ կորուսցէ զմեծն զոր ըստ բնութեանն ունէր զխոնարհութիւնն, և տկար իմն ախտաժետ ընկալեալ՝ ապա երկչոտ և զայրացող և ան-միտ լինի, նա և զինքն ևս տգիտանայ այնուհետև. և որ զինքն տգիտանայցէ՝ որպէս արդեօք որ 'ի վերոյ քան զնա իցէ՝ կարէ 'ի միտ առնուլ։ Զոր օրինակ և որ զխե-լագնորութիւնն ունիցի, յորժամ զինքն չճանաչիցէ, ա-պա և ոչ որ առաջի աչացն և առիցն կայ՝ գիտիցէ, նոյն-պէս և ակն յորժամ ինքն կուրասցի, ամենայն իսկ առ հասարակ և այլ անդամքն խաւարին։

Նոյնպէս և 'ի հպարտութենէ և 'ի խստութենէ աղա-ղակի իրք գտանելին լինել։ Վասն որոյ և սոքա ևս հէքք և թշուառականք են քան զայնոսիկ որք շամշեալքն և մոլեգնեալքն իցեն և քան որք բնութեամբն յիմարք ի-ցեն. քանզի զոյգ նոցին շարժեն զծառդսն և նմանք նո-ցին են գործք և անընդունակք, և պատուհասք են որպէս և նոքա։ Բայց սոքա չողորմելին յումեքէ որպէս և նո-քայն, և փախեալ են 'ի մտաց որպէս և զնոսայն. այլ չունելին ներքուստ սոքա, բայց ատելի են միայն յամենե-ցունց, և միտս մի և նոյն է երկոցունց, և 'ի ներքոյ թողութեան նոքա զրկեալ գտանին։ Այլ ոչ յիրացն

Digitized by Google

միայն, այլ և 'ի կերպարանացն իսկ են այսպիսի կատակա-
նաց: Ո՞ր վասն, ասա ինձ, զպարանոցդ 'ի վեր ձգես,
ընդէ՞ր գնաս 'ի ծայրս մատանցդ, հի՞մ զյօնսդ 'ի վեր
պարզես, ընդէ՞ր զլանջսդ ուռուցանես. դու որ չկարես
մազ մի սպիտակ առնել կամ թուխ, և որպէս թէ ա-
մենակալ ոք իցես՝ այնպէս ամբարտաւանս ձեւես: Ասաս
ինձ թէ կամէիր թէ թեւք ես բուսանէին քեզ, որպէս
զի մի 'ի վերայ երկրի գնայցես: Որդեաք և թռչուն ես
ցանկանայցես բնութեամբ լինել, այլ չկարես. քանզի
մարդ ես բնութեամբ և լոկ ընդ վայր ձեռնարկես թռչ-
չել, թէպէտ ընդ միտսդ 'ի ներքոյ թռչես:

Այլ արդ զի՞նչ զքեզ կոչեցից որով կարացից 'ի բաց
ջնջել զայդպիսի ամբարտաւանութիւնդ և զհպարտու-
թիւնդ: Այլ թէ ասեմ զքեզ զազազ և անհուն կամ
ծուխ և փոշի, ասացի զյղփուն և զանարգ բնութեանն,
այլ չև ևս որպէս պարտն էր կարացի զօրինակն 'ի մէջ
բերել. քանզի ամենայն իրօք կամիմ զնոր բարբառումն
տուչարման նոցա յանդիման կացուցանել: Այլ արդ որ-
պիսի ինչ պատկեր կարիցեմք յօդել ընդ սմա. ինձ
թուի թէ ծեծած վիշապ և յամենայն կողմանց բորբո-
քեալ. քանզի և նորա համարին մինչդեռ ունին 'ի ձե-
ռին թէ լուցեալ իցէ և կայ մնայ ինչ. և յորժամ 'ի
ձեռացն 'ի վայր ընկենուցուն, չիջեալ լինի՝ քան զամե-
նայն աճիւն ևս վատթարագոյն: Այսպիսի են և նոքա
ազինքն. քանզի զընդունայն հպարտութիւն նոցա և զայլն
ինչ ընդդիմահարութիւն կարող է կործանել և 'ի բաց
լուծանել: Քանզի բարձրամտին հարկ է եթէ և ակար
իցէ, զի չէ առողջ բարձրութիւն նորա, այլ որպէս պղպ-
ջակք զի դիւրաւ հեղձնուն՝ այնպէս և նոքա երագ կորն-
չին: Իսկ արդ եթէ անհաւատ լինիս, տուր ինձ ըղ-
խրատն և զմեծամիտն և զաղքատն զերկնչոտ. և յոր-
ժամ երեկոյ լինի, նա 'ի դուզն ինչ պատահմանէ որ-
պէս զխոտ փտեալ և անդէն ընդ վառեալ և աճիւն
եղեալ, իսկ սա որպէս զհաստ փայտի զմտութիւն ոչ
լուցանէ երագ և 'ի բազում ժամանակս պահէ զկայն և
տոկայ բոյն: Այնպէս և հոգին, վասն զի որ ընտիրն և
հաստատունն է, ոչ լուցանի դիւրաւ և ոչ չիջանի. իսկ
նա 'ի միում վայրկեանն ժամու դիւրաւ ծախի և չքանայ

Այլ արդ զայս իմացեալ զխոնարհութիւն յանձն առ-

ցուք, վասն զի չիք ինչ քան զնա զօրաւորն, այլ և քան զմեծամեծ ուժեղ է և քան զադամանդ հաստատուն և քան զաշտարակ և զքաղաքս ամուր և քան զպարիսպ և 'ի զգուշութեան պահէ զմեզ և քան զամենայն սատանայական մեքենայս բարձրագոյնս կարգէ զմեզ. իսկ ամբարտաւանն և մեծամիտն և 'ի դղղն իմքէ դիւրաւ ըմբռնի, որպէս ասացի իսկ առաջ՝ եթէ և քան զաղաղաջանս ևս դիւրաւ հեղձնու, և քան զսարդիոստայն ևս երագ պատառի, և զօրէն ծխոյ լուծանի: Արդ մեք 'ի վերայ վիմին հաստատուն կացցուք, և զայն թողեալ զայսր զհետ երթիցուք. սոյս այնպէս և 'ի մերձակայ կեանսս հանգիստ գտանեմք, և անդ 'ի հանդերձեալ բարութիւնսն վայելեսցուք շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ որում հաւր փառք հօր հանդերձ հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

## ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

"Որ օրինակ 'ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, և անդամքն ամենայն ոչ զնոյն գործ ունին, նոյնպէս և բազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս, որպէս զի և եմք միմեանց անդամք":

Դարձեալ զնոյնս ասէ 'ի կիր արկանէ, որպէս և առ կորնթացիսն զայնպիսի զչար ախտ ամբարտաւանութեան շիջուցանէր: Այս մեծ իսկ է դեղոյս այսորիկ զօրութիւն, և մեծ սաստի պէտք էին առ 'ի յուղղելոյ զայնպիսի զամբարհաւաճութիւն: Ո՞ր վասն մեծամտես, ասէ, դու, և կամ դարձեալ զընկերն ընդէ՞ր անարգեալ անգոսնես. ո՞չ ապաքէն ամենեքեան մի մարմին եմք և մեծամեծք և փոքունք. յորժամ ընդ գլխոյն միաւորիմք, այնու լինիմք միմեանց անդամք, և արդ ընդէ՞ր անջատեալ բաժանես զքեզ ամբարտաւանութեամբ, հե՞մ յանցեթ առնես զեղբայրն. զի որպէս նա քո անդամ է, նոյնպէս և դու նորա, մանաւանդ թէ այսու իսկ եմք պատուակից:

Digitized by Google

Եւ արդ երկուս ինչ եդ, որով բաւական էր զնոցա հպարտութիւնն 'ի բաց ընջել. և զի միմեանց անդամք եմք, ոչ եթէ փոքրն մեծին միայն, այլ և մեծն կրսերոյն. և զի ամենեքին մի մարմին եմք։ Մանաւանդ եթէ երիս իսկ եդ, և եցոյց եթէ պարգևք են զորս ընկալաք։ Եւ արդ մի ինչ մեծամտեր. ոչ եթէ գտխնդրեցեր և գտեր, այլ յԱյ տուաւ քեզ. սորին վասն և յորժամ զշնորհացն ճառեաց, չասաց թէ ոմն առաւել և ոմն նուազ ընկալաւ. այլ զինչ. եթէ այլապէս շնորհս ունիցին. ոչ եթէ առաւել և կամ նուազ ինչ, այլ ազգի ազգիս. զի թէպէտ և չհամարեցար մեծամեծս ինչ գործել, սակայն 'ի մարմնոյ նորա ես։

Եւ ապա այնուհետև սկսեալ 'ի շնորհաց անտի յուղղութիւնս անդր տանի։ Ասաց եթէ մարգարէութիւն և պաշտօն և որքան սոյնպիսիք ինչ, տանի յառաջ ըզբանն յողորմածութիւնս և 'ի փոյթն և յօգնութիւնս։ Եւ քանզի ամենից ընտանի իսկ էր առանձին յառաքինութեան կալ և չունէին մարգարէութեան շնորհս, ապա եցոյց եթէ և այն շնորհք են, մանաւանդ թէ ևս մեծագոյն՝ զոր և առ կորնթացիսն եցոյց. և այնչափ մեծագոյն, որպէս զի սա վարձս ունի, իսկ միւսն չունի ինչ երախտիս, վասն զի բոլորն իսկ պարգևք են և շնորհք, վասն այնորիկ ասէ՝ թէ "Ունիմք շնորհս ըստ շնորհացն որ տուեալ են մեզ ազգի ազգիս, եթէ մարգարէութիւն ըստ չափոյն հաւատոց"։ Եւ քանզի բաւականութեամբ իսկ միխիթարեաց զնոսա, կամի զի պատրաստք և փոյթք գտանիցին. և ցուցանէ թէ նոքա ետուն բարւոք գտանել առ 'ի ստանալն զմեծն և զնուազն զշնորհսն։ Ասէ թէ և յԱյ այսպէս տուան, որպէս յորժամ ասիցէ՝ թէ "Իւրաքանչիւր ումեք որպէս և Ած բաժանեաց ըստ չափոյ հաւատոցն". և դարձեալ "ըստ շնորհացն, ասէ, որ տուեալ են մեզ". որպէս զի զիջուցանիցէ զամբարտաւանութիւնն նոցա։ Ասէ՝ 'ի ձէնջ եղև սկիզբն, որպէս զի այսու զարթուցանիցէ զծուլագոյնսն. զոր և առ կորնթացիսն իսկ զերկուսին զայսոսիկ արկ 'ի կիր։ Յորժամ ասիցէ՝ թէ "Նախանձաւոր լերուք շնորհացն", եցոյց թէ նոքա եղեն պատճառք զանազանութեանս այսմիկ որ տուան. յորժամ ասիցէ՝ թէ "Զայս ամենայն ազդէ մի և նոյն հոգի և բաժանէ իւրաքանչիւր որպէս

և կամի,,, զայն կամի կազմել թէ մի ոք մեծամտիցէ առաւել շնորհօքն. ամենայն ուստեք ջանայ ողջացուցանել զախտն նոցա։ Նոյնպէս և սա գործէ, և դարձեալ կանոնէ զանկեալսն, ասէ. "Եթէ մարգարէութիւն ըստ չափոյ հաւատոցն,,։ Զի թէպէտ և շնորհք են, ասէ, այլ ոչ եթէ ընդ վայր ինչ զեղուն, այլ ըստ չափոյ որք ընդունիցինն՝ տուեալ լինին. այնքան բղխէ որքան զտանէ զամանն 'ի հաւատոց մատուցեալ։

"Եթէ պաշտօն ըստ պաշտամանն,,։ Ընդհանրական իմն իրս դնէ աստ. քանզի և առաքելութիւն պաշտօն է, և ամենայն իսկ հոգևոր գործ պաշտօն լինի։ Ի և առանձին իսկ իրացս այսոցիկ անուն անտեսութեան։ Իսկ աստ տիեզերական կամեցաւ զբանն դնել, յայն սակս այսպէս անուանեաց։ Նոյն ասէ՝ թէ "Որ ուսուցանէն ըստ վարդապետութեանն,,։ Տես որպէս առանց զանազանութեան դնէ զայս զփոքրն առաջին։ Դարձեալ խրատէ զնոսա մի հպարտանալ և ամբարտաւանել. "Որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն,,։ Եւ այս տեսակ է վարդապետութեան. "Զի եթէ իցեն, ասէ, 'ի ձեզ բանք մխիթարութեան, առ ժողովուրդն ասասջիք,,։

Նոյն ցուցանէ թէ չէ մեծ օգուտ յառաքինութենէն, թէ ոչ կամօք և յօժարութեամբ լինիցի ըստ օրինացն՝ ածէ զամփոփն՝ թէ "Որ տայն առատութեամբ,,։ Չէ, ասէ, տալն միայն բաւական, այլ պարտ է բազում իսկ յանձնառութեամբ զայն առնել։ Զառատութիւն ամենայն ուրեք իսկ յիշէ։ Նա և կուսանքն ունել ունէին իւղ. և քանզի զառաւականն չունէին, յամենայնէ իսկ զրկեցան։ "Որ վերակացուն է փութով,,։ Չէ բաւական վերակացուն միայն լինել, այլ ամենայն փութով և յօժարութեամբ։

"Որ ողորմի զուարթութեամբ,,։ Ոչ անդր չէ բաւական ողորմելն միայն, այլ բազում առատութեամբ և անտրտում բարուք պարտ է առնել զայն. մանաւանդ ոչ առանց տրտմութեան միայն, այլ զուարթութեամբ և խնդալով. քանզի չէ զոյգ չտրտմելն և խնդալն։ Զայն զայս և առ Կորնթացիսն գրեալ բազում փութով կաղմէր, յառատութիւն յորդորեալ զնոսա այսպէս ասէր. "Որ խնայելովն սերմանէ, պակասագոյնս հնձեսցէ. և որ օրհնութեամբն սերմանէ, օրհնութեամբ և հնձո-

մէջ»։ Այլ առ ուղղելն զպատրանս նոցա զայս դնէ՝ թէ մի՛ 'ի տրտմութենէ և 'ի հարկէ, վասն զի երկայնութեանց այսոցիկ պարապ է մերձ լինել առ այն որ ողորմին, և անմտաբանանձ առնել և յոյժ հեշտութեամբ։ Յաղագս էր վասն ողջաւս և լաւ յորժամ զողորմութիւն առնես. ընդդէ՞մ ցաւէ և երեսօքդ 'ի վերայ անկանելն յորժամ ողորմիցիս, և կարօ-տանես զպատուել ողորմութեանն. թէ ոչ առա, ընդդէ՞մ ո-ղորմիս. այլ անագորոյն ես և տմարդի. զի եթէ դու ձգաս յողորմելոյն, ո՞րպէս զնա որ 'ի տրտմութեանն է՝ կարես մխիթարել։ Սիրելի է քո, մի չար ինչ կարծիս զնմանէ յանձն առնուլ յորժամ խնդալից շնորհեսցես. քանզի չիք այնպէս ինչ որ անվայելուչ թուի մարդկան որպէս զայն որ յայլոցն ինչ առնուցուն։ Որ եթէ ոչ յոյժ ամենայն առաւելութեամբ զկարծիս չարեաց 'ի բաց մերժեսցես և 'ի միտ առնուցուս եթէ առնուս մա-նաւանդ քան թէ տաս, 'ի վերայ կարծանելոյ զնա որ առ-նուն՝ քան եթէ կանխեսցես։ Սորին վասն ասէ՝ թէ Ն· «Որ ողորմին զուարթութեամբ»։

Այլ արդ ո՞վ իցէ այնքան յիմար եղեւ, որ մինչ զարքայութիւնն երկնից առնուցու՝ և տրտմեսցի. ո՞վ իցէ որ մեղաց թողութիւն ընդունիցի՝ և ցածնեալ տխուր կայցէ։ Այլ արդ մի 'ի ծախս ընչիցն հայիցես, այլ որ 'ի ձեռն ծախուցն շահիցն զարծիս ընդ այն խնդա. զի եթէ որ ան-յայտն սերմանէ՝ այնպէս խնդայ, առաւել ևս առաւել որ յերկինս սերմանէ։ Օր տաս թէպէտ և սակաւ տայցես, շատ եառուր. իսկ եթէ տխրութեամբ տայցես, թէպէտ և բազում ինչ եառուր, սակաւ զարծեցեր զատուրան։ Որպէս և այրին բազում տաղանդողացն յաղթեաց եր-կու խտրևէշզքն. վասն զի միայքն զուարթութիւն ապաղա-բերէին։ Այլ զի՞արդ կարիցեմք, ասեն, վերջինս աղքա-տութեամբն կեալ յորժամ ամենայն յօժարութեամբ զինչսն ցրուիցեմք։ Հարցիր ցայրին և ուսանիս զպատ-ճառսն, և տաս 'ի միտ առնուս թէ ոչ աղքատութիւնն գործէ զանձկութիւն, այլ կամք յօժարութեանն իսկ, նա և որ հակառակ սմին է՝ զայն առնեն։ Վասն զի զոյ հնար և յաղքատութեան առատամիտս գտանել և 'ի մեծութեանն աղքատամիտս։ Վասն այսորիկ 'ի տուրսն զուարթութիւնն խնդրեաց, և յողորմելն լրջմտութիւն, և 'ի վերակացութեանն զփոյթ. զի ոչ եթէ ընչիւք մի-

այն կամի զմեզ եթէ օգնիցեմք կարօտելոցն, այլ և բա-
նիւք և խրօք և մարմնով և այլովք ամենայնիւ: Նոյնց և
զգլխաւորական վերակացութիւնն, այս է զվարդապե-
տութիւնն, քանզի այսոքիկ են կարևորք և որ օգուտն
իսկ կերակրիչ է. ապա եկն և յայս որ յընչիցն լինի և
'ի ձեռն այլ իրացն: Եւ ցուցանէ թէ երբ կազմեցի այն՝
զմայրն սոցին 'ի ներքս ածէ, այսինքն և զսէրն:

«Սէր, ասէ, առանց կեղծաւորութեան»: Ոչ ե-
թէ զայն ունիցիս, ոչ ընչիցն ծախոց զգայցես և ոչ աշ-
խատութեան մարմնոյ, ոչ ջանի բանից, ոչ քրտանց
առաստաւորութեան. այլ ամենայնի քաղցրութեամբ համ-
բերես, թէպէտ մարմնով իցէ կամ ընչիւք կամ բա-
նիւք կամ այլով իւիք որով կարօտ է ընկերն օգնելոյ,
զամենայն իսկ յանձն առնուս: Սոյնպէս և նոյն ոչ միայն
զտուրսն պահանջէ՝ այլ և զառատութիւնն, և ոչ լոկ
զվերակացութիւնն միայն՝ այլ և զփոյթն, և ոչ զողոր-
մածութիւնն միայն՝ այլ և զջերմութիւնն, սոյնպէս
և ոչ լոկ զսէրն՝ այլ և զանկեղծաւորն. և այն իսկ է
սէր: Եւ եթէ այս լինիցի, ապա այլն ամենայն զհետ
գայ: Քանզի և որ ողորմին, զուարթութեամբ ողոր-
մի, զի իւրում անձինն տայ. և որ վերակացուն է, փու-
թով է վերակացու, զի իւրում անձին է վերակացու. և
որ տայն՝ առատութեամբ տանէ, քանզի իւր շնորհէ:

Եւ ապա վասն զի է և 'ի չար իրս սէր՝ որ յանառա-
կութեանց և 'ի գիճութեանցն լինի և կամ յընչիցն
յափշտակութենէ զոր 'ի միասին խորհեն. և կամ զոր
'ի համագամակայն և յարբեցութեանն ունիցին, և արդ
յայսպիսեաց ասաւ կամեցեալ սրբել զնոսա՝ ասէ. «Ա-
տեալ զչար»: Եւ չասաց եթէ մերժել, այլ թէ ատել,
այլ և յոյժ իսկ ատել. քանզի այս բանք 'ի բազում
տեղիս որպէս հրաման տուեալ 'ի սմանէ ասին. որպէս
յորժամ ասիցէ՝ թէ ատեկալութեան մեռանք և փրկու-
թեան: Եւ վասն զի են ոմանք որ թէպէտ և չգործեն
զչար իմն, սակայն զնոյն ցանկութիւն 'ի սրտին ունին.
յաղագս այնորիկ ասաց՝ ատեալ զչար. Նա և զմիտսն
ես կամի սրբել և բազում թշնամութեամբ մեզ ընդ մեղսն
ունել և պատերազմող և ատելի վարկանել: Եւ արդ
մի զի լուար յինէն, ասէ, թէ սիրեցէք զմերձաւորս, հա-
մարիցիք եթէ մինչև ցայն վայր եւս հրաման, որպէս

Digitized by Google

զի և ընդ չարսն գործակից լինիցիք. այլ որ ինչ սորին հակառակքն են, ասէ, օրինադրեմ. ոչ միայն 'ի վարուցն, այլ և 'ի մերձաւորութենէ նոցա որք 'ի չարիսն են՝ օտարանալ ձեզ. և ոչ միայն 'ի մերձաւորութենէ նոցա օտարանալ ձեզ, այլ և մեծաւ առաւելութեամբ 'ի բաց դառնալ 'ի նոցանէն և ատել:

Իսկ ոչ միայն այսոքիւք շատացաւ, այլ և զառաքինութեն արգասիս 'ի ներքս ածէ ասելովն՝ թէ "Զհետ երթալ բարեաց": Իսկ չասաց թէ առնել միայն, այլ և յամենայն ժամ յայն խոկալ և 'ի նմին կալ. քանզի զայս հրամայէ ասելովն՝ թէ զհետ երթայք: Այնպէս և այլ կամեցեալ զուգել զայրն ընդ կնոջն, ասէր՝ թէ "Յարեսցի 'ի կին իւր": Նոյն և զպատճառսն ասէր որով պարտիմք սիրել:

"Յեղբայրսիրութեան առ միմեանս գթածք": Եղբարք էք, ասէ, և նոյն երկունքն ծնան 'ի վերայ ամենեցունց. արդ եթէ այդպէս է, իրաւունք են սիրել զմիմեանս: Զայս և Մովսէս որք յԵգիպտոս մարտընչէին ընդ միմեանս ասէր՝ թէ "Արք եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս": Զի յորժամ վասն արտաքնոցն՝ ասէր թէ հնար իցէ ձեզ ընդ ամենայն մարդկան խաղաղութիւն կալջիք. իսկ յորժամ վասն ընտանի իւրոցն՝ ասէր յեղբայրսիրութեան առ միմեանս գթածք: Անդ ընդ չկամեսն խնդրայ, և ոչ եթէ ատել և 'ի բաց խոտորել 'ի նոցանէն. իսկ աստ սիրել, և ոչ լոկ սիրել, այլ և գթալ. քանզի ոչ միայն, ասէ, անկեղծ պարտ է առնել զսէրն, այլ և յոյժ զեղմամբ ջերմեռանդն: Զի՞նչ օգուտ է, ասէ, թէ սիրէ ամենենց, և ոչ ջերմ սիրով սիրել: Վասն որոյ և ասաց՝ թէ "առ միմեանս գթածք", այսինքն է թէ ջերմագոյնս սիրեա, մի կար մնար յայլմէ սիրիլ, այլ դու նախ յառաջեա և սկսիր. և այսպէս առցես և զնորա սիրոյն զվարձս դու պտղաբերես:

Իսկ իբրև ետաց զպատճառսն որով պարտիմք սիրել, ապա ասէ զայն ուստի անշարժ մնայ սէրն. "Ի պատիւ, ասէ, նախամեծար վարկանիջիք": Վասն զի 'ի սմանէ լինի սէր, և եղեալն առաւել հաստատուն կայ: Իսկ ոչ այսպէս սիրելիս առնէ, որպէս յորժամ պատուովն փութամք յաղթել ընկերին: Իսկ ոչ սէր միայն է, այլ և պատուոյն առաւելութիւն յայսմանէ լինի. վասն զի

յառաջ ասացեալքն ամենայն 'ի սիրոյն են, խոկ սէրն 'ի պատուոյն, որպէս և պատիւն 'ի սիրոյն։

Այլ մեզ զի մի միայն պատուիրեցաք, այլ և այլ իմն խնդրէ առնելով. «Ի փոյթ, մի վեհերոտք»։ Վասնզի և այս զսէրն ծնանի յորժամ պատուոյն և զվերակացութիւն ցուցանիցեմք. քանզի ոչ ինչ այլ այսպէս որպէս զպատիւն և զանեսութիւնն գործէ զսէրն։ Վասնզի չէր բաւական սէրն միայն, այլ պէտս ունի և այսմիկ. մանաւանդ թէ և 'ի սիրոյն իսկ և այս լինի, որպէս և սէրն իսկ սովոր լինի ջերմագոյն, և մեծապէս կազմիչք են։ Այլ քանզի են ոմանք որ մինչդեռ սիրեն և ձեռն ոչ կարկառուն ունիք, վասն այսորիկ յետ կազմեալ չինեն զսէրն։

Այլ զխօսք լինիցիմք 'ի փոյթ առաւել վեհերոտ. Յօժաժամ հոգւովն եռամք, որպէս ասէ. «Հոգւով եռացեալք»։ Տեսանես զի ամենայն ուրեք զկարգաւորութիւն խնդրէ։ Ոչ ասաց լոկ եթէ սէր, այլ թէ առատութ սէր. և կամ թէ վերակացու լեր, այլ թէ փութով. և կամ թէ ողորմեցարուք, այլ լրջմտութեամբ. և չասաց թէ պատուեցէք լոկ, այլ թէ նախամեծար վարկանիցիք. և չասաց թէ սիրեցէք, այլ թէ անկեղծ սիրով. և դարձեալ չասաց լոկ թէ հրաժարեցէք 'ի չարեաց, այլ թէ ատեցէք. և չասաց լոկ թէ կալարուք զբարութիւն, այլ թէ զհետ երթայք. և չասաց դարձեալ լոկ թէ սիրեցէք, այլ թէ գթացէք. և ոչ եթէ փութացէք, այլ թէ մի վհերոտք լինիք. և չասաց թէ զհոգիդ ընկալարուք, այլ թէ հոգւով եռացէք, այսինքն է զի ջերմք և հզօրք լիցիմք. Զի թէ զայնպիսի ունիցիմք զոր յառաջն ասացաք, կարեմք ձգել 'ի մեզ զհոգին. և եթէ նա առ քեզ մնայ, առաւել յայլոյն զքեզ փոյթ գործէ, և ամենայն ինչ դիւրաւ 'ի հոգւոյն և 'ի սիրոյն լինի, վասն զի երկաքեան ջերմագոյն զքեզ գործեն։ Զանեսանիցես զցուլսն, որոց զխառըղխ կրակին 'ի վերայ միանմանցն ընկեցեն, որպէս սաստիկ և ուժեղ բազմաց թռուցեն մինչև չկարիցէ ոք 'ի դէմս հարկանել նոցա։ Այսպէս և դու սաստկագոյն թռուիս սաստիկ և ուժեղ, և չկարիցէ քեզ 'ի դէմս հարկանել յորժամ դու յերկուքանչիւրոցս յայսցանէ վառեալ զգայցես։

«Տեառն ծառայեցէք»։ Վասնզի այսու ամենայնիւ է ծառայել նմա. որպէս զի յորժամ ասիցէ՝ թէ զոր ինչ

առնիցես եղբարն քում, 'ի տէրն քո երթայ. և զոր ինչ չարչարիս, այնպիսի վարձս վարկանի քեզ: Տեսանեմն ուր առաքեալ եհան զմիտս որք զայսպիսիսն գործեն: Նոյն ցուցանէ՝ թէ իւ վասն բոց հոգւոյն:

«Յուսով խնդացէք, ասէ, նեղութեան համբերեցէք, յաղօթս ժուժկալեցարուք»: Քանզի այս ա-մենայն է բորբոքումն հոգւոյն այնորիկ: Այլ վասն զի զըն-չեցն զծախս պահանջեաց և զմարմնոյ զաշխատութիւնս և զվերակացութիւն և զթոյլ վարդապետութեան և զայն ամենայն ջան, օծանէ դարձեալ զնահատակն յետ սիրոյն և հոգւոյն 'ի ձեռն յուսոյն: Քանզի ոչ այլ ինչ այնպէս զօրաւոր գործէ և անվեհեր առ ամենայն ինչ զհոգին որպէս յուսոյն քաջալերութեան: Նոյս և նա քան զյուսալ 'ի բարութիւնսն այլ ինն դարձեալ մատուցա-նէ, արութիւնն: Այլ վասն զի յայս համբերելոյն էր, ասէ. «Նեղութեան համբերեցէք»:

Այլ զի յառաջ քան զհանդերձեալսն տուեալսն առ ժա-մանակէս ինչ մեծ լաւութիւնս ընձեռեսցեն նեղութիւնքն, այսինքն է ժուժկալս և ընտիրս լինել, յետ այսորիկ մեծ ևս օգնութիւն մատուցանէ ասելովն՝ թէ «Յա-ղօթս ժուժկալք լերուք»: Այլ արդ որովհետև սէրն դիւրին գործէ և հոգին օգնէ և յոյսն թեթևացուցա-նէ և նեղութիւնքն ընտիր ցուցանեն և կազմեն առ 'ի համբերել ամենայնի քաջութեամբ, և յետ այսոցիկ ունիս և այլ ևս մեծագոյն զէն զաղօթսն, և որ 'ի պա-ղատանացն լինի օգնութիւնն, ապա և զի՞նչ աշխատու-թիւն 'ի պաղատանացն իցէ. և ոչ ինչ: Տեսանես որ-պէս ամենայն ուստեք յարդարեաց զնահատակն և թե-թևացոյց զհրամանսն:

Եւ յետոյ դարձեալ որպէս զողորմածութեանն բանն հարկանէ. մանաւանդ ոչ լոկ զողորմածութեանն, այլ զայնմանէ որ 'ի սուրբսն լինիցի: Քանզի յառաջագոյն ասաց՝ թէ որ ողորմի լռջմտութեամբ, զամենեցուն իսկ զպէտսն ասաց. իսկ աստ վասն հաւատացելոց ասէր. վասն որոյ 'ի սոյնս յարեալ ասէր՝ թէ «Ի պէտս սրբոց հաղորդեցարուք»: Այլ չասաց թէ տուք նոցա զպէտսն, այլ թէ հաղորդեցարուք 'ի պէտս նոցա. ցուցանէ թէ մեծագոյնս առնուն քան թէ տան. և քանզի շահաւո-րութիւն են իրքն, յաղագս այնորիկ հաղորդութիւն

Digitized by Google

կոչի։ Մ՛ատուցանես դու զանձն, մատուցանեմ և ես քեզ համարձակութիւն առ Տր։

«Օտարասիրութեան զհետ երթայք», ասէ։ Ոչ ասաց թէ գործեցէք. խրատէ զմեզ մի կալ մնալ կարօտելոցն առ մեզ, այլ մեք ընթասցուք և զհետ երթիցուք։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Այսպէս Պաւղոս, նոյնպէս և Աբրահամ արար. զի ընդունելին իսկ զօրն 'ի նմին ծախէր և կայր մնայր բարերաց որոյն, և տեսեալ կայտառէր և ընդ առաջ ընթանայր և երկիր պագանէր 'ի վերայ երկրի և ասէր. «Տէր, թէ գտի շնորհս առաջի քո, մի զանց առնէր 'ի ծառայէ քումմէ»։ Այլ ոչ թէ որպէս մեք յորժամ զտեսանեմք զօտար և կամ զաղքատ ոք, զյօնս 'ի վեր պձնեցեմք և պատասխանւոյ անգամ արժանի չվարկանիցեմք զնոսա, թէպէտ և բիւր պաղատանօք կակղիցեն զմեզ։ Այլ թէ յանկարծ հրամայեսցեմք ծառայիցն տալ փոքր մի արծաթ, վարկանիմք թէ բնաւ իսկ զամենայն ուղղեցաք։ Այլ ոչ թէ և նա այսպիսի ինչ. այլ ծառայի կերպարանօք պաղատէր, և այն զի չգիտէր իսկ թէ զով հանդերձեալ է ընդունել. իսկ մեք յայտնապէս գիտեմք թէ զՔրիստոս ընդունիմք, սակայն և ոչ այնպէս լինիմք համբոյր։ Նա աղաչէր և պաղատէր և երկիր պագանէր, իսկ մեք թշնամանեմք ևս զայնոսիկ որ առ մեզն մերձենան և խնդրեն։ Այլ նա ինքն ամենայնիւ զամենայն ինչ առնէր, իսկ մեք և ոչ ծառայիցն հրամայեմք։ Ապա եթէ զսեղանն կամիցիս տեսանել զորս առաջի նոցա յօրինեաց, բազում առատութիւն պատուասիրութեան գտանես. առատութիւն ասեմ ոչ որ յառաւելութենէ ընչիցն լինի, այլ որ 'ի յօժարութենէ բարուցն մեծութիւն գործի։

Վասն զի շահավաճառք էին յայնժամ, այլ ոչ ոք 'ի նոցանէն այսպիսի ինչ կատարեաց. որչափ այրիք էին յԻսրայէլի, այլ ոչ ոք 'ի նոցանէն եղև ասպնջական Եղիայի. քանզի ընչաւէտք շահաւէտք էին դարձեալ առ Եղիսէիւ, այլ սոմնացին կթեաց զօտարասիրութեանն զպտուղ. որպէս և յայնժամ Աբրահամ՝ որ ընդ առատութեանն և զբարիոք յօժարութիւնն եցոյց. ընդ

որ մանաւանդ է պաշտօնական, զի և չգիտէր իսկ թէ որպիսիք ոյք իցեն որք եկիցեն: Նոյնպէս և դու միաբանհամձեր հաւատովս, քանզի վասն Քրիստոսի ընդունիս: Նաև եթէ բազում անգամ 'ի խոյզ և 'ի խնդիր արկանիցես, իցէ զի յընտիր և յառաջինն արանց վրիպեսցիս և զայնպիսի զվարձս կորուսանիցես: Այլ այն թէ չիցէ ոք ընտիր զոր ընդունիցիս, չէ քեզ ինչ վնաս, այլ և վարձս ես ընդունիցիս. "Որ ընդունի, ասէ, մարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ": Իսկ յընդդիմայր քննութեանցն բազում անգամ և զզարմանալի արարմբք զանց առնիցէ և զատելաց է:

Այլ արդ մի այսուհետև զվարս և զգործս 'ի բազում քննութիւնս արկանիցեսցե. զի յոյժ անմտութիւն է այս, վասն հացի միոյ զամլորայինն կեանս խուզեսցես: Զի թէպէտ և մարդասպան ոք իցէ և կամ աւազակ այնպիսին, ապա մի հացի և փոքր մի արծաթոյ չհամարիցիս արժանի: Իսկ տէրն քո և զարեգակն ծագէ նմա. դու և աւուրն կերակրոյ զնա արժանի չվարկանիցիս: Այս զես մեծագոյնն գնեմ. զի թէպէտ և հաւատեաւ իսկ գիտիցես թէ բիւր չարեաց լի իցէ, սակայն և ոչ այնպէս ունիս պատճառանաւորութիւն զրկելով զնա յաւուրն կերակրոյ: Նորա ծառայ ես որ ասէրն. "Ոչ գիտէք որոյ հոգւոյ էք". Նորա աշակերտ ես որ բժշկէր զքարկոծիչսն իւր, մանաւանդ թէ որ խաչեցաւն իսկ վասն նոցա: Այլ մի ինչ ասեր թէ զայլս սպան և չար է. Թէպէտ և զքեզ ինքն իսկ համարձակեալ է սպանանել, և այնպէս մի անտես առներ զնա մաշեալ 'ի սովոյ: Վասն զի այնուիկ աշակերտ ես որ խաչահանուացն փրկութեանն փափաքէր, որ ասէր 'ի նմին իսկ 'ի խաչին՝ թէ "Հայր թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն": Նորա ծառայ ես որ զապտակիչսն բժշկեաց, որ զթշնամանիչսն իւր 'ի վերայ խաչին բժշկեաց: Այլ արդ զինչ զոյգ այսմ կայցէ. վասն զի 'ի սկզբանն երկոքեան իսկ աւազակքն թշնամանէին. բայց սակայն միւսն ըղձղրախոսն յառաջ քան ամենեցուն եբաց: Այլ արտասուէր 'ի վերայ նոցա ոյք զնոյն սպանանէին:

Խռովէր և նեղէր յորժամ տեսանէր զխաչահանիչսն, ոչ զի խաչելոյն էր, այլ զի նա կորնչէին. յայն սակս խռովէր զի յառաջ տեսանէր զխեղդն նոցա, և յետ խեղ-

ցուք, վասն զի չիք ինչ քան զնա զօրաւոր, այլ և քան զվէմն ուժեղ է և քան զանդամանդ հաստատուն և քան զաշտարակ և զքաղաք ամուր և քան զպարիսպ ևս 'ի զգուշութեան պահէ զմեզ և քան զամենայն սատանայական մեքենայն բարձրագոյնս կարգէ զմեզ. իսկ ամբարտաւանն և մեծամիտն և 'ի դոյզն իմեքէ դիւրաւ ըմբռնի, որպէս ասացի իսկ այսպէս՝ եթէ և քան զպղպջակս ևս դիւրաւ հեղձնու, և քան զսարդոստայն ևս երագ պատառի, և զօրէն ծխոյ լուծանի: Իսկ մեք 'ի վերայ վիմին հաստատուն կացցուք, և զայն թողեալ զայսր զհետ երթիցուք. ապա այնպէս և 'ի մերձակայ կեանս հանգիստ գտանեմք, և անդ 'ի հանդերձեալ բարութիւնն վայելեսցուք շնորհօք և մարդասիրութ͞ե տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ որում փառք Հօր համանգերձ Հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

## ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

«Որ օրինակ 'ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, և անդամքն ամենայն ոչ զնոյն գործ ունին, այնպէս և բազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս, որպէս զի և եմք միմեանց անդամք»:

Դարձեալ զնոյնս աստ 'ի կիր արկանէ, որպէս և առ Կորնթացիսն զայնպիսի գլխաւոր ախտ ամբարտաւանութե͞ն շիջուցանէր: Եւ մեծ իսկ է դեղոյս այսորիկ զօրութիւն, և մեծ սաստի պէտք էին առ 'ի յուղղելոյ զայնպիսի զամբարտաւանութիւն: Ի՞ր վասն մեծամտես, ասէ, դու, և կամ դարձեալ զընկերն ընդէր անարգեալ անգոսնես. ո՞չ ապաքէն ամենեքեան մի մարմին եմք և մեծամեծք և փոքունք. յորժամ ընդ գլխոյն միաւորիմք, այնու լինիմք միմեանց անդամք, և արդ ընդէր անջատեալ բաժանես զքեզ ամբարտաւանութեամբդ, հիմ յանէթ առնես զեղբայրն. զի որպէս նա քո անդամ է, նոյնպէս և դու նորա, մանաւանդ թէ այսու իսկ եմք պատուականք:

Digitized by Google

Այլ արդ երկուս ինչ եդ, որով բաւական էր զնոցա հպարտութիւնն 'ի բաց ընկենուլ. և զի միմեանց անդամք եմք, ոչ եթէ փոքրն մեծին միայն, այլ և մեծն կրտսերոյն. և զի ամենեքին մի մարմին եմք։ Մանաւանդ եթէ երկու իսկ եդ, և եցոյց եթէ առաւելք են զորս ընկալաք։ Այլ արդ մի ինչ մեծամտեր. ոչ եթէ դու խնդրեցեր և գտեր, այլ յայդ տուաւ քեզ. սորին վասն և յորժամ զշնորհացն ճառեաց, չասաց թէ այն առաւել և այն նուազ ընկալաւ. այլ զինչ. եթէ այլապէս շնորհս ունիցիս. ոչ եթէ առաւել և կամ նուազ ինչ, այլ ազգի ազգիս. զի թէպէտ և չհամարեցար մեծամեծս ինչ գործել, սակայն 'ի մարմնոյ նորա ես։

Այլ տարս այնուհետև սկսեալ 'ի շնորհացն անտի յաղթութիւնս անդր տանի։ Ասաց եթէ մարգարէութիւն և պաշտօն և որքան այսպիսիք ինչ, տանի յառաջ ըզբանն յողորմածութիւնն և 'ի փոյթն և յօգնութիւնս։ Այլ քանզի ամենից ընտանի իսկ էր առանձին յառաքինութեան կալ և չունէին մարգարէութեան շնորհս, արա եցոյց եթէ և այն շնորհք են, մանաւանդ թէ ևս մեծագոյն՝ զոր և առ կորնթացիսն եցոյց. և այնչափ մեծագոյն, որպէս զի սա վարձս ունի, իսկ միւսն չունի ինչ երախտիս, վասն զի բոլորն իսկ պարգևք են և շնորհք, վասն այնորիկ ասէ՝ թէ "Ունիմք շնորհս ըստ շնորհացն որ տուեալ են մեզ ազգի ազգիս, եթէ մարգարէութիւն ըստ չափոյն հաւատոց"։ Այլ քանզի բաւականութեամբ իսկ մխիթարեաց զնոսա, կամի զի պատրաստք և փոյթք գտանիցին. և ցուցանէ թէ նոքա եւսուն բարուքս գտանել առ 'ի ստանալ զմեծն և զնուազն զշնորհսն։ Նաև թէ և յայդ այսպէս տուան, որպէս յորժամ ասիցէ՝ թէ "Իւրաքանչիւր ումեք որպէս և ա՛ծ բաժանեաց ըստ չափոյ հաւատոցն"։ և դարձեալ "ըստ շնորհացն, ասէ, որ տուեալ են մեզ"։ որպէս զի զիջուցանիցէ զամբարտաւանութիւնն նոցա։ Նաև 'ի ձեռն եղև սկիզբն, որպէս զի այսու զարթուցանիցէ զծուլագոյնսն. զոր և առ կորնթացիսն իսկ զերկրորդն զայսպիսիկ արկ 'ի կիր։ Յորժամ ասիցէ՝ թէ "Նախանձաւոր լերուք շնորհացն", եցոյց թէ նոքա եղեն պատճառք զանազանութեանս այսմիկ որ տուան. յորժամ ասիցէ՝ թէ "Զայս ամենայն ազդէ մի և նոյն հոգի և բաժանէ իւրաքանչիւր որպէս

և կամի,,, զայն կամի կամել թէ մի ոք մեծամեծիցէ առաւել շնորհօքն. ամենայն ուստեք ջանայ ողջացուցանել զախտն նոցա: Այսպէս և սէր գործէ, և դարձեալ կանգնէ զանկեալսն, ասէ. "Եթէ մարգարէութիւն ըստ չափոյ հաւատոյն,,: Զի թէպէտ և շնորհք են, ասէ, այլ ոչ եթէ ըստ վայր ինչ զեղուն, այլ ըստ չափոյ որք ընդունիցինն՝ տուեալ լինին. այնքան բաշխէ որքան գտանէ զանձինս 'ի հաւատոց մատուցեալ:

"Եթէ պաշտօն ըստ պաշտամանն,,: Ընդհանրական իմն իրս զնէ աստ. քանզի և առաքելութիւն պաշտօն է, և ամենայն իսկ հոգևոր գործ պաշտօն էր: Եւ և առանձինն իսկ իրացս այսոցիկ անուն սպասաւորութեան: Իսկ աստ առիերզերական կամեցաւ զգանձն զնել, յայն սակս այսպէս անուանեաց: Նոյն ասէ՝ թէ "Որ ուսուցանիցէն ըստ վարդապետութեանն,,: Տես որպէս առանց զանազանութեան դնէ զայս զիրաքդն առաջի: Դարձեալ խրատէ զնոսա մի հպարտանալ և ամբարտաւանել. "Որ մխիթարիցէն՝ ըստ մխիթարութեանն,,: Եւ այս տեսակ է վարդապետութեան. "Զի եթէ իցէն, ասէ, 'ի ձեզ բանք մխիթարութեան, առ ժողովուրդն ասացէք,,:

Նոյն ցուցանէ թէ չէ մեծ օգուտ յառաքինութենէն, թէ ոչ կամօք և յօժարութեամբ լինիցի ըստ որինացն՝ ածէ զաւելին՝ թէ "Որ տայն առատութեամբ,,: Ոչ է, ասէ, տալն միայն բաւական, այլ պարտ է բազում իսկ յաճախութեամբ զայն առնել: Զառատութիւն ամենայն ուրեք իսկ յիշէ: Այս և կուսանքն ունէին ունելին իւղ. և քանզի զբաւականն չունէին, յամենայնէ իսկ զրկեցան: "Որ վերակացուն է փութով,,: Ոչ է բաւական վերակացուն միայն լինել, այլ ամենայն փութով և յօժարութեամբ:

"Որ ողորմին զուարթութեամբ,,: Քանզի չէ բաւական ողորմելն միայն, այլ բազում առատութեամբ և անտրտում բարուք պարտ է առնել զայն. մանաւանդ ոչ առանց տրտմութեան միայն, այլ զուարթութեամբ և խնդալով. քանզի չէ զոյգ տրտմելն և խնդալն: Զայսն զայս և առ Կորնթացիսն գրեալ բազում փութով կազմէր, յառատութիւն յորդորեալ զնոսա այսպէս ասէր. "Որ խնայելովն սերմանէ, պակասագոյնս հնձեսցէ. և որ օրհնութեամբն սերմանէ, օրհնութեամբ և հնձէ.

Digitized by Google

վէ »: Այլ առ ուղղել զպարտ նոցա զայս դնէ՝ թէ մի 'ի տրտմութենէ և 'ի հարկէ, վասն զի երկայնացուցց այսօրինակ պարտ է մերձ լինել առ այն որ աղքատն, և անձնախնամ առել և յոյժ հեշտութեամբ: Յաղագս էր վասն աղքատ և լաւ յորժամ զողորմութիւնս առնես. ընդդէմ ցաւէ և երեւեսցք 'ի վերայ անձկանցն յորժամ աղքատիցն, և կարասանես զպտուղ ողորմութեանն. Թէ ոչ առ, ընդդէմ ողորմիս. այլ անպարտուց ես և տանջիցի. զի եթէ դու ոչ տաս յաղքատելն, որպէս զնա որ 'ի տրտմութեանն է՝ կարես մխիթարել: Սիրելի է քո, մի չար ինչ կարծիս զնմանէ յանձն առնուր յորժամ խնդալովն չտայցես. քանզի չիք աւնօղէս ինչ որ անվայելուչ թուի մարդկան որպէս զայն որ յայլոցն ինչ առնուցուն: Ո՛ր եթէ ոչ յոյժ ամենայն առաւելութեամբ զկարծիս չարեաց 'ի քոց մերժեսցես և 'ի միա առնուցուս եթէ առնուս մանաւանդ քան թէ տաս, 'ի վերայ կարծանեա զնա որ առնուն՝ քան եթէ կանգնեսցես: Որպէս վասն առէ՝ թէ « Որ ողորմին զուարթութեամբ »:

Այլ արդ ո՜վ որ այնքան յիմար իցէ, որ մինչ զարքայութիւնս երկնից առնուցու՝ և տրտմեսցի. ո՜վ որ որ մեղաց թողութիւն ընդունիցի՝ և ցանկ ախտոր կայցէ: Այլ արդ մի 'ի ծախս ընչիցն հայիցես, այլ որ 'ի ձեռն ծախուցն շահքն զարծիս ընդ այն խնդա. զի եթէ որ սերմանէ՝ այնպէս խնդայ, արդ եւս առաւել որ յերկինս մշակէ: Ո՜ր առա թէպէտ և սակաւ տայցես, շատ եառուր. իսկ եթէ տխրութեամբ տայցես, թէպէտ և բազում ինչ եառուր, սակաւ զարծեցեր զաւարան: Նոյնպէս և այրին բազում առաքինութեան յաղթեաց երկու խորհլէշօքն. վասն զի միտքն զառատութիւն պատրաքեբեին: Այլ զիա՞րդ կարիցեմք, ասեն, մերձենալ աղքատութեանն կեալ յորժամ ամենայն յօժարութեամբ զինչսն ցրուեցեմք: Հարցիր զայրին և ուսանիր զպարս խրատն, և տես 'ի միա առնուս թէ ոչ աղքատութիւնն զարծէ զանձկութիւն, այլ կամք յօժարութեանն իսկ, նա և որ հակառակ ամին է՝ զայն առնես: Վասն զի գոյ հնար և յաղքատութեան առատանալ զամեներ և 'ի մեծութեան ապակատանեալ. Կ'առն այսօրինակ 'ի տուրսն զատաարտութիւնն խորհրդեաց, և յաղորմեն լկնութիւնն, և 'ի վերափոխցութեանն զհեղթ. զի ոչ եթէ ընչիւք մի-

այն կամի զմեզ եթէ օգնիցեմք կարօտելոցն, այլ և բանիւք և խօսք և մարմնով և այլովք ամենայնիւ։ Նոյն և զպլխաւորական վերակացութենէն, այս է զվարդապետութենէն, քանզի այսոքիկ են կարևորք և որ օգուտն իսկ կերակրիչ է. ապա եկն և յայս որ յընչիցն լինի և 'ի ձեռն այլ իրացն։ Նաև ցուցանէ թէ ո՛րը կազմիցի այն՝ զմայրն առցեն 'ի ներքս ածէ, այսինքն և զօէրն։

"Սէր, ասէ, առանց կեղծաւորութեան"։ Զի եթէ զայն ունիցիս, ոչ ընչիցն ծախուց զգայցես և ոչ աշխատութեան մարմնոյ, ոչ ջանի բանից, ոչ քրտանց սպասաւորութեան. այլ ամենայնի քաջութեամբ համբերես, թէպէտ մարմնով իցէ կամ ընչիւք կամ բանիւք կամ այլով իւիք որով կարօտ է ընկերն օգնելոյ, զամենայն իսկ յանձն առնուս։ Որպէս և նոյն ոչ միայն զտուրսն պահանջէ՝ այլ և զառատութիւնն, և ոչ լոկ զվերակացութիւնն միայն՝ այլ և զփոյթն, և ոչ զողորմածութիւնն միայն՝ այլ և զլրջմտութիւնն, սոյնպէս և ոչ լոկ զսէրն՝ այլ և զանկեղծաւորն. և այն իսկ է սէր։ Նաև եթէ այս լինիցի, ապա այլն ամենայն զհետ գայ։ Քանզի և որ ողորմին, զուարթութեամբ ողորմի, զի իւրում անձինն տայ. և որ վերակացուն է, փութով է վերակացու, զի իւրում անձին է վերակացու. և որ տայն՝ առատութեամբ տանէ, քանզի իւր շնորհէ։

Նաև ապա վասն զի է և 'ի չար իրս սէր՝ որ յանառակութեանց և 'ի գիճութեանցն լինի և կամ յընչիցն յափշտակութենէ զոր 'ի միասին խորհին. և կամ զոր 'ի հանդգնականայն և յարբեցութենէն ունիցին, և արդ յայսպիսեաց առատ կամեցեալ սրբել զնոսա՝ ասէ. "Ատեալ զչար"։ Նաև չասաց եթէ մերժել, այլ թէ ատել, այլ և յոյժ իսկ ատել. քանզի այս բանք 'ի բազում տեղիս որպէս հրաման առեալ 'ի սմանէ ասին. որպէս յորժամ ասիցէ՝ թէ ակնկալութեան մնամք և փրկութեան։ Նաև վասն զի են ոմանք որ թէպէտ և չգործեն զչար ինչ, սակայն զնոյն ցանկութիւն 'ի սրտին ունին. յաղագս այնորիկ ասաց՝ ատեալ զչար։ Նա և զմիտս ես կամի սրբել և բազում թշնամութիւն մեզ ընդ մեղսն ունել և պատերազմող և ատելի վարկանել։ Նաև արդ մի զի լաւար յինէն, ասէ, թէ սիրեցէք զմիմեանս, համարիցիք եթէ մինչև ցայն վայր եկաւ հրաման, որպէս

զի և ընդ չարսն զարթակից լինիցիք. այլ որ ինչ սորին հակառակքն են, ասէ, օրհնաբերել. ոչ միայն ՚ի վա_րուցն, այլ և ՚ի մտերմաւորութենէ նոցա որք ՚ի չարիսն են՝ տարաժանալ ձեզ. և ոչ միայն ՚ի մտերմաւորութենէ նոցա տարաժանալ ձեզ, այլ և մեծաւ առաւելութեամբ ՚ի բաց դառնալ ՚ի նոցանէն և ատել։

Եւ ոչ միայն այսոքիւք շատացաւ, այլ և զառաքի_նութեան արգասիս ՚ի ներքս ածէ ասելովն՝ թէ "Զհետ երթալ բարեաց"։ Եւ չասաց թէ առնել միայն, այլ և յամենայն ժամ յայն խոկալ և ՚ի նմին կալ. քանզի զայս հրամայէ ասելովն՝ թէ զհետ երթայք։ Սոյնպէս և ո՛չ կամեցեալ զուգել զայրն ընդ կնոջն, ասէր՝ թէ "Յարեսցի ՚ի կին իւր"։ Նոյն և զպատճառսն ասէր որով պարտիցէք սիրել։

"Յեղբայրսիրութեան առ միմեանս գթածք"։ Եղ_բարք էք, ասէ, և նոյն երկունքն լուծան ՚ի վերայ ամե_նեցունց. ապա եթէ այդպէս է, իրաւունք են սիրել զմիմեանս։ Զայս և Մովսէս որք յԵգիպտոսն մարտըն_չէին ընդ միմեանս ասէր՝ թէ "Արք եղբարք էք, ըն_դէ՞ր զրկէք զմիմեանս"։ Զի յորժամ վասն արտաք_նոցն՝ ասէր թէ հնար իցէ ձեզ ընդ ամենայն մարդկան խաղաղութիւն կալջիք. իսկ յորժամ վասն ընտանի ի_րացն՝ ասէր յեղբայրսիրութեան առ միմեանս գթածք։ Անդ ընդ չկամեցեալս խնդրոյ, և ոչ եթէ ատել և ՚ի բաց խոտորել ՚ի նոցանէն. իսկ աստ սիրել, և ոչ լոկ սիրել, այլ և գթալ. քանզի ոչ միայն, ասէ, անկեղծ պարտ է ունել զսէրն, այլ և յոյժ զեղմամբ ջերմեռանդն։ Զինչ օգուտ է, ասէ, թէ սիրէ աննենգ, և ոչ ջերմ սիրով սիրել։ Վասն որոյ և ասաց՝ թէ "առ միմեանս գթածք", այսինքն է թէ ջերմագոյնս սիրեա, մի կար միայն յայլմէ սիրիլ, այլ դու նախ յառաջեա և սկսիր. և այսպէս ապա և զնորա սիրոյն զվարձս դու պարտաւորեսցես։

Եւ իբրև ասաց զպատճառսն որով պարտիցէք սիրել, ապա ասէ զայն ուստի անշարժ մնայ սէրն. "Ի պատիւ, ասէ, նախամեծար վարկանիցիք"։ Վասն զի ՚ի սմանէ լինի սէր, և եղեալն ապա հաստատուն կայ։ Եւ ոչ այս_պէս սիրելիս առնէ, որպէս յորժամ պատուովն փու_թամք յաղթել ընկերին։ Եւ ոչ սէր միայն է, այլ և պատուոյն առաւելութիւն յայսմանէ լինի. վասն զի

յառաջ ասացեալքն ամենայն 'ի սիրոյն են, իսկ սէրն 'ի պատուոյն, որպէս և պատիւն 'ի սիրոյն։

Այլ ոչ միայն զի մի միայն պատուիցեմք, այլ և այլ ինչ խնդրէ առնելով. «Ի փոյթ, մի վեհերոտք»։ Քանզի և այս զսէրն ծնանի յորժամ պատուովն և զմեծարականութիւն ցուցանիցեմք. քանզի ոչ ինչ այդ այնպէս որպէս զպատիւն և զանուշութիւնն գործէ զսէրն։ Քանզի չէր բաւական սէրն միայն, այլ պէտս ունի և այսմիկ. մանաւանդ թէ և 'ի սիրոյն իսկ և այս լինի, որպէս և սէրն իսկ առաւել լինի ջերմագոյն, և միմեանց կազմիչք են։ Այլ քանզի են ոմանք որ մինչև սիրեն և ձեռն ոչ կարկառուն ումեք, վասն այսորիկ յինքն կազմանց չինէ զսէրն։

Այլ զիարդ լինիցիմք 'ի փոյթ առանց վեհերելոյ։ Յոյժ ժամ հոգւովն եռամք, որպէս ասէն. «Հոգւով եռացէք»։ Տեառնէս զի ամենայն ուրեք զկարգաւորութիւն խնդրէ։ Զատոյց լոկ եթէ տուր, այլ թէ առատութեամբ տուր. և կամ թէ վերակացու լեր, այլ թէ փութով. և կամ թէ ողորմեցարուք, այլ լղջմտութեամբ. և չասաց թէ պատուեցէք լոկ, այլ թէ նախամեծար վարկանիցիք. և չասաց թէ սիրեցէք, այլ թէ անկեղծ սիրով. և դարձեալ չասաց լոկ թէ հրաժարեցէք 'ի չարեաց, այլ թէ ատեցէք. և չասաց լոկ թէ կպարուք զբարութիւն, այլ թէ զհետ երթայք. և չասաց դարձեալ լոկ թէ սիրեցէք, այլ թէ գթացէք. և ոչ եթէ փութացէք, այլ թէ մի ծուլացեալք լինիք. և չասաց թէ զհոգին ընկալարուք, այլ թէ հոգւով եռացէք, այսինքն է զի ջերմք և հզօրք իցեմք։ Զի թէ զայնսոսիկ ունիցիմք զոր յառաջն ասացաք, կարեմք ձգել 'ի մեզ զհոգին. և եթէ նա առ քեզ մնայ, ապա և յայլսն զքեզ փոյթ գործէ, և ամենայն ինչ դիւրաւ 'ի հոգւոյն և 'ի սիրոյն լինի, վասն զի երկոքեան ջերմագոյն զքեզ գործեն։ Զառասանիցես զցուլսն, որոց զխարոյկ կրակին 'ի վերայ մկանանցն դնիցեն, որպէս առատիկ և ուժեղ բազմաց թափիցին մինչև չկարիցէ ոք 'ի գիծս հարկանել նոցա։ Այնպէս և դու սաստկացի թուիս առատիկ և ուժեղ, և չկարիցէ քեզ 'ի գիծս հարկանել յորժամ դու յերկաքանչիւրոցս յաջողանէ վառեալս զքեզ։

«Տեառն ծառայեցէք»։ Քանզի այսու ամենայնիւ է ծառայել նմա. որպէս զի յորժամ առնիցէ՝ թէ զոր ինչ

առնիցես եղբօրն քում, 'ի տէրն քո երթայ. և զոր ինչ չարչարիս, այնպիսի վարձս վարկանիր քեզ։ Տեսանե՞ս ուր տարաւ եհան զմիտս որք զայսպիսին գործեն։ Ապա ցուցանէ՝ թէ իւ վառի բոց հոգւոյն։

"Յուսով խնդացէք, ասէ, նեղութեան համբերեցէք, յաղօթս ժուժկալեցարուք"։ Քանզի այս ամենայն է բորբոքումն հրոյն այնորիկ. Այլ վասն զի զընթացն զծանր պահանջեաց և զմարմնոյ զաշխատութիւնս և զվերակացութիւն և զփոյթ վարդապետութեան և զայն ամենայն ջան, օծանէ զպարծեալ զնահատակն յետ սիրոյն և հոգւոյն 'ի ձեռն յուսոյն։ Քանզի ոչ այլ ինչ այնպէս զօրաւոր գործէ և անփոփոխ առ ամենայն ինչ զհոգին որպէս յոյսն քաղցրութեան։ Ապա և նա քան զյուսալ 'ի բարութիւնսն այլ ինչ զպարծեալ մատուցանէ, արութիւնսն։ Այլ վասն զի յայս համբերելոյն էր, ասէ. "Նեղութեան համբերեցէք"։

Այլ զի յառաջ քան զհանդերձեալսն աստէն առ ժամանակէիս իսկ մեծ լաւութիւնս ընձեռեն նեղութիւնքն, այսինքն է ժուժկալս և ընտիրս լինել, յետ այսորիկ միւս ևս օգնութիւնս մատուցանէ ասելովն՝ թէ "Յաղօթս ժուժկալք լերուք"։ Այլ արդ որովհետև սէրն զիւրսն գործէ և հոգին օգնէ և յոյսն թեթևացուցանէ և նեղութիւնքն ընտիր ցուցանեն և կազմեն առ 'ի համբերել ամենայնի քաջութեամբ, և յետ այսորիկ ունիս և այլ ևս մեծագոյն զէն զաղօթսն, և որ 'ի պատասխանացն լինի օգնութիւնն, ապա և զինչ աշխատութիւն 'ի պաղատանացն իցէ. և ոչ ինչ։ Տեսանե՞ս որպէս ամենայն ուստեք յարդարեաց զնահատակն և թեթևացոյց զհրամանսն։

Ապա յետ զպարծեալ, որպէս զողորմածութեանն բանն հարկանէ. մանաւանդ ոչ լոկ զողորմածութեանն, այլ զայնմանէ որ 'ի սուրբսն լինիցի։ Քանզի յառաջագոյն ասաց՝ թէ որ ողորմի զուարթութեամբ, զամենեցուն իսկ զպէտսն ասաց. իսկ աստ վասն հաւատացելոց ասէ. վասն որոյ 'ի սոյնս յարեալ ասէր՝ թէ "Ի պէտս սրբոց հաղորդեցարուք"։ Այլ չասաց թէ տուք նոցա զպէտսն, այլ թէ հաղորդեցարուք 'ի պէտս նոցա. ցուցանէ թէ մեծագոյնս առնուն քան թէ տան. և քանզի շահաւորութիւն են իրքն, յաղագս այնորիկ հաղորդութիւն

կոչի: Ստացուցանես զաւ գանձս, մոռացուցանես և նորա քեզ համարձակութիւն առ նա:

«Օտարասիրութեան զհետ երթայք», ասէ: Եւ չասաց թէ գործեցէք. խրատէ զմեզ մի կալ մնալ կարօտելոցն առ մեզ, այլ մեք ընթասցուք և զհետ երթիցուք:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Այսպէս Պօղոս, նոյնպէս և Աբրահամ արար. զքեղովլքն իսկ զօրն 'ի նմին ծախէր և կայր մնայր բարւոք որոյն, և տեսեալ կայտառէր և ընդ առաջ ընթանայր և երկիր պագանէր 'ի վերայ երկրի և ասէր. «Տէր, թէ գտի շնորհս առաջի քո, մի զանց առնէր 'ի ծառայէ քումմէ»: Եւ ոչ թէ որպէս մեք յորժամ գտանեմք զօտար և կամ զաղքատ ոք, գլխով 'ի վեր պճնիցեմք և պատասխանւոյ անգամ արժանի չվարկանիցեմք զնոսա, թէպէտ և բիւր պաղատանօք կարկղիցեն զմեզ: Եւ թէ յանկարծ հրամայեմք ծառայիցն տալ փոքր մի արծաթ, վարկանիմք թէ բնաւ ինչ զամենայն ուղղեցաք: Այլ ոչ թէ և նա այսպիսի ինչ. այլ ծառայի կերպարանօք պաղատէր, և այն զի չգիտէր իսկ թէ զոր հանդերձեալ է ընդունել. իսկ մեք յայտնապէս գիտեմք թէ զՔրիստոս ընդունիմք, սակայն և ոչ այնպէս լինիմք համբոյր: Նա աղաչէր և պաղատէր և երկիր պագանէր, իսկ մեք թշնամանեմք ևս զայնոսիկ որ առ մեզ մերձենան և խնդրեն: Եւ նա ինքն ամենայնիւ զամենայն ինչ առնէր, իսկ մեք և ոչ ծառայիցն հրամայեմք: Ապա եթէ զսեղանն կամիցիս տեսանել զորս առաջի նոցա յօրինեաց, բազում առատութիւն պատուասիրութեան գտանես. առատութիւն ասեմ ոչ որ յաւաւելութենէ ընչիցն լինի, այլ որ 'ի յօժարութենէ բարուցն մեծութիւն գործի:

Վանի շահավաճառք էին յայնժամ, այլ ոչ ոք 'ի նոցանէն այսպիսի ինչ կատարեաց. որչափ այրիք էին յԻսրայէլի, այլ ոչ ոք 'ի նոցանէն եղև ասպնջական Եղիայի. քանի ընչաւէտք շահաւէտք էին դարձեալ առ Եղիսէիւ, այլ սոմնացին կթեաց զօտարասիրութեանն զպտուղ. որպէս և յայնժամ Աբրահամ՝ որ ընդ առատութեանն և զբարիոք յօժարութիւնն եցոյց. ընդ

Digitized by Google

որ մանաւանդ է սքանչանալ, զի և չգիտէր իսկ թէ որպիսիք ոյք իցեն որք եկինն։ Նոյնպէս և դու մի՛ պահանջեր հաւաստիս, քանզի վասն Քրիստոսի ընդունես։ Նա եթէ բազում անգամ 'ի խոյզ և 'ի խնդիր արկանիցես, իցէ զի յընտիր և յառաքինի արանց վրիպեսցես և զայնպիսի զվարձս կորուսանիցես։ Այլ այն թէ չիցէ ոք ընտիր զոր ընդունիցիս, չէ քեզ ինչ վնաս, այլ և վարձս ես ընդունիցիս. "Որ ընդունի, ասէ, մարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ"։ Իսկ յընդդիմակայ քննութեանցն բազում անգամ և զզարմանալի արամբք զանց առնիցէ և զասանելոց է։

Այլ արդ մի՛ այսուհետև զվարս և զգործս 'ի բազում քննութիւնս արկանիցեմք. զի յոյժ անմտութիւն է այս, վասն հացի միոյ զամբողջական կեանս խուզեսցես։ Ո՛չ թէպէտ և մարդասպան ոք իցէ և կամ աւազակ այնպիսին, սակայն մի հացի և փոքր մի արծաթոյ չհամարիցիս արժանի։ Իսկ տէրն քո և զարեգակն ծագէ նմա. դու և աւուրն կերակրոյ զնա արժանի չվարկանիցիս։ Այս զեւս մեծագոյնն գնեմ. զի թէպէտ և հաւատեաւ իսկ գիտիցես թէ բիւր չարեաց լի իցէ, սակայն և ոչ այնպէս ունիս պատճառախնամութիւն զրկելով զնա յաւուրն կերակրոյ։ Նորա ծառայ ես որ ասէրն. "Ոչ գիտէք որոյ հոգւոյ էք"։ Նորա սպասաւոր ես որ բժշկէր զքարկոծիչսն իւր, մանաւանդ թէ որ խաչեցաւն իսկ վասն նոցա։ Այլ մի՛ ինչ ասեր թէ զայլս սպան և չար է. թէպէտ և զքեզ ինքն իսկ հանդերձեալ է սպանանել, և այնպէս մի՛ անտես առներ զնա մաշեալ 'ի սովոյ։ Վասն զի այնորիկ աշակերտ ես որ խաչահանուացն փրկութեան փափագէր, որ ասէր 'ի նմին իսկ 'ի խաչին՝ թէ "Հայր թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն"։ Նորա ծառայ ես որ զապտակիչսն բժշկեաց, որ զթշնամանիչսն իւր 'ի վերայ խաչին բժշկեաց։ Այլ արդ զինչ զոյգ այսմ կայցէ. վասն զի 'ի սկզբանն երկոտասանս իսկ աւազակքն թշնամանէին. բայց սակայն միւսն զդրախտն յառաջ քան ամենեցուն եբաց։ Այլ արտասուէր 'ի վերայ նոցա. որք զնոյն սպանանէին։

Խռովէր և նեղէր յորժամ տեսանէր զմատնիչն, ոչ զի խաչելոցն էր, այլ զի նա կորնչէրն. յայն սակս խռովէր զի յառաջ տեսանէր զխեղդն նորա, և յետ խեղ-

ցին զգեհենն. Թէպէտ և յառաջ գիտէր զչարութիւն նորա, այլ մինչև յետին ժամն տանէր համբերութեամբ, և ոչ ինչ ընդդէմ ասէր, այլ և ողջունեացն ևս զնմանիցն 'ի վերջին ժամուն։ Եւ արդ տեսեր քո զողջոյն շնորթանցն յանձն առնու զայնորիկ որ հանդերձեալ էր զպատուական արիւնն նորա հեղուլ. իսկ դու և ո՛չ զաղքատին տակաւ մի հացի վարկանիս արժանի։ Չգիտուցե՞ս զօրէնսն զոր եդ Քրիստոս. վասն այնորիկ եցոյց զի ոչ միայն զաղքատն, այլ և զորս 'ի մահն տանիցեն՝ չէ պարտ 'ի բաց դառնալ 'ի նոցանէ մեզ։ Եւ մի ինչ զայն այժմ ասել՝ թէ չար գործեաց այս անուն. այլ զայն ած զմտաւ թէ զինչ գործեաց Քրիստոս ընդդէմ իսկ 'ի ժամ խաչին. զի 'ի ձեռն ողջունին որ հանդերձեալ էր մատնել զնա՝ կամէր ածել յուղղութիւն զմատնիչն։ Եւ դու տես զխնդիր պատկառեցուցանելով զնա ասէր. «Յուդա, համբուրելո՞վ դու մատնես զորդի մարդոյ»։ Ո՞ ոք ոչ կակղեցուցանէր այնպիսի ձայն, զո՞ ոք ոչ խոնարհեցուցանէր, զայդպիսի գազան, զայդպիսի ապառաժադեայ. այլ ոչ թէ և զհեքն զայն։ Եւ արդ ասեր իսկ դու մի՛ թէ զայն անուն եղեան այս անուն, և յաղագս այնորիկ 'ի բաց դառնամ 'ի նմանէն։ Թէպէտ և ընդդէմ քո հանդերձեալ է բերել զսուրն, և զաջն թագցէ յարեան քում և զսուրն 'ի ներքս մխեսցէ մինչև 'ի կառամնն՝ զնոյն խնդրն զաջն համբուրեա, քանզի և Քրիստոս զայն բերան ողջունեաց որոյ զմահն գործեալ էր։ Այնպէս և դու մի ատեար, այլ արտասուեա և ողորմեա նենգագործին, քանզի ողորմելոյ արժանի են այնպիսիքն 'ի մեզն և արտասուելոյ. վասն զի նոքա ծառայք են որ զմատնիչն ողջունեաց։

Չդադարեմ համապազ զնոյն յեղյեղուլ. և որ քան զայնս ևս կակղագոյն զբանս խօսեցեալ. վասն զի չասաց՝ թէ մի պիղծդ և անհնաչար ժանտ և մատնիչդ, զայսպիսի փոխարէնս հատուցանես ինձ ընդ երախտեացն իմոց։ Այլ զինչ, թէ Յուդա. զանմոռական անուանն դնէ, որ մանաւանդ եղկելոյ զնա էր և վերստին ուղղելոյ, և ոչ եթէ բարկութեան ինչ։ Եւ չասաց թէ զտէրն քո և զվարդապետն քո և զերախտաւոր, այլ եթէ զորդի մարդոյ։ Ո՛չ թէպէտ և վարդապետ և տէր չէր, ո՞չ էր այնպիսի զգաստութիւն առ այնպիսի

Digitized by Google

անպաշտպանեալ բարս զոր առ քեզն եդից, որպէս զի և 'ի ժամ մատնութեանն աղջկանն արժանի արար զքեզ, և այնպիսամբ նենգաւոր աղջկանն որով մատնեցերն խաղ զնա։ Ողջունեալ ես ասէր, որչափ խոնարհութեան, քանզի առ խոնարհութեան օրինակս եցոյց մեզ։ Ոչ նա այսպիսի ինչ ասաց. խաղ որ 'ի վերայն շղթան բարձն և Ջահկացն՝ ոչ այնպէս։ Այլ արդ զինչ քան զայսպիսի բանս հեզու-թիւն կայցէ զոր և առ նոսայն ասաց. և այն զի կարելի առ հասարակ զամենեսեան զնոսա 'ի նմին ժամու եղծա-նել. միթէ արդեօք ինչ յայտնեսցես. և ոչ եղելէ. բայց պատրաստեցուցանելով զնոսա խօսի. ասէ. "Եղէք 'ի վերայ իմ իբրև 'ի վերայ աւազակի սրովք և բրօք", և զարկոյց զնոսա յետս։ Այլ քանզի կայինն մնացին 'ի նմին անզգայութեան, կամօք խաղ զինքն 'ի ձեռս տայր և յանձն առնոյր առնանել զկապանսն 'ի սուրբ ձեռս իւր՝ որով կարողն էր առ հասարակ մատնել զնոսա և ընկղմել ընդ երկրաւ։

Տե՛ս դու և յետ այսր ամենայնի վայրենանալս և զաւ-զանանալս աշակերտին։ Այլ այն զի թէպէտ և բիւր շա-րեաց պատճառանս է աշակերտն, այլ նենգութիւնն և ըղձն սովոյն բաւական էր կակղել զբրտացեալ ոգի անա-ղորմիցն։ Իսկ դու անցեալ կաս զազանացեալ և սաթ-ծու սրտմտութեան նմանեալ. և այն զի նմա չէր հնար երբեք ճաշակել 'ի մեռեալ մարմնոյ։ Իսկ դու մեռա-նես խարուեալ երկթացեալ բրդզեալ 'ի տառապա-նացն, և մատուցեալ մերձ խայթել զմարմինս նորա թշնամանօք, և ձեռամբ 'ի ձեռբանուոյ վերայ կաւսես, և զապականեալն[1] 'ի նաւահանգիստն 'ի վիհս հարեալ փշրեցեր զնաւն, և ես զժնեայ աղէկծութիւնս զաղ-ծիցես քան որք 'ի ծովուն լինիցին։ Այլ զիարդ կարի-ցես խնդրել յետ աղօթութիւն և մեղաց քաւութիւն, յորժամ որդ չէն ինչ քեզ մեղուցեալ և դու թշնա-մանես զնա. յորոյ վերայ սուրս և վտանգն կայ, դու հա-ւատոյ պահանջես, և զամենայն զազանօք անցանես անմարդութեամբ և անագորոյնութեամբ։ Վասնզի նորա հարկաւորեալք յորովայնէ՝ մօտին 'ի սովորական յիւրեանց կերակուրն, և հարկ լինիցի թէ ընդդէմ

1 Գանկասկը յօրին. զապականեալն 'ի նաւահանգիստն. յաւելու 'ի յունէն՝

երթիցէ սրոյ. իսկ դու առանց ուրուք մեղելոյ և հարկաւորութեան ծամես զեղբայրն խածանելով և պատառելով. զի թէպէտ և ոչ ատամամբք, այլ բանիւքն՝ որ ևս դժնդակ վէրս գործէ քան զժանեացն։

Այս արդ զիա՞րդ կարիցես ընդունել զա՟ծայինն զպատարագն, որ մարդկային արեամբն կարմրացուցեր զլեզուդ. որպէս կարիցէ տալ զխաղաղութիւն բերանդ որ պատերազմաց լի է. և կամ զիա՞րդ կարիցես վայելել 'ի կերակուրս յայս յոր այնպիսի թոյնք ժողովեալ են։ Զուղղես զաղքատութիւն, ընդէ՞ր և 'ի վայր կործանես զնա. չկանգնես զգլորեալն, ընդէ՞ր ևս ընդ գետին տանիցես զնա. չմերժես 'ի նմանէ զվհատութիւնն, է՞ր վասն ևս քան զևս թանձրացուցանես. չտաս ինչս, հի՞մ և բանիւք թշնամանես։ Զի ո՞ր թէ որպիսի դատելոց են որք ոչն կերակրեն զաղքատս, կամ որպիսի խոշտանգանօք տանջելոց են. քանզի ասէ. "Երթայք 'ի հուրն զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա"։ Ոչ եթէ որք ոչն կերակրեցին միայն՝ այսպէս դատապարտին, այլա որք չկերակրեցին և թշնամանեն ևս՝ զորպիսի՞ դատ տալոց են, քանի՞ տանջանս և գեհեն ընդունելոց են։

Այս արդ զի մի այսչափ վնասիցեմք զչարիսն, մինչդեռ 'ի ձեռս մեր է՝ ուղղեսցուք զայնպիսի զախտ, և լեզուի սանձս դիցուք. և մի միայն 'ի թշնամանեացն փախիցուք, այլ և մխիթարեսցուք ևս զնոսա և բանիւք և իրօք, որպէս զի բազում իւղս համբարեսցուք մեզ յառաջագոյն անդր, որով հասանել կարասցուք խոստացելոց բարութեանցն։ Որոց լիցի ամենեցուն մեզ արժանի լինել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր հանդերձ հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

# ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

“Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք և մի անիծանէք”:

Ուսոյց նոցա թէ որպէս ընդ միմեանս պարտ է կեալ, և յարել հաստատեալ զանդամսն 'ի միմեանս: Ապա այսպէս հանէ զնոսա և յարտաքինն 'ի ճակատումն և դիւրին գործէ զայն: Զի որ առ ընտանիսն ցուցանիցէ զքաղցրութիւն, դժուարաւ կարէ մատակարարել առ օտարսն. զի որ յայսոսիկ վարժեալ իցէ, ապա և յարտաքինն իսկ երագ հաստատուն գտանի: Վասն այսորիկ և Պաւղոսի յուզի անկեալ յետ այսոցիկ և զայս դնէ. ասէ. “Օրհնեցէք զհալածիչս ձեր”: Չասաց թէ մի չարայուշք լինիք և մի վրէժ խնդրէք, այլ և որ եւս մեծագոյնն քան զայս էր խնդրեաց. քանզի այն սան փիլիսոփայի էր, իսկ այս հրեշտակի իսկ:

Եւ իբրև ասաց թէ օրհնեցէք, յաւելաց 'ի սոյնս՝ թէ և մի անիծանէք. որպէս զի մի զերկոսեան առնիցեմք, այլ զայն միայն: Այս և վարձս եւս բազումս ընձեռեն մեզ հալածիչքն. եթէ արթունք իցեմք, և այլ եւս դու ընդ նմին կազմես քեզ վարձս. զի նա 'ի հալածելոյ անտի ընծայէ քեզ վարձս, իսկ դու յօրհնելոյ անտի քեզէն քեզ ժողովես զգանձս և զմեծ նշան սիրոյն Քրիստոսի ցուցանես: Զի զոր օրինակ որ անիծանէ զհալածիչն, ցուցանէ թէ չէ կարի ուրախ զի այնպէս չարչարի վասն Քրիստոսի, սոյնպէս և որ օրհնէն՝ յայտ առնէ թէ կարի հաւանեալ է 'ի սէրն Քրիստոսի: Եւ արդ մի բամբասէք, և որպէս զի նա քեզ մեծ վարձս պատրաստեսցէ այնու, և զնա իսկ ուսուցանես թէ յօժարութեան են իրքն և ոչ եթէ 'ի հարկէ ինչ, ուրախութեան և առնի և ոչ եթէ հեքութեան ինչ և վհատութեան: Վասն այսորիկ և Քրիստոս ասէր՝ թէ “Խնդացէք յորժամ ասասցեն զամենայն բան չար ըզձէնջ սուտ”: Սորին վասն և առաքեալքն դառնային

յերեսաց աստենին ուրախութեամբ. ոչ զի զչարն լուան միայն, այլ զի և զգանսն արբին։

Հանդերձ աղաչելովքս և այլ ինչ ոչ փոքր ինչ շահիս, զի այսորիւք ստգտանես զնոսին և խրատես զնա գործովքն՝ եթէ այլ ինչ 'ի կեանս փոխես. զի յորժամ տեսանիցէ զքեզ յօժարամիտ առ 'ի յընդունել զչարչարանսն, հաւաստեաւ իսկ 'ի միտ առնու 'ի ձեռն իրացն թէ արդարեւ մեծագոյն ինչ քան զժամանակեայսս այլ ինչ յոյս ունիս։ Իսկ եթէ զայս չառնիցես՝ այլ տրտմիցիս, ուստի կարիցես զնա ուսուցանել թէ այլում կենաց ակն ունիս։ Նոյնս այս գործեալ և այլ ինչ ուղղես. քանզի յորժամ տեսանէ թէ ոչ ինչ ցաւեցին քեզ թշնամանքն՝ այլ ուրախ եղեր, դադարէ 'ի հալածելոյն ախտահեան։ Տեսանես որքան ինչ լաւութիւնք լինին յայսմանէ, զի և քո վարձքն առաւելուն և փորձութիւնքն նուազին, և նա հրաժարէ 'ի հալածելոյն, և ած փառաւորի, և վարդապետութիւն մոլորութեանն 'ի բարեպաշտութիւն դառնայ քոյով փիլիսոփայութեամբդ։ Վասն այսորիկ և ոչ միայն ըզթշնամանիչսն, այլ և զհալածիչսն և որք 'ի ձեռն իրաց ինչ լլկիցեն՝ ընդդէմ նմին իսկ երախտիս հրամայեաց գործել, և այժմ օրհնել հրամայեաց զնոսա։ Իսկ եւ յառաջ մատուցեալ, և գործովք եւս խրատէ երախտաւոր լինել առ նոսա։

« Խնդալ ընդ խնդացողս, ասէ, և լալ ընդ լացողս »։ Վասն զի մարթ էր օրհնել և ոչ անիծանել, ոչ եթէ առ սիրոյ ինչ առնէ զայս, իսկ նա կամի ջերմագոյն գործել 'ի մեզ զսէրն։ Վասն որոյ և զայս իսկ յաւելեաց, որպէս զի մի միայն օրհնիցեմք, այլ և ցաւակիցք և վշտակիցք եղիցուք՝ թէ յանկարծ տեսանիցեմք զնոսա 'ի թշուառութիւնս ինչ անկեալ։ Այո, ասէ, վշտակցին լինել յորդորէ կարգեաց որք 'ի վշտաւոն են. բայց զմիւսն եւս էր վասն կարգեաց որ չէրն ինչ մեծ։ Նա մանաւանդ այն իսկ փիլիսոփայական ոգւոյ է՝ խնդալն ընդ խնդացողսն մանաւանդ քան լալն ընդ լացողսն է մեծագոյն։ Քանզի զայս և բնութիւնն իսկ ուղղէ, և չիք այնպէս քարեղէն որ ոչ արտասուեսցէ առ այնոսիկ որ 'ի թշուառութեանն իցեն։ Իսկ միւսն քաջի և առաքինի ոգւոյ է. յորժամ ընդ այն որ գովանիցի, ոչ միայն չնա-

խանձի, այլ և կամակից լինիցիս: Այս և առաքեալն իսկ զայս դնէ: Վասնզի ոչ այնպէս ինչ ժողովէ զսէրն 'ի մեզ, որպէս յորժամ ուրախութեան և տրտմութեան միմեանց հաղորդք գտանիցիմք: Այլ արդ մի վասն զի հեռի 'ի նոցա գծնդակութենէն կայցես, և վշտակցութեանն արտաքոյ գտանիցիս. զի յորժամ ընկերն ինչ չարչարանս կրիցէ, հաղորդակից հաշուիցիս զթշուառութիւնն: Այլ արդ հաղորդեաց այժմ արտասուաց նոցա, զի և թեթևացուսցես զվհատութիւն. հաղորդեաց երկրպագութեանն, որպէս զի արմատացուսցես զուրախութիւն և հաստատեսցես զսէր, և նախ քան զնա՝ անձինդ օգուտ գործես. որպէս զի յարտասուացն ողորմած կացցես, իսկ հեշտ թուելով 'ի նախանձու և 'ի չարակնութենէ ազատես զքեզ:

Այլ դու տես զխո՛րհրդ զմխիթարականն ասաց Պաւղոս. ոչ ասաց թէ լալ զտառապանաց և զթշուառութիւնս նոցա, թէ գուցէ ասիցես՝ չեմ բաւական չկարեմ, այլ զթեթևագոյնն հրամայեաց, որում և անկն իսկ ես: Զի թէպէտ և 'ի բաց, ասէ, չկարես բառնալ զթշուառութիւնս նոցա, հեղ արտասուս և զմեծ մասնն 'ի բաց ընկեցեր. թէպէտ և չկարես ինչ յաւելուլ 'ի բարեկենդանութիւն նոցա, խնդակից լեր նմին և բազում յաւելուած բարուցն արարեր: Վասն այսորիկ ոչ միայն զի չնախանձեսցես, այլ և որ ևս մեծն է՝ բազում զայն խնդրէ թէ հեշտակից լեր նմա, որ ևս առաւելն է քան չնախանձելն:

«Զնոյն, ասէ, զմիմեանց խորհել. և մի բարձրամտել ինչ, այլ ընդ խոնարհս զիջանել»: Դարձեալ բազում փոյթ ցուցանէ վասն խոնարհութեանն, ուստի և սկիզբն արար բանիցն: Այլ առաւել ընտանի իսկ էր նոցա լի լինել իմաստութեամբ և 'ի քաղաքին և յայլոց բազմաց. վասն որոյ և յանկ իսկ կորզէ զայնպիսի զախտ՝ թէ գուցէ հպարտանայցեն ինչ, և շիջուցանէ զփքացեալ ամբարտաւանութիւն. զի ոչ այնպէս բաժանէ և երկպառակէ զմարմին եկեղեցւոյ որպէս զամբարհաւաճութիւն: Զի՞նչ է «զնոյն զմիմեանց խորհեսջիք»: Եկն աղքատ ոք 'ի տուն քո, լեր խոնարհ միօրէն նմին նմա, և մի մեծ ինչ և ուժգին վասն հարստութեանն վարկանիցիս. քանզի 'ի Քրիստոս չէ աղքատ և մեծատուն: Այլ արդ մի ա-

մաշեսցէ զառն արտաքին զգեստուն նորա, այլ ընկալ զներքինն զհաւատոյն։ Այլ մի դարձեալ յորժամ տեսանիցես զնա 'ի սուգ և 'ի տրտմութեան, արժանի չհամարեսցես[1] զկալն քո առ նմա և մխիթարել. և մի յորժամ 'ի բարեկենդանութեան զնա տեսանիցես, երջանիկ և երանելի եղեալ՝ չարախաւս լինիցիս ընդ այն, և չկամիցիս ինչ նորա հեշտութեանցն հաղորդել. այլ որպէս զանձնէդ խորհիս, այնպէս և զընկերէն լինիցիս կամել։ "Ո՛ սոյնս զմիմեանց խորհեսջիք" ասէ։ Արդեօք ինչ. մեծ և պատուական վարկանիցիս, այնպէս և զնա համարեսջիր. խոնարհ և փոքր զնա վարկանիցիս, այսպ և զքեզ այնպէս հաշուեսջիր, և զամենայն զանհարթութիւն 'ի բաց մերժեա։

Այլ որպէս արդեօք լինիցի այս. եթէ զհպարտութիւն 'ի բաց ընկենուցուս։ Վասն որոյ 'ի սոյնս յարեալ ասէ՝ թէ "Մի՛ մեծամտեք, այլ ընդ խոնարհս զիջանիջիք", այսինքն է 'ի նոցա 'ի չափոն իջանիցես շրջեալ յանձեալ։ Մի՛ միայն մտօք խոնարհիր, այլ և օգնեա և ձեռն տուր, մի այլով, այլ քոյին իսկ անձամբդ. որպէս հայր որդւոյ խնամ տար, որպէս գլուխ մարմնոյ. զոր և այլուրն ասէր՝ թէ "Ընդ կապեալսն զոյգ կապեցարուք"։ Իսկ խոնարհս աստ ոչ՛ եթէ ընդվայր խոնարհութեանէ ինչ ասէ, այլ զաղքատ խոնարհացն և որք զանձինս 'ի չափու ունիցին՝ ասէ։

"Մի՛ լինիջիք իմաստունք յանձինս ձեր". այսինքն է մի վարկանիր եթէ բաւական ես քո ինքեանց. քանզի և այլուր ասեն գիրք՝ թէ "Վայ այնոցիկ որք զանձինս առ իմաստունս ունիցին, և յաչս անձանց իւրեանց վարկանիցին հանճարեղք"։ Նյսու դարձեալ զամբարտաւանութիւնն 'ի բաց կորզէ և զհպարտութիւն և զխորխայթն զիջուցանէ. քանզի ոչ ինչ այնպէս հպարտացուցանէ և բաժանէ յայլոցն որպէս զայն որ կարծիցէն թէ բաւական իցէ ինքն անձին. յաղագս այսորիկ 'ի պէտս միմեանց կարգեաց զմեզ ա՛ծ։ Ո՛ր թէպէտ և իմաստուն իցես, սակայն այլում պէտս ունիս. իսկ եթէ ասիցես՝ եթէ չեմ ինչ կարօտ, անմտագոյն քան զամենեսին զտար և տկարագոյն։ Այլ մերկացոյց այնպիսին

1 Օրինակին՝ չհամարեսցես. յոյնն անարժան վարկանիցես։

զինքն յամենայն օգնականութենէ, որովք մեղանչէ, և ոչ 'ի միում իրիք չկայեւէ, ոչ յաղղութենէն և ոչ 'ի ներքնոյն, և զնոյն զպարագայութեանն այնպիսին անհարաւանութեամբն և բազում ինչ մեղանչէ։ Իմանալի է և է իսկ բազում անգամ և խնամողն չգիտել զգուշանալ և զանհնարաւորութեան զանազանել խորհրդոցն, որպէս առ Մովսէսին և նորին անհնարին երբեմն, և կամ առ Սաւուղ և մանկանցն, և դարձեալ որպէս առ Իսահակն և Հաւբէկն։ Իսկ արդ մի վարկանիցիս թէ յորժամ խոնարհիցիս, նուազ ինչ գտանիցես. մանաւանդ եթէ այս իսկ զքեզ բարձրացուցանէ, այն զքեզ զօրաւոր գործէ, սա զքեզ լուսաւոր և զգուշաւորն առնէ։

"Մի՛ ումեք չարի չար հատուցանէք"։ Ոչ եթէ զայլս խօսէս որք նեղեսցեն, եւ վասն զքեզ պարտական մեղապարութեանն առնիցես։ Ոչ թէ նա չար արար, հնմ չվրէժխնդրիս 'ի նախանձուէն։ Այլ տես զիարդ ասա չեղ ինչ խօսող 'ի մէջ, այլ վասն հասարակաց իսկ եղ զօրէնսն։ Զասաց թէ հաւատացելոց մի հատուցանէք չար փոխանակ չարի, այլ թէ և ումեք մի, թէպէտ և հեթանոս իցէ կամ այլազգ եւս ոք և իցէ։

"Խորհեցարուք զբարիս առաջի ամենայն մարդկան։ Եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք"։ այսինքն է թէ "Զգուշացիք ըստ ձեր առաջի մարդկան"։ ոչ զի ունայնփառութեամբ կեցցեալք, այլ զի մի տայցեմք կռուանս 'ի մեզ գտանել այնոցիկ որք զայն կամիցին։ Վասն որոյ և այլուր ասէ՝ թէ "Առանց գայթակղութեան լինիջիք Հրէից և հեթանոսաց և եկեղեցւոյն այ"։ Այլ բարիոք յօդեաց յառաջդասն յասելն "թէ հնար իցէ"։ վասն զի է ժամ որ չէ հնար, որպիսի ինչ՝ յորժամ վասն բարեպաշտութեան և հաւատոց բանք են, յորժամ վճարիցի ինչ և ջան այլոցի։ Այլ զինչ զարմանք իցեն թէ առ ամենայն մարդիկ այսպիսի ինչ անհնար լինիցի, ուր և առ այր և կին զայսպիսի զհարկաւորութիւն 'ի բաց եդեալ. ասէ. "Եթէ անհաւատն մեկնեսցի՝ մեկնեսցի"։ Այլ զոր ասէն այսպիսի ինչ է. դու զքեզ առ քեզ պահեա և մի ումեք տար պատճառս անիրաւի և կռուոյ։ Իսկ այսպէս եթէ անսանիցես զհաւատոյն վճարեալ, մի նախապատուեր զխաղաղութիւնն քան զճշմարտութիւնն, այլ կաց քաջու-



Digitized by Google

թեանց հաստատուն մնասցէ 'ի մեզ: Այսպիսի և մի այնպէս ընդ հօրն կարգեալ և մի 'ի քաղաքն 'ի բաց զատանիցես, այլ ընդ իրեն մնասցես: Ո՞չ է զոր ասացն «Թէ հնար ինչ է՝ ընդ ամենայն մարդկան խաղաղութիւն արարէք»: Ամենեքեան և նա չխաղաղանայ, դու մի լինիր զայրոյ ձեռնարկել, այլ եղիցի քո բարեկամ բուռ քաղաքացին. և որպէս յառաջին ասացի՝ ճշմարտութեանն մասն մի լինիք:

«Մի՛ զանձինս վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան. զի գրեալ է՝ իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից, ասէ Տէր»: Որո՞ւմ բարկութեան. նոյ: Ոսոխացն եթէ զայս խաղ կամիցի անցանել որ զգեցաւն և 'ի վրէժխնդրութիւնն վայելել. և այս մեծ առաւելութեանց լինի նմա, եթէ զանձինս վրէժ խնդրել չխնդրէք. զի յորժամ խնդրել չխնդրէք, յայնժամ նա պատուհանիցէ զայն: Ասաց 'ի նա զամենայն, ասէ, և ինքն առնէ զվճիռն: Վասնզի այս է զոր ասէն՝ թէ «տուք տեղի բարկութեան»:

Այլ և սփոփելով լինի փոխաւ և զվկայութիւնն եւս 'ի մէջ բերէ, և այնպէս մեծացուցանէ՝ որպէս զի մերձաւորին առանձնաց զնոսա, այնպէս առաւելութեան պատահանիցէ 'ի նոցունց առնելոյն. «Այլ եթէ քաղցեալ իցէ թշնամին քո՝ կերակրեա զնա, և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա: Զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես 'ի գլուխ նորա: Մի՛ յաղթիր 'ի չարէ, այլ յաղթեա բարեաւն չարին»: Այս զի՞նչ ասել, ասէ, թէ խաղաղութիւն պարտ է առնել, այլ և երախտիս եւս հրամայեաց առնել. կերակրեա զնա և արբո, ասէ: Այս առաւել քանզի յոյժ զաշխատութիւնս և զմեծամեծս հրամայեաց, յաւելու 'ի նոյնս՝ թէ «Զայս առնելով՝ կայծակունս հրոյ կուտեսցես 'ի գլուխ նորա»: Զայս ասաց, որպէս զի զնա ևս զգաստագոյն առնիցէ երկիւղիւն, և զնա ևս յօժարագոյն գործիցէ յաւոյն հատուցմանն: Վասնզի զրկեալն յորժամ տեսանիցէ զզրկողն աղքատացեալ՝ խոնղայ. ոչ այնպէս ուրախ լինի ընդ անձին բարութիւնս որպէս ընդ կենդանի ընդ տանջանս. քանզի ոչ այնպէս իմեք ցանկայ, որպէս զթշնամւոյն զխոշտանգանս, և առաւել ցանկացեալն է՝ նա իսկ յառաջ զայն չարչարէ նմա: Այլ յորժամ՝ զամենայն զթշնամւոյն թափիւ 'ի նմանէն, ա-

որս աղօթելով ձայնէ զբարձրագունիցն և ասէ՝ թէ պարտ է թէպէտ և գազան որ իցէ թշնամին՝ կերակրել. և չմնայ այնուհետև թշնամի յորժամ կերակրեցի։ Թէպէտ և յոյժ կարծրամիտ իցես և վնասակար յայլմէ, կերակրես և արբես, ապա և դու քեզէն չյանկանաս նորա տանջանացն։ Որով յետս խրատն հայհոյեցեալ՝ ոչ միայն ողորմացուցանես, այլ ևս քան զևս ածեցուցանես զխաղաղականս։ Զասաց եթէ տանջեսցի լուծ, այլ թէ կայծակունս հրոյ կուտես 'ի գլուխ նորա։

Ապա և քարոզէ իսկ զայնս ասելով թէ "Մ՛ի յաղթիր 'ի չարէն, այլ յաղթեա բարեաւ չարին„։ Դու տես զիարդ եցոյց Թափուր յամենայնէ զայնոսիկ որք ոչն յօժարութեամբ զայս առնիցեն. քանզի որ դեռ ևս զոխան պահիցէ, պարտեալ գտանի 'ի չարէն։ Ա՛յլ չասաց զայս յառաջագոյն, զի չէ ևս էր ժամանակ. իսկ յորժամ Թափեաց զնոցա սրտմտութիւնն, ապա ած զամլիմբ ասելովն՝ թէ "Մ՛ի յաղթիր 'ի չարէ, այլ յաղթեա բարեաւ չարին„։ Զի և այս յաղթութիւն է. քանզի և մարտիկն յայնժամ յաղթէ մանաւանդ, յորժամ վիրացն համբերէ. այլ յորժամ կազմ է 'ի բուռն արկանել զգիմամարտն, և այնպէս վիրացուցեալ յօղն զամենայն զզօրութիւն նորա Թափէ. այնուհետև ապա ինքն ոչ վիրաւորի, և զնորա զամենայն զզօրն լուծեալ քակտեսցէ։

Այնպէս և 'ի թշնամանսն լինի. եթէ անզգեն ընդդէմ թշնամանեցեր՝ պարտեցար ոչ եթէ 'ի մարդոյ ումեքէ, այլ և որ ևս անարգագոյնն է՝ յանազատութենէ կարեաց, 'ի բարկութենէն յաղթեցար։ Իսկ եթէ լռեսցես՝ յաղթես, և բազում համարձակութեամբ զնշանն յաղթութեան կանգնեսցես, և բիւրս բիւրոց ունիս քեզ պսակիչս. և զնոսա զասողսն սուտաբանես և յամօթ առնես։ Քանզի անդէն որ ընդդէմ թշնամանիցէ, զկըծեալ այնպէս Թուի թէ կարիցէ ինչ ասել ընդդէմ, և նա կարծիս ևս տայ այնոցիկ որ լսենն։ Իսկ ապա եթէ ծաղր առնիցես զասացեալսն, զայսա իսկ անձամբ զանձինս ցուցանես։ Դու թէ կամիցիս իսկ հաւաստեաւ օրինակ ինչ զասացելոցս առնուլ, ցնցին իսկ հարցիր զթշնամանողն՝ թէ յոր ժամ չար ցաւէ քեզ, զի ջեռեալ անզգեն ընդդէմ թշնամանիցէ, թէ յորժամ թշնամանիցին՝

և ծառոց ամենայն զբե. Նմանապէս եթէ զայս իսկ լսիցես՝ թէ չթուի ինձ հեշտ թշնամանելն իմ զնա, որպէս թէ կարացեալ էր զնա 'ի բարկութիւն բորբոքել։ Զաստուածս զզայրացողն թէ որպէս իւրեանց մերոյն չարանեն ինչ փոյթ, այլ յածին ընդ մեծ փողոցն և քան զփայլեւնի վարպետս եւս չար գործեն զընկերացն զհետևականն, և ամեն եւեթ հայեն և այնմ հետ տանին թէ որպէս զայն կատարիցեն։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Զայս և մեք ածցուք զմտաւ և պահեսցուք զմեզ յախտակիր անտի։ Զի յորժամ տուն զանկանայցեմք, այսինքն է թշնամանս 'ի մէնջ լսել, յայնժամ է զինեցեալ զնա, յամենայնէ իսկ զմիտս՝ արհամարհելով զիւրեանց անարգութեանն. Նմանապէս և տղայ մարկանիցեսցես զնա և ոչ կատարեսցէ. և զքեզ ընդ փիլիսոփայսն 'ի համար արկանիցեն, իսկ զնա որպէս եթէ ըզչար գազանի զհետ բարբառեալ զբեղցեալ։ Զայս և 'ի զաղանեն առասցուք յորժամ կամիցիմք զմեզ հարկանել։ Մի՛ 'ի փախստէն անդրէն հարցուք և մեք. այլ թէ կամիցիս զառաջոյ զմէջսն տալ, դարձո նմա և զմիւսն եւս ծնօտ, և բիւր խոցմամբ վիրաւորեսցես զնա։ Զի որք զձայթիւն և զզօղութիւնն զարմանացեալ քեզ մատուցանեն, նոքա քան զամբիծ եւս բանադրոյն թուին նմա, և յառաջ քան զնոսա իւր իսկ խիղճն տանջանէ զնա և մեծամեծ պարտաւորութիւնս պահանջէ 'ի նմանէ, որպէս նորա գոյնս իմն կրեալ այնպէս պատկառեալ զնայ 'ի բաց։ Իսկ աստ եթէ 'ի բազմաց զփառսն խնդրեսցես, և յայնժամ եւս մեծագոյնս վայելես։ Նա այլ տարաց ունիցիմք առ այնոսիկ որք զչարչարանսն կրիցեն՝ զվշտակցութիւնն. յորժամ տեսանիցեմք ոչ ինչ ընդդէմ կացեալ, այլ և յօժարութեամբ եւս զինքեանս 'ի ձեռս տան, ոչ եթէ տողումիւք միայն, այլ և դաժանչանաւք եւս։

Վասն այսորիկ ունիմ զիս հեծութիւնք և հառաչեմ. զի կարող էաք և զաստիճան ունել, թէ Քրիստոսի օրինացն լսէաք որպէս պարտն էր լսել, և հանդերձելոցն հասանէաք. իսկ այժմ յերկրաքարշելուսոյն անկաք և աւերակ իմն իմաստասիրեմք։ Նա քանզի նա զամենայն

՚ի բարի և յօգուտ օրհնաբանեաց, և եցոյց եթէ զինչ է որ զմեզ փառաւորս առնիցէ և զինչ այն որ զմեզ անպիտանս գործէ. և թէ այն ինչ ծաղու և անօթոյ էր որ ինչ աշակերտացն պատուիրեաց, նա և այլք իսկ ոչ զայնպիսի զհրամանս։ Այլ քանզի այսպիսի էին որ զնոսա պայծառս և լուսաւորագոյնս գործէին՝ չասել ինչ չար յորոց զչարն լսէին և չհատուցանել չար յորոց չարչարէինն, յաղագս այսորիկ զայս հրամանս եդ։ Իսկ եթէ այսպէս է, ապա մանաւանդ ևս տանել այն է յաժամ թշնամանիցիմք և երախտիս առնիցեմք նենգաւորացն։ Վասն այսորիկ զայսպիսի օրէնս դրեաց։ Քանզի յոյժ խնայէ յիւր աշակերտսն և գիտէ յայտնապէս թէ զինչ է որ առնիցեն փոքունս և մեծամեծս։ Ըստ եթէ խնայէ և գիտէ, ընդէր հակառակն ընդ այլ ճանապարհ գնալ։ Այս և յաղթելն իսկ չարաւ լինելն ՚ի սատանայական օրինացն է։ Վասն այսորիկ և յաղթողական մրցմունս յառաջ ածէն զայնոսիկ և ամենեքին կամ պարմացեալ, և քանզի ամենայն ընթացամարտքն ընդդիմակացութեամբքն յաղթեն։ Այլ ոչ այսպէս և ՚ի Քրիստոսի յասպարիզին օրէնք պատկին են. այլ հակառակ ամին, զչարչարեալն և ոչ որ չարչարէն զնա՝ օրհնաբանեաց պսակել։ Այսպիսի է այն ասպարէզ որ դէմ յանդիման ամենեցուն առաջի ունի զկարգաւորութիւն, որպէս զի ոչ յաղթութեանն միայն, այլ և օրինակ յաղթութեանն մեծապէս լինիցի։ Յորժամ այլ տարազ զպարտութիւնն առնիցես, դու ինքն գործաւոր այնորիկ պսակ քո զօրութեանն։ Այս է երկնից ասպարէզն, այս է հրեշտակաց տեսարան։

Եւ արդ գիտեմ թէ այժմ յոյժ ջեռեալ էք յիրս և քան զամենայն մոմ ևս կակղագոյնք եղերուք. այլ յորժամ աստի ելանիցէք, ամենայն իսկ ՚ի բաց հոսեալ գտանիցի։ Վասն այսորիկ յոգւոց հանեմ զի զասացեալսն գործովք ցուցանեմք, և այն զի հանդերձեալ եմք աստէն իսկ մեծամեծս շահել յայնմանէ։ Զի եթէ ցածութիւն և հանդարտութիւն ցուցանիցեմք, անըմբռնելիք ամենեցուն լինիցիմք, և չիք ոք ՚ի մարդկանէ մեծ ոք կամ փոքր որ մեզ վնասել ինչ կարիցէ։ Իսկ եթէ չար ոք ինչ առիցէ, քեզ և ոչ ինչ, իսկ իւր բազում վնաս գործեաց քան քեզ։ Զտեանես աստէն

իսկ յատեանս, զի զորս զրկեցին՝ նոքա բազում համարձակութեամբ անցեալ կան և աղքատութեամբ խօսին. իսկ որ զրկեցինն՝ նոցա զերեսս 'ի վայր արկեալ զերկիր նշմարեն յամօթոյն և յերկիւղէն։ Այլ զի՞նչ ասեմ զչարախօսանաց և զրկանաց. այլ թէ սուր իսկ որեալ իցէ ընդդէմ քո և համբարձեալ իցէ զաջն իւր ներկուլ յարեան քում, սակայն և այնպէս քեզ ինչ չկարէ վնասել, ընդ իւր իսկ ընդ անձն անցուցանէ զսուրն։ Այլ վկայէ բանիս այսմիկ նա որ յառաջին իսկ սպանաւ յեղբայրասպանն աջոյն. քանզի նա զերծաւ և եհաս 'ի նաւահանգիստն խաղաղութեան և զանմահն զփառսն ստացաւ անձին. իսկ որ սպանն, քան զամենայն զմահս ևս դառնագոյն կեանս կեայր 'ի կենցաղումս երերմամբ և տատանմամբ, և 'ի մարմնի բարձեալ կրէր զամբաստանութիւն իւրայն եղելոց։

Այլ արդ մի ընդ այն նախանձեսջիք, այլ ընդ այս. և մի խնդրեսջիք յաղթել, այլ յաղթիլ։ Քանզի որ չար ինչ յումեքէ կրէ, չունի յինքեան զպարտութիւն չարին; այլ յայլմէ ընկալեալ դարձոյց զնա 'ի բարի իւրով համբերութեամբն. իսկ որ զչարն առնէ, ունի յինքեան բնակիչ զաղբիւրն չարեաց։ Ոչ ապաքէն Յովսէփ 'ի տան բանտին էր, և նորին նենգիչն ազատանիքն 'ի պայծառ և յերեւելի յապարանսն. արդ ո՞ ոք 'ի նոցանէն զոր ինչ կամեցաւ եղև։ Այլ մի ինչ ինձ զփոխարինացն ասեր, այլ զնոյն ինքն առանձին զեղեալսն քըննեա. քանզի ես զայն ըստ համարիմ զբանտն իսկ համբերձ Յովսեփայ քան զպատուանդանս զոր պատժիչն ունէր։ Այլ արդ յերկոցունց յոգնեմն յայտ էր և ատեանս զանն յանդորրութեան և զի համարձակութեամբ, իսկ զեգիտացին յամօթ և յանձկութեան և 'ի տխրութեան և լի աղմկաւ և վհատութեամբ. և այն զի կարծէր թէ յաղթեաց ինչ, այն էր այն յաղթութիւն։

Այլ արդ զայս իմացեալ պատրաստականք լիցուք առ չարչարանս ինչ կրել, որպէս զի այնու զերծանիցիմք 'ի չարչարանաց և համբերձելոց բարեացն ժառանգիցեմք։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հօր հանդերձ Հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն։

# ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

“Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ իցէ, 'ի հնազանդութեան կայցէ”։

Բազում ինչ ճառէ վասն խրատու այսպիսի և աստ և յայլ թղթոյն. և որպէս ծառայիցն հրամայէ հնազանդ լինել իշխանաց տերանցն, այնպէս և որք ընդ իշխանութեամբն են իշխանացն՝ հրամայէ կալ 'ի հնազանդութեան։ Եւ զայս առ 'ի ցուցանել թէ ոչ փոփոխումն ինչ արար Քրիստոս հասարակաց կարգաւորութեանն զիւր օրէնսն 'ի ներքս մուծանելով, այլ վասն ուղղելոյ զդոյն. մարտնչականացն և խռովէ խակ զմեզ մի յիմարս և աւելորդ պատերազմունս յարուցանել։ Բաւական են, ասէ, մեզ այն պատերազմունք որ վասն ճշմարտութեանն 'ի նենգչաց անտի 'ի վերայ մեր հասանեն, և այլ ինչ աւելի փորձութիւնս և յիմարս չարչարանս յաւելուլ։

Եւ դու տես որպէս 'ի զեղ ժամու և զայս բան 'ի կէտ արկանէ. քանզի զայնոսիկ մեծապէս փիլիսոփայութիւն առաջարկելով զառաքինին 'ի հասարակութեանն, 'ի բարեկամաց և 'ի թշնամեաց, որք 'ի բարեկենդանութեանն են և որք 'ի մեղս և որք 'ի կարգութեան. ամենեցուն խակ կարգեաց զնոսա պատուականս և վայելուչս զառնել, և որ ինչ հրեշտակաց վայելէ՝ զայն կարգաւորութիւն անկեալ 'ի նոսա, և զարամտութիւն 'ի նոցանէն և զամբարտաւանութիւն զեղջոյց և ամենայն խնդիր հարթեաց զնոցա զմիտս. ապա յաջորդեալ ճառէ վասն այսպիսի իրաց և խրատ տայ։ Ոչ եթէ որք մեծամեծ աւանդեցին մեզ՝ երկրաւորիս պարտ է առնել, այլ մանաւանդ և ատուել հնազանդ պարտ է լինել որ մեզ վերակացուքն լինիցին։ Ոչ այս յառաջ քան զբան զխորհուրդ խակ եղբայց ասէ այսպիսի ինչ խորհուրդ չարարծէ ասա, այլ ընդ բանս ասէր հրամանաց առնէ։ Եւ ցուցանէ թէ ամենեցուն խակ առ հասարակ տայ զայս հրամանս քահանայից և միայնակեցաց, և ոչ եթէ աշխարհականաց մի-

այն, վասն զի անօրէն 'ի սկզբանն զայս յայտ առնէ ասելովն՝ թէ "Միանայն անձն որ ընդ իշխանութեամբ իցէ, 'ի հնազանդութեան կայցէ,,: Թէպէտ առաքեալ իցես կամ աւետարանիչ կամ մարգարէ և կամ այլ ինչ ոք, չմնասէ ինչ բարեպաշտութեան և ուղղափառութեան այսպիսի հնազանդութիւն: Եւ ոչ լոկ ասաց թէ հաւանեցարուք, այլ թէ 'ի հնազանդութեան կացէք:

Եւ յառաջ իսկ ցուցանէ զիրաւունս այսպիսի օրէնսդրութեան, և հաւատացելոցն մտածութիւնս տայ թէ յԱյ են կարգեալ նոքա. չիք, ասէ, իշխանութիւն որ Այ չէ կարգեալ: Զինչ ասես, միթէ ամենայն իշխան յԱյ ձեռնադրի: Ոչ եթէ զայս ինչ ասեմ ասէ, և կամ թէ զիւրաքանչիւր իշխանաց իցէ բանս իմ այժմ, այլ վասն նորին իրացն. զի ոմանց իշխան լինել և ոմանց ընդ իշխանութեամբ լինել, և մի զամենայն ընդ վայր և ժպրհութեամբ վարել, որպէս զալիս ծփեալս ամենեքին տարեալ և բերեալ լինելն՝ ասացի թէ Այ իմաստութեանն գործ է:

Եւ ոչ վասն այնորիկ ասաց՝ թէ չիք իշխանք թէ ոչ յԱյ, այլ վասն իրացն ճառեալ ասէր, թէ "Ոչ է իշխանութիւնն թէ ոչ յԱյ. ապա ուրեմն որչափ ինչ իշխանութիւն է՝ յԱյ կարգեալ է,,: Որպէս և յորժամ ասիցէ ոմն իմաստուն՝ թէ "Ի տեառնէ պատշաճի առն կին,,, զայն ասէ՝ թէ զամուսնութիւն Ած արար, և ոչ թէ զամենայն կանայս ինքն մերձեցուցանէ առ նոսա: ʻՔանզի տեսանեմք զբազումս որ չարեօք ամուսնութեամբ օրինացն իսկ վարին ընդ միմեանս, և ոչ եթէ Այ զայն ինչ փարկանիցիմք: Այլ զոր ինքն ասէր՝ թէ "Արարար 'ի սկզբանէ արու և էգ արար զնոսա,,, և ասաց թէ "փոխանակ այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր և յարեսցի 'ի կին իւր,,. զայնս և իմաստունն այն մեկնէր ասելովն: Եւ քանզի զուգապատուութիւնն բազում անգամ կռիւս 'ի մէջ արկանէ, յաղագս այնորիկ բազում իշխանութիւնս կարգեաց, որպիսի ինչ, որպէս զայրն և զկինն, որպէս զորդւոց և զհօր, որպէս զծերոց և զերիտասարդի, որպէս զծառայից և զազատաց, որպէս զիշխանաց և որք ընդ իշխանութեամբ են, որպէս զվարդապետս և զաշակերտս: Եւ զի՞ զարմանաս թէ առ մարդիկ այսպիսի ինչ եդեալ, ուր և 'ի նմին 'ի միում

մարմնի ոչ զամենեսին զանդամսն ոչ զուգապատիւս ե-ցոյց, այլ զոմն նուաղ և զոմն առաւել կարգեաց, զոմն իշխել անդամացն և զոմն ընդ իշխանութեամբ հրամայ-եաց լինել։ Օտարս և յանդամոս գտանիցէ ոք կերպ, որպէս 'ի մեղուան և 'ի կռունկս և 'ի ձկնահաւս վայրենի ոչխարացն։ Այս և ոչ ծով զրկեալ զանձն յայտնապէս կարգաւորութեանն, այլ և անդ բազումք յամենայնի ծնելոցն միոյ նկատ հետևին, և զօրավար լինի նոցա, և այնպէս զհետևողացութեան ճանապարհորդութիւնն հարկանեն։

Այլ քանզի անիշխանութիւնն ամենայն ուրեք չար է և պատճառք շփոթութեան, և իբրև ասաց թէ ուստի է իշխանութիւնն, յարեաց 'ի նոյն՝ թէ "Որ հակառակ կայ իշխանութեան, Այ հրամանին ընդդէմ կայ"։ Տեսանես ուր տարաւ եհան զիրսն և ուստի երկեցոյց զնոսա, ցոյց՝ որպէս եցոյց թէ վասն օգտի եղև այն։ Որպէս զի մի ունիցին ասել հաւատացեալքն՝ թէ անարգեցեր զմեզ և արհամարհելիս արարեր, որք զերկնից արքայութեանն ընդունելոց եմք՝ երկրաւոր իշխանաց հրամայես մեզ 'ի հնազանդութեան կալ, ցուցանէ թէ ոչ իշխանաց, այլ Այ հրամանին հնազանդիս որ զայսպիսիսն առնէ, որք այնպիսի իշխանութեանց հաւանին հնազանդել։ Նա ոչ ասաց այսպիսի ինչ. այլ զինչ, եթէ Այ հաւանի որ իշխանացն հնազանդի. և հակառակօքն երկեցուցանէ և զգուշագոյնս կազմէ ասելովն՝ թէ որ ոչ հնազանդի նոցա, ընդ Այ պատուիրանին որ զայսն օրինադրեաց։ Այլ փութայ ամենայն ուրեք ցուցանել՝ թէ ոչ շնորհս ինչ առնեմք նոցա զհնազանդութիւնն, այլ պարտականս եմք. մանաւանդ եթէ այսպիսիք իսկ կարէ ձգել ածել և զանհաւատ իշխանսն 'ի բարեպաշտութիւն, իսկ զհաւատացեալսն 'ի հնազանդութիւն։ Վասնզի բազում բանս յօդէին յայնժամ մեղադիր լինելով առաքելոցն, որպէս թէ հրամանս ինչ և նորաձևութիւն մուծանիցեն և աղարտիցեն զհասարակաց օրէնս մարդկան։ Իսկ յորժամ ցուցանիցեն թէ մեր իսկ հասարակաց տէրն ամենեցուն զայս իսկ ընծայեաց իւրոց աշակերտացն, ապա յայնժամ զամբաստանութիւնն կըր-ճէր և խափանէր ցուցանելն և կարկեն զբերանս նոցա, և ևս առաւել հաստատութեանն վասն ճշմարտութեան հաւատոցն խօսիցին։

Digitized by Google

Այլ արդ մի՛ ինչ առնել հաճոյիցն, ասէ, զայնպիսի զհնազանդութիւն. քանզի ոչ են իւր զայնս օրէնսդրեալ, և ստորիւ զատանի պատուիրեալ որ զայնպիսի իրօք առ-հաւանորհեցէ։ Այլ եթէ զուգակցեալ ինչ պատուիրեալ առ-ժամու է անհնազանդ, այլ յոյժ մեծամեծաց. և ոչ ինչ կարէ քան ընդդիմանալութեան օգնել, այլ և ՚ի մարդկանէ իսկ գրգռեալ զխռովութեան ընդունելոյ. և ոչ ոք իցէ որ քեզ վերաւորեալ լինիցի, և զոմն ևս մե-ծագոյնս զայրացուցանելոյ, որով զսաստկագոյն իսկ անկեան-կեալ ասէր, թէ "Որ հակառակին կամս, անձանց զդա-տաստանս ընդունին"։ Այս ցուցանէ զահ հրամանն, և յետ ահին և ՚ի մտացն իսկ հաւանեցուցանէ ասելովն այսպէս. "Քանզի իշխանք չեն, ասէ, յերկիւղ բա-րեաց գործոց, այլ չարեաց"։

Այլ քանզի ՚ի խորագոյն զմիտս և ասաղխացն, զար-մեալ ողջացուցանէ, իբրև զհիւանդ և զինմասանն բժշկէ զքեզ զնոյն և պատուէ ասելովն, ընդէ՞ր զարհուրիս, զմի՞ սարսափես. միթէ տառապի՞ ինչ կարէ ցքեզ յորժամ բարիոք վարեսցես, կամ եթէ առհաւատչեայ ինչ թուիցի քեզ յորժամ զու պատուհասութեանն խնամ առնիցես. վասն որոյ ՚ի այլում յայտնեալ ասէր. "Կամիս չերկնչել յիշխանութենէն, բարիս գործեա և ընդունիս գովու-թիւն ՚ի նմանէն"։ Տեսե՞ր ապաքէն ընդամենեցուց զնոսա իշխանս, և եցոյց թէ և գովող ևս լինի նոցա։ Տես ապաքէն թագաւորաց միանգամայն և զիշխանաց սրամտութեան նոցա։ "Քանզի Աստուծոյ սպասաւոր է քեզ ՚ի բարիս"։ Ո՛չ յինքեան հեռի է, ասէ, յերկեցուցանելոյ զքեզ, զի և գովող ևս է քո. և այնչափ հեռի է յարգել լինելոյ ՚ի բարիս, մինչև գործակից ևս է քեզ։ Իսկ արդ եթէ գովող ունիցիս զնա և օգնական, ընդէ՞ր ոչ հնազանդիս նմա. զի և այսու դիւրին գործել զառաքինութիւն յորժամ զչարսն պատժիցէ և բարեացն երախտաւոր լինիցի և պատուիցէ և ըստ Աստուծոյ կամացն վարեսցի. յաղագս որոյ փոխանակ ասելով ասէր՝ թէ Աստուծոյ սպասաւոր է։ Այլ արդ հաճեաց յայս. կամիս, ասէ, եւ զզգաստութիւն, զայնս և նա պատուիրէ ՚ի ձեռն օրինացն. խրատեսցէ եւ թէ մի զուրուք յափշտակել և մի զրկել զոք և մի ա-զահել, զնոյն նստեալ դատի. որպէս զի գործակից և օգնական է իմ, և քոյ յաղագս իմոց սպասաւորեցաւ։ Այ[illegible]

այսպիսի երկոցունցն է մեզ նա հաշտելի, զի և յա̃յ առաքեցաւ, և վասն այսպիսի իրաց:

“Իսկ ապա եթէ զչար գործիցես, երկիր, ասէ, ապա ուրեմն ոչ եթէ ընդ վայր ածեալ է զսուրն„: Տեսանե՞ս որպէս վառեալ կազմեաց զնա, և իբրև զզօրական ոք զահեղ 'ի վերայ մեղուցելոցն կարգեաց: “Քանզի ա̃յ սպասաւոր է, ասէ, վրէժխնդիր 'ի բարկութիւն որ զչարն գործէ„: Եւ մի դարձեալ յորժամ լուիցէ տանջանս և պատիժս և սուր՝ 'ի բաց փախիցի և սրանայցէ, յաղագս այնորիկ ասէ դարձեալ՝ թէ զա̃յ զօրէնսն կատարէ. թէպէտ և դու տգիտանայցես, այլ սակայն ա̃ծ այսպէս տպաւորեաց: Նա եթէ տանջելոյ և պատուելոյ սպասաւոր է, վրէժխնդիր առաքինութեան և հալածիչ չարեաց զոր ա̃ծ իսկ կամիցի, և արդ է՞ր վասն հակառակիցիս ընդ այնմիկ որ այնչափ բարութիւնս 'ի ներքս ածէ և յառաջ ճանապարհ հորդիցէ քոյում ուղղութեանցն: Քանզի բազում զառաջինն վասն իշխանաց զառաքինութիւն ճգնեցան, 'ի վերջոյ ապա և վասն երկիւղին ա̃յ զնմանէ բուռն հարին. զի զթանձրագոյնսն ոչ այնպէս հանդերձեալքն որպէս մերձակայքս նախանձեցուցանեն: Եւ արդ յորժամ զհոգիս բազմաց յարդարէն երկիւղիւն և պատուովն, որպէս զի լինիցին պիտանիք առ 'ի վարդապետութիւն բանին, յիրաւի այնպիսին պաշտօնեայ ա̃յ կոչի:

“Վասն որոյ հարկ է հնազանդել ոչ միայն վասն բարկութեանն, այլ և վասն խղճին„: Զի՞նչ իցէ՝ թէ ոչ միայն վասն բարկութեանն: Ոչ միայն, ասէ, թէ ընդդէմ կայցեր ա̃յ չհնազանդելովն և չթուի քեզ թէ մեծագոյն չարիս քեզ կազմեցեր և յա̃յ և յիշխանէն, այլ զի և 'ի մեծամեծս իսկ քեզ երախտաւոր լինի, զխաղաղութիւն ընձեռէ և զքաղաքական մատակարարութիւն յօրինէ նա, և բիւր բարութիւնք իսկ քաղաքացն յայնպիսի իշխանաց լինին: Եւ եթէ զնոսա 'ի բաց մերժիցես, ապա տեսանիցես զի ամենայն իսկ առ հասարակ 'ի վայր հոսեալ կործանի. ոչ քաղաքք և ոչ գաւառք և ոչ տուն և ոչ վաճառափողոցք և ոչ այլ ինչ յամենայնէ կայ հաստատուն, այլ ամենայն ինչ շրջեալ եղծանիցի, և որք զօրաւորքն են՝ զտկարագոյնսն իբրև զնկուն կլանիցեն: Զի թէպէտ և ոչ վասն բարկու-

թեանն և տպաւորելեացն անհնազանդիցն, սակայն քեզ և այնպէս պարտ է հնազանդել, որպէս զի մի՛ վասն խղճի մտաց կարիցես լինել, և անագորոյն առ երախտաւորն գտանիցիս :

«Յաղագս այնորիկ և հարկս հարկանէք, ասէ, զի Այ պաշտօնեայք են 'ի նմին ժուժկալեալք»: Եթող սուել զամենայն զերախտիսն որ քաղաքացն յիշխանաց անտի լինին. զորս ինչ. զբարեկարգութիւնս, զխաղաղութիւնս, զոր ամենայն զմատակարարութիւնս զոր առ զօրականսն առնեն, զի առ հասարակ հալածական իրացն վարեսցին. և զայլս զամենայն միով իսկ եցոյց: Այլ զերախտիսն զոր առնուս 'ի նոցանէն, ասէ, դու իսկ վկայես զի զհարկսն տաս նոցա, այսինքն է զվարձսն ընդ երախտեացն: Տես զիմաստութիւն և զհանճարն Պաւղոսի. քանզի որ թուէրն եթէ ծանրաբեռնի և տաղտկալի ինչ իցէ, այսինքն է հարկացն պահանջումն, զայն 'ի զէնս իմն առնէ նոցա խնամոցն: Ո՞ր վասն, ասէ, հարկս տանէք թագաւորի, ոչ որպէս հոգողի և յառաջ խորհողի զմեզ, ոչ ապա մեծացեալ վարձս ընդ երախտեացն հատուցանեմք. և ոչ իսկ տայաք հարկս՝ թէ չէր 'ի սկզբանէ գիտացեալ թէ շահիցուք ինչ յայսպիսի հրամանաց: Այլ ամենայնքն 'ի վերուստ իսկ միահամուռ ամենայն ազգի մարդկան հաճոյ թուեցաւ կերպարանել իշխանացն 'ի մէնջ. վասն զի զխուժեանց տանցն անփոյթ արարեալ՝ առ հասարակ զամենայն աշխարհի իրաց հոգան և խնամ տանին, և զամենայն զպարապումնն յայն ծախեն, որով և մեր կեանքս անբաւ պահին :

Այլ արդ իբրև տաց զայն ինչ որ յառաջագոյնն էր, այսպէս դարձեալ յառաջին 'ի բանն անդր եկեալ է. միանւանգ զի զհաւատացեալսն այնու իսկ էր բաւական յիշեցն կարգել: Այլ եցոյց դարձեալ թէ և Այ կամք են, և 'ի նոյն անդրէն փակէ զիմաստութիւնս ասելով այսպէս՝ թէ «Աստուծոյ պաշտօնեայք են»: Եւս և զաշխատութիւն նոցա ցուցանէ և զտառապանսն. ասէ. «Անդի և 'ի նմին ժուժկալեն»: Այն իսկ են, ասէ, նոցա վարձք, նոյն փոյթք, որպէս զի դու վայելեսցես 'ի խաղաղութեան: Իսկ և յայլում թղթի ոչ միայն հնազանդս լինել, այլ և աղօթս առնել վասն նոցա հրա-

Digitized by Google

մայէ, և ցուցանէ՝ թէ և այնց հաստատակաց է շահն. “Առաւել զի խաղաղութեամբ և քաղցրութեամբ վարեա-ցուք 'ի կենցաղումս„: Զի ոչ եթէ փոքր ինչ նպաստ լինին նոքա մեզ յաժամանակեան կարգաւորութեանս յայսմ, յորժամ զինուքն վառիցին և ճակատուցեն 'ի զինի հարկանիցին. և կամ յորժամ դարձ 'ի քաղաքան երկպառակութիւնքն լինիցին, զկնի որոյ արագ արագ ըն-դերումն առնենն և զամենայն թշուառութիւնսն ըն-ծեալ եղծանենն: Այլ մի ինչ այժմ զայնցանէ ասեր որք զերծն չարաչար 'ի կեր արկանենն. այլ 'ի նոյն ինքն հայ-եաց 'ի կարգաւորութեանն բարեզարդութիւն, և առաջ առաքեանսն անդէն 'ի սկզբանն զայսպիսւոյ զօրէնսդրու-թեանն զխաղաղումն խնամութիւն:

“Արդ հատուցէք ամենեցուն զպարտս, որում զհարկն՝ զհարկն, որում զմաքսն՝ զմաքս, որում զերկիւղն՝ զերկիւղ, որում զպատիւ՝ զպատիւ. և մի՛ ումեք պարտապան գտանիցիք, բայց 'ի սիրելոյ զմիմեանս„: Դեռ ևս զնոյն ունիք. ոչ ինչ միայն հրամայեմ տալ նոցա հարկ, այլ և զպատիւ և զերկիւղ: Այլ զիարդ վերա-գոյն ասէր, “Կամիս չերկնչել յիշխանութենէ, զբա-րիս գործեա„, և աստ ասէ՝ թէ հատուցէք զերկիւղն: Զայժ պատուոյն ասեմ, ասէ, ոչ որ 'ի չարեաց անտի երկիւղն լինի. զայնմանէ ակնարկէ վերագոյնն: Այլ չա-սաց թէ տուք, այլ թէ հատուցէք. նա և զպարտուցն ևս անուն յաւել. զի ոչ եթէ շնորհս ինչ առնես զայս, ասէ, այլ պարտաւորեալ ես խրոյն. Թէպէտ և ոչ վարիս նոքօք, այլ զապաշնորհացն զատ ասա: Այլ արդ մի կար-ծիցես խոնարհել ինչ և վատանալ զինուորի զիշխանու-թեան քո զպատիւ, զի[1] եթէ անիշխանն լինիցիս և 'ի յանցաւորաց 'ի վերայ յառնիցես: Զի եթէ մինչ յայնժամ իշխանքն հեթանոսք էին՝ զայսպիսի օրէնս եդ, առաւել ևս պատուել այժմ առ հաւատացելովքս պարտ էր այս լինել:

Իսկ արդ եթէ ասիցես՝ եթէ ինձ մեծ հաւատացեալ-քան նոցա, ուսիր զի չէ քո այժմ ժամանակ. վասն զի օտար և նժդեհ ես. է ժամանակ յորում դուն քան զամենեսին պայծառագոյն երևեսցիս: Այժմ կեանքն

1 Ցայլն. եթէ իշխան մեզ լինիցի՝ յարն կոչէս, եթէ գլուխ բանացիս:

քո ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱծ. Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն մեր, յայնժամ և մեք յայտնեսցեմք ընդ նմա փառօք։ Ապա արդ մի խնդրեր առաջէն 'ի մերձակայ ժամանակիս զվայելչութիւնս փառաւորէնս. այլ թէպէտ և պարտ է քեզ ահա տառապիլ կալ իշխանին, մի անարժանս վարկանիր զայսպիսի իրս քաջ բարեպաշտութեանց։ Այս և Ած իսկ զայս կամի, զի իշխանին որ 'ի նմանէն յօրինեցան, զիւր զընտանի զործն ունիցին։ Ոչ թէ որ զանուանս ինչ զիւր խորհրդ չգիտասցեն, Հանդերձեալ երկիւղիւ կայ տառապիլ դատաւորին, այսպէս մանաւանդ տառապել նմա պարտ է երկնչել որ զայսն գործեաց, և զաւ լուսաւորագոյն քան զնա զաւանեցին. զի ոչ եթէ 'ի պատուելոյն զնա ամենայն լինիս, այլ յանպատուելոյն. Նա և իշխանին իսկ այսպէս մեծապէս զարմանայ ընդ քեզ և յայտնանէ փառաւորէ զանէլն քո, թէպէտ և անհաւատ է։

“Ապա մի ումեք պարտապան գտանիցիք, ասէ, բայց զմիմեանս սիրելոյ„։ Պարտեալ առ մայրն ամենայն բարութեանց ընթանայ և 'ի վարդապետան և 'ի կարգեալսն ամենայն առաքինութեանց. և ասէ թէ այս պարտք են. թէպէտ և չէ այնպիսի որպէս զհարկն և զմաքսն, այլ սա ցանկ համապազ. և ոչ երբէք կամի զսորա զհատուցումն 'ի բաց հատանել, մանաւանդ եթէ ոչ հատուցանել կամի և ոչ լնուլ, այլ միշտ պարտական լինել։ Քանզի այսպիսի են պարտքն որպէս զի և հատուցանեմք և միշտ պարտիմք։ Ասէ զընծայն որ առնի է՝ յայտնէ առնելովն. “Ոչ որ սիրէ զընկերն, զօրէնս կատարէ„։ Դարձ և զայս անգամ, ասէ, մի վարկանիր թէ շնորհս ինչ առնիցես նմա, այլ և այսպիսիկ պարտս են, վասն զի պարտականս ես եղբօրն սիրոյ վասն հոգևոր ազգականութեանն։ Ասէ ոչ այսչափ միայն, այլ և անդամք միմեանց. և եթէ նա 'ի միջնոյ մերժի, ամենայն ամենայն իրք 'ի բաց ձեռքեցի։ Սիրեա այժմ զեղբայրն. Որպէս զի 'ի սիրոյ անտի նորա այնչափ շահք լինին, մինչ զօրէնսն զամենայն կատարես, պարտականս ես սիրոյն նորա, վասն զի երախտաւոր առնէր 'ի նմանէ։

“Ո՛չ շնասցես և մի գողանայցես և մի սուտ վկայեսցես, և եթէ այլ ինչ պատուիրան՝ յայս բան բովանդակի, 'ի սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո„։ Ասէ

չասաց լոկ թէ կատարի, այլ թէ բովանդակի. այսինքն է թէ երագ և փոքր մի կանոնիւն կատարէ զպատուիրանացն զգործ: Վասն զի սկիզբն և վախճան առաքինութեան սէրն է. զսա կալ քեզ արմատ, զայն արա քեզ մերձաւոր, սա լիցի քո գլուխ: Զի թէ սկիզբն և կատարած նա է, զի՞նչ ինչ զայդ կայցէ նմա: Ոչ զընդվայր սէրն խնդրէ, այլ զհաստատունն և զջերմն. վասն որոյ և չասաց լոկ թէ սիրեսցես զընկեր քո, այլ թէ իբրև զանձն քո: Յաղագս այնորիկ և Քրիստոս զօրէնսն և զմարգարէսն ասաց թէ 'ի նա կախեալ կան, և երկուս դէմս դնէ սիրոյն: Տես ուր տարաւ եհան զնա. ասաց թէ առաջին պատուիրան այն է՝ սիրեսցես զտէր ած քո. Յաւեաց և զերկրորդն և չլռեաց, այլ յաւել՝ թէ նման նմին, յաւելն՝ թէ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո: Եւ արդ զի՞նչ զայդ այսպիսում մարդասիրութեան կայցէ, յորում մեք հեռացեալք մեկուսի կայաք 'ի նմանէն, և նա զիւրն զսէրն նախ մերձեցոյց 'ի մեզ և ապա զմեզ առ ինքն ամփոփեաց, և որ ինչ նման սմին է զայն ասաց: Եւ զայդ իսկ մայրական զթոյն եդ իսկ զերկոսեան. քանզի 'ի նորայն ասէր՝ թէ յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ սիրեա: Իսկ Պաւղոս ոչ այսպիսի ինչ էր և ոչ պարտէր ինչ նոցա, և այնպէս սաստիկ 'ի կիր արկանել զբանն. որպէս և մեք ասեմք յորժամ զոք սիրիցեմք՝ թէ զնա սիրեա, զիս սիրեա. զայնս և նա յայտ առնէր ասելովն թէ նմին նման է, այսինքն այնմ սիրոյ. զոր և առ Պետրոս ասէր Քրիստոս՝ թէ սիրես զիս, արածեա զոչխարս իմ:

“Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ. լրումն օրինացն սէր է„: Տեսե՞ր որպէս զերկաքանչիւր զառաքինութիւնսն ունի՝ զմերժումն չարեաց և զմեղսն չգործել և զբարեացն արգասիս: Լրումն օրինացն է, ասէ. ոչ եթէ զկարգապետութիւն վարուցն մերոց ընդ Մովսէսի զուգէ միայն, այլ և զուղղութիւն առաքինութեն զիւրինս գործէ. զի ոչ եթէ այնքան ինչ միայն զոր պարտ էրն ինչ փութայր հատուցանել՝ որ էր օրինացն, այլ և 'ի գործ իսկ արկանէ զնա և պատերազմակից մեզ կոչէ, ոչ մասն ինչ 'ի պատուիրանացն, այլ բոլորովին իսկ ուղղէ 'ի մեզ զառաքինութիւնն:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Այլ արդ սիրեսցուք զմիմեանս որպէս նա սիրեաց ըզ-մեզ . քանզի մարդկային սիրովն յորժամ սիրիցեմք , բազում անգամ և չարախօսիցեմք ընդ միմեանս : Իսկ յորժամ ըստ նմա հարեալ իցեմք ՚ի սէրն , ապա իւր ար-ժանիս վարկանի զմեզ . և որք չհաղորդին սիրոյն նորա , զայնոսիկ ատէ և մերժէ : Վասն զի մարդկային սէրս նախանձու և չարակնութեամբ լի է , իսկ աստուածայինն յա-մենայն կարեացաղաս է . յաղագս այնորիկ և հաղորդս իւր կամի զմեզ սիրոյն : Սիրեա , ասէ , և դու ընդ իս զոր եսն սիրեմ , և յայնժամ ապա յոյժ մեծագոյն ևս ըզ-քեզ սիրեմ : Տեսանէր զջերմ սիրոյն զգանս : Այլ թէ սի-րես զայնոսիկ որ յինէն յարուցեալ են , ապա և ես փու-թամ սիրել զքեզ : Քանզի յոյժ խանդակաթ է փըր-կութեան մերում , և զայս անդուստ իսկ ՚ի վերուստ եցոյց . յորժամ զմարդն ստեղծանէր , զինչ ասէր . “Ա-րասցուք , ասէ , մարդ ըստ պատկերի մերում ” . և դար-ձեալ թէ “Արասցուք նմա օգնական ” . և “Ոչ է բա-րւոք նմա միայն լինել ” : Այս յորժամ անօրինեցաւն , դարձեալ սատանեաց . այլ սէր որպէս հեզութեամբ . քանզի չասաց՝ թէ ով ապիրատ և ամենապիղծ , այնչափ երախ-տիս ընկալար յինէն , և յետ այնորիկ սատանայի հա-ւանեցեր և զքո բարերարդս ՚ի բաց թողեր և չար գի-ւտին մեր եղեր : Այլ զինչ ասէ . “Ո՞վ ասաց քեզ թէ մերկ իցես , միթէ ՚ի ծառոյն ուստի պատուիրեցի քեզ միայն չուտել անտի կերա՞ր ” : Որպէս հայր որ յորժամ մանկանն պատուիրիցէ՝ մի մերձենալ ՚ի սուր , և նորա անհնազանդ եղեալ վիրաւորիցի , և հայրն ասէ զնա՝ ուստի վիրաւորեցար , բայց եթէ յայտնանէ զի ոչ լուար ինձ : Տեսանե՞ս զի բարերարի բանք են այսոքիկ մանա-ւանդ քան սաստն , և բարեկամի և արհամարհեալ բա-րեկամի և ոչ երբէք ՚ի բաց մերժեալ ՚ի մէնջ : Այս արդ նմանեսցուք այժմ նմա , և յորժամ սաստիցեմք՝ զնոյն հանդարտութիւն պահեսցուք : Քանզի և կինն զար-ձեալ յետ նորա հեղութեամբ իմն լինէր , ոչ եթէ մե-ղադրութիւն ինչ էր , այլ միայն դնելոյ և յուղղութիւն առնելոյ , զի զգուշագոյնս յառաջիկայսն ևս առնիցէ :

Յաղագս այնորիկ առ օձն ոչ այսպիսի ինչ ասաց. քանզի նա էր չարեացն ճարտարապետ, և չունէր յայլ ոք փոխել զպատճառսն. յաղագս որոյ սաստկագոյնս իսկ զնա պատժեաց. և ոչ այսչափ միայն, այլ և զերկիր ևս հաղորդ արար անիծիցն։ Նոյն սոյն եթէ եհան 'ի դրախտէ անտի. և բնակեցոյց զնա յաշխատութեան, յաղագս այնորիկ իսկ արար է երկիր պատուանել նմա և պտղաբերել։ Իսկ վասն զի 'ի ծուլութիւն ած զնա փափկութիւնն, կարճէ զուրախութիւնն, և տրտմութեամբն պարապէ զծուլութիւնն, որպէս զի այնու անցքն առ օրէն նորա վերադառնայցէ։

Իսկ արդ զինչ՝ միթէ առ Կայենն ոչ զնոյն օրինակ հեզութեան արկ 'ի կիր. թէպէտ և թշնամանեցաւ 'ի նմանէն, այլ չթշնամանեաց անդրէն փոխանակ. այլ աղաչէր և ասէր. "Ընդէ՞ր անկան երեսք քո". և այն զոր ինչ եղեն չէր արժանի ներման, և յայտ 'ի կրտսերոյ եղբօրէն էր։ Նոյն սակայն չխոշտանկեաց ինչ, այլ զինչ ասացէ. "Մեղար, ասէ, լուռ լեր, մի ևս յաւելուր. առ քեզ դարձ նորա, և դու տիրեսցես նմա". զեղբօրէն ասէր։ Մի 'ի արգելք երկեար, ասէ, թէ զուցէ վասն անջանկիցի նորա զանդրանկութիւնն քառնայցեմ ինչ 'ի քէն. քան զայլերեսս մի երկնչիր. այլ զամենայն իսկ զիշխանութիւն նորա տամ 'ի ձեռս քո. միայն լուռ լեր և տիրեա զայն որ ինչ քեզ ոչ մեղաւ. քանզի ես երկոցունց զարմանն առանիմ։ Իսկ այս է որ զիմն ուրախ առնէ՝ չանգտակելն ձեր ընդ միմեանս։ Իսկ զոր օրինակ մայր գթած, այսպէս և Աստուած զամենայն ինչ առնէր և հնարէր, որպէս զի մի՛ ձեղքիցին 'ի միմեանց։ Իսկ զի ևս յայտնագոյնս զբանս օրինակիս արասցուք, զմտաւ ածել զՌեբեկայ զխռովելն և զաղմկելն և ամենայն ուրեք ընթացեալ, յորժամ երեց որդին մարտնչէր ընդ կրտսերոյ մանկանն. զի թէպէտ և յոյժ սիրէր զՅակոբ, այլ և ոչ 'ի յԷսաւայ 'ի բաց զատանայր և մերժէր։ Վասն որոյ և ասէր. "Մի՛ զուցէ անզաւակեցայց յերկոցունց 'ի ձէնջ 'ի միում աւուր"։ Այսպէս և Աստուած յայնժամ ասէր. "Մեղար, լուռ լեր. առ քեզ դարձ նորա". զպատահումն յառաջ կամէր ցածուցանել և զխաղաղութիւն երկաքանչիւրոցն խնդրէր։ Իսկ յորժամ զնոյն եսպան, սակայն և ոչ այնպէս եբարձ 'ի նմանէ զիւր

տեսչութիւնն. այլ դարձեալ հանդարտութեամբ խօսի ընդ եղբայրասպանին և ասէ. "Ո՞ւր է, ասէ, Աբէլ եղբայրն քո". զի կամէ այնպէս խոստովանեցուցանել: Իսկ նա քան զառաջինն ևս չար անամօթեալ, այլ և ոչ այնպէս մեղկեցաւ ի նմանէն, դարձեալ սիրով քաղցրա-ցի նմա, այնմ յորմէ թշնամանեցաւ և անարգեցաւ, և ասէր այսպէս՝ թէ "Ձայն արեան եղբօր քո գո-չէ առ իս". և դարձեալ յետ սպանմանն յերկիր ա-ռաքէ զորդանութիւն իւր և ասէ. "Որ եբաց զբերան իւր և ընկալաւ զարիւն եղբօր քո". որ և այս խնայելոյ իւն օրինակ էր, զոր և Դաւիթն արար յորժամ և Սա-ւուղ անկաւ ի պատերազմին: Քանզի նա որք ընկա-լան զապականութիւն՝ զլերինսն անիծանէր ասելով. "Լերինք Գեղբուայ, մի անկցէ ի վերայ ձեր ցօղ և անձրև, քան-զի անդ անկան վահանք զօրաւորաց": Այնպէս և տէր որ-պէս զդիակ եղբօրն յերկ արկեալ մեծամեծէր, ասէ՝ թէ "Ձայն արեան եղբօր քո բարբառի առ իս. և այժմ անիծեալ լիջիր դու յերկրէ որ եբաց զբերան իւր և ըն-կալաւ զարիւն եղբօր քո ի ձեռաց քոց": Օ՜ այս ասէր որպէս զի զեռանդն սրտմտութեան նորա ցածուցէ, և հաւանեցի զնա յետ մեղանչելոյ եղբօրն սիրել: Թո-ղուցեր, ասէ, զնորա զկեանսն, ընդէ՞ր և զթշնամութիւն չշիջուցանես այսուհետև: Բայց զի՞նչ առնիցէ. և զնա սիրէ և զնա. վասն զի զերկոսեան խնդրէ սատակել: Իսկ արդ զի՞նչ, սատանայ սատանայից թողցուր զարդարոցն. այլ ևս դժնդակ լինէր: Իսկ առաջ զի՞նչ՝ սանձէր զնա. այլ քան զհայր ևս գթած է: Իսկ արդ տես զխորդ և սանձէ և զսէրն ցուցանէ սմին այսմիկ. մանաւանդ եթէ ոչ սան-ձէ, այլ ուղղէ միայն: Քանզի ոչ եթէ սպան զնա ի նմին ժամու, այլ կապեաց զնա երերմամբն և սասան-մամբն, որպէս զի արձակեսցի ի մեղաւորութենէն. զի կամէ այնպէս մերձեսցի ի նորա զթուլութիւնն և հաւ-աստեսցի ողջունելի ընդ գնացեալսն. քանզի չկամէր թշնա-մութեամբ երթալ նմա աստի առ վախճանականն:

Այսպիսիք են որք սիրեն. զի յորժամ երախտաւորս առնուն և չարիս, յառաջին և առաւելք լինին. թէ-պէտ և չկամին սատանել, այլ սէրն հարկաւորէ յայն գալ, որպէս զի կամէ այնպէս կոչեցեն զարհամարհողսն յին-քեանս: Բայց սակայն և նոյն այսու մխիթարէր զնա

յոյժ սիրոյն, որպէս զի և տանջանքն յօգուտ լինելին՝ հարկէր զտանջանսն 'ի վերայ ածել: Տեսանեմք և ըզՊաւղոս զի զայս ասէր կորնթացւոցն. "Ո՞վ է, ասէ, որ ուրախ առնէ զիս՝ թէ ոչ որ տրտմեցին յինէն,,: Վասնզի յորժամ թանձրացուցանէ զպատիժսն, յայնժամ ցուցանէ և զսէրն: Նոյնպէս և եգիպտացին 'ի մեծի սիրոյն յորժամ տանջեաց զՅովսէփ. այլ այն սէր խառնակութեան էր, իսկ սոյն 'ի բարիս, և արժանի իսկ բարեկամութեան էր սէրն այն: Սատն այսպիսի չհրաժարէ 'ի թանձրագոյն 'ի բանս զիջանել և բարբառել զմարդկային կարեացն անուանս և նախանձոտ զինքն կոչել. "Աստուած նախանձոտ եմ ես,, ասէ. որպէս զի ուսցիս զսիրոյն զհամարս:

Արդ սիրեսցուք զնա որպէս և նայն կամեսցի, քանզի մեծ իրս ունէ առաջի մեր: Թէպէտ 'ի բաց դառնայցեմք 'ի նմանէ, կայ մնայ աղաչելով զմեզ. թէ չկամիցիմք դառնալ, տանջէ վասն սիրոյ, և ոչ զխոշտանգանսն պահանջիցէ: Տես զինչ ասէ ցԵզեկիէլ առ որս սիրեցաւն և արհամարհեաց զնա քաղաքն. "Նենգեցից 'ի վերայ քո զհոմանիս քո, ասէ, և մատնեցից զքեզ 'ի ձեռս նոցա, և քարկոծեսցեն զքեզ և սպանցեն. և բարձցի նախանձն իմ 'ի քէն և հանգեայց և ոչ ևս հոգացից,,: Ո՜վ արդ զինչ ինչ քան զայնպիսի սէր սաստիկ կայցէ, յորժամ որ սիրէն՝ արհամարհեսցի յայնմանէ զոր սիրեացն, և յետ այնորիկ նա դարձեալ տաչորեալ լինի սիրովն նորա: Զամենայն ինչ ած գործէ, որպէս զի սիրիցի 'ի մէնջ. վասն այնորիկ և յորդին անգամ ոչ խնայեաց. իսկ մեք պաշտոնորհք և ստամբակք: Նաև եղիցուք երբէք հեզք և սիրեսցուք զած որպէս սիրելն պարտ է, որպէս զի հեշտութեամբ յառաքինութիւնն վայելիցեմք: Զի եթէ որք կին հաճոյական ունիցին, չզգայ իմիք զցանկութեան տաղտկականացն. իսկ յորժամ զածայինն և զսէրն. զհաճոյականն ունիցիմք, զիմասած թէ յորչափ 'ի հեշտութեան վայելեմք: Վասնզի սա ինքն է երկնից արքայութիւնն, սոյն շրջանն բարութեան, սոյն է հեշտութիւն, սա է ուրախութիւն, սոյն ինքն է բերկրութիւն, նա և երանութիւն իսկ սա է. մանաւանդ եթէ բիւր ինչ ասիցեմ, չկարեմ որպէս արժանն է յանդիմանն կացուցանել, այլ փորձ իրացն միայն

Digitized by Google

գիտէ ուսուցանել զլաւն։ Նման այսորիկ և մարգարէն ասէ. "Յուսա 'ի տէր". և դարձեալ թէ "Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր"։ Այլ արդ հաւանեսցուք նմա և փափկասցուք 'ի սէրն նորա, և այնպէս ապա աստէն իսկ տեսանիցեմք զարքայութիւնն և հրեշտակական կեանս կեամք, և յերկրի շրջելով՝ քան որ յերկինս բնակեն չգտանիցեմք ինչ նուազագոյն, և յետ աստի անդր երթոյն ամենայն պայծառութեամբ կացցուք առաջի բեմին Քրիստոսի և յանձառելի փառացն վայելիցեմք։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հօր հանդերձ Հոգւոյն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն։

## ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

"Այլ զայս գիտասջիք եթէ ժամ է մեզ 'ի քնոյ զարթնուլ"։

Այլ իբրև զամենայն ինչ որ պէտք էին՝ կարգեաց և ետ հրամանս, մղէ զնոսա դարձեալ յերկրաւորացս 'ի բարի գործս։ Մերձ 'ի դուրս եկեալ կայ, ասէ, ժամանակ դատաստանին. զոր և Կորնթացւոցն գրէր՝ թէ "Ժամանակս կարճեալ է այսուհետև". դարձեալ հեբրայեցւոցն՝ թէ "Փոքր միւս ևս որ գալոցն է եկեսցէ և ոչ յամեսցէ"։ Այլ անդ զաշխատեալսն հաստատէր, և զքրտնեալսն զօրս 'ի միմեանց անուլին փորձութեանցն՝ յաղագս մխիթարելոյ զնոսա ասէր զայս. իսկ աստ ընդնիրհեալսն զարթուցանէր. քանզի առ երկաքանչիւրսն իսկ վայելուչ է բանս այս։ Արդ զինչ է զոր ասէն՝ ժամ է մեզ 'ի քնոյ զարթնուլ։ Այսինքն է մերձ է յարութիւնն, 'ի դուրս հասեալ է ահագին ատեանն, մերձեալ է ահաւոր օրն որպէս հնոց բորբոքեալ, և պարտ է մեզ այսուհետև զերծանել 'ի ծուլութենէ։

"Քանզի այժմ մերձ է մեզ փրկութիւն քան յորժամ հաւատացաքն"։ Տեսանե՞ս որպէս եդոյց նոցա հաւաստեաւ զյարութիւնն, թէպէտ և յառաջ քան

զժամանակն ասաց. զի որչափ անցանէր ժամանակս ծախի, այնքան հանդերձեալ յաւիտեանն մերձ լինի: Եւ եթէ պատրաստ գտանիս և զամենայն զոր ինչ հրամայեալն արարեր, որ փրկութեան է քեզ օրն այն. իսկ ապա եթէ զորլին հակառակն, ոչ ևս փրկութեան: Եւ չառնէ սկիզբն 'ի տրտմականացն, այլ 'ի հեշտականնաց անտի յարդարէ, և այսու 'ի մերձակայ վշտակցութեանս սփոփէ զնոսա: Եւ վասն զի առանձին իմն էր յառաջինսն փութադոյնս լինել և անձնացուցանել զփափագումն, և յորժամ ժամանակ ինչ 'ի վերայ անցանէր՝ մեղկէին զփոյթն, ասէ թէ զառաջին հակառակն գործեցէք, և մի մեղկէք զոլոր փութոյն ժամանակօք, այլ մանաւանդ անձնացուցէք: Զի որչափ թագաւորն մերձ է, նոյնպէս և առաւել ևս պարտիմք պատրաստք գտանել. մանաւանդ որչափ բռաբիոնն մերձ է, այնքան արժան է պատրաստք գտանել մեզ առ մրցումն: Զայն և սուրհանդակքն գործեն. յորժամ մերձ 'ի կատարել զընթացսն են և զբռաբիոնն առնուլ, յայնժամ առաւել պնդի լինի: Վասն այսորիկ և նա ասէր՝ թէ "Վասն այսորիկ մերձ է մեզ փրկութիւն քան յորժամ հաւատացաքն":

"Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ": Ապա ուրեմն այս վախճանի, իսկ այն մօտի. և արդ ըստ այնմ վարեսցուք, և մի ըստ այսմ: Այս և 'ի կենցաղոյս կիրս այնպէս իմն լինի. յորժամ տեսանիցեմք զգիշերն մերձ յայգ եկեալ և զձիձռունսն ծիծառանցն լուիցեմք, իւրաքանչիւր ոք այնուհետև զընկերսն յարուցանեմք. զի թէպէտ և փոքր մի կայցէ 'ի գիշերոյն, քանզի մերձ է 'ի լոյս, սկսանիմք ասել միմեանց՝ եթէ միջօրեայ իսկ է, և ապա զգենուցումք և զաւուրն իրս վճարեմք և յերազոցն զերծնումք և քնոյն ընդդէմ կամք, որպէս զի կազմ և պատրաստ զմեզ օրն գտանիցէ, և չև սկսեալ է ճառագայթս արեգականն՝ յառնիցեմք և սթափիցեմք:

Եւ այժմ զոր ինչ անդ առնիցեմք, զայն և աստ գործիցեմք. մերկասցուք 'ի բաց զտեսիլ ամենայն, զերծցուք յերազոց կենցաղոյս այսորիկ, 'ի բաց ընկեսցուք ըզթանձր քունն, և զգեցցուք փոխանակ հանդերձից զառաքինութիւն. քանզի զայս ամենայն յայտ առնէր

ասելովն՝ թէ «Ի բաց մերկացուք այսուհետեւ զգործս խաւարին եւ զգեցցուք զզէնս լուսոյ»։ Վասն զի 'ի Ճակատս եւ 'ի պատերազմունս կոչէ զմեզ օրն։ Նաեւ մի զարհուրեսցիս Ճակատս լսելով եւ զէնս։ Վասն զի երեւելի զէնքս ծուլածոյք եւ ծանունք են, եւ դժկամակ լինելն այսու որ վարիմն. իսկ աստ հեշտալի իմն եւ աղօթից արժանի։ Վասն զի լուսոյ զէն է. յաղագս այսորիկ եւ զպաղպաջմունսն քեզ լուսաւորագոյն ցուցանէ. եւ բազում փայլատակմունս արձակէ եւ 'ի զգուշութեան պահէ. քանզի զէն է եւ լուսաւոր իմն է եւ լուսաւորէ զայնոսիկ որք կրեսն։ Իսկ արդ զիա՞րդ չիցէ անդ պատերազմել. հարկ է պատերազմել, բայց սակայն չէ տառապանօք եւ աշխատութեամբ. նա եւ պատերազմն իսկ չէ այնպիսի, այլ տօնի իմն եւ ժողովարան ցնծութեան. զի այսպիսի իմն է զինուն բնութիւն, այսպիսի իմն եւ զօրավարին բնութիւն։ Իսկ զոր օրինակ փեսայ յորժամ զարդարիցի եւ ելանիցէ յառագաստէ, այնպէս եւ նոքա որ այնպիսի զինուքն վառիցին. նա եւ զօրական իսկ եւ փեսայ միանգամայն գտանիցի այնպիսին։

Իսկ իբրեւ ասաց եթէ տիւն մերձեցաւ, եւ չասաց թէ եկն եհաս, այլ թէ դեռ սկիզբն է՝ ասէ. «Իբրեւ 'ի տուընջեան զգաստութեամբ շրջեսցուք»։ Ո՛չ յորժամ սկիզբն աւուրն լինիցի, մանաւանդ յայնժամ բազումք կարգեն այսպիսի զգաստութեամբ, ձգէ տանի զնոսա։ Նպաղում իմն էր նոցա 'ի բազմաց փառաւորագոյն քանն երեւել։ Իսկ չասաց թէ զգաստութեամբ գնասջիք, այլ թէ գնասցուք. որպէս զի սաստ ծանրատաղտուկ ինչ ասելոյ կարգիցէ զխրատն եւ թեթեւացուսցէ զկապանսն։

«Ո՛չ անառակութեամբք եւ արբեցութեամբք» ասէ։ Ոչ եթէ զըմպելն արգելում, այլ զանչափն. եւ ոչ եթէ զվայելումն գինւոյն, այլ որ ինչ շուայտութիւնն գործի 'ի գինւոյն. որպէս զայն որ ինչ լաւ կարգի այնորիկ է, չափով նորին զնէ ասելովն. «Իսկ մի արբշռութեան անկողնոք»։ Ո՛չ ոչ եթէ այսու զզուգելն ընդ կանանց արգելու, այլ զպոռնկելն։ «Ո՛չ հեռիւ եւ նախանձու» ասէ։ Քանզի այսու զաղգումն ախտից շիջուցանէ, զցանկութեան եւ զբարկութեան ասեմ. ոչ բարձ ոչ զնոսա միայն, այլ եւ զաղբերսն իսկ զնոցա խոու։ Քանզի ոչ այնպէս ինչ բորբոքէ ցանկութիւնս եւ վա-

Digitized by Google

ունել առաջարկէ զպարկեշտութիւնն որպէս զարբեցութիւնն և շուայտութիւնն գինւոյն։ Յաղագս այնորիկ նախ ասաց՝ թէ մի անառակութեամբք և արբեցութեամբք, և ապա յարեաց ՚ի սոյն՝ թէ մի պղծութեամբ անկողնօք, և մի հեռիւ և նախանձու։

Այլ չասէ յայսմ զանգի, այլ մերկացուցանէ ՚ի մէնջ զպղծութեանն զգեստս. և լուր զիարդ դարձեալ մխիթարական զարգարէ զմեզ ասելով՝ թէ "Զգեցարուք զանձն մեր Յիսուս Քրիստոս"։ Այլ չասաց թէ զգործս, այլ որ ևս առաւել քաջալերէր զնոսա՝ զայն եդ։ Զի յորժամ զպարեացն ասէր, զգործոցն ճառէր. իսկ յորժամ վասն առաքինութեան, ոչ ևս զգործս՝ այլ զէն կոչէ. ցուցանէ թէ ամենայն զպատշաճութեամբ պահէ զայնոսիկ որք զնոյն կրեցեն, և յամենայն լուսաւորութեան կարգէն։ Սակայն և ոչ յայսմ առ զանգի. այլ ևս ՚ի մեծագոյնս եհան զբանն որ էր սոսկութեամբն է. զնոյն ինքն զտէրն տայ մեզ զգեստ, զնոյն ինքն զթագաւորն զինուորին։ Զի որ զնոյն զգենու, բովանդակեալ ունի յինքեան զամենայն առաքինութիւնս։ Զի յորժամ ասացն թէ զգեցարուք, ամենայն ասաւ ծածկեալ մեզ նոյն հրամայէ. որպէս և այլուր ասէ. "Թէ Քրիստոս ՚ի ձեզ է"։ և դարձեալ "Բնակել Քրիստոսի ՚ի ներքին մարդն ձեր"։ Քանզի բնակութիւն կամի առնել նմա զմեր ոգիս, և իբրև զպատմուճան կամի զնա մեզ զգեցուցանել. որպէս զի ընդ ամենայնի նա իցէ մեզ ՚ի ներքոյ և արտաքոյ. քանզի և լրումն իսկ մեր նա է, վասն զի նորա լրումն զամենայն յամենայնի լնու, և ճանապարհ և այր և փեսայ. "Խօսեցայ զձեզ առն միոյ զկոյս մի սուրբ"։ Այլ արմատ և աղբիւրն և կերակուր և կեանք. քանզի "Ես կենդանի եմ ես, ասէ, ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս"։ Այլ առաքեալ և քահանայապետ և վարդապետ և հայր և եղբայր և ժառանգակից և թաղման հաղորդակից և խաչի. "Թաղեցաք ընդ նմին և անկանելիցք եղաք նմանութեան մահու նորա"։ Այլ պաղատող. "Վասն Քրիստոսի բարեխօսեմք", ասէ։ Այլ առ հայր մեզ բարեխօսակից. քանզի ասէ՝ թէ "Բարեխօս իսկ է վասն մեր"։ Այլ տուն և բնակող. "Զի որ յիսն մնայ, ասէ, և ես ՚ի նմա"։ Այլ բարեկամ. "Դուք, ասէ, բարեկամք իմ

Digitized by Google

էք": Այլ հիմն և քար գլուխ անկեան. այնպէս և մեք նորա և անդամք եմք և արդիւնք և շինուածք և տա և գոր-ծակիցք։ Այլ արդ զինչ ինչ չկամիցի զմեզ լինել. ամե-նայն օրինակաւ կցեալ յարէ զմեզ յինքն, որ է յոյժ սիրոյ նշանակ։

Այլ արդ հաւանեսցուք նմա և զարթիցուք 'ի քնոյ և զգե-ցցուք զնոյն ինքն. և յորժամ զգեստուցուս զնա, առ ի՞նչ 'ի վարժուեմն զմարմնոյ. քանզի զայս ակնարկեաց առա-քեալն՝ թէ "Մարմնոյ խնամ մի առնիք 'ի ցանկութիւնս": Որ օրինակ զըմպելն ոչ արգել՝ այլ զարբեցութիւնն, այնպէս և ոչ զամուսնութիւն՝ այլ զպղծութիւնն. ա-պա ոչ եթէ զայսպիսի զխնամս արգել 'ի մարմնոյն, այլ զցանկութեանն, զայսպիսի ինչ՝ յորժամ առելի քան ըզ-պէտսն խնդրիցէ ինչ։ Այլ զի հրամայէ խնամ տանել մարմնոյ, լուր զինչ ասէր ցՏիմոթէոս՝ թէ "Փոքր մի գինւով վարեսջիր վասն ստամոքսի քո և յաճախ ախտից հիւանդութեանց": Այնպէս և աստ խնամ տար, ա-սէ, այլ որ ինչ առողջութեան իցէ և ոչ եթէ պղծու-թեան. նա և խնամ իսկ չէ այսուհետեւ այն յորժամ զմարմինն բորբոքիցես, յորժամ զզօրաւոր հնոցն վառիցես։

Այլ զի ևս յայտնագոյնս ուսանիցիք թէ զինչ իցէ խնամն որ 'ի ցանկութիւնն է, և փախիցիք յայնմ խնա-մոյ՝ յարբեցութեանց, յորովայնամոլութեանց, 'ի հան-դերձիցն պաճուճանաց, 'ի ջախջախանացն, որք զխա-նաւ և զհաճոյս կեանս կեան։ Այլ արդ զմտաւ ա-ծէք և երկերուք 'ի բանիցն. քանզի նոքա զամենայն ինչ գործեն ոչ զի առողջասցին, այլ զի խայտասցեն, որ-պէս զի զցանկութիւն ևս քան զեւս վառիցեն։ Իսկ որ զՔրիստոս զգեցեալ է, զայն ամենայն 'ի բաց տարցէ առ հասարակ և զմի միայն խնդրէ, որպէս զի զմար-մինն առողջ պահիցէ, և այնքան միայն տանի խնամ, և վասն այլ իրիք և ոչ ինչ. այլ զամենայն զփոյթ 'ի հոգևո-րականն խնամսն դնիցէ։

Սոյնպէս կարէ ապա զարթնուլ 'ի քնոյ, այսպէս ա-պա չծանրանայ պէսպէս աստի ցանկութեամբքն։ Այս և քուն իսկ է ասացի կենցաղս, և քան զերազն չունի ինչ աւելի։ Այլ զոր օրինակ որք ննջեն և յանկարծ բարբառիցեն ինչ և կամ յանկարծ տեսանիցեն ինչ բա-զում անգամ, այլ ոչ ինչ առողջ և ճշմարիտ է, այն-

Digitized by Google

դէս և մեք, մանաւանդ թէ եւս 'ի վայր։ Զի որք յե-րազին յառաւթիւնս ինչ գործեն, և 'ի վախճանել քը-նոյն և 'ի խաղաղասիրութենէն իսկ զերծանեն, նոքա և դատ իսկ չառացեն։ Իսկ առա չէ այնպէս, այլ և ամօթն և առաջնանքն անմահք են։ Այլ դարձեալ որք մեծամասն յերազի, և յորժամ տես քննել՝ յանդիմանեսցին թէ ա-նոյն մեծացուք. իսկ առա և յառաջ քան զախն յան-դիմանեսցին բաղում անգամ, և յառաջ քան զգիւտն սա-տի. այնմ երազոյն նման են և սոքա։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Այլ արդ 'ի բաց թօթափեսցուք այժմ զգաղափար ըղ-ձանաց զայն. զի եթէ մինչդեռ 'ի քուն կայցեմք մեք և օրն հասանիցէ, անմահ մահն է ընդունելոյ զմեզ. և նախ քան զօրն զայն առաքինութեան թշնամեացն գիտութե-բաններս յաղթանակէ զատանելոց և մարդկան և գիւաց. զի թէպէտ և 'ի մէջս իսկ կամեցցին բառնալ զմեզ, չէք որ որ արգելու։ Զի եթէ եկն բաղում արթունք, առա չլինէր այնքան ինչ վտանգ. և արդ վասն զի մին և եր-կու ուրեք են յանհապատութիւնք, ձրագ լուցեալ, և գտա-նեն զամենեսեան իբրև 'ի թանձր և 'ի խոր գիշերի ա-մենեցուն ննջեալ, և լոկ միայն ննջեանք իցեն արթունք, յաղագս այսորիկ բաղում արթնութեան և ողջութեան պէտք են մեզ, բաղում զգուշութեան, որպէս զի մի զանկանելի զգայական ընդունելոցիմք։ Այլ արդ չթուի ա-մենեցուն պայծառ տիւ այժմ յորում եմքս, և ոչ ամե-նեքին արթունք և սթափք եմք։ Ոմանք և ծնծաղի-ցիք զառանցելովքս, իսկ եւ այսպէս ասեմ. որ և 'ի թանձր և 'ի մէջ գիշերի ննջէին և խորդան, այնպիսի իմն են ամենեքեան։

Այլ եթէ անմարմնոց բնութիւնն տեսանելի՝ և ցու-ցանելի էր ձեզ. եթէ զխարգ բաղումք խորդան այժմ, և սատանայ մատուցեալ զորձն փորէ և ակամ հատանէ, և անցէն 'ի քունն խոցոտէ, և որ ինչ 'ի ներքսն կայ յաւարի տանի, որպէս 'ի թանձրամած մթին գիշերոյ ամենայն ընդարձակութեամբ գործէ զինչ և կամի։ Զի թէպէտ և աչօք չիցէ հնար տեսանել զայն, գոնէ բա-նիւք ածցուք 'ի դէմս զիրան և 'ի միտ առցուք թէ. մի-

պէս են ծանուցեալք 'ի ցանկութեանցն. քանզի իցեն որ զաւան պղծութեան կատարանացն կարգեալ իցեն և ըղձկա հոգւոյն չքնաղին. յաղագս այնորիկ այլ ընդ այլոց լսեն, և ոչ ինչ յաւարի առաջելոցս հայցեն։ Նոյնպէս եթէ ես սորցեմ զոր ասեմս, և դու պաշտօն կայցեր, ասա ինձ՝ զինչ զարծեցաւ առ այսօր, եթէ ոչ չակ որպէս զերաղ ինչ լուար։ Այլ զիտեմ զի են ոմանք որ ասիցեն, այլ ոչ եթէ զամենեցուն ասեմ, այլ զջէն որ պարտականող ես ասելոյ, որ ընդունայն և ընդ վայր այսր մտերը՝ ասա ո՞ր մարգարէ կամ ո՞ր առաքեալ այսօր մեզ խօսեցաւ։ Այլ չհաւանիս ասել. քանզի որպէս յանուրջս ինչ թուեցաւ քեզ պատմութիւնն, և ընդ վայր մտեր այսր և ճշմարիտ ոչ լուար զիրսն։ Այս և առկանացս է ինձ ասելի, քանզի և նոցա իսկ բաղում խոր է քանն, և երանի թէ քան էին միայն. քանզի որ նմջեն, ոչ չար ինչ և ոչ հեշտական ինչ բարբառի. Նոյն որ իբրև զձեզ արթուցող կայ, բաղում ինչ զմիտսն եղեռանն բանս կուտէ, զմաշխս հանճարի, զփոխառութեան զիարհաւրքս կուտէ յինքն, զմանաւանդ հաւատութիւնն յիշէ, զխոստութիւն փչոցն կուտէ անկերով յոգւոյն իւրում, և ստրանեն և ոչ առկաւ մի տալ 'ի վերայ ածել, և ոչ զմտաւ իսկ ածէ զայնպիսի զիրս։ Այլ սթափեալ արթնութեամբ և զայնպիսի զփոյշն աղաւաղէ 'ի բաց խլես և սթափեալ յարուցութեանէն։ Քանզի և առ քուն և արթնութիւն ոչ զգինւոյն ասեմ միայն, այլ և որ յերկրաւոր 'ի հոգոցս լինի. ընդ սմա առաս և զգինւոյն։

Այս ոչ եթէ մեծատանցն միայն այլ և աղքատաց զայդ պատուիրեմ, և մանաւանդ որ 'ի սիրականի 'ի հանդամանակին ժողովեն։ Վասնզի ոչ է այն փափկութիւն և ոչ հանգիստ, այլ տանջանք և ջախջախանք. փափկութիւն ոչ յաւելս ինչ բարբառելն է, այլ պարկեշտս խօսել. լսել, և ոչ թէ հերձուլ։ Նոյնպէս եթէ հեշտութիւն զայն վարկանիցիս, ցոյց ինձ զմեկայ 'ի միում երեկուն զհեշտութիւնն զայն. այլ չունիս ցուցանել։ Այլ ես չև ևս ասացի զայն որ անտի միաւոր գործի, այլ դեռ ևս զհեշտութենէն ճաւեսցէ որ առժամայն խաղքեալ թաւալի. քանզի անդէն իսկոյն յաշտեամ զննեռութիւն վճարիցին, և ուրախութեանն զըստ լինիցի. իսկ առաս

զփոխելոյն զինչ առնիցեմք, և կամ զխակութեան ծանր թմբրութեանն և կամ զգիւր առատիցն և զաղաւաղն գերութիւն։ Այլ արդ զինչ ունիս ասել առ այս։ Այլ վասն զի աղքատ եմք, պարտիմք խայտառակել զանձինս։

Ոչ այս ասեմ և չարգելում յարել 'ի մեծատունս և ոչ 'ի զոյգ ընթրել, այլ զնշաւակութիւնն կամիմ կարճել, որով փափկութիւնն ստոյգ փափկութիւն լինի, և ոչ տանջանք և խոշտանգանք և արբեցութիւն և անառակութիւն։ Որպէս զի ուսցին և հեթանոսքն թէ մանաւանդ քրիստոնեայքն գիտեն փափկանալ և վայելել 'ի հեշտութիւնս։ Այլ այս յայնժամ լինի յորժամ ոչ ընդ աշխարհի փափկանամք։ "Ցնծացէք առաջի նորա դողութեամբ"։ Այլ զիարդ ցնծայցեմք. օրհնութիւնս երգելով, յաղօթս կալով, առաջնոյս փոխանակ անառակ երգոցն այնոցիկ. առաւ այնպէս և Քրիստոս մերձ գայ 'ի սեղանն և օրհնութեամբ լնու զամենայն զկերակուրն։ Յորժամ աղօթքն են, յորժամ երգք հոգևորք, յորժամ զաղքատս 'ի հաղորդութիւն որ առաջի կայ կերակուրն՝ կոչես, յորժամ բարեկարգութեամբ բազմաւ և պարկեշտութեամբ յօրինիցես զգինեխումն, առաւել եկեղեցի իսկ գործես այնուհետև զտեղին։ Փոխանակ ընդ վայր աղաղակին և գովութեանն զուէշն օրհնեա։ Այլ մի ինչ զայս ասեմ՝ թէ այդպիսի ինձ կալան օրէնքս այս. այլ ուղղեա որք չարաչարն վարեցան. "Այլ թէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, ասէ, զամենայն ինչ 'ի փառս այ արասջիք"։ Որանզի յայնպիսի սեղանոյ լինին ձեզ չար ցանկութիւնք, անառակ պղծութիւն, անարի կանայք ձեր յանարգութիւն, և բազք պատուէն 'ի ձէնջ, անառակ տանց կործանումն, և բիւր չարիք անառի լինին, և ամենայն ինչ վեր 'ի վայր կործանեցաւ, և զյառակ աղբիւրն թողեալ 'ի պղտոր տղմոյն ըմպեմք։ Այլ զի տիղմ իսկ է պռնկինս մարմին և ոչ այլ ինչ, զքեզ այդքէն հարցանեմ որ թաւալիս 'ի տղմին՝ եթէ ոչ քեզէն իսկ անսուրբ զիրան վարկանիցիս յետ գործելոյ ըզմեղան։

Սասն որոյ աղաչեմ փախիցուք 'ի պոռնկութենէ և 'ի նորին մօրէն, որ առաջին է յարբեցութենէն։ Որ վասն սերմանիցես ուստի հնձել չկարիցես. մանաւանդ եթէ կամիցիս հնձել. քեզ բազում ամօթոյ պտուղ բերէ։

Ոչ թէպէտ և ծնցի քեզ որդի 'ի նմանէն. քեզ ամօթանք են և նմա մահ, զի 'ի գիջութենէ և յանառակութենէ եղև ծնունդն: Ոչ թէպէտ և բիւր ինչս թողուցուս նմա, անարգ 'ի տան է նա և անարգ 'ի քաղաքին և անարգ յատենի զոր 'ի պոռնկութենէ ծնաւ և կամ յազախնոյն: Որպէս և դու զարձեալ և մինչ կենդանին ես և յետ վախճանին. զի թէպէտ և գնացեր աստի, յիշատակ խայտառակութեանցն կենդանի կայ: Իսկ արդ է՞ր վասն սերմանիցես անդ ուր անդաստանն փութայ ապականել զպտուղն: Աստի բազում անծին ազգամոլք. աստի նախ քան զծնունդն սպանութիւնք. քանզի և զպոռնիկն չթողու միայն պոռնիկ լինել, այլ և մարդասպան առնես զնա: Տեսե՞ր յարբեցութենէն զպոռնկութիւնն և 'ի պոռնկութենէն զսպանութիւն: Մանաւանդ թէ որ քան զսպանութիւնն ևս դժնդակ է, զի չունիմ իսկ յանդիմանն կոչուցանել զնա բանիւ. քանզի ոչ եթէ զծնեալն սպանանեն, այլ զծնանելն արգելուն և չտան բուսանել: Ընդէ՞ր զքո զպարգևան թշնամանես և ընդ նորին ընդ օրէնսն մարտնչիս, և որ ինչ անիծից է՝ զայնպիսին որպէս զօրհնութեան զհետ երթաս, և զշտեմարանս ծննդեանն տուն մահու գործես զայն, և որ վասն որդեծնութեանն տուաւ կինն՝ զնա 'ի սպանութիւն կազմես: Որպէս զի միշտ բողքն հաճոյ թուիցին քեզ և ցանկալիք, թէպէտ և բազում արծաթ ծախիցես, սակայն և ոչ այնպէս հրաժարես յիրացն, մեծամեծս 'ի քո գլուխ աստի կուտես զկայծակունս: Ոչ թէպէտ և յանզգնութիւն նորա է, այլ դու եղեր պատճառ: Աստի կռապաշտութիւնք. որպէս թէ 'ի բազում խնդրման եղեալ, և նուէրս և բարեկամութիւնս և այլ ևս բիւր հնարս հնարեն:

Բայց սակայն յետ այնչափ խայտառակութեանց, յետ սպանմանցն, ևս և կռապաշտութեանցն, և բազմաց իսկ իրացն անխտիր թուիցին, վասն զի շատ են որ կանայս ունիցին, և յոյժ մտադիք են 'ի չարիսն. և կախարդութիւնս յաղեն և դեղատուութիւնս, ոչ եթէ 'ի վերայ պոռնկացն որք նոցայն մտանեն, այլ 'ի վերայ իւրեանց առնանցն որք զրկեցան 'ի նոցանէն, և դիւաց կոչմունք և բիւր նենգութիւնք և ոտնակոխակչութիւնք և պատերազմունք զօրհանապազ և անհաշտ կռիւք և ննջակցացն

հակառակութիւնք ։ Վասն որոյ և Պաւղոսն ասէր՝ թէ « Ո՛չ պիղծ անկողինք » ։ և յորժամ զայս եդ, երրորդ ած զնովիմբ՝ թէ « Ո՛չ հերիւ և նախանձու » ․ վասն զի գիտէր զայսպիսի զպատերազմունս, զատանցն զկործանմունս, զբարետոհմիկ զմանկանցն զրկանս, զայլ ևս բիւր չարիսն ։

Եւ արդ յայսմ ամենայնէ փախիցուք, և զՔրիստոս զգեցցուք և հանապազորդ ընդ նմին բնակիցեմք․ վասն զի և այն զգեցումն է չթողուլն զնա երբէք 'ի բաց, յամենայն կողմանց երևել նորա 'ի մեզ 'ի ձեռն սըրբութեան մերոյ հանդարտութեամբ ։ Որպէս և վասն բարեկամացն ասեմք՝ թէ այս անուն զայն անուն զգեցաւ, զյոյժ սիրոյն ասեմք և զանպակաս միաւորութենէն․ քանզի որ զգենուն՝ այն երևի որ զգեցաւն ։ Եւ արդ երևեսցի ամենայն ուրեք Քրիստոս 'ի մեզ ։ Եւ որպէս երևեսցի․ եթէ զնորայն առնիցես ։ Իսկ զինչ արար նա․ « Որդի մարդոյ, ասէ, չունի տեղի ուր դիցէ զգլուխ իւր » ։ Նոյնս նախանձաւոր լեր և դու ։ Ներակրոյ պէտք եղեն, և 'ի գարեղէն հացէ կերակրեցաւ․ ուղեգնացութեան պէտս ունէր, և ոչ ուրեք երևին ձիք և ջորիք, այլ այնչափ գնայր մինչև վաստակէր․ իսկ ննջելոյ պէտք էին, և 'ի վերայ բարձի միայն անկեալ դնէր․ 'ի լերինն բազմականաց պէտք էին, և 'ի վերայ խոտոյն հրամայէր բազմել ։ Նա և հանդերձն իսկ չէր ինչ կարի պատուական․ և բազում անգամ և միակ իսկ շրջէր և ոչ զոք քարշէր զհետ ։ Եւ որ ինչ 'ի խաչին և կամ 'ի թշնամանս և զայլն ամենայն ած զմտաւ և լեր նախանձաւոր նմին․ և այնպէս զգենուս զՔրիստոս, յորժամ մարմնոյ խնամ ոչ տանիս 'ի ցանկութիւն ։

Նա և հեշտութիւն իսկ չունին իւրեն․ քանզի այնպիսի ցանկութիւնքն յետոյ բիւր դաժանութիւնս ծնանին, և ոչ երբէք ունիցին յագումն, այլ մեծամեծ տանջանս գործեն քեզ ։ Որ օրինակ եթէ ոք դժնդակ ծարաւով պապաքեալ իցէ, թէպէտ և բիւր աղբիւրս առաջի կայս ունիցի՝ չօգտի ինչ 'ի նոցանէն յորժամ զախտն չկարիցէ շիջուցանել, այսպէս և որ 'ի հանապազ 'ի ցանկութեան կեայ ։ Իսկ ապա եթէ ախտոյլիքն փարատիցես, ոչ երբէք զայսպիսի ծիւրումն ջերմանս ընդունիցիս, այլ ամենայն իսկ այն 'ի բաց ցնդի և պղծութիւնն և առ-

բեցութիւնն և գիճութիւնն։ Այլ արդ այնքան ինչ կեր որչափ զքաղցն լուծանիցես, և այնչափ զգեցիր որով ծածկեսցես զքեզ միայն. և մի զարդարեր հանդերձիւք զմարմինդ, զի մի զդա կորուսցես. քանզի և թուլագոյնս գործես զդա, այլ և զբարեկարգութիւնս զայս եղծանէ, և 'ի բազում 'ի զրգանաց անարի թոյլ և մեղկ զըտանի։ Այլ արդ զի ունիցիս զդա գեղեցիկ կառս հոգւոյդ, որպէս զի նաւուղիղն ամենայն զզուշութեամբ նաւիցէ 'ի խելան, և զօրականն դիւրաւ ընձեռիցէ զզէնն, ամենայն յօրինուածով։ Քանզի ոչ եթէ զչարն ունել, այլ որ զառակաւն ունիցի՝ նա խոկ ունի զամենայն առաւելս ծախելոյ։ Քանզի նա որ զչարն ունի, թէպէտ և չմխասեցաւ յումեքէ, սակայն կասկածէ. իսկ սա թէպէտ և մխասեսցի, քան որք չմխասեցանն ես 'ի լաւութեանն կայ և 'ի բազում բարեբաստութեան է։ Այլ արդ մի զպախարդաւանելն յումեքէ խնդրիցեմք, այլ թէ և լկել որք կամիցի՝ զայն ցուցցուք զոր չկարիցեն առնել։ Այլ այս ոչ այլ ուստեք լինիցի, այլ լոկ զպէտսն ունել և աւելորդացն չքանկալ ինչ։ Քանզի և այնպէս և աստ կարիցեմք փափկանալ և հանդերձելոց բարութեանցն ժամանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր հանդերձ Հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն։

## ՃԱՌ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

“Իսկ զտկարացեալն 'ի հաւատս, ընկալարուք մի խորձիւ երկմտութեամբ։ Ոմն հաւատայ ուտել զամենայն. և որ հիւանդն է, բանջար կերիցէ”։

Գիտեմ զի բազմաց դժուարինաց իմն թուին առացեալքն. վասն որոյ կարևոր է ասել նախ զկարգ իրացն, և եթէ զինչ կամիցի ուղղել։ Յոյժ բազում հաւատացեալքն 'ի Հրէից անտի որք ըստ օրինացն իմն ունէին զմիտսն և յետ հաւատոյն և զկերակրոց խտրութիւնն պահէին, զի չև ևս վստահէին կատարելապէս հրաժարել յօրինացն։ Այլ ապա զի մի լինիցի ինչ նոցա եր-

կեղ, հրաժարեսցեն 'ի խաւարինացն. և ոչ միայն յայնժամնէ, այլ յամենայն իսկ 'ի միտ, և բանաձևոր միայն ունէին, որպէս զի սուրբք իսկ վաղվաղակի լիցին նոցա միաբանութեան և ոչ օրինակն խաղաղութեան : Իսկ այլքն եթէ կատարելագոյնք և ոչ ինչ յայտնապէսեաց ասէր արարչեցին, և գժտութեամբ իւրեանց հայեսցին ընդ այնոսիկ որք զկերակրացն խորարեսցին, յայժ ծանրատաղտուկ իցեն թուեսցին նոցա, նախատեսցեն բամբասեսցեն 'ի վհատութեան արկանեսցեն : Երկուցեալ այսուհետև երանելւոյն Պաւղոսի եթէ գուցէ միոյ զկերակրոցն կամիցին ուղղել՝ զամենայն իսկ հրամ 'ի վերայ կործանիցեն, և միւսք կամիցին 'ի կերակրոցն յանխտրութիւնս ածել՝ և 'ի հաւատոյն և ընկենուցուն զնոսա, զի յառաջ քան զժամանակին զնորա հաւատոյն առահաջեցին զամենայն ինչ ուղղել, և աւելի իմն և ընդ փոյթ զնոսա գործեսցեն, և 'ի Քրիստոսի խոստովանութեան շարժեսցեն զնոսա միշտ կշտամբելովն, և ասաց այսուհետև յերկարօրեն իսկ իրեանց ստանալ ուղղութեան ձեռն, ոչ զարգացն խնամատութիւն 'ի կիր արկանէ, և կամ որպէս երկաքանչիւր կողմանցն տանի խնամ իւրով տնօրէնական հանճարովն :

Զատուցեալ եթէ չար գործիցէք, զի ցանկ ձգնիք և իմաստասիրէք, որպէս զի մի զնոսա 'ի խաղաղութեան հաստատիցէ. և ոչ դարձեալ ասաց՝ թէ բարւոք առնէք, զի մի եւս սաստիկ և զամբաստանութեան գործիցէ. այլ շափով և կշռով դնէ զբանսն : Այլ թուի թէ զօրաւորացն ասաց և 'ի բաց թափէ 'ի նոսա զամենայն զօր առաւտայս ձեռնէ : Մանաւանդ թէ այս իսկ ծանրագոյն է քան զուղղելն, յորժամ ընդ այլ ուրեք խօսեցի բանս և նախա զմիւսն եւս զխծեցուցանիցէ : Այս և զգալ իսկ շատ զծանրութիւն սաստկին այնամ որում ասացեալն, և զաղտ 'ի նմանէն զուղղութեան զգեստ մխտուցանէ : Այլ արդ տես այժմ որպէս զայս գործէ ասա ամենայն խնամութեամբ, և այն զի 'ի դէպ եւս ժամանակի : Այլ քանզի ասաց՝ թէ "Մարմնոյ խնամ մի առնիք 'ի ցանկութիւնս", ասաց և յաղթեցաւ յայս բանս երանէ, որպէս զի մի համարեսցին եթէ վասն նոցա ինչ ասացեալ զայն որոց սաստեացն, այսինքն առաջնոյն, և հրամայէ ուսուցանել զամենայն անխտիր. վասն զի տկարագոյն կողմն միշտ կարօտ է խնամոցն : Ապաքէն այսպիսի առ զօրաւորսն խօ-

կերպն անօրէնն ձգէ զբանն այսպէս՝ թէ «զտկարացեալսն 'ի հաւատս»: Տեսնէ՞ք զմէջն անօրէնն խոկոյն. զատուածայինն զոր եղ նոցա աստուածն՝ թէ «զտկարացուցեալսն», եւ զոյց՝ թէ 'ի հնազանդութենէն: Այս և զերկրորդն յաւելու և ասէ՝ թէ «ընկալարուք»: Եւ զոյց դարձեալ թէ, յայտ առնէ ունելն բազում խնամոց որ նշանակ իսկ է մեծին հիւանդութեան. «մի խղճիւ երկմտութեանց»: Ահաւասիկ այս եւեթ մէր եղ. քանզի սա իսկ յայտ արար զմեղաց նոցա, որպէս զի և որք նոցայքն էին՝ չկարացին ածել յառաջնութիւն. բայց սակայն հաղորդել հրամայէ սիրոյն նոցա և ընդունել, որպէս զի յառաջնութիւն ածցեն առաւել խղճի իւրք: Տեսանե՞ս, թուի թէ ընդ նոսա խնչ մերձի. և 'ի ներքոյ նոցա ասասէ առաւել ապականեցուցանելոյ:

Այս ունէ զերկուսեան առ միմեանս, զի՝ հանդերձ զովելով և զմիւսն որպէս զյանցաւոր, և 'ի սոյնս յարեալ ասէր. «Մեք հաւատոյ ուտել զամենայն». և զովէ զնա 'ի հաւատոցն: «Այլ որ հիւանդն է, բանջար կերիցէ». և ապաքինէ զնոսա 'ի հիւանդութենէն: Այլ իբրև եդ զազգոյ զմէջն, մխիթարէ զնոսա դարձեալ այսպէս ասելով՝ թէ «Որ ուտէն, զայն որ ոչն ուտէն, մի անգոսնեսցէ»: Այլ չասաց թէ մի առաջնասցի[1], չասաց թէ մի մեղադրեսցէ, և չասաց թէ մի ուղղեսցէ. այլ թէ մի անգոսնեսցէ, մի աղարտեսցէ. եւցոյց եթէ բազում ծաղու արժանի գործս գործէին: Այլ առդ չասաց զայս այսպէս, այլ զի՞նչ՝ թէ «Որ ոչն ուտէն, զայն որ ուտէն՝ մի դատեսցի»: Աստն զի կատարելագոյնքն զնոսա քամահէին իբրև զտկարահաւատս և զխորաչաղս և շնեղզս, և եթէ այժմէն ևս հրէաբար կեան. սոյնպէս և սոքա զնոսա դարձեալ բամբասէին որպէս զյանցաւորս օրինացն և որպէս զորովայնամոլս, զորս բազումք և որք 'ի հեթանոսացն էին՝ և զնոսա այնպէս մեղադրէին: Յաղագս այնորիկ 'ի սոյնս յարեալ ասէր՝ թէ «Աստուած զնա ընկալաւ»: Օ՛ն որ ինչ հաստատականցն էր՝ անդ չասաց այսպէս. և զի մին անարգանաց էր որք ուտէինն՝ որպէս զորովայնապաշտս վարկանէին, իսկ միւսն դատելոյ զայնոսիկ որք ոչն ուտէին իբրև զտկարահա-

1 Յոյնն է՝ Եւ ոչ ուտիչ. բայց հայն թուի ընթերցեալ μὴ ἰάτω.

ւտոս ։ Բայց փոխանակեաց ի նմա առա զբանն, և եցոյց եթէ ոչ միայն ինքեանք արհամարհելոյ չեն արժանի որք ուտեն, այլ և զայլս եւս կարեն արհամարհել ։ Բայց և ես, ասէ, որ չուտեմ կարեմ զնա դատել. և ոչ երբեք ։ Զաղագս այսորիկ զառաջինն ածեալ ասէ՝ թէ "Ա̃ծ զնա ընկալաւ"։ Իսկ արդ մի ինչ նմա վասն օրէնացն ասել, որպէս թէ անցանէ ինչ զօրինօքն, վասն զի ա̃ծ ընկալաւ զնա, այսինքն է թէ զանբաւ զիւր շնորհսն եցոյց նմա և յամենայն մեղադրութենէ ազատեաց ։

Իսկ դարձեալ առ որս զօրացեալքն էին, այսպէս ասէ. "Դու ով ես որ դատիս զայլոյ ծառայ"։ Իսկ յայտ առնէ թէ և նոքա դատէին, և ոչ եթէ անարգէին լոկ ։ "Իւրում տեառն կայ կամ անկանի", ասէ ։ Ահա միւս եւս վէր զոր եդ նոցա ։ Իսկ թուի թէ առ զօրաւորսն ինչ զչարի, բայց նա ուանիկ զնոսա զկծեցուցանէ ։ Զի յորժամ ասէն "Կայց կեցցէ", ցուցանէ թէ յողդողդեալք էին և բազում պէտս ունէին զգուշութեան և խնամոց, որպէս զա̃ծ իսկ կոչէ նոցա բժիշկ. "Կարող է, ասէ, ա̃ծ հաստատել զնա". զոր և առ յոյժ վհատեալսն սովոր եմք ասել ։ Բայց զի մի եւս դանդաղագոյնս զնոսա առնիցէ և տկարացուցանիցէ, ծառայ կոչէ զնոսա ա̃յ ասելով. "Դու ով ես որ դատիս զայլոյ ծառայ"։ Դարձեալ և աստ ՚ի ծածուկ մխիթարեցուցանէ ինքն զնոսա. զի ոչ եթէ արժանի են, ասէ, դատելոյ՝ հրամայեմ զայս, այլ վասն զի այլոյ ծառայ է. չէ քո, ասէ, այլ ա̃յ է ։ Իսկ դարձեալ սփոփելով ինքն զնոսա չառաց թէ անկանի լոկ, այլ թէ կայ կամ անկանի ։ Իսկ եթէ այս իցէ կամ այն՝ իւրում տեառն են երկոքեան, քանզի և զնոսա անկելոցն ՚ի նա ձգէ, որպէս և մեծութիւն հաստատութեան ։ Զայս եթէ ոչ ՚ի միտս Պաւղոսի առանձին հայիցիմք եթէ զինչ կամիցի կարգել այնու որով չհրամայէ յառաջ քան զժամանակն դատել զայնպիսեան, կարի անվայելուչ քրիստոնէութեան թուէին իրքն ։ Բայց որպէս միշտն ասէի՝ թէ զմիտս առաքելոցն արժան է քննել յաղագս որոյ են ասացեալ և յինչ իրս և զինչ փութայցէ կարգել յասելն զայս ։ Ոչ եթէ լոկ իրքն հարևանցի ինչ հրամանն տայ զայս ասելովն ։ Զի եթէ ա̃ծ, ասէ, որում զնասն լինի՝ ոչ ինչ զեառանէ նմա, ապա քանզի ինչ ընդ վայր դատնիս դու և



Digitized by Google

աւելի չարիւք հեռաքրքրիր զնոսա և ձանձրացուցանես զնոսա խնդրով կազմելով։

«Ոմն պահէ օր քան օրէ և ոմն պահէ զօրհանապազ»։ Թուի ինձ թէ այսու միաբանութեան և զգուշաց ակնարկէ. վասն զի առանձին ընտանի իմն էր ոմանց պահելն, և զայնոսիկ որ զօրհանապազն չպահէին՝ բամբասէին, զոր և խորութիւնս իսկ վարկանէին. և զի յայտնի աւուրն հեռանային, և դարձեալ մի յայտնի աւուրք էին յորս մերձենային. յաղագս որոյ և ասէր իսկ՝ թէ «Իւրաքանչիւր ոք զիւր միտս հաստատեսցէ»։ Նոյնպէս և զերկիւղ խափանեաց նոցա. առանց ընտրութեան են իրքն, ասէ. և զհակառակութիւնն որ ՚ի միջի նոցա եղեալ էր՝ զայն ՚ի բաց ընկեց, և եցոյց եթէ չէին ինչ կարևոր իրքն։ Այլ ոչ եթէ ըստ բնութեան ինչ է, այլ ըստ ժամանակի, և կամ զուցէ դիւրագոյնք ՚ի հաւատոցն լինիցին։ Նոյնպէս կողոսացւոցն գրէր, յոյժ առաւել ՚ի բաց բառնալ զայս ասելով. «Տեսէք, ասէ, մի ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարտարասիրութեամբ և սնոտի խաբէութեամբ որ ըստ մարդկան աւանդութեան և ըստ աշխարհիս տարերց և ոչ ըստ Քրիստոսի». և դարձեալ թէ «Մի ոք իցէ որ զձեզ դատեսցի ուտելով կամ ըմպելով, և մի այլ ոք զձեզ հաստատեսցէ»։ Նա և գաղատացւոցն գրեալ բազում հաւատով պահանջէ ՚ի նոցանէն զայսպիսի իրաց զխնամութիւն և զկատարումն։ Նոյն աստ չարկանէ ինչ ազնապէս այնոր ՚ի կէր զերան, զի դեռ ևս նորատունկ էին առ նոսա հաւատքն, թէ զուցէ յամենեսին ձգեսցի ախտքն՝ ասէ «Իւրաքանչիւր ոք զիւր միտս հաստատեսցէ»։ Նոյն յորժամ վասն հաւատոց բանքն էին, լուր զինչ ասէ. «Եթէ ոք ձեզ աւետարանեսցէ աւելի քան զոր ընկալարուք, թէպէտ և հրեշտակ իցէ, նզովեալ լիցի». և դարձեալ թէ «Նախանձիմ, զուցէ որպէս օձն զԵւա խաբեաց, ապականեսցին միտք ձեր». այնպէս և փիլիպեցւոցն գրէր. «Տեսէք զշունսն, տեսէք զչար մշակսն, տեսէք որք ՚ի հատմանէն են»։ Նոյն առ հռովմայեցիսն չև ևս էր ժամանակ այսպիսի ինչ ուղղելոյ, յայն սակս ասէր՝ թէ «Իւրաքանչիւր ոք զիւր միտս հաստատեսցէ»։ Այն զի վասն պահոց իսկ բանքն էին, և զնոցա զհպարտութիւնն ընկէց և զնոցա զերկիւղն լուծանէ։

Digitized by Google

«Որ խորհին, ասէ, զօրն՝ Տեառն խորհի, և որ ոչ խորհի զօրն՝ Տեառն չխորհի. որ ուտէ՝ Տեառն ուտէ և գոհանայ զԱյ, և որ ոչն ուտէ՝ Տեառն չուտէ և գոհանայ զԱյ»: Դնէ ևս, ասէ, զնոյն ունիք: Այլ զոր ասէն այս ինչ է. ոչ եթէ աւելորդ իրք ինչ են, ասէ, այլ խնդիր այն է՝ թէ որպէս վասն Այ գործին և սա և նա. ապա նոյն ուրեմն խնդիր է որպէս զի երկոքեան ՚ի գոհութիւն անդր կատարեսցին. քանզի և գոհանան իսկ երկոքեան և սա և նա զԱյ: Այլ արդ եթէ երկոքեան գոհանան, ապա չկայ բազում ինչ ՚ի միջի: Այլ դու տես որպէս և աստ վիրաւորէ ՚ի ծածուկ զայնոսիկ որք հրէաբարոն կէին. զի եթէ խնդիր այնր է, ասէ, գոհացին՝ ապա ուրեմն յայտ է թէ նա է որ գոհանայն որ ուտէն, և ոչ եթէ որ չուտէն: Բայց զիարդ մարթի, զի դեռ ևս օրինօքն վարիցի. զոր և առ գաղատացիսն ասէր՝ թէ «Որ օրինօքն արդարանայք, ՚ի շնորհաց անտի անկեալ էք»: Իսկ աստ ակնարկէ միայն զայն և չյայտնէ համարձակ այնպէս, զի չև ևս էր ժամ. բայց սակայն ներէ, և յաջորդօքս ևս դարձեալ կամի բառնալ զմիտս նոցա. քանզի ասաց այսպէս՝ թէ «Ոչ ոք ՚ի ձէնջ անձամբ կեայ և ոչ անձամբ մեռանի. և արդ եթէ կեամք՝ Տեառն կեամք, և եթէ մեռանիմք՝ Տեառն մեռանիմք»: Այլ յայտնագոյնս այսու ծանոյց նոցա՝ եթէ որ օրինացն կեայ, չկարէ Քրիստոսի կեալ: Այլ ոչ այսչափ միայն կողմէ զայս, այլ և ՚ի յաջորդէ անտի դարձեալ մատուցանէ նոցա մխիթարութիւն որով կարիցեն ուղղել. ուսուցանէ և հաւանեցուցանէ երկայնամտել եթէ չէ հնար զԱծ արհամարհել նոցա, այլ մերձակայ իսկ ժամանակաւս ուղղին:

Այլ արդ զինչ իցէ՝ թէ «Ոչ ոք ՚ի մէնջ անձին կեայ»: Չեմք, ասէ, ազատք, այլ տէր ունիմք որ զկեանս մեր կամի և ոչ զմահն. և արդ զայս զերկոսեան վասն մեր օգտի առնէ: Ա և յայտ ևս առնէ եթէ փոյթ է զմէնջ և խնամ տանի, մանաւանդ զի և զմեծութիւնն մեր կեանս վարկանի և զվնասն մահ: Զի ոչ եթէ անձանց միայն մեռանիմք, այլ Տեառնն՝ եթէ ստոյգ մեռանիցիմք: Իսկ մահ աստ որ ՚ի հաւատոյն լինի՝ ասէ: Բաւական էր այսու հաւանեցուցանել թէ հոգ տանի մեզ. և թէ նմա կեամք և նմա մեռանիմք. բայց սակայն չշա-

Digitized by Google

տացաւ այսու միայն, այլ և այլ իմն յաւելու և ասէ. «Արդ եթէ կեամք և եթէ մեռանիմք, տեառն եմք»: Այս յայնմ մահուանէ 'ի միւսն եւ՝ որ ըստ բնութեանն է՝ փոխեցաւ, զի մի համարեսցին թէ խոշորացոյց ինչ զբանն, այլ իմն նշան մեծագոյն ցուցանէ զնորա զխնամոյն: Որպիսի՞ ինչ արդեօք:

«Ի սոյն իսկ, ասէ, և Քրիստոս մեռաւ և եկեաց, որպէս զի մեռելոց և կենդանեաց տիրեսցէ»: Որ և այսու եւս հաւաստացուսցէ թէ խնամ տանի մեզ և յոյժ փութայ վասն մերոյ փրկութեան: Որ թէ այսպիսի հոգաբարձութիւն և խնամս չունէր առ մեզ, զինչ պէտք անտեսութեանն էին: Այս արդ որ զայնպիսի զփոյթ եդ 'ի մտի լինել այնպիսի վասն մեր, մինչև զծառայի կերպարանս առնուլ և մեռանել, ապա որպէս արդեօք յետ զայն ամենայն կատարելոյ արհամարհեսցէ զմեզ: Այս չէ և չէ իսկ. քանզի ոչ ծախէր իսկ ընդ վայր զայնպիսի վաճառաշահութիւն: Այս աւանիկ, ասէ, իսկ թէ յաղագս այնորիկ իսկ մեռաւ. որպէս զի յորժամ ասիցէ ոք եթէ այս անուն չառ յանձն արհամարհել զծառայս իւր և ոչ խնայեաց 'ի քսակն իւր, ապա ուրեմն սոյնպէս և նա գործեաց յինքն վասն մեր: Քանզի և մեք ոչ այնպէս փափագեմք ինչից, որպէս նա մերոյ փրկութե. վասն զի ոչ եթէ զինչս, այլ զիւր զպատուական մարմինն ետ վասն մեր. յաղագս այնորիկ չկամի մերժել 'ի մէնջ վասն որոյ զայսչափ զպատիւս 'ի կիր արկ: Տես որպէս և զանասելի զզօրութիւն նորա յայտնէ թէ անբաւ է. քանզի զայնս իսկ ասէ՝ թէ մեռաւ և յարեաւ, որպէս զի մեռելոց և կենդանեաց տիրեսցէ: Այս վերագոյնն ասէ եթէ կեամք և եթէ մեռանիմք, նորա եմք: Տեսե՞ր զհաստատուն տէրութիւնն, տեսե՞ր զանմարտընչելի զօրութիւնն, տեսե՞ր զհաւաստիս նախախնամութեանն: Ո՞չ ինչ, ասէ, զկենդանեացս միայն ասեր, այլ և զնացելոցն եւս խնամ տանի. զի եթէ մեռելոցն, ապա յայտ է եթէ և կենդանեացս:

Այս արդ յայտ է եթէ չպակասեաց յայսպիսի տէրութենէ առ 'ի ուղղել զմարդն և զարդարութիւն նորա յարդարել, և առանց այլն ամենայնի 'ի խնամսն մեր նայեաց զոր ունի: Քանզի մարդիկ արծաթ տան, և յաղագս այնորիկ չտանին կարի խնամ ծառայիցն. իսկ

նա զանձն զիւր եւս։ Այլ որք այնչափ պատուոյ գնեցաք, և որչափ յայսչափ ինչ 'ի տէրութեան վայելեցաք և ստացաք զնա, զայնպիսի փրկութիւն ընդ ոչ ինչ համարիմք։ Զայս ասէ առ 'ի պատկառեցուցանել զայնոսիկ որք հրէաբարոն կէին, և հաւանեցուցանէ յիշել նոցա զմեծութիւն երախտեացն, և զի մեռեալ էր և եկեաց, և պարծեալ թէ չօգտիս ինչ յօրինացն, և եթէ վերջին ապախտաւորութեան իրք են արդ զայսպիսի ինչ եցոյց նոցա, և նոցա զայն թողեալ[1] պարծեալ ընթանային յօրէնսն։ Այլ արդ իբրև բաւականապէս մորմոքեցոյց զնոսա, դարձեալ փոքր մի ոգի տայր ասելով։

«Դու ո՞վ ես, ասէ, որ դատիս զեղբայրն, և կամ դու ո՞վ ես որ անգոսնես զեղբայրն քո»։ Այլ թուի թէ հասարակաց իսկ դնէ զայս. այլ բազում ընտրութիւնս ցուցանէ յառաջելոց անտի։ Առաջին եղբայրութեանն յորջորջմամբ լուծանէ զհակառակութիւնն. ապա դարձեալ յիշատակօք ահագին և մեծի աւուրն այնմիկ։ Զի իբրև ասաց՝ թէ դու ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո, յարեայ 'ի սոյնս՝ թէ «Ամենեքին կալոց եմք առաջի բեմին Քրիստոսի»։ Այլ կարծի եթէ սաստէ ինչ կատարելոյն զայս ասելով. բայց սակայն դպչի զմիտս այնոցիկ որք հրէաբարոն կէին։ Ոչ եթէ յեղեալ յերախտեաց անտի միայն պատկառեցուցանէ զնոսա, այլ ահիւ հանդերձեալ տանջանացն։ «Ամենեքին, ասէ, կալոց եմք առաջի բեմին Քրիստոսի. զի գրեալ է՝ կենդանի եմ ես ասէ տէր զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր, և ամենայն լեզու խոստովան լիցի այ. ապա ուրեմն իւրաքանչիւր ոք 'ի մէնջ յաղագս անձին բան ունի տալ այ»։ Տեսե՞ր որպէս ընդհարաւ ընդ միտս նոցա դարձեալ, որով թուէրն թէ ստգտանէ ինչ զընկերան այնպէս ակնարկելովն. որպէս յորժամ ասացն՝ թէ քեզ զի՞նչ փոյթ է. մինթէ քե՞զ հայի ինչ իցէ վասն նորա, և կամ դու՞ տանջիցիս վասն նորա։ Բայց սակայն չասաց այսպէս յայտնի, այլ մեղմով զայնս ակնարկեաց և ասաց՝ թէ «Ամենեքին կալոց եմք առաջի բեմին Քրիստոսի. ապա ուրեմն իւրաքանչիւր ոք 'ի մէնջ վասն անձին իւրոյ բան ունի տալ այ»։ Այլ զմարգարէն ե-

1 Օրինակին՝ պատկառեալ թողեալ։

բեր 'ի մէջ, որ վկայէ թէ ամենեքին հնազանդելոց են նմա յայնժամ. և ոչ միայն հնազանդութիւն, այլ հաստատուն հնազանդութիւն, և 'ի հին 'ի մարդկանէն և յամենեցունց իսկ խոստովանի: Վասնզի չասաց լոկ եթէ երկիր պագցէ նմա իւրաքանչիւր ոք, այլ թէ և խոստովան լիցին. այսինքն է եթէ մրէժս տայցեն ընդ գործոց: Իսկ արդ կալ 'ի մտի զՁանս զայս, և երկիր յորժամ զհասարակաց զտէրն տեսանիցեմք 'ի վերայ ահաւոր բեմին նստեալ, և մի երկպառակել և ձեղքել զեկեղեցին զատեալ 'ի շնորհաց անտի և առ օրէնս ընթանալ: Վասնզի և օրէնքն նորա են. և զինչ աւելի եթէ օրէնքն, այլ և որ ինչ յօրէնսն կայ, և որ ինչ յառաջ քան զօրէնսն: Իսկ ոչ եթէ օրէնքն պահանջեն 'ի քէն պատիժս, այլ Քրիստոս, և 'ի քէն և յամենայն մարդկային բնութենէս: Տես որպէս եղծ զաւ՞ օրինացն:

Այլ զի մի համարեսցին թէ կողմնակալ ինչ է երկիւղ օրինացն, յաղագս այնորիկ չասաց անդէն 'ի սկզբանն զայն, այլ ըստ կարգի յառաջադիմութեանն եկն յայս, և դարձեալ նմին իրաց նախ սկիզբն առնէ ասելովն. «Այլ մի դատեսցուք զմիմեանս, այլ մանաւանդ զայն ընտրեցէք՝ առ 'ի չդնել գլորումն և գայթակղութիւն եղբօրն»: Այս ոչ եթէ նորա միայն է, այլ և քո. վասն զի յերկաքանչիւրս կարեն յօդել այս իրք, և կատարելոցն գայթակղել 'ի ներականցն խորութենէ, և որ չեւս են կատարեալք՝ գայթակղել և գլորել 'ի սաստիկ խոշտանգանացն:

## ՅՈՐԴՈՐԱԿ

Իսկ արդ հայեաց և 'ի միտ առ եթէ որպիսի մրէժս տայցեն որք ընդվայրն գայթակղեցուցանեն: Զի եթէ անդ 'ի զուր և 'ի նանիր էր որ ինչ լինէրն վասն 'ի զուրսն սատակելոյ՝ արգել զայս 'ի լինելոյ, որպէս զի մի գայթակղեցուսցեն և գլորեցուսցեն զեղբայրն, իսկ յորժամ ոչ ինչ աւգտիցեմք և գայթակղեցուցանիցեմք՝ իմ իմիք լիցեմք արժանիք: Զի եթէ որ ոչն յաւելու դատապարտի, և յայտ 'ի տաղանդոյն 'ի թաղմանէ է, իսկ որ և գայթակղեցուցանէ եւ՝ զինչ չգործիցէ: Իսկ արդ

Digitized by Google

եթէ, ասէ, կամօք գայթակղեցի որպէս տկար զնա: Նա յաղագս այնորիկ իսկ յիրաւի է քեզ համբերել և ներել ամենայնի: Զի եթէ զօրաւոր ոք էր, ապա չէր կարօտ այնչափ ինչ դարմանոց. և այժմ քանզի ան-կատարելագոյն էր, յաղագս այնորիկ բազում փութոյ պէտս ունի: Համբերեսցուք նմա այժմ զայս և ամենայն ուստեք օգնեսցուք նմա. ոչ միայն վասն նորա որ ինչ առացաք բան, այլ և վասն այլոց զորս գայթակղեցու-ցաք: Զի թէ այն առանձին միայն գժնեայ և չար է, իսկ յորժամ և այսք յաւելուցուն՝ որք կարիցեմք ապրել:

Նա մի համարեսցուք թէ պատճառս ինչ ունիցիմք մեղացն և պատասխանատուութիւնս ինչ գտանիցեմք. քանզի այսոքիւք յաւելուած տանջանաց լինի մեզ: Նա և օձն ևս պատուհասեցաւ ընդ կնոջն, որպէս և կինն ընդ առնն, և Աքաար ընդ Իսրայելի որ զայգին յա-փրշտակեաց՝ դատն պատուհաս ընկալաւ, քանզի նա նիւթեաց զիրան ամենայն և գայթակղեցոյց: Այնպէս և դու այժմ յորժամ այլոց կորստեան պատճառք լինիս, և գայթակղեցզին վասն քո. քանզի չէ այնպէս մեղան-չելն, և զայլս ևս ածել 'ի կորուստն: Վասն որոյ ասէ՝ թէ "Ոչ միայն որ գործենն, այլ և որ կամակիցն լինին գործելեացն,,: Որպէս զի յորժամ տեսանիցեմք թէ մեղանչեն, մի միայն չմեղանչիցեմք, այլ և 'ի մեզ ևս ձգեսցուք 'ի խորխորատէ չարեացն, որպէս զի մի այլոցն կորստեամբ և մեք դատապարտութիւն ընդունիցիմք: Նա արդ յիշեսցուք հանապազ զահագին բեմն և ըղ-գետն հրեղէն և զանլոյծ զկապանսն և զանճաճանչ ըզ-խաւարն և զորդնն զթունաւոր:

Այլ մարդասէր է, ասեն, նա: Այո եթէ այդպէս է, ուրեմն բանք լոկ են այս. և որպէս դուք ասէք՝ ոչ մեծատունն այն տանջի որ զՂազարոս անտես արար, և ոչ յիմար կուսանքն արտաքոյ առագաստին մնան, և ոչ որք չկերակրեցինն զնա՝ 'ի հուրն երթիցեն որ պատ-րաստեալ է սատանայի. և ոչ որ զաղտեղի զհանդերձն զգեցեալն էր՝ զձեռս և զոտս կապեալ կորնչի, և ոչ դա-ձեալ որ զհարիւր դահեկանն պահանջեաց՝ մատնեսցի 'ի ձեռս տանջանաւորացն, և կամ դարձեալ սուտ իցէ այն որ վասն շնացելոցն ասիցէ, և չիցէ ճշմարիտ թէ "Որդն նոցա ոչ վախճանեսցի և հուրն մի շիջցի,,, այլ

Digitized by Google

սպառնալիք միայն իցեն այն։ Ո՞չ, ասէ։ Ո՞չ ուսոյց համարձակիս զայսպիսի զիրս յայտ առնել ինձ և կամ բերել զհամար զասացելոցդ։ Իսկ ես զոր ինչ 'ի հակառակորդաց անտի զոր ինչ առաջին՝ կարեմ ցուցանել. զի թէ հանդերձելոցն չհաւանիս, գոնեայ եղելոցն հաւատա. քանզի թէ չէր եղեալ և 'ի գործ եկեալ իրաց ինչ, յիրաւի ասէիր թէ սպառնալիք և բանք միայն են։ Արդ ո՞վ էր որ զտիեզերս ամենայն ջնջեաց Ջրհեղեղաւն և զգժնդակ նաւաբեկութիւնն գործեաց և զամենայն ազգիս մերոյ առ հասարակ զաստակութիւն։ Ո՞վ յետ այնորիկ դարձեալ զշանթընկէց զաւերութիւնն և զանձրևաձև զհուրն թողլ ետ գալ 'ի վերայ սոդոմայեցւոցն երկրին։ Այլ կամ ո՞վ զամենայն Եգիպտոս ընկղմեաց։ Այլ կամ ո՞ դարձեալ զվեց հարիւր հազարսն յանապատին ծախեաց. և կամ զհրապարակին Աբիրոնի ո՞ բորբոքեաց. և կամ ո՞ որ զԿորխեան և Դաթանեան եւս՝ հրամայեաց երկրի բանալ զբերան իւր և զնոսա կենդանւոյն կլանել. և որ զեօթանասուն հազարսն 'ի միում ժամու յական թօթափել տապաստ արկանէր առ Դաւթաւ։ Ասացէք և զայնոսիկ որք միայն սպառնալեօք տանջեցան, որք զգանիկ հանապազ մաշանեցան դատաստանացն. զԿայէն որ մնաց զկնի ամենայն ազգին, և զՆաւրմին, և որ վասն սակաւ մի փայտ ժողովելոյ զայն տանջանս կրեաց 'ի շաբաթու. զքառասուն մանկունսն զայնոսիկ որք գազանակուրք եղեն և ոչ 'ի տղեղծ հասակէ անտի գտին ներել թագմանն։

Իսկ ապա եթէ յետ ընդհանրոցն կամիս զայսպիսիս 'ի մէջ առնուլ, հայեաց 'ի Հրէայսն եթէ զինչ ինչ կրեցին, զիարդ զորդիս իւրեանց կերան կանայք ոմանք խորովելով, և ոմանք այլ տարաժամու ծախեցան, որպէս անկշռելի սովոյն մաշեցան և պէսպէս և դժնդակ պատերազմաց, և զամենայն զյառաջագոյն զմրմնջմունսն իւրեանց ծածկեցին առաւելութիւն վերջին թշուառութեանցն նոցա։ Այլ զի Քրիստոս Տէրն գործեաց զայն ընդ նոսա, լուր նմա որ յառաջագոյն իսկ ասէր նոցա զայս և առակօք և յայտնապէս և հանապազորդ առակօք, յորժամ ասէ՝ "Որք ոչ կամեցան թագաւորել զիս, ածէք աստ և կոտորեցէք". և վասն այգւոյն. սոյնպէս և հարսանեացն։ Իսկ յայտնապէս յորժամ ասէրն՝ թէ "Ընկ-

ցին 'ի ձեռս որոյ և գերեսցին 'ի հեթանոսս , և եղիցի անձկութիւն 'ի վերայ երկրի ազգաց 'ի ձայնէ ալեաց ծովու և 'ի զարհուրանաց ոգւոց մարդկան յերկիւղէ , և եղիցի նեղութիւն այնպիսի՝ որ ոչ երբէք եղև և ոչ լինիցի ,, : Այլ Անանիա և Սափիրա վասն փոքր մի գողու-թեան արծաթոյ որպիսի ինչ վրէժս եառուն՝ ամենեքին տեղեակք էք : Իսկ զհամապատահարս թշուառութիւնս չտեսանես , միթէ և այսորիկ չեղեն . չտեսանես այժմ որք արտաքին մարմնոյն կամ որք քաղաքաւորութեանցն և խայտառակե-լութեանց մարմնոյքն հարեալ են , որք աղքատու-թեանցն համառապատ կեանս և որք բիւր անձանելի չար-չարանացն և նեղութեանցն համբերեցին :

Այլ արդ ո՞ր բան ունիցի զայս՝ թէ ամենք տանջեցան և ամենք չտանջեցան : Զի եթէ չէ անիրաւ Աստ , որ-պէս զի և չէ իսկ , ապա յայտ է թէ և զաւ ունիս տալ-պատ ընդ մեղանչելոյն : Իսկ եթէ ասիցես՝ մարդասէր է և ոչ դատի , ապա պարտ էր և ոչ զնոսա դատել : Այժմ վասն այնորիկ են մեր բանք , զբազումս աստ տանջէ Աստ . զի յորժամ բանիցն ոչ հաւատայցեմք , և ապաճառելեայն գանէ տանջելոցն իրօք հաւատայցեմք : Այլ արդ քանզի հինն զմեզ չերկեցուցանէ այնպէս որ-պէս ըստ իւրաքանչիւր ազգացն պատահեացն , որպէս զի ըստ ժամանակին ուղղեսցէ զծուլացոյնսն : Այլ էր վասն , ասէ , զամենեսին աստ չտանջէ . առ 'ի տալոյ այլոցն յա-ւելումն պատուհասութեան : Ո՞ր վասն , ասէ ասա ինձ , և զամենեսեան անդ չտանջէ . զի մի բազումք յերկեայ-ացին 'ի նորա խնամոցն . քանզի առաջնք ամենք չար-չարեցան աստէն , իսկ այլք չոգան առանց դատելոյ ինչ աստի : Այլ արդ ո՞ւր է , ասէ , մարդասիրութիւնն այ :

Այլ արդ իմ է ընդ քեզ հակառակութիւն . զի թէ ոչ ամենեւին ոք տանջէր , ունէիր ուրեք ապաւինել . իսկ յորժամ ամենք տայցեն դատ և կէսքն չտայցեն , և ա-ռաւել եւս որք մեղանչիցենն , ապա ո՞ր բան ունիցի զայն եթէ ընդ յանցանաց չիցեն պատժելոց : Այլ արդ ո՞ր-պէս չիցեն արդեօք տանջանաց արժանի այնորիկ որք զայսպիսիսն իշխեն ածել զմտաւ : Այլ արդեօք զնոյնս դարձեալ ձայնեալ ասիցես թէ էր վասն ամենեքին աստ չտանջին , լուր նմա որ վասն այսորիկ իսկ քեզ պատաս-խանիս տայր : Աչքեամբ 'ի վերայ ամենից աչատարակ իմն

'ի վայր փլաւ, և մախձանել որպէս թէ արանց ութե-տասնից. ապա ասէր ցնոսա որք հիւանդյինն վասն իւրացն. "Վարկանիք, ասէ, թէ մեղաւորք էին նոքա քան զա-մենեսին. ոչ. այլ ասեմ ձեզ, եթէ ոչ ապաշխարիցէք, և դուք իբրև զնոսա կորնչիք": Ուսանէ զմեզ զի յոր-ժամ այլք վրէժս տայցեն, մի մեք յանձնապաստան բա-զում մեղանչիցեմք. և ոչ եթէ ոչ դառնայցեմք, տա-լոց եմք վրէժս։

Այս որպէս արգելաք, ասէ, անմահ տանջելիքն որ ա-փոքր մի ժամանակս մեղաք։ Այս արդ, ասա ինձ, զիա՞րդ փոքր մի ժամանակի 'ի թօթափել ական մի միայն՝ մեծ գործեաց և համառօտ 'ի կենդանութեան իւրում զամե-տաղացն թշուառութիւնս և զտառապանս կրէ յանձին, այսինքն է զանփոփոխ և զանդարամետական զփոր-ձումն։ Ո՛չ, ասէ, ոմն չառնէ ինչ այսպիսի։ Այս արդ որպէս արդեաք զերեսուն և ութ ամ ունէր 'ի տան-ջանս զանդամալուծն, և զի վասն մեղաց զնա տան-ջէր՝ լուր զինչ ասէր. "Տես, ասէ, զի ողջ եղեր, մի՛ ևս մեղանչեր": Բայց սակայն, ասէ, զլուծումն ընկալաւ հիւանդութեանն. այլ անդ չէ այնպիսի ինչ։ Ոչ է չա-նիմ այն տանջանք լուծումն, լուր նմին իսկ տեառնն որ ասէր՝ թէ "Որդն նոցա ոչ վախճանի և հուրն նոցա ոչ շիջանի". և դարձեալ ասէ. "Երթիցեն սոքա 'ի կեանսն յաւիտենականս և նոքա 'ի տանջանսն յաւիտենից": Ոչ է թէ կեանք յաւիտենականք գոն, ապա յայտ է թէ և տանջանք յաւիտենից են։ Զտեսանեմս որչափ ինչ սպառնալիս ցուցանէ Երուսաղեմի. և արդ զինչ՝ եղ 'ի գլուխ ամենայնն, եթէ լոկ բանք էին ասացեալքն։ Բայց թէ "Մի՛ մնասցէ այդր քար 'ի քարի վերայ". և ապա զինչ՝ մնաց, և ոչ երբէք։ Այս դարձեալ յորժամ ա-սացն՝ թէ "Եղիցի նեղութիւն որպէս ոչ երբէք եղև". ապա զինչ՝ չեղև։ Ընթերցիր զպատմութիւնն Յովսեփ-այոս, և ոչ հաս կլանել անդամ չժամանես լոկ 'ի լսե-լեացն զոր ինչ կրեցին չարչարանս վասն իրացն այնոցիկ։ Ոչ այս ասեմ ոչ զի տրտմեցուցից, այլ զի զգուշացու-ցից. բարեմտայար հոգւովք և երկնաւորիկ եղեր, յաղագս այնորիկ բարբառիմ քեզ զդժնդակագոյնսն։

Այս արդ ընդդէ՞ր, ասէ ասա ինձ, չվարկանիս տանջա-նաց արժանի զայնոսիկ որ մեղանչեն. ո՞չ յառաջագոյն

պատուիրեաց զամենայն. ո՞չ յառաջագոյն իսկ կոչեաց ապականեալքդ. ո՞չ բնաւ ինչ գործեաց վասն մերոյ փրկութեան. ո՞չ յաւազանէն վերստին դարձեալ ծնունդ պարգեւեաց եւ զառաջին զմեղսն զամենայն 'ի բաց ջնջեաց. ո՞չ յետ թողութեանն այնորիկ եւ աւազանի դարձեալ զապաշխարութիւնն եցոյց քեզ օգնական եւ թողութիւն մեղաց. ո՞չ դիւրինս գործեաց քեզ զճանապարհն եւ յետ մեղացն թողութեան: Ուր զինչ հրամայեաց. զի թէ թողցես դու, ասէ, ապա եւ ես քեզ թողից: Իսկ արդ զինչ դժուարին են այսոքիկ. "Դատաստան առնել որբոյն եւ իրաւունս հանել այրւոյն": Իսկ իբրեւ զայս առնիցէք, ասէ, "եկայք խօսեսցուք յանդիման. եւ եթէ իցեն մեղք ձեր իբրեւ զձանձախորիթ, իբրեւ զձիւն սպիտակ արարից": Իսկ արդ զո՞ր ջան ունիցի այն զոր ասէն' թէ "Ասա դու զմեղս քո զի արդարասցիս". եւ կամ զինչ դժուարութիւն այն ունիցի որ ասէն' թէ "Զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես": Իսկ արդ զո՞ր քրտունս ունի այս: Ասաց մաքսաւորն. "Քաւեա զիս զմեղաւորս", եւ էջ արդարացեալ: Իսկ արդ որպիսի աշխատութիւն ունէր այս. նմանեա մաքսաւորին:

Այլ չկամիս հաւատալ եւ յետ այսչափ օրինակաց եթէ գեհեն եւ տանջանք են: Իսկ թէ այդպէս է, ապա եւ ոչ զսատանայ, ասես, թէ տանջի: Իսկ արդ զինչ իցէ որ ասէն' թէ "Երթայք 'ի հուրն զոր պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա": Զի եթէ նա ոչ տանջեսցի, ապա եւ ոչ մեք. իսկ եթէ նա տանջի, ապա եւ մեք. վասն զի եւ մեք յանցեաք, թէպէտ եւ ոչ այնչափ ինչ: Իսկ արդ զիա՞րդ չզարհուրիս զայսպիսի զյանդգնութիւնս բարբառել. քանզի յորժամ ասիցես թէ մարդասէր է ա͞ծ եւ ոչ տանջէ, իսկ ապա եթէ տանջիցէ' նման մեզ գտանի եւ ոչ եւս մարդասէր: Տեսանես յորպիսի պատասխանատուութիւն ածէ զքեզ սատանայ: Իսկ արդ զինչ ասիցեմք, որք 'ի լերանց 'ի գագաթունս երթեալ բնակեալ իցեն միայնակեացքն եւ բնաւ ճգնութիւնս ցուցանիցեն, առանց պսակելոյ երթիցեն. զի եթէ չարքն չտանջիցին, ապա եւ ոչ միոյ իրիք փոխարէնք հատուցման կայցեն եւ ոչ բարիքն պսակին:

Այլ, ասէ, ա͞յ այն վայել է զի արքայութիւն միայն իցէ եւ ոչ եթէ գեհեն: Այդ ուրեմն պոռնկին եւ շունն

և որ զիւր չարիքն գործեցին, 'ի նոյնս վայելեն որք զցածութիւն և զպղծութիւն ցուցին. և Պաւղոս ընդ՝ Եւրամի կարգեցի, մանաւանդ թէ և ս տաւել սաստանայ իսկ ընդ Պաւղոսի։ Եթէ գեհեն չիցէ. յարութիւն ամենեցուն է. և չարքն և բարիքն ըստ իւրեանց արժանին ընդունին։ Այլ արդ ո՞ որ իցէ որ զայս ասիցէ, թէպէտ և բիւր որ անզգայ և շամշեալ իցէ մարդն. մանաւանդ եթէ ո՞ր դև իսկ իշխիցէ զայն ասել, քանզի և նոքա զգեհեննն խոստովանեին թէ է, վասն որոյ գոչեին ասելով. "Եկիր այսր յառաջ քան զժամանակն տանջել զմեզ"։ Որպէս արդեօք չերկնչիս և չզարհուրիս յորժամ դևքն խոստովանեին և դու ուրանաս, և զիարդ չտեսանիցես զվարդապետն զայսպիսի չարեաց։ Քանզի որ յառաջն խաբեաց զմարդն առաջի դնելով նմա զմեծագոյն ըղձային, ապա և զայն որ անդէն 'ի բուռն իսկ ունէր ըղբարիսն՝ կորզեաց 'ի նմանէ, նոյն ինքն է և որ այժմ զձեզ դրդէ զայս ածել զմտաւ և խորհել. և երագ հաւանեցուցանել տանուլ կարծիս եթէ չէ գեհեն, որով մարթասցէ զձեզ 'ի գեհեն արկանել։ Այսպէս և ա՟ծ 'ի հակառակորդաց անտի կողմէ. սպառնացաւ գեհեն և պատրաստեաց զհուրն, որպէս զի յորժամ լսիցես՝ այնպէս վարիցիս, զի մի անկանիցիս 'ի գեհենն։ Ո՛չ եթէ գեհենն է, և սատանայ այնպէս հաւանեցուցանէ թէ չիք, և եթէ չիք՝ որպէս արդեօք իւրեանք խոստովանեսցին դևքն։ Նա ևս այս միայն փոյթ է նոցա առ 'ի զայն կարծիս 'ի մեզ արկանել, որպէս զի ընդարձակութեամբ կեցով 'ի ծուլութիւն դայցեմք, զի և զմեզ ընդ իւրեանս 'ի գեհենն արկանիցեն։ Այլ զիարդ, ասէ, յայնժամ խոստովանեին զգեհենն. Ասեն զի չկարէին համբերել վտանգին որ 'ի վերայ կայր։

Այլ արդ զայս ամենայն իմացեալ դադարեսցին 'ի խաբելոյ զանձինս և զընկերս որք զայս ասիցեն։ Ապա թէ ոչ՝ և ընդ բանիցս իսկ բազում վրէժս տայցեն. դահագին զայնպիսի զիրս փոյթ յանձին ունին լուծանել և ընդ վայր հաշուել, և ոչ բարբառոյն այնոցիկ նմանեն անգամ։ Քանզի նոքա թէպէտ և քան զամենեսին տխմարագոյնք էին, իբրև լուան թէ կործանելոց է քաղաքն՝ ոչ միայն չեղեն անհաւատք, այլ և յոգւոց հանեին, քուրձ զգեցան և 'ի զղջումն եկին, և ոչ հրաժա-

Digitized by Google

րեցին զամենայն ինչ տանել մինչև լուծին զկարկու- թիւնն ։ Իսկ դու այսքան առեր զփորձ իւրացն և զա- նիցն, արհամարհես զառաւացելովքս ։ Այլ արդ գտան ընդ- դէմ միմեանց իրքն. զի զոր օրինակ նոքա զարհուրեալք 'ի բանիցն՝ չեկին իրք տանջանացն 'ի վերայ, սոյնպէս և դու արհամարհելով զբանիւք սպառնալեացն՝ զարդիւնս տանջանացն կորզես 'ի քեզ ։ Իսկ ապա եթէ քեզ այժմ բարբաջանք թուիցին բանքս, այլ ոչ եթէ յայնժամ յորժամ արդիւնքն իսկ հասանիցուցանեն ։ Զտեսանես աստէն իսկ զինչ արար. երկուս աւազակս ընկալաւ, այլ ոչ եթէ զերկոսեանն միոյ պատուի արժանի արար. այլ զմինն ընդ իւր յարքայութիւնն եմոյծ, իսկ զմիւսն 'ի գեհենն առաքեաց ։ Այլ զինչ ասեմ զաւազակէն և ըզ- մարդասպանէն, ուր և յառաքելոցն իսկ չխնայեաց, վասն զի մատնիչ եղև. այլ և 'ի մահն եւ եւս մերձեալ և 'ի խեղդ մտաբերեալ և ընդ մէջ հերձեալ, քանզի պայ- թեաց և հեղաւ ամենայն փոր-նորա ։ Որ թէպէտ և յառաջագոյն գիտէր զայս ամենայն, այլ թոյլ ետ նմա կրել զայն, որպէս զի 'ի մերձակայէս հասանիցուցէ զքեզ հաւատալ և հանդերձելոցն ։

Այլ արդ մի առաջի դնէք զձեզ սատանայի հաւանել. քանզի այս խորհուրդ և մտածութիւն նորա է ։ Որ եթէ գաստուածք և տէրք և վարդապետք և բարբարոսք զբարիս պատուեն և զչարիսն պատժեն, ապա ո՞ր բան ունիցի առ 'ի յայս հակառակ լինել սմին մինչև 'ի նմին պատուի առնել զբարիսն և որք չիցեն սոյնպիսիք ։ Այլ արդ երբ կարասցեն հրաժարել 'ի չարեաց այնպիսիքն, զի եթէ այժմ մինչդեռ աչս ունին գեհենին և 'ի մէջ այսչափ երկիւղի են 'ի դատաւորէն և յօրինացն՝ և ոչ երբէք հեռանան 'ի չարեաց, իսկ ապա և յորժամ զեր- կիւղս զայս 'ի բաց թողուն մերժիցեն յինքեանց և ա- սիցեն թէ գնասցեալքն 'ի մէնջ ոչ միայն 'ի գեհենն չեր- թան, այլ և արքայութեանն հասանեն, ապա երբ կա- րիցեն հեռանալ[1] որք 'ի չարիս են հաստատեալ զան- ձինս ։ Այլ այս մարդասիրութիւն է, ասա ինձ, որ 'ի չա- րիսն ծախեաց զժամանակն և բազում յաճախեաց զչա- նակ մեղայն, և ապա ընդ պարկեշտին և ընդ զգաստին

1 Յօրինակին պակասէր հեռանալ ։

զուգես զայնպիսի զչարսն. զհաւատացեալսն և զանձարիչսն մի դատես, զՊաւղոս և զսատանայ 'ի միասին կարգես: Ո՛չ. մինչև յե՞րբ բանիցս աղճատանաց միտ դնիցես: Վասն որոյ աղաչեմ. հրաժարել ձեզ յայնպիսի մոլորութեանց, և անձանց ուշ ունելով հաւանեցուցէք զոգիս ձեր ելանել և զարհուրել. որպէս զի և 'ի գեհենէն զերծանել մարթասցուք, և հանդերձ պարկեշտութեամբ կալ 'ի կենցաղումս յայսմիկ, և յաւիտենականն բարութեանցն հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք հօր հանդերձ հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

## ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

«Գիտեմ և հաստատեալ եմ թէ չիք ինչ պիղծ նովաւ. բայց այնմ որ համարիցին թէ պիղծ իցէ, նմա է պիղծ»:

Յառաջ նախ սաստեաց այնմ որ դատէր զեղբայրն, և յայնպիսի մեղադրութենէ մերժեաց զնա. ապա այնուհետև վասն ուսանողութեանն ճառէ և յոյժ հանդարտութեամբ խրատէ զտկարացեալսն, նա և բազում իսկ հեզութիւն ցուցանէ այժմ: Քանզի չասաց եթէ դատ տալոց են, և ոչ այլ ինչ 'ի սոյնպիսեացս. այլ զերկիւղն լուծանէ զնոցա, որպէս զի զհիւրընկալ առնիցէ զհաւատացեալսն յինքենէ, և ասէ այսպէս՝ եթէ «Գիտեմ և յուսացեալ եմ 'ի տէր»: Ապա զի մի ոք ասիցէ որք չեմք յոյժ հաւատացեալք, եթէ զի՞ սանես եթէ դու հաւատաս, քանզի չես իսկ արժանի հաւատալոյ եթէ փոխանակ հաստատելոյ զօրէնսն՝ որ զայսպիսի իմն անդուստ 'ի վերուստ հրամայեալ, յարէ 'ի սոյնս՝ թէ հաստատեալ եմ 'ի տէր. այսինքն է թէ 'ի նմանէն ուսայ և հաստատեցայ. և ոչ եթէ ըստ մարդկօրէն միտաց համարի ինչ: Իսկ արդ յի՞նչ յուսացեալ ես և գիտես, ասէ ասա զայն. «Թէ չիք ինչ պիղծ նովաւ»: Բնութեամբ, ասէ, չիք ինչ անսուրբ, այլ 'ի յօժարութենէ ճաշա-

կեղեացն լինի. ապա ուրեմն լոկ նմա է պիղծ և անմաքուր, այլ ոչ ամենեցուն. զի որ համարեցին եթէ պիղծ իցէ, նմա է պիղծ։

Իսկ արդ ընդէ՞ր ոչ ուղղիցես զեղբայրն, որպէս զի մի՛ կարծիցէ անմաքուր ինչ. Ե՞ր վասն ոչ հրաժարեցուցանես յայնպիսի սովորութենէ և 'ի կարծեաց ամենայն իշխանութեամբ, որպէս զի մի՛ վարկանիցի պիղծ ինչ։ Արկընչիմ, ասէ, զուցէ տրտմեցուցանիցեմ ինչ զնա։ Վասն որոյ 'ի սոյնս յարեալ ասէր. «Ո՛չ թէ վասն կերակրոյ եղբայրն քո տրտմեսցի, ոչ ևս սիրով գնասցես»։ Տեսե՞ր որպէս ընտանեցուցանէ զնոսա ցուցանելով թէ այնչափ հոգ ունի զնոցանէն՝ որպէս զի և տրտմեցուցանել իսկ չկամիցի, և ոչ Ճոխութեամբ ինչ տայ զհրամանն. այլ որ յոյժ կարևորն էր, ներելով իմն ձգէ զնոսա և սիրով։ Քանզի և ոչ յորժամ եղծ զերկիւղն՝ 'ի հարկէ ինչ կարգէ առ ինքն, այլ թողու զնոսա անձանց տեարս լինել։ Այս և չէ իսկ զօր 'ի կերակրոյն հեռացուցանել և դարձեալ տրտմութեամբն զկծեցուցանել։ Տեսանե՞ս որպիսի ինչ փոյթ տանի նոցա սիրոյն, քանզի գիտէ թէ զամենայն ինչ ուղղէ. յաղագս որոյ և մեծագոյնս իմն զայս պահանջէ 'ի նոցանէ։

Քանզի ոչ միայն, ասէ, զանձինս պարտ է 'ի կարևորս անդր մերձեցուցանել, այլ թէ և զիջանել ևս լինի՝ մի և այնու ղանդաղիցես։ Վասն որոյ զառաւելն ածեալ ասէր՝ թէ «Մ՛ի կերակրովն քով զնա տրտմեցուցաներ վասն որոյ Քրիստոս մեռաւ»։ Ո՞չ այնմ անգամ արժանի վարկանիս զեղբայրն որպէս զի քո 'ի կերակրոցն հեռանալով շահեսցես զնորա զփրկութիւնն։ Իսկ սակայն և Քրիստոս և ծառայ եղև և մեռանել չհրաժարեաց վասն նորա. իսկ դու զկերակուրն չարհամարհե՞ս վասն զնա ապրեցուցանելոյ. և այն զի թէպէտ և ոչ ամենեքին օգտեցան 'ի Քրիստոսէ, բայց սակայն նա յիւրմէ կողմանէն վասն ամենեցուն մեռաւ և զնոյն կատարեաց։ Իսկ դու գիտես եթէ վասն կերակրոյ կործանի եղբայրն, և ևս տակաւին յամառես. վասն որոյ Քրիստոս բազում փոյթն էր, և քեզ արհամարհելի թուիցի. և զոր նայն սիրեաց, դու անպատուես։ Այլ նա ոչ եթէ վասն տկարացն միայն, այլ և վասն թշնամեացն մեռաւ. իսկ դու և ոչ վասն տկարացն հրաժա-

ըներ 'ի կերակրոցն ։ Այլ Պօղոսս զմեծագոյնն եցոյց, խոկ դու և ոչ զնուաղն․ և նա տէր էր, և դու եղբայր տկարին ։ Այսու քանզի և զնոսա խիստ բաւականապէս զկծեայ ցուցանելով՝ եթէ կորձանեսցես զնա, և մեծամեծս ընկալեալ յՏնյ և ոչ փոքր մի փոխարէնս հատուցանես ։

“Այլ արդ մի հայհոյեսցի բարին ձեր․ զի չէ կերակուր արքայութիւնն Այ և ըմպելի”։ Բարի աստ զհաւատսն կոչէ և կամ զհանդերձեալ յուսոյն զխոստումն և կամ դարձեալ զկատարեալ բարեպաշտութիւնն ։ Քանզի ոչ միայն եղբարքն օգուտ ինչ չգտանեն, այլ և զնոյն ինքն զհրամանսն և զշնորհս Այ՝ տաս հայհոյել յորժամ կռուիցես և հակառակիցես ։ Յորժամ արդամեցուցանիցես և երկպառակիցես զեկեղեցին, և հայհոյեսցես զեղբայրն և յայժ ծանրագոյնս հայիցես 'ի նոսա, յայնժամ արտաքինքն հայհոյեսցեն զքեզ․ ոչ զի չուղղիցես ինչ բնաւ, այլ որ ամենն հակառակն է՝ զամենայն ինչ գործեսցես ։ Քանզի բարին ձեր, ասէ, այս է՝ տէր, եղբայրսիրութիւն, միաբանութիւն կացեալ ընդ միմեանս, խաղաղութեամբ և ցածութեամբ կեալ ։ Ապա դարձեալ լուծանէ զերկիւղն և զհակառակութիւնն նոցա ասելովն՝ եթէ “Ոչ է արքայութիւնն Այ կերակուր և ըմպելի”։ Որպէս զի մի յայտնանէ համարիցիք ընտրելք լինել․ զոր և այլուր ասէ․ “Ոչ թէ ուտեմք առաւելումք ինչ, և ոչ եթէ չուտեմք պակասեմք ինչ”։ Նա և ոչ կատարելութեան ինչ դէտս ունի բանս, այլ բաւական մխիթարն միայն է ։ Այլ զոր ասէն այսպիսի ինչ է․ ոչ եթէ ուտելն զամենայն՝ այն տանի զքեզ յարքայութիւնն ։ Այս և մեղադրելի եւս լինի նոցա որք այնու մեծամեծեալ էին․ և ոչ միայն կերակուր ասաց, այլ և ըմպելի ։

Այլ արդ զինչ իցէ որ յարքայութիւնն մուծանէ․ “Արդարութիւն, խնդութիւն, խաղաղութիւն” վարք առաքինիք, առ եղբայրն խաղաղութիւն, վասն զի սա ընդդիմակաց է հակառակութեան․ որ 'ի միաբանութեան է՝ խնդութիւնն է, նա բառնայ 'ի բաց զայսպիսի զյամառութիւն ։ Այլ այս ոչ եթէ միում ումեք միայն, այլ ամենեցուն ասէր․ քանզի առ երկպառակչիւր կոչեցեալ 'ի դէպ ժամանակի էր ասել նմա զայս ։

Նոյնպէս առաւել զխաղաղութենէն և զխնդութենէ, արդ յայտ առնէ՝ եթէ խաղաղութիւն և խնդութիւն և որ 'ի չար գործոց զատանին, կամի ցուցանել՝ եթէ ոչ զայն խաղաղութենէ ինչ ասէ, այլ որ "'ի Հոգին սուրբ" է։ Զի եթէ կորուսանես զեղբայրն, և զխաղաղութիւն և զխնդութիւնն 'ի վայր կործանեսցես. զի թէպէտ և մեծ ինչ գործեաց առնելի և կամ զինչ աւուրք յափըշտակեաց, այն ևս չար է զի յայլմէն ապրեցաւ, և դու կորուսանես զնա։ Եւ արդ եցոյց եթէ չկարէ կերակուրն յարքայութիւնն մուծանել, թէպէտ և կատարեալ առաքինութիւն իմն թուէր նոցա այն. և որ սմին հակառակքն թուին, նոքին իսկ մուծանեն յարքայութիւնն, ասէ։ Զայս ուրեմն պարտ է արհամարհել ըզփոքրն, զի զմեծն հաստատեսցեմք։

Նա և ցուցանէ իսկ հաւաստեաւ եթէ 'ի փառաւորութենէ էին անկեալ յայն. նայս և զատանն յաւելու ևս ասելովն. "Եթէ որ յայսմ ծառայէ Քրիստոսի, նա հաճոյ է Քրիստոսի և ընտիր մարդկան"։ Քանզի ոչ այնպէս ոք զարմանայ ընդ կատարելութիւն կերակրոցն, որպէս ընդ խաղաղութիւնն և ընդ միաւորութիւն. վասն զի 'ի սորա լաւութիւնս ամենեքին վայելեն, իսկ 'ի նմա և ոչ ոք։ "Արդ ուրեմն պարտասցուք զհետ երթալ խաղաղութեան և շինութեան որ առ միմեանս"։ Որպէս զի սա առ նա զխաղաղութիւնն կալցի, և նորա սմա դիւրիկ արկեալ՝ չտայ լուծանել եղբայրութեանն։ Եւ դարձեալ երկոցունց կողմանցն առ հասարակ զայսոսիկ դնէ ասելովն՝ եթէ "շինութեան որ առ միմեանս է"։ Եւ եցոյց եթէ առանց խաղաղութեան ոչ բարւոք լինի շինութիւնն։

"Եւ արդ մի վասն կերակրոյ քակեր զգործ Այ"։ Զեղբօրն զփրկութիւն այսպէս կոչէ, և յոյժ ահիւ դնէ զբանն. և ցուցանէ՝ թէ որ սմին հակառակն է, զայն փութաս առնել. զի ոչ եթէ չշինես միայն զոր կամիսն, այլ և քակես ևս զշինուածն, ոչ զմարդկան ինչ, այլ զԱյն քակես. և ոչ եթէ վասն մեծամեծ ինչ իրաց, այլ վասն զի յոյժ արհամարհելի է։ Զայս զի մի պատճառս տայցէ նոցա 'ի ներելոյ անտի, և հաստատեսցին [illegible] 'ի չար կարծիսն, այլ իմն աւանդէ նոցա ասելովն՝ եթէ "Ամենայն ինչ սուրբ է, այլ չար

այնմ մարդոյ է՝ որ խղճիւն ուտիցէ,,. այսինքն չար մը-տօք։ Որ թէպէտ և հարկաւորեսցի ուտել, չզործէ ինչ օգուտ. զի ոչ եթէ կերակուր պղծէ զքեզ, այլ բարքն որով ուտեսն։ Որ թէ զնա չուզղեսցես, զամենայն ինչ ընդ վայր գործեցեր, մանաւանդ եթէ ձեռնեցար իսկ. վասն զի չէ ընդ մի համար պիղծն վարկանել, և զար-ձեալ ճաշակել 'ի նմանէն։ Երկուս իրս մեղանչես դու, զի և զհակառակութիւնն աճեցուցանես, և յանսուրբ իւրոց հարկաւորես ճաշակել՝ զոր չէ պարտ ուտել և ոչ զայլս հարկաւորել։

,,Բարւոք է ոչ ուտել միս և ոչ ըմպել գինի որով իւիք եղբայրն քո գայթակղի կամ տկարանայ,,։ Պարծեալ այլ առաւելութիւն իմն պահանջէ, որպէս զի մի միայն չհարկաւորիցեն զնոսա ճաշակել, այլ և զի-ջանիցին եւս ընդ նոսա։ Քանզի նա խիղճն բազում ու-րեք զայնս գործեաց. որպէս յորժամ թլփատէրն և գերծոյրն և կամ յորժամ զոհեաց զզոհն հրէական։ Այլ չասաց լոկ թէ մի ուտեր զայն, այլ լուա կարգի բա-րուցն դնէ, որպէս զի մի եւս ծուլագոյնս զնոսա քան զտկարագոյնսն առնիցէ։ Այլ արդ զի՞նչ ասիցէ. ,,Բա-րւոք է չուտել միս,,. և զինչ ասեմ զմսոյ, նա թէ և գինի իսկ է և կամ այլ ինչ այսպիսի որով եղբայրն գայթակղէ, 'ի բաց հրաժարեա և մի ճաշակեր. քան-զի չիք ինչ զեղ եղբօրն փրկութեան։ Այս զայս յայտ Քրիստոս արար որ 'ի յերկնից 'ի յերկիր եկն և զա-մենայն ինչ վասն մեր կրեաց զոր ինչ կրեացն։ Տես զիարդ և զնոսա 'ի կարգ ածէ ասելովն՝ թէ ,,Եթէ կամ գայթակղէ կամ տկարանայ,,։ Այլ մի ինչ ասեր, ասէ, թէ որպէս անբան է, այլ թէ որպէս կարասցես դու զնա ուղղել. նա և իրաւունս իսկ ունի 'ի քէն տկա-րութեանն իւրում բաւական լինել, յորմէ քեզ վնաս և ոչ մի ինչ լինի. զի ոչ եթէ կեղծաւորութեան իրք են զիջանելն քո, այլ շինութեան և տնօրէնութեան։ Իսկ ապա եթէ հարկաւորես զնա ճաշակել, քանի չի-նուածն և զքեզ սադտանէ, մանաւանդ եթէ չլինի իսկ 'ի չուտելն. յորժամ զիջանիցիս դու ընդ նմա, ապա սիրէ զքեզ և չունի զքեն կարծիս. եթէ յանձնէ ու-սուցանես զայն, ապա առնուս իշխանութիւն զանտե-սանելի զնեղմն զուգէք զաւանդութեանն սփռեալ 'ի միտս

նայրս. իսկ եթէ ատեսցես, ատելոյ զչարն եւ զմեռ բա- նսին խնամ: Այլ արդ մի հարկաւորեր զնա ճաշակել, այլ զնա եւս հրաժարեա 'ի ճաշակելոյ այնպիսւոյ յաղագս նորա. ոչ իբրեւ 'ի արդիոյ խնդրէ հրաժարել, այլ վասն զի եղբայրն գայթակղի: Զոյն եւ Պաւղոս հրամայ- եալ ասելով՝ թէ "բարւոք է չուտել միս". ոչ զի պիղծ ինչ է, այլ զի եղբայրն գայթակղի եւ տկարանայ:

"Դու հաւատս ունիս, կալ առանձին": Այս թուի ինձ թէ միանգամայն եւ զկատարելութիւնն կատարե- լոյն ակնարկեաց: Այլ զոր ինչ ասէն այսպիսի ինչ է. կամիս ցուցանել ինձ, ասէ, թէ կատարեալ հաւատա- ցեալ ես, մի ինձ ցուցաներ, այլ բաւական լինին քեզ միտքդ քո: Իսկ հաւատս այժմ աստ ոչ եթէ զդաւան- դութեանց ինչ ասէ, այլ զյառաջիկայ իրացս. քանզի վասն այսորիկ ասէր՝ թէ "Բերանով խոստովանիմ 'ի փրկութիւն". եւ դարձեալ "Ով է որ ուրասցի զիս ա- ռաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա": Քանզի որ ըղ- ձայն ոչ խոստովանի, հինն 'ի վեր կործանի. իսկ այսր խոստովանութիւն ընդ վայր ինն է:

"Երանի որ ոչ դատեսցի զանձն որով զընկերն ստոր- տանիցէ": Դարձեալ զերկրպագութիւն ստորադասէ եւ ցու- ցանէ թէ բաւական է պսակն որ 'ի միտաց անտի է. զի թէպէտ եւ մարդ ոք չգիտիցէ, բաւական են քեզ ան- ձինդ լինել երանելի: Քանզի ասաց՝ թէ առանձինն կալ. ասա զի մի կարծիցեն թէ փոքր ինչ իցէ այս դատաս- տանս, ասէ՝ քան զտիեզերս ամենայն եւս լաւագոյն է այն որ զմտաց ինչ խիղճ չգիտիցէ. զի թէպէտ եւ ամե- նայն աշխարհ զքեզ բամբասեն, ասէ, եւ դու զքեզ ոչ ստորադասիցես եւ չունիցես ինչ խիղճ, երանելի ես: Այլ ոչ եթէ լոկ ընդ վայր զամենեցունց ասելով ցուցէ զայս. վասն զի են ոմանք որ ոչ ստորադասեն զանձինս, 'ի պղեր- գութիւնս հաստատիցին, եւ քան զամենեսին հեղգագոյնք գտանին: Սակայն զեւ եւս զյառաջիկայ իրացս բանն հարկանէ:

"Զի որ խղճէն, ասէ, թէպէտ եւ ուտէ՝ դատա- պարտեալ է": Տեսանես զիարդ դարձեալ խնայել 'ի տկա- րագոյնսն. ասէ՝ զինչ օգուտ է խղճիւն ուտել եւ դա- տապարտել զանձն: Այս, ասէ, զայն ընդունիմ որ ա- ռանց յերկբայութեան ուտիցէ: Տեսանես որպէս զգու-

Digitized by Google

նայ զնոսա ոչ յուսալն միայն, այլ և սաստից խղճի մը-տաց ուտել։ Ապա ասէ զպատճառն թէ ըստ իրիք դա-տապարտի, այսու «զի ոչ 'ի հաւատոցն»։ Զի, ասէ, պիղծ կերակուրն, այլ քանզի 'ի հաւատոց չլինին իրքն։ Վասն զի չասաց հաւատալ թէ սուրբ է, այլ որպէս 'ի պիղծ իւր մերձեցաւ։ Յաղագս այնորիկ եցոյց նոցա և զխնամն՝ թէ որչափ իւր գործի յորժամ հարկաւորեն, և նոքա չկամիցին ճաշակել, որպէս զի պիղծ իսկ հա-մարին։

Ապա զի գանէ այսու մերժեցէ զնոսա 'ի պղծացուցա-նելոյ զուկարսն՝ ասէ. «Ամենայն որ ոչ 'ի հաւատոց էն, մեղք են»։ Զի յորժամ չհաւատայ և չէ վստահ թէ սուրբ է, զիարդ ոչ մեղանչիցէ։ Այլ արդ զայս ա-մենայն յաղագս յառաջիկայ իրացս է ճառեալ Պաւ-ղոսի, և ոչ եթէ վասն ամենայն իրիք։ Այլ դու տես որպիսի փոյթ խնամոց ունի առ 'ի չգայթակղեցուցա-նել զեղբ, զոր և վերագոյն իսկ ասէր. «Եթէ վասն կե-րակրոյ եղբայրն քո գայթակղի, ոչ ևս ըստ սիրոյ գնայցես»։ Զի եթէ տրտմեցուցանել չէ արժան, ապա ևս առա-ւել գայթակղեցուցանել չէ պարտ. և դարձեալ՝ թէ «Մի վասն կերակրոյ քակեր զգործ այ»։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Զի որք զեկեղեցին հիմն 'ի վեր բերեն, զատն և անսուրբ իրս գործեն, ապա մանաւանդ ևս առաւել որք ըզհոգևոր տաճարսն. վասն զի մարդ պարկեշտա-գոյն է քան զեկեղեցի. քանզի ոչ եթէ վասն որմոցն մեռաւ Քրիստոս, այլ յաղագս այսր տաճարաց։ Այլ արդ ամենայն ուրեք զգուշասցուք անձանց, որպէս զի մի փոքր մի տացուք կռուան գտանել 'ի մեզ։ Վասն զի ապաքինեցի նախանձն է մերձակայ ժամանակս, և ամենայն ուրեք բիւր աչս ունել պարտ է, և մի կարծել զայն քաւական 'ի պատասխանատուութիւն՝ զողորմութիւնն. քանզի է և է իսկ և ընդ ողորմութեանն զառաւել յոր-ժամ ողորմութիւն սաստից ներելոյ լինի։ Այլ և հրեայքն իսկ ողորմածեան, այլ ոչ եթէ ներելոյ արժանի է ողոր-մութիւնն այն։ Այլ հեթանոսք ողորմածեան, այլ ունին պատասխանատուութիւն ինչ։ Յորժամ զայսպիսի ողոր-

տուութիւն ողորմածին, զոր տեսանելն և խնամելն անհնարին էր նոցա, որ ոչ ինչ կարէր զօրաւոր գործել զմեծագործութիւնն. իսկ յորժամ զդիւրինն և զոր հնար էր գիտել՝ և նա ողորմածաց, զմերկոյն զպատապարտութիւնն ընդունիք, թէպէտ և ոչ յոյժ նմանք մեծամեծաց երկուքեանն՝ զոր առեն՝ ընդունիցին։ Այլ արդ յաննմանց ինչ նպատակ ասացուք, որպէս զի և ՚ի ողորմութիւնն ած ձեռն կարկառեսցէ մեզ. զոր և փիլիպպեցւոցն գրեալ առէր Պաւղոս. «Եթէ ոք այլ ինչ խորհեսցի, սակայն և ած զայն ձեզ յայտնեսցէ»։

Իսկ արդ եթէ չլինիցիմք նման կարօտ, և որում չեմքն տեսողք՝ զայն անձամբ կատարել կամիմք, չկարեմք այնուհետև ՚ի նորին մշտնջենաւորութիւնամ վայելել. որ և առ Հռոմայեցիս իսկ եղև, զորոց ասէրն՝ թէ «Ամեն ապաւորիկ առակօք խօսիմ ընդ նոսա, զի տեսանեն և ոչ տեսանեն»։ Այլ զիարդ տեսանէին և ոչ տեսանէին. տեսանէին՝ զդևսն հալածականս ասնէր և ասէին՝ թէ դև գոյ ՚ի նմա. տեսանէին զի զմեռեալս յարուցանէր և ոչ պագանէին նմա երկիր, այլ ՚ի ապականութեան մտաքերէին։ Այլ ոչ եթէ Աստուածքոս այսպիսի ոք էր. այլ զամենայն ինչ որ վասն նորա էր, մեծվայելչութեամբ և փութով գործէր. և արդ զինչ ինչ որ ոչ յաւել նմա ած։ Որպէս և այժմ դու մի ասեր՝ թէ այս նիւ անապաճապ է և քաղցր և անուտեա արար զնա ած, և նոյնպէս մեայ հեթանոս։ Այլ և առաջին ած զայն զմտաւ թէ չիք հնար մարդկան ՚ի վերայ հաստել հաւատացեալ խոստովանիս և քաղցրութիւն, բայց միայն ոյ առեղծն աստանձին զօրինաւ նոցա։ Մանաւանդ թէ և զայն իսկ է ասել՝ թէ չարարաւ իսկ հող իւրեանց քաղում անգամ, և ոչ փոյթ յանձին կալաւ։

Այլ զիարդ այնչափ, ասէ, խոնարհութիւն և անպաճոյճ կերպարանս յանձին ունէր։ Այլ եթէ կամիցիս այժմ զանպաճոյճս զայս և զանմեղս տեսանել և ՚ի միում աւուր, գտանես զի յոյժ իսկ ամենայն հաւատացեալ մարթէր հող տանել երկրաւոր իւրոց, որպէս և ՚ի հոգևորսն եթէ կամեցեալ էր՝ կարողութիւն էր. այլ ոչ գտանելս զրկեալ, եթէ զհեա երթեալ էր, մանաւանդ թէ քան զայլ զգօնն և յայտնի է ճշմարտութիւն։ Այլ ուր ուրեք երթայցէ՝ կարէ գտանել զանձին շիրկու-

թիւն թէ կամեցի, միայն թէ յանձն առնուցու և ոչ ընդ վայր և 'ի զուր իւր համարեսցի զմեր իւր: Ո՛ք ոչ եթէ 'ի պատուիրանացն աշխարհին արգելեալ փախկաց զձանձրապարհս փոփոխութե և կամ յանկեան յաշխարհիու-րեք: Ոչ լուար մարգարէին որ ասէր՝ թէ ՙՙԱմենեքեան ծանիցեն զիս 'ի փոքրկանց մինչև 'ի մեծամեծս նոցա,,: Զանսանելի՞ս զճշմարտութիւն խրատն: Եւ արդ որով ներելոյ և թողութեան արժանի գտանիցին յորժամ անսանիցեն զճշմարտութիւնն աւանդութեանք տարա-ծեալ, և չխուզիցեն և ոչ փոյթ և հոգ յանձին ունի-ցին ուսանել:

Եւ զայս իսկ 'ի վայրենի և 'ի բարբարոսաց գտանէ պահանջել, ասէ: Ոչ միայն 'ի վայրենի և 'ի բարբա-րոսէ, այլ որ քան զնոսայն եւս բարբարոսագոյնքն են: Որ վասն, ասէ ասա ինձ, յորժամ յերկրաւոր 'ի վայրս փոքր մի զրկիցի, ընդդէմ գնայ պատասխանիս առնել այնմ որ զրկէն, և ընդդէմ եւս կայ յորժամ բանադա-տիցի յումեքէ, և զամենայն ինչ առնէ և հնարէ, ո-պէս զի մի յումեքէ խարդախեսցի. իսկ 'ի հոգևորն չարկանէ 'ի կեր զայնպիսի խաբէութիւն: Իսկ յորժամ քարի երկիր պագանէ և ած համարի և առնս կատարէ և խունկս ծախէ և բազում երկիւղ ցուցանէ և չլինի ծոյլ ինչ և ոչ ասէ թէ անպատճառս եմ և անմարթուց, իսկ ապա յորժամ որ առողջ և ճշմարիտ ածն է և պէտք լինին խնդրելոյ, յայնժամ բերես 'ի մէջ զտխմարութիւնն նորա և զանպատճառս զիւրն. քանզի չէ և չէ իսկ այս:

Եւ արդ ասէ. ասա ինձ, զո՞րս կարծիցես ագէտս և վայրենագոյնս. որ առ Աբրահամուն էին, թէ այժ-մուքս. յայտ է թէ նոքա: Նորու՛մ ժամանակի զիւրն էր գտանել զաստուածպաշտութիւն. յայնժամ, թէ այժմ. կարի՞ իսկ յայտ է թէ այժմ. վասն զի այժմ յամենե-ցունց ա՛յ անուն հաստատուն է, և մարգարէքն քարո-զեցին և իրքն 'ի գլուխ ելին և հեթանոսականն ամե-նայն յանդիմանեցան: Իսկ յայնժամ ամենեքին ա-ռանց վարդապետութեան էին և մեղքն զօրացեալ տի-րէին, ոչ օրէնք կային որ խրատէին, և ոչ մարգարէք և ոչ նշանք և սքանչելիք և ոչ վարդապետութիւնք և ոչ բազմութիւնք գիտնականաց և ոչ այլ ինչ 'ի այսպի-սեացս. այլ որպէս 'ի խաւարի ուր ոչ ծագիցէ լոյս, իւ-

Digitized by Google

րեւ 'ի մթին գիշերոյ ձմերայնւոյ այնպէս իմն գործէին ամենայն իրք աշխարհիս։ Բայց սակայն սքանչելի և ռա-քինի այրն այն, թէպէտ և այնչափ արգելք էին, և զնոյն ծանեաւ և զառաքինութիւնն ճգնեցաւ և զգա-ւանն յիւր նախանձ անդր ած, և այն զի ոչ առաքինին խնամատութեանն մարթ և փոքր էր. այնպէս արդեօք լի-նէր որ չև ևս պատեալ էր գիր 'ի վերայ երկրի։ Վասնզի Մովսէս չև էր ծնեալ, քանզի յանձնէ ընծայ եղև նոյ. նոյնպէս և նոյն զոյգ ընդ նմին ապա և զիւրն ընծայեցոյց նմա։ Վասնզի և ոչ զայն ունիս ասել թէ և 'ի հօրէն ընկալաւ զբարեպաշտութիւնն Աբրահամ. քանզի և նա կռապաշտ էր, նա և նորին նախնիքն իսկ. և բար-բարոս էր և 'ի մէջ բարբարոսաց սնեալ էր, և վարդա-պետ զոք ոչ ունէր բարեպաշտութեանն և զնոյն ծանոյց իւրոց ամենայն ծննդոցն, և յօրէնս և 'ի մարգարէսն եւս վայելել. և այնչափ ընտրեր զնեալ, մինչև ասել ան-հնարին է։ Այլ ուսանի արդեօք էր այս, եթէ ոչ զի զերկ-րաւոր իրացս չառնէր խնչ կարի փոյթ, այլ և 'ի հո-գևորսն մեծա ձգտեցուցանէր զմիտսն։ Ո՞չ ինչ և Մելքի-սեդեկ. ո՞չ առաքէն և նա յայն ժամանակս եղև և այն-չափ պայծառացաւ, մինչև քահանայ նմա անուանեցաւ. քանզի անհնար իսկ է և կարի յոյժ անհնարին՝ որ ար-թունն է, թէ չլինիցի երբեք երևելի։

Այլ մի այս զձեզ ամբոխեսցէ, այլ գիտասջիք թէ ա-մենայն ուրեք բարուցն խնամատարութեանն պէտք են. և արդ յառաջինս մեր հայեսցուք, որով կարիցեմք լինել լաւք։ Այլ մի յայս հաւատոյս պահանջեսցուք, և մի դարձեալ 'ի յոյզ և 'ի խնդիր արկանիցեմք թէ էր վասն զայս ա-նուն եթող և զայն անուն առանձինսց։ Վասնզի զայնս գործեմք, զորպիսի խնչ եթէ յանկարծ ծառայ ոք ու-ընդդիմանակաց տեառն իցէ և յինքն արկանիցէ զամենա-կարողութիւն տեառն իւրոյ և առիցէ՝ հեքեղ և թշնա-մանող, պարտ էր նախ հոգալ վասն քո պատժապար-տութեանդ, և եթէ որպէս կարասցես հաշտեցուցանել զտէրն ընդ քեզ. Նոյ զու մտատեցեալ հաւատոյս պա-հանջես որում զու հանդերձեալ ես պատժապարտ զը-տանել, և յղեալ զանց առնես որում զպատասխանեն պարտիս տալ։

Այլ արդ զինչ, ասէ, առ հեթանոսս առաքեաց. զայս-

Digitized by Google

պիղծ ձեռս։ Տես մի միայն առ հեթանոսն, այլ և զայն դիր 'ի մտի թէ որպէս կարասցես զնա ուղղել։ Վասնզի յորժամ զքո վարսն քննիցէ և յայնմանէ գայթակղեսցի, ապա յայնժամ 'ի մտի կալ եթէ զինչ առնիցես. իսկ եթէ վասն բանից գայթակղեսցի, չպահանջիս ինչ վասն այնորիկ. ապա եթէ 'ի վարուցն քոց փխտեսցի, զվերջին զվտանգն կրելոց ես։ Ոք յորժամ տեսանիցէ զքեզ վասն արքայութեանն խնամատարեալ և 'ի մերձակայսս հարեալ, յայնժամ ապա հոգայ յորժամ զայսոսիկ տեսանէ, և մեղադրելով ասէ ցքեզ՝ զի եթէ արքայութեանն ցանկացող ես, ընդէ՞ր զանցաւորս չառնես անտես. և կամ եթէ աշխարհ ատենին ակն ունիս, էր վասն զատախս զգժնդակ զքեզ չարհամարհիցես. և կամ թէ անմահութեան յոյս ունիս, հիմ չհամարիս ծաղր զմահ։ Այլ արդ յորժամ զայս առնիցէ, յայնժամ հոգ 'ի մտի կալ թէ զինչ պատասխանի տանիցես։ Յորժամ տեսանէ զքեզ զի սարսաս և դողաս վասն փոքու ընչիցն որ երկնից ակն ունիս, և ուրախ լինիս և բերկրիս ընդ գիւտ միոյ խեբեկչի և զանձնդ առաջի դնես վասն սակաւ մի արծաթոյ, յայնժամ ապա կալ հոգ 'ի մտի։ Վասնզի այսոքիկ են որ գայթակղեցուցանեն զհեթանոսն։ Որպէս զի հոգասցիս վասն քոյդ փրկութեան, յայսցանէ տուր պատասխանի, և մի միայն բանիւք, այլ և գործովք. քանզի վասն այնր գործոց ոչ երբէք հայհոյեաց զԱծ, իսկ վասն չար գործոց բազումք ամենայն ուրեք հայհոյեն։

Այլ արդ զայսոսիկ ուղղեա. ապա թէ ոչ՝ դարձեալ ասէ ցքեզ հեթանոսն, ուստի՞ ուսանիմ թէ զամենայն ինչ հնարաւոր հրամայեաց Ած. քանզի աշխարհիկ դու քրիստոնեայ ես 'ի նախնեաց, ասէ, և 'ի բարիոք կրօնաւորութեանց յայսմ սնեալ, և չգործես ինչ այնպիսի իրս։ Այլ արդ զինչ պատասխանի տայցես. բայց եթէ զայն առնիցես թէ ցուցանեմ քեզ զայլս զի գործեն, զմիայնակեացսն որք երթեալ յանապատսն յափափայսն լեալ դադարեալ կայցեն։ Այլ ապա չամաչիցես յորժամ քրիստոնեայ գոլ զքեզ խոստովանեսցիս, և վասն առաքինութեանն առ այլս առաքել զնոսա, որպէս զի ոչ կարասցես ցուցանել յանձնէ զվարս առաքինութէ։ Վասնզի և նա քեզ բակոյն պատասխանի ընդդէմ՝ թէ

զինչ հարկ 'ի վերայ կայ իմ գնալ անցանել ընդ լե-
րինս և ընդ ափափայ անապատս. վասն զի ուրեմն չէ
հնար 'ի մէջ մարդկան և քաղաքի խոնարհասիրել զայն-
պիսի առաքինութիւն, և բազում ինչ մեղապարտութիւն
ունի այսպիսի կարգաւորութիւն, և յաղագս այնորիկ
թողեալ զչէնս և զքաղաքս՝ յանապատն ապաւինին:
Բայց ցոյց ինձ, ասէ, որ կին ունի և որդիս, և ցածու-
թեանց կեայ և խոնարհութեանց: Նա արդ զինչ ունի-
ցիմք ասել առ այս. ո՞չ ապաքէն հարկ է զերեսս 'ի վայր
արկանել և զամօթ զգենուլ: Քանզի և ոչ լինէր Քրիս-
տոս այսպիսի ինչ հրամայեաց. այլ զինչ, եթէ «Ծա-
գեսցի լոյս ձեր առաջի մարդկան». և ոչ եթէ ընդ լե-
րինս և ընդ անկոխ անապատս: Զայս ասեմ, ոչ եթէ
բամբասեմ ինչ զայնոսիկ որք 'ի լերինսն բնակեն, այլ
ողբամ զայնոսիկ որք 'ի քաղաքսն կեան. վասն զի զա-
ռաքինութիւնն հալածական արարին աստի:

Յաղագս որոյ աղաչեմ զի զայնպիսի զիմաստասիրու-
թիւն և աստ 'ի ներքս ածցուք, որպէս զի և քաղաքք
լի լիցին. և յաղագս այսորիկ և զհեթանոսս կարող եմ
ուղղել, և 'ի բիւր գայթակղութեանց կարող եմ և ըզ-
մեզ հրաժարեցուցանել: Նա արդ եթէ կամիցիս զնո-
սա զատել 'ի գայթակղութենէն, և քեզ իսկ վար-
ձուց 'ի հատուցմունս վայելել, զկարգ քո յանձինս քո
ուղղեա, և յամենայն կողմանց պայծառ և լուսաւոր
կազմեա, որպէս զի տեսցեն զգործս մեր բարիս 'ի մէջ
մարդկան և փառաւորեսցեն զՀայր մեր որ յերկինս է:
Որպէս աստ և մեք մեծ և անճառելի փառացն ար-
ժանի լիցուք շնորհօքն և մարդասիրութեամբ տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հանդերձ
Հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

Digitized by Google

# ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

"Իսկ այնմ որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանին իմում և ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն ըստ ժամանակացն յաւիտենից լռեցելոյ, և յայտնելոյ այժմիկ 'ի ձեռն գրոց մարգարէականաց ըստ հրամանի յաւիտենականին այ 'ի հնազանդութիւն հաւատոյ յամենայն հեթանոս ծանուցելոյ, միայնոյ իմաստնոյ այ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն":

Միշտ սովորութիւն է երանելոյն Պաւղոսի յաղօթս և 'ի փառաբանութիւն կատարել զխրատ մխիթարութեանն. քանզի գիտէ թէ չունին իրքս փոքր ինչ շահ, այլ յոյժ մեծ: Օրպս 'ի գթոյ և յերկիւղածութենէ սովոր է առնել. վասն զի ուծասերի և որդեսէր վարդապետի չէ միայն բանիւք խրատել, այլ և աղօթիւք զառ 'ի յինէն զպատերազմակցութիւնն մատուցանել. զոր և աստ իսկ արար նա: Այլ ըստ կարգի իսկ այն էր. "Իսկ այնմ որ կարողն է հաստատել զձեզ, ասէ, նմա փառք յաւիտեանս. ամէն": Պարձեալ զարշէին ինձ 'ի սկզբանց անտի, յաղագս այսորիկ առ զօրաւորսն չզէ ըղբանն: Ոչ յորժամ ստանէ, հաստատակաց լինի առնէ զասատն. իսկ այժմ վասն նոցա պագատանս մատուցանէ: Այլ իբրև ասաց' եթէ հաստատեսցէ, յաւելաց 'ի նմին' թէ ըստ այսմ օրինակի, ըստ աւետարանին իմոյ' ասէ, որ յայտ իսկ առնելոյ էր թէ չև ևս էին հաստատեալք. թէպէտ և կային, սակայն տատանէին և շարժէին:

Այս զի ժողէս արժանի հաւատարմութեան զբանն գործիցէ, ածէ զսմկիմն' թէ "Ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի". այսինքն է' թէ զոր նայն քարոզեաց. իսկ նոյա եթէ նա ինքն քարոզեաց, ապրեմ յայտ է թէ ոչ մեր ինչ աւանդութիւն է, այլ նորին օրէնք: Այլ իբրև իմաստասիրեաց բարւոք վասն քարոզութեանն, ապա ցուցանէ թէ բազում երախտեաց և-

Digitized by Google

բաղում պատուոյ է պարգևն այն: Ուստի յաւետա-րանչացն կոչմէ զայս, յետոյ ապա և զնա իսկ զոր ա-ւետարանէին, քանզի և աւետարանն իսկ էր առ այնո-սիկ որոց ոչ երբէք յառաջ քան զնոսա էր ծանուցեալ: Զայս ակնարկեալ ասելովն՝ թէ "Ըստ յայտնութեան խորհրդոցն,,. որ է մեծ սիրոյ նշանակ՝ խորհրդոցն հա-ղորդս առնել, որում ոչ ոք յառաջ քան զմեզ եղև. "Ըստ ժամանակացն յաւիտենից լռեցելոյ, և այժմ յայտնելոյ,,. անդուստ 'ի վաղնջուց որ յառաջ սահմա-նեալ էր, բայց երևեցաւ այժմ: Որպէս յայտնեցաւ. "Ի ձեռն գրոց մարգարէականաց,,: Նա դարձեալ լու-ծանէ զերկիւղս տկարացն. Մի զարհուրիր, ասէ, և մի երկնչիր յօրինացն, զի և օրէնքն զնոյն կամէին. ան-դուստ 'ի վերուստ իսկ; ասէ, յառաջագոյն զայս գու-շակէր: Իսկ ապա եթէ քննիցես և 'ի խոյզ արկանիցես եթէ ընդէր այժմ յայտնեցաւ, չգործես ինչ լաւութեն իրս՝ զխորհուրդ այ 'ի քնին արկանել և հաւատոյս պա-հանջել. զի ոչ եթէ հետաքննիչ պարտ է լինել այսպի-սի իրաց, այլ սիրել և գթալ. ուստի և նա իսկ ընդե-րանէր[1] զայնոսիկ որք զայսպիսի զբաղս ցուցանէին: Ի նոյն յարեալ ասէր՝ թէ "Ըստ հրամանի յաւիտենա-կանին այ 'ի հնազանդութիւն հաւատոյ,,: Հնազան-դութեան պէտք են հաւատոյ, և ոչ եթէ 'ի բազում քննիս արկանելոյ. և յորժամ այ հրամայէ հաւա-տալ, պարտ է ոչ 'ի խոյզ և 'ի խնդիր արկանել:

Ըստ և այլուստ քաջալերէր զնոսա՝ թէ "Յամենայն հեթանոսս ծանուցելոյ,,: Ոչ դու միայն, ասէ, այսպէս հաւատաս, այլ տիեզերք ամենայն. ոչ զմարդ զոք, այլ զած ընկալան վարդապետ. որով 'ի նոյն յարեալ ա-սէր. "Ի ձեռն Յիսուսի Քրիստոսի,,: Ոչ ծանուցաւ միայն, այլ և հաստատեցաւ. երկոքեան իւր գործ են: Տեսանես և այնպէս յառաջ անծանօթ էր, իսկ այժմ որ կարողն է հաստատել զձեզ 'ի ձեռն Յիսուսի Քրիս-տոսի: Քանզի որպէս յառաջն ասացի իսկ՝ ոչ զերկո-սեան միայն, այլ և զփառսն եւս 'ի հայր տանի. վասն որոյ ասէրն՝ թէ "Որում փառք յաւիտեանս ամէն,,: Փառաւորէ դարձեալ սքանչացեալ ընդ անհասանելի

1 Յօրինակին գրեալ էր ընդէր ներանէր:

ընդ խորհուրդն ընդ այն. զի և ոչ այժմ յորժամ յայտնեցաւ, կարէ ոք մտաց հասու լինել, այլ հաւատովք միայն պարտ է գիտել, և այլ ևս իբր չէք հասու լինել։

Այս բարիքս առաւել թէ միայնոյ այ, յորժամ զնոսա ածիցես թէ ոչ միայն զհեթանոսս 'ի նոյնս ած և խառնեաց ընդ այնոսիկ որոց 'ի վաղնջուց գործեալ էր զաղզութիւնն. և կամ մտցես զյուսահատեալսն ապէցոյց, յորժամ 'ի մեր անձանցս թէ որք երկրիս չէին արժանիք՝ զնոսա յերկինս տարաւ, և որք 'ի մերձակայ 'ի կենացս անկեալք էին՝ յանմահ և յանճառելի բարութիւնն եմուծ, և որք զիւրեանց կորուսեալք էին՝ հրեշտակաց խառնակիցս յօրինեաց և զդրախտն երկաց և զհին զպատիժն զանձնոյն եղծ, և զայս 'ի փոքր մի ժամանակի և 'ի ձեռն երագ և դիւրին ճանապարհին, յայնժամ ծանիցես զիմաստութիւնն նորա յորժամ 'ի մեր անձանցս թէ զոր ոչ հրեշտակք և ոչ հրեշտակապետքըն կարացին գիտել, զայն յանկարծօրէն 'ի հեթանոսաց մարգին ուսան 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։ Արդ՝ պարտ է զարմանալ ընդ իմաստութիւնն։ Իսկ զա[1] զփաղաւմբք շղթայս, տակաւին. 'ի սուսերին յանձաւ պարապեալ։ Այս արդ այն էր փառաւորութիւն իցէ. քանզի որ չէ վասաւ 'ի նա և ոչ 'ի հաւատոյն յուսացեալ, զերկրորդ կարիցէ վկայել մեծամեծացն որ եղեն 'ի նմանէ։ Նայլ իսկզբն յաղագս նոցա զփառսն 'ի վեր առաքեաց, որպէս զի և զնոսա յետ 'ի նախախնամն յորդորեսցէ։ Այս արդ յորժամ լսիցես 'ի նմանէն զի ասէ. «Միայնոյ իմաստնոյ այ», մի արհամարհելով զորդի կարծիցես ասացեալ զայս. զի թէ ամենայն այս յորմէ հետեւ իմաստութիւնն նորա յայտնեցաւ՝ Քրիստոսիւ եղեւ, և առանց նորա և ոչ ինչ եղեւ, յայտ ուրեմն յայտ է թէ և իմաստութեամբն հաւասար է հօր։ Այս էր վասն ասիցէ՝ թէ միայնոյ իմաստնոյ այ. առ 'ի խորոց արկանելոյ 'ի մէջ ընդ ամենայն արարածս։

Այս արդ իրաւ կատարեաց զպատուաբանութիւնն, զորձեալ յաղօթիցն 'ի խորոտ ամբոխ փոխի, և առ կարգացն հոլէ զգանոյն և ասէ այսպէս՝ թէ «Մնչորոտիւք մեք որ կա-

1 Յօրինակին չփոփոխեալ Թուէր սպառէր, և առ նմին յաւելու զարմանալ... խել զառ ... 'ի չշխանոյ խմալ ... բառս յանձին։

ւորք եմք,,: Պարտիմք, ասէ, և ոչ եթէ շնորհեմք ինչ. Այս որդ զինչ պարտիցեմք. "Զտկարութիւն անուժիցն բառնալ,,: Տեսանե՞ս որպէս բարձրացոյց զնուաստ գովութեամբքն. և ոչ միայն զօրաւորս եցոյց զնոսա, այլ զի և ընդ նոսա եւս կարգեաց, և նոքա հնազանդեցան: Եւ ոչ այսչափ միայն, այլ և որ անվայելչութիւն իսկ նոցայն էր, յայնս ձգէ տանի զնոսա և անտաղտկալիս առնէ: Դու, ասէ, կարող ես, և զիջանես ընդ նմա և ոչ ինչ վնասիս. այլ նա է վերջին վտանգաւորութիւն եթէ չզիջանիցես ընդ նմա և համբերիցես նմա: Եւ չասաց թէ զտկարսն, այլ թէ զտկարութիւն անուժիցն բառնալ. առ 'ի յողորմել ձգէ զնոսա և խոնարհեցուցանէ. որպէս և այլուր ասէ՝ թէ "Դուք որ հոգևորքդ էք, հաստատեսջիք զայնպիսին,,: Եղեր զօրաւոր, համայն զերախտաւորիսն որ առաւելն զքեզ այդպիսի. և հասուցանես յայնժամ յորժամ զտկարութիւն հիւանդացն ողջացուցանես. քանզի և մեք էաք տկարք և անզօրք, այլ 'ի ձեռն շնորհաց եղաք զօրաւորք: Զայս ոչ եթէ յայսմ պատուիրէ միայն առնել, այլ և յայլ հիւանդութիւնս. յորպիսի ինչ, եթէ ոք յոյժ ցասկոտ իցէ և կամ թըշնամանող իցէ և կամ այլ ինչ յայսպիսեաց աստի յոռութիւն ունիցի, տար նմա և համբերեա:

Եւ զիարդ լինիցի այս, ասէ. լուր այնմ որ ըստ կարգին է: Զի յորժամ ասաց՝ թէ պարտիմք բառնալ, 'ի նոյնս յարեաց՝ եթէ "Մի անձանց հաճոյ լինիցիմք, այլ իւրաքանչիւր ոք 'ի մէնջ ընկերին հաճոյ լինիցի 'ի բարիս առ 'ի շինութիւն,,: Եւ զոր ասէն այսպիսի ինչ է. զօրաւո՞ր ես, ասէ, ասացէ զփորձ քոյոյ ուժոյդ տկարին. նա ուսցի զքո ոյժդ. նմա հաճոյ լեր: Եւ չասաց լոկ թէ հաճոյ լեր, այլ թէ 'ի բարիս. որպէս զի մի ասիցէ որ կատարեալն է՝ թէ ահաւասիկ 'ի բարի ձգեմ, յաղագս այնորիկ զայն յաւել՝ թէ առ 'ի շինութիւն: Որպէս զի թէպէտ 'ի հարստութեան իցես կամ 'ի մեծութեան, մի քեզ՝ այլ աղքատին և կարօտելոյն լեր հաճոյ. այսպէս 'ի ճշմարիտ 'ի փառսն վայելես և բազում օգուտ գործես: Քանզի կենցաղոյս այսորիկ փառք իսկոյն անցեն խամրանան, իսկ հոգևորականքն կայ և մնայ մշտընջենաւոր եթէ առ 'ի շինուածս գործիցես զայն: Յաղագս այսորիկ յաւելեցուցանէ իսկ առ հասարակ պահանջէ

զայս. և ոչ այս անուն և այն անուն, այլ իւրաքանչիւր ոք 'ի մէնջ:

Եւ արդ քանզի մեծամեծ հրամանս ետ և զանձանց զխստութեան հրամայեաց զիջուցանել առ 'ի յուղղելոյ զայլոց զանկարութիւնն, դարձեալ զՔրիստոս 'ի մէջ ածէ ասելով. "Քանզի ոչ եթէ Քրիստոս, ասէ, անձին իւրում հաճոյ եղև": Որ մեծս իսկ առնէ. զի և յորժամ վասն ողորմութեանն ձեռաց, զնա եբեր 'ի մէջ. "Գիտէք, ասէ, զշնորհսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի վասն մեր աղքատացաւ որ մեծատունն էր". և յորժամ 'ի սէրն յորդորէր, 'ի նմանէն առաջ սկիզբն. "Որպէս Քրիստոս սիրեաց զձեզ", ասէ. և դարձեալ յորժամ ամօթոյ և նախատանաց հրամայէր համբերել և վշտաց և նեղութեանց, զնա ածէր խորհրդակից և 'ի նա ապաւինէր ասելով՝ թէ "Փոխանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, համբերեաց խաչին, զամօթ արհամարհեաց": Զնոյնս և աստ ցուցանէ՝ թէ նորա է գործեալ զայս, և զմարգարէն՝ թէ անդուստ 'ի վերուստ գոչէր, յաղագս որոյ յարեաց 'ի սոյնս. ասէ. "Որպէս և գրեալ է՝ թէ նախատինք նախատչաց քոց անկան 'ի վերայ իմ": Եւ արդ զինչ "Ոչ եղեն անձին հաճոյ": Մարթ էր նմա չլսել զոր ինչ լսեաց, եթէ կամեցեալ էր լոկ զանձին գիտել. այլ չկամեցաւ զայն, այլ զմերն գիտեաց և զիւրն անտես արար:

Եւ էր վասն չարաց՝ թէ զանձն ունայնացոյց: Քանզի ոչ եթէ զայն միայն կամի ցուցանել եթէ մարդ եղև, այլ թէ և թշնամանեցաւ և բազում չար կարծիս ընկալաւ 'ի բազմաց, զի և տկար համարեցան զնա. "Եթէ որդի ես, ասեն, էջ՝ 'ի խաչէդ". և եթէ "Զայլս ապրեցոյց, զանձն չկարէ փրկել": Զորպիսի իրաց յիշեաց զոր նմա վայելուչն էր վասն մերձակայ իրաց. և եցոյց թէ ևս առաւել իմն է քան զոր պատմեացն. քանզի ոչ միայն զՔրիստոս եցոյց թշնամանեալ, այլ և զՀայր: "Նախատինք նախատչաց քոց անկան 'ի վերայ իմ": Եւ զոր ասէն այսպիսի ինչ է, թէ ոչ նոր ինչ և ընդ վայր իրք գործեցան. այլ թէ որ զՀինն ընթեռնուին և զնա նախատէին, նոքին իսկ և ընդդէմ որդւոյն մոլեգնեցան:

Զայս ասէ, որպէս զի նմին նմանողք լինիցուք. ուստի

և օծանէր իսկ զայնոսիկ որք 'ի փորձութիւնս ընկենիցին՝ ասելով. «Այլ որ միանգամ յառաջ գրեցաւ, ասէ, 'ի մեր վարդապետութիւն գրեցաւ, որպէս զի համբերութեամբ և մխիթարութեամբ գրոց զյոյսն ընկալցուք»: այսինքն է թէ մի անկցուք: Ասէ զի պէսպէս ջանք և աշխատութիւնք են ներքուստ և արտաքուստ, որպէս զի զօրացեալք մխիթարութեամբ գրոց զհամբերութիւն կամիցիմք ցուցանել. և յորժամ 'ի նմին կեցեմք, ապա կարեմք ակն ունել յուսոյն. քանզի այսոքիկ են երկոցունց իրացն կազմութիւնք, համբերութիւնն յուսոյն և յոյսն համբերութեանն. որպէս զի երկոքեան 'ի գրոց լինին:

Այս դարձեալ յաղօթս շրջէ զբանն ասելով՝ թէ «Աստուած համբերութեան և մխիթարութեան տացէ ձեզ զնոյն խորհել առ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի»: Այլ քանզի ասաց զիւրն և օրինակ 'ի Քրիստոսէ եբեր և 'ի գրոց զվկայութիւնն յաւել, և եցոյց եթէ յետ ձերոցն նա ևս տայ նոցա զհամբերութիւնն, վասն որոյ և ասէրն՝ թէ «Աստուած համբերութեան և մխիթարութեան տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի»: Քանզի այս իսկ է սէր՝ որ և զայլումն այսպէս խորհեսցի որպէս և զանձինն: Այլ դարձեալ ցուցանէ թէ ոչ դոյզն ինչ սէր պահանջէ 'ի մէնջ, այլ զայն որ Քրիստոսին համաձայն է, զոր և այլուր և ամենայն ուրեք ասէ. վասն զի է և այլ սէր: Այլ արդ զինչ շահ 'ի միաբանութենէն լինի. «Որպէս զի, ասէ, միաբանութեամբ 'ի մի բերան փառաւոր առնիցէք զԱծ և ըզՀայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Այլ չասաց լոկ թէ միով բերանով, այլ թէ միաշունչ հրամայեմ լինել: Տեսանես որպէս միաւորեաց զամենայն մարմինն և յինչ կատարեաց զբանն դարձեալ 'ի փառաբանութիւն անդր. ուստի և յորդորէ իսկ 'ի միաբանութիւն:

Այս դարձեալ զխրատուէն բուռն հարկանէ: «Վասն որոյ ընկալարուք զմիմեանս, ասէ, որպէս և Քրիստոս ընկալաւ զմեզ 'ի փառս Այ»: Դարձեալ օրինակ անդուստ 'ի վերուստ եբեր և զանբաւ զօգուտն եցոյց: Մանաւանդ եթէ զԱծ իսկ այս փառաւորէ, յորժամ զայս գործիցեմք. թէպէտ և ցուցիցեմք ինչ յումեքէ յորժամ հակառակութիւն յեղջօրէն լինիցի, և զմաւ-

ածիցես թէ լուծանես զպարկութիւնն 'ի փառաւորել զտէրն քո, զի թէպէտ և վասն եղբօրն չառնիցես, գոնէ վասն այսորիկ հաստատեաց. մանաւանդ եթէ նախ իսկ վասն այսորիկ: Վասնզի և Տէրն իսկ Քրիստոս 'ի վեր և 'ի վայր զնոյն յեղյեղու, և ընդ հօր ճառեալ խօսէր՝ թէ «Յայսմ գիտասցեն ամենեքեան թէ դու առաքեցեր զիս, եթէ լինիցին սոքա մի»:

## ՑՈՐԴՈՐԱԿ

Եւ արդ հաւանեսցուք այժմ նմա և միաւորեսցուք ընդ միմեանս. քանզի զայն ոչ եթէ զակարացն միայն ասաց, այլ զամենեսին իսկ կամի 'ի սոյնս յորդորել: Ո՛չ թէպէտ և կամիցի ոք ճեղքել և որոշել, դու մի ճեղքիր և որոշիր 'ի նմանէ, և մի պշուրտ զբանսն զայնոսիկ բարբառիր, եթէ սիրէ ոք զիս՝ սիրեմ, և եթէ ոչ ոք սիրիցէ՝ թէպէտ և աչքդ աջն իմ իցէ՝ 'ի բաց խլեմ զնա: Սատանայական բանք են այսոքիկ և մաքսաւորաց արժանի, մանաւանդ եթէ հեթանոսի կարճամտութիւն է: Իսկ դու որ 'ի մեծագոյն կարգաւորութիւնն կոչեցար և 'ի յերկինս գրեցար, մեծագոյն ևս պարտական ես օրինացն: Եւ արդ մի ասեր այնպիսի բանս: այլ յորժամ չկամիցին զքեզ սիրել, յայնժամ ցուցցիր զյաճախագոյն սէրն առ նոսա, որպէս զի կարիցես զնոսա ընդ քեզ միաւորել: Անդամ քո է. և անդամն յորժամ 'ի հարկէ իմեքէ կամիցի ճեղքել 'ի մարմնոյ, զամենայն ինչ հնարիմք որով կարիցեմք զնա անդրէն միաւորել 'ի մարմինն, և առաւել ևս խնամս տանիմք յայնժամ. սոյնպէս և առաւել վարձք յայնժամ են յորժամ որք ոչն կամիցին սիրել՝ և 'ի մեզ ձգեմք զնոսա: Ո՛չ թէ 'ի ճաշ և յընթրիս զայնոսիկ հրամայեաց կոչել որք ոչն կարասցեն փոխարէնս մեզ հատուցանել, որպէս զի առաւելուցուն մեզ վարձք փոխարինացն, սոյնպէս ևս առնել և 'ի սէր անդր զսոյնս պարտիմք գործել: Վասնզի որ սիրեցաւն 'ի քէն և դարձեալ սիրեաց զքեզ, իսկոյն առժամայն հատոյց զերախտիսն քո. իսկ որ սիրէն և չսիրիցի յումեքէ, այնպիսին ընդ նորա զԱծ ստացաւ իւր պարտապան. և առանց այսորիկ իսկ յորժամ սիրէն՝ չցուցանէ այնպիսի ինչ փոյթ առ քեզ. իսկ յորժամ

չափէն՝ յայտնաւոր է կարօտ քում ընդունելութեանդ։ Այլ արդ մի ասներ զպատճառս փութոյն պատճառս ծուլութեան, և մի ասեր վասն զի անխտաւոր է՝ յաղագս այնորիկ անփոյթ առնեմ. քանզի սոյն և հիւանդութիւն մեծ՝ ցամաքումն սրտոյն է, այլ դու ջեռո փութով զլուծութիւնն։

Այլ արդ զի՞նչ, ասէ, եթէ 'ի նախնի կայցէ մնայցէ, իբրև զայդ հրամայես առնել։ Ո՛չ, ասէ, քանզի որչափ նա 'ի նոյն դառնայ, ևս առաւել քեզ զհատուցումն գործես. մանաւանդ եթէ այնու իսկ եղեր նմանող Քրիստոսի։ Այս և ծանօթութիւն աշակերտացն 'ի միմեանց սիրոյն եղև. «Յայսմ ծանիցեն ամենեքեան, ասէ, թէ իմ աշակերտք էք եթէ զմիմեանս սիրիցէք»։ Զի եթէ այս այսպէս է, ապա որչափ ևս [1] որ զատեցին սիրէ։ Զի և տէրն քո զատեցին իւր սիրէր և աղաչէր, և որչափ ինչ տկարք և հիւանդք էին՝ այնչափ յաճախեր զզարմանն տանել, և համարձակ գոչէր ասելով թէ չունին ինչ պէտս ողջք բժշկի, այլ նոքա որ յախտին կան. նա և սեղանոյ ևս յանձն առնոյր հաղորդ լինել մաքսաւորաց և մեղաւորաց. և որչափ ինչ անարգէին զնա բազմութիւնք հրէիցն՝ ևս քան զևս ցուցանէր առ նոսա զիւր զպատիւն և զխնամսն, մանաւանդ եթէ ևս առաւել։ Այլ արդ սմին նախանձաւոր լեր և դու. քանզի չէ փոքր ուղղութիւնս այս, վասն զի առանց սորա եթէ և մարտիրոսանայ ոք, չկարէ հաճոյ լինել այ, որպէս և Պաւղոսն ասէր։

Այլ արդ մի ասեր եթէ ատիմ 'ի նմանէն և յաղագս այնորիկ չսիրեմ։ Այդ վասն այնորիկ իսկ ևս առաւել պարտէիր սիրել։ Ո՛չ և չէ իսկ հնար ասել զսիրելի զոք, թէպէտ և գաղան ոք իցէ, բայց եթէ զիւր զսիրելիսն սիրիցէ։ Զայս և հեթանոսք և մաքսաւորք առնեն։ Թէ իւրաքանչիւր ոք զիւր բարեկամն սիրիցէ, իսկ որ յետ ատելութեանն սիրիցէ՝ որպիսի ինչ ակր չյացանէ առ նմա։ Այլ արդ զայնս ցուցանիցեմք, և մի զագարեսցուք երբէք 'ի պատմելոյ թէ որչափ ատեաց զնա, եւ ևս առաւել սիրեմ զքեզ։ Այս այնուհետև զամե-

1 Յօրինակին պակասէր որչափ ևս. և զինի Զ.ի և սէրն ու զատեցին իւր միշեր յաւելուն 'ի յանձն։

նոյն իսկ զհակառակութիւնն նորա և զծուլութիւնն՝ ի բաց հալածես. քանզի յորժամ ՚ի խղխայթմանէ լինի ազատ ազա. այլ զերկրպագանելիւրոցն զնորայն զզօրութիւն սովոր է ուղղել իւրով ջերմութեամբն։

Զտեսանես զայնոսիկ որք յաղօթեղի ՚ի սէրն հաւրեալ ջեռեալքն են, զիարդ զդէմսն ապստամբեալծս առնեն և ընդ երեսս թքանեն, ձաղ և նախատ առնենցուն կացուցանեն և բիւր չարիս կրեն յայնպիսի պոռնիկ կանանց։ Այլ արդ զինչ, միթէ կարասցի լուծանել զայնպիսի սէր Ճշմարտութեանն զօրութիւն. և ոչ երբէք, մանաւանդ եթէ և՛ առաւել բորբոքի։ Այս և այն իսկ են մեծ չարիք, զի ընդ որում սիրեսցին և այնպէս նախատ լինի՝ յանարգ և յանշան ազգէ է. իսկ որք զայն ախտ ՚ի նոցանէն կրեն, թերևս և աղաւաք ասենք իցեն և պայծառ նախնիս ունին և այլ եւս ինչ երևելի մեծութիւն, բայց ոչ ինչ յայսպիսեացս եղծ զնոսա և հրաժարեցոյց ՚ի սիրոյն։

Այլ արդ չամաչիցեմք և չկարանայցեմք յորժամ տեսանիցեմք զի սատանայի և դիւաց սէրն այնչափ զօրութիւն ունի, մինչև որ լաս ՚ւմ սէրն է՝ չկարացաք այնպիսի ջերմութիւն ցուցանել։ Զիմանամ թէ այս զէն մեծ է հակառակ թշնամեայն. չամեւս զմտաւ զի անցեալ մերձ կայր դևն և կամէր զատեցեալն յնքն յափշտակել և ձեռքել զանդամն Քրիստոսի, և դու զանց առնես զնովաւ և յաղթութեանն մատն լինես։ Նանզի եղբայրն կայր իսկ ՚ի միջի մարտին, թէպէտ և յաղթէ՝ դու ընդ նմին պսակիս. ապա եթէ անփոյթ առնես և ծուլանայցես, առանց պսակելոյ տուժիս։ Այլ արդ դադարեա յայդպիսի սատանայական բանս բարբառելոյ զոր ասեմ՝ թէպէտ և աջ ակնս իցէ որ ատիցէ զիս, խլեմ ընկենում։ Այլ արդ զինչ ինչ քան զայսպիսի բանս վատթար և յետին կայցէ. նա և զօգուտն իսկ բարեպաշտութեանն նշաւակեալ խայտառակեն բազումք, որ քան որ զինչ չկայ դժնդակ այլ ամբարշտութիւն։

Սորին վասն և ես հեծեմ և յոգւոց հանեմ, զի որ ինչ չարեացն է՝ զայն առաքինութիւն վարկանեն, և զոր պարտն էր արհամարհել և անարգ առնել՝ զայն պայծառ և երևելի կարծեն։ Ոչ մեծ իսկ որոգայթ է սատանայի՝ զբարիոք զփառսն մատուցանել չարեացն, ո-

Digitized by Google

լով դառնալն իսկ անհնար է այնուհետև։ Այս և ես իսկ բազում անգամ լուայ յանանց՝ եթէ որք միանգամ ատեան զմեզ, մի՛ մերձենայք առ նոսա։ Այլ զիա՞րդ տէրն քո սովորեալք հրճուէր և զուարճանայր. Քանզի անգամ 'ի բաց արտաքս 'ի նմանէ. և սակայն նա ոչ երբէք դադարէր 'ի հետ ընթանալոյ։ Այլ արդ մի՛ ասեր՝ եթէ չկարեմ մերձենալ յատեկիւն. այլ ասա ոչ կարեմ ազատել զանգամանիչն իմ։ Այս բանք Քրիստոսի աշակերտաց են, իսկ միւսն սատանայի. սա լուսաւոր յարինէ և փառաւոր գործէ, իսկ միւսն անարգս և անվայելուչս, այսպէս կատակաւանաց։ Սոյն այսորիկ սքանչանամք ընդ Մովսէս, զի յորժամ Տր̃ ասաց ցնա "Թող զիս և բարկացեալ ջնջեցից զդոսա յերկրէ", և նա չկարաց անփոյթ առնել զնոսա որք բազում անգամ անարգեցին զնա. այլ ասէր. "Եթէ թողուս դոցա զմեղս՝ թող, ապա թէ ոչ՝ և զիս ջնջեա". քանզի այ̃ բարեկամ էր և նմանող։ Իսկ մեք որով պատկառելն պարտիմք, այնու պերճանամք։ Ասէ՝ մի ինչ ճառեր զգեհիկ և զխոտան առնէ որ բիւր անգամ յամենեցունց ձաղեալ է։ Զայս քեզ ատելութիւնն ուսուցանէ. ապա եթէ դէպ լիցի յայլոց ասել քեզ թէ մի անարգեր զպատկեր այ̃, իսկոյն ընդոստանաս և ընկերանես և ծիծաղիս զբանիւքն նորա. և որով պարտ էր ամաչել, զայն քեզ բերկրանս համարիս։

Այլ արդ աղէ ասա ինձ, քամահես զայր հաւատացեալ. իսկ Քրիստոս և ոչ զանհաւատսն չարհամարհեաց. և զինչ ասեմ թէ չարհամարհեաց, այլ և այնպէս սիրեաց՝ մինչեւ անվայելուչս և զազրատեսն էաք, մինչև մեռաւ վասն մեր։ Այլ արդ յորժամ նա այնչափ սիրեաց զմեզ, և այն զի այնպիսիք ոմանք էաք, իսկ դու յորժամ գեղեցկացաւքն և զարմանալիս եղաք՝ քամահես զայնու որ Քրիստոսի գառն է, որ տէրունական մարմինն եղև։ Չիմանաս զինչ բարբառեցիս և չզգաս զինչ յանդգնիսդ. գլուխ ունի զՔրիստոս և սեղան և պատմուճան և կերակուր և լոյս, և ամենայն ինչ նա է նորա, և դու յանդգնիս ազատել զնա. և ոչ զնա միայն, այլ և բիւրս ևս ընդ նմա։ Հանդարտեա, այր դու, և դադարեա 'ի մոլորութենէդ և 'ի միտ առ զեղելոյն, և ուսիր եթէ ամբարտաւանութեան և սատանայական

բանք են զոր դու առնես։ Մանաւանդ եթէ զսոցին հակառակն գործես և ասա. թէպէտ և բիւր անգամ քամահէ զիս, և ես ոչ աղարտեմ զնա։ Նոյնպէս ապա և զերկնայինն շահիցիս և փառօքն ա̅յ վարեսցիս և հանդերձելոյ բարութեանցն արժանաւորդ գտանիցիս։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հօր հանդերձ Հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն։

## ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

"Ասեմ եթէ Յիսուսի Քրիստոսի սպասաւոր լինել թլփատութեանն՝ վասն ճշմարտութեանն ա̅յ էր առ 'ի հաստատել զաւետիս հարցն"։

Պարծեալ վասն Քրիստոսի խնամոցն խօսի ընդ մեզ, զի դեռ ևս տակաւին զնմին ձայնէ բուռն հարեալ ունի, և ցուցանէ թէ որչափ ինչ գործեաց յաղագս մեր, և զի չեղեն անձին հաճոյ։ Ընդ այսմ և զայն կամի՝ թէ պարտական են որք 'ի հեթանոսացն են՝ ա̅յ. և եթէ պարտականք են, ապա հարկ է տանել այնոցիկ որք 'ի հրէիցն էին։ Քանզի յոյժ զկծեցոյց զնոսա, ապա զի մի՛ և սոքա 'ի մեծամտութիւն եկեսցեն, այսու զիջուցանէ զհպարտութիւն նոցա. վասն զի նոքա 'ի հարցն աւետեաց ունէին զպարծութիւնն. իսկ որք 'ի հեթանոսացն են, միայն առ ողորմութեան և մարդասիրութեանն ա̅յ. վասն որոյ և ասէրն՝ եթէ "Հեթանոսք վասն ողորմութեան փառաւորեն զա̅ծ"։

Այլ զի և յայտնապէս առաջեալքն լինիցին, զայն զբանս պարծեալ աղաչեմ լսել, որպէս զի ուսանել կարասցեն թէ զինչ է՝ վասն ճշմարտութեանն ա̅յ լինել Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն առ 'ի հաստատել զաւետիս հարցն։ Այլ արդ զինչ իցէ զոր ասիցէն։ Աւետիքն որ առ Աբրահամ ասացան՝ թէ "Քեզ տաց զերկիրս. և զաւակի քում", և եթէ "Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք"։ Այլ պատճա-

պտուղք տանջանաց գտան յայնժամ յետ այնորիկ՝ ամենեքին որք 'ի զաւակէն Աբրահամու էին։ Վասն զի օրէնք նոցա զբարկութիւն գործէին յորժամ յանցանէինն, յաղագս այնորիկ և 'ի հարցն աւետեաց զատեալ մերժեցան։ Ապա եկն որդին, եղև գործակից հօրն, որպէս զի աւետիքն այն ճշմարտիւ երևեսցին և 'ի գլուխ ելանիցեն, զամենայն իսկ զօրէնսն կատարեաց, որով և Թլփատեցաւն. այլ և խաչիւն ևս 'ի բաց ջընջեաց զանէծսն որ 'ի յանցուածոց անտի էին, և չետ աւետեացն անկանել 'ի գետին։ Եւ արդ յորժամ ասիցէ՝ Թէ "սպասաւոր Թլփատութեանն", զայն ասէ՝ Թէ եկն և զամենայն որ ինչ ըստ աւետեացն էր՝ ելից. Թըլփատեցաւ և եղև զաւակ Աբրահամու, և զանէծսն ելոյծ, և զնոյ զբարկութիւնն ցածոյց, և պիտանիս արար զայնոսիկ՝ որք հանդերձեալն էին ընդունել զաւետիսն, և զամենայն զընդդիմակացութիւնսն միանգամայն մերժեաց. որպէս զի մի՛ ասասցեն նոքա մեղադրութեամբ եթէ էր վասն Քրիստոս Թլփատէր և զամենայն ըստ օրինացն պահէր։ Եւ զի հաստատեսցէ զայսպիսի օրէնս՝ կրեաց զայս, այլ զի խափան լուծցէ զնա և հրաժարեցուսցէ զքեզ 'ի նորին անխծիցն, և ազատապէս ազատեսցէ զքեզ 'ի նորին իշխանութենէն։ Եւ քանզի դու անցեր զօրինօքն, յաղագս այնորիկ ինքն էառ. ոչ եթէ դու կատարեցեր, այլ զի 'ի քեզ զաւետիս հարցն հաստատեսցէ. վասն զի ոչ զօրէիր զօրինացն զկամսն առնել, զի ցուցանէին զքեզ օրէնքն ընդդիմակաց իւրեանց, միանգամայն և ժառանգութեանն չլինէին արժանի. որպէս զի և դու շնորհօք ապրեսցիս, քանզի արտաքս անկեալ էիր յայնժամ։ Եւ արդ մի՛ կար ընդդէմ և մի՛ հակառակիր ինչ 'ի զուր յաղագս օրինացն որ զքեզ արտաքս ընկեցին յաւետեացն, եթէ չէր կրեալ զամենայն վասն քո Քրիստոսի։ Եւ արդ համբերեաց այնմ ամենայնի, ոչ զի դու արժանի ինչ էիր փրկութեան, այլ զի զած ճշմարիտ ցուցցէ։

Ապա զի մի՛ այսու յամբարտաւանութիւն ինչ եկեսցեն որք 'ի հեթանոսացն էին, ասէ. "Հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զած"։ Եւ զոր ասէն այսպիսի ինչ է, թէ որք 'ի Հրէիցն էին՝ գոնէ զաւետիսն ունէին. իսկ դու և ոչ զայն անգամ, այլ մարդա-

սիրութեամբն միայն պարտեսցուք. մանաւանդ թէ և նոցա ինչ աւելի չվճարէր յաւետեացն, եթէ չէր Քրիստոսի եկեալ։ Բայց ապաքէն խառնէ զնոսա ընդ միմեանս և զուգէ. և յիշէ զաւետեացն, որպէս զի մի կառարեալքն 'ի վերայ տկարացն յանձնիցեն։ Եւ վասն նոցա ասէ՝ թէ ողորմութեամբ միայն պարտեցան, վասն որոյ և յիրաւի իսկ պարտին փառաւորել զԱծ։ Եւ փառք Այ՝ մեր մերձաւորութիւնն և միաւորութիւնն և միահամուռ գոհութիւնն և բառնալ զտկարութիւն տկարացն և չառնել անտես զանձնատեալ անդամսն 'ի մէնջ։

Բայց և զմիայնութիւնն բերէ 'ի մէջ, որով ցուցանէ թէ պարտ է միաւորել այնոցիկ որք 'ի հրէիցն են ընդ այնոսիկ որք 'ի հեթանոսացն էին. այսպէս ասէ, թէ «Որպէս գրեալ է. վասն այսորիկ խոստովան եղէց քեզ 'ի հեթանոսս տէր, և անուան քում սաղմոս ասացից։ Եւ դարձեալ թէ ուրախ լերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նորա։ Եւ այլուր՝ թէ օրհնեցէք զտէր, ամենայն հեթանոսք, և գովեցէք զնա ամենայն ժողովուրդք։ Եւ եթէ՝ եղիցի արմատն Յեսսեայ և որ յառնելոցն է իշխան հեթանոսաց՝ 'ի նա հեթանոսք յուսասցին»։ Եւ արդ զայս ամենայն 'ի մէջ եբեր, զի ցուցցէ՝ թէ պարտ է միաւորել ընդ միմեանս և փառաւորել զԱծ. միաբանութեամբ և որք 'ի հրէիցն էին՝ ցածուցանէ, զի մի ինչ յարձակեսցին 'ի նոսա, զմարգարէսն ցուցանէ թէ յառաջագոյն կոչեցին զնոսա. և որք 'ի հեթանոսացն էին, դարձեալ զիջուցանէ յիշեցուցանելովն թէ աւելի պարտական են շնորհացն։

Բայց դարձեալ յաղօթս փակէ զբանն ասելով՝ թէ «Աստուած յուսոյ լցուսցէ զձեզ ամենայն ուրախութեամբ և խաղաղութեամբ առ 'ի հաւատալ յառաւել յոյսն զօրութեամբ հոգւոյն սրբոյ»։ Այսինքն է թէ զերծայք 'ի վհատութենէն որ առ միմեանս էր, և ոչ երբէք ծանրացարուք 'ի վհատութեանցն. այս է զոր ասէն՝ յառաւել յոյսն։ Քանզի ամենայն բարութեց պատճառք նա է։ Եւ այն հոգւոյն սրբոյ է. և ոչ թէ լոկ 'ի հոգւոյն, այլ և մեք պարտիմք 'ի ներքս ընծայ լինել։ Վասն այնորիկ ասաց եթէ «Հաւատայք». կարէք լնուլ խնդութեամբ, թէ հաւատայք և յուսայք։ Եւ չասաց եթէ յուսայք, այլ թէ յառաւել յոյսն.

որպէս զի մի միայն սփոփանս ինչ գտանիցեն դժպատեհութեանցն, այլ խնդութիւն ունել 'ի ձեռն տառել հաւատոցն և յուսոյն։ Նոյնպէս ապա և զհոգին 'ի մեզ կարեմք ձգել, ապա և նա եկեալ զա̃մ ամբողջ պահէ։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Որ զոր օրինակ կենդանութիւնս մեր կերակուրս ունի և զմարմնոյ կենդանութիւն տնօրինէ, այսպէս թէ ունիմք ինչ բարութիւնս, զհոգին աղաչեմք և նա պահէ. զի եթէ զհոգին ունիմք, ապա և զգործս բարիս ունիմք։ Նոյնպէս և որ հակառակ սմին է, զի եթէ զգործս չունիմք, հոգին սուրբ մեկուսի կայ 'ի մէնջ և հրաժարէ. զի եթէ 'ի հոգւոյն թափուր գտանիմք, և գործովք կաղացեալ լինիմք. ապա յորժամ սա հրաժարէ 'ի մէնջ, պիղծ հոգին գայ։ Եւ յայտ 'ի Սաւուղայ է. զի թէպէտ և չխեղդէ զմեզ այնպէս որպէս զնայն, այլ այլ տարազ հեղձուցանէ 'ի ձեռն չար գործոց։ Եւ արդ պէտք են քնարին Դաւթայ, որպէս զի նուագիցեմք հոգւոց մերոց զա̃ծայինն զնուագսն և բերանով և բարի գործովք։ Եւ եթէ զմինն միայն առնիցեմք և լոկ զնուագսն լսիցեմք, որ զայնպիսին երգէր՝ և զգործովք հակառակ նմին գտանիցեմք որպէս և նայն յայնժամ, ապա 'ի դատապարտութիւն մեզ լինի գեղ բժշկութեանն, և ևս վայրենագոյնս մոլեգնիմք քան զնա։ Վասնզի մինչև լուեալ էր մեր զերգն՝ զարհուրէր չար դևն՝ թէ գուցէ յորժամ լսիցեն յուղղութիւն գայցեն. իսկ ապա և յորժամ յետ լսելոյն սոյնպիսիք գտանիմք, բառնայ 'ի նմանէն և այն երկիւղն, և այնուհետև ևս դառնագոյն լինի ընդդէմ մեր։ Եւ արդ սաղմոսեսցուք երգովք հոգևորօք 'ի ձեռն բարի գործոց, որպէս զի որ քան զդև դժնդակն է մեղքն՝ կարիցեմք արտաքս հանել 'ի մտաց։ Վասն զի դև ոչ կարէ ամենևին վրիպեցուցանել զմեզ յԵրկնից, այլ է ուրեք զի և օգուտ ևս գտանի այնոցիկ որք արթունք են. իսկ մեղք բոլորովին իսկ հանեն յարքայութենէն կամօք մարդոյն։ Դև իսկ է մոլորութիւնն սատանի. վասն այնորիկ և զայս ողորմելին անգամ, չտան ճանաչել։

Եւ արդ երգեսցուք նուագս այնպիսի հոգւոյն որ ան-

կեալ զնի, և յայլմէ 'ի գրոց և 'ի նմին իսկ 'ի Պօղոթայ։ Այլ արդ սաղմոսեսցէ բերանն և խրատեսցէն միտքըն։ Վասնզի չեն և այսոքիկ փոքունք. քանզի յորժամ խրատիցեմք զլեզուն սաղմոս ասել, ապա առնուլ հոգին յորժամ այսպիսի երգ մերձենայ 'ի նա հակառակս ինչ խորհել նմին։ Այլ ոչ եթէ զայս միայն պտղաբերեմք, այլ և ևս աւելի իմն որ մեզ բարին և օգուտն է. քանզի և վասն մերձակայիցս և վասն հանդերձելոցն զքեզ հմուտ առնէ, և վասն երևելեացս և վասն աներևոյթ արարածոցն։ Ո՛ր թէպէտ և յաղագս երկնից կամիցիս նախ ուսանել, այնպէս կայցէ մնայցէ. թէ փոփոխումն ինչ ընդունի յայտնապէս պատասխանի առնէ քեզ և ասէ՝ թէ երկինք իբրև զհանդերձս հնասցին, և իբրև զվերարկուս ծալէ զնոսա ա̃ծ և գալարէ և փոխէ։ Այլ եթէ զձևոյն և զկերպարանացն կամիցիս լսել, ունիս դարձեալ և զայն ևս լսել՝ "Որ ձգեաց զերկինս որպէս զխորան", ասէ։ Իսկ եթէ զվերինն ամուսցէն նորա կամիցիս 'ի միտ առնուլ, առնէ քեզ դարձեալ պատասխանի՝ թէ "Հարկեր 'ի վերայ ջուրց զվերնայարկս նորա"։ Այլ ոչ եթէ յայսմ ինչ կայ միայն, այլ և զլայնութենէ նորա և զբարձրութենէ քեզ ճառեալ պատմէ, և ցուցանէ թէ զոյգ չափով երկոքեան են. "Որպէս հեռի են, ասէ, արևելք յարևմտից, այնչափ հեռի արար 'ի մէնջ զանօրէնութիւնս մեր. և ըստ բարձրութեան երկնից յերկրէ՝ այնպէս զօրացոյց տէր զողորմութիւնն իւր 'ի վերայ երկիւղածաց իւրոց"։ Թէպէտ և զհիմունս երկրի 'ի խոյզ և 'ի խնդիր արկանիցես, սակայն և զայն չթաքուցանէ 'ի քէն, այլ յորժամ սաղմոսէ նա և ասէ՝ թէ "Ի վերայ ծովու հիմունս արկ նմա"։ Դարձեալ թէպէտ և զշարժմանէ կամիցիս գիտել եթէ ուստի լինիցի, վճարէ զքեզ յամենայն հիացմանէ ասելովն՝ թէ "Ով հայի յերկիր, և հարկանէ զնա 'ի դողման"։ Եւ թէպէտ և զգիշերոյ խնդրիցես զպէտս, և զայս ուսանիս 'ի նմանէն՝ թէ "Ի նմա եղանեն ամենայն գազանք անտառի"։ Եթէ ասիցես եթէ յինչ պէտս լերինք եղեն, տայ քեզ պատասխանի եթէ "Լերինք բարձունք են եղջերուաց"։ Իսկ եթէ ասիցես եթէ էր վասն վէմք եղեն, "Վէմք ապաւէնք ճագարաց և նապաստակաց" ասէ։ Ա՞ր վասն, ասիցես, անպտուղ ծառք բուսան.

Digitized by Google

"Անդ, ասէ, ճնճղուկք բոյնս դիցեն": Եւ կամ դարձեալ ասիցես թէ յինչ պէտս յանապատս աղբերացն իցեն, "Անդ արբուցանէ, ասէ, զամենայն երէ վայրի": Իսկ դարձեալ թէ յաղագս էր գինի, զի յարբուցանել բաւական էր բնութիւն ջրոյն միայն. այլ զի սփոփեսցիս փոքր մի նովաւ, "Գինի, ասէ, ուրախ առնէ զսիրտ մարդոյ": Եւ արդ զայս ուսեալ 'ի միտ առնուցումք որչափ արժան իցէ 'ի կեր արկանել զգինի: Դարձեալ ասիցես թէ ուստի կերակրին թռչունք և կամ վայրենի երէք, տայ քեզ պատասխանի ասելով՝ թէ "Ամենեքին քեզ ակն ունին տալ նոցա կերակուր 'ի ժամու": Իսկ ապա եթէ ասիցես յէր սակս անասունք եղեն, տանէ քեզ դարձեալ պատասխանի՝ թէ և այսպիսիկ վասն քո. "Որ բուսոյց զխոտ 'ի լերինս, ասէ, և զդալար այնոցիկ որք մարդկանն ծառայեն": Իսկ ասիցես թէ զինչ պէտք լուսնի իցեն, լուես 'ի նմանէն որ ասէն. "Արարեր զլուսին վասն ժամանակաց": Եւ զի ամենայն առ հասարակ երևելիքս աներևոյթք եղեալ են 'ի չգոյէ 'ի գոյ եկեալք, և զայս յայտնապէս ուսուցանէ քեզ ասելովն՝ թէ "Նա ինքն ասաց և եղեն, ինքն հրամայեաց և հաստատեցան": Եւ զի լուծումն կայ, և զայս ուսուցանէ քեզ ասելովն՝ "Աստուած փրկեսցէ զանձն իմ 'ի ձեռաց դժոխոց յորժամ ընդունիցին զիս": Եւ եթէ ուստի մեր մարմինքս եղեն, սակայն և զայս ասէ՝ թէ "Յիշեա զի հող եմք". և կամ ուր դարձեալ երթամք, "Եւ դարձցին անդրէն 'ի հող իւրեանց" ասէ: Եւ ո՞ր վասն այս ամենայն. յաղագս քո, "Փառօք և պատուով պսակեցեր զնա, ասէ, և կացուցեր զնա տէր 'ի վերայ ամենայն գործոց քոց": Եւ կամ եթէ ունիմք ինչ մեք մարդիկ հաղորդութիւն ընդ հրեշտակս, և զայս ասէ քեզ 'ի սաղմոսել անդ՝ թէ "Փոքր մի նուազ արարեր զնա քան զհրեշտակս քո": Եւ դարձեալ վասն սիրոյն այ ասէ քեզ՝ թէ "Որպէս գթայ հայր 'ի վերայ որդւոց, գթացի տէր 'ի վերայ երկիւղածաց իւրոց": Եւ յաղագս աստի անդր ընդունելոյն զմեզ և վայելել յանխռովական 'ի բարիսն, "Դարձիր, անձն իմ, 'ի հանգիստ քո" ասէ: Իսկ եթէ ասիցես՝ էր վասն այսչափ մեծ են երկինք, և զայս նա ասէ՝ թէ "Երկինք պատմեն զփառս այ": Եւ կամ թէ էր վասն

տիւ և գիշեր եղեն, ոչ վասն երևելոյ միայն և հանգստեան, այլ և խրատեցեն. "Ոչ են բանք, ասէ, և ոչ են խօսք որոց ոչ լսին ձայնք նոցա": Եւ կամ զխորգ ծով պատեալ կայ զաշխարհաւ, "Եւ խորք որպէս ըն֊դեստ վերարկու է նորա": Քանզի և 'ի հեբրայական լեզուին այսպէս կայ: Նոյն այնուհետև յասացելոց անտի առեալ սկիզբն՝ և այլոց ամենայնի կարեն հմուտ լինել յաղագս Քրիստոսի, յաղագս յարութեան, վասն հանդերձելոց կենացն, վասն անմահ հանգստեանն, յաղագս տանջանացն, վասն կարգաւորական բանիցն, յաղագս ուղիղ հաւատոյն աւանդութե. և գտանին բիւր բարութեանք 'ի գիրսն ամենայն: Որ թէպէտ և 'ի փորձութիւնս ինչ անկանիցիս, բազում միխիթարութիւն 'ի նոյնմէն գտանես. և կամ թէ դարձեալ 'ի մեղս ինչ ըմբռնիցիս, բիւր դեղս կազմն գտանես անտի. և կամ թէ յաղքատութիւնս և կամ 'ի վիշտս ինչ, բազում անգամ հանգիստս ընդունիս անտի. և դարձեալ թէպէտ և արդար իցես, առաւել 'ի զգուշութեան պահիս. և եթէ մեղաւոր իցես, դարձեալ բազում ափոփանս ունիս. իսկ եթէ արդար իցես, և դժնդակս ինչ կրիցես, լսես զոր ասէն՝ թէ "Վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար 'ի սպանումն: Այս ամենայն եկն 'ի վերայ մեր, և մեք ոչ մոռացաք զքեզ": Եւ դարձեալ եթէ հպարտացուցանեն զքեզ ուղղութիւնքն, լսես նմա որ ասէն՝ թէ "Մի՛ մտաներ ատեան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի": և իսկոյն առժամայն ցածնուս և խոնարհիս: Իսկ այսպէս եթէ մեղաւոր իցես և 'ի յուսահատութիւն անկեալ, հանապազ իսկ ասէ. "Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք, մի խստացուցանէք զսիրտս ձեր": և իսկոյն երագ կանգնիս: Թէպէտ և զթագն 'ի գլուխ ունիցիս և մեծամեծիցես, և ուսանիցիս զոր ասէն՝ թէ "Ոչ ապրի թագաւոր 'ի ձեռն բազում զօրաց, և ոչ հսկայ իւրով զօրութեամբ": իսկոյն զիջանիս 'ի մեծամտութենէ: Թէպէտ և մեծատուն ոք իցես և յղփ փառաւոր, դարձեալ լսես զի սաղմոսէ և ասէ՝ թէ "Այ որք յուսացեալ են 'ի զօրութիւն իւրեանց, և որք պարծին 'ի բազում մեծութիւն իւրեանց": և եթէ "Մարդոյ իբրև զխոտոյ են աւուրք": և դարձեալ թէ "Ոչ

իշխանեն փառք տան նոքա ընդ նմա»: Այլ այսուհետեւ ոչ ինչ յերկրաւորացս վարկանիցիս մեծագոյն ինչ իրս։ Զի թէ որ քան զամենայն ինչ պայծառն թուին փառքըն եւ մեծութիւնք, եւ զայն այնպէս անարգ համարեցաւ, ապա որչափ քանի արժանի գտանիցին այլ ինչ երկրաւոր իրք։ Արդեօք 'ի վհատութիւնս ինչ կործանեալ իցես, այլ լուր նմին իսկ զոր ասէ. «Որդ ընդէր տրտում ես, անձն իմ, կամ ընդէր խռովես զիս, յուսա առ Ած, խոստովան լեր նմա»։ Այլ արդեօք աղցես զմիտ առաւել քան զարժանն ընտիր գտեալ մեծութեանց, «Մի նախանձիր, ասէ, ընդ չարս»։ Եւ զայն եւս դարձեալ ասէ՝ թէ «Իբրեւ զխոտ ցամաքեսցին, եւ իբրեւ զբանջար դալարոյ երագ անկցին»։ Եւ դարձեալ տեսանիցես զարգարս եւ զմեղաւորս զի զնոյն խաշանցին. այլ մի զնոյն պատճառս կարծեր վերկոցունց, քանզի «Տանջումն տանջանք են մեղաւորաց» ասէ։ Իսկ վասն արդարոյն չասաց տանջանս, այլ թէ «Տանջումն նեղութիւնք են արդարոց, եւ յամենայնէ փրկէ զնոսա տէր»։ Եւ դարձեալ թէ «Մահ մեղաւորին է չար»։ Եւ թէ «Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց»։

Զայս ձեւեա հանապազ, այսու խրատեաց. քանզի իւրաքանչիւր ոք յայսց բանից անեզրական խորս անդընդոց ունի զիմաստութիւնս, իսկ մեք իբրեւ հարեւանցի իմն ընթեռնումք լսել։ Իսկ եթէ կամիցիք ամենայն հաւաստեաւ քննել զասացեալս, բազում մեծութեան շահս գտանէք. բայց սակայն բաւական են եւ ասացեալքըս 'ի յառաջիկայ կարեացն մաքրել զմեզ։ Յորժամ ոչ նախանձել թոյլ տայ եւ ոչ ընդվայրահար տրտմել եւ վհատել. եւ ոչ դարձեալ զմեծութիւն համարել թէ է ինչ, եւ ոչ ընդ վիշտան տրտմել եւ ոչ ընդ աղքատութիւն հոգալ, նա եւ ոչ զնոյն իսկ զկեանսն վարկանել թէ իցեն իսկ կեանք, ապա եւ յամենայն իսկ ախտից մերժեալ զերծիցեմք։ Եւ արդ 'ի վերայ այսր ամենայնի գոհասցուք զայն որ զայսպիսի զգանձ ընծայեաց մեզ. որպէս զի համբերութեամբ եւ մխիթարութեամբ գրոց զյոյսն ընկալցուք, որով եւ 'ի հանդերձեալ բարութիւնսն ժամանեսցուք։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք եւ մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ որում փառք Հօր հանդերձ Հոգւոյն սրբով այժմ եւ յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

# ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

«Յուսացեալ եմ և ես ինքն ՚ի ձեզ, եղբարք իմ, թէ և դուք լի էք ամենայն բարութեամբ, լցեալ էք ամենայն գիտութեամբ, կարող էք և զմիմեանս խրատել»:

Ասաց թէ «Յորչափ ժամանակս եմ առաքեալ հեթանոսաց, զպաշտօնն իմ փառաւոր առնեմ». ասաց թէ «Մի՛ գուցէ և ՚ի քեզ չխնայիցէ». և դարձեալ ասէ՝ թէ «Մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր». և դարձեալ թէ «Դու ընդէ՞ր դատիս զեղբայրն քո». և թէ «Դու ո՞վ ես որ դատիս զայլոյ ծառայ». և այլ ևս բազում քան զնոյնս ասաց: Արդ վասն զի ամենայն ասուտեք խոշորագոյնս բարբառեցաւ առ նոսա, ողոքէ այնուհետև. և զոր ՚ի սկզբանն ասէր, զնոյն և ՚ի կատարածին. քանզի ՚ի սկզբանն այսպէս ասէր՝ թէ «Գոհանամ զայ իմոյ վասն ամենեցուն ձեր, զի հաւատքն ձեր պատմեալ են ընդ ամենայն երկիր»: Իսկ աստ, «Յուսացեալ եմ ՚ի ձեզ, ասէ, լի էք ամենայն բարութեամբ, կարող էք և զմիմեանս մխիթարել». որ ևս վերագոյն քան զառաջինն է: Եւ չասաց եթէ լուայ, այլ եթէ յուսացեալ եմ և չեմ կարօտ յայլոց ուսանել. նոյն ինքն ես, այսինքն է թէ որ սաստէի ես և պատուհասակոծս առնէի զձեզ. այժմ զի լի էք ամենայն բարութեամբ, առիթ եղև ձեզ իմ խրատն, ասէ: Որպէս զի ասիցէ, թէ ոչ որպէս զանհամբոյրս ամանս և զեղբայրատեացս խրատեցի և ետու հրաման ընդունել զտկարսն և մի՛ փակել զգործ այ: Եւ արդ գիտեմ, ասէ, թէ լի էք ամենայն բարութեամբ: Եւ թուի ինձ թէ և աստ զբոլորովին զառաքինութիւնն կոչէ: Եւ չասաց եթէ ունիք, այլ թէ լի էք. նա և յաջորդն զնոյն յայտ առնէ ասելով՝ թէ «Լցեալ էք ամենայն գիտութեամբ»: Եւ արդ զի՞նչ է. զի գթածք և խնամոտք էիք և ոչ գիտէիք թէ որպէս առ սիրելիսն վարիցին, յաղագս այնորիկ յաւել զայս՝ թէ «Ամենայն գի-

տութեանն կարող էք խրատել զմիմեանս ,,. ոչ միայն ուսանել, այլ և վարդապետել:

"Համարձակագոյնս գրեցի առ ձեզ 'ի մասնէ ինչ. փոքր մի ,,: Տես զՊաւղոսի զխոնարհութիւնն որպէս 'ի խոր եդ զհաստատումն առաջնովքն. և ապա քննեալ ուղղեաց զոր ինչ կամէրն, դարձեալ բազում իւս առողջութեան նոցա 'ի կիր արկանէ: Եւ առանց տատանելոցն' այն իսկ բաւական էր նոցա զի խոստովան եղև թէ համարձակագոյնս յանդգնեցայ գրել առ ձեզ, այս իսկ բաւական էր զիջուցանել զմիտս նոցա: Այնպէս և հեբրայեցւոցն գրեալ ասէր' թէ "Յուսացեալ եմ վասն ձեր, սիրելիք, 'ի լաւ անդր և որ ըստ է փրկութեանն ,,. և կորնթացւոցն նմանն սմին. "Գովեմ զձեզ, ասէ, զի զամենայն ինչ զիմ յիշէք, և որպէս աւանդեցի ձեզ զաւանդութիւնս' այնպէս ընկալարուք ,,. և գաղատացւոցն դարձեալ' թէ "Ստահ եմ 'ի ձեզ թէ ոչ այլ ինչ խորհիք ,,: Այս և յամենայն իսկ 'ի թուղթսն գրամանեաս զպայապիտի զիրս յանձանս. իսկ աստ և մեծագոյնս իմն: Քանզի բազումք 'ի մեծամեծ պատուոցն էին 'ի Հռոմ, ապա կամէր զխղճմտութեան որ 'ի հպարտութենէն էր զիջուցանել, ոչ զի չմեծամտեսցեն միայն, այլ և զիջանիցեն. նա և բազում անգամ իսկ ասնէր զայս: Վասն որոյ և աստ ասէ՝ թէ համարձակութեամբ գրեցի առ ձեզ:

Եւ չհամարի զայս բաւական, այլ և յաւելու ևս թէ 'ի մասնէ, այսինքն թէ փոքր բանիւք: Եւ ոչ ասանօր առ զանեղի, այլ զինչ ասիցէ, թէ "Իբրու յիշեցուցանել ձեզ ,,: Եւ չասաց թէ ուսուցանել, այլ վերստին յիշատակել: Տեսանե՞ս որպէս կատարեցան յառաջասացեալքն: Զի որպէս անդր ասէր' թէ "Հաւատքն ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ ,,, նոյնպէս և 'ի վախճանի թղթիս ասէ "Ձեր հնազանդութիւնդ յամենեսեին եհաս ,,. և որպէս յորժամ 'ի սկզբանն գրեաց' թէ "Իղձ կացեալ եմ տեսանել զձեզ զի փոխեցից ձեզ շնորհս ինչ հոգևորս առ 'ի հաստատել զձեզ ,,, այսինքն է մխիթարակից ձեզ լինել, այնպէս և աստ' առ 'ի յիշեցուցանել ձեզ, ասէր: Եւ 'ի վարդապետական աթոռոյն խոնարհեալ և յառաջնումն և այժմ, և իբրև ընդ եղբարս խօսի և ընդ հաւատարիմ

բարեկամս. մանաւանդ՝ թէ այս իսկ է վարդապետի պէսպէս դիմօք 'ի կիր արկանել զբանն առ 'ի յօգուտ լսողացն.

Այլ դու տես զիարդ ասացն թէ համարձակագոյնս գրեցի առ ձեզ, և եթէ փոքր 'ի շատէ, և դարձեալ թէ առ 'ի յիշատակել. չհամարեցաւ զայս բաւական, այլ և խոնարհագոյնս գործեաց զբանն, և 'ի սոյնս յարեաց. "Ի ձեռն շնորհացն, ասէ, որ տուաւ ինձ յայ". զոր և 'ի սկզբան թղթիս ասէր՝ թէ "պարտապան եմ", որպէս յորժամ ասիցէ՝ թէ ոչ անձամբ ինչ յափշտակեցի զպատիւս զայս, և ոչ յանդգնութեամբ 'ի վերայ չոգայ, այլ ած այսպէս հրամայեաց ինձ, և զայս ըստ շնորհացն, ոչ զի արժանի որոշեցայ յայս: Այլ արդ մի ինչ դժկամակ լինիցիք, քանզի ոչ եթէ ես անձամբ ինչ, այլ ած է որ տայ զհրամանսն:

Այլ որպէս անդ ասէր՝ թէ "զոր պաշտեմն յաւետարանի որդւոյ Նորա", սոյնպէս և աստ ասաց թէ "'ի ձեռն շնորհացն որ տուան ինձ յայ", 'ի սոյնս յարեաց և զայն՝ թէ "Ի լինել ինձ պաշտօնեայ Յիսուսի Քրիստոսի 'ի հեթանոսս ցանկալի գործել ամենեցուն զաւետարանն այ": Այլ յետ բազում ասացելոցն և օրինակացն զոր եբեր, ապա 'ի պարկեշտագոյնսն դարձուցանէ զբանն: Այլ ոչ լոկ պաշտօնեայ ասաց որպէս 'ի սկզբանն, այլ պաշտօն և քահանայապետութիւն. քանզի այս է իմ քահանայապետութիւն, ասէ, քարոզելն և պատմելն, զայսպիսի պատարագ մատուցանեմ: Քահանային չկարէ ոք մեղադիր լինել որ փութայն զողջակէզն անարատ մատուցանել: Զայս ասէր առ 'ի թռուցանել զմիտս նոցա, և ցուցանել թէ և նոքա պատարագ և ողջակէզ են, և վասն անձին հաճէր զմիտս նոցա՝ թէ զայս հրամանս առի: Քանզի սուր իմ, ասէ, աւետարանն է և բանն քարոզութեան. և պատճառք զինչ. ոչ զի ես փառաւորեցայց և կամ պայծառ երևեցայց, այլ "զի եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի սրբեալ հոգւովն սրբով": Այսինքն անձինք աշակերտելոցն լիցին ընդունելի, ոչ թէ զիս այնքան ինչ պատուելոյ վասն ած, այլ վասն ձերոյ խնամոց և օգտի:

Այլ զիարդ լինիցի ընդունելի: Հոգւովն սրբով. ոչ եթէ հաւատոց միայն պէտք են, այլ և հոգևորական

Digitized by Google

վարուց, որպէս զի ունկնդիրք զհոգին որ տուաւ մեզ: Քանզի ոչ եթէ փայտ և հուր, և ոչ բաղեն և սուր, այլ ամենայն ինչ հոգևոր է մերս. յաղագս այնորիկ զամենայն հնարեաց, զի մի շիջցի հուրս այս: Զայս և ըստ կարգաւորութեան իսկ կարող եմք առնել: Յաղագս այնորիկ և նա ասէր ոչ ուսուցանել, այլ յիշատակել. զոր օրինակ քահանայն մերձ կայր և վառէր զհուրն, այնպէս և ես զարթուցանեմ զձեր յօժարութիւնդ: Եւ տես զի չասաց եթէ լիցի պատարագն ձեր, այլ եթէ հեթանոսաց: Յորժամ ասէ թէ հեթանոսաց, զամենայն տիեզերացս ասէ, առ հասարակ զծով և զցամաք ասէ: Այլ այսու[1] զինչ զմեծամտութիւն նոցա, որպէս զի մի անարժան վարկանիցին իւրեանց վարդապետ ունել զնա՝ որ ընդ ամենայն տիեզերս ձգեալ ուսուցանէր. զոր և անդէն 'ի սկզբանն ասէր՝ թէ “Որպէս և յայլ հեթանոսս. քանզի հեթանոսաց և բարբարոսաց իմաստնոց և անմտից պարտապան եմ”. և դարձեալ թէ “Ունիմ պարծանս 'ի ձեռն Քրիստոսի առ ա͞ծ”: Եւ քանզի կարի խոնարհեցոյց զինքն, դարձեալ ճոխացուցանէ զբանն. և զայս յաղագս նոցին առնէ, որպէս զի մի արհամարհելի թուիցի: Եւ յորժամ ճոխացուցանէ զինքն, և յայնմիկ զիւր զընտանի զպարծն յիշէ այսպէս ասելով՝ թէ ունիմ պարծանս. և ոչ եթէ պարծիմ յանձն և կամ յիւր փոյթն, այլ յա͞յ 'ի շնորհսն:

“Քանզի ոչ իշխեմ խօսել, ասէ, զոր ինչ ոչ գործեաց Քրիստոս ինև 'ի հնազանդութիւն հեթանոսաց բանիւք և գործովք, զօրութեամբ նշանաց և արուեստից, զօրութեամբ հոգւոյն սրբոյ”: Քանզի չունիս ոք ասել, ասէ, եթէ մեծամտութիւն ինչ բանքս են. վասն զի զքահանայութեանս իմոյ զխորհուրդ ձեռնադրութեան կամիմ ցուցանել զբազում նշանս: Քանզի ոչ եթէ պճղնաւոր և զանգակք որպէս առ հնովն, և կամ խոյր և կիդար, այլ որ են առաւել և զարմանալի քան զնոսայն է նշանքն և արուեստքն: Վասն զի չունիցին ասել՝ թէ յանձն եղև քեզ և ոչ կարացեր կատարել որ ինչ հրամայեցաւ. մանաւանդ եթէ ոչ եկ.

1 Ցօրինակին յոլով:

Digitized by Google

կատարեցի զայս, այլ ՚ի Քրիստոս. վասն որոյ և պարծիմ և ես ՚ի նմա ոչ վասն դոյզն ինչ իրաց, այլ վասն հոգևորականացն։ Այս է զոր ասէրն՝ թէ առ ած։ Այլ զի զի յաղագս որոց առաքեցայն, և զի չէ բանք մեծարանութեան, նշանքն և սքանչելիքն յայտ առնեն, և հեթանոսացն հնազանդութիւն։

«Ոչ իշխեմ խօսել, ասէ, զոր ոչ գործեաց Քրիստոս ինև ՚ի հնազանդութիւն հեթանոսաց բանիւք և գործովք, զօրութեամբ նշանաց և արուեստից, զօրութեամբ հոգւոյն սրբոյ»։ Տեսանես զիարդ ջանայ զամենայն ինչ յիւր ցուցանել և ոչ իւրում անձին. զի թէպէտ և խօսիմ ինչ, ասէ, կամ առնեմ և կամ սքանչելագործեմ, ամենայն ինչ նա է, ամենայն ինչ հոգին սուրբ։ Զայս ասէ, որպէս զի ցուցցէ զպատիւ հոգւոյն սրբոյ։ Տեսանես որպէս ջանայ զամենայն ինչ նմա և ոչ իւր։ Զի եթէ բարբառիմ ինչ և կամ սքանչելագործեմ, ամենայն ինչ հոգւոյն սրբոյ գործ է։ Զայս ասէ վարդապետութիւն որ յաղագս արքայութեանն խօսատանիրէր, գործովք և վարուք ցուցանէր, զմեռեալն զոր յարուցանէր, զդևսն զոր հալածականս վարէր, ըզկոյրսն զոր բժշկէր՝ որք ՚ի ծնէ կոյրքն էին և ողջանային, և զայլն ամենայն զոր գործէ մեօք հոգին սուրբ։

Այլ ապա իբրև եցոյց զայս, յայտնի առնէ զբազմութիւն աշակերտացն, վասն որոյ և ՚ի սոյնս յարեալ ասէր. «Որպէս ինձ յԵրուսաղէմէ և շուրջ մինչև ՚ի Իլիւրիկոն լնուլ զաւետարանն Քրիստոսի»։ Այլ արդ համարեաց այժմ զքաղաքս և զգաւառս, զազգս և ըզբազմութիւս ռամկացն, ոչ միայն զայնս որք ընդ հռովմայեցւոց իշխանութեամբն իցեն, այլ որք ընդ բարբարոսօքն. և ոչ միայն ընդ փիւնիկեցւոցն և ընդ Ասորւոցն և ընդ կիւլիկեցւոցն և ընդ կապադովկացւոցն Ճանապարհ գայցէն, այլ և որ հուսկ վերջինքն իսկ են՝ ած զմտաւ զՍարակինոսս, զՄարսս, զՀայս և զայլ զբարբարոսս։ Քանզի վասն այնորիկ ասաց թէ «շուրջ», որպէս զի ոչ զուգորդ զուղեգնացութիւնան միայն իմանայցես, այլ զամենայն իսկ զհարաւային կողմանսն և զասիացւոց զաշխարհն զմտաւ ած։ Այլ որպէս միանգամայն անուամբ նշանացն միով բանիւ յամենայն ժամանեալ ասաց՝ թէ զօրութեամբ նշանաց և արուեստից, այսպէս և քաղաքս անբաւս և

Digitized by Google

ազգս և ռամիկս և զաւուրս միով բանիւ շուրջ բոլորա-ղակերաց։ Այլ ինքն հեռի էր յամենայն հաղորդութե-նէ. և զայս յաղագս նոցա բարբառեցաւ, որպէս զի մի մեծամտեսցեն յանձինս։ Նա և ՚ի սկզբանն ասէր. "Զի և ՚ի ձեզ գտից պտուղ ինչ որպէս և յայլ հե-թանոսս"․ իսկ աստ կարևոր էր զքահանայութեանն իրս յիշել։ Այլ քանզի սաստիկս բարբառեցաւ և ինքնին եցոյց զիւր զիշխանութիւնն, յաղագս այսորիկ անդ լռէ ասէր՝ թէ որպէս և յայլ հեթանոսս, իսկ աստ զամե-նայն իսկ զտեղեացն ասէ, որպէս զի յամենայն կողմանց ՚ի բաց կորուսցէ զմեծամտութիւն նոցա։ Այլ չասաց լոկ եթէ քարոզեմ զաւետարանն, այլ թէ լնուլ զաւետա-րանն Քրիստոսի։

"Այնպէս առաջացեալ յաւետարանելն՝ ոչ ուր ա-նուանեցաւն Քրիստոս"։ Հաւատարիմ միւս և այլ ա-ռաւելութիւն. զի ոչ միայն այնոքիկ եղեանց քարոզեաց և հաւանեցոյց, և ոչ եթէ առ աշակերտեալսն որք չգոյն, վասն զի այնչափ հեռի էր յայնպիսի յիրաց առ այլոց աշակերտսն երթալ և իւր փառս վարկանել զնոսա, այլ նա փոյթ յանձին ունէր որոց չէին լուեալ՝ զնոսա ու-սուցանել։ Արդ և չասաց թէ որք ոչն հաւատացին, այլ թէ ուր անուանեցաւն ոչ Քրիստոս. որ և ս մեծա-գոյն է՝ զայն եդ։ Այլ էր վասն առաւելագոյն այսպէս. "Որպէս զի մի յայլոց հիման վերայ շինիցեմ", ասէ։ Զայս ասելով ցուցանէ զինքն թէ օտար է յամենայն փառասիրութենէ, և խրատէ զնոսա թէ ոչ առ խան-դութեան փառաց և զառ ՚ի նոցանէ զպատիւ ընկն յանձն գրաւել, այլ որպէս զպաշտօն լնուլ՝ և զքահանայու-թիւնն կատարել, քանզի ցանկայր նոցա փրկութեանն։ Քանզի յայլոց յառաքելոցն, ասէ, ոչ զիմոք կերպա-րանաց և ոչ ըստ քարոզութեան բնութեանն լինիմ օտար, այլ ըստ վարձուց բանին. իսկ քարոզութիւնն չէ օտար և ոչ նոցայն, այլ որչափ ինչ վարձքն էին՝ յայն-մանէ օտար էի։ Այլ եթէ յայլոց ՚ի ձեռս և ՚ի վաստակս իմ մտեալ էր և քարոզէի, օտար էի յայնպիսի վար-ձուց. և ոչ եթէ քարոզութիւնն օտար է, այլ մի և նոյն։ Ապա ցուցանէ թէ այսպէս և մարգարէութիւնն կատարի։

"Որպէս և գրեալ է, ասէ, թէ որոց ոչ պատմեցաւ

վասն նորա տեսցեն, և որոց ոչ իցէ լուեալ 'ի միտ առ-ցեն„. Տեսանե՞ս որպէս ընթանայ անդր քան զբազում աշխատութիւնս էին և մեծամեծ քրտունքն, վասն ո-րոյ և ասէրն՝ թէ «Բազում անգամ յօժարեցի գալ առ ձեզ„։ Այլ տես որպէս նման յառաջագոյն ասացե-լոցն և զխափանման թղթիս նուէ թէ. նոյն և յորժամ ըս-կզբնաւորէր թղթոյս, զայս ասէր՝ թէ «Բազում անգամ յօժարեցի գալ առ ձեզ և արգելայ մինչև ցայժմ„։ Նաև աստ և զպատճառն եւս ցնէ թէ էր վասն արգե-լու. և ոչ եթէ մի անգամ միայն, այլ և երկիցս և բա-զում անգամ։ Այլ որպէս անդն ասէր՝ թէ բազում ան-գամ յօժարեցի գալ առ ձեզ, նոյնպէս և աստ՝ թէ «Ցանկալի յոյժ ունիմ տեսանել զձեզ„. Նոյնպէս ցու-ցանէ միանգամայն զխանդաղատանսն զոր ունէր առ նոսա, և զի բազում անգամ զձեռնարկեալն յերթալն։

«Այժմ չունիմ տեղի 'ի կողմանս յայսոսիկ„։ Տե-սանե՞ս որպէս ցոյց թէ ոչ էր ցանկացեալ փառաց ինչ 'ի նոցանէն՝ զբէ զայս և երթայ. այլ թէ ցանկացեալ էր գալ առ ձեզ 'ի բազում ամաց հետէ. «Յորժամ անցանիցեմ 'ի Սպանիա, յուսամ յանցանելն իմում տեսանել զձեզ և 'ի ձէնջ յուղարկել անդր, եթէ նախ ձերովք յագիցեմ 'ի մասնէ ինչ„. Այլ զի մի ասիցեն ե-թէ խոտեալ վասն զմեզ ասէ՝ թէ չունիմ ինչ առ գործել՝ յաղագս այսորիկ գամ առ ձեզ, ապա վասն դարձեալ 'ի սիրոյն ձերոյ միայն և ասէ՝ թէ 'ի բազում ամաց հետէ ցանկացեալ եմ գալ առ ձեզ։ Այլ ոչ վասն այնորիկ ցանկանամ գալ զի պատուասիրեալ եղէ, ո՛չ ասէ, այլ զի զխանդաղատանս զոր 'ի վաղնջուց երկնէի՝ կատարեմ 'ի ծնունդս ածել։

Նոյն զի մի դարձեալ 'ի հպարտութիւն ածիցէ զնոսա այնու, տես դարձեալ զիարդ նուաստացուցանէ զնոսա. «Յորժամ երթայցեմ, ասէ, 'ի Սպանիա, յուսամ թէ յանցանելն իմում տեսանիցեմ զձեզ„։ Այլ զայս յայն սակս դնէ, որպէս զի մի կոկին մեծամտիցեն. միանգա-մայն և զսէրն իւր կամի ցուցանել, և արգելուլ զնոսա 'ի վշտանալոյ. վասն որոյ հանապազ իսկ զնոյնս դնէ և ըստ կարգի իմն փոփոխէ զերկայնուց ասցս զկազմութիւն։ Այլ էր վասն դարձեալ զայս առնիցէ. որպէս զի մի ասի-ցեն թէ հարևանցի ճանապարհաւ տեսանես զմեզ, ա-

ծէ զասովլինն թէ «և 'ի ձէնջ յուղարկել». այսինքն է թէ դուք վկայէք ինձ թէ չարհամարհեմ զձեզ, այլ 'ի պէտս իրացն ձգեալ ընթանամ։ Եւ զի այն ևս տրտմեցուցանէր զնոսա, ևս զօրագոյն բժշկէ զնոսա ասելովն՝ թէ «Նախ ձեօք լցայց փոքր 'ի շատէ»։ Զի չէր ցանկացեալ փառաց 'ի նոցանէն՝ եցոյց այնու թէ յերթալն իմ 'ի Սպանիա։ Իսկ յասելն թէ նախ ձեօք լցայց՝ զայն յայտ առնէ թէ յոյժ հարեալ է 'ի սէր նոցա. և ոչ եթէ յոյժ լոկ, այլ և կարի առաւելի. վասն այնորիկ չասաց թէ լցայց, այլ թէ 'ի մասնէ ինչ. քանզի չիք ժամանակ որ կարէ զիս լցուցանել սիրովք ձերով և կամ եթէ յագեցուցանել առաւել գթոյն զոր ունիմ։ Տեսանես որպէս եցոյց զսէրն, զի և յորժամ երթայցէ առ նոսա՝ ոչ հրաժարէ մինչ ոչ յագեսցի սիրոյն։ Եւ այս բաղձալն՝ գթոյ նորա նշանակ է յորժամ զայսպիսի զջերմագոյն զբանս 'ի կիր արկանէ։ Եւ չասաց եթէ տեսանել զձեզ, այլ թէ լցայց ձեօք, ծնողաց բանից նմանեալ։ Զոր և 'ի սկզբանն իսկ ասէր «Զի գտից և 'ի ձեզ պտուղ ինչ», զնոյնս և աստ՝ թէ «Լցայց ձեօք». որպէս զի երկաքանչիւրովքն կարիցէ զնոսա ձգել յինքն. քանզի մի՝ գովութիւն մեծ էր նոցա, թէպէտ և պտուղ հանդերձեալ էին տալ նմա զհնազանդութեանն. իսկ միւսն՝ իւրոյ սերտ սիրոյն նշանակ։ Եւ Կորնթացւոցն գրեալ առաքէր սոյնպէս ասելով՝ թէ «Դուք յուղարկեսջիք զիս ուր և երթալոցն իցեմ»։ Եւ ամենայն ուրեք զսէրն առ աշակերտսն ցուցանէ, որում չիք զոյգ և հաւասար։ Վասն որոյ և զսկիզբն իսկ թղթոյն միշտ յայսմ բանից առնէ, և զվախճան թղթոյն 'ի սոյն բան կատարէ։ Եւ զոր օրինակ հայր որդեսէր զմիածին և զսերտ որդի սիրիցէ, այնպէս սիրէր զամենայն զհաւատացեալսն. վասն որոյ և ասէրն՝ թէ «Ո՞վ հիւանդանայ և ոչ ես հիւանդանամ, և ո՞վ գայթակղի և ոչ ես տոչորիմ»։ Նախ քան զայլն ամենայն զայս պարտ է ունել վարդապետին. վասն այսորիկ և Քրիստոս ասէր ցՊետրոս. «Եթէ սիրես զիս, արածեա զոչխարս իմ»։

Digitized by Google

## ՑՈՐԴՈՐԱԿ

Քանզի որ զՔրիստոսն սիրէ, և զհօտն նորա սիրէ։ Վասն զի և զՄովսէս յայնժամ կարգեաց վերակացու քաղաքութեան հրէիցն, յորժամ զբարեմտութիւնն առ նոսա եցոյց։ Այնպէս և Դաւիթ յաղագս այնորիկ եկն 'ի թագաւորութիւնն, վասն զի յառաջ գթոյլ լինէր առ նոսա։ Քանզի այսպէս և մինչդեռ տղայն էր՝ ցաւէր նմա վասն ժողովրդեանն, որպէս զի և զանձն իւր խոկեր 'ի վերայ նոցա՝ յորժամ զբարբարոսն զայն սպանանէր։ Իսկ արդ եթէ ասէր զայն բանս՝ թէ զինչ լինիցի մարդոյն այնմիկ որ սպանանիցէ զայլազգին զայն, ոչ եթէ վարձ ինչ պահանջէր ասելովն զայս, այլ զի հաւատայցեն և ընձեռեսցեն նմա զպատերազմն զայն. նա և յորժամ առ թագաւորն իսկ եմուտ յետ յաղթութեանն, ոչ ինչ ամենեւին ձայնեաց վասն այսպիսի իրաց։ Նա և Սամուէլ յոյժ և սաստիկ գթած էր. յաղագս որոյ և ասէրն՝ եթէ "Ինձ քաւ լիցի մեղանչել առ 'ի չառնելոյ աղօթս առ տէր վասն ձեր"։ Նոյնպէս և Պաւղոս, մանաւանդ եթէ ոչ այսպէս միայն; այլ ևս առաւել քան զամենեսին տոչորէր վասն նոցա որոց իշխէրն. վասն որոյ և զաշակերտացն այնպէս ուխտեաց. "Եթէ հնար ինչ էր, ասէ, զաչս ձեր հանէիք և տայիք ինձ"։ Սորին վասն և զհրէիցն զվարդապետս նախ այսու մեղադրէ ա̃ծ ասելովն. "Հովիւք Իսրայէլի, միթէ ճարակեն հովիւք զանձինս. ո՞չ ապաքէն հովիւք զոչխարս արածեն. իսկ նոքա զհակառակն գործէին. ըզկաթնն ուտէք, ասէ, և զասրն զգենուք և զգէրն զենուք և զոչխարսն ոչ ճարակէք"։ Այլ Քրիստոս իսկ զառաւելինն հովուի և զքաջի բերէր յանձն զօրինակ ասելովն՝ թէ "Հովիւ քաջ դնէ զանձն իւր 'ի վերայ ոչխարաց իւրոց"։

Որպէս և Դաւիթ արար 'ի բազում տեղիս, նա և յորժամ 'ի վերայ քաղաքութեան ամենին ահագին ըսպառնալիք մահուն յորձանահոս լինէր, և մինչ ահն ունէր ամենեցուն սպանման, ասէր՝ թէ "Այս հովիւս մեղայ և ես հովիւս գործեցի զչար, իսկ սոյս խաշինքս զի՞ արարին"։ Վասն այնորիկ և ընտրութեան պատուոյն

Digitized by Google

այնոցիկ ոչ փառամոլ ընտրելեաց եւ ոչ զհպարտացումն 'ի թշնա-
մեաց, այլ որ յետ ասացելի մահուն, որով ամն ունէր թէ
այլքն 'ի զգուշութեան պահիցին եւ զինքն յառաջ քան
զամենեսին կորնչել։ Այլ ապա քանզի այնոքիկ չեղեն,
ողբայր եւ ասէր՝ թէ "Եղիցի ձեռն քո յիս. ապա ե-
թէ այս չիցէ բաւական, եւ 'ի տուն հօր իմոյ եւս"։ Վասն
զի ես, ասէ, հովիւս եղայ. զի թէպէտ եւ դոքա մե-
ղան, բայց սակայն ես եմ պատճառք տանջանացդ որ
ոչս ուղղեցի. իսկ արդ յորժամ իմ իսկ եկն յանցանքս՝
եւ յիրաւի տանջիմ։ Նա եւ անձնուցանել իսկ կամէր
զանձինն մեղադրութիւն, յաղագս այնորիկ եդ զանուն
հովուութեան եւ այնպէս ցածոյց զպարկութիւնն եւ զվր-
ձիան 'ի բաց ընկեցաց. քանզի այնպիսի էր խոստովա-
նութիւն։ Զայս եւ ոմն իմաստուն ասէր՝ թէ "Ար-
դարն ամբաստանէ յառաջին պատասխանատուութեան"։ Այն-
քան խնամս եւ վշտակցութիւնս ցուցանել քաջի հովուի
է։ Նա եւ այրէր իսկ եւ տառապանայր զթօքն. եւ յորժամ
նորայն անկանելին, որպէս թէ իւր սիրոյ որդիք անկա-
նիցին, այնպէս աղաչէր զնոյն զպարկութիւնն յիւր վե-
րայ ածել։ Նա եւ յառաջին իսկ սպանմանն զոյնս գոր-
ծեաց, քանզի ոչ կամէր երթալ նոցա զճանապարհն
զայն. եւ յորժամ չօգանն՝ ամն ունէր դարձեալ ընդու-
նել զնոսա, ապա թերեւս այն ոչ լինէր եւ 'ի միտ առ զթը-
շուառութիւնսն, ապա ոչ կարաց համբերել այնուհե-
տեւ, այլ բոցակիզեալ լինէր վասն Ամնոնայ անդրան-
կան իւրոյ։ Բայց սակայն յայնժամ ոչ խնդրեաց մահ
անձին իւրում. իսկ այժմ աղաչէ յառաջ քան զայլսն
ինքն վախճանել։ Այսպիսի պարտ է լինել իշխանացն,
մանաւանդ զի զայլոցն եւ ոչ զի զանձանց զթշուառու-
թիւնսն ողբայցեն։ Այսպիսի ինչ եւ յաղագս մանկանն
կրեաց. զի ուսցիս թէ քան զամենեսին որք ընդ իշխա-
նութեամբն էին՝ զնա քաջ սիրէր. թէպէտ եւ անառակ
ոք էր որդին եւ հայրախողխող, բայց սակայն ասէր. "Ո՜
տայր զմահս իմ փոխանակ քո"։ Զինչ ասես, ով ե-
րանելիդ եւ քան զամենայն մարդիկ հեզագոյն. սպա-
նանել զքեզ խորհեցաւ որդին եւ բիւր չարեօք պաշա-
րեաց զքեզ. եւ յորժամ նա 'ի միջոյ բարձաւ եւ նշան
յաղթութեան կանգնեցաւ, յայնժամ աղօթես թէ
դու սպանեալ էիր փոխանակ նորա։ Այո, ասէ, չյաղ-

Digitized by Google

թեցի արդէն զօրականօք խնովք, այլ յոյժ դեռ պատերազմ է առաւել քան զառաջինն, և չտեսմարանք գթոյ իւրոյ ևս մեծագոյնս պահին։ Այնպէս և ամենեքին որոց յանձն առեալ իցեն զիշխանութիւն՝ հոգասցեն։

Որպէս և երանելին Աբրահամ, որ ոչ միայն որ նախայն հաստատեցեալ էր՝ խնամ տանէր և դարմանէր, այլ և այլոյն ևս, և յազգի ազգի ձգանս արկանէր զանձն։ Եւ ոչ եթէ լոկ վասն եղբօրորդւոյն գործէր զինչ գործերն, այլ և յաղագս սոդոմայեցւոցն. քանզի ոչ 'ի բաց եկաց և հրաժարեաց յախոյանէ որ գերեցինն զնոսա, մինչև ազատեաց զամենեսին։ Զի թէպէտ և մարթ էր նախ որոշել և գնալ 'ի տեղւոջէն, բայց սակայն չառ յանձն, վասն զի ամենեցուն միապէս խնամ տանէր։ Զայս և յետ այնր գործոյ յայտնի արար յորժամ ոչ եթէ բարբարոսական զօրքն պաշարէին զնոսա, այլ յորժամ աստուածասաստ բարկութիւն հրեղէն անձրևացն 'ի վերայ հասեալ զքաղաքն նոցա հիմն 'ի վեր խոյանացուցանէր. յորժամ ոչ զինուց ժամանակ էր և ոչ ճակատուց և պատերազմաց, այլ միայն պաղատանաց և մաղթերց. և նա այնպիսի փոյթ եցոյց որպէս թէ նա ինքն իցէ հանդերձեալ վայելել 'ի բարութենէ ինչ։ Վասն այսպիսի մի անգամ և երկիցս և բազում անգամ անցանէր առաջի այ, և 'ի տկար բնութիւնն ընթացեալ աղաչէնէր ասելով՝ թէ "Ես հող եմ և մոխիր,,։ Եւ քանզի ետես զնոսա եթէ ինքեանք անձնամատն եղեն, այլով իւիք աղաչէր փրկել զնոսա։ Վասն այնորիկ և ած ասէր. "Միթէ թաքուցից ինչ 'ի ծառայէ իմմէ Աբրահամէ,,։ Որպէս զի մեք ուսցուք թէ որպիսի ինչ մարդասիրութիւն ունէր արդարն։ Եւ ոչ կաց 'ի բաց յաղաչելոյն, եթէ ոչ նախ ած մեկնեցաւ 'ի նմանէն։ Եւ թուի թէ վասն արդարոց ինչ պաղատէր, բայց նա աւելի վասն նոցա առնէր զայն. քանզի կարի իմն ցած էին մարդասիրացն ոգիք և վասն իւրեանց անձանց և յաղագս այլոց, նա և մինչև յանբան անասունս տարածանեն զայնպիսի զհանդարտութիւնն։ Վասն այսորիկ և իմաստունն ասէր՝ թէ "Արդարն գթայ յանձինս անասնոց իւրոց,,։ Իսկ եթէ անասնոցն, որչափ ևս առաւել մարդոյն։

Եւ արդ քանզի զանասնոցն յիշեցաք, ածցուք և զմի-

տաւ զայնպիսիկ զոչխարացն հովիւս որք 'ի կառապարտելոց ցւոց աշխարհէն, որպիսի ինչ կերպ կրեցին որք խաչանցն վերակացուքն էին, բազում անգամ ձիւնաւթ աղբ եղեալք զերխս և կամ զվերջանակաց ժամանակս։ Ապա թէ և 'ի հիւսիսային կողմանքն ոչ ինչ նուազագոյն քան զնոսա կրէին զժնդակութիւնս բռնաւորին իսկ զամենայն զայնա-ւոր որք զուան զաղանոք 'ի մի էին՝ բազում վերակացու-թիւնս և խնամս տանէին։

Զի եթէ նոքա վասն անբան անասնոցն այնչափ փոյթ յանձին ունէին, ապա մեք որում պատասխանատուութե արժանիք զատանիցիմք որոց բանաւորաց ոչխարս հաւատա-ցեալս, և զայսպիսի զխնամս քան նմջեմք. զոգիս կորուսանել հնար է և կամ վայր մի լալ, և ոչ ամենայն ուրեք ըն-թանալ և 'ի բազում մահս առ զմեզ վասն այնպիսի ոչխարաց։ Այլ կամ արդեօք չասէր 'ի միտ և չգիտացեր զպատուէր Տեառն այսորիկ. ոչ վասն նոցա ետուր քո զպա-զում իւր զարիւնն, զկնի արտ և զարիւնն իւր եհեղ. իսկ դու հանդերձս խնայես։ Այլ արդ ո՛ որ քան զայսպի-սի հովիւ չար կայցէ։ Զամենայն զանաւ թէ չարչ արտա-րեալ կան զայլք զոչխարօքս, մանաւանդ թէ և զառ-նագոյն քան զգայլն և վայրենագոյնք։ Զինչ չա-նուս 'ի միտ եթէ որպիսի է զատանել այնմ ոգւոյ որ զայսպիսի զփչխանութիւնս յանձն առեալ իցէ։ Այս աւանիկ մարդիկ որք զհրապարակսն վարիցեն և զբրս քաղաքին, և վասն դոյզն իրաց զգայս և զգերիկ հագանս խորհին ուքնին. իսկ մեք որ վասն երկնից ունիմք ջան, և 'ի տանջանան նիրհեմք և խորգամք։ Այլ արդ ո՛ որ զմեզ կարիցէ յայնպիսի տանջանաց զերծուցանել։ Զի թէ-պէտ և զմարմինս պատառ պատառ հատանէր կտորել և կամ բազում մահս մեռանել, ոչ ապաքէն իբրև 'ի տոն ինչ մեծաւ յօժարութեամբ պարտ էր ընթանալ։ Այլ զայս ոչ միայն հովիւքն, այլ և ոչխարքն ամենայն, որպէս զի հովիւան յօժարագոյնս արասցեն, մանաւանդ արժանի իցեն անձել զնոսա 'ի բարեմտութիւն։ Այլ այլ ինչ ոչ խնդրեմ, բայց միայն զհպատակն լինել և զհնա-զանդելն, և զամենայն ինչ ետուք։ Զայն և Պաւղոս հրամայեաց ասելովն՝ թէ "Հպատակ լերուք առաջնոր-դացն ձերոց և 'ի հնազանդութեան կացէք, որպէս և նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս զի բան իսկ տա-

լոց են վասն ձեր,,: Յորժամ ասէ թէ՝ տեսէքն՝ զբիւր նեղութեանցն և զհոգոցն և զվշտացն ասէ. քանզի բարւոք հովիւ՝ որ ոք այնպիսի իցէ որպէս և Քրիստոսն կամի՝ քան զբիւր մարտիրոսս եւս լաւագոյն գտանի. քանզի նոքա մի անգամ վասն իւրեանց մեռան, իսկ սա բիւր անգամ վասն հօտին. մանաւանդ թէ այնպիսի հովիւ իցէ որպէս պէտք են, նա կարէ զորհանապազ յաղագս նոցա մեռանել:

Վասն որոյ և ձեր ցուցեալ զաշխատութիւնս գործակցիցէք լերուք աղօթիւք, փութով, յօժարութեամբ, սիրով. որպէս մեք ձեզ, և դուք մեզ պարծանք լիջուք: Վասն այսորիկ և գլխոյն առաքելոց և վասն զայլս սիրելոյ յանձն առնոյր. յառաջ նախ եհարց զՍիմոնէն թէ սիրեսցե՞ս, որպէս զի և ուսանիցիս թէ նախ քան զայլս զսիրոյն որ առ ինքն է՝ զայն նշանակ դնէ. քանզի յոյժ զօրաւոր դեղոց պէտք են: Զայս այժմ վասն ընտիր և հանճարականն հովուացն ասացի, և ոչ եթէ վասն իմ ինչ և կամ որք լուսոս. այլ զայնպիսեացն՝ որպիսի ոք Պօղոսն էր, որպէս Պետրոսն, որպէս Մովսէսն: Իսկ արդ նոցին նմանողք եղերուք որք իշխեցէք և որք ընդ իշխանութեամբք էք: Քանզի մարթի և որք ընդ իշխանութեամբն են 'ի կողմանէ հովուացն գտանել, տանն և բարեկամացն, ծառայիցն և կնոջն և որդւոցն: Զի եթէ այսպէս զանձինս մեր բարւոք մատակարարս առնիցուք, ամենայն բարութեանցն ժառանգեսցուք: Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հօր համանգերձ Հոգւովն սրբով այժմ և յաւիտեանս. ամէն:

# ՃԱՌ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ

“Այժմ երթամ յԵրուսաղէմ պաշտել զսուրբսն : Հաճոյ թուեցաւ Մակեդոնացւոցն և Աքայեցւոցն հաղորդութիւն ինչ առնել յաղքատսն որ են յԵրուսաղէմ: Հաճոյ թուեցաւ, քանզի և պարտապանք իսկ են նոցա ,, :

Վասն զի ասաց թէ պէտս ոչ ինչ ունիմ 'ի կողմանս յայսոսիկ, և փափագումն 'ի բազում ամաց հետէ ունիմ գալ առ ձեզ, քանզի հանդերձեալ էր այլ ևս յամել անդէն, և զի մի կարծիցեն թէ խաբէ ինչ զնոսա, ասէ և զպատճառսն թէ էր վասն յապաղէր. “Երթամ յԵրուսաղէմ, ասէ, պաշտել զսուրբսն ,, : Այս թուի թէ զպատճառսն ասիցէ զյամելոյն: Իսկ նա աւանիկ և այլ իմն կամէ՝ և յորդորէ զնոսա յողորմածութիւն, և փոյթս գործէ. զի եթէ զայս ոչ փութայր կամել, բաւական էր այն յորժամ ասացն թէ երթամ յԵրուսաղէմ: Իսկ նա աւանիկ և զպատճառսն ևս յաւելու զերթալոյն. քանզի ասէ՝ թէ երթամ յԵրուսաղէմ պաշտել զսուրբսն: Այս յաւէ ևս 'ի բանին և բազում խորհուրդս 'ի ներքս մուծանէ ասելովն՝ թէ “պարտապանք են նոցա ,, :

“Այս զի թէ հոգևորացն նոցա հաղորդք եղեն հեթանոսք, պարտին և մարմնաւորացն նոցա նպաստ լինել ,, : Որպէս զի ուսցին նոքա սոցա նախանձաւորք լինել: Որով մանաւանդ լինի նորա խնամութիւնն արժան է զարմանալ, զի այնպէս խորհրդապէս օրինակօք իմացոյց նոցա. մանաւանդ եթէ այսպէս իսկ քաջ հաւանէին քան եթէ ըստ կարգի հրաման տալոյ էր ասացեալ: Վասնզի թէ հրամանք թուէին նոցա այն՝ թէ յանձն առնելոյ զմեզ երբեր զկորնթացիսն և զմակեդոնացիսն 'ի մէջ, յաղագս այսորիկ զնոսա այսպէս յորդորէ ասելովն՝ թէ “Ծանուցանեմ ձեզ զշնորհսն Այ որ տուեալ են եկեղեցեացն Մակեդոնացւոց ,, : Իսկ Մակեդոնացւոցն պատուիրեալ վասն սորին ասէր՝ թէ “Ձեր

նախանձն զխաղաղումն յորդորեաց,,. Նա և Գաղատացւոցն զայնս յորդորէր, որպէս յորժամ ասէրն՝ թէ “Որ օրինակ պատուիրեցի եկեղեցեացն Գաղատացւոց, նոյնպէս և դուք արասջիք,,։ Բայց հաւանեցուցանն ոչ ակնապիշ ինչ, այլ ակնածութեամբ իմն դնէ, մանաւանդ եթէ 'ի քարոզութեանն զայնս գործէ ասելովն. “Եթէ 'ի ձեռնջ բանին ոչ եղ և կամ թէ առ ձեզ միայն եհաս,,։ Վասնզի զինչ ինչ զօրագոյն քան զնախանձ, այլ և ոչ իսկ ինչ։ Վասն որոյ և 'ի բազում տեղիս զնոյն դնէ. Նա և այլուր իսկ ասէր՝ թէ “Այսպէս ընդ ամենայն եկեղեցիս հրամայեմ տամ,,. և դարձեալ թէ. “Որ օրինակ ամենայն ուրեք զամենայն եկեղեցիս ուսուցանեմ,,. և կողոսացւոցն ասէր դարձեալ թէ “Ի պտղաբերեալ և աճեցեալ աւետարանին ընդ յաշխարհի ամենայն բարեպաշտութեամբ,,։ Զայնս և աստ յաղագս ողորմածութեան ասէ։ Իսկ դու տես որպէս մեծաւ վայելչութեամբ արկանէ զբանն 'ի կիր. և չասէ թէ երթամ ողորմութիւն տանել, այլ թէ երթամ պաշտել։ Զի եթէ Պաւղոս սպասաւորէր, ապա զմտաւ ած որչափ ինչ էր որ լինէրն, յորժամ այն որ տիեզերաց վարդապետն էր՝ չվարկանէր անարժան առնել զսպասաւորութիւնն. և այն զի 'ի Հռոմ ես պատրաստեալ էր երթալ և այնպէս ցանկացեալ էր տեսանել զնոսա, բայց սակայն զողորմածութիւնն նախապատիւ քան զնոսա համարեցաւ։

“Վասնզի հաճոյ թուեցաւ մակեդոնացւոց և աքայեցւոցն,,. այսինքն է թէ ընտրեցին և ցանկացան հաղորդութիւն առնել։ Իսկ չասաց դարձեալ թէ ողորմութիւն, այլ թէ հաղորդութիւն նոցա. զի ոչ էր ընդ վայր, այլ զի մի կարծիցեն թէ հաղորդութիւն առնել ասաց ընդ աղքատսն, այլ “ընդ աղքատս սրբոցն,,, թէ որք յայտնեցանէ էին որք յառաքինութեանն և յաղքատութեանն։ Իսկ չհամարեցաւ զայն միայն բաւական, այլ յարեաց 'ի նմին՝ թէ պարտականք իսկ են։ Իսկ ապա ցուցանէ՝ թէ որպէս են պարտականք.

“Զի եթէ հոգևորացն նոցա հաղորդեցան հեթանոսք, ապա պարտական են և մարմնաւորօքն պաշտել,,։ Իսկ զոր ասէն, այսպիսի ինչ է. քանզի նոցա էր ամենայն ինչ, ասէ, վասն այնորիկ եկն փրկութիւն 'ի Հրէից, և

Digitized by Google

'ի նոցանէ էր Քրիստոս. վասն որոյ և ասէր իսկ ինքն Քրիստոս՝ թէ "Փրկութիւն 'ի Հրէից է": Ի նոցանէն առաքեալքն, 'ի նոցանէն մարգարէքն, անտի ամենայն բարութիւնք եղեն, նոքօք ամենայնի հաղորդեցան տիեզերք: Արդ եթէ մեծամեծացն եւ ցանկացարուք, և զընթրիսն զոր պատրաստեալ էր նոցա՝ ձեր մնեալ վայելեցէք զուրախութիւնն որ առաջի կայր, ըստ առակին որ յաւետարանին ասէր, այսպէս ուրեմն պարտիք և մարմնաւորացն նոցա հաղորդ գտանել և տալ նոցա զպէտսն: Ոչ շատաց թէ հաղորդել նոցա, այլ թէ պաշտեսցեն. և 'ի սպասաւորաց աստիճանի կարգեսցեն զնոսա, և նոցա իբրև թագաւորաց հարկս տալ: Ոչ շատաց թէ մարմնաւորքն ձերովք, որպէս և հոգևորքն նոցա. վասն զի հոգևորքն՝ նոցա էին, իսկ մարմնաւորքն ոչ որք 'ի հեթանոսացն էին միայն, այլ ամենեցուն իսկ հասարակ: Վասն զի զինչ ոչ որք մեծացանն՝ նոցա միայն հրամայեաց ունել, այլ և այլոց ծախել:

"Արդ զայս կատարեալ և կնքեալ զպտուղ նոցա": Այսինքն է թէ որպէս 'ի թագաւորական շտեմարանս համբարեալ, զի անկողոպուտ ամեն զգուշութեամբ պահիցի: Ոչ շատաց ողորմածութիւն, այլ պտուղ. զի ցուցցէ՝ թէ շահին մանաւանդ քան թէ տան: "Անցանեմ 'ի ձէնջ, ասէ, 'ի Սպանիա": Պարծեալ յիշէ զՍպանիա և ցուցանէ զիւր անդանդաղն ընթանալ, և առ նոսա զջերմութիւնն զոր ունէր: "Գիտեմ եթէ 'ի գալն իմում առ ձեզ՝ լրութ. օրհնութ. աւետարանին Քրիստոսի եկից": Օրհնութիւն իսկ լրութեամբ օրհնութեանն. կամ զընծայիցն ասէ և կամ վասն ամենայն ուղղութեանցն: Վասն զի օրհնութիւն բազում անգամ զողորմածութիւնն ասել է կոչել, որպէս յարժամ ասիցէ՝ թէ "Որպէս զօրհնութիւն և մի իբրև զագահութիւն". նա հին իսկ ողորմութիւն էր, այնպէս կոչել զիրսն: Ոչ վասն զի առս յաւել՝ թէ լրութեամբ աւետարանին, յաղագս այսորիկ ասացի թէ ոչ վասն ընծայիցն միայն է ասացեալ, այլ և վասն այլոց ամենայնի. որպէս զի ասիցէ՝ գիտեմ եթէ 'ի գալն իմում տեսանեմ զձեզ յամենայն բարիս երևեալ և պտղաբերեալս բարութեամբք՝ և բիւր գովութեանց արժանիս ըստ աւետարանին Քրիստոսի. այս զայն գիտելով զզարմանչելի խորհրդականութիւն նորա՝ ժա-

մանկիցէք 'ի նորին գալստեանն : Նաև յորժամ զխրատն մատուցանէր, չգնէր ինչ այսպիսի մեղմով, այլ յայլ ինչ օրինակ գայր, որով և զբարս նոցա ուղղէր :

“Ողջունեմ զձեզ ամենայնիւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ձեռն հոգւոյն սրբոյ„ : Հաւասարի աստ դարձեալ զՔրիստոս և զհոգին յառաջ բերէ և չյիշէ ուրեք զհայր : Զայս ասէ, զի յորժամ անուանիցես զնա զհայր և զորդի միայն յիշեալ, և կամ դարձեալ զհայր միայն և ոչ զորդի և ոչ զհոգին, մի արհամարհեր զնոսա : Այլ ոչ ասաց թէ հոգւոյն, այլ թէ սիրով հոգւոյն. զի որպէս Քրիստոս սիրեաց զաշխարհս, նոյնպէս և հայր և հոգին սուրբ : Այլ արդ զինչ իցէ վասն որոյ աղաչեաց, ասա ինձ : “Պատակից ինձ եղերուք, ասէ, յաղօթս առ Տէր, զի ապրեցայց յանհաւատիցն որք 'ի Հրէաստանի են„ : Մեծ ուրեմն ջան և մարտ առաջի կայր նորա, վասն որոյ և զաղօթս նոցա կոչէր իւր յօգնականութիւն : Այլ չասաց թէ զի գրկախառն եղէց, այլ զի ապրեցայց. որպէս Քրիստոսն հրամայեաց կալ յաղօթս, զի մի մտանիցեն 'ի փորձութիւն : Զայս ասելով միանգամայն ցուցանէր դառինս գայլս զամենս յարձակեալս 'ի վերայ նորա, և ամենեքին իսկ գազանք եղեալք և ոչ թէ մարդիկ : Յայտնանէ և այլ ինչ կազմէ և ցուցանէ թէ յիրաւի իսկ պաշտեսն զաւրբսն. զի թէպէտ և այնքան սպասաւորք էին, մինչև զնոսա ևս աղաչէ աղօթս առնել իւր որպէս զի ապրեսցի : Որպէս զի յայնպիսի պատերազմաց 'ի մէջի են նոքա՝ մինչև 'ի սակս հանդերձեալ են ծախել, ապա ուրեմն հարկ էր այլուստ առնել նոցա միխթարութիւն ինչ :

“Այլ պաշտօնն իմ, ասէ, որ յԵրուսաղէմ՝ հաճոյ և ընդունելի լիցի 'ի սուրբսն„. այսինքն է զի ընդունելի լիցի պատարագն, որպէս զի յօժարութեամբ ընկալցին նոքա զտուեալն : Տեսանե՞ս որպէս դարձեալ բարձրացոյց զպատիւ ընդունելեացն. նա և աղօթից ևս պէտք էին յայնչափ բազմութենէ առ 'ի յընդունել զայն որ ինչ տարաբերցին : Զայսմանէ և այլ ինչ ցուցանէ թէ չէր բաւական ողորմածութիւնն, և ոչ 'ի վեր ինչ քան զնոսա որք ընդունէինն զայն. քանզի յորժամ 'ի հարկէ և 'ի բռնութենէ տայ և կամ յանիրաւութենէ և կամ վասն փառասիրութեան, կորուսանէ զպտուղն :

"Որպէս զի խնդութեամբ եկից, ասէ, կամօքն Այ"։ Զսոյն և 'ի սկզբանն ասէր՝ եթէ "Որպէս յաջողեսցի ինձ կամօքն Այ գալ առ ձեզ". սոյնպէս և այժմ աստ 'ի նորա կամսն ապաւինի և ասէ, թէ վասն այսորիկ երթամ և աղօթեմ ապրել 'ի նոցանէն, որպէս զի երագ տեսից զձեզ հանդերձ ամենայն հեշտութեամբ, և ոչ մի ինչ վհատութիւն անտի բերելով ընդ իս։ "Եւ եկեալ հանգեայց ընդ ձեզ"։ Տեսանե՞ս որպէս դարձեալ զամենածարգութիւնն ցուցանէ. քանզի չասաց թէ վարդապետեմ ձեզ և կամ ուսուցանեմ, այլ թէ զոյգ հանգեայց ընդ ձեզ։ Եւ որում աշխարհի ջան և մարտ առաջի կայր, զիա՞րդ զոյգ հանգչէր ընդ նոսա։ Շնորհէր իմն նոցա, զի զանեալ այնու յօժարամիտ լինիցին և կարիցէ առնել զնոսա հաղորդս պսակացն. նա և ցուցանէ իսկ թէ և նոքա ջանային և աշխատէին։ Եւ աս որպէս միշտ սովոր է առնել, յետ սփոփանացն և խրատու զաղօթսն ևս յաւելու առերեսի՝ թէ "Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսին. ամէն"։

"Յանձն առնեմ ձեզ, ասէ, զՓիբէ զքոյր մեր որ սպասաւորեայն է եկեղեցւոյն կենքրեացւոց"։ Տեսանե՞ս որչափ ինչ զարմանալի ցուցանէ զնա. նա և նախ իսկ քան զայլսն զնա յիշեաց յառաջ և քոյր անուանեաց. չէ փոքր՝ Պաւղոսի քոյր կոչել։ Եւ զպատիւն ևս յաւել՝ սպասաւորեայ է, ասէ։ "Զի զնա ընկալջիք, ասէ, արժանի սրբոց". այսինքն է վասն տեառն, որպէս զի վայելեսցէ 'ի ձէնջ 'ի պատուի։ Քանզի զոր վասն տեառնն ոք ընդունիցի, թէպէտ և մեծ ոք չիցէ, բազում փութով ընդունի. իսկ արդ եթէ սուրբ ևս իցէ, զմտաւ ած թէ յորպիսում պատուի արժան է այնմ վայելել. յաղագս այնորիկ յաւել զայն՝ թէ արժանի սրբոց. որպէս զի պարտ է, ասէ, զայսպիսիսն ընդունել։ Քանզի կրկին պարտ է, ասէ, նմա վայելել 'ի ձեր խնամսն՝ և վասն նորին ընդունել, և դարձեալ զի և ինքն ևս սուրբն է։

"Եւ վերակացուք լինիջիք նմա յոր ինչ իրս ձեզ պէտս ունիցի"։ Տեսե՞ր զիա՞րդ անտաղտկալիս արար. քանզի չասաց թէ վճարեսջիք զնա ամենայն իրօք, այլ թէ որ ինչ 'ի ձէնջն է՝ յայն մի խնայեսջիք, այլ ձեռն տուք և օգնեսջիք յոր ինչ իրս պէտս ունիցի. ոչ եթէ որում

չէք ձեռնհաս, այլ զոր կարողն էք և նա պէտս ունի՝ զայն տաք նմա՝ և օգնեցէք որում դուք տկարքն էք։ Նոյս դարձեալ այլ զօրութիւն անուանէ. «Քանզի և նա ինքն, ասէ, բազմաց վերակացու եղև, և ինձ իսկ զինովին»։ Տես զխոնարհութիւնն. նախ զզօրութիւնն եդ, և ապա 'ի միջին զաշխատանս, ապա կրկին զզօրութիւնն եդ. որպէս զի յերկաքանչիւրոց կողմանցն զերանելոյ կնոջն զզօրութիւնն կազմիցէ։ Որպէս արդեօք չիցէ երանելի այն որ 'ի Պաւղոսէ այնչափ զօրութիւնս ընկալաւ, թէ այնքան առաքինի էր, մինչև նմա կարաց օգնել որ զամենայն տիեզերս ուղղեաց. այնչափ անձ-ցոյց զբարութիւնս նորա, որպէս զի և զիւր անունն եդ զկնի անելոյն՝ թէ «ինձ իսկ զինովին»։ քարոզչին տիեզերաց՝ որ զանթիւ զմխչանս կրեաց, որ ամենայն աշխարհաց բաւական էր։ Այլ արդ նմանեսցուք այժմ երանելոյ կնոջն այնմիկ, և յետ նորա դարձեալ այնմիկ՝ որ հանդերձ առաքելն էր։ Այլ ո՞ ոք իցեն սոքա։

«Ողջոյն տաք, ասէ, Պրիսկիղեայ և Ակիւղեայ աշխատակցաց իմոց 'ի Քրիստոս Յիսուս»։ Սոցա զառաքինութենէ և Պաւղոս վկայէ յորժամ ասէ՝ թէ «Այլև առ նոսա Պաւղոս. քանզի խորանակարք էին արուեստիւք» ասէ։ Սոյս զկին ցուցանէ թէ ընկալաւ զՊաւղոս, և ուսուցին նմա զճանապարհս տեառն։ Մեծ էր և այն, այլ եւս առաւել էր այն զոր Պաւղոսն ասէր։ Այլ արդ զի՞նչ ասիցէ. նախ գործակիցս իւր կոչէ զնոսա, անուանէ ճգանցն և վշտացն ցուցանէ հաղորդս. ապա ասէ. «Ընդ իմում անձին և զիւրեանց պարանոցս մատուցին»։ Տեսանե՞ս զկատարեալ զվկայութիւնն։ Քանզի և առ Ներոնիւ իսկ բազում նեղութիւնս և ճգունս ունէին, մանաւանդ յորժամ հրամանն էր որոշել զՀրեայս 'ի Հռոմայեցւոցն։

«Որոց ոչ ես միայն գոհանամ, այլ և ամենայն եկեղեցիք հեթանոսաց»։ Նոյս զօտարասիրութենէն և զոր յիւրեանց ընչիցն պաշտօն մատուցանէին կատարելոցն՝ զայն ակնարկելով սքանչանայ, զի և զարիւնս իւրեանց հեղուին և զինչսն առաջի ամենեցուն դնէին։ Տեսե՞ր զքաջութիւն կնոջն, զի ոչ ինչ խափանեցաւ 'ի բնութենէն՝ յառաքինութեան ընթացսն ընթանալ. մանաւանդ եթէ յիրաւի իսկ, քանզի «'ի Քրիստոս Յի-

սուս ոչ է արու և էգ »: Այլ զոր ինչ 'ի սկզբանն ճառ-ուեաց, զայնս և աստ վասն սորա վկայեաց. զի որպէս վասն նորա վկայեաց՝ թէ «Նա բազմաց վերակացու եղև, այլ և ինձ գլխաւորին », և զանձնէ դարձեալ՝ թէ «Ոչ միայն ես գոհանամ, այլ և ամենայն իսկ եկեղե-ցիք հեթանոսաց »: Այլ ասա զի մի կարծիցի եթէ 'ի շողոմն[1] ինչ առնելոյ վասն ասացէ զայս, և այլ ևս բա-զում կանոնս 'ի մէջ բերէ՝ զորոց վկայէ, և զառաքեալսն եկեղեցիս նոցա յիշէ: Նոյնպէս ընտանիքն էին, մինչև ըն-տանեաց եկեղեցիս առնելին, որպէս զի զամենեսին հա-ւատացեալս առնիցեն, և ապա նոքօք զօտարսն ևս 'ի նոյն պատիւ ածիցեն. քանզի չէր ամենայն ընդ վայր ըն-տանիս եկեղեցիս կոչել, եթէ ոչ բազում երկիւղ պար-ծի անոք, և ահիւն մեծ զամենայն ինչ կատարեցին. Վասն այսորիկ և կորնթացւոցն ասէր՝ թէ «Ողջոյն տա՛ջիք Պրիսկիղեայ և Ակիւղեայ հանդերձ ընտանեօքն ե-կեղեցեաւն նոցա »: Այս և վասն Ոնեսիփորեայ գրեաց ա-սէր. «Պօղոս Փիղիմոնի և Ապփեայ և ընտանեացն քում եկեղեցւոյդ »: Ահաւասիկ զոր հնար՝ ողջանջելն և զար-մանալի և յանհաւատութեանն երևել, քանզի և սոքա յանհաւատութեան էին և յոյժ լուսաւորք երևեցան: Այս և արուեստքն նոցա չէր ինչ իսկ երևելի, քանզի խորա-նակարք էին. բայց սակայն զամենեսեան ծածկեցին առա-քինութեամբն, և քան զարեգակն ևս լուսաւորագոյն ե-րևեցոյց զնոսա, և ոչ արուեստն և ոչ անհաւատութիւնն կարաց ինչ նոցա վնասել. այլ զսէրն զոր 'ի Քրիստոսն պահանջեաց՝ զայն ցուցին յանձինս. «Մեծ քան զայս սէր ոչ ոք ունի, ասէ, որպէս որ զանձն իւր դնէ 'ի վե-րայ բարեկամաց իւրոց »: Այլ որ ծանօթս էր՝ զայն և աշակերտքն ուղղեցին, քանզի առնէին զխաչն և զհետ չո-գան նորա: Ապա եթէ վասն Պաւղոսի զայն առնէին, ապա մանաւանդ ևս առաւել վասն Քրիստոսի պարտաւորք՝ ցու-ցանել զայսպիսի զյօժարութիւն:

1 Օրինակին գրեալ էր շնչէ ոմն:

# ՑՈՐԴՈՐԱԿ

Օ՛ այս և մեծատունք և աղքատք լուիցեն առ հասարակ. զի եթէ նոքա որք 'ի ձեռագործէն կեցին և արուեստին վերակացուք՝ այնչափ առատութիւն ցուցին մինչև բազում եկեղեցեաց պիտանիք գտան, արդ զո՞ր պատասխանատուութիւն տնիցեն որք մեծացանն և զաղքատն անտես առնիցեն: Զանզի նոքա և յարիւնն անգամ ոչ խնայեցին վասն այ հաճոյիցն. իսկ դու և 'ի տակաւ մի ինչսն խնայես. և 'ի քո ոգիդ ոչ խնայես: Այլ առ վարդապետսն այսպիսիք ինչ էին, իսկ առ աշակերտակիցսն իւրեանց: Օ՛ այն և ասել չէ հնար, որպէս ինքն ասէր՝ թէ եկեղեցիքն հեթանոսաց գոհանան զնոցանէն. զի թէպէտ 'ի հրէից էին, բայց տակային այնպէս հաստատութեամբ հաւատացին, որպէս զի զնոսա ամենայն յօժարութեամբ պաշտեսցեն:

Այսպիսի պարտ է լինել կանանց, և մի 'ի հիւս ակեռանս և բազմագինս հանդերձս տնել, այլ այսպիսի առաքինութեամբք պաճուճեալ զանձինս: Ո՞վ ոք, ասա ինձ, թագաւոր այսպէս պայծառացաւ, ո՞վ ոք այնպէս հռչակաւոր եղև որպէս խորանակարքն կին՝ որ յամենեցունց բերան կայ. ոչ եթէ զտասն և զքսան ամ միայն, այլ մինչև 'ի գալուստն Քրիստոսի. և ամենեքին զայսպիսի զիւրս նոցա պատմեն, զոր և ոչ թագն անգամ կարէ զարդարել զթագաւորն: Զանզի զի՞նչ մեծ և կամ զոյգ կայցէ այնմ որ Պաւղոսի վերակացուն լինի, որ իւրով վտանգն կամէր ապրեցուցանել զվարդապետն տիեզերաց: Այլ արդ հայեաց և տես թէ քանի թագաւորք էին, և լռեալ դատարկ յիշատակ նոցա. իսկ խորանակարքն կին ամենայն ուրեք հռչակեալ գտանի հանդերձ խորանակարաւն. և որպէս արեգակն զի յայտնի է ամենայն աշխարհաց, սոյնպէս և փառք կնոջն այնորիկ ընթանան ընդ ամենայն տիեզերս: Պարսք և սկիւթացիք և թրակացիք և որ 'ի վերջին 'ի ծագս երկրիս բնակեալ են՝ տանին և ածեն զիմաստութիւն կնոջն և երանեն: Որչափ ինչ մեծութիւնս, քանի՜ թագս և ծիրանիս յօժարութեամբ 'ի բաց ընկենուիր, որպէս զի կարասցես ստանալ զվկայութիւնս զայս յանձինդ:

Digitized by Google

Նա և առնել խակ որք ոչ ունին թէ յայնպիսի 'ի վիշտս ելին և յաստատութեան ընչիցն, և վասն քարոզութեան անփոյթ առնէին։ Նա և յաղագս այնորիկ կոչէր զնոսա պաշտօնեայս և գործակիցս, և չհամարի ամօթ զկանայս պաշտօնակիցս կոչել իւր անօթն ընտրութեան, այլ և հրճուի ևս այսուքիւք. զի ոչ եթէ 'ի բնութիւնն ինչ հայի, այլ 'ի յօժարութեանն պտուղ։ Այլ արդ զինչ ինչ զոյգ այնպիսի զարդու կայցէ։ Ո՞ւր է այժմ մեծութիւնն որ ամենայն ուստեք զեզգր, ո՞ւր է երևացն գեղեցկութիւն, ո՞ւր են մնտորի փառքն. զննեցէք զկնօջն զարդ և տեսէք, ոչ զմարմինն զգեցուցանէ, այլ զհոգին զարդարէ, զոր ոչն երբէք դոյ հնար 'ի բաց դնել և մերկանալ. որ ոչ 'ի տապանակի կայ, այլ յերկինս։ Տեսէք զնորա վասն քարոզութեանն զաշխատութիւնն, վասն մարտիրոսութեանն զպսակն, վասն ընչիցն զառատութիւնն, վասն Պաւղոսի զսէրն, վասն Քրիստոսի զբարեկամութիւնն։

Այլ արդ կշռեա ընդ այսոսիկ և զքոյսն, զընչիցն ըղձոյլթն ունել, առ պառնիկսն զյօժարութիւնն, և առ խոսն զհակառակցութիւնն. և ապա յայնժամ տեսանես 'ի միտ թէ որպէս ինչ նոքա իցեն և ո դու։ Մանաւանդ եթէ մի կշռեր, այլ նախանձեաց ընդ այնմ կնոջ, և զծանր և զդալար բեռնն 'ի բաց դիր 'ի քէն. քանզի այնպիսի իմն են երևելի հանդերձքն, և արկ զքև զերկնայինն զարդն, և ուսիր եթէ ուստի եղեն։ Ո՛ երկեամ կերպակերեցին զՊաւղոս։ Այլ արդ զինչ իցէ զերկեանն այն, թէ որպէս զարդարէին զոգիսն իւրեանց։ Այլ արդ զինչ կրիցեմ առ . . . ին չունիմ զՊաւղոս։ Եթէ կամիս, ունիս հաւատեաւ և դու որպէս և նոքայն. քանզի զնոսա ոչ եթէ դէմքն Պաւղոսի արարին այնպէս, այլ բանքն Պաւղոսի. որպէս զի թէ կամիցիս, և զՊաւղոս և զՊետրոս և զՅովհաննէս և զամենայն իսկ ըղդասս մարգարէիցն հանդերձ առաքելովքն ունիս քեզ խորհրդակից։ Դու դու զերանելւոյս զայսորիկ զգիրս և համապատ հանդիպեաց զրոցն, և տես զի կարեն առնել զքեզ որպէս զկինն խորանակարին։ Այլ զինչ առիցեմ եթէ զՊաւղոս, այլ թէ և զտէրն իսկ Պաւղոսի թէ կամիցիս՝ ունիս. վասն զի 'ի ձեռն լեզուին Պաւղոսի նա խօսի ընդ քեզ։ Նա և այլպէս կարես ընդու-

նել զնա՝ յորժամ զատուցման ընդունիցիս, յորժամ որք 'ի նոյն հաւատամն՝ դարմանիցես ։ Նոյնպէս ապա և յետ գնալոյն նոցա քաղաքում երկիւղածութեան յեր . . .[1]

## ՎԵՐՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ
## ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՃԱՌԻՆ

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Այս արդ վասն մեր ով որ աղօթեսցէ երբեք, քանզի Պաւղոս և Պետրոս հրաժարեցին 'ի մէնջ ։ Արդ որ զՊաւղոսի նախանձն ունէին. մինչև զանձինս արժանիս յօրինեսցուք այնպիսի խորհրդակցութեան, որպէս զի մի միայն աստ լսիցեմք զձայնն Պաւղոսի, այլ զի և յորժամ անդր երթայցեմք՝ տեսանիցեմք զնա հաւատակից Քրիստոսի. մանաւանդ եթէ աստ լսիցեմք նմա, ապա և անդ կարեմք տեսանել զնա. զի թէպէտ և առ նմա չկարիցեմք կալ, բայց սակայն տեսանիցեմք մերձ առ արքունական աթոռոյն պաշտօնատեղեաւ. յորում տեղւոջ քերովբէքն փառաբանեն, յորում տեղւոջ սերովբէքն թռչին ։ Անդ տեսանիցեմք զՊաւղոս հանդերձ Պետրոսիւ և այլովք որբովքն դասուք զինուորօքն և վերակացուօքն, և սէրս 'ի սէրն յայնժամ վայելեմք ։ Զի եթէ մինչ աստ էր՝ այնպէս սիրէր զմարդիկ, որում յընտրելն էր գանձել և ընդ Քրիստոսի լինել, և նա այն հաճոյ թուեցաւ աստէն յամել վասն մեր, ապա եւս առաւել անդ ցուցանէ զջերմագոյն սէրն ։

Այս և զՀռոմ վասն այնորիկ սիրեմ, զի թէպէտ և ունէի այլ ուստեք գովել զնա, և 'ի մեծութենէն, և զի զլուխ ամենեցուն էր, և 'ի գեղեցկութենէն, և 'ի բազմութենէն, և 'ի զօրութենէն, և յընչաւէտութենէն, և առաւելութիւնքն զոր 'ի պատերազմունս ցուցին, արդ զայս ամենայն 'ի բաց թողեալ իմ, յաղագս այնորիկ երանեմ զնա՝ զի և կենդանութեան առ նոսա գրէր, և այնպէս սիրէր զնոսա զի յորժամ չգայր՝ բերան 'ի բերան խօսէր ընդ նոսա, և զվախճան իւր անդ կատա-

1 Պակասի մինչև ցկէս Լ.Բ ճառին որ է վերջին.

րեաց, և զսուրբ մարմինն նորա ունին. որով և նշանաւոր իսկ այնու եղև քաղաքն այն քան այլոցն ամենայնիւ. և որպէս մարմին ինչ գեղեցիկ և զօրաւոր երկուս աչս ունելով՝ այնպէս ճառագայթեալ ունի զսրբոցն զայնոցիկ զմարմինս:

Ոչ են այնպէս երկինք պայծառ յորժամ արեգակն զճառագայթս արձակիցէ, որպէս Հռովմայեցւոց քաղաքն որ ունի զայնպիսի ղամբարս՝ որք ընդ ամենայն տիեզերս արձակեն զճառագայթս: Անտի յափշտակի Պաւղոս, անտի Պետրոս: Տե՛ս ածէք զմտաւ և զարհուրեցարուք, որպիսի սքանչելիս տեսանէ Հռոմ, ըզՊաւղոս յանկարծակի ՚ի շիրմանէ[1] յարեալ հանդերձ Պետրոսիւ յափշտակեալ ընդ առաջ տեառն: Զորպիսի ընծայս մատուցանէ Հռոմ տեառն, և զորպիսի պսակս ունի քաղաքն այն, և կամ որպիսի զօրաւոր ոսկի շարս զգեցեալ, և կամ որպիսի աղբիւրս ընկալեալ: Վասն այնորիկ զարմանամ ընդ քաղաքն ընդ այն ոչ վասն բազում ոսկւոյն և ոչ վասն սեանցն և ոչ վասն այլ ինչ երևելեացն, այլ յաղագս սեանցն եկեղեցւոյ:

Ո՞վ տայր ինձ այժմ զեղուլ զմարմնովն Պաւղոսի և բևեռել ընդ գերեզմանին և տեսանել զաճիւն մարմնոյն այնորիկ, որով զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի լնոյր, որով զերաշխեպն ընդունէր, որով զքարոզութիւնն ամենայն ուրեք տարածանէր. զաճիւն մարմնոյն այնորիկ, որով Քրիստոսն բարբառէր, և լոյս ծագեաց՝ որ քան զամենայն փայլատակունս ևս պայծառ էր, և բարբառն՝ որ քան զամենայն որոտմունս ևս ահագին թուէր դիւացն, որով երանելին այն բարբառէր ասելովն՝ թէ "Աղօթեմ նզով լինել ՚ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց". որով հրապարակախօս լինէր առաջի թագաւորաց և ոչ ամաչէր. որով զՊաւղոսն ծանեաք, որով զտէրն իսկ Պաւղոսի:

Ոչ այնչափ զարհուրեցուցանէ զմեզ որոտումն, որպէս ձայնն Պաւղոսի դդեաս. զի եթէ ՚ի հանդերձից նորա սարսէին, ապա յայտ է թէ ևս առաւել ՚ի ձայնէն տագնապէին: Նա զդևս հալածական տարաւ, նա ըզտիեզերս սրբեաց, նա զհիւանդութիւնս եղծ, նա զա-

1 Ցոյցն ՚ի պատանէ:

նկրտութիւնս 'ի բաց խլեաց և զճշմարտութիւն տըն-կեաց. քանզի Քրիստոս հանգուցեալ էր 'ի լեզուի նո-րա, և նովաւ ամենայն ուրեք յառաջեալ գտանէր. և որպիսի ինչ են քերոբէքն, այնպիսի էր ձայնն Պաւղո-սի. և զոր օրինակ 'ի վերայ այնր զօրութեանց նստի, այնպէս և 'ի վերայ լեզուին Պաւղոսի. և քանզի ար-ժանի եղև զՔրիստոս ընդունել, ապա զայն միայն բար-բառէր զոր Քրիստոսն սիրէր, և յայնչափ 'ի բարձրու-թիւնն թռուցեալ ամբառնայր որպէս սերովբէքն:

Եւ արդ զի՞նչ ինչ քան զայն բարձրագոյն կայր զոր ասէրն. "Յաստահ եմ զի ոչ հրեշտակք և ոչ իշխա-նութիւնք և՛ ոչ զօրութիւնք և ոչ որ կանն և ոչ հան-դերձեալքն և ոչ բարձրութիւնք և ոչ խորութիւնք և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյն այ որ 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր": Քանզի թէև կարծիցես թէ ունիցի ձայնս այս, քանզի աչս. նա վասն այնորիկ ասէր թէ "Մեք ինչ անտեղեակ խորհրդոց նորա". յաղագս այնորիկ փախուցեալ հալածական լի-նէին դեւք, ոչ 'ի բարբառոյն միայն, այլ և մինչդեռ հե-ռին լինէր 'ի նոցանէն՝ 'ի հանդերձիցն ստուերէ հեր-քեալ փախչէին: Կամէի այժմ տեսանել զածիւն բե-րանոյն այնորիկ որով զանձառելիսն Քրիստոսի բար-բառեցաւ, մանաւանդ թէ ես մեծագոյն քան խնքեամբ. նա ես մեծամեծս 'ի ձեռն աշակերտացն գործեաց քան խնքեամբ, այնպէս և զանձառելիսն 'ի ձեռն նոցա բար-բառեցաւ, նա և հոգւոյն բաշխմունք ընդ տիեզերս ա-մենայն նոցա հաւատացաւ:

Եւ արդ զի՞նչ ինչ ոչ գործեաց բարութիւնս բերանն Պաւղոսի. զդևս հալածեաց, զմեղս ջնջեաց, զանուսումս ըմբերանէր, զփիլիսոփայից բերանս խցոյր, զտիեզերս ամենայն ընծայ մատոյց այ, զբարբարոսս փիլիսոփայել ուսոյց, զամենեսեան յորդորեաց, ամենայնի հաւատ եղև որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, և զոր ինչ կամէր՝ ամենայն տուեալ լինէր, կապել և արձակել զորս կա-մէրն՝ ունէր իշխանութիւն:

Եւ արդ ոչ միայն զբերանոյ նորա զածիւն կամէի տե-սանել, այլ և զսրտին. նա և չմեզանչէ ինչ որք եթէ սիրտ տիեզերաց կոչիցէ զնա, և աղբիւր բարութեանց, և սկիզբն և արմատ տարերս կենաց մերոց: Քանզի

Digitized by Google

հոգին կենդանութեան 'ի նմանէն բաշխէր յամենե-սեան և անդամոցն Քրիստոսի տուեալ լինէր, ոչ եթէ տուրևառիկ կերակրովքն, այլ ըստ բարիոք յօժարութեանն։ Այնպէս անդորր էր սիրտն Պաւղոսի, մինչ զի և բոլորովիմբ զքաղաքս անգամ և զաւանիս ազգաց տանէր. քանզի “Սիրտք մեր, ասէ, ընդարձակեալ են առ ձեզ”։ Այլ զայնպիսի զընդարձակ սիրտն երբեմն և ձմլեաց իսկ խուռնէ յանձկաւ սիրով. քանզի ասէ՝ թէ “Ի բազում վշտաց և 'ի նեղութենէ սրտի գրեցի առ ձեզ”։

Զսա և զլուծեալն ցանկալի տեսանել, որ ջեռնոյր հանապազօր վասն այլոց կորստեան, որ կրկին երկնէր՝ որք բլշակնեցան որդիքն յա̅յ 'ի տեսլենէն. Զի որք սուրբքն իցեն, ասէ, սրտիւք՝ նոքա զԱ̅ծ տեսցեն, իսկ որ պատարագն ա̅յ եղև ամենեւին՝ վասն զինչ կարծիցես. պատարագ ա̅յ հոգւի մատուցեալ։ Ապա որպէս վարկանիցիս որ բարձրագոյն քան զերկինս էր, որ բղխումն էր տիեզերաց, որ քան զճառագայթսն ևս լուսաւորագոյն էր, որ քան զհուր ևս ջերմագոյն և քան զադամանդ ևս կարծրագոյն յորմէ գետքն հոսէին, քանզի ասէ. “Գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան”. ուստի ելանէր աղբիւրն և արբուցանէր ոչ եթէ զերեսս երկրի, այլ զոգիս մարդկան. ուստի ոչ գետք միայն, այլ և աղբերք արտասուաց հոսէին զցայգ և զցերեկ. որ նորագոյն իմն կեանս կեայր, և ոչ եթէ զմերս. “Կենդանի եմ ես, ասէ, ոչ եթէ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս”։ Ապա ուրեմն նորա սիրտն էր Պաւղոսի սիրտ, և հոգւոյն սրբոյ տախտակք և գիրք շնորհաց. որ դողայրն յաղագս այլոց մեղաց. “Զարհուրիմ, ասէ, գուցէ ընդունայն ինչ վաստակեցի 'ի ձեզ”. և դարձեալ թէ “Գուցէ որպէս օձն խաբեաց զԵւա”. և եթէ “Մի՛ գուցէ յորժամ գայցեմն և չգտանիցեմ զձեզ որպէս և կամիմն”. Նա և յաղագս իսկ իւր կասկածէր. Եւ դարձեալ եթէ. “Ստահ եմ զի ոչ հրեշտակք և ոչ զօրութիւնք կարեն մեկնել զիս 'ի սիրոյն Ա̅յ”. որ արժանին եղև սիրել զՔրիստոս որպէս ոչ այլ ոք սիրեաց. որ զմահ և զգեհեննն արհամարհէր, և յեղբայրական արտասուացն փղձկեալ լինէր. “Զինչ գործէք, ասէ, զի լայք և ձմլէք զսիրտ իմ” զժուժկալ։

Այլ զայն յայնժամ առնէր յորժամ մեկնելոց էր 'ի նոցանէն ։

Կամէր տեսանել զանձինն ձեռացն՝ որ շղթայիւքն կա-պեալ էին, որոյ ձեռնադրութեամբն հոգին առեալ լի-նէր, որովք այսպիսի գիրս գրէր. «Տեսէք, ասէ, որ-պիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձեռամբ». և դարձեալ թէ «Ողջոյն այս իմով ձեռամբ Պաւղոսի է». զանձինն ձեռքն այնորիկ զոր եառ իժն և 'ի խարոյկն անկաւ ։ Կամէր տեսանել զանձինն աչացն զանեզրական զգեղեց-կութիւնն՝ որք հայեցան 'ի փրկութիւն աշխարհաց, որք և 'ի կենդանութեան եղեն արժանի զՔրիստոս տեսա-նել, որք տեսանէին զերկրաւորս և չտեսանէին, որք ոչ գիտէին զքուն, որք 'ի մէջ գիշերին տքնէին և ոչ ինչ փակէին աչքն ։ Կամէր և զոտիցն նորա զանձինն տե-սանել որք ընթանային ընդ աշխարհս և ոչ վաստակէին, որք 'ի կոճեղան կային պնդեալ յորժամ 'ի ներքս 'ի բանտին էր, որք ընդ շէնսն և ընդ անշէնսն ընթանային, որք բազում անգամ ճանապարհորդէին ։ Այլ արդ էր վասն մի մի ինչ ասացեալ. նա կամէր զգերեզմանն իսկ տեսանել, յորում զէնն արդարութեան շտեմարանեալ կայ, զէնն լուսոյ, զանդամսն որ այժմ կենդանիս են մինչ մեռանին, և մինչ կենդանիս էին՝ մեռեալ էին, յորս յամենեսեան Քրիստոսն էր կենդանի, որ աշխար-հիս 'ի խաչն ելեալ էին, որ Քրիստոսի անդամն էր, որ կապեալն էր 'ի Քրիստոս, որ տաճարն էր հոգւոյն սր-բոյ, որ շինածն էր սրբոցն, որ կապեալն էր հոգւովն, որ բևեռեալն էր ընդ երկիւղն այ, որ կրէր զնշանակս Քրիստոսի ։ Վասնզի այս մարմինն պարսպէ զքաղաքն զայն, և քան զամենայն աշտարակս և զպարիսպս եւ զզուշութեամբ պահէ ։ Ընդ սորայս և Պետրոսին ։ Եւ մինչ կենդանին իսկ էր՝ պատուէր զայրն. քանզի «Ելի, ասէ, տեսանել զՊետրոս». վասն այնորիկ և 'ի վախ-ճանին արժանի արարին շնորհքն յարկակից միմեանց լինել ։

Կամէր տեսանել զառիւծն հոգևոր. զի որպէս ա-ռիւծ հուր հնչէ յորժամ 'ի ձաւհուկս աղուեսուց խառ-նիցի, այնպէս և նա 'ի դիւաց և 'ի փիլիսոփայիցն 'ի փաղանգս մտեալ. և որպէս զառասպասն զերջին ինչ կոչեա մանրեսցես, այնպէս և նա 'ի վերայ կարծանէր զա-

մենայն փաղանգս դիւաց։ Նա և ոչ ճակատու պատրաստութեամբ կարէր յանդիման լինել նմա. այլ այնպէս զահի հարեալ էր և դողայր, մինչ զի և յորժամ զստուերն տեսանէր և կամ զձայնն լսէր 'ի հեռաստանէ՝ փախստական լինէր։ Այնպէս և զպոռնկացեալն մինչդեռ ինքն հեռին էր՝ մատնեաց 'ի ձեռս նորա, և դարձեալ յորժամ կամեցաւ՝ յափշտակեաց 'ի ձեռաց նորա, և զայլս դարձեալ զի խրատեսցին չհայհոյել։ Տես զխարդ որք նուաճ կարգեալ էին անգամ, փոխէ[1], քաջալերէ, ողջէ, օծանէ. նա և եփեսացւոցն գրեալ ասէր՝ թէ "Չէ մեզ մարտ առ մարմին և արիւն, այլ առ իշխանութիւնս և առ պետութիւնս"։ Այս և ըղձյօժարութիւնն[2] դնէ՝ թէ որ յերկինս է. "Զանզի չէ, ասէ, մեր կռիւս վասն երկրաւորացս, այլ յաղագս երկնից և որ ինչ յերկինս է". դարձեալ այլոց ասէ. "Ո՞չ գիտէք թէ զհրեշտակս դատիմք, թող թէ զերկրաւորս"։

Եւ արդ զայս ամենայն իմացեալ, կացցուք առաքինութեամբ հաստատուն. քանզի Պաւղոս մարդ էր՝ ամին ինքն բնութեամբ մերոյ հաղորդ, և զայն ամենայն հասարակ ունէր. այլ զի առաւել քան զամենեսեան սիրեաց զՔրիստոս, և 'ի վեր քան զերկինս գտաւ և ընդ հրեշտակս եղև։ Արդ և մեք թէ կամիցիմք արթուն լինել փոքր մի և զհուրն զայն յանձինս մեր վառել, կարեմք նմանել սրբոյն այնմիկ. նա թէ և անհնար ինչ իրք էին, ապա ոչ գոչէր և ասէր՝ եթէ "Նմանողք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի"։ Եւ արդ մի միայն սքանչասցուք և զարմասցուք ընդ Պաւղոս, այլ և նմանողք նմին լիցուք, որպէս զի արժանի լիցուք յորժամ աստի անցեր երթիցեմք տեսանել զնա և անճառելի փառացն հաղորդս գտանիցիմք. որոց լիցի ամենեցուն ժամանել 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

1 Օրինակ մի ստէպ. յոյնն երանանգէ։

2 Յոյնն զհրամանսն։

Digitized by Google

# ՀԱՏՈՒԱԾՔ

## ԱՅԼՈՑ ԹՂԹՈՑՆ ՊԱՒՂՈՍԻ

## Ա. ԿՈՐՆԹԱՑԻՈՑ

### ՅԵՕԹՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

«Զոր ոչ ոք յիշխանաց յաւիտենիս այսորիկ գիտաց. զի թէ էր գիտացեալ, ոչ զՏէրն խաչէին»։ Եթէ ոչ գիտէին, ընդէ՞ր ասէր «Եւ զիս գիտէք, և ուստի եմն գիտէք»։ Ո՛չ ի յաղագս Պիղատոսի ասէ զի՛ թէ ոչ գիտէր, և եթէ հերովդէս ոչ գիտէր։ Արդ զնոսա ասասցէ ոք արդեօք կոչել իշխան յաւիտենիս այսորիկ։ Եւ եթէ վասն հրէիցն և յաղագս քահանայիցն ասիցէ ոք զայս ասել՝ ոչ սխալեսցէ. քանզի և ցնոսա ասէ. «Ոչ զիս գիտէք և ոչ զՀայրն իմ»։ Եւ զիա՞րդ վերագոյնն ասէ՝ և զիս գիտէք, և ուստի եմ գիտէք։ Այլ զի՞նչ օրինակ գիտութեանս այսմիկ, և զի՞նչ այնորիկ որ յաւետարանին ասէ։

Եւ արդ զի՞նչ, թուի՛, ասէ, նոցա որ յաղագս խաչին են միտք. քանզի ո՛չ ասէ սոցա՝ թէ ապաշխարեալ էր՝ թողցի։ Քանզի որ բիւր ձեռաց մատնեաց զՍտեփանոս և հալածեաց զեկեղեցի Պաւղոս՝ եկեղեցւոյ վերակացու եղև. նոյնպէս և նոցա թողցի եթէ կամեցեալ էր ապաշխարել, զոր և Պաւղոս գոչէ. «Իսկ արդ ասեմ, միթէ գայթակղեցի՞ն զի գլորեսցի՞ն. քաւ լիցի»։ Ասեմ, միթէ մերժեա՞ց Աստուած զժողովուրդ իւր. քաւ լիցի։ Ապա ցուցանէ թէ ոչ փակեցաւ ի նոցանէ ապաշխարութիւն։ Բայց «ոչ ծանեան», ինձ թուի ոչ յաղագս Քրիստոսի աստ ասել, այլ վասն նորին իրաց մատակարարութեան. որպիսի ինչ, զի՞նչ կամքն մահն, և

խաչն ոչ գիտէին. քանզի և անդ ոչ ասաց թէ զիս ոչ գիտեն, այլ թէ "ոչ գիտեն զինչ առնեն". այսինքն զկատարեալ տնտեսութիւնն և զխորհուրդն անգիտանան։

Քանզի ոչ գիտէին թէ այնպիսի ունի պայծառանալ խաչն, թէ աշխարհի լինիցի փրկութիւն և մեր ընդ մարդիկ հաշտութիւն։ Իմաստութիւն՝ և զՔրիստոս ասէ և զխաչն և զքարոզութիւնն. 'ի դէպ ժամանակի և տէր փառաց կոչեաց։ Վասն զի խաչն անփառութիւն թուէր, ցուցանէր թէ մեծ փառք խաչն է։ ... Զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ. զի որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որք ոչ լուան՝ իմասցեն, նոյն է՝ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ։ Կամ զայս ասէ, կամ 'ի դէպ եթէ գրեցաւ 'ի գիրս և ապականեցան գիրքն. քանզի բազում գրեան ապականեցան և տակաւ ապրեցան. զի ասէ առաքեալ թէ "Ի Սամուէլէ և որ 'ի կարգի են մարգարէքն՝ ասացին վասն նորա". և ոչ ամենեքեան բերեալ լինին այսորիկ. ըստ Պաւղոսի որպէս զգիտնոս ուսելոյ և հոգւոյն խօսել՝ 'ի դէպ էր գիտել զամենայն սուրբ գրութեամբ։

Այլ զինչ են առեալ յաղագս գերութեան, և նախ քան զգերութիւնն յոլով գրեան ապականեցան, և յայտ 'ի կատարածէ չորրորդ թագաւորութեանցն է. զի եբերեալ զամէն որմնայցն յետոյ ուրեմն գտան յաղագս թագաւորաց։ ... Այլ զինչ, ոչ ետես ակն՝ զոր պատրաստեաց նմա. ոչ. քանզի ոչ 'ի մարդկանէ ետես զինչ մատուցանելեցաւ։ ... Այլ զինչ, մարգարէքն ոչ լուան. լուան, այլ ոչ էր մարդկան ունկն ... յաղագս որոյ ասէ. "Չլուեալ յիս ունկն լսելոյ". զի յաւելուած հոգւոյն ասէ։ Ասէ յայտ է թէ նախ քան զլսելն՝ և ոչ 'ի սիրտ մարդոյ ել։ Չէր զհոգւոյն սորա ոչ եւ էր սիրտ մարդոյ, այլ սիրտ հոգեոր մարգարէիցն, որպէս ինքն ասէ. "Զմիտս Քրիստոսի ունիմք". . . . . . . . . . . .

ՅԻՍՆԵՐՈՐԴ ՃԱՌԻՆ

"Եթէ ուրուք գործն այրեսցի, վնասեսցի". յայտ է թէ վասն գործոց է բանս. Այս խիստ է. թէ որ զեր վնաս ունի հանդերձ ուղիղ հաւատով, ոչ ապրեսցի նա հաւատոքն ... Արդ եթէ որ զինչ ուխտ ունիցի անդա-

նիցէ ընդ գետ հրոյ, պայծառագոյն անցանէ. ապա թէ խոտ ունի, ոչ միայն չանցանէ, այլ և զանձն ևս կորուսանէ... "Նոյն ինքն ապրեսցի որպէս թէ 'ի հուր". այս իսկ է, ինքն ոչ նոյնպէս կորիցէ որպէս զգործն, այլ մնայ 'ի հուրն... քանզի մեր սովորութիւն է ասել՝ 'ի հուր ապրել յաղագս այնորիկ որ ոչն այրի նիւթն և աճիւնանայ: Արդ մի զի հուր լուար՝ կարծիցես յանգութիւն դառնալ այրեցելոցն: Իսկ թէ փրկութիւն կոչէ զայնպիսի տանջանս, մի զարմանար. զի սովորութիւն է նորա յաղագս չարաչար ասացելոցն բարի անուանօք վարել, որպէս Պաւղոս ասէ. "Կործանեսցէ զամենայն միտս 'ի հնազանդութիւնն Քրիստոսի". և եթէ "Թագաւորեաց մահ". նոյնպէս և աստ՝ ապրիցէ, ոչ ինչ այլ- քան թէ սաստկութիւն տանջանաց զեկոյց. այն իսկ է՝ կացցէ մնասցէ մշտնջենաւոր տանջեալ:

## Ի ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՃԱՌՆ

"Մատնեցէք զայնպիսին սատանայի 'ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի յօրն յայն". որպէս Յովբայն եղև, այլ ոչ վասն նորին պատճառի. զի անդ վասն պայծառ պսակաց, իսկ աստ վասն մեղաց լուծանելոյ, զի տանջեսցէ զնա չարաչար կեղով և այլով հիւանդութեամբ: Իսկ սակայն այլուր ասէ՝ թէ "Ի տեառնէ դատիմք", զայնոսիկ կրելով. այլ աստ առաւել կակծեցուցանէ սատանայի մատնելով: Իսկ այս ընդ էր կամեցցին լինէր. վասն զի 'ի շատակերութենէ և 'ի փափկութենէ մարմնոյ ցանկութիւնք ծնանին, զայն տանջէ, հոգին ապրեսցի, այսինքն անձն... զի որպէս ապրեցելոյ՝ և մարմնոյն հաղորդի փրկութեան. զի և մահկանացու յաղագս նորա եղև՝ մեղուցեալ. և եթէ արդարութեամբ վարի, դարձեալ յորժամ ևս փոխելէ 'ի փառս: Նոյն ասենք հոգւոյն զշնորհսն ասէ, որ շիջանի 'ի մեղանչելն մերում:

### Ի ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Ո՞չ գիտէք, զհրեշտակս դատիցեմք, թող թէ զաշխարհականս„։ Սմանք ասեն զքահանայս զեկեղեցականս. այլ ՚ի բաց տար, քանզի յաղագս դիւաց է բանս . . . . զորոց ասէ Քրիստոս. “Պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա„. և Պաւղոս. “Հրեշտակք նորա ձեւանան իբրև զհրեշտակս արդարս„։ Զի յորժամ անմարմինն զօրութիւնքն այնոքիկ նուաղագոյնք քան ըզմեզ գտանիցին՝ որք զմարմինս եմք զգեցեալ, դժնդակագոյն տացեն զպատասխանի։

### Ի ՔՍԱՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Ամենայն որ ՚ի սպանդանոցի վաճառի, կերայք և մի խտրէք„։ Քանզի յանգէտս, ասէ, թէ ուտիցես և ոչ գիտիցես, ոչ անկանիս ընդ տանջանօք. զի անգիտութեան են իրք, և ոչ որկորամոլութեան։ Այլ ոչ յայնմանէ միայն ազատէ զնա յանգիտութենէն, այլ և այլուստ բազում համարձակութիւն և ազատութիւն նոցա պատրաստելով. զի և ոչ քննել թողու, այսինքն է հարցափորձել և խուզել զոհեա՞լ կամ իցէ եթէ ոչ, այլ պարզաբար ուտել զամենայն ՚ի գաւեհացն, և մի ինչ ուսանել թէ զինչ արդեօք իցէ որ առաջին կայ, և ինքեամբ ընձեռել զպատճառն, զի իցէ և անգիտութիւն ուտելոյն ՚ի բաց վճարել։ Քանզի այնոքիկ որք ոչ բնութեամբ են չարք, այլ իւրեանց միտքն առնիցեն անմաքուրս. վասն այնորիկ ասէ՝ մի ինչ քննիցէք։ “Քանզի տեառն է երկիր լրիւ իւրով„ և ոչ կռոցն։ Այլ եթէ երկիր և պտուղք և անասունք, և եթէ նորա ամենայն ոչ ինչ է անմաքուր, բայց այլ ազգ անմաքուր լինի ՚ի մտաց և յանհնազանդութենէն։ “Այլ եթէ ոք կոչեսցէ զձեզ յանհաւատից, զոր ինչ առաջի դնէ՝ կերիջիք և մի հարցանէք վասն խղճի„։

Digitized by Google

## Ի ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

Այլ ոչ գիտեմ, ասէ, թէ յետ մեռելոյ չոգաւ։ Ո՞ր վասն չգիտես, ասա ինձ. զի թէ ուղիղ վարեցաւ կամ թէ այլ ազգ ինչ, յայտ է թէ ուր երթալոց է։ Սա՛ն այսորիկ կոծիմ, ասէ, զի մեղաւոր գնաց անտի։ Պատճառք են այսպիսիկ և բարուրք. 'ի կենդանութեանն նորա պարտ էր քեզ արտասուել, զի թերևս կարծէիր զնա 'ի մեղացն։ Իսկ դու աւանիկ տեսանես այժմ զի ամենայն իրօք զանձին խնդրես և ոչ զՀանգուցելոյն. ընդ այն ևս պարտ էր քեզ ուրախ լինել զի կարծեցաւ յաւելիկայ մեղացն. և ոչ եթէ ողբալ, այլ օգնել գնացելոյն, ոչ արտասուօք միայն, այլ աղօթիւք և պաՀօք և ողորմութեամբ Հաշտեցուցանել զա̃ծ ընդ նմա։

Քանզի ոչ եթէ ընդ վայր ինչ իրք կարգեցան այս և կամ 'ի զուր ինչ յիշեմք յա̃ծայինն խորՀուրդսն զգնացեալսն, և վասն ամենեցուն իսկ մատուցանեմք զաղաչանս, գառնն առաջի կայ՝ որ եբարձ զմեղս աշխարՀի....։ Եւ ոչ դարձեալ ընդունայն ինչ որ առաջի սեղանոյն կայ, և զաՀագին և զսոսկալի խորՀուրդն կատարէ, գոչէ՝ վասն ամենեցուն 'ի Քրիստոս ննջեցելոցն, նա և զյիշատակսն ևս վասն նոցա կատարէ։ Զի եթէ վասն նոցա քաւութեանն չէր, ապա և ոչ անէաք իսկ զայսոսիկ. զի ոչ եթէ ընդ խաղ ինչ իրք են, այլ Հոգւոյն սրբոյ Հրամանք կատարին։ Եւ արդ զայս գիտելով օգնեսցուք գնացելոյն և կատարեսցուք վասն նոցա յիշատակ. զի եթէ զորդիսն Յոբայ սրբեցին ողջակէզքն, ապա ո՞րչափ ևս առաւել արիւնն Քրիստոսի. զի բաւական է այս նոցա յօգնականութիւն և 'ի մխիթարութիւն. քանզի սովոր իսկ է ա̃ծ այլովք այլոց պարգևել։ Եւ զայս Պաւղոսի յայտ արարեալ ասէր՝ թէ 'ի բազմադէմ շնորՀացն որ 'ի մեզ՝ բազմօք պարգևեցաւ գոՀութիւն վասն ձեր։

Եւ արդ մի յապաղեսցուք առնել զյիշատակս վասն ննջեցելոցն, օգնել և աղօթս մատուցանել վասն նոցա. քանզի Հասարակ իսկ առաջի ամենայն տիեզերաց կայ սրբութիւն. վասն այսորիկ ՀամարձակիմՔ վասն ամենայն տիեզերաց աղօթս մատուցանել, և ընդ խոստովանողս

և ընդ քահանայս անուանեմք զգնացեալսն ։ Վասն զի ամենեքեան մի մարմին եմք և պայծառ անդամք յանդամոց նորա․ վասն այսորիկ կարող եմք ամենայն ուրեք ամբարձել մեռելոց բազում օգնականութիւն և ներումն թողութեան յաղօթիցն և 'ի պատարագէն զոր վասն նոցա մատուցանեմք, և յայնցանէ ընդ որս անուանեմք զնոսա ։ Նաև արդ ընդէր վշտագնիս և տրտում որ այսչափ օգնականութիւնս և ներումն թողութեան կարող ես շնորհել գնացելոցն ։

# ՀԱՅՈՒԱԾՔ Բ. ԿՈՐՆԹԱՑԻՈՑ

### ՅԻՆՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Զի եթէ արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքինն նորոգի օր ըստ օրէ„ ։ Զի խնդիր ապականի․ տանջեալ հալածեալ, բիւր չարչարանս դժնդակս կրեալ ։ “Այլ ներքինն նորոգի օր ըստ օրէ„ ։ Զի խնդիր նորոգի․ հաւատով, յուսով, յօժարութեամբ, համարձակեալ այնուհետև 'ի դժնդակութիւնս ։ Զի որչափ բիւր անգամ չարչարեսցի մարմինս այս, այնքան քաջքաջագոյն ունի յոյս հոգին, և պայծառագոյն լինի որպէս ոսկի առաւել ևս 'ի հուր ։

### Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Տուաւ ինձ խոչ մարմնոյ հրեշտակ սատանայ„ ։ Ոմանք գլխացաւութիւն իմն ասացին 'ի սատանայէ լեալ․ այլ ոչ է, զի և ոչ մարմինն Պաւղոսի 'ի սատանայի ձեռս տուաւ․ որ և ինքն բանսարկուն հրամանի միայն պարզապէս տեղի տայր Պաւղոսի, և օրէնս նմա և հրամանս դնէր՝ յորժամ զպոռնիկն մատնեաց 'ի սատակումն մարմնոյ․ և զանցանել ընդ այն ոչ իշխեաց նա ։ . . . Սատան ընդդիմակաց ասի եբրայեցւոցն ձայնիւ․ և յերկրորդ թագաւորութեանն զընդդիմակացն այսպէս կոչեցին գիրք․ և յաղագս Սողոմոնի ասէ՝ թէ ոչ գոյր սատան յաւուրս նորա, այսինքն ընդդիմակաց, պատերազմելով նեղելով ։ Արդ զոր ասէն այսպիսի է․ ոչ ներեաց ա̄ծ առանց աշխատութեան յառաջանալ

քարոզութեանն. զխորհուրդս մեր զծածուցանելով, այլ մնաց հակառակորդաց մերոց յառնել ՚ի վերայ մեր... Հրեշտակ սատանայ ասէ զԱղեքսանդրոս դարբին և զՅու-մենոս և զՓիլետոս, որ ասէին զյարութիւն արդէն լեալ. և զամենեսեան պայքարող զընդդիմակացան քարոզու-թեանն որք վիճէին ընդ նմա և պատերազմէին, որք ար-կին զնա ՚ի կապանարան, որք կապեցին, որք տանէին. և զի զսատանայի գործ գործէին։ Որպէս որդիս բանսար-կուին կոչէ զՀրէայսն՝ որք զնորայն նախանձէին, նոյն-պէս և հրեշտակ սատանայ զամենեսեան՝ որք ընդդէմ կային քարոզութեանն։ Արդ ղայս ասէ. «Տուաւ ինձ խոչ, զի զիս կոփեսցէ»․ ոչ որպէս ոմն զնոսա զննեալ, քաւ լիցի, այլ որպէս ոչ տանջեալ և ոչ չարչարեալ առ-ժամանակ մի, այլ ներեալ և թոյլ տալ վայր մի։

# ՀԱՏՈՒԱԾՔ Ի ԳԱՂԱՏԱՑԻՈՑ

## ՅԵՐՐՈՐԴ ՃԱՌԷՆ

«Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինաց»․ և սակայն այլոց նզովից պարտական էր ժողովուրդն. որ ասէրն, «Անիծեալ ամենայն որ ոչ կացցէ յամենայն ՚ի գրեալս ՚ի գիրս օրինաց»։ Նա զինչ այս. ժողովուրդն պարտական էր այսմ. վասն զի ոչ եկաց մնաց, և ոչ ոք էր որ ելից զօրէնս զամենայն։ Իսկ Քրիստոս այլ նզովս ընդ այնորիկ փոխանակեաց. որք ասէին, «Անիծեալ որ կախեալ կայցէ զփայտէ»։ Նա արդ զի որ կախեալն էր՝ նզովեալ էր, և որ զօրէնսքն անցանէր՝ նզովեալ. հան-դերձեալ զայնոսիկ լուծանել զնզովս՝ պարտական լինել ոչ էր պարտ և արժան նոցա. պատշաճ էր և ընդունել զնզովսն. փոխանակ այնոցիկ զնոսա ընկալաւ, և աքօք զնոսա ելոյծ։ Նա զոր օրինակ ընդ դատապարտեցելոց ուրուք մեռանել՝ այլ ոք անպարտ ախորժեսցէ մեռանել յաղագս նորա, յափշտակեսցէ ՚ի տանջանացն զնա, նոյն-պէս և Քրիստոս արար. վասն զի ոչ կայր ընդ նզովիւք յանցանացն Քրիստոս, ընկալաւ փոխանակ նոցա զայ-սոսիկ, զի լուծցէ զնոսա. քանզի «մեղս ոչ արար, և ոչ գտաւ նենգութիւն ՚ի բերան նորա»։ Արդ իբրև

Digitized by Google

մեռեալ որք հանդերձեալ էին մեռանել՝ փրկեաց 'ի մահուանէ, նոյնպէս և զանէծսն ընդունելով՝ յանիծիցն 'ի բաց վճարեաց։

### Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ”։ Նա 'ի վերայ յարձակին ոմանք, թէ երկուս բաժանեաց զմարդն առաքեալն իբրև 'ի հակառակ բնութեանց կազմեալ... Այլ ոչ են այսոքիկ, ոչ են. զի մարմին աստ ոչ զմարմին ասէ. ապա թէ ոչ՝ զիա՞րդ ունի բան որ 'ի կարգիս՝ ցանկանայ, ասէ, ընդդէմ հոգւոյ։ Այլ սակայն այս ոչ շարժողին, այլ շարժեցելոյն է. ոչ գործողին, այլ որ գործիցին։ . . . . Ցանկութիւն ոչ մարմնոյն, այլ հոգւոյ է. զի և այլուր ասէ, ցանկացեալ է անձն իմ. և զինչ ցանկայ անձն քո՝ արարից քեզ. և մի գընասցես ըստ ցանկութեան ոգւոյ քո։ Եւ դարձեալ՝ որ և ցանկայ հոգի իմ։ . . . Գիտէ մարմին կոչել ոչ զմարմնոյն բնութիւն, այլ զչար յօժարութիւն. որպէս յորժամ ասիցէ, դուք ոչ էք 'ի մարմնի, այլ 'ի հոգւոջ։ Եւ դարձեալ, որ 'ի մարմնին՝ այ հաճոյ լինել ոչ կարեն։ Եւ արդ զինչ՝ սպանանե՞լ պարտ իցէ զմարմին։ Ինքն՝ որ զայս ասէր, ո՞չ էր մարմին զգեցեալ։ Ոչ մարմնոյ, այլ բանսարկուին են այդոքիկ աղանդք. վասն զի նա է մարդասպան։ . . . Մարմին աստ զխորհուրդսն զերկրայինս կոչէ, զպղերգացեալս և զծոյլս . . . քանզի շնչաւոր մարդ ասի՝ որ 'ի ճշմարտութենէ է զրկեալ. և հոգի չարութեան ասի դիւացն բազմութիւնն։

### Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Այլ զբարիս գործել մի՝ ձանձրասցուք, զի 'ի ժամանակի իւրում հնձեսցուք առանց լքանելոյ։ Մի, ասէ, խաբէք, ած ոչ արհամարհի. զի զոր սերմանէ մարդ, զնոյն և հնձեսցէ. զի զոր սերմանէ 'ի մարմին իւր, 'ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն. և որ սերմանէ 'ի հոգի, 'ի հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտենից”։ Զոր օրինակ 'ի սերմանիսն ոչ է հնար եթէ վլոցն ոք սերմանիցէ և ցորեան հնձեսցէ, զի այն-

Digitized by Google

-պէս 'ի գետս է ըստ ազգի սերմանն և հնձոցն լինել, նոյն-պէս և 'ի գործս, որ սերմանէ 'ի մարմին փափկութիւն, ցանկութիւն, արբեցութիւն, պղծողական հնձեսցէ ան-տի: Այլ զինչ իցեն. տանջանք, պատիժք, ամօթ, ծաղր և ապականութիւն: Վասնզի բազմապատիկ յօրինեալ սերմանոյն և պէսպէս խորտակացն չէ ինչ այլ փոխանն, եթէ ոչ ապականութիւն. զի ինքեանք ապականին, և զմարմինն ընդ նմին ապականեն: Իսկ ոգւոյն ոչ այսպի-սիք ինչ են, այլ ամենևին նոցին հակառակքն. սերման-նեսցէր ողորմածութիւն, կամ պահին քեզ գանձք յեր-կինս և փառքն յաւիտենականք. սերմանեսցէր զգաս-տութիւն, կայ և մնայ քեզ պարգևք և պատիւ և հրեշ-տակացն զուարթութիւնք և յարարչէն պատերազմացն պը-սակք . . . . . . . . . . . . . . . .

«Որով ինձ աշխարհս 'ի խաչ ելեալ»: Աշխարհս աս-սէ ոչ զերկինս և զերկիր, այլ զաշխարհական իրս, զգո-վութիւնս 'ի մարդկանէ, զապատաւորութիւնս, զփառս, զընչեղութիւն, զայլ ամենայն որ թուին պայծառք. այ-սոքիկ ինձ մեռեալք եղեն . . . և զինչ 'ի վերայ եած, «և ես աշխարհի»: Երկրին զեկայց (զմեռելութիւն), նոքա ինձ մեռեալ, և ես նոցա: Այլ ոչ այսոքիկ ըմբռ-նել զիս կարեն և ունել, քանզի մեռեալք են միանգա-մայն. և ոչ ես ցանկամ նոցա, վասն զի մեռեալ եմ նոցա և ես:

## ՀԱՏՈՒԱԾՔ Ա. ԹԵՍԱՂ.

### ՅԱՌԱՋԻՆ ՃԱՌԷՆ

Մի՛ ոք այսուհետև զանգիտեսցէ, թէպէտ և բա-զում ժամանակս իցէ ծախեալ, և չիցէ ինչ վճարեալ. զի մարթի և 'ի սակաւ ժամանակի այնչափ գործ գոր-ծել՝ որչափ յառաջնումն ժամանակին: Մինչ որոյ չեն էր հաւատացեալ՝ այնչափ պայծառացաւ 'ի սկզբանն, որ-չափ եւս առաւել որոց վաղուց հաւատացեալ իցէ: Մի՛ ուրուք զարհուրեալ զմտաւ "ածեալ զայն՝ ծուլացի, յոր-ժամ և ոտեալ եւս կիտիցէ եթէ մարթի 'ի սակաւ ժա-մանակի զամենայն վերստին ստանալ. զի հանդերձեալ ինչ իրք անյայտ են, և օր. տեառն գող գիշերոյ է, և



Digitized by Google

յանկարծակի յորժամ 'ի քուն կայցեմք՝ հատանիցի. այլ թէ չննջիցեմք, ոչ իբրեւ զգող 'ի վերայ հասանէ մեզ, եւ ոչ յանպատրաստից առնէ. իսկ եթէ սկսեսք եւ արթունք լինիցիմք, ոչ իբրեւ զգող հասանիցէ 'ի վերայ, այլ իբրեւ զհրեշտակ արքունի կոչիցէ զմեզ 'ի պատրաստեալ բարութիւնսն. եւ եթէ 'ի քուն կայցեմք, իբրեւ զգող գայ 'ի վերայ: Մ՚ի ոք այսուհետեւ ննջիցէ, եւ մի վատ եւ լորս յառաքինութեանն կայցէ. զի այն իսկ է քուն:

Զգիտիցէ՞ք, յորժամ ննջիցեմքն՝ զիա՞րդ չէն 'ի զգաշութեան մեր իրք, որպէս զնոյն առ 'ի ննջութիւն. եւ յորժամ արթունք իցեմք, չէն ինչ մեզ այնչափ պէտք պահպանութեան. եւ յորժամ 'ի քուն իցեմք, թէպէտ եւ բազում պահպանութիւնք իցեն, կորնչիմք. թէպէտ եւ դրունք եւ նիգք եւ պահապանք եւ պահակապանք կայցեն, սակայն մտանէ գող: Այլ զայս առ մի՞ ասիցեմ: Զի թէ արթունք կայցեմք, չկարօտանամք հարցն օգնականութեան. եւ եթէ 'ի քուն լինիցիմք, ոչ ինչ կարէ օգնել մեզ այլոց պաշտպանութիւն, այլ համօրէն այնու իսկ կորնչիմք:

Հնարինք է վայելել յաղօթս սրբոցն, այլ յորժամ եւ մեք եւս 'ի գործն իցեմք: Այլ զի՞նչ պիտոյ են ինձ աղօթք այլոց, յորժամ ես 'ի գործն իցեմ: Այլ մի իսկ կացուցաներ զանձն 'ի կարօտութեան, սիրելի. քանզի եւ ոչ ես զայն կամիմ. այլ միշտ 'ի կարօտութեան եմք, եթէ ուրախ լինիցիմք: Պաւղոս չասաց թէ չեմ կարօտ աղօթից, թէպէտ եւ որ աղօթս առնէին՝ չէին ինչ այնպէս նման արժանի, մանաւանդ թէ եւ ոչ մօտ 'ի նա. եւ դու ասես՝ թէ չեն ինչ ինձ պէտք աղօթք: Պետրոս չասաց՝ թէ չեմ կարօտ աղօթից. այլ "Աղօթք, ասէ, ստէպ լինէին վասն նորա յեկեղեցւոյն առ Ած". եւ դու ասես թէ չեմ կարօտ աղօթիւք. վասն այնորիկ եւ պիտոյ են քեզ՝ զի չհամարիս թէ իցեն պիտոյ. թէպէտ եւ իբրեւ զՊաւղոսն լինիցիս, կարօտ ես աղօթից: Մ՚ի բարձրացուցաներ զանձն, զի մի խոնարհիցիս. այլ որպէս ասացի իսկ, թէ գործս ունիցիմք, եւ նոքա վճարիցեն, եւ աղօթքն որ վասն մեր լինիցին. եւ լուր Պաւղոսի. "Գիտեմ, ասէ, զի այս դիպեսցի ինձ 'ի փրկութիւն վասն ձերոց խնդրուածոց եւ պարգեւաց հոգւոյ Յի-

ռուած ·Քրիստոսաւ»։ Եւ դարձեալ՝ «Օ՛ն բազմապէս ձայնոցն 'ի մեզ եղիցի բազմաց գոհութիւն վասն մեր»։ Եւ դու տեսես թէ չէն ինչ ինձ դիւրոյ աղօթք։

Նոյն թէ հեղգայցեմք, ոչ ոք կարէ մեզ օգնել. զինչ թէ օգնեաց հրեշտակն Երեմիա. ո՞չ երիցս մատուաւ պա-ղատել առ Աստ. եւ երիցս լուաւ՝ թէ «Մի՛ կար յաղօթս եւ մի պաղատիր վասն ժողովրդեանդ այդորիկ, զի չեմ քեզ լսելոց»։ Օ՛ն ինչ օգնեաց Սաւուղի Սամուէլ, ո՞չ ապաքէն մինչեւ ցվերջին օրն էր 'ի սուգ վասն նորա. եւ ոչ վայրապար ինչ աղօթս առնէր, այլ 'ի սուգ էր. կամ զինչ օգնեաց եղեւ իսրայելացւոցն. ո՞չ ինքն իսկ ասէր, թէ «Ինձ քաւ լիցի մեղանչել՝ թէ հեղգացայց առնել աղօթս վասն ձեր»։ ո՞չ ամենեքին իսկ առ հասարակ կորեան։ Նոյն ուրեմն չօգնէ՞ն ինչ, ասեն, աղօթք։ Օգ-նեն եւ մեծամեծս իսկ. այլ յորժամ մեք գործիցեմք, գործակից լինին աղօթքն եւ օգնեն. գործակից ոք այնմ՝ որ գործիցէն՝ լինի, օգնական այնմ՝ որ եւ ինքն 'ի վաս-տակին մնիցի. եւ եթէ դատարկ կայցես, չօգտիս ինչ։ Նոյն թէ կարող էին աղօթք եւ 'ի դատարկանալն մեր առնել զմեզ յարքայութիւն, ընդէ՞ր ոչ ամենայն հե-թանոսք լինիցին քրիստոնեայք. ո՞չ ապաքէն վասն ա-մենայն իսկ աշխարհի աղօթս առնեմք. ո՞չ եւ Պաւղոս իսկ զայն առնէր. ո՞չ ապաքէն զամենեսին աղաչեմք դառնալ. ընդէ՞ր չարքն չլինիցին բարիք, եթէ ոչ յան-ձանց ինչ նպաստ լինիցին։

Մեծամեծ իսկ օգնականութիւնս օգնեն աղօթք, այլ յորժամ եւ մեք եւս յանձանց մեր լինիցիմք։ Վա-սն ուսանել թէ որչափ օգնիցեն աղօթք. զմտաւ ած զԿուռնելիոս եւ զՏաբիթա. լուր եւ Յակոբայ զինչ ասէր ցԼաբան. «Եթէ ոչ, ասէ, ահն հօր իմոյ հա-սեալ էր, ունայն իսկ արձակեիր զիս այժմ»։ Լուր դարձեալ եւ զայն. «Պաշտպանեցից, ասէ, քաղաքիս այսմիկ վասն իմ եւ վասն Դաւթի ծառայի իմոյ»։ այլ երբ. առ Եզեկիաւ արքայիւ։ Նոյն եթէ մնայցէ ինչ աղօթք, եւ առ կարի չարաց պարտ է մնալ։ Ընդէ՞ր ոչ յորժամ Նաբուքոդոնոսոր եկն՝ առաւ զայս Աստ, այլ մատնեաց զքաղաքն. վասն զի առաւել զօրացեալ էին չարիքն։ Նա եւ նոյն իսկ Սամուէլ երբեմն աղա-չեաց վասն իսրայելացւոցն եւ մնացեալ. այլ երբ. յոր-

ժամ և նոքա հաճոյ լինէին, յայնժամ փախուցեալ զթըշ-
նամիսն.

Եւ զի պիտոյ են, ասէ, աղօթք ընկերաց՝ յորժամ
ես հաճոյ լինիցիմ. Մի՛ ի երբէք ասեր զայդ, մի այդ դու-
պիտոյ են աղօթք և կարի յոյժ պիտոյ. լուր Այ, որ ա-
սէր ցԲարեկամսն Յովբայ, թէ «Մ՛աղօթս արասցէ վասն
ձեր և թողցին մեղք ձեր»։ քանզի մեղան, և ոչ մե-
ծամեծ մեղս. այլ այնպիսի արդար որ աղերսցոյց յայն-
ժամ զԲարեկամսն աղօթիւք, ՚ի հրէական ժամանակին
չկարաց աղերսուցանել զիւրեայսն կորուսեալս. և զի ա-
սասցիս արդ, լուր Այ՝ որ ասէ մարգարէիւն. «Թէ
յարիցեն Նոյ և Յովբ և Դանիէլ, ոչ աղերսուսցեն
զուստերս իւրեանց և զդստերս. քանզի առաւել զօրա-
ցան չարիքն»։ և դարձեալ՝ «Թէ յարիցեն Մովսէս և
Սամուէլ»։ և տես զիարդ յերկուս մարգարէս ասէ
զայս. քանզի երկոքին աղաչեցին վասն նոցա և չհասին։

Նոյն և Եզեկիէլ ասէ՝ թէ «Այ ինձ Տէր զի ջնջես
զմնացորդս Իսրայէլի»։ և առաւ ցուցանէ՝ թէ յիրաւի
առնէ զայն, յայտ-արարեալ զմեղս նոցա։ Թէ ոչ ընդ
ինչ արհամարհէ՝ չընդունելով զխնդրուածս նորա, բա-
ւական և այս իսկ է հաւանեցուցանել. թէ ոչ վասն ըզ-
քեզ արհամարհելոյ, այլ վասն բազում մեղաց նոցա
չընդունիմ զպաղատանս՝ ասէ. բայց սակայն ամեայ
[illegible] ասէ. «Թէ յարիցեն Նոյ և Յովբ և Դա-
նիէլ»։ և յԵրեմիա իսկ ցնա ասէ զայս, քանզի առաւել
մխիթարեալ նա էր. ասացեր ցիս, ասէ, բակորով ու-
տել հաց, և կերայ. հրաման ետուր զհերս և զմօրուս
գերծուլ[3], և գերծի. ասացեր ՚ի մէջ կողմն ննջել, և
ննջեցի. հրաման ետուր ընդ ոսկածակ բարձեալ ելա-
նել, և ելի. առեր յինէն զկին իմ և ասես թէ մի սգար,
և չսգացայ, այլ եղէ ժուժկալ առաքինութեամբ. և
այլ ինչ ևս բազում արարի վասն նոցա. և արդ ես ըն-
քեզ աղաչեմ վասն նոցա, և չառնուս։ Ոչ արհամար-
հեալ ինչ զքեզ, ասէ, չառնեմ զայդ, այլ եթէ Նոյ և
Յովբ և Դանիէլ իցեն և աղաչիցեն վասն ուստերաց և
դստերաց իւրեանց, չառնամ։

Նոյն և Երեմիա, որ սակաւ ինչ մխիթարեալ յԱյ հրա-

3 Օրինակին ղերծուլ։

մանանցն, և բազում ինչ 'ի նոցա շնորհաւթենէ, զինչ ասէր. «Զանմոռանալն զինչ գործեն ձերոյ». Ո՛ր, ասէ, գործեն. այլ ինձ երևս արար. Վասն այսորիկ ասէ ցնա. «Իբրև յարիցեն Մովսէս և Սամուէլ». առաքինին օրէնսդրացն, որ բազում անգամ ապրեցոյց զնոսա 'ի վշտացն; որ ասէրն՝ «Իբրև թողուս զոցա զմեղս թող, ապա թէ ոչ և զիս ջնջեա». արդ եթէ նա էր, ասէ, այժմ, զայդ ասէր, առակայն ոչ ինչ վճարէր. և Սամուէլ դարձեալ՝ որ և նա բազ ապրեցոյց զնոսա, որ յառաջին տիոց զարմանալի էր։ Կանգի զնանաւէ պաշտի, թէ իբրև զպարտեկան ընդ պարտեկանն խօսեցայ, և ոչ ինչ առաւոզ. և նախ յառաջնումն երևեցայ, և 'ի հաւանն եկի զփակեալ մարգարէութիւնն բանալ. «Այս էր, ասէ, բանն տեառն զինաւ պատուական, և չգոյր տեսիլ որ զուշակէր». թէ սորա եւս յանձիցեն, ոչ ինչ օգնեն։ Այս զԵղիէ ասէ՝ թէ «Որպար կատարեալ էր յարգի բերում». և զԵզեկիել՝ թէ «Նոյն, արդար, Ճշմարիտ և ծառայաշտ». և զԴանիէլ՝ զոր ձեռն կարծեցին, «Զայրեցուցին, ասէ, զոսանտրս և զղրանցս իբրև անց».

Այսու հետև զայս ամենայն խնայեալ, մի արհամարհեսցուք զաղօթս սրբոցն, և մի զամենայն 'ի նոսա ապաստան արասցուք, այսու՝ զի մի ծոյլք լիցուք և զմեր յամիցեմք, և այնու՝ զի մի 'ի բազում շահիցն վրիպիցեմք։ Այլ և աղաչեսցուք առնել աղօթս վասն մեր և լինել ձեռնտու. և մեք բաւեն հարցուք զառաքինութեանն. զի կարասցուք հասանել խոստացելոց բարութեանցն սիրելեացն նորա, շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ԵՐՐՈՐԴ ՃԱՌԻՆ

Պատերազմողն եկեալ հասեալ կայ 'ի վերայ։ Եւ որ՝ զինչ ասէ. «Գոչէ, կոծի, գայ շուրջ, մինչև իբրև զառիւծ, կամի յափշտակել». բազում զմարտնչողս րիս զեղեալ զմեօք, ընդ որս հարկ է անցանել մեզ ընդ միջև, զի մի զոր խաբիցեմք զանձինս։

Այս արդ ազէ ասա, զինչ ինչ ոչ պատերազմեցի ընդ

մեղ, մեծութիւն, թէ գեղ, թէ փափկութիւն, թէ հարստութիւն, թէ իշխանութիւն, թէ փառք, թէ չարակնութիւն, թէ հպարտութիւն. զի ոչ մեր միայն փառքն պատերազմի ընդ մեզ առ արգելլեալ 'ի խոնարհութիւն իջանելոյ, այլ և յայլոց նախանձ և 'ի չարակնութիւն առնէ զմեզ: Նաև զինչ իցեն նոցին հակառակքն. աղքատութիւն, անարգութիւն, արհամարհել, ընդվայրընկեց զանձն առնել, չունել ամենևին ինչ գոյութիւն. սոքա 'ի մեզ են: Նաև յայլոց մարդկանէ, չարութիւնքն, մատնահարութիւնքն, նենգութիւնքն, զըրպարտութիւնքն. բազում աղետք զխուաց կուտեալ չարիք զմեզ, պետութիւնք, իշխանութիւնք, աշխարհակալ խաւարի աշխարհիս այսորիկ, այսք չարութեան. այլ խնդրանք, այլ որոգայթք [1]. յերկնայնոց հոգեւորաց եղծուածք. մերթ առողջութիւն, մերթ հիւանդութիւն. և ասասցի որ ոչ յանցանիցեն:

Տեսցուք զի և յԱդամայ սկիզբն առարկեալ ասացից: Նաև և իսկ անդէն 'ի սկզբանն զնախաստեղծն զրաւեցին ցանկութիւնքն, և կերակուրք, և իշխանութեան տենչութիւնք: Այլ զնորին որդին զինչ. նախանձ և չարակնութիւն: Այլ որ առ Նոյիւն էին զնոսա զինչ. մարմնոյ ցանկութիւնք, և որ ինչ չարիք անտի ծնանին: Այլ զնորին որդին զինչ. թշնամանք և լկտութիւնք: Այլ զաշտարակագործացն զինչ. թշնամանք և ապստամբութիւնք, և հացի յղփութիւն: Նոյնպէս անդադար և աղքատութիւն իսկ զնոյն առնէ. վասն այնորիկ ասէ իմաստունն, ասէ, թէ «Մեծութիւն և աղքատութիւն մի՛ տար»: մանաւանդ թէ ոչ մեծութիւն և ոչ աղքատութիւն, այլ կամս՝ որ ոչ կարիցեն զերկոսին հոգեւորական 'ի դէպ 'ի կիր արկանել: «Գիտասջիր, ասէ, զի 'ի մէջ որոգայթից շրջիցիք»: սքանչելապէս ասէ Երանելին Պաւղոս՝ թէ 'ի սոյն իսկ կամք. չասաց լոկ թէ փորձիցիք, այլ թէ 'ի սոյն կամք, փոխանակ ասելոյն թէ 'ի սոյն ծնեալք. և այն իսկ է գործ մեր, և 'ի սոյն կեամք. և դու հանգիստ խնդրես:

Ձեկաց զահիճ առնեմ թէ զկայս քերել առ 'ի զոհս մատուցանելոյ 'ի հարկէ. այլ հասարակ կայ 'ի մերայսա

1 Օրինակին յորդորին:

տին ցանկութիւն ընչից և ագահութիւն՝ և փոքր ինչ ըղձս . Եւ որք ՚ի զօրականաց արկ զմեզ ՚ի խորոյն և կացոյց ՚ի վերոյ կառավարութեանց, այլ մարմնոյ բոցն բորբոքեալ՝ առաւել քան զայս այլոց զօդիս : Չկայ մեծ թագաւոր՝ բազում պարգև խոստացեալ առ ՚ի զեղծուցանել . այլ ՚ի մեռ կան մեղեկան փառք՝ որ են չար քան զայն խոտորզեն : Ո՛րձ պատերազմ է և արդարև անհնարին մեծ . Թէ կամեսցիք արթուն լինել, կան պատիք և ՚ի մտաւոր ժամանակիս . և լուր Պաւղոսի . "Այսուհետև կայ և մնայ ինձ արդարութեան պսակն՝ զոր հատուսցէ ինձ արդար դատաւորն . ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն որ սիրեցին զյայտնութիւն նորա „ :

Յորժամ հրաւիրեսցես զորդին սիրելի միաբանք՝ ՚ի բազում մեծութեան մնեալ փափկութեանն, յոր առաջին յայս կայցէ՝ թէ միայն էր ժառանգելոյ զժառանգութիւնս քո, մի՛ տրտմիր, այլ գոհացիր զԱյ և տուր փառս այնորիկ՝ որ ետն, և չլինիցիս այնու խոնարհագոյն քան զԱբրահամ . որպէս և նա ետ Այ՝ յորժամ հրամայեաց նմա, նոյնպէս և դու յանձնեսցես քո չարչարեցայր : Ի ցաւս ինչ չարաչարս անկար . և բազումք եկեալ սփոփեցին՝ ոմանք դիւթութեամբք, և ոմանք բժժանօք, և այլք այլովք ինչ նոյնպիսօք մոլորութեան կարեաց մատուցանել . և դու վասն այն երկիւղին ժուժկալ կացցես անշարժ, զամենայն ինչ յանձին կալեալ կրել, քան ՚ի կռապաշտութեան ինչ առնուցես . և այն մարտիրոսութեան պսակ բերէ քեզ . և դու մի ինչ երկմտեսցես : Այլ եթէ աղքատ և որով օրհնակես, ես առաքեցից : Ո՛ի զոր օրինակ նա առանձնանացն և ցաւոցն համբերէ քաջութեամբ, նոյնպէս և դու չպարգաւանելով երկնից կացցես . քանզի ցաւոյն զայրանաց համբերէր առ ՚ի չլինել կարօտ ինչ այնպիսի իրաց, և մի առնել զոր ինչ և հրամայէ տայցէ : Կան այլք սատանայագործք իցեն, և ոգոց մեղմագոյնք . թերևս ՚ի մի հատարանկ կէս հասանիցեն . բազում անգամ թերևս սատանայագործք :

Այլ՝ արդ ասէ իմն առա, յորժամ տեսանես տապալս ՚ի նորոգութեան ընկեցեալ, և այլքն ազգեցին, և դու չունեսցիս յանձին զդիւթութիւն, ոչ ապաքէն զմարտիրոսութեան պսակն առնուս ՚ի զլուխ : Կարող են երբեք զինչ . և բազումք խորամ տանջեն երթալ առ հարցանել, և դու

Digitized by Google

վասն ինչ երկիւղին, քանզի արգելեալ է զայն, 'ի մտի դնի-
ցես՝ թէ լաւ է չպատանել զինչ և ոչ ինչ սատանգանել.
Համգոյն այնմ առնուցուս վարձս՝ որոց յաղքատս իցէ
ծախեալ: Նաև եթէ յորժամ կորուսերն՝ գոհանայցես,
և կարող ես իցես երթալ առ հարցուկս, և զայն ունի-
ցիս յանձին՝ եթէ լաւ իցէ բնաւ չգտանել՝ քան թէ
այնպէս գտանել, որպէս և նա վասն ինչ երկիւղին 'ի չքա-
ւորան ծախեաց, նոյնպէս և դու վասն ինչ երկիւղին չառ-
նուս յանձն գտանել զյափշտակեալն. զի մեք եւս ան-
ձանց տեսցուք և առնելոյ վնաս և չառնելոյ, և չիք այլ ոք:

Այլ եթէ կամիք, 'ի գողութիւն իսկ անցցուք զիրան.
Եհատ անպիտն գող, եմուտ 'ի սենեակ, եհան ոսկի և
ակամբս պատուականս, աւերեաց իսկ զամենայն գանձս
եհան արտաքս, և չտեսաւ 'ի բնաւն, և իրքն ծանուցեալ
են, և թուի թէ վնաս մեծ եղև: Ոչ ևս է վնաս, այլ
'ի քո ձեռս է առնել զայն վնաս և օգուտ: Այս իսկ Քա-
նացայց ցուցանել՝ զիարդ քո կամելովն շահ մեծ լինի,
և չկամելովն՝ ևս մեծ, քան զոր եղեն, վնաս գործես:
Զոր օրինակ Հարստահարացն յորժամ նեղեն մեղեալ
կայցէ առընթեր, հմուտ հարստահարութեանն 'ի լաւ ար-
կանէ 'ի կիր, և տխմարն խանգարէ և վնաս գործէ.
Նոյնպէս և յայսպիսի իրս: Այլ արդ զիարդ լինիցի շահ:
Եթէ գոհանայցես զԱյ, և ոչ ձիչ բարձեալ գուժիցես.
և եթէ զՅոբայ զբանսն ասելով, թէ «Տէր ետ և
Տէր եառ. մերկ ելի յորովայնէ մօր իմոյ, և մերկան-
դամ երթալոց եմ»: Ո՞ր խօսիս՝ Տէր ետ. և զիարդ
կարիցէ ասել՝ Տէր առ: Այլ ընդ այն մի ինչ զարմանայ-
ցես. քանզի և Յոբ՝ զոր սատանայ առ, ասէր՝ թէ Տէր
առ. և դու ընդէ՞ր զոր գողն տարաւ՝ չասիցես թէ Տէր
առ: Որդ ասէ սա, ընդ ո՞ր զարմանայցես, ընդ այնո-
րիկ՝ որ յաղքատն ծախեաց, եթէ ընդ Յոբայ՝ որ
վասն այնպիսի բանից: Այսպէս ուրեմն ոչ սակաւ վարձք
են նորա քան զայնոցիկ՝ որ աղքատութիւն տայցեն, թէ-
պէտ և չետ ինչ 'ի ժամանակին:

Այլ մի ասիցես, եթէ իմ չէր ընչիցս, քանզի ոչ իմ
կամաւ եղեն իրքն. յանդգնեա յանկարծ եմուտ աւազա-
գողն, և յինձ ո՞ր վարձք լինիցին: Այո և Յոբայ յան-
դգնեա յանկարծ իրքն գործեցին. քանզի և զիարդ իսկ.
այլ սակայն կամեցաւ. այլ մտօք թէ քեզ այնպիսի վարձս

տանուլ՝ որպէս թէ կամաւ 'ի բաց ընկեցեալ էր զնոսա։ Այլ նմանագոյնս իսկ ընդ այնպիսայն առաւել զարմա-նալ, որ վշտացն գոհութեամբ տանիցի, քան ընդ այ-նորիկ՝ որ կամաւն տայցէ։ Ընդէ՞ր։ Զի նա դրուատազն պարգևաց և մնացն զուարթութեամբ, և հեշտական-յուսով վայելէ. և նախ ժուժկալութեամբ տարաւ ըն-չիցն նուաղութեանն, և ապա ընկէց 'ի բաց. իսկ 'ի սմա-նէ՝ մինչդեռ կայեալ էր ընդ նմին՝ հանաւ բանութիւ. և չէ ընդ մի համար յառաջագոյն հաւանելոյն յընչիցն անկանելոյ և ապա վառանել, և մինչդեռ 'ի նոցին ցան-կութիւնն հարեալ կայցէ և առիպիցէ։ Ասէ զնոյն բանա-տիցես՝ բազմապատիկ անձացուս, և առաւել յաձա-խագոյն քան զՀնովայսն. նա կրկին առ առաւէն, և քեզ հարիւրապատիկ խոստացաւ Քրիստոս։

Չհայհոյեցեր վասն ոյ երկիւղին, և ոչ չոգար առ հարցուկս, այլ գոհացար 'ի վիշտսն. նմին նմանող ես՝ որ արհամարհեաց. քանզի և այն չինչիցն՝ եթէ ոչ ար-համարհիցես. զի չէ ընդ մի համար զքաղցուն ժամա-նակս ածել զնոսա զընչիցն արհամարհութիւն, և յան-կարծակի դիպել հանդերձել։ Այսպէս լինիցի շահ վա-նատն. և չմնասցես ինչ, այլ օգտիցիս ինչ 'ի սատանայէ։ Այլ թէ զիա՞րդ անհնարին մեզ լինիցի։ Յորժամ զօ-գիգ տուժեսցես։

Այլ աղէ եկ տես դու ցխա. զրկեաց զքեզ յընչիցն գողն, և դու ևս զանձն 'ի փրկութենէն զրկեսցես. ըն-դէ՞ր տրտմեցիս՝ որովք յայլոյն վնասեալ կորեցեր. զի՞ դու քեզէն ընդ բազում կարեօք արկանես զանձն։ Այս թերև-ևս աղքատութիւն հասոյց քեզ. և դու 'ի կորուսոն մնասես անձին խարդախութեամբ. նա զրկեաց զքեզ յայնմանէ՝ որ արտաքոյ քան զքեզ իցէ, և յետոյ և ա-կամայ իսկ գնայ 'ի քէն. և դու զյաւիտենից մեծու-թիւնն մերկանաս 'ի քէն։ Տրտմեցոյց զքեզ սատանայ՝ զի եհան 'ի քէն զինչսն. տրտմեցո և դու զնա, և մի ուրախ առնիցես։ Եթէ առ հարցուկս երթայցես, ու-րախ արարեր զնա. և եթէ գոհանայցես զնմ, աղէկ վէրս եհար նմա։

Այլ տես զինչ լինիցի. նա և գտանես իսկ ոչ՝ յորժամ առ հարցուկս երթայցես, քանզի և չէ իսկ նոցա գի-տել զայն. և եթէ յանկարծ ուրեք դիպեսցի՝ զոր ա-

Digitized by Google

սենն, ընդ նմին և զօգուտ կորուսանես. և 'ի քոյոց եղ-բարց խոկ ծառք կայցես. և դարձեալ ես չար զնոյն կո-րուսանիցես։ Ո՛չ յորժամ խնամոյ դևն, եթէ վճարոյ չհամբերես, այլ և զանձն ես վասն այնր ուրախաս, դար-ձեալ տայ խնչս՝ զի պատճառս գտանիցէ միւսանգամ խաբելոյ զքեզ և աղաւաղեցուցանելոյ։

Իսկ եթէ առնիցեն ես հարցուկքն, ընդ այն մի խնչ զարմանայցես. քանզի անմարմին զօրութիւն է դևն, ամենայն ուրեք յածեալ շրջի, և զգալոյն խոկ նոյն վա-սէ. զի ոչ առանց զինուն զործին ամենայն գործքն։ Թէ նոյն վասէ զնոսա, ապա և զիտէ ուր առանձինն դնեն, և չէ անտեղեակ ուրոյ պաշտամանցն. և չեն խնչ այն զար-մանք։ Յորժամ տեսանիցէ զքեզ տրտմեալ ընդ կորո-ւստն, և այլ ևս կորուստ 'ի վերայ կորուստ առնէ. և եթէ արհամարհեալ և ծառք արարեալ, չգայ միւսանգամ ընդ նոյն ճանապարհ. որպէս և մեք զայն խնչ առնեմք թշնամեացն, որով տրտմեցուցանել կարիցեմք. և եթէ տեսանեմք՝ եթէ չտրտմին, 'ի բաց կամք այնուհետև, որպէս թէ չկարիցեմք խնչ զանակբիւ լինել. նոյնպէս և սատանայ։

Ո՞չ խնչ խօսիցիս, չտեսանիցես վնաս արկանել 'ի ծա-ռաս, զխորհ յորժամ հողմն 'ի վերայ հատանիցէ՝ չառ-նեն խնչ փոյթ զընչից, այլ և զոր ունիցին 'ի բաց ընկե-նուն. զինչ առնես, ով մարդ. դու քեզէն խոկ հեռացեալ և նաւաբեկութեան զործակից լինիս. մինչչև ալեացն զքեզ ղեկեալ, քոյին հնարք զմեծութիւնն 'ի բաց վա-րես. ընդէ՞ր նախ քան զնաւաբեկութիւն նաւաբեկութիւն անձին զործիցես։ Իսկ զայս ես չհնազանդութեան մարդ-կանց, որ փորձութեանց ծովու անտեղեակ իցեն. խոկ նաւորդն՝ եթէ զինչ խաղաղութիւն առնիցէ, և եթէ զինչ հողմն զործիցէ, ճշմարիտ զիտէ. և ծառք առնի-ցէ զայն՝ որ զայս զործիցէ. վասն այսորիկ, ասէ, ընկե-նումն 'ի բաց, զի մի աղքատ լինիցիս։ Նոյնպէս և որ հիւանդ խրատս և կենաց և պատերազմաց աշխարհիս իցէ, յորժամ տեսանիցէ զհողմն 'ի վերայ յարուցեալ և զայլս չարութեանցն, նաւաբեկութիւն յօժարեալ զործէ, և զմեղացորդս ես 'ի բաց վարէ։

Կրօնութիւն զործեցաւ. դու տես զնոյն սրբամաքու-թիւն, և առնելո փորձութի նաւուն։ Արդարքս յանձնա-

կեցին. տուր զնշխարան Քրիստոսի, և այնպէս առաջնորդքն մխիթարեսցեն զաղքատութիւնն, և փոքրոգի զնաւն առնիցեն. մի՛ ունիցիս 'ի ներքս զծանուցեալսն, զի մի՛ ըմբռնիցի նաւն: Նոքա զի զմարմինս ապրեցուցանիցեն՝ ընկեցին զկարասիս նաւին, և չմնան ալեացն զալոյ և խորտակելոյ զնաւն. դու զի զոգիս ապրեցուցանիցես, չզանձուցանիցես զնաւակործութիւնն: Փորձեցէք թէ չհաւատայք, աղաչեմ. քննեցէք և տեսէք զխրատս իմ. յորժամ մերժէք 'ի մերոյ հատանիցեն, տուր տուրս վաղվաղակի, և զոհացիր զի հատին մերժէք 'ի մերոյ. և տեսջիք որչափ խնդութիւն ընդ այնր մտանիցէ. զի հազեալ շահն որչափ և փոքր իցէ, այնչափ իցէ՝ մինչև զամենայն մարմնաւոր ցանկս ծածկել կարիցէ, մինչ ունիցիս առ Քրիստոսի, և ևս քան զևս մեծանաս:

Նայց ապէ եկ տես, թէ յորժամ կողոպտեալ իցէ զքեզ, և մնացեալ այր թագաւոր՝ ձեռն կարկառեալ առնուլ ինչ 'ի քէն, մի թէ չհամարէիր քան զամենեսին զանձն մեծատուն. զի ոչ յետ այնչափ աղքատութեան համարեցար զքեզ անօթոյ թագաւորին: Ո՞ր ընդ նմին յափշտակիցիս, այլ ժամ կալ լեր անձին, և յաղթեսցես սատանայի մտաստակարութեանն: Աղքատութիւն է և քեզ շահել շահս մեծամեծս:

Արհամարհեսցուք զմեծութիւն, զի մի՛ արհամարհեսցուք զոգիս: Նա զիարդ ոք արհամարհիցէ: Զանասանիցէք զվերգեցիկ մարմինս և զնոյնս ցանկացողս, մինչ առաջնքս կայցեն՝ այրէ հուրն, առաւել բորբոքի քան. և յորժամ 'ի բաց ոք մերժեսցէ զնոսա, ամենայն շիջանի, բնաւ զաղարէ. նոյնպէս և 'ի մեծութեանն: Ո՞ր ոք անկի զարդ կազմիցէ. մի՛ ոք անկանս պատուականս. մի՛ ոք հանդերձիւք պատուեսցէ զալս տեսողաց. և եթէ մեծանալ ևս կամիցիս իբրև զառաջինն, մի՛ ունկնդրել, այլ կարևորքն, զի վաղվաղակի և այլոց տայցես: Ո՞ր զարդարեալ լինել. զի այնպիսի զարդ և ուրախակաց է մտաւորաց, և զմեզ 'ի հոգւս մաշէ. մի՛ անօթս ոսկեղէնս և արծաթեղէնս, այլ եղիցին շտեմարանք զինոյ և հացոյ. ոչ վաճառել և արծաթ զարծել, այլ չքաւորաց բաշխել. եթէ մերժեսցուք զամենայնս յաւելորդացն, հաստատեսցեմք երկնից բարութեանցն. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, ընդ

որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՅԵՕԹՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

«Ոչ կամիմ զձեզ տգէտս լինել, եղբարք, վասն ննջեցելոցն, զի մի տրտմիցիք որպէս և այլքն՝ որոց ոչ գոյ յոյս»։ Նախադասէ ինչ իբրք յանդիմանութեան միայն տրտմեցուցանելն զմեզ. որպէս յորժամ բարիոք ուսանիցիք, մերժեսջիք զցաւն։ Սոյն և Պօղոսի յայտ արարեալ ասէր՝ ոչ կամիմ զձեզ տգէտս լինել վասն ննջեցելոցն։ Վասն այդորիկ ոչ կամիցիս ընդ նոսա տգէտս լինել, ընդդէր ոչ ճառագեսս զատանջանայն որ պատահեալ կայ։ Ընդէր լինել, ասէ, ի յարութեան բանէն։ Իսկ այս վասն էր. յայտ իսկ է և յանդիմանս կայ. բայց այժմ ընդ այնմ և այս ևս շահ լիցի ոչ սակաւ։ Քանզի ի յարութենէն չէին թերահաւատ. այլ թերևս աշխարհէին, վասն այնորիկ ասէ զայս. զի այլ ազգ ընդ անհաւատսն խօսի, և այլ ընդ նոսա որ զժամանակացն և ժամուցն խնդրէին. յայտ է թէ գիտէին։

«Զի թէ հաւատամք, ասէ, եթէ Յիսուս մեռաւ և յարեաւ և եկեաց, նոյնպէս և Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա» . . . . . . . . Զարթեալ զննջեցեալսն, և ոչ ուրեք զմեռեալսն. այլ Քրիստոսի զմեռանելն եդ, քանզի յարութիւնն անդէն ի նմին օր գոյր. բայց սա զննջեցեալսն։ Իսկ զինչ Յիսուսի. կամ ի ձեռն Յիսուսի զննջեցեալսն ասէ, և կամ թէ ի ձեռն Յիսուսի՝ այն իսկ է, զհաւատացեալսն։ Իսկ հերձուածողքն զմկրտելոցն ասեն զայս ասել։ Իսկ այնպէս ո՞ր կացցէ. զի Յիսուս ընննջեաց միութեամբն։ Վասն էր ասէ զննջեցեալսն. զի ոչ զհամօրէն, այլ զամենայն որ յարութենէն խօսի. զննջեցեալսն, ասէ, ի ձեռն Յիսուսի. և ի բազում տեղիս ըննոյն ասէ։

«Զայս ասեմք ձեզ, եղբարք, տեառն բանիւ, զի մեք որ մնացեալքս կենդանիքս լինելոց իցեմք ի գալստեան տեառն ոչ ժամանեսցուք ննջեցելոցն»։ զհաւատացելոցն ասէ և զոր ի Քրիստոս ննջեցեալ իցեն։ Զարթեալ ոչ միայն

վասն յարութեան քանզի էին նորա, այլ վասն պատուոյ և փառաւոր յարութեանն։ Ի յարութեանն, ասէ, ամենեքեան վայելեսցեն, բայց 'ի փառաւոր յարութեն ոչ ամենեքեան, այլ քրիստոնէականքն։ Եւ քանզի մխիթարել կամի զնոսա, ոչ այնու միայն մխիթարէ, այլ և բազում պատուով և երանութեամբ յարութեանն. ապա թէ ոչ՝ զայն և՛ս գիտէին իսկ։ Եւ զի պատուովն կամի մխիթարել զնոսա, յառաջ մատուցեալ ասէ. «Եւ յամենայն ժամ ընդ տեառն լինիցիմք»․ և «Ամպովք յափշտակեսցուք»։ Բայց թէ զիարդ հաւատացեալքն 'ի ձեռն Յիսուսի ննջիցեն, այն իսկ է՝ զի զՔրիստոս ունիցին յանձինս. իսկ «ածցէ ընդ իւր» յայտ առնէ յամենայն կողմանց ածեալս ժողովեալս։ «Զայս, ասէ, ասեմք ձեզ տեառն բանիւ»։ Զայս նոր իմն հանդերձեալ էր ասել, վասն այսորիկ զարժանի հաւատարմութեանն դնէ. տն բանիւ, ասէ. այն իսկ է՝ եթէ ոչ յանձնանց, այլ 'ի Քրիստոսէ ուսեալ ասեմք՝ «եթէ մեք որ կենդանիքս մնացեալ իցեմք, 'ի գալստեան տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն»․ զոր և 'ի կորնթացւոց թղթին ասէ՝ եթէ «Յանկարծակի յական թօթափել»․ իսկ աստ զհաւատարմութիւն յարութեանն օրինակաւ ինչ յանգիման կացոյց։ Քանզի դժուարին իմն իրք թուէին, որպէս դիւրին է, ասէ, կենդանեաց մեռանել, նոյնպէս և վախճանելոցն. բայց մեքն՝ ոչ թէ զանձնէ ինչ ասէ, քանզի չէր մնալոց մինչև ցյարութիւնն, այլ զհաւատացելոցն ասէ. վասն այնորիկ առընթեր եդ՝ մնացեալքս, ասէ, 'ի գալստեան տեառն՝ ոչ ժամանեսցուք ննջեցելոցն։ Որպէս զի ասիցէ, թէ մի համարիք դժուարին[1] գործ լինել ինչ... Աստուած է որ առնէ։ Այլ որպէս դիւրին է զողջսն և զկատարեալսն ածել, նոյնպէս և զլուծեալսն։ Այլ են ոմանք որ թերահաւատեն յիրայն, քանզի չգիտեն զԱստուած։ Եւ արդ ապա ասա, որ դիւրագոյն իցէ, յոչինչէ 'ի գոյ ածել, եթէ զքակտեալն և զլուծեալն միւսանգամ կանգնել։

Այլ տես զինչ ասեն. այս անուն, ասեն, նուաղեկութիւն կրեաց և ընկղմեցաւ. և իբրև անկաւ՝ ձկունք բազումք կերան զնա, և 'ի ձկանցն իւրաքանչիւր ոք մի

1 Երկու օր. եթէ յամէն ինչ գործոյ լինելոյ։

մի անզգամ եկեր, և 'ի նոցանէն ամն յայս խաչ և ամն յայնմ ըմբռնեցաւ, և եղեն կերակուր այլոց, և նոցա մարմինքն այլում կերակուր անկան, և 'ի նոցանէ զար-ձեալ յայլ աշխարհ մտանեն, թերևս գազանաց գեշ անկանն որք զայն ձկունս կերան. և արդ որ այնչափ շր-ջոլթք և ցրումն անզգամոց գործեցան, զիարդ իցէ զի միւսանգամ այրն յարիցէ. ո՞ չհողն 'ի մի վայր ածիցէ:

Ընդէր խօսիս զայդ, ով այր դու, և տալս[1] տան-ջելոց բանից յէտևս, և անհնարին իմն զիրան հաշուես: Այսց ասէ իսկ եկ տես, թէպէտ և 'ի ծով չանկանիցէ, թէ և ձուկն չուտիցէ, և դարձեալ ձիւնքն 'ի բազում մարդկանէ ոչ ուտիցին, այլ պատեալ 'ի տապանի այրն լինիցի, և ոչ որդն և ոչ այլ ինչ փտտիցէ, զիարդ լու-ծեալն յառնիցէ, մինչեւ հողն և մոխիրն կցիցի, նոր ծաղիկ մարմնոյն ծաղկիցի: Նախ այս ոչ իցէ տարակու-սանաց. և եթէ հեթանոսք իցեն որ յայն տարակու-սանս մտանիցեն, բազում ինչ ունիմք և առ նոսա ա-սել որք զոգիսն 'ի տունս և 'ի թուփս և 'ի շունս ա-ծեն: Իսկ արդ ասէ տես ո՞ր դիւրագոյն իցէ, զիւր մար-մինն առնուլ եթէ զօտարին: Նոյնք դարձեալ առեն. 'ի հրոյ ծախեն, և հանդերձից յարութիւն լինի և կոչ-կաց, և չամանչեն: Այլ առ նոսա ոչ մի ինչ մեր բան. այլ առ հաւատացեալս, թէ հաւատացեալս պարտ է առնել որք հարցանեն:

Նայց ամենայն տարակուսանք զտասակերպականն, թէ ամե-նայն կենդանութիւն յարակայութեան լինի, մինչ և ամենայն կենդանեաց: Զառաւելցեն զիղձերն, որպի-սի է բունոն, որպիսի շատաւերքն, որչափ ուրեքն, քանի տեղքն, որպիսի պատեանքն մանր հատուցն դնդակեալք. և որ այնչափ և այնպիսի է, 'ի կարեկանէ մեղ յերկիր անկեալ ծնանի. և այն զի և նա նախ տարակուսեսցի. և թէ չլուծանիցի և չփտտիցի, և ոչ մի ինչ առնել լինիցի: Իսկ արդ ասէ տես, ուստի լինիցի այդ ամենայն: Իսկ որթն որ այնչափ գեղեցիկ է 'ի տեսանել և քաղցր 'ի ճաշակել, յանտաշխարան թնահատէ[2] լինի: Իսկ արդ զի՞նչ. տեսու իմեձ, ո՞չ տապակէն մի ձուլ 'ի վերուստ իջեալ՝ զիարդ

1 Մէ օր. Ժամանակն աղքատութեան անմխիթ:

2 Օրինակ մի հարցին:

յանշնչական փոփոխմանս փոփոխի. այն քան զյարութեան աղանդիչելոցացն է: Սան զի անդ նոյն մարմին և նոյն տեսանի 'ի նմանն կայ և յաղագս անզգայութեան. իսկ աստ զիարդ զմի անեղական զանութիւն և զնոյն զօրութիւն՝ և յայսքանս փոփոխի. յորժամ լինի գինի, և ոչ գինի միայն, այլ և աներև և ջուր. վասն զի ոչ ողկոյզն միայն, այլ և այլ ևս մասունք որթոյն 'ի նմանէ կերպարանին: Պատուձևալ և 'ի ձիթենեաց իւղն և այլն ևս անթիւս. և այն իսկ են զարմանալիք, զի աստ խառնեալ և անդ ցամաք, աստ քաղցր և անդ թթու, այլուր կծու և այլուր զաւն: Որդ աղէ աստ, զիարդ դառնայցէ յանշնչական աղէական գունակս. այլ չգիտանես ինչ ասել:

Նոյն և 'ի քեզ իսկ աստ, զի մարմնաւորագոյն իսկ է. սերմն որ սերմանի զիարդ յաշս, որպէս յակամբս, եթէ 'ի ձեռս, որպէս 'ի սիրտն, զիարդ յանշնչական անզգամս արպաուորի և յօրինի: Ո՞չ ապաքէն իսկ բնութ[1] որոշեալք են 'ի մարմնի, ձևոց, մեծութեանց, զօրութեանց, գրութեանց, ուժոյ, յարմարութեանց. ջիլք, երակք, մարմին, ոսկերք, նեարդք, շնչերակք, յօդք, խաղխախուղք, և որչափ այլ ինչ քան զնոյնս ճշգրիւ համարին արուեստապէտք բժշկաց, որ միախառն ունին զմեր բնութիւնս. և այս ամենայն 'ի միոջէ սերմանէ է: Անչթութեանց այս քեզ ասացել առարակուսանք. զիարդ որ խառնեալն է և լուծ և ցամաք և ցուրտ՝ մանծնա[2] լինել ասկր. որպէս ջերմն և խառնեալն միացեալ, զիարդ 'ի ցուրտ և 'ի լուծ ջիլք, որպէս 'ի ցուրտ և 'ի խառնեալ փողքն: Ասացե՞ս իցէ այն ամենայն, ասէ աստ. ընդ այն չտարակուսիս: Զանեսանելս համապատող զյարութիւն և զմահն 'ի հասարակն լեալ. յո՞ չոգաւ մանկութիւնն, ուստի եկն ծերութիւնն, զիարդ ծերացեալն չկարէ զինքն մանկացուցանել, և միւս մանուկ մատաղ ծնանի. և զոր այլում տայ, անձին չկարէ շնորհել: . . . Օայգ խորհուրդք մարդկայինք պահանջեն. բայց յորժամ ամ զայ

1 Այլազգէս ունի մին ձեռագրաց. — բժնակացն զմիև յառակութեանց և մասանց մարմնոյն համանձայն յանկախանելին. իսկ միւս երկուքն, միևնոյն մին երկաթանկրը, սանի [illegible] 'ի [illegible] [illegible], գինեաց, յաղթ [illegible] ([illegible]), [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] և [illegible], և որչափ այլ ինչ:

2 Օրինակ մի [illegible] [illegible]:

ծիցէ, ամենայն տեղի տայցէ։ Եթէ այսպիսիք տարա-կուսելիք են . . . եմուտ յիս այժմ խորհուրդ մեղելոյն որ զծնունդն զանմարմին հարցաքննեն զՔրիստոս . . . ոչ ոք երբէք գտանել կարէ. և զխորհրդ զանճառն զայն և զանտանելի ծնունդն քննիցեն արդեօք . . . Իսկ զայս ոչ եթէ վայրապար եղև մեզ ասել, այլ զի յարութենն հաւատայցեմք, և յորժամ զարձեալ խորհրդով կամի-ցիմք հասանել և չգտանիցեմք, մի դժուարեսցուք և մի զայրասցուք, այլ մտավարժ բանիւք դարձցուք և նա-հանջեսցուք զխորհուրդս . . . . . . . . . .

ՑՈՒԹՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

«Զայս ասեմք ձեզ տեառն բանիւ, զի մեք կենդա-նիքս մնացեալք 'ի գալստեան տեառն՝ ոչ ժամանեսցուք ննջեցելոցն»: Մարգարէքն յորժամ զհաւատարմու-թիւն բանիցն ցուցանել կամէին, նախ քան զայլսն զայս ասէին՝ թէ «Տեսիլն զոր ետես Եսայի». և դարձեալ. «Պատգամն Տյ, որ եղև առ Երեմիա». և դարձեալ թէ «Այսպէս ասէ տէր» . . . բայց զայս զոր պաւղոս, յայտ յանդիմանն լուաւ յՏյ . . . Տեսցուք և այժմ զինչ ասէ։ «Զի մեք կենդանիքս 'ի գալստեան տեառն ոչ ժա-մանեսցուք ննջեցելոցն. զի ինքնին տէր հրամանաւ 'ի ձայն հրեշտակապետին յետին փողով իջցէ յերկնից». Ըստ այնմ եթէ «Ցայնժամ զօրութիւնք երկնից շարժես-ցին»: Իսկ վասն էր արդեօք փողով. քանզի և 'ի Սինա լերինն զնոյն տեսանեմք, և հրեշտակս իջեալ և անդ: Իսկ արդ զինչ կամիցի ձայն փողոյ հրեշտակապետին յայտ առնել: Զոր օրինակ 'ի կուսանաց ճառին ասէ՝ եթէ արիք, եկն Փեսայն: Կամ զայն իսկ ասէ, կամ որպէս թագաւորաց կայցեն յայնժամ հրեշտակք 'ի սպասու 'ի յարութեանն: Ասէ թէ յարիցեն մե-ռեալք, և լինիցին արդիւնքն՝ ոչ եթէ հրեշտակաց ինչ այնմ զօրութիւն լինելոյ, այլ 'ի նորա բանէն, որպէս 'ի թագաւորի հրամանէ՝ թէ ելցեն արգելեալքն և հանի-ցեն սպասաւորքն ոչ իւրեանց ինչ զօրութեամբ, այլ նորա բարբառովն հարկանիցեն զսպասաւորութիւնն: Զայս և այլուր ինքն Քրիստոս ասէ՝ թէ «Առաքեսցէ զհրեշտակս իւր հանդերձ փողով մեծաւ, և ժողովես-

ցեն զհետաւորս նորա 'ի չարից հողմոց 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նոցա„: Իսկ ամենայն աւրէք զհրեշտակս անուանեսցէ այսր անդր ընթացեալս: Նախ հրեշտակապետն՝ Թուի ինձ թէ զզօրագլուխ առաջելոյն հրեշտակացն ասիցէ, որոց աղաղակ բարձեալ ասիցէ՝ թէ պատրաստ արարէք զամենեսեան, զի եկեալ հասեալ է դատաւորն: Օրինակ իցէ յետին փողն. այսու յայս ածնէ՝ թէ բազում փողք հնչեսցեն, և յետնումն իմանէ զդատաւորն:

“Իսկ մեռեալք, ասէ, որ 'ի Քրիստոս՝ յարիցեն յառաջագոյն. ապա և մեք կենդանիքս մնացեալքս՝ հանդերձ նոքօք յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ տեառն յօդս, և այնպէս յամենայն ժամ ընդ տեառն լինիցիմք: Արդ՝ այսուհետև մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք„: Իսկ եթէ իմանելոց է, ընդէ՞ր յափշտակիցիմք: Ասեմ պատճառս. քանզի և Թագաւոր յորժամ 'ի քաղաք մտանիցէ, պատուականքն ընդ առաջ ելանեն, իսկ պարտապարտքն անդէն 'ի ներքս՝ մնան դատաւորին: Իսկ յորժամ հայր սիրելի ուստր գայցէ, որդիքն և արժանաւոր մանկունք կառօք ելանեն ընդ առաջ՝ երթալ տեսանել և համբուրել, և ծառայքն յանցաւորք անդէն 'ի ներքս մնան: Արդ 'ի վերայ կառաց բերեալ լինիմք առ հայր. քանզի և ինքն ամպով ընկալաւ զնա, և մեք ամպով յափշտակիմք: Տեառնէս որչափ պատիւ ընդ առաջ ելանելովն առնիցեմք այնմ որ իմանիցէն. և որ քան զամենայն երանելի է, զի այնպէս յամենայն ժամ ընդ նմա լինիցիմք: “Ո՞ պատմեսցէ զզօրութիւնս տեառն, լսելի արասցէ զամենայն օրհնութիւնս նորա„:

Որչափ բարութեանց արժանի արար զազգս մարդկան. նախախնամեալքն յառնեն, և ապա 'ի միասին հանդիպութեամբ լինին: Արդ՝ որ նախ քան զամենեսեան վախճանեցան, ընդ կենդանեաց 'ի միասին երթայ ընդ առաջ. որպէս զի ոչ ինչ լինիցի առաւելութիւն սոցա և նոցա: Օր եթէ[1] մեզ ասացեալ մնան զի ընդ մեզ պսակեսցին, որպէս և այլուր գրեալ ասէ՝ եթէ “վասն մեր տեառն յառաջագոյն լաւագոյն խորհեալ՝ զի մի առանց մեր կատարեսցին„, որչափ եւս առաւել մեք նո-

1 Գանկասէր յօրինակին Զ. Է. ԵՌԷ. յաւելու 'ի լուսնոյ:

ցա. նմանաւանդ թէ նոքա մեզ մնասցեն, և մեք նոցա ոչ և ս. քանզի յանկարծակի յաւետ թօթափել լինի յարութիւնն: Նոյ ասէին եթէ ժողովքն, քանզի յառաջնեն ամենայն ուրեք և հաւաքին 'ի հրեշտակաց: Աստուծոյ զօրութեանն գործ է հրաման տալ երկրի արձակել զաւանդն. և այնմ չիք որ ապաստաւոր, որպէս յայնժամ կոչեաց զՂազարոս, "Ղազար, ասէ, եկ արտաքս". և անդէն ապաստաւորայն լինի: Նաև եթէ այսր անդր ընթանայցեն և ժողովիցեն հրեշտակք, իսկ աստ ոչքա զխորհուրդ յափշտակեցին... քանզի միանգամայն յորժամ ոչ որ գիտիցէ՝ լինիցի: Նաև յորժամ տեսցեն զերկիր գողդեալ և փոշուով լցեալ, և յամենայն կողմանց մարմինս յարուցեալ՝ առանց ուրուք սպասաւորութեան, այլ հրամանին բաւականութեամբ լըցեալ զերկիր ամենայն, զմտաւ ած որքան է որ յԱդամայ. մինչև 'ի նորա գալուստն՝ ամենեքեան կան յայնժամ հանդերձ կանամբք և որդւովք: Յորժամ տեսցեն անդքան 'ի վերայ երկրի ամբոխ, յայնժամ գիտասցեն. զոր օրինակ 'ի մարմնոյն անտեսութեան[1] ոչ ինչ յառաջագոյն տեսին, նոյնպէս և յայնժամ:

Նոյ յորժամ այսոքիկ լինիցին, յայնժամ և ձայն հրեշտակապետին եղիցի՝ որ գոչէ և հրեշտակացն հրամայէ, և փողքն՝ նմանաւանդ թէ հնչիւն փողոցն: Յայնժամ ոք երկիւղ ոք զողումն՝ որ 'ի վերայ երկրի մնասցեն, յորժամ մի կէն յափշտակիցի և միւսն մնասցէ, մի այր առնուցու և միւսն թողուցու. զինչ ինչ նոցա ոգիքն կրեսցեն յորժամ զայլսն վերացեալ տեսանիցեն և զանձինս մնացեալ. ոչ քան զամենայն գեհեն ահաւորագոյն է այն. զբեւրուք զայն այժմ լեալ: Վասնզի թէ մահ յանկարծակի կամ քաղաքաց շարժմունք և պատահմունք այնպէս շառայեն զմեր ոգիս, յորժամ զերկիր պատառեալ տեսանիցեմք և լցեալ ամենեքումբք նոքօք. յորժամ զձայն փողոցն լսիցեմք, և զաւրլաւ հրեշտակապետացն՝ քան զամենայն փող հնչական աղաղակեալ, յորժամ զերկինս գալարեալ և զամենեցունց թագաւորն մօտ եկեալ տեսանիցեմք. որպիսի ինչ մեր ոգիքն լինիցին. Օ հարհուրեսցուք աղաչեմ և երկիցուք,

1 Յօրինակին զմտաւորն. կամ ըստ յանձին:

որպէս թէ արդէն իսկ լեալ իցէ իրքն. Մ՛ի յերկարու-
թեանն ժամանակին զանձինս մխիթարիցեմք. յորժամ
արդարև լինելոց իցէ, ոչ ինչ 'ի յերկարելոյն օգտիցի.
Ո՛րչափ զօրութիւն յայնժամ, որչափ երկիւղ անդ լինիցի.
գիտէք իսկ զայնոսիկ որ 'ի մահն տանիցին, որպիսի զօ-
զութիւն զգուշութիւն նոցա կայցէ՝ մինչդեռ 'ի դուռն մա-
հուն զնացեալ երթիցեն. քան զորչափ մահու չիցէ այն
անհնարին: Այլ արդ զինչ կամիցիս կամ զործել կամ
կրել, եթէ հնար ինչ էր յայնպիսի միջոցի և 'ի մտախո-
ղոյ զերծանել: Այս 'ի բազմաց իսկ լուայ, որք արդարև
մարդասիրութեամբն՝ յետ 'ի մահ տանելոյ անզղջեն կա-
չեցան, թէ և զմարդիկ անգամ չճանաչէին. զի այն-
պիսի խռովեալ և ալեկեալ և զարհուրեալ միտքն էին.
Եթէ մարմնաւոր մահու այնպէս զարհուրեցուցանէ
զմեզ, յորժամ յաւիտենից մահն զայցէ, զինչ կրես-
ցուք: Այլ զինչ առնիցեմ վասն այնոցիկ զորս 'ի մահն
տանիցեն. ապաքէն յոյժ շուրջ կուտեալ կայցէ, յորոց
և բազումք իսկ ճանաչիցեն իսկ ոչ զնա, և եթէ շուրջ
յաղթիչն նոցա որք դիտել հայէր, ոչ այնպէս որք անպա-
րոյն և անզութ և ոչ ժուժկալ՝ որ ոչ բերկանէր յայն-
պիսի տագնապէ և 'ի տրտմութենէ. և եթէ յայլոց
զայս մեռանել՝ որ ոչ ինչ է ընդդէմ 'ի քեզ, որ չիցեն
ինչ նոցա հաղորդք՝ այնպէս հալին, յորժամ մեք իսկ
անձամբ ընդ մեծամեծ պատժօք անկանիցիմք, զինչ ինչ
մխիթարութիւն կայցէ. չիք ինչ և չէ հնար, հաւատա-
ցէք, բանիւք յանդիման զաղէտսն կացուցանել:

Այո, ասեն. այլ մարդասէր է ա͞ծ, և չլինիցի ինչ
այնպիսի: Եթէ այնպէս իցէ, ապա 'ի զուր գրեալ է:
Ոչ, ասեն, այլ սպառնալիք միայն՝ զի զգաստասցուք: Իսկ
եթէ չզգաստասցուք, և անդէն 'ի չարիսն կայցեմք, չա-
ծիցէ՞ տանջանս, ասա ինձ. եթէ այնպէս իցէ, և ոչ բա-
րեացն փոխարէն հատուցմանն տայցէ: Այլ, ասեն, այն
վայել է իսկ նմա, և տալ եւս քան զարժանն բարի
առնել. որպէս զի թէ այն ճշմարիտ է, և արդարև լի-
նիցի. և տանջանացն ոչ արդար, այլ վասն սպառնա-
լեաց և երկիւղի իցէ: Այլ արդ ասասցէ՞ հաւանեցուցից
զձեզ՝ ոչ գիտեմ. զինչ ասացից՝ թէ "Որդն նոցա ոչ
վախճանի, և հուրն ոչ շիջանի", թէ զինչ որ ասա-
ցէ՝ թէ "Երթիցեն 'ի հուրն յաւիտենից": Եթէ զմա-

ծառայինն անձեալ կացուցից առաջի, և տակաւին սովո-ցէք թէ վասն սպասաւորաց ասացեալ է. և արդ ու-ստի հաւանեցուցից զձեզ։ Սատանայի միտք են այդ. անօգուտ շնորհ շնորհեալ, որ անձնականն ծոյլս կացզէ. և արդ ուստի բառնայցեմք զայն 'ի միջոյ. որչափ և սովո-ցեմք 'ի գրոց, ասէք՝ վասն սպասաւորաց է։

Այլ զայլոց զհանդերձեալոյն թերևս մարթիցէ ոք ա-սել, այլ զանցեալոյն և 'ի գլուխ ելելոյն ոչ ևս։ Լուա-րուք զՋրհեղեղէն. միթէ և այն վասն սպասաւորեա՞ց ինչ ասացաւ, և չեղե՞ և չե՞լ 'ի գլուխ. և նոքա բազում ինչ սպզզալխս ասէին. և զհարիւր ամ 'ի հանդերձել տա-պանին և 'ի կցել փայտիցն և 'ի բաղխել արդարոյն՝ չէր ոք որ հաւատայր. և չհաւատալին բանիցն սպասաւո-րաց, կրեցին արդեամբք պատիժս. զնոյն և մեք կրե-լոց եմք, եթէ չհաւատայցեմք։ Նմին իրի իսկ զգալու-ստն իւր Նոյի աւուրցն նմանեցուցանէ. քանզի որպէս այնժամ Ջրհեղեղի չհաւատացին ոմանք, նոյնպէս և ոչ այժմ հեղեղի գեհենին։ Միթէ այն սպասաւորք էին, ո՞չ ապաքէն արդիւնք իսկ եղեն. որ յայնժամ զյան-կարծակի պատիժս ած 'ի վերայ, ո՞չ առաւել և այժմ ածիցէ. քանզի ոչ ինչ նուազագոյն գործ քան զայն՝ այժմ առս գործին. որպէս զի յայնժամ ասէ. "Մտ-ին որդիքն Այ առ դստերս մարդկան". և 'ի խառնա-կութիւնս միայն էին անօրէնութիւնք. իսկ այժմ ա-հաւասիկ ամենայն կերպարանք չարեաց են, որ ամե-նևին յանդգնութիւն է։

Հաւատայցէք արդեօք՝ եթէ եղև Ջրհեղեղ, եթէ առանցելոց ինչ բանք թուիցին ձեզ. և սակայն լերինքն յորս տապանն զադարեաց՝ վկայեն, զՀայոց լերանցն ասեմ։ Այլ ևս յաճախութեամբք՝ և յայլ ևս քան 'ի նոյն՝ յայտնագոյն ածից բանս. Երթեալ ուրեք իցէ ձեր 'ի պաղեստինացւոց աշխարհն. այսուհետև ոչ ևս բանս, այլ արդիւնս իսկ ասեմ. թէպէտ առաջինքն քան զարդիւնքն յայտնագոյնք են, զի զոր գիրք ասեն՝ և քան զաչաց տեսիլ հաւատարմագոյնք են։ Երթեալ ուրեք իցէ ձեր 'ի պաղեստինացւոց աշխարհն, զինչ ոք 'ի ձէնջ վկայեսցէ ինձ, որոց զանեցեալն իսկ տեսեալ իցէ. քան զՍոդոմն և քան զԳոմոր 'ի վերոյ, անդ իսկ 'ի սպա-ռուածի Յորդանանու գետոյ՝ վայրքն ինչ բազում են և

ամենայնիւքը. մանաւանդ թէ եւս, քանզի այժմ ոչ և նոյնպէս, որ երբեմն իբրեւ զզօրական ա̃յ էին. «Լցաւ, ասէ, Պօղոս զամենայն կողմանս Յորդանանու՝ զի էին յաւելի իբրեւ զզօրական ա̃յ»։ և արդ որ այնպէս ծաղ-կալից և ամենաշատ վայրքն էին, հակառակեալ ընդ ա-մենայն աշխարհի, և ժամանեցին քաղթեանց զզօրականն ա̃յ, քան զամենայն անապատ անապատագոյն է այժմ։ Կան ծառք և պտուղ ունին, և պտուղն բարկութեան ա̃յ յիշատակիչ է. կան նռնենիք, և զխնձորենին իսկ ա-սացից, և պտուղն գեղեցիկ իսկ երեւի՝ 'ի վերոյ, և զան-տեղեակսն բաղում յուսով լի առնէ. իսկ յորժամ 'ի ձեռն առեալ հատանիցէ, պտուղ ամենեւին ինչ ոչ է, բայց մոխիր և փոշի շատ ցուցանէ 'ի ներքս ամփոփեալ. այնպիսի է և երկիրն ամենայն։ Եթէ քար ատանի-ցես, մոխրեալ գտանես. և զինչ զքարէ և զփայտէ և զհողոյ, որ զի և օդքն և ջուրքն զնոյն հարուածս կրե-ցին։ Որպէս մարմնոյ ինչ այրեցելոյ զկերպարանսն և զնշմարանսն տեսանիցեն 'ի հուր, և զհասակն և զձեւսն, և զօրութիւն ինչ ոչ, նոյնպէս և անդ զերկիրն է տե-սանել. բայց չունի ինչ զերկրի, այլ ամենեւին մոխիր. ծառս և պտուղս, այլ ոչ ինչ զծառոյ և զպտղոյ. օդս և ջուրս, այլ ոչ ինչ զջրոյ և զօդոյ. քանզի և այն ապակա-նացեալ։ Որպէս և զխառն իսկ երբեք այրեցելոն օդքն կամ զխառն ջուրքն, և ջուրն մեռանէ. փայտի և քարի մարթ է այրել, բայց օդոյ և ջրոյ չէ երբեք հնար։ Մեզ չէ հնար, այլ արարչին հնարաւոր է։ Այսուհետեւ ոչ այլ ինչ է, թէ ոչ հնոց՝ օդն, և հնոց՝ ջուրն. ամենայն անապատ, բնաւ անծին, բոլոր 'ի պատիժս պատուհա-սից, կանգուն բարկութեանն պատկերք, հանդերձե-լոցն նշանակք. միթէ և այն բանից սպառնալիք իցեն. միթէ և այն խօսից ինչ վճիռք իցեն։

Եւ ոչ տեսանեմքն անհաւատք են, այլ նոյնպէս լուա երեւելեացն և աներեւութիցն հաւատարիք. նա և ան-հաւատիցն բաւական են այնպիսի գործքդ առ հաւատս։ Ո՞վ չհաւատայցէ ոք գեհեննին, զՍոդոմ զմտաւ ածի-ցէ, զՆոյեան յիշեսցէ, զանցեալ պատուհասն, որ և առ-ջեւն իսկ են. և այն մշտնջենաւոր լինելոյ ատենակալացն նշանակ է։ Ահագին ինչ են բանքս. և այսք չիցեն ա-հագին՝ յորժամ ասիցեն, թէ չիք գեհեն, այլ թէ վայ-

բարբառ սպառնացաւ ինձ։ Յորժամ զձեռս ժողովրդեանն լքանիցես, դու ստիպես զիս ասել՝ որ չհաւատայ. դու ածեր զիս յայսպիսի բանս. եթէ քո՝ բանիցն Մովսէսուի հաւատացեալ էր, ոչ լինէր ինձ հարկ յորդեանցն կուտել հաւատս. և զի յայտնանէ փախուստ, կամաւորաւ և ակամայ հաւանեցից։ Այսուհետև զինչ կայ քո ասել զառաջադիցուածս։

Արժան է զպատճառսն ուսանել վասն որոյ եղև երբեմն այն ամենայն։ Զի՞նչ մեղք անհնարինք և անփոյթից, բայց ընդ մանկտոյ շնաճելին, և վասն այնորիկ եղաւն զանհնարինն վրէժն։ Բայց այժմ բարդումն ինչ հանդոյն այնմիկ, և են անհնարինս քան զնոյն լինին 'ի սոսա մեղք։ Որ վասն միոյ մեղաց այնչափ եհեղ զբարկութիւնն, մինչև ոչ Աբրահամու աղաչանացն անսէր և բեռս, և ոչ Մովսէսի՝ որ ընդ նոսա կեայր, և վասն պատուելոյ զծառայս նորա՝ զշատերս իւր տայր պարտաւորի 'ի թշնամանս, ուր այնչափ մեղս գործիցի, խնայիցէ։ Զաղու իսկ բանք են արդարև սառնցելոց, և մոլորութիւն և խաբէութիւն և սատանայական։

Արժան զի միւս ևս օրինակ 'ի մէջ բերից։ Լուեալ իցէ զՓարաւոնէ զեգիպտացւոց թագաւորէն. թէ որպէս իցէ, գիտես զվրէժն զոր ետ. զիա՞րդ փոսս կառօք և երիվարօք համայերձ ամենայն զօրօքն ընկղմեաց 'ի ծով կարմիր։ Արժա՞ն է այլ ինչ ուսանել. թերևս նա անբարիշտ էր, մանաւանդ թէ ոչ թերևս, այլ արդարև իսկ անբարիշտ. կամիս և 'ի հաւատացելոց և 'ի մեր անկենդրաց՝ որոց վարք չէին ուղիղ՝ տեսանել պատժեալս. լուր Պաւղոսի. "Մի պոռնկեսցուք, ասէ, որպէս ոմանք 'ի նոցանէ պոռնկեցան, և անկան 'ի միում աւուր քսան և երեք հազարք. և մի տրտնջեսցուք, որպէս ոմանք 'ի նոցանէ տրտնջեցին, և կորեան 'ի սատակչէն. և մի փորձեսցուք զՔրիստոս, որպէս ոմանք 'ի նոցանէ փորձեցին, և յօձից անտի սատակեցան"։

Արդ եթէ պոռնկութիւն այնչափ աղէտս գործեաց և տրտմունջ, իսկ մեր չարիքս որպիսի ինչ գործս ոչ գործիցեն։ Իսկ եթէ չտայցեն այժմէն վրէժս, ընդ այն ինչ մի զարմանար. զի նոքա ոչ գիտէին զգեհեն, վասն այնորիկ անդէն առ ոտս ընդունէին զպատիժս. դու որչափ և յանցանիցես, թէպէտ և ընդ միոյ իրիք-չտայցես

վրէժս, ըստ ամենայնի առաւելոց եւ անդ: Ողղայա-բարոյն՝ որք ոչ այնչափ ինչ յանցանս յանցեան՝ այնպիսի տանջեսցին, եւ 'ի մեղ խնայեսցէ. այլ չէ ինչ 'ի դէպ, այս. Թէպէտ եւ զնոյն մեղս զնոցայն մեղանչեմք, մեծամեծ տանջանաց քան զնոսա արժանի եմք: Մինչ է՞ր. զի 'ի բազում շնորհս իւրն վայելեալ, յորժամ աւելի եւս եւ մեծամեծ քան զնոցայն յանցանիցեմք, որպիսի՞ ինչ պատուհաս ոչ կրիցեմք:

Այս մի որ զիս համարիցի՝ թէ մեծարանս ինչ զնելով եւ նեղելով նոցա՝ առիցեմ զայս. քաւ լիցի. յորժամ մեծ պատուհիցէ, որ հակառակ այնմ բերիցէ վճիռ՝ 'ի տառապանաւորական մնալոց առնիցէ զայն: Եւ այսուհետեւ զամենայն ինչ զնոսա կամ նեղելով առնեմ զայս, այլ հայեցեալ 'ի մեր չարիս. նոքա թէպէտ եւ տանջեցին, այլ ըստ անապատն շրջէին. իսկ մեք 'ի մերում աշխարհի եմք եւ 'ի մեր տունս, եւ տանջեմք. նոքա թէպէտ եւ պատանեցան, այլ յեզխայառական չարեացն այն ինչ հեռացեալ էին, եւ զրեթէ չեւ եւս էր լուեալ այսպիսի օրէնս. իսկ մեք 'ի նախնեացն զփրկութեան վարդապետութիւնն ընկալաք. ապա ուրեմն մեծաց պատժոց պատժապարտ եմք:

Կամիս եւ այլ եւս ինչ լսել. որչափ ինչ մինչեւ 'ի պաղեստինացւոց աշխարհին կրեցին. սով, սուր, պատերազմունս, գերութիւն 'ի բաբելացւոցն, յասորեստանեացն, 'ի մակեդոնացւոց, անհնարին չարիս 'ի Ադրիանոսէ, 'ի Վեսպասիանոսէ: Կամիմ քեզ, սիրելի՛, եւ այլ եւս ինչ պատմել. այլ մի ինչ առակացեալ 'ի բաց մերժեսցես. մանաւանդ թէ յաւելի քան զայս այլ ինչ ասացից: Սով եղեւ երբեմն 'ի քաղաքի, եւ թագաւորն ելեալ շրջէր 'ի վերայ պարսպացն. եւ մատուցեալ կին մի՝ այսպիսի ինչ բանս խանդաղատանաց խօսէր. "Ա՛րքայ, ասէ, կինս այս ասաց ցիս, թէ խորովեսցուք զասոր զքո որդիդ եւ կերիցուք, եւ վաղիւն զիմն. խորովեցաք եւ կերաք, եւ զիւրն ոչ կամեցաւ տալ". զինչ քան զայս մինչ անհնարին կայր: Պատմեալ այլուր մարգարէն ասէ, եթէ "Ձեռք կանանց ողորմածաց եփեցին զմանկունս իւրեանց": Հրէայքն այնչափ վրէժս ետուն, եւ մեք առաւել եւս ո՞չ տայցեմք: Կամիս եւ զայլոյ եւս չարեաց նոցա ուսանել՝ ըստ Յովսեպայ գրոցն անդ, եւ անտի ուսանիս զամենայն աղէտս նոցա:

Digitized by Google

Այլ արդ հաւանեցուցանք արդեօք զձեզ յայսմ ամենայնէ՝ զոր գեհեն։ Ո՛չ մնաւ ամ, զի թէ նոքա տանջեցան, մեք ընդէ՞ր չպատժիցիմք, կամ զիա՞րդ չիցէ 'ի դէպ մեզ պատժել որ սաստիկ քան զնոցա յանցանս յանցանեմք. եթէ յայտ իսկ է, վասն զի պահեալ կան մեզ պատիժքն. և եթէ կամիս՝ և իւրաքանչիւր ես 'ի դէմս տարեալ զգանս՝ տեսցես, թէ զիարդ տանջեսցան։

Ապան զեղբայրն Աբէլ. անհնարին մեղք էին. և տակայն եւս վրէժս, և անհնարին վրէժս, և արժանի բազում մահուց. վասն որոյ բազում անգամ յանձին ունէր մեռանել։ Լուր նմին իսկ. «Եթէ հանեցես զիս այսօր, յերկրէ, և յերեսաց քոց թաքեայց, եղիցի ամենայն որ գտանիցէ զիս սպանանիցէ»։ Այլ արդ ասէ ասա, ո՞չ զնոյն իսկ գործս զնորայն գործեմն և այժմ եւս բազումք. յորժամ ոչ զմարմինս՝ այլ զհոգիս եղբարս սպանանիցես, ո՞չ ապաքէն զնոյն գործ գործեցեր։ Այլ այն զի՞ ասնէ՝ եթէ ոչ արդ, այլ այլովք օրինակօք. յորժամ կարող ես փարատել զոմն, և անտես առնիցես։ Իսկ չնախանձեցաւ ոք այժմ ընդ եղբօր, և չո՞րկ ոք զընկերն 'ի վիշտս. այլ չեւտուն սաստէն վրէժս, սակայն տալոց են անդ։ Որ ոչ օրինաց ինչ գրոց լուաւ և ոչ մարգարէից, որ ոչ նշանս ինչ ետես մեծամեծս՝ այնչափ կրեաց պատիժս. որ յետոյ զնոյն գործեաց, և ոչ այնպիսի օրինակօք զգաստացաւ, տանից պատժո՞ց լինիցի. և ո՞ւր իցէ ոչ իրաւունքն, և կամ ո՞ւր բարութիւն։

Դարձեալ փայտ ոմն քաղեաց 'ի շաբաթու, և քարկոծեցաւ. թէպէտ և փոքր ինչ պատուիրան էր, և քան զթլփատութիւնն յաւեգոյն. որ զփայտն քաղեաց 'ի շաբաթու և քարկոծեցաւ, որք բազում չարիս բազում անգամ գործեցին՝ տանից պատժո՞ց երթայցեն։ Եթէ գեհեն չիցէ, ո՞ւր արդարութիւն իցէ, ո՞ւր անաչառութիւն[1]. թէպէտ և բազում ինչ այսպիսի մեղադիր լինինացս, թէ զշաբաթս ոչ պահէին։ Դարձեալ այլ ոմն Աքարմի անուն՝ գողացաւ 'ի նզովից, և ամենայն ազգաւն հանդերձ քարկոծեցաւ. և արդ զիա՞րդ. չեղե՞ առաջնորդութեան յայնմ հեւաէ։ Դարձեալ Սաւուղ իշխանեաց՝ ո՞չ կամացն արտաքսք, այնչափ պատիժս կրեաց.

1 Օրինակին անպատմելին։

իսկ այլ որ ոչ խնայեաց արդեօք յայնմ հետէ։ Նշանակ թէ այն միայն էր. ոչ ապաքէն քան զգաղափարն՝ զմիմեանս առաւել ուսեալք արտաքոյ նոյ կամակցին, և ընդհանուր որ ՚ի պատուերացդն։

Պատժեալ որդիքն Հեղեայ, զի յառաջ քան զպատարագն մատուցանել՝ առնէին ՚ի պատարագացն, և անհնարին վրէժս ետուն համանդերձ հարբն. իսկ չեղե՞ ոք ծայլ, ոչ հայր առ որդիս, և ոչ որդիք առհնազանդք. այլ չետուն վրէժս. և արդ էր ասիցեն՝ թէ գեհեն չի-ցէ։ Պատժեալ և այլ ևս ինչ բազում զատանէ որ ասել. Անանիա և Սափիրա՝ քանզի զողացան յորոց նուիրե-ցին, աստուածային պատժեցան. ոչ որ արդեօք յայնմ հետէ զնոյն գործ գործեցին. ընդէ՞ր ոչ ետուն զնոյն վրէժ։

Հաւանեցուցի՞ք արդեօք զձեզ՝ եթէ գոյ գեհեն, թէ բազում և այլ ևս օրինակաց պէտք իցեն. թէ այնպէս իցէ՝ յանդիր եկեսցուք, որ այժմ իսկ յաշխարհիս լի-նին. զի հարկ է մեզ յամենայն կողմանց զայն միտս ժողովել, զի մի ՚ի զուր ինչ անձանց շնորհել՝ առնիցեմք միտս անձանց։ Զմտանանիցե՞ս զբազումս ՚ի վերջոյ՝ հաշմ մարմնով բազում վիշտս կրեալ, և զայլս ՚ի դիւրութե. ընդէ՞ր ոմանք ընդ պատուհասիւ եղեն վրէժս, և ո-մանք չեղեան. լուր Պաւղոսի՝ որ ասէ, թէ "Ոմանց մեղքն յառաջագոյն երևին, և ոմանց զհետ"․ ապա սպառնալիք զերծան, քանզի զերկրաւորականքն. այլ ՚ի բաց թողցուք զայն ամենայն։ Ո՞ քանզի տեսանիցես տանջեալս անհնարին տանջանօք. ոմանք երկայն ցաւօք մաշեցան, ոմանք հանապազորդ տանջեցան, և ոմանք բազում այլոց ինչ տանջանաց։ Արդ յորժամ զձեզ տեսանիցես ժպրհեալ՝ և թերևս ՚ի բազումս՝ և պա-տիժս ինչ ոչ կրեալս, ոչ ապաքէն և ակամայ իսկ անդ տանիցիս զգեհենն։

Ասա ինձ զնոսա՝ որ ասեն յանհնարին տան-ջանսն տանջեցան, և ծանիցես թէ ած անիրաւ չէ. և զի դու բազում չարիս գործեցեր՝ և այնպէս ինչ ոչ կրե-ցեր, ունիցիս ՚ի մտի զգեհենն. զի այնպէս սերմանեաց ՚ի մեզ զնա ած, որպէս զի ոչ ումեք անփոյթ լինել. քանզի զի և վիպագիրք և փիլիսոփայք և որ զառասպելսն գրե-ցին, և ամենայն իսկ մարդիկ առ հասարակ՝ վասն անօր

հատուցմանցն ճշմարտապաշտութեանն, և յաղագս 'ի դժոխս պատժելոց բազմաց ճառեցին. և եթէ այն տառապեալք լիցին, այլ ոչ եթէ որ 'ի միջի մերում իցէ պատմե-ցան։ Նոյն զայն ոչ եթէ վայրապար առ ահ ինչ արկա-նելոյ[1] կամեցան ասել, և ոչ ծանրատաղտուկ բեռինս 'ի վերայ մերոյ ուսուցս կուտել յօժարեցին, այլ առ 'ի ցածուցանել և թեթևագոյնս յարդարել։

Նա և ես իսկ յաճախագոյնս ըստ այն կամիցի՝ թէ չէին տանջանք. և մանաւանդ առաւել քան զամենե-սին ես։ Ասէիր։ Ո՞ր 'ի ձեռն վասն իւրաքանչիւր ոգւոց որք միայն կասկածիցէ, և ես ըստ ամենեցուն վերակա-ցութեան համարս տալոց եմ. որպէս զի առաւել քան զամենեցունց՝ և ինձ անհնարին է զերծանել 'ի պատ-ժոց. այլ չէ հնար թէ չիցեն տանջանք կամ թէ չզու-ցէ գեհեն։ Նոյ արդ զի՞նչ զործեցից՝ զայն ոչ գիտեմ։ Ո՞ր իցէ, ասեն, ա՞յ մարդասիրութիւնն։ Յամենայն ժամ ասեմ, այլ առաւել 'ի միւսում ժամանակի խո-նեցայց վասն աղինն իւրոց. զի ըստ միմեանս խառնեցից ղձառս գեհեննին։ Նայց առ այժմ զոր շահեցաք՝ մի վրիպեսցի 'ի ձէնջ. քանզի մեծ շահ է համանել թէ գոյ գեհեն. այսպիսի բանից յիշատակ՝ իբրև զասատիկ ինչ դեղ զամենայն ախտսն փարատէ, մանաւանդ 'ի միտս մեր. արկցուք 'ի կիր զնա, զի սուրբ սիրտ ունիցիմք. և այնպէս արժանի եղիցուք տեսանել զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ։ Ո-րոց լիցի ամենեցուն մեզ համանել շնորհօք և մարդա-սիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխա-նութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յա-ւիտենից. ամէն։

### ՅԻՆՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

Ասա որոյ աղաչեմ զամենայն հնարս հնարեսցուք առ մի ինչ երբէք նիրհելոյ։ Չանտեսանիցէ՞ք զարտհա-պանսն. յորժամ սակաւիկ ինչ զանձինս քնոյ տայցեն, չօգտին ինչ 'ի բազում պահպանութենէն. քանզի 'ի

1 Յօրինակին առ անձն չարսանելոյ։

սակաւ ժամուն զամենայնն կորուսին. զի բազում հա-
մարձակութիւն ետուն գողոցն: Օր որինակ որպէս
մեք զգողսն չտեսանիցեմք՝ և նոքա զմեզ տեսանեն, նոյն-
պէս և սատանայ առաւել քան զամենեսին 'ի վերայ
յարուցեալ դարանակալ լինի, և կործէ զստացուածսն:

Մի այսուհետև ննջեսցուք, և մի ստասցուք՝ եթէ
այս ինչ բանք են, և այն ինչ. զի ուստի ակն չկայ՝ գող
բազում անգամ ակամն հասանէ. նոյնպէս և 'ի չարիսն,
որում ակն չկայցէ՝ այնու կործանիմք. ամենայնի հա-
սարակ դէտ ակն կալցուք: Մի արբեսցուք՝ չնիրհեմք,
մի փափկասցուք՝ և չննջեմք, մի մոլորեսցուք տրտմու-
թեանն իրօք՝ և արթնութեամբ կատարիմք. յարդարես-
ցուք զանձինս ամենայն ուրեք. որպէս որք 'ի ձգեալ
չուանացն վերայ գնայցեն, չէ հնար տակաւին մի շուշել,
և եթէ փոքր մի հեղգայցեն՝ մեծամեծ չարիք գործին.
վրիպեալ վաղվաղակի անկանիցի 'ի խոնարհ և սատա-
կիցի. նոյնպէս և մեզ չէ հնար ծուլանալ. քանզի ընդ
անձուկ ճանապարհն գնամք, քարավէժ լինիցիմք յեր-
կացունց կողմանց սպառնալեաց, ոչ զերկոսին ոտս միա-
գամայն չընդունի:

Տես որչափ հաւաստեաց պէտք են մեզ. չտեսանի-
ցե՞ս որք ընդ այնպիսի ճանապարհ գնայցեն՝ ոչ միայն
ոտիւքն զգուշանան, այլ և աչօք. և եթէ կամիցի այլ
ուրեք նայել, թէպէտ և ոտքն 'ի հաստի կայցեն, գլո-
րեալ աչքն 'ի խորոցն՝ ամենեւին 'ի վայր զաւածեալ ան-
կանիցի. այլ այնպէս պարտի զգուշանալ գնացիցն. քան-
զի ասէ իսկ. "Մի յաջ մի յահեակ": Բազում ան-
դունդք են չարեացն, մեծամեծ քարանձաւք. բազում
խաւար 'ի ներքոյ անձուկ ճանապարհին. զգուշասցուք,
ահիւ գնասցուք և դողութեամբ. ոչ որ յայն ճանա-
պարհ անկեալ՝ և մեղկի անկանի 'ի ծաղու է, և ոչ ծան-
րանայ արբեցութեամբ. զուարթութեամբ և անօթի
գնայ ընդ այն ճանապարհն:

Ոչ որք յուղղի անկեալ՝ և բառնայ ինչ ընդ իւր յա-
ւելորդացն. պարտ և պատշաճ է պնդակազմ լինել, զի
կարող լինիցին ընթանալ անցանել: Ոչ որք պարուանդէ
զիւր ոտս, այլ արձակս ժողովի գնալ. և բազում հո-
գովք կապեսցէ զանձինս, և բիւրապատիկ բեռինս երկ-
րաւոր բարձեալ կրեմք, մեղկեալք լքեալք, և զինչ

ակն ունիցիմք ընդ անձուկ ճանապարհ գնալ։ Եւ վար-դապետն ինչ ասաց՝ թէ անձուկ է, այլ զարմանալով. «Քանի՛ անձուկ է, ասէ, ճանապարհն»։ այսինքն ե-թէ յոյժ անձուկ, զի եւ մեք ընդ կարի ինչ զարմանա-լիս զնոյն ասեմք։ «Նեղ է, ասէ, ճանապարհն որ տա-նի ՚ի կեանսն»։ Եւ բարւոք ասաց. յորժամ ընդ բանից եւ ընդ խորհրդոց եւ ընդ գործոց եւ ընդ ամենայնի պա-տիցիմք պատրիժս կրել, արդարեւ անձուկ է. եւ առաւել անձկագոյն զնա մեզ գործեմք, յորժամ լայնեցեմք զան-ձինս եւ ընդարձակիցեմք, եւ զայս առ անդ մեծամեծս ընկենուցումք։ Անձուկն ամենայնի դժուարին է, բայց առաւել գիրացելոյն եւ ամբքացելոյն. որպէս զի որ զանձն մաշիցէ՝ ոչ ինչ դժայ զանձկութիւնն, եւ որ սովորն իցէ նեղութեան՝ չտառապեսցի ինչ ընդ ճնշելն։

Մի՛ ոք այսուհետեւ հանգստեանն ակն ունիցի զեր-կինս տեսանել, քանզի չէ հնար. մի ոք հանդերձ փափ-կութեամբ վստահ լինիցի ընդ անձուկ ճանապարհն գնալ, քանզի չէ մարթ. մի ոք ընդարձակաւուն ունիցի ակն կենաց. յորժամ տեսանիցես բազանիս, նեղեան ա-մենայնից, սպասաւորս, եւ յայլ եւս բազմապատիկ փափ-կութեան զոք, մի եղուկ զանձն համարիցիս՝ թէ չվայե-լիցես յախտակիսի ինչ, այլ յոգւոց հանիցես ընդ նորա, զի ընդ կորստական ճանապարհն գնայ։ Ոչինչ շահ յայնմ ճանապարհէ իցէ, յորժամ ՚ի նեղութիւնն վախճանի-ցէ. ո՛ր զնաս յանձկոյն, յորժամ ՚ի հանգիստն տանիցին։

Բայց աղէ եկ տես դու ցիս, թէ յարքունիս ոք կո-չեցեալ էր ընդ նեղ եւ ընդ խորաձորս երթալ, եւ միւսն ՚ի մահ ձգեալ ընդ մէջ հրապարակաց, ո՞ւմ երանի տայաք, կամ վասն ո՞յր յոգւոց հանէաք. ո՞չ ապաքէն վասն այնորիկ որ ընդ արձակն գնայր. նոյնպէս եւ այժմ մի բարեկեցացն երանի տացուք, այլ վշտահանացն. զի սոքա յերկինս փութան, եւ նոքա ՚ի գեհեն։ Մերթեւս բազումք ՚ի նոցանէ եւ ծաղր եւս առնիցեն զլալսն. եւ եւս վասն այնորիկ առաւել եւս աշխարեմ եւ ողբամ ըզ-նոսա, զի չգիտեն ընդ որ ծիծաղել պարտ իցէ, եւ վասն որոյ սուգ առնուլ. այլ զամենայն ընդ միմեանս խառ-նեալ խռովեն եւ աղմկեն. վասն այնորիկ իսկ աշխարեմ զնոսա։

Ոչինչ խօսիս, այր դու. յանմեղոց ես եւ հանգիստս

տալոց ընդ ամենայն գործոց զոր գործեցեր, և անհնարին վրէժս հատուցանիցես. ընդ այնր չաւնիս ինչ փոյթ յանձին, այլ շուայտեալ ևեթ և զարբեցեալ անձև զմըտաւ, և առ այն մեծամեծ ծիծաղիս: Նայլ ես զքեզ ողբամ. զի զպարիսն որ պահիցինն քեզ՝ գիտեմ, և ըզպատիժսն որ ընդունիցիսն. և վասն այդորիկ տաւեալ աշխարեմ: Օ՜ն ծիծաղիս, սուգ առ հանդերձ ինև, և աշխարեա ընդ իս զքո չարիսն:

Բայց ասէ եկ տես, թէ յիշատակեալ ոք քոյ կորընչէր, ո՞չ ապաքէն զայնուիկ որ ծիծաղէինն 'ի վշտին՝ առնէր և թշնամի համարէիր, և որք արտասուէինն և վշտակից լինէին՝ բարեկամս: Դարձեալ թէ և կին մեռեալ առաջի կայր, զայն որ ծիծաղէրն՝ նախատէիր. ոգիդ մեռեալ կայ առաջի, և զիս որ արտասուեմ՝ թըշնամի համարիս, և դու ծիծաղիս: Տեսանես զիարդ արար զմեզ միմեանց թշնամիս և պատերազմողս սատանայ:

Սթափեսցուք գեթ երբէք, շուրջ զանձամբ հայեսցուք, արթունք եղիցուք և բուռն հարցուք զկենացն յաւիտենից. զթանձրամած քունն 'ի բաց թօթափեսցուք. զան դատաստանք, կան տանջանք, և առնի յարութիւն և խնդիրք ամենայն գործոց: Տէրն գալոց է ամպովք. հուր առաջի նորա բորբոքեսցի և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ. գետ հրեղէն գնասցէ առաջի նորա, որդն անվախճան, հուրն անշէջ, խաւար արտաքին, կըրճտումն ատամանց: Ողջախոհ և բազում անգամ զպարիցիք ընդ այս, ես առ 'ի զոյն ասելոց երբէք ոչ դադարեցից:

Ուէ մարգարէքն բարկածեալին՝ և չքեալն, մինչդեռ ես տաւեալ լաւ իցէ մեզ թշնամութիւնք, և մի 'ի ձիրս ինչ և 'ի շնորհս խօսել. զի մի յարժամ զձեզ խաբիցեմք՝ մեք ընդ մեզ կորիցիմք: Տանջանքն անմահ են անդ, տանջ մխիթարութեան, և չիք ոք որ վերակացու լինիցի: "Ո՜վ, ասէ, ողորմեսցի թոյլի օծահարի". յարժամ մեք անձամբ չողորմեցաք, ո՞վ է որ մեզ ողորմեսցի: Եթէ տեսանիցես զոք սուր առեալ և անձին անկեցէ, արգահատել երբէք կարիցես այնպիսոյն. և ոչ ուրեք. մինչդեռ ես տաւեալ յարժամ մարթի ողջիլ և չուղղեցեալ՝ ո՞վ իցէ որ մեզ արգահատիցէ, և ոչ ոք:

Digitized by Google

Ողորմեսցուք անձանց. յորժամ յաղօթս կայցեմք առ Տէր, ասասցուք՝ ողորմեաց մեզ Տէր. ասասցուք և ցան-ձինս, ողորմեա մեզ: Ո՛չ եթէ եւեթ տեսանել ողորմութիւն գտանելոյ մեզ 'ի Տեառնէ. Նա 'ի մեզ շնորհեաց զայն. Թէ արժանի ողորմութեան գործս գործեսցուք, եթէ արժանի նորա մարդասիրութեանն, ողորմի մեզ Տէր: Իսկ թէ անձանց չողորմեսցուք, ո՞վ իցէ որ մեզ արգահատեսցէ:

Ողորմեաց ընկերին, և գտանիցես ողորմութիւն յԱյ: Որչափ հանապազ մատուցեալ ասեն, ողորմեաց մեզ, և չդառնաս 'ի ձայն. քանզի մերկք, որչափ հաշիք. և չքթանք, այլ չլուելոյն անտեսեմք զպաղատանս նոցա. և զիա՞րդ լինիցիս արժանի ողորմութիւն գտանելոյ, որ չտանեաց երբէք ինչ արժանի ողորմութեան: Լինիցուք գըթածք, լիցուք ողորմածք, զի այնպիսի լիցուք հաճոյք Այ, և հանդերձելոց բարեացն վայելեաց նորա հասցուք շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ՀԱՏՈՒԱԾՔ Բ. ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑՒՈՑ

### Ի ՉՈՐՐՈՐԴ ԳԼԽԷՆ

“Եւ այժմ զոր ունին՝ գիտէք առ 'ի յայտնել նմա յիւրում ժամանակին: Զի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ, բայց յայն վայր միայն, մինչ որ ունիցին 'ի միջոյ բարձցի, զոր տէր Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ, և խափանեսցէ յայտնութեան գալստեանն իւրոյ. որոյ գալուստն ըստ ազդեցութեանն սատանայի է”: Յիրաւի ոք խնդրեսցէ եթէ զինչ է զոր ունիցին. և յետ զայն ուսանելոյն, եթէ ընդէր այնպէս անյայտս գրեաց Պաւղոս: Զինչ իցէ որ ունիցին զյայտնելն նորա, այսինքն որ արգելուցուն: Ոմանք զհոգւոյն շնորհս ասացին, և այլք զՀռոմայեցւոց իշխանութիւնն՝ որում և ես առաւել միաբանիմ: Ընդէ՞ր. զի եթէ զհոգւոյ կամէր ասել, չասէր անյայտս, այլ յայտնապէս. զի և այժմ արգելեալ ունիցի զնա շնորհք հոգւոյն: Ապա այլ ազգ եւս, պարտ էր նմա վաղ իսկ գալ, եթէ 'ի նուա-

զել չնորհացն փայլոյ էր նա, որ երբեմն նուաճեցին:
Ապա քանզի զհռոմայեցւոց իշխանութենէն ասէ, նախնա-
գոյն առակերպով և աներևոյթ ասէ. քանզի ոչ կամէր
առաւել թշնամութիւն յանձն առնուլ և անօգուտ
նեղութիւնս. Եթէ տեսցեալ էր՝ յետ սակաւ միոյ
փոխանակելոց է իշխանութիւն հռոմայեցւոց, անդէն իսկ փաղ-
փաղակի իբրև զժանտ մի թաղէին զնա կենդանւոյն և
զամենայն հաւատացեալսն, որպէս թէ յայն ինչ կեց-
ցեն և 'ի նոյն գիտաւորեալ իցեն. վասն որոյ ոչ զայս ա-
սաց, և ոչ եթէ փաղփաղակի լինելոց է, թէպէտ և միշտ
զնոյն ասէ: Ապա զինչ ասիցէ. "Յայտնել նմա, ասէ,
յիւրում ժամանակին. զի խորհուրդն անօրէնութեան
արդէն իսկ զօրանայ,,: Զայս զՆերոնէ ասէ, որպէս
թէ օրինակ էր նա՛ Նեռինն. քանզի և նա կամեցաւ հա-
մարել զանձն աստուած: Եւ բարւոք ասաց՝ թէ խոր-
հուրդն. այն իսկ է զի ոչ յայտնի իբրև զնա... Զի
թէ յառաջ քան զնորա ժամանակն գտաւ այր մի՝ որ
չէր ինչ կարի նուազագոյն քան զՆերոնն չարութեամբ,
զինչ զարմանք են եթէ և այժմ լինիցի: ... և յայս
ինչ ոչ կամեցաւ անուանել զնա. և զայն ոչ առ երկիւղի
ինչ, այլ խրատէ զմեզ մի աւելորդ թշնամութիւն յանձն
առնուլ յորժամ չիցէ որ առնիցէ ինչ: Նոյնպէս և
աստ ասէ. "Բայց յայնժամ միայն, մինչ որ ունին՝ 'ի
միջոյ բարձցի,,. այսինքն հռոմայեցւոց իշխանութիւնն յոր-
ժամ 'ի միջոյ բարձցի, յայնժամ նա եկեսցէ: Եւ յի-
րաւի իսկ. զի մինչ այսր իշխանութեանն երկիւղ 'ի վե-
րայ կայցէ, չիցէ ոք որ նմա հնազանդիցի. իսկ յորժամ
սա փոխանակեսցի, զիմեսցէ յանիշխանութիւնն, և զ-
մարդկան և զԱյ իշխանութիւնն յափշտակել մտաբե-
րեսցէ: Զոր օրինակ և որք քան զսա յառաջ էին՝ փոխա-
նակեցան թագաւորութիւնք, որպէս Մարացն 'ի բա-
բելոնացւոցն և բաբելոնացւոցն 'ի պարսկացն և Պարսիցն 'ի
մակեդոնացւոցն և մակեդոնացւոցն 'ի հռոմայեցւոցն,
նոյնպէս և այս թագաւորութիւնս 'ի Նեռինն և նա 'ի
Քրիստոսէ, և այլ ոչ ևս կացցէ. և զայս ամենայն բա-
զում յայտնութեամբ Դանիէլ ուսուցանէ:

"Եւ յայնժամ, ասէ, յայտնեսցի նա,,: Եւ զինչ
յետ այնորիկ լինիցի. մօտ է մխիթարութիւնն. "Զոր
Տէր Յիսուս, ասէ, հալածեսցէ հոգւով բերանոյ իւրոյ:

եւ խափանեսցէ յայտնութեամբ գալստեան իւրոյ. որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի,,: Որպէս հուր ընդ փայտս բորբոքեալ՝ զամենայն մանր ճճիս յառաջ քան զհասանելն բացէ 'ի բաց ապականէ եւ ծախէ, նոյնպէս եւ Քրիստոս հրամանաւ եւ գալստեամբ սատակէ . . . եւ այն ամենայն կորնչի. ցածուցանէ զխաբէութիւնն եւ զապականութիւնն: Եւ ով իցէ, "Որոյ գալուստն ըստ ազդեցութեան սատանայի է ամենայն զօրութեամբ եւ նշանօք եւ սուտ արուեստիւք,,: Զայս յառաջագոյն ասաց, զի մի պատրեսցին ոք 'ի ժամանակին դիպելոյն: Այն իսկ է, զի զամենայն զօրութիւնս ցուցանէ. բայց ոչ ճշմարիտս, այլ խաբէութի: "Եւ սուտ արուեստիւք,,. կամ զարուեստն խիստ սուտ առնէ, կամ թէ 'ի ստութիւն ածնէ: "Եւ ամենայն պատրանօք անօրէնութեան 'ի մէջ կորուսելոցն,,:

Եւ ընդէ՞ր, ասեն, թոյլ տայցէ Աստուած այսմ լինել, եւ ո՞ր աւգտութիւն այն իցէ, եւ զինչ շահ իցէ 'ի նորա գալըստեանն՝ զի յապականութիւն ազգս մարդոյ լինիցի: Մի՛ երկնչիր, սիրելի, այլ լուր սմին խաւսի՝ թէ 'ի կորուսեալսն զօրանայ, որք թէ եւ նա չգայր՝ չհաւատային: Եւ թէ զինչ շահ իցէ. զի կորուսեալքն ըմբերանեսցին: Եւ եթէ գայր նա եւ եթէ չգայր, նոքա Քրիստոսի ոչ հաւատային. եւ արդ գայ 'ի յանդիմանել զնոսա: Զի մի ասիցեն, եթէ վասն զի Աստուած կոչէր զանձն Քրիստոս, թէպէտ եւ ոչ ուրեք յայտնի ասաց. այլ ապա յետոյ եղեալքն քարոզեցին, եւ չհաւատացաք. քանզի լուաք, ասեն, թէ մի է Աստուած՝ յորմէ ամենայն. վասն այնորիկ չհաւատացաք: Արդ զայն պատճառս նոցա Նեռինն բառնայցէ. զի յորժամ գայցէ՝ ոչ ինչ աստուածութեան հրամանս տայցէ, այլ զամենայն անօրէն օրէնս. եւ 'ի սուտ նշանաց միայն հաւատարիմ լինիցի առ 'ի կարկեցուցանել զբերանս նոցա: Զի թէ Քրիստոսի չհաւատաս, որչափ եւս առաւել եւ ոչ Նեռինն պարտ է չհաւատալ: Քանզի նա ասէր՝ թէ 'ի հօրէ առաքեցայ, եւ սա զնորին հակառակն: Վասն այնորիկ եւ Քրիստոս ասէր. "Ես եկի յանուն Հօր իմոյ եւ ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք,,: Բայց նշանս առնէ, ասէ: Այո եւ առ Քրիստոսիւ բազում եւ մեծամեծ նշանք եղեն. եթէ այնպէս իցէ, ա-

տանել պարտ էր նմա հաւատալ։ Իսկ վասն սորա բազում ինչ յառաջագոյն ասացաւ՝ եթէ անօրէն, և որդի կորստեան, և գալուստ նորա ըստ սատանայի ազդեցութեանն. և վասն նորա սոցին հակառակըն՝ եթէ կենդարար է, և բազում բարութիւնս բերէ։

« Փոխանակ, ասէ, զի զսէրն ճշմարտութեան ոչ ընկալան զի ապրեսցին, վասն այնորիկ առաքեսցէ նոցա Ած զմոլորութեանն ազդեցութիւն առ 'ի հաւատալ նոցա՝ ստութեանն, զի դատապարտեսցին ամենեքեան որ ոչ հաւատացին ճշմարտութեանն, այլ հաճեցան ընդ անօրէնութիւնն »։ Զի դատապարտեսցին, ասէ, և ոչ զի տանջիցին. այլ նախ քան զայս տանջելոց էին. այլ զի դատապարտեսցին, այսինքն յահագին ատենին, զի լիցին առանց պատասխանի տալոյ որք ոչ հաւատացին ճշմարտութեանն, այլ հաճոյացան ընդ անօրէնութիւն։ Սէր ճշմարտութեան զՔրիստոս կոչէ. փոխանակ, ասէ, զի զսէրն ճշմարտութեան ոչ ընկալան. քանզի երկուք էին և վասն երկոցունցն եկն. վասն զի սիրէր ըզմարդիկ, և վասն ճշմարտութեան եկն։ Այլ հաճեցան ընդ անօրէնութիւնն. զի յապականութիւն մարդկան գալոց է՝ մերձենալ նոցա։ Զինչ ինչ ոչ գործիցէ 'ի ժամանակին. զամ գրգռիցէ, զամենայն խռովեցուցանիցէ, և հրամանօք և ահիւ. ահագին երևեսցի յամենայն կողմանց, զիշխանութիւնն 'ի գործ արկանել, զա-նազօրոյն ամբոխ, զիւր անօրէնս 'ի ձեռս առեալ։ Այլ մի զանգիտեսցես, զի 'ի կորուսեալսն անի զօրութիւն. քանզի և Եղիա գայցէ 'ի ժամանակին զգուշացուցանել զհաւատացեալսն. և զայս Քրիստոս իսկ ասէ՝ եթէ « Եղիա եկեսցէ և յարդարեսցէ զամենայն »։ և յաղագս Յոհաննու « զօրութեամբ և հոգւով Եղիայի » վասն այնորիկ է ասացեալ, զի չարար ինչ նշանս և ոչ զքանչելիս որպէս Եղիայն. և « Յոհաննէս, ասէ, նշանս ինչ ոչ արար. բայց զամենայն ինչ զոր ասաց վասն նորա՝ ճշմարիտ էր »։ Իսկ զիա՞րդ զօրութեամբ և հոգւով Եղիայի, այն իսկ՝ զի զնոյն սպասաւորութիւն առնուցու. զի որպէս սա կարապետ առաջին գալստեանն, նոյնպէս և նա կարապետ է փառաւոր և երկրորդ գալըստեան նորա։

# ՀԱՏՈՒԱԾՔ ՅԵԲՐԱՅԵՑՒՈՑ

## ՅԱՌԱՋԻՆ ՃԱՌԷՆ

Այս քանզի սրբութիւն արար զնա մեղաց մերոց, կացցուք մնացուք սուրբք. և մի ինչ կալցուք աղտ յանձինս, այլ զգեղն և զվայելչութիւնն զոր զգեցոյց մեզ՝ պահեսցուք անարատ. զի ոչ ինչ գտանիցի աղտ և խորշ, կամ թէ այլ ինչ այնպիսի: Աղտ և խորշ՝ ասելու ինչ մեղքն են, բամբասանք, թշնամանք, ստութիւնք. մանաւանդ թէ և նոքա իսկ չիցեն փոքունք, այլ կարի իսկ մեծամեծք, և այնպէս մեծամեծք, զի և յարքայութենէն երկնից կարեն վրիպեցուցանել: Որպէս և առաքել օրինակաւ: “Որ կոչէ զեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի 'ի գեհեն հրոյն”. զի եթէ որ մորոս կոչէ, որ թեթև ինչ թշնամանք թուիցին և մանկունց խօսք, իսկ որ չարաբարոյն և չարագործ և նախանձոտ կոչիցէ, և այլ բազում նախատանօք թշնամանիցէ, որպիսի ինչ ահագին տանջանաց չգտանիցի պատժապարտ:

Այլ անսացէք փոքր մի բանիցս, աղաչեմ. զի թէ որ առնիցէ միում 'ի փոքրկանց, նմա առնէ կամ չառնէ, զիարդ ոչ 'ի բարին խօսել և 'ի չարն զնոյնն առնէ. որ թշնամանէ զեղբայրն՝ զնա թշնամանէ, և որ պատուէ զեղբայրն՝ զնա պատուէ: Կրթեսցուք այսուհետև զբարին ևեթ խօսել. լուեցո զլեզու քո 'ի չարութենէ. ոչ վասն այնորիկ ետ զնա մեզ, զի չար խօսիցիմք և թշնամանիցեմք և բամբասիցեմք զմիմեանս, այլ զի զնա օրհնիցեմք, և զայն ինչ խօսիցիմք՝ որ լսողացն շնորհ տայցէն, որ ինչ 'ի շինութիւն իցէ, որ ինչ յօգուտ: Խօսեցար չար զումեքէ, զինչ օգտեցար. քամ անձին վնաս արարեր, զի զչարախօսի կործիս առեր յանձն. քանզի չէք և չէք իսկ չար, որ այնմ ևեթ մեղանչիցէ՝ որում առնէն, եթէ ոչ և զառնելին ընդ նմին զրուցիցէ: Որպիսի ինչ՝ նախանձոտին թուի՝ թէ այլում վնաս առնիցէ, և զայն ոչ գիտէ եթէ նախ ինքն յազգի 'ի մեղսն, հալեալ ծնկեալ և ամենեցուն յաչաց ելեալ. նոյնպէս և ագահն և անձնասէրն ևս աւելի բամբասի յայլոց:

Digitized by Google

Բայց կարի իսկ լաւ են փառք քան զինչս. զի զմին ոչ ոք դիւրաւ գտանէ, և զմիւսն դիւրաւ ստանայ. մանաւանդ զի մի՝ այնմ որ չունիցի՝ չլինիցի վնասակար. և միւսն՝ զայն որ ոչն ունիցի, նախատ և ծաղր կացուցանիցէ, և ամենեցուն թշնամի և ատելի առնէ. և զասկուածն նախ զանձն պատժէ, և ապա զայն՝ որում ցասնուցուն. Նոյնպէս և չարախօսն նախ զանձն յամօթ առնիցէ, և ապա զայն՝ զումէ չարն խօսիցի. և թերևս ոչ հնարեսցի ինչ 'ի չարախօսութենէն, այլ գնասցէ ամօթով. զժանտս և զաղտեղս և զարհամարհելս առնել կարծիս. և զումէ չարն խօսէր՝ զնա ևս առաւել սիրելի առնէ։ Յորժամ լսիցէ ոք զչար բանսն, և ընդ այնր վրէժ ինչ չառնուցու, այլ գովիցէ ևս և զարմանասցէ, ոչ զնա գովէ, այլ զանձն։

Եւ որպէս վաղագոյնն իսկ ասացի, թէ միշտ չարախօսութիւնք նախ չարախօսացն մեղանչիցեն. նոյնպէս և բարիք ինչ՝ զոր ընկերին կամիցի ոք առնել, նախ ըզգործելեան ուրախ առնեն. զի որ ծնանի ոք բարի ինչ կամ չար, իրաւունք են՝ զի նախ ինքն վայելիցէ. և զոր օրինակ ջուր աղի և անոյշ զամանս ջրաւորացն լնուն, և ակն աղբերն ոչ պակասէ, նոյնպէս և բարիքն և չարիքն, ուստի ելանեն՝ նախ զնոսա ուրախ առնեն կամ տրտմեցուցանեն, և ապա զայնոսիկ՝ յորս արկանիցեն. և այն՝ ասա. այլ անդ՝ ո՞ կարիցէ պատմել, որպիսի՞ բան, որպիսի՞ միտք զբարեացն և զչարեացն. չիք ոք, չէ ոք ձեռնհաս։ Ո՛ ի բարիքն և ըստ ամենայն միտս իսկ անցանեն, ոչ եթէ ըստ բանս միայն. և զչարեացն ասացեալ իսկ մերովք ամոխախ անուամբքս՝ հուր է, ասէ, անդ և խաւար և կապանք և որդն անվախճան. և ոչ այս միայն որ ասացեալս է՝ կարէ հաւատեաւ յայտ առնել, այլ ևս անհնարինք են. և եթէ կամիցիս վաղվաղակի առնուլ զհանգամանս, մտ դիր. զի եթէ հուր է, զիա՞րդ լինի խաւար։ Տեսանե՞ս՝ զի այլ ինչ անհնարին է. զի այս հուր լուսաւոր է, և այնմ չիք լոյս. և եթէ հուր իցէ, զիա՞րդ հանապազ այրիցէ. տեսանե՞ս զիարդ չար դժնդակ է քան զայս. վասն այնորիկ իսկ անշէջ կոչի։

Ի միտ առցուք, որչափ չարիք են հանապազ այրել, որչափ չարիք են միշտ 'ի խաւարի մնալ, և ցանկ անդա-

Digitized by Google

դառն հեծել, և զաստուածեան կրձնել, և չիք հնար այցե-
լու գտանել: Այլ յորժամ առատ ոք յաղքատականաց 'ի
բանտ մտանիցէ, և դժուար հատն լսել և 'ի խաւարի նըս-
տել, և ընդ մահապարտս կապեալ՝ քան զամենայն մահ
չար համարի, 'ի միտ առ. որպիսի ինչ չար այն իցէ, յոր-
ժամ ընդ ամենայն աշխարհաց մահապարտսն ապրի-
ցիմք. ոչ զոք տեսանիցեմք և ոչ ոք զմեզ տեսանիցէ.
այլ յայնչափ բազմութեան այնպէս համարիմք՝ եթէ
միայն իցեմք. զի խաւարն և մութն չտայցէ մեզ զըն-
կերսն ճանաչել, այլ միայն ինքն և եթ իցէ 'ի պատիժս. զի
եթէ խաւարն միայն տանջմամբ կարէ նեղել զոգիս մեր,
զի՞նչ գործիցեմք յորժամ խաւարն և ցաւք միանգամայն
'ի վերայ հասանիցեն, և անշէջ հրոյն աղախարշանքն:

Վասն որոյ աղաչեմ զձեզ հանապազ զմտաւ ածել,
և զբանիցս տրտմութիւն յանձին ունել. զի մի ար-
դեամբք իսկ պատիժքն 'ի վերայ հասանիցեն. քանզի
լինելոց է այս ամենայն: Այլ զայնոսիկ որ այնպիսի ինչ
տանջանաց արժանի գործիցեն, ոչ ոք կարէ ապրեցու-
ցանել, ոչ հայր, ոչ մայր և ոչ մարդ փրկեսցէ. թէ-
պէտ և բազում համարձակութիւն ունիցի առ ա՛ծ և
մեծ զօրութիւն. զի ինքն իսկ է որ հատուցանէ իւրա-
քանչիւր ըստ գործս իւր. և այժմ գոյ հնար ապրել՝
եթէ կամիմք, և 'ի տանջանս մտանել թէ հեղգայցեմք:

Այլ արդ արասցուք մեզ բարեկամս 'ի մամոնայէ ան-
տի անիրաւութեան, յորժամ տայցեմք ողորմութիւն
և գործիցեմք զբարիս: Թօթափեսցուք զինչս յաղքա-
տաց, զի թօթափեսցուք 'ի մէնջ զհուրն, և շիջցուք, և
ունիցիմք անդ համարձակութիւն. զի անդ ոչ թէ նոքա
իցեն՝ որ ընդունիցին, այլ գործքն մեր: Այլ զի ոչ վայ-
րապար այսպիսի բարեկամութիւնն կարէ զմեզ ապրե-
ցուցանել, միտ դիր յաւելուածոյն. ընդէ՞ր ոչ ասաց,
եթէ արարէք բարեկամս՝ որ ընդունիցին զձեզ յարկան
իւրեանց յաւիտենից, այլ և զօրինակն ևս յաւել, ե-
թէ 'ի մամոնայէ անտի անիրաւութեան. յայտ առնէ՝
թէ յընչիցն պարտ է առնել այնպիսի բարեկամս. զի
ցուցցէ՝ թէ ոչ վայրապար ինչ բարեկամութիւն կարէ
մեզ պաշտպան լինել, եթէ ոչ գործս բարիս ցուցա-
նիցեմք. եթէ զոր անիրաւութեամբն ժողովեցաք, ար-
դարութեամբ թօթափիցեմք:

Այլ զկամս ողորմածութեան ոչ միայն մեծատանց պատշաճ համարել, այլ և աղքատաց, և այնմիկ որ ընաւ իսկ 'ի մուրոյն եւեթ կայցէ. քանզի չիք այնպէս աղքատ, որ կարի իսկ աղքատ իցէ, եթէ երկուց դան-կաց չիշխիցէ. քանզի մարթի և 'ի սակաւէն սակաւ տալ, և անցանել զայնուիկ՝ որ բազում ինչս ունիցին և առաւելագոյն տայցեն, որպէս և կինն այրի. զի ոչ եթէ ըստ չափոյ տրոցն է, այլ ըստ զօրութեանն և ըստ կա-մաց տուողացն համարի տրոցն մեծութիւնն։

Ամենայն ուրեք կամացն պէտք են և ուղիղ մտաց և Աստուծոյ սիրոյն. և ընդ այն զինչ և գործիցեմք, եթէ շատ տայցեմք և եթէ սակաւ՝ չզարճուցանէ զերեսս Աստուած, այլ ընդունի զմեծն, և զփոքրն իբրև զմեծն. քանզի 'ի կամսն հայի, և ոչ եթէ 'ի տուրսն. զմեծա-մեծս և զփոքունս ընդ մի համար առնիցէ, և յաւի-տենից կենացն արժանաւորս արասցէ զերկոսին կող-մանսն. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-սի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

## ՑԵՐԿՐՈՐԴ ՃԱՌԻՆ

Այս արդ զայս ամենայն իմացեալ, մի ինչ ամօթ հա-մարեսցուք. և մի ամբարտաւանս ինչ խորհեսցուք. զի եթէ նա որ Ա̃ծն է և տէր և որդի Ա̃յ, չզանգիտե-ցաւ առնուլ զծառայի կերպարանս, որչափ ևս առաւել մեզ պարտ իցէ զամենայն ինչ վասն նորա առնել, թէ-պէտ և խոնարհագոյնք իցեմք։ Այլ արդ աղէ ասա ով մարդ, իւ մեծամտիցես. աշխարհիս ինչ իրօք, այլ այս ամենայն մինչև երևեալ անցանէ. իսկ հոգևո՞ր ինչ իրօք, այլ մի ինչ ուղղութիւն հոգևորացն իսկ է՝ չմե-ծամտելն։ Այլ արդ ընդէ՞ր մեծամտիցես. վասն զի ուղ-ղութիւնս ինչ արարեր. այլ լուր Քրիստոսի որ ասէ. եթէ "Յորժամ զամենայն ինչ առնիցէք, ասասջիք՝ եթէ մեք ծառայք անպիտանք եմք, որչափ ինչ պարտ էաք առնել՝ արարաք"։ Այլ աւ մեծութեան ինչ մե-

ծամտիցես. չտեսանիցես որչափ մերկք և բոկք երթան ՚ի մեռանելս. ո՞չ ապաքէն մերկք մտաք յաշխարհս, և դարձեալ մերկք գնալոց եմք։

Ո՞վ ոք որ զայլս ինչ ունիցի՝ և մեծամտիցէ. ոչ յուրեանց պէտս և եթ ունին ծախել զինչս, անկանին ՚ի նոցանէ ակամայ բազում անգամ՝ և յառաջ քան զվախճանն. այլ ՚ի վախճանին հարկ իսկ է։ Այլ մեք, ասեն, կենդանւոյն որպէս կամիմք վայելեմք. մանաւանդ թէ չիք իսկ զոք վաղվաղակի տեսանել, եթէ որպէս կամիցի՝ վայելիցէ. իսկ եթէ վայելիցէ և՛ս որպէս կամիցի, չէ ինչ այն մեծ. քանզի սակաւ ինչ են կեանք աշխարհիս առ այնչափ անվախճան յաւիտեանսն։

Մեծամտիցե՞ս, ով մարդ, վասն զի ընչաւէտ և մեծատուն իցես. զմէ՞, է՞ր վասն. զի այնպիսի ինչ իրք և աւազակաց դիպեցցին և գողոց և սպանողաց և բզացելոց և պոռնկաց և ամենայն չարագործաց։ Այլ արդ ընդէ՞ր մեծամտիցես. թէ և ՚ի բարի ինչ ծախէիր՝ չպարտէիր մեծամտել, զի մի՛ զպատուիրանն խախտիցես. արդ թէ ոչ ՚ի բարի ինչ՝ այնու իսկ չպարտիս մեծամտել. զի ծառայ եղեր ընչից և ստացուածոց, և իբրև ՚ի թակարդի հարեալ կաս ՚ի նոսա։ Այլ արդ ասէ՛ ասա, եթէ ոք ջերմնընկալ ջուր շատ ըմպիցէ, և սակաւ մի զտապն ցածուցանիցէ, և յետոյ ևս չար բորբոքիցէ զընթացն, մեծամտե՞լ ինչ պարտիցի։ Որ ՚ի բազում հոգս ընդ վայր հալիցի, մեծամտե՞լ ինչ պարտ իցէ։ Նաև զի բազում տեարս ունիցիս, և բազում հոգս, և բազում սուտակապապաս. այլ և ծառայես ևս նոցա։

Զի ունիցիս, մի՛ դիր հաստատեաւ. այլ ևս կարիքն որ ՚ի մեզ կան, է որք զի օգուտ են. որպէս զցասումն իսկ բազում անգամ յօգուտ լինիցի. «Ցասումն, ասէ, տարապարտուց ոչ քաւեսցի». որպէս զի թէ իցէ և յիրաւի ցասնուլ. և դարձեալ թէ «Որ բարկանայ եղբօր իւրում, և ոչ լոկ ասէ, այլ եթէ վայրապար, պարտաւոր լիցի ՚ի գեհեննին». Որպէս նախանձն և ցանկութիւնն, զի մին վասն որդիս առնելոյ տնկեալ է ՚ի մեզ, և միւս՝ վասն բարեաց նախանձաւոր լինելոյ. որպէս և Պաւղոս ասէ, եթէ «Բարիոք է նախանձել ՚ի բարիս յամենայն ժամ». և դարձեալ եթէ «Նախանձաւորք լերուք շնորհացն՝ որ լաւագոյն իցէ». և

երկրպագեն 'ի լաւ և յօգուտ են. Իսկ հարստութիւնն և ոչ ուրեք բարի. այլ ամենայն ուրեք անօգուտ և վնասակար: Նայց եթէ այնպէս ինչ պարտ իցէ, աղքատութեանցն 'ի դէպ մեծանալ՝ քան մեծութեանցն. զի որ սակաւուն կարիցէ կեալ՝ քան զայն որ ոչ բազմաւն՝ կարի մեծ և լաւ է:

Նու արդ ասէ սուս, եթէ յանկարծ կոչ լինիցի 'ի քաղաք ուրեք աղքատի, որք ոչ դրամոսու ինչ կարօտ լինիցին, ոչ պատանեաց, ոչ կօշկաց, և ոչ այլ ինչ կահի և կազմածոյ, այլ զհացիկն միայն և զջուր յաղբերացն բաւական համարիցին, և այդքն ասիցեն՝ եթէ ոչ կասս կազմիցեք, և ոչ կակուղ անկողինս պատրաստիցեք, չկարեմք երթալ; եթէ ոչ բազում սպասաւորս ունիցիմք, և սեղան համբերել համանիցէ, և նուշք ևս, և կարծ օթեվանս, և այլ ինչ բազում պէտս, չկարեմք երթալ. և ընդ ո՞ արժան է զարմանալ, ընդ նոսա՞ թէ ընդ սոսա. յայտ է թէ ընդ սոսա, որք ոչ ինչ իւիք ումեք բաւան լինիցին: Նոյնպէս և յաշխարհիս Ճանապարհի սմանց բազում պէտք են, և սմանց չափ ինչ. որպէս զի աղքատութեանցն՝ եթէ պարտ ինչ էր՝ 'ի դէպ էր մեծանալ:

Այլ չցրէ ինչ, ասեն, աղքատն: Ոչ եթէ աղքատն քամահելի ինչ իցէ, այլ նոքա՝ որ քամահիցենն. և ես ընդէ՞ր չքամահիցեմ զայնոսիկ, որք ոչ գիտիցենն զարմանալ ընդ որ ինչ պարտ է զարմանալ. այլ թէ և նըկարիչ ոք իցէ, զամենեսին որ պարապիցենն՝ ծաղր առնիցէն, որ դեռ թերուսքն իցեն. և չկասէ ինչ նոցա բանիւքն. քանզի բաւական համարի զիւրոց մտացն վկայութիւն: Նու մեք զառ 'ի բազմաց փառս յանձինս կարգիցեմք. վասն այնորիկ լինիմք արժանի քամահելոյ, յորժամ զքամահիչսն մեր՝ որ վասն աղքատութեանն քամահիցեն, չքամահիցեմք. և ոչ զանձինս ինչ եղուկս վասն նոցա քամահանացն համարիցիմք:

Նու արդ սկսայց թուել որչափ մեղք 'ի մեծութենէն ծնանին, և որչափ բարիք յաղքատութենէն. մանաւանդ թէ ոչ մեծութիւնն իսկ և ոչ աղքատութիւնն առանձինն բարի ինչ իցեն կամ չար, այլ նոքօք՝ որ ընդ նոսայն 'ի գործ արկանիցեն՝ լինին բարի կամ չար: Օ ի քրիստոնէայն յաղքատութեանն առաւել պայծառա-

նայ քան 'ի մեծութեան։ Ո՛չ է զիարդ. չքննիցի[1] ամ-բարտաւան, այլ հեզ, պարկեշտ, հանդարտ, խոնա-տուն. իսկ որ 'ի մեծութեանն է, բազում ինչ խափա-նիչս ունիցի այնպիսի իրաց։ Այլ արդ տեսցուք, որպիսի ինչ իցեն զոր մեծատունն գործէ, մանաւանդ որ չար-կանիցէ բարիօք 'ի կիր զմեծութիւնն. յորժամ յա-փշտակիցէ, ագահիցէ, բռնադատիցէ։ Իսկ զաղքա-տեհ ցանկութիւնս և զանօրէն խառնակութիւնս, և զդիւթութիւնս և զկախարդութիւնս, և զայլս ևս ամենայն չարիս, ո՞չ ապաքէն 'ի մեծութենէն գտանի-ցեմք ծնանել։ Տեսանե՞ս զի յաղքատութեան քան 'ի մեծութեանն դիւրին է զառաքինութիւնն կատարել. և մի՛ վասն այսր ինչ՝ զի ասաէն չտայցեն վրէժս ինչ մե-ծատունք, համարիցիս թէ չմեղանչիցեն ինչ. զի եթէ ասաէն մարթ էր տալ նոցա վրէժս, նոքօք գտանէիր լցեալ զամենայն բանտս։

Բայց այլովքն հանդերձ և զայն ևս չար ունի մեծու-թիւնն, զի զչարիսն գործէ և պատիժս ինչ ոչ կրէ, և տապա ոչ դադարէ 'ի չար գործելոյ. այլ ընդունելոց է վրէժս առաւել բժշկութեան. և չիցէ ոք որ սանձս 'ի բերանս դնիցէ։ Այլ եթէ կամիցիք, և ցանկութեան գտանէ պատճառս բազում՝ յաղքատութենէ. որպէս զի 'ի հոգոց ազատէ և յատելութենէ, և 'ի կռուոյ և 'ի հակառակութենէ և 'ի դրգռութենէ և 'ի բազում չարեաց։

Այլ արդ մի՛ ինչ փութասցուք 'ի մեծանալ, և մի՛ նա-խանձեսցուք միշտ ընդ ընչաւէտս. այլ որք ունիցիմք, 'ի բարի պէտս ծախեսցուք. և որք չունիցիմք, մի՛ ինչ տրտմեսցուք, այլ գոհութիւն տացուք վասն ամենայնի զնո՛յ, որ ընդ տակաւ վաստակոյ՝ մեծատանց՝ և կամ թէ ևս մեծամեծս՝ եթէ կամիցիք՝ պատրաստէ մեզ առ-նուլ վարձս, և 'ի տակաւէն շահել. քանզի և որ զեր-կուս տաղանդսն մատոյց, զարմանալի եղև, և պատուե-ցաւ այնմ հանգոյն՝ որ զհինգն մատոյց։ Այլ էր վասն արդեօք. երկուցն միայն հաւատացաւ, այլ յիւրմէ կող-մանէն զամենայն իսկ կատարեաց. և որչափ ինչ հաւա-տացաւ նմա, երկպատիկ մատոյց։

1 Օրինակին չքնիցի։

Այլ արդ՝ զի փութայցեմք զի բազում ինչ յանձինս ընկեցի մեզ, յորժամ հնար գուցէ և 'ի սակաւուն զ-բազումն շահել. յորժամ աշխատութիւնն սակաւ ինչ իցէ և վարձքն բազում. զի դիւրաւ աղքատն յիւրմէն մեկնեսցի, քան թէ մեծատունն յիւրոյն՝ որ բազում և շատ ինչս ունիցի։ Այլ թէ չիցէք տեղեակ՝ զի որ բազում հանդերձս ագանիցի, ևս բազմաց ցանկանայ։ Այլ արդ զի մի այնպիսի ինչ կրիցեմք, մի խնդրեսցուք մեծութիւն, և մի զժկամակ ինչ ընդ աղքատութիւնն մենեսցիմք. մի ինչ փութասցուք 'ի մեծանալ. և եթէ ունեսցիմք, այնպէս ծախեսցուք որպէս և Պաւղոս հրամայեաց. եթէ "Որ ունիցին՝ որպէս թէ չունիցին. և որ վարիցեն զաշխարհս՝ որպէս թէ ոչ յախտիծանիս"։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ՉՈՐՐՈՐԴ ՃԱՌԻՆ

Այլ եթէ զսակաւս չարհամարհիցես, որչափ առաւել զշահն։ Դարձեալ և զայլ ևս ցոյց, եթէ զսակաւն 'ի բարի ինչ խորատս ծախեսցես։ Զունիցիս զարտաքնոյն ճարտարախօսութիւնս, և ոչ զիմաստութեանցն զաաստութիւնս. սակայն զմիջինն գիտես, և զբազում մանկունս դըրացիս ունիս, և զբարեկամս և զազգայինս և զծառայս. Թէպէտ և յեկեղեցւոջ յայտ յանդիմանս չկարիցես խօսել, զայնպիսին առանձինն կարիցես խրատել։ Զեն ինչ պէտք հռետորական բանից, և ոչ բանիբուն իմաստնոցն ճարտարութեանց։

Այլ արդ ցոյց այնու, զի եթէ և ճարտարախօս էիր, չհեղգայիր և չառնէիր անփոյթ. և եթէ 'ի փոքուն չիցես փոյթ[1], մեծին զիա՞րդ հաւատացից. և զի այսմ ամենայն ոք բաւական է, լուր զինչ ասէ Պաւղոս, զիարդ և աշխարհականաց հրամայէ զմիմեանս խրատել. "Շինեսջիք, ասէ, այր զընկեր, որպէս և առնէքդ իսկ, և

1 Օրինակքն պակասեն և եթէ 'ի փոքուն չիցես փոյթ։

մխիթարեցէք զմիմեանս բանիւք այսոքիւք "։ «Ջանացի՛ր գիտել ած ում զինչ արժան է տալ. միթէ դու լաւ ինչ իցես քան զՄովսէս՝ յորժամ խեռեալն կամէր. "Ո՞րթէ ես, ասէ, բառնա՞լ կարիցեմ զդոսա, զի ասես ցիս, թէ բարձ զդոսա, որպէս զի բառնայցէ դայեակ զտղայ "։ Այլ ապա ած առ յօգուտ նորա, և բաշխեաց արկ յայլս, զի ցուցցէ թէ մինչ կրէին զնոսա՝ ոչ նորա ինչ շնորհ էր, այլ Հոգւոյն։ Ո՛ր եթէ զշնորհսն ունէիր, թերևս հպարտանայիր և ընկողնէիր ինչ, չգիտէիցես դու զքեզ՝ քաջ քան զած.

Ո՛վ սատանայութք եթէ այս ընդէ՞ր կամ այն ընդէ՞ր. յորժամ ած մատակարարեսցէ, մի իշխեսցուք համարս պահանջել. զի յետին անզգամութեան և անիրաւութեան է. ծառայք եմք, և այնպիսի ծառայք, զի կարի իսկ ընդհատ ՚ի տեառնէն։ Այլ ոչ որ ինչ առ ստոյն կայցէ իմանալեօք, այլ զոր ինչ եւս, զայն հաստատուն պահեսցուք, թէպէտ և փոքր ինչ և գաղջն իցէ. և այնպէս հաճոյ լինիցիմք. մանաւանդ թէ չէք իսկ ինչ փոքր ած պարգևացն։ Ո՞չ չարիցիս ինչ՝ զի չունիցիս վարդապետութեան շնորհս։ Ն՛զէ ասա, ո՞ր շնորհ մեծ թուիցին քեզ, վարդապետութեա՞ն, թէ զհիւանդս բժշկելոյ. ո՞չ ապաքէն այն մեծ իցէ. և քան զհիւանդս բժշկելոյ ընթուիցի քեզ մեծ զկոյրս բանալ. և քան զկոյրս բանալ՝ զմեռեալս յարուցանել. և քան զմեռեալս աղօթիւք յարուցանել՝ ստուերօք և վարշամակօք զնոյն գործ գործել. և արդ զո՞ր մեծ համարիցես, զվարդապետութեա՞ն շնորհս ունել, եթէ ստուերօք մեռեալս յարուցանել։ Իսկ եթէ ցուցից քեզ միւս ևս, որ կարի իսկ մեծ քան զայս շնորհ է, և քեզ մարթ է առնուլ՝ և չառնուս, ո՞չ ապաքէն յիրաւի ես զրկեալ յայսմ ամենայնէ. և զշնորհս զայն ոչ միոյ ուրեք կամ երկուց, այլ ամենեցուն իսկ իշխանութիւն է առնուլ.

Գիտեմ թէ զարմանայք, և կարի իմն մտադիւր ուշ եդեալ կամիք լսել, եթէ իշխանութիւն է ձեզ զայնպիսի շնորհս առնուլ, որ և քան զմեռեալս յարուցանել մեծ իցէ, և քան զկոյրս բանալ, և քան զամենայն նշանսն զոր առաքեալքն արարին. և թերևս անհաւատ ինչ իւրք թուիցին։ Այլ զի՞նչ իցեն շնորհքն. սէր։ Նա՛ և հաւատացէք, զի ոչ է իմ բանս, այլ Քրիստոսի՝ որ

Պաւղոսին խօսէր. “Նախանձաւոր լերուք շնորհացն՝ որ լաւն իցեն. բայց ես առաւել ևս ճանապարհ ցուցանեմ ձեզ”. և զի՞նչ իցէ առաւել ճանապարհն. Կորընթացիքն հպարտացեալ էին 'ի շնորհսն, և որք զլեզուսն ունէին և կամ փոքր ինչ այլ շնորհս՝ հպարտանային առ այլսն՝ որ ոչ ինչ ունէին. և արդ ասէ, բնաւ կամեցիք իսկ շնորհս ինչ. ես ցուցանեմ ձեզ ճանապարհ, որ ոչ սակաւ ինչ լաւագոյն, այլ կարի լաւագոյն. և արդ ասէ, “Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ. և եթէ ունիցիմ հաւատս մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ”:

Տեսե՞ր զշնորհսն, նախանձաւոր լեր. զի քան զմեռեալս յարուցանել ևս մեծ է, և քան զայլսն ամենեսին կարի առաւել. և զի այս այսպէս է, լուր բանիցն՝ զոր Քրիստոս ընդ աշակերտսն ասէր. “Յայսմ ծանիցեն զձեզ ամենեքին՝ եթէ իմ աշակերտք էք”, ոչ զի նշանս ինչ առնիցէք, այլ զի սէր ընդ միմեանս ունիցիք. և դարձեալ ցհայր ասէր ևս, “Յայսմ ծանիցեն զի դու զիս առաքեցեր, եթէ լինիցին սոքա մի”: Այս ինքն իսկ ասէ ցաշակերտսն, եթէ “Պատուիրան մի նոր տամ ձեզ զի սիրեսջիք զմիմեանս”:

Քան որ զմեռեալս յարուցանիցէն, այն պարկեշտագոյն և պայծառագոյն է. և յիրաւի իսկ. զի այն ամենեւին իսկ Քրիստոսի շնորհացն է, և այս քո փութոյ. այս աշխարհ քրիստոնէի է և աշակերտի Քրիստոսի, որոյ զանձն 'ի խաչ հանեալ իցէ և չունիցի ինչ հաղորդութիւն ընդ երկրի. զի առանց այսր ոչ մարտիրոսութիւն ինչ կարէ օգնել. և զի այս այսպէս իցէ, ուսիր 'ի Պաւղոսէ երանելւոյ, որ զերկուս զգլխաւորս առաքինութեանցն առ, մանաւանդ թէ երիս իսկ, թէ որք զնշանսն առնիցեն, և զգիտութիւն տայցեն, և ընդվարան յաղթեսցեն առանց սիրոյ, և ոչ ինչ օգտեն. և եթէ կիսամ՞րդ իցէ, լուր. “Եթէ ջամբեսցից զինչս իմ աղքատաց, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ իսկ եմ”: Քանզի մարթի ջամբել զինչս աղքատաց առանց սիրոյ, և վատնել զամենայն ինչ. և զայս ամենայն ասացեալ է մեր անդէն իսկ 'ի սիրոյն տեղւոջ, և անդր առաքեմք զայնոսիկ՝ որք կամիցին հաւաստեաւ 'ի վերայ հասանել: Բայց այժմ որպէս ասացին՝ “Նախանձաւոր լե-

բուք շնորհային„ . զմիմեանս սիրեսցուք և չլինիցիմք կարօտ իւիք յառաքինութեանն ուղղութիւն, այլ ամենայն ինչ դիւրաւ լինիցի մեզ առանց քրտանց, և զամենայն ինչ ուղղեսցուք մեծաւ փութով:

Այլ առհասարակ, ասեն, այժմ սիրեսցուք զմիմեանս. ոմն ունի երկուս բարեկամս, և ոմն երիս: Ոչ այն սէր վասն իմ, այլ վասն սիրելի լինելոյ. զի որ վասն իմն սիրիցէ, ոչ ամենայնի ինչ սկիզբն սիրոյ ունիցի, այլ զամենեսեան իբրև զեղբարս. և ամենայնիւն զիւր հաւատակիցն իբրև զեղբարս հարազատս սիրել. իսկ զհերետիկոսս և զհեթանոսս և զՀրեայս՝ ունել առ եղբարս ըստ բնութեանն, և առ բարեկամս անպիտանս. ողորմել և արտամել և արտասուս արկանել վասն նոցա: Այսու լինիցիմք նմանողք իմ, յորժամ զամենեսեան սիրիցեմք և զթշնամիսն, քան թէ նշանս առնիցեմք. զի և ընդ իմ ոչ կարի ընդ այն զարմանամք՝ յորժամ սքանչելիս ինչ առնիցէ, որպէս յորժամ զմարդասիրութիւնն ցուցանիցէ, և զչարիս ինչ չյիշիցէ:

Այլ արդ եթէ առ իմ այն կարի զարմանալոյ արժանի իցէ, որչափ ևս առաւել առ մարդիկն. յայտ է եթէ այն իսկ առաւել զարմանալիս առնէ զմեզ: Մինչ նախանձաւորք լիցուք, և քան զՊաւղոս և զՊետրոս և զայլս բազումս՝ որք զմեռեալս յարուցին, չզօրանիցեմք նուաղագոյնք, թէպէտ և զինչ անգամ չկարիցեմք յումեքէ հալածել. և առանց այսր թէպէտ և քան զառաքելոյն մեծամեծ նշանս առնիցեմք, և թէ բազում ձգունս վասն հաւատոցն յանձին կրիցեմք, չօգտիցիմք ինչ. և զայս ոչ եթէ ես ասեմ, այլ նա իսկ, որ սիրոյն սնունդ էր, այսպէս պատուիրէր: Արդ նմանեսցուք. և այնպէս կարիցեմք հասանել խոստացելոց բարութեանցն, որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Ի ՉՈՐՐՈՐԴ ՃԱՌԻՆ

Զի որ 'ի մահուանէ չերկնչի, արտաքոյ քան զբռնութիւն սատանայի է. զի եթէ մարթ ընդ մարթոյ լիցի, և զամենայն ինչ ոք փոխանակ անձինն տանիցէ, յորժամ և զնա ևս 'ի մտի դնիցէ արհամարհել, ապա ո՞յր լինիցի ծառայ: Ջերկնչել ինչ յումեքէ, չզանգիտէ բնաւ ինչ. զի քան զամենայն ինչ 'ի վեր է, և ազատ է յամենայնէ. և որ յիւր անձն չխնայիցէ, ևս առաւել և ոչ յայլոց. և յորժամ զայնպիսի անձն գտանիցէ սատանայ, չկարիցէ ինչ նմա գամագիտ լինել: Այլ արդ աղէ ասա, եւ կարիցէ գամագիտ լինել. վնաս ինչ ըսպառնայցէ, կամ անարգանս, կամ յաշխարհէ՞ հանել: Այլ այն կարի իսկ փոքր է այնմ՝ որոյ և զանձն արհամարհեալ իցէ ըստ երանելւոյն Պաւղոսի: Տեսանե՞ս զի յորժամ զմահու բանութիւնն 'ի բաց արար, և զսատանայի զզօրութիւնն ընդ նմա խափանեաց: Որ ոք վասն յարութեանն բիւրապատիկ ճարտարեալ և զգաստացեալ գիտիցէ, զիա՞րդ իցէ զի 'ի մահուանէ երկնչիցի կամ սարսիցէ:

Այլ արդ մի ինչ դժկամակ լինիցիք՝ թէ ընդէ՞ր զայս ինչ և զայն ինչ չարչարանս կրեցաք. քանզի այսպէս պայծառագոյն լինի յաղթութիւնն. չէր այնպէս պայծառագոյն, թէ չէր մահուն զմահ լուծեալ: Այն իսկ է զարմանք, զի որովք զօրանայր՝ նոքիմբք պարտեաց, որով ամենայնիւ հնարս և մեքենայս կարէր գտանել: Այլ արդ մի տացուք զյաղթութեան պարգևս 'ի ձեռն թշնամեաց. «Քանզի ոչ եթէ ընկալաք զհոգի վհատութեան, այլ զհոգի զօրութեան և զսիրոյ և զզգաստութեան». պինդ կացցուք առաքինութեամբ արհամարհել և ոչ ինչ համարել զմահ:

Այլ հեծեծեն միշտ միտք դառնապէս, եթէ յոյժ եհան զմեզ Քրիստոս, և յոյժ իջուցաք մեք զանձինս: Յորժամ տեսանիցեմք զկոծողս 'ի հրապարակս և զճիչ և զաշխարանս 'ի վերայ մեռելոց, զիա՞րդ խայտառակեն զանձինս ողորմելիք և կական բառնալով: Թէ հաւատայք, ամաչեմ 'ի հեթանոսաց և 'ի Հրէից և յայլազգեաց և յամենեցունց իսկ առ հասարակ. որ զայն տեսանեն՝

զմեզ ծաղր առնեն. և որչափ ասիցեմ այնուհետև, ընդ վայր ասեմ վասն յարութեան. և որչափ ճարտարիցեմ ինչ, ոչ ընդ իմ բանսն հային հեթանոսք, այլ ընդ ձեր գործսն: Եւ անդէն վաղվաղակի ասիցեն, ո՞վ ոք ՚ի սոցանէ կարիցէ զմահ արհամարհել, որ ոչ և զայլոց մահ կարիցէ տեսանել: Բարիոք են բանքն որ ՚ի Պաւղոսէ ասացան, բարիոք և երկնից արժանի և Աստուծոյ մարդասիրութեանն: "Ո ի ապրեցուսցէ զայնոսիկ՝ որ հանապազ մահուն երկիւղիւ կէին, և ՚ի վտարանդի էին ՚ի ծառայութեան". այլ չտայք այնմ հաւատարիմ լինել, դուք որ գործովքդ մարտնչիք ընդ բանսն. թէպէտ և բազում անգամ ա̄ծ արգել ՚ի մարդկանէ, զի բառնայցէ ՚ի միջոյ զայնպիսի չար սովորութիւնն:

Եւ արդ ասէ ասա, զի՞նչ յայտ առնիցեն կանթեղքն և մոմեղէնք լուցեալք. ո՞չ ապաքէն իբրև զնահատակս յուղարկեմք. զի՞նչ ինչ յայտ և օրհնութիւնքն առնիցեն. ո՞չ ապաքէն զա̄ծ փառաւորեմք և գոհանամք՝ թէ այսուհետև պսակեաց զգնացեալն, և ազատեաց յաշխատութեանց, և հան յանյայտ աշխարհէ, և առ իւր՝ պահել զետեղ և անարատ: Ո՞չ վասն այսորիկ են օրհնութիւնքն և սաղմոսիցն պէսպէս նուագն. և այն ամենայն յուրախութենէ սրտիցն յայտ առնին: "Ուրախ ոք իցէ, ասէ, սաղմոս ասիցէ":

Այլ ոչ ընդ այն ինչ հային հեթանոսք: Ո՛ի, ասէ, զայնմանէ ասեր ինչ՝ որ արտաքոյ կարեաց ճարտարիցէ և զցածութենէ խօսիցի. չէ՞ ինչ այն մեծ և զարմանալի. այլ զայն ցոյց՝ որ ՚ի կարիսն ոք ցածուցեալ՝ ճարտարամտիցէ, և ապա հաւատայից յարութեանն: Եւ եթէ աշխարհական կանայք զայն առնիցեն, չէ ինչ զարմանալի, թէպէտ և նոցա զնոյն գործ գործել կարի յառի է, քանզի և նոքա զնոյն գործ պահանջիցեն. որպէս և Պաւղոս ասէ, եթէ "Վասն ննջեցելոցն ոչ կամիմ եթէ տգէտք իցէք. զի մի՛ իբրև զայլ հեթանոսս տրտմիցիք, որք ոչ ունիցին յոյս". և ոչ եթէ վանականաց գրեաց զայն, և ոչ հանապազորդն կուսանաց, այլ աշխարհականաց և արանց. բայց սակայն ոչ այնպէս չար է: Յորժամ կին ոք կամ այր ասիցէ զանձնէ ՚ի խաչ ելեալ ընդ Քրիստոսի, և այրն զհերն փետիցէ, և կամ

կինն կոկոչունն լինիցի, զինչ այլ քան զայն զարտուղա-նաց և անհեթեթ իրք կայցեն ։

Հաւատացէք ինձ զոր ասեմ․ եթէ ըստ իրաւանց ինչ գործ գործէին, բազում ժամանակս պատրաստ էր այն-պիսեացն չկոխել զանձանս եկեղեցւոյ ։ Վասնզի արդարև սոցա այսպիսեացն արժանի էին սոցա, որք տանկանին 'ի մահուանէ երկնչին, և 'ի յարութենէ թերահաւատք լինիցին ։ Զեմ, ասէ, թերահաւատ 'ի յարութենէ, այլ զանխլութիւնն կամիմ կատարել ։ Արդ ասէ ասէ, ընդէ՞ր յորժամ ճանապարհ երթայցէ այրն, և մնա-ցանենդ 'ի տարաշխարհական ինչ ճանապարհ, ոչ տապա-քէն զնոյն առնիցես ։ Այլ և 'ի յայն ժամ, ասէ, ըստ և աշխարհէմ ։ Յայնժամ արդարև իսկ սովորութիւնն զնոյն պահանջէ․ իսկ յորժամ չկայցէ ինչ ակն ապրելոյ զանձնալոյ, զի՞ որչափ կարի առնիցես ։

Մի՛տ դիր զո՞ր սաղմոս ասեն 'ի ժամանակին յայն-միկ․ ո՞չ ապաքէն "Դարձ անձն իմ 'ի հանգիստ քո, զի տէր բարի արար քեզ"․ և "Ոչ երկեայց 'ի չարէ զի դու տէր ընդ իս ես"․ և դարձեալ եթէ "Դու ես ապաւէն իմ 'ի նեղութենէ որ շուրջ եղեն զինև"․ մի՛տ դիր զինչ յայտ առնեն սաղմոսքն ։ Այլ չդնես միտ, քանզի արբեալ ես սգով․ գէթ յորժամ յայլոց մեռանելոյ վերայ ասիցեն զսաղմոսն, դնիցես միտ հա-ւատաս, զի դնիցես զայն դեղ ցաւոցն քոց ։ "Դարձ ասէ, հոգի իմ 'ի հանգիստ քո, զի տէր բարի արար քեզ"․ ասես, և արտասուես ։ Զեն ինչ պատրանաց բանք, և ոչ կեղծիք առաջի աչաց․ զի եթէ արդարև հաւատայիր բանիցն զոր ասէիր, ոչ այնչափ 'ի խոր խո-ցէիր ։ Իսկ եթէ ասիցես, և կեղծիս ինչ և առասպելս վարկանիցես, ընդէ՞ր բնաւ ասես զսաղմոսն, ընդէ՞ր բնաւ կոչիցես զսաղմոսասացսն, և ոչ բնաւ 'ի բաց հալածես ։ Այլ կատաղեաց գործ է այն․ ո՞րչափ ես առաւել մեռեալս ։

Ոչ այժմ խրատ տամ․ բայց եթէ ժամանակ ինչ անցցէ 'ի դէպ լինիցի, և սատանայական բարբառեցայց․ քանզի և կարի իսկ կասկածեմ, գուցէ այնպիսի կեր-պարանօք ախտ ինչ չար յեկեղեցի մտանիցէ ։ Այն կոծողացն յետոյ կարգեցուք․ բայց առ այժմ պատուի-րեմ և վկայութիւն դնեմ մեծատանց և աղքատաց, արանց և կանանց, եղիցի ձեզ ամենեցուն տանց ազգ

ելանել յաշխարհէ, և կարգօք և օրինօք՝ հարց ձերոց յորդւոց յուղարկել, և մնալ 'ի զաւակաց և 'ի թոռանց և 'ի թոռանց թոռանց, 'ի լի և 'ի պարարտ ծերութեան, և մի ումեք լինել տարաժամ մեռանել. այնպէս լինի. և զնոյն աղաչեմք և զվարդապետս ձեր և զձեզ զամենեսին՝ աղօթս առնել վասն միմեանց առ Տր, և հասարակ զայն աղաչել, զի դառն ինչ մահ մի ումեք պատահեսցէ: Դառն ոչ եթէ բնութեամբ ինչ առնիցեմ, զի պատահեալն չէ դառն մահ, և 'ի քնոյ ոչ ինչ ընդհատ. և զաւակն ըստ ձերոց կամաց լինի, եթէ իցէ որ և կոծօղս վարձուք 'ի կոծ կոչիցէ:

Հաւատացէք զոր ասեմս, զի չասեմ այլազգ ինչ, այլ որպէս 'ի մտի կայ. որ կամիցի բարկանալ բարկասցի. բազում ժամանակս արգելում զայնպիսին յեկեղեցւոյ իբրև զկռապաշտ. զի եթէ զագահն կռապաշտ կոչէ Պաւղոս, որչափ ևս առաւել զայն որ 'ի հաւատացելոց վերայ զկռապաշտի գործ գործէ: Ասէ արդ ինձ տա, էր վասն կոչիցես զերիցանսն կամ զդասաւորացն. ոչ ապաքէն սփոփելոյ վասն, ոչ ապաքէն մխիթարելոյ վասն զզինացեալսն. արդ ընդէ՞ր թշնամանիցես զնոսա, զմէ՞ խայտառակիցես, նորուն այսպէս առնիցես: Իբրև 'ի գուսանաց մէջ մտեալ խօսիցիմ վասն յարութեանն. որք զամենեսին իսկ կամիցին խրատել զայնասիկ, որ չև ևս իցեն 'ի կարգս նորա պատուոյն. զի եթէ այնպիսի ինչ դէպ երբեք տայցէ, լինիցին ժուժկալք համբերութեամբ: Դու զայսպիսիսն ածես 'ի տուն, որ զմեռելն քակեն, որչափ ինչ բուռն նոցայն իցէ. և զինչ ինչ այլ չար քան զայն ծաղր և արհամարհանս կայցէ. զինչ ինչ ծաղր քան զայնպիսի անտանելութիւն:

Աղաչեմ պատկառեցէք. ապա թէ չկամիցիք, և մեք չառնումք յանձն զայնպիսի ապականիչ սովորութիւն մուծանել յեկեղեցի: «Արք յանցանիցեն, ասէ, առաջի ամենեցուն յանդիմանեա». և զթշուառականս և զհեգս զերդարաւորս զառաջնորդս կոծոյն՝ վասն ձեր արգելում չմտանել 'ի լայնս հաւատացելոց, զի զուցէ զիւրեանց իսկ զչարն 'ի հարկէ տայցեմք նոցա աղքատ, և խրատիցեմք մի զայլոց, այլ զանձանց հիւանդութիւնս աշխարել:

Ողորմելի և հայր որ խնամակալ, յորժամ որդի առա-

հակ անիցի, ոչ նման եւեթ խրատ տալ չմերձենալ 'ի չարս, այլ զնոսա եւս երկեցուցանէ. և արդ ձեզ՝ և նոցա ձեօք խրատ տամ, մի ձեզ կոչել զայնպիսիսն, և մի նոցա գալ: Այլ արասցէ ա̃ծ զի բանս մեր գործ բարիս ինչ գործեսցէ, և սպառնալեացն յաղթիցէ. ապա թէ, որ մի լիցի, եթէ արհամարհիցիմք ինչ, հարկ լինի և մեզ զսպառնալիսն 'ի գործ ածել, և զձեզ եկեղեցւոյ օրինօք խրատել, և զնոսա՝ որպէս և նոցա պատշաճ իցէ: Ապա թէ ոք առ յանդգնել ինչ արհամարհիցէ, լուիցէ այժմ Քրիստոսի՝ զոր ասէրն. "Եթէ յանցանիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա, մինչ դեռ դու և նա միայն ընդ միայն իցէք. ապա եթէ ոչ անսայցէ, առ ընդ քեզ մի կամ երկուս. եթէ այնպէս ոչ անսայցէ, ասասջիր յեկեղեցւոջ. եթէ եկեղեցւոյն եւս ոչ լուիցէ, համարեալ լիցի քեզ իբրև զմաքսաւորն և իբրև զհեթանոսս,,: Այլ եթէ զայն որ առ իսն յանցանիցէ և չանսայցէ, հրամեայ հատանել և 'ի բաց ընկենուլ, իսկ որ իւրն մեղանչիցէ և առ ա̃ծ, նմա զինչ պարտիցիմ[1] առնել՝ զայն դուք ընտրեցէք. զի դուք մեզ ինչ ոչ ստգտանիցէք՝ եթէ այնպէս ինչ անտառակս զնացաք առ ձեզ:

Եթէ զմեր կապանս ոք արհամարհիցէ, Քրիստոս խրատեսցէ զայնպիսիսն՝ ասելովն, եթէ "Զոր կապիցէք յերկրի, կապեալ եղիցի յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, արձակեալ եղիցի յերկինս,,: Զի թէպէտ և մեք տառապեալք և անպիտանք եմք և արհամարհելոյ արժանի, որպէս զի եմք իսկ արժանի, այլ ոչ եթէ զանձանց վրէժս խնդրեմք, և ոչ զցասման քէն պահանջեմք, այլ ձերում փրկութեանն տածիցք լինիմք: Պատկառեցէք աղաչեմ, և ակն ածիցէք: Զի թէ բարեկամ ոք վասն լաւի սաստիցէ ումեք, ընդ միտսն պարտ է նայել. եթէ խնամոյ վասն իցէ սաստն և ոչ ամբարհաւաճութեամբ, անսալ պարտ է. որչափ եւս առաւել յորժամ վարդապետ սաստիցէ: Այլ վարդապետ՝ որ ոչ ձոխութեամբ ինչ խօսիցի, և ոչ զիշխանի թեկն ածիցէ, այլ խնամակալի բարս ցուցանիցէ. քանզի ոչ եթէ զիշխանութիւն ինչ կամիցիմք ցուցանել. և

1 Օրինակին խանգարեալ էր զինչ պարտիցիմ:

զիմարդ արդեօք, որք աղօթս առնեմք զի մի արդեօք այնպիսի ինչ ձեզ հասանիցէ, այլ վասն ձեր տառապիմք և կոծիմք։

Այլ արդ զանձինս մեծարիցէք, և մի ոք զկապանս եկեղեցւոյ արհամարհիցէ. զի ոչ եթէ մարդ է որ կապէն, այլ Քրիստոս է՝ որ զիշխանութիւնս զայս ետ մեզ, և արար տեարս զմարդիկ այնպիսի պատուոյ։ Մեք յարձակել կամիմք ընդ գործ արկանել զիշխանութի. մանաւանդ թէ և զայնր իսկ զհարկն չկամիցիմք. քանզի և ոչ զոք 'ի ձէնջ կամիմք ընդ կապանօք արկանել. զի ոչ եթէ այնպէս հէքք և թշուառականք իցեմք, թէպէտ և կարի իսկ անպիտանք իցեմք։ Բայց 'ի հարկէ ինչ այնպէս լինիցի, մի ինչ մեղադիր լինիցիք. քանզի ոչ եթէ կամաւ և տխրժելով ինչ, այլ քան [1] զձեզ՝ որ ընդ կապանօք մտանիցէք, մեզ ևս չար ցաւեն կապանք։ Իսկ եթէ ոք արհամարհիցէ զկապանսն, հասցէ 'ի վերայ նորա ժամանակ դատաստանին, որ և ցուցանիցէ նոցա։ Զմնացեալսն ասեմ, և չկամիմ ասել, զի մի խոցեցից զմիտս ձեր։

Բայց նախ աղօթս առնեմք, զի մի լինիցի մեզ հարկ յայն գալ. ապա եթէ գալ լինիցի, մեք զմերն կատարեմք, արկանեմք ընդ կապանօք։ Այլ եթէ ոք խզիցէ, առկայն ես զիմն արարից, և անհոգ լինիցիմ այսուհետև 'ի պատժոց. և ձեզ բանք ընդ այնմ լինիցի, որ ինձ կապեալն հրամայեաց։ Քանզի և յորժամ այր թագաւոր յորժամ յատենի նստիցի, և հրամայիցէ զոք 'ի սպասաւորացն կապել, և նա ոչ միայն դահճին չանսայցէ, այլ և զշղթայսն ևս մանրիցէ, ոչ եթէ զդահճին և ըզսպասաւորն թշնամանիցէ, այլ զթագաւորն՝ որ հրամայեաց։ Զի եթէ որ ինչ 'ի հաւատացելոց գործ գործէին՝ զայն իւր համարի, յորժամ որ յուսուցանել [2] ոք կարգեալ իցէ՝ և թշնամանիցի, որչափ ևս առաւել իւր համարի զթշնամանսն։

Այլ մի լիցի ումեք յեկեղեցւոյ յայնպիսի հարկ գալ։ Զոր օրինակ չմեղանչելն բարի է, նոյնպէս և ըզստացեալն յանձն առնուլ՝ կարի օգնէ. Աղաչեմք յան-

1 Օրինակքն պակասէր զան։

2 Օրինակքն յուսուցեալ. երաբար յանձին։

ձին զպատուհասն, և փութացուք չմեղանչել. ապա եթէ մեղանչիցեմք, և սաստին տանիցիմք։ Որ օրինակ չէ բարի վէրս յանձն առնուլ. և եթէ այնպէս դէպ տայցէ, պարտ է դեղ դնել վէրին, նոյնպէս և աստ։ Նա և մի լիցի ումեք այնպիսւոյ դեղոյ կարօտանալ. զի “Հաստատեալ եմք վասն ձեր 'ի լաւ անդր, և որ լինի է փրկութեամբ„. զի թէպէտ և այսպէս սաստկագոյնս խօսիցիմք, վասն բազում ձերոյ զգուշութեան խօսիմք։ Լաւ իցէ եթէ ես խիստ և անագորոյն և յանդուգն կարծեցայց ձեզ, քան թէ դուք զոյ կամիմն չառնիցէք։

Հաւատամ յոյժ եթէ ոչ յանօգուտ ինչ լինիցի ձեզ բանս այս, այլ այնպէս դառնայցէ, որպէս և բանքդ ձեր 'ի մեր գովութիւն ծախին և յարգանս. զի ամենեքին արժանի լիցուք հասանել բարութեանցն, զոր խոստացաւ ա̃ծ սիրելեաց իւրոց 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, պատիւ և իշխանութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

Այլ արդ ընդէր խռովիցիմք. մի՞ ոք յորժամ տեսանիցէ զչարս 'ի բարութիւն, խռովիցի ինչ. չէ աստէն հատուցումն ոչ չարեաց և ոչ բարեաց։ Այլ եթէ դուն ուրեք յանկարծակի ինչ լինիցի չարեաց կամ բարեաց հատուցումն, ոչ ըստ արժանւոյն, այլ դոյզն ինչ ճաշակ է դատաստանին. զի որ 'ի յարութենէն թերահաւատ լինիցին, գէթ աստէն ինչ խրատիցին։ Այլ արդ յորժամ տեսանիցեմք զչար ոք մեծացեալ, մի ինչ ընդ այն կասիցեմք. և յորժամ տեսանիցես զբարի ոք 'ի տառապանս, մի ինչ խռովեսցուք. անդ են պսակք, անդ են տանջանք, անդ են պարգևք, անդ են պատիժք։

Բայց այլ ևս, չիք չար որ ամենևին չար իցէ, և չիք բարի որ ամենևին բարի իցէ, այլ ունի մասն ինչ 'ի մեղաց. և յորժամ աջողեսցի մեծութիւն չարին, գլխոյն եղեռան է. զի վասն սակաւ բարութեանցն զոր աստ առնուցուն, անդ զկատարեալ տանջանսն ընդունիցին, վասն այնորիկ աստէն առնու։ Իսկ երանելի է այն՝ որ աստէն լլկիցի, զի զամենայն մեղսն թօթափիցէ, և

Digitized by Google

սուրբ և անարատ և առանց պատժոց երթիցէ անդ։ Այլ զայս Պաւղոս ուսուցանէ մեզ. "Վասն այնորիկ են 'ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք, և շատ ննջեցեալք". և դարձեալ թէ "Մատնեցի զայնպիսին 'ի սատակումն մարմնոյ". և մարգարէն ասէ, թէ "Ընկալաւ 'ի ձեռանէ տեառն կրկին զհատուցումն մեղաց իւրոց". և Դաւիթ, թէ "Տես զթշնամիս իմ զի բազում եղեն, և ատելութիւն 'ի նանիր ատեցին զիս". և "Թող զամենայն զմեղս իմ". և դարձեալ "Տէր, տուր ինձ զխաղաղութիւն քո, քանզի զամենայն ինչ հատուցեր մեզ". այլ այսու ամենայնիւ յայտ առնէ զչարեացն պատիժս, զոր վասն մեղաց աստէն կրեցին։

Իսկ մեր գտանիցեմք, եթէ չարքն աստէն առին զբարեաց հատուցումն, և անդ զկատարեալ տանջանսն տանջիցին, ըստ Աբրահամու որ ասէր ցմեծատունն, եթէ "Դու ընկալար զբարիսն քո, և Ղազարոս զչարիսն". զոր բարիս։ Ընկալար իսկ՝ յայսմ վայրի զմիթէ չընկալարն ասել յայտ առնէ. զի ցուցցէ եթէ երկոքին ըստ պարտեաց ընկալան. նա զբարութիւնսն, և սա զչարիսն. և թէ եղև, վասն այսորիկ ասէ՝ եթէ "Սա աստ մխիթարի, և դու այդր տապակիս". զի տեսանես զսա աստ սուրբ 'ի մեղաց, և դու չկարես ինչ օգտել։

Այլ արդ մի ինչ տրտմեսցուք, յորժամ զմեղաւորս աստ 'ի բարիս տեսանիցեմք. այլ յորժամ վշտանայցեմք ինչ մեք աստէն, ուրախ լիցուք, զի այն 'ի փափխումն լինիցի։ Մի խնդասցուք ընդ դիւրութիւն, քանզի նեղութիւն խոստացաւ իւրոց աշակերտացն Քրիստոս. և Պաւղոս ասէ, "Ամենեքին որք կամիցին ա̃ծպաշտութեամբ կեալ 'ի Քրիստոս Յիսուս, 'ի հալածանս կեցցեն"։ Եւ ոչ նահատակ առաքինի 'ի մարտի բաղանիս խնդրէ, և կամ սեղան ամենալից խորտկօք, և գինի և ուրախութիւն. չէ այն արուեստ նահատակաց, այլ անձնադիւրաց. զի ըմբիշ նահատակն ընդ փոշին, ընդ եւղն, ընդ ձառապայթիցն ջերմութիւնն, ընդ քիրտն բազում նեղութեամբք օգտի։

Ժամանակ այս է նահատակելոյ. և եթէ այս այսպէս իցէ, ապա և վէրս առնլոյ, և ընդ արիւն և ընդ ապաւառ գալոյ, և ձգունս յանձին կրելոյ։ Լուր զինչ ասէ երանելին Պաւղոս. "Այնպէս նկրտիմ, ասէ, որ-

պէս ոչ եթէ զհողմն ինչ կծիցեմ»: Զամենայն աւուրս կենաց 'ի պատերազմի կալ համարեսջիք, եւ մի երբէք խնդրեսջիք հանգիստ, եւ ոչ իբրեւ զխամն տաղտապկեսջիք ընդ նեղութիւնս: Նա եթէ ոչ միշտ մըրցիցիս, յորժամ պատերազմ հասանիցէ՝ խամ գտանիցիս: Նոյն է հանգստեան ժամանակ. նեղութեամբ պարտ է մեզ կատարեալ լինել. թէպէտ չիցեն հալածանք եւ նեղութիւնք, այլ են այլ նեղութիւնք, որ հանապազորդն 'ի վերայ հասանեն. եւ եթէ այս նեղութեան չժուժկայցեմք, հազիւ այլոց նեղութեանցն տանիցեմք: «Փորձութիւն 'ի վերայ ձեր չիք եկեալ, ասէ, բայց 'ի մարդկանէ»:

Աղօթս արարէք առ ա̃ծ՝ մի մտանել 'ի փորձութիւն. բայց եթէ մտանիցեմք, առաքինութեամբ տանիցիմք: Զձգել իւրովին զանձինս 'ի նեղութիւնս, ցածնոց մարդոց է. իսկ յեկեալ հասեալ 'ի նեղութիւնսն կալ հաստատուն եւ համբերել, առաքինեաց եւ նահատակաց է: Մի անձամբ զանձինս ձգեսջիք 'ի նեղութիւնս, զի այն յանդգնութեան գործ է. եւ մի յորժամ այլք տքնաբար տանիցին, եւ իրքն կոչիցին, թողուցուք. զի վատութեան գործ է այն: Նոյն եթէ քարոզութիւնն կոչեսցէ, մի հրաժարեսջիք եւ զանգիտեսջիք. բայց վայրապար առանց իրիք պատճառանաց յորժամ ոչ պէտք ինչ իցեն, եւ ոչ հարկ 'ի վերայ կայցէ, եւ ոչ ա̃ծպաշտութիւն կոչեսցէ, մի մեզէն 'ի վերայ դիմիցեմք. զի այն ցոյց առնելոյ իրք են, եւ սնոտի պարծանաց նշանակ. ապա եթէ իցէ ինչ՝ որ ա̃ծպաշտութեանն վնաս լինիցի, թէպէտ եւ բազում մահ հասանիցէ մեռանել, ընդ այնորիկ մի զանգիտեսջիք:

Մի անձամբ ձայնատուր փորձութեանցն լինիցիս. յորժամ ոչ ըստ ա̃ծպաշտութեանն ինչ 'ի վերայ հասանիցեն ճգունքն՝ որոց ցանկանայցես, զի կորզիցես վայրապար 'ի քեզ զնեղութիւնսն, ուստի շահ ինչ ոչ լինիցի: Զայս ասեմ, քանզի կամիմ զի պահիցէք զօրէնս Քրիստոսի, որ հրաման ետ չմտանել 'ի փորձութիւն, եւ զմիւս հրամանն՝ առնուլ զխաչն եւ երթալ զհետ նորա. եւ սոքա չեն հակառակ միմեանց, այլ կարի իսկ միաբան: Դու որպէս զայր մի զինուոր պատրաստ լինիցիս զինուք՝ հանապազ արթուն եւ զուարթուն,

ցանկ ակն ունել պատերազմի. բայց մի ծնանիցիս պատերազմունս. զի այն ոչ զօրականաց գործ է, այլ խաղամարար մարդկան։ Իսկ եթէ անդպաշտութեանն փոքր գուշիցէ, վաղվաղակի ելանիցես, և զանձն 'ի մահ դնիցես. մտանիջիր բազում խրախանօք 'ի պատերազմ. փութանիջիր զսահմանս թշնամւոյն. կոծիցես զդէմս սատանայի, կանգնիցես զնշանակ յաղթութեանն։

Այլ եթէ ոչ ինչ անդպաշտութիւնն մնասիցի, և ոչ կրօնքս մեր յաւարի վարիցին, զոգւոյն վտանգս առցեմ, մի ինչ հարկ լինիցի քեզ առնել զոր ինչ անդ ոչ կամիցի. մի վայրապար ինչ յանդգնեսցիս։ Ընդ արիւն պարտ է գալ քրիստոնէին, ոչ ընդ այլոյ, այլ զիւր արիւնն պատրաստական ունել հեղուլ. այնպիսի յօժարութեամբ հեղուցուք զիւրաքանչիւր արիւն, յորժամ վասն Քրիստոսի պատերազմ ինչ 'ի վերայ յառնիցէ, զոր օրինակ ոք զջուր սաստիկ հեղուցու. քանզի ջուր իսկ է արիւն որ բղխէ 'ի մարմնոյն։ Իսկ այնպէս զիւրաւ մերկասցուք զմարմինն, որպէս զհանդերձս ինչ 'ի բաց մերկանալ յանձնէ։

Իսկ այն յայնժամ լինիցի, յորժամ ոչ յինքս կապիցիմք, և ոչ 'ի տունս, և ոչ յայլ ինչ խնամս. եթէ ամենեքին լինիցիմք կատարեալք. զի թէ որ զզօրականաց կեանս կեցին՝ զամենայն ինչ 'ի բաց թօթափեն, և ուր պատերազմ կոչիցէ՝ վաղվաղակի անդր հասանեն, և ամենայն ժուժկալութեամբ համբերին վշտաց, որչափ ևս առաւել մեզ, որ Քրիստոսի զօրականքս եմք, պարտ իցէ պատրաստ գտանել՝ առ ճակատ ընդ մարտոյ կարիս։ Չիցեն այժմ հալածանք, և մի իսկ լիցի երբէք. սակայն են այլ պատերազմունք ընչիցն ցանկութեանց։ Զայնպիսի պատերազմէ ճառեալ Պօղոս առէր, “Ոչ է մեզ մարտ պատերազմի ընդ արեան և ընդ մարմնոյ”։

Իսկ քանզի այսպիսի պատերազմ միշտ 'ի վերայ յառնէ, վասն այնորիկ ցանկ կամի վառեալ և կալ մեզ հաստատուն. զմիշտն վառեալ և կալ կամի. “Անգրեցէք”, ասէ, “զմէջս ձեր”. զի և այս իսկ համապատրաստ ժամանակի է. և յայտ 'նարար թէ ցանկ պարտ է կայմ պատնել։ Զանզի բազում պատերազմ է ընդ լեզուի, բազում կամս է ընդ աչս, և մեք սմին զգուշանասցուք.

Digitized by Google

բազում պատերազմունք են և ցանկութեանց, վասն այնորիկ նախ անտի առնէ սկիզբն վառել զզօրականն Քրիստոսի. «Մնացէք, ասէ, զմիջս ձեր ճշմարտութեամբ». քանզի պատրանք և ստութիւն է ցանկութիւնն, և որպէս և մարգարէն ասէ, եթէ զի «Միջք իմ լցան պատրանօք». չէ ցանկութիւն իրքն, այլ ստուեր ցանկութեանն. «Մնացէք, ասէ, զմիջս ձեր ճշմարտութեամբ». Այս ինքն է, ճշմարիտ ցանկութեամբն, զգաստութեամբ, պարկեշտութեամբ:

Վասն այնորիկ տայ զայսպիսի խրատ, զի գիտէ զմեղացն զերծութիւն, և կամի զամենայն անդամս մեր պարապել. «Զյատուածս, ասէ, տարապարտուց՝ ոչ արդարացի»: Եւ զոտս կամի ագուցանել մեզ, և վահանս ընդդէմ առնել. քանզի կարի յանպատրաստից դիպէ ՚ի վերայ ցասումն, և բազում անձնապետից և պատրաստից պէտք են առ ՚ի զինել հարկանել և յաղթել: Վասն այնորիկ որպէս ՚ի քարանց ինչ յօդկերացն կազմեալ[1] ձեռն որ ՚ի ցասմանն, զի մի դիւրաւ հատանիցէ և եղանիցէ ամենևին տապականել զմնաւ կենդանիսն. քանզի հուր է և մրրիկ ծխեալ. և չէր հնար այլում անդամոց այնպիսի բռնութեան հանդուրժել: Քանզի և բժիշկք ասեն, թէ վասն այնորիկ թաղանթ ՚ի ներքոյ և ՚ի վերոյ տարածեալ է շուրջ զսրտիւն, զի ՚ի մէջ կակղին կայցէ, որպէս ՚ի ստանութ ինչ յեցեալ և հանգուցեալ սիրտն. զի մի ՚ի շարժելն ընդ ոսկերս ՚ի խստի բախիցի փափուկն, և մնասիցի ՚ի խաղաղելոյ ցասմանն բարկութէ:

Եւ արդ կարի պէտք են մեզ կարծրագոյն զրահից, զի հանապազ ՚ի հանդարտութեան պահիցեմք զայնպիսի զաւակն: Պիտոյ է և մեզ սաղաւարտ ՚ի գլուխ, զի անդ բանն խօսին բնակեալ է, և անտի կամ կեալ հասանիցէ՝ եթէ զլաւ ինչ խօսիցիմք, և կամ կորնչել՝ եթէ զչար ինչ և զանպիտան բարբառիցիմք. վասն այնորիկ ասէ, և «Դիք զսաղաւարտն փրկութեան». քանզի և ուղեղն փափուկ է, վասն որոյ և նա որպէս ընդ ամփոփ ինչ ընդ գանգոսին ծածկեալ կայ ՚ի վերայ քան զամենայն անդամս, և ամենայն բարեաց և կարեաց պատճառք լինի մեզ, կամ զլաւն կամ ոչ զնոյնպիսին ճանաչել:

1 Օրինակքն պակասեր խօսին:

Այս ոտից և ձեռաց մերոց պէտոք են զինուք · ոչ այսց ոտից և ոչ այսց ձեռաց, այլ ոգւոյն · զի ձեռքն զարիս գործեսցեն, և ոտքն յօգուտ գնասցեն : Աղաչեմք այսուհետև զանձինս այսպէս, զի յաղթել կարասցուք պատերազմաց, և դիցուք զպսակն 'ի գլուխ Քրիստոսիւ Յիսուսիւ տերամբ մերով, ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն :

## Ի ՎԵՑԵՐՈՐԴ ԺԱՄԷՆ

Այս արդարև այն իսկ է Հանգիստ, ուր մերժեսցին ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք : Ուր ոչ հօգք ինչ իցեն, և ոչ աշխատութիւնք, և ոչ կասկած · և ոչ երկիւղ խախտիցէ և քայքայիցէ զմիտս, բայց միայն երկիւղն յայն՝ որ լի է խնդութեամբ : Չիք անդ քըրտամբ երեսաց ուտել զհաց, և փուշ և տատասկ · չիք անդ ցաւովք և տրտմութեամբ որդիս ծնանել, և դարձեալ առ այր իւր դառնալ, եթէ նա միւսանգամ տիրեսցէ նմա · այլ ամենևին խնդութիւն է, խաղաղութիւն և քերկրութիւն և քաղցրութիւն և հեշտութիւն : Չիք անդ նախանձ, և ոչ չարակնութիւն, և ոչ ցաւք, և ոչ մահ · և ոչ մահ մարմնոյ, և ոչ մահ հոգւոյ · չիք անդ խաւար և ոչ գիշեր, այլ ամենևին տիւ, ամենևին լոյս : Չիք անդ վաստակել, և ոչ յոգնել և զմայլանալ, այլ հանապազ 'ի ցանկութիւնս քաղցրութեան հարեալք, միշտ վայելիցեմք, և ցանկ պիտոյի :

Ասեմք զի օրինակ ես ինչ տաց զանուտի կենացն · Թէպէտ և չէ հնար, սակայն որչափ ինչ հնար է՝ ջանայայց տալ օրինակ ինչ : Նայեցարուք ընդ երկինս, յորժամ սուրբ յամպոյ իցէ, և ցուցանիցէ զմեծապայծառ պըտակն և զվայելուչ երեսացն գեղեցկութիւն · և յորժամ բազում ժամս պշնուցումք, նայեցարուք դարձեալ և յաստղսն՝ որ ոչ այնպիսի ինչ իցեն, այլ ես աւելի գեղեցիկ որչափ քան զկաւեղէն յարկս ոսկեղէն · և դարձեալ յետ նորա 'ի վերին ձեղունն · ապա 'ի հրեշտակս և 'ի հրեշտակապետս, և յանչափ գունդս անմարմնական զօրութեանցն · ապա և յայն իսկ արքունիսն, 'ի հայրենի աթոռ : Բայց չկարէ, որպէս ասացին,

բան յանդիման կացուցանել։ Փորձի պէտք են և փորձիւն գիտութեան։ Որպէս թէ համարեսջիք զԱ՚դամ ՚ի դրախտին, կարի քան զայն առաւել է այն բնակութիւնն. որչափ լաւ են երկինք քան զերկիր։

Նոյն և այլ ևս խնդրեսցուք օրինակ ինչ։ Եթէ այնպէս ինչ ՚ի դէպ լինէր թագաւորիս՝ որ այժմ ունիս զամենայն ինչ՝ զաշխարհս ունել, և ՚ի պատերազմաց և ՚ի հոգոց ազատ լինել, բազում հարկս առնուլ և յամենայն կողմանց ոսկի յաճախել, և հոյակապ և անուանի լինել, զինչ թուէր ձեզ, որպիսի՞ ինչ միթէ լինէին, որպիսի՞ զուարճութեամբ զուարճանայր. յորժամ պատերազմունք ՚ի միջի չկային, և աշխարհս ամենայն ՚ի խաղաղութեան և ՚ի ծառայութեան կային նմա. այնպիսի է հանգիստն այն. մանաւանդ թէ չեղև իսկ բաւական օրինակ ինչ այնմ ՚ի մէջ բերել. այլ պարտ է և այլ ինչ օրինակ խնդրել։

Մ՚իտ դիր, յորժամ մանուկ ոք արքայորդի մինչ դեռ յորովայնի մօրն իցէ, չէ ինչ հմուտ թագաւորութենն պատուոյ. իսկ յորժամ դէպ լինիցի արտաքս ելանել, և անդէն յաթոռ արքունական հասանել, ոչ մեղմով ինչ, այլ վաղվաղակի միանգամայն առ ինքն առնուլ. այնպիսի ինչ է հանգիստն այն. և ոչ միայն այնպիսի, այլ ևս բիւրապատիկ առաւել։ Կամ թէ ոք կալանաւոր, որոյ բազում վիշտս ՚ի բանտի կրեալ իցէ, և յաթոռ թագաւորութեան հասանիցէ, նա և ոչ կարիցէ հաւատեաւ ինչ օրինակ այնմ հանգստեան նմանեցուցանել։ Զի աստ որում ինչ ոք և հասանիցէ բարեաց, զառաջին օրն՝ թէպէտ և զթագաւորութենէն իսկ առիցէ, մի օր միայն կարի պայծառացեալ ունի զցանկութիւնն, կամ զերկուսն կամ զերիս. և յորժամ բազում ժամանակս յառաջ խաղայցէ, կալ կայ յուրախութեանն, այլ ոչ այնչափ ինչ ՚ի հանգստեանն. քանզի զիջանէ օր ՚ի սովորութենէն որպիսի ինչ և իցէ. իսկ անդ ոչ միայն չկասէ, այլ ևս քան զևս աճէ։

Նա արդ ՚ի միտ առ՝ որպիսի ինչ իցեն ոգիքն որ անդր երթեալ իցեն, և չունիցին ակն բարութեանցն վախճանի, և եղծումն և այլայլումն. այլ միշտ գալ յառաւելութիւն և ունել կեանս անվախճանս, կեանս ազատս յամենայն հոգոց և յամենայն տրտմութեանց, լի ու-

բախտութեամբ, բազմապատիկ բարութեամբք։ Զի եթէ աստ յորժամ 'ի դաշտ ուրեք ելանիցեմք, ուր զօրք արքունի բանակեալ իցեն, խորանս հարեալ տեսանիցեմք, արահակս ձգեալ, նիզակս կանգնեալ, գեղարդունս շողացեալ, կմբեթեայս վահանացն շքեղանակեալս, նշանս արձակեալ, գրօշս գործեալ, կարի իմն զարմանամք և սքանչանամք. և եթէ զթագաւորն եւս 'ի միջի տեսանիցեմք, կամ թէ հետի ընթանայցէ ոսկեհուռ վահանօք, և կամ թէ ձիավարիցէ ոսկեօք զինուք և ականակապ սանձօք երիվարօք, թուի մեզ՝ թէ քան զայն բարութիւնս այլ ինչ չկայցէ տեսանել. այլ թէ զամենեսին տեսաք։

Զինչ համարիցիս, յորժամ զխորանս սրբոցն կանգնեալս տեսանիցես և զյարկսն յաւիտենից։ "Ընկալցին, ասէ, զձեզ յարկսն իւրեանց յաւիտենից". յորժամ զիւրաքանչիւր ոք 'ի նոցանէն առաւել քան զարեգական ճառագայթն տեսանիցես պայծառացեալս. ոչ 'ի պղնձոյ և յերկաթոյ, այլ 'ի փառաց, զորոյ զպայծառութիւնն[1] ակն մարդկեղէն չկարիցէ տեսանել, և այն զմարդկան. իսկ զհազարաց հազարաց հրեշտակապետաց և զբիւրուց բիւրուց հրեշտակաց և զքրովբէից և զսերովբէից, զաթոռոց և զտէրութեանց և զպետութեանց և զիշխանութեանց, որոց գեղն անհնարին է և ըստ մտաց միտս անցանէ, զիա՞րդ կարիցեմք ճառել։

Այլ ցե՞րբ ոչ դադարեմք յընթանալոյ զհետ անհասին. ըստ այնմ "Զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր ինչ պատրաստեաց Ած սիրելեաց իւրոց"։ Այլ եթէ այս այսպէս իցէ, ապա չիք ինչ կարի ողորմելի քան զայնոսիկ՝ որք անտի վրիպեցին. և ոչ առաւել երանի քան զայնոսիկ՝ որք այնմ հասանիցեն։ Այլ արդ եղիցուք և մեք յերանելեացն, զի հասանիցեմք յաւիտենից բարութեանցն 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Յօրինակին պակասէր պայծառութիւնն։

## ՅԵՕԹՆԵՐՈՐԴ ԺԱՌՈՒԷՆ

Այլ մեզ այսուհետեւ ժամանակ 'ի դէպ է առնել, մե-տիցուք համարձակութեամբ և խնդրեսցուք. միայն թէ զհաւատոն մատուցանիցեմք, և զամենայն ինչ տայ: Այժմ է ժամանակ պարգեւաց. մի ոք զանձն տկոյս համարեսցի: Այնժամ է ժամանակ անյոյս, յորժամ հարուածքն փակիցին, յորժամ Թագաւորն մտանիցէ և զառագաստականօքն շրջիցի, յորժամ առնուցուն զգոգ նահապետին՝ որք այսմ արժանի լինիցին: Այժմ չև ևս է, քանզի դեռ թատրն առաջի կայ, դեռ ևս պա-տերազմ 'ի միջի կայ, դեռ ևս յաղթութիւնս յերկբայս է. փոյթ յանձին ունիցիմք, քանզի և Պաւղոս ասէ. "Այնպէս ընթանամ որպէս ոչ յաներեւոյթս ինչ". ընթացից պէտք են, և կարի խիստ սաստիկ ընթացից:

Որ ընթանայցէն՝ չտեսանէ զոք, և թէ պատահիցէ ոք նմա, և թէ ընդ մարգագետինս և ընդ առապար տե-ղիս անցանիցէ. որ ընթանայցէն, ոչ 'ի տեսողսն նայի, այլ 'ի պարգևսն: Թէ մեծատունք իցեն և թէ աղ-քատք, թէ պարսաւիցէ ոք և եթէ զան հարկանիցէ, թէ թշնամանիցէ ոք և քարինս զհետ ձգիցէ, եթէ ըզ-տուն ոք առնուցու և կամ զկին և զորդիս առնուցու, թէ զինչ և առնիցէ ոք, միում ևեթ ուշ ունիցի՝ ըն-թանալ և զպսակն առնուլ: Որ ընթանայցէ, ոչ ուրեք դադարէ. ապա եթէ սակաւ ինչ հեղգայցէ, զամենայն կորուսանէ: Որ ընթանայցէ, ոչ միայն չկասէ նախ 'ի գլուխ ասպարիսին ելանելոյ, այլ ևս քաջ յաճախէ զըն-թացսն:

Ոչ այս աւելեմ վասն այնոցիկ՝ որք ասիցենն, թէ 'ի մանկութեանն վաստակեցաք, և 'ի մանկութեանն պա-հեցաք, արդ 'ի ծերութիւն հասաք, չեմք ատակ այս-պիսի ինչ ճգունս յանձին ունելոյ: Առաւել յայնժամ պարտ է յորդորել յառաքինութիւնս: Ո՛չ զառաջինն ինչ ուղղութիւնս համարիցիս. այլ արդ մանկացիր և հա-մարեա զանձնդ յաղթող. զի որ զմարմնաւոր ընթացս ընթանայցէ, յիրաւի յորժամ 'ի ծերութիւն հասա-նիցէ՝ չկարէ նոյնպէս ընթանալ, քանզի 'ի մարմինն ա-պականեալ է ամենայն ճգնութիւնն. իսկ դու ընդդէմ կա-

Digitized by Google

սեցուցանես զընթացսն. զի ոգւոցն գործ է, և ոգւոցն արթնոց. զի ոգիքն առաւել 'ի ծերութեանն առողջանան, յայնժամ առաւել յազդօղ լինին, յայնժամ կարի խիզախեն: Զոր օրինակ մարմինն յորժամ ջերմամբ ծնկիցի և այլովք ստէպ ստէպ ցաւօք, թէպէտև կարող է՝ վատ է. և յորժամ զերծանիցի յայնպիսի վարանաց, ապա միւսանգամ ոգի արկանէ. Նոյնպէս զոգին 'ի մանկութեան՝ և ջերմ ցանկութեանն լնէ, և փառասիրութիւնն հաշէ, մանաւանդ ուր փափկութիւնք իցեն, և անառակ ցանկութիւնք որ ափրօդիտեանն կոչին, այս ինքն աստղկեան:

Իսկ ծերութիւնն ըստ ամենայն լկութիւնս անցեալ՝ զանսա կարիան 'ի բաց թօթափէ, զկէսն առ յագ, և զկէսն առ 'ի չառաքինութիւն սիրելոյ, զի զեռանդն մանկութեանն կարծեալ ծերութեանն է. և չտալ բնաւ ամենևին մտացն զհետ կամացն երթալ, այլ իբրև զազգի ազգի ինչ պատերազմունս ցածուցանել, որպէս 'ի խռովութեանց, և 'ի բնութիւնն հաստատեալ կացուցանէ, և բազում համարձակութիւն և հանդարտութիւն գործէ, և բազում երկիւղ անկէ 'ի միտս: Զի թէ և այլ ոք ոչ, ասեն, սակայն ծերացեալք գիտեն եթէ վախճանելոց են, եկեալ հասեալ է 'ի դրունս մահու: Յորժամ երկրաւոր ցանկութիւնքն յաղթեալ 'ի վերայ խաղայցեն, ահ դատաստանին մտեալ՝ զայն 'ի բաց քերիցէ, և զխիստ հակուղ անիցէ, ոչ ապաքէն և զիւրին լինիցի, եթէ կամիցիս:

Այս զիարդ իցէ, ասեն, զի ահաւասիկ տեսանեմք քան զբազում մանկտի ես չար զծերս զարգացեալս: Զյանձախութիւն չարեացն ասեմ. քանզի և զկատաղիս տեսանեմք, թէպէտ և ոչ ոք մեղիցէ, անձամբ քաբաղէժ լինին: Արդ յորժամ տեսանիցես եթէ ծերն զմանկաւոյ ախտ ախտանայցէ, չարեաց յանձախութիւն է այն. քանզի և ոչ ընդ մանկութեան մեղացն կարիցէ աղերս մատուցանել՝ թէ "Զմեղս մանկութեան և զանգիտութեան իմոյ մի յիշեր": Զի որ 'ի ծերութեանն այնպիսի կաղիցի, յայտ է թէ 'ի մանկութենէ ևս չար. քանզի ոչ եթէ առ տգիտութեան ինչ և ոչ առ խակութեան և ոչ վասն տկերծ հասակի, այլ 'ի ծուլութենէ: Քանզի այնպիսին կարէ ասել՝ եթէ ըդ-

մեղս մանկութեան և զանգիտութեան իմոյ մի յիշեր, որ 'ի ծերութեն զպատշաճն գործիցէ, որ յալևորութեն ցանկայցէ. իսկ եթէ 'ի ծերութեանն նոյնպէս անառակ իցէ, զիարդ արժանի լինիցի այնպիսին ծեր անուանել, որ ոչ 'ի հասակէն և յաւուրցն ակն ածիցէ: Իսկ որ ասիցէն՝ եթէ զմեղս մանկութեան իմոյ մի յիշեր, յայտ է թէ 'ի ծերութեանն զարդարութենէ բուռն հարեալ իցէ, վասն այնորիկ զայն այնպէս ասիցէ: Արդ մի վասն ծերութեանն յուսութեանց՝ և 'ի մանկութե մեղաց զրկեալ գտանիցիս 'ի թողութենէ:

Իսկ արդ զիարդ չիցէ անպատեհ և անդր քան զթոզութիւն, յորժամ ծեր այր 'ի կապեղանոցս և 'ի կըրպակս մտանիցէ, և 'ի կառամարտիկ ասպարէսն դեգերեսցի, և 'ի թատերան ընդ մանկտի ընթանայցէ, պատուականն 'ի մէջ լկտեաց բազմաց: Արդարև ամօթոյ և առականաց գործ է. 'ի վերոյ մեծարեալ ալեօքն ծաղկեալ, և 'ի ներքոյ զմանկտւոյ միտս ունիցի. և եթէ ոք 'ի մանկտւոյ թշնամանիցէ զայնպիսին, նա փաղփաղակի զալիսն 'ի մէջ բերէ: Դու նախ չակնածիցես յաւուրցդ. զի եթէ դու 'ի քումմէ չակնածիցես՝ որ ծերդ իցես, զիարդ զմանկտին ստիպես 'ի քոյոցդ ակն ածել, և քեզ մեծարանս դնել:

Զակնածես յաւուրցդ, այլ յամօթ առնես. ած ըզքեզ պատուեաց սպիտակութեամբ հերոյդ, և ես քեզ զսւագութեան և զբարձրերէց տեղի. և դու զպատիւն քեզէն 'ի բաց մերժես: Իսկ արդ ակն ածիցէ 'ի քեն մանուկն, յորժամ դու ես չար քան զնա յաղադարձիցիս: Արդ յայնժամ մեծարոյ ես, յորժամ ոք ըստ արժանեացն գործս գործիցէ. իսկ յորժամ լկտիցի ինչ, և չար քան զմանկտին ծաղր կայցէ: Զիարդ կարիցէք մանկտոյդ խրատ տալ՝ յորժամ ծերքդ յանառակութիւնս հատանիցիք: Ոչ զծերս գարով առնելոյ վասն ասեմ զայս, այլ զլկտիս. զի որ զայնպիսի ինչ գործս գործիցեն, թէպէտ և հարիւրեմեանք իցեն, ես զայնպիսիսն մանուկս լկտիս համարիմ: Զոր օրինակ մանկունք թէպէտ և կարի իսկ տղայք իցեն և զգաստանայցեն, լաւ իցեն քան զծերս, և չէ իմ բանս՝ այլ գրոց, որ գիտէ զայսպիսի ընտրութիւն առնել: "Ծերութիւն պատուական է, ասէ, ոչ որ երկայնակեացն է. և հասակ ծերութեան վարք անարատք":

Digitized by Google

Նա և զծերութիւնն իսկ ոչ յայն սակս պատուեմք, եթէ սպիտակ հերքն քան զթուխն պատուական է, այլ զի նշանակ է առաքինաւոր կենացն. և յորժամ զալիսն տեսանիցեմք, նովաւ առնումք զծանօթս ներքին ալեացն. իսկ եթէ անուղղայ ինչ ալեացն գործ գործիցէ, ծաղր և կատակ կայցէ նա ամենեցուն։ Նոյն վասն այնորիկ առաւել ևս պատուեմք զթագաւորն, զի թագն և ծիրանիքն՝ արքայութեանն նշանակ է. ապա եթէ տեսանեմք զնա ծիրանօքն հանդերձ արհամարհեալ՝ի պատուորացն, խեղդ ընդ անձն արկեալ՝ի բանդ տանիցին, միթէ ա՞կն ածիցեմք ինչ՝ի ծիրանեացն և՝ի թագէն. ոչ ապաքէն և զկերպարանան ևս լայցեմք, և եղուկ և ողորմելի համարիմք։

Նոյն արդ մի ինչ անձին շուք գնիցես ալեօքն պատուեալ, յորժամ քեզէն ալեացն մեղանչիցես. քանզի ալիքն վրէժս պահանջիցեն՝ի քէն. զի զայնպիսի զմեծարանաց և զպատուոյ կերպարանս յամօթ առնես։ Նոյն զայս ոչ եթէ զամենեցունց ինչ ասեմ, և ոչ յախուռն ընդ ծերութեան ինչ գուայցեմք, այլ ընդ լկտի մտացն, և որ զծերութիւնն յամօթ առնեն. ընդ այնպիսի ծերոց պչարեալ ասիցեմք ընդդէմ, որք անառակութեամբ զալիսն թշնամանիցեն։ Ո՜վ թագաւոր է և ծերն եթէ կամիցի. որ առաւել ծիրանիս քան զթագաւորութեանն ունիցի. և սպասաւորաց տեղի՝ հնազանդեալ ընդ իւրև զցանկութիւնսն։ Ապա եթէ՝ի գետինն անկանիցի՝ի թագաւորութեանն աթոռոց, ընչից ցանկութեան և պաճուճանաց և փափկութեան և արբեցութեան և բարկութեան և անառակ ցանկութեանցն լինիցի ծառայ, և՝ի զարգարանս հատանիցի, և իւղովք օծանիցի, և զտիսն և զալիսն իւրովք կամօք թշնամանիցէ, և որպիսի՜ տանջանաց չլինիցի արժանի այնպիսին։

Այլ և ձեզ ասեմ մանկտոյդ, մի այնպիսի ինչ ամեք լինիցի. քանզի ոչ եթէ ձեզ ներիցէ ինչ որք զյանցանելն. այլ մարթի՝ի մանկութեանն զծերութեան միտս ունել, որպէս ծերք՝ի ծերութեան խակք իցեն և ակեղտ։ Ո՜ր օրինակ անդ ոչ մազն սպիտակ օգուտ գործէ, նոյնպէս և ձեզ թուխն մազ չկարէ ինչ խափան լինել. զի եթէ տգեղագոյն իցէ ծերոյն զայն գոր-

Digitized by Google

ծել՝ զոր տայցին, որչափ և ս առաւել մանկանն ։ Բայց տակային չէ ազատ 'ի պատժոց և մանուկն. զի մանուկն յայնժամ եւեթ ներելոյ և թողութեան արժանի իցէ, յորժամ 'ի գործ և 'ի վերակացութիւն ինչ իրաց մեծամեծաց կոչեսցի, և նա չիցէ ինչ հմուտ, և ժամանակաց և կրթութեան կարօտ ։

Իսկ յորժամ զգաստութիւն ինչ պարտ էր ցուցանել, այնուհետև չլինիցի արժանի թողութեան, և ոչ յորժամ ընչասիրութեան յաղթել պարտ իցէ, է ուրեք զի և ս քան զծերոյն քաջ պատիժս պահանջիցէ մանուկն. զի նմա բազում փարմանաց պէտք են վասն ծերութեան տկարութեանն. իսկ սա կարող է՝ եթէ կամիցի՝ բաւական լինել առ 'ի զանձն ուղղելոյ ։ Եւ ա֊ղխսն ինչ թողութեան արժանի լինիցի, յորժամ և յափշտակել ինչ կամիցի զծերոյն, յորժամ բազում անպիտանս խօսեսցի, յորժամ թշնամանիցէ, յորժամ բամբասիցէ, յորժամ արբենայցէ ։ Նոյնպէս մինչ 'ի զգաստութեանն իցէ՝ համարիցի թէ չիցէ ընդ բամբասանօք անկանել. և տես որչափ և անդ իսկ բազում օգնականութիւն ունի եթէ կամիցի. զի թէպէտ և կարի սաստիկ լինիցէ զնա ցանկութիւնն, այլ բազում ինչ է զոր առաւել քան զծերն կարէ գործել և թուլել զչար գազանն ։

Եւ զինչ իցէ ։ Բազում վաստակք, ընթերցուածք, արթնութիւնք, պահք ։ Եւ զինչ պիտոյ զայնմ ամենայնէ. մինչ վանականք իցեմք ։ Եւ զայդ ցիս զի ասես. Պաւղոսի տուր պատասխանի, յորժամ ասիցէ՝ "Արթուն լերուք յամենայն հանապազորդութիւնս և 'ի խնդրուածս". յորժամ ասիցէ՝ "Մարմնոյ խնամ մի առնիք 'ի ցանկութիւնս ամենևին". զի ոչ առ վանականսն միայն գրեաց զայն, այլ առ ամենեսին, որք 'ի քաղաքս և 'ի գեօղս և յամենայն տեղիս իցեն ։ Միթէ աշխարհականն աւելի ինչ պարտի ունել քան զվանականն, բայց միայն ընդ կնոջն ամուսնութիւնն. ընդ այնոր զոյ նմա ներել. ընդ այլոյ իրաց՝ ոչ այնուհետև. այլ զայլն ամենայն կշիռ հաւասար ընդ վանականսն պարտի գործել ։ Քանզի և երանութիւնքն որ 'ի Քրիստոսէ տուան, ոչ վանականացն տուան. ապա թէ ոչ, ամենեքին իսկ կորնչէին ամենայն աշխարհք, և անիրաւութիւն հա֊

մարեալ լինէր յանձակոյս կողմանէ անտի։ Ոչ եթէ երանութիւնքն միայն վանականացն տուեալ էին, և աշխարհականն չկարէր անտի ուղղութիւնս կատարել, և զամուսնութիւն նորա է հրամայել, ապա զամենեսին իսկ ինքն կորուսանէր։ Եթէ չէր հնար համդերձ ամուսնութեամբն զվանականաց գործ գործել, բնաւ ամենեքին իսկ եղծեալ ապականեալ գտանէր առաքինութեանն յօժարութիւն։

Այլ բնաւ զինչ իսկ էին պատուական հարսանիքն, որ այնչափ բարութեանց խափանիչք մեզ լինէին։ Այլ արդ զինչ իցէ։ Հնար է և կարի իսկ հնար կին ունել, և զառաքինութիւնն կատարել, եթէ կամիցիմք։ Որպէս՝ թէ ունիցիմք կանայս, որպէս թէ չունիցիմք, եթէ վարիցեմք զաշխարհս որպէս ոչ թէ յախտի ծախս։ Ապա եթէ ոմանք խափանեցան ինչ 'ի բարիս գործելոյ ամուսնութեամբն, գիտասցեն՝ եթէ ոչ ամուսնութիւն ինչ է խափան, այլ կամքն որ չարաչար վարեցին զամուսնութիւնն. նա և ոչ գինին գործէ զարբեցութիւն, այլ կամքն չարք որ զանչափն խնդրեցին։ Իսկ եթէ 'ի չափու ունիմք համով զամուսնութիւնն, յարքայութեան և առաջին գտանիցիմք, և յամենայն բարութիւնան վայելեսցուք։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

### ՅԻՆՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Քանզի անհնարին է ոյք միանգամ լուսաւորեցան և ճաշակեցին յերկնաւոր պարգևէն, հաղորդ եղեն հոգւոյն սրբոյ, և զգեղեցիկ ճաշակս բանին այ ճաշակեցին և զզօրութիւն հանդերձելոյ յաւիտենին և կործանեսցին, դարձեալ նորոգել ապաշխարութեամբ, վերըստին խաչել զորդին այ և խայտառակել,,։ Այլ արդ զինչ, արտաքս ընկեցեալ իցէ ապաշխարութիւնն. քաւ լիցի. այլ որ 'ի ձեռն աւազանին դարձեալ նորոգումն է . . . վերստին խաչել. . . ։ Որ առէն այսպիսի է. Մկրտութիւնն խաչ է, և խաչակից եղև հին մեր մարդն.

Digitized by Google

“ քանզի կերպարանակից եղաք նմանութեան մահու նորա „ . և դարձեալ “ Ընդ նմին թաղեցաք մկրտութեամբն 'ի մահ „ : Զի որպէս ոչ գոյ հնար միւսանգամ 'ի խաչ ելանել Քրիստոսի, զի այս է խայտառակել զնա, նոյն է և երկրորդ անգամ մկրտել . . . Զի զոր օրինակ մեռաւ Քրիստոս 'ի խաչին, նոյնպէս և մեք 'ի մկրտութեանն, ոչ մարմնոյ, այլ մեղաց: Տեսանես մահ և մահ . . . . . . . . . . . . . .

Եւ արդ աղէ ասա, եթէ յարքունիսդ ուրեք մտանէիր, և ամենայնի որ ինչ անդ էր՝ հաւատարիմ լինէիր, և ապա մատնէիչ ամենայնի. միթէ դարձեալ հաւատայր ոք ինչ քեզ: Եւ արդ, զիարդ, ասեն. չգուցէ ապաշխարութիւն: Ոչ ապաշխարութիւն. այլ մկրտութիւն երկրորդ չիք. ապաշխարութիւն գոյ և բազում զօրութիւն ունի, և կարէ իսկ ջնջել զմեղսն և զներկելոցն 'ի չարիս՝ եթէ կամիցին, և փոփոխել 'ի բեւեռանց մեղացն. և զտարագնացեալսն կացուցանէ 'ի զգուշութեն, թէպէտ և յառաջս չարեացն երթեալ հասեալ իցեն: Եւ այս բազում ուստեք յայտ է. “ Միթէ որ անկանիցին, ասէ, ո՛չ յառնիցէ. և կամ որոյ զերեսն դարձուցեալ իցէ, չդառնայցէ „ : Ոչ հնար միւսանգամ նկարել 'ի մեզ զՔրիստոս, եթէ կամիցիմք. և լուր սմին Պաւղոսի՝ որ ասէ իսկ. “ Որդեակք, զորս դարձեալ վերստին երկնեմ, մինչև նկարեսցի Քրիստոս 'ի ձեզ „ . միայն բաւեն հարցուք զապաշխարութենէն :

Եւ արդ տես զնոյն մարդասիրութիւնն. պարտ էր մեզ զառաջինն իսկ ամենայն կերպարանօք 'ի պատիժս մտանել. քանզի և օրէնս ըստ սրբոյս՝ բնականս ընկալաք, և 'ի բազում բարութիւնս վայելեցաք, և 'ի տեսանել անծանօթս եղեաք, և վարս անսուրբս յանձն առաք, և ոչ միայն չպատժեաց, այլ և ս բազում բարութեանց արժանի արար. և այնպիսի բարութեանցն՝ որպէս թէ մեծամեծ բարութեանց երեւութիւնս գործեալ էր մեր: Դարձեալ անկաք յայնմանէ, դարձեալ ստկայն և այնպէս ոչ պատժեաց, այլ ետ մեզ զապաշխարութիւնն դեղ, որ բաւական է զամենայն մեղսն ջնջել և եղծանել, միայն եթէ գիտիցեմք որպիսի ինչ դեղն իցէ :

Եւ արդ թէ որպիսի ինչ իցէ դեղն ապաշխարութեան և կամ թէ զիարդ և իւ կազմեսցի, նախ՝ յլստդաս-



Digitized by Google

ներքս զմեզս խաբես անձինս. «Զմեղս իմ, ասէ, ոչ ծածկեցի 'ի քէն». և «Ասացի թէ պատմեցից զինէն զանօրէնութիւնս իմ Տեառն, և դու թողեր զամպարշտութիւնս մեղաց իմոց». և այլուր՝ թէ «Ասա դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարասցիս». և դարձեալ՝ թէ «Արդարն անձին ամբաստանէ յառաջին պատասխանւոջն»:

Երկրորդ անգամ՝ 'ի բազում խոնարհութենէ. քանզի խորև չար ինչ առնի է. զի եթէ զառաջինսն բուռն հարկանիցես, ամենայնն զկնի գայ. եթէ խոստովան լինիցիս զմեղսն՝ որպէս պարտ իցէ խոստովան լինել, խոնարհի հոգին, քանզի խիղճն ճնշեցուցանէ զնա անդէն և ածէ 'ի ցածութիւն: Նոյնց պարտ է և այլ ինչ յաւելուլ 'ի խոնարհութիւնն, եթէ այնպէս ինչ իցէ՝ որպէս և Դաւիթն երգէր. «Զսիրտ, ասէ, բեկեալ և զխոնարհ՝ Ած ոչ արհամարհէ». զի բեկեալսն չյառնէ, և ոչ զօր զայրացուցանէ, այլ պարկեշտ և եթ ընդ ա-ծին պատարագէ. չյառնէ երբէք, չմեղանչէ, չամբարտաւանի, թէպէտ և թշնամանիցի, թէպէտ և չարչարիցի՝ կարկի, կայ, և չերթայ ումեք ընդդէմ՝ խնդրել զվրէժ անձին.

Յետ խոնարհութեանն՝ կարևոր աղօթից պէտք են, և բազում արտասուաց և ցայգութեան և ցերեկութեան, որպէս և ասէ իսկ, եթէ «Լուացից զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացից: Աշխատեցայ ես 'ի հեծութեան իմում». և դարձեալ՝ եթէ «Զմոխիր որպէս զհաց կերայ, և զըմպելիս իմ արտասուօք խառնեցի»: Նոյնպէս կարևոր աղօթից՝ և բազում զգուշութեան պէտք են. որ առաւել սատանայական կազմիցէ զդէմ ապաշխարութեան. Եւ զոր օրինակ 'ի բժշկացն ողնականութիւնս բազում բանջարս առնուն և մի դեղ կազմեն, և 'ի բազմացն մին կարի է ազդոյ, նոյնպէս և յապաշխարութեանն այս բանջար ազդոյ է քան զամենայն, և որ զամենայն ապաշխարութիւնն կազմէ:

Լուր զինչ ասեն ածեղէն գիրք. «Տուր, ասէ, ողորմութիւն, և ամենայն ինչ քո սուրբ եղիցի». և դարձեալ «Ողորմութեամբ և հաւատովք սրբին մեղք». և դարձեալ՝ թէ «Զհուր բորբոքեալ ջուր շիջուցանէ,

եւ զմեղս մեծամեծս ողորմածութիւն ցածուցանէ„:
Այլ սոսա չպարտականաց ումեք, եւ ոչ ոք պահել. ամենեցուն թողուլ զյանցանս: «Մարդ մարդոյ եթէ ոխս պահիցէ, յԱյ խնդրէ զգթութիւն„. Եւ դարձեալ «Թողէք զի թողցի ձեզ„. Եւ դարձուցանել զեղբայրս 'ի միաբանութենէ: «Երթ, ասէ, եւ դարձո զեղբայր քո, զի թողուցուն մեղք քո„. Եւ ընդ քահանայս ընտանութիւն ունել. «Եւ եթէ մեղս ուրուք գործեալ իցէ՝ թողցի նմա„. Եւ վերակացու լինել զրկելոց, եւ չունել զյանցանս 'ի միտ, եւ ամենայնի հեզութեամբ տանել:

Այլ արդ յառաջ քան զամենայն եթէ մարթի ապաշխարութեամբ ջնջել զմեղս, չկայցէք 'ի սպասնալի՝ եթէ չիք այլ մկրտութիւն. եւ չունիցիք ինչ յոյս անձանց. իսկ արդ ուսայք աւասիկ, եթէ որչափ իցէք ապաշխարութիւնն եւ թողութիւնն յարգարել, եւ եթէ կարող եմք նմա յամենայն կարեաց փախստական լինել, եւ մարթի մեզ 'ի լաւութիւնս վարել նմա, որպիսի՛ ներելոց եւ թողութեան արժանի լինիցիմք՝ որոց եւ ոչ 'ի միտ անցանէ անկանիցին մեղքն: Զի եթէ այն մեզ կայր, սոսա ամենայն ինչ դիւրաւ վճարէր: Զոր օրինակ եթէ որք ընդ դուռն մտանիցեն, 'ի տանն իսկ է. նոյնպէս եւ որ զպարտսն մեղաց զենաւ ածիցէ, եւ 'ի քաջութիւն իսկ գայ: Նոյն եթէ որք ասիցէ՝ մեղաւոր եմ մեղաւոր եմ, եւ զմեղսն զենաւ ոչ ածիցէ՝ եթէ զայս ինչ եւ զայս մեղայ, այնպիսին ոչ երբէք դադարէ 'ի մեղանչելոյ. Համառօտ խոստովան լինի, եւ փոյթ յանձին ոչ ունիցի երբէք ածել զյանցանսն յուղղութիւն: Եթէ ակնկալեան տանիցէք, սոսա եւ այլ ամենայն զնորին զգեն գայ, եթէ զմուրան, եթէ զակնկալեան ցուցանիցէք: Ամենայն ուրեք ակնկալեան եւ առաջին դժուարինք են. եւ եթէ ակնկալեան տանիցեմք հինգ արկանելոյ, ամենայն ինչ հարթ եւ դիւրին լինիցի:

Այլ արդ ակնկալեան առաքացուք աղաչեմ, մի՛ յաղօթիցս յանձնախոսութենէ, եւ մի՛ 'ի սոսկայ առաստաղութեանց, եւ մի՛ 'ի առանձնութենէ. քանզի եւ ոչ որ կարի փոքր իցէ՝ անտեսանելի է: «Տէրն, ասէ, զի առանձինն եւ զենոց ունել, եւ քաջքեցի զձանձապարհ նոցա„: Այլ յամենայն յաղորմածութենէ, եւ 'ի թողուլ զյանցանս ընկերին. եւ 'ի չպահելոյ ոխս, եւ 'ի չխնդրելոյ զվրէժ անձին, խնդրահեսցուք զանձինս մեր:

Digitized by Google

Եթէ միշտ զնոսա զմեղսն զոր գործեցաք՝ ածեմք, չիք ինչ յարտաքնոյ իրացն՝ որ զմեզ հպարտացուցանել կարիցէ, ոչ մեծութիւն և ոչ հարստութիւն, ոչ իշխանութիւն և ոչ պատիւ. այլ թէ բնաւ իսկ յարքունի կառս նստիցիմք, հեծեծեսցուք զանձնայկս ։ Որպէս և երանելին Դաւիթ թագաւոր էր և ասէր. «Լուացից զամենայն գիշեր զմահիճս իմ». և ոչ ինչ ՚ի ծիրանեացն և ՚ի թագէն վնասեցաւ, և ոչ հպարտացաւ. քանզի գիտէր թէ մարդ է. և քանզի բեկեալ էր սիրտն, զողբս հարկանէր ։ Այլ զինչ իսկ իցեն մարդկեղէն կիրք ամենայն, այլ հող և մոխիր և իբրև փոշի առաջի հողմոյ, ծուխ և ստուեր և տերև յօդոյ տարացեալ, և ծաղիկ և երազ և բանքն և առասպելք, հողմ, օդ լցեալ տարած և հեղեալ, թև թռուցեալ և ոչ ուրեք գադարեալ, նաւակք սահեալք և ոչ ուրեք յանգուցեալք. և եթէ այլ ինչ քան զսոսա չնչինագոյնք կայցեն ։

Այլ արդ ասէ սա, զինչ ինչ մեծ համարեսցիս, զի՞ պատիւ տանել. զհիւպատոսին. քանզի չիք ինչ այլ պատիւ ձոխագոյն քան զայն, և բազմաց իսկ այն առաւել մեծարոյ թուիցի, և որ այնչափ ՚ի ձոխութիւն և ՚ի պատիւ ելանիցէ՝ և բազմաց զարմանալի. և այլ ոք որ ըստ նմանէ յիշխանութիւն ինչ իցէ, թեպէտ և փոքր քան զնա իցէ, սակայն պատիւ ունին երկրորդին. այլ այսպիսի պատուականք, և յետ սակաւ ինչ ժամանակի չունին պատիւ ինչ ։ Այլ արդ ասէ սա, Ո՞րք եղև, քանի ժամանակս կալաւ. մի ամ, երկուս ամս. սակայն և այն երկուցից պատիւ է ։ Այլ յերազի ոք առնուցու ինչ այնպիսի պատիւ ։ Նոյն այն, ասեն, երազ է ։ Այլ այն զինչ առաւելի իցէ քան զերազն. եթէ զերազն խոստիցես, ապա և զայն ընդէ՞ր չհամարիցիս երազ ։ Որ օրինակ երազն ՚ի գալ տուընջեանն յանդիմանի, և չերևի ինչ ուրեք ՚ի միջի, սոյնպէս և նա ՚ի հասանել գիշերոյն յանդիմանի, և չգտանի ինչ այնպիսի՝ որպէս և յերեկն պերճանայր ։ Որպէս հասարակ ասեն զժամանակն տուն և գիշերն, և զոյգ բաժանեցին զկեանս աշխարհիս. զոր օրինակ այժմ զցերեկ ոք զուարճանայ, գիշերին ոչ ինչ երևէր, և ոչ ցայգութեանն ՚ի տուէ ոք կարէ վայելել ։

Աղքեր հիւպատոս. եղէ և ես յերազի. այլ ես ըզցայգ, և դու զցերեկ. և այն զինչ առնիցէ. քանզի և

ոչ այնու աւելի ինչ իցես քան զիս, բայց միայն անուանն: Եթէ այս անունն հրապարակ է. յանուանց անտի միայն ունել զառաւելութիւնն: Եւ զի յայտնի արարից զոր ասեմս. թէ պաշտօն ինչ ունիք անուանեցեալ՝ եթէ այս անունն հրապարակ է, ոչ եթէ 'ի բանից լինիցի՝ եւ գնայ-ցէ: Նոյնպէս եւ արդեամբքն իսկ, թէպէտ եւ անուա-նեսցի ոք բժիշկ, եւ կայցէ հրապարակ, առ ժամանակ մի երեւի, եւ այլ ոչ երբէք ուրեք: Դնեսցուք թէ զմի տարի կայցէ հրապարակ կամ զերկուս կամ զերիս կամ զչորս. եւ ձեռ իցեն որոց զառանն ամն կալեալ իցէ զհի-ւանդին. չիք ոք, չէ ուրեք:

Այլ ոչ այնպիսի ոք եւ Պաւղոս էր, հանապազ կեն-դանի. եւ ոչ մի օր կամ երկուս կամ երիս կամ տասն կամ քսան կամ զերեսուն. այլ եւ մախձանեցաւ, եւ չո-րեքարիւր ամ 'ի վերայ անցեալ, եւ տակաւին կենդա-նի է. եւ եւս քաջ պայծառագոյն քան մինչ դեռ կենդա-նին էր. եւ այն յերկրի. իսկ զերկնից պայծառութիւնն սրբոցն որպիսի ինչ բան կարիցէ յանդիմանս կացուցա-նել: Վասն որոյ, աղաչեմ, զայն լուսաւորութիւնն խնդրեսցուք, զնորին զհետ երթիցուք, զի այնմ հա-սանիցեմք, որ արդարեւ լուսաւորութիւն եւ պայծառու-թիւն է. մերկնեսցուք յերկրաւոր իրացս, եւ գտցուք շնորհս եւ ողորմութիւն 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, ընդ որում հօր միանգամայն եւ հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւի-տեանս յաւիտենից. ամէն:

## Ի ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

Այնպիսի պատարագ մատուցուք եւ մեք. զի այնք մեծութեան եւ գոյութեան են, եւ սոքա կամաց եւ առա-քինութեան. նոքա արտաքինք, եւ սոքա ներքինք. զնա-սա ձ եւ աղքատ իսկ ոք կարէ մատուցանել, եւ զսոսա սա-կաւք: Որչափ քան զոչխար լաւ է մարդ, նոյնչափ քան զայն այն պատարագն. զի աստ զանձն քո մատուցանես պատարագ: Նա այլ եւս հանձն եւ սորա պատարագք են մարտիրոսացն մարմինքն. զի անդ ոսկրն եւ մարմինքն միանգամայն մատչին. եւ անտի բուրէ հոտ անուշու-թեան: Մարթի եւ քեզ, եթէ կամիս, այսպիսի պա-

տարապ մատուցանել. և եթէ 'ի հուր չայրիցես զմարմինս, այլ այլով հրով մարթ էր այրել. յորժամ կամաւ զաղքատութիւն և զնեղութիւն յանձին ունիցիս։ Օ՜ որ համարձակն է 'ի փափկութեան և 'ի պէսպէս խորտիկս նստուցանել, յորժամ կամիք 'ի միշտ և 'ի տառապանս աղքատնիցես, և զմարմինս սպանանիցես, ո՛չ առաքէն պատարագ լինի և այն։

Այսպէս զմարմինս, 'ի խաչ հան, և անձնուցուս և զա զմարտիրոսութեան պսակն. զի զոր ինչ անդ սուրն գործիցէ, սա կամացն յօժարութիւնն գործիցէ։ Մ՛ի 'ի հուր այրիցի, և մի ընչիցն ցանկութեամբն բորբոքեսցի. այլ արբեսցի և շիջցի հրով հոգւոյն, կատարեսցի նորին որով. այնպիսի պատարագ է հաճոյ, որ չէ կարօտ քահանայից, այլ նովաւ որ մատուցանիցէն. այնպիսի պատարագ է հաճոյ, որ 'ի խոնարհ մատուցանի, և 'ի վեր ընդունելի լինի։

Ո՛չ առաքէն զարմանումն՝ զի զառաջինն ժամանակին հուր իջանէր և ծախէր զամենայն պատարագսն. և այժմ մարթի իջանել հրոյ, որ ես զարմանալի և սաստիկ է քան զայն հուր, և ծախել զոր ինչ տայցի դնիցէ։ Մ՛ա-նաւանդ թէ ոչ ծախել, այլ արբել և յերկինս հանել. ոչ եթէ մոխիր առնել, այլ Այ պատարագ մատուցանել։ Նոյնպիսի իսկ էին Կոռնելի պատարագն. «Աղօթք քո, ասէ, և ողորմութիւնք ելին յիշատակաւ առաջի Այ»։ Տեսանե՞ս զգեղեցիկ հաւանորդներն, զաղօթս և զողորմութիւնս. յայնժամ լսելի լինիցիք, յորժամ մեք լսիցեմք աղքատացն մատուցելոց։ Որ խնու զականջս իւր չլսել աղքատին, և նորա խնդրուածոցն ոչ լսէ Ած։ «Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա Տէր»։ Եւ ո՞ր իցէ օրն չար։ Նոյն օրն դատաստանի առնելոյ չար՝ մեղաւորաց։ Օ՜ ինչ իցէ՝ երանի որ խորհի։ Ոչ իմանայցէ զաղքատն և զտնանկն, որ զնեղութիւնն տնանկին 'ի միտ առնուցու և զվիշտն ա-ռանձինն, որպէս և ողորմել փութասցէ։

Յորժամ տեսանիցես զաղքատն, մի՛ զանց առնիցես, այլ վաղվաղակի զմտաւ ածցես, զի եթէ դու էիր՝ զի՛ գործէիր, զի՛նչ կամէիր. ո՛չ առաքէին զի ամենեքեան քեզ ողորմէին։ «Որ 'ի միտ առնուցու», ասէ. Ի միտ առնուս և դու, եթէ իբրև զքեզ աղքատ է, նորին աղքա-

կամաւորութեան հաղորդ և ամենեքին քեզ հաւատար. և դու լերես և շանց ընկեր չասանիցես. զի նոքա յազգն, և նա թերևս բազում անգամ քաղցեալ նմիջիցէ. քան զծառայսն քո և ս յանարգութեան ազատն: Ո՞չ նոքա զքո պէտսն վճարիցեն: Զորպիսի՞ ինչ պէտս: Զի ծառայիցեն քեզ: Նախինք է. եթէ ցուցից քեզ և զնա, զի և ս առաւել վճարիցէ քան զնոսա զքո պէտսն. զի հաւանէ 'ի թիկունս քո յաւուրն դատաստանի և զերծուցանիցէ զքեզ 'ի հրոյն. և զինչ ինչ այնպիսի առնիցեն բնաւ ծառայքն քո: Տարիթա յորժամ վախճանեսցաւ՝ ո՞ յարոյց զնա. մինթէ ծառայքն որ շուրջն կային. ո՞չ աղքատքն աղքատքն. և դու ծառայիցն անգամ չասնես հաւասար զաղքատն:

Յորժամ կարի ցուրտն տիրիցէ, և անկեալ կապերտօքն տառապեալն կիսամահ դնիցի, և զատամունսն կափկափիցէ. և երեսքն և կերպարանքն բաւական են ածել զքեզ 'ի գութ. և դու 'ի ջերմոյ ելեալ և արբեալ, տեսանես և զանց առնես. և զխորգ աղաչես զնոյն՝ յորժամ քեզ վիշտք ինչ 'ի վերայ հասանիցեն, փրկել զքեզ 'ի վշտացն: Այլ թերևս բազում անգամ առիցես, զի թէ ես իշխան էի, և յանցանէր որ ինչ, վազվաղակի թողութիւն առնէի, և նմ ոչ թողուցու. Մ՞ի ասեր զայդ. որոյ չիքն ինչ քեզ մեղուցեալ, և կարող ես ապրեցուցանել՝ անտես առնիցես, և քեզ զխորգ թողուցու որ 'ի նոյն իսկ մեղանչիցես: Այլ արդ չիցէ այն գեհեննին արժանի. և ընդ այն զինչ զարմանք իցեն. զմարմին մեռեալ անզգայ՝ որ ոչ այնուհետև ընդզայցէ ինչ պատուոյ, բազում անգամ պէսպէս ոսկեհուռ հանդերձիւք զարդարես. և զոգին որ պաղատիցէ և կոծիցի և տանջիցի և հալիցի և մաշիցի 'ի սովոյ և 'ի ցրտոյ, անտես առնիցես: Այլ բազում ինչ մոլարգործութեան շնորհ, և ոչ երկիւղին: Այլ երանի թէ այսչափ միայն. այլ վաղվաղակի չարախօսութիւնք և բամբասանք յաւել մնացին զմուրողէն. ընդէ՞ր չգործիցես, ասեն, և ընդէ՞ր դատարկ հաց ուտիցես:

Ա՞յլ սա, դու 'ի գործոց ունիս զինչ ունիսդ. ո՞չ աղքատքն զհայրենի ժառանգութիւնն առեր. իսկ եթէ զի գործեսն՝ վասն այնորիկ զայդ նախատիցես, չլսիցես Պաւղոսի՝ որ ասէրն, զի յետ առելոյն "Այլթէ որ ոչն

գործիցէ, և կերիցէ մի», ասէ. «Բայց դուք զգործս գործել մի ձանձրանայք»: Ծոյլ խաբեբայ է, ասեն. զինչ խօսիս, այր դու. վասն պատառի միոյ հացի և կապերտի միոյ ձորձոյ խաբեբայն կոչես: Ծոյլ տանի, ասէ, և իսկ և իսկ վաճառէ. և դու զամենայն ինչս քո 'ի բարի պէտս ծախես. և կամ թէ ամենեքեան 'ի վատութենէ աղքատանայցեն. ոչ 'ի նաւաբեկութենէ ոք, և ոչ 'ի դատափետս լինելոյ, և ոչ 'ի գողութենէ, և ոչ 'ի զուր դատաստանաց, և ոչ 'ի ցաւոց, և ոչ յայլ ինչ վշտաց: Իսկ եթէ լսիցեմք զկառաչ ուրուք՝ յորժամ զհողոց բառնայցէ, և զաշս ընդ երկինս ամբառնայցէ, և 'ի բերդզէգ շրջեսցի, և ցնցոտիս պատեալ, անդէն վաղվաղակի խաբեբայ և զրթիչ և կեղծաւոր կոչեցես: Ամաչեա՛, զո՞ կեղծաւոր կոչեցես. մի տար ինչ-ումեք, և մի չար զումեքէ խօսիր:

Ծոյլ գոյաւոր է, ասեն, և կեղծաւոր է: Այս այն քո չարախօսութեան մեղ է, և ոչ նորա ինչ. գիտէ՝ եթէ 'ի գազանաց դէմս հասանիցէ երթալ, և ոչ 'ի մարդոյ. եթէ կարի ողորմ խօսեսցի, և յեղուկս անկանիցի, և չգտանիցէ ինչ խնամս. վասն այնորիկ հարկ լինի զողորմ կերպարանս փոխել, զի գէթ այնու փղձը մի զգօսիրտ ձմլեցուցանիցէ: Եթէ տեսանիցէ ոք զոք ազատի կերպարանօք 'ի մուրահանս, խաբեբայ է, ասէ, զի կարծեցուցանիցէ զանձնէ՝ եթէ ազնուական ինչ ոք իցէ, և այնու պատճառանօք յաճախ առնուցու զմուրն. և եթէ 'ի գձուձ կերպարանս, և զայն ևս 'ի բիծ տանիցին. և այնուհետև զինչ գործիցեն տառապեալք: Ո՛ անագորոյն միտք, և անգութ և անխնամ աղիք:

Ընդէ՞ր, ասեն, զխեղ ինչ անդամոյն մերկացուցանիցեն: Ասա՛ն քո. եթէ դու ողորմած էիր, նոքա այնպիսի հնարս ոչ հնարէին. եթէ յառաջնումն տայիր և արձակեիր, նոքա այնպիսի մեքենայս ոչ խառնէին: Ո՞վ ոք կայցէ այնպէս թշուառական, որ կամաւ այնչափ գործ գործիցէ, և անձամբ զանձն ծանակ առնիցէ, և ընդ հրապարակս գոչել շրջել մերկ խայտառակ կնաւ և որդւովք հանդերձ, հող 'ի գլուխ և մոխիր զգլխոյ շրջեսցի: Ո՜չ ինչ չար կայցէ քան զայնպիսի աղքատութիւն: Ծոյլ յայնչափ թշուառութեան վերայ ոչ միայն ողորմութիւն չգտանեն, այլ և բամբասանս ևս 'ի

մեծի։ Այլ մեք տակաւին զկարիւք՝ թէ ընդէ՞ր յորժամ յայս խնդրեմք՝ վաղվաղակի չլսիցէ. տակաւին տրտմիմք՝ թէ ընդէ՞ր յորժամ աղաչեմք, չհաճեմք զնա. և ո՛չ զողջացեմք և զահի հարկանիցիմք, սիրելիք։

Այլ բազում անգամ, ասէ, եղու։ Այլ նա չուտիցէ հանապազ. և զորդիսն քո, յորժամ յաճախ խնդրիցեն, միթէ 'ի բաց մերժեսցես. ո՛ անհնարին անմտութութիւն։ Զաղքատն անամօթ կոչես, և դու յորժամ զայլոց յափշտակիցես՝ չիցե՞ս անամօթ. նա յորժամ վասն պատառոյ միոյ հացի ժտիցի, անամօթ է։ Զգիտիցե՞ս որչափ հարկք որովայնին են, ո՞չ զամենայն ինչ վասն նորին հնարիցիս. ո՞չ ապաքէն զհոգևորացն վասն նորին անփոյթ առնես. ո՞չ ապաքէն երկինք առաջի կայցեն և երկնից արքայութիւնն, և դու յորովայնից բանութենէդ երկուցեալ, զամենայն իսկ անուղղայս ախտորժելով գործես, և զարքայութիւնն ևս անգամ արհամարհես. այն իսկ է անամօթութիւն։ Զանսանե՞ս զծերս 'ի խեղութեան և 'ի հաշմութեան։ Այլ 'ի շատախօսութիւնս հատանիս. այսր անուան այսչափ դահեկանք 'ի վարձու կան, և այսր անուան ևս աւելի, և նա մուրանայ։ Զմանկտոյ զբոյց խօսիք ու զշաղփաղփութիւնս. քանզի և նոքա միշտ առատաբեր զայնեկացն անուանն։

Զառնուլ յանձն, չհաւատամ, քաւ լիցի. փոխ ոք տայցէ, և 'ի բարութեան իցէ, և մուրանայցէ։ Ո՞ր վասն, ասէ աստ. զի՞նչ ինչ քան զմուրանալ գործ ծանակաց կայցէ. լաւ է մեռանել քան զմուրանալ։ Մինչև յե՞րբ անագորոյնք կայցեմք. միթէ ամենեքեան փոխս տայցեն, և ամենեքեան խաբեբայք իցեն. և չգուցէ բնաւ ստոյգ աղքատ։ Այո, ասեն, բազումք են։ Այլ նոցա ընդէ՞ր չտայցես, որովհետև զամենեցուն զկերպարանս հաւաստեաւ քննես. այլ պատճառք և բարուրք են այն ամենայն։ Ամենայն ումեք, ասէ, «Որ խնդրեսցէ 'ի քէն, տո՛ւր. և որ կամի փոխ առնուլ 'ի քէն, մի դարձուցաներ զերեսս քո»։ Ձգեա զձեռն քո, և մի լիցի կարկամեալ. չկացցէ ոք զքեզ կենաց ուրուք քննիչ. ապա թէ ո՛չ և ո՛չ ումեք ողորմիմք։

Ընդէ՞ր յորժամ զնա աղաչիցեմք, ասես՝ մի՛ յիշեր զմեղս մեր։ Խնայեա և կարի ոք իցէ աղքատն մեղա-

ւոր, նոյնպէս և փնտռնել ամենայն զանուն, և մի յիշեսցես զյանցանս նորա. քանզի մարդասիրութեան ժամանակ է ժամանակս, և ոչ հաւասարի քննութեան. ողորմութեան, և ոչ այնպէս խորհրդոց: Պարտաւորեալ դարմանել կամի. եթէ կամիս, տուր. և եթէ ոչ կամիս, բարեաւ յուղարկէ, և մի յայլոց յաչաց հանիցես: Ընդէ՞ր այնչափ հէք և թշուառական իցես, զի ոչ դու ողորմիս, և զայլս ես որ կամիցին ողորմել, խոտեցանես: Յորժամ լսիցէ ոք ի քէն՝ թէ սա խաբեբայ է, և նա կեղծաւոր, և միւսն այլոց ես փոխ առայ, ապա այնուհետև ոչ նոցա տայցեն և ոչ սոցա, և զամենեսին իսկ նոյնպիսիս համարիցին: Գիտեմք իսկ, զի զչար ինչ կարծիս զբերան առնումք, և զբարւոյն ոչ նոյնպէս վաղվաղակի:

Լինիցուք ողորմածք, ոչ վայրապար, այլ իբրև զհայրն երկնաւոր. զի նա զչարս և զարդարս և զմեղաւորս կերակրէ, և զինչ ասացից, այլ և զամենեսին իսկ՝ որ ըղձնաւ շարութեանն իսկ զկերպարանս ունիցին յանձին. Քանզի ի մէջ այսչափ բազմութեան հարկ է՝ եթէ բազումք են այսպիսիք. սակայն զամենեսին կերակրէ, զամենեսին զգեցուցանէ. և չէք ոք երբէք՝ որ ի սովոյ մեռաւ, բայց թէ կամաւ առ փառանցի ինչ: Նոյնպէս եղիցուք գթածք, զի թէպէտ և ինչ լինիցին, և ի վերջոյ իցէ, օգնական լինիջիր: Նայց մեք յայնպիսի անհանճարութիւն հասաք, որպէս ոչ միայն աղքատացն չլինիցիմք ձեռնկալու, որք ընդ մանր փողոցսն յածեալ շրջիցին առ վշտի, այլ և զայս ես առաքինիս վանականս բամբասեմք՝ եթէ այս անուն խաբեբայ է, այս անուն չէ բարի ոք: Ոչ յառաջագոյն իսկ ասացի, եթէ ամենեցուն անխտիր տայցեմք, միշտ ողորմածք գտանիցիմք. ապա եթէ քննել սկսանիցիմք, ոչ երբէք ողորմիմք:

Ո՜ ինչ խօսիս, վասն պատառոյ միոյ հացի ի խաբեբայից կերպարանս լինիցի. զի եթէ բազում ինչ անէրոյ բանք էին կամ արծաթոյ կամ պէսպէս հանդերձից կամ ծառայից և աղախնաց, կամ այլ իրիք ինչ պատպարեաց, յիրաւի ոք առնէր զայնպիսին խաբեբայ և կեղծաւոր. իսկ եթէ ոչ վասն այնպիսի ինչ իրաց, այլ վասն պատառոյ միոյ հացի, և խղկան միոյ՝ ուր զգլուխն դնիցէ, կարի անմտութեան բանք են. և նա իսկ է խաբեբայ՝ որ զայնպիսին վշտագնեալն խաբեբայ համարի:

Digitized by Google

Պատուիրեցաք յանպատեհ քննութենէ, 'ի սատանայական վնասակարութենէն : Որպէս եթէ զանձն քահանայ ոք անկցէ կամ երէց կամ սարկաւագ անուանեացէ, անդ հարկ է քննել. քանզի չէ անպատիժ անխտիր հաղորդութիւնն. վասն այնպիսւոյ ինչ մեծամեծ իրաց կայ տագնապ 'ի վերայ քննել. քանզի ոչ եթէ սոսկ ինչ, այլ անուանս. այլ թէ կերակրով կամ պատարեխի կարօտ իցէ, բնաւ ինչ մի քննեսցես : Իսկ եթէ կամիս՝ զայն քննեա, զխնդիր Աբրահամու զասպնջականութիւնն առ ամենեսեանն՝ որ զայն առ նա՝ ցուցանէր. զի եթէ քննէր ոք ինչ և խուզարկ լինէր էր ամենեցուն՝ որք առ նա մտանէին, չլինէր երբէք արժանի ընդունել զհրեշտակս : Արդարապէս քննելովն թերևս զայնպիսի գեղեցիկ հիւրասիրութիւնն կորուսանէր. այլ քանզի զամենեսեան ընդունէր, ընկալաւ զհրեշտակսն :

Մի թէ վասն վարուց այնոցիկ որ առնուցունն՝ տայցէ քեզ Աստուած զվարձսն, այլ վասն բարի կամացն և բազում առատութեանն և մարդասիրութեանն և բարութեան : Զայս այսպէս առնիցիք, և ամենայն իսկ բարութեանցն հասանիցիք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն :

## ՏԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՃԱՌԻՆ

Յորժամ զհարիւր ամ կեցցէ, և գործ ինչ բարի ոչ ցուցանիցէ, բայց զայն միայն զի մեղս ինչ ընդ իւր ոչ տանիցի. և զայն ոչ եթէ անձամբ ինչ արար, այլ միայն շնորհօքն փրկեցաւ. և զայլս պսակեալս և լուսաւորեալս և փառաւորեալս տեսանիցէ. թէպէտ և 'ի գեհեենն չանկանիցի, զիարդ կարիցէ ժուժալ տրտմութեանն :

Իսկ զի օրինակաւ ևս յայտ արարից զբանն, զդնիցեր եթէ երկու զինուորք էին. և միոյն գողանայցէ, զրկեցէ, ապահիցէ. և միւսն չգործիցէ այնպիսի գործ ինչ չար, այլ ժողովիցէ, առաքինի լինիցի, նահատակութիւն ինչ ցուցանիցէ, 'ի պատերազմի նշան յաղթութեան կանգնիցէ. և ապա երբեք զայցէ հասանիցէ ժամանակ պարգևացն, և նա յայնմ պատուոյ՝ յար և զաղն էր, յանկարծակի յաղթութեան թագաւորութեանն հասա-

Digitized by Google

նիցէ, և 'ի ծիրանեացն եւս զգենուցու. լինել լինիցի և միւսն վասն մարդասիրութեանն միայն յարքունիսն, և դաս ինչ չտայցէ ըստ գործոցն զոր գործեացն. և 'ի տրուպ տեղւոջ կայցէ, բայց իցէ յարքունեացն համաբոյ, մինթէ կարիցէ ժոյժ ունել 'ի տրտմութենէն: Յորժամ անսանիցէ զայն՝ որ ըստ իւրն էր՝ յայնպիսի պատիւ հասեալ և այնչափ փառաւորութեամբ փառաւորեալ, զի աշխարհի եւս հրամանատար լինիցի, և զանձն այնչափ 'ի վատթարութեան տեսեալ, և զընտանեկէն իսկ 'ի տանջանսն՝ անարգութեամբ ունիցի. քանզի և այն նման 'ի շնորհացն և 'ի մարդասիրութենէ թագաւորին եղև: Թէպէտ և թագաւորն թողութիւն պատժոյն առնիցէ, սակայն ցանկ ամօթով կայցէ, և չդնիցէ ոք նմա մեծարանս:

Նոյն արդ յայնպիսի ինչ թողութիւնս ոչ ըստ նոցա որք առնուցուն զպարգևսն, այլ ըստ նոցա որ տան՝ զարմանանաք. և որչափ զմեծամեծ պարգևս տայցեն, եւս քան զեւս առաւել ամաչեն՝ որք առնուցունն. և եթէ մեծ մեղք եւս իցեն, որովք աչօք նայել կարիցեն. յորժամ անսանիցեն յարքունիսն զաւազակս և ազգի ազգի քրտունս 'ի մէջ բերիցեն, և զվէրս ցուցանիցեն, և նոցա չզուցէ ցուցանել. այլ և զապրեալսն եւս միայն յոյժ մարդասիրութենէն ունիցին: Որ օրինակ եթէ ոք զմահապարտ և զգող և զչուն 'ի մահ տանիցի, և հրաման տայցէ թագաւորն դարձուցանել զնա անդրէն 'ի դրունս արքունեացն, չկարիցէ ըստ ոք նայել այնուհետև, թէպէտ և 'ի պատժոցն ազատեցաւ. նոյնպէս և այնպիսին:

Նոյն արդ, մի վասն զի արքայութիւն տայ, համարիցիք եթէ ամենեքին 'ի մի պատուի իցեն. զի և տաս հազարապետք իցեն, և սպարապետք, և ըստ նոցանէն զօրծականք և իշխանք յարքունիս. և այլք եւս քան զնոսա խոնարհագոյնք, և որք զկարի վերջին տեղին ունին, արտաքին սպասաւորքն՝ յարքունի համարի են. թէպէտ և կարի իսկ մեծապատիւ իցէ 'ի մէջ հազարապետացն և արտաքին սպասաւորացն, սակայն և նոքա յարքունեացն համարի են:

Նոյն զայս ոչ եթէ զիմ ինչ ասեմ, այլ զՊաւղոսի, որ զայնպիսի առաւելութիւն 'ի մէջի դնէ, ցուցեալ յա-

ընդանեն մինչև ցլուսնն և յաստեղս և ցևս փոքրիկ աստղն. նոյնպիսի ինչ են իւրաքանչիւր պատիւ յարքայութեանն: Զի բազում առաւելութեան, ընդ հազարապետսն և ընդ արտաքին սպասաւորսն, ընդ արեգակն և ընդ փոքրիկ աստղն 'ի միջի կայ. և այս ամենեցուն իսկ յայտ է: Զի արեգակն զամենայն իսկ տիեզերս լուսաւորէ. իսկ լուսինն և զաստեղս ևս բազումս ծածկէ. և է ինչ աստղ՝ որ բնաւ իսկ չերևի, և զի մութ ևս իցէ. քանզի բազում աստեղք են՝ զոր և տեսանեմք իսկ ոչ: Իսկ յորժամ զայլս տեսանիցեմք արեգակունս, և մեք զաստեղաց զփոքունց զկարգ ունիցիմք, որ և չերևեսցին ևս, բայց եթէ դոյզն ինչ ընդ աղօտս, որպէս ինչ մխիթարութիւն կայցէ մեզ անդ:

Մի՛ որդեակք, աղաչեմ, մի վատք, մի ծոյլք, մի զփափկութիւնն մեր վաճառեմք ծուլութեամբ, այլ ջանացուք 'ի բազում շահս և 'ի տոհմականս անձել. թէպէտ և երախայ ոք իցէ, սակայն զՔրիստոս գիտէ, այլ ըղհաւատն ծանեաւ, այլ զանձեղէն բանսն լսէ, այլ 'ի գիտութենէն չէ ինչ հեռի, գիտէ զկամս տեառն իւրոյ: Ընդէ՞ր յապաղիցէք, ընդէ՞ր հեղգայցէք. չիք ինչ լաւքան զայս բարիս և սաստ և անդ, առ լուսաւորեալս և երախայս: Զի ինչ ծանր իցեն հրամանքն. կին կալ, ասէ, և 'ի յածութեան կացցիր. և այն դժուարին ինչ իցէ: Զի արդ. այր և բազում իսկ առանց կանանց ցածուն. ոչ միայն քրիստոնեայք, այլ և հեթանոսք: Աբով յառաջադէմ լինի հեթանոսն յաղագս սնապարծութեանն, դու ընդէ՞ր ոչ զնոյն պահիցես յաղագս մեր երկնիցն:

Տուր, ասէ, աղքատաց յընչիցն զոր ունիս. և ծանր ինչ իցէ: Նա և այնու իսկ կշտամբեն զմեզ հեթանոսք. զի բնաւ իսկ զարարսն թափեն տան վասն սնապարծութեան: Մի՛, ասէ, 'ի խեղկատակութիւնս հատանիցես. և այն դժուարին ինչ իցէ. և եթէ չէր իսկ պատուիրեալ, չէ՞ր պարտ համ դնել լեզուի, զի մի անառակ երևիցիմք. և զի խեղկատակութիւնն դժուարին է, յայտ յամօթոյն և պատկառանացն է. զի յորժամ այնպիսի ոք ինչ խօսեսցի, իսկ և իսկ ձաղ լինիցի. և նա խեղկատակիցէ իսկ ոչ, եթէ չիցէ արբեալ: Ընդէ՞ր յորժամ 'ի հրապարակի մէջ նստիցես, և կամ

Digitized by Google

'ի տան՝ ընկերաց առաջի չխօսիցես այնպիսի ինչ. ոչ ապաքէն 'ի մերձաւորացն ակն ածիցես: Այլ կնոջ առաջի ոչ վայրապար շաղփաղփիցես. զի մի զնա թշնամանիցես, չասեսցես ինչ այնպիսի. և զնա թշնամանիցես, և չակնածիցես, որ յամօթ տեղիս մնա է, և զամօթ ինչ լսէ.

Ո՞ր արքենար, ասէ. և այն զարծքն իսկ տանջանք են: Զառաջ եթէ հալեալ զմարմինք, այլ թէ մի այնչափ ընկողնեցուցանէր՝ մինչև զօղեւոյն իշխանութիւնն 'ի միջոյ բառնալ: Ո՞րչափ իմաստ մի տանէիր 'ի ցանկութիւն. մի յափշտակեր որ ոչ քո իցէ. մի ագահեր. մի սուտ երդնուր. և այս աշխատութիւն ինչ իցէ կամ քրտանք: Ո՞ր բամբասեր, ասէ. մի զոր զումերէ խօսիր, և դու յանձին եւս եղեալ կաս: Յորժամ զումերէ խօսեսցիս, 'ի վտանգի համանիցէ կալ, 'ի կարծիս անկանել, 'ի հոգս մտանել, թէ զուցէ լուիցէ զորմէ զարն խօսեցար, եթէ մեծ ոք իցէ և եթէ փոքր. 'ի մեծէն իսկ արգեամբք վաղվաղակի պատժիցիս. և 'ի փոքուէն որչափ ինչ ձեռնհաս իցէ. և որ եւս դժնդակն է, զի մեծամեծս և անպարտ ըզքեն խօսեցի:

Ձեռն ինչ ծանր, չեն ինչ խիստ հրամանքն զոր առաք, եթէ կամիցիմք. ապա թէ ոչ կամիցիմք, և թեթևն մեզ ծանր թուիցի, և դիւրինն դժուարին: Զի՞նչ դիւրին քան զուտելն կայցէ. այլ բազումք առ զմայլութե և ընդ ուտելն տաղտկան. քանզի 'ի բազմաց լսեմ, թէ ուտելն աշխատութիւն է: Զիք ուրեք աշխատութիւն եթէ կամիցիս. զի ամենայն ինչ ընդ կամելոյն կայ, յետ վերինն շնորհացն: Այլ արդ կամեսցուք զկարիս, զի և յաւիտենից բարութեանցն հասանիցեմք 'ի Քրիստոսս Յիսուս 'ի Տէր մեր. ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք և զօրութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Ի ԶԱՐԵՒԳՏԱՄԱՆԵՐԱՐԴ ՃԱՌՔՆ

Լուիցուք այսուհետև և մեք, և մնասցուք զչարիսն մեր. ոչ զմեղացն մերոց ասեմ. քանզի զմեղացն ասէ, թէ նախ դու յիշեա և ապա ես ոչ յիշեցից: Ա՞յսպիսի ինչ է զոր ասեմս. մի յիշեսցուք յափշտակել, այլ յիշեսցուք զյափշտակութիւն, և անգէն 'ի տեսլոյս զաղ-

Digitized by Google

ծուցուք. և մատամբն զչարիսն այն է, յորժամ 'ի բաց մերժիցեմք 'ի մտացն զխորհուրդս յափշտակիչս, և մի երբէք անգէն ընդունիցիմք. այլ և զվաղուց գլխացանելսն 'ի բաց մերժիցեմք:

Այլ ուստի լինիցի մեզ մատուցումն չարեացն: Ի բարութեանցն յիշատակաց, յոյժ երկիւղէն. զի եթէ ցանկ զԱծ յիշեմք, չախարժիցեմք զչարիսն յիշել. ըստ այնմ, թէ "Յիշեցի զքեզ յանկողնի իմում. և ընդ առաւօտս կանխեալ խորհէի ընդ քեզ": Մի՛շտ իսկ և ցանկ, բայց առաւել յայնժամ պարտ է յիշել զԱծ՝ յորժամ յապահով իցեն միտքն, յորժամ այնպիսի յիշատակաւ դատապարտ անձինն կարիցէ լինել, յորժամ նահանջել զինքն մարթիցէ յիշատակաւն: Նանզի 'ի տուէ թէպէտ և յիշեմք, մտանեն այլ հոգք և զբօսանք, և հանեն զյիշատակն 'ի մտաց. իսկ զգայգն միշտ դիւրաւ է ածել զմտաւ. յորժամ 'ի հանգստութեանն հանգուցեալ են միտքն, յորժամ 'ի նուաճանգստեան հատանիցէ, յորժամ յանկողինս 'ի հաղմացն անկանիցի:

"Ո՛չ ինչ ասէք 'ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք": պարտ է, ասէ, և զերեկս զնոյն յիշատակ ունել 'ի մտի. բայց զի 'ի հոգս և 'ի պատրանս աշխարհիս զբօսեալ էք, ասէ, գէթ 'ի քնոյն ժամն յիշեցէք զԱծ: Այլ ընդ առաւօտս զնոյն ածցուք զմտաւ. զի եթէ ընդ առաւօտս զնոյն խորհիցիմք, 'ի բազում զգուշութեան պահեմք զիրս մեր. նախ թէ զԱծ հաշտ առնիցեմք աղօթիւք և խնդրուածովք, ապա առն յառաջ մատուցեալ բնաւ չունիցիմք իսկ զթշնամի. թէպէտ և ունիմք զգէ, քամահեսցէ՞ր, յորժամ զԱծ ընդ քեզ հաշտ առնիցես:

Պատերազմ է 'ի հրապարակս. կռիւք են 'ի ցերեկութեան իրս. ծովածփանք և ձմերայինք, վասն այնորիկ զինուց պէտք են. և մեծ զէն աղօթք են: Յորժամ ուղիղ հողմակքն յառաջ խաղայցէ, և մեզ պարտ է խնամեալ զամենայն, որպէս զերկարութիւն տունջեանն առանց նաւաբեկութեան մնացեալ և առանց վէրս ինչ յանձն առնլոյ. զի բազում խութք պատահեն հանապազ, և բազում անգամ բաղխին նաւք և ընկղմին: Վասն այնորիկ և աղօթից պէտք են, մանաւանդ առաւօտին աղօթից և զգուշութեանց:

Ո ըմբշամարտութեան բազմաց 'ի ձեռն բազում անգամ անկանել է. և ոչ միայն անկանել, այլ և յորդորիչք և զարմացողք կառացն լինելք, և անդ 'ի սորա կոյս և անդ 'ի նորա: Կոչէք զխմբգ զաւուրբքն մարտից՝ զգինչեան ամենայն ողջոյն շրջիր քաղաքն և ազդ առնէ. ոչ զայլ ինչ հոգայ, այլ զայն և եթ ազդ առնէ, զի մի եղեալ ծա-նակ ինչ կայցէ՝ որ 'ի մարտն մտանելոց իցէ. և որ շուրջն դեգերեալ նստիցին, պատուիրեն փողարկն՝ մի վայրա-պար ընդ ունեք խօսել, և մի զփուքն և զոգին ծախել, և ծաղր և ծանակ կալ 'ի ժամուն:

Իսկ որ մարդկեղէն հանդէսն պատրաստելոց իցէ՝ այն-չափ հոգաբարձութեան պէտք են, որչափ ևս առաւել մեզ պարտ է փոյթ յանձին ունել և հոգալ. զի ամե-նայն աւուրք մեր պատերազմաց են: Այլ արդ ամենայն իսկ գիշերք հանգուստ լինիցին մեզ, և միշտ հոգ անձին ունիցիմք՝ եթէ զիարդ զօրն 'ի գլուխ հանիցեմք, զի մի ծաղր ինչ և ծանակ կայցեմք: Այլ երանի թէ ծաղր միայն. նա աւանիկ նստի ընդ աջմէ հօր յարդարիչ պա-տերազմացն, և լսէ հաւատաւ, զի մի ինչ անդէպ խօսիցիմք, մի ինչ արտաքոյ քան զկանոնսն. զի ոչ մի-այն արդեանց, այլ և բանից է քննիչ:

Սկեսցուք, սիրելիք, քանզի և մեք ունիմք յորդորիչս, եթէ կամիցիմք. քանզի իւրաքանչիւր հրեշտակք նստին շուրջանակի, և մեք խորդամք զձայն ամենայն. և ե-րանի թէ զայն միայն անկէաք. այլ բազումք և աղտե-ղութիւնս ևս բազում գործեն: Ի գետնախշտիան փա-թաթեալ ընթանան. և այլք զիւրեանց տունս պանդոխ առնեն, և զոմս ևս 'ի վաճառ ածեն. և կարի իսկ ան-պատեհս. քանզի ոչ բարիոք հոգան զպատերազմէս. և այլք արբենան և բարբաջեն. և այլք աղաղակեն. և ումանք 'ի չարիս սկսեն, և զայնցանէ՝ որք ննջիցեն նիւթեն ներգութիւնս. և կէսքն զվաշխս և զտոկոսիս համարին. և այլք յայլ հոգս հեղձեալք. և ամենեւին զամենայն ինչ համարին, բայց միայն 'ի պատերազմէս պատշաճից յետնեալք գտանին:

Վասն որոյ աղաչեմ, զամենայն թողեալ 'ի միոյ մի-այն հայեսցուք, զի զյաղթութիւնն առնուցումք և պսա-կացն հասանիցեմք. և զամենայն ինչ արասցուք, որով կարող լինիցիմք խոստացելոց բարութեանցն հասանել.

որոց լիցի ամենեցուն մեզ հասանել 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Ի ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

Եւ արդ մի՛ ոք որ մեռեալ գործս ունիցի՝ մտանիցէ այսր: Զի որ 'ի մեռեալ մարմինն մերձենայր՝ չիշխէր մտանել 'ի սրբութիւնն, մեծ ևս առաւել որ զմեռեալ գործսն ունիցին՝ անհնարին պղծութիւն: Ա՛րդ մեռեալ գործսն են, որ ամենևին չունին զկենդանութիւն, հոտ չար են: Զոր օրինակ և մեռեալն չէ ինքն պիտանացու, և ամենևին ոչ զգայ, այլ և տրտմեցուցանէ ևս զայնոսիկ, որք մերձենայցեն 'ի նա. նոյնպէս և մեղք մխրաւորեն զխորհուրդս, և չտան թոյլ մտացն խաղաղել, այլ խռովեն և ապականեն:

Աղչի և ասա ինչ ժանտ, որ 'ի միում տեղւոջ մարմնոյն ծնանիցի, և զամենայն մարմինն ապականէ. այնպիսի են մեղաւորք, և չեն ինչ ընդհատ 'ի ժանտ ախտէն. և ոչ նախ զօդս ապականեն և ապա զմարմինն, այլ փաղփաղակի զոգին բորբոքեն: Զտեսանիցե՞ս որ զժանտ ախտն ունիցի, զիարդ այտուցեալ տարամեալ շրթին, և չար հոտով լնուն զվայրս. զիարդ երեսքն դեղնեալ, գոյնն եղծեալ, և ամենևին չարատեսք. զի և ոչ մօտ ոք կարիցէ երթալ: Այնպիսիք են մեղաւորք, թէպէտ և ինքեանք զանձինս ոչ տեսանիցեն:

Եւ արդ աղէ ասա, քան զամենայն Ջերմնկալ չիցէ՞ ևս չար՝ որ 'ի ցանկութիւնս մարմնոցն հարեալ իցէ. չիցէ՞ քան զամենայն պիղծս չար աղտեղի՝ որ զամենագործս ծանակաց առնիցէ և յանձին կրիցէ: Ո՞ք քան զընչասէրն աղտեղի իցէ. զոր ինչ բազում 'ի պոռնկացս չդանդաղին գործել, նոյնպէս և ոչ նա. մանաւանդ թէ նոքա դանդաղիցեն ինչ, և նա ոչ: Զծառայի բարոյս յանձին կալեալ, սրտկէ որոց չիցէ պարտ սրտկել, և դարձեալ խանդանայ, ուր ոչն վայել իցէ. ամենայն ուրեք ոչ զկշիռն գնալ: Ծերեւս և մարդոց չարաց և ծերոց աղձատելոց, որ կարի իսկ քան զնա աղքատագոյն իցէ, նստեալ սրտկիցէ, և զառաքինիս և զպիտանիս թշնա-

մանէ։ Տեսանես զիարդ ծանակ իցէ յերկուցունց կողմանց, զի և վատթար անշահ է և ամբարտաւան։

Նոյն անցեալ կան 'ի բոզանոցս պոռնիկքն. և այն իսկ են անհնարին պատիժք՝ զի զմարմինս ընդ ընչիցն վաճառեն։ Նոյն և աղքատութիւն է, ասեն, և քաղցի վտանգ։ Թէպէտ և այն իսկ չիցէ բաւական՝ հանճել և հաւանեցուցանել. զի մարթ էր նոցա գործ գործել և զիւրեանց հաց ուտել։

Իսկ քան զայն ևս չար այն է, յորժամ ագահն ոչ 'ի պոռնկացն խցին, այլ 'ի քաղաքամիջի կայցէ, և զաղխս մատանեցէ սատանայի, զի մտանիցէ առ նա իբրև առ բոզ, և զամենայն ցանկութիւն իւր կատարիցէ, ելանիցէ. և տեսանիցէ ամենայն քաղաքն, ոչ երկու արք կամ երեք։ Իսկ բոզիցն այն առանձինն գործ է, զի որ զոսկիս տայցեն, նմա և եթ երթան. եթէ ծառայ ոք իցէ և եթէ խաղամարար ոք, և զինչ և իցէ ոք, զկապէնս[1] խոստանայցէ, յանձն առնուն. և ագահաց՝ թէպէտ և կարի ոք աղքատականք իցեն՝ առանց արծաթոյ չհաւանին։ Այնպէս և ագահքն, 'ի մարդս ուղիղս՝ որք արծաթ չունիցին, չհային. և 'ի պիղծս և 'ի գաղտնամարտա մարդիկն վասն ոսկւոյ. և զոչ եթէ ընդ նոցին ծանակելն, և եղծանելն զգեղ ոգւոցն։ Որպէս բոզքն զուռաւոք և երիթացեալք և գեղձուկք և սնքացեալք և յօրացեալք՝ զչարիս և եթ ծնանին, և ամենեքին չարատեսք, խանդք և երկայթք. և որպէս բոզքն զի ոչ ամճաառ և մնկաբաւ զարտաքին ազեղութիւնն կարեն ծածկել, նոյնպէս և ոչ ագահք կեղծաւորութեամբն զչարիս։ Որպէս յորժամ հաս ինչ չար բուրիցի, թէպէտ և բիւր ազգի ազգի ոք ինչ հնարս հնարիցէ՝ չկարիցէ ցածուցանել։

Իսկ զի անամօթ բարքն ածեն 'ի պոռնկութիւն, լուարուք մարգարէին որ ասէ. «Պղծեցար անամօթեցար առ ամենեսեան, և երեսք կնոջ պոռնկի եղեն քո»։ Այս և առ ագահս 'ի դէպ է ասել, եթէ պղծեցայք անամօթեցայք ոչ առ սոսա կամ առ նոսա, այլ առ ամենեսին իսկ։ Տես զիարդ ոչ 'ի հօրէ կամ յորդւոյ, և ոչ 'ի կնոջէ և ոչ 'ի բարեկամէ և ոչ յերախտաւորէ և ոչ յումեքէ բնաւ ակն ածիցէ այնպիսին։ Իսկ զինչ ասիցեմ եթէ

1 Յօրինակին կապակս։

՚ի բարեկամէ և յեղբօրէ և ՚ի հօրէ, ուր և յայդ իսկ չակնածէ. և զամենայն ինչ տառապելս և ծառայ համարի. քանզի ՚ի բազում ցանկութենէն և ՚ի լսելիսն անգամ չհանդարտէ ընդունել զօգտակարսն:

Նոյն վայ անպատեհութեանն. որպիսի բանս խօսին: Այս քեզ, առէն, մանմնայ, և որ զքեզ չունիցին. Եւ ընդ այն իսկ է կարի ցասումն մարմաքել: Նոյն վայ այնոցիկ՝ որ զայնն առիցեն, թէպէտ և ընդ խաղ առիցեն. այնպիսի սպառնալիս սպառնացաւ ՏԾ. «Ոչ կարէք, ասէ, երկուց տէրանց ծառայել». և դու լուծանես զսպառնալիսն: Ո՛չ կռապաշտութիւն կոչեաց զագահութիւնն Պաւղոս, և զագահն կռապաշտ. և դու մատուցեալ կաս առ խանձնայ[1] կանայս, և ընդ ծառս արկեալ խօսիս զանօգուտս ՚ի բազմանդս և ՚ի մէջ զուսանաց. և այն իսկ է՝ որ զամենայն եղծ ապականեաց:

Ծառայք կացին մեր իրք և զրոյցք. յայսն և ՚ի կատականս եղաք ամենեքին. և չիք ինչ ուղղութիւն և ոչ համեստութիւն և ցածութիւն: Նա զայս ոչ առ աշխարհականս միայն ասեմ, այլ գիտեմ զորոց ասեմն: Ծաղու լցաւ եկեղեցի. եթէ յանկարծ ոք ընդ խաղ և կամ բարի ինչ բանս խօսեսցի, վաղվաղակի ամենեքին զքրքիջ բառնան. և այն իսկ են կարի աղէտք, զի անդէն յաղօթիցն ժամս չզադարեն կարի իմն ծաղուն: Ամենայն ուրեք զտանէ մեղ սատանայ. անարգեցաւ քահանայեցաւ Քրիստոս, յորժամ համարեցաւ եկեղեցի: Զլսես Պաւղոսի, որ ասէն, եթէ «Ամենայն անառակութիւն և լկտութիւն և խեղկատակութիւն բարձցի ՚ի ձէնջ». և դու զայն լսես, և ՚ի խեղկատակութիւն համբաւ ես, և բանս մորուս և անօգուտս խօսիս, ծիծաղիս և այլազուններս զբօսես:

Մանաւանդ՝ որ ՚ի սուգ ես և ՚ի խոյս ելեալ, ծիծաղիս և խնդաս. ասէ սա, Քրիստոս այնպիսի ինչ մի արար. լուար երբէք յումեքէ: Նոյն տրտմեցաւ բազում անգամ. զի յորժամ ընդ Երուսաղէմ նայեցաւ՝ տրտմեցաւ. և յորժամ զմատնիչն ած զմտաւ՝ խռովեցաւ. և յորժամ զՂազարոս կամէր յարուցանել՝ արտասուեաց. և դու ծիծաղիս և անհամիս:

1 Յօրինակին առ ընկան խոնարհնայ:

Որ վասն այլոց մեղաց չարչարիցի, պատժոց արժանի է. իսկ և որ ոչ վասն իւրոց մեղացն չհոգայցէ ինչ, որպիսի ինչ թողութեան արժանի լինիցի: Սա և սոյն ժամանակ է և ներողութեան և ջնջելոյ զմարմնոյ, և հնազանդեցուցանելոյ, և պատերազմաց և քրտանց, և դու ծիծաղիս և լկտանաս. չտեսանես զիարդ պատուհասեցաւն Սառա. լսիցես զինչ ասաց Քրիստոս. "Վայ, ասէ, որ ծիծաղիցիքն այժմ, զի նոքա լացցեն": Ի սաղմոսին հանապազ զայդ ասիցես. միթէ ասիցես՝ թէ ծիծաղեցայ. և ոչ երբէք. այլ եթէ "Մաշեցայ ես ՚ի հեծութեան իմում":

Այլ թերևս ասեմք այսպէս լկտիք և անխրատք իցեն, զի և աստէն իսկ ՚ի պատուհասիս ծիծաղեսցին, մինչ դեռ զծաղուէն խօսիցիմք. զի այսպէս անսաստ է յանդգնութիւնն, մինչև զպատուհասն անգամ չառնու ՚ի միտ: Կայ քահանայն ևս և զամենեցուն աղօթս մատուցանէ, և դու ծիծաղիս և չերկնչիս. նա զահի հարեալ և վասն քո աղօթս մատուցանէ, և դու արհամարհես: Լսիցես զգրոց. "Վայ արհամարհողաց", և դու չզարհուրիս, և չդնես փոքր մի համ անձին: Յորժամ յարքունիս հասանիցէ մտանել, կերպարանօք և հայեցուածովք և գնացիւք և ամենայն իրօք զարդարես զանձն, և աստ՝ ուր բուն իսկ արքունիքն են, և այնչափ՝ զի ամենայն ինչ իսկ երկնաւոր է, ծիծաղիս և խօլանաս: Եւ ոչ վասն զի դու ինչ չտեսանես. բայց սակայն լուր, զի հրեշտակք շրջին ընդ ամենայն տեղիս, և մանաւանդ ՚ի տունս այ շուրջ բակ առեալ զթագաւորաւն. և ամենայն տեղիք լի են անմարմնականն զօրութեամբք:

Զայս բանս և առ կանայս ասացուք, որք արանց առաւել չիշխեն լկտանալ, և ոչ միշտ քրքջել, այլ յորժամ հանդստեան ինչ ժամանակ լինիցի. և աստ ցանցքօղարկեալ՝ զգլուխ ծածկեալ քրքջեն:

Ով կին դու, որ նստեալ կարկաջիցես, յեկեղեցի եկիր զմեղս խոստովան լինել, առաջի այ անկանել, ողորմութիւն խնդրել, պաղատանս վասն յանցանացն ինչ զոր յանցեր՝ պաղատել, և դու ՚ի ծաղր հատեալ ես. և զիա՞րդ կարիցես հաշտեցուցանել ընդ քեզ զԱծ:

Եւ ծաղրն չա՞ր ինչ իցէ, ասեն: Ոչ եթէ ծաղրն չար ինչ իցէ, այլ անժամն և անչափն. յայն սակս անկեալ

է 'ի մեզ ծաղրն, զի յորժամ զբարեկամս տեսանիցեմք, ուրախ լինիցիմք, և յանկարծ ուրեք զբօսնուցումք. և կամ յորժամ զտրտմեալսն և զտխրեալս, մխիթարիցեմք ժպտելով. և ոչ զքրքիջ բառնայցեմք, և համապազ 'ի ծաղր հատանիցեմք: Զայն ասես տնկեալ է ծաղրն 'ի սրտին, զի զբօսանք սրտին լինիցին, և ոչ զի այլայլիցի: Նա և ցանկութիւն մարմնոյ տնկեալ է 'ի մեզ, և ոչ վասն զի տնկեալն է՝ հարկ ինչ 'ի վերայ կայցէ մեզ 'ի կիր արկանել և կամ զանչափն. այլ նուահանջեմք, և չասեմք՝ վասն զի կայր 'ի մեզ՝ պարտ էր 'ի կիր արկանել: Արտասուօք ծառայեսցես այ, զի կարիցես լուանալ զմեղսն:

Գիտեմք զի բազումք ունչս իսկ առնեն մեզ, յորժամ վասն արտասուաց ինչ ձաղիցեմք. վասն այնորիկ ժամանակ է արտասուաց: Գիտեմ զի խաբեն զանձինս ոմանք և ասեն. "Կերիցուք արբցուք, քանզի վաղիւն մեռանիցիմք: Սնոտի սնոտեաց, ամենայն ինչ սնոտի է". և զայս ոչ եթէ ես ասեմ, այլ նա որ զամենայն իրաց զփորձ գիտէր. "Շինեցի, ասէ, ինձ ապարանս, և տնկեցի այգիս. աւազանս ջրոց կազմեցի, արարի ինձ տակառապետս արս և կանայս". և զինչ յետ այնր ամենայնի. "սնոտի սնոտեաց, ամենայն ինչ սնոտի է":

Սուգ արասցուք և մեք, սիրելիք, սուգ արասցուք, զի սերտիւ ծիծաղիցիմք, և արդարև ուրախ լինիցիմք 'ի ժամանակի Քրիստոսի խնդութեանն: Զի ընդ այս խնդութիւնս ապաքէն և տրտմութիւն խառն իցէ, և չիք երբեք զդա սուրբ գտանել. իսկ այն սերտ և աներկեան է, և չիք ինչ 'ի նմա նենգութիւն խառն. ընդ այն ուրախութիւն խնդրեսցուք: Այլ այլազգ ես. չէ հնար այնմ հասանել, եթէ ոչ յորժամ ախորժեմքն և ցանգ յօգուտ յօժարագոյնք լինիցիմք. և սակաւիկ մի ընդ նեղութիւն եկեալ կամօք և գոհանալով, ամենայն վըշտաց տանիցիմք. զի այնպէս կարասցուք և արքայութեանն երկնից հասանել. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութի և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

«Յետ ընդունելութեան գիտութեանն ոչ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ»: Պէտք են, ասէ, գործոյ բարեաց... քանզի սրբեցար ազատեցար 'ի բամբասանաց, եղեր որդի. թէ դարձեալ յառաջին փրախածն դարձցիս, տարագրութիւն մնայ և հուր: Դարձեալ ասա մեզ 'ի վերայ յարձակման որք զապաշխարութիւն 'ի բաց բառնան, և որ միանգամ 'ի մկրտութիւնն գանդաղին գալ: Նոքա ասեն. ոչ զգուշագոյն է 'ի մկըրտութիւն գալ, եթէ ոչ ևս իցէ երկրորդ թողութիւն. և նոքա ասեն, ոչ զգուշագոյն է տալ 'ի խորհրդոյն՝ յանցաւորաց, եթէ ոչ իցէ երկրորդ թողութիւն: Նա՛ որդ-զինչ առ երկոսեանն ասիցեմք. եթէ ոչ զապաշխարութիւնն ասա 'ի բաց բառնայ, և որ ոչ տարաշաւանօքն է քաւութիւն, ոչ մղէ և ոչ կործանէ. այլ զինչ. զերկրորդ աւազանն 'ի բաց բառնայ: Քանզի և ոչ ասաց իսկ եթէ ոչ է ապաշխարութիւն կամ թողութիւն, այլ պատարագ ոչ ևս է, այսինքն է խաչ երկրորդ ոչ է. քանզի պատարագ զնա կոչէ:

### Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

. . . . . . . . . . . . . . . . . .

չմնայցէ ժամանակին՝ յորում պսակիչն գայցէ և պըսակիցէ, և առ չժուժալ կամիցի ելանել և փախչել, որպէս զի թէ չկարիցէ տանել տօթոյն և ծարաւոյն: Նախին իմն ակնարկեալ և նորա զինչ ասիցէ. «Զի փոքր մի ևս և այնքան, ասէ, որչափ որ գալոցն իցէ՝ եկեսցէ և ոչ յամեսցէ»: Զի մի ասիցեն թէ երբ գայցէ, 'ի գրոց մխիթարէ զնոսա. և այլուր յորժամ ասէ եթէ «Այժմ մերձ է փրկութիւնն մեր», մխիթարութեան վասն ասէ՝ թէ սակաւ ինչ կայ ժամանակին: Նա զայս ոչ եթէ յանձնէ ինչ ասէ, այլ 'ի գրոց. զի եթէ յայնմ ժամանակի, «սակաւ ինչ էր յայնժամ մինչև որ գալոցն իցէ գայցէ և ոչ յամիցէ», յայտ է թէ այժմ կարի իսկ մօտ է. որպէս զի անձն ունել ոչ սակաւ վարձք են: «Զի որ արդարն է, ասէ,

'ի հաւատոյն իմոց կեցցէ. և եթէ դանդաղեսցի, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ,,: Մեծ մխիթարութիւն է այս յորժամ ցուցանիցէ ոք զամենայն ինչ ուղղութե ամբարեալ ումանց, և վասն սակաւ ինչ ծուլութեան մեա իցեն կորուսանել, և զգուշացուցանիցէ: "Այլ մեք ոչ եթէ դանդաղանաք ինչ 'ի կորուստ եմք, այլ հաւատովք 'ի փրկութիւն ոգւոց: Զի հաւատքն են հաստատութիւն յուսացելոց իրաց, յանդիմանութիւն չերևելեաց. քանզի նովաւ վկայեցան առաջինքն,,: Ասաքէ որպէս ինչ բան 'ի կիր արկ յառելն՝ յանդիմանութիւն չերևելեացն . . . . . . . . . . . . . . .

Այլ մեք առ վհատեալսն զնոյն ասասցուք, եթէ արդարև լինելոց են տանջանքն, արդարև գալոց է, և առ դուրս կան այսուհետև իրք յարութեանն: Այլ ուստի յայտ իցէ, ասեն: Զասեմ 'ի գրոց, չասեմ 'ի մարգարէից. քանզի ոչ եթէ ընդ քրիստոնեայս միայն են խօս առ այժմ բանքս, այլ թէ և հեթանոս ոք իցէ՝ կարի վստահիմ ցուցանել օրինակս և ուսուցանել: Զի խօրդ ասեն, և ուստի: Աւաղում ինչ յառաջագոյն ասաց Քրիստոս. և եթէ չել այն ամենայն 'ի գլուխ, մի հաւատայցես այլոցն ևս բանից. և եթէ ելին 'ի գլուխ և կատարեցան, ընդէ՞ր երկմտիցես 'ի մնացելոցն. թէպէտ և կարի անհաւանութիւն էր, թէ չէին կատարեալ առաջինքն, այլոց հաւատալ. քան՝ զի յորժամ ամենայն կատարեցաւ, այլոցն որ չև են լեալ՝ չհաւատալ. մանաւանդ զի օրինակաւ ևս յայտ արարից զիրսն:

Ասաց Քրիստոս՝ եթէ Երուսաղէմ առցի, և այսպիսի աւերածով աւերեսցի. և ել 'ի գլուխ կանխասացութիւնն: Ասաց՝ եթէ եղիցի նեղութիւն մեծ, և եղև: Ասաց՝ թէ որպէս մանանիխ սերմանի, այնպէս՝ տարածեսցի քարոզութիւնն, և զնոյն տեսանեմք հանապազ ընդ ամենայն աշխարհ ընթացեալ: Ասաց՝ եթէ որք թողուցուն զհայր կամ զմայր կամ զեղբարս կամ զքորս, ունիցին հարս և մարս. և զայն արդեամբք իսկ տեսանեմք կատարեալ: Ասաց՝ եթէ յաշխարհի նեղութիւն հասանիցէ ձեզ, այլ քաջալերեցարուք, ես յաղթեցի աշխարհի. այս ինքն է՝ թէ ոչ ոք իցէ որ ձեզ յաղթիցէ. և զայս արդեամբք իսկ տեսանեմք եղեալ 'ի գլուխ: Ասաց՝ եթէ դրունք դժոխոց ոչ յաղթահա-

Digitized by Google

րեսցեն զեկեղեցի, և այն զի 'ի հալածանս կայցէ, և ոչ ոք իցէ որ շիջուցանիցէ զքարոզութիւնն. վկայ և այսմ կանխասացութեան փորձ իսկ իրացն. Թէպէտ և կարի առանց հաւանութեան էր յայնժամ զայս ասել: Ընդէ՞ր. զի ամենայն բանք էին, և չև ևս զհանդէս ցուցանէր բանիցն. որպէս զի կարի իսկ հաւատալի եղև այժմ: Ասաց՝ եթէ յորժամ քարոզեսցի աւետարանս ընդ ամենայն հեթանոսս, ապա եկեսցէ կատարած. ահաւասիկ այսուհետև մօտ 'ի վախճան եկաք հասաք. քանզի 'ի մեծ մասն աշխարհիս քարոզեցաւ աւետարանն. այսուհետև եկն եհաս կատարած. երկիցուք սիրելիք:

Բայց տես աստ, զի հոգայցես վասն կատարածի. Թէպէտ և մօտ իսկ է. զի իւրաքանչիւր կեանք կարճեալ են և մօտ 'ի վախճան: "Աւուրք, ասէ, ամաց մերոց 'ի նոսա եօթանասուն ամ, և եթէ ևս քաջ՝ ութսուն ամ": Մերձ է օրն դատաստանի, երկիցուք զարհուրեսցուք: "Եղբայր ոչ փրկէ և ոչ փրկեսցէ մարդ". բազում անգամ զղջանայցեմք անդ. այլ 'ի մահու ոչ ոք է՝ որ խոստովան լինիցի նմա: Վասն այնորիկ ասէ. "Կանխեսցուք քան զերեսս նորա խոստովանութ̃". այսինքն է քան զգալուստ նորա: Աստ զինչ և առնիցեմք, առնի զօրութիւն. իսկ անդ՝ ոչ ևս այնուհետև: Եթէ 'ի հնոց ջեռուցեալ արկանէր ոք զմեզ վայր մի, ո՞չ ապաքէն զամենայն ինչ խոստանայաք տալ վասն ապրելոյ, եթէ զինչս վատնել, և 'ի ծառայութիւն մտանել: Քանի՞ են որ 'ի ցաւս անհնարինս անկանիցին, զամենայն ինչ խոստանան տալ՝ եթէ հնար ինչ լինիցի 'ի ցաւոցն ապրել: Իսկ եթէ ժամանակեան ցաւքն այնպէս 'ի տագնապի կացուցանեն զմեզ, անդ զինչ գործեսցուք, յորժամ ոչ ինչ օգնիցէ մեզ, բայց միայն զեղջն և ապաշաւն տանջիցէ զմեզ:

Որչափ չարեօք լի եմք, և ոչ զգամք. զմիմեանս խածանեմք, զմիմեանս ուտեմք, մեղանչեմք, ամբաստանեմք, բամբասեմք, ընդ ընկերաց փառս խանդամք: Իսկ տես զանհնարին չարիսն, յորժամ կամիմք զընկերացն մեծարանս ձաղել. այլ այլս իմն, ասէ, խօսին զայսմ անուանէ. ա̃ծ թող ինձ, մի մեղս համարիր. սուտքս լուան: Իսկ ընդէ՞ր բնաւ խօսեսցիս զոր ոչն գիտիցես:

Եթէ չհաւատասն՝ զումէ խօսիցիս, զի՞ հաւատալի առ-
նես զլուրն շատախօսութեամբ. ընդէ՞ր տարածանես ըզ-
բանսն՝ որ ոչ են ճշմարիտ. դու չհաւատաս, և զա՟ծ ա-
ղաչես զի մի մեղս համարիցի. մի՛ իսկ խօսիր, այլ լռեա
լեր, և յամենայն երկիւղէ ազատ լինիցիս: Ո՛չ գի-
տեմ՝ ուստի ախտս այս եմուտ 'ի մարդիկ:

Ի շատախօսութիւն հատաք, 'ի ցոփութիւն և 'ի շաղ-
փաղփութիւն, չպահեմք զբանս 'ի մտի. լուր իմաստ-
նոյն՝ որ խրատէ և ասէ. «Լուար ինչ բան, մեռցի 'ի
քեզ. վստահ լեր, ոչ եթէ ծակէ զքեզ և ելանէ»: և
դարձեալ եթէ լուաւ ինչ բան մորոս, և երկնեաց որ-
պէս յերկնեաց մանկան ծննդականն: Ի շատախօսութիւն
պատրաստ եմք, 'ի դատապարտութիւնն կազմ գտա-
նիմք, թէպէտ և այլ ինչ չարիս չէր գործեալ մեր, այն
իսկ բաւական էր կորուսանել զմեզ և տանել 'ի գե-
հեննն. նոյն իսկ արկանել ընդ բազում չարեօք: Իսկ զի
ստոյգ ուսանիցես՝ լուր մարգարէին. «Նստէիր, ասէ,
զեղբօրէ քումմէ չարախօսէիր»:

Ոչ ինչ խօսիմ, ասէ, այլ այլք խօսին: Եւ դու իսկ
խօսիս. եթէ քո չէր ասացեալ, թերևս միւսն ոչ լսէր.
և եթէ լսելոց ևս էր, դու մեղացն չէիր պարտական:
Քեզ արժան էր թագուցանել և ծածկել զյանցանս
ընկերին, դու ահաւասիկ ձաղես և զվայրօք ածես, պատ-
ճառանօք՝ թէ վասն արդարութեան առնիցես. չլինի-
ցիս ամբաստան, այլ շաղփաղփ և ցոփ և փոքրոգի գտա-
նիս, մորոսանաս և չիմանաս: Ո՜ չարիք, և անհնարին
աղէտք. զքեզ ընդ նմին յամօթ առնես, և չառնես
'ի միտ:

Տես որչափ չարիք անտի ծնանին. բարկացուցանես
զա՟ծ, գայթակղեցուցանես զմարդիկ: Լսիցե՞ս զինչ ա-
սէրն Պաւղոս զայրեացն կանանց. «Ոչ միայն դատարկք
ուսանին, այլ և շրջմոլք և քննողք և շփլողք տանէ 'ի
տուն, և խօսին զոր ոչ է պարտ»: Որպէս զի ստոյգ ի-
ցեն բանքն՝ որ ասացին զեղբօրէն, սակայն այնպէս չէ
պարտ խօսել, թող թէ յորժամ սուտ ևս իցեն: Մի-
նայն ուրեք անձին և եթ զգոյշ լինիցիք. երկնչիցիս՝ ե-
թէ գուցէ պատժիցիս յա՟յ. ապա երկիր՝ եթէ գուցէ
վասն շատախօսութեանն պատժիցիս: Ո՛չ ի անդ չիք ա-
սել եթէ ինձ մի մեղս համարիցիս, ա՟ծ. քանզի շատ-

Digitized by Google

խօսեցար և անձամբ անձին կուտեցեր մեղս։ Ո՛չ ձագես, զմէ ածցես զվայրօք, ընդէր այդչափ ամենցուցանես զսակաւ բանսն. գիտասջիր զի այնպիսի չարիք կորուսանելոց են զքեզ։ Վասն այնորիկ ասէր Քրիստոս. «Մի՛ դատիք, զի մի՛ դատիցիք»։ և չէ ումեք ինչ փոյթ. և ոչ փարխսեցուսն գործքն իւրատեն զմեզ. Նա ասէր սուտ ինչ իրս, թէ չեմ իբրև զմաքսաւորս զայս. և թէպէտ և չլուաւ ոք զիրսն, սակայն դատապարտեցաւ։ Իսկ թէ որ զստոյգ բանսն խօսեցաւ և ոչ ոք լուաւ, այնպէս դատապարտեցաւ, որք սուտ ինչ՝ որք չիցեն ՚ի վերայ հասեալ՝ ընդ վայր տարածանեն իբրև զկանայս շատախօսս, որպիսի ինչ պատիժս ոչ կրիցեն. զիարդ իցէ, չունիցին արդեօք զժոյժ։

Դնիցուք այսուհետև պահապան բերանոյ, և աղխս և փականս լեզուի. քանզի բազում չարիք ՚ի շատախօսութենէ ծնանին, տունք կործանեցան, բարեկամութիւնք քակեցան, և այլ ևս բիւրապատիկ անհնարին չարիք գործեցան։ Մի՛ քններ զընկերին, ով մարդ։ Լո՛ւռ շատխօսիցես, և չունիցիս ժոյժ. սակայն զինչ և իցէ յանցանս ունիցիս և դու, զքոյն խօսեաց առաջին նոյ. և ոչ ևս այնուհետև լինիցին յանցանքն յանցանք, այլ յաղթութիւն։ Խօսեսջիր զյանցանս քո առաջի բարեկամաց որ ստոյգ բարեկամք իցեն և արդարք, յորս կարի վըստահ իցես, զի աղօթս արասցեն առ ա̃ծ վասն մեղացն քոց։ Ապա թէ զայլոց ասիցես, և զքո ոչ, չօգտիս ինչ, և ոչ շահիս, այլ և կորնչիս ևս. իսկ եթէ զքոյն պատմեսցես տեառն, բազում վարձս ընդունիցիս. «Ասացի, ասէ, թէ պատմեցից զիմէն զանօրէնութիւնս իմ տեառն, և դու թողեր զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց»։

Կամիս դատել. զքոյան դատեաց, և չիք ոք որ քեզ մեղադիր լինիցի։ Թէ անձամբ զանձն դատապարտիցես, յայնժամ չդատապարտիցիս, յայնժամ չպատուհասիցիս. յայնժամ պատուհասիս, եթէ չդատապարտիցես և չյանդիմանիցես զանձն, եթէ չցուցիցէ քեզ վասն քո։ Իսկ թէ տեսանիցես զոք բարկացեալ զայրացեալ, այլ ինչ յոռութիւնս գործեալ, զմտաւ ածջիր վաղվաղակի և դու զքո զյանցանսն, և այնպէս ոչ կարի զնա դատապարտես, և դու ազատես զքեզ ՚ի բեռանց

մեղացն։ Եթէ այնպէս ուղղեսցուք զմեր վարս, եթէ այնպէս լինիցիմք վաճառականք և շահիցեմք զկեանս մեր, գտանեմք զոգիս։ Եթէ զանձինս դատապարտի֊ցեմք, ոչ անկանիմք 'ի բազում մեղս, այլ թերևս իսկ և բազում բարիս գործեմք, յորժամ հեզք և խոնարհք լինիցիմք, և վայելեսցեմք յամենայն բարութիւնսն խոս֊տացեալ սիրելեացն այ. որոց լիցի ամենեցուն մեզ հա֊սանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում հօր և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՃԱՌԷՆ

. . . . . . . . . . . . . . . . . . . .

չև ևս ընծայեցաւ նմա։ Պատարագ աստ զպատուականն ասէ, զլաւաւորն, զկարևորն։ Ունիմք, ասէ, ասել թէ չընկալաւ, այլ ընկալաւ։ Իսկ առն ցԿայէն. «Եթէ ուղիղ մատուցանես և ուղիղ ոչ բաժանիցես»։ Իսկ ե֊թէ այնպէս է, ապա Աբէլ ուղիղ մատոյց և ուղիղ բա֊ժանեաց. բայց սակայն փոխանակ այնր ընկալաւ հա֊տուցումն, զի սպանաւ յեղբօրն ձեռաց, և զպատիժն զոր վասն մեղացն կրեաց հայրն՝ նախ նա ընկալաւ, որ զուղղութիւն կատարեաց. և այնչափ անհնարին չար֊չարանօք չարչարեցաւ, զի յեղբօրէ և նախ քան զամե֊նեսին. և կատարեաց զուղղութիւնն, թէպէտ և չէր ընդ ոք նայել։ Ընդ ո՞ հայեցաւ և այնպէս պատուեաց զնա. միթէ ընդ հա՞յրն և ընդ մա՞յրն. այլ և նոքա թըշ֊նամանեցին զնա՝ փոխանակ երախտեացն։ Միթէ ընդ եղբա՞յրն. այլ և նա անարգեաց. որպէս զի յայտ իսկ է թէ յանձնէ եգիտ զբարիս։ Իսկ արդ զի՞նչ անցք ան֊ցանեն ընդ նա. չարչարի սպանանի։ Ո խո՞րդ և այլ ազգ վկայեցաւ զնմանէ եթէ արդար է։ Ասի թէ հուր էջ և ընկալաւ զպատարագն. փոխանակ ասելոյ եթէ «հայե֊ցաւ 'ի Աբէլ և 'ի պատարագս նորա»։ Հեբրայեցին ասէ՝ եթէ հուր եկեր։ Իսկ արդ զի՞նչ այլ ինչ, և բա֊նիւք իսկ և արդեամբք վկայեաց զարդարոյն, և նորին առաքինի իսկ սպանաւ. և չէ և վրէժխնդիր, այլ թոյլ տայ։ Իսկ ձեռն, ասէ, ոչ այնպիսի ինչ է և չէ . . . . .

Digitized by Google

Այլ դուք, ասէ... և ոչ ինչ տեսանէք... ուսուցանս առեալ, մի ինչ խառնիցիք... եղբ ուր ամենայն... հաւատովք ե... խեցաւ փոխի... յութիւնն պատ... են, և համբոյ.... հաւատքն. եթէ... եթէ ընդունե... խարէնս, զիարդ... ձոյ. " քանզի առանց հաւատոյն, ասէ, անհնար է այ հաճոյ լինել,,։ Ոչ խնդրդ. եթէ ոք հաւատայցէ եթէ գոյ ած և վաստակոց հատուցանէ, յայտ է թէ անդ... փոխարէնս։ Այլ արդ... իցէ հաճոյութ.. "Հաւատալ, ասէ, պարտ է... ած,,. ոչ եթէ որպ..չ իցէ. զի եթէ յոյժէն... պէտք են և ոչ.. դոյ եթէ որպիսի ոչ իցէ խորհրդովքն հնար իցէ հասու լինել։ Այլ զի հատուցիչ վարձուցն է, առ այնով է՝ հաւատոց պէտք են և ոչ խորհրդոց. զիարդ զէութիւնն խորհրդովք փակել մարթիցի. որպիսի խորհուրդք կարիցեն այնմ հասու լինել. ոմանք ինքնակաց ասեն զամենայն ինչ որ է։ Տեսանես զի թէ ոչ հաւատամք վասն ամենայնի, ոչ վասն հատուցմանն միայն, այլ և այնմ թէ է ած, 'ի գերև ելանէ մեր ամենայն ինչ։ Նաղուսք խնդիր են թէ յի փոխեցաւ Ենովք, և ընդէր փոխեցաւ, և զմէ ոչ մեռաւ, ոչ նա և ոչ Եղիա, և թէ տակաւին կենդանի իցեն, և զիարդ և որովք կերպարանօք իցեն կենդանիք։ Այլ աւելորդ է զայն խնդրել։

Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՃԱՌԷՆ

Որ յերկնիցն անկանիցի և յանտի բարութեանցն, որպիսի արդատուք պարտ իցէ արտասուել։ Քանզի արտասուեալ այն՝ որ չարչարիցի ոք, և ինքն չիցէ պատճառ չարչարանացն. յորժամ իւրով կամօք ոք անկանիցի ընդ չարեօք, ոչ եթէ արտասուաց, այլ ողբոց արժանի է. մանաւանդ թէ և անդ և ազալ արժանի է։ Քանզի տէրն մեր Յիսուս Քրիստոս զԵրուսաղէմ, թեպէտ և ամբարիշտ էր, ողբացաւ և արտասուեաց։

Արդարև իսկ բազում աշխարհաց արժանի եմք, բազում ողբոց. եթէ ամենայն աշխարհս ձայն առնուցուն, զողբս հարկանիցէ, և քարինք և փայտք և ծառք և երէք և թաչունք և ձկունք և ամենեքին ամենայն տիեզերք համօրէն 'ի ձայն ադի և ազդոմ աշխարհանաց

աշխարհիցեն, ոչ ինչ արժանի աշխարհելոյն աշխարհիցեն։ Որպիսի՞ բան յանդիման կարիցէ կացուցանել, որպիսի՞ սիրտք զայնպիսի երանութիւն և զբարութիւնս. զայնպիսի ցանկութիւն և զփառս և զուրախութիւն և զլուսաւորութիւն։ «Զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ». չասաց եթէ անցանէ ևեթ զմտօք, այլ եթէ՝ և ոչ իմանալ ոք երբէք կարաց, «զոր պատրաստեաց ած սիրելեաց իւրոց»։

Որոց պատրաստիչ և կազմիչ ած է բարութեանցն, որպիսի՞ ինչ իցեն։ Զի թէ արար զմեզ վաղվաղակի, և ոչ ինչ 'ի մէնջ կայր մեզ կազմեաց յառաջագոյն, այնչափ ինչ շնորհեաց մեզ։ Զինչ. զդրախտն, ընդ իւք ևս խոստելոյ արժանի առնել, կենդանութիւն, անմահութիւն խոստացաւ, կեանս երանելիս, ազատս 'ի հոգոց։ Իսկ որք վասն նորա այնչափ աշխատեցան և Ճգնեցան և համբերին չարչարանաց, զինչ ինչ ոչ շնորհիցէ։ Ի միածնին ոչ խնայեաց վասն մեր, և զորդին սիրելի ետ 'ի մահ վասն մեր մինչ թշնամիքն էաք, իմ իմիք չառնիցէ արժանի մինչ սիրելիքս եղեաք. իւ իւիք չմեծարիցէ՝ մինչ հաշտեցոյց ընդ իւր։ Մեծատուն է, և կարի այնչափ մեծատուն՝ և ցանկայ և փութայ զմեզ սիրելիս առնել. մեք ոչ այնպէս փութամք, որպէս նոյն վասն մեր փութայ. և զինչ ասեմ եթէ ոչ փութամք, նա և կամիմք իսկ ոչ այնպէս բարութեցն հասանել՝ որպէս և նոյն կամի. և զի ևս առաւել կամի, որով արարն և եցոյց։

Մեք վասն մեր անձանց տակաւ ունիք չարհամարհեմք, և նա վասն մեր զորդին իւր եբետ։ Արկցուք յոգուս 'ի կիր զսէրն այ, և վայելեսցուք բարեկամութեամբ նորա։ «Դուք, ասէ, բարեկամք իմ էք, եթէ առնիցէք զոր ասեմ ձեզ»։ Տեսէ՞ք, զթշնամիսն՝ որ այնչափ հեռի էին 'ի նմանէ, քան զորս առանց զուգական առաւելութեամբ առաւել է, բարեկամս իւր արար, և բարեկամս կոչէ։ Զինչ չիցէ ցանկալի 'ի վերայ այնպիսի բարեկամութեան չարչարել։ Վասն մարդկան բարութեան բազում անգամ 'ի Ճգունս մտանեմք, և վասն այ բարեկամութեանն և ոչ ինչ կամիք ծախել. և արդարև սգոյ արժանի են գործք և գնացք մեր, սգոյ և արտասուաց, լալոյ և աշխարանաց և կոծոյ մեծի։

Ի յաւուրս մերում անկաք, և 'ի բարձրութենէն խոնարհեցաք, չգտաք արժանի պատուոյն Այ, ապախտաւորք և ապաշնորհք եղեալք յետ երախտեացն։ Մերկացոյց զմեզ սատանայ յամենայն բարութեանցն։ Անարժանքն եղեաք լինել ուրուք՝ ոչ ինչ ընդհատ եղեաք 'ի թշնամեացն, որ թշնամանենն զնա։ Ոչինչ ինչ այսուհետև կայցէ մեզ մխիթարութիւն. նա զմեզ յերկինս կոչեաց, և մեք մերժեցաք զանձինս 'ի գեհենն։ "Անէծք և ստութիւնք և գողութիւնք և շնութիւնք հեղեալ են յերկրի". կեանք արեան ընդ արեան խառնեն, և այլք այնպիսի ինչ գործս գործեն՝ որ են չար քան զարիւնն է. բազումք 'ի զրկելոց և 'ի նեղելոց՝ բիւրապատիկ մահու ըղձանան, քան թէ այնպէս տառապելոցն. և եթէ ոչ Այ երկիւղ առաջի աչաց կայր, թերևս և անձանց իսկ անէին. զի այնպէս ցանգ մեռանէին։ Իսկ արդ չիցէ՞ այս չար քան զարիւնն։

"Վայ ինձ, ասէ, անձն իմ, զի կորեաւ երկիւղած յերկրէ, և չիք ոք որ ուղղիցէ 'ի մէջ մարդկան". և մեք այժմ զբողոք բարձցուք վասն մեր. այլ եղերաւք ողբոցս ձայնակիցք։ Իսկ թերևս ասանք հեթանոսացն և ծառայ առնիցեն. վասն այնորիկ իսկ պարտ է յերկարել զողբս. զի այնպէս մոլիմք և կողոպտիմք, զի ոչ թէ մեղիցիմք՝ խնամամք. այլ ընդ որոց հեծելն պարտ էր՝[1] ծառայ առնեմք։ Յայտնելոց է, ով մարդ, բարկութիւնն Այ յերկնից 'ի վերայ ամբարշտութեան և անիրաւութեան մարդկան. և "Աստուած, ասէ, մեր յայտնապէս եկեսցէ, և հուր առաջի նորա գնասցէ և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ։ Հուր առաջի նորա վառեսցի, և բորբոքեսցի շուրջ զթշնամեաւք նորա". և "Որ ատեան իբրև զհնոց բորբոքեալ". և չածէ ոք զմտաւ, այլ քան զառասպելս չար արհամարհեն։

Ապշեալ ահագինք. և որ լուիցէ չիք. և ծառայ ամենքին առնեն։ Ոչինչ շահ կայցէ մեզ, ասեմք զտանիցեմք փրկութիւն. կորեաք սպառեցաք, ծառայ կացաք թշնամեաց մերոց, կատականք եղեաք հեթանոսաց, խաղալիք դիւաց։ Կործի սատանայ, հօրան լինի, ուրախ լինի. յամօթ եղեն հրեշտակք, որ զմեզ յաւանդ

1 Յօրինակին պակասաւոր պարբ էր։

տալին, ամենեքին 'ի տրտմութիւն են ։ Զիք որ գտանայ, 'ի զուր ծախեցան վասն մեր ծախքն. և մեք ձեզ իբրև առանցեալք թուիմք ։

Ի դէպ ժամանակի է և այժմ կոչել զերկինս 'ի վկայութիւն, եթէ չիք ոք որ լսէ. վկայ լերուք արարածք. "Լուր երկին և ունկն դիր երկիր զի տէր խօսեցաւ"։ Ձեռն տուք որ չեւ էք գլորեալ՝ գլորելոյ. որ կայքդ՝ կործանելոցն. ողջքդ՝ հիւանդացելոց. զուարթք՝ մոլեխանացն և գանդաչելոցն ։ Ո՞ր ոք աղաչեմ զբարեկամ քան զշնորհ փրկութեանն մեծարոյ համարեսցի. մի՛ ոք զանձին եւեթ զօգուտ խնդրեսցէ ։ Յորժամ ջերմ տատիկ 'ի վերայ հասանիցէ, և ծառայք տիրեն տերանց. յորժամ նորա ոգին պապակեսցի 'ի տենդոյն, դատարկք ծառայիցն թէպէտ և շուրջ կայցեն, ոչ ինչ գրեն և չճանաչեն զօրէնս տէրունականս, մինչ դեռ տէրն 'ի տագնապի իցէ ։

Դողդողեցուք զանձինս, աղաչեմ. պատերազմունք համապազօրեք 'ի վերայ յարուցեալ. գետամեռք, ջրաքածք, ծովակուլ կորուստք. շուրջ աղէտք, յամենայն կողմանց վարանք. սաստ անստի բարկութիւնն ա̃յ պաշարեալ, և մեք իբրև զհաճոյս այնպէս եմք յանհոգութեան ։ Ամենեքեան զձեռս յագահութիւն պատրաստեմք. չիք ոք որ յօգնականութիւն զրկելոցն իջանիցէ. ամենեցուն զաչս յափշտակութիւն արձակեալ, չիք ոք որ յօժարիցէ 'ի պաշտպանութիւն. իւրաքանչիւր ոք ձեպի եւս քան զեւս յաճախել զինչս. չիք ոք որ օգնիցէ կարօտելոյն. իւրաքանչիւր ոք թէ զիարդ աւանիցէ յաւելուած ընչիցն, յոյժ զբօսեալ են զկարասեաւ. չիք ոք որ ածէ զմտաւ թէ զիարդ ապրեցուսցէ զոգին ։ Ո՞ր կակած ունի զամենեսեան, թէ գուցէ յաղքատութիւն անկանիցիմք. թէ գուցէ 'ի գեհենն երթայցեմք՝ ընդ այն ոչ ոք կասկածէ և ոչ դողայ ։

Նա արդ չիցէ՞ այս ողբոց և ամբաստանութեան և քամհասանաց արժանի ։ Զկամէի զայս ասել, այլ նեղիմ, չունիմ ժոյժ 'ի ցաւոյ. արգահատեցէք, տառապանիմ 'ի սգոյ, բազում ինչ զոր և չկամիմ, ասել ։ Նա քար տեսանեմ զայնր հարուածս, առանց մխիթարութեան են չարիքն՝ որ զմեօք պատին. մեծամեծ քան զփոփոխութիւնն հասեն 'ի վերայ մեր կարիք, կարեաց

սպառեցաք. «Ո՜ տայր գլխոյ իմ ջուր, և աչաց իմոց աղբիւրս արտասուաց, զի նստէի և լայի զանհնարին զբեկումն մեր»։

Լացցուք, սիրելիք, լացցուք և հեծեծեսցուք դառնապէս։ Թերևս իցեն ոմանք՝ որ ասիցեն, համակ զողբոց խօսի, համակ զարտասուաց։ Չկամէի՝ հաւատացէք՝ չկամէի. այլ համակ ընդ գովութիւնս և ընդ յարգանս անցանել. այլ չէ այժմ այնր ժամանակ։ Եւ թէ ողբալն ինչ չար է, սիրելիք, այլ ողբոց արժանի գործ գործել։ Եւ թէ լալն ինչ ձանձիր է, այլ լալոյն արժանի իրս վճարել։ Ո՞չ տանջիր, և չմտանեմ ՚ի սուգ. մի՛ մեռանիր՝ և չլամ։ Այլ թէ մեռեալ կայցէ առաջի, աղաչես այնմ վշտակից լինել. և անագորոյն համարիս զայնոսիկ՝ որք ոչ ընդ քեզ սգայցեն. և ոգիքն կորնչին, և ասես, մի մտանեմ ՚ի սուգ։ Չունիմ ժոյժ, քանզի հայր եմ, արտասուաց. հայր գթած եմ, և չկարեմ տեսանել մեռեալ, և չլամ։

Լուարուք որպիսի գոչիւն գոչէր Պաւղոս. «Որդեակք իմ զորս դարձեալ վերստին երկնեմ»։ Ո՞ր մայր մատաղածին այնպիսի ձայն արկանիցէ՝ որպէս և նայն։ Երանի թէ էր հնար բանալ և տեսանել զխորոցն մտացս, և ապա իմանայիր՝ թէ քան զամենայն կանանց և աղջկանց տարաժամ հասեալ յայրութիւն, զայրացեալ են և խորովեալ, և ոչ այրիմ և աղանձիմ։ Եւ այնպէս կին մատաղ զայր ամուսին սգայ, և ոչ հայր զորդի, որպէս ես զայսչափ բազմութիւն, յորժամ ոչ տեսանեմն յառաջաղէմն մատուցեալ։ Զամենեսեան ՚ի չարախօսութիւն և ՚ի բամբասանս տեսանեմ. չիք ոք որ գործ առնէ հաճոյ լինել ինքն, այլ զայսմ անուանէ, ասէ, և զայնմ անուանէ չարախօսեսցուք. այս անուն չէ արժանի քահանայութեան, և միւսն չկայ պարկեշտութեամբ։

Պարտէաք զմեր չարիս սգալ, և ոչ զայլս դատել. թէպէտ և սուրբք իսկ էաք, չպարտէաք այնպիսի գործս գործել։ «Ո՞ քննեսցէ զքեզ, ասէ. Զի՞նչ ունիս՝ զոր ոչ առեր. և եթէ առեր, զի՞ պարծիս իբրև զչառեալ»։ Դու զի՞ դատիս զեղբայր քո, որ բիւրապատիկ չարեօք լի ես։ Յորժամ ասիցես, եթէ այս անուն չար է և ժանտ և յոռի, զմտաւ ած և զքո անձնդ, և քննեսջիր զքոյսն, և ապա գիտասջիր զի զզջանայցես զբանսն։

Digitized by Google

Ոչ ինչ և չիք իսկ այնպիսի յորդորումն յառաքինութիւն, որպէս զմեղացն յիշատակսն միշտ կիրթ 'ի մտի ունել: Եթէ զայս երկուս իրս յարդարեսցուք, կարեմք հասանել խոստացելոց բարութեանցն. կարեմք սրբել զանձինս և ջնջել 'ի մեղաց, միայն թէ զմտաւ ածիցեմք: Ե՞րբ առնուցումք զհոգ իւրայն յանձինս սիրելիք. վշտասցուք աստ մտօք, զի մի վշտանայցեմք անդ տանջանօք, այլ զի վայելեսցուք 'ի յաւիտենից բարութիւնսն, ուստի հալածական լինին ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք. զի հասանիցեմք բարութեանցն՝ որ անցանիցեն ըստ միտս մարդկան՝ 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. զի նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ՃԱՌ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Առաջին առաքինութիւն և գլխաւոր քան զամենայն առաքինութիւնս՝ օտար և պանդուխտ լինել յաշխարհէս, և ոչ ինչ հաղորդել ընդ աստի իրս, այլ իբրև յօտարոտեաց հրաժարել, զոր օրինակ երանելիքն, զորոց ասէ, եթէ "Շրջեցան լաշկ մաշկօք և մորթօք այծենեօք, նեղեալք և տառապեալք և կարօտեալք, զորս ոչ արժէ աշխարհս":

Նոքա օտարք համարէին զանձինս յաշխարհէ. իսկ Պաւղոս ևս առաւել քան ասէ. ոչ օտար կոչէ զանձն, այլ մեռեալ աշխարհի, և զաշխարհս իւր մեռեալ. "Ինձ, ասէ, աշխարհ 'ի խաչ ելեալ է և ես աշխարհի". և մեք քաղաքակից եմք աշխարհի, և յոյժ փութամք լինել քաղաքակից երկրի. այնպէս իմն զամենայն աստէն կամիմք շահել: Եւ որպէս էին արդարքն օտարք և մեռեալք աշխարհիս, նոյնպէս և մեք օտարք և մեռեալք երկնից. և զոր օրինակ էին նոքա կենդանիք և քաղաքակիցք երկնից, նոյնպէս և մեք աշխարհիս: Վասն այնորիկ մեռաք, զի 'ի ճշմարիտ կենացն հրաժարեցաք և զժամանակ աւուրցս ախորժեցաք. յայն սակս բարկացուցաք զա̃ծ, զի մեզ բարութիւնք յերկինս առաջի կան, և մեք յերկրաւորացս չկամիմք հեռանալ, այլ իբրև զոր-



Digitized by Google

դունս ինչ՝ յերկրէ յերկիր եւ 'ի տանէ 'ի տուն զնասամք. եւ բնաւ եւ ոչ սակաւ ինչ հաճիմք բառնալ զաչս 'ի վեր, եւ ոչ մերժել զանձինս կամիմք յիւրաց մարմնաւորաց, այլ իբրեւ 'ի թմբրութենէ քնոյ եւ յարբեցութենէ ըն-կղմեալք՝ աստէն զնովիմք զգալեալ դանդաչեմք։ Նու զօր օրինակ որք քաղցրանիրհ ինչ քնով պաշարեալք ոչ միայն զցայգն, այլ եւ յառաւօտուն ծագել եւ 'ի տը-ւընջեանն լուսաւորել՝ ջեռանին 'ի մահիճս եւ չամաչեն։ Նոյնպիսիքն իբրեւ զծրիս ինչ շնորհեն ցանկութեանն. եւ զպոմծոյ եւ զփոյթոյ ժամանակ՝ քնոյ եւ պղերգութեան ժամանակ առնեն։

Նոյնպէս եւ մեք 'ի մերձեալ տուընջեանն՝ 'ի մերժել գիշերոյն՝ մանաւանդ թէ տուընջեանն իսկ, «Գործե-ցէք, ասէ, մինչ դեռ աւուր կայ», զգիշերոյ գործս գոր-ծեմք. համակ 'ի քուն կամք, միշտ երազս տեսանեմք, սահիմք յածիմք եւ ուրախ լինիմք։ Ապփուցեալ են աչք մտաց մերոց եւ մարմնոց, բարբաջեմք, զայլ այլս խօ-սիմք. եթէ 'ի խոր ոք խոցիցէ չզգամք, եւ եթէ զինչ աւար հարկանիցէ եւ տանց հուր տայցէ։ Մանաւանդ թէ չմնամք այլոց զայն առնել, այլ մեզէն անձամբ ան-ձանց առնեմք. հանապազ խոցեմք եւ ծակոտեմք զան-ձինս. խայտառակիմք եւ ծանակ կամք, մերկացեալք յա-մենայն վայելչութենէ եւ 'ի պատուոյ եւ 'ի փառաց. ըղ-ձանակաց գործոյն մեր ոչ մեք թագուցանեմք, եւ ոչ այ-լոց պատուիրեմք այնմ զգուշանալ. այլ 'ի մէջ անցեալ կամք խայտառակութեամբ առաջի տեսողաց եւ անցա-ւորաց 'ի ծագս եւ 'ի կատականս եւ 'ի դարովանս։

Թէ չգիտիցէք, եւ ինքեանք իսկ չարքն նորին գործոյ գործակիցք՝ ծաղր առնեն զգործակիցսն եւ ստգտանեն։ «Զանզի հաստատեաց 'ի մեզ ա͞ծ ատեան ընտրութեան առանց աչառանաց, որ ոչ երբէք եղծանի. Թէպէտ եւ 'ի յատակս իսկ չարութեանցն հասանիցեմք, սակայն ստգտանեն միայն զգործոն յոռութեանց. վասն այնո-րիկ եւ չարքն դատապարտեն զանձինս. եւ եթէ կոչիցէ ոք զնոսա, զայն ինչ որ ենն՝ ամաչեն, բարկանան, թըշ-նամանս համարին։ Նոյնպէս թէպէտ եւ ոչ գործօղք, այլ բանիւք ստգտանեն զոր ինչ գործեննն՝ նեղեալք 'ի խղճէ մտացն. մանաւանդ թէ եւ գործօղքն իսկ ստգտա-նեն զանձինս։ «Զանզի գաղտ եւ 'ի ծածուկ գործեն,

մեծ օրինակ ցուցանեն զկամացն՝ որպէս զխարդ ընդ խոտ հայիցեն։ Զի այնպէս յայտնի են չարիքն՝ եթէ չարիք են, որպէս զի թէ ամենեքին իսկ դատապարտեալքն զնոսա-նէ, և որք գործեն զչարիսն։ Իսկ այնպէս լաւութիւն է առաքինութիւնն, զի և 'ի նոցանէ իսկ՝ որ չկամիցին նա-խանձաւորք նորա՝ զարմանալի երևին։

Վասն զի և պոռնիկն գովէ զցածութիւն, և ագահն առատանէ զանիրաւութիւն, և բարկացողն զարմանայ ընդ անոխակալութիւնն և զհարձակմանութիւնն պար-տաւէ, և ազատեզին զազատեղութիւնն։ Իսկ ընդդէր, ա-անն, գործիցեն զայն։ Որ բազում ծուլութեան. և զի չընտրեն զլաւն՝ եթէ լաւ իցէ. ապա թէ ոչ, առնել չհա-մարէր զիրան, և ոչ ուրանայր յորժամ ամբաստան ոք լինէր զնմանէ։ Նաղուսք կանխեալ անկեալ 'ի չարիս, ոչ կարացին հանգարտել ամօթոյն և խեղդեցան. զի այնպէս բարւոյ իմն և լաւի անկեալ է 'ի մեզ մխիթարու-թիւն. այնպէս քան զարեգակն և ս լուսաւորագոյնք են բարիքն, և քան զամենայն ինչ չարագոյնք նոցին հա-կառակքն։

Օտարք և պանդուխտք էին սուրբքն։ Ո՞վ և որով օրինակաւ. Երբ խոստովան եղև Աբրահամ՝ եթէ օ-տար և պանդուխտ եմ։ Ձերբեռ և նա. բայց Դաւիթ խոստովան իսկ եղև, եթէ "Օտար և պանդուխտ եմ որպէս զամենայն հարս իմ,,։ Որք վրանօք բնակէին և արծաթոյ գերեզմանս գնէին, յայտ է թէ օտարք էին, որք և ոչ զմեռեալսն անգամ ուրեք ունէին թաղել։ Իսկ արդ զինչ. 'ի պաղեստինացւոց երկրէն ինչ առնէին օտար զանձինս։ Այլ ոչ երբէք. այլ յամենայն իսկ աշխա-րհաց. քանզի ոչ ինչ տեսանէին աստ յայնցանէ՝ զորս կամէին, այլ զամենայն ինչ օտար և այլոյ։ Առաքինու-թեանն կամէին գալ, և աստ բազում չարիք էին. օտար համարեալ էին նոցա իրքն, չունէին զոք բա-րեկամ, չունէին զոք ընտանի, բայց 'ի սակաւուց։

Զինչ էին օտարք։ Զի ոչ գայլին զաստի ինչ ի-րօք. և զայս ոչ բանիւք, այլ և արդեամբք իսկ ցուցա-նէին։ Որպիսի ինչ օրինակաւ։ Նաց ցԱբրահամ, թող զերկիրդ որ քոյդ կարծի, և եկ յօտար երկիր. և չառ-ակն իւրոյն. որպէս զօտար ինչ երկիր թողուցու, այն-պէս անցեալ եթող և գնաց։ Նման ջրոյ՝ մատաղ զօրացել

պատուարայ. և որպէս թէ չունիցի որդի, այնպէս մնա-ցայց. որպէս թէ չիցէ զգեցեալ զմարդկեղէն բնութիւն, այնպէս յօժարութեամբ եհան 'ի սեղան: Ոչինչ զոր ունէր՝ հատուածակաց էր, խոր և ամենայն անցաւորաց. չհամարէր ինչ զիրս աշխարհիս. զերեցութիւնն այլոց մատուցանէր մտօք տայր. 'ի վիշտս նախ զանձն մխէր. ազ-գի ազգի ըղձանս տեսանէր. ոչ ապաքինաս գեղեցիկս չի-նէր, ոչ ըստ անձին զիւրին շրջէր, և ոչ 'ի փափկու-թիւնս հատանէր, ոչ զանձամբ գայր, և ոչ հանգերձս յարգէր: Գիտէր եթէ ամենայն ատս և ատօքէն ծնա-լոց է. այլ ամենեւին հնարէր զի այնմ քաղաքի քաղա-քակից լիցի: Օտարասիրութիւն ցուցանէր, զեղբայր-սիրութիւն և զողորմածութիւն, զանոխակալութիւն և զընչիցն անփոյթութիւն, և զաշխարհիս փառաց և զայլոց եւս ամենայն իրաց այնպիսեաց.

Այս նորին որդի նոյնպիսի էր, 'ի հալածանս և 'ի պա-տերազմունս կայր. չկայր հակառակ, այլ տայր տեղի, որպէս զի յօտարութեան իցէ. զի օտարք ողջամբ և ըկլին՝ համբերեն, քանզի չեն յիւրեանց աշխարհին: Նոյնպէս և կինն հանա 'ի նմանէ, սակայն և այնմ եւս համբերէր իբրև զօտար մի յօտարութեան. վերին զի-նուքն վառեալ էր՝ ցածութեամբ և պարկեշտութեամբ: Յետ որդւոցն լինելոյ՝ ոչ եւս մերձեցաւ 'ի կինն. և յետ սատեացն մանկութեան անցանելոյ՝ արար առ զկինն. յայտ արարեալ թէ ոչ վասն ցանկութեան ինչ կա-րեաց, այլ սպասաւոր լինէր ա̃յ աւետեացն: Նոյն Յա-կոբայ զինչ. ո՞չ հաց միայն խնդրէր և հանդերձ. որ ար-դարև օտարաց հայցուածք են՝ որ կարի յաղքատութեան հասեալ են. ո՞չ առաքէն հալածական լեալ փախչէր իբրև զօտարական. ո՞չ առաքէն վարձկան եղեւ, և ազ-գի ազգի վշտաց վշտանայր իբրև զօտար ամենայն ուրեք:

“Այրք զայս ասեն, ասէ, յայտ առնեն թէ զիւրեանց զաւառն խնդրեն„: Ճշմարիտ է. քանզի այդ և այլ կերպա-րանք են 'ի միջի. նոքա ցանկ երկնային, և զերծանել կամէին աստի և յիւրեանց աշխարհն դառնալ. և մեք զնորին հակառակն: Այս թէ սակաւ ինչ ջերմն 'ի վերայ հասանիցէ, զամենայն ինչ թողեալ, իբրև զմանր մանկունս զկար հարկանիմք: Ապաքինիմք դողամք 'ի մա-հուանէ, և յերկուլ խոկ այնպիսի անցք անցանենն ընդ

Digitized by Google

մեզ. քանզի ոչ իբրեւ զօտար շրջիմք աստ, եւ ոչ իբրեւ 'ի մեր աշխարհ փութամք անդր, այլ որպէս թէ 'ի տանջանս երթալոց եմք։ Վասն այնորիկ տրտմիմք, զի ոչ վարեցաք 'ի դէպ իրացն, այլ եղծաք կործանեցաք զկարգն։ Յորժամ ուրախն պարտ էր լինել, աշխարեմք զարհուրիմք իբրեւ զպարտապանս եւ զաւազակապետս՝ որք յատեանս դատաւորաց երթալոց իցեն, եւ զամենայն ինչ զինչ եւ գործեալ իցէ զմտաւ ածիցեն, եւ յահի եւ յերկիւղի կայցեն։

Ոչ այնպիսի ինչ եւ երանելիքն, այլ փութային ձեպէին. Պաւղոս եւ հեծէր իսկ, «Մե՛ք, ասէ, որ ընդ յարկաւս եմք՝ հեծեմք ծանրացեալք»։ Այնպիսի էին եւ Աբրահամեանքն, օտարք էին յամենայն աշխարհէս, եւ այլ իմն աշխարհ խնդրէին։ Զո՞ր. միթէ զոր թողէինն. եւ ոչ երբէք։ Զինչ արգելոյր զնոսա, եթէ կամեցեալ էր, անդրէն դառնալ միւսանգամ 'ի նոյն քաղաք. այլ զերկնաւորն խնդրէին, յայն ճանապարհ փութային. եւ այնպէս եղեն հաճոյ այ։

«Վասն այնորիկ ոչ ամօթ համարի ած կոչել նոցա ած»։ Տեսէ՞ք, որպիսի ինչ պատիւս առին, զի արժանի արար կոչել նոցա ած։ Զինչ խօսիս. ած երկրի կոչի եւ ած երկնից, եւ դու իբրեւ զմեծ իմն դնես զայն, եթէ չհամարի ամօթ կոչել 'ի վերայ նոցա ած։ Այլ արդարեւ իսկ մեծ եւ բազում երանութեան նշանակ։ Զիա՞րդ. զի երկնի եւ երկրի կոչի այնպէս ած, որպէս եւ հեթանոսաց անուանի, վասն զի արարն եւ հաստատեաց զնոսա. իսկ սրբոց ոչ այնպէս, այլ իբրեւ զբարեկամ մտերիմ։

Այլ զի օրինակաւ եւս յայտ արարից զնոյն. զոր օրինակ 'ի տունս մեծամեծս յորժամ առաքինանայցեն ոմանք 'ի տանն սպասաւորաց, եւ կարի իսկ առաքինիք գտանիցին, եւ զամենայն իրս նոքա վճարիցեն, եւ բազում համարձակութիւն առ տեարս ունիցին, 'ի նոցանէն կոչին տեարքն, այսր անուան, ասէ, տեարք են. եւ զբազում ոք գտանէ այսպիսի անուանս կոչեցեալս։ Այլ արդ զինչ ասիցեմ. որպէս կոչէր ած ոչ ազգաց միայն, այլ ամենայն իսկ տիեզերաց, նոյնպէս իսկ կոչէր ած Աբրահամու։ Այլ չգիտեք որչափ ինչ իցէ պատիւն. քանզի եւ չեմք իսկ հասեալ յայն պատիւ։ Զոր օրի-

նաև այժմ ոմն ամենայն քրիստոնէից ասէ, և ասացեալն անցանէ ՚ի վեր քան զմեր պատիւ անուանս. եթէ միում կոչեսցի Ած, ՚ի միտ առ որչափ ինչ առաքելութիւն իցէ, յորժամ ամենայն աշխարհացն Ած՝ չհամարիցի ամօթ երբեք կոչել Ած։ Այս յիրաւի իսկ, զի ոչ միայն աշխարհիս, այլ և բիւրուց ևս այսպիսի աշխարհաց են համեմատ ասութքն։ "Լաւ է, ասէ, մի որ առնէ զկամս իմ, քան զբիւր անօրէն"։

Ո՛չ ի այսպէս զանձինս օտարս կոչէին՝ յայտ իսկ է. և գրեալ իր թէ նոքա վասն օտարութեանն կոչէին զանձինս։ Նաև Պաւղոս ընդէր. ո՞չ թագաւոր էր և մարգարէ, ո՞չ յիւրում իսկ աշխարհի բնակեալ էր, ընդէ՞ր ասէր եթէ օտար եմ և պանդուխտ։ Ո՞ր քան իցես օտար։ Երբև զհայրն իմ, ասէ։ Տեսանե՞ս զի և նոքա օտարք էին, և նա։ Անքիւ, ասէ, աշխարհ, այլ ոչ զութեղ աշխարհն։ Ո՞ր քան իցես դու օտար։ Յերկրէ. թէ այնպիսի իցէ՞ և նոքա օտար էին յերկրէ. որպէս նոքա աւրին՝ նոյնպէս ես, և որպէս ես՝ նոյնպէս և նոքա։

## ՑՈՐԴԱՐԱԿ

Լինիցուք այժմ և մեք օտարք, զի մի ամօթ համարեսցի Աստուած կոչիլ մեզ Ած։ Ամօթ է նմա, յորժամ մարդոց չարաց կոչի Ած, և յամօթ առնէ զնոսա և նա. զոր օրինակ և փառաւորի՝ յորժամ բարեաց և պիտանեաց և առաքինութեանն վաստակոց։ Ո՛ր եթէ մեք հրաժարեսցուք կոչել աստուածք ծառայից չարաց, և թոյլ տացուք և ընդվայր հարկանեսցուք, եթէ մատուցեալ ոք ասիցէ՝ եթէ այն անուն բիւր չարիս գործէ՝ միթէ քո՞ ծառայ իցէ, ընդունայնամք վաղվաղակի՝ եթէ ոչ, քաւ լիցի. ՚ի բաց թօթափեսցուք զնախատինսն։ Քանզի ագեւ ՚ի միջի կայ ընդ ծառայն և ընդ տէրն, և ՚ի նա հաստատեսն կարծիք նորա։

Այլ նոքա այնպէս լուսաւորք էին և այնպէս համարձակք, որպէս զի ոչ միայն ՚ի նոցանէ չհամարէր ամօթ՝ կոչել Ած, այլ և ինքն իսկ կոչէր Ած. "Ես եմ, ասէ, Ած Աբրահամու, Ած Իսահակայ և Ած Յակոբայ"։ Լինիցուք այսուհետև և մեք օտարք, զի մի ամօթ համարեսցի կոչել մեզ Ած. զի մի ամօթ համարեսցի և

արկանիցէ զմեզ 'ի գեհեն: Նմանիսկ էին որ ասէին. «Տէր ոչ 'ի քո յանուն մարգարէացաք և 'ի քո յանուն զօրութիւնս բազումս արարաք»․ այլ տեսէք զինչ ասէրն Քրիստոս. «Ոչ գիտեմ զձեզ, ասէ»․ որպէս առնեն տեարք առ ծառայս չարս, յորժամ ապաւինել կամիցին 'ի նոսա, և զնախատինս 'ի բաց մերժիցեն. չգիտեմք, ասէ, զձեզ. այս ինքն եթէ ուրանամք և հրաժարեմք 'ի ձէնջ:

Նաև մի լիցի մեզ զայնպիսի կորուսիչ և զահագին բարբառ լսել. զի թէ որ զդևս հանէին և մարգարէ էին, քանզի վարս միաբան գործոյն չունէին, յուրաստ եղև 'ի նոցանէ, որչափ ևս առաւել 'ի մէնջ: Այլ զիարդ, ասեն, 'ի դէպ էր 'ի նոցանէ որ մարգարէանային և նշանս առնէին և դևս հանէին՝ յուրաստ լինել: Ասուի ինձ՝ թէ յետոյ դարձան և եղեն չարք. զի ոչ ինչ շահեցան յառաջին առաքինութենէն. քանզի ոչ եթէ լուկիզան միայն պիտոյ է պայծառագոյն, այլ և կատարածն ևս աւելի լուսաւորագոյն:

Այլ արդ աղէ ասա. Ճարտարախօսն ոչ զվերջին բանսն փութայ առաւել յօրինել, զի գովեալ դրուատեալ մեկնիցի. և սպասաւորն վերջին նուագաց կարի պատկառ կայ, զի մի պարսաւ լիցի. և նահատակն եթէ ոչ զվերջին մարտն առաքինագոյն ցուցանիցէ, ոչ ապաքէն ամենայն աշխատութիւնն անօգուտ է. և նաւավարն եթէ յամենայն ծովուն զգուշանայցէ, և մօտ 'ի նաւահանգիստն խորտակիցէ զնաւն կամ բախիցէ, ոչ ապաքէն զառաջին վաստակն կորոյս. և բժիշկն եթէ թեթևացուցանիցէ զցաւ հիւանդին, և յորժամ մօտ 'ի կատարեալ առողջութիւնն ածիցէ, յայնժամ զեղծցի, ոչ ապաքէն զամենայն ջանն կորոյս: Այնպէս և որ զառաքինութեան կատարումն ընդ սկզբանն ոչ միաբանեն, եղծանեն և կորուսանեն զամենայն: Նոյն և 'ի կառամարտիկսն, որք 'ի գլխոց ասպարիսացն պնդակազմ զերրիվարսն արձակեն, և յետոյ մեղկիցին ինչ և ծուլանայցեն, ոչ պարգևացն հասանեն և ոչ 'ի տերանցն ճանաչին:

Լուիցուք զայս՝ որ ընչից ցանկացողք իցեմք. զի մեծ անօրէնութիւն այն է, և «Արմատ, ասէ, ամենայն չարեաց արծաթսիրութիւն է»: Լուիցուք որք կամիմք ևս

առաւել զմեծութիւնն ստուարացուցանել. լուիցուք և դադարեսցուք յագահութենէ, զի մի լուիցուք զոր նաքայն լուան: Այժմ լուիցուք և զգուշասցուք, զի մի յայնժամ լսիցեմք և տանջիցիմք. այժմ լուիցուք երկիւղիւ, զի մի յայնժամ լուիցուք սաստիւ, «Ի բաց կացէք յինէն, ոչ երբէք ճանաչէի զձեզ». և ոչ յայնժամ, ասէ, մինչև մարգարէանայիքն իսկ, և զդևս հանէիք: Ի դէպ է, և այլ իմն ակնարկել, թէ և յայնժամ չար վարս ունէին անդէն 'ի սկզբանն, և անարժանօք գործէին զօրութիւն շնորհքն: Զի եթէ Բաղաամաւ եցոյց ինչ գործ, որչափ ևս առաւել անարժանօքն, վասն նոցա՝ որ նոքօքն շահելոցն էին: Զի եթէ նշանք և արուեստք չկարացին ապրեցուցանել 'ի պատժոց, որչափ ևս առաւել որ 'ի քահանայութեան պատուի իցէ, թէպէտ և 'ի վերինն իսկ պատուի հասեալ իցէ, և 'ի ձեռնադրութեան զօրութիւն առցիցեն նմա շնորհքն, և զայլն ամենայն վասն նոցա որք վերակացութեան կարօտ էին, լուիցէ և նա, թէ ոչ երբէք ճանաչէի զքեզ, և ոչ յայնժամ մինչ շնորհքն քև գործ գործէին:

Տե՛ս թէ որչափ պարկեշտութեան վարուց խնդիրք են անդ. զիա՞րդ ինքն առանձին բաւական է տանել զմեզ յարքայութիւնն, և թէ չիցէ մօտ, մատնել 'ի կորուստ, թէպէտ և բիւր նշանս և սքանչելիս ցուցանիցեմք: Ոչինչ այնպէս ուրախ առնէ զԱծ՝ որպէս և վարք առաքինիք. թէ սիրէք զիս, ասէ. ոչ ասաց՝ թէ նշանս արասջիք. և դարձեալ՝ թէ զձեզ բարեկամս կոչեմ, ոչ զի զդևս հանիցէք, այլ զի զբանս իմ պահեսջիք. զի այն Այ պարգևացն է, և այս Այ պարգևացն և մերոյ փութոյ: Փութասցուք լինել բարեկամք Այ, զի մի հայցեմք ցանկ թշնամիք: Զայս ասեմք և միշտ զսոյն յիշեցուցանեմք և մեզ և ձեզ, և աւելի ինչ ոչ լինի. վասն որոյ երկնչիմ և կամէի լռել, զի մի ևս քան զևս տանջանք մթերիցեն մեզ. զի բազում անգամ լսելն և չառնելն՝ բարկացուցանէ զՏէրն: Այլ դարձեալ երկնչիմ 'ի միւսմէ տանջանացն, որ վասն լռութեան գայցեն 'ի վերայ, եթէ 'ի բանս սպասաւորութեանն կարգեալ՝ և լուռ լինիցիմ:

Եւ արդ զինչ արասցուք՝ զի ապրիցիմք: Սկիզբն ա-

րասցուք առաքինութեան, մինչ դեռ ժամանակս 'ի ձեռս է. բաժանեսցուք մեզ զառաքինութիւնն, իբրեւ մշակ զգործս հողագործութեանն. յայսմ ամսեան յաղթեսցուք բամբասանաց եւ թշնամանաց եւ զուր բարկութեն: Գրիցուք անձանց օրինակ եւ տեսցուք՝ եթէ այս օր զայս ինչ ուղղեսցուք, եւ վաղիւն զայն. եւ 'ի միւսում ամսեան վասն ախտակալութեան խորտակեսցուք զանձինս, եւ 'ի միւսումն վասն այլ ինչ առաքինութեան. եւ յորժամ 'ի գլուխ հանիցեմք զայն առաքինութիւնն, եւ ապա 'ի միւսն եւս եկեսցուք. զոր օրինակ աշակերտք յորժամ ուսանին ինչ, այնմ զգուշանան, եւ այլ եւս առնուն:

Այլ անտի եկեսցուք յընչիցն անփոյթութիւն. նախ կարծեսցուք զձեռս յագահութենէ, եւ ապա արասցուք ողորմութիւն: Մի վայրապար զամենայն ընդ միմեանս խառնեսցուք. Թէ ձեռօք՝ որով սպանանեմք, նովին զոգցես եւ ողորմութիւն առնիցեմք: Այլ յետ այնր յայլ առաքինութիւն, եւ յայնմանէ 'ի միւս զօրութիւն. եւ „Բանք յիմարութեան եւ խեղկատակութեան մի եւս առաւանեսցի 'ի մեզ,,:

Արդ այժմ ուղղեսցուք. չեն պէտք թոշակի, եւ ոչ վաստակոց եւ ոչ քրտանց. կամելն միայն բաւական է, եւ ամենայն ինչ գնալով վճարի. չեն ինչ պէտք 'ի հեռի ճանապարհ երթալ, եւ ոչ ընդ ծով համատարած հատանել անցանել. այլ փոյթ յանձին ունել եւ սանձս դնել լեզուի, եւ զթշնամանս եւ զվայրապար ցասումն, եւ զանպատշաճ ցանկութիւնս եւ զփափկութիւնս եւ զայլ այլս խորտակաց յաճախութիւնս, զընչից ցանկութիւնս, զսուտ երդնուլ, զստէպ երդնուլ 'ի բաց մերժեսցուք յանձանց մերոց: Եթէ այսպէս գործեսցուք զանձինս, եթէ զառաջին փուշն 'ի բաց խլեսցուք, եւ զերկնաւոր սերմն 'ի ներքս արկցուք, կարեմք հասանել խոստացելոց բարութեանցն: Ակեսցէ մշակին եւ ամբարեսցէ զմեզ յիշատակարանն, եւ վայելեսցուք 'ի բարութիւնսն. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն:

Digitized by Google

## Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

զարմանաց ընդ գործ . . նահապետն գործեցան : “Իսահակաւ, ասէ, կոչեսցի քեզ զաւակ”, և մատոյց սպանանել զորդին : Նա զի մի կարծիցէ թէ իբրև անյայտ ինչ լինել զայն առնէր, և վասն այնորիկ . . . մերժիցէ 'ի բաց, այլ զի ուսանի . . թէ . . և այն հաւատոց գործ էր, ասէր թէ այնմ հաւատայր, թէպէտ և կարծէր թէ այն ընդ այսմ ինչ կառուցի, այլ ոչ ինչ կասէր : Վասնզի ոչ եթէ մարդկեղէն խորհրդովք չափէր զնոյ զօրութիւնն, այլ 'ի հաւատոյն առնէր զամենայն . որով անկասկած իսկ ասէր՝ թէ և 'ի մեռելոց կարող է յարուցանել զնա . ուստի և յառակս ընկալաւ զնա, այսինքն յօրինակ խոյին . . . խոյին ապրեցաւ . որպէս զի խոյիւն իսկ . . . զնա . քանզի փոխանակ նորա սպանաւ խոյն . Այս ամենայն օրինակք էին . իսկ աստ որդին էր է սպանեալ : Ու արդ տես քանի ինչ է մարդասիրութիւնն . քանզի մեծ շնորհք տալոց էին մարդկան, կամեցաւ ոչ շնորհօք առնել զայն, այլ իբրև պարտապան . խնդրեաց նախ զայլ . . զիւր որդի տայցէ փոխանակ իրաց նոյ . այլ զի մի մեծ ինչ կարծիցի առնել զայն, զի զիւր որդին տացէ նմ վասն մարդկան, ուր զի և արդ յառաջ քան զնա զնոյն արար . զի մի շնորհօք միայն կարծեսցի գործն, այլ ըստ պարտուց : Ոչ ի զօր սիրեցեմք, և զայն ևս նոցա շնորհել կամիմք . . ցանկեն ինչ . . . առնումք և առաւել տամք . . . այնու պարծիմք . . իւն և ոչ տրովքն . և չասեմք եթէ զայս ինչ տուաք նմա, այլ թէ զայն ինչ առաք 'ի նմանէ . ուստի ասէ՝ և յառակս ընկալաւ զնա, այսինքն որպէս թէ յօրինակ . զոր օրինակ և խոյն իսկ օրինակ էր Իսահակայ . կամ թէ որպիսի առակս ինչ : Վասնզի խորհուրդ կատարեալ էր, կամ թէ և սպանաւ իսկ Իսահակ ըստ իւրում յօժարութեանն, և վասն այնորիկ շնորհեաց զնա նահապետին : Տեսանես զի զոր ցանգ ասէի, և այժմ նոյն յայտ լինի : Յորժամ ընծայեցուցանեմք զմիտս կատարեալ, և ցուցանեմք թէ անփոյթ առնեմք զերկրաւոր իրաց, յայնժամ և երկրաւորքս գոն . . . զմեզ կայակոյս ընդ նոսա միա-

Digitized by Google

անգամ առնիցէ։ Այժմ զքեզ նախ 'ի ծառայութենէն, և ապա առնուցուս մի իբրև ծառայ, այլ իբրև զանէր։ Արհամարհեա զմեծութիւն, և լինիցիս մեծատուն. արհամարհեա զփառս, և լինիցիս փառաւոր. արհամարհեա զվրէժ առնուլ 'ի թշնամեացն, և ապա հաւանիցես իրացն. արհամարհեա զհանգիստ, զի առնուցուս, և ոչ իբրև զկապեալ առնուցուս, ոչ իբրև ընդ-ծառայ, այլ իբրև զազատ։ Օր օրինակ և զմանր մանկանց յորժամ անտանիցեմք թէ խաղալիկս զան-կամանս, ամենապարտեմք թագուցանեմք զխաղալիկն կամ զդրանդամն կամ զդէգս կամ զկոյգս . . . զի և ողորմու-թիւնս ես անտի առնեմն և զբաղանամ ընդունել. վասն այսորիկ բարձաւ 'ի մէնջ հաւանորդութիւն, և չկա-րեմք ումեք տալ։ Այլ ասկայն գէթ յայսմ հետէ փախիցուք յայնպիսի մտածութէ. և դուք որ զտիրդմն յա-ղէք, ղաղարեցէք յայնպիսի ժամէ, և ցածուցէք ըղ-յանձանութիւն հանդամանակացն, զի թերևս այժմ կա-րասցուք հաւանեցուցանել զձեզ և հեռանալ յառաքի-նոց բարութեանցն. որոց լիցի ամենեցուն մեզ հասա-նել 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ՃԱՌԸՆ

“Հաւատովք վասն հանդերձելոցն օրհնեաց Իսա-հակ զՅակոբ և զԵսաւ։ Հաւատովք Յակոբ 'ի մե-ռանելն զիւր մի յորդւոցն Յովսեփայ օրհնեաց և երկիր եպագ 'ի վերայ ծայրի գաւազանի իւրոյ։ Հաւատովք Յովսէփ 'ի վախճանելն յիշեաց վասն ելից որդւոցն Իս-րայէլի և վասն ոսկերաց իւրոց պատուիրեաց”։

“Բազում, ասէ, մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ և ոչ լուան”։ Այսպէս ուրեմն զամենայն հանդերձեալսն գիտէին արդարքն։ Այլ կարի իսկ քաջ. զի եթէ վասն անկարութեան նոցա չյայտնէր որդւոյն Աստուծոյ որք ոչն կարէին ընդունել, նոցա որոց առաքինութիւնն պայծառագոյնք էին՝ 'ի դէպ էր թէ յայտնի էր։ Զնոյն ասէ և Պօ-ղոս՝ թէ գիտէին զհանդերձեալսն այսպիսիքն զծնունդն,

զզգալուածն, զչարչարանսն, զյարութիւնն։ Վասն եթէ զայն իսկ ասէ. այլ վասն հանդերձելոցն՝ ոչ եթէ ըզհանդերձեալսն յաւիտենիցն ասէ, այլ զայնր իրաց... քան 'ի դիւրութիւն և 'ի հանգստեան լինել։ Նոյնպէս նոյն իսկ առանձինն առաւել վարձք են։ "Լաւ համարեցաւ կցորդ լինել չարչարանաց ժողովրդեանն Այ"։ Դուք վասն ձեր չարչարիք, և նա վասն այլոց լաւ համարէր չարչարել և անձամբ զանձն տալ 'ի ձգումն, արում մարթ էր [illegible] լինել և 'ի բարութիւնս վայելել։ "Քան առ ժամանակի մի, ասէ, 'ի մեղս վայելել"։ մեղաց վայելս՝ զչլինելն կցորդ այլոց չարչարանացն ասէ. զայն, ասէ, համարէր մեղս։ Իսկ եթէ զչլինելն կցորդ այլոց չարչարանաց մեղս համարէր, ապա ուրեմն մեծ բարութիւն է չարչարակից լինել. յորդորելով աշակերտաց անձամբ զանձն ընկենուլք։ Զայս ասէր զի յառաջագոյն մեծամեծս ինչ ուսանէր. "[illegible] համարեցաւ, ասէ, քան զզանձանս եգիպտացւոց զնախատինսն Քրիստոսի"։ Զինչ իցեն նախատինքն Քրիստոսի. այսպիսիս նախատել, ասէ, որպէս զուքն նախատիք՝ զնախատինսն զոր Քրիստոս կրեաց յանձին, կամ թէ վասն Քրիստոսի նախատեցաւ... ըստ այնմ թէ "Վէմն էր Քրիստոս"։ այնպիսի ինչ են նախատինքն նորա որպէս և զուքն նախատիք։ Զինչ իցեն նախատինքն Քրիստոսի. զի արհամարհեսցէ զհայրենիսն և նախատ լինիցիք, զի ոչ զհետ ընթանայք և չարչարանս կրեսցէ։ Ի դէպ է թէ և նա նախատինս կրեաց յորժամ լուաւ թէ "Ո՞ այսպէս կացուցիս ապանանել զիս որպէս երէկ զեգիպտացին սպաներ"։ Այն իսկ են նախատինքն Քրիստոսի յորժամ մինչև ցվախճան և ցյետին շունչն չարչարիցի ոք վասն նորա, որպէս և ինքն իսկ լսէր նախատինս 'ի խաչահանուաց և յազգականաց. "Եթէ որդի ես, ասէին, Այ, էջ 'ի խաչէդ"։ Այն իսկ են նախատինքն Քրիստոսի յորժամ յընտանեաց և որոց երախտաւոր լեալ իցէ՝ նախատիցի. քանզի և նա յերախտաւորաց չարչարեցաւ։ Այսու քերքէ և յորդորէ զնոսա թէ և Քրիստոս ըզնոյն չարչարանս չարչարեցաւ, և Մովսէս. զերկուս երեսան զարգմանայլիս և փառաւորս ցնէ. Որպէս զի Քրիստոսի առաւել են նախատինքն և ոչ Մովսէսի. քանզի յիւրոցն չարչարեցաւ զայս.. 'ի չարչարանս։ Այլ ոչ նա

Digitized by Google

ամպաչեաց զանձ ածել 'ի վերայ նոցա փայլատակմանս բար-կութեան, և ոչ ևս հաստատեցաւ ինչ. այլ նախատէր և համբերէր . . այնու, թէպէտ և զգլուխս շարժէին, զոռոս 'ի վերայ ապաւինէին։ Այլ քանզի 'ի դէպ էր և նո-ցա . . . կալ հատուցմանց, ասէ թէ և Դին և Մովսէս զ . . չարչարեցան։ Նոյա ուրեմն հանգիստ մեղաց է . . նախատինքն վասն Քրիստոսի։ Այլ արդ զինչ կամիցիս, զնախատինսն Քրիստոսի, եթէ զմեղացն հանգիստ։

“ Հաւատովք, ասէ, եթող զերկիրն եգիպտացւոց և ոչ երկեաւ 'ի բարկութենէ թագաւորին. զի զանե-րեւոյթն իբրև տեսեալ համբերութեամբ համբերե-ցաւ ”։ Ո՞ չինչ խօսիս թէ չերկեաւ. նա ասանիկ գիրք ասեն՝ թէ իբրև լուաւ երկեաւ, և փախստեամբն շա-հեցաւ զանձն, և խուսեաց և թագոյց զանձն, և յետ այնորիկ իսկ 'ի կասկածանս էր։ Մ՛իտ դիր և հաւա-տեաւ բանին. չերկնչէին 'ի բարկութենէ թագաւորին առ միաժամայն անդրէն գնալն 'ի դիմի հար . . . ոչ յայտ է թէ առ, և ոչ անյայտ ինչ է թէ 'ի բաց մեր-ժեաց. այլ զհրամանն և եթ յայտ առնէ գիր՝ եթէ հրա-մայեաց մատուցանել։ Այս և անդ թէպէտ և մտաբե-րեցին յանդգնել՝ չարարին, քանզի արգելլին առաքեալ-քըն. նոյնպէս և աստ պարտ էր վաղվաղակի 'ի բաց մեր-ժել։ Այլ անդ հրապարակ մի ողջոյն գումարեալ, և աստ ինքնին իսկ բանաւոր իշխանն։ Այլ արդ ընդէր չմեր-ժեաց 'ի բաց, յառաջագոյն իսկ ասացի՝ թէ ոչ իբրև Այ̃ նուիրեցին 'ի խափան ինչ սրաշտամանն, այլ վասն մեծի զքանչելեացն յԱյ̃ աղագս։ Այլ զի ոչ նուաղեցոյց զպատիւն Այ̃ 'ի հրամանն տալոյ՝ յայտ է եթէ ծառայ-եսցեն ամենայն ազգք Այ̃ն Դանիէլի։ Իսկ նոքա ոչ այնպէս ինչ, այլ զնոսա իսկ կարծեցին աստուածս. վասն այնորիկ 'ի բաց մերժէին։ Այլ անդ նախ երկիր եպագ և ապա զայն առնէր. ոչ իբրև Այ̃ եպագ երկիր, այլ իբրև առն միոյ իմաստնոյ. և չէ յայտ եթէ նուիրեաց, ոչ եթէ որպէս և Դանիէլի այն կամք էին՝ ընդունէր։ Այլ Բաղտասարն իսկ անուն ընդէր կոչեաց նմա. ո՞չ ապաքէն զի չէին ինչ զարմանալի նոցա գիրքն իւրեանց. ուր և գերւոյ միոջ զնոյն անուն կոչէր, ուր ամենեցուն հրամայէր բազմաստուր ամենակերպ պատկերին երկիր պագանել. և զյիշատակն եւս պաշտէին. եւս քան զաստուա-

ցիան անմիտոք եղեն բարեխօսացիքն. վասն որոյ և չէր խոկ դիւրին վաղվաղակի ածել զնոսա յայն։ Այլ բազում ինչ և այլ է տալ, բայց առ այժմ այսչափ շատ է։ Այս թէ կամիցիք ամենայն բարութեանց հասանել, զայն ինչ խնդրեսցուք որ ըստ Այ իցէ. զոր օրինակ որ զաշխարհիս խնդրեն և յայսմանէ և յայնմանէ անկանին. այսպէս և որ զնոյն նախանձաւք առնեն, երկոցուն հասանեն։ Մ՛ի զայս խնդրեսցուք, այլ զայն, զի և խոստացելոց բարութեանցն հասանիցեմք 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՃԱՌԻՆ

"Հաւատովք արար զզատիկն և զհեղումն արեանն, զի մի որ սատակէր զանդրանիկսն՝ մերձեսցի ինչ 'ի նոսա։ Հաւատովք անցին ընդ ծովն Կարմիր իբրև ընդ ցամաք երկիր, զորոյ փորձ առեալ Եգիպտացւոցն ընկղմեցան։ Հաւատովք պարիսպքն Երիքովի անկան, շուրջ եկեալ զնոքօք զեօթն օր։ Հաւատովք Ռախաբ պոռնիկն ոչ կորեաւ ընդ անհաւատսն, որ ընկալաւ զլրտեսսն խաղաղութեամբ"։

Բազում ինչ 'ի միջի յարգարել սովոր է Պաւղոս, և թանձրախիտ և յաճախաւոր է մտօք. քանզի այնպէս է շնորհք հոգւոյն։ Ոչ եթէ բազում բանիւք սակաւ ինչ միտս դնել, այլ սակաւ բանիւք բազում միտս 'ի ներքս անկի։ Այլ արդ տես զիարդ միխթարութեան կարգաւ և վասն հաւատոյ խօսի, և զարդիւք օրինակէ և զխորհրդոց յուշ առնիցէ ; զորոյ ճշմարտութիւն մեք գտանիմք։ "Հաւատովք, ասէ, արար զզատիկն և զհեղումն արեանն, զի մի որ սատակէր զանդրանիկսն՝ մերձեսցի . . . այն իւր և զերկիր սատականէր և զկէ . . իբրև զծով ընկղմէր. առ նոսա մնացուածք զգնութիւն, և առ սոսա եւս աւելի մեծանէր և փառէր։ "Հաւատովք, ասէ, պարիսպքն Երիքովի անկան՝ իբրև շուրջ եկին զնոքօք զեօթն օր"։ Քանզի ոչ եթէ փողոցին հնչիւն կարէր զվէմս տապալել, թէպէտ և բիւր անգամ ոք փողս հարկանիցէ, այլ հաւատքն կարող էն ամենայնի։

Digitized by Google

Տեսանես ամենայն ուրեք զի ոչ ըստ կարգի ինչ և ոչ ըստ բնութեան օրինաց շրջշրջին իրք, այլ ըստ ոչ ակն ունելոյ յանկարծակի լինի ամենայն ինչ յա՟յ. Նոյնպէս և աստ ոչ ըստ ակնկալութեան ինչ լինի ամենայն։ Եւ քանզի ՚ի վեր և ՚ի խոնարհ զայն եւեթ ասէր եթէ պարտ է հաւատալ հանգերձելոցն յուսոյ, Նմանագոյնս իսկ յուզեաց զայնչափ ձեռս հաւատոց, յայտ արարեալ եթէ ոչ այժմ ինչ, այլ ՚ի բնէ և ՚ի սկզբանէ ամենայն սքանչելիք հաւատովք վճարէին, և ամենայն ուղղութիւնք նովաւ գործէին։

« Հաւատովք, ասէ, Ռախաբ պոռնիկն ոչ կորեաւ ընդ անհաւատսն, որ ընկալաւ զլրտեսսն խաղաղութեամբ »։ Այս ուրեմն կարի յոռութիւն է յորժամ և քան զպոռնիկն եւս անհաւատ գտանիցիմք. Թէպէտ և նա զարանց օտարաց զբանս եւեթ լուաւ, և վաղվաղակի հաւատաց, որով և վախճան ՚ի գլուխ ել, զի ՚ի բազմացն ինքն միայն ապրեցաւ։ Ոչ ասաց ընդ միտս, թող ընդ իմսն բազումսն լինիցիմ, զինչ լինիցի. չասաց թէ... զոր օրինակ վարդապետս այր ախորժիցէ, և զգիրն ըստ տղայական բարբառոյն գրիցէ, չասեմ թէ չգիտէ. և յորժամ հարցանիցէ՝ եթէ ո՞ւր է այս նիշ գիր, գիտես թէ չէ անտեղեակ, այլ զաշակերտն կամի յորդորել. նոյնպէս և Ա՟ծ ոչ առ կարօտութեան ինչ կայր յաղօթս, այլ զքեզ կամէր յորդորել, զի միշտ հպատակ կայցես յաղօթս, և անդադար կրթութեամբ և բազում զուարթութեամբ արթուն կալ։ Ոչ զգիշերին աղօթելն միայն ասեմ, այլ և զցերեկն արթուն լինել յաղօթս. զի արթուն այնպիսին կոչի։ Քանզի մարթի զայգ յաղօթս կալ և նիրհել մտօք. և զցերեկ յաղօթս չկալ և հսկել, յորժամ միտքն առ Ա՟ծ կայցեն, յորժամ ՚ի միտ առնուցու եթէ ընդ ում խօսիցի, և կամ ընդ ում բանք իցեն։ Յորժամ զմտաւ ածիցէ, եթէ հրեշտակք կան առաջի ահիւ և դողութեամբ, և ինքն մատուցեալ յօրանջիցէ և քոշքոտիցի և ձկտիցի, որում օգուտ ակն ունիցի յաղօթիցն։

Մեծ զէն են աղօթք, եթէ պատշաճ մտօք կացցէ յաղօթս. և զի ուսանիցիս եթէ որչափ զօրութիւնս ունի աղօթք, անամօթութեան և անիրաւութեան անգթոյն մտաց յաղթեցին ստէպ ստէպ պաղատանքն։

Digitized by Google

«Լուարուք, ասէ, զինչ ասաց դատաւորն անիրաւութեան»։ Այս և ՚ի դանդաղանաց ևս հերքեցին աղօթքն. և զոր ինչ չարար բարեկամութիւնն, զայն արար ժտութիւն։ «Եթէ ոչ վասն բարեկամութեանն, ասէ, տացէ նմա, այլ վասն ժտութեանն յարիցէ և տացէ նմա»։ Եւ զանարժան կինն արժանի արար առեալ անդ լրբութին։ «Ոչ է բարիոք, ասէ, առնուլ զհաց մանկանց և արկանել շանց»։ Եւ նա առ այն զինչ։ «Այո տէր, ասէ, և շունք կերակրին ՚ի սեղանոյ մանկանց տեառնն»։

Զգոյշ լերուք աղօթից. մեծ զէն են եթէ սրտի մտօք լինիցին, եթէ առանց սնապարծութեան, եթէ միամիտ սրտիւ։ Աղօթք զպատերազմունս մեղեցին. զազգ մի ազգոյն և զանիրաւ ապրեցուցին և երախտաւոր եղեն. «Լուայ, ասէ, հեծութեան նոցա և իջի փրկել զնոսա»։ Դեղ փրկութեան են աղօթքն, արգել մեղաց, բժշկարան յանցանաց։ Աղօթից պատկառ կայր այրին լոկ միայնացեալ, և եղև հաճոյ։

Եթէ խոնարհութեամբ կացցեմք յաղօթս, եթէ զկուրծս ծեծիցեմք իբրև զմաքսաւորն, եթէ զնոյն բանս խօսիցիմք զոր նայն ասաց՝ եթէ հաշտեաց ընդ մեղաւորիս, ամենայնի հասանեմք։ Եթէ մաքսաւորք չիցեմք, այլ այլ ինչ չար ևս քան զնորայն մեղս ունիմք. և զայն մի ասեր՝ եթէ սակաւ են յանցանք քո. ՚ի նմին արմատոյ են իրքն։ Զոր օրինակ նոյնպէս ասի սպանողն մարդասպան և որ զմանկունս սպանանիցէ, նոյնպէս և ագահն ՚ի մեծին և ՚ի փոքուն՝ ագահ է. և ոխակալութիւն՝ ոչ սակաւ, այլ և մեծ իսկ մեղք են. «Ճանապարհ ոխակալացն, ասէ, ՚ի մահ». և «Որ բարկանայ, ասէ, եղբօր իւրում զուր, պարտաւոր է, ասէ, ՚ի գեհենն». և որ կոչէ զեղբայր իւր մորոս և անմիտ, և բազում և այլ ինչ։

Զի հաղորդիմք ևս անարժանութեամբ ահաւոր խորհրդոյն, նախանձիմք, բամբասեմք. բազումք ՚ի մէնջ և արբենան բազում անգամ. և յայնպիսի գործոցն իւրաքանչիւր իսկ մի բաւական է հանել յարքայութենէն, թող թէ յորժամ ամենայնն ՚ի մի վայր ժողովեսցին. զինչ ինչ այնուհետև մխիթարութիւն կայցէ մեզ զղջանալ։ Բազում աղօթից պէտք լինիցին, բազում ժուժկալութեան, բազում պարապութեան, զի կարիցեմք հասանել խոստացելոց բարութեանցն։

Ուսասցուք և մեք եթէ հաշտեաց ընդ մերձաւորիս, մանաւանդ զի մի ասիցեմք եթէ, այլ զի և զնոյնն խոր-հիցիմք: Եւ եթէ այլ ոք կոչեսցէ զքեզ անուանս, մի բարկասցուք. քանզի լուաւ և նա, եթէ չեմ իբրև ըզ-մաքսաւորս զայս, և ոչ բարկացաւ. այլ 'ի խոր խոցե-ցաւ, զղջմամբ ընկալաւ զնախատինս. նա ասաց զմեղսն, և սա խնդրեաց զդեղն: Ուսասցուք և մեք, հաշտեաց ընդ մերձաւորիս. բայց թէ և այլ ոք կոչիցէ մերձաւոր, մի բարկասցուք: Ապա եթէ մեք խօսիցիմք զանձանց բիւր չարիս, և յորժամ յայլոց լսիցեմք՝ դժկամակ լի-նիցիմք, չէ այնուհետև խոնարհութիւն, այլ ցոյցք և սնապարծութիւնք:

Յո՞յցս ինչ առաւել իցէ զանձն մեղաւոր կոչել: Այո. խոնարհութեան կարծիս առնումք. զարմանան, գովեն զմեզ. և եթէ զնորին հակառակն ասիցեմք զանձանց, արհամարհիցիմք, որպէս զի և զայն փառաց վասն առ-նիցեմք: Իսկ ո՞ր իցէ խոնարհութիւնն: Յորժամ այլ ոք նախատիցէ, և յանձին ունիցիմք, հրաժարիցեմք 'ի մեղացն, տանիցիմք բամբասանաց: ՛Այս և այն չև ևս խոնարհութեան նշանակ է, այլ բարեբարութեան: Սա աւասիկ մեք զանձինս կոչեմք մեղաւորս, անարժանս և պիղծս. և եթէ, ոք մի ինչ յայսցանէ նախատիցէ, չչա-րիմք, զայրանամք: Տեսանե՞ս, չէ խոստովանութիւն, և ոչ բարեբարութիւն: Կոչեցեր զանձնն այնպիսի, մի ցասնուր յորժամ յայլոց լսիցես, մի ընդվզանայցես. զի այնպէս և մեղքն թեթևասցին 'ի քէն. յորժամ այլք նախատիցեն՝ անձանց ծանրութիւն զնեն 'ի վե-րայ, բայց զքեզ 'ի զգաստութիւն ածեն: Լուր զինչ ասէր երանելին Դաւիթ, յորժամ անիծանէր զնա Սե-մէի. «Թո՛ղ տուք, ասէ, տէր հրամայեաց դմա, որպէս զի նայեսցի 'ի խոնարհութիւնս իմ, և հատուսցէ ինձ տէր բարիս փոխանակ անիծից դորա այսր աւուր»: Դու քեզէն մեծամեծ չարիս խօսիս, և եթէ ոչ զաւագաց արդարոցն գովութիւնս լսիցես, գաղանես, զայրանաս: Տեսանե՞ս զի խաղ առնես զչխաղղյան:

՛Այս և զգովութիւնսն իսկ՝ այլոց գովութեանց ցան-կութեամբք 'ի բաց մերժեմք. զի եւս մեծամեծ գովու-թեաց հասանիցեմք, զի եւս առաւել զարմանալի լինի-ցիմք. որպէս զի թէ չընդունիցիմք զգովութիւն և եթէ



Digitized by Google

ոչ եւս քան զեւս՝ աճեցուցանեմք, վասն այնորիկ զայն այնպէս առնեմք, և ամենայն ինչ կարծեօք լինի, և ոչ ճշմարտութեամբ. վասն այնորիկ ամենայն ինչ ընդունայն է, ամենայն ինչ անպտուղ։ Վասն որոյ աղաչեմ, զոնէ յայսմ հետէ հրաժարել ՚ի մօրէն չարեաց՝ ՚ի սնապարծութենէ, և կեալ ըստ այ կամացն։ Զի և հանդերձելոց բարութեանց հասանիցեմք ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի տէր մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Ի ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

. . . . . . . . . . . . . . . . .

ինչ կարծիս առնել նոցա յայնմանէ որ վերացաւն, և առնուել զարմանալի թուէր նոցա, բերէ մխիթարութիւն և սփոփութիւն։

«Ընկեցան, ասէ, լաշկամաշկօք և մորթովք այծենեօք, նեղեալք և տառապեալք և տարակուսեալք, զորս ոչ արժէ աշխարհս»։ Այնպէս զի և ոչ հանդերձ անգամ ունէին, անհնարին նեղութիւնք, ոչ քաղաք, ոչ տուն, ոչ իջավանք, այնպիսի ինչ որպէս և Քրիստոս ասէր՝ եթէ «Որդւոյ մարդոյ ոչ գոյ տեղի ուր զգլուխն դնիցէ»։ Զ ինչ ասիցեմ իջավանս. նա բնաւ և դադար իսկ ուրեք ոչ գոյր. թէպէտ և յանապատն երթեալ հասեալ, սակայն և անդ չունէին ինչ դադար։ Եւ ոչ ասաց թէ յանապատին կային. այլ թէ և անդ փախստականք էին, և հալածականք շրջէին ոչ միայն ՚ի շէն երկրէ, այլ և յանշէն անապատէ։ Յուշ առնէ նոցա զտեղեացն և զիրացն՝ որ անդ ՚ի նոցանէ գործէին։ Ասէ թէ ձեզ մեղադիր լինել կարիցեն . . . զոր հալածէին և խուճապէին և սովամահ ջանային առնել. քանզի և նոքա ՚ի ժամանակի անդ կարօտեալք էին։ Իսկ լաշկամաշկօքն շրջել զի՞նչ իցէ։ Յանապատի մոլորեալք և ՚ի լերինս և ՚ի յայրս և ՚ի ծակս երկրի։ Իբրև զփախստականս և զհալածականս. որպէս եթէ ՚ի չարիս ինչ ըմբռնեալք և չէին արժանի և ոչ զարև անգամ տեսանել, նա և ոչ յանապատին գտանէին ամուրս ապաստանի, այլ ցանգ փախչել, միշտ ընդ փապարս ան-

Digitized by Google

կանել, և կենդանեացն յերկրի ծածկել զանձինս. հա-նապազ յերկիւղի, հանապազ 'ի կասկածանս . . .

Այս զինչ վարձք իցեն ընդ այնպիսի վաստակոց, զինչ հատուցումն . . . չև ևս, ասէ, ընկալան, այլ տակաւին սպասեն. և այնպէս 'ի նոյն նեղութեանն վախճանեցան, և չև ևս ընկալան. որ այնչափ յառաջագոյն քան զաւետարան ժամանակս յաղթեցին, չև ևս ընկալան ինչ. և դուք որ դեռ տակաւին 'ի պատերազմի էք, ար-դէն վհատիցէ՞ք. Ձեզէն իսկ ածէք զմտաւ որչափ ժամանակս նստեալ Աբրահամ և Պաւղոս առաքեալ սպասեն եթէ երբ դուք կատարեսջիք, և կարիցեն առնուլ վարձս: Եթէ ոչ մեք անդ երթայցեմք, չառնուն ինչ. քանզի յառաջագոյն առաց նոցա հայրն չտալ ինչ: Որ օրինակ հայր որ գթած որդւոց ժրաց որոց զգործ ինչ վճարեալ իցեն, չառնու յանձն առնել հացի ժամ ե-թէ ոչ եղբարքն ևս գայցեն. և դուք վհատիք զի չև ևս առէք վարձս: Ոինչ գործիցէ Աբել որ յառաջ քան զամենեսին յաղթեաց, և չև ևս առ զպսակն. զինչ Նոյ, զինչ այլքն ամենեքին որք յառաջին ժամանակս առաքինեցան, և քեզ և այլոց որ յետ քոյ լինելոց են՝ սպասեն: Տեսանե՞ս զի մեք զրկեմք զնոսա: Վասն մեր, ասէ, լաւ ինչ խորհեալ էր Աստուծոյ, զի մի՛ ա-ռանց մեր կատարեսցին. զի մի՛ համարեսցին եթէ զմեզ զրկիցեն նախ քան զմեզն պսակելովն, մի ժամա-նակ երևեց . . . համարս պարտիմք Աստուծոյ: Տեսա-նե՞ս զի և ատեանն Քրիստոսի է, և համարս նմին պար-տի, ասեն, այն որ իբրև Աստուծոյ: Այս յայտ է թէ օրինակի վասն է ամենայն խոնարհութիւն նորա, և ոչ եթէ իբրև վարձուց ինչ հատուցումն շնորհել նմա՝ ա-նի 'ի վեր քան զամենայն անուն. այլ զի նովաւ մեզ շնորհիցի: Այս արդ ուր այսպիսի օրինակս առաջի կայ, չպարտիմք, ասէ, հեղգալ: Նա և եթէ չէր ինչ հա-տուցումն, բաւական էր հաւանեցուցանել զամենայն ինչ յանձին կրել. Թող եթէ ուր այսչափ հատուցմունք առաջի կան, ոչ սակաւք ինչ, այլ մեծամեծք և ան-ճառք: Այսպէս զի և մեք յորժամ այնպիսի ինչ չարչա-րանս կրիցեմք, նախ քան զառաքեալսն զմտաւ ածցուք զՔրիստոս. ընդէ՞ր. զի ամենայն կեանք նորա բաց մար-մնաւորութեամբ լի էին Թշնամանօք: Քանզի միշտ...

լեկան կոչէր և մոլորեցուցիչ և կախարդ. քանզի նը-բեմն ասէին Հրէայքն՝ եթէ “Ոչ է այրն այն բարիոք, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն„: Դու դարձեալ՝ ե-թէ “Մոլորեցուցիչն այն ասէր մինչ կենդանին էր, ե-թէ յետ երից աւուրց յառնեմ„: Դու զի 'ի կախար-դութիւն ես բամբասէին զնա և ասէին՝ թէ բեեղզե-բուղաւ հանէ դա զդևս. և զի մոլեկան և դիւահար կո-չէին: “Ո՞չ բարւոք, ասեն, ասեաք՝ եթէ դև գոյ 'ի դմա և մոլեգնէ„: Զայսպիսի ապախտաւորութիւն հատու-ցանէին, և նա երախտիս առնէր նոցա, սքանչելիս գոր-ծէր, զոր գործս ցուցանէր: Եթէ չէր ինչ արարեալ՝ և զայնպիսի բանս լսէր 'ի նոցանէ, ոչ ինչ այնպէս զար-մանք էին: Իսկ եթէ զճշմարտութիւն ուսուցանէր և լսէր եթէ մոլորեցուցիչ է, և զդևս հանէր և ասէին եթէ դիւահար է, և զամենայն զհակառական գործա-նէր և ասէին եթէ կախարդ է, յայտ է եթէ ընդ բա-րերարին մարտնչէին: Զայսպիսի բամբասանս մեղա-խօսէին զնմանէն:

Ապա եթէ կամիցիս և զաղարտանան ես և զհեգնու-թիւնսն ուսանել, որք կարի կսկծեցուցանեն զմիտս մեր, լուր նախ անդստին իսկ յորդանոցէն. “Ո՞չ, ասեն, սա է որդի հիւսանն զորոյ մեք գիտեմք զհայր և զմայր. ո՞չ ապաքէն եղբարք սորա ամենեքեան առ մեզ են„: Եւ և քաղաքաւն ես աղարտէին. 'ի Նազարեթէ է ա-սէին. և դարձեալ. “Հարց և տես զի 'ի Գալիլեէ մարգարէ ոչ յառնէ„. և այնչափ աղարտէր և համբե-րէր ամենայնի: Դու դարձեալ ասէին. “Ոչ գիրք ասեն եթէ 'ի Բեթղահէմ գեղջէ գալոց է Քրիստոս„: Այլ մի և զհեգնութիւնս ես ուսանել. եկեալ, ասէ, կային շուրջ զխաչիւն, երկիր պագանէին նմա, հարկանէին և կափէին, և ասէին. “Ապա մեզ ո՞ եհար զքեզ„. և քա-ցախ մատուցանէին և ասէին. “Եթէ որդի ես այ, էջ 'ի խաչէդ„. և ծառայ քահանայապետին ապտակ ած 'ի ծնօտն. և նա ասէր. “Եթէ չար ինչ խօսեցայ՝ վը-կայեա վասն չարին, և եթէ բարի՝ ընդէ՞ր հարկանես զիս„: Դու խաղ առնէին զնա, քղամիդ զգեցուցանէին, ընդ երեսս թքանէին. և այնպէս համապաղ փորձու-թիւնս մատուցանէին նմա... Ո՞չ համապաղ իսկ փա-խըստական լինէր, մերթ 'ի Գալիլեա, մերթ 'ի Հրէաս-

Digitized by Google

տան. ոչ անդամոցն իսկ 'ի խանձարրոցն բազում փոր-ձութիւնք 'ի վերայ կուտէին. ոչ մինչ մանուկ իսկ մա-տաղ էր, առեալ մօրն փախստական լինէր յԵգիպտոս։ Վասն այսր ամենայնի ասէ զայն՝ եթէ “Հայեցարուք յառաջնորդն հաւատոց և 'ի կատարիչն Յիսուս. որ փո-խանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր, համբե-րեաց խաչին, արհամարհեաց զամօթ, նստաւ ընդ աջմէ այ”։

Այսուհետև ընդ նա հայեցեալք և ընդ նորին աշա-կերտսն, ընթերցցուք և զՊաւղոսին և լուիցուք 'ի նմա-նէ եթէ “Համբերութեամբ բազմաւ, 'ի նեղութիւնս, 'ի վիշտս, 'ի հալածանս, յանձկութիւնս, 'ի գանս, 'ի բանտս”. և դարձեալ եթէ “մինչև ցայսօր և քաղց-նումք և ծարաւեմք և մերկանամք և կափահարիմք և ան-հանգիստ լինիմք և աշխատիմք և գործեմք ձեռօք մե-րովք. հայհոյեալք օրհնեմք, հալածեալք յանձն առ-նումք, բամբասեալք աղաչեմք”։ Այլ արդ ով որ գանէ տակաւ ինչ մասն զայսպիսի վիշտս վշտացաւ։ Իբրև ըղ-մոլարս, ասէ, և զանարգս, իբրու թէ չունիցիմք ինչ և զամենայն ինչ ունիցիմք. “քառասուն, ասէ, միով պա-կաս արբի 'ի Հրէից. երիցս ձաղկեցայ. միանգամ քար-կոծ եղէ. զցայգ և զցերեկ, ասէ, յանդունդս տառա-պեցայ, 'ի ճանապարհս բազում անգամ, 'ի նեղութիւնս, 'ի վիշտս, 'ի քաղցս և 'ի ծարաւս”. Այլ զի այն էին ոչ կամք, լուր զինչ ասէր զանձնէն՝ եթէ “Վասն այսո-րիկ աղաչեցի զտէր, և ասէ ցիս. շատ են քեզ շնորհք իմ. զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատարի։ Վասն որոյ, ասէ, հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ նե-ղութիւնս, ընդ վիշտս, ընդ անձկութիւնս, ընդ գանս, ընդ բանտս. զի հովանի լիցի 'ի վերայ իմ զօրութիւնն Քրիստոսի”։ Այլ Քրիստոսի իսկ զլխովին լուր՝ եթէ “յաշխարհիս նեղութիւն ունիցիք”։

“Արդ աղէ ածէք զմտաւ, որ այնչափ համբեր 'ի մեղաւորաց վասն ընդ նմա հակառակութեանն. զի մի աշխատ լինիցիք անձամբք ձերովք և լքանիցիք”։ Եթէ ընկերացն չարչարանքն յորդորիցեն զմեզ, տէրունականն որպիսի ինչ չտայցեն մխիթարութիւն, զինչ ինչ չառ-նիցեն մեզ. զի զամենայն հակառակութիւնն ասելով՝ յայտ արար և զայնպիսիսն ևս յաւելեալ. այսինքն զապ-տակս, զծաղրս, զթշնամանս, զնախատինսն, զձաղան-

սըն. զայս ամենայն՝ հակառակութիւնն ասելով՝ յայտ արար. և ոչ զայս միայն, այլ և զվարուցն ամենայն ըղ-կարգս և զվարդապետութեանն... Մեծ իսկ են և արդարև մեծ մխիթարութիւն՝ Քրիստոսի չարչարանքն և առաքելոցն: Նոյնպէս ազնուագոյն գիտէր զառաքե-լութեան ճանապարհն որպէս զի և ինքն յանձին կա-լաւ ընդ նոյնն գնալ. այնպէս գիտէր զնեղութիւնն օգ-տակար մեզ, և պատճառս հանգստեան լինելոյ, մինչև ասել եթէ "Որ ոչ առնուցու զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ, չէ ինձ արժանի": Եթէ աշակերտ ես, ասէ, վար-դապետին նմանող լեր. քանզի այն է գործ աշակերտի: Իսկ եթէ նա ընդ նեղութիւնն եկն, և դու ընդ հան-գստեան ճանապարհն կամիս երթալ, ոչ ես ընդ նոյն ճանապարհն ընդ որ նայն գնաց գնաս, այլ ընդ այլ: Զիա՞րդ երթիցես ՚ի հետ որ ոչ երթաս զհետ. զիա՞րդ լինիցիս աշակերտ...

Զայն ամենայն ածցուք զմտաւ, սիրելիք. զայն ամե-նայն կալցուք յուշի, և չվհատիմք այնուհետև և չլքա-նիմք, թէպէտ և զրկիցիմք և յափշտակիցիմք և բիւ-րապատիկ վիշտս մշտանայցեմք: Յերկինս լինի մեզ քա-ղաքութիւն և յերկնից առաքինութիւնս, և ամենայն ինչ ցիւրաւ վճարի մեզ: Ընդր գործս ինչ բարիս ամբա-րել, և մի ասա իմիք առնել փոյթ, քանզի ստուեր է այս ամենայն և երազ զինչ և իցէ՝ առ յաւելեօքն՝ ո-րում ակն ունիմք. և չիք ինչ որ բնութեամբ է և ոչ ժամանակաւ. եթէ բարիք իցեն՝ բարիք չեն, և եթէ կարիք՝ ոչ ինչ այնպէս անհնարինք: Եւ եթէ կամիս համեմատեսցուք զայս վիշտս ընդ այնց տանջանաց. զինչ ինչ զուգական անշէջ հրոյն կայցէ, և կամ զինչ կշիռ անվախճանելի որդանն, և կամ զինչ ոք հաւասարու-թիւն կրճտելոյ ատամանցն՝ որ անդ լինիցի՝ կար է ասել, կապանացն, արտաքսին խաւարին, բարկութեանն, նե-ղութեանն, անձկութեանն. կամ զինչ համեմատ ժա-մանակացն կայցէ. և եթէ բիւր ամս տեւիցես, զինչ իցէ առ այնչափ անչափ և անվախճան յաւիտեանսն, ոչ ապաքէն որչափ կաթ մի ջրոյն առ ծովս անչափ:

Իսկ բարութեանցն զինչ համեմատ կայցէ. այլ այն կարի իսկ մեծ առաւելութիւնն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ. և այն

Digitized by Google

յանչափ և յանպակաս յաւիտենական։ Իսկ արդ վասն այնր չէ՞ր պարտ բիւրապատիկ պատուա պատուա կատարել, ցանկ սպանանել, այրել, բազում մահուց համբերել, և զամենայն զինչ և իցեն չարչարանք կրել և բանիւք և արդեամբք. և եթէ կենդանւոյն հրով այրել իսկ հասանէր, չէ՞ր պարտ այրել վասն հասանելոյ խոստացելոց բարութեանցն։ Այլ զի՞ խօսիցիմ, և առանցեալ համարիցիմ, ընդ այնպիսի պսակաց՝ որք ոչ զինչս արհամարհել յանձն առնուն. այնպէս համարին թէ իբրև զանմահս ինչ ունիցին. և եթէ սակաւ ինչ ՚ի բազմաց տայցեն, այնպէս հաշուին՝ եթէ զամենայն վճարեցին։ Չեն այն տուրք, չէ ողորմածութիւն. տուրք այն էին, որպէս կինն այրի արկ ՚ի գանձանակն. զէթ զաւելորդսն տուր, և զբաւականն կալ, և մի զաւելորդսն. այլ չիք ոք՝ որ գոնեա զաւելորդսն տայցէ։ Զինչ ծառայս բազումս ունիցիս և հանդերձս կերպասեղէն, զաւելորդսն ունիս. և եթէ ոչ զկարևորսն և զպիտոյսն, և առանց որոց չմարթիցեմքն կալ, աւելորդք են այն ամենայն, և արտաքոյ քան զպէտսն կան ընդ վայր։

Իսկ եթէ զինչ իցեն՝ առանց որոց չկարիցեմքն կալ, թէ կամիք տեսցուք։ Իսկ թէ երկուս ծառայս ունիցիմք, կարեմք կալ. ուր զի ոմանք առանց ծառայից իսկ կեան, և մեք որպիսի՞ ինչ պատասխանի ունիցիմք տալ, թէ և զերկուս և զերիս բաւական չհամարիցիմք։ Մարթիմք և յաղիւսոյս տունս կեալ. և երկու և երեք տուն բաւական են մեզ. միթէ չիցե՞ն բազումք՝ որ կնաւ և որդւովք ՚ի մի տուն կեան։ Ունիցիս երկուս և երիս ծառայս։ Զիա՞րդ մարթիցի, ասեն, կնոջ ազատի երկու և երեք ծառայիւք միայն արտաքս ելանել։ Այլ այն իսկ է ամօթանք՝ զի բազմօք ելանիցէ. թերևս ծաղր եւս առնիցէք զոր լսէքս. հաւատացէք, զի այն իսկ կարի ամօթ է. իբրև զոչխարավաճառս և զմարգագէնս, զայն իմն մեծարանս համարիք, բազմօքն արտաքս ելանել. հպարտութիւն է այն և մեծապարծութիւն. և միւսն զգաստութիւն և պարկեշտութիւն։

Զազատականն ոչ բազում սպասաւորք երևելի առնել պարտին, այլ ցածութիւնն։ Զինչ քաջութիւն իցէ բազում սպասաւորս առնել. չէ ինչ այն ոգւոց գործ. որ ինչ ոգւոց գործ չիցէ, և ոչ ազատութիւն ինչ

ցուցանիցէ։ Նա յորժամ զտակաւին բանական համա-
րիցի, յայնժամ է սաստիկ աղատ. իսկ յորժամ բազ-
մաց կարօտանայցէ, աղախին է, և ևս չար քան զգեր-
դաստանիկն։ Արդ աղէ ասա, հրեշտակքն ոչ ապա-
քէն միայն շրջին ընդ տիեզերս, և չեն կարօտ սպասա-
ւորաց. մի՛թէ վասն այնորիկ ՚ի վե՛ր իցեն քան զմեզ,
որք կարօտանամքս, նոքա որք չկարօտանանն. և եթէ
չկարօտանալն սպասաւորաց հրեշտակական վարք են,
ո՛ մօտ իցէ ՚ի հրեշտակաց կեանս, որ բազմօք կարօտ
իցէ՝ թէ որ զտակաւսն բանական համարիցի։ Չէ այն
ամօթ. այլ ամօթ այն է՝ եթէ յաւութիւնս ինչ ոք
գործիցէ։

Աղէ ասա, ո՛ դարձուցանէ զգաեհիկս, որ բազում
սպասաւորսն ունիցի, եթէ որ սակաւս. որ զտակաւսն
ունիցի՝ ՚ի նա ոչ այնչափ հաչակս հարկանի։ Տեսանե՞ս
զի այն է ամօթանաց, որ բազում սպասաւորսն ունի
ընդ իւր։ Ո՛չ տալ տայ հայել ընդ ինքն կաձառորդացն,
որ զազնիւ զհանդերձսն ագանի, եթէ որ զզոյգն հան-
դերձիկն և զասանց պաձուձանաց. ո՛ դարձեալ միապէս
ասնէ զբազումն, որ զանհաւորականն և ըմտեաւ և ձո-
րեզք կրի, և զոսկեհուռ նուարտանսն զպատուհանսն[1]
տարածանէ, եթէ որ համոցս և պարկեշտութեամբն
գնայ։ Զայնպիսին թեպէտ և տեսանիցեմք, միապէս
ինչ չառնեմք. և զմիւսն ոչ միայն տեսանել ձանան բա-
զումք, այլ և հարցանեն՝ թէ ո՛վ իցէ և ուստի։ Նա
զայն թողլ տայց ասել՝ թէ որչափ նախանձանաց ծնանի։

Արդ աղէ ասա. ո՛ր յաւութիւն իցէ, անկանե՞լ յանկս
եթէ չանկանել. ո՛ր ամօթ չար իցէ, յորժամ ամենե-
քին ընդ նա՛ հայիցեն, եթէ յորժամ և ոչ ոք. յոր-
ժամ ՚ի քնքին անկանիցին վասն նորա, եթէ յորժամ
չառնիցեն ինչ փոյթ։ Տեսանե՞ս, զի ոչ վասն ամօթոյ,
այլ վասն մեծապարծութեան առնեմք զամենայն։ Նայց
սակայն քանզի յայնմանէ չէ հնար մեզ ՚ի բաց կալ,
շատ է այն առ այժմ, զի ուսայցեք՝ եթէ այն չէ ինչ ա-
մօթ, այլ մեղքն են ամօթ, զոր չհամարիցի ոք ամօթ՝
եթէ իցէ բնաւ, այլ զամենայն ինչ ամօթ համարին և
ոչ զմեղսն։

1 Այլ գաւիս երկաթագիրն. միւսն զքուղնարտաղածն։

Հանդերձք այնչափ ինչ լինիցին, որչափ զպէտսն վճարիցեն, և մի աւելորդք։ Բայց զի մի կարի յանձուկ արկանիցեմք զձեզ, զայն եւեթ պատուիրեմ, մի յանկուց ինչ զարդ առնել, և մի ՚ի բարակ կտաւոյ. և զայն ոչ եթէ ես ինչ ասեմ, և զի ոչ իմ են բանքս, լուր երանելոյն Պաւղոսի, որ պատուիրէ կանանց զարդարել զանձինս "Մի ՚ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, և ՚ի հանդերձս պաճուճեալս,,։ Այլ որպիսի հանդերձս կամիցիս, ով Պաւղոս։ Այլ թերևս ասիցեն ամենք, եթէ ոսկեհաւքն միայն պաճուճեալք իցեն, և կերպասեղէնքն չիցեն պաճուճեալք։ Արդ աղէ ասա Պաւղոս, որպիսի հանդերձս կամիցիս։ "Ունիմք, ասէ, հանդերձս և կերակուրս, և այսու շատասցուք,,. այնչափ ինչ լիցին հանդերձք, որչափ զգեցուցանելոյ միայն. քանզի վասն այնորիկ ետ մեզ ած զհանդերձսն զի զմերկութիւնն զգեցուցանիցեմք. և զայն զինչ և իցէ հանդերձ կարէ վճարել, սակաւ ինչ գնոց գնել։

Թերևս ծաղր առնիցէք, կանայք, որ համակ ՚ի կերպաս եւեթ լինիք. և արդարև իսկ ծաղու զրոյցք են, եթէ զինչ Պաւղոս հրամայեաց, և զինչ դուք գործէք։ Ոչ միայն ընդ կանայս են բանքս իմ, այլ և ընդ արս։ Զայն ամենայն զոր և ունիք աւելորդք են. բայց միայն աղքատքն չունին աւելորդս։ Այլ թերևս և նոքա առ վտանգի չունիցին աւելորդս. որպէս զի թէ հնար ինչ էր՝ և ոչ նոքա յայնմանէ հեռանային. բայց սակայն եթէ բարբառօք և եթէ ճշմարտութեամբ, նոքա չունին աւելորդս։

Այնպիսի ինչ հանդերձ զգեցցուք, որ զպէտսն եւեթ վճարեն։ Զինչ օգուտ իցէ բազում ոսկի յանձին կրել. յաշխարաւանդան վայելէ այնպիսի հանդերձս, ՚ի պոռնկացն և ՚ի գուսանաց վասն. բոզից են պաճուճանք՝ որ յակն եւեթ կամին անկանել։ Այնպիսեացն պաճուճեսցի՝ որ ՚ի բոզանոցսն ջերանին, որ ՚ի վարձկանսն ելանիցէ, և ՚ի կաքաւսն մտաբերիցէ. քանզի զամենեսին կամի առ ինքն ամփոփել, ՚ի պատիրս արկանել, զուշ և զուրուշ մոգել։

Իսկ կնոջ որոյ զածպաշտութիւն յանձն առեալ իցէ, մի այնպիսի զարդուք պճնել, այլ այլազգ։ Ունիս և դու բազում և գեղեցիկ զարդ քան զնոցայն. ունիս և դու

թէատրոն լու քան զնորայն, անդր զարդարեաց, անդր անկիր յակն, զայն զարդ պաճուճեալ զանձամբ։ Ո՛ւր իցէ և կամ որպիսի՜ ինչ քո թատրոն։ Երկինք, հրեշտակաց դունդքն, հրեշտակապետաց դրունք. չասեմ զայս առ կուսանսն միայն, այլ և առ աշխարհական կանայս որ 'ի Քրիստոս իցեն հաւատացեալ. յայն թատր զարդարեացին, ընդ այն հանդէս ելանիցեն, անդ նազիցին, անդ յօրանայցեն։ Զայն բանս խօսիցին՝ զոր այնպիսի տեսողք ախորժիցեն, այնպիսի քաղաքավարեալս արկանիցեն, գինդս, մատանիս, և կշտամբանակս, որ զնոսա ուրախ առնիցեն։

Արդ ասէ ասա, եթէ վարձակ ոք 'ի բաց հանիցէ յանձնէ զոսկին, զհանդերձս պաճուճանացն, զծաղրն թողուցու, զպչրանսն, զհպարտանս, զաչացն զմեղմեղանս, զբանսն պատրելիս, զխաղալն, զկատակելն, և հանդերձս զձուձս ագանիցի և զամենայն պաճուճանս 'ի բաց մերկանայցէ, և մատուցեալ զամօթպաշտութեան բանս խօսիցի, և վասն ցածութեան ձայնիցէ, և ոչ ինչ 'ի խեղկատակութեանցն խօսիցի, ո՛չ ամենեքեան յաճախիցեն և 'ի բաց գնասցեն, և լինիցի զրաւ թատերն. կամ զնա խուկ 'ի բաց հրամայիցեն հանել, զի ոչ մարթաց զմիտս գումարելոցն հաճել զհանդիսատեսացն. և օտարոտի համարիցին 'ի թատերցն օրինաց, 'ի սատանայական ըղձանացն, 'ի դիւատուր խաղըն։ Այնպէս և դու եթէ զնոցա պաճուճանսն պաճուճեսցես, և յերկնից 'ի թատրն մտանիցես, հանիցեն 'ի բաց զքեզ հանդիսատեսքն. քանզի անդ չեն պէտք ոսկեհուռ հանդերձից, ճամկաւորն դիպակաց, այլ այլոց ինչ հանդերձից։ Ապիտեա՞ց. զորո՞ց մարգարէն ասէ, եթէ "'ի քղանցաւորս յոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ"։ Ոչ զմարմինն համակել 'ի սպիտակս, այլ զոգին զարդարել 'ի սպիտակս. քանզի նա է այնր մարտի պատերազմող նահատակ մարտուցեալ 'ի մարտ։ "Ամենայն փառք դըստեր թագաւորի, ասէ, 'ի ներքոյ"։ այնպիսի զարդուք զարդարեաց, այնպիսի քաղաքավարեալս արկանիցես ընդ պարանոցդ, այնպիսի պախրաւանդօք և լանջապեղ կամարօք զարդեալ լինիցիս անդակազմ, և այնպէս յամենայն չարեաց զերծուցանիցես զանձն, զայլս 'ի հոգոց և զքեզ 'ի կասկածանաց։

Digitized by Google

Նոյն և առնն այնպէս իսկ ընդ միտ մտանիցես, յորժամ ոչ ինչ կարի իմիք Թախանձիցես։ Քանզի սովորութիւն իսկ է ամենայն արանց ըմբռստանալ ընդ այն, յորժամ կինն զանպատեհ[1] ինչ հանդերձս խնդրիցէ. և յորժամ գիտէ, Թէ ոչ ինչ կարի պահանջիցէ, հանդարտէ, յանկչի. գիտէ՝ Թէ ըստ նմա է, և չափով խօսի և չափով գնայ։ Այլ յորժամ տեսանիցէ այլն, եԹէ ոչ ինչ կարի ծանր լինի նմա իւիք, և ոչ այնչափ նայի ընդ տուրս և ընդ բերս, Թէպէտ և կարի ոք մեծամիտ լիցէ, կարէ կինն ընդ միտ մտանել. և ոչ յայնժամ մինչ տակաւին զարգարիցի. և չառնիցէ ևս այնուհետև իբրու զաղախին։ Քանզի ուստի առնու ոք շատ, հարկ է նմա այնուհետև 'ի հնազանդութիւնն մտանել. և եԹէ ոչ զոք Թախանձիցէ, ոչ այնչափ պարտական գտանի. այլ գիտէ՝ Թէ վասն ա̃յ երկիւղին հնազանդ լինիցի նմա, և ոչ վասն նորա ինչ տրոց։ Իսկ յորժամ գեր 'ի վերոյ իմն լինիցի, քանզի գիտէ Թէ շատ ետ, և բազում պատիւ պահանջէ. իսկ յորժամ սակաւ ինչ տայցէ, չկարկանի, չնախատէ, և ոչ ինքն բռնադատի վասն քո զըրկել զանձն։

Զի՞նչ քան զայն անմտութի՛ւն կայցէ, յորժամ նստեալ ոսկի կռիցէ՝ զի զանձամբ արկանիցէ, 'ի բաղանիս տանիցի, 'ի հրապարակս հանիցէ. այլ Թերևս 'ի բաղանիսն և 'ի հրապարակսն ոչ այնչափ ինչ պարսաւանք իցեն. բայց ոսկւով զարդարել և յեկեղեցի երԹալ, ամենևին իսկ ծաղու գործ է։ Մի՞նգէ՞ր բնաւ մտանիցէ այսր ոք ոսկւով զարդարեալ իցէ. զի՞նչ կամիցի լսել, ո՞չ առաքելն զայն՝ եԹէ "Զարդարել զանձինս մի՛ 'ի հիւսս ոսկեմամբ ընդելուզեալս մարգարտով, և մի՛ 'ի հանդերձս պաճուճեալս"։ Զի՞մ մտանիցես այսր, ով կին դու. միԹէ ընդ հակառակս ելեալ 'ի կռիւ ինչ եկեալ կայցես ընդ Պաւղոսի, և յայտ առնիցես՝ Թէպէտ և նա բազում ասիցէ, և դու բազում անգամ լսես և չդառնաս. եԹէ զմեզ զվարդապետս խանդ ինչ առնել կամիցիս և յանդիմանել, Թէ զոր խօսիմքս 'ի զուր ինչ խօսիցիմք։

Աղէ ասա, եԹէ ոք այր հեԹանոս անհաւատ լսէր

1 Միւսն զանպարկ։

զընթերցուած տեղւոյն այնորիկ՝ ուր երանելին Պաւղոս հրամայիցէ չզարդարել կանանց, և ունէր կին հաւատացեալ, և տեսանէր եթէ կարի քան զայ զզարդու, զոսկւովք մատանեօք, և զմարգարտեայ գնդովք, զապարանջանօք, զքայլամանեկօք, զինչ համարէր զպատուէրն Պաւղոսի՝ որ ասէ, եթէ ՙՙՄի՛ ՚ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, և մի ՚ի հանդերձս պաճուճեալս զարդարել զանձինս,,։ Զասէր որդեօք ընդ միտս յորժամ տեսանէր զկինն ՚ի սենեկին պճնեալ, զարդարեալ, եթէ զի՞ այնչափ յամիցէ ՚ի ներքս, զինչ գործիցէ, ընդէ՞ր զայնչափ ոսկի զարդ դնիցէ, յո՞ երթայ, միթէ յեկեղեցի. ընդէ՞ր. զի երթիցէ՝ լսիցէ ՙՙՄի՛ ՚ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, և մի ՚ի հանդերձս պաճուճեալս,,. ո՞չ ապաքէն ծաղր առնիցէ, քրքիջ բառնայցէ, խաղ ինչ և խաբէութիւն ըզմեր ոձս համարիցի։

Վասն որոյ աղաչեմ զոսկին ՚ի բաց թողուցումք որք գեղեցիկքն իցեն և զվայրօք յածին, որք ՚ի բաղանիսն կայցեն և ՚ի վարձակացն համարի, և կամ ՚ի վաճառս և ՚ի խանութս ընդ գին[1] ելանիցեն և զպէտս ինչ վճարիցեն։ Դու ո՞չ պատկերն մի այնպիսի ինչ զարդու զարդարել. ազատակիննն ազատութեամբն զարդարեսցի. զանպերճն զանհպարտն զանպարծն զարդ ունիցի յանձին. և եթէ փառաց ինչ մարդկան ցանկանայցէ, այնպէս վաղ հասանէ։ Ընդ կնոջ առն մեծատան ոչ յայնժամ զարմանամք՝ յորժամ ոսկի զարդ դնիցէ և կերպաս ագանիցի. զի այն ամենայն՝ և այլոց կանանց մեծատանց հասարակաց է. այլ յորժամ լոկ հանդերձս ասուիս ագանիցի, ընդ այն զարմանան ամենեքեան, զայն գովեն. զի այնպիսի հանդերձից բազումս ունի զարգակիցս. եթէ զմի ոք ելանիցէ, միւսն յաղթէ. և եթէ զամենեքումբք ելանիցէ, առկայն թագաւորին կինն յաղթէ. բայց մի ուրուք ամենեցուն յաղթէ, և թագաւորին իսկ կնոջ. զի նա միայն ՚ի մեծատանց՝ ախորժեաց զաղքատացն հանդերձս. որպէս զի թէ և փառաց ցանկանայցեմք, անտի ծնանին մեծամեծ փառք։

Այլ զայս ոչ առ այլոյն միայն ասեմ և առ մեծա-

1 Միւս երկաթագիրն ընդ գնեն մնացանիցեն և զպէտս վճարիցեն ինչ։

տուն կանայս, քանզի այնպէս թուի՝ եթէ այրեացն մի-այն հարկ ինչ իցէ զայն առնել, այլ և անակականաց ։ Այլ չկարեմ, ասէ, հաճոյ լինել առնն, եթէ 'ի գձուձս լինիցիմ ։ Ոչ եթէ առնն կամիս հաճոյ լինել, այլ բազ-մաց. և զաղքատացն կանանց զսիրտ հանել, հաշել և հառաչել, այրել, խորովել, և ևս չար քան զաղքատու-թիւնն հատուցանել 'ի վերայ ։ Որչափ հայհոյութիւնք վասն քո լինիցին ։ Ո՛չ լիցի, ասեն, բնաւ աղքատու-թիւն ։ Աստուած ատեա՞յ ուրեմն զաղքատս, չարարէ՞ զտա-ռապեալս ։ Եւ զի ոչ առնն կամիս հաճոյ լինել զի այն-պէսն զարդարիս, զոր դուն իսկ առնես՝ անտի լինի յայտ ամենեցուն. յորժամ մտանես 'ի հրապարակէ 'ի սե-նեակ, վաղվաղակի 'ի բաց մերկանաս զհանդերձն, հա-նես զսկլին և զմարգարիտն ։ Եթէ վասն առնն ինչ առ-նէիր, 'ի տան պարտ էիր արկանել և ոչ արտաքոյ. և եթէ սոցա առնն կամիցիս հաճոյ լինել՝ ցածութեամբ, ճնշութեամբ, պարկեշտութեամբ զարդարեաց, և այն-պէս հաճոյ լինիս ։

Հաւատա ինձ, կին դու, թէպէտ և կարի ոք մեծա-միտ իցէ այրն, այնու վաղվաղակի պատրի՝ յորժամ հե-զութիւն և պարկեշտութիւն ցուցանիցես, և յորժամ չփքասցես և չնազիցիս, չխնդրիցես աւելի պաճուճանս, այլ զհամեստն և զչափաւորն ։ Այց զանխտիրն և զանա-ռակն թէպէտ և բիւր պաճուճանօք պաճուճիցիս, չկա-րիցես ածել զնա. Եւ գիտեն բազումք՝ որ այնպիսի ա-ռանց դիպեցան. որչափ և պաճուճիցես զանձն, նա քան-զի զեղխ է՝ առ այլս երթայ ։ Իսկ ցածնոյն և զգաստին ոչ պաճուճանօքն հաճոյ լինիս, այլ նոցին հակառակօքն ։ Այնու և 'ի սրամտութիւն ևս ածես զնա. քանզի ըղ-կարծիս զարդարոյոց առնուս յանձն. թէպէտ և առ ակնածել, քանզի հեզ իցէ այրն, չասիցէ ինչ, այլ 'ի մը-տին ստգտանիցէ զքեզ, և 'ի նախանձու չլինիցիս ա-զատ ։ Ո՞չ ապաքէն այնու հետև զամենայն ցանկութիւն մերկանաս 'ի բաց, և 'ի նախանձ գրգռես զայրն ընդ քեզ ։

Թերևս չկամիցիք լսել զայնպիսի բանս, և ցասնու-ցուք և ասիցէք՝ եթէ զարս գրգռէ ընդ կանայս ։ Ոչ եթէ զարս գրգռելոյ վասն ասեմ զայս. այլ կամիմ ե-թէ դուք ձերովքդ իսկ կամօք առնիցէք զայն ։ Վասն ձեր՝ և ոչ վասն նոցա. ոչ զի զնոսա ազատեցից 'ի նա-

խառնածուէ, այլ զի զձեզ ազատեսցէ յանօգուտ աշխա-ճանաց: Նախ գեղեցիկ երևել, այլ գեղ խնդրէ ած, այլում գեղոյ ցանկայ թագաւորն: Զի՞նչ կամիցիս, զա՞ծ սիրելի առնել՝ եթէ զմարդ հաճանիլ: Եթէ այնու գեղով գեղեցկանայցես, ած ցանկասցի գեղոյ քում. և եթէ առանց այնր գեղոյ լինիցիս, նա զարշեսցի 'ի քէն, և արք պղծք լինիցին քեզ հաճանիք. քանզի առնա-կնող ոչ ազնիւ այր ցանկանայ, այլ ժանտ որ:

Զայս և առ արտաքին գեղն ածիցիք զմտաւ. զի այն գեղ՝ զոգւոյն առեալ՝ զած պատուէ, և այս՝ զմարդ պղծէ: Տեսանե՞ս զի ձեզ զգուշանամ, զձեզն հոգամ, զի գեղեցիկք լինիջիք՝ և ստոյգ գեղեցիկք, և փառաւորք՝ և ստոյգ փառաւորք. զի փոխանակ արանց պղծոց հաճանեաց՝ ունիցիմք զամենեցունցն ած սիրելի: Այլ որ զնա սիրելի ունիցի, ում նմանող իցէ: Ընդ հրեշտակս զընծասցէ և ընդ հրեշտակապետս բերկրեսցի: Զի եթէ որ 'ի թագաւորէն սիրեսցի քան զամենեսին երանելի է, որ յայն սիրեսցի սերտ սէր՝ ինչ իմիք արժանի լինիցի: Եթէ զամենայն աշխարհս միանգամայն ընդ նմա կըշռեսցես, չարժէ զայն գեղ:

Զայն գեղ փութասջիք, այսու զարդու զարդարեսջիք, զի երկնից արժանի լինիցիմք, հոգևոր առագաստայն, անմահ հարսանեացն: Քանզի այս գեղ յամենայն իմեքէ եղծանի. և եթէ բարիոք ինչ պահիցի, ոչ 'ի ցաւոց վնասիցի և ոչ 'ի հոգոց ծնկիցի, որում չէն հնար լինել, չքաւէ չանէ մինչև ցքսան ամ: Իսկ այն միշտ փթթի, ցանկ ծաղկի, յար հաստանէ. չիք անդ երկնչել 'ի փափոխմանց, եթէ գուցէ պառաւութիւն գայցէ, և խորշք յայտանի անկանիցին, և կամ թէ ցաւք հասանիցեն և յանգոյ հանիցեն և զգոյնն աժգունիցեն և զգեղն եղծանիցեն, և կամ տրտմութեան հոգք հասանիցեն և զմիտն տմոյն առնիցեն. այլ յայսմ ամենայնէ ազատ է: Իսկ այս գեղ մինչ չև երևեալ խափանի, նա և մինչև երևին՝ չէ ինչ բազմաց զարմանալի. զի զածուքն ոչ ինչ զարմանան, և որք զարմանան՝ կշտամբութեամբ զարմանան:

Այլ արդ մի զայսմ հարկանիցիմք, այլ զայնու զայցեմք, զի մեծապայծառ լապտերօք երթայցեմք յառագաստն. քանզի ոչ եթէ կուսանացն միայն ուխտեաց

Digitized by Google

ղայն, այլ ամենայն ոգւոց որ 'ի չարեաց կուսանք իցեն: Զի եթէ կուսանացն եւեթ էր, ապա ոչ հնգիցն ընդդէմ փակէր. ամենեցուն է պատգամն՝ որ ոգւովքն կուսանք իցեն, որք 'ի մարմնաւոր պահուճանաց ազատեալք են. քանզի ապականեն զգեղ ոգւոցն այնպիսի պահուճանք: Եթէ անարատք մնայցեմք, տանիցին ըզմեզ անդր եւ տայցեն Թագաւորին. "Խոստացայ, զձեզ ասէ, առն միոջ իբրեւ զկոյս մի սուրբ յանդիմանն առնել Քրիստոսի":

Ոչ այս ոչ առ կուսանսն եւեթ ասաց, այլ եւ առ ամենայն իսկ լրումն բնութ եկեղեցւոյ: Զի անարատ ոգին թէպէտ եւ առն լինիցի՝ կոյս կայ սորա կուսութեամբ՝ զարմանալեաւն սքանչելեաւն. զի մարմնոյ կուսութիւն զայնր կուսութեան զհետ երթայ իբրեւ զնորին ստուեր. իսկ ճշմարիտ կուսութիւն այն է. այսու զարդարեալուք, եւ այնպէս կարիցեմք զուարթ երեսօք տեսանել զփեսայն. վառեալ լապտերօք մտանիցեմք յառագաստն. եթէ զիւղն եւս անպակաս ունիցիմք ընդ մեզ, եթէ զոսկին ձուլիցեմք եւ իւղ գործիցեմք, այն է որ մեծապայծառ լուսաւորէ զլապտերսն. քանզի իւղն այն մարդասիրութիւն է: Եթէ այլոց բաշխեսցուք զինչս, եթէ զոր ինչ ունիցիմք՝ համակ իւղ գործիցեմք, անդ օգնեսցէ, յայնժամ շայեկան լինիցի մեզ. եւ չասիցեմք զոք 'ի ժամանակին յայնմիկ, եթէ "Տուք մեզ իւղ, զի ահա շիջանին լապտերքս մեր". չկարօտիցիմք այլոց, չերթայցեմք առ վաճառականսն, եւ չփակիցի դուռն հարսանեացն եւ մնայցեմք արտաքոյ. չլսիցեմք զահագին եւ ըզսոսկալի զբարբառն, յորժամ զդուրսն բախիցեմք, թէ "Ոչ գիտեմ զձեզ". այլ ճանաչիցէ զմեզ, եւ ընդ փեսային իսկ մտանիցեմք յառագաստն հոգեւոր, եւ վայելիցեմք յանչափ բարութիւնսն:

Զի եթէ աստ այնչափ վայելուչ են հարսանիքն, եւ մեծապայծառ առագաստքն, որպէս զի չյագիմք հայելով, որչափ եւս առաւել անդ ուր երկինք են սենեակք, եւ երկնից առագաստքն ամենալիցք: Ընդ մայուք, անդր փութասցուք. զի թէ առագաստն այնչափ գեղեցիկ է, ապա ուրեմն փեսայն որչափ գեղեցիկ. Նա զինչ ասացից թէ զոսկին թօթափեսցուք եւ տացուք կարօտելոց. թէ զանձինս եւս հասանէր վաճառել, եւ հնար ինչ էր

ընդ այնմ փեսայի բնակել, յայնպիսի գեղ վայելել, զնորա միայն զերեսն տեսանել, չէ՞ր պարտ բաղձալ յօժարութեամբ զամենայն ինչ յանձին առնել։ Զթագաւոր ոք երկրաւոր թէ տեսանիցեմք՝ զարմանամք, իսկ յորժամ զթագաւորն և զփեսայն միանգամայն տեսանիցեմք, չիցէ՞ պարտ վասն այնպիսի բարութեանց զամենայն ինչ յանձին առնուլ, արդարեւ այս ստուեր, և այն ճշմարտութիւն. թագաւորն և փեսայն յերկինս է, և պարտ է փութալ արժանի լինել, և քան զամենայն ինչ զայն լաւ համարել. զի կարասցուք ելանել նմա ընդառաջ լապտերօք. մերձենալ և միշտ ընդ նմին բնակել։

Արդ առեալ զայնպիսի բարութիւնսն զմտաւ, զի՞նչ ինչ չիցէ պարտ առնել, որպիսի՞ հնարս հնարել, զո՞ր չարչարանս չհամբերել. վասն որոյ աղաչեմ, արկցուք գութ ընդ այնպիսի բարութիւն, փափագեսցուք փեսային, եղիցուք կուսանք ճշմարտութեամբն։ Զանձն զոգւոցն կուսութիւն խնդրէ տէրն. նախ նմա հանդերձ մնասցուք յերկինս. զի մի՛ ունիցիմք սպի և մի՛ խորշ ինչ և կարկատութիւն, և մի՛ այլ ինչ այնպիսի. զի և խոստացելոց բարութեանցն հասանիցեմք. որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն։

## ՑԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՃԱՌԸՆ

Բազում ինչ է որ կրէ քրիստոնէութիւն, մանաւանդ քան զամենայն ինչ սէր և ընդ միմեանս խաղաղութիւն. վասն այսորիկ և Քրիստոս ասէ. "Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ". և դարձեալ. "Յայսմիկ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս". նմին իրի և Պաւղոս ասէ. "Զխաղաղութեան զհետ երթայք և զսրբութեան և զցածութեան, առանց որոյ ոչ ոք տեսանէ զտէր"։ "Տեսէք, եղբարք, գուցէ ոք 'ի ձէնջ յետնեալ գտանիցի 'ի շնորհացն այ"։ Որպէս և որք ճանապարհ ինչ յերկար գընայցեն ընդ բազում ուղեկիցս, տեսէք գուցէ ոք մնացէ։ Ոչ զայն միայն խնդրեմ, ասէ, զի դուք գնայցէք, այլ զի և զայլս դիտեսցէք։ Մի՛ ոք 'ի ձէնջ, ասէ, յետ-

Digitized by Google

նեալ։ Ի շնորհացն այս՝ զհանդերձեալ բարեացն առնէ զհաստատութիւն զաւետարանականն աւաքինութեանն. ամենայն ինչ 'ի շնորհացն այս է։ Մի՛ ասիցես՝ եթէ մի ոք կորեաւ, և այն զինչ իցէ. քանզի և վասն միոյ մեռաւ Քրիստոս. վասն որոյ Քրիստոսն մեռաւ՝ զու համար չկամիս։ Դիտեցէք, ասէ, զմիմեանս. այսինքն է քաջ յուզեցէք, հանդէս արարէք. «Մի՛ ոք արմատ դառնութեան 'ի վեր երեւեալ նեղիցէ». զոր և այլուր գրեալ ասէ. «Փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ»։ Ոչ վասն նորա զայն կամի միայն, այլ վասն առ 'ի նմանէ վնաս լինելոյ։ Եթէ այնպիսի ինչ արմատ իցէ, մի և միում շառաւեղի տացես 'ի վեր արձակել, այլ 'ի բաց կտրեսցես, զի մի բերցէ զիւր պտուղն և զայլս ապականիցէ։ «Մի՛, ասէ, արմատ դառնութեան 'ի վեր ելեալ նեղիցէ, և վասն նորա բազումք ապականեսցին»։ Արդ նմանապէս իսկ դառնութեան զմեղսն կոչեաց, քանզի չիք ինչ դառնագոյն քան զմեղսն. և հմուտ են որք յետ գործելոյն հաշին և մաշին 'ի միտսն խղճէ և բազում դառնութիւնս ճաշակեն. քանզի դառնագոյն են մեղք և այլայլեն զխորհուրդս. այս իսկ է դառնութեան բնութիւն անօգուտ։ Արդ բարւոք ասաց արմատ դառնութեան, և ոչ դառն՝ այլ դառնութեան. քանզի դառն արմատոյն մարթ է բերել պտուղ քաղցր։....

«Մի՛ ոք պոռնիկ որպէս զԵսաւ»։ Արդ մի՞թէ պոռնիկ էր Եսաւ. ոչ զայն ասէ թէ պոռնիկ, այլ թէ գարշելի, որովայնամոլ, անժուժկալ, աշխարհական, 'ի հոգեւորացն հեռացեալ. որ ընդ միոյ կերակրոյ վաճառեաց զանդրանկութիւնսն . . . Գիտէք, ասէ, ոչ եգիտ տեղի ապաշխարութեան . . . վասն զի ոչ էին իրքն ապաշխարանաց։ Զի զոր օրինակ տրտմութիւնն Եսաւայն ոչ էր ապաշխարութեան, և սպանութեան եղոյց . . . նոյնպէս և նա յօժարութեամբ սպան զՅակոբ. «Մերձեսցին աւուրք սգոյ հօր իմոյ և սպանից զՅակոբ». ոչ կարացին արտասուք զապաշխարութիւն նմա տալ . . . ընդէ՞ր. զի ոչ զղջացաւ զոր օրինակ պարտ էր։ . . .

Զգոյշ լերուք մի զլքիցիք զառանց բժշկութեան գլորումն։ Եթէ չկարողութիւն միայն իցեն իրքն, գոյ հնար հաստատելոյ. ապա եթէ բնաւ իսկ կործանիցիք, զինչ ինչ այսուհետեւ հնարք լինիցին։ Ընդ որս չիցեն

յետոյ գրչերաց՝ այնպիսի խօսիւ, զի առնիցեն զմիտս պահելիս զինուս. չիք, ասէ, հնար զգրչերացն հաստատել միաբանութեանն. խոկ առ զգրչերացն զի մի ամենայն ընթերցին, զհոգւոյն հաստատուն ասէ, թէ «Պնդեցարուք, զօրս զգածեալ երկինս, մինչև նկատեսցի Քրիստոս 'ի ձեզ»։ և զարձեալ՝ եթէ «Մի զմիտսն որդւոցդ աշխարհիս, ամենայն 'ի չարահայն»։ ահաւասիկ մինչև՝ եթէ ամենայն։ Ո՞ր որ կանգնեալն կայ՝ յայտնապէս ընդեմ թէ զգրչերացն չէ հնար հաստատել թագաւորեան, որպէս և զգուշացողն ընթերցի, եւ քան զես հաստատուն կայ. ասաս եթէ և առ զգրչերացն զմիտս տատանելութիւն 'ի նոյն արկանելոյ, չկամենար որ երբեք։

Աղաղակէ նոյն յառաջ յաւաջանալ։ ապա թէ իցէ զզօրձեա Ոչ միայն, ասէ, ապստամբեաց, այլ և խնդրեաց. չհամէ 'ի բաց զապաշխարութիւնն, այլ և զմտաւ զգուշացացանիցէ չզլորել։ Որք չհաւատացին զենհեդրին, զայն յիշեսցեն. որք առանց պատճառ զմեղսն համարեցին, զայն անցեն զմտաւ, եթէ Յուդա ընդէր չեհասաւ թագութեանն, զի ոչ ապաշխարեաց որպէս արժանն էր։

Պատմիս առնանել զառոյգ ապաշխարութիւնն. ընդ զԱխտորոս ապաշխարութիւնն յետ տրտմանացն. սա զիարդ պատմէ զիւր նորա աւետարանիչն. «Այլ, ասէ, արտասուք և երաց զանձնացեալս»։ փասն այնորիկ և թագուն նոյն այնպիսի մեղք, զի ապաշխարեաց որպէս 'ի դէպ էր ապաշխարել, թէպէտ և չև էր զենման զենեալ, և ոչ պատարագ մատուցեալ, չև եւս էր բարձեալ մեղացն, այլ առաքելոյն բանադրելոյն։ Այս զի ուսանիցես՝ եթէ ոչ այնչափ առ ծառայութեան էր սրբութիւնն, որչափ յայս թողացուցանելոյ առ 'ի խորհել զնոսա զմենաշէլ զչար մարդկեցունն, և չհակառակել ընդ բանս մխիթարութեանն, և մի մեծամեծս խնդ քան զոյժ խորհել, այլ 'ի միտ առնուլ՝ եթէ չիք ինչ հնար բարեաց խոկալ առանց մեղ ընդել։ և «Եթէ ոչ ոսկր չէնէ զառն՝ ընդդաշնայն զպատուական շինութեան նորա»։ Վասն այսորիկ և առ նա միայն ասաց Քրիստոս, եթէ «Նմանեցաք տառապանաց մարդկել զերեք կերպ գրչերան. և չթողում 'ի ձեռաց, զի մի պատկառեցեն հաւատոց քո»։ Քանզի զէտ էր նմա մեծամեծս, զի զինքն զանձինն եթէ նմա քան զամենեցունն նա քան զնիկչ ըզՔրիստոս, վասն այնորիկ

ճլոյ զառնապէս. և զայլ ևս զգործսն յետոյ նմին լա-
լոյ գործեաց։ Ո՛չ ինչ ինչ արար։ Ի բիւր ձգանս արկ
զանձն յետ այնորիկ, և բազում իրօք ցուցանէր ա-
րութիւն և զօգուտ առաքինութեան։

Ապաշխարհեաց և Յուդաս, այլ չարւոյ իրօք և չա-
րաչար, զի խեղդին անձն և մեռաւ։ Ապաշխարհեաց՝ որ-
պէս ասացի իսկ՝ Կայէն. մանաւանդ թէ չապաշխա-
րեաց իսկ. քանզի արտասուքն ոչ եթէ ապաշխարու-
թեան էին, այլ վշտատեսութեան և ցաւոյն. և յայտ
'ի գործոցն է՝ զոր առ յետոյ գործեաց։ Ապաշխարհեաց
և երանելին Դաւիթ, և ասէր այսպէս. "Լուացից
զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք
զանկողինս իմ թացից"։ և զկնի զգործեալ զմեղսն
յետ այնչափ ամաց և ազգաց իբրև զնոր ինչ ողբայր։

Ապաշխարողին ոչ է պարտ բարկանալ, այլ պատա-
րել որոտաւոր չըլլել՝ բարկութեան և սրտմտութեան, և ամենայն
համբերութեան իբրև զպարտապան, և որպէս
թէ ողորմութեան միայն պարտի կեալ. իբրև զապա-
տուորն առ երախտաւորն երևել. իբրև զապաշխարհ և
զանպիտան, որպէս թէ բազում տանջանաց արժանի։
Եթէ ապաշխարհեալ ոք, չաւրհնալ երբեք, չսպա-
նու, այլ 'ի սուգ լինի. լայ, հեծէ, յոգւոց հանէ, աշ-
խարհէ զլոյս և զերեսն։ Ապաշխարողին չէ պարտ մո-
ռանալ երբեք զմեղսն. այլ զնոյն ասացելն՝ մի յիշել զմ-
եղսն, և իւր մի երբեք մոռանալ։ Ո՛չ է մեք յիշեսցուք
զմեղսն, նոյն մոռանայ. ապա եթէ մեք չյիշեսցուք, և ոչ
նոյն մոռանայ. անձամբ անձանց պատիժս արասցուք,
անձամբ զանձանց ամբաստան լիցուք, և այնպէս հաշ-
տեսցուսցուք զդատաւորն։

Ո՛րք որ խոստովանին, նուազագոյն լինին. և որ ոչն
խոստովանին, ևս քան զևս թանձրանան։ Յորժամ
ամենեցուն յաւելուած զանաստութեան, զխորն մա-
թիցի այնուհետև զդուշանալ՝ զործեալ միւսոյն շան-
կանել, որ յառաջագոյն չխնացաւ եթէ մեղանչիցէ։
Ո՛ն ժխտեսցուք ասացեալ և յուրաստ լիցուք, և մի ա-
կամայ կրիցեմք պատիժս։ Լուաւ և Կայէն յայն, եթէ
"Ո՞ւր է Աբէլ եղբայր քո", և ասէ. "Ո՛չ գիտեմ. մի-
թէ պահապան ինչ էի ես եղբօրն իմոյ"։ Տեսանես
զի ևս քան զևս թանձրացոյց զմեղսն։ Իսկ հայրն ոչ

այնպիսի ինչ. այլ զինչ. յորժամ լուաւ՝ եթէ “Ո՞ւր ես Ադամ: Լուայ, ասէ, զձայն քո և երկեայ, քանզի մերկ էի և թագեայ„:

Մե՛ծ բարութիւն է 'ի միտ առնուլ զմեղսն և յիշել հանապազ. չիք ինչ որ այնպէս բժշկեսցէ զյանցանս իբրև զհանապազորդն յիշատակս. չէ ինչ որ այնպէս դանդաղկոտ առնէ զմարդն 'ի չարիս: Գիտեմ զի սաստկայ և ուսելոց եղանէ ոգին, և չունի յանձին առնջել 'ի խղճէն՝ յորժամ զչարիսն յիշեսցէ. այլ դու սանձեա և դիր վարեղս 'ի բերան. քանզի իբրև զձի սըրմուղ անսխմաստ է, և չկամի գալ 'ի հաւան թէ մեղայ: Այս այն ամենևին իսկ սատանայական գործ է. այլ մեք հաւանեսցուք եթէ մեղաւ՝ զի ապաշխարիցէ և ապրեսցէ 'ի տանջանաց:

Արդ աղէ ասա, զիա՞րդ աղաչիցես ողորմութեան հասանել, որ չեղեր երբէք խոստովանեալ զմեղսն: Ո՞չ ապաքէն որ մեղաւն՝ իցէ ողորմութեան և մարդասիրութեան արժանի. դու զի ոչ երբէք առեր յանձն՝ եթէ մեղաւոր էիր, զիա՞րդ աղաչիցես ողորմութիւն գտանել. յե՞ր վերայ այնչափ անամօթեալ ժխտիցես: Հաւանեցուսցուք զանձինս՝ եթէ մեղաք. մի լեզուաւ միայն ասիցեմք, այլ և մտօք. մի մեղաւոր միայն կոչեսցուք զանձինս, այլ և զմեղսն մի ըստ միոջէ զմտաւ ածցուք, 'ի համար արկցուք, այց և խնդիր արասցուք:

Չասեմ թէ ձաղէ զանձնդ առաջի բազմաց, և ոչ թէ այլոց առաջի ամբաստան լինիցիս զքեզն. այլ հաւանեա մարգարէին որ ասէ, եթէ “Յայտնեա առաջի տեառն զճանապարհս քո„: Ստուգիւ խոստովան լեր զմեղսն, դատաւորին յայտնեա զյանցանսն, յորժամ յաղօթս կայցես. թէ և լեզուաւ ոչ, սակայն յիշատակաւ. և այնպէս արժանի լիցիս ողորմութիւն գտանել: Եթէ ունիցիս զմեղսն հանապազ յուշի, այսպէս ոչ երբէք ընկերին ոխս պահիցես: Չասեմ եթէ ստուգել իսկ զանձնէ թէ մեղաւոր իցես, ոչ այնպէս կարէ խոնարհեցուցանել զանձն, որպէս ինքեանք ինքեամբք իւրաքանչիւր կերպարանքն մեղքն զմիմեանս պահանջիցեն: Նոյնպէս և ոչ ոխս ընդ ումեք ունիցիս, յորժամ զայս զմտաւ ածիցես. ոչ բարկանայցես, ոչ բամբասիցես, ոչ մեծամտիցես, և ոչ 'ի նոյն միւսանգամ անկանիցիս, այլ միտեալ 'ի բարութիւնս յօժարիցիս:

Digitized by Google

Տեառն, մաքրեալ 'ի յիշատակաց մեղացն ծնանիցեն բարութեանցն : Դրեսցուք զնոսա 'ի ներքս 'ի միտս մեր. գիտեմք եթէ սակայն օգտին յայտնապէս գտան յիշատակէ. այլ բանաբարբեսցուք, հարկ 'ի վերայ դիցուք՝ սանձա-կանխեցուցանել յիշատակաւն. մերթ պատժոցն ժամանակաւ, մերթ յիշելով մատուցանելով զմեղսն մեր, և խնդրուածս առնել, զի վաղվաղակի ջնջեսցէ զնոսա : Ապա եթէ ոչ, այժմ մոռանայցես, անդ յիշեսցես և առաջնոյ աչացն ամենայն տիեզերաց ձաղկեսցես. աչացն բարեկամաց և թշնամեաց և հրեշտակաց : Վասնզի ոչ առ Դաւիթ միայն ասացաւ, եթէ "Դու արարեր 'ի ծածուկ, ես արարից ամենեցունց յայտնի" : Թերևս երկեար 'ի մարդկանէ և ամաչեցեր առնել քան զայդ, և զայդ տեսանել ոչ ինչ համարեցար, այլ 'ի մարդկանէ պատկառեցեր : Որ առաւել մարդկան է, ասէ, երկիւղ նոցա. վասն այնորիկ ոչինչ տայցես վրէժս : Յանդիմանեսցէք, ասէ, զքեզ առաջի ամենեցունց, կարգեսցէք կացուցցէք առաջի քո զմեղսն. զի ճշմարիտ է այն՝ թէ յայնժամ ուրուք յանդիմանեսցին մեղքն, թէ ոչ աստէն յիշատակաւ եղծանիցեմք :

Լուր զիարդ ձաղէ անմարդութիւնն և անողորմութիւնն. "Քաղցեայ, ասէ, և ոչ ետուք ինձ ուտել". Ե՞րբ ասիցի այս. միթէ յանկեան ուրեք կամ 'ի սորոմիս. և ոչ ուրեք : Այլ ե՞րբ : Յորժամ գայցէ որդի մարդոյ փառօք իւրովք, և ժողովեսցէ զազգս ամենայն, և մեկնեսցէ 'ի միմեանց զոսա և զնոսա, յայնժամ լու 'ի լու ամենեցուն ասիցէ. յորժամ կացուցանիցէ զոմանս յաջմէ և զոմանս յահեկէ, թէ "Քաղցեալ էի և ոչ ետուք ինձ ուտել" :

Տես զարմեալ և զհինգ կուսանսն որք առաջի ամենեցուն լսիցեն, եթէ ոչ գիտեմ զձեզ զհինգսն. և հինգքն ոչ այնչափ միայն թիւ յայտ առնեն զհնգից. զամենայն չարս և զանողորմն և զամբարշտի կուսանս, և զայնոսիկ՝ որ չիցեն նոյնպիսիք, հնգիւքն ակնարկէ : Այլապէս և որ զմի տաղանդն առ և թաքոյց, և լուաւ որ ինչ ասացաւ իր լսել. և որ զհինգն և զերկուսն առին՝ առաջի ամենեցուն յայտնին, և նոյ խօսի : "Ծառայ չար, ասէ, և վատ" : և զայն ոչ եթէ բանիւք միայն, այլ և արդեամբք իսկ յայնժամ յանդիմանէ, դատելով մատակարարա-

նազիրն ասէ, թէ «Տեսցեն զոր խոցեցինն»։ Միան-գամայն իսկ յարութիւն անմահութեան լինի արդարոց և մեղաւորաց։ Միանգամայն իսկ անմահութեան դատաւորն գայցէ։ Ի մէջ սա որպիսիք ոք յայնժամ լինիցին, որք յանցեալսն արատութեամբ և 'ի չարս մնացեալն. որք 'ի հուր ձգեսցին 'ի ժամանակի այլոց պատժելոց. «Եկայք, ասէ, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնն, որ պատրաստեալ է ձեզ 'ի սկզբանէ աշխարհի». և զայրացեալ՝ եթէ «Երթայք յինէն 'ի հուրն, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա»։

Մ՛ի վայրապար զբանսն լսիցուք, այլ ազդեսցէ հաւատասցուք, եթէ աչօք տեսանիցեմք. և համարեսցուք եթէ այժմ իսկ եկեալ խօսեսցի ընդ մեզ և հրամանեսցէ երթալ 'ի հուրն. Արդարեւ այս ունիցիմք յայնժամ, զինչ մխիթարութիւն, զինչ գործեսցուք յայնժամ ընդ մէջ հրամայեսցելոց կոչելոյ. և զի՞ գործիցեմք, յորժամ վասն յանցաւորութեան պատուհասիցեմք. զինչ պատճառս տեսիցեմք, զո՞ր բարբառ յօդիցեմք, և համբել կարիցեմք. Ոչ ինչ և չգտանիցի ինչ, այլ հարկ լիցի 'ի կապանս մտանել, գլխարկել, քարշել նոյմարեալ, ձգել 'ի արտաքին հնոցացն, 'ի գեհեան հրեղէն, 'ի խաւարին արտաքին, և չգտանել ուրեք ապաստանութիւն, զի չէ և չէ իսկ հնար առ միմեանս անցանել. «Վիհ անդրի վիհ մեծ է ասա ընդ մեզ և ընդ ձեզ». և ոչ՝ եթէ կամիցի ոք՝ է հնար անցանել և ձեռն առնուլ, այլ հարկ լինիցի յանկ տալ, մեղս խոստովանել, և չիցէ ոք՝ որ օգնականն լինիցի. թեթեւ և հայր իցէ կամ մայր, կամ այր ոք իցէ, և բազում համարձակութիւն ունիցի առ Աստ. «Եղբայր, ասէ, ոչ փրկէ, և ոչ փրկիցէ մարդ»։

Եւ արդ զի՞ չէք յայլ ոք վաստակ լինել վասն անձանց փրկութեանն, բայց մինչդեռ յանձինս յեմ մարդկաբութեանն, աղաչեմ ամենեսին զամենայն հնարս հնարել, զի վերջս ապաշխարութեան ունիցիմք և բարիս առաքինութիւն։ Եւ բնաւ յատագանն առնել մի անտես առնել յանձինս, ասա եթէ ոչ՝ զեթ յետ առնելոյն մի նանջեսցուք, այլ ջանի առնել կացցուք բժշկեալ զաղանս ապաշխարութեամբ, արտասուօք, աղօթիւք, ողորմութեամբ. և եթէ ոչ հաստատեսցէ ձեռնդ, ասէ, առնել աղքատութիւն, այլ բաժակ մի ցուրտ ջրոյ ձեռնհաս ես

տալ. թէ և կարի աղքատ իցես, և երկուս խերևէշս պղնձիս ունիս., թէպէտ և կարի 'ի տնանկութեան իցես, և զայն ևս ոչ ունիցիս, սակայն ոտս ունիցիս 'ի տես երթալ հիւանդաց և 'ի բանդ մտանել և զկապեալսն մխիթարել. սակայն յարկ ունիս՝ որ օտարին վանս տայցես ։

Զի չէ, և չէ իսկ ներել այնմ՝ որ չառնիցէ ողորմութիւն ։ Զայս սուէպ առեմ առ ձեզ, զի զանեա 'ի տուէպ առելոյն վճարեսցուք. զայս առեմք՝ ոչ զի նոցա ինչ աւելի խնամ ունիցիմք որոց բարին առնիցէք, քան ձեզ. զի նոցա աստ տայք, և դուք յերկինս առնուք փոխարէն ։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, ընդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ փառք յաւիտեանս. ամէն ։

## ՅԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ ՃԱՌԻՆ

«Հնազանդ լերուք առաջնորդաց» ։ Զինչ, ասէ, թէ չար ոք է, հաւանիմք ։ Զար զիարդ ասես. թէ հաւատոյն աղագաւ, փախիր 'ի նմանէ. մի միայն թէ մարդ իցէ, այլ թէ և հրեշտակ յերկնից իջեալ ։ Ապա եթէ յաղագս վարուց, մի քննիցես... Լուր Քրիստոսի որ ասէ. «Յաթոռն Մովսէսի նստան դպիրքն և փարիսեցիքն»... ունիս զպատիւ, բայց վարուք են անմաքուրք. արդ մի 'ի վարսն, այլ 'ի բանսն նայեցարուք. քանզի 'ի վարուցն և ոչ ոք վնասի... Քանզի «մի դատիք զի մի դատիցիք» վասն վարուցն է, և ոչ վասն հաւատոյն ։ Եւ այլ ևս. «Զի տեսանես զշիւղ յական եղբօր քո, և 'ի քում ական զգերանդ ոչ նշմարես ։ Արդ զամենայն զոր ասեն ձեզ առնել՝ արարէք, բայց ըստ գործոցն նոցա մի առնէք» ։

ՎԱԽՃԱՆ ԹՂԹՈՑ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ

Digitized by Google

Digitized by Google

# ՀԱՏՈՒԱԾՔ

## Ի ԳՈՐԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ

### Ի ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Ստեփաննոս այր լի շնորհօք և զօրութեամբ առնէր արուեստս և նշանս մեծամեծս 'ի ժողովրդեանն”: Տեսանես թէ որպէս առ եօթանսն նա էր նախապատուեալ և ունէր զառաջնորդութիւնն այնոցիկ. զի թէպէտ և ձեռնադրութիւնն հասարակաց էր, այլ սակայն բազմապատիկ շնորհս սա յանձն իւր ժողովեաց. քանզի չափով լոյս իւրաքանչիւր տայր նմ զհոգին: Այլ տես թէ որպէս նախ քան զայս ոչ ինչ առնէր, այլ յորժամ յայտնի եղև ձեռնադրութեամբն. զի ցուցեալ լիցի եթէ ոչ շատանայ միայն շնորհօքն, այլ պիտոյ է լինել և ձեռնադրութեանն, որպէս զի յաւելուած հաւոյ եղև յայսմանէ: Ոչ եթէ լի հոգւով էին, յայտ է թէ 'ի նոյն մկրտութենէն, որպէս էր և կոչմանն:

“Յարեան ոմանք 'ի ժողովրդենէն”: Դարձեալ յառնել զգայրանալն առն և զարիութիւնն: Բազմօր յոյժ առաւել ցուցանէ զզգայնութիւնն զ'ի վերայ յարուցեալսն. և տես սաստ այլ ինչ ձև չարախօսութեանն: Քանզի յայնմանէ արգել զնոսա Գամաղիէլ. զի մի ինչ յաղագս նորա լինիցին ամբաստանեալ, վասն որոյ այլ ինչ չարախօսութիւն յօդեն և 'ի ներքս մուծանեն: “Սա կոչէր, ասէ, Լիբերտացւոց և Կիւրենացւոց և Աղեքսանդրացւոց և որ 'ի Կիլիկեցւոց և յԱսիայ վիճէին ընդ Ստեփաննոսի. և ոչ կարէին ընդդէմ ունել իմաստութեանն և Հոգւոյն որով խօսէր: Յայնժամ հրապուրեցին արս ոմանս ասել՝ թէ լուաք զդորա խօսել բանս.

Digitized by Google

հայհոյութեան 'ի Մովսէս և յԱծ,,։ Տես զինչ ասեն. չարախօսութիւն, ասեն, ասէ և խօսի զԱյ և զՄով-սիսէ։ Ո ի և վասն այսորիկ իսկ վիճախնդիր լինէին, զի հարկ արասցեն նմա ասել ինչ. զոր և Քրիստոսի զնոյն իսկ առնէին։

Իսկ նա մինչ հեռուս յայն յանդիման և առանց ծած-կելոյ լինէր խօսեցեալ. նա և յառաջագոյն իսկ զդա-դարումն Թերևս ասէր զԱծային օրինացն. կամ թէ յայտնի ոչ ասէր, սակայն զնոյն նշանակեալ լինէր։ Քանզի եթէ յայտնապէս ասէր, ոչ էր պիտոյ եկա-մուտ արանց կամ սուտ վկայիցն։

Բայց և զանազան ցուցանէ զժողովուրդսն. կիւրե-նացիս ասէ, որ յայնկոյս էին Աղեքսանդրու, և անդր յԵրուսաղէմ ըստ ազգաց Թերևս ունէին ժողովուրդ, զի բազումք իսկ անդ ժողովեալ լինէին, զի մի՛ լինիցին հարկեալ և նեղեալ առնել ճանապարհորդութիւնս։ Լի-բէացիք Թերևս էին հռովմայեցւոց պաշտօնեայքն. զի որպէս ազատեալ լինէին անդ բազում ատարք, այնպէս և ժողովս ունէին ուր պարտ էր զօրէնսն ընթեռնուլ և աղօթս մատուցանել։

Երբ տեսին զնա ոչ միայն ընդդիմացեալ ամենեցուն զդա-տաստանսն, այլ յաղթահարեալ զգործն և զնշանս, և այս ամենայն և յայտնութեամբ, յորժամ դարձեալ նախանձ չա-րութեան նոցա շարժեցաւ, իբրև 'ի հարկէ յայս հա-սեալ ամբոխ և խռովութիւն յարուցանէին. այլ քան-զի բանքն և հոգւոյն զօրութեամբն ասացեալ էր առ-մենեցուն նոցա, սուտ վկայութիւն։ Զայլազգս որոյ ոչ ախորժէին ձեռս արկանել սպանանել, այլ դատաս-տանաւ, զի և զճշմարտութիւն առաքելոյն ստութեամբ կործանել կամեցան, ըստ որում փոքու թողեալ առ-ասաց եղիցի. որպէս զի այսու զարհուրեցուցեն զնոսա։ Եւ ոչ ասացին եթէ խօսի, այլ եթէ ոչ դադարէ խօ-սելով։

„Եւ խռովեցին, ասէ, ,, զժողովուրդն և զերիցունս և զդպիրսն, և հասեալ 'ի վերայ յափշտակեցին զնա և ածին յատեանն։ Եւ կացուցին վկայս սուտս որ ասէին. այր այս ոչ դադարէ խօսել զբանս հայհոյութեան զտեղւոյս սրբոյ և զօրինացն,,։ Ոչ դադարէ, այսինքն գործ սովորեալ ունի։ „Լսեալ 'ի դմանէ զի ասէր, թէ

Յիսուս նազովրեցի նա քակեսցէ զտեղիս զայս և փո-խեսցէ՝ զօրէնսն զոր ետ մեզ Մովսէս ,,. նազովրեցին ասեն նախատելով. «Քակեսցէ զտեղիս զայս ,,. զայս ինչ և յաղագս Քրիստոսի ասէին՝ թէ «Քակեցից զտաճարս զայս զձեռագործ ,,. և դարձեալ ՚ի խաչին. «Վաշ որ քակէիր զտաճարն ,,: Քանզի բազում նա-յաս փայլեթ ույժ և յոյժ ախորժելի տաճարին, որով զբա-րախօսութիւնն առաւել ներելոյ Ջանային յուցանել, որ-պէս թէ զնմանութիւնն նոցա փոխել ախորժելով. և զտաճարն քակել. և յաղագս ՚ի մէջ բերելոյ յանուա-նէ զՄովսէս կրկին էր չարախօսութիւնն, եթէ փո-խեսցէ զաւանդական օրէնսն, և եթէ զայս ՚ի ներքս մու-ծանէ. Տեսանե՞ս մինչեւ զատն է չարախօսութիւնն և մի մեղաց.

«Եւ հայեցեալ ՚ի նա ամենեցուն որ նստէին յատե-նին, տեսին զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի ,,. Այսպէս և ՚ի փոքր առաւօտանն է փայլեալ մեծութե որ կամէցին. Քանզի, ասա ինձ, զինչ նուաստագոյն սա քան եթէ առաքելոցն՝ ընկալեալ էր. ՚ի Տեառնէ ոչ էր նուաստեալ, և համարձակութիւն բազմապատիկ ցուցա-նէր. «Տեսին, ասէ, զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշ-տակի ,,. Քանզի այս իսկ էր շնորհքն. այսպիսի ինչ էր և փառքն Մովսէսի, որով խնդալից զնա արար ինձ, զոր և տեսանելի կոչեցն ՚ի շնորհս առ Աստուածնաւի առա-ւելութեամբ փայլեալ, և բազում և անչափ լցեալ ու-րախութեամբ. Եւ քանզի համարձակեալ էր ասել ինչ, տեսանի վաղվաղակի երեսօքն հրացուցանէ զնոսա. քան-զի էր և ՚ի գէմս տեսանել զբոսմ շնորհաց հոգւոյն, ցանկալի և սիրելի փափագողացն ՚ի հաւատս և ՚ի յու-սահաստատութեան; զարհուրելի և ահարկուելի թշնա-մեացն և ատելեաց. Այսց այսու և զպատուհասն վասն որոյ ներկեցին հրապարակաբանութեան նորա.

«Ասէ քահանայապետն՝ թէ արդարեւ այդ այդպէս իցէ ,,. Տես համբերող հեզութեամբ հարցանէ, զի մեծ ինչ չար գործեցէ, զոր և ընդ Քրիստոս հարցանէր. վասն որոյ և նա հեզաբար սկսեալ լինի ջատագովել և ասէ. «Արք եղբարք և հարք, լուարուք ինձ. Աստուած փառաց ե-րեւեցաւ հօր մերում Աբրահամու մինչդեռ ՚ի Միջա-գետս էր, մինչ չև բնակեցուցեալ էր զնա ՚ի Խառան ,,:

Սաղխաղակի յառաջաբանութիւն զխռովեցեալն նոցա մեծ 'ի բաց բառնայ, և կազմէ 'ի ձեռն ասացելոցն՝ եթէ ոչ ինչ է տանջանքն և ոչ հրին սովորութիւնքն, և եթէ ոչ լինելին յաղթել քարոզութեանն։ Այլ զայս ասէ անկասկածաբար, և ցուցանէ թէ յանհնարինս միշտ ա՟ծ ըզդիւրահնարսն կազմէ։ Որպ. տես 'ի ձեռն այսոցիկ յօրինեալ զաստուածաբանութիւնն, և զի բազում մարգարէութեամբ վայելեալք՝ ներհակաճոցն զբարերարն փոխատուրեցին, և զի յանհնարինան լինելին զձեռս ձգեալ։

"Աստուած փառաց, ասէ, երևեցաւ Աբրահամու 'ի Միջագետս"։ Այլ անդ տաճար ոչ էր և ոչ զենմունք, և ամենայն տեսութեանն Աբրահամ արժանացեալ լինէր, և նախահայրս քաղդէացիս ունէր, և յօտար երկրի էր։ Այլ բարիոք արդ սկսանելով ա՟ծ փառաց կոչեաց. քանզի յայտնէ այսու եթէ զանպատուութեան փառաւորեալս արար. "Զի նա, ասէ, որ զնոսա փառաւորս արար, և զմեզ արասցէ"։ Տես թէ որպէս զնոսա 'ի բաց տանի 'ի մարմնականացս ընծայից. և նախ առժամայն 'ի տեղւոյն, քանզի բանն յաղագս տեղւոյն էր։ Աստուած փառաց, ասէ. զի դարձեալ ոչ կարօտացեալ լինի առ 'ի մէնջ փառաց, որ է 'ի ձեռն տաճարին։ Զի նա է աղբիւր փառաց, և 'ի նմանէ է ամենեցուն փառք. ապա մի կարծիցէք այսպէս փառաւորել զնա։ Որդ. որպէս ասէ զիրն եթէ հայրն Աբրահամու կամեցաւ ելանել. աստուստ ուսանիմք եթէ տեսլեանցն ինքն Աբրահամ շարժեալ ելև առ յելանել։

"Այլ ասէ ցնա. ել յերկրէ քումմէ և յազգէ քումմէ, և եկ յերկիր զոր ցուցից քեզ"։ Ցուցանէ եթէ սոքա ոչ էին որպէս զաւակք Աբրահամու. և եթէ որպէս նա հնազանդ և հաւան էր, և [1] նոքա անհաւանք։ Այլ յազգէ քումմէ, ասէ։ Արկաքանչիւրքն յայժ ծանուցք էին։ Այլ ցուցանէ թէ նա աշխատանացն հանդուրժեաց, և որոց զպտուղն հաւաքեցէք, և եթէ ամենեքեան նախահարքն 'ի նեղութի և 'ի չար կիրս էին։

1 Գաղկանէր յօրինակին և նոքա անհաւանք. յաւելաւ 'ի յանձնէ։

Digitized by Google

## Ի ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՃԱՌԷՆ

Եւ արդ եթէ մեծագունիցն և զքանչելի արանցն մեծ էր նեղութիւնն, ապա մեզ յոյժ մանաւանդ։ Եւ եթէ կամիք, զնոյն իսկ զնեղութիւնն ըստ ինքեան քըննեսցուք։ Եդիցի որ խնդացեալ յոյժ և փափկացեալ և լքեալ· զինչ իցէ խայտառակագոյն կամ զինչ իցէ անմտագոյն քան զնա։ Եդիցի և այլ ոմն ցաւօք վշտացեալ և տրտմեալ· զինչ իցէ քան զնա իմաստասիրագոյն· զի "Լաւ է, ասէ, երթալ 'ի տուն սգոյ քան 'ի տուն ուրախութեան և ծաղու,,։ Այլ թերևս արհամարհիցէք զասացեալս· սակայն տեսանիցեմք թէ որպիսի էր Ադամ 'ի դրախտին և որպիսի յետ այնորիկ, որպիսի էր Կային յառաջագոյն և որպիսի էր յետ այնորիկ։ Վասնզի ոչ լինի դադարեալ 'ի վերայ ուրուք հիմանն հոգի· այլ որպէս 'ի ձեռն հեղեղի ումեմն 'ի ձեռն հեշտութեան բարձեալ լինի և փքացեալ, ոչ և մի ինչ ունելով հաստատուն· առ 'ի խոստմունս դիւրագոյն, և առ յանձնառութիւնս դիւրընձեռելի· և ուժգին է մերինն մտածութեանց 'ի խորհուրդս անհամբերս, տարաժամ ծաղրն, ոչ պայծառ բանիւ զարդարեալ և ըստ մարմնոյ զգաստութեամբ յօրինեալ, բանից շաղփաղփութիւնն յոյժ և ասելի։

Եւ զի ասացից զայս· 'ի սրբոցն մի որ ընձեռեալ լիցուք, և տեսանիցեմք թէ ո որ էր 'ի հեշտութեան գալով և ո որ 'ի տրտմութեանն։ Եւ եթէ ախորժէք, զնոյն ինքն զԴաւիթ տեսանիցեմք· յորժամ 'ի հեշտութեանն էր և 'ի խնդութեանն, և 'ի բազում արիութեանցն և յաղթութեանց, 'ի պսակացն և 'ի փափկութեանց և յոյժ վստահութենէն՝ թէ որպիսի ինչ ասաց և գործեաց· "Ես ասացի, ասէ, 'ի բարեկենդանութեանն իմում թէ ոչ սասանեցայց յաւիտեան,,։ Այլ քանզի 'ի նեղութեան եղև, լուր զինչ ասէր· "Թերևս տացէ ինձ Տէր տեսանել զգեղեցկութիւն դորա· և եթէ ասիցէ թէ ոչ կամիմ զքեզ, ահաւասիկ ես՝ արասցէ ինձ որ ինչ հաճոյ է առաջի նորա,,։ Ո՛ ինչ իցէ քան զբանս զայսոսիկ իմաստասիրագոյն· զոր և ինչ իցէ այ օրինելի, այն վեցի։ Եւ դարձեալ ընդ Սաւուղ ասէր·

«Եթէ տեառն շարժեալ է զքեզ 'ի վերայ իմ, ձեռնձերեսցի»․ այսինքն ուրախ և պայծառ եղիցի պատարագդ քո։ Եւ յայնժամ 'ի նեղութեան գոլով, 'ի թըշնամիսն խնայեալ լինէր․ իսկ յետ այնորիկ և ոչ 'ի բարեկամսն և յայնոսիկ որ ոչ ինչ էին զնա անիրաւել։

Եւ դարձեալ Յակոբ յորժամ 'ի նեղութեան եղև զինչ ասէր․ «Եթէ տայցէ ինձ տէր հաց ուտելոյ և հանդերձ զգենլոյ»։ Եւ որդին Նոյի յառաջագոյն ոչինչ արար այնպիսի․ այլ քանզի քաղցեալ եղև վասն փրկութեանն, տես թէ որպիսի եղև ամբարտաւան։ Եւ Եզեկիաս յորժամ 'ի նեղութեանն էր, տես թէ որպիսի իրս արար յաղագս փրկութեանն, և խորգ ըղձեցեալ եղև և այլ ինչ որ այնպիսի է․ այլ քանզի 'ի հեշտութեանն եղև, անկաւ 'ի բարձրութենէ սրտի իւրոյ։ Վասնզի «Զգոյշ լեր, ասէ, անձին քում․ յորժամ ուտիցես և լնուցես և յագեսցիս, զուցէ մոռանայցես զտէր ա͞ծ քո»։ Վասնզի բարձր և դժուարին է տեղի խրախութեանն, վասն այնորիկ ասէ՝ զգոյշ լեր անձին քում։ Իսրայէլացիքն յորժամ 'ի նեղութեանն էին, այնչափ յոլովագոյնս լինէին․ իսկ յորժամ թողացան և 'ի նեղութենէն ազատեցան, ամենեքեան կորուսեալ եղեն։

Եւ զի՞ ասեմ 'ի նախնեացն զյարացոյցն․ այժմ իսկ տեսանեմք առ մեզ։ Ո բարգ թուի ձեզ, ո՞չ յորժամ 'ի հեշտութեանն իցեմք, յոլովագոյնս բարձրամտեալ լինիմք․ ամենեցուն թշնամիք, բարկացողք, մինչդեռ իշխանութիւնս առ ձեռն իցէ․ իսկ յորժամ բարձեալ լինի, հանդարտեալք լինիմք․ քանզի խոնարհք յինքեանց բնութենէն 'ի մտածութիւն եկեալ լինին։ Վասն այնորիկ ասէ․ «Կալաւ զնոսա ամբարտաւանութիւնն նոցա․ արկան իբրև զհանդերձ զամբարշտութիւն և զանիրաւութիւն․ ելցէ որպէս 'ի ճարպոյ անիրաւութիւնք նոցա»։ Արդ այսոքիկ ասացեալ ինձ եղեն զի մի ամենայն օրինակաւ խնդրիցեմք զխնդութիւն դիւրութեանն։ Իսկ արդ Պաւղոս զինչ ասէր․ «Ուրախ լերուք յամենայն ժամ»։ Ոչ ասաց պարզաբար խնդացէք, այլ յաւել 'ի տէր։

Ո՞րն է մեծագոյն խնդութիւն, որոց առաքեալքն էին խնդացեալք 'ի բանտից կամ 'ի գանից կամ 'ի հալա-

ծանծաղ կամաւ ի կարասցուք ինչ լսելոյ, այնոցիկ որ ի սուտանուն կամօքն յանմտութեան սխալեալք և զարհուրանս և զխնդութութիւն[1], փառս որոց և 'ի քաղցր կատարած լինելոյ հասանելոյ։ Իսկ որ աշխարհիս է, այնոցիկ ներհականաց է. քանզի սխալեալ լինին 'ի հեշտութենէ, և փախճանին 'ի տրտմականեան։ Ոչ թէ ես արգելում խնդալ 'ի սեր, այլ և յոյժ փոյթ ողջեամ. Տառապեալքն տանջեալ լինելոյն և խնդալոյն, քարկոծեալ և քարոզէին. Օ այսպիսիս և ես սփոփեմ զխնդութիւնս. որ ոչ և 'ի մերձե մարմնականս կրեալ սխալեալ լինին, այլ 'ի հոգևոր խնդալ։ Քանզի ոչ գոյ այնմ որ ըստ աշխարհիս խնդացեալ լինին, համանմանս և ըստ ող խնդալ. Քանզի որպէս որ յաշխարհին խնդացեալ է, հարստութեամբ խնդայ և փառաւորութեամբ և փառօք և բանաւորութեամբ և ամբարշտութեամբ. իսկ յոյժ խնդացեալ՝ անմաքութեամբ փառս նորին, անմեղութեամբ, անպատկառութեամբ, ազնիւ և աղօթիւք, խոնարհութեամբ։ Տեսանես զի ներհականք են նմանութեանս. զի որչափ արտաքոյ խնդութեանն են ասանոր, ազատ են 'ի տրտմութենէ. և որչափ արտաքոյ են 'ի տրտմութենէ ասանոր, նոյնք և 'ի հեշտութենէ։ Իսկ ճշմարտութիւն այսորիկ են որ առնեն ճշմարիտ խնդութիւն. քանզի այնորիկ առնուանց մեռոյն կոչին խնդութիւն, այլ անմենայինս 'ի տրտմութեան լինին կացեալ։

Որչափ տրտմութիւն ունի ամբարշտութիւն, մոլեն յանմտութենէ հասեալ լինի նոյն իսկ ամբարշտութենն և 'ի բերան անարգանաց անձին իւրոյ տարիք լինելով. բազում ունի տառապութիւն, մեծ թշուառութիւն, յոյժ մախանս, բազում յաշտանս. եթէ 'ի մեծ ամանից անարգեալ լինի՝ զաւակին, և եթէ անմենեցան ոչ լինի մերձաւորեալ՝ զիծեալ լինի։ Իսկ խոնարհն 'ի բազում հեշտութեան է, ոչ և մի ունի աքն ունելով պատուաւ։ Իսկ եթէ զիջուցանէ պատուեալ՝ [illegible], և եթէ ոչ լինիցի պատուեալ՝ ոչ զաւակին, այլ ընդունի զի ոչ եղև պատուեալ. և ժամանակ զայս ոչ և մի որ խոնդրեացէ։ Տեսանես արդեօք զի ոչ խնդրելոյն պատիւ և պատուեալ լինելոյն բազում իցէ հեշտութիւն։ Իսկ այց

1. Ի բնագրութեան՝ օրինակին եղեալ [illegible]։

անոր անձնայնիւ ներհակն լինի. և խնդրէ պատիւ և ոչ լինի պատուեալ: Նոյն և ոչ նախանձայեալ հեշտացեալ լինելն պատուովն որ խնդրէին և որ ոչն խնդրէ. զի նա որչափ և առնու, ոչ ինչ վարկանի առնուլ. իսկ սա թէպէտ և փոքր ինչ տայցեն, իբրև թէ զամենայն առեալ ընդունի:

Պարծեցաւ որ 'ի խոնարհութենէ՝ բազում դժուարութիւնս ունի. թէպէտ և դիւրաւ արդեօք յաղթերութեանց մասամբ նմա հասեալ լինիցի, և ս զահի հարկանելով առ 'ի խոնարհութեանցն դժուարութեանց և վասն անձնայա հանդերձելոյն: Իսկ սա հանապազ յաղթութեան է և 'ի հեշտութեան, քանզի սովորեցուցեալ է զանձն իւր վարել ըստ իրաց. և ոչ պէտեա զանձն իւր տառապեցուցանէ զի ոչ հազարդի սեղանոյ պատուականի, այլ և խրախացեալ լինի ոչ զահի հարկանելով յանդգա հանդերձելոյն:

Նա և զայլ դժուարութիւնս, որոց ոչ էք անդէտ, այժմ հարկաւոր է ասել՝ թէ կրկին է պատերազմ, հագւոյ և մարմնոյ. կրկին է իրս ձմերայնոց, կրկին է և հիւանդութիւնս այս. և ոչ այս միայն, այլ զի և անբժշկելի է և բերէ զպատահարս մեծամեծս: Իսկ նըւաստութիւն և չափաւորութիւն ոչ է այսպիսի, այլ կրկին առողջութիւն, կրկին բարութիւն: “Պուն, ասէ, առողջ և անհոգ 'ի մարմնի չափաւոր„: Յամենայնի չափաւորն փափագելի է, իսկ անչափն՝ ոչ ևս: Պ՝անզի սա ինձ, եթէ 'ի վերայ փոքր ինչ կայծականի փայտ հաւաքես բազում, ո՛չ փոխանակ բոցոյ և հրոյ բազում ծուխ և մրրիկ տեսանիցես: Նա առն յայժ մեծի և զօրաւորի եթէ բեռն դիցես 'ի վեր քան զկար իւր, ո՛չ տեսանիցես զնա 'ի գետին անկեալ և յառնել ոչ կարացեալ: Նոյնպէս և 'ի նաւ եթէ արկցես բեռն բազում, դժուարին արասցես զնաւարկութիւնն և ընդփոյթ. իբրու այսպիսի ինչ է տեսանել: Որպէս 'ի վերայ[1] բեռնաւորեալ նաւացն բազում է աղաղակ նաւավարացն զվարիչսն ունել և յառաջապահ նստել, և այլոց նաւաստեացն զ'ի վերայ կահան ընկենուլ 'ի ծով և փութալով թեթևացուցանել, այսպէս և սա սե-

1 Օրբ. խանձարեալ էր, և ջնջեալ 'ի յաջմէն 'ի վերայ բեռնաւորեալ

տանելոս բաղխումն լինի 'ի վերայ արտաքնահանելով և բաղխումն լինի 'ի ներքոյ, զանձինս ապականեն և կորուսանեն. և որ լինի անձնեցուն զարշելի է, 'ի բերան տանել լինելոյ զպէտս ներքին անդամոցն։

Որք լինիցին մեզ արդեօք բան զայնպիսին անհարթութեան և զարշելի։ Որպէս եթէ առ բերանոյն այսպիսի խայտառակութեան լինի, զանազան ած եթէ 'ի հաղուածս զինչ լոյծ և արգելուլ։ Վասնզի և 'ի նմին անձնայն մեզ մէջ էր անձնայն խառնար և մերին. բաղխումն է և խորհրդոցն աղտաղանջն 'ի վերայ յենլով և ներգելով՝ նորին անձին ըղձաւորձանութեան գործելով. անձնեցուն զգեստանս արտաձառելով, առաջելով և ողջելով, և զ'ի ներքոյ հաւաքեալ աղբեան արտադրել աղտք։ Այլ յետ 'ի բաց ընկենլոյն, և ոչ այնպէս չարեաց կուծն զաղարեցաւ. այլ ընդ սէ և խօթութիւնք շարժեալ լինին։

Այլ զինչ, ասէ, տեսանեմք զայնպիսի զխորախացեալն ընչնութեանք 'ի վերայ երիվարաց բերեալս. դու զի, ասեն, շաղփաղփեսս մնաս՝ խօթութեանս նոցա և ցաւս տանելով. խօթացեալ են եմ և դողացեալ և խայտառակեալ որ ոչ ունիցին ինչ ուտել։ Այս լինի, զի հաղաչանաց արժանի են բանիցդ այդոցիկ։ Որք զգաստեալն առնեն և զկերեալն աթառով և զարտատանեալն ստամոքս եղեալ տեսանեմք, առա լինի։ Այլ եթէ զորան անհարթահանս ոչ կարծեմ, թերևս և յանուանէ 'ի մէջ ածելի զնոսա։

Այլ են անձինք որք և առողջք են. քանզի ոչ միայն խորախութեանցն լինին արտաքսեալ, այլ և յաշխատութիւնս. Տուր ինձ մարդ յանձնասիրի պարապեալ, առանց աշխատանաց և ցնորից կացեալ։ Այլ եթէ բութեան որ զազգանութիւն բժշկաց շուրջ զինովա լինիցին, ազատել զայնպիսին 'ի ցաւոց ոչ կարեն. քանզի և ոչ իրքդ այդ հեռեալ լինի ըստ բնութեանն։

Բժշկական ասացից ձեզ բան. յայտնեսցէ որ յարտաքսոյնս կերեալ՝ ոչ անձնայն 'ի սնունդ լինի. քանզի և ոչ նոյն խակ կերակրոյն բնութիւնն անձնայնն մնացական է, այլ է ինչ 'ի նոցանէ որ յարտաքսութիւնն լուծանի և ինչ 'ի սնունդ։ Որք եթէ կատարելապէս հալեալ լինիցի, այսպէս լինի, և երկաքանչիւրք զընտանին սահման ընկալեալ. զի առողջն և աւուրանացուն յիւրն

ընթացաւ անդի, իսկ աւելորդն և անպիտանն արտաքսա-քեցաւ անտի եւս: Այլ եթէ բազմութիւն լինի կերակ-րոց, որչափ 'ի նմանէ ամենապակասն է, այն իսկ մնացեալ 'ի մարմին յաւելորդ և 'ի նոյնպիսիսն փոխի: Նոյն և օ-ըմպելեաց առաւելոյ, որ ձեռն հասարակի ըմպելի: Զորօրինակ է ինչ որ [illegible] առնէ, և է որ [illegible], և է որ թեթև: Այլ եթէ աղօրհին զօրաւոր է առ [illegible], ամենայն եղև ըմբռ-նեալ. արդ եթէ յոլովագոյն 'ի նմա արգելեալ մնայ, ա-մենայն չփոխեցաւ: Պարզեալ և զինի եթէ արտաշա-ժաւոր զօրծանաւութեանն հանդիպեալ և 'ի դեղ [illegible] խառնեալն, նախ ամենայնիւ հասանելի [illegible] մնալ. իսկ յետ այնորիկ [illegible] 'ի [illegible], և [illegible] 'ի [illegible] ըմբռնեալ 'ի [illegible], և [illegible] 'ի [illegible] հա-ղորդելոյն. և այն ինչ որ [illegible] է, ոչ [illegible] փաղփաղուկի զատանի: Պարզեալ և այն որ զինւոյն [illegible], ոչ զինի է և ոչ մրուր, այլ խառնեալ եր-կաքանչիւրոցն: Ոչ այն զոր թերևս առ զերա ան-նոյն որ. յորժամ [illegible] խառնեն, յորժամ [illegible] մնացեալ և ոչ եկեալ 'ի լոյս, և թանձրութեանցն [illegible] խառնեալ [illegible]. այլ և առ մեզ լինի լեալ: Յորժամ [illegible] 'ի [illegible] հա-սեալ լինի [illegible], զամենայն ինչ [illegible] չարժեալ և [illegible] հարցումն զայն որ ոչ եկն և յատակութեան կենդանեաց:

Արդ քանզի յայսպիսի յարացուցից մեզ ցուցա-ցեալ եղև բազմութիւն մնացեալ, դարձեալ [illegible] զայն [illegible] է եղեալ [illegible]. Նա և [illegible] Իսկ եթէ զու [illegible] [illegible]. [illegible] թիւնն [illegible]: Ոչ [illegible] և [illegible] թէ [illegible] թիւնն [illegible] է [illegible] թեան: Այլ և ոչ [illegible] [illegible] թիւնն [illegible] [illegible] թիւնն [illegible], այլ [illegible]: Ողջամտի և Պաւղոս [illegible] [illegible] եթէ «[illegible] կերակուր և [illegible], [illegible]»: Արդ [illegible], որ [illegible] [illegible] զոր ինչ պարտ է առնել 'ի [illegible] 'ի [illegible] մեր, ընդ որում [illegible] և [illegible], [illegible] թիւն և [illegible] և [illegible] և յանխտանս [illegible]:

# ՀԱՏՈՒԱԾՔ

## Ի ՅՈՀԱՆՆՈՒ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ,

### ՄՆԱՑՈՐԴՔ Ի ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵՆԷ

---

### ՅԱՌԱՋԻՆ ԺԱՌԷՆ

Որք արտաքին հանդիսիցն տեսողք են, յորժամ լսիցեն զքաջ զոք և զհանդիսաւոր և զպսակեալ, եկեալ ամենեքեան առ հասարակ ընթանան, որպէս զի տեսանելով զհանդէս նորա և զարուեստն և զամենայն զօրութիւնն։ Եւ ախորժելի գոյ ամբողջ տեսարանն, տեսանել բիւրուց բազմաց բոլորեցունց անդ, և զմարմնոյն և զմտաց յարձակեցուցեալ զաչս, իբր զի մի ինչ յեղելոցն զանց առնել 'ի նոցանէ։ Եւ յորժամ ոք արգեօք երաժիշտ հասցէ, դարձեալ նոյնպէս լնուն զտեսարանն, թողեալ զկարեւոր ինչ զգործսն որ 'ի ձեռսն ունին, բազում անգամ և զձեռպելլիսն իսկ, և երեւեալ նստին. բազում փութով և երգելոյն և հարմանց լսեն,

Աշխարհիկ թարգմանութիւն։ Ի հանդիսին [illegible] արտաքին [illegible] յորժամ [illegible] մարտիկ զոք մեծազօր յաղթական պսակեալ [illegible] լսիցեն, [illegible] առ հասարակ ամենեքեան 'ի [illegible], զի և տեսանել և [illegible] զօրութիւնն և [illegible]։ Եւ անդ [illegible] տեսանել [illegible], [illegible] 'ի տեսանել, զի մի ինչ [illegible] որ ինչ 'ի մէջ նոցա գործիցի [illegible]։ Դարձեալ [illegible] 'ի մէջ նոցա [illegible], [illegible] ամենայն [illegible] յօժարութեամբ [illegible], [illegible], որ ինչ [illegible]

և զերկաքանչիւրոցն իսկ ուսմանցն զհամաձայնութիւն ։ Այսպիսի և բազումք որք ճարտասանական հնարհացն փորձք, դարձեալ և նոքա առ իմաստասէրսն զսոյն զայս գործեն ։ Վասնզի և է նոցա ուսուցան և լեզք և հարմունք ձայնից և տանջումն ճառեղացն յետին ։

Իսկ եթէ ճարտարասանականացն երաժշտականացն և հանդիսաւորացն ուսողք և լսողք այնքան յօժարութեամբ նստին, մինչ և ևս առաւել արդեօք փոյթ և յօժարութիւն իցէ շնորհել արդարոց, ոչ երաժշտի ո-րուք և ոչ իմաստասիրի նուագելով այժմ 'ի հանդէս, այլ առն որ յերկնից բարբառի և պայծառագոյն քան զարուս թողու զձայն ։ Վասնզի զամենայն տիեզերս ընկերանեաց, և հասեալ գոչմանէ այսպէս վերագոյնս վերակարգալ, ամայլին շնորհօք վարժեալ զնեզուն ։ Այլ որ սքանչելին է, այնպէս մեծամեծս գոչէ, զի ոչ գոյ խաշորութիւն և ոչ անախորժելի ։ այլ քան զամենայն երաժշտականութիւն քաղցրագոյն և ցանկալի է և պատրել գիտէ առաւել ։ և առ այնասիկ ամենայն սարսելի և սրբագոյն ։ և այնչափ լի են ճառեալք և այնքան ունի բարութիւնս, զի որք ստուգութեամբ և յօժարութեամբ ընդունին և պահեն, չէ արդ նոցա մարդիկ լինել և յերկրի մնալ, այլ գերագոյն կալ նոցա քան զա-

զատանել ինչ մարթասցին ։ Եւ այս արտաքին խառնաձայնանձ բարգմութեանն ։ Արդ եթէ ճարտարապետք հանդիսորացն ճախարակեալս սեթեւեթեալս բանիւք' փիլիսոփայքն 'ի մէջ մտանիցեն ։ քանզի զան և նոցա թատերք և հանդէսք նուագոց, կոփիւնք և զարփիւնք և անհրարին կշռութիւնք և ընարութիւնք բանիցն ասացելոց ։

Իսկ արդ եթէ ճարտարութեան բանիցն իմաստութեան և քաղցրութեան երգոցն արուեստականաց և բանութեամբ քաղցութեան և արանցն ձգնութեանց այնչափ մարդունք մխախուան 'ի լսելիս և 'ի տեսանելիս մեծաւ յօժարութեամբ զինեալ շուրջ նստեալ զեղեխիցեն, որչափ առաւել և պատշաճ է փոյթ և յօժարութիւն մեծաւ պահելոյ մտօք առ մեզ մատուցանել ։ Զի եթէ ոչ եթէ ընտրութիւն ինչ երգոց արուեստականաց, ոչ ընդունայնապարծ ինչ բանութիւն ընկեր մերկամարտիկ ձգնութիւն պատմելոց նել, և ոչ զճարտարութիւն հանդիսացն, այլ ամենայն շնորհօք 'ի լեզուին ասասցանելոյ ։ Եւ անդ էր ըն-քանչելիս 'ի վերայ սքանչելեաց տեսանել ։ զի այնչափ մեծ էր գոչիւնն, և բարբառն ոչ էր ձանձրանձայն և ոչ խեխտ զժկամակ լսելեաց, այլ քաղցր քան զամենայն երգս արուեստականաց ցանկալի և անձկալի և ախորժելի ։ զի քաղցրացուցանել մարթ էր զամենայն միտս և զլսելիս ։ և 'ի վերայ այսր ամենայնի սրբագոյն սուրբ և զարմանալի ։ և այնչափ լի էր անճառ ճառիւք, և այնչափ բարութեամբ յանձին բարձեալ բերէր ։ զի որ միանգամ զնոսա ընդունելին, զանձինս երկնաւորս

Digitized by Google

մեծացն կենդանարարականս և առ հրեշտակականս դիմեալ յանդգնեն, և խօսել յերկինս այնպէս յերկիր բնակել։

Վասնզի որդին որոտման սիրելին Քրիստոսի, սիւնն որոց ընդ տիեզերս եկեղեցեաց, որ զփականս երկնից ունի, որ զբաժակն Քրիստոսի էարբ և զմկրտութիւնն մկրտեցաւ, որ զտէրունականն լանջօքն անկեալ բազում համարձակութեամբ՝ նա մատնէ այժմ առ մեզ, ոչ զործ ինչ կեղծաւորելով, և ոչ դատապարտական ծածկեալ զպղտութիւն. քանզի ոչ ինչ ձայնէ այսպիսիս. ոչ ի համաձայնողին մերոյ զերգս եղանակելով. և ոչ զկաքաւիչ ատամբն ատարահարկանելով, ոչ հանդերձիւք ոսկեհուռիւք. այլ մատնէ ունելով հանդերձս յորում անբաւ գեղեցկութիւնն է։ Վասնզի զՔրիստոս զգեցեալ է, և յոտս ածեալ զպատրաստութիւն աւետարանին խաղաղութեան. և զգօտին ոչ շուրջ զլանջօքն ունելով, այլ զմէջն. ոչ ի կեղեւոյ որմանենեաց և ոչ ի մետաքսոյ ծծեալ ոսկւով, այլ ի ճշմարտութենէն հանգուցեալ և բաղկացեալ։

Նա երեւեցաւ ի մեզ այժմ, ոչ զոլով ի մեզ կեղծաւոր. վասն զի ոչ ինչ է առ ի նմանէ կեղծաւորութիւն և ոչ պաճուճանք և առասպելք, այլ մերկ գլխով զմերկն աւետարանէ զճշմարտութիւն։ Եւ օտար զոլով՝ օտարոտիք հաւանեցուցանէ զլսողսն ձեւով՝ ակամա-

նջնահեան ի մարդկի չհամարէին, այլ ի վեր յերկինս բնակեալ ի հրեշտակաց միջակս, զերկրաւոր բնակութիւնս յերկինս հաստատէին։

Զի նոյն ինքն մեզ որդին որոտման սիրելին Քրիստոսի, սիւնն ամենայն եկեղեցեաց տիեզերաց, որ զփականս ունէր զերկնից, որ զբաժակն ըմպելոց էր զՔրիստոսի, որ զնոյն մկրտութիւն մկրտելոց էր ընդ Քրիստոսի, որ զլանջօքն անկեալ կայր զտէրունի, համարձակապէս մեծապարգեւ մատնէ ասացեալ, ոչ երգս միապաղաղ ի բերան առեալ, և պաճուճեալ զիմակօք զերեսս զլխովն հանդերձ ծածկեալ. քանզի և բանքն իւր չեն այնմ նման. և ոչ յաշտիճան ոսկին կաքաւաձեւ բախելոյ, ոչ ի հանդերձս ոսկեհուռս զարդարելոյ. այլ ի հանդերձս մտանէ յանձնարինս գեղոց զարդարելոյ։ Զի մատնէ ասացեալ զՔրիստոս ինքն զլխովին զգեցեալ. ի մէջ մեր մատնէ զոտս ի գեղ զարդարեալ պատրաստութեամբ աւետարանին խաղաղութեն։ Զկայնակամարն ոչ զկրծիցն կապեալ, այլ գօտի ընդ մէջ իւր կապեալ. ոչ ի գոյն ոսկւոյ պաճուճեալ, այլ ճշմարտութեամբ անկեալ և արդարութեամբ։

Այսպիսիս ասացեալ եկն եկաց ի միջի մերում. ոչ եթէ զեղերամայր առնէր անէր բանիւք պաճուճելովք՝ այլ ընդ այլս կեղծաւորեալս ցուցանելով, այլ մերկագլուխ ապատապէս առանց պաճուճանաց զար-

ուսութեանց՝ ձայնիւ. ոչ նուագարանաց կարօտ գոլով առ պատանութեան, իբր թէ տաւղի կամ քնարի կամ այլ ինչ սպասաւորաց. այլ զամենայն եղանակն յարգայէ, քան զամենայն տաւիղ և քնար քաղցրագոյն և պիտանագոյն արձակէ:

Ի նորա բնակութիւն երկինք ամենայն. թէպարտն տիեզերք ամենայն. աստեղք[1] և զօրք հրեշտակք ամենայն, և 'ի մարգարէական ոգւոյն իբրև հրեշտակ հանդիպեալն գոլով և կամ լինել ցանկանայցէս. Սրանուր նոքա առաքաւորք կարեն լինել և համաձայնութեանս պատմիչ, և 'ի զարծոց զնա ցուցանել, և լոյս լինել առէշա սպարան է: Նոյնպէս զի այլքն ամենայն որք իբրև լըմանկութեան փոքուն 'ի պղտակութեան և 'ի խաղաղն մեծականկանս հատուածքն, և այնպէս ծիծաղքն և փառաբանութիւն, և մեծութեանքք և զօրութեանքք և պատկերնիւ կեանք, միաբանականն բեւեռեալ զանձինս ընդ կարոյ և ընդ հոգւոյ

Այսոմ առաքելոյ 'ի մերուսս յայտնեալ զօրութիւնք մերինք՝ հիացեալ զարմացեալ ընդ փեղեցկութիւն հաւոյ նորա և ընդ հանճար արժանաւոր առաքինութեան, 'ի ձեռն որոյ բանն եհար զՔրիստոսէ և կեա պշնորհս Հոգւոյն: Սան զի իբրև զձնար ինչ բարեխօսութեանր, և ակնանքք ընդ երեւեցեալ ասելով, անելով զպատրաստ, այնպէս յարգարեալ զհոգին եա 'ի ձեռս նորա, մեծս ինչ

զօրութիւնս ցուցանէ: Ոչ այլազգ այլ անն այլոց երկնից՝ այլոցն ալոց զմիտս հանճարոյ, ոչ հանդերձիւ հասակ, ոչ ձայնիւ փոքր 'ի արքինք 'ի քնարս զեւր մարմինն զուարթացուցանել, այլ աղատաւորական բարբառով յիւր լեզուն գործեալ, այնքան տասս բան զեւրն ածեալ:

Գաղափարեալ զերկինս ասելի հանդիպի, և զաշխարհս ամենայն 'ի լուսնոյ և 'ի աստանեղին անեալ՝ զմարգարէ և զհրեշտակս առ հասարակ. մարգարէ՝ զայն որ հրեշտակականքն լինիցին: Զի այսպիսեացն միայն կարող են ունկնդիր լինել երգոց հոգևորաց: Իսկ այլն ամենայն իբրև զեղբայրասէր մանկունք և տղայք, լսեն զոր լսեն. բայց ոչ գիտեն զինչ լսեն. զի միայն իւրեանց ընդ կերակուր և ընդ խաղ աղաչումեան զբօսեալ կան, և մեծամեծ ինչ անել զմտաւ ոչ գիտեն:

Այսոմ առաքելոյ մերին զօրութիւնքն շաւիղ պատեալ կան զնովաւ զարմացեալ և յիմարեալ ընդ երգոյն և ընդ իմաստութեան անձինն և ընդ շնորհս հոգւոյն, որով հոգեար գեղով զեւրն առ զանկ մեր Յիսուս Քրիստոս: Զի նա իբրև զքնար ասեն սեփականական քաղցրաձայն այնպէս պատարագաւոր զանձն նորա, և եա 'ի նա մեծամեծ ինչ բարձրագոյնս բարբառել 'ի բարբառ հոգւոյն սրբոյ: Զի այնուհետև ոչ

1. Զանազանէր յոր. աստեղք և զօրք հրեշտակաց ամենայն. յաւելուած 'ի յանձնէն:

և բարձրագոյն հնչել հոգւովն: Սիրելիք զի ասա ոչ է ձկնորս և ոչ որդի Զեբեդեայ, այլ գիտող զնորս էր, հոգւոյն ասեմ, զայս քնար հարկանել: Զանզի ոչ ինչ մարդկայնոյն ձայնէ մեզ, այլ 'ի խորոցն հոգևորականաց, զոր ասէ անձայնելեաց ասիցին, զի և ոչ հրեշտակք ծանեան նախ քան զլինելն: Զանզի ընդ մեզ և նոքա և մեք ծանեան զոր ծանեաւքն:

Եւ զայս յայս արար մեզ առաքեալն ասելով. «Զի ծանիցի այժմ իշխանութեանց և պետութեանց 'ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւն Աստուծոյ»: Արդ եթէ պետութիւնք և իշխանութիւնք, սերովբէք և քերովբէք 'ի ձեռն եկեղեցւոյ ծանեան զայս, յայտ է թէ և նոքա բազում փութով առ այս լսել ձեռնեցին: Զանզի և այսուհետ ձեռնեալ պատուեսցուք ոչ փոքրագոյն, ընդ մեզ ձայնակցելով հրեշտակաց զոր ոչն գիտելով գիտէին 'ի ձեռն մեր:

Այսուհետև բազում լռութեամբ ունկնդիր լիցուք և մեք բարեպաշտութեամբ, մի այսօր միայն և մի յորում լսեմք, այլ յամենայն ժամ 'ի կենցաղումս. վասն զի մեզ լսել նոքա է բարւոք: Զի եթէ որ ինչ 'ի թագաւորութեանս այսմիկ լինիցի ցանկամք գիտել, եթէ զինչ խօսեցաւ, զինչ որ առնէ, զինչ խորհի թագաւորն յաղագս իշխեցելոց 'ի նմանէ, և ամենայն յոլով

եթէ ձկնահանն որդի ձկնահանի, ոչ խորայորդ որդին Զեբեդեայ, այլ որ զնորան յուզէր զգիտութեան ճշմարտութեան հոգւոյն սրբոյ: Արդ այնպէս լուիցուք հոգևոր երգոց քնարիս այսորիկ: Զի ոչ ինչ մարդկօրէն բարբառի, այլ զնորս յուզէ զհոգւոյն կենդանւոյ զինչ և խօսի. խօսի զձայս անձայս, զոր և հրեշտակք չգիտէին մինչ չև սորա էր ասացեալ: Զի ընդ մեզ գիտացին նոքա Յոհաննու բարբառովն, որպէս և մեքն ուսաք, և նոքա ընդ մեզ գիտացին:

Սակայն այսմիկ այլ առաքեալ վկայէ և ասէ. «Զի արդ յայտնեսցի, ասէ, իշխանութեանցն և պետութեանց 'ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւնն Այ»: Իսկ արդ եթէ իշխանութիւնք և պետութիւնք, սերովբէք և քերովբէք 'ի ձեռն եկեղեցւոյ գիտացին զոր ուսանն, յայտնի է աւադիկ եթէ մեծ փոյթ և նոքա հաստատեալ են 'ի լսելիս: Սակայն և այսուհետ մեք ոչ 'ի փոքր պատիւ մեծարեցաք, զի հրեշտակք ընդ մեզ արժանի եղեն գիտել զոր ոչ գիտէինն:

Արդ բազում պատրաստութեամբ 'ի լռութիւն ունկնդիր լիցուք պարկեշտութեամբ, մի այսօր միայն և մի այն օր միայն որ օր լսեմքն, այլ զամենայն աւուրս կենաց մերոց ունկնդիր լիցուք. զի գեղեցիկ են ելք առողաց: Զի եթէ 'ի ներքս յարքունիս ինչ զինչ խօսինն ցանկամք լսել զբան և զհրաման և զխորհուրդ թագաւորին, թէպէտ և չիցէ ինչ

անդամ ոչ ինչ եղեալ առեալ առ մեզ, մինչդեռ եւս առաւել զոր ածեն առայ, ցանկալի է լսելն. եւ մանաւանդ մինչ զամենայնն շնորհէ մեզ հաստատութեամբ:

Սա բարեկամ գոլով Թագաւորին, յաւէտ եւս եւ զնա ունելով յինքեան իսկ խօսելով, եւ 'ի նմանէ ընկալով զամենայնն. քանզի «Ո ձեզ ասացի, ասէ, բարեկամս, զի զամենայն զոր ինչ լուայ 'ի Հօրէ իմմէ, ծանուցի ձեզ»: Իբր թէ զքեզ յանկարծակի 'ի վերուստ կարկառեալ եւ 'ի գագաթանէն երկնից տեսանելեաց առատաբանելով ստուգութեամբ, ո՞չ ապաքէն ամենեքեան ընթանայաք. այսպէս եւ այժմ հանդերձեսցուք: Որդի անդուստ խօսի մեզ այդր այս. վասն զի չէ իսկ յաշխարհէ յայսմանէ, եւ զմխիթարիչն ունի բարբառեալ յանձին իւրում, ամենայն ուրեք մերձ գոլով առ այն որ այնպէս ստուգապէս գիտէ զնոյն որպէս Հոգին մարդկան զի գիտէ զիրսն. Հոգի սրբութեան, Հոգի ուղղութեան, պատուարական, առաջնորդական, առաջնորդ այլ աւանդ որ յարդարէ զհանդերձեալն որպէս զմերձակայս տեսանել, որ մարթեմք տալ տեսանել զոր ինչ յերկինս:

Որդ զգալուստ հանդարտութիւն տեսանեմք յամենայն ժամ 'ի կենցաղոցս. մի որ խօթանայ, մի որ քնեալ, մի որ աղմկեալ մնացեալ այսր ոչ ննջեսցէ. այլ փոփոխեսցուք զմեզ յերկինս, վասն զի անդ խօսի զայս ընդ

մեր գործ, մինչդեռ եւս առաւել պարտ եւ պատշաճ է լսել զբարեբանութեանն. մանաւանդ զի ամենայն ինչ վասն մեր է:

Զայս ամենայն սա Ճշմարտիւ ցուցանէ մեզ, որ միշտ հանապազ սիրելի եւ բարեկամ էր Թագաւորին. զի խօսի նա 'ի սմա, եւ սա 'ի նմանէ, եւ նա 'ի Հօրէ. Ինքն իսկ ասաց եթէ « Ես զձեզ իմն բարեկամս կոչեցի. զի ամենայն ինչ զոր ասաց իմն Հայր, ես ձեզ ցուցի »: Արդ այսպէս զամենայն առ 'ի վերուստ խոնարհեալ յանկարծակի գայցէ պատմել մեզ զխորհուրդս երկնաւորս, մեք ամենեքեան յանկարծակի յարձակեալ պատասխանեսցուք շուրջ զնովաւ հարցանել. զի անդուստ աւտեմն 'ի վերուստ խօսի ընդ մեզ. եւ ոչ աստուստ յաշխարհէս. զի եւ աւերն ինքն ասաց. ասէ. « Դուք չէք յաշխարհէս յայսմանէ »: Նա եւ զբարեխօսն 'ի ներքոյ ունի որ վասն տեսեան բարբառոյ, որ յամենայնին բնակեալ է որ այնպէս Ճշմարտիւ գիտէ զնոյ որպէս ոգիքն մարդոյն գիտեն զանձինս իւրեանց. Հոգին սուրբ, Հոգին ուղիղ, Հոգին առաջնորդութեան որ առաջնորդէն մեզ յերկինս, որ գնէն մեզ նոր տեսանելիս, որ պատրաստէն մեզ զյաւիտենականսն իրքս առ մերձակայ կեանս, որ յամենայնի կամի զերկնաւորսն նկատել:

Արդ բազում ունկնդրութեան արասցուք նմա յամենայն ժամանակի. մի վասն որ, մի քնեալ, մի կենցաղոյս. մի խառնիչ որ այսր մնալ զառանիցէ. այլ փոփոխեսցուք զանձինս մեր յերկրէ յերկինս, զի առ

նոտա՝ որք անդ են թագաւորեալք ։ Ոչ թէ և մնացուք, ոչ ինչ շահիմք աստի մեծամեծս. քանզի չեն իսկ բանքն Յովհաննու առ այսոսիկ որք ոչն կամին վճարել 'ի վաստակար կենցաղավարութենէս յայսմանէ ։ Այլ ասէ զի պտուտմն զարհուրեցուցանէ զանձինս մեր՝ անհնչան ունելով զհնչումն. բայց սորա ձայնս զոք 'ի հաւատացելոց ոչ զարհուրեցուցանէ, այլ և կանգնէ ևս յերկիւղէ և 'ի խռովութեանց, և զարհուրեցուցանէ զդեւս միայն և զայնոսիկ որք ծառայեն նոցա ։

Արդ գիտելով զխորդ զարհուրեցուցանէ զնոսա՝ բազում լռութիւն ստացուք զարտաքնոյն և զորս մտաց խորհրդոյն, և զայս ես ասել ։ Քանզի զինչ օգուտ է բերանոյն լռել, յորժամ մտաց աղմկի և ունի զբազում ալէկոծութիւնս ։ Զայն լռութիւն խնդրեմ ես որ մտացն և խորհրդոյն է, վասն զի և լռութեանն այնմիկ եմ կարօտ ։ Այսուհետև ոչ ցանկութիւն մի յընչից զեկեսցէ զմեզ, ոչ փառաց տենչանք, ոչ սրտմտութիւն բանութեան. և ոչ այլ ախտից բազում տաղմուկք ։ Այլ ասէ զի ոչ է առանց մաքրելոյ զլսելիսն գիտել զպարզութեանց ձայնականս որպէս պարտն է, և ոչ ճանաչել զհախորհրդոցս այսոցիկ զանճառութիւն և զպատմունս և զայլ ամենայն առաքինութիւնս՝ որք յանձանձս յայսոսիկ մերձաւորութիւնս ։

ընդ երկնակրօն մարդկան խօսի ։ Զի եթէ աստէն կամք ընդ երկրաւորս, ինչ ոչ մարթեմք լսել. զի ոչ ինչ է Յովհաննու ընդ երկրաւորս, որպէս երկրաւորացս ընդ նմա ։ Ապաքէն ձայն որոտման ահեղ սաստիկ՝ բեկանէ զսիրտս մարդկան. իսկ սորա բարբառս խռովեցուցանէ ոչ զոք 'ի հաւատացելոց. այլ և հանգիստ 'ի մեծէ խռովութենէ պատրաստէ նոցա. խռովէ և բեկանէ զդեւս յիշխանութեան նոցա ։

Իսկ արդ զի մեզ յայս լիցի որպէս բեկանելն նոքա, բազում լռութիւն զմտաց 'ի նպաստ մատուսցուք ։ Զի զինչ օգուտ է 'ի բերանոյն լռութենէ, յորժամ ոգիքն 'ի ներքս խռովեալ կայցեն ։ Արդ զլռութիւն զմտացն խնդրեմ. քանզի և լսելիք ներքինքն սիրտն, և գործ առ նա ընդ այնպիսեան է ։ Արդ այսուհետև մի զոք ուրեք նեղեսցէ ընչից ցանկութիւն. մի ոք 'ի ներքս յանձին իւրում նեղեսցի առ աչս հպարտութեան. մի ոք յանձն իւր նեղեսցի 'ի սրտմտութիւն բարկութեան բանութեամբ, մի այլով ցանկութեամբ չարչարանաց լցեալ կայցեն զամանս իւրեանց ։ Զի ոչ է հնար ընդունել զբարձրութիւն զաւետեացն զահեղ սաստիկ խորհուրդս և զանճառ ճառս քաջութեան, թէ ոչ զամենայն խիղճ և զեսեթ յիւրաքանչիւր մտաց 'ի բաց մերժեալ իցէ ։ Զի եթէ զձայն զերգոցն զարուեստականացդ և զնուագս սրնգի և քնարի ոչ ոք կարէ հաստատուն ուսանել եթէ ոչ զամենայն խորհուրդս և զմիտս անդր ժողովէ, զիա՞րդ մարթ և պատշաճ է նստել յուլութեամբ և ծուլութեամբ մօտ լսել զխորհուրդս զերկնաւորս ։

Digitized by Google

Վասն այսորիկ և Քրիստոս խրատէ ասելով. «Մի՛ տայք զսրբութիւնս շանց և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց»: Մարգարիտս զայսոսիկ զբանս կո-չեաց, զի են յոյժ պատուականագոյնս եղեալ քան զնա-սա: . . . Որպէս անզգր խոզ մասնեալ աղտեղեաւ մնայ աուրբ ’ի սրամտութէ և ’ի հոգոց կենցաղականաց տա-ժանմանց և յայլոց ամենայնէ վճարեալ յախտից: Զմտա-ցի ոչ ինչ է այլ ալբ շահել աստուած մեծամեծս, ե-թէ ոչ նախ այսպէս սրբեսցէ զհոգին:

Եւ մի ոք առեսցէ խնձ թէ զգլխն է ժամանակս որ ընդ մէջ հանգերձեալ ժողովոյն. քանզի հնար է ոչ ’ի հինգ միայն աւուրս, այլ և ’ի վայրկենում մի ’ի բաց գնել զամենայն կենցաղավարութիւնս: Անտ զի զինչ վաս-թարագոյն քան զաւաղակ և զմարդասպան. ոչ յետին տեսակն է այս չարեացն ամենայնի: Այլ սակայն խոկ եհաս ’ի ծայր առաքինութեանն և ’ի դրախտն եմուտ բեալ, ոչ աւուրց ինչ կարօտ եղեալ և ոչ աւուր միոյ և ոչ կէս աւուր, այլ դոյզն ինչ վայրկենում: Որպէս զի այսպ մարթ է յանկարծակի փոխադրել և լինել սակս փոփոխման կանոնց: Զանզի ոչ է բնութեանս որ ինչ ա-ռաքինութեանն և որ ինչ չարութեանն, այլ զիւրա-զարծ փոխադրութիւնս վճարեալ յամենայն հարկաց և վտանգաց: . . .

Վասն այսորիկ պատուիրէ խոկ տէր մեր Յիսուս Քրիստոս և ասէ. «Մի՛ տայք զսրբութիւն շանց և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առա-ջի խոզաց»: Զի այնպիսի են ամենայն պատգամք, մանաւանդ թէ ոչ այսպիսի միայն, այլ առաւել են պատուականագոյնք և բարձրա-գոյնք: . . . Սրբութեամբ մնալով, ’ի բաց թօթափեալ զչեա զնա-խանձ զնենգութիւն զարամտութիւն զարբեցութիւն և զամենայն զաւ-կութիւն: Զի ոչ ինչ է մարթ մեծ ինչ շահել յաստուծոյ անտի, եթէ ոչ զանձն իւր մաքրի սրբեալ լիցի:

Եւ մի ոք ասասցէ ցիս թէ սակաւ ինչ է ժամանակ որ ընդ մէջ է միւսոյն ժողովոյ. զի մարթ և պատշաճ է ոչ միայն ’ի հինգօրեայն ժամանակի, այլ և ’ի միում ժամու փոփոխումն առնել բարուց կենաց մարդկան: Քանզի ես ասա զու ցիս, զինչ չար էր քան զմարդասպանն աւազակ. մի ’ի միում ժամանակի անդ ’ի գլուխ քաղաքութեան վարդա-պետի մատուցեալ ’ի նոյն ինքն ’ի դրախտն գլխոյն մտանէր. ոչ ա-ւուրց ծախք, ոչ ժամուց և ոչ կէս ժամու, այլ յականթօթափել վայրկենականի աղբեան մէա մի եղաւ: Այպս պարտ և պատշաճ է արագ ա-րագ վայրկենականի փոփոխել, և լինել սակեղէն փոփոխման կանոնեցն: Քանզի ոչ եթէ բնակ ինչ է բարուց ’ի մէջ քաղաքութեանն և վտանգ-թեանն, այլ զիւրենց փոփոխումն որոշեալ և մեկնեալ և պարզեալ յա-մենայն չարաց ազատեալ: . . .

Digitized by Google

Որպէս պատրաստեալ զանձինս մեր այնպէս երթիցուք յեկեղեցին, թերեւս փութայցէ ինչ լսել 'ի պիտանեաց, եւ շտեմարանեալ 'ի հոգիս մեր զձառեալսն։ Ո՞ր ոք ձանձրացուցանէ եղբօրն, մի ոք ստացուած, մի ոք փշրեսցէ զկեալ. այլ պատրաստեսցուք զմեզ հերկս... Ահա սերմանեմ յառաջնորդդ եւ պատուիրեմ ձեզ. մի ոք ոչ մայրեալ իցէ յայսմ սեղանոյ, առաջիկայնիցէ զոգի իւր պատարագ եւ մհատեաին սուրբ թեամբն այնպիսիք. ձայնակ նատամբնակցին են այն առեւտայն որ ինչ գործին եւ ձառին անդ։ Այլ զիրեանս խելամտուք եղեալ եթէ զոգւոյն ուխտ եդիք առ մեզ, մինչ մանաւանդ թէ զոգւոյն եղեւ ընդ Քրիստոսի յարժամ ածեր զձեզ 'ի խորհուրդս միութեան. զինչ առասցէք նմա, զինչ խոստացայք ընդ նմա վասն սատանայական ձայնատեաց. ոչ 'ի սատանայէ եւ 'ի հրեշտակաց նորա հրաժարեցայք, եւ խոստացայք եւ ոչ հայել հակ անդ։ Զգուշալ է այժմ ոչ փոքր ինչ. զի մի ոք շարադրաւ եղեալ յայտուղին խոստմանս, առաջնան զինչն կարգեսցէ առ այսպիսի խորհուրդս։ Պատզամաւոր եկն առ մեզ յերկնից 'ի նմանէ յոյն իսկ աւանդեալ, եւ առեալ յաղագս յոյժ կարեւորաց...

Այսպէս պատրաստեալ զանձինս մեր միաբանութբ ժողովոյն յայսմ տեղի ժողովոյ եկայցուք, թէ իցէ եւ կամիցիք ինչ օգուտ անձանց ձերոց լսել եւ գնել 'ի միտս ձեր։ Մի ոք 'ի ձէնջ ձանձրասցի, մի ոք 'ի ձէնջ զմտասաւախեա վաղ, մի ոք 'ի ձէնջ մեծ առողջեալ. պատրաստեսցուք զանձինս մեր հերկս հերկեալս կարգեալս։... Նախ քան եղեալ պատուիրեմ մի ոք 'ի ձէնջ որ այսմ սեղանոյ յանկանայցէ հասանել, յառաջապահ գոգաբուեալ այնպիսիք զանձն իւր աղծեալ զոյցէ. զի այն անձինք զարդք սատանայի են։ Բայց դուք թէպէտ ածէք զմտաւ որ ազրանից եղբարց խորհրդականից լինելոց զոգւոյն ուխտս ուխտեցէք մեզ, մանաւանդ թէ ոչ ընդ մեզ, այլ ընդ Քրիստոսի 'ի ժամանակին յորժամ 'ի մկրտութին 'ի սրբազնին խորհուրդ խառնէր զձեզ. զինչ ուխտեցէք, զինչ հրաժարեցայք եւ սատանայի եւ հրեշտակաց նորա։ Արդ առ մեծ է, ասէ, զուշէ յանխոտ անդ յայտնին ժխտող զանկամ անձանց զանձինս ձեր խորհրդոցն սրբութեան առաջս կարգուցանելեաց... Այս հրեշտակ եկն մեզ յերկնից աւանդեալ յոյն կարեւոր, եւ կարեւոր պատուզամ մատուցանէ.... :

## ՅԵՐԿՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Ի սկզբանէ էր բանն”: Յոհաննէս հանդերձեալ էր խօսել ընդ մեզ և զիրսն ճառել մեզ, կարևոր էր և զազգն նորա և զհայրենիսն և զանուանսն ասել: բայց վասն զի ոչ սա, այլ Ած բարբառի, 'ի ձեռն որոյ սա բնութիւն մարդկան աւելորդ թուի ինձ ձգտեցուցանել և խնդրել զայսոսիկ. մանաւանդ եթէ ոչ այնպէս աւելորդ, այլ և յոյժ կարևոր. Նախ զի յորժամ ծանիցես եթէ ով է և ուստի և յորոց և որպիսի, ապա լուիցես ձայնի նորա և իմաստասիրութեանն աւետարանին, յայնժամ գիտասցես բարւոք թէ ոչ են նորա այս աւետարանքս, այլ աստուածայինն զօրութեանն որ շարժէր զհոգի նորա:

Արդ յոր հայրենեաց է. հայրենեաց և ոչ իսկ. 'ի գեղջէ և 'ի գաւառէ յանարգէ, որ ոչ լինէր ինչ բարի. Վասն զի զԳալիլեա զայրսն պարսաւէին ասելով, թէ “Հարց և տես զի 'ի Գալիլեէ մարգարէ ոչ յառնէ”. և ճշմարտապէս Իսրայէլացին՝ ասելով եթէ “Ի Նազարեթէ կարէ՞ ինչ լինել բարի”: Եւ անուանի գաւառ ոչ 'ի նշանաւոր ինչ գեղջէ է, այլ և ոչ 'ի ծանօթ անուանէ. իսկ հօրն ձկնորսի տնանկի, այնպէս տնանկ, մինչ զի և զմանկունսն 'ի նոյն գործաւորութիւն ածել:

« Ի սկզբանէ էր բանն » : Իսկ արդ եթէ ինքն Յոհաննէս էր որ ընդ մեզ խօսէր, և անձամբ անձին զանձնէ ընդ մեզ խօսէր, պարտ և պատշաճ էր մեզ վասն զազգատոհմէ հարցանել, զգաւառն խնդրել, ընտանեկանէն քննել. իսկ արդ զի ոչ ինքն յինքենէ, այլ Ած նովաւ 'ի նըմանէ սա ողջոյն մարդկան խօսի, աւելորդ ինձ և զարմանալի հանդերձ զայս ամենայն քննել. մանաւանդ թէ ոչ աւելորդ, այլ և կարի պիտանի: Զի յորժամ աշակերտ էր և ուստի և ուստ ուսուցիչ է որպիսի և ոյր ուրուք և ոյր ասելի, և ապա լուիցես ձայնի բարբառոյ ճշմարտութեան, և խնամատարութեանն զգայի ասելոյ հաստատապէս գիտասցես ճշմարտութ՝ եթէ ոչ նորա էր բարբառն, այլ զօրութեան աներևութեան աստուածութեանն՝ որ ներգործէր 'ի նմանէ:

Արդ ո՞ր է գաւառն. գաւառ բնաւ ուրեք իսկ չերևի. գիւղ՝ աղքատիկ մի փառաթափ յաղագաւէս. կոչին՝ ուստի բնաւ բարի ինչ երբէք ուրեք չէր լեալ: Զի զԳալիլեա և քահանայապետքն իսկ պարսաւէին խօսելին. « Քննեա, ասեն, և տես զի բնաւ 'ի Գալիլեայէ ոչ մարգարէ չէ յառնելոց ». նա և Ճշմարիտ Իսրայէլացին զարմանէ և ասէ՝ թէ « Ի Նազարեթէ մարթ ինչ է բարի ինչ ելանել »: Սակայն Թէպէտ և ուստի էր սա, այլ ոչ յերևելի վայրաց ուստեք էր, և ոչ յանուանէ ինչ ճանաչելի. այլ ձկնահան և որդի ձկնահանի, աղքատ յաղքատաց. և այնպէս աղքատաց, զի և զորդին 'ի նոյն արուեստ հօրն կոչուցեալ էր:

Digitized by Google

Գիտեմք՝ իսկ ամենեքեան եթէ ոչ որ ձեռագէտս արուեստի ցանկանայց առնել զորդին իւր ճարտարագործ արուեստին իւրոյ, եթէ ոչ վարդապետացուցանէ զնա յայժ՝ վարդապետեալ աշխատութեամբ իւր, մանաւանդ յարժամ արուեստն անուանեալ իցէ. զի և քան զձեռնս ոչ անմանկագոյն որ և անարգագոյն, այլ և ոչ անիմաստագոյն որ արուեստք եղիցի: Նոյն սակայն և 'ի սոսա ասենք մեծ կարգ ամենքին և ամենայն զնոսա: Իսկ առաքեալս մեր այս զնոսա կարգն առնէր. զի ոչ 'ի ծովէ որսոյ, այլ 'ի դղեկ ինչ ծովային որսացեալ զեզերէր և չզիտէր զնոսա հանդերձ հարբն և եղբարբն Զեբեդեա, և զպատառատուն զործին կարկատէր. որ և այն յետին անմանկութիւն էր. և այնպէս կոչեաց զնա Քրիստոս: Իսկ պատուաւն ազգագին որ արուեստիւն էր, և յայտնանէ է ինքնին՝ ոչ միայն զի այնպէս էր, այլ զի և Ղուկաս վկայէ առաջոյ՝ եթէ ոչ միայն աղքատ, այլ և առանց աղքատութեան էր: Նմանապէս և որ այնպէս անմանուկ և ոչ 'ի վաճառ մետեալ և ոչ ընդ գիտուն մարդկան խօսեալ, այլ ընդ ձկնորսութեան ընտանեալ, և եթէ երբեք պատահէր և լինել ընդ ումեք ընդ կրպակաւորացն ձկանցն և խոհակերացն խօսելով ինչ, ոչ ինչ լաւագոյն քան զզազանս և զանասունս համարիցէր լինել, և զիարդ ոչ ընդ նոցա իսկ զձկանց ունէր զանձայնութիւն:

Դուք ինքնին գիտէք զի չէք որ յարուեստաւորաց որ զիւր որդին 'ի նոյն արուեստ ճարտարութեան թէ ոչ, թէ ոչ յետին անմանկութեան շատ ...; մանաւանդ թէ արուեստն է իւր զձուկ իցէ. այլ քան զձկնաճանա ոչ զձուկ ինչ իցէ, ոչ աղքատ և ոչ ... ինչ: Սակայն և 'ի մէջ նոցա ամենայն ... և ամենայն վատթարս: Իսկ այս որ մեր առաքեալս է, և 'ի նոցա մէջ զձուկ միաձանկաց հաւանեալ էր. զի ոչ եթէ 'ի ծովու էր որս նորա, այլ 'ի լճակի միոջ փոքրիկան. անդ զնաւս հարբն և եղբարբն հանդերձ ... . և ... նշան որ յետին նշան է անմանկութեան՝ պատառատուն գործին, յարմար էր գործն. Իսկ զնա անդ մեր Յիսուս Քրիստոս և 'ի կարկատել անդ կոչեաց: Այլ վասն ճարտարութեան և իմաստութեան աշխարհի և յայտնի ամենեցունց մարթ է գիտել թէ չկայր ինչ առ նմա, բայց սակայն և Ղուկաս վկայէ թէ այր մի աղէտ և անանց գիտութեան էր. ոչ զորմեա հրապարակաց գիտակ, ոչ յանդգնեան երբեք եղեալ արանց պատուաւորաց, այլ անդէն 'ի նոյն ընդ նաշն ընդ ձկնորսան կայր որնանկութեամբ միշտ ընտանեալ. զի թէպէտ և յանդգնեան ումեք լինէր ձկնավաճառաց կամ խոհակերաց, իսկ որք ... կամ ... կամ ... ընդ նոսա իցեն՝ յո՞ հանել կարէր զնա 'ի նոցին անասնոց, կամ զիարդ էր թէ ոչ նոցին ձկանց զանձայնութեան բարձն ... լինէր անձնականէին նոցա:

Ո՛րք այս ձկնորսք որ շուրջ [illegible] [illegible] [illegible] ձկնորսք, որ 'ի Տիբերիադայ [illegible], որ հօր ձկնորսի [illegible] [illegible], որ [illegible] [illegible] ուսուցանել, որ [illegible]՝ և զայն ևս [illegible] [illegible] ուսուցանել, որ զաղքատութիւնն ոչ յամօթ ունէին և ոչ յետոյ, բայց յետ լինելոյ նորա ընդ Յիսուսի, [illegible] թէ զինչ խօսի և [illegible] որոց մեղք [illegible]։ Ո՛րքեա՞ք յաղագս որոյ [illegible] և 'ի [illegible] և կամ՝ յաղագս [illegible] ձկանց. քանզի զայս թերեւս 'ի ձկնորսացն [illegible] ուսուցանել լինել։ Այսց մի որ [illegible] [illegible], [illegible] որ ոչ [illegible] [illegible] [illegible]. այլ որ [illegible] [illegible], [illegible] ոչ որ [illegible] յամօթ քան զայս։ Ո՛ [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible], որպէս [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի հոգւոյն [illegible]։ . . .

Ո՛րք [illegible] ձկնորսքն, [illegible] [illegible], կամ՝ [illegible] [illegible] [illegible], [illegible] կամ՝ [illegible]՝ որոց [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible]։ Ո՛[illegible] ոչ է [illegible] [illegible] հօգւոց յաղագս [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և յաղագս որոյ յետ [illegible] [illegible], [illegible] [illegible] և [illegible] [illegible], յաղագս [illegible] [illegible] [illegible] և [illegible] յետոյ եղելոց։ . . .

Արդ այս ձկնորսները որ ընդ [illegible] ընդ [illegible] ընդ ձկնորսներ [illegible] էր, որ 'ի Տիբերիադայ [illegible] էր, [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] էր, որ 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible], որ [illegible] [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible], [illegible] [illegible] զինչ [illegible] կամ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible], [illegible] [illegible]. [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ոչ [illegible] և ոչ [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։ . . .

[illegible] [illegible] այս [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] որ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։ [illegible] [illegible] է [illegible] ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible], [illegible] որ 'ի [illegible] [illegible] [illegible] է։ . . .

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

ուսերկելով. իսկ Հոգւոյն գնաց առ զատն այն՝ որ անխա-
ւարին է այնմիկ որ զայտակիսխ զարձէ։ Այլ որ ինչ ՚ի հե-
թանոսացն՝ ամենայն չքնանէր և ապականէր։ իսկ առ-
քայս զօրհանապաղ պայծառագոյն լինէր։ «Բանզի տա-
նի սոյն, անուոր և այլ ձեռնարքն. բայց որ ինչ Պղատո-
նին և Արիստոտելին թուեցեալքն ունել յառաջագոյն՝
ըմէին, այնպէս զի ոչ յանուանէ իսկ գիտել բազմաց։...

Բայց ոչ ազգասէր և անզգայորս այնպիսիք, այլ և Սա-
ւարիք և Եգիպտացիք և Հնդիկք և Պարսք և Եթովպ-
ացիք, այլ և բիւր ազգք յիւրեանց փոխարկեցեալ լե-
զուս. զառ ՚ի սմանէ ՚ի նոցին ածեալ ործէք, ուսան
խուժադուժ ազգք խմաստասիրել։

Նոյն սորենն ոչ ինչ ՚ի նմանէ ատէին ունելեալ՝
թէ սնտապան եղեն նմա ամենայն ազգերը։ «Բանզի
ոչ թողեալ զհամայեցոյն՝ անբանեիցն բնութեան վաս-
տակէր ՚ի զուր, որ էր վասթար պատուաստութեանն
և յետին անմտութեան. այլ այլովքն և այսուիկ փա-
թայր մարթել միայն յախտիցն, որպէս ուսուցին ինչ ՚ի
պիտանեացն ամենայն ազգերաց, և յայնցանէ որ կա-
րօղն է կանգնել զնոսա յերկրէ յերկինս։ Այլ ոչ մը-
զայլ և մասնաւորով ինչ ծածկեաց զվարդապետութիւն

պարկեշտութեան զարձեալ, և սորա ամենայն հանապազ յանմենայնի
ըստ առաջադրուէյն ծաղկ։ Զի յորժամ հետն առ այլովք ձեռնհասեալ հան-
գերձ ՚ի մէջ անցեալ, յայնժամ հետն պիւթագորեանցն խորհրդեալ և
պղատոնեանցն ամաչեցեալ զինին. զի որ այնչափ յառաջ ժամանակաց
եղեալ զեղեալ զաղխարհս ունէր, արդ բնաւ և անուն ոչ անուանի նո-
րա ՚ի մէջ բազմաց։...

Այլ ոչ եթէ ազգասէր սառասպելւոյ և անանկի իրքս այսպիսի են, այլ
ամեալ առ հասարակ Յոյնք, ասորեստանեայք, եգիպտացիք, պար-
սիկք և Պարթևք և բաղում այլ ազգք ազգաց յիւրեանց ըեղու ըմբռեալ
յիւրաքանչիւր ձայն բարբառոյ զսորա պատուական հրաշանաց, որք
խուժադուժք Քարտասաբանութեան զիմաստութեան ուսանին։

Ո՞չ յերևակ տեսցես եթէ միայն մի ասելի եմն հանդերձ ամենայն
ազգերը։ Որ ոչ եթէ զարզարկեց ասպնչացին Թողեալ՝ զսորա ազգս
անասնոց Քարտասաբանութեան ուսուցանէր. զի այս զուր ատարաբազմաց
և խոել ատատասնէր մասցն տառատութեան։ Իսկ մերոյս ՚ի վերայ այ-
լոցն ամենայնիւ հաստատեալ սրբել և կատարեալ եղեն միայն յամէ բազ
ամաչից չորեքչարանեայ. բայց մի միայն զայս փոյթ յանձին բարձեալ բե-
րեր. զի զմեզ ինչ պիտանութեն ուսուցանել կարասցէ, արդ. զմեզ յերկրէ
յերկինս փոխել մարթասցէ։ Վասն այսորիկ և ոչ թէ խորհ ՚ի մէջ մա-
տակտուղ Քարտասաբանութեան բանիցն խուսափոյին զվարդապետութիւնն
ծածկէր, որպէս և նոցայն ասէին, զխորամանկ չարեաց պատրուա-
կեալ անգայութեամբ բանիցն առաջարկեալ բերելին. այլ սորա հրա-

Digitized by Google

խաւր, այլ քան զարեգականային ճառագայթսն են ինքնա-յայտնապայծառք. վասն որոյ և ամենայն մարդկան որք են ընդ ամենայն տիեզերս՝ ծագէ: . . . Ո՛չ ի բոլորակին իսկ առ ինքն ձգեաց զամենայն աշխարհ, և յայլ կրօնս փո-փոխեաց զանկրօնս լրութեամբ բանիցս այսոցիկ, որք լուաք զկարգս աւանդեալս 'ի նմանէ մեզ: Այլ աստուստ և ամենայն ուսմունք յայտ է թէ ոչ ինչ մարդկայինք սորայս, այլ ա̅ծայինք իմն են և երկնաւոր ուսմունք 'ի նորա անձինս այսորիկ եկեալ առ մեզ: Ո՛չ ի ոչ ինչ բա-նից արուեստք և ոչ բանից ճարտարութիւնք, այլ զօրու-թիւն անպարտելի և ա̅ծային և զուգիր հաւատոց զան-բաւ զօրութիւն և զախուրուց բարութեանց ունի: . . .

Արդ զինչ է զի ասացեալ աւետարանիչս առաժամայն խօսս այսպէս. «Ի սկզբանէ էր բանն և բանն էր առ ա̅ծ»: Տեսե՞ր զհամարձակութիւնն և զապառումն իշ-խանութիւնս. և զիա՞րդ ոչ յերկուանայ և ոչ 'ի կար-ծիքս ինչ անկանի, այլ զամենայնս բացայայտեալ բար-բառի: Քանզի այն է վարդապետն՝ ոչ ինչ ալէկոծեալ և շուրջ գալ յորժամ արդեօք ինչ ասիցէ. զի որ այ-լոցն առաջնորդեսցէ և կարօտանայցէ այլ ումեք առաջ-նորդի որ կարող իցէ հաստատել զնա ստուգութեամբ, այնպիսին ոչ զվարդապետաց կարգ ունի, այլ զաշա-կերտաց:

Իսկ եթէ ոք ասիցէ՝ եթէ ընդէ՞ր զնախկին պատճառն թողեալ, առաժամայն իսկ պատմէ մեզ վասն երկրոր-

մանք պայծառագոյնս լուսաւորութեան ծագելն յամենայնի անցեալ զան-ցեալ զճառագայթիւք արեգական. վասն այսորիկ ընդ ամենայն տիե-զերս ամենայն մարդկան պարզեալ սփռեալ և տարածեալ գնի: . . . Իսկ արդ ո՞չ յամենայն կողմանց յայտնի է մեզ թէ ոչ ինչ մարդկօրէն և երկրաւոր բանս լսելոց եմք, այլ աստուածեղէն պատգամս երկնաւորս յաստուածեղէն շնչոյն բերանոյ: Զի ոչ եթէ պայթիւն բանից և ոչ պարբերութիւն պատգամաց . . . այլ անհնարին հաստատութիւն և ան-ընդդիմակ զօրութիւն և բիւրաւոր բարեաց ստացուածութիւն: . . .

«Ի սկզբանէ էր բանն և բանն էր առ ա̅ծ և ա̅ծ էր բանն»: Տեսե՞ր զհամարձակութիւն առաքելոյն թէ զիարդ ոչ 'ի կարծ և ոչ զանգիտե-լով, այլ համարձակ և սաստիկ հրամանաւ բարբառի զոր խօսի: Զի այս ինքն օրէն է հաստատուն վարդապետի, զի ոչ գեղևի և ոչ տա-տանեսցի և ոչ դողդոջեալ. զի թէ որում պարտ և պատշաճ իցէ այլոց առաջնորդել՝ նմա այլ ախտիցի որ հաստատեսցէ զնա, նա ոչ եթէ յա-րգեն վարդապետաց է, այլ 'ի կարգս անկարգ ակար աշակերտաց,

Արդ եթէ ոք մատուցեալ ասասցէ՝ թէ ընդէ՞ր բնաւ առաքեալն զա-ռաջինն եթող և զերկրորդն սկսաւ, արդ որ առաջին ասեն և երկրորդ՝

դին, առաջին և երկրորդ առել հրաժարեցաք. վասն զի ա͠ծութիւնն գերագոյն է քան զթիւ և քան զշրջագայութիւն ժամանակաց: Բայց զհայր խոստովանիմք ոչ զոք ունել պատճառ, և զորդի 'ի հօրէ ծնեալ:

Այո, ասեն, այլ վասն էր թողեալ զհայր՝ յաղագս որդւոյ խօսի: Զի նա յայտնի էր ամենեցուն, թէ ոչ իբրև հայր, այլ որպէս ա͠ծ. բայց միածին ոչ ճանաչէր. և վայելչաբար անդէն իսկ ... քանզի հանդերձի ուսուցանել եթէ բանն այս է միածին որդին ա͠յ. և զի մի ոք ախտականն կարծեսցէ զծնունդն, յառաջելով բառնի յորձորձմամբ 'ի բաց բանիւ զանդէն չար կարծիսն՝ 'ի նմանէ զոլ զորդի յայտնելով անախտաբար: Տեսանես, զի որպէս ասացի, և ոչ զհայր լռեաց 'ի բանս որ յաղագս որդւոյ ... զի զմնեալ ընդ աղօտ ինչ ոչ պարզաբար բան առաց զնմանէ, այլ զօդեաց յաւելուածն, և այսուիկ զատելով զնա:

Տեսանես զի ոչ ասէր 'ի նմին՝ թէ յերկնից բարբառի մեզ աւետարանիչն: Այլ աստ անդէն իսկ յառաջաբանիցն մեր գերանձնեաց զհոգին և էած 'ի վեր զմիտս լսողացն. վասն զի քան զամենայն զգալիս վերագոյն կարգեալ զնա, նախ քան զերկիր և զծով և զերկինս, և առաւել քան զհրեշտակս և քան զսերովբէս և զքերովբէս, և քան զաթոռս և զպետութիւնս և զիշխա-

այդ հրաժարեալ կացցէ, զի այս չէ մեր. զի ածութիւնն 'ի վեր է քան զհամարս թուոց և քան զկարգս ժամանակաց. վասն այսորիկ առաջի զանուն հրաժարեցաք: Այլ մեք զհայր խոստովանիմք ոչ յումեքէ, և զորդի 'ի հօրէ ծնեալ:

Այո, ասէ, իսկ ընդէ՞ր թուի զհայր թողեալ, և զորդւոյ խօսի: Զի նա յայտնի էր ամենայնի, և եթէ ոչ իբրև զհայր, այլ իբրև զա͠ծ. իսկ զի զմիածինն չև էր ուրուք ծանուցեալ, վասն այսորիկ յիրաւի զնորա ծանօթս իսկզբանն անդ ... զի ուսուցանելոց էր զմեզ եթէ բանս այս է միածին որդի ա͠յ. արդ զի մի ընդ չարչարանօք համարեսցես զծնունդն, յառաջեցաւ առել զանուն բանին, զի յառաջագոյն զկարծիս չարացն կործանեսցէ, զի յայտ լիցի թէ 'ի նմանէ է որդի առանց իրիք անցից մարդկօրէն թարգմանութեան ... Իսկ ոչ եթէ ընդ վայր ինչ կարգաց զնա լռել բանն, այլ եդ և յաւել ասէ՝ բանն, զի յայլոց ամենայնէ մեկնեսցէ զնա:

Տեսանես ուրեմն ոչ թէ զուր ասէր թէ յերկնից խօսի ընդ մեզ սորա այս: Արդ տեսէք 'ի սկզբանն ճառիցն իւրոց յոր վայր զմիտս և զմիտս մեր ձգէ, և կամ յոր վայր զմտացս մեր հասուցանէ. 'ի վեր քան զամենայն իմաստութիւնս և զգիտութիւնս, 'ի վեր քան զծով և զցամաք, 'ի վեր քան զերկինս, 'ի վեր քան զհրեշտակս ամենայն, 'ի վեր քան զսերովբէս, 'ի վեր քան զաթոռս և զիշխանութիւնս և զպետութիւնս,

նութիւնս, և քան զամենայն իսկ զայսուիկ զարարածս 'ի վեր ճանապարհորդեալ հաւանեցուցանէ ։ Ապա զինչ արդեօք. առ այսքան բարձրութիւն ածելով ըզ-մեզ, առատանօր կարաց կացուցանել ։ . . .

Քանզի յոյժ բարձր է առաքեալս այս և բազում օրինակ արդարութեամբ լի. վասն այնորիկ իսկ յասել դեգերի առաւել քան զայլսն ։ Ո՛չ վայրապար ինչ լուիցուք. զի յաղագս այնորիկ ըստ փոքու փոքու պատմեսցէ ձեզ, որպէս զի ձեզ ամենայն դիւրըմբռնելի լինիցի ։ Արդ երկիցուք զուցէ պարտաւորք ձայնիս այս լիցուք որ ասէ. "Եթէ ոչ եկեալ և խօսեցեալ, մեղ ինչ ոչ գոյր,, ։ Վասն զի զինչ առաւել ունիցիմք քան զայնոսիկ որք ոչ ինչ լուան, յորժամ յետ լսելոյն 'ի տուն երթալով ոչ ինչ ունիցիմք, այլ միայն զարմանամք ընդ ճառեալսն ։ Տուք մեզ 'ի բարի երկիր սերմանել. տուք զի զմեզ յորդորիցէք ևս մեծագոյնս ։ Իսկ եթէ ոք փուշս ունիցի, 'ի հոգւոյն մերձեսցի. և դարձեալ եթէ խիստ և կարծր սիրտ ոք ունիցի, գիրգ և փափուկ արասցէ 'ի հալել հոգւոյն . . . զի վաստակելով ձեր տեսցուք ըզ-պտղաբերութիւն ձեր ։ . . .

Քրիստոս կամի զմեզ 'ի մարդկանէ հրեշտակս առ-նել, և մեք 'ի մարդկանէ 'ի գազանս փոփոխիմք ։ Վասն

---

և ամէնեքին քան զամենայն արարածս 'ի վեր ճանապարհորդել տալու է ։ Իսկ արդ որովհետև յայնչափ բարձրութիւն բարձանց հասուցեալ զմեզ, կարասցէ՞ անդէն զետեղել զմեզ ։ . . .

Զի յոյժ խորին և բարձր է առաքեալս այս և բազմօք լի է սորա օրինակ հրամանօք. և ընդ սոսին սորին 'ի սմին խորհուրդս կախի ա-ռաւել քան զայլ առաքեալսն ։ Այլա մի յոյլ և զատապարտեալս խորհըր-դով լուիցուք. վասն այնորիկ և սակաւ սակաւ ձեզ պատմեսցէ, զի ձեզ յուշիկ ունել դիւրին լինիցի, և մի ինչ իցէ որ փրծանիցի յուշոյ յիշո-ղականաց ։ Արդ երկիցուք և մեք զուցէ ընդ պարտ պատժոյ պատասխա-նիցն մատնիցիմք որ ասացաւն. ասէ. «Իմ եթէ չէր եկեալ և խօսե-ցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա»։ Իսկ արդ զինչ աւելի է մեզ քան այնոցիկ որ ոչն լուան, յորժամ յետ լսելեացն 'ի տուն երթի-ցեմք և ոչ ինչ սուրբ ընդ մեզ բարձեալ տանիցեմք, բայց միայն սոսկ զբանիւքդ զարմանամք ։ Տուք մեզ երկիր պարարտութեան սերմանել զսերմանիս ։ Եթէ ոք իցէ երկիր փշաբեր, զատսեալ հոգւոյն՝ զհոգւոյն 'ի վեր արձակեսցեն. եթէ ուրուք խստացեալ քարացեալ և սառեալ սիրտ իցէ, պարարտասցեալ անդրէն 'ի նորին հրոյ ցօղով՝ պարարտեալ և տապալեսցեալ զնասցէ . . . այլ զբարձրասցեալ, ամեթասցեալ և սառ-քացեալս տեսցուք զայս ամբոյ հասանել արտոյ ձերոյ ։ . . .

Զի Քրիստոս առաւելն կամի զմեզ 'ի մարդկութենէ 'ի միջնակս հրեշ-տակաց փոփոխել. մեք շրջամք զանձինս 'ի մարդկանէ 'ի գազանս Թու-

Digitized by Google

զի որովայնի ծառայեն, և ցանկութեամբ ընչից ըմբռնեալ, և բարկանալն և խածանելն ոչ է մարդկան, այլ գազանաց։ . . .

### Ի ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ ՃԱՌԷՆ

“Յիսուս ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հայր իմ, գոհանամ զքէն զի լուար ինձ. այլ ես գիտեմ զի յամենայն ժամ լսես ինձ, բայց վասն ժողովրդս ասացի որ շուրջ կան զինև„։ Բազում անգամ ասացեալ է զայդ, և արդ ասեմ, զի Ած ոչ այնպէս 'ի սաստ փառաց մեծութեան իւրոյ հայի, որպէս 'ի մեր փրկութիւնն. և ոչ եթէ զայն ինչ ածէ զմտաւ զինչ մեծամեծ ես բարբառիցի, այլ որ ինչ կարող իցէ զմեզ զիւրև ածել, յինքն նուաճել։ Վասն այսորիկ բարձունք և մեծամեծք սակաւք՝ և նոյն 'ի ծածուկ. իսկ որ խոնարհքն և տկարքն՝ բազում և զեղու զնորա հրամանաւն. իսկ որովհետև այս սաստէր զնոսա, առաւել նա 'ի մէջ նոցա կանխէր։ Այլ ոչ եթէ զնոյն բովանդակ բարբառի. զի մի որ յետ այսորիկ գալոց իցեն՝ վհատեսցին. և ոչ դարձեալ զնոյն լռէ, զի մի որ յայնմ ժամանակի իցեն՝ գայթակղեսցին։ Ոյք որ 'ի չափ հասակի իցեն կատարեալ, և 'ի միոջէ բարձրութեան հրամանին զամենայն

նուաստ և յանասնական անձինս դարձուցանել։ Զի այն որ որովայնի ծառայեն, և 'ի ցանկութիւն ընչից պատեալ պաշարեալ կան, և բարկութեամբ արգելեալ են, որք զրկեն և խեթկեն և խածանեն և աքացեն՝ ոչ մարդոյ է, այլ անասնոց։ . . .

« Յիսուս ամբարձ զաչս իւր 'ի վեր և ասէ. Հայր, գոհանամ զքեն զի լուար ինձ. և ես գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ. բայց վասն ժողովրդեանս որք շուրջս կան՝ ասեմ զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս »։ Զոր բազում անգամ ասացի, զնոյն և այժմ ասեմ, եթէ Ած ոչ այնպէս հայի 'ի մեծութիւն արժանաւորութեան անձին իւրոյ, որչափ 'ի կեանս և 'ի փրկութիւն մեր. և ոչ որպէս զի մեծագոյնս խօսեսցի, այլ որպէս զի կարասցէ զմեզ յինքն կորզել։ Վասն այսորիկ զբարձրագոյնս և զմեծամեծս համառօտ և խոր ընդ սպառուածս ասէ, իսկ զխոնարհագոյնս և զնուաստս յոլովակի բազում և առատագոյն հեղու և մերձաբերէ 'ի մէջ բանից իւրոց. և վասն զի նոքա յայն սակս մտանելոց յանգգնեկին, ըստ արժան և նա զնոյնս հանապազորդէ։ Եւ ոչ զայսմանէ յարաժամ պատմէ. զի մի որք զկնի եկեսցեն՝ վհատեսցին. և ոչ դարձեալ զմիւսն լռէ, զի մի որք էին 'ի ժամանակին յայնմիկ՝ գայթակղեսցին։ Քանզի որք 'ի կատարելութիւն հասեալ էին, 'ի միոյ բարձրագունիցն բանից զամենայն կարէին առնուլ. իսկ որք

Digitized by Google

կարող լինէին առնուլ. իսկ որ յայնժամ խոնարհագոյնքն էին, եթէ բազում անգամ զնոյն լուեալ էր՝ ոչ կարացին ըմբռնել։ Տեսե՛ր, և ոչ կարացին այնչափ հանդարտել, այլ և քարկոծեին և հալածեին և սպանանել մտաբերեին, և հայհոյիչ կարդային զնա յորժամ հաւասար առնէ զանձն այ. և երբեմն ասեն և հայհոյէ, քանզի ասաց՝ եթէ թողեալ լիցին քեզ մեղք քո. դարձեալ մոլեգնոտ կոչեն յորժամ ասիցէ՝ որ լուիցէ զբանս իմ, ոչ մեռանի. և կամ յորժամ ասիցէ՝ ես 'ի հայր իմ և հայր յիս, թողուն զնա. և գայթակղին յորժամ ասիցէ՝ եթէ ես յերկնից իջեալ եմ։ Ո՞չ՝ եթէ այսմ ամենայնի ոչ կարեն հանդարտել՝ զի չափաւորագոյն ասէր, որչափ ևս առաւել թէ յամենայն 'ի բարձրագունէ բանն և այնպէս նիւթէր՝ հայէին 'ի նա բնաւ արգելք։ Ոչ յորժամ ասէ, “Որպէս պատուիրեաց ինձ հայր՝ այնպէս առնեմ„ և “Ես յանձնէ ինչ ոչ խօսիմ„, բազումք յայնժամ հաւատացին 'ի նա. և նշանակէ աւետարանիչն՝ եթէ “Մինչդեռ նա զայն խօսէր„։

Իսկ արդ եթէ խոնարհութեան բարբառն հաւատս ծանուցանէ, իսկ որ բարձրութեանն է՝ այն փախուցանէ, իսկ արդ ո՞չ յետին անմտութիւն իցէ չիմանալ խոնարհացն զհանգամանս եթէ վասն լսողացն ասացաւ։ Քանզի և այլուր մեծ իմն կամեցաւ ասել և լռեաց, զայս իմն հանգամանս մատոյց և ասէ. “Բայց զի մի գայթակղեսցին, տար ընկեա զկարթ 'ի ծով„։ Այն օրինակ և աստ՝ յետ ասելոյն իմն թէ “Գիտէի ես զի

յայնժամ տկարագոյնք էին, եթէ ոչ բազում անգամ լսէին՝ ոչ հաւատային։ Նա և ոչ այնու շատանային, այլ և քարկոծ առնէին և հալածէին և սպանանել ձեռնարկէին և հայհոյիչ կոչէին, վասն զի ասէր՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։ Դարձեալ դիւահար զնա կոչէին, յորժամ ասէր մահու վեհագոյն լինել զլսողս բանից նորա։ Եւ յորժամ ասէր՝ թէ ես 'ի հայր և հայր յիս. և թէ՝ ես եմ հացն կենաց իջեալ յերկնից, թողուին զնա և գայթակղէին 'ի նա։ Իսկ յորժամ ասէր՝ թէ որպէս պատուիրեաց ինձ հայր այնպէս խօսիմ, և թէ յանձնէ խօսիմ և ոչ ինչ, յայնժամ հաւատային։ Իբրև զայս խօսեցաւ, ասէ, բազումք հաւատացին 'ի նա. զոր և ցուցանէ աւետարանիչն զայն ասելով։

Եւ զի նորա խոնարհագունիցն հետևէին, և յորժամ զբարձրագոյնսն խօսէր՝ հեռանային 'ի նմանէ, որպէս ոչ է վերջին անմտութիւն, զի ոչ առանձնեն զբանիցն պատճառսն թէ վասն լսողացն ասացաւ։ Նա և այլուր մեծագոյն ասել խորհէր և լռէր, և զպատճառս զայս յաւել և ասէ. « Բայց զի մի գայթակղեսցին, երթ 'ի ծով և ընկեա կարթ »։

յամենայն ժամ լսես ինձ„, ած թափեաց փաղփաղա-կի՝ եթէ “Վասն ժողովրդեանս առնեմ ասացի բազ-մութեան, զի հաւատասցեն„:

Իսկ արդ միթէ մե՞ք ինչ իցեն բանքդ և կամ թէ կարծիք ինչ մարդկօրէն, զի յորժամ յիրաց անտի ըն-տաւգեսցուք եթէ գայթակղին 'ի բարձրագոյն բանից անտի, և ինքն իսկ ասէ՝ եթէ վասն այնորիկ իսկ խո-նարհագոյնս բարբառիմ զի մի գայթակղեսցին, արդ ո՞ իցէ որ բաւօղ բարուց կարծէ զխոնարհագոյն բանս ե-թէ իցեն, և ոչ իշխանք: Այլ ուրեմն բարբառս ասէ. “Ոչ եթէ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ վասն ձեր„: Իսկ արդ բարձուն վայել իցեն վասն նորա խո-նարհ բանքն. իսկ խոնարհին օրէնք չեն մեծ և բարձր ինչ բարբառել: Որ այս վասն խոնարհութեան ըստ զիջանելոյն լինի, և վասն ուսման տկարութեան պատ-ճառք են՝ զի ածել մարթիցէ 'ի խոնարհութիւն, և ըղ-մարմին զի զգեցեալն էր, զի կրաւել մարթասցէ ըղ-լողսն մի ինչ յանձինս իւրեանց հպարտանալ, և զի կարծեսցեն եթէ ած ընդդէմ է, և զի անհաւատն սա-նէին եթէ յայ եկեալ է, և զի կարծեին . . . տանէդ տանէդ 'ի հին կտակարանն՝ եթէ տէր ած քո տէր մի է: Այլ որ խոնարհ ոք իցէ և վասն իւր բարձունս բար-բառիցի, ոչ ինչ են այն պատշաճք և ոչ իրաւարանք.

Զոյն և սոսա ասէ. քանզի յետ ասելոյն եթէ «Գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ», ասէ անդէն թէ «Վասն ժողովրդեանս որք շուրջ կան առնեմ զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս»:

Արդ միթէ մեր իցեն բանքս, միթէ մտածութեամբ մարդկան են ա-սացեալ, զի եղելոց իրաց ոչ հաւանիք մինչ յանդիման տեսանեմք, ո-րով գայթակղէին 'ի բարձրագունիցն. ինքն իսկ ասէ՝ թէ վասն այնո-րիկ խոնարհագոյնս խօսիմ զի մի գայթակղեսցին, մի՛ արդեօք ընդու-նեամբ լինել զհաւաստագոյնն կարծիցէ բանս, և ոչ զիջանելոյ: Քան-զի և այլուր ձայն եկեալ 'ի վերուստ ասէր. «Ոչ վասն իմ եկն ձայնս այս, այլ վասն ձեր»: Արդ ուրեմն 'ի բարձրագունիցն հարկ էր ասել բազում ինչ վասն իւր զխոնարհագոյնս. բայց դու զխոնարհագոյնն մի այլ ազգ համարիցիս. քանզի այնորիկ զիջանելոյ վասն լինէին. և տեսողացն և լսողացն տկարութիւնն ունի պատճառս զզիջանելն 'ի խոնարհութիւն. այլ և մարմինն ունելն, որով կրօտէր զլսողսն ոչ ինչ մեծագոյն վասն անձանց իւրեանց խօսել, և զի մի համարեսցին զնա լինել ընդդիմակաց Աստուծոյ, զի և ոչ հաւատային զալն նմա յայ, և կարծէին լուծանել զօրէնսն, և վասն մախանաց լսողացն, և զասելն յաճախս 'ի հնումն՝ տէր ած քո տէր մի է: Քանզի այն որ փոքր է ընդու-նեամբ, բարձրագոյն ինչ վասն անձին իւրում խօսել՝ ոչ և ոչ մի ինչ

այլ ժպրհութիւն է այս, անպարհամարձութիւն յան-դգնութիւն առանց թողութեան։

Իսկ ընդէ՞ր բնաւ այնպէս խոնարհագոյնս բարբառէր, զի ինքն յաճախ յանձնառոյց ինքնութեանէ յիշխութէ յայնմանէ էր։ Ասա այսորիկ զոր ասացաքս իսկ, զի մի բնաւ ոք ուրեք համարեսցի եթէ անծին իցէ․ քան-զի և Պաւղոս այսպիսի իմն երևեցուցանէ եթէ եր-կեաւ, վասն այսորիկ և ասաց․ “Նայց յայնմանէ որ հնազանդեցոյց նմա զամենայն„։ Ոչ ի անօրէն նմա այս կարծիք․ առ' եթէ կրսերագոյն է քան զծնողն և այլոյ իշխութեան իրիք հաւասար կարծեսցէ թէ իցէ, ոչ եթէ զամենայն ինչ առնէ․ այլ իբրու թէ ոչ ոք կարծիցէ զայս, այժմ որ ընդդէմ է' զայն առնէ յաւել ասելն․ “Եթէ ոչ գործիցեմ զգործս այնորիկ որ առաքեացն զիս, մի հաւատայք դուք ինձ„․ և զի ասաց' եթէ “Ես 'ի Հայր և Հայր յիս„, զհաւասարութիւնն յայտնապէս ցուցանէ մեզ։ Ոչ ի պարզ և պատշաճ էր մեծաւ առատա-կութեամբ քակել զայն կարծիս' եթէ կրսերագոյն ինչ զիջեալ էր, և ոչ ուրեք բնաւ ամենևին ասել արժան էր' եթէ ես 'ի Հայր և Հայր իմ յիս․ և կամ թէ մի եմք մեք․ և կամ տեսեալն' որ ետես զիս ետես զՀայր իմ։ Նոյնզի վասն զօրութեանց է բանդ․ “Ես տեսեր, ասէ, Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյն-պէս և որդի զոր կամի կենդանի առնէ„։ Ոչ ի գործ մի անհնարին է այս, եթէ այլոյ իրիք զօրութեան կամ իշխութեան էր առնել զայս, եթէ ոչ ընդդէմ ամն էր

պատճառս ունի բարբառոյ, այլ հպարտութիւն միայն և անպարկեշտութիւն և յանդգնաբար համարձակութիւն, որոյ ոչ գոյ թողութիւն։

Ապա էր վասն խոնարհագոյնս խօսի, հարցանես, նա որ յանձնառուն և 'ի մեծ զգուշութենէ յայնմանէ էր։ Ըստ առաջելոյս վասն, և զի մի ոք առանց ծննդութեան համարեսցի․ քանզի և Պօղոս յ[illegible] երև-ման զարհուրեալ, վասն որոյ և ասէ․ «Բաց յայնմանէ որ հնազան-դեցոյց նմա զամենայն»․ անպարշտութեան զայնպիսի կարծիս համա-րեալ․ քանզի և ինքն եթէ նուաստագոյն քան զծնողն էր, ապա յայն-մէ զգուշութենէ Թերևս համարեալ լինէր, և ոչ էր առաքեալ զամենայն նմանն հօրն որպէս և նոքա համարէին։ Ապա այժմ ընդդէմ այսպիսեացս զհակառակն զինեալ ասէ․ «Եթէ ոչ գործեմ զգործս այնմ որ առաքեացն զիս, մի հաւատայք ինձ»․ և գործելով եթէ «Ես 'ի Հայր և Հայր յիս է»․ որով զհաւասարութիւնն ցուցանէ․ և գործելով «Որ-պէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և որդի զորս կամի կենդանի առնէ»․ զմի և զնոյն իշխանութիւնն ցուցանելով և զմիակամութիւնն։ Եթէ պակաս ինչ էր 'ի հօրէ, արժան էր փոխ-

Digitized by Google

այս. և որ ոչ էր արժանի և ոչ ածել նմա՝ զայն խօսի բազում անգամ, որչափ եւ տանել նմա յայնժամ. Մինչ զի ասէ, "Ոչ ի պատուեսցեն զորդի որպէս զպատուեն զՀայր". և որպէս ասէն եթէ "Զործն զոր նայն գործէ, այնպէս և ես գործեմ". և որ ասէն զանձնէ՝ թէ ես եմ յարութիւն, և ես եմ լոյս և կեանք աշխարհի, հաւատարեալ է այն ծնողին, և զկարծիսն հաստատեալ է զոր նոքայն ունէին։ Իսկ արդ զի զօրէնսն ոչ լուծանէ, այսչափ ինչ ասէ և առաքինեայ. բայց ըղձայումն հաւասարութեան որ առ Հայր է՝ ոչ միայն ոչ քակէ և զինչուցանէ, այլ և հաստատեալ բարձրացուցանէ։ Իսկ յորժամ ասէն "Հայհոյես զի զանձն քո ածն առնես", 'ի գործոյն հաւասարութենէ հաստատեաց զնա։

Ոչ ի տանեմ և որդի զայս արար. քանզի ու և Հայր որ ոչ մարմին զգեցաւ, քանզի և նոյն ինքն յանձն առ բազում ինչ և վասն փրկութեան լսողացն՝ խոնարհագոյնս խօսի. այն զի ասէ. "Խորհեցից եթէ ըստ ապաշխարի նոցա կատարել". և այն զի ասէ՝ եթէ "Այժմ ծանեայ թէ երկնչիս դու յինէ". և այն զի ասէ.

Թանաքի և մեծապէս արդարութեամբ խափանել զայսպիսի կարծիսս, և ոչ ասել բնաւ՝ թէ Հայր յիս և ես 'ի Հայր. կամ թէ՝ ես և Հայր մի եմք. և թէ՝ որ տեսեր զիս, տեսեր զՀայր։ Այսպէս թէ մի եմք, զմի բնութիւնն և զզօրութիւնն ցուցանէր. և թէ՝ Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և որդի. այսու զմի կամս և զիշխանութիւնն ցուցանէր. զոր անհնարին էր գործել, եթէ յայլ էութենէ էր. կամ թէ հնար ինչ էր՝ ոչ էր առացեալ զայս, զի մի համարեսցի թէ մի է և ինքն նոյն բնութեամբ։ Զի մի համարեսցին զնա հակառակ ոյ, վասն այսորիկ բազում անգամ զանձնանս և զանմատոյց ինքեան խօսէր, և տանել եւ յայնժամ պատշաճ էր խօսել։ Իսկ ասելն թէ «Պատուեն զորդի որպէս պատուեն զՀայր». և թէ «Զգործն զոր նա առնէ, նմին նմին և ես առնեմ», և զանձնէ ասելն յարութիւն և կեանք և լոյս աշխարհի, հաւասարակից զինքն առնէ ծնողին և զկարծիսն հաստատէ զոր ունէին 'ի վերայ նորա։ Արդ այժմ զի մի լուծցէ զօրէնսն, զայս առնելոյն խօսի. և զկարծիսն զոր ունէին՝ զի հաւասարէր զինքն ընդ Հօր, ոչ եթէ ոչ խափանէր միայն, այլ և հաստատէր եւս։ Իւ այն զի ասացին թէ հայհոյես զի զանձն քո ած անուանես, 'ի հաւասարութենէ գործոցն ստուգեաց։ Իսկ զխոնարհագոյնսն ոչ ասեմ թէ ինքն որդի զայս միայն գործեաց բանիւք բազմօք, այլ և Հայր իսկ՝ որ չէր մարմին զգեցեալ՝ յանձն էառ ասել զանձնանան վասն իւր ընդ բազում ատեղիս յաղագս կենաց լսողացն. իբրև այն թէ «Ո՞ւր ես, Ադամ». և զարմանալ «Այժմ ծանեայ զի երկնչիս դու յինէն». և «Թերևս լուիցեն, ասէ. Թերևս դարձցին». և թէ «Գուցէ եղիցի սիրտ

«Լսնուցեն աղբերք թէ իցէ, և 'ի մօր զեղեն»։ և այն զի ասէ՝ թէ «Ո՞վ տացէ սիրտ ժողովրդեանս այսմիկ այսպիսի լինել»։ և զի ասէ. «Ոչ ոք գոյ նման քեզ 'ի հրեշտակս, տէր»։ և բազում և այլ ինչ այսպիսիս 'ի հնոց կտակարանաց, և եթէ ընտրեսցէ ոք՝ անարժան աստուածոյն ոչ գտցէ։ Զի կայցէ և առ Մովաբ իսկ որ ասէ. «Ո՞վ երթիցէ պատարեսցէ ինձ զՄովաբ»։ Այլ որ մերձն զնոյն հեթանոսաց իբրև 'ի հաւատարութիւն զանձն մատուցանէ, այն ամենայն անարժան է ծնու-թեանն. այլ յորժամ յայլ ազգ է՝ արժանի լինի։

Զի այնպէս մարգարէր է, իբրու զի վասն փրկու-թեան մարդոյ որ ինչ վայելէն բանք պատուէր նորա՝ վասն այնորիկ արհամարհէ զայն։ Քանզի այն իսկ զի մարդն լինէր, և զանարժանն և զարժանի ծառայեն կեր-պարանս յանձն առնու, և զխոնարհութեան խօսէր բանս, և առաւել եթէ առ պատիւ անձին առ այն որ հայի՝ անարժան է չափուց նորա. այլ՝ եթէ արժանի որ համարի՝ յորժամ զանչափ մեծութիւն մարդասիրու-թեանն որ զանձն ածիցէ։

Նոյնգան և այլ խոնարհութեան բանից հանգա-մանք. զի զհայր գիտէին իսկ և զարմացեալ էին, բայց զնա ոչ գիտէին. վասն այնորիկ յանձանս 'ի նա հայէին իբրև յայտնեալ ամենեցունց, իբրու եթէ ինքն չիցէ հաւատարիմ. իբրև ոչ թէ իւրով անկուածութեանն, այլ անդ յանմտութենէ լսելեաց և առ տկարութե-

ժողովրդեանս այսմիկ այնպէս»։ և այլ բազում բանք ասացեալ որ կան 'ի հնումն. զորս եթէ ոք խնդրեսցէ, գտանէ զնոսա զի ոչ վայելէին մեծութեանն այլ։ Եւ վասն Աբրաամու է ասացեալ եթէ «Ո՞վ կոչեսցէ ինձ զԱբրաամ»։ Եւ այն իսկ որ հանապազ իբրև կերպիւ հաւանեցաւ-րով զնէր զանձն իւր ընդդէմ ամենայն հեթանոսաց, և այլ անթիւ բանք որ ոչ վայելէին այլ. բայց թէպէտ և բան խնդրեան ոչ վայելէին, այլ առա-կայն բան մեզ վայելէին։

Զի այնչափ սիրէ զորդիս մարդկան, որ վասն կենաց մերոց զբանս որ առաւ էին մեծութեանն նորա՝ անարգս առնէ։ Իսկ նմա որ կէլ և խո-նարհեցաւ և մարդացաւ վասն մեր՝ ամենայնքն վայելէ է և ոչ վայելէ է. և զի խօսեցաւ զմարդկօրէնս՝ ոչ վայելէ է նմա յորժամ հայիս 'ի մե-ծութիւնն նորա. բայց եթէ հայի ոք 'ի բազում ողորմութիւն նորա՝ յոյժ վայելէ է։

Նա և այլ պատճառ է խոնարհութեան բանիցն. քանզի զհայր ծա-նուցեալ էին և պատուականն ընդ նմա, բայց զորդի ոչ գիտէին. վասն այսորիկ հանապազ առ նա զառանէր. իբրև թէ առ այն յոր հաւա-տային՝ զինքն տանկանէին ոչ ունէին իբրև զՀրեշտակս. ոչ վասն արհա-

նէ. վասն այսորիկ կայ յաղօթս և ասէ. "Հայր, գոհանամ զքէն զի լուար ինձ": Իսկ արդ եթէ կամի կեցուցանել, ընդէ՞ր աղաչէ։ Ո՛չ որժամ իսկ է 'ի գլխոյն տեղի ի՞ջանել։

"Եւ իբրև բարձին, ասէ, զվէմն, համբարձ Յիսուս զաչս իւր և ասէ. Հայր, գոհանամ զքէն զի լուար ինձ. այլ վասն ամբոխի ժողովրդեանս որ շուրջ կան՝ ասացի, զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս": Արդ ե- կայք հարցցուք վնասս զհերձուածողացն. յաղօթից անտի ասէք մեծ օգնականութեանց. առ՝ որ յարոյց զմեռեալն. իսկ զիա՞րդ զայս անհնարին առանց աղօթից գործէ, զի ասէ՝ "Քեզ ասեմ, դու, ել 'ի գահանէ". և այլուր ասէ. "Կամիմ սրբեաց". և այլուր. "Արի առ զմահիճս քո և գնա". և դարձեալ ասէ. "Թողեալ լիցին քեզ մեղք քո". և ցծովն ասէ. "Լուռ լեր, դադարեա, կարկեա, կաց": Իսկ արդ զի՞նչ է ասել քան զառաքեալսն եթէ աղօթիւք գործէ զոր ինչ գործէին։ Մանաւանդ եթէ նոքա իսկ ոչ աղօթիւք առնէին զոր ինչ առնէին. այլ և առանց աղօթից իսկ զանուն Յ͞ոյ կարդային, և կատարէին զոր առնէին։ . . . Ապա եթէ աղօթք պիտոյ էր, անուն ոչ ինչ զօրէր գործել։ Իսկ ընդէ՞ր յորժամ զմարդն արար, ո՞ր աղօթք պիտոյա-

մարդկութեան ինքեան, այլ վասն անձնաւութեան և չարութեան, այլ և տկարութեան լսողացն. վասն որոյ աղօթէ և ասէ. « Հայր, գոհանամ զքէն զի լուար ինձ »։ Եթէ զորս կամի կենդանի առնէ որպէս և Հայր, ապա վասն էր ինքն առ նա աղօթէր։ Բայց ժամ է մտանել 'ի նոյն բանս աղօթիցն։

« Իբրև առին, ասէ, զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հայր, գոհանամ զքէն զի լուար ինձ. և ես գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ. այլ վասն ժողովրդեանս որ շուրջ կան՝ ասացի, զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս »։ Արդ հարցցուք հերձուածողացն. աղօթելո՞վն զօրութիւն առ և յարոյց զմեռեալն. ապա ընդէ՞ր զայլսն առանց աղօթից առնէր. ասէ. « Քեզ ասեմ, այս աղջիկ, ել 'ի գահանէ ». և թէ « Կամիմ սրբեաց ». և թէ « Առ զմահիճս քո և գնա ». և թէ « Թողեալ լիցին քեզ մեղք քո ». և ծովուն ասէ, « Լռեա կարկեցո ». և ցմեռեալն. « Արի կաց, մնաւանդ դու »։ Արդ եթէ այնպէս է ըստ ձեզ, ապա զի՞նչ առաւելութիւն ունէր քան զառաքեալսն եթէ աղօթելով առնէր։ Մանաւանդ զի և նոքա ոչ զամենայն աղօթիւք գործէին, այլ և բազում անգամ առանց աղօթից, յիշելով միայն զանունն Յիսուսի։ Իսկ եթէ անուան նորա այնչափ զօրութիւն ունէր, որպէս նա աղօթից կարօտանայր։ Քանզի եթէ աղօթից կարօտէր, ապա ոչ անուան նորա այնչափ պատճառելիս գործէր։ Իսկ յորժամ առնէր զԱդամ, ո՞ր աղօթից կարօտանայր. ո՞չ ապաքէն բազում համարձակութ-

ցանկանա անդր. ոչ համանիկ հաւասարութիւն էր, "Ա֊րարցուք, ասէ, մարդ ըստ պատկերի մերում": Եւ զինչ անկարագոյն է քան զայն յորժամ աղօթք պիտոյ են: Տեսցուք սակայն ունեցուք զինչ յաղօթքն կայցեն:

"Հայր, գոհանամ զքէն զի լուար ինձ": Իսկ ով որ երբէք այսպէս ուրեք աղօթս արար. մինչ չև ինչ ասա֊ցեալ է, գոհանամ, ասէ, զքէն. յայտ արարեալ թէ ոչ ինչ պիտոյ էին աղօթքն: Ո՛չ զամենայն ինչ ասա֊ցես, ասէ, զոր ես կամիմ: Իբրու ոչ եթէ ինքն անկար ինչ էր, այլ եթէ իբրև մի խորհուրդք և մի կամք իցեն երկոցունցն: Իսկ զինչ բնաւ պիտոյ էր աղօթից նշմա֊րանս առնել յանձն: Ո՛չ յինէն լուէք, այլ 'ի նմանէ իսկ որ ասացն. ասէ. "Վասն ժողովրդեանս ասեմ, զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս": Ոչ ասաց՝ զի հաւատասցեն թէ կրտսեր եմ ես, և կամ թէ պիտոյ է ինձ մեծ օգնականութեան 'ի վերուստ՝ զի առանց ա֊ղօթից ոչ ինչ կարեմ գործել. այլ ասէ. "զի դու ա֊ռաքեցեր զիս": Արդ եթէ մեկնակ դաւանեալ ինչ իմանամ, զանկար կողմն ծառայութեան իմացեալ, եթէ յանձնէ ինչ ոչ գիտիցէ գործել: Արդ զայս ամենայն թողեալ, զի մի ինչ կարծեսցեն այսպիսի ինչ, պատճառս աղօթից ճշմարտութեանն դնէ՝ զի մի ընդդիմեմ ինչ համարիցին, կամ ասիցեն թէ չէր իսկ բնաւ յԱյ. զի ցուցից ըստ քոց կամաց զգործն հաստատել. իբր ոչ միայն թէ ասիցեմ զի թէ և ընդդիմեմ՝ ոչ էր հնա֊

միակամութիւն էր անդ. ասէ. «Արարցուք մարդ ըստ պատկերի մե֊րում»: Արդ զի՞նչ գոյր անդոր քան զնա եթէ աղօթից կարօտէր: Այժմ տեսցուք թէ զի՞նչ էին աղօթքն:

«Հայր, գոհանամ զքէն զի լուար ինձ»: Եւ ե՞րբ այսպէս աղօթեաց երբէք. յառաջ քան զգործելն ասէ՝ գոհանամ զքէն. յայտ առնե֊լով թէ ոչ կարօտանայ աղօթից: Ասէ. զամենայն ինչ գործեմ որ֊պէս և կամիմ: Ոչ եթէ առ ինքն անկարող էր, այլ իբրև զի մի կամք էր նորա և հօր: Եւ է՞ր վասն զձև աղօթիցն առնու: Մի՛ յինէն լուի֊ցես, այլ յասացուածէն «Վասն ժողովրդեանս որ շուրջ կան, զի հաւա֊տասցեն թէ դու առաքեցեր զիս»: Ոչ ասաց՝ զի հաւատասցեն եթէ կրտսեր եմ և կարօտ եմ 'ի վերուստ օգնականութեան քոյ, և առանց աղօթից ոչ ինչ կարեմ գործել. այլ ասէ՝ թէ «դու առաքեցեր զիս»: Եւ ոչ ասաց՝ եթէ առաքեցեր զիս զանկարս որ զծառայութիւն գիտէ և յանձնէ ոչ ինչ առնէ: Այլ զայս ամենայն թողեալ, զի մի դու վայ֊րապար կարծիս տացես, վասն այսորիկ դնէ զճշմարիտ պատճառն ա֊ղօթից, զի մի համարեսցին զնա հակառակ Այ, և մի ասիցեն եթէ ոչ է եկեալ դա յԱյ. զի ցուցից, ասէ, կամաք քո զգործն եղեալ. և զի ծա֊

Digitized by Google

ըեալ լինել որ լինէրն։ Այլ զի ասէ՝ Լուար ինձ, զայս և առ բարեկամս ասէ և առ համօրէն պատուականս։ «Եւ ես գիտէի թէ յամենայն ժամանակի լսես ինձ». այսինքն կատարել զկամս իմ՝ ոչ ինչ պիտոյ են աղօթք առ 'ի գործել, վասն զի մի է խորհուրդք. իսկ աղօթք վասն տկարաց է և թերահաւատից։

«Եւ զայս իբրև ասաց, 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Ղազարէ, եկ արտաքս»։ Ոչ ինչ ընդդէր ոչ ասաց՝ թէ յանուն հօր իմոյ եկ արտաքս. ընդդէր ոչ ասաց՝ Ե-թէ Հայր, յարո զդա. այլ զամենայն թողեալ՝ զաղօ-թիցն կերպարանս առեալ գործովք և արդեամբք ինք-նակամակար իշխանութիւն ցուցանէ։ . . . բանիւք ընդ իմանելն, այլ գործովքն և արդեամբք զիշխանութիւն ցուցանել։ Վասն զի այլ ինչ չկամէին մեղադիր լինել Քրիստոսի, այլ զայս միայն ասէին՝ թէ չէ դա յԱյ, և այսուիկ զբաւականն խափանէին. վասն այսորիկ առաւելու-թեամբ ցուցանէ զնոյն օրինակ, զոր օրինակ նոյնպէս իսկ ակնարկութիւն աղաչանքէր։

Ն՝ է մարթ և այլ ազգ միաբանութեամբ հաւասա-րութիւն ցուցանել միով պատուով. այլ վասն ժողո-վրդեանն որ այնչափ կային ցուցանէ. ասէ. «Ղազա-րէ, եկ արտաքս». այսինքն է որ առաջասն իսկ յառաջ. ասէ. «Եկեսցեն ժամանակք զի լուիցեն ձայնի որդւոյն

նիցեն՝ եթէ ընդդիմակաց քո էի, աղաղակէն ոչ էիր թոյլ առնել լի-նել եղելոցն։ Իսկ ասելն թէ լուար ինձ, առ սիրելիսն ասէ և հանդի-սատեսութեանն։ «Եւ գիտեմ զի յամենայն ժամ լսես ինձ». այսինքն առ 'ի լինել կամաց իմոց, զի մի են կամք իմ և քոյդ։ Արդ զինչ են աղօթքն. վասն տկարացն և նուաստազգամնիցն 'ի սէր, 'ի լուր և յի-մաստութիւն։

«Եւ զայս ասելով, ասէ, գոչեաց 'ի ձայն մեծ, Ղազարէ, եկ ար-տաքս»։ Իսկ ընդդէր ոչ ասաց թէ յանուն հօր եկեսցես արտաքս. կամ թէ դու Հայր, յարո զդա. այլ զամենայն զաղօթականս 'ի բաց եհան. և թեպէտ էառ զկերպարանս աղօթից, այլ 'ի նոյն գործս զհրամանն իւր ցուցանէ կատարիչ գործոյն։ Եւ այսպէս ամբառ իմաստութեամբ նորա-նն. զի բանիւք խոնարհէր, և գործով զիշխանութիւնն ցուցանէ։ Եւ այլ ես. վասն զի ոչ ինչ կարէին այլ ինչ մեղադրել Քրիստոսի, բայց թէ չէ դա յԱյ, և զբաղումս պատարէին. վասն որոյ մեծապէս զնոյն ցուցանէ, և առ կերպս տկարութեանն նոցա զիջանէ։

Կարող էր և այլ ազգ ցուցանել զհաւասարութիւնն ընդ հօր և զիշ-խանութիւնն. այլ ոչ էր կարող ժողովուրդն յայսպիսի բարձրութիւնս ելանել. ասէ. «Ղազարէ, եկ արտաքս». այս այն է որ ասաց. «Ե-կեսցէ ժամանակ և արդէն իսկ է. յորժամ մեռեալք լուիցեն ձայնի

Digitized by Google

ծոյ, և որք լուիցեն կեցցեն,,: Որպ՟ զի մի կարծիցես եթէ յումեքէ առեալ զզօրութիւնն, 'ի վերուստ քեզ զայս ցուցանէ, զոր արդեամբք և գործովք յայտնէր: Այլ ոչ ասաց՝ թէ արի կաց, այլ ասէ՝ եկ արտաքս. իբրև ընդ կենդանւոյ խօսի ընդ մեռեալն:

Ոչինչ ինչ այսմ զուգել համեմատ կարէ լինել: Իսկ արդ եթէ ոչ իւրով զօրութեամբ զայս առնէր, զի՞նչ աւելի եւս իցէ քան զառաքելոյն որք ասեն. "Ո՞ ընդ մեզ պշուցեալ հայիք, իբրու թէ զի մերով իշխանութեամբ կամ զօրութեամբ արարաք զայս՝ առ ընգնալդ դմա,,: Ո՞ր թէ ոչ իւրով զօրութեամբն առնէր, և ոչ գնէր զայս զոր առաքեալքն վասն իւրեանց ասացին. ապա երեւեցին նոքա Ճարտարացեալք առ 'ի ընդհարկանել փառացն: Այլ դարձեալ. "Ո՞ր կայք հայեցեալք, մարդիկ իբրև զձեզ,,: Իսկ առաքեալքն քանզի ոչ յանձնէ ինչ գործ գործէին՝ զի զամենայն ինչ ասէին զի զմիտս հաճել մարդկանցն, իսկ ինքն զի այնպիսի վասն անձին իւրոյ կարծիս ունէին նոքա՝ ոչ համէր զկարծիսն եթէ ոչ իւրով զօրութեամբն գործէր զոր ինչ գործէր: . . .

Այլ ասէ. "Վասն ժողովրդոցս՝ որ շուրջ կան զինև ասացի, զի հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս,,: . . . Եթէ չէր անարժան նմա յաղօթս կալ. . . ընդէ՞ր ոչ

որդւոյն ծոյ, և որք լսեսցեն կեցցեն »: Եւ զի մի կարծիցես եթէ յումեմէ եառ զներգործութիւնն, յառաջագոյն 'ի վերուստ ուսոյց զքեզ և գործով եցոյց: Եւ ոչ ասաց՝ եթէ արի, այլ եթէ եկ արտաքս. իբրև ընդ կենդանւոյ խօսէր ընդ մեռելոյն:

Զի՞նչ այսպիսի իշխանութեանս հաւասար լիցի: Արդ եթէ ոչ իւրով զօրութեամբն զայս առնէր, զի՞նչ առաւելագոյն ունէր քան զառաքելոյն որք ասէին՝ եթէ « Ընդ մեզ զի՞ զարմանայք, իբրև թէ զօրութեամբ կամ աստուածութեամբ մերով գործեցաք զգնալս դորա »: Իսկ եթէ սա իւրով զօրութեամբն ոչ ներգործէր, ապա զի՞նչ ոչ աւելորդ զայն զոր առաքեալքն ասէին. ապա զտանին նոքա մեծաւանդ խոնարհամտագոյնք և ժուժկալք ընդդէմ անարգութեան արհամարհելով զփառս. քանզի մերժեցին յանձանց իւրեանց զփառս նշանին, որք և ասէին. « Ընդէ՞ր հայիք 'ի մեզ, և մեք մարդիկ եմք ախտակիցք իբրև զձեզ »: Եւ քանզի նոքա ոչ ինչ գործէին անձնիշխանութեամբ, և յամենայն անդուռ զնոյնս խոստովանէին, նա ինքն որ այնչափ փառս ունէր, ոչ էր զձգողութիւն յինքն բարձեալ, այլ զնոյն կարծիս խափանէր եթէ ոչ անձին իշխանութեամբ ներգործէր: Եւ ո՞վ արդեօք զայս ասիցէ: Այլ նա և զհակառակն ասէ:

« Վասն ժողովրդեանս որք կան աստ, ասացի զի հաւատասցեն »: Իսկ եթէ հաւատացեալ էին, ոչ էր ազնիւ աղօթքն, և եթէ ոչ անար-

ասաց՝ եթէ զի հաւատասցեն սոքա եթէ չեմ ես քո հակառակ: Պարտ և պատշաճ էր 'ի վերայ կարծեացն եղանել: Այլ յորժամ կարծէին եթէ զօրէնս լուծանէ, զբանն զայն ասէր. զի նոցա և ասացեալ ինչ չէրեւէր. "Մի կարծիցէք, ասէ, եթէ եկի ես լուծանել զօրէնս"․․․․: Իսկ արդ զինչ պիտոյ էր այնչափ շուրջ գալ առակօք. շատ իսկ այնչափ էր ասացեալ թէ չեմ հակառակ բնաւ, և 'ի բաց կալ: Ո՛վ խորհրդ, չասաց, ասէ, թէ չառնեմ զկամս իմ: Եւ զայս ծածկագոյնս առնուցուն 'ի տկարութենէ անտի, և 'ի նոցունց իսկ պատճառանաց ուսանի աղօթքն եղեն:

Իսկ այն զինչ է "զի լուար ինձ"․․․ ոչ զայս ինչն ցուցանէ յայտնի եթէ անձամբ ոչ կարէ. զի եթէ այդ այդպէս է, ոչ տկարութիւն միայն է, այլ և ապիկարութիւն. զի եթէ յառաջ քան զաղօթսն ոչ ճանաչէր իցէ նմա ուժ և ոչ գիտէր, զիա՞րդ ասէր՝ երթամ զի զարթուցից զնա. և ոչ ասաց եթէ երթայց յաղօթս կացից առ Հայր, զի զարթուցից զնա: Այլ զոր օրինակ այս ոչ 'ի տկարութենէ է, այլ 'ի միաբանութենէ, սոյնպէս զոր ասէն՝ բայ. "յամենայն ժամանակի լսես ինձ": Եւ կամ թէ իցէ ասել եթէ առ նոցա կարծեացն ասացաւ: Ապա եթէ ոչ տգէտ էր և ոչ տկար, յայտնի է եթէ վասն խոնարհութեան բանից է զոր

ժան էր նմա աղօթելն, ապա վասն էր զպատճառանն՝ նոցա հաւանելի. ընդէ՞ր ոչ ասաց՝ թէ հաւատասցեն եթէ ոչ եմ հակառակ քո: Զի պատշաճ էր ըստ կարծեաց նոցա գնալ: Յորժամ համարէին զնա լուծիչ օրինացն, զնոյն բանս եդ. մինչ նոքա ոչ ինչ ասացին՝ ասէ. «Ոչ եկի լուծանել զօրէնսն կամ զմարգարէս, այլ լնուլ». իսկ աստ հաստատելով հաստատէ զկարծիս նոցա: Եւ զինչ պիտոյ էր նմա այս ամենայն շրջապատութիւն և առակք. բաւական էր ասել միայն բանիւ եթէ ոչ եմ նման հօր, և ազատել զանձն: Այլ զինչ ասեն. ո՛չ ասաց՝ եթէ ոչ առնեմ զկամս իմ: Այլ և այս իսկ պատրուակ է և առ 'ի միտս նոցա, ըստ նոյն պատճառի էր և աղօթելն:

Արդ զինչ իցէ եթէ «լուար ինձ»: Այսինքն եթէ ոչ է հակառակութիւն իմ առ քեզ. այլ ամենայն ինչ որ քո է՝ իմ է: Իսկ եթէ անկարութեան էր աղօթքն, որ և ոչ զայս յայտնէ եթէ ինքն ոչ կարէր. ապա թէ այնպէս է ըստ ձեզ, ոչ անզօր միայն էր, այլ և անգէտ, զի յառաջ քան զաղօթելն ոչ գիտէր եթէ լսէ նմա ուժ. և եթէ ոչ գիտէր, զիա՞րդ ասէր՝ թէ երթամ զարթուցանել զնա: Եւ ոչ ասաց՝ երթամ աղաչել զհայր զի յարուսցէ զնա: Ապա որպէս այլ բանքն ոչ էին տկարութեան, այլ համաձայնութեան, սոյնպէս և այն՝ թէ յամենայն ժամ լսես ինձ: Իսկ եթէ ոչ անգիտանայր և ոչ տկարանայր, քաջայայտ է եթէ վասն այնորիկ խոնարհագոյնս խօսի բանս, զի 'ի

Digitized by Google

տեսոյն. զի գոհանայ՝ յառաւելութենէ անտի հաւատասցեն եւ եկեսցեն 'ի խոստովանութիւն, զի գիտասցեն եթէ ոչ ըստ պատուիրանի նորա՝ այլ ըստ խոնարհութեանն ըստ զիջանելութեանն. այլ զի ասէ՝ բայց ըսար խնձ, զայն վասն տկարութեան լսողացն ասէ:

Զի է այսպէս. այլ զի յայտ արասցէ զերկրպագութիւն Ճշմարտութեանն: Ոչ այս չէ Ճշմարտութիւն ցուցանել, այլ յոյժ խոնարհութիւն, և յայտնի առնել թէ ոչ ինչ առ առաւել քան զմարգարէն ունի զանձն իւր. զի կալ յաղօթս ոչ ըստ ծածկութեանն է և ոչ ըստ անթռաւակցութեան: Տեսանե՞ս զի ոչ ուսուցք այլ յայն բան եկն, այլ 'ի թերահաւատութենէ անտի նոցա: Բայց արդ դու տես զգործն զխառն այս վկայութիւն իմաստական յօժարութեանն իշխանութեան նորա:

Ելեալ Ղ. ազատ գայր 'ի գերեզմանէն անտի կապեալ պատանատեալ: Կարծեալ զի մի երեւեսցի գործն թէ իբրև ցնորք ինչ առ աչօք լինիցի, զի չէր փոքր ինչ սքանչելիք քան զյառնելն՝ պատեալ պատատեալ, եւ հրամանն լուծանել, զի և մերձեսցին և շօշափեսցեն և տեսցեն եթէ Ճշմարիտ նա է: Եւ ասէ ցնոսա. "Թոյլ տուք զդա, թողէք գնալ": Տեսանե՞ս զխոնարհութիւն նորա. ոչ եւ հրամանն առ իւր առնել, ընդ իւր շրջեցուցանել, զի իբրև յոյս ինչ երեւեցուցանել զայնպիսի սքանչե-

լեացն հաւանեսցին և հարկաւորեսցին խոստովանել եթէ ոչ ըստ արժանաւորութեանց նորա է, այլ զիջանելոյ և առ տկարութիւն ունկնդրողացն տեսոյն:

Այլ ասեն. ոչ է այսպէս, այլ առ 'ի ցուցանել եթէ մեծ է հայր քան զՈրդի: Առ որս ասասցուք, եթէ այս ոչ զմեծութիւն հօր ցուցանէ, այլ զանչափ խոնարհութիւն անձին իւրոյ, որ հաւասարակցաւ որպէս մարդկան. քանզի աղօթելն ոչ է նոյ, և ոչ անթառակցի նոյ և փառակցի: Տեսանե՞ս զի ոչ յաղագս այլ ինչ իրի եկեալ յայն, այլ առ աստ անհաւատութեան նոցա: Այլ տեսցես և զգործն որ վկայէ իշխանութեան նորա:

Ել Ղազարոս կապեալ ոտիւք և ձեռօք և երեսօք: Եւ զի մի թուեսցի առ աչօք եղեալ իրքն, զի քան զյարուցանելն եղանելն կարապետք ոչ նուազագոյն թուէր հրաշափառութիւն, զկապեալսն և զպատանեալսն նոցա եւ հրամանն լուծանել, զի մերձեսցին և շօշափեսցեն և տեսցեն եթէ Ճշմարիտ նա է: Ասէ ցնոսա. «Լուծէք զդա և թողէք երթալ»: Տեսանե՞ս զխոնարհութիւն նորա. ոչ եւ հրամանն առ իւր առնել և ընդ իւրեան շրջեցուցանել, զի մի իբրև 'ի ցոյցս առնիցէ զսքանչելիսն. «Բազումք, ասէ, 'ի Հրէիցն որք եկեալ էին առ Մարիամ, իբրև տեսին

Digitized by Google

կրեն. և ոմանք զարմացեալ եկին և պատմէին փարիսե-ցւոցն:

Այլ փոխանակ ասելոյ զի պարտ էր սքանչանալ և զար-մանալ, խորհուրդ առնէին զի սպանանել կարասցեն զայն որ յարոյց զմեռեալն: Տեսանես զանմտութիւնն. որ յայլոց մարմին մահու յաղթեաց, 'ի մահ մատնել խորհէին զնա, և որդ ասեն. "Զինչ խորհեսցուք, զինչ գործեսցուք. զի այրն այս բազում և մեծամեծ սքանչելիս առնէ": Այլ այր կոչեն տակաւին, որ զայն-պիսի հանդէս ա̃ծութեան ցուցանէր: Զինչ գործեսցուք: Հաւատալ արժան է և երկիր պագանել, և այ-նուհետև ոչ մարդ համարել:

"Արդ եթէ թողումք զնա, գան, ասէ, Հռոմայեցիք և բառնայցեն զքաղաքս մեր և ջնջեսցեն զազգս մեր": Զինչ է զոր կամին ասել: Այլ զժողովուրդն կամին շարժել, և իբրև առ իւրեանց վշտին առ 'ի կարծեաց բռնաւորաց թագաւորութեան. զի եթէ ամբոխաժողով տեսանեն զնա հաւաքեցելոցն, կարծեն զմէնջ բռնա-դատ թագաւորութեանն, զքաղաքս առնուցանեն:

Իսկ ընդէ՞ր այդ, մի թէ այդ ապստամբութիւն ուսու-ցանէ. ո՞չ ապաքէն հարկ յօժարեցուցանէ տալ կայսեր. ո՞չ թագաւոր զնա կամեցարուք առնել, և փախեաւ. և

զոր արարն Յիսուս, հաւատացին 'ի նա. և ոմանք 'ի նոցանէ գնացին առ փարիսեցիսն և պատմեցին նոցա զոր արարն Յիսուս »:

Սոքա փոխանակ զի պարտ էր զարմանալ և սքանչանալ, խորհուրդ առարին սպանանել զայն՝ որ զյարուցեալ մեռեալն յարոյց: Տեսանես զանմտութիւն նոցա և զչարութիւնն. զի որ յայլոց մար-մին մահու յաղթեաց, 'ի մահ մատնել խորհէին զնա: « Ժողովեցան, ասէ, քահանայապետքն և փարիսեցիքն յատեան և ասեն. զի՞նչ ա-րասցուք, զի այրն այն բազում նշանս առնէ. եթէ թողումք զնա այն-պէս, ամենեքեան հաւատան 'ի նա »: Զի՞նչ արասցուք, ասեն: Հա-ւատալ արժան էր, աղաչել և երկիր պագանել, և այնուհետև ոչ մարդ համարել զնա: Իսկ նոքա ոչ այսպէս. այլ զի՞նչ. մարդ զնա դարձեալ կոչեն. որք այնչափ աստուածութեան առեալ նորա զօրութեանն, որ միայն նոյ էր կարողութիւն: Զի՞նչ ասեն:

« Հաւատասն 'ի նա, ասէ, և գայցեն Հռոմայեցիք և բառնայցեն զքաղաքս մեր և զազգս »: Զի՞նչ իցէ այս զոր ասեն: Առ նախանձու չարութեանն զժողովուրդն շարժել կամէին. զի 'ի մահ մատնեսցեն զնա. իբրև թէ վասն կարծեաց ապստամբութեան խնդրեալք մատնելոց են 'ի նեղու-թիւնս. ասեն, եթէ տեսցեն զնա Հռոմայեցիք զի ժողովէ իւր ժողովս, հա-մարեսցին զմեզ ապստամբս և գան խլեն զքաղաքս մեր:

Արդ էր վասն, ասա ինձ. մի թէ ապստամբութիւն ուսուցանէր. ո՞չ ապաքէն զհնազանդութիւն վարդապետէր և զխոնարհութիւն և

Digitized by Google

ո՛չ պատուհասութեան աներեւոյթ զկնի գնաց. ոչ տուն, ոչ տեղի յերկրի գլխոյ գոյր։ Իսկ իբր ոչ եթէ ակն ու-նէին եթէ նա այնպիսի ինչ լինելոց է, այլ նախանձ չարակնութեան և նենգութեան կարկառէին։ Բայց սակայն նոցա եւ վրիժակն զոր խնդրէինն, և յորում ժա-մու ակն ոչ ունէին՝ կատարեցաւ. քանզի և զքաղաքն բարձին և զազգն ջնջեցին զհրէիցն։ . . .

զանհնչութիւն և համզարտութեանն զհետ երթալ աշխարհական կար-գաց. մինչեւ ո՛չ հրամայէր հարկս տալ կայսեր. ո՛չ առաքէին թագաւոր կամէին առնել զնա, և փախուստ 'ի բաց գնաց 'ի ձէնջ. ո՛չ խռովարհ կերպարանք և կենաց վարեցաւ առ ձեզ, ցուցանելով ոչ տուն և ոչ այլ ինչ։ Այդ զոր ասէին՝ ոչ էր յերկրաւորս, այլ 'ի չար նախանձուէ, վասն նորա ոչ 'ի կարծիս լինելով։ Սակայն եղև ասացն կարծեաց և կասկածանաց. քանզի առեալ Հռոմայեցւոց զազգս նոցա և զքաղաք, բար-ձին զնա։



Digitized by Google

Digitized by Google

# ԵՐԿԲԱՑԱԿԱՆ ՃԱՌՔ

Digitized by Google

Digitized by Google

# ԽՕՍՔ

## ՎԱՍՆ ՀԵՐՈՎԴԻԱԴԱՅ

Պարծեալ Հերովդիաս մոլեգնեալ յանդգնի, պարծեալ կաքաւէ, պարծեալ միւսանգամ խնդրէ զգլուխն Յովհաննու 'ի Հերովդէ անօրէնութեանն կտրել։ Պարծեալ Յեզաբէլ փութայ յափշտակել զայգին Նաբութեայ, և զսուրբն Եղիաս հալածական առնել յանապատ։ Ես այնպէս կարծեմ ոչ եթէ զիս միայն 'ի զարմանս ափշութեան անկանել, այլ զամենեսեան որ լսեն բարբառոյ աւետարանին, և որ զարմանալին էր՝ զՅոհաննու քաջասրտութիւնն և զՀերովդիայ զթեթեւութիւնն և զամբարիշտ կանանցն զգազանական մոլեգնութիւնն։ Զինչ արդեօք լսեաք, եթէ Հերովդէս, ասէ, կալեալ զՅոհաննէս և եդ 'ի բանտի։ Սանկէր արդեօք. վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր իւրոյ։ Եւ պարսաւիցէ ոք արդեօք զանմտութիւնն Հերովդիայ 'ի չուառական կանանցն հրապուրեալ։

Որպէս զիարդ ոք մարթիցէ ասել և կամ պատմել զայնպիսի կանանց զանյագ չարութիւնն։ Ինձ այսպէս թուի եթէ ոչ ինչ է գազան չար յաշխարհի և նման քան զչարութիւն կնոջ։ Այլ այժմ ինձ վասն չարեաց է ճառ բանիս, և ոչ վասն բարեաց և զգաստից. քանզի բազում զգաստս և ցածս և զբարիս զորոց ունիմ յիշատակաւ ցուցանել զվարս նոցա առ 'ի շինած և փափագ գործոց բարեաց։ Ոչ ինչ այսուհետև յաշխարհի գազան չար նման կնոջ չարի։ Զինչ է գազան չար քան զառիւծ 'ի չորքոտանիս, և ոչ ինչ. և զինչ քան զվիշապ խիստ 'ի սողունս, ատոքէն ոչ ինչ։ Բայց քան զկին չար և անզգամ՝ առիւծ և վիշապ 'ի չարութիւնն նուաղեալ գտանի։ Վկայէ իմոյ բանիս և Սողոմոն իմաստ-

Digitized by Google

տուն որ ասէ՝ եթէ «Լաւ է բնակել ընդ առիւծու և ընդ վիշապի, քան ընդ կնոջ անզգամի և լեզուանւոյ»:

Այլ զի մի կարծիցես զիմաստունն եթէ այսպէս ինչ առնելով ասաց զայս, 'ի նմին իրաց իսկ առցես զհանգամանս. զի 'ի Դանիէլէ առիւծքն խորշէին, և զարդարն Նաբութ Յեզաբէլ սպանանէր. ձուկն 'ի փորին իւրում զՅովնան պահէր, իսկ Դալիլա զՍամփսոն գերծեալ զգլուխն այլազգեացն մատնէր. վիշապք և քարբք և իժք 'ի Յովհաննէ յանապատին սարսեալք դողային, իսկ Հերովդիադա զնորա 'ի ճաշն զգլուխն հատանէր. ագռաւք զԵղիա 'ի լերինն կերակրէին, և Յեզաբէլ զնա յետ անձրևացն երախտեացն սպանմամբ հալածէր, և կամ զինչ ասէր. «Եթէ դու Եղիա իցես և ես Յեզաբէլ, զայս ինչ արասցեն ինձ աստուածքն իմ և զայս ինչ յաւելցեն, եթէ ոչ վաղիւ յայս ժամ եդից զանձն քո իբրև զմի 'ի մեռելոց անտի»: Այլ երբեմն Եղիա և մինչև փախստական Յեզաբելէ և երթայր ընդ անապատն փախստեայ քառասնօրեայ ճանապարհ. և զայդ հատանէր 'ի տեղի մի յանապատին, և ընձայեայր զանձն անձին իւրում և ասէ. «Տէր իմ, շատ է ինձ այսուհետև, առ յինէն զոգի իմ, զի չեմ ես լաւ քան զհարս իմ»: Այս ինձ. եղուկ ես, Եղիա մարգարէ երկեաւ 'ի կնոջէ. որ զամենեցուն աշխարհաց անձրևն 'ի լեզուի իւրում բարձեալ կրէր, որ զհուրն 'ի յերկնից իջուցանէր և աղօթիւք զմեռեալս յարուցանէր, երկեաւ 'ի կնոջէ: Այո, ասէ, երկեաւ. քանզի ոչ ինչ հաւասար է այլ չարութիւն ընդ չարութեան կնոջ: Այլ միայն բանիւ իւրոց իմաստութիւնն Սողոմոնի որ ասէ՝ եթէ «Ոչ է գլուխ չար քան զգլուխս օձի, և ոչ չարութիւն քան ըզչարութիւն կնոջ»:

Այլ չարութիւն բանսարկուին և սուր երկսայրի զէն 'ի ձեռն կնոջ 'ի սկզբանէ զԱդամ 'ի դրախտէն ընկճէր. 'ի ձեռն կնոջ զհեզ և զհանդարտն Դաւիթ նենգութեամբ սպանմանն 'ի վերայ Ուրիայի մեղադրեցուցանէր. 'ի ձեռն կնոջ զիմաստունն Սողոմոն մոլորութեամբ կործանէր. 'ի ձեռն կնոջ զքաջ և զառաքինին զՍամփսոն զխաւարեալ կուրացուցանէր. 'ի ձեռն կնոջ զգլուխն Յովհաննու բաժանեալ յատանէր. 'ի ձեռն կնոջ զարդար և զաստուածասէրն զՅովսէփ 'ի բանտս արգելեալ առ

Digitized by Google

դեղոյ. 'ի ձեռն կնոջ՝ Յովհաննու որ Ճրագն էր աշխար-հի՝ գլխատման կարէր։

Այս սորա գիտէ եւ տեսեալ, 'ի ձեռն կնոջ զամենայն որ կատարէ, զամենեսեան սպանանէ, զամենայն որ անար-գէ, զամենայն թշնամանէ։ Այն անամօթ յոք ոչ խնայէ, ոչ զգեստացի պատուէ, ոչ 'ի քահանայէ ամօթի ածնէ եւ ոչ 'ի մարգարէէ խորշի. Ով չարութիւն չարի չար կին անզգամ, թէպէտ եւ իցէ աղքատ. սոյա թէ մե-ծութիւն եւս ունիցի չարութեանն իւրոյ գործակից, կրկին չար անհնարին, գազան առանց ընտանանալոյ բարոյ։ Իսկ տեսեալ է եւ գիտեմ ընտանեցուցեալս աղեր-սանօք, եւ առիւծս եւ վագերս եւ զինձս վայրենականս ընտանեցեալս. իսկ կին անզգամ եւ ապիրատ թշնա-մանեալ մեղեգնի, եւ աղերսեալ հպարտանայ։ Այլ ե-թէ ունիցի իշխան այր, բանիւք իւրովք զնա մեղեալ նը-ղարկէ եւ առ նենգութիւն ապականեսն սրտէ արտէ եւ Հերովդիաս զՀերովդէս։ Իսկ եթէ աղքատ որ իցէ այրն, 'ի կռիւս եւ 'ի յանդիմանս յորդորէ զնա. եւ եթէ այրի եւս իցէ, խնդրի ինքեան զամենայն որ անարգէ։ Վասն զի երկիւղն նոյ ոչ սանձահարէ զլեզու իւր, եւ ոչ ամաչեցուցանէ յուխտանաց ակն ունի, եւ ոչ զպոծ անամօթ իւր դնէ, եւ ոչ զինքնական զուգեն զիւրեւ պահել. ոչ խնչ թուի կնոջ անզգամի զայր իւր մատնել 'ի մահ։

Սա եւ զՅոբ զարդարն կինն իւր 'ի մահ մատնէր եւ ասէր, թէ "Ասա բանս 'ի տէր եւ վախճանեաց"։ Ով հիւթք ստահակութեան, ով բարք զազրութեան. ոչ խնայեաց 'ի գութս անձին իւրոյ զոր տեսանէր ջերմա-ջերմ խաղաղապտոյտն իւրոյ բորբոք կայծականց վառեալ այրեալ, կեղուեքն շուրջ պատեալ, եւ զամենայն զման-մունս նորա յորդանցն մաշեալ։ Եւ խնդրէր յայտ-նութիւն իւրոյ տեսանէր զնա ամենայնիւ աղքատեալ աշ-խարհեալ եւ Ճգնեալ, որ մենամարտութեան զօրհնու-թիւնսն 'ի սրտէ իւրմէ վառաւորեալ բերանովք բերա-նով հանէր գոհութեան նոյ։ Եւ պարգեւէր առ տէր գթոյն. որ երբեմն զթագաւորական զծիրանեալն զգեցեալ էր, յայնժամ 'ի վերայ աղբեղն անկեալ մերկացեալ աւ-նէր, եւ ոչ յիշէր զնեղն զաւակացն ողորմութեանն առ մեծատանս, եւ որչափ վասն նորա փառք եւ բարիք ծաղ-կեցան նմա. այլ ասէր նմա "Ասա բանս 'ի տէր եւ վախ-

ճանճեաց ,,։ Ով երախտիք կնոջ, որ աղեղանիք ցաւոց առ 'ի կակղացուցանել, ով զուլթ զուգակցի. մինչ երբեմն ուրեք 'ի քոյում հիւանդութեան զայցելականի բանս ստաց քեզ, և ոչ աղօթիւք և արտասուք զախտս քո բժշկէր. ոչ էր նմա շատ առժամանակեայ խրատն, այլ յաւիտենականին եւ անվախճանացն նմա առաւել փափաքէիր հայհոյութեանց. և ոչ գիտէիր թէ "Ամենայն մեղք և հայհոյութիւնք թողցին որդւոց մարդկան, իսկ որ հայհոյեսցէ զՀոգին սուրբ, ոչ թողցի ոչ յայսմ աշխարհի և ոչ յայնմ ,,։

Կամեցիս գիտել և այլ մեւս եւս այսր չարութեան հաղորդակից. հայեաց ընդ Դալիլա։ Ով է և նա զայր իւր հզօր և զառաքինին զՍամփսոն զգլխաւորուղին զվարսագեղն զերծոյր և կապէր և այլազգեացն 'ի ձեռս մատնէր զիւր այրն և զանկողնակիցն. որում և հաւատակերն, որում աղերսէրն, որում փաղաքշէրն, զոր քան զկեանսն առաւել սիրէր, կեղծաւորէր. զոր երէկն սիրէր, այսօր մատնէր. որում երէկն փաղաքշէր սիրով, այսօր թաղէր խաբէութեամբ։ Մի՞թէ ոչ էր գեղեցիկ. և ո՞չ էր գեղեցիկ քան զնա յայնմ ժամանակի, որ եօթն փունջ մազաբոլոր վարսին ունէր 'ի վերայ գլխոյն իւրոյ, այսինքն զեօթնական շնորհաց լուսոյն կերպարանս առեալ կրէր։ Նա մինթէ ոչ էր հզօր. և ո՞չ էր քան զնա հզօրագոյն, որ զահաւոր զառիւծն միայն միակին հեղձուցանէր, և միով ծնօտիւ հազար այլազգիս կոտորէր։ Նա և սուրբ էր, որ երբեմն պաշտեալ 'ի ծարաւոյն յանգիտս Ջրոյ՝ կայր յաղօթս, և զոր ունէր 'ի ձեռին իւրում զծնօտն մաշեալ՝ 'ի նմանէ Ջուր բղխեաց, և անտի զպապակումն ծարաւոյն յագեցուցանէր։ Նա զայնպիսի գեղեցիկն, զայնպիսի ուժեղն, զայնպիսի սուրբն իւր կինն իսկ և զԹշնամին պնդակապ այլազգեացն 'ի ձեռս մատնէր։ Նա ուստի արդեօք կինն այնպիսի գեղեցկի, այնպիսւոյ բանն կարաց յաղթել. հարցցես թէ ուստի. յառնին միամտութենէ։ Քանզի զխորհուրդն զօրութեանն նորա գիտէր, զօղանայր նեղութեամբ մերկանդամ եօթնական կարիւքն որ յանգործ փոխոյ, և այնիւ զնա ուժգին այնոզէր։ Վասն այսորիկ պատուէր տայ քեզ Սողոմոն և ասէ եթէ "Յընկողմանակցէ քումմէ պահեա զբանս, և մի հաւատար դու 'ի նա ,,։

Digitized by Google

Ոչէ այս լինէ, ո՞ր զաղամն իւրոյ զուգակցին զայնպիսի ինչ բարս ած զմտաւ երբեք. ո՞ր միշտ զիւր զուգակիցն կամի թէ կորիցէ. ո՞ր մտաւորակ տալիծ զիւր հաւանելն 'ի սպանումն մատնէ։ Տեսե՞ր զի բարւոք ասաց իմաստունն՝ եթէ «Ոչ է գլուխ չար քան զգլուխ օձի, և ոչ է չարութիւն քան զչարութիւն կնոջ»։ Ընտանեացն ոք առ հասարակ որ ունիցի կին անզգամ, ծանիցէ զամբարշտութեանն իւրոյ զվարձս հատուցմանն։ Այլ ոչ առանց վկայութեան է բանս. լուր իմաստութեանն զի ասէ. «Այն չար՝ անօրինի տացի փոխանակ գործոց իւրոց չարեաց»։ Նոյն վասն չար կանանց մինչև ցայս վայր բանս կայցի առ հասմանս։

Բանզի պարտ է մեզ յիշել և վասն որոցն, մանաւանդ առաւել վասն հայրուորացս։ Զի լաւ քան զլաւոյ քաջութիւն իբրև զիւրեանց տեսանեն, և զնոցա առաքինութիւնն իւրեանց պսակ վարկանին։ Այն լաւ և հիւրասէր էր երանելին Սամնիտուս, որ զայր իւր աղաչէր սենեակ շինել Եղիսէի, զի յանցանելն իւրում անխափան իցէ հանգիստ նորա. դնէր 'ի նմա մահիճս մի լոկ, աշտանակ և սեղան լոկ. ոչ եթէ լոկ առանց հանդերձից, այլ կային 'ի նմա անկողինք որպէս և վայել էր. աշտանակն ոչ եթէ առանց ճրագի, այլ հանդերձ ճրագաւ և ձէթ յարծարծումն լուսոյ. և սեղանն ոչ եթէ լոկ առանց հացի, այլ պտղական կերակրով։

Որգ զի՞նչ ոք ասիցէ վասն երանելւոյ այրւոյն այնոբիկ, զի ոչ ինչ խափանէր զնա աղքատութիւն ընչիցն վասն հարստութեան կամացն, զի ոչ ունէր ոչ հաց և ոչ գինի և ոչ խորտիկ և այլ ինչ երկրական 'ի մխիթարութիւն տնանկութեանն. ոչ անդք էին ցորենաբերք 'ի բոյս հացի և սերմանց, և ոչ այգի խաղողաբեր ողկուզաբոյծ ճռախիտ քաղցրապտուղ, և ոչ ծառ տերևալից պտղաբեր քաղցրահամ բերովք, մանաւանդ զի և ոչ թզենի մի երկիր վայրոյ տեղի կայր նորա, և կանգնեան մի հող 'ի մատաղատունկ տնկի։ Բայց 'ի ժամանակի հնձոց իջեալ ընդ արտորայ համակակոյր զերեսս 'ի գետին, ձեռն 'ի հասկ զաղեւաղել հնձողացն զտորտորել մանգաղին ափս ածեալ ժողովէր 'ի բաւականութիւն կարևոր կերակրոյն բովանդակեալ ժամանակին զկերակուրն դնէր։

Ոչ նա չոգաւ Եղիաս 'ի ժամանակս ամարայն, յոր-ժամ ամենայն երկիր առ հասարակ երաշտացեալ փըլթ-քէր, և օդք ապականեցեալք և անձինք սանձեալք. յորժամ ոչ բոյս, ոչ պտուղ և ոչ ծաղիկ, ոչ 'ի ծառոց կաղնեաց բողբոջ և ոչ եղեան ցօղախառն, ոչ պատրիճ հասկին բե-րանոց. յորժամ գետք նուազեալ էին և զաղբերացն զատինս զյորդառատ ջուրցն առաւն բազախառն կիզոյր և ցամաքեցուցանէր, և ծով նուազեալ էր և ալեացն առ 'ի չմտանել ջուրցն քաղցրահամոց և առ 'ի չգալ ան-ձրևացն և հասանել. յայնժամ չոգաւ Եղիաս առ աղ-քատն, առ այրին։ Զի ի որոգայթ ինչ կերք կերն և 'ի ժա-մանակս լինելութեան ընդ այրիս, զայն դուք տեղեակ էք։ Այս Թեզբացի մարգարէն զմեծատունն որք ունէին ար-գիւնս բազումս, և իջանէր 'ի լեռնէն անտի և երթայր առ կինն այրի։

Այս ընդէ՞ր ոչ որ զհօրն հրամանաւ 'ի յերկնից ի-ջուցանէր, անձին իւրում հաց ընդէ՞ր ոչ իջուցանէր. միթէ ո՞չ կարէր արդեօք։ Այո կարէր, այլ զայն ոչ առնէր. ընդէ՞ր. զի մի յօտարատիրութենէ զրկեսցէ զկինն այրի։ Այլ և այլ ազգ, զի և զափոփն ալեւրն և զսակաւիկ մի ձէթն օրհնութեամբ բազմացուսցէ։ Զի ոչ եթէ այնչափ մարգարէն երթայր առ նա զի կերակրեսցի յայրւոյն, որչափ և զնորա աղքատութիւնն լցուցանէր և յայտնի առնել զծածկեալս՝ որպէս եթէ կամաք առնէր զայն։ Քանզի մեծ հզօր է, զամենայն ստացեալս որ յաշխարհի յինքեան կերակրէ. այլ կարծէր զտուրսն իւր 'ի նոցանէն, զի զգթութեանցն զմիտսն 'ի ժամանակս աստուածսիրութեանն պատուով գործոցն ընա-կեսցէ։ Նոյն յորժամ ոչ չիցէ ուրեք որոց պարտ իցէ զայնպիսիսն ընդունել, կամ Թռչունք կերակրէ որպէս և զԵղիաս 'ի լերինն, և կամ այլով մարգարէիւ որպէս զԴանիէլ 'ի գուբ առիւծուցն, և կամ ծովական գա-զանաւ որպէս զՅովնան 'ի փոր ձկանն, և կամ ինքն իսկ յինքեան տեղեայ զկերակուր որպէս և հարցն մե-րոց յանապատին. քանզի ոչ որ գտանէր որ ընդունէր զնոսա, յերկնից տեղայր զմանանայն և 'ի վիմէն զջուրն բղխէր։ Նոյն յորժամ իցեն ուրուք բնակեալք յաշ-խարհի, ընդ այս յինքն ամփոփէ 'ի նոցանէ զաջ բա-զուկ իւր. թէպէտ և տեսանիցէ զնոսա նեղեալս, թոյլ

Digitized by Google

տալ և ներկայ զի տացէ զպարգևս այնպիսիս որք զպարգևութիւնն արարին, որք և կամեցան զփրկութիւն շահել իւրեանց։

Չոգաւ Եղիա առ կինն այրի որոյ ոչ ինչ գտանէր, բայց միայն աղօտ մի ալիւր, զոր աշխատութեամբ իւր և որդւոց իւրոց ’ի ժամանակին խնայեալ էր․ քանզի և ձաւարյն անգամ չէր բաւական։ Այլ ասէ ցկինն՝ թէ «Տո՛ւր ինձ փոքր մի ջուր զի արբից»։ Այլ մինչդեռ նա երթայր, զկնի աղաղակէր և ասէր՝ եթէ «Տո՛ւր ցես ինձ և կտոր մի հաց ’ի ձեռին քո»։ Այլ ապա նա զոր չկարէր տալ, և զոր կայր խոստովանեաց՝ թէ «Կենդանի է տէր թէ գուցէ իմ նկանակ, բայց միայն աղօտ մի ալիւր և փոքր մի ձէթ»։ Նաև այն զարմանք են, զի յայնպիսի ժամու կարօտութեան կերակրոցն որ կային աղքատութեանն իւրոյ՝ ոչ սպառեցաւ։ Այլ քանի ամանք են այժմ որ զանկի և զարծաթ իբրև զկաւ ունին շատ, աղքատին և աղերսին, և զերախտիս սիրելեացն ոչ յիշեն, և յաղօթ անկեալ՝ նոքա ուրանան զգոյն. և ապա եթէ յանկարծ երբէք բազում աղերսանօք հնազանդեսցին առ տուրսն, գերս և մուրհակս խնդրեն. որ խստագոյնք են քան զերկաթ, և զկարկառեալ ձեռսն յանձնել նախ զբռամն առնեն, և ապա երաշխաւորս և միջնորդս առ կայսն տանեն։

Իսկ կինն այրի ’ի միոյ ձայնէ ոչ սպառեցաւ զաղօտ ալիւրն, և ասէ ցնա մարգարէն. «Փութա վաղվաղակի և արա բլիթ մի նախ ինձ և ապա քեզ և մանկանց քոց»։ Փորձութիւն էր բան մարգարէին, քննութիւն կամաց, յայց միտաց. և կայր իբրև ’ի վերայ կշռոց սիրտ երանելւոյ այրւոյն, և փորձէր թէ յոր կոյս գլեսցէ զտութըն, յինքն և յորդիս իւր՝ եթէ առ հիւրասիրութիւն մարգարէին։ Իսկ նա կամէր առնել զինքն և զմանկունս իւր նեղել և միաբանեալ զշտապեցուցանել, զի զմարգարէն ընկալցի և պատուեսցէ. քանզի գիտէր եթէ «Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէին ընկալցի. և որ արբուսցէ բաժակ մի ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ոչ կորուսցէ զվարձս իւր»։

Այլ զի ասէր մարգարէն՝ թէ փութա վաղվաղակի և արա, միթէ այնչափ քաղցեա՞լ էր զի և փութով եւս կերցի։ Ո՛չ, թէրևս ոչ։ Այլ զգութ ողորմութեանցն

զփոյթն և զջերմն և զզուարթն կամէր[1], մի տրտմու-
թեամբ և մի իբրև ՚ի հարկէ. «Զտուրս զուարթա-
տուրս սիրէ Ած»: Փութա, ասէ, և արա նախ ինձ:
Որպէս և Աբրահամ ՚ի գալ առ նա հրեշտակացն ըն-
թանայր վաղվաղակի յանդեայն, առնոյր և ածէր զոր-
թըն անդէից զմատուցանելն. որպէս և Սառային փու-
թայր ՚ի թըել զնաշիհն և արկանել նկանակս, զի ընկալ-
ցի յերկնից զհացն ծածկեալ: Փութա և արա, ասէ,
որպէս և Աբրահամ զպատարագն Տն. մի նախ քեզ և
արա ինձ իբրև զԿայինն, և զՈփնի և զՓենեհեզ զոր-
դիսն Հեղիու քահանայի, որք զԱծ թշնամանէին. նախ
ինքեանք առնուին զերախայրիսն որ Տն մատուցանէին
զպատարագն: Իսկ նա հրամայեալ ասէր՝ վաղվաղակի
փութալ, զպտուղ մեծութեանն ՚ի բլթին հայեցեալ
տեսանէր, և մարգարէն առնոյր և ճաշակէր, քանզի
զկերան հեր և օրհնէր զտուն այրւոյն և լցուցանէր ա-
մենայն բարութեամբ. «Ոչ պակասեսցէ, ասէ, ալեւրն
ափով ՚ի սափորոյ անտի և ոչ ձէթն ՚ի սրուակէ անտի
մինչև տացէ տէր զանձրև յերկիր»: Եւ ընդէր մինչև
ցայն ժամ: Եւ յիրաւի. քանզի պարտ էր շնորհացն
իբրև զանձրև իջանել յերկիր, զի հին օրէնքն վախ-
ճան ընկալցին. և կատարէր զործն բանին: Տեսանես
զի զօտարսիրութեան զվարձս վաղվաղակի կթէր այ-
րին: Սատանակաց բարեաց պտուղ փառք են, և անշարժ
է արմատ կամաց նորա:

Լուարուք աղաւքէն կանայք զանզգամ կանանց ըղ-
ձալս և զլուացն զքաղցութիւնս, զչարսն կոխեցէք, ըղ-
բարեն ընտրեցէք. ամենց նմանեցէք, և զանձինս տուե-
ցէք. զի զնոյն ընթացս սրբոցն ընթասջիք և զհաւատս
նոցին ստասջիք, ՚ի բանակս նոցա հանգիրեսջիք ՚ի Քրիս-
տոս Յս ՚ի տէր մեր. նմա փառք յաւիտեանս. ամէն:

1 Ցօրինակին պակասի կամէր. յաւելաւ ՚ի յանձէն:

Digitized by Google

# Ի ՁԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԻ

Յորժամ վարդապետն բարեփառ, յայնժամ աշակերտն դիւրահաւան. յորժամ աշակերտն քաղձայոյս, յայնժամ վարդապետն յօժարամիտ[1]. յայնժամ վարդապետն շահս առաջաբերէ, յորժամ աշակերտն զփութութիւն ցուցանէ. յայնժամ աշակերտն վարդապետին առաւելանին ակնն ունի, յորժամ զդեգերանսն իբրև զբարեկամ ողջունեսցէ։ Բանզի այլ ազգ վարդապետին անհնար է ծաղկել, եթէ ոչ զաշակերտին զլապտերն գտցէ վառեալ ուսմնասիրութեան ձիթով։ Այլ այլազգաբար անհնար է աշակերտին աճել, եթէ ոչ վարդապետն զառատս խնամատարութեան հեղուցու առաջի։ Բանզի պէտս ունին ընթացից և փութոյ երկոքին կողմանքն. և առ 'ի չինուած մեհաւորութեան երկոքանչիւրոյն զոր ինչ ըստ կարողութեան 'ի միասին բերել 'ի ներքս. միումն զկերպուն որսել, իսկ միւսումն զլսելիսն պատրաստել. ումեմն զմիտսն կատարեալս ունել, և ումեմն զանձն հանդարտացեալս։

Այս այսօրէնք ոչ միայն 'ի մարմնաւորս կարեւորք, այլ և 'ի հոգևորականսն փութալիք։ Որպէս 'ի մարմնականս ոչ այլ ազգ ազատի մանուկ տխմար՝ եթէ ոչ յուսմունս արգելցի, նոյնպէս և 'ի հոգևոր ուսմունս այլ ազգ 'ի դատապարտութենէ ոչ վճարի մարդ, եթէ ոչ յօրէնս տեառն խորհեսցի 'ի տուէ և 'ի գիշերի ըստ մարգարէին բանի։ Այս ապա զի այսօրէնք զայս ունին օրինակ, և ամենեքեան որք եմք աստ՝ մասնակից եմք Քրիստոսի, վասն զի զմի և զնոյն ունիմք առաջնորդ և վարդապետ զտէր մեր Յիսուս Քրիստոս ըստ ասելոյ աստուածային ձայնին եթէ "Եղիցին ամենեքեան ուսեալք յայ", բեր այսօր զկրկին լսելիս զհոգեկանն ուսեալ և զմարմնականն ընդարձակագոյնս պատրաստեսցուք առ տեառն մերոյ վարդապետութիւն. որպէս զի

1 Միւսն յօժարակամ։

զբանն որպէս զսերմն ընկալեալ՝ կարասցուք պտղաբերել առատն մերոյ խնամակալութեանն որ երեսուն և որ վաթսուն և որ հարիւր զհնազանդութեան զբազմահաւան հասկ։

Նայեալ ըստ աւետարանչին Ղուկասու գովելոյն. «Այս եղև 'ի խռնել ժողովրդեանն լսել 'ի Յիսուսէ զբանն, և ինքն էր առ ծովակին Գեննեսարեթայ. և ետես երկուս նաւս զի կային առ ծովակին, և ձկնորսքն ելեալ 'ի նոցանէ լուանային զգործիսն։ Այս մտեալ Յիսուսի 'ի մի նաւակն որ էր Սիմոնի, և աղաչեաց առկայանել մի անդր 'ի ներքս 'ի ցամաքէն. և նստեալ ուսուցանէր 'ի նաւէ անտի զժողովուրդսն»։ Տեսանե՞ս զվարդապետին զամենագութ վարդապետութիւնն. տեսանե՞ս ըզժողովրդեանն զփափագելի զխնդութիւն. տեսանե՞ս զաշակերտացն զհոգևոր օգտութեանն զփոյթ. տեսանե՞ս ըզմարդկանն վարձատրական զառընթերակայութիւն։ Մինչ որ 'ի լսողաց զբանն Տէր Աստուծոյ, կամ 'ի բաց ելեալ 'ի ծովակէն, կամ փախեալ 'ի անդրեայն, կամ էջ 'ի լեռնէն, կամ խնդրեսցի որ ամենայն որպէս ամենեքեան յարեաց առ կան ամեն. զի՞ լսելեաց զբանից, վարդապետս. անիմ՝ ինչ գործել, խօսք իմն կային և մնան ինձ, ոչ ինչ և ս որոց 'ի ձայնին են զնեցի, ժամ բաղձանաց էանց, տապս նեղէ զիս։ Մինչ որ 'ի մերձաւորացն յայնմ ժամանակի առաւել յանէրին մեր ապաստան ինչ. և ոչ ինչ և ոչ երբէք. Ունիք. քանզի ծանեան զասաղին զամենայն ինչ բարութ 'ի ժամանակի խռովմ։ Մինչ յենեղեցի նոյ, կարկեցաւ խօսիքն Սիմոնի. եթէ ոչ արձակեսցես, մի եղանիցես. զի եթէ յառաջ քան զարձակելն երանիցես, որպէս պարտաւոր եղեր։ Յաւժմ[1] որ 'ի մարմնականն ծովեն, գնեալ ժամն երկուս 'ի հոգևորն սպարապետ։ Մի ասա տեսից և արտաքոյ զաւարթանաս. մի ասա զատոյ և արտաքոյ զմխոսող. մի ասա զովէր և արտաքոյ բամբասել։ Օգտին յայտ առնելոց, մինչ աւանդեր ինչ խօսիլք. զմարդասէրդ ընթերնումք. զի եթէ զնոսա զարշեցուցանես, զառաքեալսն յիշեսցէ. եթէ զառ ըսան արհամարհես, զՀայրն յիշեսցէ։ Ի թշնամին եղանես, և յառաջ քան զարձակելն չիմա-

1 Յոյնն չէր։

նես. և յեկեղեցի, և յառաջ քան զսուրբս առաքելական աթոռոյս եղանես: Նշխէր յառաջէն՝ "Որ արհամարհէ զքեզ, արհամարհեսցի յինէն":

Որինչ ասէ աւետարանիչն Պօղոս. "Նա եղև 'ի խռնել ժողովրդեանն զՅիսուսիւ, և նա էր կացեալ առ ծովակին Գենեսարեթայ": Ալ քաղաքացւոց ատեան մերոյ խնամատութեանն: Պետան առ ծովակին կայր. և մեծամեծ մարդկան առաջն եկն 'ի ծովակին, զի զորսականս ձկանցն որսայցէ: Քանզի ոչ ինչ է զանազանի 'ի ատեանն Յիսուսէ Քրիստոսէ, ոչ ատեղի, ոչ բան, ոչ ազգի, ոչ քեմ, ոչ խօսք, ոչ օրինակ: Ասան զի Պետրոս և Անդրէաս, Յակոբոս և Յովհաննէս զեռ եւս առ ծովակին Գենեսարեթայ զեզերէքն ընդ զխպաղական ինչ արուեստ անցանելով, յանդարս զլոյան ուրեանց ունելով, ձգելով զարդականեալ գործիսն, ընդ անդախորութիւնս հակառակելով, ոչ գտանցեալ եթէ երբ այլոյ իցէ կերակրել, զողանալով քան թէ վաստակելով. խարբելով քան թէ հաւանեցուցանելով. զի առանց պատրանաց ինչ ձուկն ոչ լինի որսացեալ: Ի սոսա հայեցեալ ատեանն ներքին ակամբն՝ պատուիրան զալ 'ի մարդկան որս քան 'ի ձկանց, եկն 'ի ծովակն, զի զժողովուրդսն ուսուսցէ և զձկնորսան կարթեսցէ: Ո՛ւր առզ զասելն նորա:

"Մտեալ Յիսուսի 'ի մի 'ի նաւուցն որ էր Սիմոնի, աղաչեաց սակաւիկ մի վերացուցանել յերկրէ": Տեսանես զիարդ մնայնէր 'ի նաւն որ ոչ ունէր այէս նաւի, զի զաէր նաւուն շահեսցի: Նա աղաս զի աղաչէր ատէրն զՍիմոն: Նա եթէ զի, լուր խնամատութեանն Սիմոնի: Ամենայն գիշերն աշխատեալ և անդուն կացեալ, բնաւ ինկ ոչ կարացեալ որսալ ձուկն: Ընդէր. զի ամենայն ձկունքն մնայյին ատեան Յիսուսի, որ համդերձեալ էր ասել Սիմոնի՝ յանուն իմ արկէք զգործիս ձեր յորս: Նա վասն զի Պետրոս զամենայն գիշերն աշխատեալ և ոչ ինչ կալեալ, մնայր անգործ և դժուարանայր յոյժ, ունայն ձեռօք լուանալով զգործիսն և աշխատութեամբ զաշխատութիւն կրելով և շահ ինչ ոչ տեսանելով, այսորիկ աղագաւ տեսեալ ատէրն զՍիմոն դժուարացեալ և տխրեալ, աղաչէ զնա, քանզի մխիթարիչ է վշտացելոց: Նա իբրև եանս ատէրն զՍիմոն

Digitized by Google

տխրեալ, յորդորական ձայնիւ պատասխանեալ ասէ ցնա. փոքր ինչ փոխ տուր ինձ զնաւդ քո, նաւորդեայ, զի նստեալ ուսուցից և աշակերտեցից զհաւատութեան ժողովրդոցդ զոր տեսանես հետևեալ ինձ, և եկեղեցի ինձ լինիցի նաւդ քո: Իսկ քանիցս էր: Այլ մի համարիցիս զիս բռնական ինչ քեզ լինել. քանզի եկի լաւագոյն ես տանել քեզ. Թող զմարմնականն հոգսդ, և հայեաց 'ի հոգևորականն և յանբաւ բաժինն. առ փոքր ինչ տուր ինձ փոխ զնաւդ քո, նաւորդեայ:

Իսկ Սիմոն առաւել տրտմեալ տրտմութեամբ մերկանայցն, պատասխանի տուեալ ասէ ցնա. ուստի՞ եկեր ինձ, մինչ օտար երեսօք, զի՞նչ հասեր առ իս ամբոխիւդ. այլ նաւ տես քեզ, եթէ կամիս օթել 'ի ծովակիս: Տեսանես զիս սպասելով, իբր զի և ոչ հաց ունելով ինձ, և դու խոստանաս զբանս ինչ տալ ինձ: Ես հայցից ուրեք թէ ուստի առից արծաթ փոխ զի զգաւակն իմ և զկինն կերակրեցից, և քեզ զնաւս իմ տարածեցից զի զտիւս ես իբրև զգիշերս ունայնավաստակ եղէց. եթէ բերեր զինս նաւիս, եւ 'ի նաւս. իսկ եթէ ոչ ինչ ունիս, երթ 'ի բաց աղաչեմ. քանզի զիս տուրք կերակրեն և ոչ բանք: Իսկ տէրն ասէ ցնա. մի դժուարանար, Սիմոն, արդարև որպէս զնաւորդ խօսիս. վարձս հայցես, որչափ և կամիս՝ առ, քանզի հարուստ հօր ընչաւէտ որդի եմ ես:

Զայսպիսի լուեալ Սիմոնի և սակաւ ինչ զուարթացեալ երեսօք՝ 'ի նաւն ընկալաւ զՔրիստոս, և թեթևկօքն վարելով՝ որպէս 'ի վեր զաք հանդարտեր տանել, ոչ գիտելով եթէ տանի և կրէ զնա որ զամենայն կրէ: Սկսաւ ապա Սիմոն և հրաման առեալ տեառն. 'ի մէջ նաւիդ նիստ, վարդապետ, քանզի տխմար իմն երևիս ինձ և նաւարկութեանս անտեղեակ. մի արդեօք 'ի մի կողմն խոնարհեցուցեալ զնաւդ՝ ջրաբեկութիւնս յորդորես մեզ: Զայսպիսի տակաւին ասէր Պետրոս ոչ գիտելով եթէ նա է որ նոցին եղեալ զեկավար և զծովու պարագայեաց և զՅորդանանու բաժանեաց և զծովակն հանդերձ նաւաւն բառնայ:

Մտեալ Քրիստոսի 'ի նաւն Սիմոնի խոստմամբ նաւավարձութեան, և Սիմոնի սակաւ ինչ խաղաղացեալ 'ի վերայ յուսով վարձատրութեան, և նստեալ Քրիստոս ու-

սուցանէր զծառայլուրդն 'ի նաւէ անտի : Այլ զինչ ու-
սուցանէր . զսէր անկեղծ, զհաւատս աներկմիտս, զխա-
ղաղութիւն անխորամանկ, զբարեպաշտութիւն անկե-
ղծաւորելի, զեղբայրսիրութիւն անհաստանելի, զանձա-
րութիւն անարծաթասէր, զողջախոհութիւն անպղծե-
լի, զկուսութիւն անաղտ, զճգնութիւն անկորանալի,
զծածկութիւն անձանձրելի, զամենայն տառապանս
վասն ճշմարտութեանն կրել, և մի երկնչել յայնցանէ
որ սպանանեն զմարմին և զոգին ոչ կարեն սպանանել :
Զայսպիսիկ տէրն ուսուցանելով, և ես յաւելուածով՝
եթէ "Որ սիրէ զանձն իւր, կորուսցէ զնա" . և դար-
ձեալ . "Եթէ ոք կամեսցի գալ զկնի իմ, ուրասցի զանձն
իւր և առցէ զխաչ իւր հանապազ և եկեսցէ զկնի իմ" .
և անդէն "Մի ստանայք ոսկի, մի արծաթ և մի պղ-
ինձ 'ի գօտիս ձեր . մի պարկ, մի գաւազան, մի քսակ
և մի երկուս պատմուճանս" : Զայսպիսիկ տէրն ուսու-
ցանելով և Սիմոնի լսելով, որ համարէր զնաւն 'ի վար-
ձու տալ տեառն, սկսաւ արանջել յինքեան և ասել . 'ի
ամենէ ես վարձս զինչ ակն ունիմ առնուլ . վայ ինձ,
'ի նաւս զտիւս անկայ ընդ գիշերայս . արդեօք զինչ պա-
տահեսցի ինձ այսօր : Եւ վասն անստացուածութեան
խօսի, ոչ ունիք ունել ինչ ուսուցանէ . արդեօք և ինձ
հրամայեսցէ զնաւս վաճառել զի աղքատաց բաշխեցից :
Ի ամենէ վարձս առնուլ զինչ ակն ունիցիմ :

Զայսպիսիկ Պետրոսի զմտաւ ածելով, ընդ տէրն
զվարդապետութիւնն, զի և զսքանչելագործութիւնն
իւր ցուցցէ և զՍիմոն հաւանեցուսցէ . քանզի աշխա-
տութիւն մեծ է հաւանեցուցանել զադէտս : Այլ 'ի կա-
տարել զբանսն տեառն, և ամենայն ժողովրդեան հա-
ճոյ եղեալ, ապա մատուցեալ Սիմոն ասէ ցտէրն . բանք
քո բարի են և ձայնդ քաղցր և վարդապետութիւնդ
պատուական . բայց տակայն առ իս լից զոր խոստացարն
և հրամայեա ինձ առնուլ զվարձ նաւարկութեանս, զի
և ես ընդ ժողովրդեանդ խնդալից երթայց 'ի տուն իմ :
Իսկ տէրն մեր ասէ ցՍիմոն, որպէս այժմ իսկ լուար .
եթէ զվարձս քո կամիս առնուլ, Սիմոն, հան զնաւդ
քո 'ի վեր 'ի խորն, և արկէք զգործիս ձեր յորս, և առ
յինէն զխոստացեալն քեզ վարձս : Իսկ Սիմոն ասէ
ցտէրն . ողորմեաց և զգործիս արկից և ո՞չ ես աշխա-

տութիւն կրեցից. երանի թէ և զգիշերս ոչ էի աշխատեալ և ունայն ձեռօք զգործիս յաւգեալ. միթէ զահմտագոյն[1] իցես քան զիս ինձ արուեստիւ, կամ զիտակնաւարկութեամբ. կամ ստացեալ ինչ իցես յաներևոյթ խորան, կամ ընդ ձեռամբ քոյով իցեն ձկանցն բազմութիւնք: Կարես վարդապետել, միթէ և ձկանց[2] որսորդ գաս: Այլ 'ի նաւէս աղաչեմ. քանզի տեսանեմ զքեզ զի ոչ ինչ ունիս, ընդէ՞ր և զժամանակն կորուսանեմ. ո՛չ յառաջագոյն իսկ մկրտեցի զայս, և արդ արժանաւորապէս կրեցի. ընդէ՞ր ոչ յառաջագոյն զվարձն իմ խնդրեցի, այլ կարծեցի եթէ ունիցիս ինչ, և տեսանեմ այժմ բանիւք միայն հարստացուցանելով, և համարիմ զօրս զայս իբրև զգիշերս: Իսկ տէրն մեր ասէ ցՍիմոն. մի՛ որպէս յանխնչ հայիր յիս, Սիմոն. մի՛ 'ի ձեռս և 'ի ծագս իմ հայիր. զի ոչ 'ի ձեռս, այլ 'ի բերան իմ ունիմ զվարձս քո: Զգիշերս աշխատեալ ոչ ինչ կալար. զի գիշեր չքաւորական՝ հրէական խաւարգածութիւնք են, իսկ տիւ շնորհացն է՝ արկ զգործիսդ. վասն զի լոյս բարեպաշտութեան են քրիստոնէական հաւանաւթիք. հանէք 'ի խորն, և արկէք զգործիս ձեր յորս:

Յայնժամ ասէ Սիմոն ցտէրն. որպէս այժմ լուաք. «Վարդապետ, զամենայն գիշերս աշխատեալ ոչ ինչ կալաք, բայց արդ ըստ քո բանիդ արկցուք զգործիսս: Եւ զայս արարեալ փակեցին շատ բազմութիւնս ձկանց. և պատառէին գործիքն նոցա»: Ո՛վ իրացն, ոչ պատառէին[3] հացք 'ի Պետրոսէ, զի պատառէին գործիքն, և առ Քրիստոս հայէր, զձկունսն տեսանէր և զգործն զմտաւ ածէր. և ոչ կարէր քարշել զբեռանն, և օգնականս կոչէր. քանզի «ակնարկէին, ասէ, ընկերակցացն որոց 'ի միւսն նաւն՝ գալ օգնել նոցա» որ էին Յակոբոս և Յովհաննէս: Ակնարկէին, ասէ. ոչ ձայնէին, զի առանց ճչելոյ և ամբոխելոյ ոչ ինչ գործեն ձկնորսք: Ընդէ՞ր. վասն զի սքանչելիք իրացն յանձայնութիւն ածին զնոսա. զի ոչ ինչ ունէին աղաղակել, այլ ակնարկել որպէս զօտար ինչ և սքանչելիս տեսանելով խորհուրդ:

1 Միւսն արուեստաւորագոյն ոք իցես արուեստիւ ինձ:

2 Միւսն ձկնորսաց գաս:

3 Միւսն պատառէին հացքն:

Ընթացեալք և արդ 'ի միւս նաւէն Յակոբոս և Յո-հաննէս, և սկսան ժողովել զձկունսն. և որչափ նոքա ժողովէին, այնքան առաւել բազմանային: Քանզի փու-թային ըղձակքն[1] թէ ով յառաջագոյն սպասաւորեսցէ տէրունական հրամանին: Փոքունքն քան զմեծամեծս յառաջ ընթանային, մեծամեծքն զմիջակօքն անցա-նէին, փոքունքն զմեծամեծօքն վազէին. և ձեռաց որ-սականացն իսկ ոչ անսային, այլ ինքեանք զինքեանս իսկ ձգէին 'ի նաւն: Յատակ ծովուն շարժէր, և ոչ որ 'ի ձկանցն 'ի վայր մնալ անսայր. զի ծանեան մերձ զալ զասօղն "Հանեսցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց ըստ ազգս իւրեանց":

Ո՜ ինչ արար Սիմոն որ յերկուս ծայրս իրացն ան-կեալ գտէր, որ զգիշերին ամենայն տարժանեալ և ոչ ըմբռնեալ ինչ, և 'ի տուընջեան ըստ բանին Յիսուսի զամենայն որսացեալ: Իբրև ետես զուականան պարգա-տելով և այլ ձկունս մերձ կալով և առ 'ի յորսն ձկնե-լով զեզմանեն[2] և հեռի կալով 'ի գործեացն ոչ անսա-ցեալ, իբրև բանաւորին ինչ կոչելով անկաւ առաջի տեառն ասելով. "Ել յինէն, տէր, զի այր մեղաւոր եմ ես": Ոտանեաց պատուհեալ ով ես դու. քանզի ոչ երբէք տեսի այսպիսի որս ձկանց: Սովորութիւն է, տէր, գոր-ծեացն 'ի ներքս փակել զձկունսն. իսկ այժմ տեսանեմ զհակառակն, զի որսացեալ չըջապատեալ անին զուռ-կանան: Ել յինէն, տէր. արգել զաստուածային քո հրա-մանդ. թող զանեալ ձկունս երկաւս 'ի ծովաւս 'ի ծնան-դըս ձկանց: Ել յինէն, տէր, զի մի արքս համգերձ նա-ւաւս ընկղմեսցուք. քանզի նոյն ինքն և նջղակս մնա-նել 'ի նաւս բանազատաւ: Ել յինէն, տէր, զի ոչ զքեզ մերժեմ 'ի բաց, այլ զքո անարժան վարկանիմ. "Ել յինէն, տէր, զի այր մեղաւոր եմ ես":

Իսկ տէրն ասէ ցՍիմոն. Ելանեմ 'ի նաւէս քո, Սի-մոն, բայց 'ի քեզ մնացից. քանզի վասն այսորիկ եկի: Յառաջ որսացեալ եղեր որսադ. զոր ունէիր՝ զնոյն կրեցեր դու, այլ ոչ է քոյդ կատարեալն. զի դու կե-նաց 'ի մահ ձգես, իսկ ես 'ի մահուանէ 'ի կեանս: Ո՛վ երջանիկ, Սիմոն, յայսմհետէ զմարդկան եղիցես որսորդ:

1 Մրցման ցանկութիւնք:  2 իմա ենթաղմանէ:

Թող զծովակն, և զանկզերս ցանցեալ, և զխաչն աղա-րատեալ, զհակառակութիւնն¹ դադարեցո և զամբա-րշտութիւն քաղցեա, ձգեա զպարծն 'ի բաց և զտխ-տուր բժշկեա, զգործիսդ փակեա և զերկնայինն փոխանակ կազմեա, եւ 'ի նաւէդ և մատ յեկեղեցի: "Մ՛ի եր-կնչիր, Սիմոն, յայսմհետէ զմարդիկ որսայցես 'ի կեանս ,, :

Ո՛վ սքանչելի զօրութիւն, ո՛վ Պետրոսի հանճարոյն: Ով տեսաց որսացեալն զորսողն եթէ զինչ էն վարդապետ-տեա զքանչելիք յորդորմանց զի զմարդիկ որսացից, կամ զի՞ր գործիս առաջեցից, կամ ո՞ւր արդեօք զօղայցեն մարդակերպն այն ձկունք, կամ զինչ կարիցեն շահ ինձ տանել որսացեալքն որոդքն. մի արդեօք կասկածիցէ զիս որ բանիւն կարթեաց զիս: Նմա ոչ յայտնեալ է ա-ռաց ինձ Սիմոն. լուաւ միայն, և առժամայն հնազանդ եղև: Ոչ զձկունսն վաճառեաց, և ոչ ընչաւէտութեան կարկեցաւ, և ոչ ընդդիմեաց ինձ առաջ տեառն, եթէ պահեսցիր նաւազ ինձ զիմ իրս տէր, և կամ հաշուե-ցայց ինձ ընդ փոխատուսն, փոքր ինչ թողակ և որոց 'ի տանն իմ՝ թողից: Ոչ ինչ յայտնեալ է առաց Սիմոն. զի մեծ էր անձնանին, որ և հաւատովքն էր վկայեալ: Ուստի ոչ միայն Պետրոս հնազանդեցաւ տէրականն ան-արկութեանն, այլ և Անդրէաս և Յակոբոս և Յովհան-նէս. զի և նոքա էին եղբարք հաւատարիմք երկու զոյգք:

Լուա՛ր աւետարանին ասելոյն՝ եթէ թողեալ զգոր-ծիսն շոգանն զհետ Յիսուսի: Տեսե՛ր զտեառնն բարե-րարութիւն՝ էր աղաղակ եկն 'ի ծովակն. զի զծաղ-կուրդսն տեսանել և զձկնորսան որսալ կարթիւ: Բանզի 'ի Ղուկասն "համեալ, ասէ, զնաւն 'ի ցամաք՝ թողին զամենայն և գնացին զհետ նորա ,, : Նմանեցուք և մեք Քրիստոսի, և հրաժարեսցուք զէթ սակաւ ինչ յերկ-րաւորացս :

Եւ զինչ առա այնուհետև: Ո՛ի որսա էր սորա զբանն յառաջ տանել. որպէս և եանս զառաքելոցն յա-ժարութիւնն՝ և զի թողեալ զամենայն գնացին զհետ նորա, ձեռքի այնուհետև 'ի բժշկութիւն, զի մի բան-սարկուն պատճառս ինչ անհաւատութեան գտցէ. քան-

1 Միւսն պղծանքն :

Digitized by Google

զի դիւրափոխ է ազգ մարդկան և առ 'ի յընդդէմս հակառակամտութիւն պատրաստ : Զի անելոց էին առաքեալքն մինչ զնայրն զհետ առեալ, եթէ ոչ էին այլ ազգ ինչ նշան առեալ. միաբանեցաք 'ի զուր ինչ թողուք զինչս մեր և հետևեցաք սմա, և միաբանեալ ընթացաք ձկանցն որսակաւ իմն եղև և ոչ ըստ աստուածայնին հրամանին : Այլ զի մի այսպիսի խորհրդովք շաղախիցին առաքեալքն, միայն մեկնեցաւ 'ի ծովակէն տէրն, և 'ի մի 'ի մօտաւոր քաղաքացն ընթացաւ, յորում զաստուածային բժշկութիւնն բանայ. և նոյնժամայն կամօք միայն մերկացուցանէ 'ի բորոտէն զհաշմական մարթ բորոտութեանն : Զի տեսցէ Պետրոս և որ ընդ նմայն՝ եթէ ոչ միայն շնչաւոր ձկանքն հնազանդին տէրունական հրամանին, այլ և անշունչ ախտն ակնարկութեանն նորա փախստական լինէր :

Արդ լուար թէ որպէս բարեմտաւոր հոգւի բորոտին գոչեաց "Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել" : Ո՛վ բորոտին բարեպաշտութեան համբաւոյն. ոչ սպիացոյց զուղղափառ նորա զիտութիւնն ամենադաժեղ բորոտութեանն մարթ : Արտաքոյ ճարակէր ախտն, և 'ի ներքոյ ոչ եգիտ ճարակ. զմարմինն արածէր և 'ի հոգին ոչ մերձենայր. զթշնամանեալն կրէր զկիրն [illegible], այլ ոչ էր ձանձրապարհակից Գեհեզեայ. ժողովուրդն զնա 'ի բաց մերժէր, այլ եկեղեցի զինքն արկանէր նմա : Մովսէս զնա թշնամանէր, այլ Քրիստոս զնա բժշկէր. առա բժշկեալ լինէր, և անդ զպատարագ բժշկութեանն մատուցանել հրամայէր : Ընդէր. զի և տեսեալ Քրիստոսի մարդասիրութիւն ծանիցի, և արծաթասէր Հրէից ընչաւորութիւնն յանդիմանեսցի :

Ո՞ր այս չափաւոր հերձուածողացն յանդգնութիւն : Բորոտն ասէ. "Տէր եթէ կամիս, կարող ես զիս սրբել" : Ոչ ասէ աղաչեա, այլ կամեաց. ոչ ասէ պաղատեա, այլ ինքնին առնես. քանզի իւր ինչ է իւրովք կամօք բժշկել, և ոչ այլոց ակնարկութեանն մերձելն : "Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել" : Լուայ զասելն մարգարէին վասն քո. "Աստուած մեր յերկինս և յերկրի, զամենայն զոր ինչ կամեցաւ և արար" : Այս զի զամենայն 'ի լինելութիւն ածեր, և զերկինս ձգեցեր որպէս խորան, և զերկիր տարածեցեր որպէս հան-

դերձ, և զորս 'ի միջի սորա՝ բազմադէմս հնարս, սուր և խնձ զբնութեանս զմիասնեալ զհանդերձ, որպէս զի յօրինացն որպէս 'ի բանականաց խառնեցայց, և զշնորհըս որպէս մարգարէք առեալ փառաւորեցից 'ի Պետրոսաս Քրիստոս 'ի տէր մեր ընդ հօր և սուրբ հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ԵՒ Ի ՄԻՇՏ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ

Ամենայն տօնախմբութիւնք վկայից հրաշալիք են, որք նմանն են պայծառութեան աստեղաց յիշատակօքն: Քանզի զոր օրինակ աստեղք յերկինս զարդութեանք և բազմատիպք են կառուցեալ, և զամենայն ծիրն երկնից փայլեցուցանեն, և նոյնք առ 'ի հնդկաց տեսանին և 'ի սկիւթացւոց ոչ ծածկին, յերկիր փայլեն և զծով լուսաւորեն և ուղղեն զնաւեալսն, որոց թէպէտ և վասն բազմութեանն զանուանսն անգիտանամք, այլ վասն պայծառութեանն ընդ գեղեցկութիւնսն յայտ զարմանամք, այսպէս և 'ի սրբոցն զխորհրդածութիւնս. զի թէպէտ և գերեզմանաւ փակեալ են նշխարք նոցա, սակայն զօրութիւնք նոցա ոչ պարագրին 'ի ներքոյ երկնից:

Այլ զի ճշմարիտ իցէ ասացեալս, արժան է քեզ 'ի նոցունց իրացն ուսանել. Պաղեստին զնշխարսն ունի զԱբրահամու, և խուզ նորա ընդ զրախտին հակառակի. քանզի որ անդ բազմաց ած ընդդէմ Ադամայ, աստ 'ի հայրապետէն տարրընկալ եղև[1]: Ո՛ Յովսէփանկերան մի գերեզման փակեալ ունի. խոկ ընդդէմ եգիպտահւցն պատերազմ զծագս անեղերաց սկսորգացանէ: Մովսէսի և ոչ գտանի խոկ գերեզման. և յետ մահուն քարոզէ 'ի ձեռն զաւազանին հերձեալ զծովն կարմիր: Ո՛ Եսայի զիտելքն խոկ ոչ եթէ ուր թաղեալ իցէ, և ամենայն եկեղեցիք 'ի ձեռն մարգարէութեան նորա աղաղակեն "Ահա կոյս յղասցի և ծնցի որդի„. Դանիէլ 'ի Բաբելոնի թաղեցաւ, և ընդ ամենայն եր-

1 Երկու օր. տարրընկալեցաւ:

կեր աղաղակէ «Հաստատուն ՚ի վերայ ամպոց երկնից իբրև որդի մարդոյ գայր»։ Սոքա եւ Անանիայեանն էին մանկունք՝ և նոքա ՚ի Բաբելոնի հնոցին, և ՚ի ձեռն նոցա գոչեն ամենայն տիեզերք որ ըստ օրէ «Օրհնեցէք ամենայն գործք տեառն զտէր»։ Եզեկիէլ ՚ի պարսիկս թաղեցաւ, և ընդ քերովբէս աղաղակէ. «Օրհնեալ են փառք տեառն ՚ի տեղւոջէ իւրմէ»։ Նոյնպէս և ոչ շահեցաւ բանսարկուն մահացուցանելով զԱդամ ՚ի դրախտին. քանզի եբաց մեծ արդարոցն ՚ի ձեռն մահուն իւրոյ դուռն համարձակութեան։

Նոյն արդ ամենայն յիշատակք սրբոցն հրաշալիք են, այլ ոչ այնչափ ՚ի փառս ծագեաց որպէս առընթերագոյ[1] ամենախնամութիւնս։ Աբէլ վասն պատարագին անուանի, Ենովք վասն հաճոյ լինելոյն յիշի, Մելքիսեդեկ որպէս պատկեր ՔՆի քահանայի, Աբրահամ վասն հաւատոյն գովի, Իսահակ վասն օրինակ գալոյն գովի, Յակոբ վասն գտանելութիւն լինելոյ ընդ ԱՅ՝ երանի, Յովսէփ վասն զգաստութեանն պատուի, Յոբ վասն համբերութեանն երանելի լինի, Մովսէս որպէս օրէնսդիր բարեհամբաւի, Յեսու՝ Նաւեան որպէս կանխատեսից ԱՅ և զօրավար յիշատակի, Սամփսոն և այլ դատաւորքն որպէս փրկիչ ազգին Հրէից գովեցան, Եղիա որպէս նախանձաւոր վկայի, Եսայի որպէս մեծաքան վերագրի, Դանիէլ որպէս հանճարեղ քարոզի, Եզեկիէլ որպէս տեսանող անճառելեացն սքանչանի[2], Դաւիթ որպէս հայր ըստ մարմնոյ խորհրդեանն բարեբանի, Սողոմոն որպէս իմաստուն սքանչանի։

Նոյն ոչ ինչ այսպիսի որպէս մեծամեծն կոյսն Մարիամ. քանզի զոր նոքա ամենեքեան ՚ի ձեռն օրինակի տեսին, սա յորովայնի իւր մարմնացեալ կրեաց, և ոչ ինչ ընդունայն եղև անճառ բանին ԱՅ տնօրէնութեանն։ ‘Սրբութեանցն խնդումն. այլ յամենայն ուռուցմանց և յախտից[3] ազատ է բանն։ Նոյնպիսեաւ մեծ իմն նուաղութեամբ և ոչ գարշանս ինչ կրէ մեծութիւնն. այլ զոր վերաստեղծեալն ոչ շաղախեաց, ՚ի սմա մարմնացեալ և ՚ի սմանէ ծնեալ՝ ոչ աղծեցաւ, այլ եւս սաս-

1 Երկու օր. առընթերագոյն։
2 Երկաթագիրքն ասէ մեծայն սքանչելանի։
3 Երկաթագիրքն յաղտից։

ուել փառս բերէ Թագաւորին յաւիտենից մարգարէք ծնունդն: Ծնանի, այլ ոչ նուաղեցոյց ծնունդն զան-սկիզբն ծնունդն. մարդեղութիւն, այլ ոչ եթէ փոխար-կութիւն կրեաց ա͞ծային բնութիւնն. ունի ըստ մարմ-նոյ մայր, այլ ոչ կորոյս զզօրն ըստ ա͞ծութեանն ան-մայր. մեռաւ, այլ ոչ մերկաց զծոց Հօր, այլ, այլ ոչ եր-բեք եթող զաթոռ երրորդութեանն: Ոչ ինչ յաշ-խարհի այսպիսի ինչ որպէս ա͞ծածինն Մարիամ: Շր-ջեաց խորհրդով քով ընդ ամենայն արարածս, ով մարդ, և տես եթէ իցէ ինչ համագէտ նման և կամ մեծ քան զսուրբ կոյս ա͞ծածինն Մարիամ. շուրջ եկ ընդ երկիր, և որոնեա հայեաց ՚ի ծով, բաղխախուզեա զօդ և զեր-կինս մտածութեամբ, յուզեա զամենայն անտեսանելի զօրութիւնս, զննեա ած և տես թէ գո՞յ այլ այսպիսի սքանչելիք յամենայն արարածս: Քանզի երկինք պատ-մեն զփառս ա͞յ, հրեշտակք պաշտեն երկիւղիւ, հրեշ-տակապետք երկրպագեն զօրութեամբ, քերովբէք ոչ տանելով սարսեն, սերովբէք ոչ համարձակին շուրջ թռա-ցեալք, այլ աղաղակեն զօրութեամբ՝ սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր օրհնութեամբ քով: Միթէ ոչ տարաւ հնչմանն, ամենայն զօրութեամբ եղեն նստարան համբարձմանն, արեգակն ոչ տանելով թշնամանացն սարսեաց, դժոխք ահիւ և երկիւղիւ փըշ-խեցին զմեռեալս, բարապանաց տեսեալ սարսեցին, լեառնն զվերելումն ընկալեալ ծխեցաւ, մորենին ոչ հանդուրժեալ տեսութեանն կիզաւ, Յորդանան սար-սեալ դարձաւ յետս, ծովն երկուցեալ ՚ի գաւազանէն պատառեցաւ վասն տէրունական օրինակին, գաւազանն Ահարոնի վասն պատկեր զոյգն անբնաբար[1] ծաղկե-ցաւ, հուրն ՚ի Բաբելոնի պատկառեաց ՚ի թուոյ եր-րորդութեանն: Ո՞ր թուեա զսքանչելիսն և հրաշա-լիս ընդ յաղթութիւն կուսին. վասն զի զոր ամենայն արարածք ահիւ և զօրութեամբ օրհնեն, սա միայն ան-թարգմանաբար առագաստեցոյց:

Զարմանալիք են վասն նորա ամենայն կանայք. ոչ եր-բեք ՚ի դատապարտութեան է[2] իգականն, քանզի ունի ազգակից, որով և զհրեշտակս յաղթահարէ ՚ի փառս:

1 Երկաթագիրն բնաբար:  2 Երկաթ. օր. դատապարտեալ է:

Ողջունացս բերկրութեան Յիսուսի, լուեալ զայդ եղբայրասահման, թաղեալ է Գողիկա[1], մոռացեալ Յեզաբէլ, անյիշե-լի լինի Հերովդիադա, և ողբանչելական ընտանիք կանանց: Նախահայրական Սառա որպէս անզաւակաւոր ծաղկեցող, պատուի և Ռեբեկա որպէս խորամանկող օրհնութեան, սքանչելեաց և Լիա որպէս մայր բազում մարդկան թոռանց, գովի Բերսաբէ որպէս 'ի վեր քան զգեղեցկութիւն զարդա-րեալ, երանի և Եղիսաբեթ որպէս նուիրեալ շնոր-հաց զյառաջընթացողին խոստացումն, երկրպագի և Մարիամ զի եղև մայր և աղախին և ամպ և առագաստ և տապանակ ուխտին. Մայր, քանզի ծնաւ զայն որ ծնանիլն կամեցաւ. աղախին, վասն զի խոստովանի ըզ-բնութիւնն և քարոզէ զշնորհսն. ամպ, քանզի 'ի հա-ւատսն սրբոյ առաջնորդեաց, զոր և ծնաւ անախտաբար. առագաստ, վասն զի որպէս 'ի հարսնարանի Ած բանն զխորհուրդն 'ի նմա առագաստեաց. տապանակ, ոչ զօ-րէնսն կրելով, այլ զօրէնսդիրն յղանալով:

Վասն որոյ ասասցուք առ նա. օրհնեալ ես դու 'ի կանայս, որ դու միայն զՅիսուսի ողջունացուցեր զբերկրութիւն. որ դու միայն զհաւատացելոց նորա ջնջեցեր զարտասուս. որ դու միայն կրեցեր զաւերելոց փրկանակն. որ դու միայն առանց հեշտութեան յղացար և առանց ախտի ծնար. որ դու միայն զԱնժամանակեանն՝ որպէս ինքն կամե-ցաւ ծնար: Օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո. ոչ սերմն ծաղկին, ոչ ախտ ճաճանչն, ոչ ստեղծուած աթոռակիցն, և ոչ ծառայ արեգականն, ոչ աւազակ երկրպագեալն, ոչ արարած փրկանակն, ոչ պարտապան պարգևատուն: Օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո: Փոխանակ ամենեցուն բանականն եղիցի քեզ մարգա-րէին բարեհամբաւութիւն գոչելով "Ահա կոյսն յղաս-ցի". Նշաց զսքանչելիսն և զեղանակն լսեաց. "Ծնցի որդի". քարոզեաց զերկուսն, և զանգգակցութիւնն ոչ խորթացոյց: "Եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ". ասաց զխորհուրդն, և զկոչումնն մերաբերեալ որոտաց: "Որ է մեկնելով ընդ մեզ Ած". զծնեալն Ած քարո-զեաց, և կարկեաց զբերանս հերձուածողաց: Ընդ մեզ Ած,

1 Ցորենական փոփոխակաւ մնացեալ է Գուղիա կամ Գուղիկա:

և շիջաւ մեղաւորութիւնն. ընդ մեզ ա̃ծ, և Թլփատութիւնն խափանեցաւ. ընդ մեզ ա̃ծ, և տապանն՝ ի ծնանելն ոչ կատարեցի. ընդ մեզ ա̃ծ, և Թագաւորք բարեպաշտութեան. ընդ մեզ ա̃ծ, և եկեղեցիք նեղին. ընդ մեզ ա̃ծ, և մեռեալք խոստովանել աստուածութիւն զաչեն. "Ո՜վ հրեշտակ և ոչ բարեխօս, այլ ինքնին ա̃ծ եկն և փրկեաց զմեզ": Նմա փառք և ունդութիւն յաւիտեանս. ամէն:

## ՅԱՒԵՏԻՍ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Պարծեալ խնդութեան աւետիք, պարծեալ ազատութեան զգայութեամբ, պարծեալ մերատին կուսութեամբ, պարծեալ 'ի մեր Ճանապարհ, պարծեալ ուրախութեան խնդութիւն, պարծեալ ծառայութեան 'ի բաց մերժութեամբ: Հրեշտակ ընդ կուսին խօսի, վասն զի ընդ կնոջ կաճառեցաւ օձն: "Զամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ ա̃յ առ կոյս խօսեցեալ առն": Առաքեցաւ Գաբրիէլ զամենաշխարհին զեկուցանել զփրկութիւն. առաքեցաւ Գաբրիէլ բերել Ադամայ ստորադրութիւն[1] մերատին կուսման. առաքեցաւ Գաբրիէլ առ կոյս, զի զանապատութիւն իւրին[2] 'ի պատիւ փոխարկեսցէ[3]. առաքեցաւ Գաբրիէլ պատրաստել սուրբ փեսային առագաստ. առաքեցաւ Գաբրիէլ հարսնացուցանել զստեղծուածն ստեղծողին. առաքեցաւ Գաբրիէլ առ շնչաւոր արքայարան Թագաւորին հրեշտակաց. առաքեցաւ Գաբրիէլ առ կոյս խօսեցեալ Յովսեփայ և պահեալ Յիսուսի. առաքեցաւ Գաբրիէլ ծառայն անմարմին առ անշաղախ կոյսն. առաքեցաւ ազատն 'ի մեղաց առ ապականութեան[4] անընդունակն. առաքեցաւ ճրագն ցուցանել վասն արեգականն արդարութեան. առաքեցաւ առաւօտն նախընթացեալ[5].

1 Յաւէտ օրհնակաց երկեն ստորադրութիւն. երկրայքն ստորադրութեան մերատին կուսման:

2 Երկու օր. Եւայի:

3 Հինգ օր. փոխեսցէ:

4 Չորս օր. առ անապականութեանն ընդունակն:

5 Մի օր. նախընթացեալ լինելոյ լուսոյ:

լուսոյ տունջեան. առաքեցաւ Գաբրիէլ յայտնելով զ'ի ծոց Հօր՝ զնոյն 'ի գիրկս մօր. առաքեցաւ Գաբրիէլ ցուցանելով զ'ի վերայ քերովբէից նստեալն, զնոյն և 'ի յայրին. առաքեցաւ զանունն գոչել զխորհուրդ Թագաւորին. խորհուրդ որ Հաւատով Ճանաչի և ոչ ըմբռնութեամբ[1] որոնի. խորհուրդ երկրպագեալ և ոչ կշռեալ. խորհուրդ ա̃ծաբանեալ և ոչ որոնեալ. խորհուրդ խոստովանեալ և ոչ չափեալ:

“Ի վեցերորդում ամսեանն առաքեցաւ Գաբրիէլ առ կոյս”: Զո՞ր արդեօք վեցերորդ ամիս ասիցէ. յորմէ Հետէ ընկալաւ Եղիսաբեթ զաւետիսն, յորմէ Հետէ զՅովհաննէս [illegible]: Եւ ուստի՞ է այս յայտ. մեկնեացէ ինքն Հրեշտակն ասելով ցկոյսն. “Ահաւասիկ Եղիսաբեթ ազգական քո յղի է և նա, և այս վեցերորդ ամիս է նորա որ ամուլն կոչէր”. “Ի վեցերորդում ամսեանն”. 'ի վեցերորդում սաղմնաւորութեան Յովհաննու. վասն զի պարտ էր նախ ժամանել զօրականին, պարտ էր նախ յառաջել զինուորին, պարտ էր Ճանապարհ առնել զգալոցելին տէրունական գալստեանն.

“Ի վեցերորդում ամսեանն առաքեցաւ Գաբրիէլ առ կոյս խօսեցեալ առն”. խօսեցեալ, բայց ոչ մերձաւորեալ. խօսեցեալ, բայց պահեալ: Եւ վասն է՞ր խօսեցեալ. զի մի՛ արագ իմասցի աւազակն զխորհուրդն: Քանզի գիտէր չարն եթէ 'ի ձեռն կուսի գալոց է Թագաւորն, քանզի և նա լուաւ զձայնն Եսայեայ զաՀա կոյս յղասցի և ծնցի որդի, և յիրաւի յառաջապահ լինէր իւրաքանչիւր ումեք 'ի կուսից. որպէս զի թէ ուրեք ըղձացէ, պատրաստանա ինչ յարեսցէ: Վասն այնորիկ 'ի ձեռն առն խօսելոյ եկն տէրն. քանզի խօսեալն՝ այնուՀետև Հարսն երաշխաւորեալ գոյր:

“Զամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ”: Տես զինչ յաղագս առնս այնորիկ և կուսի ասէ մարգարէն. “Տացի Թուղթս այս կնքեալ առն որ գիտասցէ դպրութիւն”: Թուղթս այս կնքեալ՝ ամենայն իրօք անշաղախ սուրբ կոյսն է: Նոյն յումմէ տացի. յայտ է թէ 'ի քահանայիցն: Եւ ո՞ւմ տացի. Հիւսանն Յովսէփայ:

1 Երկու օր. բաւմբռնութեամբ:

Նայս Յովսէփ, ով եղբարք, պարկեշտա ամենամտութեանն վաճառեալ յայլազգեայն ծնեալ որդին՝ ձեռաց յանձնանայն, և այնուհետեւ սուածէր խնամոյն զգաստութե̄ սնուցանելով զորդիսն խորասուն և գիտութեանն տեսանս. վասն որոյ եկեալ ՚ի քարոզութիւն Պաւղոս առաքեալ և զնի ամն յորդւոց սորին գտեալ այսպէս գրէ. “Զայլ ոք յառաքելոց անտի ոչ տեսի, բայց միայն զՅակոբոս զեղբայր Տեառն”. ոչ որպէս թէ ՚ի Մարիամայ, այլ որպէս ՚ի Յովսեփայ ծնեալ: Վասն զի քահանայքն որպէս զդատաւոր աւանդեցին[1] զՄարիամ Յովսեփայ և օրինադրեցին նմա ժառանգակից հարսանեացն նորայ. իսկ նա հանդերձեալ էր առնուլ՝ զնա և պահել զայն յանապականութեան: Որք վասն նախանձայնեաց մարգարէն ՚ի վերայ. “Տեսի, ասելով, զերս այս սան զիւրոցն զգայութիւն”, այսինքն սան որ հնուն ևգէ անապականութեան, “և տեսցէ ոչ կարեն ընթեռնուլ”: Որ վասն ոչ կարէս, ով Յովսէփ. “ոչ կարեմ ընթեռնուլ, ասէ, քանզի կնքեալ է գիրս”: Այս սա է պահեալ. անձնեցանեց առարկին, ասէ, բնակարան պահեալ է: Նոյլ յառաջիկայն վերստին երթիցուք:

“Յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ առ կոյսն”. բայց եթէ այսպիսի ինչ պատուէր ընկալաւ: Երթ, ասէ, ով հրեշտակ, պատուաւոր լեր ահաւոր խորհրդոյս ծածկեցելոյ, պատուաւորեա սքանչելեացս. ՚ի խնդիր մեղուցելոյն Ադամայ իջանել յերկնից ամենակալ զթութեանց. մեղքն, ասէ, հնացուցին զԱդամ զբուն պատուէրին իմոյ ստեղծեալ, փոխեցին զաստեղծուածն ձեւոյ իմոյ, խաւարացուցին զգեղեցկութիւնն զոր ստեղծի. գայցէ օգնէ զիմ զարմանալին. անապականացեալ է զօրախոսին բնակութիւնն. ծառն կենաց ՚ի բազեղէն դրան պահիցի. փակեալ դոյ փափկութեան տեղին: Զօրավիմ պատուաւորեցելոյն[2], և կամիմ զբանս անձն զարդարեցուցիչն: Զանխլաբար կամիմ յամ երկնային զօրութեանցս, քեզ միայնում ծածկեմ զխորհուրդն. երթ առ կոյսն Մարիամ, գնա առ շնչաւոր քաղաքն, քաղաք վասն որոյ մարգարէն ասէ. “Փառաւորութիւն

1 Երկու օր. յօրինեցին . . . և ասանդեցին նմա:

2 Երկք օր. պարարեցելոյն. մի օր. պատրեցելոյն . . պատարկեալին:

խօսեցաւ վասն քո քաղաք Աստուծոյ,,: Եթէ առ բանաւոր դրախտն իմ. եթէ առ արեւելեան դուռն. եթէ առ բանին ինձ արժանաւոր բնակարանն. եթէ առ երկրորդն 'ի վերայ երկրի երկինս. եթէ առ թեթեւ ամպն, զգայոյ նմանակերպ գաղտնեաւս աներեւութարար. եթէ առ պատսպարանեալ ինձ սրբութիւնն. եթէ առ աստուածային մտերմութեան ինձ. եթէ առ սուրբ Հանգստարանն, խոստեաց յանկանելն բանաւոր տապանակին պատսպարանել ինձ ձկնեղութեան մնալս. բայց մի վրդովեցուցանէր զանձն կարծիս եւ խռովեցուցանէր, հանդարտարարն երեւեցի սրբութեանն. նախ ձայն տարախուսութեան զաչեղձիրն Պօղձիր Ամուխսան. “Ուրախ լեր բերկրեալդ,,. զի աղաղակեցաւ եւ Եսայի գոչեցելումն[1]:

Նաեւ զայս Հրեշտակին եւ խորհէր լուռ նկարեան. յիրաւի օտար է իրք, զանցանէ[2] խոստեցեալ զմտածութեանս: Որ քրտնէլեցն է մեհեանդ եւ տրամակեցն անտեսանեալին. որ աննման Հրեշտակականն զօրութեանցն է անիմանալի: Այլ չքնաղական խօսակցութիւն պատմէ աղջկանն, նկարներիս պարուսա զեկուցանէ[3], մանաւանդ թէ մեծ 'ի ձեռն լուսաւորութեան խոստմանս նորա. որ զՅուսկին պատասպարանեաց, նոյնչափ զզուարթ նորա փառաւորել կամի: Որ ինձ պատսպարանել զմեզ լռղութեանն. եւ կարէ՞ արդեօք որովայնն ասանել զանսպառելին: Որդարեւ տհաճին է խորհուրդդ:

Որպիսի ինչ Հրեշտակին մատուցեալ[4] յինքեան, ասէ տաւնատեան. զի վրդովիս եւ ընդդէմ օտարանաս, ով Մարիեմ. ոչ յառաջ քան զայս ատացեալ յինէն առ Զաքարիաս. ոչ եասաւ նախ առ եռալս վասն ծննդեանն Յովհաննու. ոչ յանհաւատն լինել քահանայի զրութեանն 'ի վերայ անձեր զպատիժս. ոչ պատահաւեցեր անմայնութեանն զծերունիս. ոչ դու տեսցես եւ ես ակնկալեցի[5]. ոչ ամբաստանութեանն քում հեռացեցին[6] արդիւնքն. ոչ սաղմնաւորեաց ամլոյն. ոչ լռաւ զառամանցեալն արգանդ. ոչ մերժեցաւ անպտղութեանն ցաւ. ոչ փախեաւ դատապարտութիւն բնութեանն. ոչ այժմ հասկացեր է որ յառաջ ոչ յղանայր. միթէ անկար-

1 Չորս օր. [illegible]:
2 Երեք օր. [illegible]:
3 Չորս օր. [illegible]:
4 Երկաթագիրն [illegible]:
5 Երկու օր. [illegible]:
6 Հին օր. [illegible]:

նայցէ՞ք ինչ յինէն առ 'ի յարարչէս բան. արդ զի՞նչ յերկբայութիւն պարուրեցար :

Ո՛ ինչ ապա հրեշտակն : Տէր, ողջացուցանել զանօթեանն սխալանս և լուծանել զախտից ձեռան, և զմեռելութիւն անօգանից վերառնլ առ կենդանականն կոչել զօրութիւն, և հրամայել բնութեանն զանձկապարութեան[1] արգուածն, լուծանել զանկութիւնն 'ի ժամանակաւորաց անդամս, պլորացեալ[2] եղեգնն փոխանակել[3] առ պալարածև[4], և զանձնանդականն անօգտատանն՝ ախտից յանկարծակի ցուցանել մայր, այսպիսի քոյին զօրութեանց գործ 'ի սովորութենէ գտցեալ : Նա միայն Սուսա և յետ նորա Մովսէս և զարձեալ Եղիա, որք զծնդանի[5] անկութեանն ծառայեցին տէրութ, խնկարկեալ 'ի քէն ազատութիւն ընկալեալք : Նայց կարի ծնանել ոչ հանդիպեցելոյ անձն՝ վերադառն է քոն զօրէնս բնութեանն. և դրոյդ խոստմանս զգալու առ նա : Ոսպ երկինի և երկիրի ոչ անցիցեն զբեղ. իսկ կուսականն զխնդիր տարցի արգանդ :

Ո՛ խնդիր տարապու, ասէ, զիս տաղաւարն Նազարեթ : Դարձեալ հրեշտակն. վասն զի ունէր զօտարախնօթեանն ծառայութիւն : Նայց ապա կարծեմ[6]; ով տէր, զի անդ[7] երևեցար հայրապետին 'ի տաղաւարին՝ որ յանգա Խանդամամբրէին էր, և զանց արարեր որ զամենայն իւու. Մարիամ զհուր իսկ ածութեանց զխնդիր ստանել հանդուրժեացէ : Նա թուս քո, ասէ, կիզու 'ի շըջափայլութենէ ճառագայթիցն, և զբեղ կարօղ գոյ ստանել անկիզելի[8] կոյսն :

Նայ թէ միաւորեաց հուրն զմորենին յանապատին, միաւորեցէ արդեօք ամենայն իրօք զՄարիամ իմ զալուսան. իսկ եթէ այն հուրն սուսերաքերեաց[9] զծնայինն հրոյ խնդ յերկնից զգալուսան, ապտեաց զմորենին և ոչ կիզեաց, զինչ արդեօք առնիցես յաղագս Ճշմար-

1 Մի օր. զանձկապերութեան :
2 Հինգ օր. պծերացեալ :
3 Մի օր. փոխարկել. այլ օր. փոխանակել :
4 Երկու օր. առ կամ 'ի պալարածեալ ձև. մի օր. առ պալարածեալ ձև :
5 Երեք օր. զանձն կամ զծնեալ :
6 Այլ օրինակ երկաթագիրն. այլք խորհեցաւ տէր :
7 Ամենայն օր. զինչ. և դարձանց յանձին :
8 Ամենայն օր. անկիզանելի. և դարձեալ յանձին :
9 Չորս օր. սուսերաձգեաց :

ութեանն՝ որ ոչ բացում հրոյ, այլ 'ի ձև[1] անձրևոյ իջանէ ։

Յայնժամ ապա հրեշտակին ընդ որ զհրամանսյեանն, և առ կոյսն մտեալ զուշեաց ասելով. «Ուրախ լեր, բերկրեալ, տէր ընդ քեզ»։ ոչ ևս այսուհետև բանսարկուն ընդդէմ քո. զի ուր յառաջագոյն խոցեաց ընդդիմակացն, անդ յառաջագոյն զդեղեղանսն 'ի վերայ դնէ բժիշկն. և ուստի սկիզբն եղև ունէր մահ, անդստուստ կենդանին զմուտ կենդանութեան ճառատարապետեցին. 'ի ձեռն կնոջ հանեցին 'ի մեզ յանկեան, 'ի ձեռն կնոջ ապաշխարութեան 'ի մեզ լաւագոյնքն ։ Ուրախ լեր բերկրեալ, մի ամաչեր որպէս պատճառ դատապարտութեան. քանզի մայր լինելոց ես շնորհօք բարձրելոյն զդատապարտութեան ։ Ուրախ լեր բերկրեալ, այրի եղելոյ աշխարհի անմշակադրոս փեսայածին. Ուրախ լեր բերկրեալ, որ 'ի քոյին արգանդի զնախամօրն ընկղմեցեր զմահ ։ Ուրախ լեր շնչաւոր տաճար այ. ուրախ լեր հանդիսարանն երկնի և երկրի բնակարան. ուրախ լեր անսահմանելոյ բնութեանն ընդարձակատար[2] տեղի ։

Նոյն այսուհետև ասացեալ եղելոց[3] այն ինչ 'ի վերայ եկաց հիւանդացելոց բժիշկն, իսկ 'ի խաւարի նստելոցն երևեցաւ արեգակնն արդարութեան, ծագելոց խաւարին և մեղացն նաւահանգիստ. իսկ անհանգստելոց ծնաւ համօզիչ և շաղկապ խաղաղութեան, գերելոց ծառայից փրկող և մոլորեցելոցն[4] հզօր սիրով ճանճրոյթ ։ Ոչ ինչ է խաղաղութիւն մեր, յոր եղեցի հանապազ վայելել շնորհօք նորուն, որում փառք և ուղղութիւն յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

1 Երկք օր. 'ի ձեռն անձրևոյ ։
2 Երկք օր. ընդարձակատարր ։
3 Երկու օր. ասացեալ ։
4 Երկք օր. ստրապարցելոցն ։

# Ի ՅՈՎՍԷՓ*

Որք 'ի մեծ խորս նաւարկեն նաւուղիղքն, որոց ոչ երկիր, ոչ լերանց, ոչ բլուրք և ոչ գետամարք ինչ ցուցանեն նշանակեցեն, յաստեղս անձամբ նայելով և նոքօք զնաւն վարելով, առանց նաւաբեկութեան կան մնան։ Իսկ եկեղեցւոյ աշակերտքն որք 'ի խորս կենցաղոյս ալեկոծին են հանդիպեալք, ոչ յաստեղս անձամբ հայելն, այլ առ հայրս զակեն մեծացն յանէն, և զնոցա հետոցն փափագանօք ազգացն զհետ երթան, 'ի նոցին նաւահանգիստ արքայութեան վարեն զնաւն։ Այսն առաջնորդ և ուղղին մեր յամենայն գիրս զվարս նոցա քարոզեաց, զի մի միայն լսելովն զարմասցիք, այլ և տեսանել ընդ նոցա ընտանեկութեան նախանձեցիցիք։ Վասնզի բնութեանն զարդարանօք առաւելեալ գործոց մարդկան անցեալ, և մեծագունացն յաղագս պատուականութեան ցանկացողք, երկեզարդ ինն տաւիղի եղ զհարցն նախահաւատութիւնս, զի խուռն 'ի մէջ յոր առաջադրեցէ 'ի նախահաւատութեանն՝ փոփոխեալ յարմարեցէ զինքն։ Հաւատարութեան առաջինի վարդապետ՝ վարքն երանելւոյն Յոբայ, հեզութեան Մովսէսին, անարատութեան Դաւթայն, կուսութեան Եղիայի, որոց և առօթիւքն Դանիէլին, պարկեշտութեան Յովսէփու և Շուշանայն։ Այսպիսեաւ և փոփոխելի է երիտասարդաց Յովսէփու վարքն, մանկամարդացն և որք մանուանդ ընդ ամուսնեան կեան՝ երանելւոյն Շուշանայ յայտնապէս նահատակութիւնքն. վասն զի զուգահաւասար են երկոցունց հանդէսք, մին զտիկնոջն զահ ողջախոհութեամբն կոխեաց, և միւսն զերիցանցն զհահաճեր [illegible] 'ի ձեռն ողջախոհութեանն արհամարհեաց։ Բայց նախ առաջին մեզ երանելւոյն Յովսէփու վարքն գրեսցին, զի և սկզբնաւորագոյն է հայրն, և ապա երանելւոյն Շուշանայ։

* Յերկուց օրինակաց մին գծեալ 'ի Յովսէփ և 'ի Շուշան. իսկ միւսն [illegible] և [illegible] 'ի մի յարմարեալ [illegible] ընթերցեալ [illegible]՝ յերկուս [illegible], [illegible] [illegible] յայն ընթացքին։

Որդ երանելին Յովսէփ 'ի բարետոհմիկ ազգէն լեալ, մինչ դեռ եւս մանուկ էր, այն ինչ մօրուքն 'ի ծնօտսն էին զուարճացեալք զօրէն վարդի ծաղկեալ 'ի մէջ շուառգոյն ծնօտիցն զգիմացն ծաղիկ պսակէր, զգարնանային մանուշակի զծիրանութիւնն 'ի բիբս աչացն նմանեցուցանէր, սպիտակ ունելով զատամունսն քան ըզկաթն, և կարմիր զշրթունսն, յօնս խոնարհեալս[1] ունելով շուշանագոյնս ընդ ճակատովն՝ խորութեամբ մազոցն ընդ իրեարս լծակցեալս։ Բայց զինչ եւս հրահանգիմ զպատանին գեղեցկութեամբ նկարագրել, զոր գիրք յաւէտ հրաշացեալ գովեցին ասելով. "Բարի յոյժ տեսանելով և գեղեցիկ յոյժ դիմօք"։

Նա վաճառեալ լինէր յաղագս չարակնութեան եղբարցն, որպէս նոցա թուէր, 'ի ծառայութիւն. բայց որպէս Այ կանխաւ էր սահմանեալ՝ 'ի թագաւորութի, և ածեալ լինէր յԵգիպտոս պատանին իբրև զմանուկ մի անարգ. վասն զի ոչ[2] եւս տեսանէին զնորա որք զնեցինն՝ զճոխութիւն առաքինութեանն, և անգիտանային զնա որ հանդերձեալն էր 'ի ձեռն ողջախոհութեանն զարդու բովանդակ Եգիպտոսի տիրել, և զբոլոր զնա կորուսեալն սովով կերակրել։ Ածեալ լինէր յԵգիպտոս, և վաճառեալ երկրորդ անգամ, այլ և ոչ մի անգամ ծառայեցաւ։ Վասն զի որ բարուք է ազատ, թէպէտ և բիւր անգամ վաճառեսցի, և ոչ մի անգամ ոչ ծառայ է. որպէս դարձեալ ծառայ կարգովքն՝ եթէ բիւր անգամ ազատեսցի, ոչ մի անգամ ոչ ազատի։ Զի զոր իւր բարքն ոչ ազատեն, զայնպիսին բիւր արտաքինք և սեւադեղով գիրն սպիտակացուցանել ոչ կարեն։

Ածեալ լինէր յԵգիպտոս, և վաճառեալ 'ի տուն Եգիպտացւոյն սիրելի լինէր տեառնն, սիրելի լինէր և տիկնոջն. այլ տեառն սէրն բարի էր, իսկ տիկնոջն ա- չարութիւն. վասն զի նա սիրէր յաղագս երկիւղիւ ծառայելոյն, իսկ միւսն վասն մոլեկան անարգելութեանն։ Նա որքան յերկարէր ժամանակն և Յովսէփու գեղեցկութիւնն 'ի վերայ ծաղկէր, նոյնքան և տիկնոջն որ 'ի նա էր չար ցանկութիւնն՝ աճէր, և արծարծեալ հուր

1 Այսպէս ուղղագրեալ 'ի մե-ուճն, որ նախ գրեալ էր խոնարհեալս. իսկ միւսն խառն նորինակս։

2 Իմա ըն նաւ։

բազմանաց սրտին փաղաղէր զնա։ Խրատել զպատանին կարծէր, ամենայնիւ որովք պատրէն զերեսս երիտասարդաց՝ ձեռնարկէր, զդէմսն իբրև զթուլրապատան ինչ ծաղկելով, մնգուրաւ զպատսն կարմրացուցանելով. և սպիտակաւ զճակատն պայծառացուցանէր, և ծամքաւ զաչսն յօրինէր, ոսկի զարդուք զպարանոցն և զձեռսն պճնէր, և զփափուկ հանդերձսն զանազան անուշահոտութեամբք բուրեցուցանէր. և էր պարզաբար որոգայթ մահաբեր, ամենայն զգալեօքն կարծէր պատրել զպատանին, զդէմսն երևելի պատմուճանօքն և զսեկսն փաղաքշական մնգութեամբքն, զհոտոտելիսն անուշահոտութեամբն որսալ։

Այլ տես ինձ զառաքինին. թուի ինձ և ա͞ծ ներէր հակառակ պատանւոյն գալ փորձութեանց, զի միանգամայն զծածկեալ առաքինութիւնն 'ի պատանւոյն յանդիմանեսցէ, և եկեղեցւոյ վարդապետարան զնորա կեանսն թողուցու. վասն զի ոչ ինչ է 'ի հարցն լեալ բարի, զոր ոչ յեկեղեցւոյ իբրև զարձան ինչ դիմատակս բանիցն բերելով հաստատեաց ա͞ծ։ Տես ինձ զառաքինւոյ նահատակին զարութիւն ոյքան էին ընդ նմա մարտուցեալքն. իւր մանկութիւնն պատերազմէր ընդ նմա. հեշտութիւնքն 'ի ներքուստ մարմաջեցուցանէին, և կինն արտաքուստ մարտնչէր, պատմութեամբք[1] փաղաքշէր և ողոքանօք յանկուցանէր, և զօրս առաքէր կանայքն թախանձէին փաղաքշանօք զլսելիս նորա և զգալիս խստղէին։ Բայց ոչ ինչ յաջողանէ հերքել[2] զնա կարաց. զի ոչ ողոքանօքն մեղկեալ զերեսանական թուլացուցանէր, և ոչ պատմութեամբքն ամբոխեալ արհամարհէր զողջախոհութիւնն, և ոչ 'ի սպառնալեացն նուաստացեալ մատնէր զփարթամութիւն առաքինութեանն. այլ զամենայն մարմնոյն իւրոյ մասունս պարկեշտ խորհրդովք սանձէր։

Նա իբր ոչ կարաց կինն 'ի ձեռն այնքան գործեաց կորուսանել զպատանին, ինքեամբ ինքն 'ի տան ուրեմն գաղտնեաւ բռնաբար ունէր զնա առ անկարգ անկողինսըն։ Նա լինէր տեսանել մեծ տեսարան ոչ երկրաւոր,

1 Ոմն խրատմամբք. նոյնպէս և զկնի երկիցս։

2 Ոմն յաղթել։

այլ երկնային. քանզի էր Յովսէփ 'ի մրցարանի փոր-
ձութեանն մարտուցեալ, ասպարէզն առաջի կայր, հան-
դէպքն կատարէին, փողն գոչէր, նահատակագիրն 'ի վե-
րուստ ունէր զմարտն, և գունդք հրեշտակաց յառնեալ
հայէին, դեւք 'ի խոնարհուստ զյաղթարանն կարկառէին
եգիպտուհւոյն և հրեշտակք 'ի վերուստ յօրինէին Յով-
սէփու պսակս. առ եգիպտացին 'ի միասին ընթանային
դեւք, և զՅովսէփ զօրացուցանէին հրեշտակք։ Սաստիկ
էր հանդէսն և յաղթեցաւ. բազում հոգք էին հրեշտակաց
յաղագս Յովսեփու մի գուցէ անուշահոտութիւն կնոջն
մեղկեսցէ զպատանին, մի կակուղ հանդերձքն, մի հայե-
ցուածքն, մի ձեռն, մի գնացքն, մի փաղաքշանքն, մի ո-
ղոքանքն թուլացուցեն զզօրութիւն. յաւէտ էին հոգք
հրեշտակացն, և սաստիկ յոյս դիւացն։ Յովսէփ յա-
ղագս պսակացն հանդիսանայր, և եգիպտացին վասն ա-
մօթոյն մարտնչէր. մին կենաց աղագաւ, և միւսն մահու։

Այլ ողորմելիք իմն էին եգիպտացւոյն աղաչանքն.
ոմանք հանդերձ սպառնալեօք և ոմանք փաղաքշանօք
զարհուրեցուցանելով զպատանին, և ողոքանօքն մեղկե-
լով։ Տիկին եմ քո, արծաթագին իմ եղեր, յաղագս
այսպիսի պիտոյից ինձ վաճառեցար. զի եթէ ընդդէմ
ինչ ասիցես, կապանք և բանտք քեզ կան մնան, և զկնի
այնորիկ անհրաժարելի մահ. իսկ եթէ հաւանեսցիս,
պատիւք և ազատութիւնք, և ամենայն տանս ի-
մոյ իշխանութիւնս 'ի ձեռս քո տացի։ Այլ թերևս
երկնչիցիս 'ի յանդիմանութենէ. կարողութիւն է զան-
խլանալ յառնէն իմմէ և որք են 'ի տանս. միայն հաւա-
նեսցիր ինձ, միայն ախորժեա զգործն, և ամենեցուն ե-
ղիցիս տէր։

Իսկ լուեալ Յովսեփու զի՞նչ ասէր։ Ով կին, զու-
ծառայ և ոչ երբէք եղէ, վասն զի բարեպաշտ ծնո-
ղաց եմ զաւակ. Աբրահամ և Իսահակ նախահարք իմ
եղեն, որք ընդ Այ խօսեցան. և Յակոբ որ ընդ հրեշ-
տակին մարտեաւ, հայր իմ է. յաղագս որոյ և քաջա-
լերեալ՝ ընդ քեզ մարտնչիմ։ Վաճառեցայ քեզ յա-
ւաղանօք եղբարցն, այլ ոչ ինչ վնասեաց զոգւոյս իմոյ
զքաջատոհմութիւնն՝ անուն ծառայութեանս։ Ոչ է՛ և
մութ ինչ բազում անգամ առաջի անկեալ՝ զարեգա-
կան պայծառ ճառագայթսն առ սուղ ինչ աղօտացու-

Digitized by Google

ցանէ, բայց ոչ իսպառ խաւարեցուցանէ. քանզի համօրէն արեգակնային լուսոյն վաղվաղակի 'ի բաց վարի: Նոյնպէս և անուն ծառայութեան ոչ շիջուցանէ զպարետոհմութեան իմոյ նշոյլս. զի ոչ յետ բազում ինչ ժամանակի Ճառագայթք բարուց իմոց տարածեսցին, և զամենայն զԵգիպտոս պայծառացուսցեն իմոյ. քաջատոհմութեան գեղեցկութիւնք: Անձանեցայ քեզ, դաւանիմ և ես և ոչ ուրանամ. զծառայութեան վայելչական սպասաւորութիւն քեզ կատարեցի. անսուտ եղէ քեզ, անվնաս, անարատ, աննենգ, առանց գայթակղութեան, առանց ամբարտաւանութեան. և ոչ մի ինչ քեզ իմոյ անառակութեան չարախօսութիւն եղև. և այժմ կամիս ինձ առնել իրս անսուրբս, և գաղտնեաւ ընդ իս իբրև օձ շշընջես՝ կարծելով պատրել զիս, և մահաբեր ապականելեաց խոնարհեցուցանել առ 'ի ցանկութիւն անարգելութեան քո գործոյ: Մի՛ խաբիր ով կին դու, և մի հայիր յիմ մանկութիւն. կարէ և նոր տիկ հին գինի բերել, և քընակ նոր մարգարիտս պատուականս ունել: Որ տեսանես զդալարութիւնս, այլ ալեւորեալ տեսցես զպարա. մանկադէմ բնութիւնս[1] ընձեռեաց ինձ, և ծերացեալ միրս օրէնքն գործեցին յիս: Մի՛ խաբիր, ոչ յաղթեսցես առաքինութեանս իմոյ, ոչ յաղթեսցես Յովսէփու որդւոյ Յակոբայ, Յակոբայ այնորիկ՝ որ մինչդեռ յորովայնին էր՝ խաբէր, յետ այնորիկ և ընդ հրեշտակին զօրացաւ մարտնչելով. մի խաբիր, նոյնպէս իբրև զհայրն իմ մարտնչիմ: Բայց և պատմութեամբք զիս ողոքել կարծես. զինչ այնպիսի կարասցես խոստանալ, ասա ինձ, որ իցէ իբրև զողջախոհութիւն. որ թագաւորութիւն զուգահաւասարեսցէ պարկեշտութեան: Ոգիտանաս զի ողջախոհութիւն երկնային ստացուած է, հրեշտակական իրք, -այ շնորհք: Այլ առ քեզ զպատիւդ քո, կալ զխոստմունսդ քո. պատիւք անպատուութեան են առիթք. քո փառք զոր խոստանաս, ամօթոյ են սկզբունք, տկլի քո երկրի ծնունդ և ժանգոյ Ճարակ. բայց իմքս այ է ծընունդ, յաւիտենական շառաւիղ: Այլ և զանխլանալ կարծես իրացն. անգիտանամ զայ անքուն աչս, որ զա-

1 Յօրինակին՝ բնութիւնս. միւս օրինակին նմանի իմն բնութիւնս:

մենայն 'ի խաւարի և յանտեսանելւոջ լեալ իրս տեսա-նել. քանզի այժմ զմտաւ ածեա ասս հրեշտակս կա-ցեալս առաջի, որքանեաց վկայից լինել զիրսդ։ Ո՜ մտա-ւած, ով կին դու, զայրն քո, զեղբարսն, զազգայինս որք յաղագս պարկեշտութեան քո պարծին. իսկ զմերձա-կայս, զմտաւ ած զհեռաւորսն. կամ 'ի հեռաւոր մարդ-կանէն պատկառեա, և կամ 'ի մերձաւոր հրեշտակաց ամաչեա։ Որո՞վ աչօք այնուհետև տեսցես զայրն քո որում դժրել յօժարեցեր. զո՞ր գիրկս նմա տարածիցես զոր ապականելն կամիս. որո՞վ բանիւք զնա ողջեսցես զորոյ զանկողինսն քեղէն պղծես։ Մինչեռ որքան ինչ նմա խոստացար, զիարդ զպարկեշտութեան հաւատն պահել նմա դաւանեցեր, որպէս առաւել քան զքեզ զնա սիրել հանդերձ երդմամբ երդնանէիր[1]։ Յիմա-նեաց, ով կին դու, տառապակի. նա ընդ մի արուի խառ-նեալ, ընդ այլում ոչ ես խառնիր. և եթէ դիպեսցի զնորա արուին որսորդացն ըմբռնել և կամ թռչուն որ տարանցէ, ընդ այլում արուի ոչ խառնակի. վասն զի յա-ռաջագոյն խոստացելումն և հրաժարեցելումն կայ մնայ միշտ, և առ նա անձկալով ընդ յիշատակ նորա մնա-նի։ Այպանեսցէ զքեզ ա̃յ երկիւղն և երբայեցւոցն օ-րէնք, առաջնոցն պարկեշտ առաքինութիւնք։

Ո՜ այսոսիկ ասացեալ Յովսէփու տեսանէր զնա տա-կաւին անամօթաբար վակժոյժ[2] լեալ զհանդերձիցն, բորբոքեալ առաւել ևս մոլութեամբն. վասն զի ցան-կութիւնք յայնժամ առաւել առ սիրեցեալն բորբո-քին, յորժամ մերձենալ 'ի նա ոչ կարասցեն, և իբրև զառաքինի որ ըմբիշ մերկացեալ 'ի հանդերձիցն՝ բոլո-րովին զնա հանդերձ պատմուճանաւն յերկիր ունայնա-ցուցանէր[3]. մերկ յաղթող վազէր արտաքս 'ի կռուարա-նէն, զողջախոհութեանն յաղթութիւն բառնալով։ Այլ լինէր եգիպտացւոյն ունել զտերև անառակութե. և Յովսէփու զպսակ ողջախոհութեանն ընդունել։ Խնդութիւն էր յերկինս յաղագս յաղթութեանն Յով-սէփու. զուարճանային հրեշտակք, և ողբային դևք. պսակեալ լինէր Յովսէփ, և ամչեալ եգիպտացին. դառ-

1 Այդպէս յօրինակին. յոյնն հաստատէիր։
2 Ցօրինակին վաւժոյժ։
3 Յոյնն խոյծանէր։

նայր 'ի զրպարտութիւնս, և ամբաստանէր զՅովսէփայ առ այն խրատել՝ զարշութիւն զնմանէ հանդերձելով։ Եւ զինչ ասէր. «Ծեր այսր մնացել եբրայեցի խաղ-ալ ընդ մեզ»։ Զայրացեալ այրն և արկանէր զնա 'ի բանտ։ Եւ անդ զի հարկ էր ձրագին առ այնպիսի որ 'ի խաւարին էին՝ ծառայել, և առաջի չարեացն առ տագնապ խառակեալսն, բժշկէին առ հիւանդսն։

Ընկեցեալ էին և երկու ներքինիքն Փարաւոնի 'ի բանտն. տեսանէին անուրջս, և ոչ ոք էր որ մեկնէր. զեկուցանէին Յովսեփու, և յայտնէր զծածկեալսն. ելանէին ներքինիքն 'ի բանտէն, և պատահէր նոցա որպէս և մեկնեաց Յովսէփ։ Տեսանէր և թագաւորն երազ, և ոչ ոք էր որ մեկնէր. պատմէր ներքինին յաղագս Յովսէփու, և ելանէր 'ի բանտէն վասն երազոյն։ Տես եւս զխորհուրդն. յաղագս երազոց վաճառեցաւ, վասն երազոց և ազատեցաւ։ Եւ այսպէս զինչ. մեկնէր Փարաւոնի զերազն, լուսաւորէր զծածկեալսն. տեսանէր զնա բազմախոհութիւնն թագաւորն, և ազատելով զնա թագաւորեցուցանէր, զամենայն իշխանութիւն եգիպտացւոց նմա հաւատայր։

Ընդ Յովսեփու զիշխանութիւնն 'ի ժամանակի տուեալ՝ զամենեսեան բարեգործէր, զհեռաւորեալս, ընդ մերձաւորս, զտրտմեալս, զթշնամիս, զընտանիս, զօտարս։ Որպէս և հայրն նորա Յակոբ, երկիր պագանէր և մայրն հօրն. զի թէպէտ 'ի ծառայութենէն զայն վաճառեցաւ, այլ սակայն տարաւ և նա եղբարց երկիր. վասն զի այր և կին մի մարմին են։ Վասն և եղբարք նորա մետասանք և երկիր պագանէին նմա, և կատարէր երազն զոր ետես. «Յորժամ թուէր ինձ, ասէ, թէ արեգակն և լուսին և մետասան աստեղք երկիր պագանէին ինձ»։ Ընդէր մետասան. վասն զի Յովսէփ խաբեցաւ. խորհուրդ էր վաճառելոյն Յովսէփի՝ վաճառեցելումն 'ի Յուդայէ Քրիստոսի։

Տեսանես զիարդ ողջախոհութեամբն թագաւորեաց, պարկեշտութեամբն արդարացաւ. յաղագս ողջախոհութեանն մինչև 'ի կատարած աշխարհի զարմանացեալ լինի, նմին պարկեշտութեամբ և 'ի յերկինսն թագաւորէ։ Այսպիսի մեզ ասացաւ, զի և մեք նմին առաքինութեանն նախանձաւորք լեալք՝ զնոյն փառս յոյս ընկալցուք։

Բայց պարտ և արժան է մեզ վասն երանելւոյն Շու-շանայ ասել, մանաւանդ զի և[1] խոստացաք. այլ զի լա-ւագոյն է յաւէտ ծառայեալք գնալ առաջի, զի մի յա-գելումն և զոր ընկալաք՝ արտաքս թքանիցեմք, յայլ օր պահեսցուք զպատմութիւնն զայն ն̄յ կամքն. այժմ 'ի խաղաղարան խորհրդածութեան ընթացուք 'ի Քրիս-տոս Յիսուս 'ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն :

## Ի ՏԱՒՏԱՆ

Աեկաք մեզ բարեկամք պատրաստականք բանին, ոչ որ-քան պարտիմք՝ հանել, այլ որքան ունիմք՝ հատուցա-նել։ Այլ յօժարութիւն առատ և առաւել քան ըզ-պարտն ընդարձակեցաք 'ի սոյն, բայց բանից աղքա-տութիւն նեղ է. յաղագս որոյ առաք ինչ մեզ փոխա-նակ յազունց աղօթելով տամք. Աւ եթէ ոք 'ի ձէնջ ախորժեսցէ զանկատութիւն բանից մերոց յօժարու-թեամբ սրտին, ընդարձակել ոչ ինչ նուազեսցուք առ 'ի պարտն յօժարամտութեանս մերոյ զպարգեւաւն բա-նին ընկալ։ Ոչ է և Ա̄ծ յորժամ զաղքատի տուրս տես-ցէ գուճնաքեայ զպատարագ և զփարթամի զառատս, զիտէ հաւասարապէս ընդունել զպատիւս. բազում անգամ թերեւս զաղքատին ընդունիցի մեծապէս. վասն զի ոչ 'ի յղփութիւն ընչիցն, այլ 'ի յօժարամտութիւն սրտին հայի։ Զուգք ասացելոցն՝ աղքատի այրւոյն որ զերկուս խերեւեշան արկ, պատուին որ հանգամանեաց առ տեառն՝ նորա սուղ ընծայն քան զյոլով արկեալ սոկին. վասն զի ոչ ընչից է Ա̄ծ, այլ ճշմարիտ և բարե-խորհուրդ սրտից :

Արդ եկայք և մեք տարածելով զմեր զյօժարութիւն սրտից, որք յայն ասացաք բանս, նորև 'ի գանձանակին տա-ճարին Ա̄յ հատուցուք զպարտս բանին մեզ պահանջելոյք :

---

[1] Մերս զբենակ որ զերբեյալին ձեռս 'ի մի կցեալ է անհամեմատայն յանձնականին, առանց միաւորել ընդ յանձրապէսն. և. ... որոյ յատուկ ինչ խոստացաք ասել. փոխ դ' ... բանին պարտապանք, ոչ որքան պար-տիմք՝ հանել, և այլն :

Digitized by Google

Վ՛ասնզի յիշեմ զի յառաջագոյն խոստացայ ձեզ զերանելւոյն Շուշանայ զողջախոհութեանն նահատակութիւն 'ի բազմաց օգուտ քարոզել։ Յորժամ էր Յովսէփ հակառակ եգիպտացւոյն հանդիպեցեալ, ամենեցուն ձեզ մարտ պարկեշտութեան ցուցանէր։ Արդ նահատակեսցի և Շուշան յայսմ տեսութեան մարտի, ուր ած̄ և հրեշտակք, արք և կանայք տեսանեն. մարտիցէ և ուսուցէ ծրագէս պարտ և արժան է մանկամարդացն մինչև ցմահ յաղագս պարկեշտութեանն նահատակել։

Երանելին Շուշան բարետոհմիկ ազգաւ էր հանդիպեալ և քաջավայելուչ գեղեցկութեամբ, փափուկ երկնգամբքն[1] 'ի տան հովատուն լեալ, և պարկեշտ վարուց օրինական կրօնաւորեալ։ Այլ յորժամ մանկութեանն գեղեցկութիւն 'ի նմա էր ծաղկեալ, օրինաւոր հարսանեօք զուգեցաւ ընդ առն։ Այլ զամուսնութեանն խորհուրդս պահէր անարատ իւրում առնն, ոչ զայսն անտառակ առ երիտասարդական տարրաց գեղեցկութիւն բերէր 'ի տեսութիւն, ոչ զկեղծս բանայր 'ի պատանեկական երգոց գեղեցկաձայնութեան ընդունելութիւն, ոչ զհոտաւէտս թողոյր անուշ զերիտասարդաց հանդերձիցն զանուշահոտութիւն, և ոչ զայլ ինչ զգայութիւն մեղկէր վայելչապար 'ի բերանն իւրոց. զի մի որ 'ի սրտին նորա էր պահեալ ողջախոհութիւնն, տապականեսցի խաբէութեամբք պատրանաց, և 'ի հեշտութիւնս կործանեսցի։

Վասն զի յողովք 'ի մեղացն. զգուշեսցուք յանձինս մեր զինին։ Օրինակ իմն անձն իւրև կայ յառաջադասի 'ի մէջ սրտին զարդարեալ և 'ի հինգ զգայութեանց իւրև 'ի նաւաշարաց ամենից պարսպաւորի։ Յորոց զգայութեանց. 'ի տեսանելեաց, 'ի ճաշակելեաց, 'ի հոտոտելեաց, 'ի լսելեաց և 'ի շօշափելեաց։ Այլ եթէ ոչ մի զգայութիւն ապականեալ պատրեսցի, պահի անարատ և առանց վնասու անձինն. ապա եթէ զիջեսցի տեսանելեացն առանց առաջնորդութեան կալ մնալ առ երիտասարդական գեղեցկութիւնն թափառեալք, անձեալ զաւ լքեկածութիւն տենչանացն աչքն 'ի խորոց սրտին ընդու-

1 Փափուկ երկնգամբքն իմա բառ յայն բառ լեալին ասէ 'ի հանդերձեն։

նի, և փափկապակի մրրկաւ հեշտութեանցն սասանեալ՝ առ 'ի մեղսն խորասոյզ դատնի 'ի պարկեշտութենէն նաւաբեկեալ, և ախտանաց այնուհետև զայն զոր Դաւիթ կրկնով ասէր. «Անկի 'ի խորս ծովու, և պտոյտք ընկլուզին զիս»: Նմանապէս և լռելեայն եթէ բացեալ ընկալցին զգեղեցկաձայնութեանն զպատրանս՝ առ նոա զմիտսն կարկառելով, զառվանդակ զինքն պաճուճական երգովքն մեղկեալ կործանէ: Իսկ ճաշակելեացն շատակերութեամբ և գինւով յոլովիւ լցեալ, առ ցնորումն և յարբեցութիւն զոգին զուգահաւասար վայրաբերեն: Իսկ հոտոտելեացն զքննօղական անուշութիւնս երիտասարդացն ընդունելով, և զոգին հանդերձ ինքեամբ կապէ ընդ նմա: Նոյնպէս իբրև զկոյս ոք անպարկեշտ հոգին՝ անզգամ նաժշտօք զգայութեամբքն ըմբռնի և յանարգութիւն սխալմանցն մատնի: Այսոն զի մեղք զամենայն զգայութիւնսն խելագարեցուցանելով, զօրէն գողոց գաղտնեաւ 'ի շտեմարանս սրտին մտեալ՝ բովանդակ զնոա մերկացուցանեն, զամբարս ողջախոհութեանն կողոպտելով:

Եւ զգուշանայր երանելին այն հայեցուածոյն, զնացիցն, ձեռին, լսելեացն, տեսանելեացն, հոտոտելեացն, շօշափելեացն, և էր ճշմարտապէս ըստ իմաստութեանն որ ասէ. «Պարտէզ փակեալ և աղբիւր կնքեալ»: Զի որպէս պարտէզ փակեալ ոչ յումեքէ ընդունի զզրժումն, յորում ամենայն ինչ պտակին պարկեշտութեանն խունկք. և իբրև զաղբիւր կնքեալ, յորմէ ոչ ոք յանաւակացն զողջախոհութեանն զգեղեցկութիւն պղծել զօրէ:

Նորա 'ի ցանկութեան հարեալ եղեն երկու ծերքն 'ի ժողովրդեանն, որք թուէին առաջնորդել հօտին. և իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ բոցով ցանկութեանն տաչորեալ, ընկեր ընկերի զ'ի ներքս արծարծեալ զհուրն յայտնել ամաչէր: Իսկ 'ի միում աւուր երկոքեան նոքա գաղտ յիրերաց երթային դիտել զՇուշան. և գտեալ զմիմեանս քննելով խոստովանեցին իրերաց յաղագս որոյ պատճառի էին երթեալք. յայնժամ հաղորդութիւն գնելով 'ի մեղացն գործս չարութեան, ամենեքին խնամով զքննութիւնն և սպասէին ժամանակի թէ որպէս նմա միայնոյ հանդիպեսցին:

Դէպ երբեմն լինէր 'ի միում աւուր մտանել Շու-շանայ 'ի բուրաստանն առանձն կուսից լոգանալ 'ի տօթոյն. և 'ի բաց առաքել նորա զնաժիշտսն յաղագս բերելոյ օճառ, ընթանային 'ի վերայ յանկարծակի ծերքն, և իբրև գայլ զորոջ ունէին՝ մոլութեամբ անարգելու-թեանն գոչել կամելով։ Այլ էր Շուշան միայն 'ի մէջ երկուց ծերոցն որպէս Դանիէլ 'ի մէջ երկուց առիւ-ծուց, և ոչ ոք օգնական, ոչ նաժիշտք, ոչ ծառայ, ոչ ազգականք, ոչ սիրելի, ոչ ողորմողի, բայց միայն որ յերկինս հայէր Ա՛ծ որ խափանեսցէ կարէր. այլ նոր էր լինել մար-տին, զի զծածկեալ զպատրանս յանդիմանեսցէ, զՇու-շանայ զողջախոհութիւնն և զծերոցն զանարգելութի՛ւ. միանգամայն և կանանց մեծ վարդապետարան զՇու-շանայ նահատակութիւնն ցուցանիցէ։

Այլ էր սաստիկ մարտն, մեծ հանդէս Շուշանայ ա-ռաջի կայր, մեծագոյն ևս քան զՅովսեփուն. վասն զի նա այր ընդ միում կնոջ կռուէր, իսկ սա կին ընդ եր-կուս արս մարտնչէր։ Տեսութիւն էր մեծ և վայելուչ, կին ընդ երկուս արս մարտնչէր. և որ սքանչելին է, ե-թէ լուիջէք, ուր մրցարանն բացեալ լինէր. 'ի դրախ-տին, յորում օձն զԱդամ խաբեաց։ Այլ իբրև պա-տրաստական եղև մարտն, և նահատակադիրն յերկինս հայէր 'ի կուսին, և գունդք հրեշտակաց յառեալ տե-սանէին. օձն յանօրէնսն, և հաւատն 'ի պարկեշտսն։ Յաճախագոյն հոգք էին վասն յաղթութեան, ծերոցն զի մի 'ի կնոջէն պարտեսցին, և Շուշանայ զի մի կո-րուսցէ զողջախոհութիւնն. նոցա զպատճառս յաղթու-թեանն դևք պատրաստէին, և Շուշանայ զյաղթանակ ողջախոհութեանն յերկինս յօրինէին հրեշտակք։

Ըմբռնէին զՇուշան անօրէնքն, և նախ առաջին բա-նիւք մարտնչէին ընդ նմա. զինչ ասելով. Երիցունք եմք ժողովրդեանն, մեզ օրէնքն հաւատացան, լուծա-նել և կապել իշխանութիւն առաք. ոչ ոք է առա դէ-մէր ընդ մեզ, վասն զի ցանկացեալ եմք քեզ. արդ թէ ոչ ախորժեսցես, վկայեմք զքէն եթէ երիտասարդ մի էր ընդ քեզ, և յաղագս այնորիկ արձակեցեր զաղջ-կունսն 'ի քէն։ Տես որքան էին որ վտանգէին զՇու-շան, զրպարտութիւն անարգելութեանն, երկիւղ մա-հուն, բամբասանք այնքան ժողովրդոց, մերկութիւն

ստեան, ատելութիւն ազգականացն, սուգ ծառայիցն և մխիթարականացն պարզապար ամենայն տանն կործանումն։

Նոյն և ոչ մի ինչ յայսց խորհրդոց յաղթել կարաց ողջախոհին. վասն զի էր յոյս պարտէ իւրոյ առ ած։ Այլ հաստատելով Շուշան ասէր. «Անձուկ է ինձ ամենայն ուստեք. եթէ գործեցից զայդ՝ մահ է ինձ, և եթէ ոչ գործեցից՝ ոչ փախիցիմ ՚ի ձեռաց ձերոց։ Նոյն ընտրելի է ինձ ոչ գործելով անկանել ՚ի ձեռս ձեր, քան մեղանչել առաջի տեառն»։ Այս է ինձ, զոր կարծեմ զսոսա հալիւսս՝ զայս տեսանեմ. զսոսա՝ որք թուին ալէկոծելոց նաւահանգիստք, սոքա նաւաբեկութիւն եղեն։ Ալ ապղծէք զիմ պարկեշտութիւնս. ոչ անմաքրեցուցանեմ զիմ ծնողս, ոչ անպատուեմ զքաղցրահամութիւնս իմ, ոչ ամօթեցուցանեմ զայրն իմ, ոչ լուծանեմ առ նա զամուսնութիւնն ձերով անառակ խառնակութեամբքդ. ընտրեմ մահ անարատ քան եթէ անկողինս անառակս։ Ոչ ինչ մերձ է այրն իմ, ոչ մարմնոյ մտաւորութեամբ, այլ հոգւոյն գթով, և զծնողաց խնդիր զկերպարանս յիս նկարեմ։ Արկէքուք ՚ի տեղւոջէն այդ. անտեսեցէք ՚ի մերձաւոր հրեշտակաց. զանուն ածէք որք էքդ. ծանուցէք զոր ընթեռնուք զօրէնսն, որք ասեն. «Մի ցանկասցես կնոջ ընկերի քո»։

Այս զայս ասելով զոչեաց, մկայս անառակութեան նոցա կոչելով։ Նզովակեցին և երկուքին ծերքն. ընթացայքն ՚ի ներքս ծառայքն և նաժիշտքն Շուշանայ, անսովորէին ընդ նոսա զկնաւս ծերոն։ Այլ յորժամ առաջին ծերքն զանուն հակառակ Շուշանայ, ամաչէին ծառայքն յոյժ, զի ոչ երբեք ասացաւ բանս այսպիսի զնմանէ։ Լինէր ՚ի վաղիւն աւուրն մեծ. քանզի տակաւին էր յընտրողութեան մարդն, և յաղագս պարտի յաղթութիւնն։ Ախտեցան ամենայն ժողովրդեան սորայ, կանանց, մանկանց, դարձեալ ժողովեցան տեսարանն։ Ի խորհուրդ մարդի ոչ գիտէին զինչ տեսանէին. այլ հրեշտակք յերկինս ձայնաչէին զնոսա։ Անկեն ծերքն յերաց անօրէնութեանք. կոչէին զՇուշան, որպէս նոցա կարծէին՝ յանձն և ՚ի մահ, բայց որպէս արդար զատաւորքն կանխեալ էր ասհմանեալ՝ ՚ի կեանս և ՚ի փառս յաւիտենականս։ Այլ զինչ ասէին ժողովրդեանն. «Կոչեցէք զՇուշանայ զդուստրն Քեղկեայ. և նոքա ա-

տուքեցին„ ։ Կայր նա և ծնողք իւր և այրն և մանկունքըն և ամենայն ազգակիցք իւր ։ Այս գայր Շուշան որպէս եթէ մահու իցէ պարտական յաղագս ողջախոհութեանն, համբերձ բազում երկիւղիւ հատաշէր վտանգեալ, ոչ զի մեռանելն էր համբերձեալ, այլ զի անուն չար պատրաստեալ էր թողուլ ծնողացն, և զի թշնամանս թողուր բովանդակ ազգին ։ Եւ զոք ունէր վկայ եղելոցն 'ի դրախտին. յոլովք էին որք արտասուէին յաղագս նորա, սիրելիք, ազգայինք, ծնողքն, դրացիքն. այրն սգայր ; տուն նորա ողբայր. և նա ինքն վշտացեալ, տխուր, արտասուէր վտանգեալ, բազում նուաստութեամբ արախ կայր յատենի ։ Ատեան բազում էր տեսութիւնն, այ, հրեշտակաց, մարդկան ։

Յանկէին երկոքեան ծերքն՝ ձեռս հաւուց գայլքն, դնէին 'ի վերայ նորա գձեռս, և խօսէր 'ի նոսա զբարբառոտ օձն ։ Այս զինչ ասէր. «Ի զգնալն մերում երեկ միայն 'ի դրախտին եմուտ դա համբերձ երկու նաժըշտօք, և 'ի բաց արձակեաց զնոսա և փակեաց զդուրս դրախտին. եկն պատանի մի որ էր թագուցեալ, և անկաւ ընդ դմա ։ Մեք էաք յանկեան դրախտին. և տեսանելով զչեալ անօրէնութիւնն, ընթացաք առ դոսա. զնա ոչ կարացաք ունել, վասն զի զօրաւոր էր քան ըզմեզ, և բացեալ զդուռն արտաքս վազեաց. զսա ըմբըռնեցաք և հարցաք եթէ ով էր պատանին, և ոչ կամեցաւ ասել մեզ. զայդ վկայեմք„ ։ Այս հաւատաց ժողովարանն նոցա իբրև ծերոց ժողովրդեան և դատաւորաց, և դատապարտեցին զնա մեռանել ։

Մերձեալ լինէր Շուշան 'ի մահ, և ոչ ոք էր վրէժխնդիր Ճշմարտութեանն և վկայ, բայց միայն Ած, և ներէր լինել իրացն. ընդէ՞ր. զի յերկուսին կատարելապէս ցուցցին գործքն, անօրինացն անարգելութեան չարութիւնն և զըպարտութիւնն, և երանելւոյն Շուշանայ մինչև ցմահ հաստատութիւն պարկեշտութեանն ։ Տեսանէ՞ս մինչև ցերբ Ած ներէ, և թողու իբրև ոսկի 'ի բովս տանջելով զարդարսն 'ի փորձութիւնս, որպէս և Աբրահամու արար ։ Մերձէր զԻսահակ յողջակէզս, դանակն շինէր, զփայտն 'ի վերայ դիզանէր, և ոչ ուրեք ոչխար. յարձակեցաւ զենուլ. և ապա Ած ձայնիւ զձեռնն սանձեաց ։ Զայս ասեմ, զի իւրաքանչիւր ոք

'ի ձեռն յորժամ փորձեցի, թէպէտ և մերձ 'ի մահ լինիցի, մի յուսահատեսցէ յիւր օգնականութենէն, այլ մինչև 'ի վախճան վստահասցի:

Տարեալ լինէր Շուշան 'ի մահ, և ոչ ոք էր օգնական. և յորժամ ետես այնուհետև և ոչ լեալ 'ի մարդկանէ զօգնականութիւն, ընթանայր մտօքն յերկինս 'ի վեր առ հաւատարիմ վկայն և անքուն աչսն. և զինչ ասէր հանդերձ ձայնիւ: "Աստուած յաւիտենական ծածկագէտ, որ ճանաչես զամենայն նախ քան զլինելն նոցա, դու գիտես զի սուտ վկայեն զինէն. և ահա մեռանիմ, որ ոչ ինչ գործեցի զոր սոքա զինէն չարախօսեցին": Եւ լսէր նմա որ ասացն "Մինչդեռ խօսեսցիս, մերձ եմ":

Եւ յերթալն նորա 'ի կորնչել, զարթոյց Ած զհոգին սուրբ 'ի մանկան տղայում որում անուն էր Դանիէլ. գոչեաց ձայնիւ մեծաւ՝ մաքուր եմ ես յարենէդ յայդմանէ: Դարձան ամենայն ժողովուրդն և ասեն՝ զինչ է բանդ զոր դուդ խօսեցար: Եւ նորա կացեալ 'ի մէջ ասաց. այդպէս յիմարք էք, որդիք Իսրայէլի, ոչ հարցաքննելով և ոչ յայտնապէս գիտելով դատապարտեցէք զդուստր Իսրայէլի. դարձարուք անդրէն յատեան, վասն զի սուտ վկայեցին զդմանէ: Եւ դարձաւ ամենայն ժողովուրդն հանդերձ փութով: Ասէր Դանիէլ՝ որոշեցէք զդոսա 'ի միմեանց. եհարց զմինն և ասէ. հնացեալ աւուրբք չարեաց, այժմ եկին մեղք քո զորս առնէիրն յառաջագոյն. ասա ինձ՝ ընդ որով ծառով տեսեր զդոսա զի խօսէին ընդ իրեարս: Եւ նա ասէ՝ ընդ հերձեաւն: Եւ ասէ Դանիէլ. ուղղակի ստեցեր 'ի քոյին գլուխ, քանզի մնայ հրեշտակ Այ ունելով զսուր հերձանել զքեզ ընդ մէջ: Եւ 'ի բաց կացուցեալ զնա կոչէր զմիւսն և ասէր. զաւակ Քանանու և ոչ Յուդայ, գեղ դորա խաբեաց զքեզ և ցանկութիւն աչաց խոտորեցոյց զսիրտ քո. ասա ինձ, եթէ տեսեր զդոսա, ընդ որով ծառով էին յորժամ խօսէին ընդ միմեանս: Եւ նա ասէ՝ ընդ սղոցեաւն: Եւ ասէ ցնա Դանիէլ. ուղղակի և դու ստեցեր 'ի քոյին գլուխ. քանզի մնայ հրեշտակ Այ ունելով զսուրն սղոցել զքեզ ընդ մէջ: Եւ աղաղակեաց ամենայն ժողովուրդն մեծաձայն և ասեն. օրհնեալ է Ած որ փրկեաց զամենայն

ղջունացեալք 'ի նա : Այլ ապրեցաւ յաւուր յայնմ արիւն արդար. և լուաւ 'ի Պաւղոսայ առաքելոյն 'ի դիմաց Շուշանայ. "Զհետ զկնի քո անձն իմ, և զիս ընկալաւ աջ քո. Նոքա զուր խնդրեցին զանձն իմ„. անօրէն ծերքն "մտցեն 'ի ներքոյ անդնդոց երկրի, մատնեսցին 'ի ձեռս սրոյ„. քանզի մեռայ, ասէ, հրեշտակի Այ առնելով զտուրն. "Բաժինք աղուեսուց եղիցին„ այսինքն դիւաց. "Այլ թագաւոր ուրախ եղիցի յԱծ„. այլքն Շուշանայ. "զովեսցին ամենեքեան որ երդնուն 'ի նա„. այս է որ հաւատոց 'ի նա. "զի խցան բերանք խօսողացն զանիրաւութիւն„, անօրէն ծերոցն անիրաւ բերանքն :

Յայնժամ փոփոխեալ լինէր սուգ ուխտղացն 'ի խնդութիւն. այլքն զուարճանայր փառաւորելով զԱծ, աղաչէինքն բերկրէին, ղրացիքն հրճուէին, ամենայն տուն նորա ուրախանայր, և միանգամայն պարզկերպար աւենաքաղում է տանն Այ, հրեշտակաց և մարդկան.

Տեսնէր 'ի կանացի մարմնի զզօրութիւն հոգւոյն. տեսնէր զկնոջն զաղջախոհութիւն, որոյ յիշատակն կայ մնայ հանդերձ յաղթութեամբ : Այս 'ի մարդկանէ փառաւորեցաւ, 'ի հրեշտակաց մեծարեցաւ, յԱյ պսակեցաւ : Որոց նմա նախանձեցարուք, ով կանայք, զի նորին պատուոյ և դուք արժանաւորք լինիցիք յԱյ 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն :

## Ի ՍԱՂՄՈՍՆ ՅԻՍՆԵՐՈՐԴ

Ամենազանազանք նման են առուեստի 'ի բնութեան. խառնելով զերանգսն ստեղծանեն զպատկերս երևելեաց մարմնոց, և առնեն մարդիկ և անասունս և ծառս, թագաւորս և ռամիկս, քաղաքս և պատերազմունս, մարտս և արեանց ուղխս, աշտարակս և զրահս և վահանս, առնեն և աթոռ թագաւորական և թագաւոր նստեալ և քաղաքացիք հնազանդեալ, սուր արեալ և գետս հոսեալս և դաշտս զանազանեալս, և ամենայն տեսանելեաց 'ի ձեռն առուեստին նմանեցուցանելով ընձեռեն տեսութիւն ողջ հայելոյն : Այսպէս և մարգա-

ըէք կենդանագիրք ունինք են տարբերութեան և չարութեան. քանզի առնեն և նոքա զմեղաւորն և զարդարն, և զապաշխարողն որ կայն և զանկեալն և զյարուցեալն և զզղջացեալն: Այլ զոր օրինակ կենդանագիրք առնեն բարբարոս և սպանմունս, նոյնպէս և նոքա առնեն զմեղսն, երբեմն 'ի վերայ եկեալս և երբեմն 'ի վայր անկեալս. նոյնպէս և զգեւս մարտուցեալս և պատերազմեալս, այնպէս զսատանայ դժոխ և յաղթահարեալ:

Այլ արդ զի այսպիսի է նոցա կենդանագրութիւնն, հանգերձ հաստատութեամբ զայս ուսցուք. վասն զի զարտաքին պատկերսն տեսանելով՝ ոչ ինչ շահեսցուք 'ի բաց գնալն: Վասնզի զինչ օգուտ է ինձ թագաւորի կամ բդեշխի պատկերն. թագաւոր լինել ոչ կարեմ և ոչ կամիմ. զինչ օգուտ է 'ի տեսութենէն զորոյ զզօրութիւնն ոչ ունիմ, և եթէ բաղձայցեմ՝ պատժիմ: Զինչ շահ է ինձ տեսանել զմարդ փարթամ և[1] զաղքատ. զի ոչ նախանձիմ, թէպէտ և ձախ իցէ. ոչ յաչաղեմ դարձեալ զայնոսիկ ախտանալով, թէպէտ և ողբամ: Արդ թող 'ի բաց զայն զկերպարանս, և հայեաց յայս տեսութիւն: Զի եթէ տեսից բդեշխս, զինչ օգուտ է ինձ. իսկ եթէ տեսից զմեղաւորն 'ի վայր անկեալ և կանգնեալ, տեսութիւնն վարդապետութեան պատճառ լինի: Եթէ տեսից զարդարն կացեալ հաստատուն, տեսութիւնն ինձ յիմաստասիրութիւնն օժանդակէ. 'ի տեսութենէն ուսանիմ զկռիւն և խրատիմ զյաղթութիւնն: Եթէ տեսանիցեմ զարդարն ընկճեալ, դարձեալ իմաստնագոյն 'ի տեսութենէն լինիմ:

Այս ամենայն ոչ վայրապար ինչ և ընդ վայր ասացան, այլ վասն զի սաղմոսս այսօր մեզ ընթերցեալ՝[2] յայսոսիկ ածէ վարդապետութեանն պատճառս: Այլ զինչ ասէ մարգարէն. "Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, և ըստ բազում գթութեան քում ջնջեա զանօրէնութիւնս իմ": Այս է պատկերն. վասն զի զաղմուկ պատկեր կոչեմ: Զի զանազան իսկ տեսանեմ 'ի սաղմոսիս, զմեղս 'ի վերայ եկեալս և սպանեալս,

1 Ցոյնն եթէ աղքատ իցեմ, նախանձիմ. և եթէ փարթամ նախանձիւ մաշիմ. և դարձեալ զայնոսիկ ախտանալով 'ի- ... լինիմ: Արդ թող:

2 Ցոյնն յառաջնոյ և զարհուրն:

զապաշխարութիւնն մերձ կացեալ և մտերմակից լեալ, զնոյն մարդասիրութիւնն 'ի վերուստ պայծառացեալ, զիմաստասիրութիւնն ընձեռեալ, և յոլով կալեալ առտասուացն աղբիւրս խոստովանութեան: Այսպիսիք երեսք զկերպարանս պայծառացուցանեն զսաղմոսս:

Բայց հարկաւոր է և զորոյ վերադիրն հաւաստեաւ ձեզ պատմել: Զի զոր օրինակ պատկեր 'ի վերայ կալով 'ի ստորին 'ի խարսխին ունին զգիրն՝ ո՞ր թագաւորն է և ո՞ր և զոր պատերազմ մղեաց, նոյնպէս և 'ի սաղմոսն վերագոյն վերադիրն կայ, զինչ է պատճառն և զինչ վարդապետութիւնն և զինչ արմատ և է՞ր աղագաւ սաղմոսս ասացաւ: Տուք ինձ հաւաստեաւ զլսելիս քանիցս, զի ոչ յաղագս դուզնաքեաց է մեզ պատմութիւնս:

“Սաղմոս 'ի Դաւիթ 'ի մտանել Նաթանայ մարգարէի„. այս է վերնագիրն. և “Յորժամ եմուտ նա առ Բերսաբէ կին Ուրիայ„: Ուսցուք զինչ է Նաթան, ուսցուք ո Բերսաբէ է, զինչ գիտութիւն Ուրիայ, և յո՞ր ժամ առ նա եմուտ մարգարէն, և ընդէր զսաղմոսս զայս գրեաց: Զի ոչ ամենայն սաղմոսք 'ի Դաւիթ են ասացեալք. ամենեքեան 'ի նմանէ, այլ ոչ ամենեքեան 'ի նմա ասացան. զի ոչ զինքեան զկիրս եւեթ պատմեաց, այլ և զայլոց թշուառութիւնս ողբերգակեաց: “Առ գետս բաբելացւոց անդ նստէաք և լայաք„: Բացայայտ է եթէ ոչ յաղագս իւր է սաղմոսս. զի ոչ չոգաւ իսկ 'ի Բաբելոն և ոչ ետես զբարբարոսաց գաւառն. ոչ նստաւ յօտար երկրի և ելաց, այլ զկիրս հրէից պատմէ: Իսկ յորժամ ասէ դարձեալ. “Ծակեցին զձեռս և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ„, ոչ զիւր զչարչարանսն թուեաց, այլ զխաչն և զպատարագն աշխարհի քարոզեաց ազգի մերում: Վասն զի պատկեր է զանազան ունելով զվարդապետութիւն, երբեմն զինքեան, երբեմն զայլոց պատմելով: Իսկ զի սաղմոսս այս ոչ օտարաց ինչ պատմէ, յաղագս այնորիկ ասէ. “Յորժամ եմուտ առ նա Նաթան մարգարէ„: Որպէս զի վերագիրն ոչ ներէ մեզ մոլորել և ոչ այլուր տանել զմիտսն, այլ եկաց մնաց զայսպիսիս գործելով և վարդապետելով և այլ ևս իմաստս զոր մեզ վերագիրն ասէ:

Այլ հայեցարուք հաւաստեաւ որք արդարք էք և որք մեղաւորք, վասն զի երկաքանչիւր կողմանցն պիտանացու է. սաղմոս. արդարոյն զի մի իցէ ծոյլ, և մեղաւորին զի մի յուսահատեսցի յիւրմէ փրկութենէն: Երկոքեան դժուարըմբռնելիք. զի մի և արդարն պղերգացեալ՝ ի վայր կործանեսցի, և մեղաւորն յուսահատեալ ոչ կանգնեսցի: Արդ զի մի նա՝ ի կործանմանն կայցէ և մի սա անկանիցի ՝ի կործանումն, երկոցունց կողմանցն ՝ի փրկութիւն այս լինի նուագերգութեան սաղմոսիս պատճառ: Վասնզի հանդերձեալ եմ ասել զմեղս մարգարէին, մեծս և դժուարինս: Բայց մի ոք ՝ի ձէնջ սասանեսցէ. վասն զի ոչ մարդասիրութիւնն հաստատեաց ազգի մարդկան նախախնամութիւն ամենայն և զուղղութիւնս արդարոյն գրեաց, և զյանցանսն դեղով փափախեաց, զի այլոց վէրքն այլոց դեղք լինիցին, և արդարոյն նուաճելութիւն՝ մեղաւորին նաւահանգիստ գտանիցի: Ոչ ի յորժամ արդարն մեղանչէ, ոչ ես յուսահատիմ ես յիւրմէ փրկութենէն. յորժամ տեսանեմ թէ յերկնից ՝ի վայր անկաւ, նորա յանցանքն ինձ կանգնելոյ պատճառք լինին: Ոչ ի յաղագս այնորիկ և հաւատոյն շնորհ ոչ զուղղութիւնսն միայն, այլ և զմեղս արդարոյն յիշեաց. զի ոչ նոցա եւեթ նախահօրացն, այլ և զկնի եկելոցս:

Արդ կամիմ ցուցանել զայս առաքինի այր խոցեալ, անկեալ, մարտուցեալ պարտեալ, կանգնեալ, յաղթող, պսակեալ: Վասնզի ոչ ցուցանեմ զնա կացեալ՝ ի մեղսն, այլ և յարուցեալ, զի յերկոցունց կողմանց դու օգնեսցիս. զի յորժամ մեղիցես, մի յուսահատեսցիս; այլ վաղվաղակի ՝ի յարութիւնն ընթասցիս. և մի ասիցես՝ վայ ինձ, կորեայ, պռանկեցայ, չնացայ, սպանի. ունիս զփրկութեանն նաւահանգիստ, անդրէն ընկըրկեաց զմեղսն: Վասնզի յորժամ տեսանեմ այսքան ընկալեալ վէրս և գիշատեալ, վաղվաղակի յապաշխարութեան ընթանամ, և համարձակիմ զարտասուացն աղբերս հեղուլ, զի նորա ապաշխարութեամբն հաւատարագոյն զիմ փրկութիւնն ուսանիցիմ: Արդարի ինչ ասեմք, յոլովք բազում անգամ որք և կանայք անկան ընդ դժնդակ և անբժշկելի ախտիւ. արտասուք հեղան, գերեզմանեցան, բժշկականն արուեստն տարակուսեցաւ, գե-

ղեցկութիւնն վաստակեցաւ, մարմինն հրաժարեաց։ Ի տարակուսի կայր այնուհետեւ կենն, մեք երթայց, զինչ ատարից․ զինչս ծախեցի, զածիչս կոչեցի, զերդ վաստակեցան, մնաց ցաւս եւ վէրս։

Բազում անգամ հանդիպի ումեք 'ի տեսողացն առնել․ եւ ես ընդ այդու ախտիւ անկայ, եւ այս անուն այր եւ այս անուն կին եղեն 'ի վէրաց դեղ եւ 'ի բաց վճարեցին 'ի ցաւոցն։ Նա ասաց առողջէ, ցոյց ինձ զկինն կամ զայրն, երթայց 'ի հրապարակսն։ Այնպէս եւ աղաւմ վասն զի ջնջեցաւ եւ ապաւնութիւն առաւ, եւ վէրքն էր չար, այլ ցուցանեմ քեզ զայրն բժշկեցաւ եւ դեղ 'ի վէրաց եղ։ Նա ոչ ասեմ, երթ 'ի նորաբողոքն, հարց յայս անուն այր եւ յայս անուն կին։ Ոչ ինչ են պէտք աշխատութեան, ոչ ինչ են պէտք ջանից․ ոչ անցանել ըստ նախաղառն հարկաւոր է, այլ աստ մերձ քեզ ընդանեալ զդեղն․ միայն հայեաց յաստուածայինն։ Հարկաւոր է 'ի սկզբանն զբանս ածել եւ զժամանակսն ասել յորում մեղաւն, եւ զատեղին եւ զդէմսն եւ զառաջխաղութիւնն եւ զդեղն․ եւ զամենայն հաւատեաւ ունեաւք, այնպէս 'ի բաց գնասցէք։

Սորա Դաւիթ մանուկ էր եւ հասակաւ փոքր եւ յանմեղման հօրն․ յերկիր հայէր եւ 'ի հովուականսն, 'ի քաղաքաց փախչէր եւ 'ի տեղեաց եւ յամբոխից, եւ 'ի բարօրութեան զիմաստութիւնն ցուցանէր, ոչ ինչ հաղորդութիւն ընդ կենցաղականսն ունելով, ոչ մաւրհանս, ոչ փոխս, այլ յառաջինն 'ի հասակէն զաստուածային առաքինութեանն․ հեզութեան կենակից էր, եւ իբրեւ 'ի նաւահանգստի իմն 'ի խաղաղութեան նաւելով աշխարհին խոնարհութեանն 'ի թագաւորութիւն մարդկան վարժեցաւ։ Սորա սա մանուկ փոքր էր, որպէս հասակաւ եւ ալեաւր մտօք, եւ անկատարութիւն տղայութեանն ոչ ինչ խափանեաց զայրական կատարելութիւնս, այլ էր մանուկ եւ յուէտ յաղթէր ոչ զօրութեամբ մարմնոյն, այլ ուժով հաւատոյն։

Հայեաց 'ի բանս հաւատոյս․ պէտք եղեն երբեմն թագաւոր լինել Հրէից․ վասն զի Սաւուղին լեալն անարժան էր։ Սամուէլ ած վաղվաղակի զՍամուէլ առ հօրն նորա։ Նա արար արաք գայ․ եւ մանուկն էր 'ի հօտս յոյժ փոքր։ Սէ զօրաւորիմ զանանկութեանն ասել յա-

ձանձրացուցես, զի մի՛ ոք մի՛ երբէք զմանկունս պախարակեսցէ, և մի՛ զծերսն գովեսցէ. զի ոչ ալիք է առաքինութիւն, և ոչ մանկութիւն չարութիւն: Յոլովք 'ի մանկութեան խոնարհութիւն ցուցին, և 'ի ծերութեան ընկճեցան. Զի և երեք մանկունքն 'ի հուրն էին, և զկայծն կապարծեցին: Եւ Դանիէլ երկոտասանամեայ էր, և զառաջնորդս ողջախոհ ատեաց. ոչ զհնութիւն նորա փառաբանելով, այլ զպարզամտութիւն հաւատովք առնելով, և ընդ բարեպաշտութեան երանելեացն միջէր: Եւ Պաւղոս ծեր էր և աշխատեալ և կոզովաւոր եղև եկեղեցեաց, և զկնի այնորիկ զյաղթանակ հաւատոցն յաջողեալ եղեւ, ուսուցիչ բարութեան և քաղաք և առաքեալ եղև: Արդ մի ընդ մանկունսն վատթարեսցես, և մի զծերսն գովեսցես. զի ոչ 'ի ժամանակս հասակաց է առաքինութիւն և չարութիւն, այլ 'ի յօժարութեան բարուցն: Զի եթէ իցես աժան, ոչ ինչ զքեզ վնասէ տարաժամանութիւն հասակին. ապա եթէ ալեւոր՝ ոչ զքեզ օգնեսցէ ինչ ծերութիւնն. զի ոչ ալիք, ոչ հերք ալեւորք, այլ անձին առաքինութիւն: Սա մանուկ էր, և կանխաւ զպսակս առաքինութեանն էր առեալ:

Եւյն Սամուէլ առ Յեսսէ զեղջիւրն ունելով, յաբամ էր խաղն առոյգ: Եւ զինչ ասէր: Ածջիր զոր ունել Թագաւոր յորդւոց քոց: Յեսսեայ լուեալ Թագաւոր՝ կարծեաց նմա պատեհագոյն զայլ զպատմին, ածէ զառաջինն որդին: Ոչ է զդա, ոչ հաճեցաւ ընդ դմա: Զերկրորդն զերրորդն զչորրորդն զհինգերորդն, ծախեցաւ պատ որդւոցն, և խնդրեալն ոչ գտանէր: Ասէ ցնա. ունիս այլ: Պատասխանեաց հայրն. ունիմ, ասէ, միւս ևս փոքր, որ հովիւ: Արդ արհամարհէր, այլ զնա պատկեր. «զի ոչ արդեօք անուանէ մարդ՝ տեսանէ զնա. մարդ 'ի դէմս, իսկ զնա 'ի սիրտն»: Զի ոչ եթէ բարեխառնութիւն հայցեսցէ, այլ ոգւոյն քաջասրտութեան փափագեալ:

Ձայնեաց 'ի բանս հաւատոյ. ոչ առաց նմա զնա՝ երթ ած խնձ զԴաւիթ, այլ երթ ած խնձ զմի յորդւոյն Յեսսեայ: Եւ ընդէր տարակուսեցուցանէր և ոչ ասէր զԴաւիթ: Զի մի կրեսցէ Դաւիթ զոր կրեացն Յովսէփ: Զի զոր օրինակ նոքա ունէին զխնդրելեան Թագաւորն խրատեալ՝ պատերազմեցան և դրժեցին և մա-

ձառեցին, նոյնպէս երկիւղ էր մի գուցէ և նման նոցին պէս գործիցեն. որպէս զի երկիւղն՝ զգուշութեան մայր լինէր։

Գայր մարգարէն տարակուսեալ, տուր ինձ զմի ոք յորդւոց քոց։ Ոչ ունիմ, ասէ, այլ մանուկ փոքր՝ հովիւ ոչխարաց։ Ոչ այնպէս տեսանէ մարդ, որպէս տեսանէ Ած։ Մեր են պճնեալքն գեղեցկադիմութեամբ երեսաց։ Մի ինձ ասեր զբարեդիմութիւն մարմնոյ, այլ տես զգեղեցկութիւն մտացն։ Ոչինչ է գեղեցկադէմ կին՝ գերեզման բռեալ, եթէ ողջախոհ չիցէ. ժամանակաւ խամրի, մահուամբ փտանի. բայց գեղեցկութիւն հոգւոյն անմահ կայ մնայ և անապակ. այլ և յայնժամ զիւր գեղեցկութիւնն առաւել ցուցանէ, յորժամ դադարեն ախտքն, և 'ի խաղաղութեան մնան միտքն խորհրդոցն։ Նորա եթէ տեսանիցես զայր կամ զկին գեղեցիկ, մի զարմանասցես. զի և կաղնիք են 'ի բազմաւոր ամբարձեալք, պտուղ ոչ ունելով, մարդկան ինչ ոչ պիտանացու, այլ միայն անասնոց. իսկ որթն յերկիր քարշեալ, և վայելչական ունի զպտուղ ողկուզոցն։ Ոչինչ կամէիր, որթ եթէ կաղնի. յայտ է եթէ որթ։ Ոչինչ քան զմեղու տրուպ, և զինչ քան զսիրամարգ գեղեցկագոյն. զո՞ր լաւ իցէ, մեղո՞ւ եթէ սիրամարգ. յայտ է եթէ մեղու։

Եկն Դաւիթ, գտեալ զիւղն օծաւ. հրամանաւ Այ սպասաւորութիւն մարդոյ 'ի վերայ նորա եդ զիւղն, և փոխանակ ծիրանեացն իւղ։ Այս անցեալ գնաց ունելով զթագաւորութիւնն. ոչ զբահս զգենլով, ոչ վահանս, ոչ տէգս. այլ ունէր զԱյ զկամսն, որ քան զամենայն զօրաւորք են։

Լինէր երբեմն պատերազմի կոչ, և իւրքն էին ամբոխեալք, բարբարոսքն 'ի վերայ եկանէին Հրէիցն։ Երթայր տեսանել զմարտն և զպատերազմն, և զբարբարոսն որ կոչէր 'ի միայնակռուութիւն. և ոչ ոք իշխէր յառաջ երթել և ոչ արտաքս ելանել։ Երթայր Դաւիթ և տեսանէր փայլատակեալ զպատերազմն և զյալոյս անկեալս։ Հոմիւն 'ի պատերազմն, և որք էին 'ի պատերազմին՝ յուլացեալք և ոչ զձայնն բերէին զպատերազմողին. իսկ որ 'ի լերինսն և 'ի հովիտս և յաղբերս էր դեգերեալ, առաջի դիմաց նորա կայր և ասէր. ԶԱ

է անթլփատն այն որ լուտացաւ զզաւրսն այ,,: Այլ ասէ ցնա եղբայրն. ուստի՞ է քեզ այդ հպարտութիւն: Ոչ ոչն էր ամբարտաւանութիւն, այլ հաւատ. զի ոչ ամ-բարձրաւանձութիւն, այլ երկիւղածութիւն էր ասա-ցեալքն. յաղագս որոյ ոչ զրահս, այլ զհաւատն զգե-նոյր. և ոչ հայէր 'ի նորա մեծութիւնն, այլ յամայու-թիւն մտացն. ոչ տեսանէր եթէ մեծ է նաւն, այլ զի զնաւուղիղն ոչ ունէր: Այլ ոչ երկնչէր 'ի նմանէ, վասն զի թշնամի էր այ. քանզի թէպէտ և բիւր անգամ էր զօրաւոր, այլ յաղագս 'ի վերուստ հրամանին ամենայն իրօք էր տկարագոյն. ո՛վ է, ասէ, անթլփատն այն: Յո՞ր զէն վստահանաս, ով Պետրոս: Ոչ 'ի մարմնա-կանս, այլ 'ի հոգևորս. "Վասն զի զէն մեր ոչ է մարմ-նաւոր, այլ հոգևոր,,: Այլ զիա՞րդ, զի դու փոքր ես և տկար: Բայց մեծ է տէրն. տրուալ է նաւս, այլ որ ա-ռաքեացն' զօրաւոր: Զծով արար, զվէմն պատառեաց, զտարերս փոփոխեաց. ևս առաւել միում առն լցցէ յաղթող:

Դառնայ առ այլն և ասէ ցնոսա. զի՞նչ տայցէ առն որ բառնայցէ զգլուխ նորա: Յաղագս վարձուց խօսէր. ոչ զի առցէ վարձ, այլ զի զնոսա 'ի հաւատն ածցէ: Այլ զի՞նչ եղբարքն: Դարձեալ մախանք: Յո՞յր ձեռն թո-ղեր զսակաւ ոչխարսն զայնոսիկ. մեք գիտեմք զհպար-տութիւն քո և զչարութիւն սրտի քո, եթէ ոչ կարէիր զպատերազմն յայտնիս տեսանել: Ո՛վ նախանձ աղտիւք լցեալ, ո՛վ մախանք հուր անշէջ: Զի զոր օրինակ առ զորդն ծնանի, նոյնպէս և նախանձ զնախանձողն մաշէ, և ընդ որում նախանձին' պայծառագոյն պատերազմէ: Բայց և Յովսէփու և եղբարցն նորա եղև. զի որք նախանձեցանն' յաղթութենէ 'ի ծառայութիւն ա-ծեալք եղեն, և որ նախանձեալն լինէր' թագաւորէր: Դարձեալ եղբարքն. "Մեք գիտեմք զամբարտաւա-նութիւն և զչարութիւն սրտի քո,,. ընդէ՞ր բնաւ և տեսանել էր քեզ զպատերազմն և որո՞վ ցանկութեամբ: Այլ զի՞նչ նա խոնարհութեամբն այր ասէր: Զի՞նչ արարի այժմ, ո՞չ ապաքէն բանք են. և եթէ տեսանելոյ աղա-գաւ զպատերազմն իջի, զի՞ նախանձիս, ընդէ՞ր յաչա-ղես. բան տեսէր եթէ ընչիկ փառաւորութիւն ոչ համ-բերես:

Այլ արդ հեռանալով 'ի նոցանէ հանէր 'ի վայրէն, երթայր 'ի միւս կողմն պատերազմին և ասէր. զինչ լինիցի մարդոյն որ բառնայցէ զգլուխ նորա։ Այլ լսելով նոցա ասնէին զնա առ Թագաւորն պսակացեալ և յերկիր անկեալ, և ասէ ցնա. ընդէր տերեւեցան զկեանս ատեան իմոյ։ Յինքեան և 'ի փառաւորութեան զծառայութիւն խոստովանի։ Մի՛ է նա, ոչ երթայց և 'ի բաց առից զգլուխ նորա։ Այլ զինչ Թագաւորս. հաւկեալ լինէր այնու հեռանալ ասել. զիմարդ կարասցես, զի դու մանուկ ես փոքր, և նա այր պատերազմող 'ի մանկութենէ իւրմէ։ Մ՛ի հայիր յերեւելիսդ, այլ յանհանդնայլոն. և մի անարգեր զի փոքր է 'ի տեսանել, այլ զի մեծ են խորհուրդք։ Այլ զինչ լինէր։ Ահ հաւատոյք Թագաւորն։ Հարկ լինէր նմա այնու հեռանալ ասել զաւրութիւն իւր. "Այս մանուկ և փոքր, և հովուէի զոչխարս հօր իմոյ. և յորժամ գայր առիւծ կամ արջ և առնոյր ոչխար 'ի հօտէն, երթայի զհետ նորա և 'ի բաց հանէի 'ի բերանոյ նոցա և սպանանէի զառիւծն. եղիցի նա իբրև զմի 'ի գազանացն յայնցանէ, վասն զի թշնամանեաց զզաւրս ած կենդանւոյ։ Այլ ասէր Սաւուղ ց՚Դաւիթ՝ երթ և տէր ընդ քեզ"։ Այս նմա և զէն, և ոչ կարացաւ առնուլ, վասն զի ոչ ներէր այնմ ած, այլ զի մերկ յաղթեսցէ. զի մի զէնն բառնացեսցէ զաւրութեանն զյաղթութիւնս. զի մի ասասցէ Թագաւորն եթէ զէնքն իմ յաղթեցին։ Ընկենոյր զզէնսն և զզինուորն զհաւատսն, երթայր մերկ, և վառեալ հաւատովք. երթայր հովիւ և ոչ զինուոր. ձգէր քար, ոչ 'ի բնութիւն մարմնոյն վստահացեալ, այլ 'ի զօրութիւն հաւատոցն որ զյաղթութիւնն երթեալ առնէր։ Ընթանայր և առնոյր զնորին զսուրն և հատանէր զգլուխ նորա. և քաջ զըրեալն այնու. "Ի գործս ձեռաց իւրոց ըմբռնեցաւ մեղաւորն"։

Դարձեալ նախանձ, զարձեալ յաջողանք։ Յաղթանակին փոխեալ զպատիւն, որպէս զի գովից գնացա զանձն։ Լուր նա այնպիսի այր, յաղագս որոյ առաց ած. "Գտի զԴաւիթ որդի Յեսսեայ՝ այր ըստ սրտի իմում"։ Մ՛ի բարձր գովութեան, ո՛վ ցոյցք առաքինութեան. Տէրն նորա ասէր. "Գտի զԴաւիթ զորդի Յեսսեայ՝ այր ըստ սրտի իմոյ". նա որ գազանացն յաղթող եղև, և

որ զՄաղաքիաթն եսայան, և զատախուծան հեղձոյց և զարզեան աստուածեկեաց․ որ 'ի տղայութենէ անդ սովորեալ էր, որ փոքր էր հասակաւ և բարձր իմաստութեամբ, որ և 'ի թա-գաւորական զգեստն զհաստատութիւն միայնակեցաց ցուցանէր․ քանզի ասէր, ոչ մարգարտաւ, այլ "արտա-սուօք զամենայն գիշերն զանկողինս իմ թացի,,։ Նոյն-մու մարդիկս և 'ի աւանդեան քանանն․ բայց նա և 'ի գիշերի 'ի հոգս էր․ Նա ընդէր 'ի գիշերի․ Սակա զի 'ի աւանդեան այր թագաւոր էր, և բիւր հոգոցք և անհե-կծութեամբք լցեալ լինէր․ իսկ 'ի գիշերի իբրև 'ի նաւ-ահանգստեան զաղօթելովն, յորժամ միայն ընդ միայ-նում խօսէր ընդ Այ, և աղբիւրս արտասուաց հեղոյր և լուանայր զմահիճս իւր։

Սրբ նա այսպիսի այր, որ զհոգևոյն շնորհս գիտէր, և 'ի տղայ հասակի սովորեալ էր, որ 'ի կամաւորս երկնից մերձեցաւ և 'ի վերին օգնականութեանն վայելեաց, որ զպատերազմունս բազում եղծ, և յուղղու-թիւնս ընդդէմ սատանայի եցոյց, զինի ողջախոհու-թեանն, յետ հեզութեանն, զինի պարկեշտութեանն, յորժամ կալաւ զթագաւորութիւնն, յորժամ յաղ-թեաց բիւր պատերազմաց, յորժամ զհեթանոսաց հնա-զանդեցոյց, յորժամ խաղաղութիւն էր ամենայն ու-սեք, պղերգացոյն եղև․ զի ուսանիցէք որքան բարի է նեղութիւն և որքան չար է զաստարկութիւն։ Նա երբ․ 'ի միջօրէի, յետ ճաշոյ յարուցեալ 'ի ձեմարանին ըն-գնույր, և տեսանէր կին լուացեալ և գեղեցիկ և բա-րեդէմ, բայց ոչ են բաւականք գեղեցկութիւն, քան-զի գեղն Այ է գործ։ Նորա զկինն լուացեալ 'ի վերնա-տանէն, զկին զՈւրիայի, ամենևին գեղեցիկ 'ի տեսա-նել․ խոցեցաւ ակամբն, ընկալաւ զնետն։

Ուսիցեն ընդվայրահայեացքն որք զայլոց գեղեցկու-թիւն հարցափորձեն և քննեն։ Ուսիցեն մոլեալքն 'ի տեսարանսն, որք ասեն՝ տեսանեմք և ոչ ինչ վնասիմք։ Դաւիթ վնասեցաւ, և դու ոչ վնասիս․ նա անաչեաց, և 'ի քեզ վստահանամ․ որ այսքան ունէր զշնորհս հո-գւոյն, վնեան ընկալաւ։ Նա տակաւին նա ոչ եսես զկա-նայս, այլ զողջախոհն կին և պարկեշտ․ և ոչ 'ի տեսարա-նի, այլ 'ի տան։ Իսկ դու 'ի տեսարանի, ուր և անդէն իսկ տանջէ զանձնդ․ և ոչ միայն տեսանես, այլ և լսես

բանս չարութեան և զերգս սատանայականս, ամենայն ունակք վիրաւորին քո միտքդ. աչքն որովք տեսանեն, ականջունք որովք լսեն, ռնգամբքն որովք հոտոտեն: Նոյնքան ապականութիւն, վիհ այնպիսի, և ունիմ վըստահանալ 'ի քեզ եթէ ոչ լինիցիս գազանաբար: Մի՛ թէ քար իցես, միթէ երկաթ իցես. մարդ ես ընդ հասարակ բնութեանս տկարութեամբ անկեալ: Հուր առնես և ոչ այրիս, և որպէս ունիցիս բան: Դիր ճրագ 'ի խոտ, և կարասցես ասել թէ ոչ այրի խոտն. Նոյնպէս և մեր բնութիւնս:

Այնպէս զնա լուացեալ, գերեցաւ գեղեցկութեամբն, ընկալաւ զնետն, եհաս զվէրն. ապաքեաց առ նա, և 'ի գալն առ նա գործեաց զանօրէնութիւն. ելից զցանկութիւնն և հրամայէր երթալ 'ի տուն իւր: Զայսուիկ առեմ և 'ի մէջ բերեմ զվիրաւորեալն, զի որք շուրջ կայք՝ ամենեքեան տեսանիցէք զիարդ բժշկեցաւ: Բան զի եթէ բժիշկ այր՝ գործելով զարուեստն, ունի շուրջ կացեալս զաշակերտս, զի տեսանիցեն զիարդ արուեստ յաղթէ ախտին, ևս առաւել յորժամ մարգարէս բժըշկի, ամենեցուն պարտ և արժան է հայել, զի տեսանիցեմք որպէս ունիցիմք 'ի բաց մերժել յապականութենէն և յորդանցն:

Չար էր վէրն. ցանկութիւն լցաւ, մեղքն աւարտեցան, և որ բժշկէրն՝ ոչ ուրեք էր: Յղացաւ կինն. և վասն զի կարծէր զանխլանալ յառնէ նորա թագաւորն, թէպէտ և մարգարէ էր, այլ սակայն ցանկութիւն զնա խաւարեցոյց: Յղացաւ կինն և ընթանայ առ թագաւորն. Թագաւոր, ասէ, կորեայ: Զի՞նչ եղև: Յղի եմ ես, ասէ. պտուղ մեղաց բողբոջեցաւ, զամբաստանութիւն յաւգանդիս բերեմ. յանդիմանութիւն անձնաց մեղաց, յինէն ունիմ զցոյցն: Եթէ եկեսցէ և տեսցէ այր իմ, զի՞նչ ունիմ ասել, զի՞նչ խօսել: Զմտաւ ած որքան չար են մեղք: Թագաւորն 'ի զինուորէն զարհուրէր. քանզի ոչ որ է ծառայ, բայց որ զմեղս առնէ: Զթագն ունէր, և երկնչէր 'ի թշնամեացն: Ո՞չ դու թագաւոր ես, ո՛չ և որոյ իշխանութիւն ունիս. այլ վասն զի չար մեղս արարեր, զարհուրիս: Ո՜վ թըշուառութեանս մարդոյ, ո՛վ անպատուութեանս յանդիմանութիւն, ո՛վ լաւութեանս պատճառք: Այրիքիմ զա-

ղամ, զի զիս ամաչեցուցեր, ունիմ զյանդիմանութիւն։ Այսթէ եկեսցէ այրն իմ, զինչ ասասցից, զինչ խօսեցայց. գտանիմ յղի, սպանանէ զիս, 'ի ներքս ունիմ զյանդիմանութիւնս մեղացս։ Տեսանեմս զնաւաբեկութիւնս գործեցելոյս. տեսանեմս որքան չար են մեղք։

Այլ զինչ Թագաւորն. մեղս 'ի վերայ մեղաց դնէր։ Պարտ է ընդարձակել զվէպն։ Նայր Ուրիաս այր կնոջն 'ի պատերազմէն, մնանէր առ Թագաւորն։ Այլ ասէր ցնա. զինչ իցք են, Ուրիաս, զիարդ պատերազմն։ Նա ասէր՝ բարւք, յաղթեցաք։ Ասէր Թագաւորն եթէ զինուորն յաղթեաց, և ինքն պարտեցաւ. զինուորն զպատերազմն հնազանդեցոյց, և Թագաւորն 'ի ցանկութենէն պարտեցաւ. զօրավարն մարտիցն յաղթօղ եղև, և նա անպատուութեամբն 'ի վայր կործանեցաւ։ Զինուորն ասէր զպատերազմին յաղթութիւն. իսկ նա յամօթոյն և ոչ զպարտութիւնն ասել համարձակէր։ Յաղթեցաք, ասէ, և վեհագոյնք եղաք։ Ի տարակուսանս էր Թագաւորն, և ոչ զգայր յաղթութեան պատերազմին յաղագս ամօթոյ պարտութեանն որով ինքն ընկճեցաւ։ Ասէր զինուորին. երթ 'ի տուն քո և լուացիր, վայելեաց 'ի սեղան, վայելեաց 'ի կնոջ քում։ Զի թագուցանիցէ զվէրն, զի 'ի նմանէ կարծիցի մանուկն ծնեալ։ Բայց անքուն աչնն ոչ ներեաց խնայելով 'ի վիրաւորեալն։

Այլ զինչ զինուորն։ Մի՞թ եղիցի, ասէ. և զիարդ կարացից զքեզ տրտմեցուցանել, և ես հանգերձեալ իցեմ փափկանալ։ Զայսպիսի ասէր անգիտանալով զինուորն։ Աշնամանք լինէին Թագաւորին, զի զինուորն և ոչ զտունն իւր ախորժեաց տեսանել եկեալ 'ի պատերազմէն, և Թագաւորն այնքան անօրինեցաւ՝ վասն այսորիկ հարկ 'ի վերայ բերէր զինուորին տեսանել զիւր զկինն, զի կարասցէ զվէրն իւր ծածկել։ Այլ զինչ առնէր։ Իբրև ոչ ևս գոյր հնար ծածկել զիւր զվէրն, առէ, առ Թուղթ և գրէ այնպիսի իմն առ զօրավարն, և տայր նմա։ Զուրիա զինուոր առեալ կացուսցես 'ի մէջ կողմն պատերազմին, որպէս զի զա սպանցի։ Այլ ընձեռէր զթուղթն Թշուառականն։ Զմեղացն սուր բառնայր հակառակ ինքեան զգրեալն, և զթուղթն բերէր արեանն լցեալ։ Այլ կաց 'ի պատե-

բաղմին, սպանման անկաւ։ Ահա երկու մեղք, սպանու-թիւն և շնութիւն. սպանութիւն պտուղ շնութեանն լինէր։ Զայս ասեմ յաղագս մեղաւորաց, որք յոլով զինքեանց չարիս գիտեն, զի լուեալ մի յուսահատես-ցին յիւրեանց փրկութենէն։ Նմանի գրեալ է. "Մի սպանցես, ոչ շնասցես"։ Նոյն երկուս աւանդին պատուի-րանս օրինացն էանց, շնացաւ և սպան եւսպան։ Զօր էր յաւուր, մեծ էր մեղքն։

Այլ իբրև չոգաւ Ուրիաս ՚ի պատերազմն և սպանաւ, վաղվաղակի խայտացին մեղքն ծածկեալք, յայնժամ չոգաւ առ նա Նաթան մարգարէ, վասն այնորիկ ասէ. "Սաղմոս ՚ի Դաւիթ ՚ի մտանելն առ նա Նաթանայ մարգարէի"։ Մարգարէ զմարգարէն բժշկէր. ընդէ՞ր։ Սակայն և Դաւիթ մարգարէ էր և զիւրոյ զինքն ոչ բժշկէր։ Նոյն զոր օրինակ բժիշկք յորժամ ախտա-նան, պէտս ունին այլոց բժշկաց, վասն զի ախտքն զա-րուեստն ապականեն, նոյնպէս և աստ՝ մարգարէ և նա, մարգարէ և սա։ Բայց ոչ ՚ի մահճին անկեալ կայր, այլ ՚ի չարին ընկողմանեալ։

Տեսե՛ս զայս. Նաթան մարգարէ առաքեալ է։ Այս ասէ՝ մտցէ։ Մտանէ մարգարէն, տեսանէ զնա նստեալ հան-գերձ բազում ցաւով և թագաւորական ամբարտաւա-նութեամբն։ Զինչ ասէր։ Դատ ունիմ, լուր ինձ։ Սա՛ է իմաստութիւն բժշկին. եմուտ զերկաթն ունելով, զի հատանիցէ զմէրն. այլ ոչ ցուցանէր ախտացելումն, զի մի զրկեսցի ՚ի բժշկութենէն։ Ծածկէ ՚ի ներքս ոչ ընդ հանդերձիւ, այլ ընդ արարուածով պատմութեան։ Նա զի ոչ ասաց վաղվաղելով ՚ի մտանելն, ով պար-ծեալ, ով շնացող, ով սպանող։ Այլ մերկ զդատողու-թիւնն ունէր, և ոչ առանց դիմաց զհամարձակու-թիւնն. այլ զերկաթն ծածկելով իմաստութեամբ ա-ռակի՝ զդատաստան ունիմ։ Այլ թագաւորն ասէ. ասա ըզ-դատաստան քո։ Նուէ. Այր մի էր փարթամ, և ունէր հօտս և անդեայս բազումս. էր և այլ մի աղքատ այր։ Երկու այրք՝ Ուրիաս և Դաւիթ։ Նմանցոյց զդէմն ճըշ-մարտութեանն։ Աղքատն ոչ ինչ ունէր, բայց մի որոջ, որ սնուցեալ եղև ընդ նմին. ՚ի սեղանն նորա ուտէր և ՚ի բա-ժակէ նորա ըմպէր և ՚ի ծոց նորա քնանէր։ Սոյն զոր ունէր զինուորն՝ զկինն։ Տեսանե՞ս զաղքատութիւնն

զխորհրդ· սիրելութեան պատճառս լինի։ Վասնզի առ ըն-չեղն բազում է ամբարտաւանութիւն. իսկ առ աղ-քատն կրկին լինի սպասաւոր և պաշտօնեայ. ծնանի մանկ-կունս, և լինի խելքն մայր և գայեակ։ Բայց առ ճոխսն ոչ այսպէս, այլ ծնանի զմանուկն և ընձեռէ զնա օտա-րի, և զսիրելութիւնն յերկուս հատանէ ամբարտաւա-նութիւնն. ծնանի, և ոչ լինի մայր գեղեցիկ[1], վասն զի ոչ լինի սնուցիչ իւր մանկան։ Իսկ Քրիստոս ոչ այս-պէս. այլ ծնեալ զմեզ, և ինքն գաստիարակ եղև մեզ. և փոխանակ կերակրոց իւրով մարմնովն զմեզ կերակ-րեաց, և փոխանակ ըմպելւոյ զարիւնն իւր արբոյց մեզ։ Բձեցոյց զօգտակարութեան զպատուականութիւնն սիրելու-թեանցն։ Եկն օտար առ ընչեղն այն։ Ո՞չ էր օտարն. Հիւրընկալութիւնն. Ո՛չ ի ցուցցէ զնորա պարկեշտութիւնն, օտար զճանապարհ ցանկութեանն կոչեաց. Վասնզի ոչ երբէք զոյլոց անմեղմութեան որոշեաց, և ոչ անկարգ խրոք եսես. այլ խոցեալ աղխա կնոջ զպարկեշտութիւն վաճառեաց. և սուղ ինչ պղերգացեալ, եկն օտարն անարգեալ ցանկութիւնն զազրականն այն։ Եկն օ-տարն առ ընչեղն, եկն առնուլ ՚ի հօտիցն և յանդեայցն. առաքեաց և յափշտակեաց զորոջն զայն, որ ՚ի ծոցն քունէր և ՚ի սեղանոյն ուտէր.

Բարկացաւ Թագաւորն, քանզի կարծեաց օտար դա-տաստան դատել, և զխրատուսն երևեցուցանէր հան-դերձ բազում արդարութեամբ, զի ոչ է նոյն սիրելի ժամանակ ցուցանել զխրատուսն։ Արով մեռցի, ասէ, և զորոջն չորեքպատիկ տուժեսցէ. Հրամայէր ըստ օրի-նացն, զի և օրէնքն չորեքպատիկ հրամայէին զողոցն հա-տուցանել։ Բայց սա գերազանցեաց քան զօրէնսն. հրա-մայէր զայրն սպանանել, և չորեքպատիկ տալ զորոջն. և հան զվճիռն և զդատաստանն կատարեալ։ Ընկենու զպատմուկերն և ասէ. դու ես, Թագաւոր։ Ո՛վ հրաշալիք, ով սուրբ, որ հատանէ զգայութեանցն ցաւս հանճարօք յանդիմանութեամբն։ Ոչ ի յերկար ժամ արտաքս էր, ծած-կեաց զտանեգծուածն[2]. և յերկար արկանէ եկն յանդի-մանութեան, եւ և ՚ի բաց կորեաց։ Դու ես, Թա-գաւոր։ Նա զինչ նա. "Մեղայ տեառն" ասէ։ Տես և

1 Իսկս գայլոկ։ 2 Իսկս պատմոյն կամ պատերազմաւոյն

'ի հիւանդութեն զքաղցրահոտ ծաղիկ հոգւոյն . մեղաց տեսան : Զինչ և մարգարէն . «Եւ տէր 'ի բաց եբարձ զմեղսն քո» : Այսպէս էր ապաշխարութիւնն, երագագոյն և թողութիւնն : «Ասա դու նախ զանօրէնութիւնս քո յառաջագոյն, զի արդարասցիս» : Իրօքն բարեկացուցեր, և բանիւքն ապաշխարեա :

Զայսպիսի ասեմ, զի լուիցեն մեղաւորքն և կարծանեալքն 'ի յանցանս : «Մեղայ, ասէ, տեառն» : «Եւ տէր եբարձ զմեղս քո» : Դու ասացեր եթէ սուր անկցի 'ի վերայ նորա . բայց դու ոչ մեռցիս : Տեսե՞ր զիարդ ած ելոյծ զդատաստանն մարգարէին . «Ասա դու յառաջագոյն զանօրէնութիւնս քո զի արդարասցիս» : «Մեղայ 'ի Դաւիթ յորժամ եմուտ առ նա Նաթան մարգարէ» : Ըստանօր եղև Նորա բարեխօսութիւնն և թողութիւնն : Ահա ուստի զիարդ բժշկեցաւ և զոր դեղն ընկալաւ : Զի յորժամ ած արդարացուցանէ, ո՞վ դատապարտէ : Զի և ոչ ասաց եթէ ես թողում, այլ եթէ «Տէր 'ի բաց եբարձ զմեղս քո» : Մինչդեռ էին ցաւքն, բժշկեաց զվէրսն . ոչ մեռցիս, ասէ : Եւ զայս ասացեալ գնաց :

Կամիմ ցուցանել այսուհետև զնորա բարեպաշտութիւնն և զմնացն ուղղութիւն, զոր էառ զթողութիւն մեղացն, զոր ընկալաւ զքաւութիւն յանցանացն : Զի յորժամ եկն Աւրիաս 'ի պատերազմէն և զյաղթութիւն պատերազմին թագաւորին գուշակեաց, կամելով թագաւորն յանձնէն զանխլանալ զչնութիւն նորին, այնքան կարօտանայր փութով ծածկել զմեղսն, զի և եա յարեաց 'ի չնութիւնն : Իսկ զկնի այնորիկ եղև իմաստասէր յապաշխարութեանցն . զի որ թաքուցանէր զմեղսն իւր յառաջագոյն, յապաշաւանս եկն . և զկնի թողութեանն որ յայս եղև, յետ գալոյ մարգարէին և ասելոյն եթէ «տէր եթող զմեղս քո և ոչ մեռցիս», ոչ միայն ոչ թաքուցանէր զախտն, այլ և զկնի այնորիկ ամենայն ազգաց քաղայայտ առնէ, և զառաջմնաս զայս գրէ . զի որք յետոյն լինիցին մարդիկ, ուսանիցին որքան ողորմութիւնս ունիցի ախտն : Զի եթէ եկին 'ի նա ապաշաւանքն և բերին զհամարձակութիւնն, ասէր՝ եթէ ես ապրեցայց, զիա՞րդ ոչ փրկին և այլք խմակք պատմութեանքս : Աստուած ինձ եթող, ասէ . վասն

այնպիսին գրեալ, զի զվէրս ուսանիցին և զգեղջն. ոչ զանձգիտեալ յանձնէթոյ, վասն զի ցանկամ իմում փրկութեան։ Նմանապէս և Պաւղոս ասէր, յետ թողութեան մեղացն իւրոց յարձանացուցանէր և ասէր. «Շնորհ ունիմ զօրացուցչին իմոյ Քրիստոսի, վասն զի հաւատարիմ զիս համարեցաւ, որ յառաջագոյն հայհոյիչ և հալածիչ և թշնամանող», այժմ հաւատարիմ արար։ Յաղագս այսորիկ և ես հրապարակագոյժ ասեմ. զի եթէ ոք իցէ անարգել հայհոյիչ, տեսցէ զի ունի յոյս փրկութեան։

Եւ դու ով Դաւիթ, վասն զի շնացար և սպանութիւն արարեր և թողութիւն յետ առեր, այդր ապագաս հաշտեցուցանես։ Այո, ասէ, զի եթէ իցէ ոք շնացող կամ այրասպան, ուսցի եթէ կարէ փրկութեան հանդիպել։ Յաղագս այնորիկ գնէ 'ի բաց զմեղս, և զապաշաւանօքն ընդունի։ Այսպիսիկ են միայն խնդրեալք, եթէ քաջայայտ ամենեցուն արար և ուղղեցաւ։ Ո՜ խորհրդ, ես ասեմ։ Որպէս լուայք եթէ ապաշխարութիւն բազում և մեծամեծ թողութիւն ունի և յոլով համարձակութիւն բերէ մեզ, նոյնպէս և զայն ուսանել ձեզ հարկաւոր է, եթէ որ ընդ մեղօք անկեալ է և յոլով ամօթ ստանայ, ոչ միայն բաւական լինի ապաշխարութեանն, այլ երկնչի և զազրի մի գուցէ դարձեալ 'ի նոյնս անկանիցի։ Որդ կամի ցուցանել եթէ ոչ միայն զյանցուցեալն ճանաչէ սաղմոսս, այլ և զապաշխարողն։ Եւ զայսորիկ 'ի ձեզ պահեմ, և մի ոք զինի ապաշխարանացն յինքն վստահասցի, այլ մանաւանդ հաւատացոյն զիւր զապաշխարութիւնն 'ի նաւահանգստի կացուսցէ։

Կամիմ ցուցանել զնա թէ բժշկեցաւ, և լաւագոյն և զօրաւոր այնքան եղև։ Եւ զիարդ յետ ցանկութեան այնորիկ անկաւ 'ի միւս ևս բաղձանս։ Դարձեալ մարտ, դարձեալ կռիւ, դարձեալ 'ի վերայ եկն նորա ցանկութիւն, դարձեալ պատերազմ խմբեցաւ, և պատերազմ դժնդակ, և իւրքն կային շուրջ։ Էր աղբիւր 'ի տեղւոջն, յորում սաստկագոյն էր պատերազմն, ետես Դաւիթ 'ի պատերազմին և 'ի դժնդակագոյն ծարաւ անկանէր և ցանկայր. դարձեալ փափագումն, յորմէ ոչ արգելլաւ. յայնժամ ցանկացաւ մարմնոյ, և այսօր ջուր ըմ-

պէտս բաղձայր. տապալեցեալ լինէր 'ի ծառայութիւն, և ա-
նէր՝ ծառայութիւն իւր, կորնչէր։ Իսկ ամենայն յափշտակողաց
տալով տանել նմա չարեաց և բերելն զչարիսն։ Զի՞նչ ա-
նէր, որ յաղթահարեալ պատերազմի զծառայս իւր արգել։
Զի՞նչ ասէ. տեսեալ զչարիսն ոչ արք, այլ նախիրեալ
էր։ Զի ոչ ձեռք էր, այլ արիւն. ոչ 'ի բնութիւնն հայ-
եր, այլ 'ի միտսն։ Տեսանեմս զիարդ առաջեաց յառաջին
ցանկութեանցն, յետոյ աղխախահարգութիւն եղև։ Այս մարմ-
նոյն ցանկալոյ, ձեռն և փափաքէր, մինչև անդ էր բաղ-
ձայր, և արգելոյր զինքն։ Քանզի ոչ ասեմ եթէ ա-
տարեց էր դժնդակացն, այլ եթէ խնասութիւն յաղ-
թող եղև ցանկութեանն։

Զայսպիսի ասեմ յաղագս պոռնկացելոց. Յանկա-
ցար բողի և պոռնկեցար, կամիմ պաղատել. մի յաւել-
ցես մեղս 'ի մեղս. և մի ասեր ինձ զիարդ կարացից յոչ
պոռնկել։ Ես քեզ ասեմ որպէս կարասցես։ Հաւա-
տացանէ՞ք զքեզ ցանկութիւն, այլ ունիս կին. և[1] եթէ
չունիս՝ առ և ունիս հանդերձ զգուշութեամբ զհեշ-
տութիւն։ Ոչ կարեմ, ասէ, ժուժել։ Յուլութեան են
պղրգիչ ասասելը. զի յորժամ բերկից քեզ զայլս և ցա-
ցից քեզ թէ ոչ կանայս ունելով պարկեշտացանն, զի՞
պատասխանիս կայցես դու. Ո՞րքան 'ի խոտս անդ զերծան
'ի նաւաբեկութենէն, և դու 'ի նաւահանգստի ընկղ-
միս։ Ունիս կին, և պոռնկիս, մինչև անդ թէ չունս։
Ոչ զիարդ կարիցեմ, ասէ, յաղթել մերոյն. Աստե-
ղեաց 'ի կնոջ քում, և զմտաւ ած զինչ ասէր երանելին
Պաւղոս. "Յաղագս պոռնկութեան իւրաքանչիւր ոք
զիւր կին կալցի և իւրաքանչիւր ոք զիւր այր։ Զի կին
մարմնոյ իւրում ոչ իշխէ, և ոչ այրն"։ Եթէ կաշխա-
ցէ զքեզ բողն, զմտաւ ած զբանսն 'ի քեզ խօսեալս և
ասա. "Այր մարմնոյ իւրում ոչ իշխէ". և զբանս
զորեացես 'ի Հակառակ քում և առասցես բողին. զի՞ կո-
չես զիս, կնոջ իմոյ են մարմինք իմ. ոչ կարեմ զայլոց
մատանել, զանփափական նորա ոչ իշխեմ նաւաբեկացանել
և ոչ զիւր նորա վաստակել, և զմարմինս նորա իշխեմ պղծ-
ծել, և զիարդ կարիցեմ նոյել ընդ կինս. Ասեսէ 'ի
Քրիստոսէ և ասա. մարմինս այս անդամ է Քրիս-

1 Պակասէր յօրինակին և եթէ չունիս՝ առ և. յաւելաւ 'ի յայնմէ։

տոսի. վասն զի մարմինք ձեր, ասէ, անդամք են Քրիս-
տոսի:

Լուիցեն զայս և կանայք, երկիցեն և զմտաւ ածի-
ցեն զեր եւս զնոսա Քրիստոս, և ասասցեն. "Մի՛ մարմինս իւրաւ ոչ իշխէ": Տես զիմաստութիւն Պաւ-
ղոսի զինչ ասէ. վասն զի յոլովք են որ ժուժկալեն, և ունին ողջախոհ և պարկեշտ կանայս, և տան եւս քան զկարծիսն կրօնաւորին, և զնոսա երբեմն նոցա իմաստա-
սիրութիւնն շնութիւն, յաղագս այնորիկ ասէ. "Իւ-
րաքանչիւր ոք կալցի զիւր կինն": Այս ոչ ինչ պատուհա-
սէր, այլ մատնէր և նստէր յառաջաստոյն, և հանա-
պազօր զայս և զկանայս խրատելով ազգագաւ աղաղակէր
և ասէր. "Մի՛ զրկէք զմիմեանս, բայց եթէ ոչ միա-
բանութեամբ կրօնաւորեսջիք": Դու ոչ տիրապետես ու-
նել զայրն քո, և նա զքեզ ոչ ունելով՝ երթայ այնու-
հետև մեղանչէ, և յանցանացն այնուհետև քում ժուժ-
կալութեանդ հասանիցէ: Ո՞ր լաւագոյն, զքե՞զ ունել
թէ զայրն: Դու ոչ արգելեալ՝ ի նմանէ, բայց բազն
արգելեալ է. քանզի եթէ կալցի զայրն, կորուսանէ
զքո անդամն: Յաղագս այնորիկ եառ կին, և դու վասն
այնորիկ առեր այր, զի ողջախոհանայցէք: Մի՛ խորժեսս
կրօնաւոր լինել. հասանիցն զայրն քո, զի երկու ար-
ժանք լինիցին՝ ողջախոհութիւն և համակամութիւն.
զի մի պարկեշտութիւն և պատերազմ, զի մի ողջախո-
հութիւն և մարտ: Քանզի դու յորժամ ժուժկալի-
ցես, և նա ՚ի ցանկութիւնն բազակծեալ լինի, զինչ
օգուտ իցէ. և Պաւղոս ասէ՝ ոչ պատահեցէս, վասպա-
ղակի ամենայն և ալէկոծի: "Մի՛ զրկէք զմիմեանս, ա-
սէ, բայց եթէ ինչ ՚ի միաբանութենէ": Ո՜հ ուր խա-
ղաղութիւն է, և ողջախոհութիւն պայծառանայ. ուր
համակամութիւն է, և ժուժկալութիւն պսակի. իսկ
ուր պատերազմ, և ողջախոհութիւն ՚ի բաց հալածի:
Այս որդ "Մի՛ զլանայք զմիմեանս, բայց եթէ ինչ ՚ի
ձայնակցութենէ":

Այս դարձեալ զնոյն ասելով ոչ դադարեմ. քանզի
փեսաւերքն Պաւղոս հրամայէ, որ փեսաւեքն ամենայն
աշխարհի էր. և վասն այնորիկ ոչ ինչ պատուէր ա-
սելով. "Պատուական է ամուսնութիւն և անկողինք
անարատ եղիցին". Օ՜հ և աւելի նորա խնդրեմ ՚ի հարսա-

Digitized by Google

նիւն չոգաւ, և իւրով երթալովն զամուսնութիւն պա-տուեաց, և ընծայս մատոյց՝ զջուրն գինի փոփոխելով։ Ընթասցիս որքան ախորժեսցես. իսկ յորժամ տկարա-նայցես, առցես զդեղն զմիաբանութիւնն, զի մի փոր-ձեսցէ զձեզ սատանայ։ "Իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի"։ Երեք են այսոքիկ, կուսութիւն, ամուսնու-թիւն, պոռնկութիւն. կուսութիւն գեր ՚ի վերոյ, ա-մուսնութիւն մէջ և պոռնկութիւն ՚ի վայր։ Կուսու-թիւն պսակ ունի, և ամուսնութիւն չափաւոր գովու-թիւն, իսկ պոռնկութիւն տանջանս և պատիժս։ Արդ տես թէ ժուժկալիցես, եթէ կարիցես զտկարութիւն մարմնոյդ բառնալ, և կամիցիս զչափն զանց առնել։ Զի զոր օրինակ որք հանդերձեալ են լողել, այնքան մա-նեն որքան խնամեն թէ պարտ է ելանել, նոյնպէս և դու զմտաւ ած որքան կարես համբերել, զի մի առա-ւել քան զչափն անկանիցիս արտաքս։ Յաղագս այսր ամենայնի գոհասցուք զՀօրէ և զՈրդւոյ և զՀոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Ի ԲԱՆ ՄԱՐԳԱՐԷԻՆ ՈՐ ԱՍԷ. «ՍԱԿԱՅՆ Ի ՆԱՆԻՐ ԽՌՈՎԻ ԱՄԵՆԱՅՆ ՄԱՐԴ ԿԵՆԴԱՆԻ. ԳԱՆՁԷ ԵՒ ՈՉ ԳԻՏԷ ՈՒՄ ԺՈՂՈՎԷ»։

Արդ այժմ, սիրելի, ՚ի դաւթեան երգոցն զսաղմո-սականն հարցուք նուագս. և ընդ նմին զմարգարէին տկարութիւնս յայտնապէս ցուցցուք. "Սակայն ՚ի նանիր խռովի ամենայն մարդ կենդանի". խռովի և ՚ի ստուեր կորնչի, խռովի և որպէս չեղեալ ապականի, խռո-վի և յառաջ քան զհաստատեալն ընկղմի. որպէս հուր բորբոքեալ տոչորի և որպէս եղէգն անձիւնանայ, որ-պէս բալ վերանայ և որպէս մոխիր գետնանայ, որպէս բոց ձօձէ և որպէս ծուխ լուծանի, որպէս ծաղիկ գե-ղեցկանայ և որպէս խոտ չորանայ, որպէս զամպ սփռի և որպէս կաթիլ պակասի, որպէս պղպջակ պատառի և որպէս պատրոյգ առկայծեալ շիջանի. խռովի և զհարըս-տութեանն միայն զտիրոջն տանի. խռովի և զժլատու-թեան և զնենգութեան շահս շահի. խռովի և ՚ի խա-

Digitized by Google

վութենէն ոչ ինչ առեալ երթայ։ Այսպէս խաղաղութիւնք և այլոց փափկութիւնք, նորա կանայք և այլոց զաւակքն, նորա հօրքն և այլոց ուրախութիւնք. նորա տրտմութիւնք, իսկ այլոց վայելք. նորա յանցաւորութիւնք, իսկ այլոց փափկութիւնք[1]. վնասակար անէծք և հեծեծանք, իսկ առ այլոցն առատութիւնք. վնասակար արտասուք, և այլոց ինչք. նա 'ի գժոխս տանջի, և այլք 'ի նորայն վայելելով առա-ձանեն “Սակայն 'ի նանիր խռովի ամենայն մարդ կենդանի”։

Մարդ՝ կենցաղս աշխարհիս փափաքող՝ մահկանացու անպտուժելի պարտքն, որ կամաւորութեամբ չարութիւնն, որ ինքնասիրաց խմարքն, որ իւրայինն առնել նենգութիւնն, որ զիւրաքանչիւրն 'ի չարագործութիւն, որ չարախօս[2] պատրաստական էր 'ի ժլատութիւն, որ անյագն էր յարծաթսիրութիւն, որ անպատկառ մեծամտն, որ զիւրանն վերացուցանն, որ զիւրաքանչ բարձրութիւն, որ կամն աշխարհականեալ, անձինն մոլեգնեալ, մոլորեալ մեծամտեալ, շլացեալ փչացեալ, ապականեալ պատուիրաց, բայց զիւրաքանչ, զիւրանց ձրացն, զիւրաշար խառն. որ այսօր պատուական և այգուցն վախճանի, որ այսօր 'ի հարստութեան և այգուցն 'ի թաղման, որ այսօր 'ի ծիրանիս և այգուցն ելեալ 'ի կենաց, որ այսօր 'ի գահոյս և այգուցն 'ի շիրմի, որ այսօր է և այգուցն ոչ է, որ այսօր ճառագայթեալ և այգուցն վճարեցեալ, որ 'ի բարեբախտութեան անբաւականի և 'ի փառաւորութեան անմխիթարելի, որ բնութեամբ մահկանացու և յամբարհաւաճելն որպէս կարծէին՝ յաւիտենական. որ զործակիցն ամենայն ցաւոց։ Յայտնէ մեր նուաստութիւնս նուազելով որչափ մարդկային ակարութեանս հաշակումն է. որչափ ինչ ասացի, ոչ ինչ պատշաճագոյն զոր քան զմարդաբերականն ձայնն որ ասէ. “Սակայն 'ի զուր խռովի ամենայն մարդ կենդանի”։

Տես սիրելի, քանզի ծովու նմանեցան երկրաւորքս, զուցէ 'ի ցամաքի առաւել քան թէ 'ի նաւի վտանգեցջիք, զուցէ[3] քան զհողմ սաստկագոյն զմիմեանս անկանիցիք, զուցէ որպէս 'ի մէջ այսր անդր ծփիցիք։

1 Ոմանք խառն։
2 Ոմանք չարախօս։
3 Ոմանք գուցէ սաստկագոյն զմիմեանս։

Այս ցնորս աղաղակին էսա, մինչ զայս երկինք եհար. նմա ընկերքն առաքելոյն ցանկացաւ, այլ նմա զայս ասաւան զծառայ յարեւշատակերաց, նմա վասն Ճշոյ ընդ դրացին մի-ձի, նմա վասն գեղոյ ընդ ընկերքն պատերազմի. նմանք վասն շարժոյ երկրի վիճին, նմանք վասն շինուածոց զեխ-մեռանս նեղեն. սա որ ոչն էաս՝ Ճանոյ հանել, նա և զոր առն՝ տալ ոչ կամի. նմա վասն վաշխից ժլատանայ, նմա և գլխովին խոկ հանել փութայ. սա ոչ ինչ ունելով կածի, և նա ունելով աղշտայի[1]. որ ոչն ունի նախատի, և որ ունի նեղեալ. որ կայանն[2] չպարտանել, և որ յեշ-խանութեանն իցէ կասկածէ. որ 'ի պետութեանն է առաջ, որ 'ի կարողութեանն է բանդաստի: Վասն երկիր-մունք հանապազ, նախանձ հետ խրեար, ժլատութիւն բանսանաց, պոռնկութիւն[3] բարձրանաց առ մեծատանս. Հաւատք փախեաւ, Ճշմարտութիւն զերկիր եթող, սէր մինչև ցմեղան հասարակ. բազդեպուք զխրախանչին սպ-կարուսին. երկպառակութիւն կասկածանաց լցեալ. երկիր առդ զբոլորս առձեռանալ ոչ կարէ. զորս մինչև ցյերկին եթերն պղծեցան 'ի չար բանից. կենդանոյ ամենեցունց եղև վասն բնչաւորութեան: Կապոյք[4] վաճառականք, ճա-նապարհք մաքսաւորին, երկիր մկմանկի, որք ընդ վա-ճառաց անկանելին, Ճուլք տիրանան, առատասիրուք և հրապարակապայոք զբաղանս ունին, փախուստ 'ի հոգս մնչին. յաւէշտակացք ղաշխարհս խռովեցուցանեն, ըն-չաւէտք զզաստատամտս կրեն[5], զպարապորդք զատութիւնս փաճառեն. մեծատանց առելով զերդմունս ծախեցաք. յերդմունքն միայն Ճանաչեմք զնմ. Սակս այսր ամենայ-նի չարութեանն ընկղմեալք՝ մարգարէն զկենդանոյ յեշե-լով ասէ. «Սակայն 'ի զուր խռովի ամենայն մարդ կեն-դանի»:

Ով մարգարէ, մարդ միայն խռովի. բանաւոր ստեղ-ծուածն միայն բանդաստի. ոչ ինչ այլ 'ի կենդանեաց կամ 'ի կարգս անասնոց խռովեալ: Կչռովքն, առէ, Ճուլք և անզգայքն զազզազեն, շարժի երկիր և զարձեալ հաստատ-ուի, յատակն հողեք և անզգայքն լռեն, խռովքն և զա-

1 Ոմանք ախշտայի:

2 Ոմանք որ պախկածան է, և չէք հաստատանաց 'ի յոյզն:

3 Յոյնն պոռնկիան մեծամ փախ-ճեալք բարձրանաց:

4 Յոյնն ալտոր վաճառք:

5 Ոմանք կոխեն:

զանձք և ժամանակաւոր հանգչին, յաւէտ բոց և զմերձա-
կայ նիւթն ծախելով ամենայն : Իսկ մարդ խառնելով
յենու՝ ոչ երբէք դադարէ. այլ զայս առնէ և առա-
ւել քան զնոյն, զհարիւրն կրկնել ջանայ և զկրկնեալն տա-
սանապատել[1], և յայսպիսի այլ ջանայ զանձել. ոչ երբէք
լալ է 'ի զանձելոյ, մինչև իւր կատարածն զանձի. արա-
քեալ է հարստութեամբն, արծաթսիրութիւնն կա-
լեալ զաչսն՝ գեղեցկագոյն քան զոսկի չքնի վասն ցանկ
հարստութեանն. հարստութիւն՝ անհաստատ սիրելի,
անհաւատ կենակից, նենգաւոր ցանկութիւն, բազմա-
տէր[2] կատակ. բազմահնարս խաբողն, թևաւոր կա-
ղեալն, դատապարտեցելոցն ազատողն, որ քան զամենայն
յոյս ազատագոյն փախուստ, որ յանկեալ անմերձենալի
ձեռաց ազդէս հողմ, մեծութիւն որ ամենայն անառակու-
թեանց է ծնող, ամենայն տանջանաց հաւաքող, ամե-
նայն չարեաց դառն, գործակից հոգեմաշ փափկու-
թեանն, որ ընդդէմ է ժուժկալութեանն և թշնամի,
որ զամենայն բարի գործս մոռանալ տայ՝ զոգին և սա-
ղակն : Աչս այլ զի են մատուցից զմեծութիւն, թողեալ
զքո աստանօր, որոց և բանաւորին, և նա վնասեալ և կա-
ղեալ 'ի նոցանէ : Նմանագոյն է քեզ առ նոսա ասել
այսպիսի բանս : Ո՜վ դուք, ընչասէրք, խափանեցէք, զի զիս
իբրև զգող բիւր կապանօք կապէք. զի զիս իբրև զսի-
րելի համբուրէք և իբրև զչարագործ կապէք. 'ի մետա-
ղաց 'ի մետաղս 'ի ձեռն ձեր առաքեցայ : Թողէք զիս
զանեալս ամփոփել մի ամփոփել առ լոյսն, զի 'ի տառա-
պելոյն 'ի ձեռն փոփոխել փութամ :

Այլ զինչ առեն : Արդեօք ժողովեալք զմեծութիւնն,
զի մի տառապանաց[3] լիցին ժառանգորդք, այլ մեծու-
թեանն : Նախնիք զանձագէս, ով մեծատուն. զաւաժա-
մանակեայս ոչ գիտես, և զհանդերձելոյն հոգաս. զանձ-
ձինս չգիտես, և վասն այլոց կարգաւորես. եթէ թա-
գիս՝ զայն ոչ գիտես, և վասն ժառանգաւորաց հոգաս :
Պետրի ամփոփեալ, առ քեզ զքո կատարածն, և ապա
յայնժամ վասն որդւոցն խնամոյ : Ո՜վ դու զքեզ քեզէն
խաբես, զի որոշես զքոյ գործն. ոչ կարես յետ մահուն

1 Խմա պատճառաւորին առնել. միւսն ըստ յունին :
պատճէնին խորհի :
2 Ցանկութեամբ էր բազմատէր. երբեմն զանազանին, ոչ միաբանին :
3 Միւսն ժառանգորդացն՝ տառապա-

կարգաւորիչ լինել կենդանեաց. ոչ որ 'ի դժոխս վասն երկրաւորիս կարգաւորեաց. մի է կենդանեաց և մեռելոց կարգաւորիչ, կշռէ իւրաքանչիւր ուրուք զվարժանն:

Ո՜վ իմ ունայն խորհիս, ով մեծատուն, զի գանձես և ոչ գիտես ում ժողովես զայն. զի՞ զատաւորելոց և զորբոց մնտեալ ես զհետ. զի՞նչ 'ի նոցանէն աղաչելով ծախիս որպէս զքո ինչ իրս տալ. զհայրենիս իւրեանց կամին և ոչ զքոյն, զձեռնատրեալն քեզ վասն նոցա և ոչ զլինդ քեզ ծնեալ: Ո՜վ որ առեալն տուր, և զոր կալեալն շահիր. շատ է քեզ զի տալ և ոչ առնուլ հրամայեցար. շատ է քեզ զի ընդ տառապելոցն. Քրիստոս զանձն իւր ձգեսցէ առ քեզ: Նա անձրևէ զառ 'ի ներքոյ երկնից առ հասարակ, արծաթ 'ի քէն խնդրէ. որ որատայն և փայլատակէ, ողորմեաց քեզ, ասէ, որ զամենայն իմա ողորմութեամբ: Նա զգեցոյց զերկինս ամպովք, զդեստ 'ի քէն խնդրէ. շատ է քեզ զի աղքատն իբրև զանձն աղաչէ զքեզ: Տուր զթա ողորմեա քեզ, ասէ, և զազլխոյդ վեր 'ի վայր տանիս և ոչ աղաչելոյ նոցա հաւանիս: Տուր նոցա զնոցայն, և 'ի հօրէն առցես զժառարէնն: Հայր ունիս Թագաւոր, տուր նոցա և առ 'ի հօրէ նոցա զժառանգութիւն զայն որ ասէ. “Ամէն ասեմ ձեզ, որովհետև արարէք միում 'ի փոքրկանցս յայսցանէ յիմ հաւատացելոց, ինձ արարէք„:*

## ԱՌ ՀՐԵԱՅՍ, ՀԵԹԱՆՈՍՍ ԵՒ ՀԵՐՁՈՒԱԾՈՂՍ ԵՒ Ի ԲԱՆՆ «ԿՈՉԵՑԱՒ ՅԻՍՈՒՍ Ի ՀԱՐՍԱՆԻՍՆ»:

Զայսք ծիծաղանց նստելով 'ի բանի անսան ծնողացն զալոյ և բերելոյ զկերակուրն. և յորժամ տեսանիցեն զնոսա եկեալս, թեթև թևոցն շարժեն զօդն և ճճուելով հրճուին: Նմանապէս և ծնողքն հանդերձեալք մերձենալ յիւրեանց 'ի բոյնն՝ ճառագեն, յառաջագոյն յայտնելով ձայնիցն զիւրեանց զգալուստն: Նոյնպէս և դուք նստիք 'ի բանիս յայսմ յեկեղեցւոջ անդադար մերում գալստեանս. և յորժամ տեսանիցէք զիս ե-

* Թերի մնաց ճառս երկիր մասամբ:

կեալ, թեթեւ թեւօք մտաց թռչիք։ Այժմ նմանն եւ ես համագերձեալ մերձենալով 'ի հոգեւոր քոյին այս՝ նախաձայնեմ փառաւորելով զձեզ իմ, որ այսպիսի որդիս ես ինձ ստրեցի։ Ողջունեմ բերանոյ 'ի բերան տրւեալ լինի կերակուրն. իսկ ձեզ ոչ այսպէս, այլ 'ի բերանոյ 'ի լսելիս. եւ նոցայն յապականութիւն յառաջեալ անցանէ, բայց այս յանապականութիւն. նա ըզմարմին կերակրէ, եւ սա զհոգի պարարէ։ Այս ամենայն ոչ վայրապար եւ ոչ ընդ վայր ասացան ինձ, այլ զի յաւետարանէ այսօր ընթերցեալ տեղին յայս վարդապետութիւն մեզ օժանդակէ եւ հարկաւորէ զձեզ խրատել։

“Կոչեցաւ, ասէ, Յիսուս 'ի հարսանիս„։ Այլ առանց ձանձրանալոյ տուք ինձ զձեզ աղաչեմ եւ հայեցարուք յասացելոյս. Ասեմ զի ոմանք պատճառեն զամուսնութիւն, այլք զմանկունս, կէսք զզինուորութիւն, ոմանք զվաճառականութիւն, կէսք զաղքատութիւն եւ զայլ ինչ որ այսպիսի իրք են։ Արդ խորժեմ ցուցանել ձեզ, եթէ ոչ ընչեղութիւն խափանէ եւ ոչ աղքատութիւն, ոչ զինուորութիւն եւ ոչ վաճառականութիւն, ոչ ամուսնութիւնք եւ ոչ որդիք, ոչ ծառայութիւն, ոչ ազատութիւն եւ ոչ այլ ինչ 'ի նոյնպիսեացն։ “Կոչեցաւ Յիսուս 'ի հարսանիսն„։ Զոգաւ եթէ ոչ չոգաւ. յայտ է եթէ չոգաւ։ Այլ եթէ չոգաւ, զիա՞րդ ամուսնութիւն չար իցէ. մի՞ ունիս ինչ պատասխանիս։ Բայց ես ոչ միայն ասեմ եթէ չոգաւ, այլ ընծայս եւս մատոյց՝ զջուրն 'ի գինի փոփոխելով։ Արդ մի՛ պատճառեր զամուսնութիւն. տէրն քո չոգաւ 'ի հարսանիս եւ փառաւորեաց զնա, եւ դու թշնամանես զամուսնութիւն եւ ասես եթէ խափանիչ է մեզ ամուսնութիւն։ Ոչ ինչ է խափան առ բարեպաշտութիւնն։

Կամիս ուսանել եթէ ոչ ինչ վնասէ կին ունել եւ մանկունս. Մովսէս ո՞չ ապաքէն կին ունէր եւ մանկունս. Եղիաս ո՞չ կոյս էր. Մովսէս ո՞չ մանանայ իջոյց յերկնից. Եղիաս ո՞չ հուր իջոյց յերկնից. ո՞չ Մովսէս առաջնորդէր եւ ժողովրդեանն. ո՞չ Եղիաս բանիւ կապեաց զերկինս. ո՞չ ընդ Մովսէսի խօսէր Տէր. եւ ընդ Եղիայի նոյնպէս. ո՞չ Մովսէս զծովն եհերձ եւ անցոյց զժողովուրդն, եւ Եղիաս հրեղէն կառօք համբարձաւ։ Ո՞չ վնասեաց ինչ զնա կնութիւնն. մի՞ խափան ինչ,

եղեւ մխտածն կնոջն եւ մանկանցն։ Տեսանէր զՅովհաննէս օդոյ երազատեսականական. տեսանէր զՄովսէս 'ի ծաղկեն Հաւատապարհորդեալ. հայեաց եւ ընդ Պետրոս ընդ սրբոյն եկեղեցւոյ, զի եւ նա կին ունէր։ Այլ ասաց է յայտ եթէ կին ունէր։ Այս ասեմ. "Այսմա, ասէ, Յիսուս առ զոքանչն Պետրոսի, եւ էր նա հիւանդ. մերձեցաւ առ նա, եւ փարատեաց ջերմն. յարեաւ եւ սպասաւորէր նոցա"։ Տեսանէր զի եւ Պետրոս կին ունէր։ Մի բաժանեցուցեր ինչ արգելոք զամուսնութիւն։

Ուստի ասեմ զի մի որք պատճառեցին մի զկին, մի կերակուր, մի զգինւորութիւն, մի զխնամակալութիւն, մի զարբեցութ, մի զնաւորդութիւն, մի զփարթամութիւն, մի զաղքատութիւն։ Այլ յորժամ պատճառս են եւ բազումք, այս զանհանգստութիւն բանսարկուին։ Ուստի զինւորութիւն պատճառեն եւ ասեն՝ զինուորեմ եւ ոչ կարեմ երկիւղած լինել։ Հաւատոյ ոչ պարտէին զինուոր էր որ ասէր Յիսուսի եթէ "Ոչ եմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա բանիւ եւ բժշկեսցի մանուկն իմ"։ Այլ պատմեցաւ Յիսուսի ասէր. "Այսքան ասեմ ձեզ, զի եւ ոչ յԻսրայէլի այսքան հաւատ գտի"։ մի խափանեսցէ ինչ զնա զինուորութիւն։

Այլ ձեռնարկութեանն ոչ եղեւ. այսպէս եւ Պաւղոս՝ կաղապարից եկեղեցեաց, եւ զինքն այսպէս եղեւ քաղաք։ Այլ եւ Ակիւղաս կին ունէր եւ որդիս. "Հաւատաց, ասէ, Ակիւղաս յոյժ, եւ համբերեաց նմա յարգարութիւն"։ մի խափանեաց ինչ ընչեղութիւնն կամ կինն կամ որդիքն։ Մի ունիս ինչ պատասխանիս առաջի բազմաւ։ Այս զերեսեան ունէր, կին եւ որդիս եւ փարթամութիւն։ Այլ թերեւս ծառայ իցես. էր եւ Ոնեսիմոս ծառայ։ Որպէս Պաւղոս փրկանեաց, "Ոնեսիմոս, ասէ, զի երբեմն քեզ անպիտան էր, բայց այժմ եւ ինձ եւ քեզ պիտանացոյ"։

Այլ թագաւոր իցես. եւ Դաւիթ. յորժամ մեղաւն, եկեալ առ նա Նաթան մարգարէ եւ յանդիմանեաց զնա յաղագս յանցանացն զոր արար։ Մի բանացաւ կրկին թագաւոր, մի խոստովանութիւն ինչ երեւեցոյց հանգամանս մարգարէին. ոչ 'ի թագաւորութեանն գոռոզութիւն խառնակեցաւ եւ ասէր. "Մեղայ Տեառն"։ Այլ մարգարէին ունկնդրել պատասխանի նորա ասէր.

“Նա ասէր 'ի բաց եբարձ զմեղան քո”: Նորա էր ապաշխարութիւնն, երախտագիտն և թողութիւնն: Ո՛հ աւաղ՝ եթէ թագաւոր եմ, ծիրանիս զգեցեալ եմ և թագ ունիմ, աղեղն և նետս, վահան և զրահս, զինուորս և պաշտօնեայս, և յայսմ ազգատոհմ երկնային որ եմուտ և յանդիմանեաց զիս, և ոչ ասացից զայս: Բայց ոչ ինչ յայսցանէ ասաց. այլ թէպէտ և թագաւոր էր, գիտէր թէ մեղաւ: Ո՛հ խափանեաց ինչ զնա թագաւորութենէն:

Նոյն ամենաչարն կոչես. և Պաւղոսէ, զաւակածուն կարկեաց, զմկրտչեան եհերձ, զՍնէլ կործանեաց և զծերսն զատաւորացն և զՔ ուշման փրկեաց: Նոյն եղջայրասէր ես. և Յովնէփ և նոյն նախանձայէս, որքան խնասատակութեան եղեալ և ողջախոհութիւն առ եղբարացն, որ զպատանէն նորա պատառեաց, բայց զհաւատն ոչ կարաց պատառել. և յաղթեաց չարութեան նորա, և զզանկութիւն նորա ոչ կատարեաց: Նոյն պղծի կոչես. և ախորժեացն, որ ընկալաւ զհրեշտակսն զԼովտայ և կերակրեաց զնա հացիւ և ջրով. զպատանեակս սոդոմացին սովով ոչ խառնեաց: Նոյն պոռնիկ կոչես. և Ռահաբ, որ թագոյց զլրտեսսն, և յետ ամենայն պոռնկութեան Իսրայէլի զերկինսն խառնեաց՝ ապրեցաւ ինքն և տունն իւր: Նոյն ուրացող ես. և Պետրոս և յաղթութեան իւրում որքան իմաստութիւն եղեալ և համբերութիւն. ոչ պծուաբացաւ յորժամ մատնեցաւ: Նոյն մաքսաւոր կոչես. և Մատթէոս. և թէպէտ և մատնեցաւ 'ի կռոյ, այլ ասկայն մեծամեծութիւն ընծայեաց նմա մեծ և էառ մեծ յայտնութեանց: Նոյն մանկապանէր կոչես. և Զակքէ: Տեսանէր որքան ապրեցան: Ասէին զՅատակեան, զամենայն ունէին. և թէ չունէին զՅատակեան, թէպէտ և թագաւոր իցեն, ոչ ինչ քեզ օգնեացէ:

Նոյն Տէր խոստովանի, ոչ մեղաւորացն. “Կոչեցաւ Յիսուս 'ի հարսանիսն”: Նա յերթալն նորա զգինի ոչ ունէին: Ասէ ցնա մայրն իւր. “Գինի ոչ ունին. Ասէ ցնա Յիսուս. երթ 'ի բաց կին դու, չև ևս եկեալ է ժամ իմ”: Նա զայս ասելով հրամայեաց Յիսուս սպասաւորացն լնուլ զաւազանն ջրով, և լցին. և առնել զջուրն գինի: Նմանէր ասաց սրբեալ՝ զինքն զպատարագ ջրով, որ բանիւ զերկինս արար և զերկիր հիմնեացն և զամենայն

որ 'ի նոսա. ոչ կարէր արգելուլ զանձն զատափարտանելու, այլ ասէր՝ լցէք զկաւ։ Մովսէս. ես ասեմ։ Ով է եթէ ուրանայցեն, ձեռք իւրեանց որ լցին զջուրն և ուղին որ բարձին՝ յանդիմանեսցեն զնոսա։

Որ և առ Ղազարու զնոյն արար. զի նախ քան զբղ-ղալ 'ի տեղւոջն, ասէր ցաշակերտսն իւր. "Ղազարոս բարեկամ մեր քնեալ է". Եւ ապա յորժամ եկն քաղաքն Ղազարու և ասէր ցնա "Ղազարոս մեռաւ"։ Հարցանէր ցնոսա "Ո՞ւր եդիք զնա". և ասէին ցնա "Եկ և տես"։ Ո՞վ նոր և հրաշափառապէս խրատն. սուղ ինչ յառաջագոյն ասէին ցաշակերտսն քո եթէ Ղազարոս մեռաւ, և այժմ հարցանես ո՞ւր եդիք զնա. զմահն յառաջագոյն պատմես աշակերտացն, և զտեղին ոչ գիտես։ Գիտէր, այլ յաղագս Հրէիցն ասէր, վասն զի չարաբարոյք էին. որպէս զի ասիցեն ո՞ւր եդիք զնա, ոչ էր ողորմութեան։ Նմանապէս և 'ի գրախտին ասէր ցԱդամ "Ադամ ո՞ւր ես"։ Ոչ գիտէր արդեօք ուր էր. այլ վասն զի առաց նոցա սատանայն՝ թէ "Յորժամ ուտիցէք 'ի փայտէդ յայդմանէ՝ լինիցիք իբրև զԱստուածս", յաղագս այնորիկ ասէր նմ՝ Ադամ ո՞ւր ես։ Նմանապէս և առ Ղազարու արար. մերձեցաւ 'ի գերեզմանն ասէր ցՀրեայսն. "Ո՞ւր եդիք 'ի գերեզմանն". և ասեն։ Եւ ասէ ցնա քոյրն Ղազարու. "Տէր, հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է"։ Եւ բարբառեաւ մեծաւ ձայնիւ ասէր. "Ղազարէ, արի եկ արտաքս". և ել երիզապատեալն։ Նոյն այս որ փակեալ զերկինս 'ի ներքոյ ծովու, ոչ կարէր արդեօք զգարն 'ի բաց մերձել. և որ զերեսս մահուն խորտակեաց և ընդրուժ դժոխոց փշրեաց, ոչ կարէր և զվիմաքարն խլել։ Այլ ասէր ցնոսա "Լուծէք զդա"։ Մովսէս. զի եթէ ուրանայցեն, ձեռք իւրեանց և ոչ յանդիմանեսցեն զնոսա. յաղագս այնորիկ ասէր՝ լուծէք զդա։ Եւ 'ի Հարստանիոն զնոյն արար. վասն այնորիկ ամենայն ուրեք նմ զգուշացուցանէր զնոսա։ Նմանապէս մեզ չարաբարոյք լինելոյ Հրէայքն և անօրէնք։

Նմանիք ուսանել որքան բարիս ընծայեաց նոցա, և ապախտ եղեն։ Լուարուք, այլ և տասանց ձանձրանալի զձեզ առաք ինձ. վասն զի անարժան ցուցանել ձեզ եթէ մեզ դժուարաբարոյք էին Հրէայքն։ Յոթանասուն-

Digitized by Google

տան և հինգ անձինք իջին յԵգիպտոս, և եղեն վեց-
հարիւր հազար: Մոռացաւ Յովսէփ, և եկաց այլ
թագաւոր որ ոչ յիշէր զՅովսէփ. նեղեաց զորդիսն
Իսրայէլի, և գոչեցին առ Աստուած ամենայն. "Տէր,
դու երդուար հարցն մերոց եթէ տաց զաւակի ձե-
րում զերկիրն որ բղխէ զկաթն և զմեղր. և այժմ
յիշեաց զուխտն զոր ուխտեցեր հարցն մերոց, և փրկ-
եա զմեզ 'ի ձեռաց Փարաւոնի արքային Եգիպտոսի
և 'ի ձեռաց եգիպտացւոցն": Լուաւ Աստուած ձայ-
նի նոցա և առաքեաց զՄովսէս փրկել զնոսա: Եւ ասէ
ա͞ծ ցՄովսէս. "Առ զատն անարատ տարեւոր անդրա-
նիկ և զէն, և արեանն նորա օծցէ խուրձանծիւք որ
զդուրսն. և յորժամ եկեսցէ հրեշտակն որ ոչնչեսցի ըզ-
տուրն մերկացեալ, և տեսցէ թէ արեամբ է օծեալ, 'ի
տանէն յայնմանէ 'ի բաց կացցէ: Իսկ եթէ տեսցէ և
ոչ իցէ արեամբ օծեալ, սատակեսցէ զամենայն անդրա-
նիկս նորա: Ասէ այնպէս արար Մովսէս, և բաշխեաց
ժողովրդեանն, առեալ խուրձանծիւք ուրաք էած ըզ-
դուրս տան իւրոյ": Եւ եկեալ հրեշտակն տեսանէր
զարիւնն 'ի դուրսն և 'ի բաց գնայր. և ուր ոչն տեսա-
նէր, մտեալ զամենայն անդրանիկսն սատակէր:

Նոյնպէս ոչ ընդ վայր և առասպելաբանութեանց լինէին, այլ
վասն զի հանդերձեալ էաք արեամբն ապրել և փրկանս,
յաղագս այնորիկ ասէր ա͞ծ՝ եթէ օծջիք խուրձանծիւք
որ արեամբ զդրունս. Վասնզի ընդէ՞ր ոչ ասաց՝ օծցես
արեամբ զորմն. զի ոչ հանդերձեալ էաք ապրել քա-
րիւ, այլ փայտիւ: Եհան զնոսա Մովսէս յԵգիպտոսէ
և ած յանապատն, և ասէին ցՄովսէս. "Արդ թէ
ոչ գոյին գերեզմանք յԵգիպտոս, ածեր զմեզ յանա-
պատիս սատակել. ոչ բարւոք էր յԵգիպտոս մեզ յոր-
ժամ ուտէաք զմիսն, զմեղրապտուղն, զսոխն և զխըր-
տորն": Տեսէ՞ք զապերախտութիւն Հրէիցն. խնդրեանք
ամենայն գ͞ն͞ծ, խնդրեանք նախ աղաչէին՝ թէ հան զմեզ
յերկրէն Եգիպտացւոց, և եկեալ յանապատն անշնոր-
հակալք լինէին: Տեսէ՞ք զպարապարտութիւնն. ուսիր
զեւս մեծագոյն:

Քառասուն ամ պարէին յանապատին. հերք իւրեանց
ոչ անձեցին և ոչ եղնգունք, հանդերձ նոցա ոչ աղտե-
ղացան, կօշիկք նոցա ոչ մաշեցան, ոչ աշխատեցան, ոչ

քրեցին, ոչ հատանին փուշս, ոչ հնձեցին, ոչ յուսացան ՚ի ժամանակի հնձոց, ոչ ժողովեցին ամբարս եւփակեցին եւ արտաքին հաց, այլ հաց անձեռագործ ՚ի յերկնուստ էջին. Խնքեանք սերման տաճարի եղեալ լինէին նոցա: Այս անհաւանք՝ օրինակ իմն հրեշտակաց նմանեցին: Այս յետ այնքան բարեգործութեանց առեալ զՍահակ. «Տէր մեզ տատանաձոր եթէ այցեն տաճարի մեր. բանզի Աստուծոյ որ եհան զմեզ Եգիպտոսէ՝ ոչ գիտեմք զինչ եղեւ նմա»: Այս արարին մեծ բանսութիւն Սահակի. Տեսեալ նորա թէ խոստովանութք են եւ անմիտ լինին, ասէ ցնոսա. կորզապատեցէք զականջս ձեր եւ ընկեցէք ՚ի հուր, եւ որ ինչ եղանէ անուն՝ այն է աստուածն ձեր. եւ եղ արձանացոյց:

Սրբանոր ած ՚ի մէջ[1] զհերձուածողան զպարբարարցան ժողովականցս Հրեայն, որ ասէին՝ եթէ ծնաւ ած, եւ հաւանին հանձնարարեալ աստուածոցն: Խոշուոստական եւ հէգ, պայթանին զինչ ասնաս ասել: Նոյն մեք ոչ պատասխան, այլ ծնաւ հայր որդի, մարմին զմարմինն, ած զած, կատարեալ զկատարեալն. վասն զի պարզեն եւ խորհուրդք քրիստոնէից: Այլ զի վարկանի զմեռելն քննեն՝ որք զմեզ անզգամանաց, եթէ կարծեն զիանել առա ինձ, զիարդ անկեալ ոտին ՚ի բաւլոն, որպէս եւ արձանացուցին: Անկեզարծ ոչ արար, ձուլիչ ոչ որ էր, զիարդ եղ արձանացոյց. հանարձակին ասել. եթէ հանարձակին՝ ասա: Այս արդ պատարեաց ոչ գիտեն՝ զիարդ զմեռելոց հարցափորձեն:

Այս անեալ ցուցանեն մեզ զաւետարանական բռնակին փոքրին Յեսուսի ասելով յաշակերտսն՝ եթէ «Այս եմ որթ եւ դուք ուռք եւ հայր իմ մշակ»: Տեսանելով, ասէ, զի զործեաց զորդին. զի եթէ ոչ զործեալ մշակ զորթ, ոչ կարէ պտուղ տալ լինել: Այս կործեն մեծ իմն եւ սաստիկ ասել: Այլ անարգեք զինձ. առակ զի առ ազգերական Հրէայն, թողուցեք զինձ առակ եւ առ անանձն հերձուածողն:

Կարծես զինձ ասել, չարաչարաց եւ լուր հերձուածող, եթէ մշակ ոչ կերակրի յորթոյ. զինուզ բայ ձեռնարկեալ առ քեզ: Արդ առնուք ՚ի յումեն կերակուր, որթ

1 Պահպանութ յօրինակին ած Ն.Ալ.

յերկրպագածսն, եթէ երկրպագած յորթոյն : Ասա քեզ Հայր յորդւոյն կերպարանի : Արդ զինչ, որդի՞ կերպարանեալ զՀայր : Ոչ, մի լիցի : Լաւագոյն է ասել՝ թէ որպէս երկրպագած զուարձանաց յորթ, նոյնպէս և Հայր բերկրի յորդի : Ո՞չ լուար նմա որ ասէրն "Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք ,, : Ո՞չ եթէ զա է որդի իմ զոր ստացայ կամ զոր արարի . այլ ասէ՝ ընդ որ հաւանեցայ : Ո՞չ և զձայն առաքելոյ ասենիցես . . . : Ո՞չ եթէ անոցին ինչ պատասխանես :

Իսկ ՚ի վերայ ածէն մեւս ևս միութիւն յառաջելոյ յոր ասէն . "Մի է ած Հայր՝ յորմէ ամենեքեան, և մի տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենեքեան ,, : Իսկա . այլ ած իբրև զՀայր ոչ որ է . և ես ասեմ քեզ . այլ տէր իբրև զորդի ոչ որ է : Արդ զինչ, հակառակ իցեմք . ոչ, մի լիցի : Տեսցուք ընդ ում խօսէր Պօղոս, և յաղագս որոյ զայս ասաց : Ասեն զի հեթանոսք զբազմաստուածութիւն պաշտէին և Հրեայք զմի իշխանութիւն, զի և զբազմաստուածութիւնն քակեսցէ և զմի իշխանութիւնն, յաղագս այնորիկ ասէր . "Եթէ իցեն աստուածք բազումք և տէրանք, եթէ յերկինս և եթէ յերկրի, այլ մեզ մի է ած Հայր ,, : Իբրև ասէ մի, ՚ի բաց եբարձ զբազմաստուածութիւնն . քանզի ասէ մի, ոչ ևս յաւելք : Արդ ասելովն Հայր, ՚ի բաց եբարձ զմի իշխանութիւնն . զի ասէ Հայր, յայտ է թէ և որդի : Վասն այնորիկ ասաց . "Մի ած և Հայր՝ յորմէ ամենայն, և մի տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն ,, : Տեսանես զի առ հեթանոսս և Հրեայս ասէր . վասն այնորիկ և ասաց . "Մի տէր Յիսուս Քրիստոս ,, : Որ ՚ի ձեռն որդւոյ եղեն արարածքն և անարարածքն, ըստ Յովհաննու որ ասէն . "Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ ած . ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ ,, : Տեսանես զի նա է ամենեցուն արարիչ : Ո՞ր[1] յանդգնիս ինչ խնձ ցուցանել եթէ որդի ընդ ամենեսեան համարեալ լինի : Ո՞րինչ ցերեկ, չարաբարոյք, այլ յանձինք ընդ գերա ծառայական լինելով, զի արեք զորդի արարածս ստացուած և արարած : . . . Հայր որդի կոչէ, և ասացելոցն նմանապէս . և զայս ստացուած

[1] Յօրին Եկեղեց., գրոցն :

և արարած ։ Ծնանելն և սնանելն զնոյն առնէք ․ Եթէ ամենայն որ սնանի՝ ծնանի, զատանեմք զամենայն արարեալս թառուռնս ից․ վասն զի զամենայն որդւով լեալ սուն, այլ ուրեմն սնուցանէ զնոսա և ծնանէ ։ Տեառնեանս զի Թառուռնք հանդիպեալն ից, որպէս դու ասեսդ ։ Մինչև յերբ չարաքարոյք ։ Ասացէք ինձ, ըստ որում օրինակի պատուի որդի․ վասն զի որդին ասին և դու ։ Այլ Թերևս ունիցիս ասել, նա իրաւ և դու անուանիս ․ և եթէ իրք, ուրեմն որդի է ։ Տեառնեանս զի բերան քո յանգիտանէ զքեզ ․ Մինչ եթէ սնուցեալ ինչ է, մի արարած ինչ ։ Այս ևերրս որդի է, և դու անուանիս․ նա յիւրմէ հայրէն ծնեալ, և դու ՚ի որդեգրութեան արարեալ ։ Այսքանիկ ինչ առ Հրեայս և հեթանոսս և հերձուածողս ասացան ։ Այլ մեք փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

## ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Հանապազ զմեզ մարդասիրութիւնն պարտաւորէ բարբառել, եղբարք․ քանզի նախա կեանք և շարժմունք և եմք․ մանաւանդ յայսմ ժամանակի պարտաւորէ զայս առնել յաղագս մերոյ օգտի և վասն հանդերձելոցն յաւիտենական ծագելոյ առաւելագոյն հազարապատութեանց ։ Վասն զի և տեսա ՚ի ձեռն նորա փայլէն, որպէս և մեք նախա փրկիմք և կեամք ։ Արդ ասասցուք վասն նորա զոր ասաց տէրն մեր Յիսուս Քրիստոս մարդասէրն, մարդասիրի հօր որդին, միայն արժանաւորն հայրականն գթութեանցն պատմեսցէ․ բացցուք զամենայն դրունս անառակին, զի ուսցուք ՚ի նմանէ որպէս արժանն է ապաւինել առ ողորմածութիւնն և յանցանաց մերոց խնդրել ըն-թողութիւն ։

«Այր մի, ասէ, ունէր երկուս որդիս»։ Մարդասէր ասէ փրկիչն, և ոչ հրամանատար․ վասն այնորիկ զհօրէն իւրմէ որպէս զմարդոյ ումեքէ պատմէ, և զծառայից իւրոց զորդւոց խօսի, զի ցուցցէ զմեզ առ մարդիկ զանձին ։ «Այր մի, ասէ, ունէր երկուս որդիս»։ Ո՞վ է այրս այս․ հայրն գթութեանց և Աստուած ամենայն մխի-

Digitized by Google

թարմութեանց։ Այր մի ունէր երկուս որդիս. զհայրդարս և մեղաւորս, զմնացեալսն յանձայնն հրամանին և զանցեալսն զօրէնսդրական պատուիրանաւն։ "Եւ ասէ կրսեր որդին ցհայրն"։ Ո՞վ է կրսեր որդին. որ անհաստատ ունի զկամսն և հողմով մանկութեանն վարի։ Հայր առեալ ծանեաւ զբնութեանն սանձելիչ, թէպէտ և ոչ պատուեցին կամք նորա զարարողն։ "Հայր, տուր ինձ բաժին որ անկանի 'ի ստացուածոցդ"։ Նաքա ոչ խնդրեաց զարժանն առ 'ի յնմ, այլ չարաչար զոր առն վատնեաց։ "Եւ հայրն բաժանեաց նոցա զկեանսն"։ Ետ նոցա որպէս տուն զամենայն աշխարհս, որպէս ստացիչ[1] զամենայն արարածս. ետ նոցա և մարմին, և հոգի բանաւոր, որպէս զի բանիւն առաջնորդեսցէ՝ անբան մի ինչ գործեսցեն. ետ նոցա և օրէնս բնութեան և գրելի որպէս ձայնիւն դաստիարակ, զի առօք դաստիարակելով կատարեսցեն զօրինադրողին զխորհուրդն։

"Եւ յետ ոչ բազում ինչ աւուրց ժողովեալ զամենայն կրսեր որդւոյն", որպէս մանուկ գործեաց, "գնաց յաշխարհ հեռաւոր"։ Մեկնեցաւ յնմ, և 'ի բաց եկաց 'ի նմանէ մտօք. զի ոչ զոք բռնադատէ ակամայ ծառայել իւր. վասն զի 'ի կամաց է աստուածութիւն և ոչ 'ի հարկէ։ "Եւ անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ". անդ զմեծութիւն զանձնոյն ունայնացոյց, անդ զուարճանալիսն նուաղեցաւ, անդ խաղալիսն և այլսն լինելիսն աղքատացաւ, անդ զառաքինութիւնն զոր ունէր՝ մերկացաւ, և զչարիսն զոր ոչ ունէր՝ զգեցաւ։

"Եւ ծախեալ նորա զամենայն", քանզի ոչ ախորժեաց ընդ զաղքատիս կենցաղն բնակել մեծութիւն շնորհին, "և եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ"։ Ի ուր ողջախոհութեան ցորեանն ոչ ժողովի, անդ սով սաստիկ. ուր ժուժկալութեան որթն ոչ անկի, անդ սով սաստկագոյն. ուր կուսութեան գինին ոչ է տնկեալ, անդ սով սաստիկ. ուր երկնային քաղցուն ոչ է բխեալ, անդ սով անբաւ. ուր դիւրաբերութիւն[2] չարեաց, անդ անբերութիւն բարեաց. ուր մարդասիրու-

1 Ոմանք օր. ստացողաց։

2 Ոմանք օր. [illegible]։

թեան իւղն ոչ ազդուրանայ, անդ առն Հզօրագոյն · ուր առատութիւն գործոց չարեաց, անդ պակասութիւն առաքինութեան։

«Եւ նա սկսաւ պակասել»· քանզի ոչ ինչ մնայր նմա, բայց միայն խառնակութեանն չարիք։ «Եւ գնացեալ յարեցաւ ՚ի մի ոմն ՚ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ»· եւ քաղաքացիք աշխարհին այնորիկ դեւք են։ «Եւ յղեաց զնա քաղաքացին այն յագարակ իւր արածել զխոզս»· քանզի այսպէս պատուեն դեւք զպաշտօնեայս իւրեանց, այսպէս սիրեն զսիրելիս իւրեանց, այսպիսի պարգեւս շնորհեն հնազանդելոց իւրեանց։ «Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին»։ Ոչ ինչ առողջեաք իցէ եղջիւրն այն · եղջերն այն ճաշակումն քաղցր է եւ խառնագոյն, այսպէս եւ մեղացն բնութիւն · ուրախացուցանէ սակաւ ինչ, եւ ապաջէ մեծամեծս դառնացուցանէ յաժամանակեայս, եւ ապաջէ յաւիտեանս։

Արդ յինքն դարձեալ եւ յիշեալ զառաջին երանութիւնն եւ զերկնաւոր հեշտութիւնն, եւ առեալ ՚ի միտ թէ որպիսի էր մինչդեռ ընդ Քի էր պաշտպանեալ, կամ որպիսի ինչ եղեւ մինչ հնազանդեցաւ դիւաց, եւ եկեալ ՚ի միտս իւր ասէ · «Քանի՞ վարձկանք իցեն ՚ի տան հօր իմոյ առատացեալք հացիւ, եւ ես աստ սովամահ կորնչիմ»։ Որքան երանելիք վայելեն մեծային զրօսիւք, եւ ես ահա մեռեալ յանծային պատուիրանացն վտանգիմ · ո՛հ յորչափ բարեաց զանձն զրկեցի, ո՛հ որչափ չարեաց զիս կապեցի · զի կացի ՚ի բաց յերանելի բարեկենդանութենէն յայնմանէ, վասն էր ընկղմեցայ յայսպիսի մահաբեր կենդանութիւն։ Աւաղ ՚ի պատահելեացս ինձ չթողուլ զՔն · աւաղ մերժ ունել զպահապանողն զօրաձողացն առ նա · աւաղ չհաւատալ պահոց դիւացն վաղորդայնոյ ամենագօրշելոց ապականութեան։

«Յարուցեալ երթայց առ հայրն իմ»· դարձայց ապաւինութեամբ ուստի ելի չարաչար · երթայց առ արարողն իմ եւ տէր, առ այցելուն եւ նախախնամողն առ նա դարձողացն։ «Յարուցեալ գնացից առ հայրն իմ եւ ասացից ցնա · Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո, եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո · արա զիս իբրեւ զմի ՚ի վարձկանաց քոց»։ Նմանական է ինձ այս ՚ի փրկութիւն ա-

նման Հօր իմոյ. զի ոչ կարէ Հայր իմ անտեսանել յինէն Հայր՝ և չերևել արդեանցս Հայր. ոչ կարէ չշարժել զաղխս բարեգթութեան իւրոյ, քանզի գթած է. ոչ կարէ զմեղաւորն ընկենուլ չատ ներմամբ իւրոյ գլարմանս. ոչ կարէ իւրոյ ձայնին լսելով՝ չմնալ անզգայ գթութեան ցասուցմամբ Գիտեմ որչափ կարէ առ նա աղաչաւորութիւնն. գիտեմ որչափ Հզօր են արտասուքն. գիտեմ ձայնէս ամենայն մեղաւոր առ նա Հայելով և արտասուելով ջերմեռանդն՝ առնու զմեղացն թողութիւն. գիտեմ զգոյն իւրոյ զաստուածորդութիւնն, գիտեմ և զՀօրն իւրոյ զգութն. աղաղակեցի ինձ աղաչաւորողիս, որ ոչ տանջեսցես զիս ըստ մեղաց իմոց:

«Սա յարուցեալ եկն առ Հայրն»: Յաւել 'ի բարւոք խորհուրդն և զգործն. քանզի տարա է մեղ ոչ միայն խորհել զՀամբոյրն միայն, այլ և գործովք կատարել: Սա զեա ևս Հեռի գոլով անդեւաւն՝ բայց մերձ կալով յօժարութեամբն, և ձեռօքն[1] կածելով զխուրձն և Հայրկանելով զկանգնն որպէս զշար խորհրդոց գործոց, և զերեսն ընդ երկիր քարշելով, և զաչսն արտասուելով առաւ բարեխօսակից զարտասուաց բխումն, և յառաջ խորհելով զյանցանացն զապաշխարանութիւն... եկեա զնա որ անկանէր զմեղս նորա և անեալ առնէր, և անտարր նորա աղաչխարութեամն:

«Տեսեալ զնա Հայրն և գթացաւ». քանզի Հայր է քաղցրութեամբ, թէպէտ և բնութեամբ Ած: «Սա ընթացեալ անկաւ զպարանոցաւ նորա և Համբուրեաց զնա»: Ոչ ծնող մեղուցելոյն մերձ գալ, այլ ինքն նմա Համդիպեցաւ. ոչ գարշեցաւ 'ի պարանոցէն որ աղտեղեալն էր անառակութեամբ, այլ սուրբ ձեռօք զիրեն արկեալ անդադարար Համբուրէր զերեսն սիրեցելոյ: Ով չնորհքի Համառօտակի, ով Հրաշալիք զօրաց, ով սքանչելի Հաշտութեան...: Մեղաւորն յերկրի արտասուեաց, և միայն անմեղն 'ի գութ զինքն խոնարհեցոյց: Ով եկեալ երբեք զԱծ զմեղաւորս տղերելով. ով եկեալ դատաւոր զդատապարտեալն արդարացուցանելով: Նոյց սակայն եղև այս և կինի, վասն զի այսպէս խորհի բարեհաշտողն[2] Ած:

1 Օրինակ մի ձեռամբ 'ի վերայ լանջաց կածելով. այլ օր. ձեռամբ խոնարհ բուռ 'ի վերայ լանջացն ընկնելով:

2 Օրինակ մի բարեպաղատողն. երկու օր. բարեխնամողն:

Digitized by Google

Սակայն ոչ շատացան այսպիսիք անուանիք, այլ ան-
յագ էր առաջնորդութեամբ բարութեանց. և ոչ կար-
ծեաց զայնչափ մարդասիրութիւնն շատ գոլ նմա առ 'ի
կատարելոյ փրկութիւն, այլ զոր յառաջ քան զհաւա-
նելն 'ի սկզբան մտածութեանց առեալ ցՀայրն՝ զայն և յետ
գալոյն ծանուցանէր Հօրն ասելով. Հայր, եթէ արժան
է ինձ Հայր զքեզ անուանել, թէ և յայնմ ընդ այլ
կոչելով զքեզ Հայր չմեղայ, եթէ թշնամանեալ կոչ-
մանէի զանթշնամանելի անունդ, եթէ չյիշու զշքեղութեան
իմ խղճմտանաց, եթէ չկամեցայ զերդս իմ եղբարակս,
եթէ չարդարեցի զգանձս վարուց իմ, ընկալ Հայր զաղա-
չանս յաղօթեցելոյ բերանոյս. Հայր լուր շնորհաց և ո-
րորկէ բնութեանդ: Մեղայ, խոստովանիմ զյանցանս
իմ, ոչ ծածկեմ զոր անցանէաց, ոչ ուրանամ զոր գի-
տեմ. որպէս պարտական մերձ կամ, որպէս զանառակն
դատապարտեալ: "Մեղայ յերկինս և առաջի քո":
երկնչիմ զաչս իմ յերկինս ամբառնալ, քանզի զանձի-
նեմ 'ի Հաստատութենէ կերպարանացն որպէս 'ի ծոյ-
նէ դատապարտելի. զարհուրիմ Հայեալ 'ի լոյս ամօթեդ,
ապստամբ անելով զօգեալ և զմարմնոյս զազս. "Մեղայ
յերկինս և առաջի քո, և ոչ եմ արժանի որդի քո կո-
չել": անձամբ զանձն առնեմ հրապարակաբարբառ, զիս
ինքն դատապարտեմ, ինքեան ինքեանց զդատաւոր հանեալ
'ի վերայ անձին: Զորութեանն զատաւորը առ 'ի
վճիռ վասն իմ Հանելոյ. ոչ պիտանեամ դատաւորակիցք
յանցանականց. չեմ իմ պէտք վկայից առ 'ի մերժման
ներքագիրս; 'ի ներքս ունելով զխիղճ մտաց, զդատաւո-
րն յառաջ ինձ կոչեմ և զպահանջ դատաստանն.
'ի խղճէ մտաց յառաջ բերեմ զվկայսն, առ որ ինձ
ածեալ ունիմ զդատախազս. ամբաստանեք զինեն ամբաստա-
նեն, ձիարշաւանքն վասն իմ դատախազեն, Հայե-
ցարանք զազանականացն ասպարէզեն վասն իմ, անա-
ռակութիւնս մասնաւորաց առնէ զիս. գործք արձանա-
գիրս լինին զինեն, ապաշխարել մերկութիւնս յանդիմա-
նէ զիս, կատարեալք ամօթոյս զոր զգեցեալ եմ պատ-
կառեցուցանեն զիս: "Այլ ոչ և ես եմ արժանի կոչել որդի
քո. արա զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց": Այլ մի
'ի գալ եթէ քումդ արտաքսեր զիս անտի, զի մի զրկեալ
պատերազմողին զտեալ զիս. 'ի մոլորութիւն իբրև զօ-

տար սանիցի, և մի՛ ձգեր զիս առ խորհրդականս և յա-հաղին քո սեղանոյ. քանզի ոչ համարձակիմ ներսա-ականն[1] աչօք հայել 'ի սրբութեանց սրբութիւնդ։ Ահա զիս կալ ընդ երախայսն ընդ դրրայ սպասուց ե-կեղեցւոյ, զի տեսանելով զկատարեալսն 'ի նմա 'ի գութ եկից առ սակաւ սակաւ. զայս դարձեալ յանձն առնուլ՝ որ նմայինն Չքունքն ցօղելով 'ի բաց լուացայց զզարշելի երգոցն զաղանն որ 'ի ներքոյ կայր իմ լսելեացս, զի տեսանելով զմեղրդաբխոս մերացեալս[2] 'ի բարեպաշ-տիցն՝ յանկացայց արժանաւոր ձեռս ունելով սոցա ըն-դունելութեան։

Ծայտուիկ մեղաւորին համերձ արտասուօք գոչե-լով, "Ասաց հայրն ցծառայսն իւր,,։ Ո՞ր որ ծառայս. առ քահանայս, առ սպասաւորս սրբութեան սեղանոյն. "Հանէք զպատմուճանն առաջին, և զգեցուցէք զնա,,. Հանէք զպատմուճանն որ 'ի վերուստ անկեալ, որ հա-գեալ հրովն մաքրեալ է. հանէք զպատմուճանն որ 'ի Ջուրց աւազանին է անկեալ, և զգեցուցէք զնա որ զինքն մերկացոյց. զգեցուցէք զդա զոր մերկացոյց սատանայ. զգեցուցէք զարքայդ աշխարհի. զարդարեցէք զդա վասն որոյ զաշխարհս զարդարեցի. պաճուճեցէք զփրկեցեալ որդւոյ իմոյ զանդամսն. չհանդուրժեմ անպաճոյճ զդա տեսանել. ոչ կարեմ զիմ պատկերդ մերկ թողուլ. ինձ նախատինս համարիմ զնախատինս որդւոյ իմոյ, ինձ փառս համարիմ զբարեփառութիւն դորա։ "Տուք, ասէ, զմատանին 'ի ձեռս դորա,,, զի զգեցցի զառհա-ւատչեայ հոգւոյն շնորհս, զի ունելով զիմ կնիքն՝ ահա-գին լիցի ամենայն պատերազմողաց, զի 'ի հեռաստանէ երևեսցի թէ որոյ հօր որդի է։ "Տուք, ասէ, և կօշիկս յոտս դորա,,. զի մի դարձեալ գացէ օձն մերկ զգար-շապարս դորա. որպէս զի կոխեսցէ զգլուխ վիշապին, զի փշրեսցէ զխայթոց սատանայի և գնասցէ ընդ երա-նելի ճանապարհն։

"Ածէք զեզն պարարակ, զենէք,,. ածէք զպա-րարեալ զուարակն զոր երինջն կոյսն Մարիամ ծնաւ. ածէք զպարարեալ զուարակն զանմեղն, որ ոչ ընկա-

1 Երկու օր. խոնարհեալ. մի օր. խոնարհեցիլ. յայնն անուղղ։ Թուեցաւ զգրութիւն մեզ օրինա-կի ներգոյեալ, ուր յայլս հատուած

2 Այլուրեք փոխել պատշաճ պակասեալ. յայնն յաւելուածոց։



Digitized by Google

լաւ զլուծ մեղացն, զկապան և 'ի կուռն, որ զՏէր երթայ ձգողացն, որ ոչն վարի զօրութեամբ և ոչ եղջերացն, այլ պատրաստաբար խոնարհեցուցանէ զպարանոցն կամողացն առ 'ի զենուլ: Զենէք զկամաւոր սպանդն. զենէք զկենդանարարն զենողացն զնա. զենէք որ յետ զենլոյն ոչ մեռանի. զենէք որ յանդամսն[1] և ոչ բաժանի. զենէք զուտեալն ճաշակողաց իւրոց և ոչ երբէք սպառեալն. զենէք որ զկերողսն երանելիս գործէ:

Նա կերեալ ուրախացուք, «զի որդիս իմ այս մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ. և սկսան ուրախ լինել»: Ամենեքեան գիտէք զհոգևոր ուրախութիւնն որ ճաշակեալ էք 'ի նմանէ, և զպաշտօնեայս անծայրին քահանայագործութեանն՝ նմանեալ հրեշտակաց թևոցն՝ նուրբք կտաւոյն 'ի վերայ ահեակ ուսոյն ունելով, ընթանալով յեկեղեցին և գոչելով: Մի ոք յերեխայից, մի ոք յանհաւատից լսեսցէ, մի ոք 'ի չկարողաց տեսանել զզենումն զուարակին, մի ոք յանկարողաց տեսանել զերկնային արիւնն որ հեղու 'ի թողութիւն մեղաց, մի ոք անարժան կենդանւոյ զենմանն, մի ոք ախմար և պիղծ շրթամբք հուպ լինել սքանչելեացն. և հրեշտակացն յերկնուստ գոչելով, սուրբ հայր, կամեցող զենման պատարագի զուարակիս. սուրբ որդի միանգամայն և զուարակ, որ հանապազ զենու կամաւորապէս և ոչ մեռանի. սուրբ հոգի մխիթարիչ որ զզենումն աւարտագործես:

Նայեսցուք 'ի ներքս կատարելով, երէց որդին յանդաստանէ եկեալ լուաւ զձայն երգոցն և զպարուց, և կոչեցեալ զմի 'ի ծառայիցն հարցանէր՝ զինչ իցէ հնչումն խորհրդական իմն որ հարկանէ զիմ լսելիս: Քանզի մարգարէն Դաւիթ նուագէ ասելով. «Յայնժամ հանցեն 'ի զենարան քո զուարակս». Նոյն դարձեալ յորդորէ զկոչեցեալսն յատեկ, ասէ. «Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր»: Պաւղոս անծայրին խորհրդոցն պաշտօնեայ աղաղակէ և ասէ. «Զատիկ մեր զենաւ Քրիստոս». եկեղեցի տօնէ:

Զգիտելով իմ անգ 'ի ներքս, այլք զիմս առ 'ի յեմոյ չգիտելոյ բաժանեն: Նոյն, ասէ, «զի եղբայր քո

1 Օրինակ մի անդամն:

եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ զի ողջամբ ընկալաւ զնա»։ Եւ նորա բարկացեալ ոչ կամէր մտանել։ Բարկացաւ արդարն, նախանձու եղև ծառայ. որ[1] կորուսաց զկենցաղոյս վայելչութիւն, վերագոյն քան զնախանձն գտաւ։ Եւ զի ասէ Պաւղոս «Կամէի և ես ինքնին նզովս գոլ վասն մարմնաւոր եղբարց իմոց»։ Այսպէս ձևացոյց փրկչին զբանն ոչ նախանձեցուցանելով զարդարն, այլ զի քարոզեսցէ զքաղցրութիւն հօրն, զառաւել մարդասիրութիւնն յայտնի առնելով մերձնովքըն[2]. քանզի ասէ. «Եւ հայրն ելեալ աղաչէր զնա»։ Ով անճառելի խնամութեանն ծայրին, որ մեղաւորին ողորմեցաւ և զարդարն աղաչեաց, զանկեալն յարոյց, և զկանգնեալն ոչ եթող անկանել. զաղքատն մեծատուն եցոյց, և զմեծատունն ոչ եթող աղքատանալ նախանձու։

Եւ նա պատասխանի տուեալ ասէ ցհայր իւր. «Այսքանի ամք են զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի, և ինձ ուլ մի ոչ ետուր երբէք զի ուրախ եղէց ընդ բարեկամսն իմ»։ այլ յարաժամ շրջիմ ընչկամաշկօք և մորթովք այծենեաց պակասելով նեղելով տառապելով։ Իսկ իբրև եկն որդիդ քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ, և ոչ գտեալ բանիւ մի զզուեցեր զնա և ոչ տարագաւ դարձուցեր զերեսս քո 'ի նմանէ, այլ նոյնժամայն անձկացեալ առ դա իբրև 'ի հեռի ուղեգնացութենէ առ քեզ դարձեալ ընկալար զդա, և պատմուճանաւ պաճուճեցեր զդա, և քօղին մատանեաւ փայլեցուցեր զդա, և ոտիւ անդեցեր զոտս դորա, և եկեղեցի բացեր և զսեղանն զարդարեցեր և զբաժակն խառնեցեր և զպարարակեալ զուարակն զեներ և զհաւատացեալսն ժողովեցեր առ 'ի խրախճանս և զհրեշտակս 'ի խնդութիւն շարժեցեր և օտար սքանչելագործութեամբ երկնի և երկրի յընթրիս դղրդեցեր, և այդպիսի պարգևս շնորհեցեր արհամարհողիդ զքեզ և թըշնամանողիդ զքո բարերարհմութիւնդ։ Ոչինչ ասացից

1 Հատուածք ոչ յիշելոց ... գրաթերականար 'ի միում օրինակի, զի յայլս պակասեր բազում, լրացաւ 'ի յաւելէն։

2 Իմա՛ յաջորդ բանիցքն որ ըղձեաց զան։ Ամենայն որ. Վէրճոցն կամ Վէրճոցս։

ու անդրանկոյս քո որդւոյդ, զխանդ զարմանալոյց ընդ ծա-վալդ[1] քո յապաշխարութիւն. այլ ողորմիս տէր ամենե-ցուն, զի յամենայնի կարող ես, և անտես առնես ըզ-մեղս մարդկան ապաշխարութեամբ:

“Բայց հայրն ասէ ցնա. որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է„: Դու յիմ գըր-կացս ոչ մեկնեցար երբէք, դու զիմով եկեղեցեաւս ոչ խոյս տուեր երբէք, դու տաղմոսից և օրհնութեանց պա-րապես միշտ, դու զենարանի խոյն կալով զառաջեաւ՝ հա-մարձակութեամբ գոչես “Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո„: Բայց սա եկն զինքն մանաւանդ զա-տապարտելով, անօթագին զերեսս յերկիր կցելով, և զօրով ձայնիւ և տխուր կերպարանօք գոչեաց. “Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. չեմ արժանի կոչել որ-դի քո, արա զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց„: Ո՜ ինչ ունէի առնել զայսպիսի բանս ասելով նորա. կարէի՞ չա-ղորմել որդւոյ իմոյ առ իս ապաւինելոյ, դու գանես որ սրտմտեալդ ես: Ես ոչ բնաւորեցայ՝ մարդասէր գոլով անմարդասէր[2] ինչ իրս գործել. ոչ կարեմ չողորմել զոր եսն արարի, ոչ կարեմ չգթալ յիմոց աղեացս ծնունդ: “Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամե-նայն ինչ որ իմ է քո է„: Երկինք քո են, հաստա-տութիւն քո է, արեգակն Ջահաւոր քո է, լուսին սպա-սաւորուհի քո է, աստեղք ղամպարաւորք քո են, օդ դայեակ քո, օդայինք քո, երկիր և որ 'ի նմա քո է, ծով և որ 'ի նմա ծնունդք՝ քո է. եկեղեցի, զենարան, զուարակ, զենումն, հրեշտակք, մարգարէք, առա-քեալք, մարտիրոսք, նշխարք, աւազանք, յարութի՛ւն, անմահութիւն, անապականութիւն, արքայութիւն, ա-մենայն երևելիք և իմանալիք քո են: Մ՛ինթէ զքո՞ ա-ռեալ նմա ետու. մինթէ զքե՞զ մերկացուցի և զնա զգե-ցուցի. ո՛չ քո և նորա նոյն եմ հայր. զքեզ պատուեմ վասն առաքինութեանդ, և նմա ողորմիմ վասն դար-ձին. զքեզ վասն վարուցդ սիրեմ, և զքո եղբայրն վասն փոփոխմանն: “Բայց քեզ ուրախանալ պարտ էր, զի եղբայր քո մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գը-

1 Երկու օր. ընդ խոնարհեցման գլխոյ. Բեկանդ:

2 Երկու օր. անմարդի:

տաւ ,,: Երանի՜ որ տեսանէ զմեռեալ յարուցեալ և ոչ ուրախանայ. որ զկորուսեալ գտանէ և ոչ խնդայ: Արդ և դու որդեակ, ուրախացիր ընդ մեզ և խայտա ընդ հրեշտակս և համբուրեա ընդ իս զեղբայր քո, և սաղմոսեա ընդ Դաւթեայ զհոգևորական նուագն զպատշաճն այսմ ժողովոյ. "Երանի որոց թողան մեղք և ծածկեցան անօրէնութիւնք ,,:

Լուայք զառակս, ծանեայք զնկատումն տրա և զզօրութիւն, ուսայք թէ որպիսի մարդասէր ած ունիմք: Արդարեւ առ նա ապաւինեսցուք ասելով. Տէր Յիսուս Քս միածին որդի այ, մեղաք յերկինս և առաջի քո, չեմք արժանի կոչել որդի քո. այլ վստահանալով 'ի քո գթութիւնդ, ունիմք պատսպարանդ զքո մարդասիրութիւնդ. ընկալ զմեզ որպէս զերբեմն զպոռնիկն, որպէս զաւազակն, 'ի ձեռն նոցա յորդորել զմեզ զամենեսեան զմեղաւորքս ընթանալ առ քո բարերարութիւնդ: Որպէս զնոսա կատարեալ երանելիս ցուցեր, և 'ի մեզ առաջի քո անկեալքս զթա. որպէս յարուցեր զմեռեալս խաչիւդ քո, այսպէս և զմեզ մեղօք մեռեալս յարո մարդասիրութեամբ քո, զի և մեք վայելեսցուք ընդ նոսա: Այլ զայս յանելոյ մի զադարեսցուք, զի և նա ասասցէ առ մեզ, "Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ ,,: Այլ դուք որ համբերեալ էք մկրտութեան պարգևօք վայելել, զամենայն մարդկային խորհուրդս 'ի բաց ընկեցեալ, և զհոգիս ձեր ուղղեցէք առ երկնային փեսայն. "Տէր մերձ է, մի ինչ հոգայք ,,. 'ի դուռս եկեալ է փրկողն, բժիշկն հաւատացողիդ հասեալ է, բժշկարանն բացեալ է, դեղք առաջի եդեալ կան, աւազանն զամենեսեան ընդունի, շնորհն սփռեալ է, հոգևորական պատմուճանն 'ի հօրէ և յորդւոյ և 'ի հոգւոյն սրբոյ հաւատեաւ տաւ մեզ.... Որ է նորա են փառք և պատիւ յաւիտեանս. ամէն:

Digitized by Google

## Ի ՔԱՆԱՆԱՑԻՆ ԵՒ Ի ՓԱՐԱԻՈՆ. ԵՒ ԹԷ «ՈՉ ՈՐ ԿԱՄԻՆ ԵՒ ՈՉ ՈՐ ԸՆԹԱՆԱՅՆ, ԱՅԼ ՈՐ ՈՂՈՐՄԻՆ»:

Թէպէտ և պղտորեաց զմիտս երեկորի խառնակութիւն, այլ զուարճացոյց ամենեցուն փոյթն. վասն զի ոչ հայէր յամբոխեցն անհարթութիւն, այլ 'ի լաւագոյն յօժարութիւն: Նա էր տեսանել զամբոխն զանհիկ անդ և ռամիկ, բայց զյօժարութիւնն մտացն և առաքինին, և ասել եթէ “Ձեռքդ ձեռք Եսաւայ և ձայնդ ձայն Յակոբայ”: Ռամիկ էր ամբոխն, այլ մտացն նախանձն. և ոչ ինչ պարտ և արժան է դժուարել ընդ աղաղակ փութացելոցն, այլ հայել 'ի նախանձ լաւագոյն: Ո՛ր և քանանացին աղաղակէր առ փրկիչն, բայց ոչ հայէր 'ի նոցա ամբոխ աղաղակին, այլ 'ի փութացեալ միտսն: Բարբառէր, որպէս արդ ես լուայք, զհետ երթալով տէրունական հետոցն. “Որդի Դաւթի, ողորմեաց ինձ”: Ո՛վ հեթանոսաց հաւատոյն, ո՛վ հրէից չարաբարութեանն: Քանանացին որ յազգէ իսրայէլացւոցն 'ի բաց որոշեալ, որ ոչ ընդ օրինօքն էր մնեալ և ոչ մարգարէիցն կենակից՝ քարոզէ զճշմարտութիւնն ասելով՝ Որդի Դաւթի, ողորմեաց ինձ. և որ ընդ օրինօքն էին մնեալք և մարգարէիցն լսողք՝ զճշմարտութիւնն ուրանալով զտրութիւնն հաշակեցուցանէին ասելով՝ ոչ գիտեմք զդա, սամարացի է և դև ունի: Ո՛վ հաւատոյն հեթանոսաց, ո՛վ հրէից չարաբարութեանն:

Տես զմեծ և զանէրն ամենեցուն զիւրդ պատուէ զազգն. “Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց”: Նոյն շունս զհեթանոսս և որդիս զիսրայէլացիսն: Ընդրէն 'ի հակառակն դարձաւ 'ի ժողովրդեանն պատուին. պատուեալքն անպատուեն, իսկ անպատուեալքըն երկիր պագանեն. որդիքն կոչեցեալք զբարեգործութիւնն ոչ ընդունին, և քանանացին շուն անուանեալ՝ 'ի բարեգործութենէն 'ի բաց ոչ կայ: Վասն այնորիկ և փրկիչն շուն կոչեաց զկինն, ոչ զի թշնամանիցէ, այլ զի զգութն մերկացուսցէ, և ցուցցէ զհեթանոսս զի թշնամանեալք ոչ հեռանան 'ի բարեգործու-

Digitized by Google

թենէն, իսկ Իսրայէլ բարեգործեալ ուրացաւ զփրկիչն։ "Որդի Դաւթի, ողորմեա ինձ"։ Այլ որ ամենեցուն լսէր՝ լռէր, ոչ 'ի բաց առաքելով զպաղատանսն, այլ պայծառագոյն ցուցանէր զհաւատն։ Քանանացի էր ազգն, այլ աբրահամեան հաւատն։ "Որդի Դաւթի, ողորմեա ինձ"։ Այլ որ նախ քան զաղաղակ բերանոյ՝ լսէ աղաչանաց հոգւոց, լռէր և անսայր։

Թուեցաւ առաքելոցն որպէս թէ խիստ ոք իցէ 'ի բաց մերժելով զայնքան պաղատանս։ Այլ ասէին ցնա աշակերտքն. "Արձակեա զդա, զի աղաղակէ զհետ մեր"։ Դու արդեօք ով Պետրոս և Անդրէաս և Փիլիպպոս, քան զփրկիչդ էք մարդասիրագոյնք. զձեզ խնամարհեցուցին աղաչանքդ, և զդա ոչ թախանձեսցեն։ Այլ դուք ըստ երևելւոյ դատիք, ասէ, բայց ես զմիտս քննեմ. յապաղեմ և յերկարեմ առ նմա զշնորհն, զի մերկացուցից զպայծառ հաւատն։ "Ոչ առաքեցայ, բայց առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի"։ Այլ թող հովիւ իցես իսրայէլացւոցն, և ոչ ամենայն աշխարհի տէր և հովիւ և զարմանիչ և նախախնամող։ Ոչ ասէ՝ ոչ եմ հովիւ այլոցն, այլ ոչ առաքեցայ յայն. ոչ ճշմարտապէս զայն ասէր, այլ պատճառանօք զհաւատն մերկացուցանէր...։ Նոքա պատուեալք երախտամոռ լինին, և սոքա 'ի Քրիստոսէ հալածեալք գոհանան։ Ով արդեօք ընդունէիր զծառայ, եթէ էիր տէր երկուց ծառայից. զոր սիրէիր, որ յետ բարեգործութեանց ապերախտ լինէր, եթէ որ խրատուքն բարեմանէր։

Կերպարան էր եկեղեցւոյ այսմ քանանացւոյն, որ 'ի բաց մերժեալ՝ զտէրն ոչ ուրանայր, այլ երկիր պագանէր նմա ասելով՝ տէր, օգնեա ինձ։ Այլ վասն զի յառաջագոյն ասաց՝ "որդի Դաւթի, ողորմեա ինձ", կարծելով եթէ նուաղագոյն ինչ մատուցանիցէ զպաղատանս պատուոյն վերստին կոչել զառաջինն զձայնն, երկրորդ բարեմտութեամբ զառաջինն ծածկէ. քանզի ոչ ևս կոչէ զնա որդի Դաւթի, այլ տէր՝ ասելով. "Տէր, օգնեա ինձ"։ Այլ ոչ ախտապէս պատասխանի տայր։ Թախանձէին առաքեալքն 'ի ձայնն հայելով, և յապաղէր ա̃ծ զհաւատն տեսանելով, և ասէր ցնա. "Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց"։ Ա՛ն-

Digitized by Google

կամս տայր զխորտակելացն, ոչ այնքան զնոսա պատուելով, որքան յանդիմանէր զչարաբարոյութիւնն։ Օն և որ կոչէն զնոսա այսօր մանկունս, որդի է ասողին «Որդիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին»։

Այլ շուն քանանացի, և թէպէտ զթշնամանան համբերձ շնորհաւն։ Բայց առակյն թուի ինձ և հաստատ, եթէ թշնամանաքն այնորքիւք եդ նմա զբարեմտութեն զկերպարան։ Շուն կոչէ, ցուցանելով զբարեմտութիւն կենդանւոյն. շուն թէպէտ չարչարանս ընդունելով 'ի տէրունական տանէն ոչ կայ 'ի բաց. վարի և հալածի, սակին շուն առ դրունս տեառն իւրոյ, և ոչ հեռանայ 'ի տանէ տեառն։ Շուն յորժամ տեսանէ զտեառնն ըղձնացս՝ լռէ, յորժամ յայլոցն զոք տեսանէ՝ խածնի¹ և հաջէ։ Հրեայք զխորդ տեառնեն հակառակ էայ թէպէտ հայհոյութիւնս և ոչ խածնին։ Տես զքրիստոնեայս, որ լսէ զհայհոյութիւն ինչ 'ի հերձուածողէ և կամ յայլմէ ումեքէ 'ի մոլերյ, վաղվաղակի խածնի և հաջէ, զոչէ ընդդէմ հակառակողաց։ Ոչ համբերէ քրիստոնեայ տեսանել զօտարացն զզէնս. այլ իբրև զշուն 'ի տէրունական դրունս հաջէ։ Նա որք արտաքոյ հաւատոյն են խնաստասէրքն, զշանցն անուն ողջունեցին յաղագս բարեմտութեան կենդանւոյն, և ոչ պատկառեցին յանուանէն, այլ հայեցան 'ի բարեմտութիւն բնութեանն։

Նա զի ընդունի մծ որք խօսին յաղագս բարեպաշտութեանն, և բամբասէ զլռեալսն և զոչ բարբառեալսն յաղագս Աստուածութեանն, ասէ վասն խորտակելացուցն. «Ամենեքեան իբրև շունք համրացեալք որք ոչ կարեն հաջել»։ Շուն կոչի անձն բարեմիտ առ տէրն և որ յաղագս տեառն բարբառի, ոչ իբրև թշնամանեալ։ Շուն յորժամ կատաղի, զայն և եթ ունի նշանակ մոլութեանն, յորժամ հակառակ տեառնն զատամունսն մերացուցանէ. վասն զի ոչ երբէք ողջախոհանալով շանն ընդ տէրն կատաղի։ Ոչ ինչ այլ յանդիմանէ ըղձրեիցն զմոլութիւն, որպէս որ ընդդէմ փրկչին հաջէին. զի զոր պարտ և արժան էր Աստուածել իբրև զտէր, զնա իբրև զօտարոտի 'ի բաց մերժեցին։ Յաղագս որոյ ամբաստան լինի զնոցանէ ասելով. «Շուրջ եղեն զինև

1 Պակասէր յօրինակին խածնի և հաջէ. յաւելաք 'ի յանէն։

շունք բաղդատեն ,, ։ Արդ ո՞վք էին շունք․ քահանայք․ "Մու-ղակք, ասէ, չարեաց պաշտարեցին զնա ,, ։

Արդ ոչ 'ի բաց սպառէ քահանայսն զԹշնամանսն, այլ ընդունի հանդերձ գոհութեամբ ։ "Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց ,, ։ Արդ նա 'ի Թշնամանացն զմարդասիրութիւնն յօրինելով ասէր․ "Այո տէր, քանզի և շունք ուտեն 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց ,, ։ Ով գԹացողդ իբրև յորդի, ողորմեաց ինձ իբրև շան, ընդունիմ զԹշնամանսդ քո տէր․ միայն զի քան զամենայն պատիւ լաւագոյն են ինձ Թշնամանքդ քո և քան զամենայն փառս պերճագոյն ։

Արդ զի փրկիչն 'ի կատարածին ցուցցէ եԹէ ոչ Թշնամանելով կոչեաց շուն, յորժամ զզգօնութիւն նորա մերկացոյց, յայնժամ ասելով․ "Ով կին դու, մեծ են հաւատք քո․ եղիցի քեզ որպէս և կամիս ,, ։ Արդ ոչ գիտեմ զիարդ գովեսցեմ զհաւատսն զոր փրկիչն մեծ կոչեաց․ զինչ կարացից նմա իմանալ լաւագոյն բարեբանութիւն քան զոր 'ի փրկչէն առաւ ։ Թողցուք զձայնն անարատ, ոչ Թշնամանեսցուք զնա մերովքն բարեբանութեամբ, մի արասցուք զմեծն փոքր․ քանզի մարդկայինն բարեբանութիւնք նուազեցուցանեն զնորա․ այլ ձայնն վկայէ իրացն․ "Որոյ գովութիւնն, ասէ Պօղոս, ոչ 'ի մարդկանէ է, այլ յԱյ ,, ։

Բայց ընդէ՞ր իսկ բնաւ զխաւհարքն զփրկիչն կոչելով յօգնականութիւն՝ ասէր․ "Որդի Դաւթի, ողորմեաց ինձ ,, ։ Մի՞թէ Դաւթայ ազգակցութիւնն հանգամանս զիւրոյ իշխանութիւն ինչ ունէր․ ուստի իսկ ամենեքին մարգարէանային և գոչելին ասողին "որդի Դաւթի, ողորմեաց ինձ ,, , և քանանացւոյն 'ի մէջ ածեալ զդուստր 'ի դիւէն աշխատեալ՝ ասել "որդի Դաւթի ,, ։ Եքանդեցաւ 'ի պատմութենէ և Դաւիթ յարմարութեամբ զնուրբ աղին բաղխելով 'ի բաց հալածեր 'ի Սաւուղայ զդևն ։ Արդ զի և Դաւիթ հալածէր զդևս 'ի ձեռն երաժշտական գործոյն, երաժշտականն ոչ մարդկայինն՝ այլ Աստուածայինն և 'ի հոգւոյն որդոյ նուագեալ, յաջողակցութենէն զբարեբանութիւնն առնելով ասէին․ "Որդի Դաւթի, ողորմեաց ինձ ,, ։ Բայց սակայն ոչ է արժան զհետ երթալ այսմ ձայնի, այլ յայն առաջնոր-

ղեալք 'ի վեր երթալ ելանել 'ի պատմութիւն : «Եւ բժշ-կեցաւ մանուկն նորա 'ի ժամէն յայնմանէ ,, : Սքանչա-ծայլին ձայն յառաջ գալով բժշկեաց զմանուկն, և որ-տալքս քան զսահմանեան հանէր զդևսն, հալածէր փրկ-չին ձայնն զընդդիմակաց Թշնամին :

Սոյց այսորքիկ յաւետարանական չնորհն ոչ որքան տալ էր պարտ և արժան, այլ որքան կարացաք տալ՝ խօսեցաք որչափ զօրեցաք : Սաանն զի որքան պարտ էր՝ ոչ եմք բաւական. 'ի խոստմունսն եկեղեցւոյ այսուհե-տև, զի մի օր յօր յապաղելով՝ զցանկացողացն ընթերցողաց Թևեցուցանեմք [1] զփափագումն : Ժամանակ է և ինձ բուան հարկանել զխոստմանէն, և ձեզ տալ զպարտ լրաւորութեան :

Յաղագս Փարաւոնի շարժեալ լինէր խնդիր բանին զիարդ խստացոյց ած զսիրտն Փարաւոնի, և վասն այ-նորիկ որ ասէ . «Ում կամի ողորմի, և ում կամի խըս-տանայ ,, . և ասես ինձ . զի՞ ևս բամբասէ, քանզի կա-մաց նորա ոչ ոք կայ հակառակ : Պարտ և արժան է որք մերձենան յանձայլին միտս և որք լսեն՝ ոչ վաղվաղակի 'ի նոյն ինքն ձգեալ երթալ 'ի մեկնութիւնն, զի մի թուեսցի բանադատել զմտածութիւնն, այլ 'ի վերայ զգաստանան աւետարանական շնորհօք ատանելով, այնպէս յարմարութեանն հաստատուն և առանց խանդակ-թեան ընձեռել ինձ զունկնդրութիւնն : Այլ զի հանճա-րագրոյն տրամաբանից զայս, եղից ակնդրան բանիս զառ հա-մայնցուս Թղթոյն բան :

Կարելով հաւանեցուցոյն երանելին Պաւղոս՝ բաղում և այլ ինչ պատմելիւեաց, բայց առաւելապէս զայն կըս-ուղղեաց որ յաղագս խոստովանութիւն ունէր և բաղում ամ-բոխս : Այլ Թէ զիարդ՝ լուր : Ի Հռովմէ յոգունք ո-մանք եղեն 'ի Հրէից հաւատացեալ 'ի փրկիչն, յո-լովք և 'ի հեթանոսաց հաւատացին . և էր կռիւ և ամ-բոխ 'ի մէջ երկոցունց կողմանցն ոչ յաղագս նախան-ձու բարեպաշտութեանն, այլ նախադասութեանն ա-ղագաւ հակառակէին :

Քանզի կամէին որք 'ի հեթանոսացն էին՝ ինքեանք ունել զնախադասութիւնն . կարծէին և որք 'ի Հրէից

1 Օրինակին գրեալ էր Թևեցուցանեմք :

էին՝ ինքեանք զօղ առաջինք ։ Այլ յառաջ քերելին որք 'ի հրէիցն էին զհայրենի բարետոհմութիւնն, և առէին առ որս 'ի հեթանոսացն էին. մեք քան զձեզ պատուականագոյնք եմք, և ազգենագոյն է մեր բարեպաշտութիւնս. վասն զի մեր են հայրապետքն, մեր Աբրահամ, մեր Իսահակ, մեր Յակոբ, և ամենայն նախահարքն և մարգարէք, և մեք ունիմք զառաջին բարետոհմութիւնն, իսկ դուք զայժմեան բարեգործութիւն ։ Իսկ որք 'ի հեթանոսացն էին առէին. ոչ վայելուչ առաջինն լինել ուրացելոցն զՔրիստոս, ոչ է պատշաճ յառաջին մնալն[1] դասել որք զխաչն կանգնեցին և մեծամարտք եղեն. և 'ի բաց անկայք դուք, և կոչեցան ամենայն հեթանոսք. մեք զբարեգործութիւնն յափշտակեցաք, և դուք թշնամանեցէք զբարեգործութիւն ։

Տեսեալ առաքելոյն զխռովութիւնն և զամբոխն զարգացեալ յաւէտ 'ի հռովմէ, և զմիտս ածելով եթէ չար 'ի մեծ քաղաքի զեղեալ՝ կարէ տարածանել ընդ ամենայն ընդ երկիր, ամփոփէ իբրև յարմարաւոր իմեքէ զհակառակութիւնն, զի մի անտի յամենայն երկիր եկեսցէ ընդդիմամարտութիւնն. և 'ի մէջ գիրքն եդեալ՝ առնէ իբրև ոչ դատողի, այլ խաղաղարարի, գիտելով եթէ հակառակութիւն զբարեպաշտութիւնն ոչ հաստատէ, բայց բարեպաշտութիւնն լուծանէ զամենայն հակառակութիւնս ։ Այլ զոր օրինակ որք կամին ցածուցանել զկռիւ և զամբոխ՝ ոչ միում կողմանն ևեթ սաստեն, զի մի զմիւսն ևս առաւել բորբոքեսցեն, այլ և սոցա և նոցա սաստեն, զի 'ի ձեռն յանդիմանութեանն զիւրընկալ անփիցեն զխորհրդակցութեանն գործ, այնպէս աստուածային առաքեալ 'ի մէջ գիրքն դնելով մարտուցելոցն՝ զնստուցանէ զհրէական յոխորտանսն և զհեթանոսականն սանձահարէ ։ Այլ բուռն հարկանէ նախ առաջին զանամօթ կողմանէն՝ զհրէիցն ասեմ. վասն զի ամենեքեան շունք որք ոչ կարեն հաչել ։ Անամօթ ազգն՝ ոչ վասն տոհմին ասեմ, այլ բարուցն աղագաւ. քանզի ոչ ցեղն էր լիրբ, այլ կարգն վատթարագոյն ։ Այլ բռնաբարէ զայն կողմն, մանաւանդ եթէ կշտամբէ նախ առաջին զայնը կողմանն զլրբութիւն, առ որս ա-

1 Յօրինակին գրեալ էր մուրճն. եղաւ լաւ յունին.

ասէր Եսայիաս. «Պարանոց քո երկաթի և ճակատ քո պղնձի». այսպէս զնա գիտէր անամօթ: Պնդէր և մարգարէն Երեմիաս ասելով. «Ճակատ պոռնկի եղեն քո, Իսրայէլ, լկտեցար առ ամենեսեան»:

Արդ սաստէ ոճայլին առաքեալ նախ առաջին անունովք կոչմանն՝ Հրէիցն ասէ: Նա վասն զի յառաջ բերէին զնախապատուութիւն հարցն, զԱբրահամու, զԻսահակայ և զՅակոբայ, ցուցանէ թէ ոչ սորա և արժան է պանծալ ազգաւ, այլ կարգօք: Յաղագս որոյ սկսանելով զանուն ասէ. «Ոչ ամենեքեան որ յԻսրայէլէ են՝ նոքա Իսրայէլացիք իցեն»: Ոչ առ Հրէայսն, այլ և ոչ՝ եթէ իցեն զաւակ Աբրահամու՝ ամենեքեան որդիք. քանզի գրեալ է. «Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ»: Զի եթէ ազգ առնէր զպարկեշտութիւնն, ոչ ինչ խափան էր Իսմայէլի նախապատիւ լինել, քան զԻսահակ. քանզի որդի էր Աբրահամու և երէց որդի: Արդ ոչ եւս ամենեքեան որ յԻսրայէլէ են՝ նոքա Իսրայէլացիք են, և ոչ եթէ իցեն զաւակ Աբրահամու՝ ամենեքեան որդիք Աբրահամու. այլ «Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ»: Ի վերայ ածէ զմեկնութիւնն Պաւղոս. ասէ. «Ոչ եթէ որդիք մարմնոյն հանդերձ հաւատոյ, այլ որդիք աւետեացն են որդիք Այ»:

Նայց զի գոյ հնար Հրէիցն ընդդիմանալ բանին և 'ի ներքս մուծանել այլ ինչ լրութիւն հակառակ առառաւածայլին քարոզութեանն և ասել՝ եթէ Իսմայէլ խոտեցաւ յաղագս զի յաղախնոյն էր ծնեալ, և Իսահակ պատուեցաւ վասն ազատին բերելով զպարկեշտահմութիւնն, 'ի ներքս մուծանէ զկինն զԻսմայէլ և ասէ. «Ոչ միայն Իսահակ, այլ և 'ի Հռեբեկայ, որ 'ի միոջէ անկողնոյն Իսահակայ հօր մերոյ էր եւ ծնեալքն և կամ գործեալ զբարի ինչ և կամ զչար, զի բան ընտրութեան յառաջագրութիւնն մնասցէ ոչ 'ի գործոց, այլ 'ի կոչողէն, ասացաւ նմա՝ եթէ երէցն ծառայեսցէ կրտսերոյն»: Վասն զի անդ զանազանութիւն մարմնոյն յառաջ բերէր 'ի հակառակութիւնն, ցուցանեմ քեզ 'ի միոջէ արգանդոյ երկուս շառաւիղս որոշեալս. և ցուցանեմ զհաւատացեալն ընկալեալ, և զանհաւանն ոչ ընկալեալ: Զի ոչ թշնամանէ բնութիւնս զոր ոչ լաւոյ յօժարութիւնն, և զի ուսցիս եթէ «Երէցն կրտսե-

Digitized by Google

րուեան ծառայեսցէ, որպէս և գրեալ է, զՅակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի»: Այս յամենայնի հաւանէն յառաջ բերէր Պաւղոս: Նաև զի Այ ասէր 'ի ձեռն մարգարէին. ոչ եղբայր էր Եսաւ Յակոբայ, զՅակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի: Ո՛ի զազնուութիւնն, ասէ, բերես 'ի մէջ, զինչ օգտեաց Եսաւայ բնութիւնն. այլ զի հարցն բարեպաշտութեանն պանծաս, զինչ առաւել ընդբոշխնեաց 'ի բարեպաշտութենէ հօրն Եսաւ. ոչ թոռն էր Աբրահամու, ոչ որդի էր Իսահակայ, ոչ 'ի նմին մօրէ, ոչ 'ի նմին ազատութենէ. մի օգնեաց ինչ նմա ազգն, վասն զի արտաքս ընկեցին զնա բարքն:

Առաքեալն 'ի վերայ ածէ. «Իսկ արդ զինչ ասեմք. միթէ անիրաւութիւն ինչ իցէ յԱյ. մի լիցի»: Իպառասութիւնն մերձեցաւ մինչև յայդքան. պատահեալ յառնել վիճաբանութիւնն զինի: Սահմա զի յոլովք զայլոց անուաւթիւնս հարցաքննելով և 'ի ներքս մուծանելով առնուն զբամբասանս, ոչ հայեցաւ առաքեալ յանխժամ 'ի հակառակութիւն միայն մարտուցելոյն, այլ և 'ի հերձուածն՝ որ զկնի այնորիկ յառնելոց էր 'ի ձեռն մանիքեցւոցն. գիտէր զհերձուածողս, գիտէր և զհեթանոսս զկնեալ ընդդէմ բանիս այսորիկ, և յառաջագոյն առնլով պատրաստէ նետս, զի քեզ ամբարեսցին անօթք 'ի զարգանալ պատերազմին: Վասնզի ոչ առաւնէ մեծ զմերձակայս միայն, այլ և առաւելապէս նախատեսանէ զհանդերձեալսն. և այսր աղագաւ բանն Այ կոչի սուսեր և նետ: Որպէս Եսայիաս. «Եդ զիս իբրև սուսեր սուր և ձեռամբ ծածկեաց. եդ զիս իբրև զնետ ընտիր և 'ի կապարճս իւրում թաքոյց զիս»: Նոյնէր սուսեր և նետ. սուսեր առ մերձ կացեալսն զենու է, իսկ նետ և առ հեռագոյն որոշեալսն առաքէ: Իսկ վասն զի Այ բանն և զայսն ժամու հակառակեալսն կործանէ և որ հանդերձեալ են յառնել շատխօսութիւնքն կառարէ, կոչի սուսեր առ մերձաւոր մարտուցեալսն, և նետ հակառակ ընդդիմամարտացն և 'ի հեռաւոր կացելոցն արձակեալ: Ցոյց զի մի հատցուք զյարմարութիւն պատճառին, նախ ասասցուք զայն, և ապա եկեսցուք յայս:

Յորժամ նուաստացոյց զՀրէայսն մի ինչ մեծամեծս խորհել ազգաւն, բուռն հարկանէ վաղվաղակի և որք 'ի հեթանոսացն եկեալք, և ասէ ցնոսա. «Ո՛վ պար-

ծիր յարմարան. քանզի զու վայրենի ձիթենի էիր և հատար 'ի բնականն 'ի վայրենի ձիթենւոյն և պատուաստեցար 'ի բարի ձիթենւոջն,,: Որ զթուղթն հանդերձ համառօտութեամբ ընթեռնու, գտանէ յաւէտ զլուծումն. բայց մեք 'ի համառօտագոյնս երթիցուք:

Ասէ զիսրայելեան ազգն բարի ձիթենի, և որք 'ի հեթանոսացն՝ հատեալ 'ի վայրենի ձիթենւոյն և պատուաստեալ 'ի գեղեցիկ ձիթենւոջն: Ասէ զԱբրահամու ազգն գեղեցիկ ձիթենի, և որք 'ի հեթանոսացն էին եկեալք և 'ի քաղցրութենէն Աբրահամու ճաշակեալք և 'ի մարգարէիցն՝ նուաստացուցանէ մի բարձրագոյնս ինչ խորհել: Վասնզի ոչ, ասէ, Իսրայէլ 'ի քէն պատուաստեցաւ, և ոչ դու ընկալար զԻսրայէլ. ո՛չ ապաքէն նա զքեզ ընկալաւ: Առաքեալքն մի թէ 'ի քէն իցեն, ո՛չ ապաքէն 'ի հրէիցն. փրկիչն մի թէ 'ի հեթանոսաց, ո՛չ 'ի հրէից իցէ: Արդ ընդէ՞ր անգիտանաս զարմանան բարեաց և պարծիս. ո՞չ գիտես եթէ վայրենի ձիթենի էիր, և պատուաստեցար 'ի գեղեցիկ ձիթենւոջն:

Բայց թերևս ասիցես, ամենայն իրօք դարձեալ վերստին զկնի ասելով ընդդիմանաս, եթէ նոքա անհաւանութեամբն կոծոտեցան, և ես հաւատով կացի: Գեղեցիկ. "Մի՛ բարձրագոյնս խորհիր, այլ երկիր. զի եթէ Ած 'ի բուն ոստոցն ոչ խնայեաց, որ գուցէ և 'ի քեզ ոչ խնայեսցէ,,: Տես զառաքելական զձայնն, հայեաց յառաքելական զօրութիւնն, տես զիարդ հաստանէ արմատաքն զհակառակութիւնն. զնոսա ընթերանէ, և զոսա հաւանեցուցանէ մի ամբարտաւանել: "Արդ եթէ պանծայցես 'ի վերայ ոստոյ արմատոյն, ոչ դու զարմատն 'ի վեր ունիս, այլ արմատն զքեզ,,: Վասն զի որք 'ի հեթանոսացն էին՝ պարծէին առ Իսրայելացիսն, որպէս թէ նոքա յաղագս 'ի Քրիստոս անհաւատ լինելոյ խզեցան, և ինքեանք կոչեցան վասն ողորմութեանն, ասէ առ նոսա այնքան յանդգնեցելոցն. "Ոչ դու զարմատն բարձեալ ունիս, այլ արմատն զքեզ: Բայց ասեն. խորտակեցան նոքա, և ես պատուաստեցայ,,: Առաքելութեամբ հաւանիմ քում ձայնիդ, ընդունիմ զքո գեղեցիկ պատասխանիդ. բարւոք է: "Բայց մի բարձրագոյնս խորհիր, այլ երկիր. քանզի և-

Digitized by Google

թէ ում 'ի բնական յատուն ոչ խնայեաց, գուցէ և 'ի քեզ ոչ խնայեսցէ„: Որք լուր բնութեանն ունէին զբարետոհմութիւնն՝ յաղագս անհաւատութեան արտաքս մերժեաց, և զքեզ ամբարտաւանեալ արտաքս ընկենու յաղագս նորին չարաբարութեանն: Այլ սոս զփարդ հակառակութիւնն հատանէր երկիւղին:

“Այլ արդ սոս զքաղցրութիւնն տոյ և զխստութիւն, 'ի վերայ կործանելոցն զխստութիւն, և 'ի վերայ քո զքաղցրութիւն՝ եթէ մնայցես 'ի քաղցրութեանն. ապա թէ ոչ՝ և դու խորտակեսցիս„: Տես զփարդ ահին զհակառակութիւնն հատանէ, և կացուցանէ զմիքն 'ի մէջ հաւատարիմ ոչ 'ի հակառակել, այլ 'ի զարհուրեցուցանել: Ի հարցափորձել զոտար ազգ յաղագս քրկենաց յօժարեցուցանել փութա, որպէս զի հանձն լիցի բարեգործին. մի՛ սոսեր զբարետոհմութիւնդ 'ի ձեան բալուցդ:

Այլ ապա ասէ որք 'ի հեթանոսացն էին: Վասն զի զայն 'ի մէջ բերէին հեթանոսքն. Պաւղոս առ մեղաւորեցաւ, ոչ առ ձեզ հրեայս. վասն հեթանոսաց է քարոզ: Նոյնմ ձայնի դարձեալ Պաւղոս յարմարէ զփրկական դեղ բարեպաշտութեան և ասէ. մի՛ ինչ յիս պանծայք. այո ձեր վարդապետ եմ և ոչ հրէից, այլ ուսարուք հաւատեաւ. “Քանզի ոչ կամիմ զձեզ անգիտանալ, եղբարք, զի որքան եմ հեթանոսաց վարդապետ, զպաշտօնութիւնս իմ փառաւորեմ„: Զինչ է փառաւորեմն: Որժ կացուցանեմ զիմ զարգաւութիւնս, յանդիման կացուցանեմ զհեթանոսս: Ընդէր մատուցանիցես. “Թերևս նախանձեցուցից երբէք զիմ զմարմինն, և ապրեցուցից զոմանս 'ի նոցանէ„: Ընդ ձեզ զարմանամ, զի զնոսա 'ի նախանձ բերից: Այլ այսպիսի վարելով Պաւղոս, շիջուցանէր զհակառակութիւնն, և 'ի ներքս մուծանէր զպայծառ բարեպաշտութիւնն. կոտորէր զհակառակութեան իրս, և մուծանէր զհամակամութիւնն: Բայց 'ի յառաջիկայսն երթիցուք:

“Զինչ ասեմք. միթէ անիրաւութիւն իցէ յԱստուծոյ. մի՛ լիցի. քանզի Մովսէսի ասէ, ողորմեցայ յորում ողորմեցայց, և գթացայ յորս գթացայց„: Ընձայնս զայս Պաւղոս ոչ յիւրմէ 'ի զինմաց ասէ, վասն

Digitized by Google

զի յաղթանակութիւն է ընդդիմամարտութեանն։ Ս՛ատանա-
գործէ զընդդիմամարտութիւնն · Պաւղոս յերեսաց մով-
սեսցելոցն։ "Օրէնք ասեն · մի անիրաւութիւն իցէ
յԱ՛ստուծոյ · մի լիցի · որ ասէն՝ ողորմեցայ յորում
ողորմեցայց, եւ գթացայ յորս գթացայց"։ ընդդի-
մամարտութիւնս այս ոչ զամենայն զյաղթանակութիւնն
էառ։ Նոյն "մի լիցին" յաղթողութիւն իմն է։ Նախ
քան լուծանել զհակառակութիւնն՝ վաղվաղակի չքմեղս
զհայհոյութիւնն, զի մի մինչդեռ քննիցէ զխնդրոյն՝
յառաջագոյն ժամանեսցեն որ ընդդէմ խօսիցեն ինչ,
մերժ եղ իբրեւ զխնդրոյն բժիշկ ՚ի մէջ զմի լիցին, զի
հրաժարեցուցանելով զհայհոյիչն արգելցէ ՚ի հայհոյու-
թենէն եւ ածցէ ՚ի ճշմարտութիւնն։

Ն՛այլ որ ընդդէմ կայ՝ ասէ · այդ յաղագս Յակոբայ
ասացաւ "զՅակոբ սիրեցի եւ զԵսաւ ատեցի · եւ Մ՛ով-
սէսի ասէ, ողորմեցայ որում ողորմեցայց, եւ գթացայ
յոր գթացայց"։ Ո՛ւմ կամի ողորմի, եւ ում կամի խստա-
ցուցանէ, եւ "զի՞ եւս մեղադրէ, զի կամաց նորա ոչ ոք
կայ հակառակ"։ Վ՛ասնզի եթէ նա զայս արարծէ եւ նա
զայս կորզէ, ընդէ՞ր յիւրեան բան պահանջէ զոր ինքն
գործէ։ Օ՛այս զօրութիւն ունի ամենայն ընդդիմամար-
տութիւնն։ Վ՛ասնզի Մ՛ովսէսի ասէ · "ողորմեցայց ո-
րում ողորմեցայց, եւ գթացայց յոր գթացայց"։ Ն՛ա
ուրեմն որպէս այլոյ ուրուք ընդդէմ կացեալ, իբրեւ խոր-
հրդով իմն ՚ի վերայ եած "զՅակոբ սիրեցի եւ զԵ-
սաւ ատեցի", ՚ի վերայ բերէ զմիւս եւս ձայնն՝ թէ ում
կամի ողորմի եւ ում կամի խստացուցանէ։

Այլ յորժամ հաւաքեաց զխնածութիւնն, ասէ զայս
զոր ընդդէմն դնէ · "Ա՛պա ուրեմն ոչ որ կամիցին եւ ոչ որ
ընթանայցեն, այլ որ ողորմին Ած"։ Օ՛ր եթէ ում կա-
մի ողորմի եւ ում կամի խստացուցանէ, ինձ զի՞ մեղադրես։
Ա՛յլապար պատուհեան բերեմ զբարեպաշտութիւնն,
ստորապարտ ընթանամ առ ճշմարտութիւնն · զի ոչ որ
կամիցին եւ ոչ որ ընթանայցեն, այլ որ ողորմին Ած։ Օ՛այս
ամենայն ՚ի դիմաց մերձողին ասելով, ոչ դանդաղէ ա-
ռաջեալ հզօրագէս ընդդէմ կալ նմա, ոչ հաստատել
կամելով զմերձաւորանութիւնն, այլ լուծանել զամենայն
հեթանոսացն զկարծիս։

Ո՛րում կամի ողորմի եւ ում կամի խստացուցանէ։ "Ն՛այլ

Digitized by Google

ասես ինձ՝ զի՞ ևս մեղադրէ, քանզի կամաց նորա, ասէ, ո՞վ կայ ընդդէմ„ ։ Սկիզբն այսուհետև հանդիպելոյն ասէ Պաւղոս առաքեալ. "Իսկ դու ո՞վ ես, մարդ, որ պատասխանի տաս Այ„ ։ Նախանօր ոչ է լուծումն ընդդիմաբանութեանն, այլ նախ առաջին սաստէ յանդգնեցելոյն քննել զԱյն. վասն զի ըմբերանել զվիճողն՝ ոչ լուծողի զխնդիրն է, այլ անձնացուցանողի զատարակութեանն ։ Եթէ սաստես ինձ զիրաւացի ասողի, լսեմ և ընդունիմ զձախապահութիւնդ, այլ և ոչ մի յարմարութիւն ոչ անտանեմ ։ Ընդէ՞ր մեղադրես և ոչ հաւանեցուցանես ։

Այլ նախ առաջին պապանձեցուցանէ զյախուռն մարդկային յանդգնութեանն, որք իշխեն և բոլորովին իսկ փութան բան յԱյ պահանջել յաղագս երևելոյն. "Դու ո՞վ ես մարդ որ պատասխանի տաս Այ„ ։ Այս 'ի յոյժ նմանակ իմն հասարակաց, քանզի պարտ և արժան է և 'ի հասարակաց առողջութեանցն հաստատել զմիտսն ։ Զոր օրինակ եթէ ոք տեսանիցէ զայր ոք որ զիւր ծառայ հարկանէ, և մատուցեալ 'ի մէջ ասիցէ՝ ընդէ՞ր հարկանես ։ Այլ նորա զանհրաժեշտական իշխանութիւնն 'ի ձեռն առեալ ասիցէ՝ և քեզ զի՞նչ փոյթ է, ո՞չ ունիմ իշխանութիւն իմում ծառայիս, ո՞չ ապաքէն իմ է, ո՞չ ընդ իմով իշխանութեամբ կայ ։ Այսպիսիկ եւս զեկուցանողի զիշխանութիւնն, այլ ոչ ցուցանողի զյարմարութիւնն ։ Այս առ ընդդիմակացն վաղվաղակի զայրացեալն ասէ՝ զի՞նչ առ քեզ ։ Բայց յորժամ հալեսցէ զարտմտութիւնն և զնստուցէ զզայրացումն իւր, 'ի հանդարտութիւն եկեալ այնուհետև պատասխանի տանէ մեղադրողին ։ Զի մի՛ զիս ստգտանիցես, ով մարդ, եթէ վայրապար զայրացայ, ուսիր զյանդգնութիւնն ։ Զայս և առաքեալ առնէ ։ Քանզի պահանջեալ բան 'ի վիճողացն՝ եթէ որում կամի ողորմի և ում կամի խստանայ, զի՞ ևս մեղադրէ ։ Վասն զի ետես արդարացեալ զձայնն ասելով "դու ո՞վ ես մարդ որ պատասխանի տաս Այ„ ։ Կամ՝ օրինադրէ ստեղծողին, արարածն քննէ զարարիչն, ծառայ պահանջէ բան ինչ 'ի տեառնէ ։ Այլ ո՞չ 'ի հասարակաց իրացդ ուսանիս. զի և յաղագս ազատութեան մատուցեալ ծառայ յորժամ ձգի 'ի ծառայութիւնն, ոչ իշխէ զիւր զդէմսն յանդիմանել



Digitized by Google

կացուցանել, այլ զայլ ոք առնու մնորդակից, զի մի հա-կառակ զդէմս ծառային կացուցանիցէ տեառն զիմոց: Այլ դու մարդ ես մահկանացու, առ անմահն զդէմս ըն-քեր հաւատարեցուցանես: Ով ես դու որ պատաս-խանի տաս Աստուծոյ. ժամանակեայդ քննես զյաւիտե-նականն, մահկանացուդ զանմահն, որ 'ի գերեզմանի լուծանիս զյերկնի բնակեալն, որ յերկրէս կերակրիս և յերկրի զանանս՝ 'ի յաւիտենականսն յամենայն ժա-մանակսն քան ապահանջես: "Դու ով ես մարդ որ ընդ-դէմ պատասխանի տաս Այ. ոչ ունի իշխանութիւն բրու-տըն կաւոյն, 'ի նմին առնել զոմն 'ի պատիւ անօթ, և զոմն յանարգանս":

Այո, ասէ, զեղեցիկ ընթերցանես, բայց զխնդիրն ոչ լուծանես. որովք պապանձեցուցանեսդ, առաւելեալ ըն-մեղադրութիւնն: Ասան զի ասես՝ եթէ ոչ ունի իշ-խանութիւն բրուտն 'ի նմին կաւոյ առնել զոմն 'ի պա-տիւ անօթ և զոմն յանարգութիւն: Յայտնի է որենոր առնէ զպատուականսն և զանպիտանսն, և զի ես մե-ղաւորես: Ոչ ներեմ այդմ ձայնի քում. զի որովք զ-լուծանես զմեղադրութիւնն, յանձնիւս եւս զապա-կուանսն: Պաղպաս այսպիսի տապալեալ յորժամ առ-աւեալ իւրև յանդգնեցելոց, յայնժամ ասացէ իւրև զու-խալեալս, և ասէ սաստելով. "Դու ով ես մարդ, որ պատասխանի տաս Այ. ոչ ունի իշխանութիւն բրուտն 'ի նմին կաւոյ առնել զոմն 'ի պատուոյ անօթ և զոմն յանարգանս": Այլ յորժամ գիտաց եթէ որովք պապան-ձեցուցանէին՝ առաւել յանձնէին զապականութեանն, կոչ-մարդոյն 'ի մերոյ ասէ. "Եթէ կամէր Այծ ցուցանել զբարկութիւն և ծանուցանել զզօրութիւն, որում ներեաց յոլով երկայնմտութեամբ": Ապա մատին քննեա-ցին բանքս, զի ոչ իսկ է հնար 'ի սոսկ ձայնից ընդու-նել զճշմարտութիւնն: Այլ յայտ և իմաստեայ եթէ ոչ է պարապ և արժան յանդ բան պահանջել. և վարեցաւ Պաւ-ղոս ձայնիւ Այ որ 'ի ձեռն Եսայեայ ասացաւ. վասն զի 'ի հնումն ժողովրդեանն ասէր Այծ. "Միթէ ասիցէ ստեղծուածն ցստեղծիչն թէ ընդէր զիս արարեր": Ոչ պատասխանի տայցէ կաւն բրտին զինչ առնես, զի ոչ գործես, չիք քո ձեռք: Դուք յաղագս գործոց խնդրեա-ցէք ինձ և որդւոց իմոց: Ձայնն զԵսայեայ որ ըն-

ակրանելի վճռոյ, Պաւղոս առնլով յօրինէ զսխալելոյ բարոյն ։

Արդ որ ինչ սաստելոյն էր ցուցաւ, և որ ինչ լուծանելոյն՝ զհետ եկեսցէ ։ Զի ուսանիցիս, եղբայր, եթէ Պաւղոս ոչ առ հաստատութիւն խնդրեցելոյն յառաջ եբեր «դու ով ես որ ընդդէմ պատասխանի տաս Այ», այլ վասն սաստելոյ. աստանօր դրէ զամենայն ստեղծչին և ասէ. «Ո՞չ ունի իշխանութիւն բրուտն ՚ի նմին կաւոյ առնել զոմն ՚ի պատիւ անօթ և զոմն յանարգանս»։ Այս առ վերջաբանութիւնն խօսի, և ոչ առ յայտնութիւն ուսմանն։ Նոյն այլուր կամելով ցուցանել եթէ անօթ անպատուութեան և անօթ պատուոյ ոչ ՚ի բնէ պատրաստի, այլ ՚ի գործողացն յօժարութենէ ՚ի վատթարագոյնսն միաբանելով և կամ յառաքինութիւնսն հայելոյ, ասէ Տիմոթեայ. «Զայս գրեմ քեզ զի գիտասցես զիարդ պարտ իցէ ՚ի տան Այ շրջել. ՚ի մեծի տան ոչ միայն են անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք, այլ և փայտեղէնք և խեցեղէնք»։ Զայս ինչն Պաւղոս ասէ. քանզի ոչ յայլում ուրեք ՚ի մէջ ածից զվկայութիւնն, զի մի ասիցես՝ եթէ ոչ գտանելով յառաջերեյն զլուծումն, յայլ գիրս վազեաց։ Նոյն Պաւղոս որ նոցա սաստէրն, յորժամ ոչ ես խօսէր սաստելով, այլ ճշմարտութեանն ասէր. «Ի մեծի տան ոչ են միայն անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք, այլ և փայտեղէնք և քարեղէնք, ոմանք ՚ի պատուի և ոմանք յանարգանս»։

Իւ զինչ ՚ի վերայ ածէր. «Եթէ ոք զինքն մաքրեսցէ, եղիցի անօթ ՚ի պատիւ սրբեալ»։ Ոչ անդ լուծեղծողին դրէր զանօթն ՚ի պատիւ և յանարգանս, ՚ի միուսում ես տեղւոջ յօժարութեան ընծեռեաց զամենայն. «Եթէ ոք զինքն մաքրեսցէ, եղիցի անօթ ՚ի պատիւ սրբեալ և պիտանի տեառն իւրում յամ գործս բարիս պատրաստեալ»։ Տեսանես զի այլ ազգ յորժամ սաստէրն՝ խօսի, և այլ ազգ յորժամ վարդապետէրն՝ հաւանեցուցանէ. և բստ յառաջագոյն կերպարանի տեառն, որ զխեց ծառայն տանջէր, և առ օտարն վաղվաղակի խստագոյն բարբառէր, իսկ առ ճշմարտութիւնն ձգէր պարզմարութիւնն զայն, նոյնպէս և աստ եցոյց եթէ անօթ ՚ի պատիւ և անօթ յանարգանս ուժ

ոչ առնէ, այլ զհասարակացն առնէ զբնութիւն. ապա եթէ աշառանօք՝ պատառէր զարարչութիւնն։

Այլ զի ուսցիս հաւաստեաւ եթէ ոչ 'ի բնութենէն ստեղծանիմք 'ի պատիւ և յանարգութիւն, գիրք ուսուցանեն։ Ո՛չ ի այնպէս ստեղծաւ անօթ յանարգանս, ընդէ՞ր ինձ գիրք վարդապետէին լինել բարի. զի որպէս ստեղծայն ըստ բնութեանն՝ փոփոխել ոչ կարէի։ Ընդէ՞ր խրատէ լինել բարւոք բնական չարին։ Հիմ ամբացուցանէ զբարին ասելով. «Որ կայն՝ զգուշասցի, զի մի՛ անկցի». եթէ բնութեամբ է բարի, ընդէ՞ր զգուշացուցանէ և ամրացուցանէ։ Այլ արդ որ 'ի կարգին է՝ եթէ «Ոչ որ կամին և ոչ որ ընթանայն». եթէ ոչ ինչ է յիս որ կամիցին, ընդէ՞ր քարոզես. և եթէ ոչ ոք ընթանայցեն, վասն է՞ր աշխատիս։ Եթէ ոչ իցէ որ կամիցին, ընդէ՞ր ասէր Տէր. «Եթէ կամիցիք և լուիցէք ինձ, զբարութիւնս երկրի կերիջիք»։ Եթէ ոչ իցէ որ կամիցին, ընդէ՞ր և փրկիչն ասէր. «Քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս ձեր, և ոչ ախորժեցէք»։ Եթէ ոչ իցէ որ ընթանայցէն, վասն է՞ր գաղատացւոցն ասէր. «Բարւոք ընթանայիք, ո՞ զձեզ խափանեաց». ընդէ՞ր և Պաւղոս ասէր զինքենէ. «Այնպէս ընթանամ իբրև անյայտ ինչ. զյետոյսն մոռացեալ՝ յառաջադէմսն կարկառեալ զնպատակին զհետ երթամ»։ Ո՛չ ի՛ աշխատիս, ընդէ՞ր ընթանաս. դու ասացեր՝ ոչ որ կամին և ոչ որ ընթանայն։

Այլ գիրք լուծանեն զհակառակութիւնն։ Ոչ որ կամին՝ Իսահակ, վասն զի կամեցաւ օրհնել զանդրանիկն. և ոչ որ ընթանայրն Եսաւ 'ի դաշտին, այլ Տէր որ ողորմեցաւն Յակոբու։ Արդ ոչ ես կամեցողին Իսահակայ և ոչ ընթացողին Եսաւայ, բայց Տեառն որ ողորմեցաւն Յակոբու։ Այլ լուծաւ խնդիրն «ոչ որ կամին»։ Այնպէս ընդէ՞ր իսկ բողոքումն՝ որ ողորմին Տէր։ Քանզի կայ մեծ տակաւին խնդիրն՝ ում կամի ողորմի և ում կամի խստանայ։

Հայեաց հաւաստեաւ, եղբայր։ Աստուած կանխագիտէ զամենայն. և գիտէ յառաջագոյն, իբրև ոչ եթէ ինքն տպաւորեսցէ զհանդերձեալսն, այլ կանխաճանաչէ զլինելոցն։ Քանզի այլ է ըստ իւրում անօրէնութեանն յառաջագոյն սահմանել, և այլ 'ի մերոց գոր-

ծոց կանխաւ գիտել զիրսն. այլ է նախատպաւորել, և այլ յառաջագոյն գիտել: Մինչ կանխաւ գիտիցեմ զչարն թէ լինելոց է չար, ոչ նախագիտութիւնն իմ արար զնա չար. որպիսի ինչ ասեմ. եթէ տեսանիցեմ բազում անգամ զայր ոք երիտասարդ 'ի հօրէ մնացեալ ժառանգաւոր յոլով ընչից, և տեսանիցեմ զնա 'ի խրատուէ 'ի բաց կացեալ և փափկացելոյն կենակից, 'ի տեսարանս յորդորեալ, 'ի ձիամարտութիւնս պարապեալ, վաղվաղակի 'ի տեսանելն ասեմ. սա 'ի սուղ ժամանակի ցրուէ զինչս իւր, սա զհայրենի ժառանգութիւնն կորուսանէ. ոչ վասն զի յառաջագոյն տեսի՝ տպաւորեցի ինչ, այլ 'ի բարուցն նշանակեցի: Նոյն առնէ զհանգիստութիւն ոչ նախատեսութիւն յառաջ տեսողին, այլ վարք չարաչար գնացելոյն: Բազում անգամ, սիրելի, և յայլոց իրացն ասեմք. տեսանեմք զոք որ ընդ լայնն ճանապարհ գնայցէ և ցուպ ոչ առնիցի, վաղվաղակի ասեմք՝ գլորելոց է նա. անզգուշանայ զտեղեացն բնութի, անկանելոց է 'ի գլորումն: Վասն զի յառաջագոյն ասես, մի՛ արդեօք դու գործեցեր զիրսն:

Բայց ոչ են նմանք իմ կանխագիտութիւնն և այ՝ զայս ասեմ. 'ի մերոցս և որ գեր 'ի վերոյ քան զմերոս է՝ ուսուցանեմ: Քանզի յերկարեն ոմանք ընդդէմ ասելով պայպախումն. զի ուսանիցես, ասեն, եթէ ած արդարագործ է և 'ի չարս: Ինքն ասաց Երեմիայի. "Նախ քան զստեղծանելն զքեզ յորովայնի՝ գիտէի զքեզ, և յառաջ քան զելանելն յարգանդէ՝ սրբեցի զքեզ": Նոյն ինքն ասէ. "Օտարացան մեղաւորք յարգանդէ, նախ քան զելանելն մոլորեցան յորովայնէ և խօսեցան սուտ": Տեսանես զի յորովայնէ նա ցուցաւ արդար, և միւսն չար. տեսանես զի 'ի բնութիւն ուրեմն բարւոք ասաց փրկիչն առ Հրեայսն. "Մոլորիք ոչ գիտելով ըզգիրս և ոչ զզօրութիւնն այ": Ընթերցիր ուղղակի և մի խօսիր խոտորնակի. "Նախ քան զստեղծանելն իմ յորովայնէ՝ գիտէի զքեզ, և յառաջ քան զելանելն յարգանդէ՝ սրբեցի զքեզ": Ոչ նախ սրբեցի զքեզ, այլ նախ գիտէի զքեզ և ապա սրբեցի զքեզ: Ըստանոր զկանխագիտութիւնն եցոյց, և յետ կանխագիտութեանն ապա զսահմանն. "յառաջ քան զստեղծանելն իմ զքեզ գիտեմ, և նախ քան զելանելն յարգանդէ

Digitized by Google

սրբեցի զքեզ ։ Նման զի գիտէի զքեզ, սրբեցի զքեզ ։ Զհայցագս այսորիկ և առաքեալ ասէ. «Ո՛րս կանխագիտէր, յառաջագոյն սահմանեաց»։ այլ նախ ծանեաւ և ապա սահմանեաց ։

Նախանձեմ, հանդիսակից եղբարք բանիս յօժարութեդ, ոչ զի զովեսջիք, քանզի ոչ զայդ խնդրեմք, որպէս և ած վկայէ, այլ հայցեմք զհաստատակաց օգուտն. տարածեցէք ինձ զլսելիս մտացդ ։ «Նախ քան զելանելն քո յարգանդէ սրբեցի զքեզ», խոստովանագոյն քան զառացեալսն յառաքելոց ։ Վասնզի Պաւղոս յաղագս իւր ասէր, «զորս յառաջագոյն ծանեաւ, և կանխաւ ընտրեաց նախ քան զհիմն աշխարհի»։ Ոչ զԵրեմիա յարգանդէ սրբեաց, բայց զառաքեալսն նախ քան զաշխարհ ամենայն ծանեաւ. և ոչ վայրապար գիտաց, այլ կանխաւ ընտրեաց ։

Արդ տեսցուք կանխագիտութիւնն արար զբնութիւն ։ Ոչ եթէ ընտրութիւն առաքելոցն յառաջ քան զհիմնելն աշխարհի՝ այն բնական արդարութիւն[1] ասէ և ոչ յօժարութիւն առաքինութեանն, ընդէր կանխաւ ծանուցեալքն մարգարէքն՝ կոչեցան ։ Նման էր Պաւղոս հալածէր, էր աղագաւ Մովսէսի մարգարէութեր, ընդէր պատմիկք փութային յարքայութիւնն ։ Վասնզի եթէ յառաջագոյն ծանօթացաւ արժանաւոր արքայութեանն պսակին, ընդէր պատժէր. եթէ յառաջագոյն ծանեաւ զՊաւղոս ած, ընդէր ոչ կանխագիտութիւնն պարծեցաւ զբնութիւնն, վասն էր կանխաւ ծանուցեալն յառաջ քան զհիմնելն աշխարհի հայհոյիչ և հալածիչ և թշնամանիչ եղև ։

Տեսանեմ զի կանխագիտութիւնն ոչ ունի զբնութիւն, այլ զյօժարութիւնն նախատեսէ ։ Վասնզի եթէ յառաջ ճանաչելն ասէր զոք առաքեալ, ընդէր Մովսէսի մարգարէքեր ։ Նա մարգարէքն հաստատեալ է, որպէս ասէ փրկիչն. «Նշխեցի քեզ որպէս զհեթանոսն և զմաքսաւորս»։ Նախ է զուգապատիւ ընդ զխոստովանութիւնն և զմաքսաւորութիւն սահմանեաց ։ Արդ եթէ յառաջագոյն ծանեաւ զՄովսէս, ընդէր նախագիտութիւնն ոչ արար զնա առաքեալ, այլ յօ-

1 Օրինակին առաքինութեան. Նշա. բառս յանձն ։

ժառանգութիւնն խոնարհեցոյց 'ի հնազանդութիւն ։ Աստ-հօր առաքեցաւ և ընդ հաւատացելոյն հաւանեցաւ , յայտ է թէ և զնա կանխաւ ծանեաւ ած ։ և զիւրոց յառաջագոյն ծանուցելոյն բող էր , ընդէ՞ր մարգարէիւն կանխաւ ասացեալ 'ի օրէնն կայր ։

Զայս ամենայն ուրեք ուսանեմս՝ զբնութիւնն մե-ղաց , և զյօժարութիւնն կանխաւ գիտացեալ նոյ , իւ-րաքն վարուք երևեալ ։ Կանխաւ եւս ած զլինելոյն , և զառաջ վարուցն ծանօթագոյն էր ։ Ի Պաւղոսէ հայ-նեմն ընկալ զլուծումն . " Զորս յառաջագոյն ծանեաւ և կանխաւ սահմանեաց , զնոսին և կոչեաց . և զորս կո-չեաց , զնոսին և արդարացոյց " ։ Ընդէ՞ր և Յուդաս կո-չեցաւ և ոչ արդարացաւ ։ Զորս կանխաւ ծանեաւ և յառաջագոյն սահմանեաց ։ Որդ ոչ են ասել յառա-ջագոյն ընտրութիւն յորժամյայնէ գիտելն զմարգարէն , այլ ոչ և նախ քան զյառաջ տեսանել ընտրեցելոցն և յա-ռաջ ծանուցելոցն բնութիւն ոչ յարմարեցաւ , այլ յօ-ժարութիւնն զսահմանն եդեալ , մանաւանդ եթէ յօ-ժարութիւնն կանխագիտութեամն մկրտեաց ։ Յուդաս առաւհեալ եթէ ոչ ասել կանխագիտութիւնն զբնու-թիւնն , եթէ ոչ բարերարքն հակառակաւէր որք իցէ , և առ նոյն ըմբռնեալ առ Աստուածութիւնն ։

Իսկ ընդէ՞ր բնութիւն 'ի Փարաւոն պատրաստէ զբանն ։ Ասան զի ասէ ցՓարաւոն . " Ի դոյն յայդ յարուցի զք-քեզ , որպէս զի ցուցից 'ի քեզ զզօրութիւն իմ , և պատ-մեսցի անուն իմ յամենայն երկիր " ։ Իսկ արդ զի ծա-նուցանես զքո զօրութիւն , չարչարելո՞վ զքո մարդիկդ . զի գիտասցի քո ոյժդ , կործանելո՞վ զանհնարաժամն ։ Բայց զի եթէ անբաւական է՝ մի մեղադրեր , և եթէ ընդ բամ-բասանօք՝ մեղադրելոյ ։

Իսկ զինչ իցէ " զի 'ի քեզ ցուցից զզօրութիւն իմ " ։ Հրաշեաց յիրաս , վարեցոյց տարակուսեալ սկզբնագո-նոյ և Աստուածութիւնն ։ Նժդեհական արուեստ կամեցեալ ըն-բնութիւն մարդկոյ խոնարհել և զհպարտութիւն , վարեցաւ հաստատողական իրօք , և հաւանեաց զմարդիկ զկենդա-նիս , զի այլոց զանձնիւթիւնն ուսանիցեն ։ Բայց էր և այս անխրատ , եթէ յաղագս այլոց փրկութեան զայլ զկեն-դանիս խորտակեր ։ Իսկ արդ զինչ ասեմք 'ի առաջինն ։ Զ մարդկանց մահու յաղագս ուղղութեան կամ-

շնուԹեան և կամ կախարդուԹեան, զայնպիսիսն առնլով կենդանիս հատանէին, ոչ զգիտելով որք տանջերցեն էին, և մարդկան զօգնականուԹիւն գտանէին։ Ոչ է զմտանեալն 'ի չարչարանս յաղագս իւրոց մեղաց կենդանւոյն յօշոտէին, և մինչ դեռ ևս խղճայցեն փարատիքն՝ ուսանիցին զգործն։

Նոյնպէս և Ած ամենիմաստ բժիշկն, քանզի բժիշկ է որ ասէրն "Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարուԹիւն", և "Ոչ ունին պէտս բժշկի ողջաւորք, այլ չարչարեալք", առնոյր զՓարաւոն ըղպարտականն բիւր չարչարանաց յաղագս յանցանաց իւրոց. վասն զի յոլով մեղաց էր պատժապարտ։ Նախ առաջին հայհոյուԹեանն, որ ասէր. "Ոչ գիտեմ ըզտէր"։ ՀայհոյուԹիւնն ունէր զսկիզբն չարուԹեանն։ Երկրորդ չարաբարուԹեանն առ ժողովուրդն, զի զազատ ազգն դատապարտէր ծառայուԹեամբ և աղիւսագործուԹեամբ։ Երրորդ զի զանպարտ տղայսն հեղձուցանէր 'ի գետն։ Չորրորդ զի զԱծ քարոզէին, և ոչ պատկառէր։ Հինգերորդ զի զսքանչելիսն տեսանելով անամօԹանայր առ բարեպաշտուԹիւնն։

Արդ զնա որ ընդ յոլով չարչարանօք անկաւ, առնլով Ած՝ իբրև զքաջ բժիշկ՝ սքանչելեօքն հատանէր. ոչ զի միանգամ տանջելովն սպանանիցէ, զի և ոչ որք հատանեն միանգամայն չարչարեն, այլ ներեն հատանել զանգամսն, զի ամենայն ուստեք համճարակք գտանիցեն զգործն։ Արկանէ 'ի վերայ նորա զզօրսն, զինչ ընդդէմ նորա գունդս օտարս զզօրս զօրացն, զմերախոցն, զի ցուցցէ զգերազանցուԹիւն զօրուԹեանն իւրոյ։ Ոչ առաքեաց հրեշտակս 'ի յերկնից, ոչ դունդս քերովբէից, ոչ գումարէր սերովբէս ընդդէմ հակառակամարտացն. այլ պատրաստէր ցուցանելով զզօրուԹիւն իւր, զպաշտուԹիւն գորտուցն զինելով և զճպուռ մարախոց. և զօրականացն այնոցիկ ոչ ոք էր զօրավար լեալ երևելի, այլ միայն հրամանն Այ առաջնորդէր։ Այլն զորօքն 'ի գետոյն հակառակ Այ ամբարտացն զամարեալք. եկեն և մարախք, խորհրդոյ զանազանուԹի ոչ ունելով զտէրունեան հրամանն կատարէին։ Ի վերայ յարձակէին և խառնիճաղանճ շամբաձայնք յաղելք զանազանք և սքանչելիք. հակառակ նմա հրաշագործէր

ա̃ծ, զանձն նորա հաստատելով և տանջելով զխորհրդ-ոցն, որք ազգի ազգի ամբարշտեցան, զանազանապէս տանջէր :

Այլ զի ուսցիս եթէ յաղագս այնորիկ զնա ընդ մնա-ցեալն հատանէր և ոչ միանգամայն տանջէր, զի ցուցա-նիցէ զիւր զօրութիւնն, այլ ամենայնաւ իմաստութիւն. "Ոչ տարակուսէր ամենազօր քո ձեռն որ ստացաւ զաշ-խարհ՝ և անհետազօտելի իմաստութեանդ 'ի վերայ ար-կանել նոցա զայլրացեալ առիւծս և կամ նոր ստացեալ վիշապս գազանս լցեալս սրտմտութեամբ". Նաև զամէն արար, զի ցուցցէ զիւր երկայնմտութիւն : Յաղագս այսորիկ ասէ ա̃ծ. "Ոչ ի պատմեսջիք որդւոց յորդիս ձեր որքան ինչ խաղացի ընդ եգիպտացիսն". Որք զՓարաւոն որ բուք պատժոց արժանաւորն էր, տանջէ ա̃ծ և ասէ ցնա. "Վասն այդորիկ յարուցի զքեզ, զի ցուցից 'ի քեզ զզօրութիւն իմ, և պատմեսցի անուն իմ յամենայն երկրի". Ոչ ի 'ի ձեռն քո զայլս շահեցայց և ողջախո-հագոյնս արարից, զի քեզ զայլս խրատեցից :

Այլ զի ուսանիցիս եթէ զխորդ օգտեաց նոցա հա-ւատացելոյն այլոց, ևս զգրոյն գործ : Յափշտակեցաւ եր-բեմն տապանակն ա̃յ յայլազգեացն, և եկին մախիցն ուստ մարգարէքն ամենեքեան և աւերին թագաւորացն այ-լազգեաց. "Ապաշխարեցուք 'ի բաց 'ի միջոյ զտապանակն ա̃յ Իսրայէլի՝ զձեռն նորա զօրաւոր. ոչ գիտէք որքան արար առ եգիպտացւոցն. ընդէ՞ր խստացուցանէք զսիր-տըս ձեր որպէս խստացոյց Փարաւոն". Ահա բարե-մտութեան հեթանոսացն : Պատկառեաց, վճարեց, յայ-լազգեաց ձայնէն : Ո՜վ, ասացին այլազգիքն, խստացու-ցանէք զսիրտս ձեր որպէս խստացոյց ա̃ծ զսիրտն Փա-րաւոնի : Նա նմին իսկ Փարաւոնի զբերանն զանազգայու-թիւնն. ընդէ՞ր խստացուցանէք զսիրտս ձեր որպէս խստացոյցն Փարաւոն. ոչ յորժամ խաղացնոյցն, յայն-ժամ արձակեաց զժողովուրդն, և այժմ հաշտեցուս-ցուք զա̃ծ : Այլ յայլում պատերազմի գործեալ յոր-ժամ տեսին զտապանակն այլազգիքն ասէին. վայ մեզ, այն է ա̃ծ խիստն որ եհար զԵգիպտոսն. վայ մեզ, ապ-րեցո զմեզ տէր : Այսու քան զփարձն տես զխորդ ողջա-խոհագոյնս զնոսա Փարաւոն : Ոչ այս գոշեցին այլազգիքն :

Այլ միւս կին այլազգի Ռահաբ, որ երբեմն բոզ էր

և առաջս առաքելոցն, նա յիշելով ասէր լրտեսացն. «Գի-տացաք ողջանդ առաջ ասէր Տէր երկիւղացուցանողն, լուաք և նուաստացաւ մեր սիրտ, և ոչ մնաց 'ի մեզ շունչ. վասն զի Տէրն ձեր մեծ նա է յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ»: Տեսանե՞ս զի ոչ ասէ Տէր ասելով. «Ի դմին յայդ յարուցի զքեզ, զի 'ի քեզ ցուցից զզօրութիւն իմ, և պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր»:

Աստուածային աստուածաբանական վարդապետութեանն եկե-ղեցի վախճան մերոյ քանիցս: Որպէս Պաւղոս. «Եթէ կա-մէր Տէր ցուցանել զբարկութիւն իւր և ծանուցանել զզօրութիւն, զոր ներեաց բազում երկայնմտութեամբ»: Եւ ասէ վերջապէս՝ 'ի վերայ եկած զբարկութիւնն, այլ 'ի վերայ արժանաւորաց բարկութեանն: Եւ զի՞նչ ասէ «որում ներեաց բազում երկայնմտութեամբ 'ի վե-րայ անօթոյն բարկութեան»: Ո՛վ է զոր արկեալ զա-գիտես որք կայցեն 'ի քում տանն անօթք՝ զանազա-նորդաց վարիս ամենեքումբք, այլ գիտես որ անօթն ըն-դունի ձէթ և որ գինի և որ քացախ, նոյնպէս գիտէ Տէր որ անօթ է պատեհագոյն ողորմութեան և որ անօթ արժանաւոր պատժոց, ոչ վասն զի այնպէս արար, այլ վասն զի այնպիսի 'ի ձեռն վարուց իւրեանց պատրաս-տեցան: Նման սպասորինի, եղջաւրք, անօթս կոչէ և զպա-տուհասեալսն, անօթս և զողորմեալսն: «Եթէ կա-մէր Տէր ցուցանել զբարկութիւնն և ծանուցանել զզօ-րութիւնն իւր, որում համբերեաց բազում երկայն-մտութեամբ 'ի վերայ անօթոցն բարկութեան պատ-րաստելոցն 'ի կորուստ, զի ցուցցէ զառատութիւն բա-րութեանն իւրոյ 'ի վերայ անօթոցն ողորմութեան»: Եւ զնա արար անօթ՝ որ զբարկութիւնն ընկալաւ, և զմիւսն որ զմարդասիրութիւնն, զի ցուցցէ եթէ իւրա-քանչիւր ոք ինքեամբ կոչէ զբարկութիւնն և զողոր-մութիւնն:

Նոյն Թերևս ընդդիմամարտեսցէ ոք ձայնիս այսմիկ, մա-նաւանդ բանիս որ ասէ. «Ի վերայ անօթոցն բարկու-թեան պատրաստելոցն 'ի կորուստ», ոչ 'ի վարուց իւ-րոց ասելով, այլ ինքն Տէր պատրաստէ: Պարտ և ար-ժան է գիտել, զի Համբաւաւորքն ոչ 'ի բնութենէ, այլ 'ի յօժարութենէն լինի: Եւ զայսորիկ ընկալ զնկատա-Թիւնն, զի Համապատասխն 'ի յօժարութենէն կամաց

արժանաւոր պատժոց և կամ մարդասիրութեան ։ Սոյն առաքելոյ. «Այսուհետև, եղբարք, զօրացարուք, ուժաւորք լերուք, հզօրացարուք, հաստատեցարուք»։ Արդ եթէ անդէն 'ի բնութենէն էր հաստատեալ, ընդէ՞ր ասէր ինձ՝ հաստատեցի՛ր. քանզի հաստատիլն բարւոյն զինչն արժանաւոր կատարելոյն է ։

Ընկալ զմխիթարութիւն բնութեան իրացն. Զօր բնութիւն բերէ, և զհաստատութիւն կանոնք գործեն. յաղագս որոյ և հաստատունն կալեն զանզգուածոյն գործ։ Որպէս բնութիւնն բերէ զասր և խնամութիւնն հաստատէ զյատուկ եկեալն 'ի բնութենէն, նոյնպէս և մտատեղծ զգնութիւն, և ընծեռեալ յօժարութեանն։ Որ է մեր բնութիւնս. և 'ի քեզ է այսուհետև հաստատել զքեզ անհաստ պատուոյ և կամ անարգութեան։ Ներկող ես. առնէր 'ի բնութենէս զասրն, ընկալեալ զյօժարութիւն. որպիսի ինչ կամիս ներկանել՝ ներկանես զասրն. եթէ ծիրանի՝ թագաւորական լինիս և որդի թագաւորի. և եթէ ներկանես զբնութիւնդ գործովք խաւարի, լինիս որդի խաւարի և գիշերոյ. ոչ բնութեան զայն առաքելով, այլ յօժարութեանց զանազանութիւնն պատարագանելով։ Որպէս ոչ ինչ է անմեղութիւն 'ի հարկէ, թէպէտ և յաճախեն հակառակութիւնքն։

Սատանայ չարահամն ողջամ ինչ էր 'ի զօրութեան մերում, լսեմք այսուհետև խնդիրքս և անձնարկեցան միւսքս։ Զաւլեաց հաստատեաւ, և մի առնու ոչ կարեմ։ Եթէ ոք միջնի ընդդէմ ասել նմա, այսպէս ասա. ոչ զխանեմ հաստատեալ զգիրս. ընկալ զխնդիրդ, զի դու բժշկեցայ ես։ Զի և որ 'ի բժշկէն բժշկի, ոչ զգեղոյ բնութիւնն քննէ, այլ փութայ եթէ ծրագիր բժշկեացի. Եթէ առնիցէ ցքեզ միջնորդն. զի՞ դու ասող, որպէս վերագալստեանցդ, ասա նմա. զհարկ ուսոյն՝ զխանեմ, բայց եթէ որպէս իցէ՝ պատմել ոչ կարեմ. զի ոչ եթէ բժշկեցի, այլ բժշկեցայ. անխնամահարեալք զանձնոդ կալ։ Այլ եթէ առաւելիցես զնոս հակառակելով, ասասցիր. վասն զի իցէ բժիշկ, և ոչ հրահանգեցայ զբժշկականն, եկ առ բժիշկն, և պատմեսցէ քեզ զղեղոցն զօգնականութիւնն. Այլ քեզ բժշկութիւնն ընդունել, և այլ փառս մատուցանել յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Ի ՀԱՐԻՒՐԱՊԵՏՆ

Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար ախտա-ցեալ հանդերձեալ էր մեռանել, բայց ոչ վախճանե-լոյ յաղագս ախտին. հանդերձեալ էր մեռանել, վասն զի մարդ էր. այլ ոչ մեռաւ յաղագս աղաչանացն, զի ա̃ծ ասէր հանդերձեալ էր լինել։ Բ՛նութիւնն զիւր պարտսն պահանջէր. այլ տէր բնութեանն զաւուրցուածն ատացողին 'ի ձեռն հաւատոցն պարգեւէր։ Ա՛ռ բնու-թեանն հարկաւորապէս առ վախճանն բռնադատէր. այլ յինքն ձգէր հաւատն ընդ մահուան մարտնչելով և զմահուն զօրէնս բաժանելով։ Եւ մի ինչ թերահաւա-տեր թէ այսչափ կարէ հաւատ, մինչ զի և զմահու կա-պանս խզել, և 'ի նոցուն 'ի վիհից անդրադարձութեանցն գա-գլխոյն 'ի վեր կոչել։ Հաւատ և զդժոխոց դրունս բա-նայ, և երկնից փականս դնէ, և զբնութեան օրէնս փոփոխէ, զհրոյ զօրութիւն շիջուցանէ. և 'ի բաց ցոլ-ցուցանէ, և զմահու չափ բերկրեցուցանէ։ Ոչ անվկայից ա-սեմ. 'ի սուրբ գրոց զձեզ հաւանեցուցանեմ։

Ասացի եթէ հաւատ զդժոխոց զդրունս բանայ և երկնից փականս դնէ. ընկալ զապացոյցն յայտնապէս։ Տես ինձ զերանելին զՊետրոս, որ բանիւ զդժոխոց զդրունս երաց, և զՏաբիթա 'ի խաւարչտեայ 'ի վեր կոչէ. քանզի զի միայն ասաց "Տաբիթա, արի", և փականակապեալ դը-րունք դժոխոց բացան և տարտարոսին նիգք 'ի բաց ան-կան, և մեռեալն քան զկենդանին արագագոյն լուաւ։ Պարծեալ Եղիաս մարգարէ 'ի նոյն հաւատ վստա-հացեալ ասաց. "Ոչ եղիցի անձրեւ, բայց եթէ բերա-նով իմով". և պղնձանայր երկին, և անջրդեալ լինէր երկին յերիս ամս և յամիս վեց, և երկիր երկաթի բնութեամբ զամլորդական պտուղն ուրանայր։

Գիտասցե՛ք որքան ինչ զօրէ հաւատ։ Մա՛րդ յերկրի հրամայէր, և ա̃ծ յերկինս հնազանդէր զհրամանն. մահկանացու բերան բարբառէր, և ա̃յ կամքն հաւա-նէին գործով հաստատել զբանն. "Փակեցայ, ասէ, զեր-կինս զերիս ամս և զվեց ամիս". ապա ուրեմն փականք

Եկին երկնից մահկանացուի մարդոյ բերան բարեպաշտ հաւատով զարդարեալ։ Ինքն Եղիաս գործեալ 'ի հրեղէն կառս հանդերձեցաւ ելանել, և իբրև զթռչուն յերկնայինն կայանսն թռեաւ. յաղագս որոյ և մինչև ցայժմ անճաշ եկաց մնաց մահու, ոչ օրինօք բնութեանն, այլ շնորհօք միայն և զօրութեամբ հաւատոյն անխոնարհելի պահեալ։

Այլ զինչ պիտոյ է յաղագս առել. Ենովք 'ի կենաց 'ի կեանս հանդերձ մարմնով ամբարձաւ, մահու և ծերութեան և բնութեան հաստատուն առաւել յաղթեաց։ Պօղոս այլ և յաղթապարգևս առնել յաղագս հաւատոյ, այլ առաւել զգանս, զի մի յազգաւն առաւելից. Պատմել զի նորայն բանք քրիստոնէից լսելեաց ձեռաց ոչ յազգուն, այլ փոփոխագունն առնել զխօսն. ոչ զմայլումն, այլ հեշտութիւն. առակայն 'ի յառաջիկայն երթայք է։

« Հարիւրապետի ուրումն, ասէ, ծառայ չարաչար հիւանդ հանդերձեալ էր վախճանել, որ էր նմա պատուական »։ Պատուական էր ծառայն տեառնն. քանզի թէպէտ և աւելասատացութիւն կենցաղոյս ծառայ առնէր, այլ բարեմտութիւն տեառնն զազգակցութիւն բնութեանն ոչ ուրացաւ. ոչ արհամարհէր իբրև զծառայ, այլ սիրէր իբրև զհամազգի. ըստ մարդասիրութեանն զծանրութիւն ծառայութեանն ընծեալ թեթևացոյց։

Լուարուք և ուսարուք ծառայից տեարք. մի իբրև օտարոտիս բնութեան արհամարհէք զծառայս, և մի իբրև 'ի թշնամիս անիրաւս վարիք յազգակիցսն, հանեալք երանելոյն Պաւղոսի որ ասէն. « Տեարք, ծառայից զհաւասարութիւն ընծեռեցէք յապաղելով զսպառնալիսն, գիտասցեալք զի և ձեր և նոցա տէր յերկինս է »։ Սիրեաց մն ծառայ լինել, զի մի ծառայել ուսցիս։ Բարեմտութիւն պահանջէս 'ի ստրկէն. բարեմտեաց և դու առ տէրն. տանջես զմեղուցեալն, և դու մի մեղիցես, զի մի տանջիցիս յԱյ. Թողութիւն ես տաս համազգւոյն, և դու մի խնդրեր թողութիւն։ Առաջադրեալ է քեզ աւետարանական բանն առնելով. « Այսպէս աղօթեցէք դուք. Հայր մեր որ յերկինս ես, թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք պարտապանաց մերոց »։ Ուսարուք որպէս և դուք մն ծառայել

համեղերձեալք մարդասիրաբար ծառայեցուցէք. և որպէս յայս մարդասիրութիւն խնդրէք, մարդասիրութիւն ցուցէք հանդիպելեացն:

Մեր. ասէ. « Հարիւրապետն յաղագս Յիսուսի լուեալ առաքեաց առ նա զծերս Հրէիցն »: Ոչինչ լսելով. եթէ բանիւ բժշկէ, բանիւ պատուհասագործէ, բանիւ զմեռեալս կենդանացուցանէ, բանիւ զդևս հալածէ, բանիւ զամենայն վճարէ: « Այն զի կենդանի է բանն իմ, զօրաւոր և հաստատ քան զամենայն սուր երկսայրի »: ոչ բանիմաստ, ոչ զեղս մերձեցուցանէ. այլ բան 'ի նմանէ առաքի և գործն կատարի: Տես որքան էր 'ի մէջ հարիւրապետին և Հրէիցն զանազանութիւն. քանզի նա լուաւ և միայն 'ի սոսկ լսելոյն հաւատաց և հաւատացեալ աղաչեաց իբրև զամն. իսկ նոքա տասնից ամաց տեսանելով զսքանչելիսն՝ զսքանչելագործն ուրանային, թէպէտ և աչք քան զլսելիս զօրաւորագոյնք են: Հզօր են աչք քան զլսելիս, այլ չարութիւն սիրտին անձէին վարդապետս, և յաղագս այնորիկ նոյն դատաստանաւն զամն ուրանային:

« Առաքեաց, ասէ, զծերս Հրէիցն աղաչելով զնա, որպէս զի եկեալ ապրեցուսցէ զծառայն նորա »: Առաքեաց զծերսն. ոչ յաղագս արհամարհանաց հրաժարէր լինելն երթալ, այլ դանդաղէր լինելն յաղագս ինքեան պաղատել վասն մեծութեան պատուոյն Յիսուսի: Կարծէր զինքն մարդ ապականացու 'ի մարդոյ ապականացուէ, և զՅիսուս տէր յայս, միածին որդի յանձնէ հօրէ. յաղագս այնորիկ զերկիւղածն յերկիւղածութենէն չարժեալ առաքէր, զառաքելականն հրամանն նորա քան զառաքելոյն կատարէր: « Վտանգի ոք 'ի ձէնջ, աղօթեսցէ. բարեմիտ ոք, սաղմոսեսցէ. Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն և աղօթեսցեն 'ի վերայ նորա, և եթէ մեղս ինչ իցէ արարեալ՝ թողցի նմա ».

Առաքէր զերիցունսն առ նա, աղաչելով զնա՝ որպէս զի եկեալ զծառայն նորա կեցուսցէ: Կայ և ընդ ախտակցութիւն պատճառ սքանչացեալ, զի չհիւանդացեալ ծառայն իւր ոչ արհամարհէր, և ոչ վարկպարազի գործ վարկանէր զփրկութիւն նորա. այլ զայնքան փոյթ առնէր զնմանէ, որքան եթէ ոք իւրոց ցաւոց ցուցանիցէ:

Այս առաքինութիւն անձն է տեսանել որքան անձնէ զգօնն, մինչ զի բարեխօս առաջէ յաղագս բժշկու-թեանն։ Գովեաք զմնութեանս զուգապատուութիւն, և ոչ արհամարհէր իբրև զստրուկ. այլ ցաւակից լինէր իբրև զծառայակից, գիտելով թէ հասարակաց տէր է ա̃ծ։ Այս հարիւրապետն այսպիսի։

Բայց յոլովք 'ի փարթամացն մինչդեռ ողջ են ծա-ռայքն, պահանջեն աշխատութիւն և պահանջեն ա-ռանց ներելոյ. իսկ յորժամ հիւանդանան, և ոչ մի-ինչ հոգ տանին զնոցա. այլ անկեալ 'ի հիւանդութիւն, առանց այցելութեան կայ մնայ յերկիր ընկեցեալ, ոչ հայի տէրն, ոչ այց առնէ տիկինն։ Այս եթէ լինիցի տիկ-նոջն մերձ եղեալ, ոչ առնէ այց իբրև ազգակցի, այլ ահաւոր աչօք հայի, եթէ ու բանիւք խօսի, ծանր հպար-տութեամբն զազգակցութիւն բնութեանն ուրանայ։ Մ՛է ընթերցայք զգիրս, ո՞չ գիտէք զինչ ասէ սուրբն Պաւղոս. “Ահա իբրև աչք ծառայից 'ի ձեռս տերանց իւրեանց, և որպէս աչք աղախնոյ 'ի ձեռս տիկնոջ իւ-րոյ, այնպէս են աչք մեր առ տէր ա̃ծ մեր”։ Պատկա-ռեալ 'ի կերպարանէն, երկիր 'ի գերեալն, օգնական լինէր հիւանդացելոյն։ Փրկիչն ոչ նախ մարդ ծնաւ, այլ ա̃ծ մարմնածին. այլ սակայն յաղագս մարդկան մարդ ներելոյ լինել. և զո՞ մարդ հրաժարէր յազգակցելն, անզգամա-կից առ համանգմըն լինելոյ։ Յորժամ անբան կենդանիք կաղանդեցէ, զարմանս առնես յաղագս ախտոյիցն. իսկ յորժամ բանաւոր կենդանին քոյ ծառայն հիւանդա-նայ, 'ի բաց ընկենուս, անարգես անձնես, ոչ զարմանես։ Այսպէս արդեօք զի բանաւորքն են և սպաս առնեն, յաղագս այնորիկ արտաքս մերժես։ Յաւէտ բարի է մարդ ա̃յ. այլ “պատուական է, ասէ, այր ողորմած”։ Բայց մեք ոչ հայիմք 'ի գրեալսն. այլ զօտարսն կերակրեսցէ երբեմն 'ի մարդկանէ փառս որսալոյ, և որ 'ի ներքոյ են՝ թողումք 'ի սովոյ մեռանել և ցրտոյ սատակել. որ յոյժ փախուստ հատուցմանն է՝ ոչ ածելով զմիտս։

Բայց ոչ այսպիսի ոք և հարիւրապետն, որ ամենայն տերէք էր արթուն, որ ճշմարտապէս վարէր առաքինու-թեամբն, և զինքն պահէր իբրև զեղ սրբոյ, որ խո-նարհութեամբ եր լի և ա̃ծասէր ողորմութեամբն լուսաւորեալ. յաղագս որոյ և գովեսցուն առ Յիսուս

առաքէր ։ Այլ նոքա՝ յոլով բարեմտութեամբ բարեխօսէին, բաւական առաջի արկանելով թախանձանս ․ այս, ասէին, արժանաւոր է որում առնես զշնորհսն, բարեմիտ է որ անձն զպարգևեղ, ոչ է անարժան քում մեծաւորութեանդ ․ “ Զի սիրէ զազգս մեր, և զժողովարանն նա շինեաց մեզ ”: Ճշմարտապէս բաւական մեծապաշտութեանն ծանօթութիւն, բաւական և մտացն բարեաց նշանակք ։ Ո՞րք այնոքիկ ․ առ ինձ սէրն, և առ մարդիկ հարազատ խնամքն ։ “ Սիրէ, ասէին, զազգս մեր ”․ յայտ է եթէ զօրէնսն ընդել, վասն զի քուն Օրինաց սէր է ․ “ Եւ զժողովարանս նա շինեաց ”, որ առ ինձ բարեմտութիւնն է՝ ցուցանելով ։ Քանզի որ զԱծ զտունն կազմէ, իբրև զերևելի իւն արձան առ նա սիրելոյ զտաճարին զայն շինէ ։ Տես զիարդ բարի գործք 'ի կարևոր ժամու յիշատակեալք բազում հանդարձակութիւն բարեխօսացն ընծեռեն ․ վասն զի ամենայն ուրեք զեղեցիկ գործք բաւական թախանձանք են ։ Այլ նոքա այսպէս աղաչէին ։

Իսկ Յիսուս ընդունէր զպաղատանսն, ոչ յերկայնաձիգ պատասխանելով, այլ զհարիւրապետին զհաւատսն ընդունելով ։ Այլ յառաջեցեալ երթայր ընդ նոսա, թերևս աղերսօք 'ի հեղգագոյն և ս փոյթ, և զգնացսն քան մնջերան հանդարտ առնէր ․ ոչ յամելով 'ի բարեգործութիւնն, այլ ժամանակ տալով, զի որ 'ի ներքսն էր հարիւրապետին սէր՝ հրապարակաւ արասցէ, զի քարոզեսցէ զանտառանելի հաւատն 'ի յանդիմանութիւն անհաւատիցն, զի զպայծառ և զմաքուր և զյստակ բանն յայտնի արասցէ ։

Քանզի “ մինչդեռ հեռի էր 'ի տանէն, ասէ, առաքեաց առ նա հարիւրապետն զծառայսն իւր ասելով․ Տէր մի աշխատիր, վասն զի ոչ եմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես ”: Յառաջնումն ուրոյն յօժարութեան առաքէր զերիցունսն ․ այլ և զայն առնելով ինքն կալ մնալ ոչ ներէր ․ զի 'ի ներքս յինքեան զմտածէր թէ որքան է զանազանութիւն պատուոյն Յիսուսի, առաքէր զծառայսն աղաչելով զնա և ասելով․ “ Մի՛ աշխատիր, ոչ եմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես ”: Ով խոնարհութեանն, ով արթնութեան հարիւրապետին ․ ոչ զանխայեալ 'ի նմանէ ամ 'ի մարդ

ծածկեալ, ոչ զանխլացաւ միածին բանն մարմնոյն ըզգեստու ծածկեալ։ Տեսանէր զտաճարն և իմանայր զբնակիչն. ոչ անգիտացաւ զոտերն 'ի ծառայի պատկերի, զԹագաւորն գերւոյ դիմօք, փոքրն անսահմանելի մեծութեամբն։ Ընդէն վաղվաղակի զարմանայ Յիսուս, և վկայէր նմա զծայրագոյն զհաւատն. քանզի ըզքաջութիւն ոգւոյն տեսանէր զհարիւրապետին, ըստ որում և ցաւակից ծառային երևեցաւ և հաւատացեալ 'ի փրկիչն ցուցաւ. ընկալաւ և միւս ևս յառաջադիմութիւն և զբարձրագոյն հոգւոյն մտածութիւն, ըստ որում ասէրն. «Տէր, ոչ եմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես»։ Որպիսի ոք և Պետրոս յորսոյ ձըկանցն հիացեալ և 'ի միտ առեալ զմեծութիւն զօրութեանն Քրիստոսի, աղաչէր զնա և ասէր. «Ի բաց երթ յինէն, վասն զի այր մեղաւոր եմ ես»։ Բայց ամենայն իրօք որ յաղագս Պետրոսին է բան՝ թողից այժմ, և որ ինչ 'ի յղետականին՝ պատմեցից։

«Բորոտութիւն լեալ, ասէ, բորոտ առնէ զանկեալսն ընդ ախտիւ»։ Բորոտութեան նմանեցան որքինք և արատք և պաղպաջմունք, և դժուարաւ զանազանելիք են ախտքս այս բազմաց, մանաւանդ 'ի սկզբան ախտին. յաղագս որոյ օրէնքն կամին քահանայքն տեղեակ լինել այնոցիկ։ Այլ անդ քննեալ եթէ բորոտութիւն է, ամենայն որ 'ի տանն կայր՝ պիղծ երևէր. վասն որոյ բազումք յառաջագոյն 'ի բաց հանէին զկարասին, և ապա զքահանայն կոչէին։

Զայս մտածութիւն երանելւոյ հարիւրապետին առեալ, հրաժարէր զմերձ երթալն նորա. «Ոչ եմ բաւական թէ ընդ յարկաւ իմով մտցես»։ Յոլովս ընդ յարկաւս ընդ այսու գիտեմ. զիմ զմեղս հրաժարեմ որպէս 'ի դատաւորի գալստենէ նախ քան 'ի բաց մերժել։ Գիտեմ զքեզ քահանայքըն ամենեցուն առաջնորդ և հօր քահանայապետ. և վասն այնորիկ ասացի՝ ոչ եմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտցես դու։ Երկին աթոռ քո և երկիր պատուանդան ոտից քոց, ո՞ր տուն տարցի զանբովանդակելիդ։ Ոչ ունիմ յարկ զերկին, եթէ ընդ իմով յարկաւս մտցես. ոչ ունիմ Թագաւորական ապարանս, եթէ զԹագաւորդ երկնից ընկալայց. Զիա՞րդ ընդ ձեղուամբ ընդունիցիմ որ էարկ

'ի Ջուրց զվերնայարկս իւր. զիա՞րդ ապաքէն օթեվանս
իմ տաղաւարակից ընկալցի որ թզաւ զերկինս չափէր.
որ երկինս տարցի որ միանգամայն զերկինս և զերկիր ընուս
'ի միասին. ոչ եմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով
մտցես: Արդ և զճարտարագործի մեռ յափշտակեմ, և իբրև
'ի դատաւորի զալստենէ զարհուրիմ: Աղացելոյ ես հօ-
գւոց, քննիչ երիկամանց, փորձես զխորհուրդս, դատա-
ւոր մտաց: "Ոչ եմ բաւական եթէ ընդ յարկաւ ի-
մով մտցես": Երկեայ յինէն. "այլ ասա բանիւ, և
բժշկեսցի մանուկս իմ": Իսկ արդ ո՞չ արդեօք թուիցի
քեզ ասելն՝ բանիւ միայն ասա, յայտնապէս գիտել՝ ե-
թէ "Բանիւ տեառն երկինք հաստատեցան և հոգւով
բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա", և եթէ
ամենայն բանիւ լեալ յարմարին և դարմանին: Ասէ
զի յանձայնն մատուցանէին լուսաւորեալ այրն, միան-
գամայն զՔրիստոս 'ի մարմնի տեսանելով, զնոյն և որպէս
ոչ ճանաչէր: "Ասա բանիւ միայն": Գիտեմ զինչ
յառաջագոյն ասաց իմաստունն Սողոմոն յաղագս քո.
"Ոչ բանջար, ասէ, և ոչ այլ դեղ բժշկեաց զժողո-
վուրդս քո, այլ բան քո տէր որ զամենայն բժշկէ":
Ասա բանիւ. գիտեմ զքո բան խօսիս, և որքան սաս-
ցեալ ես զօրութիւն, զի բանիւ զամենայն արարեալ
կատարեցեր: Ոչ կշտացաւ հայր 'ի զքեզ ծնանելն, ոչ
վտանգիւ առնելով, ոչ աշխատիւ գործելով. ասա բա-
նիւ միայն, վասն զի բան քո առ ամենայն դիւրահնար
գտանի. ոչ զօդ հնչեցուցանէ, այլ զքո կամսդ յայտնէ:
Արդ ասա բանիւ միայն. տուր վճռանակ 'ի հաստատու-
թիւն[1] լողացն:

Տես զիմաստութիւնն. զերթալոյն յապաղութեանն աղա-
չէր, և զգիտութիւն ոչ բովանդակէ. և վասն զի զգիտու-
թիւն նորա վկայէ, և 'ի մտանելոյն ընդ յարկաւն հրա-
ժարէ: Աչ զայնպիսի իմաստուն մտածութիւն փոխանոր-
դէ այլ իմն մեծագոյն. վասն զի այնպէս 'ի զօրութէ 'ի
զօրութիւն այրն յառաջանայր, և աղքատանայր 'ի նմանէ
արժանաւորութիւն առաւել մտածութեանցն, մանկա-
նայր 'ի տեսութեանցն յաճմանս: "Ասա բանիւ միայն
և բժշկեսցի մանուկս իմ: Քանզի և ես այր մի եմ

1 Ցօրինակն 'ի հիւանդացեալն. եղաւ ըստ յանձին:

Digitized by Google

ընդ իշխանութեամբ կարգեալ. ունիմ ընդ ինեւ զինուորս. ասեմ սմա երթ եւ երթայ, եւ այլում թէ եկ եւ գայ, եւ ծառայի իմում՝ արա զայս եւ առնէ,, ։ Գիտեմ, ասէ, զի զամենեցուն զիշխանութիւն զգեցեալ ես. իբրեւ զմի յամենեցուն առ մեզ եկիր. եկիր առ մեզ իբրեւ զմեզ, որով մեք, զամենեցուն ունիս իշխանութիւն. քանզի ասէ սուրբն Պաւղոս. “Հրամանի քում մնայ տիւ, զի ամենայն ծառայք քո են,, ։ “Ունես, եւ ծով ամբոխի, յանձնես, եւ խաղաղանան ալիք. սաստես, եւ դադարեցուցանես զհողմս. զմեռեալս կոչես, եւ մեռեալն արագագոյն քան զկենդանին լսէ ։ “Ասա բանիւ, եւ բժշկեսցի մանուկ իմ ։ Քանզի եւ ես այր մի եմ ընդ իշխանութեամբ կարգեալ,, ։ Աստանօր յերկրպագանելի կողմանէն զամենայն ինքնիշխանութեան յարձակութիւն նշանակէ 'ի լաւագոյնս եւ 'ի վատթարագոյնս, եւ զփոփոխումն նորա յայտնէ. “Ունիմ, ասէ, ընդ ինեւ զինուորս,, . որք 'ի մարդկանէ զանազանեք եւ ազգի ազգի ողջացեալ խորհուրդք զինուորս կոչէ ։ Գիտէ եւ երանելին Պաւղոս զայնպիսեան զինուորս անուանել. “Հաճեալ եմ, ասէ, ընդ օրէնս Այ ըստ ներքին մարդոյն ։ Տեսանեմ եւ միւս եւս օրէնս ընդդէմ զինուորեալս օրինաց մտաց իմոց եւ գերեալ զիս օրինօք մեղացն,, ։ Արդ յիրաւի ուրեմն ասէր՝ ունիմ ընդ ինեւ զինուորս. ոչ հակառակ ինձ, այլ ընդ ինեւ. ասեմ նմա երթ եւ երթայ, եւ այլում եկ եւ գայ. ոչ իշխեմ, այլ իշխեմ խորհրդոցս ։ Ուստի թէ եւ հարիւրապետ վասն այնորիկ կոչեցեալ էր, իբրեւ իշխան եւ ինքնակալ խորհրդոցն[1] ։

Ունիմ, ասէ, ընդ ինեւ զինուորս՝ զանազան խորհուրդս, զորս 'ի բաց խլելով փոփոխեմ, եւ ոմանց տեղատէր լինել հրամայեմ. արտաքս հանեմ զվատթարագոյն, եւ 'ի ներքս կոչեմ զբարին. մերժեմ զչարութիւն եւ մեծացուցանեմ զառաքինութիւն, հաւանեալ Պաւղոսայ որ պատուիրէն եւ ասէն. “Խոտորեցիր 'ի չարէն եւ արա զբարիս,, ։ Վասն այնորիկ ոչ ասէ յառաջագոյն եկ եւ ապա երթ, այլ նախ երթ եւ ապա եկ ։ Քանզի եթէ ոչ հալածեսցես եւ փախուսցես, ոչ կարես 'ի ներքս մու-

1 Ցայդ վայր հասուցեալ յոյն բնագիրն, կիսէ զՃառս ասորաբանն մեկնութեանս, ոչ ինչ վասն միւսոյդ հատուածոյն ծանօթս առնելով ։

ծանել զաստուածութիւնն. զի և ոչ նորէ իսկ հարա-զատ ամուսինն ընդ հարճին բնակել: “Միեւ սմա, ա-սէ, երթ և երթայ, և այլում եկ և գայ, և ծառայի իմում արա զայս և առնէ”: Մարմնոյ քաղաքապետ է, աստ իշխեմ և մարմնական ախտից. ոչ ծառայեմ ո-րովայնի, ոչ հաւանիմ հեշտութեանց, ոչ մոլորեցու-ցանէ զիս արբեցութիւն, ոչ յաղթիմ յանօրէն ախտոյ. օրինօք այ̃ յօրինեմ զխորհուրդս իմ, և խորհուրդքն զօրէն քաջ երասանակալի անսաստակու[1] եղանել մարմ-նոյ ոչ անսամ, այլ առ ուղղութիւն բարեպաշտութեանն վարէ զընթացսն:

Այս լուեալ Յիսուսի զարմացաւ, և դարձեալ որ ընդ-հետ երթայր ամբոխին՝ ասաց. “Ամէն ասեմ ձեզ, և ոչ ՚ի միում ումեք այսքան հաւատս գտի յԻսրայէլի”: Ոչ ասաց ամենեւին ոչ գտի, այլ այսքան ոչ գտի. թե-րեւս ասացէ զք ՚ի լուղայն: Ոչ ունէին արդեօք Հրեայքն այնքան հաւատս. ոչ ունէին, զի առանց կարծեաց վը-կայէին տէրունական դէմքն, և անսաղտ ասացելոյն էր հաւատն: Հրեայքն տագտկային ընդունել զփրկիչն իւր զա̃ծ, և սա ճանաչէր զբարեգործն. գիտէր որ ինչ կայր ՚ի նմա, ոչ կարծէր որ ոչ գոյր. գիտէր որ ՚ի զօրութե-նէն պայծառացաւ զօրութիւնն. գիտէր ընդ իշխանու-թեամբ երեւալն զզօրութիւնն և զիշխանութիւնն. գի-տէր զայ̃ իմաստութիւնն, զայ̃ բանն, զՀօր որդին, զան-ծնելին այ̃ զմիածինն Յիսուս: “Ոչ գտի այսքան հաւատս յԻսրայէլի” ասէ: Օ քաղարտէին զՅիսուս, որպէս թէ ժամանակացուցանէ զհայրենի ճոխութիւնն: Իսկ հարիւ-րապետն և զիշխանութիւնն Յիսուսի խոստովանէր, և զամենակալ ճոխութիւնն նորա ոչ ուրանայր. առ ծա-ռայն ախտակցութեամբ առատ ընկալաւ զգթութիւն, զայ̃ գիտութիւնն և զյաւիտենական կենացն վայելումն:

Ամէն ասեմ ձեզ, ասէ, և ոչ յումեք գտի այսքան հաւատս յԻսրայէլի: Դարձան զորս առաքեացն ՚ի տուն, և գտին զծառայն ողջացեալ: Ըստ Մատթէոսի ա-ւետարանին ասէ. “Ասեմ ձեզ, զի յարեւելից և յա-րեւմտից եկեսցեն և բազմեսցին ՚ի գոգս Աբրահամու, Սահակայ և Յակոբայ յարքայութեան երկնից”: Ա-

1 Այլգալես յօրինակին:

չմնայէ որք 'ի հեթանոսաց անկարծաբար հաւատա-
ցին 'ի Յիսուս։ Իսկ եթէ պարտ է և ըստ պատմու-
թեանն ընդունել, ոչ խոտան է յարևելից եկեալ ըղ-
մոգսն իմանալ. լուր աւետարանչին որ ասէ. «Ահա ա-
հա մոգք յարևելից եկին»։ Եկին և հեթանոսք յա-
րևմտից, անխտրորէն հաւատով և եռացեալ սիրով օ-
ժանդակեալք. և զայս սորայն Դաւթայ մարգարէութիւն
կանխախօսէր. «Ճանապարհ արարէք այնմիկ, ասէ,
որ նստի ընդ արևմուտս, տէր անուն նորա»։ Ահա որ-
դիքն արքայութեան, որք 'ի հաւատն ոչ կացին մնացին
Հրեայքն, ընկեցցին 'ի խաւարն արտաքին. վասն զի
բարձցի արքայութիւն երկնից 'ի նոցանէ և տացի ազգի
որ առնիցէ զպտուղ նոր։

«Ապա ասէ Յիսուս ցհարիւրապետն. Երթ, և որպէս
հաւատացերդ եղիցի քեզ. և բժշկեցաւ մանուկն 'ի ժա-
մուն յայնմանէ»։ Ողջահաւասար ընկալար հաւա-
տոցդ զպարգև, ընկալ և զզեղեցիկ խոստովանութեան
յաղթանակ զմանկանդ առողջութիւն. ոչ փոքր տա-
ղանդ տացէ մրցանակ բարի յօժարութեանդ վարձ,
այլ որ քան զբազում ոսկի լաւագոյն է՝ զառողջութիւն։
«Որպէս հաւատացերդ եղիցի քեզ»։ Ոչ որպէս ես կա-
րեմ, քանզի ամենայն կարելի է ինձ. «Քրիստոս Յի-
սուս ինձ զօրութիւն և ինձ իմաստութիւն». ըստ իւրա-
քանչիւր ուրուք հաւատոյ չափէ զշնորհն։ «Որպէս հա-
ւատացերդ եղիցի քեզ». իմոյ պատուասիրութեան
պարգև, և քոյոյ հաւատոյ ուղղութիւն. իմ դեղդ փրկ-
կութեան, և քո հաւատոյդ մրցանակ. քո բան, իմ
գործ. քո հաւատ, իմ զօրութիւն. որպէս հաւատա-
ցերդ, եղիցի քեզ։ «Եւ բժշկեցաւ մանուկն 'ի ժամուն
յայնմ»։ Յորում ժամու. յորում ասացն, յորում
զնշանն եդ, յորում զբանն առաքեաց. ոչ եկաց մնաց
ժամանակ ինչ ախտն, վասն զի երագագոյն էր քան
զհիւանդութիւն դեղն, և դեղն էր բանն։ Արա-
գոյն քան զհիւանդութիւն բժիշկն գտաւ. վասն զի
այն բժիշկ և ժամանակաց արարիչ է, յաղագս այնո-
րիկ և ժամանակաց ոչ ծառայէ, այլ բանիւ զյոգնա-
ժամանակեայ ախտս բժշկէ։

Ապա ուրեմն առանց յապաղելոյ մերձեսցուք առ բը-
ժիշկն, ցուցցուք նմա զվէրս, մերկացուսցուք զանձանց.

զմեզ, նմանեսցուք հարիւրապետին հաւատոյ: Նա որ զինչ ասէ զնմանէ փրկիչն. «Ամէն ասեմ ձեզ, և ոչ յումեք այսքան հաւատս գտի յԻսրայէլի»: Տես զիարդ իւրաքանչիւր ուրուք զմերձ հաւատոյն կշռէր զսէր. համեմատելով զզօրի զմիամտութեանցն՝ զզգաստութիւնն հարցափորձէ. «ոչ գտի այսքան հաւատս» ասէ: Արդ նմանեսցուք երանելոյ հարիւրապետին. այնմ հաւատելի հաւատոյն. նախանձեսցուք ընդ նորա առ ծառայսն գթութիւն. ուղղապէս խորհեսցուք վասն Յիսուսի պատուհան հաւատոյն և զգործս առաքինեսցուք, զառաքինութիւն համեստեսցուք, զի այնպէս և զարքայութիւն երկնից ժառանգեսցուք շնորհօքն Քրիստոսի այս մերոյ. ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ՅԱՐԱՐԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԵՆԷ ՄԻՆՉ ՅԱՒՍՈՐՍՆ ԷՐ[1]

Եւ արդ մի՞ որ ոչ սոսկածուածոյն մեզ զաղէր լինիցի. քանզի որպէս զԱստուած սոսկալի ած, նոյնպէս և զՅիսուս չմեռեալ ի նմին զանգուածոյ, ի նորին խնամոտութենէ, ի նմին կարգէ, ի նմին էութենէ. այլ խորհուրդ Թընամեցին սորա չէր զմարմինն և զմիտսն զՅիսուսի: Նանզի որ վերկեալ հայեցելոյն եղեալ անմահ, և միշխանութեան Հօրն Թիւնն ժառանգորդեալ ի ձեռաց ամենակալին և զմարդկայինն տէրունական իշխանութեան ունել ժառանգեալ, և որ չէր երբեմն արժանի ձայնին անզամ լսելոյ, զնորին իսկ գործ ժառանգել՝ յԱստուծոյ վերժամանել պատուիր զմիտսն միաբանութեան, և յարութեն Թիկանց զարձուցանէք Թշնամականն: Նա թէ զիարդ կամ որպէս՝ լուր:

Նանզի չար խորհրդակից օձն եկեալ՝ ասէ ցկինն. «Զի՞ է զի պատուիրեաց ձեզ Աստուած՝ եթէ, ի պտղոյն զիտելոյ զգիտութիւն բարւոյ և չարի մի՛ ուտիցէք. քանզի

1 Զմերոնակը հնգեցուն որի- [illegible]

զի գիտէր ած թէ յորում աւուր ուտիցէք 'ի նմանէ, բանայցեն աչք ձեր և լինիցիք իբրև ածք ճանաչել ըզբարի և զչար„: Տեսանե՞ս, լսողդ, զմեղմխութիւն թշնամւոյն, տեսանե՞ս զորոգայթս պատրողին, տեսանե՞ս որպիսի բազմահնար իցէ, տեսանե՞ս որպիսի բանիւք որսացաւ զԵւա: "Յորում աւուր ուտիցէք 'ի փայտէն, ասէ, բանայցեն աչք ձեր և լինիցիք իբրև զածս ճանաչել զբարի և զչար„: Ով չար խորհրդոց պատրողին. ով անարգութիւն զոր մատուցանէր կնոջն 'ի ձեռն նենգաւոր բանիցն. ով դարանակալութիւն որ հեղուցանէ յատակս գժոխոց զայն որ 'ի բարձրութիւն էր վերացեալ այ մարդասիրութեամբն: Եւ եթէ թափուր գայր հպէր առ Եւա նենգաւորն, որպէս և իւրոյ լոկ էր պատիւն, այլ կերպարանաւ օձին խօսէր ընդ կնոջն. զի թէ էր եկեալ որպէս և էրն, առժամայն ատեաքս վազէր Եւա և առ իւր այրն ընթանայր: Այլ զկերպարանս օձին զզեցեալ բազմահնարն՝ այսպիսի բանս նիւթէր նմա. մատիր, ասէ, մերձեցիր 'ի փայտն յորմէ պատուիրեաց ձեզ ած չճաշակել. տեսցես զնա գեղեցիկ եղեալ առաջի աչաց քոց 'ի տեսանել, և քաղցր 'ի կերակուր ճաշակելոյ բերանոյ քո եղիցի. ահաւոր երևիս գազանաց և թռչնոց, և ես ահաւորագոյն երևեցից նոցա յետ ճաշակելոյն. արդէն մարդկային կերպարան զքեզ տեսանեն զգեցեալ, այլ իբրև 'ի փայտէն ճաշակիցես՝ զկերպարանս այ զգեցցիս, և եղիցիս գիտել զբարի և զչար: Եւ ինչ յետ այնորիկ յաչաց ձերոց թագչիցի, և ոչ 'ի լսելեաց ձերոց զանխլասցի ինչ. այլ ամենայն երևելիք և աներևոյթք յայտնիք առաջի ձեր եղիցին:

Մոլորի կինն զհետ բանից պատրողին, և սկսանի ըզխորհուրդս օձին գրել 'ի սրտի իւրում: Ապա մերձենայ առ այրն ասելով զայսոսիկ բանս. դառնագոյն քան զլեղի. զի է զի պատուիրեաց մեզ ած չճաշակել 'ի փայտէն յայնմանէ. քանզի գիտէր ած եթէ յորում աւուր ուտեմք 'ի նմանէ, լինիմք իբրև զած ճանաչել զբարի և զչար: Ով խորհուրդ չարութեան, ով բանք դառնագոյն քան զլեղի. ոչ ետես նա աչօք իւրովք ըզլցումն կենաց, ոչ ճաշակեաց բերանով իւրով զքաղցրութիւն մարդասիրին, ոչ շօշափեաց ձեռօք իւրովք զդուռն

լուսոյն ։ Յաւաղ քան զմխիթարութիւնն զայդն օտարա-ցոյց լոյս ։ յաւաղ քան զմանկականացն զԹագաւորն տը-նանկացուցանէր ։ յաւաղ քան զծնանելն ուստերս և դստերս՝ որոշումն ծննդոցն պատրաստէր ։ յաւաղ քան զորդեծնութիւնն՝ որդւոյ զանէծս նիւթէր ։ յաւաղ քան զհամբերնակութիւն՝ յարքայութեան օտար արար ։

Ահ անմտութեանն, ահ մոլորութեանն ։ Հաւանե-ցուցանէր զայրն բանիւք իւրովք, և առեալ 'ի պտղոյն մատուցանէր մոլորելոյն, խլուցանէր յառաջս գժոխոց զհզօրն գազանաց և Թռչնոց ։ գերէ զմիտս՝ որ քան զա-մենայն որ 'ի ներքոյ երկնից իմաստունն, շփլուցանէ զլոյս աչացն՝ որ հանապազ զԱծ տեսանէր ։ արկանէ կա-ծիս 'ի միտս այնորիկ՝ որ հանապազ ընդ Այ խօսէր ։ քակտէ զձեռս որք օրհնեցին զԹռչունս երկնից և զգա-զանս երկրի, և զնոցին կոչեաց զանուանս ։ Լինի Թա-գաւորն տնանկ, մեծատունն մուրացկան ։ որ բարեկամա-կան սիրով ընդ Այ խօսէր, իբրև գող ընդ ծառովն Թա-քուցեալ ։ իշխանն ծառայ ։ որ սուրբն էր սրտիւ, ամե-նայն աղտով լցեալ ։ որ հոգւովն փայլէր, խաւարապատ լինէր ։ որ իբրև զարեգակն լուսաւոր, միգապատ ամե-նեւին ։ զահաւորն դիւաց իբրև խաղ առաջի անկեալ ։ ղօղուն ստեղծեալ, իբրև ծառայ դղեալ ։ զփառաւորն և զպատուականն անարգ և նուաղեալ ։ Այսմ որոյ ո-րեկքը, վերաբերեալ զպատմութիւնս զայս, տեսցուք ըղ-խօրս գրոցն ։

"Ահա ետես կինն զի բարի է ծառն 'ի տեսանել և քաղցր 'ի կերակուր և հաճոյ աչաց հայելոյ, և առ 'ի պտղոյ նորա եկեր, և ետ առն իւրում" ։ Տեսանե՞ս կե-րակուր որ զմահ միջնորդեաց ։ տեսանե՞ս կերակուր որ 'ի գժոխս ձգեաց ։ տեսանե՞ս ճաշակ որ 'ի դրախտէն օ-տարացոյց զճաշակողն ։ Ահա որք մի ոք որ[1] միանգամ միտս ունիցին, զիմաստս փայտին մեղադրութիւն[2] ա-սել ճաշակողին ։ Որպէս Թագաւոր ոք որ պատուէր տայցէ դռնապանին ոչ տալ Թոյլ ումեք յիշխանացն մտանել 'ի սենեակ Թագաւորին՝ եթէ ոչ ինքն հրա-մայեսցէ, և մեծ ինչ խորհուրդ նմա միայնում յայտ-

1 Երկուս օր. որ միտս ունիցին ։

2 Երկուք օր. զմեղադրութիւն տա-ցեալ ճաշակողին ։

նեցէ և ծածկել հրամայեցէ, իսկ նա ելեալ հրապարակեցէ զխորհուրդ Թագաւորին ամ և ինքն կամեցի, ապա ինձ, ոչ կրեսցէ պատիժս դատապարտանաց այնպիսին որ զհրաման Թագաւորին արհամարհեաց։

Սոյնպիսի ինն եղեւ Ադամայ. զամենայն ետ նմա ած 'ի վայելումն, զառողջական, զպատուզն, զաղջկունս, ըղձրախտին վայելչութիւնս, զարեգակն, զլուսին, զաստեղս, և միայն 'ի միում փայտէ հրամայեաց զգուշանալ առ 'ի ցուցակ տէրունական հրամանացն, և պատուէր առ 'ի հնազանդութիւն արարչին։ Իսկ նորա և ոչ այնչափ պարգեւօքն յագեալ և ոչ զիշխանութիւն ճոխութեան իւրոյ պատուեալ և ոչ զգաղջութեան իւրոյ զազատութիւն պահեալ, անօրինին և Թշնամւոյն արդարութեան լուաւ. և մերժեցաւ յանհնազանդութիւն, և եղեւ ապամանդեայն[1] մահկանացու. իշխան դրախտին՝ մերկ 'ի նորին բնակութենէն. որ ընդ ճանապարհս արդարութեան ընթանայր, ուրախարար եղեւ դիւաց. որ հոգւով սրբով էր լցեալ, այսիւք չարեօք լցեալ. որ անդաստին մարգարէութեանն լցեալ, և ոչ զինքն անգամ ճանաչէր Թէ որպիսի ոք իցէ։

Իբրեւ վերացաւ[2] յանցաւորութիւնն մահաբեր, և տեսեալ Ադամայ և Եւայի եթէ մերկք իցեն 'ի ձեռն անհնազանդութեանն, ծանեան զմերկութիւն իւրեանց։ Յորժամ զած այօրհնեալ պատուիրանն անմահութեան էին զգեցեալ, զմերկութիւն իւրեանց ոչ տեսանէին. իսկ յորժամ եկն յանցաւորութիւնն և վերացաւ զարդ անհնազանդութեանն, յայնժամ տեսին զառականս իւրեանց։ Այս ապա զինչ։

"Լուան, ասէ, զձայն գնալոյ տեառն այ 'ի դրախտի անդ ընդ երեկս, և Թաքեան Ադամ և կինն իւր յերեսաց տեառն այ"։ Հատուց համարձակութեան պատճառ. եկն յանցաւորութիւնն, և Թաքչին յերեսաց ամենակալին։ Սոյնպիսիք իցեն որ 'ի մէջս զառածանին[3]։ Ոչ որպէս թէ պատանկեսցի ոք կամ չնացցէ և ելանիցէ 'ի դրաց պատնկին, և պատահիցէ առն կամ

1 Երկու օր. Ադամ անդէն. յոյնն անմահն։

2 Այսպէս ամենայն օր. նոյնպէս և զինի. խմա որպէս 'ի վերագոյն չափ հասեալ. յոյնն նրացակամ խոփարեցաւ։

3 Երկու օր. զատանձին։

Digitized by Google

կեաց զի զիւրեանց խօսս խօսիցին, որ զմեղսն գործեաց՝ համարի թէ վասն իւր ինչ խօսքն կարգեցան՝ խորշի և ամաչէ, այնպիսի իմն եղև Ադամայ և Եւայի։ Քանզի բազում անգամ գնալով նմա 'ի դիտաւորին, և ոչ երբէք խորշեցան 'ի նմանէ կամ ամաչեցին. այլ յորժամ գործ-մեղացն և յանցաւորութիւնն կատարեցան, յայնժամ թագաւորն յերեսացն նմա որ զամենայն տեսանէ. համա-բերին ազատել ինչ, այլ ընդդիմանայն եկաց 'ի նոսա իմաս-տութիւնն այն։

Վասն որոյ իբրև ոչ ինչ ունէին պատասխանի տա-լոյ և ոչ համարձակութիւն առ ծածկագէտն, խնդրէին որ քննէ զսիրտս և զերիկամունս՝ ասէ ցԱդամ. "Ա-դամ, ո՞ւր ես"։ Պատճառս պատասխանի տալոյ նոցա ասէ՝ ո՞ւր ես։ Ահա 'ի ծառայն կերպար և ցանկութեանց ոչ համեր. ահա և զյանցաւորութիւն արարեր, և յա-տամանատեղին 'ի բաց անկար։ "Ադամ, ո՞ւր ես"։ Իսկ նա ասէ. "Զձայն զնալոյ քո 'ի դրախտին և եր-կեայ, քանզի մերկ էի և թագեայ"։ Տեսանես զմե-ղացն զաւակն, տեսանես զյանցանացն զառակսն, տե-սանես զպատասխանին 'ի ներքուստ ընդ Ադամայ՝ ամ-բաստանելով զնորա ստարանացն յայտ։

Իսկ ասաց նմա. "Ո՞ պատմեաց քեզ եթէ մերկ ես. բայց եթէ 'ի ծառոյն յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել, կերար 'ի նմանէ"։ Զիս թողեր զստեղ-ծիչս քո և առ թշնամին հպեցար. թողեր զիս զզգուշա-ցուցիչն քո, և խաբեբային հնազանդեցար։ Ես քեզ պատուիրեցի 'ի նմանէ միայն չճաշակել, և դու բան-սարկուին խորհրդակից եղեր։ Իսկ ասէ Ադամ. "Կինն զոր ետուր ընդ իս, նա ետ ինձ 'ի ծառոյն անտի և կե-րայ"։ Ահա պատճառ, որ իրաւունս ոչ ունիցի. ով պա-տասխանի որ ոչ օգտեցուցանէ զմեղանչականն. ով բազ-բանն զանմտութեան որ ոչ փրկէ զդատապարտեալն։ Զկինդ ետու քեզ օգնական և ոչ հրամանատու, հա-մանման և ոչ տիկին, համակամ և ոչ տիրուհի, ընդ-կից և ոչ իշխանուհի, ընդ ձեռամբ և ոչ բարձրագոյն, խոնարհել քեզ և ոչ իշխել։ Նորա որպէս թշնամւոյն հաւանեալ և ինձ ստորնագանեցեր, ընկալ այսուհետև կատարելապէս զանէծս զոր ոչ կարասցեն շարժել եր-կայնութիւնք յաւիտենից, զորս ոչ ոք կարասցէ ան-

ցանկել զսահմանօք. որ զմարմին զգեցեալ իցէ և ննջեալ յաշխարհս՝ զհատուցանելն անցանել ոչ կարէ: Ասեաց Ադամ, « քանզի լուար ձայնի կնոջ քո և կերար ՚ի ծառոյն յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել և կերար ՚ի նմանէ, անիծեալ լիցի երկիր ՚ի գործս քո. տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց. փուշ և տատասկ բուսուսցէ քեզ, և կերիցես ըզբանջար վայրի. ՚ի քրտան երեսաց քոց կերիցես ըզհաց քո մինչև դարձցիս ՚ի հող ուստի առար. զի հող էիր և ՚ի հող դարձցիս »: Ա՛նիծիցս այսմիկ, որ երևելեացս զօդուածն հարկանիցէ. ո՛ բարբառոյն, զոր անբաւ յաւիտենիցն շարժել ոչ կարասցեն. ո՛ նզովիցս, զոր բազմաժամանակեայ աշխարհս հնացուցանել ոչ կարաց. ո՛ բանիցն, յորմէ թագաւորք և իշխանք, մեծամեծք և տնանկք սարսեն և երկնչին:

« Այլ եհան ապա ա̃ծ զԱդամ և զկինն ՚ի դրախտէն փափկութեան գործել զերկիր ուստի առաւ. և հրամայեաց ա̃ծ քերովբէից և բոցեղէն սրոյն պահել զճանապարհս եդեմ դրախտին »: զի մի ոք ՚ի մարմնաւորագեցից և որ զթանձրութիւն մարմնոյ զգեցեալ ունիցի մտցէ ընդ դուռն: Այս բանն ահռականն արգելին եղև յարախնամական, և մնջիւս այս եմուծ զմահ յաշխարհ. և թագաւորք ՚ի ձայնէս յայսմանէ զարհուրին և իշխանք դողան, մեծատունք սարսեն և աղքատք երկև պարտապանաց իմն անձն ունին մահու:

Օ՜ հինչ արդեօք գործէր Ադամ. արտաքոյ դրախտին նստեալ և բրեալ հանդերձ արտասուօք և գործէր հեծեծանօք, քրտամբք հատեալ զմարմինն, ՚ի տապոյ ջերմութեան տապացեալ և գիշերայցն սառնամանեացն սառուցեալ, և ՚ի լալոյ ոչ դադարէր գնաւ, զխրատեալ յորոյ փափկութենէ տառապեալ, և հառաչէր ՚ի խորոց սրտին, բանս տրտմականս յիշէր բերան նորա, և ընդդէմ Եդեմայ զաչսն ամբարձեալ՝ զգլուխն շարժելով յաճախագոյն և լալով, ու աղաղակէր աշխարհէր ; և անմխիթարելի սգով մեծաւ ձայնիւ գոչէր ասելով:

Ա՛յսքան ՚ի քոց բարեաց զրկեցայ, ով ամենապայծառ դրախտ. ո՛ դրախտն ուրախութեանց զեղջո՛ հողի իմ ատեանակեալ զզեղեցկութիւնդ քո. ո՛հ դրախտ զըւարճութեան վայելէի ՚ի ներքոյ քո նստեալ: Օ՛ հարդ

ուրախանայի 'ի բուրմանէ ծաղկանց քոց. զիարդ կայր առաջի իմ անաշխատ սեղանն. զիարդ բխէր ինձ խառնելին միշտ կենդանութեան. զիարդ հեշտացուցանէին զհոգի իմ երգք հրեշտակացն. զիարդ փայլէր առաջի իմ լոյսն հրաշափառ: Ամենայն արարածք իբրև թագաւորի պատիւ մատուցանէին ինձ: Ամենայն գազանաց ահարկու կարգեցայ. ամենայն թռչնոց որոց կամէի հրաման տայի. ամենայն եղանակք իբրև զտէր տեսանէին զիս: Օտարանամ 'ի նոցանէ իբրև յանցաւոր. արտաքսահանեցայ 'ի փափկութե̃ քումմէ որպէս մարդասպան. որոշեցայ յուրախութենէ քումմէ որպէս օրինազանց. փոխեցայ 'ի բնակութենէ քումմէ որպէս փախստական: Ո՜ինչ արդեօք յառաջ լացից. զզրկումն 'ի գեղեցկութենէ քումմէ, եթէ զանապական ուրախութիւնն. զանհոգակա՞ն զկերակուրն, եթէ զանհաս փառսն. զօտարութիւն 'ի հրեշտակաց, եթէ զթագաւորութեան մերկացումն. զվայելչութիւն տնկոցն, եթէ զլուսոյդ քո զանմնացութիւն. զահաւո՞ր պայծառութիւնն, եթէ զմերկութիւնս զոր ունիմ. զառակսանսցս մանուանս, եթէ զնախատանսն հրեշտակացն. զանհնազանդութիւնս գազանաց, եթէ զանսանոց թանձրութիւնս. զո՞յ բարեկամութիւնն, եթէ զհոգւոյն օտարութիւն. զմշտնջենաւո՞ր երանութիւնն, եթէ զհանապազորդ տրտմութիւնս: Որպիսի կոծս կոծեցայց, որպիսի ողբս ողբացից, ընդ որո՞ւմ խանդարհաթեան ողջունեցից, որպիսի ձայնից սկիզբն արարից, որպիսի լալիւն լացից, որպիսի հեծութիւն 'ի վեր առաքեցից: Ո՜ որպիսի երկունս դառնացուցից, զքերոբէն երեսացս, եթէ զփշոց բուսումն, եթէ զերկրի անէծսն: Ոչ հանդուրժեմ տրտմութեանցս, ոչ համբերեմ հեծութեանցս, ոչ լսեմ ընդդէմ փափկութեանդ քո նստելով տեսանել զքեզ: Օտար եղէ 'ի ձայնապարհաց քոց, օտար եղէ 'ի բնակութենէ քումմէ, օտար 'ի մշտնջենաւոր վայելչութենէ քումմէ, օտար յո̃յ անձամբ զանձն կացուցի խմելք կամօք, օտար արտահեռ լինիմ քում տեսութեանդ: Այլ ոչ ևս զփափկութիւն քո տեսանեմ, ոչ ևս յերանութեանց քոց քաղցրանամ, ոչ ևս տեսլեամբ քո յագեցայց, ոչ ևս 'ի փայլմանէ քումմէ պայծառացայց, ոչ ևս ընդ խաղանօք քո-

ակք բնակեցայց։ Ամենայն ինչ մնոտի եղև, ամենայն անցին զինև որպէս հովանի, անցին իբրև զերազ ամենեքեան, ամենեքեան կորեան յաչաց իմոց իբրև զշեղեալ։ Կարիցե՞ս արդեօք դու գտանել աղաչել զստեղծիչն, ով ամենապայծառ դրախտ, թերևս չքաւանեցայց 'ի քէն։ Խոնարհեցո զոստանկս քո և անկիր առաջի մարգասիրին, և հնչմամբ տերևոց քոյոց գոչեա զօրութեամբ։ Քանզի փառաւոր եղեր հրամանաւ արարչին, հա անոյշ եղեր հրամանաւ անեղին, զի համարձակութիւն ունիս իբրև զտուն այ̃ մերոյ, զի կացցես մնասցես բացեալ սիրելւոյ զքեզ։ Ահաւասիկ բերան իմ փառակեաց յաղաղակելոյ, ահաւասիկ լեզու իմ դադարեաց 'ի խօսելոյ, ահաւասիկ և կոկորդ իմ լռութեամբ կապեցաւ. իբրև անձնասպան դատապարտեալ եմ, իբրև թշուառական մերկացեալ եմ, իբրև անօրէն արտասահմանեցայ, իբրև երկրածին մատնեցայ երկրի ուստի ստեղծայ, 'ի նոյն դառնամ և ոչ ևս տեսանեմ զգեղեցկութիւն քո։

Ապա դարձեալ 'ի կինն կոյս՝ զնախատինս ստացեալ և դառնացեալ ոգւով գոչէր և ասէր. Ընդէ՞ր զանմահութիւն իմ հնձեցեր, ընդէ՞ր զբարձրս խոնարհեցուցեր, ընդէ՞ր զամենիշխանս մուրացիկ արարեր, ընդէ՞ր զթագաւորս աշխարհի ծառայ կացուցեր, ընդէ՞ր զլուսաւոր զաչս իմ կուրացուցեր, ընդէ՞ր զպատմուճանն զոր ոչ նիւթեցեր՝ մերկացուցեր, ընդէ՞ր ընդ պատիւն իմ նախանձեցար, ընդէ՞ր զառաջին գեղեցկութիւնն իմ թխացուցեր, ընդէ՞ր անուն՝ կեանս կոչեցի քեզ, և դու մահ եղեր ինձ, ընդէ՞ր 'ի հրեշտակաց օտարացուցեալ և ընդ դիւաց բնակեցուցեր զիս, ընդէ՞ր 'ի թագաւորութենէն զրկեցեր զիս և 'ի ծայրագոյն աղքատութիւն իջուցեր զիս, ընդէ՞ր զականջս իմ խլացուցեր՝ որք զաստուածային զձայնն լսէին հանապազ, և այժմ որպէս իժի խցեալ են՝ որ ոչ լուիցէ զձայն թովչի ճարտարի։ Ես հանգարտեմ անիծիցն, յառաջ քան զփառաւորութիւն զարձակումն 'ի քէն խնդրեմ, յառաջ քան ըզբնակութիւն զգնայն խնդրեմ, յառաջ քան զծածկութիւն 'ի բաց կալ 'ի քէն աղաչեմ։ Ո՞րք ցորեան առաք հնձեցից, ո՞րք արարեալ ալիւր՝ հաց պատրաստեցից, և նստեալ անհոգութեամբ նովաւ յագեցայց, ո՞րք ա-

ամօթոյ հեծութեանն մեղուցելոց ․ երբ 'ի մարմնոյ խոնջ 'ի բաց ընկեսցուք զանէրկ թղթերւոյն, երբ զառաւօտուն մարմնոյ ծանրկեսցուք, երբ ազատեսցուք զոտս իմ չխոցոտել առ 'ի յոյ հրամանսն եկեն փշոյն բանակեաց, երբ ծածկեսցէ աշխարհի մեք-բել զգեցցուք երեսաց խոնջ զոր մեծմարդեցեր խնձ յանմահութենէ, ով կին ։ Դու այժմ անապականա ննջելով զերդ թշուառութիւն ոչ ունայնես ․ այլ յորժամ ծնցիս որդին, յայնժամ և մինն զառաստանեանն 'ի քեզ ծագեսցի ․ յորժամ հանդերձեալ է մանուկն յարութնէ քումմէ ելանել, յայնժամ յիշեսցես զբանն իմ ․ յորժամ երկանցն ցաւոց հանդերձեսցես, յայնժամ մինն մանկանցն 'ի քեզ ծագեսցէ ․ յորժամ աղաչարեսցեն զքեզ ցաւքն, յայնժամ զնոյ զանուանն յիշեցես ։ Ոչ և որ ասցէն նմանն ասէր Ադամ առ ընկերն իւր թախծեալ անձամբ ․ այսպիսի բանիւք հացուցանէր զԱդամ զորհանդարձ, և անփոփարանելի նոյնիւ ողջոյն ․ զայս ամենայն արտաքութիւնս ունելով նախատադեն, զմեծատանք բարեխութիւնն բաղձում աշխատութեամբ կատարէր ։

Նմանք զանեղծուե Ադամայ, որդեանքս ․ ծանեաք զպարտիս խոստովանութեան նորա ․ ունաք զնորա պարգեւ որ տուաւ նմա յոյժ ․ տեսէք և ընդ յանցանացն զորաշուեմ ․ ունաք և զնորա զամենեփիթար ասացն ։ Տեսէք զնա ընդդէմ դրախտին նստելով ողբացեալ և կարացեալ ։ Ասացուածք մինչև ցայս վայր զբանս[1] ։

## Ի ՋԱՏԻԿՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ

Որք բարեացն են ցանկացողք, ոչ խնչ են հեռի 'ի ծառայութեանն, սիրելիք ․ քանզի որքան ոգին զտանեն ընհայցելին, այնքան առ ծառայ փափկանքերկրին մարմին ․ 'ի դիշերի առաւօտ ունեանցն զբաղձալին իւրև ծառայէ զաղքատս, և 'ի առաւօտեան ունելով 'ի անդի շղթեալ բաղմաշարժ աշօք շուրջ հայելով խնդրեն զուենչացեալ սիրելին ։ Նա զոր օրինակ ու զերեմեաք 'ի տօթ ամառանս յան-

1 Աւելորդն մասն զոր թողեալ է 'ի բաց, է ընդդէմ զարդարանք կանանց ։

Digitized by Google

Ջուր երկիր ընթանան ծարաւոյն ըմպանելեաց և զաղբիւրս խուզեն, մինչ զի բազում անգամ և 'ի բլուրս ընթանալով դիտեն եթէ ուրեք աղբիւր իցէ, և եթէ տեսանեն զնա 'ի հեռուստ՝ զուարճանան, և ձգելով առ նա զուղեգնացութիւնն ձեպին, և երթեալ յաղբիւրն զծարաւ 'ի ջրոյն դադարեցուցանեն և զաշխատութիւնն լուծանեն, այսպիսիք են և քրիստոսականք անձինք. 'ի տունջեան զանձկալին իւրեանց զՔրիստոս գործովք բարեօք հայցեն, և 'ի գիշերի աղօթիւք խօսին ընդ նմա, այլ և 'ի քուն ընդ նմա գնան, երազ[1] տեսանեն. և եթէ յանուրջս տեսանեն զնա, հրճուին և ցնծան որպէս և ծարաւեալքն յորժամ գտանեն զաղբիւրսն. և զարթուցեալք դարձ 'ի քուն կամին մտանել, նմին տեսութեանց 'ի քունն հաղորդեսցին: Այսպիսի ինն էր Զակքէոս որ այժմ մեզ յաւետարանի ընթերցաւ: Վասնզի տեսաք զնա ընթացեալ և անձայնն ցանկութեամբ բորբոքեալ և 'ի ծառ ելեալ՝ զՔրիստոս շուրջ հայցելով, որպէս զի տեսցէ զկենդանաբար աղբիւրն: Եւ տեսեալ Զակքէի զսէր, զտեսութիւնն զադարեցոյց, բայց զսիրան 'ի փափագումն առաւել ևս բորբոքեաց:

Վասնզի "մտեալ, ասէ, տէր Յիսուս շրջէր. և ահա այր որում անուն էր Զակքէոս, և սա էր մաքսաւորապետ և մեծատուն, խնդրէր տեսանել զՅիսուս ով ոք էր, և ոչ կարէր յամբոխէն". և որքան ոչ կարէր տեսանել զտէր, այնքան առաւել փափագմամբ բոցակիզեալ լինէր: Ոչ կարէր տեսանել յամբոխէն, վասն զի փոքր էր հասակաւ. և ժամանելով յառաջին ելանէր 'ի ժան-

1 Երկաթագիր օրինակն թէպէտ և հնութեամբն պատկառելի, այլ յայամ վայրի աւրբերի 'ի մեր օրինակէն և 'ի յունականէն. և յերազի միշտ ընդ նմա բնակեալք ցնծացեալ հրճուին որպէս ծարաւեալքն յաղբերս ջուրց. և յորժամ զարթնուն 'ի քնոյն՝ հեշտ և անուրջ նոցա այն է տեսանել զան զարթնութիւն: Այսպիսի ոմն 'ի որբոց յեղէլ մեծ տարրաննայր, և 'ի գիշերի հանապազորդ յետոյ և զարթնուն որպէս ընդ մեծ խօսէր: Վասն որոյ և այժմ 'ի տեղւոջ և զերանելին զնա-տեսակն զԶակքէոս բազում բարեօքն առաջին արժանել, 'ի մէջ ընթացեալ որպէս ընթերցաւածն մեզ յաւայանէ: Վասնզի տեսանէմ զնա յաղթ և ձեռաց 'ի ծերացութիւնն, առաւել ևս յաղթ նորա որ 'ի ծառն ելեալ՝ անձայնն հասակին տեսալ լինէր. և զնա յուր հասակին խորոյ 'ի ծառն 'ի թզենին աղօթեալ ելանէր. զի որ մարմնոյ աղօթ լինելոյ, որբոյն հայեցուածովն եղեւ:

Քանզի մտեալ ասէ. տէր յերիքով շրջէր:

Digitized by Google

տաթզենին, զի տեսանիցէ զՔրիստոս, քանզի ընդ այն հանդերձեալ էր անցանել։

Տես զցանկութիւն առնն, ով սիրելի. չև ունէր և ոչ վարդապետաց դիպեալ, այլ պարզաբար լսելով յառաջս Քրիստոսի, 'ի լսելոյն ցանկայր տեսանել զնա։ Զակքէոս որ հասակաւ մարմնոյն փոքր էր և մտօք հոգւոյն մեծ, հայցէր տեսանել զՔրիստոս, բաղձայր տեսանել զնա 'ի մարդկանէ զերկնային շնորհելով. խնդրէր տեսանել զհրեշտակացն արարիչ, և զերկնային և որ 'ի վերայ երկրի է լոյս ճառագայթաձիրն՝ առ իւր մարդկայնոք գնացեալ։ Հայցէր տեսանել զիարդ արեգակն արդարութեան յամեն մարմնոյ նստելով, զհաւատացելոյն զաչս որոնց լուսաւորէ. փափաքէր տեսանել զՔրիստոս զգեղեցիկ ձևն, զբաղձալի իրսն, զքաղցր անուն Քրիստոս, որ անուանք զիւրս նշանակէ. խնդրէր տեսանել որ յարգանդի կուսին առանց սերմանն բուսաւ հակըն. ցանկայր տեսանել զծիրանատիկին ոչխարն, որոյ արիւնն զաշխարհ գնեաց, և զեղջն որ յԱդամայ մինչև 'ի կատարած մերկացեալք էին ծածկեաց։ Բաղձայր տեսանել հիւանդացեալն զառողջութիւն, ծարաւեալն զառատածաղկեալ աղբիւրն, քաղցեալն զերկնային հացն. փափագէր տեսանել ոչխարն զհովիւն, մոլորեալն զճանապարհն, խաւարեալն զճառագայթն, որ ոչն ունէր զանուշութիւն բարեպաշտութեանն՝ զանծախութիւն զանոյշ քաղցրութեանն. ցանկայր տեսանել զերկին զիւր Թագաւորն, խորտակեալ անօթն զբրուտն. բաղձայր տեսանել որ մեռելոց զկեանս պարգևէր, զզարթուցիչն Ղազարու։ Ով մեծային ցանկութեանն, ով բարի փափաքմանցն, ով սերտ տենչմանցն, մանաւանդ թէ քրիստոսաթև զոր ունէր զանձն յերկինս 'ի վեր հանէր. քանզի անդէն վաղվաղակի մեծային փափաքմամբ վառեալ գնա յերկրէ ծառագնաց պատրաստէր։ Եւ ես այնուհետև զերկիր տեսանել նման էրէր, և ոչ ընդ մարդկան շրջել Թաղացուցանէր. այլ առ սէրն Քրիստոսի վերանալ զերկնաւորան ցուցանէր, երկնանոյն տենչայր. և յայտ ցանէ առ նա ընթանայր յարփութայրն, և ելանելով 'ի ծառն շուրջ հայցէր զՔրիստոս և մտօքն 'ի վերոյ քան զամպս ելանէր։ Եւ տեսեալ զՔրիստոս Զակքէի, յարմարագոյն ասաց. "Զաքեզ համբարձի զաչս իմ որ բնակեալդ ես 'ի յերկինս,,

Digitized by Google

Այսպէս Օտաքէոս զտէրն և սաստեալ եւս ցանկութիւն բորբոքեցաւ. բուռն եհար զսրտէ նորա, և այլ յայլմէ եղև. փոխանակ մաքսաւորի նախանձաւոր, փոխանակ անհաւատի հաւատացեալ և փոխանակ գայլոյ ոչխար հնազանդեալ: Ո՞վ որ այնպէս ցանկայ հօր կամ մօր, ո՞վ որ այնպէս սիրեաց զկին կամ զորդիս որպէս Օտաքէոս զտէրն. 'ի նոցին իսկ իրացն գոյ հնար փորձել: Վասնզի զամենայն ինչս իւր վասն Քրիստոսի աղքատաց բաշխեաց, և զորս զրպարտեաց՝ չորեքկին ետ նոցա: Ո՛վ օրինակ բարւոյ աշակերտի. ով հնազանդութեան վարդապետին և ամենայն զօրութեանն, որ երևելովն միայն իւրոյ աշակերտին 'ի գործ եած: Զև եւս զվարդապետական բանն Օտաքէի առաց տէրն. այլ երևեցաւ միայն փափագողին, և հաւատոյն զօրութիւն 'ի սրտէ ցանկացողին 'ի վեր ձգեալ լինէր: Այնպէս իմն լինէր առ-ռատեսին. մերձեցաւ առ տէրն պաղատելով նմա զի բժշկեսցէ, և ոչ անսայր մերձենալոյ ձեռինն, այլ ինքն մնտեալ բուռն եհար զհանդերձէն զազանեաւ, և զօրութիւն բժշկութեանն 'ի մերձենալն իբրև 'ի աղունդ մտանէր:

Օտաքէոս անգիտանայր զոր ինչ առնէրն, ամենայն նախանձուն բերեալ և հզօր ցանկութեամբ բորբոքեալ՝ 'ի ժամանաթզենին ընթանայր: Իսկ տէրն խորհրդական իմն տեսանելով առէր՝ էջ 'ի ժամանաթզենւոյդ, փութա էջ. գիտեմ զքոյ զանձինդ փափագումն, գիտեմ զքոյ զամենայն զտենչանսդ, էջ այտի 'ի ժամանաթզենւոյդ: Զիշեա զի Ադամ մերկացեալ ընդ թզենեաւն թաքչէր, և դու կամելով ապրել 'ի թզենւոյդ մի ընթանար: Պարտ է ինձ զայդ թզենի գօսացուցանել, և այլ տնկել խաչիւ պիտանացու ծառ. 'ի նա զնացիւք հոգւոյդ ընթացիր, քանզի անտի պատրաստաբար յերկինս ընթասցիս և ամբարձցիս: Օդովաւ օձն թիւր շուրջ պատեալ է, 'ի դմա ծածկեալ է, 'ի դմա որջացաւ. փութա էջ նախ քան զշնչէն յանձն Եւայի և հաւանեցուցանել զնա 'ի հեշտ ցանկութեանցն ճաշակել: Ճեպեցիր էջ նախ քան զմերկացուցանել զքո զանձինդ առնլով զնորա մնոտի մտածութիւնն. փութա մինչդեռ ես մերձ կամ իջանել, քանզի 'ի տեսանելն զիս նա կարկեալ և սանձեալ է. Ճեպեցիր ի-



Digitized by Google

ջանել, ոչ կամիմ զքեզ թողուլ 'ի վերայ ժանտա-թշնամւոյդ, ոչ անտարժանեմ զքեզ կորուսանել. իմ ես ու-խտոր, սա իս ընծայ. Արդ վաղվաղակի, քանզի պատրաստ է արժան է ինձ չարչարացուցանել զթզենեաց զայդ 'ի սատա-նայական ձեռնարկութեան, զի զտանջեսցեալ զա զեղեւեցիկեացն 'ի պատուհաս փրկութեան պայծառացի. Արդ արի և յա-ռաջեա 'ի տուն քո. պատրաստ է ինձ 'ի տան քում մնալ այսօր, վայել է ինձ անդ հանգչել. քանզի ուր հաւատ, ուր սէր, անդ հանգչիմ. Պահեսցեն զինչ հանդերձեալդ եմ առնել. կամիս տալ զամենայն ինչս քո աղքատաց, և յառաջագոյն հատուցանել զայս զգրպարտեցեալս. և այսպիսիւք առաքելով զազատեմ։

Սա փութացեալ Զաքէոս իջանէր, երթայր 'ի տուն իւր և ընդունէր զՅիսուս, լցեալ խնդութեամբ կայր առաջի և ասէր. "Ահա զկէս ընչից իմոց տամ աղքա-տաց, և որքան ինչ զրպարտեցի չորեքպատիկ հատու-ցանեմ"։ Այսպէս ասաց Զաքէոս, և ոչ այնպէս ան-գործ կայր. և ասէր ոչ գնալով և ոչ նստելով, այլ կա-լով, զի ցուցցէ զանձին իւրոյ զանխափանելի զգաստն. կայր այնքան ոչ մարմնով, որքան եթէ խորհրդովքն. կայր և ասէր, զի ցուցցէ եթէ եռանդեալ հոգւովն ան-դրդուելի խնամով 'ի հաստատէր. քանզի գիտէր ուր արքայութեան է և ուր հանգերձեալն էր հնձել, և ասէր. "Ահա զկէս ընչից իմոց տամ աղքատաց, և որքան զրպար-տեցի՝ չորեքպատիկ հատուցանեմ"։ Մի խոստովանութիւն մեղաւոր 'ի յաւակ սրտէ եկեալ, խոստովանութիւն ան-պատկառելի առանց ամօթոյ 'ի փառս Այ մերձ կացեալ, զհաւատոյն բարբէր և արդարութեամբ ծաղկէր. որում արդարութեան արժանաւորս արարեալ և զմեզ բարեխ-ցանեն ամ չնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում փառք Հօր Հանդերձ սրբով Հոգւովն յաւիտեանս. ամէն *։

* Յայս վայր և յայն բնագիրն հատուցեալ կինէ զՔնար Հասմո-նայն մերոյ որբնակերս. իսկ այլ Թզեկեանն որբնակացն զինք բառեցն և արդարութեամբ ծաղկէր, որ երկաւ-զին կայ 'ի վերին, յաւելեալ և զայլ բանս՝ կցեն ընդ նմա և զմասն ինչ 'ի յետոյ Ճառիցն, Ջերմա-գեալ եկեղեցի արայ չէք յաւելուածն, որբնակ զայս. և արդարութեամբ ծաղկէր, և որբնակ բարբ և յետոյ առաք-նութեանց առաջեալ բաղում շնորհ եհաւ եկեղեցւոյ ճռեալ նորա, որով ոչ ծանօթոյ բարեխօսութեամբ գովելոյ։ Քանզի ծոցն իւր եկեղեցի և ճառ-քան, և ոչ նշխարն մերձէ անեկոյ ծաղկեց յէջ 740։

Digitized by Google

# Ի ԿԻՆՆ ՄԵՂԱՒՈՐ ԵՒ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ո՛վ երկրպագելեաց եկեղեցի փրկչին մերոյ, սիրելիք, որոնք արժանաւոր բարերարութեանցն զգալեցայք։ Գիտասջիք եւ մարդ կոչեսջիք զնա եւ բժշկարան անուանեսջիք. եւ ոչ վրիպիցիք ՚ի պատշաճէն. մարդ կոչեսջիք զնա յաղագս հոգւոյ եւ անթառամ ծաղկանցն որ ՚ի նմա, եւ բժշկարան վասն բազմապատիկ առողջութեանց. զի որ յորում մեղաւորացն վիրօք զանձինս մեր խոցոտեցաք, ըստ փրկական պատուիրանին զորէն զեղջ մերձեցուցեալ, յամենայն ախտից զերծեալ ՚ի բաց վճարիցեք։ Եւ երբեք զի եւ բժշկարան կոչեսջիք զեկեղեցի յաղագս պատճառ ժամանակիս. քանզի կրօնաւորիսն հոգեւորական, ով եղբարք, որպէս Պօղոսի զմեղ մարդկելով եւ Քրիստոսի նահատակ ընտիր ընծայելով. եւ որք հանդերձեալ թուականք յաղթեն ընդդիմամարտին, անպարտելին յաղթանակս եւ պսակս ընծեալ։

Նախ առաջին յաշխատութիւնս պահոց ասասջիր-զեսջիք ձեզ, եղբարք, եւ ապա յերանելի կատարածն նոցա մերձեցուցանեսջիք։ Աստուածայնոյ եկեղեցւոյ պահոց ոչ շատակերութիւն եւ ոչ անպարկեշտ ծաղր, ոչ զինարբութիւնք, ոչ արբեցութիւն, ոչ կայթումն մանկական, այլ աստուածային պարկեշտութիւն եւ յաղթութիւն փրկչին Յիսուսի Քրիստոսի, հեշտութեանց վճարումն եւ կենդանացութիւն ընդ որոց կուսին. Այս առեալ զեկեղեցի երկնայինն փեսային առանց թշնամեաց յարմարեալ, որ եւ զորօք ո՞չ անմոռանալ ծնողին խաղաղաբար մերձեցու-թեամբ։ Յորժամ է ժամանակ պահոց, եղբարք, մի որք արտաքոյ գոցի հանդիսարանին, զի մի անպարտ մնասցէ։ Այլ որք ամենեքեան ձգնեցուք հանգերութի. քանզի եւ ձեզ զինուորիք Քրիստոսի հանդիսական հեշտութեանցն եւ ոչ լինիցուք դատաւորք, կարասցուք եւ մեք ընդ Պօղոսի գոչել. «Ոնահատակութիւն բարի նահատակեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատոն պահեցի.

այսուհետեւ առաջի կայ ինձ արդարութեան պսակն զոր կազմեաց Քրիստոս», որքովք և անթառամ ծաղկօք[1]:

Քանզի հանդերձեալ է որդի մարդոյ եկանել յԵրուսաղէմ, եկանել ոչ զգալի տուիքն, այլ ծածկին զօրութեամբն. Ճանապարհորդեա ընդ նմա և դու, մի իբրև զՅուդաս մատնիչ հանդերձեալ, այլ իբրև զՊաղոս դաւանել խոստովանելով, մի իբրև[2] զՊետրոս յուժամ մի յաղջկանէն ուրացեալ, այլ որ առաջի Թագաւորաց քարոզէր զնա: Հանդերձեալ է և այժմ Քրիստոս զոտս կատարել իբրև ոչ ըստ առաւօտու առաւել խաչեալ լինելով, այլ արծարծել մեզ զբարեգործութեան յիշատակ: Մեծ լեր, տես զնա յաղագս քո չարչարեալ, մի լռելով զչարչարանսն, այլ զմարդասիրութիւնն օրհնելով. մի կատակելով իբրև զՀրեայս, զի մի փոխիցես զչարիսն կրեսցես, այլ իբրև զաւազակն ապաշխարեսցես, զի ՚ի դրախտին բնակեսցես. առաջնորդեա ՚ի մեղաց, քանզի մերձեցաւ արքայութիւն երկնից: Իսկ եթէ կամիս ուսանել որքան ինչ զօրանայ ապաշխարութիւնն, հայեաց յաւետարանն, և տեսցես քեզ զկեղ խնամող որ առնէր զյաւիտենական կեանսն:

Պատմի Քրիստոս մտեալ երբեմն ՚ի տուն փարիսեցւոյն, և կին ոմն մեղաւոր մերձեցաւ առ նա խոստովանելով զմեղս իւր: Կինն այն օրինակ է եկեղեցւոյ, մեղաւոր նախ քան զՔրիստոս, այլ պարկեշտ զկնի Քրիստոսի. բոզ յառաջ քան զՔրիստոս, այլ ողջախոհ զկնի Քրիստոսի: Մի ինչ ամաչեսցես լսելով բոզ, զի և ոչ անուանք ինչ վնասեն զքեզ. մի զինչ է լեալ զննածեր, այլ որ ինչ եւս ՚ի նմա. պարծեսցիր առաւելն, զի ցուցցես զբժշկին զօրութիւն: Օ քեզ զեկեղեցանելով մարգարէական բանն ասէր երբեմն. «Գնա և առ քեզ կին բոզ և որդիս պոռնկութեան»: Պոռնիկ օրինակաւ զեկեղեցի կոչեաց. որդիս պոռնկութեան զորս ՚ի պոռնկութենէն էր ծնեալ, ՚ի ձեռն ապաշխարութեան սուրբ ընծայեաց:

Մտեալ էր Քրիստոս ՚ի տուն փարիսեցւոյն, և կին ոմն մեղաւոր իւղով օծ զնա: Իւղով զիւղն օծ, յա-

1 Յայս վայր վախճան նախընթաց ճառին:

2 Յօրինակին պակասէր իբրև զ:

զօգս որոյ սանձ դիր․ «Աւղ թագաւոր է անուն քո»։ Աւրհնեալ զոտսն որ յաղագս քո զերկիր կոխեցին․ Աւրհնեալ զոտսն որ վասն քո ՚ի փայտին բևեռեցան։ Բաժանեաց զինչսն ՚ի բաղդաւես կլենն, զձեռս ՚ի պաղատանսն, զաչս յարտասուս, զլեզուն ՚ի խոստովանութիւն, զխորհուրդսն ՚ի մտածութիւն ծածութեանն, զոգին յորս շահից․ բաժանի և Քրիստոս ՚ի մարմինն առ Յովհաննէս․ Յովհաննէս զգլուխն, և սա զոտսն արտասուօք, որովք ամենայն զին մարդասիրութիւնն։

Արկանէր յոտսն Քրիստոսի փոխանակ ջրոյ զարտասուսն․ Քրիստոս արկ ջուր յոտս աշակերտացն։ Փոխանակ զատուսանաց առաջի զնէր զհերսն, մեղաց անօրէնեցայ աւելով, մինչ զի յանձնաութիւն մեղացն կարկէ զիմ զգեստս։ Բայց գիտեմ զի և թելով ատքս անիմ առ քեզ զզօրութիւն, որ և զախտս քննէ։ Գիտեմ զքեզ ով ես․ գիտեմ ՚ի խեցեղէն անօթդ զծածկեալ զանձդ․ գիտեմ ասատ եկիր յաղագս իմ։ քո զօրութիւնդ հաւանեցոյց զիս արտասուացուցանել զիմ զախտս․ քո մարդասիրութիւնդ համարձակեցուցանէ զիմ զգուշ զյոյզս, և որոյ զայնթանեցի մտացնակ՝ քո բանիւդ որոգայթեցայ․ պատարանք և երկնաւորդաց ՚ի տեսանել կարթ խիձ եղեր երևեալ, այլ զորս ձգէ ՚ի կորուսանել։ Գիտեմ առ քեզ այժմ նստեալ, քանզի գիտեմ զի փրկեցայց։ Զայս զգործս յանկարծութեանն փրկանս քեզ ընծայեմ փոխանակ որոյ յանցանեցայց։ Ակնկալեցի բաղդում անձամբ զհայեցուած պատարագ արտասուացն զեղեցկութեամբ, զիս կնքն առ ՚ի ժամանակ տեղին անհնարս համոզիցեցելոցն․ Ճշմարտեմ զխնամս այժմ արտասուօք, շահաւոր նեղութեամբ․ վաճառաւոր է այն օրուր, այսօրէիւք փոխանակեմ զխոստ․ Հաւանեցայ զլոլոմս ՚ի հեշտ ցանկութիւնս մոլորեցուցի․ պարզեմ զխոստ այժմ քեզ արտասուօք, որ ՚ի սոսա չարութիւնն էր՝ ՚ի բաց ընկենլով։ Հաւանեցի քո ճշմարտ յաղագս խնդրոյ քո ՚ի մտաց․ յաւիտենական բաւական զմթին խորհուրդս իմ լուսաւորելով։ Զարթուցեր զիմ զախտ ընդդիմացանելով մարդասպանութեամբ․ դադարեցո զգուշս իմ, համարձակեցո զօրութեամբ քով։

Այլ աղախնոյս բարեբանութիւնն, ով զի քաղցրահաշտութիւնն տեսան։ Շօշափեցի զքեզ անփոփ և ձեռ զգա-

ցեր, երաշխաւորագոյն քան զհաւատոյ զգեղեցկութիւնն ընծա-
ռելով։ Որով զքեզ առաջի առ իս եղեր, և ես զիս հաղ-
ուղեցայց առ քեզ. բեռամբ մերձեցայց առ իս ատամ-
նեալ, երթեալ գնասցես զազատի շնորհօք ՚ի ծառայու-
թեանց թեթևացեալ. քաղաքեսցես զիս. զամեցցեն ըղ-
քեզ ժողովուրդք. ոչ լսեցեր զիմ զօրութիւնն, քա-
ղաքեսցի քո հաւատով. ոչ ամաչեսցես զքո մեղաց խոս-
տովանելով, բժշկեսցես հաւատովդ, համարեալ լինիս
՚ի հօտ Ճշմարիտ հովուին։

Արդ՝ զքեզ այժմ, եղբայր, Քրիստոսի շնորհ ՚ի խոս-
տովանութիւն մեղացն. ընթաց և դու ՚ի փրկութեան առն,
առ զիս զի զանտաշահութեան զործոցն՝ պարտ յօժա-
րեալ ՚ի լաւագոյն վարուցն. ծանիցես առաքինութեանցն
զքեզ պայծառացս, զի ՚ի գալն Քրիստոսի յԵրուսա-
ղէմ եկցես և դու ընդ մանկտեացն գոչելով՝ ովսաննա՚ի
բարձունս, օրհնեալ եկեալ յանուն Տեառն։

Որպէս Քրիստոս յԵրուսաղէմ, առաքէ զաւուրս զեր-
զաշակերտսն. "Գտանիցէք, ասէ, էշ կապեալ և յաւա-
նակ նոր, լուծէք և ածէք ինձ. և եթէ ոք ասիցէ ինչ
ձեզ, ասասջիք եթէ տէր պիտոյ առնի զսա"։ Եթէ ա-
սիցէ ձեզ առաւօտեան զինչ պիտոյ առնիք որ ինձ ծառայ-
էք. ասասջիք՝ բաւականացի քեզ յուղարկել ժամանակս
խաւարեցեր զգլուխս. եկն հաղորդել զիս ողորմած խոնարհել։
քաղցրամ ժամանակս բանիցս, յորում ՚ի վերայ նս-
տայր, ոչ քո յաւանակի պիտոյ առնի զոգս ասէր։

"Լուծէք և ածէք ինձ"։ Որ նստի ՚ի վերայ քե-
րովբէից, ինչ պիտոյ առնի, այլ սիրեաց. որ երկնէ ՚ի
վերայ թևոց հողմոց, յաւանակ խոնարհի. որ զնայ ՚ի վե-
րայ ծովուն, հերև յաւանակի, նա ՚ի վերայ իշոյ նստել
զանհոգս։ Այլ առաւել մարդասիրին բնութիւն է։ Որ
մի ինչ կարծիցես ամաչել յիշելու հաշտեցանի. քանզի մարդ
եղեր բնութեամբ, և հասարակեցայց ընդ անասնոյս յա-
ժարանաւոր թշնամեաց, և կոչեցայց եղ. քանզի "Մարդ
՚ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց
անմտից և նմանեցաւ նոցա"։ Աղէն յերկնից խոնարհելով
զէջ. եկն ՚ի մարդն, զի ծանիցես զու երկրի զէջ ըն-
տանեան մարդն։ "Գտանիցէք էշ կապեալ և յաւանակ,
լուծէք և ածէք"։ Աղէն կապեալ էր, և յաւանակին ըն-
ծեռալ զինեալ։ Այր Յուդայեան ընդ որմոյ, և դու շղթեալ ՚ի

մարդութեան ։ Այնմ ուրեմն և զկապեալսն լուծանէր, քանզի եկեալ զկապեալս որքանոցն հրեշիցն . և 'ի վերայ յաւանակի նստի, վասն զի զհեթանոսս յեր 'ի հնազանդութիւն կոչէր ։

Այլ մեք ինչ արժանաւոր յաղագս կոչմանն հեթանոսաց . անսուտ է որ ասացն "Կարէ ած 'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու ,, ։ Հրեայք որդիք Աբրահամու լինէին զարդարև տեսանէ, մանաւանդ հաշեալք ուրանալին զՏէրն, այլ նոքա լինէին, իսկ քարինքն աղաղակէին, երկրպագուք քարանցն 'ի տեղ հաւատացին ։ Օտարք օրինացն որ յօրինացն քարոզեցաւ՝ պատուէին, և որք զօրէնս ընթեռնուին՝ ոչ գիտէին . տեսանելով զսքանչելիսն ասէին՝ ո՞վ է սա զինի որ յԵգիպտոսէ փրկութիւնն էր արեամբ գառինն օրինակաւ նշելոյ . ո՞վ է սա յետ փայտին ապաւորապէս քաղցրացուցանելոյ զջուրսն . ո՞վ է սա զինի Ամաղեկայ յաղթութեանն . ո՞վ է սա յետ լորամարգին, յետ լուսաւորելոյ կուրացն, զինի եօթն հացին . ո՞վ է սա յետ գնալոյն 'ի վերայ ծովուն, զինի տեսանելոյն, յետ դստեր ժողովրդապետին և անդամալուծին . ո՞վ է սա յետ Ղազարու ։ Այլ զարմանալի ինչ ոչ է, ով հրեայ, անգիտանալ քեզ ով է սա . քանզի Զքմկարտակէս պատուական կայ 'ի վերայ երեսաց քոց ։ Այլ ոչ տեսանես որ օրինացն ընդ քեզ խօսեցաւ . ոչ տեսանես որ նշանօք եցոյց քեզ զմեծութիւնն, և յաղագս այդորիկ ասես ով է սա ։ Այլ զի նշանացն ոչ հաւատացեր, նոյն ինքն չարչարանքն քեզ ուսուսցեն . յորժամ տեսանիցես զդա 'ի մեռելոց յարուցեալ, յայնժամ ծանիցես ով է դա . յորժամ տեսանիցես զքաղաքդ քո կործանեալ և 'ի գերութիւն մատնեալ, յայնժամ ծանիցես ով է դա . յորժամ տեսցես զամենայն աշխարհ 'ի դա հաւատացեալ, յորժամ տեսցես զդա դատել զկենդանիս և զմեռեալս, յորժամ տեսցես ընտրելոց դասս զդրունս դրախտին բացեալս և զձեզ կածեալս ցեղ առ ցեղս յաղագս 'ի դա ամբարշտութեանն, յայնժամ ծանիցես ով է դա ։

Նստի 'ի վերայ յաւանակի Քրիստոս, և մանկունք յառաջանային հանդերձ ոստովք արմաւենեաց օրհնելով ։ Միենոյն ինչ նոր էր, յաւանակն մատաղ, մանկունքն տղայք . քանզի հինն էանց և ահա եղև ամե-

նայի նոր։ Մանկունքն որհնեսին. «Փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո»։ Մանկունքն քարոզեցին. «Յիշատակեսցի անուն ազգ որ գալոց իցէ»։ Նարձեալ ունէին զարմաւենեացն ոստս. յաղթութեան նշանակ է արմաւենին։ Նոյն արմաւենւոյ պտուղ գտանին որ 'ի Քրիստոս մկրտեալ ծնեալք են յերկինս։ Որում պտղոյ եւ զմեզ արժանաւորս արասցէ ամենեցուն մեզ 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս. ամէն։

## Ի ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆՍՆ

Յորժամ զմտաւ ածեմ զդիւրածախութիւն[1] կենդագոյս եւ զամենայն զերիվարեալ[2] շռայլանաւքս եւ զմարգկան[3] բազմաշփոթ[4] կենցաղավարութիւնս եւ զաշխարհական սադրանաց, յայնժամ յառաջ ընթացեալ լինի մերձակայ յաւիտենիս եւ յիրաց սուտերանկանութիւն եւ ըղբաւթեանց դիւրաքարկութիւն[5] եւ 'ի բարեկենդանութեանց անսխլս եւ 'ի մեծատանութեան[6] երազս. ապա զիշեմ[7] զօր վախճանին, եւ զկատարածին աշխարհի զանհրաժեշտ վաղվաղումն եւ զհամօրահասն[8] զժամնակ եւ զանդադրելի զդատաւորն եւ զկարգն լի ասպածինքն՝ եթէ զիարդ փոյլատակելով դատաւորն յերկնից իջանէ, զիարդ շփոթեալ զօրութիւնք ընթանան առաջի, զիարդ ահաւորին պատրաստի աթոռ, զիարդ երկինք զաղարին որպէս մագաղաթ, զիարդ լերինք[9] որպէս մոմ հալին, զիարդ սասանի երկիր ընդունելով զկալեալ զատաւորին, զիարդ ազազակեն փողքն, զիարդ բանին

1 Ցեօթանց օրինակաց երկքն դիւրածախութիւն. երկուքն դիւրածախ կենդաղայ շռայլանոփ։

2 Օրինակ մի էերկարամպոսու. այլ օր. էերկեամպոսու. միւս այլ և զամճամանկէայ էերկեամսոր շռայլա։

3 Երկու օր. զաշխարհական մարգկան փախնոպս։

4 Երկու օր. բազմաշփոթենու. երկու այլ բազմափոյթ։

5 Երկու օր. դիւրաքարկութիւն. մի օր. դիւրաքարկութիւն։

6 Այլազգէս մի օր. երկու այլ 'ի մեծատանութեանց. յայլս պակասի։

7 Երեք օր. գիշեմ։

8 Երկու օր. զհամօրահասին ժամանակն։

9 Չորս օր. փոխանակ լերինն երկինքն. յոյնն փոխէ։

գերեզմանք, զկարգ որպէս 'ի քնոյ ընդոստնումն մե-ռեալք, զկարգ հողմ փոշի 'ի քթթել ական առ ընթա-նալն իւր գալստեան կարգ, զկարգ հոգւոցն դարձեալ ընթա-նալն առ մարմինն, զկարգ ընդ առաջ ընթանալն արդար-քըն, զկարգ հասանել 'ի մէջ գիշերի փեսային, զկարգ արժանաւորին մտիցն պատրաստելոցն, զկարգ ծուլիցն փա-կի առագաստն: Յորժամ զայս ամենայն զմտաւ ածեմ յանձին իմում, երանեմ զայնոսիկ զիմաստուն կուսան-սըն, զոր այժմ ածէ առ մեզ ա̃ծային գիրն, որք նախ ընդ քնոյ ախտին եղեն մարտուցեալք, զի զանվախճան ժամանակին գիտելով ապաւինեցին՝ ժամու զարթուցեանն, յորժամ զմտաւ ածին զանապական փեսային զգա-լուստն և զերկիւղն որ անտի. յորժամ զգիշերայինն զայն փորձեցին զխաւարն, առաջապէս այս հոգ տա-րան լապտերացն: Ո՛ ի՞ ոչ կնչ արդեօք զնորա զմտածու-թեան զայնոսիկ գիտել զմնաց:

«Յայնժամ նմանեսցի, ասէ, արքայութիւն երկ-նից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային»: Ո՞րք արդեօք ելին ընդ ա-ռաջ. Թերևս յորժամ եհաս նոցա կէս ժամանակին, յորժամ ժամանեաց նոցա վախճան ժամանակին, յոր-ժամ եհաս հրաման մահուն, յորժամ ելին հրեշտակք ձայնողք՝ յայնժամ ելին ընդ առաջ փեսային. ոչ եր-բէք: Այլ երբ ելին. յորժամ յաշխարհականաց հրա-ժարեցին 'ի զբօսանաց, յորժամ զբարւոք ճանապար-հագնացութեանն արարին սկիզբն, յորժամ ընտրեցին ընդ նեղ և ընդ անձուկն գնալ ճանապարհ, յորժամ կամաւորապէս զխիստ վարսն ողջունեցին, յորժամ ա-մուսնական օրինացն ոչ հնազանդեցան, յորժամ զաշ-խարհական հեշտութիւնս արհամարհեցին, յորժամ զբարի մասն անապականութեան ընտրեցին, յորժամ զողջախոհութեան օրինակն սիրեցին, յորժամ զաղաղ-մեղացն գարշ համարեցան, յորժամ ողջախոհութ̃բ զարդարեցան, յորժամ մաքուր և սուրբ փեսային ցան-կացան, յորժամ երկնից արքայութեան գեղեցկութեան փափագեցին, յորժամ զամենայն աշխարհական հոգս 'ի բաց ընկեցին, յայնժամ ելին ընդ առաջ փեսային:

«Այլ էին, ասէ, հինգն իմաստունք և հինգն յի-մարք»: Այլ զինչ իցէ ճանաչու̃ն իմաստնոցն. զի խառ-

նեցին ընդ աշխարհահաւութեանն զզգաստութիւնն, զար-
զարդերով բարեբարութեանց զկուսութիւն. ծանեան
եթէ հաւատք առանց գործոց մեռեալ են. զիարդ ա-
ռնին եթէ մին միայն ոչ է բաւական առ 'ի փրկութիւն
նոցա, և զի միով խոկ թևով արծուի 'ի բարձունս ոչ
մերձենայ. լսէին զձայն փեսային որ ասէ. "Ողոր-
մութիւն կամիմ և ոչ զզոհ". և եթէ "[illegible] 'ի
գլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւ": Ուս-
տի և բաշխողքս խոհեմք լցին զանձինս իւրեանց իւ-
ղով: Ո՜վ անձինք. զզարդարեալ անձինս. մերձեալ հա-
րևոր հարսանեացն զաղքատաս արքայից. պատրաստեցին
զհետ իւրեանց զզթութեանցն թոշակ. քաղցրացեալ
կերակրէին, և զամփոփ նոցա պայծառանայցին. ա-
քանցն զօհանայցին և փեսային ուրախ լինէին. ողոր-
մութիւնն սերմանէր և անձնական առատութեան պատրաս-
տեալ լինէին: Խնամատուքն զԽոհեմութեան աղաղակէին
"Պատրաստեցարուք և ոչ խափանեցայց". իսկ յիմարքն ա-
ծուլով զպատրաստել իւրեանց լամպս իւղոյ, հեռի կալով
'ի փեսայէն հայցէին: Ո՞րպէս միայն միով ուղղութեան
կայսին նայելով. զի որք զզգաստութիւն առատապէս և զխոր-
հրդութիւն 'ի բաց մերժեցին. զի որք զանհնարին-
կան ծանրութեանս [1] զարդարեցին և զխորհրդութիւն առ կա-
րանեաւն ոչ ընկալան. զի որք զգաստութիւն մերժեցին
և զուարթութիւն 'ի բաց բարձին: Ո՞րչ այսպէս վախճանն:

"Ի յամել փեսային նիրհեցին ամենեքեան և 'ի
քուն մտին": Բ. ԺԱ խմաստնոցն յառաջագոյն շտեմա-
րանեալ [2] զիւղն՝ ունէին զզուշութեանն, որպէս զի մի
շիջցին լապտերք նոցա. իսկ յիմարքն զծանծաղ մեր-
տայն ընկալան. և ունայնութեանն շիջանէին լապտերք
նոցա: Ո՜յ այսպէս ոչ առայցէ հանդստապարար՝ եթէ ե-
հաս ժամն և ժամանեաց ժամանակն, թնդիւնք [3] և ա-
ղաղակք սկսան լինել, հնչեցին փողքն, շարժեցան առ-
բերքն, տատանէին օդք, խռովէր երկիր, զուարթ
հասարակութիւնն, թօթափէին աստեղք, խաւարէին լու-
սաւորութիւնքն, յառաջ ընթանային հրեշտակք, փայլատա-
կունք զձայնին առաջի, զմեծ խռովութիւն ունէին արա-

1 Չորս օր. ծանրութեան յարդարեցին. յոյժն զիւղն զաղատաբանն յախտից ծանրութեան յարդարեցին:

2 Օրինակ մի. առաջեկեալ. երկու օր. պատրաստեալ:

3 Հինգ օր. թնդմանք:

բանձք. քանզի ոչ 'ի տունջեան, այլ 'ի գիշերի հատանէ զատաւորն :

Եւ ապա զինչ ապաշաւանն գոչէր առ 'ի յերևանել ընդ առաւօտ. «Ահա փեսայ գայ, ելէք ընդ առաջ» : Օ՜ ինչ ապա որ ինչ եղեն : Յարեան կուսանքն, թօթափեցին զքունն և ընկալան զլապտերսն. այլ իմաստնոցն այրէին, և այլոցն ոչ երևէին. իմաստնոցն՝ իւղովն բարերարութեան ողորմածութեանն, իսկ յիմարացն շիջանէին : Աղաղակէին իրն. անձողապնելի վիշտք զկանթեղսն պաշարէին. ոչ ինչ ունէին մխիթարականքն պատճառս մխիթարութեան : Վասնզի յայնժամ մատուցեալ առ իմաստունսն խնդրէին զոր ոչ կարէին առնուլ. «Տուք մեզ, ասեն յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր» : Եւ նոքա ասեն. «Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք առ այնոսիկ որ գնոցն տայցեն և գնեսջիք» : Այսպէս էր մնանուանց նմանել նոցա... այնպէս առաջեալ զայնոսիկ շահավաճառութիւն : Եւ ով են որք վաճառեն. որք 'ի զբուսն եկեղեցւոյ նստին աղքատքն, բանաւոր ծիծաղունքն որք զհոգւոցն աւետարանեն զղաբան, ձրի միջնորդքն առ ունելս, անապարտելի ճարտարանանքն յատուրն այցելութեան :

«Եւ 'ի գնալն նոցա 'ի գնել, եկն փեսայն» : Ո՛վ զարմանալի ծուլութեան, ով անարժանելի երկանացն, ով անմխիթար տրտմութեան, ով անհաւանելի սրտին : «Յերթալ նոցա 'ի գնել, եկն փեսայն». եկն անկանկալի խնդութիւնն, եկն արքայական պարգևանքն, եկն 'ի մէջ գիշերի լուսն : Ընդ առաջ ելին իմաստունքն, մտին ընդ փեսային և փակեցաւ դուռնն : Օ՜ մնաց անձեալ տարաժամ ընդ եղեալսն. զոգամ պատմել զանցս և զվիճակս կանանցն որ եղև : Օ՜ ահագին աղաղաստ ցանկալին անձանել. և վասն այնորիկ 'ի վայելչութեանց աշխարհիս հրաժարեցին, զփափկութիւնս արհամարհեցին, զփառս անցաւոր ատեցին, զճանապարհս խիստս պահեցին, զտխուրս յաղթահարեցին, ընդ ցանկութեանց պատերազմեցան. և քանզի իւղ ոչ ունէին, զտրին անդամոյնի ըղձականս արքայութեանն երկնից :

Վասնզի եկեալ բախէին ասելով. «Տէր տէր, բաց մեզ» : Եւ 'ի ներքուստ ահագին բարբառեալ դատաւորն ասէ. «Ամէն ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ» : Ո՛վ

Digitized by Google

՚յետանեմ վշտացին. եւ ոչ գանեալ ՚ի ձեռաց հրեշտակի, այլ ինքն եւս զհամաշխարհական պատուհասանելին. զի զձայն ընկալայք՝ եւ զերեսս նորա տեսանել ոչ կարացին, մեծապէս կրեցին տանջանս. «Ամէն ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ»։ Այս ասեն. ո՞չ գիտես զմեզ, ասէր. յայտնեալսն ՚ի քեզ անկաք եւ եկաք զհետ քո ՚ի մեծութենէ մերմէ, զկուսութիւն վասն քո պահեցաք, զպարկեշտութիւն սիրեցաք, ոչ մատնեցաք զանձինս մեր ախտից, ապաքէ ՚ի ձեռաց քոց ոչին ունէաք առնուլ. եւ այժմ փակեցէ՞ր մեզ զդրունս առագաստին՝ եթէ ոչ գիտեմ զձեզ։

Այս, ասէ, ոչ գիտեմ զձեզ. «Ո՞րպէսզի քաղցեայ եւ ոչ եկայք ինձ ուտել, ծարաւեցի եւ ոչ արբուցէք զիս, օտար էի եւ ոչ ժողովեցէք զիս, մերկ էի եւ ոչ զգեցուցէք զիս, հիւանդ էի եւ ՚ի բանտի եւ ոչ եկիք առ իս»։ եւ զայլ եւս ձեզ պատուէր, «Որքան ոչ արարէք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ, եւ ոչ ինձ արարէք»։ Այս նոքա ասեն. ընդդունայն ապա, ով ասէր, կրեցաք ըզվաստակսն եւ զպասն եւ զթշուառութիւնս մարմնոյ. ՚ի նախկին ողորմութեանն եւ պահոց մաշեցաք զանձինս մեր. ընդդունայն ապա յանկացեալ երկնաւոր փեսային՝ եւ ըզկուսութիւն մեր մինչեւ ՚ի վախճան անարատ պահեցաք։

Այս, ասէ, կոյսք էք, այլ փառաւոր ոչ ունիք. կուսանք էք, այլ զհաւրանական զաւրութ ոչ զարդարեցայք. ՚ի որդութիւն մարմնոյ ձգնեցայք, այլ անմխիթարականթեանն զորդութիւնն մխիթարեցէք. մարմինք ձեր անճաշակք են, այլ բարք ձեր անողորմ, ոչ ՚ի ընութենէ, այլ ՚ի ամբարշտութենէ։ Ոչ կարեմ տանել հարսն, որ ընդ խմում բարուցս մարտնչի. ոչ մուծանեմ պատրաստ յառագաստս խաղաղական։ Ի բաց երթայք յինէն, մի ընդ վայր ձանձրացուցանէք զիս առ դուրս կալով. ողորմածացն է բնակարան իմ առագաստութիւն։ Ոչ մտցէ ընդ իս զխուրաբար, որ զխնամ նանձնեաց բարեգթութիւն առ աղքատս, որ աղքատացն հացուով, որ կարաւտելոցն խմահեցոյց զանկն իւր, որ զընկեցիկն կալ իւր հանմարեցաւ, որ արտասուեաց ՚ի վերայ այլոց թըշուառութեան, որ եղից բարութեամբ զանձինս քաղցելոց, որ զմերկոյն ծածկեաց զթիկունս, որ ոչ եղեւ անլուր ձայնի աղաղակելոյն, որ եւս փոխ առաւութեամբ զբանն մխիթարութեան, որ զօտարն ընկալաւ ընդ յար-

կեանս իւրով, սփոփով կարեկցութեան ընկերաց զարտասուս այրեաց, որ թեթեւացոյց վերակացութեամբ իւրով զծանրութիւն որբութեան։

Արդ զոր ինչ լեզուօք զարմանս խօսեցուք, զայն և գործովք նմանեցուցուք, զի կենք լեզուի ձեռն է, և զայս մեկնէ ձեռինն վերակացութիւն[1] որ նախանձաւոր լինի բանիցս։ Արդ արասցուք զաղքատսիրութիւն յամենայնի և 'ի սփռել տնանկաց մի խնայեսցուք, լուեցուք բանիցն աւրունականաց, լուեալ և խնայեալ զերկիւղն և զինոքն՝ մի 'ի բաց խոտորեսցուք զանձինս մեր տալ ողորմութիւն 'ի ձեռս աղքատաց։ Վասնզի կատանքն ոչ պատուելով զմարդասիրութիւն յառաջադատէին արտաքս անկան։ Ո՞ր քաղցր յայնէ մեղուաղաց, որք անմարդութեամբն թշնամանեցան։ Զայս խրատ զգոյշ առնելոք առ բաղմեց ծուլացելոց անձինս, որ ոչինչ վնասէն զարբեանուան, այլ եւս առաւել ջերմագոյնս յորդորէ 'ի բարեպաշտութիւն։

Արդ տես, եղբայր, մինչդեռ կայ ժողով աշխարհական վաճառուս, զոր ինչ վասն պատասխանատուութեան է՝ վաճառեա. յառաջ քան զգնել աւթոցն ցայգ զողս, ժամանեա 'ի գալուստ փեսային. ընթացիր սրագոյն քան զմեղս յառաջ քան զժամանակակէտ այցելութեան։ Աշխարեա զդատաւորն. մի առնուլ յանձն կալ առաջի ահաւոր բեմին մերկ։ Այժմ ճանապարհեա զգոյշ, զի յայնժամ լուծցես զմեղադրանսն. խօսեաց ընդ դատաւորին առանձինն, զի մի յանդիման ամենեցուն դատապարտեսցէ զքեզ. և միջնորդ 'ի մխիթարութիւն քեզ զաղքատանկալ, 'ի ձեռն նոցա տուր ընծայ դատաւորին, 'ի նոա միայն վստահացիր զայնպիսի խորհուրդ։ Աղքատն առնու, և դատաւորն ստորագրէ ըզթողութիւնն. առանց գրոյ ընդունի և յառաջ բերէ զձեռագիրն։ "Զի որ ողորմի աղքատին, փոխ տայ ա̅յ". զի զոր աստ տաս 'ի ձեռս աղքատաց, զայն անդ գտցես 'ի ձեռաց դատաւորին։

Այլ արդ եթէ կամիցիս զերծանել 'ի դատաստանէն, փութա աստ 'ի ձեռն աղքատաց աղաչել զդատաւորն։ Այլ այսպէս իսկ զմեր վախճանն գրեսցուք յօրինակս 'ի

1 Օրինակ մի վերակացութիւն։

ձեռան աղքատախնամացն և բազմերկրանաց վասն զնուցերս հա-
գուցին յաշխարհէս ։ Որպէս տայցես զանէ ասկաւորն ինչ
թոշակ մշտացն, և ընկալցիս յանձանն զաստուածն զեր
անդադրձի․ յիշատակ աղքատին մի եղիցի մոռացեալ՝
քարանն կամ մնագապութեն․ խնդութեամբ առիթ և մի
ողբոց արժանի արասցուք զանհաղն մեր․ կայցո քեզ ըն-
տադալ յաշխարհ առեւտրին․ յաղեցո զանձինս այնոցիկ
որոց պարզ իցէ վասն քո ճառագայթմանեալ լերդուք առա-
ջի Աստուածոյ ։ Առասցուք ՚ի ձեռան նոցա զպարապան
զառացօղն ամենայնի առ ՚ի չտալ պատուհս․ շահեսցուք
ընչիւք աղքատին հանդերձեալն զբեղեցկութիւն ։
Որ ձեռն, ասէ, մեկայ յաղագս ինչ հաշտութեան ըն-
տանեաց․ զխեռս զեր ընդ աղքատս ընտանեցելոյ ։ Որ
բաստացանեմ զգալորի ՚ի ծառայութիւն արքայութե և
կերակրեմ զամենեսեան, սակայն քո առաջել զորոյն-
թիւնն՝ ես ընդ անանկին կարկառեմ զձեռն իմ և ըն-
դունիմ զշնորհն ։ Օգնեսցեմ զկայս որպէս զհանգերձ․
և մինչ զու զմերկն զգեցուցանես՝ ես զգամ ջերմու-
թեանն ։ Կերակրես զիս յերկինս ընդ հօրն առաջ․ և ե-
թէ միայն զխմեցցես լինել այցելու որոց ՚ի բանտին են,
զոցես զիս զայդ ընդ կապելոյն․ և եթէ եղիցես առ
հիւանդն, ՚ի մահձացն ոչ զատանիմ ։ Ողորմի սա-
նայն ուրեք եմ, և մերձ եմ առ այնոսիկ որ անկելոց են
՚ի վիշտս ։ Այլ զոր ինչ արասցես առ անանկին, ինձ ա-
րասցես ։ Այլ եթէ զանկարկ ոք առարցես ՚ի տան քո,
զիս ընդ նոքա տացես քեզ անանկից, և առաց քեզ զե-
րեսս զայս, զշահն անձեցուցից, զատն քո պահեսցից, և
զթեւանս քեզ յերկինս պատրաստեսցից ։ Որով արա-
ցուք զպատուիրանս զայս, զի խառնեսցուք բարեացն հա-
ցուք ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր, որում փառք
յաւիտեանս․ ամէն ։

## Ի ԹԵՐԱՀԱՒԱՏՈՒԹԻՒՆՆ ԹՈՎՄԱՅԻ

Որչափ զարմանալ տօն, նոյնչափ զարմանալ փրկութիւն
ազգաց մարդկային հաստատեալ ձեզ զայս բան․ և ինձ
հաստատելոցն հարստանալ, և ձեզ ընդունելոցդ ող-

տել ։ Հրաժարեալ եմ դարձեալ ցուցանել զԹովմասու զյառաջնագոյն անհաւատանալն փրկչին յարութեան, և 'ի վերջոյ յետ տեսութեանն և շօշափելեացն հաւատա-ցեալ, և տէր և Աստուած զնա անուանելով ։ Զգեցէք առ իս 'ի միասին զմիտս ձեր, և հանդարտութեամբ նուաստ բանիցս խելս անսացէք, զի և դուք զաւ 'ի նմանէ օգ-տուան պտղաբերեսջիք ։

Յանգի փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի խաչեալ զամենակեր զոհակեցոյն գժողովոց, և եղեալ անդրանիկ 'ի մեռելոց. և զդրացն փակելովք եմուտ առ աշակերտսն, Թովմաս անուանեալն երկուորեակ ոչ էր ընդ նոսա. Մարթէ պատմեցելեացն. փափագելեան ընդ նոսա, և որ փա-փագէրն՝ Թողեալ լինի 'ի բացեայ. հոգեն քաղ և բա-րի հասանէր, և ոչխարն արտաքոյ գաւթին մնացեալ կայր. Թագաւորն երկնից մերձենալով գայր հասանէր, և զօրականն արտաքոյ ուրեմն մնայյին զօրուն դեգե-րէր ։ Այլ էր արդեօք այս մնայյին անտեսութեանն խոր-հուրդ՝ ոչ լինել մերձ աշակերտացն ։ Ո՞ր թէ էր ար-դեօք մերձ լեալ, ոչ էր երկմտեալ. և եթէ ոչ էր երկ-մտեալ, թերևս ոչ էր վիճաբանեալ. և եթէ չէր ե-դեալ վէճ, թերևս արդեօք ոչ էր շօշափեալ. և եթէ ոչ էր շօշափեալ, ոչ արդեօք էր հաւատացեալ. և եթէ ոչ էր հաւատացեալ, թերևս ոչ այնպէս ցուցեալ էր մեզ հաւատալ ։ Որպէս զի անհաւատութիւնն Թով-մայի մայր եղև մերոյ հաւատոյս ։ Այլ վասն այսորիկ մեք ոչ տեսանելով զՔրիստոս վերօրհնեսցուք զնա, վասն զի նա տեսանելով զնա երկբայեցաւ. յաղագս որոյ և մեք ոչ շօշափեալ վերօրհնեսցուք զնա վասն զի նա խոցոցն ձե-ռացն կալեալ զանէր մեր վերօրհնեաց ։

Արդ և եկն Թովմաս յետոյ, ասէին աշակերտքն՝ ե-թէ տեսաք զտէրն. տեսաք զառաջին՝ եթէ յետ երից ա-ւուրց յարեաւ ։ և զհրաշափառութիւն բանիցն 'ի գործոցն գտաք. տեսաք զառաջին որ ասէր " Ես եմ յարութիւն և կեանք ". քանզի կեանս և յարութիւն 'ի կենդանեացն ըն-կալաք ։ Տեսաք զառաջին որ ասէրն " Իշխանութիւն ու-նիմ դնել զանձն իմ. և իշխանութիւն ունիմ միւսան-գամ առնուլ զնա ". և զիշխանութիւն նորա նորին գոր-ծովք ընկալաք ։ Այնպէս յանկարծակի փրկիչն մեր ընդ յարկն, ոչ զդրունս բանալով գայ. իսկ մեք ընդ դրան-

Digitized by Google

չեղին նորա և ընդ զարդուտ իւրև վայելչապէս զարհա-րեալ զարմանազան զպայծառ զսեսուտ նորա առ մեզ նորա-զարդեալ։ Տեսաք զձեռս նորա՝ յորս ընկալաւ զբե-ւեռացն զհարուած, և զմեզ մարդկան ընծեաց. տեսաք զձեռս նորա՝ որով խորտակեաց զմահ, և զյարութիւն նորա առեալ ամենայն մարդիկ. տեսաք և զատուցն կող նորա ուստի բղխեաց արիւն և ջուր։

Մի՛ է Թովմաս. դուք տեսէք զանձն, ես միայն չեմ արժանի տեսութեան նորա. ո՞չ որպէս առաքեալքն՝ առաքեցայ և ես. ո՞չ որպէս կոչեցայքն՝ կոչեցայ և ես. ո՞չ որպէս տեսէք զնա խաչեալ՝ տեսի և ես։ Մինչ դու-րպէս ընդ ձեզ տեսի զարտասուականն, կամիմ տեսանել և զուրախականն[1]. զի որպէս տեսի զմեռելութիւն Քրիստոսի, կամիմ տեսանել և զյարութիւն նորա. զի "Եթէ ոչ տեսից ի ձեռս նորա զնշանս բեւեռացն, և արկից զմատունս իմ ի տեղիս բեւեռացն, և մատուցից զձեռս իմ ի կողս նորա, ոչ հաւատամ"։

Յամառես, ով Թովմաս, ի քում անհաւատութեան յայդմիկ. յամառես մինչև ընկալցիս զհաւատս հոգւով իւրև զխարիսխ. յամառես այսպիսի հաւատով և փափագանօք, և տեսցես զցանկալին որում ցանկաս։ Մե-ծեմ զքո զերկմտութեան զխորհուրդ, որպէս զի զա-մենայն երկմտութիւն հանցես. զովեմ զքո քննա-սէր օրինակդ, որպէս զի զամենայն մեծիս կարեալ ի բաց հատցես։ Մի՛ անհաւատութիւն, որով և ես ա-ռաւել ես հաւատացից հաստատութեամբ խնդրել զը-տեղին և կոչել զմերձեցեալն. զի ի քո խնդրելն և ի կոչելն զնա՝ ես զերկու արկից փրկչին իմոյ։ Այս Թովմաս ասէր. եթէ ոչ տեսից իմովք իսկ աչօք զբեւեռացն ձեւ, զքարոզեալն ի ձէնջ ոչ հաւատամ. զի քարոզ զաւելու միայն հաւատարմացուցանէ, իսկ վկայք աչքն են, և յայնժամ ապա ընդունիմ զձեր բանդ. արկից զմա-տունս իմ ի տեղիս բեւեռացն, և յայնժամ հաւատա-ցից սքանչելեացն. բազմաքննին եղեալ իմովք ձեռօք ի կողմն որ վասն իմ խոցեցաւ, և յայնժամ երկրպագե-ցից նմա որ ի մահուանէ ի կեանս բարւոք դարձաւ ա-նախատալիցն։

1 Երկու օր. զարտասուականն։

Այլ մինչդեռ զայս այսպէս առնէր Թովմաս առ աշա-կերտակիցսն իւր, եմուտ առ նոսա Յիսուս դրացն փա-կելոցն․ եմուտ դուռն կենաց որպէս և գիտէ ինքն մի-այն։ Զի որպէս ծնաւ և զկուսութեան դուռն ոչ ա-պականեաց, նոյնպէս և 'ի ներքս տանն գնաց, և ըզ-փակս տանն ոչ ընկէց 'ի բաց․ և զարձեալ որպէս յա-րեաւ 'ի գերեզմանէն կնքեալ մատանեաւք, նոյնպէս ե-մուտ 'ի տունն դրացն փակելովք որպէս և կամեցաւ, և արգելոյր զնա և ոչ ինչ․ զի ամենայն ինչ ըստ կամաց նորա ընթանայ, վասն զի Աստուած էր և Տէր գոլով։ Այն-պէս և ծնունդ նորա յաղթէ ամենայն բանի, և 'ի գե-րեզմանէ դարձ նորա գերազանցէ քան զամենայն միտս, նմանապէս և առ աշակերտսն իւր երեւեալ անճառելի և անպատում մտիւք։

Վասնզի եթէ եմուտ՝ ընկալայ, իսկ եթէ զիարդ ե-մուտ՝ ոչ եւս ուսայ, ոչ ընկալայ և ոչ եւս առնել յանդգնե-նիմ։ Ողջունեմ զմտեալն, և ոչ հետազօտողն լինիմ մտա-ցածին բանիւք․ քարոզեմ զխորհուրդն, և ոչ թարգ-մանեմ զանթարգմանելին․ սքանչանամ ընդ եղեալսն, իսկ եթէ զիարդ եղև՝ ոչ խնդրեմ․ հաւատամ գրելոցն անխափանաբար և ապրիմ, զի լուռ եմ սքանչելեացն տե-րունականաց, և ոչ խնդրող եմ Աստուածային արդեանցն։ Այս թէպէտ որ 'ի Հրէիցն ասիցէ ցիս, օտարս ինչ քարո-զես ամենևին, եթէ զիարդ կարէր ընդ փակեալ դրունսն անցանել մարմինն և ոչ բանալ զնա, առացից և ես ցնա․ զիարդ կարաց հրեշտակն իջուցանել զԱմբակում 'ի գուբն առիւծուց և անտի հանել, և զկնիքն որ 'ի վե-րայ կային՝ ողջ թողուլ։ Արդ որպէս ծառայն զոր ինչ կամեցաւ և արար, նոյնպէս և տէրն զոր ինչ կամեցաւն կարաց առնել․ և այն լինի 'ի կամելն Տեառն, և այս լինի մարդասիրելոյ բանին կամօք։

Եմուտ առ աշակերտսն իւր ճշմարտութեամբ՝ որ-պէս կամեցաւ՝ փրկիչն մեր, և եկաց 'ի միջի՝ զի ամե-նեցուն ողջունեսցի, և ասէ ցնոսա․ «Խաղաղութիւն ընդ ձեզ»․ խաղաղութիւն եմ և խաղաղութիւն շնոր-հեմ ձեզ․ զի զոր ինչ բնաւորեցայն՝ զայն տաց ձեզ։ Խաղաղութիւնս այս զամենայն պատերազմս հնա-զանդեցուցանէ ընդ ոտիւք ձերովք։ Այս խաղաղութիւն զիշխանս արարցէ ծառայս ձեզ․ այս խաղաղութիւն

ընդդէմ սրտապատանց ախոյեանն : Այլ խնդացէք աշակերտաքըն դարձեալ ընդ տէրունական երեւումն, զի ձայնին արժանաւորք եղեն. և արմկունքը[1] խոնարհեցին զկռապաշտս և անհնարիկէին աչօք և տեսէին զնա. ո՞չ առաւել քեզ յառաջագոյն եթէ տեսաք զտէր, և ոչ հաւատացեր մերոց բանիցս, արդ ահա եկն ինքնին իսկ փափագելին, վայելեա որպէս և խնդրեաց, փափկացիր և մտիր առ նա որ վասն մերոյ փրկութեան եկն առ մեզ, և առ զխնդրուածոցն վայելումն : Իսկ Թովմաս կայր արձակեալ զաչսն յամենայն անդամս մարմնոյն, ոչ զնելով ամենայնի եթէ ճշմարիտ նա՞ իցէ որ մեռաւն և յարեաւ, նա՞ իցէ որ եկն առ նոսա :

Ոչինչ ապա առ նա միայն բարերարն և մարդասէրն, որ կամի զամենայն մարդկան ապրել և 'ի գիտութիւն ճշմարտութեան հասանել : “Բեր,” ասէ, “զմատունս քո այսր և տես զձեռս իմ”: Ոչ վասն քո եկի առ քեզ, և վասն քո դարձեալ հասի այսր. վասն քո արկի զձեռս իմ ընդ բեւեռօք, զի քեզ առաթեցից զերկութ անվրիպականալի : Մերձեցիր առ իս մարմնով և հոգւով և հաւատով. ուսիր յայտնապէս զոր ցանկացարն տեսանել, և որպէս կամիս տեղեկացիր : Շօշափեա ձեռօք ծանիր զկամաւոր զիմ զխոցումն վէրս. դնեմ առաջի քո զամենայն անդամս իմ առ 'ի յուզել. չհամարիմ անթ զմարմնոյ իմոյ զվէրս. ոչ պատկառիմ 'ի մարմնոյ իմոյ խոցմանէ զոր ընկալայ վասն ձեր. ոչ թագուցանեմ զխաչաց իմոց և զյաղթութեան զյաղթանակ, աշխարհահաւաք առնեմ զմ սրտապատանց յայտ յանդիմանն : Գիտէ զդս արեգակն, վասն որոյ և խաւարեցաւ և զտիւն գիշեր արար չարչարողացն[2]. գիտէ զայս և երկիր, յորժամ որ խնդրեաց տեղի փախստեան. գիտեն զայս և վէմք, վասն որոյ և պատառեցան, զի զիմ սուրբն ողբացին. գիտէ զայս և վարագոյր տաճարին, վասն որոյ և պատառեալ՝ յառաջագոյն ողբալով զ[illegible]րէիցն զկործանումն. զայս գիտեն և մեռեալք, վասն որոյ 'ի գերեզմանացն արտաքս ընթացան : Տես և դու զձեռս իմ որպէս և կա-

1 Օրինակ մի արմնկամբք :

2 Այդ է հարազատ իմաստ բառ մերոյ օրինակին և բառ յունականին, ուր միւս երկուքն ունին գիշեր արար չարչարողացն. Թերեւս զարտուղակիր նախատակից օրինակին ա- [illegible] այսպէս ընթերցեալ. իսկ լատինն Թարգմանէ գիշեր [illegible]:

մեա. քեր զանառակս քո 'ի խորս խնճոյ մեղաց։ Նմանիս և զկորոյս իմ ասմանեաց և քննել, ահա զայս քեզ առընթեր մատուցանեմ. քեր զձեռն քո, քննեա և առկ 'ի կորս իմ. շօշափեա զմարմինս իմ զոր առի 'ի կուսէն Մարիամայ, և կառոյն մնացեալ կոյս անարատ. շօշափեա զմարմինս իմ որ չարչարեցայ խաչիւ կամաւ. հայեա 'ի մարմինս իմ որ մեռայ վասն ձեր, այլ ոչ ընկալայ 'ի մահուանն ապականութիւն. մերձեա 'ի մարմինս իմ, որ առհասարակ է քրոմեալ և արիւնաքի սրովեալ. "Այս մի լինիր անհաւատ, այլ հաւատացեալ"։ Պիտանի զքեզ հաւատոյդ թանձրութիւնն. զիտանի թէ զայսպիսի խնդաքեա, և վասն այսորիկ զկոյս զայս Թովմա, զի հաստատեսցէ և շօշափեսցես և հաւատասցես և կեցցես։ Մի յաղաժամ եկից զատաւոր կենդանեաց և մեռելոց, զուցես թշնամեաց խոնց զխոցումն, և դատապարտեսցին զմահանարտեցն ժողովս, զի տեսցեն զորեղբ զոր խոցեցինն.

Պատասխանի ետ Թովմաս և ասէ. տէր, հաւատամ յարութեան քում, թագաւոր թագաւորաց. հաւատամ և ոչ եւս զոր գտից խնդրել. հաւատամ, և ոչ եւս զիմ տէրդ քաղցրագոյնն առնեմ. հաւատամ, և ոչ եւս վասն քո տարակուսութեանն բանաւորիս լինիմ զոր ընկալայ։ Պիտեմ զով շօշափել արժանի եղէ. զիտեմ ըմբռնել զոր ոչ դժոխք կարացին ըմբռնել. զիտեմ զի պաշտել օգտիցիմ։ "Տէր իմ և Աստուած իմ"։ Աստուած իմ և տէր իմ. դու նախայաւիտենականն համանգամայն և ամենակալ[1]. դու երկնային և երկրային. դու տեսանելի և անտեսանելի. դու մշտնջենաւոր[2] և 'ի տնտեսութեան[3]. դու անձեռակերտ և յաշխարհ 'ի ձեռ. դու Աստուած Աշխարհիս և կեանս մարդկանց վասն մերոյ փրկութեան. դու յերկինս, նոյն և 'ի խաչին. դու յաթոռ թագաւորական. դու անչարչարելի լուսոյ հօրն, նոյն և չարչարեալ լուսոյ մարմնոյ. դու անմահ որդին հաւասար հօր, նոյն և մահկանացու լուսոյ մարմնոյ. դու երեքօրեայ մեռեալ, դու և ծնողին քում միանձնեաւ [illegible]. դու յարուցեր զմարմնոյդ քո տաճար քայքայեալ զօրութեամբդ` Աստուած գոլով. զքեզ խոստովանիմ.

1 Օրինակ մի ամենակալ։

2 Ցոյնն [illegible] և [illegible] [illegible] և [illegible] 'ի [illegible] կառ։

3 Երկաթագիրն [illegible]։

մարմնականն ձեռօք և հաւատոյ ակամբք։ Դաւանեմ զքեզ որ 'ի հօրէ [illegible] ա̃ծութիւն. գիտեմ մի զքեզ և ա̃ծ խոստովանիմ, ոչ[1] այլ և այլ իմն ասելոյ. ոչ բաժանեմ զքեզ ա̃ծ անբաժանելիդ, ոչ որոշեմ զքեզ անորոշելդ, ոչ հատանեմ զքեզ անհատանելիդ։ Այս զոր ուտեմս և զոր ընդունիմս և յոր հայիմս, 'ի ձեռն[2] իմոյ ձայնիս օրհնեմ «տէր իմ և ա̃ծ իմ»։ Նմանեցի դու 'ի ձեռն քոյ իջանող զանձն իմ հաներ 'ի խորոց անհաւատութենէ. դու զմեղս յանմեղ մարմնի քում դատապարտեցեր. դու զձեռագիրն [illegible] եղեալ ապականեցեր. դու զբանսարկուն յորժամ կամեցար կոխեցեր. դու զմահ մեռուցեր քոյով յարութեամբդ, և զմեռելոտեալս զմեզ նորոգեցեր. դու զերեքօրեայ զթաղումն յերկրի՝ թողեր մեռելոցն յարութիւն. դու զմարդիկ երկնայինս գացեր. դու զերկիրս քան զերկինս պայծառագոյն արարեր. դու մարմնազգեցեալն իսկ պարզապար զամենայնսն ինչ 'ի վեհագոյնսն փոխարկեցեր. դու ա̃ծ գոլով մարդացար, զի զմարդն արասցես ա̃ծանէր, տէր և ա̃ծ իմ։

Ասէ ցնա տէր. արդ հաւատացեր զի տեսեր, մի դարձեալ 'ի վերանալն մարմնովս՝ ուստի իջին առանց մարմնոյ, և դու անհաւատութեամբ վարեցեալս բանիւ և ասասցես. եթէ ոչ տեսից 'ի ձեռսն նորա զնշան բևեռացն, ոչ հաւատացից։ Միանգամ փափագեցեր անհաւատ եղեալ, միանգամ շօշափեցեր, միանգամ հաւատացեր, քարոզես յայտնապէս զոր ընկալար. բայց զի երանելիք են որ ոչն տեսին զիս և հաւատացին։ Այլ երանութիւնս այս, եղբարք, առ մեզ անցանէ որք ոչ տեսաք և հաւատացաք։ Վասնզի երանելիք են նոքա որք հաւատով տեսանեն զանտեսանելին. որք յամենայն տօնս և 'ի ժողովս տեսանեն զնա հաւատոյն աչօք և երկրպագեն նմա և բերանոք իւրեանց համբուրեն զնա և աստուածաբար ուտեն և ոչ ծախեն զոր ուտենն։

Աւա՛ղ ով խորհուրդ սքանչելի՛, ով խորհուրդ ահալի. որ նստիս ընդ աջմէ Հօր, ընդ աջմէ գտանիս քահանայապետիցն. և որ 'ի հրեշտակաց օրհնիս, 'ի ձեռաց աղաղեաց ընկալեալ լինիս։ Ով բազմակիրդէ զքահանայապետաւ

1 Օրինակն ունէր այլ իմն և այլ իմն ձայնիւ։
ասելոյ, և ոչ այլ ոմն և այլ ոմն. ոչ իմս
2 Օրինակն ձեռն յայտնի։

մատուցնս մեր արարիչն, այլ ինքն իսկ յորդորէ զմեզ և ասէ. «Առէք կերայք, և արբէք. այս է մարմին իմ». բերէք զձեռս ձեր և արկէք 'ի կողս իմ, և յիմոց անդամոցս վայելեցէք: Արդ մատիցուք ամենեքեան մաքրաբար, սրբութեամբ ընդունելով զտէրն մեր. մի արհամարհանօք մատիցուք առ նա, այլ հաւատով և սրբութեամբ, զի խոստացելոց բարեացն հասցուք 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

## Ի ՎԵՐԱՑՈՒՄՆ ՏԵԱՌՆ

Պայծառ է ինձ այսօր եկեղեցւոյս տեսարան, ոչ ծիծաղմունս մարդկայինս գործեցեալ ընդունայնս, այլ յոյժ սուգ բանսարկուին: Քանզի տեսանէ 'ի վեր զոր 'ի խոնարհս մեռեալ զյարութեանն արմատ. տեսանէ զոր 'ի խոնարհ 'ի նմանէ խաչի մտանեալ՝ 'ի յերկնուստ հայեցող 'ի վերայ նորա. տեսանէ զերկիր հրեշտակօք լցեալ. տեսանէ՝ հրաշափառապէս ընդ օդս գնացեալ. տեսանէ զերկնայինսն ընդ առաջ խաղացեալս, և զոմանս ասացողս «Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր, և համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ Թագաւոր փառաց». և զոմանս դարձեալ ընդ առաջ գալով՝ ողջունելով և ասելով. «Տէր հզօր զօրութեամբ, տէր հզօր 'ի պատերազմի», զոր վասն մեր առ հասարակաց Թշնամին եցոյց, ընդ որում ոչ ոք 'ի մարդկանէ, ոչ 'ի մարգարէից և ոչ յարդարոց մարտնչել կարաց: Վասն զի բանաւորեալք լինէին ամենեքեան 'ի Թագաւորել մահուանէն, մինչև եկն եհաս Թագաւորս յաւիտենից, և կապեալ զհզօրն՝ եառ զկարասի նորա:

Քանզի իբրև խաչեցաւ տէրն, զօրութիւնքն զարմացան, և արարածք սարսեցին տեսանելով զնոր խորհուրդ և զահաւորն տեսիլ՝ եղեալ 'ի վերայ երկրի. դողաց երկիր, շարժեցաւ ծով, զարհուրեցան անդունդք, խռովեցան ամենայն արարածք, երկեան լուսաւորք 'ի յերկինս, փախեան արեգակն և լուսին, աստեղք նուա-

Digitized by Google

ղեցան, որն ոչ համբերեաց։ Պատառեցաւ վարագոյր տաճարին, և խաւար եղև ընդ ամենայն երկիր. տարերքն 'ի բաց փախեան, և որն այլագունեցաւ. քանզի ոչ կարացին համբերել, տեսանելով զիւրեանց տէրն և զարարիչն կախեալ զփայտէ։ Յայնժամ դժոխք լուծան և դրունք նորա փշրեցան և նիգք նորա խորտակեցան։ Յաղագս որոյ Դաւիթ մարգարէացեալ ասաց. «Փշրեաց զնիգս երկաթիս և զդրունս պղնձիս խորտակեաց»։ Յայնժամ անկաւ թագաւորեալն մահ ընդ ոտիւք Քրիստոսի, և եղև քարշեալ գերեալ և նշաւակեալ։

Քանզի անփոփոխն և հզօրն մարմնով ունայնացոյց զզօրութիւն թշնամւոյն, և զմեքենայս նորա խորտակեաց, և զնետս նորա ցրուեալ և զկապարանս խզեալ և զչարչարանացն լուծ 'ի բաց ընկեցեալ, էջ 'ի թագաւորութիւնն դժոխոց, և զաթոռ նորա 'ի բաց շրջեաց, և զփայլ պսակի նորա քակեաց, և զբազմանկանս թագաւորականս լուծեալ ընկէց, զըմբռնեալսն 'ի նմանէն արձակեաց, զբանտարսն կոխեաց, և ձայն արձակ ասելով՝ եկայք ամենայն ազգ և ազինք առ իս և հայր, եկայք՝ 'ի ծառայութենէ զազատութիւն ընկալարուք. քանզի առաջնորդեմ ձեզ 'ի ծառայութենէ յազատութիւն, 'ի խաւարէ 'ի լոյս, 'ի մահուանէ 'ի կեանս. ձեզ աւետարանեմ ես Քրիստոս, մի այսուհետև զարհուրիք 'ի մահուանէ, այլ արհամարհեցէք զմահ և զգեհեն, զոսէ և զնեղութիւն. զի զօր բանաւորին զօրութիւն կապեաց, ահա եղև լուծեալ. վասն զի միայն յամենեսեան ես ցուցայ յաղթապարեաց թագաւոր, որ և չարչարեցայ վասն ձեր մարմնով։ Ես առաջ ճշմարտապէս է տէր զօրութեանց հզօր 'ի պատերազմի. առ է թագաւոր փառաց, որ եհան զկապեալսն քաջութեամբ իւրով, զբնակեալսն 'ի գերեզմանս, առ որ Դաւիթ ասաց յառաջագոյն. «Ելեր 'ի բարձունս, գերեցեր զզօրութիւն»։

Որդ բովանդակ տօնք քրիստոնէից բանաւորեալ են 'ի կշտամբանս և 'ի դատապարտութիւն են, բայց առաւել ևս այս Քրիստոսի մերրացումն։ Վասն զի յաղթ յամենեսեան սպառազինեալ չարութեանցն իւրով և ոչ ինչ օգտեալ, զինքն խոկ խայտառակեալ նշաւակեաց որպէս ինչ իցէ զօր ասեմն։ Ի կուսին հրաշափառ

յղանալն՝ չնութեան համբառնաց զորն · իսկ յետ անճառելի ծննդեանն ոչ զոլ զնա կոյս բամբասեաց · նոյնգունակ և 'ի ննդեան կերակրողին զամենայն արարածս՝ տղայասպան զ՟երավղչէս ուսոյց, կարծեցեալ ընդ նոսա ըմբռնել զանըմբռնելին · խօսելով ընդ Հրեայսն՝ 'ի հայհոյել զնոսա յորդորեաց, իսկ 'ի սքանչելագործելն՝ նոյնգունակ 'ի քարկոծել զնոսա կազմեաց · 'ի խաչելն՝ զըսպանողն և զաւազակն նախապատուեաց, իսկ 'ի թաղմանն կնքել զգերեզմանն հաւանեցոյց · 'ի յարութեանն զըպարտէ զյայտութիւնն : Նոյն յառնելովն և յերկինս համբառնալովն ոչ ինչ ունէր զինչ բարբառեսցի, այլ զինքեանն իսկ զլուխ ծեծէր ուժգնապէս : Վասն որոյ քան զամենայն տօնից այսր աւուրս նմա գժնդակապէս ցուցաւ, տեսանելով զամենեսեան ամենայն ուստեք զօրս հրեշտակաց սպասաւորեալս, և զամենս հետևողս, իսկ զոմանս յառաջընթացս, զկէսս 'ի դիմի հարեալս, զայլս ոմանս դարձեալ ընդ առաքելոցն խօսեցեալ դառուց, և ասացեալս "Արք գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս · վասն զի այս Յիսուս որ վերացաւս 'ի ձէնջ յերկինս՝ սոյնպէս եկեսցէ, զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս,, · այս Յիսուս՝ որ բազմութիւն հրաշագործութեանցն եցոյց :*

* Աշխարհաց յանձնեալն քննագրին գործոյ յորջնանկի մեկնաբանութեանն հաւատացելոց : Աստուածահաւասարն խնձ միտ դնէք : Ու զինչ տորգեմք զայս ասելն, միթէ ոչ ունէին այս աշակերտքն, մի թէ ոչ տեսանէին զեղեալսն · ոչ աղագէն ասաց աւետարանիչն թէ « մինչդեռ հայէին նոքա, վերացաւ » · իսկ էր վասն մերձ կայլին հրեշտակքն · աւատուցանելով նոցա եթէ յերկինս վերացաւ : Յաղագս երկուց այսոցիկ պատճառաց, մի՝ համարայաց ճմլէին սիրտք նոցա վասն մեկնելոյն տեառն · և զի ճըմլէին՝ լուր զինչ ասէ առ նոսա · « Ոչ ոք, ասէ, 'ի ձէնջ հարցանէ զիս թէ յո՞ երթաս · այլ զի և զայն խօսեցայ ընդ ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս ձեր » · վասն այսորիկ առաք և մերձ կացլին հրեշտակքն, զի զվերնաճանապարհորդելոյն ըղտրտմութիւն անդր 'ի նա դարձութեամբ գալստեանն սփոփեսցեն : Քանզի « այս Յիսուս, ասէ, որ վերացաւս՝ սոյնպէս եկեսցէ » : Արդ զի մի և նոքա զնոյն տրացեն զոր արար Եղիսէ՝ տեսանելով զվարդապետն իւր վերացեալ պատառեաց զպատմուճանն իւր, զի և ոչ ունէր իսկ զոք մերձակայ որ ասէ՝ թէ դարձեալ եկեսցէ Եղիսա· արդ զի մի և սոցա զնոյն արարեալ, մերձ կայլին հրեշտակքն սփոփելով զվատութիւնս նոցա · մի այս են հրեշտակացն մերձակայութեանս պատճառք : Եւ երկրորդ դարձեալ ոչ ինչ ընդհատ յառաջնոյն, վասն որոյ պատճառաց յաւել՝ թէ որ վերացաւս : Եւ զինչ էր այս : Ի յերկինս վերանայր, յոյժ էր միջասն · յաղագս այսորիկ մերձ կացլին հրեշ-

Digitized by Google

Մարդ տէրունեանն վերացմանս որ զլանձաարկան, որպէս ասացաք, օգտալ կազմեաց, իսկ զհաւատացեալս պայծառացուցանել: Ո՛վ ի գեղեցկավայելուչն ծաղկեալ գարունն զծաղկանցն բոյս անենչապիտակ զանազանս ՚ի վեր բաղկացոյց. այգի որակայեղծ և անբաւախիտ ազատակքն, զի աւատացեն նոցա զառ ՚ի յերկինս ճանապարհորդութիւն. որպէս զի մի կարծիցեն թէ մինչև յերկինս եւ, որպէս զԵղիայն, այլ թէ և ՚ի վեր իսկ յերկինս ել. վասն որոյ և ասացին՝ թէ որ վերացաւ ՚ի ձէնջ: Զի և ոչ փոխաբերաբար ինչ զայս յաւել. քանզի Եղիա մինչև յերկինս միայն ել՝ զի ծառայ էր, իսկ որդին յերկինս իսկ՝ քանզի տէր է. նա ՚ի կառս հրեղէնս, և սա յամպս լուսաւորս: Զի յորժամ զծառային պարտ էր կոչել, կառս առաքեաց. իսկ յորժամ զորդին, աթոռ թագաւորական. և ոչ փոխաբերաբար աթոռ թագաւորական, այլ զնոյն իսկ զհայրականն. յաղագս որոյ ասէ առ նա և Եսայիաս. «Ահա տէր նստեալ ՚ի վերայ թեթև ամպոյ». վասն այսորիկ և որդւոյ ամպ առաքեցաւ: Եւ անդ իսկ ելանելովն Եղիայ՝ եթող զմաշկեակն ՚ի վերայ Եղիսէի. իսկ աստ Յիսուս ելանելովն եթող շնորհս ՚ի վերայ աշակերտացն. ոչ միայն միոյ մարգարէի արարող, այլ բիւրս Եղիսէոսս, մանաւանդ թէ քան զնա առաւել եւ մեծագոյնս և պայծառագոյնս:

Յարիցուք այսուհետև սիրելիք և մեք, զվերինն զայն ճանապարհ գնասցուք, զորմէ և Պաւղոս ասէ՝ եթէ «Ինքն տէր իջցէ հրամանաւ ՚ի ձայն հրեշտակապետի. և մեք որ կենդանիքս մնացեալ եմք՝ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ տեառն յօդս»: Արդ ոչ ամենեքեան յափշտակեսցուք, այլ ոմանք մնան և կէսք յափշտակին: Լուր զինչ ասիցէ Քրիստոս. «Երկու աղացեն ՚ի մի երկանի, մին առնուցու և միւսն թողուցու». յայտ է թէ մեղաւորքն թողեալ լինին և պահեսցին ՚ի տանջանս, իսկ արդարքն յափշտակին յամպսն: Զոր օրինակ դէպ թագաւոր ՚ի քաղաք մտանելով, ոմանք պատուով և իշխանութեամբ և բազում ունելով առ նա համարձակութիւն՝ ելեալք առաջի քաղաքին պատահեն. իսկ մահապարտքն ՚ի ներքս պահեալ լինին, ակն ունելով հատուցանելոյ ՚ի վերայ նոցա վճիռ ՚ի թագաւորէն, այնպէս և յորժամ տէր գայ՝ ոմանք համարձակութիւն ունելով առ նա՝ ՚ի մէջ օդոցն պատահեն նմա. իսկ մեղաւորքն և ամբարիշտք և որ բազում խղճեանց չարեաց են գիտակք, աստէն մնան դատաւորին:

Այլ մեք գործեալ պատճառ այսօր աւուրս տօնի զբանս ածցուք: Իսկ որպիսի՞ արդեօք իցէ մարմնոյս տօն: Գարկեշա և մեծ, սիրելիք, և քան զմարդկան միտս գերազանցեալ, և մեծագունից պարգևաց արժանաւորի արարչի իւրոյ նոյ: Այսօր հաշտեցաւ ընդ աստուծոյ մարդկան. այսօր ժամանակեալ թշնամութիւն և երկայն պատերազմ լուծաւ. այսօր խաղաղութիւն զարմանալի այսորէն գտձաւ, որում ոչ եւս ակնկալութիւն յառաջագոյն. քանզի ո՞վ իսկ յուսացաւ եթէ ած ընդ մարդկան հանդերձեալ է հաշտել. ոչ զի անմարդասէր տէրն, այլ զի վհատեալ ծառայն. ոչ զի անգութ տէրն, այլ զի ապերախտ ծառայն: Այսօր ՚ի յերկինս վերացեալ մե ... խանութե անարժան ՚ի թագաւորութիւն եկաք վերին, գերաանցեալք եղաք տեառն յերկինս, հասաք յաթոռն թագաւորական:

ղոցն վայելչանայ պտղովք և գնտակօք, ձիթենեացն ծառք ծաղկեալք բուրեն զանուշահոտութիւն, թզենիք զվաղահասութիւն բողբոջեալ դիտակս յառաջ ընծայեն, և շարժին առ 'ի բարեխառնութենէ օդոյ՝ քաղցրոյս և կանաչագեղ արտոցն հեղլիք լուռ նմանութեան խաղաղածաւալ ծովայինն ալեաց, և ամենայն ինչ 'ի տիրականս վերացման ընդ մեզ պայծառացեալ բերկրի։

Արդ այսուհետև զի և ես զգաւթականն նուագեցից առ ձեզ պատգամս, զոր օրինակ արդ ևս մեզ 'ի ձեռն տէրունականս վերացման երգեաց գուշակն. "Ամենայն հեթանոսք, ծափս հարէք, աղաղակեցէք առ Ած 'ի ձայն ցնծութեան. զի համբարձաւ Ած օրհնութեամբ, և տէր մեր ձայնիւ փողոյ"։ Այլ ուր էր, վերացաւ ուստի ոչ երբէք մեկնեցաւ. քանզի "որ էջն՝ նոյն է և որ ելն 'ի վերոյ քան զամենայն երկինս"։ Ել այլ ոք 'ի մարգարէիցն քարոզեալ, և այլ ոք ընդ առաքեալսն շրջեցաւ. ոչ այլ ոք 'ի ծոց հօր նստեալ, և այլ որ 'ի Պիղատոսէն դատեալ. ոչ այլ ոք 'ի խաչի բևեռեալ, և այլ որ 'ի քրովբէս վերանստեալ. ոչ այլ ոք 'ի Յովսեփայ կտաւօք պատեալ, և այլ որ ափով զարարածս շուրջ փակեալ. ոչ այլ ոք 'ի գերեզմանի եդեալ, և այլ որ 'ի սերովբէիցն օրհնեալ։ Այլ նոյն ինքն որ աթոռակիցն հօր՝ յարգանդի կուսին անսերմնաբար բողբոջեալ, համբարձաւ Ած օրհնութեամբ և տէր մեր ձայնիւ փողոյ։

Համբարձաւ Ած օրհնութեամբ, որ յաւիտենից գոյր արարիչն, որ և յոչգոյութենէ զբնաւս առ 'ի գոյացութիւն էած, որ և ստեղծ իսկ զԱդամ և զմարդկային բնութիւն յանգոյութենէ 'ի գոյութիւն ածեալ եցոյց, որ զհաճոյացեալն զԵնովք 'ի տեղի կենաց փոխադրեաց, որ զՆոյ պահեաց 'ի մէջ ամենակործան ջրհեղեղին, որ զհայրապետն Աբրահամ կոչեաց յերկրէն քաղդէացւոց, որ նախատպաւորեաց Իսահակաւ զխորհուրդ խաչին, որ զհամբերութիւն Յոբայ շնորհեաց, որ զԵղիաս շարժմամբ վերացոյց հրեղէն կառօք, որ 'ի մարգարէսն փչեաց զյառաջգիտողութիւն, որ առաքելոցն զպարգևս բժշկութեան շնորհեաց, որ և առ նոսին գոչէր ասելով. "Քաջալերեցարուք ես յաղթեցի աշխարհի"։ Այս է տէրն փառաց՝ որ համբարձաւն յերկինս օրհնութեամբ, և նստաւ ընդ աջմէ երկնաւորն հօր,

հնազանդեցեր նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօ-րութեանց։

Նոյն ինքն ընկալցի և զխնդրուածս աղօթս մեր, և յաղթողս զմեզ ցուցցէ առ փարձիչն աշխարհի, հնա-զանդեցուցանելով մեզ զբոլոր փառամոլս այսոցն պղ-ծոց, և բարբառեսցէ առ մեզ ասացէ. «Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել ՚ի վերայ օձից և կարճաց», անվտանգս, անխիծ և անարատ պահելով ողջ զմեր շունչ և զմարմինս և զոգի, լցեալս և ուռճացեալս առաքինու-թեանց պտղովք և բարեգործութեանց, որ և ամենեցուն է արարիչ, որ և արժանի արասցէ զմեզ ժառանգել ՚ի միա-սին և զերկնակացն դասս կատարել զանոն։ Որ նմա վայելէ ամենայն փառք և պատիւ և զօրութիւն հօր և որդւոյ և սուրբ հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ո՛վ ինչ ասացից և կամ զինչ խօսեցայց. զո՞ զմեզ կոչեցից, ոչխարս եթէ հովիւս, նաւավարս եթէ նա-ւաստեայս, աշակերտս եթէ վարդապետս. որպէս զար-մացայց ընդ մեր նախանձ, որ քան զհուր ջերմագոյն է։ Ոչխարս կոչեցից զձեզ, քանզի և էք իսկ հեզք և խոնարհք. հովիւս կոչեցից զձեզ, քանզի և էք իսկ նը-մանս տեսան ձերոյ. նաւավարս կոչեցից զձեզ, քանզի էք իսկ յաղեաց ծովու միջի։ Նաւաստեայս կոչեցից ըզ-ձեզ, որ նստեալքդ ՚ի խելս նաւուցն, և առաւելութեամբ խորով ՚ի սաստկաձայն ալեացն ողջ և անվնաս հանէք զնաւն ՚ի յափն ծովուն, և ՚ի նաւահանգիստն խաղաղութեան ձգէք։ Նոյն և աշակերտս զձեզ կոչեցից, զի էք պատ-րաստ առ ՚ի լսել։ Նոյն վարդապետս, զարձեալ ասեմ, և էք։

Արդ այսուհետև զնոյն կամիմ առաջի ձեր սեղան հոգևոր, ոչ որ զմարմինն բուծանէ, այլ որ հոգւով պարարակէ. նա ասացեալ եւս զմարմինն բուծանէ և զհո-գին սրբէ։ Ով ի սքանչելի է սեղան հոգևորական, ոչ որպէս սեղան որկորաստաց կերակրովք զմարմինս զմելկեցուցանէ,

այլ բան է հոգևորական, զհամ անուշական բուրիչ[1]. Իբրև յիշէ մարդ զբուրել հոտոյն, յանմնեկնեան կամի բուրել. որպէս և որ զհամեմանւոր անոյշ արմատ ոք ծամեսցէ և զհամ անուշութեան բուրեսցէ, այլ ոչ և եթ ինքն միայն վայելէ 'ի հոտոյ անուշիցն, այլ որ շուրջ զնովաւ իցեն՝ լցուցանէ։

Արդ պատրաստեցէք զանձինս ձեր, քանզի կամիմ բանս ինչ ձայնել ձեզ. զի որպէս 'ի լողորդաց ոք կամի վայելել 'ի նաւէ անտի 'ի ծով, և մխրճել հարկաւոր[2] ձայնիւ աւետեաց՝ զմարգարիտն խնդրեսցէ առ 'ի գտանել, նոյնպէս և մեք ունիմք փոխանակ նաւուն զՀին և զՆոր կտակարանս, փոխանակ զեկացն զխաչն, փոխանակ նաւավարին զՔրիստոս, փոխանակ նաւաստեացն զհայրսն, փոխանակ օդոյն զՀոգին սուրբ, փոխանակ առագաստին զշնորհսն, փոխանակ նաւավարացն զաշակերտս, փոխանակ բեռանցն զմարգարիտսն։ Այլ[3] խորհեցուք զանձինս մեր 'ի գրոցն 'ի վայր, այլ յօժարութեամբ յանդգնութեան զիմաստութեան ընդարձակեսցուք, ոչ զի զմարգարիտսն 'ի վեր բերիցեմք, այլ որ քան զամենայն մարգարիտս պատուականագոյն է։

Հանգստացուցէք այսուհետև զձեզ աղաչեմ առ 'ի պատրաստել ինձ զլսելիս ձեր. որպէս և յառաջագոյն ասացի ձեզ՝ եթէ պատուականագոյն է քան զմարգարիտս զոր կամիմ վերածել 'ի բանականս ականջոց. Մի անփոյթ առնիցէք և իբրև անխնամ լսիցէք. զի գրեալ է, "Մի տայք զսրբութիւնս ձեր շանց, և մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց"։ Յորժամ խոզս լսիցես՝ մի զանասունս կարծիցես, և շունս յորժամ լսիցես՝ մի շունս խնդրեսցես. զի խոզս զպղծութեանն կոչէ՝ որք յանդգնականութեան կան, և շուն զայնոսիկ ասէ՝ որք վայրապար ընդդիմանան առաջին հրեշտակաց չենեն։ Արդ պատրաստեցէք զանձինս ձեր արժանի մարգարտին, զոր կամիմ ձեզ ընծայեցուցանել։

Ո՛վ և մշակք ոչ ընդ վայրապար առնեն զսերմանիսն ընդ երկիր ցրուեն, եթէ ոչ նախ երկիր ընծեն և արօտ կազմեն և զփուշ խլեն և ակօս բանայցեն և կակղեն-

1 Այսպէս յոյնն. մերն բուրէ։
2 Օրինակ մի մխրճման հարկանէր։
3 Յոյնն արկցուք զանձինս մեր 'ի նաւահանգիստ յանդորրութիւն խնդրոյ, ոչ զի։

ցեն, և առաջս յայնժամ ներբանանիցեն. յորժամ եկես-ցէ անձրև ՚ի վերայ երկրին, յայնժամ առեալ երկիրն՝ պտուղս ծնցի։ Նոյնց կան և ամէն ունին ձմերայնի և ամառայնոյ և ցօղոյ յերկնից և արեգականն շողից և ժամանակի հնձոցն, և առաջս յայնժամ առեալ ժողովեն ՚ի շտեմարանս։ Նոյն եւ ոչ ձմեռն և ոչ ամառն և ոչ արեգականն շողքս և ոչ անձրև և ոչ ցօղ, և ոչ եզինըս ՚ի լուծ գնել, և ոչ մաճ ՚ի ձեռն առնուլ և ակօսս[1] բեկանել և փուշս խլել. այլ՝ այսօր սերմանել, և ՚ի նոյն օր հնձել։ Ոչ է ոչ գործել զերկիր անդամ և անխափանաւ, այլ զգանձակերտս և զխնամատարութիւնս, և ոչ անհնչականն. և երանելի է նմա զի այսպիսի երկիրի մշակեցեալ։ Եւ երանելի է յայնժամ յորժամ ՚ի լուսոյ յականակս խոստացեալ, զի սուրբ գերագործ է։ Երանելի է ձեզ բան աւետարանին, զոր ասէ տէրն ցաշակերտսն իւր՝ եթէ "Երանելի է ձեզ եթէ զպատուիրանս իմ պահէցէք"։

Յօժարեցուցէք զանձինս և ունկնդիր լերուք բանիցս, զի կամիմ ձեզ օրինակաւ ցուցանել բան բանից կարգի եթէ զինչ իցէ տծ։ Սիմոն իցէ տծ ասն որ նաւակցի ՚ի վերայ բարձրաւանդակի և նկատիցէ զամենայն ծով, և տեսանէ ՚ի նոյն նաւս բաղում և զնայսն, զի ՚ի սաստկաց անդնդոց զալեաց վերացեալ բարձրացուցանեն ստատակաւ հողմոյն. այլ հանուս որք ՚ի նաւակաբաց հնարի ընդդէմ ալեացն, ՚ի նաւահանգիստն խաղաղութեան զնաւն յափն ձգել փութայ. զի մի անժամանակ երեկին հասեալ՝ երկիւղալից զարհուրեցուցանիցէ, և մի ընկղմեալ ՚ի վայր նաւն նաւորդի. ընդ այլոց նաւս հանդէպ կշռական հողմոյն հայեցեալ զխորհէ զուարթական Ձմեռնացուորհն, վարատեալս և այլոց ընկերացն ալէկոծս անդնդապատուի լեալս՝ հողմակոծքս նաւաբեկս ապականեալք և մահկանացուք, և ոմանք յապաշաւ անկեալ զարհուրանօք ափս ձեռածեալ բուռն հարկանիցեն և ունիցին զփայտ կուր լինչ, և ՚ի ծփական ալեացն ՚ի խաղաղ աւեղի ձգիցեն, և զմեռուելոցն զանդամսքն ցրուեալս և վարատեալս, զայն ամենայն նկատեալ տեսանիցէ ՚ի վերայ բարձրաւանդակին։ Այնպէս և տծ,

1 Օրինակ մի ակօսովք առնել։

Digitized by Google

որպէս յառաջագոյն իսկ ասացաք, եթէ 'ի բանից կարգի առեալք:

Այս յորժամ զա̃ծ գիտասցես նստեալ 'ի բարձունս, մի միայն 'ի բարձունս կարծիցես, այլ ամենայն ուրեք. զի ոչ եթէ տեղի թափուր է 'ի նմանէ և կամ 'ի նմանէ հեռի, այլ ինքն իւր տեղի է. նա ամենայն է յամենայնի, ուրեք ոչ բովանդակի: Զի զինչ կարասցէ ունել զամենակարողութեան բնութիւնն և զանհպելութեան և զանբաւն և զանքննելին, զանտարրականն և զանպատումն և զանմատոյցն. զի ով այսպէս իցէ՝ նա ա̃ծ իցէ, և որ չէ այսպէս՝ նա չէ ա̃ծ: Զի որք ա̃ծապաշտք իցեն, այսպէս պարտ է խնդրել զա̃ծ՝ եթէ նա է յայս մեր, որպէս և գրեալ է՝ եթէ "Այս են կեանք յաւիտենականք, զի ծանիցեն զքեզ ճշմարիտդ ա̃ծ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի զՅիսուս Քրիստոս":

Յայսմ տեղի ստգտանեն զմեզ հերձուածողքն, որք կարդան և ոչ խնդրեն, որք զանհասանելին խնդրեն և ոչ խոստովանին: Զի յորժամ զՔրիստոս լսիցես՝ մի զա̃ծ միայն կարծիցես և մի լոկ միայն զմարդկան ստացութիւնս, այլ զերկոսեանն միաբան: Գիտեմք զՔրիստոս քաղցեալ, և գիտեմք զՔրիստոս յեօթն նկանակէն և յերկու ձկանցն կերակրեալ զհինգ հազարս. գիտեմ զՔրիստոս ծարաւի, և գիտեմ զՔրիստոս ըմջուրն 'ի գինի դարձուցեալ. գիտեմ զՔրիստոս 'ի նաւի, և գիտեմ զՔ̃ս գնացեալ 'ի վերայ ծովու. գիտեմ զՔ̃ս մեռեալ, և գիտեմ զՔ̃ս յարուցեալ զմեռեալս. գիտեմ զՔրիստոս զի կայր առաջի Պիղատոսի, և գիտեմ զՔրիստոս նստեալ ընդ աջմէ Հօր. գիտեմ զՔրիստոս թշնամանեալ 'ի Հրէից, և գիտեմ զՔրիստոս երկրպագեալ 'ի հրեշտակաց. է ինչ որ լոկ ա̃ծութեանն խնդրեմ, և է ինչ որ լոկ մարդկութեանն, վասն այնորիկ յերկոցունց ասի Քրիստոս. գիտեմ զՔրիստոս 'ի Մարիամայ ծնեալ, և գիտեմ զՔրիստոս յառաջ քան զյաւիտեանս ծնեալ 'ի Հօրէ: Փառաւորեսցուք այսուհետև զտէր մեր Յիսուս Քրիստոս, զանքակ պարիսպն, զհիմն որ 'ի վերայ վիմի հաստատեալ, որ ասէ ցՊետրոս՝ եթէ "Դու ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց մի յաղթահարեսցեն զնա": Այնպէս և առաքեալն Պաւղոս ա-

[illegible] զմեզ և ասէ՝ եթէ «Հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն Յիսուս Քրիստոս»:

Նորա [illegible] զամենեսեան՝ հեզ և քաղցրաբարոյս լինել առ միմեանս. մի [illegible] իրօք [illegible] կամ ըմպելով կամ [illegible] իւիք [illegible], և [illegible] զառաքինութեան և զառաքինութիւնս [illegible]: [illegible], մի [illegible], «զի ոչ է մեզ մարտ պատերազմի ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ [illegible] աշխարհակալս այսորիկ»: Փութասցուք և մեք [illegible] 'ի [illegible] [illegible]: [illegible] եթէ [illegible] [illegible] զդատաստանն իւր զի զմեզ դատեսցէ, այլ զի [illegible] 'ի դատաստանէն ազատեսցէ. քանզի [illegible] [illegible] և [illegible], որպէս և վկայէ Պաւղոս 'ի [illegible] եթէ «[illegible] [illegible], [illegible] և երկայնամիտ, որ ոչ ածէ զ[illegible] իւր [illegible]». և դարձեալ 'ի միւսում անդ ասէ. «Եթէ ոչ [illegible] առ նա, [illegible] իւր սրբեալ է, [illegible]. 'ի նմա է [illegible] [illegible]»:

Այսպէս ասէ [illegible], ոչ զի զմեզ դատեսցէ, այլ զի [illegible] [illegible]. զի եթէ [illegible] [illegible] մեր, ոչ [illegible] 'ի վերայ մեր: Մեռաւ, զի քեզ անմահութիւն շնորհեսցէ. քաղցեաւ, զի քեզ [illegible] իւր [illegible]. ծարաւեցաւ, զի քեզ [illegible] [illegible]. Նստաւ 'ի յովանակի, զի զքեզ 'ի վերայ քերովբէից նստուցանէ. Մերկացաւ, զի զքեզ [illegible]. [illegible], զի զքեզ ազատեսցէ. աշխատեցաւ, զի զքեզ հանգուսցէ. Եկն 'ի ծով, զի զքեզ [illegible] արասցէ. Ննջեաց, զի զքեզ [illegible] արասցէ. 'ի [illegible] ծնաւ, զի զծնունդս կանանց ազատեսցէ 'ի մեղաց. Կոչեցաւ մանուկ, զի զքեզ [illegible] արասցէ. կոչեցաւ և որդի մարդոյ, զի դու կոչեսցիս որդի Այ. Էառ զմերս, և ետ զիւրսն. Եկաց յաղօթս, զի զքեզ [illegible]. որպէս առ Պ[illegible] ասէր «Հայր, փառաւորեա զորդի քո, զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ. Եւ յետ [illegible] [illegible] փառաւորեցի և դարձեալ փառաւոր արարից. [illegible] զի [illegible] [illegible], այլ [illegible] [illegible] [illegible] զի հաւատասցեն եթէ դու առաքեցեր զիս»: Ո՞չ

միանգամ յանձին կրեաց, ոչ վասն իւր և ոչ վասն հօր, այլ զի՛ ապրեցուսցէ խաչիւն զամենայն ազգս մարդկան:

Ո՛վ է կարող գիտել, ասել, զզօրութիւն խաչին, և որպէս պարտ է 'ի վարդապետութեան պատմել, բայց ի խաչէն քրիստոնէից յոյս, մեռելոց յարութիւն, կաղաց առաջնորդ, անյուսից յոյս, մոլորելոց ճանապարհ, ցուպ կաղաց, աղքատաց մխիթարութիւն, մեծատանց սանձ, ամբարտաւանից քակտումն, պագշոտաց ապաշխարութիւն, ախոյեան գիւաց, քանսարկուին յաղթութիւն, մանկանց դաստիարակ, նաւավարաց ուղղիչ, տագնապելոց նաւահանգիստ, պատերազմողաց պարիսպ, հայր որբոց, վերակացու այրեաց, անխլուաց դատաւոր, արդարոց խորհրդակից, նեղելոց հանգիստ, աղքատաց պահապան, արանց գլուխ, ծերոց կատարումն, խաւարելոց լոյս, թագաւորաց վայելչութիւն, զէն յաւիտենական, բարբարոսաց մարդասիրութիւն, ծառայից ազատութիւն, անխրատից իմաստութիւն, անօրինաց օրէնք, մարգարէից քարոզ, առաքելոց պատմութիւն, մարտիրոսաց պարծանք, վանականաց ճգնութիւն, կուսանաց զգաստութիւն, քահանայից ուրախութիւն, եկեղեցւոյ հիմն, տիեզերաց զգուշութիւն, մեհենաց աւերիչ, բագնեաց կործանիչ, ճենճերաց ապականիչ, Հրէից դայթակղութիւն, ամբարշտաց կորուստ, տկարաց զօրութիւն, հիւանդաց բժիշկ, բորոտաց սրբիչ, անդամալուծաց առողջութիւն, քաղցելոց հաց, ծարաւելոց աղբիւր, մերկոց վերարկու: Ո մերկութենէ յորժամ լսես, ոչ զնմանութիւն մերկութեան ասեմ, այլ զանհաւատութիւն. զի յորժամ հաւատայցես, յայնժամ զգեցցիս զՔրիստոս: Սուրբ Պաւղոսի որ ասէ. "Որք 'ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք": Եւ յորժամ զՔրիստոսէ լսիցես, մի՛ [illegible] միայն կարծեսցես և կամ զնմանութեան անուանութիւն ինչ բաւական համարել, այլ զերկաքանչիւրն: "Որ և նմա պարտ է անյապաղ քարոզել ձեզ, և ձեզ զգուշանալ և զգաստանալ": Հանապազ[1] թերևս վարդապետեալ

[1] Մթութիւն իմաստից, թերևս 'ի շփոթութենէ բառ միոյ ևեթ օրինակի, քանզի պակասի յայլսն, պարզի 'ի յունականին' որ ասէ. Չի կամիմ զամենեսեան վարդապետս լինել: Այլ Քրիստոս ասէ, վասն զի մեր... [illegible]

ձեր ամենեցուն, վասն զի Մարդասէրն մարմին զգեցաւ, մարմնանալով մարմնով բան իբրև յաւէտէ, որդի՝ իբրև 'ի Հօրէ, մարմին՝ իբրև 'ի մայրենոյ մյ, և ած անապականն: Ըստ աւետարանչին Յովհաննու՝ եթէ «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ ած, և ած էր Բանն. Նա էր 'ի սկզբանէ առ ած. ամենայն ինչ նովաւ եղև»:

Տեսանե՞ս զի նա է որ ձգեաց զերկինս բանիւ, և այ-գի աշխարհի գեղեցիկ աստեղօք զարդարեաց, և եցոյց զեր-կինս իբրև զհովանի ծածկոյթից: Նա է որ զարեգական լուսաւորեաց՝ կարգեալ նմա ընթացս. նա է որ զլու-սին մեկնեաց ընդ արևմուտս. նա է որ զերկիր հաստա-տեաց 'ի վերայ ջուրց. նա է որ երկրի հրամանս ետ բու-սուցանել զկանաչ խոտոյ և ազգերաց բխել ջուր, զգե-նուլ զերանց և ձահիճս ժողովել, և ծովու սահման եդ աւազով, և ջուրց՝ հանել շունչ կենդանեաց, օդոց ծնել, և զերկինս կշռեաց, ամպոց գնալ, անասունս չորքոտա-նիս, զեռունս և թռչունս թևաւորս: Նա զինչ ես ա-րարեալ զհրեշտակս, զհրեշտակապետս, զաթոռս, զսե-րովբէս, զքերովբէս, զիշխանութիւնս և զպետութիւնս, զժամանակս և զաւուրս, զամիսս և զշաբաթս և զօրս, զտիւ և զգիշեր, զլոյս և զխաւար և զամենայն յաւե-լուածս կարգեաց: Հուսկ յետոյ արար զմարդն բանա-կանութեամբ պատկերի իւրոյ, և եդ զնա 'ի դրախտին:

Իբրև ետես զմարդկան ազգս 'ի բանսարկուէն հա-պատրեալս, զանձգուածս մեր առեալ՝ բնաւեալց ընդ խա-չին ընդ իւր. զի որպէս փայտիւն եղև յանցանելն, նոյն-պէս 'ի ձեռն փայտին փրկութիւնն: Նախանձէր բան-սարկուն՝ յերկնից յերկիր անկեալ, և զի Ադամ 'ի դրախտին էր, իբրև զքնար[1] առեալ զօձն մտանէր առ նա և այնպէս խօսէր ընդ նոսա որք 'ի դրախտին էին. քանզի անմարմնական էր, առ մարմնականն մերձենալ և խօսել ոչ կարէր. և ասէր ցԵւա. «Բարի է ծա-ռոյն տեսիլն և գեղեցիկ 'ի ճաշակել. զի յորժամ ու-տիցէք 'ի նմանէ, լինիջիք իբրև զածս»: Նա յառաջ հաւա-նեցուցանէր զԵւա, և նա հաւանեցուցանէր զայր իւր: Եւ իբրև ճաշակեցին, երևեցան մերկք: Յայնժամ առէ

յաւէտէ որդի. որդի, վասն զի 'ի Հօրէ. ած, վասն զի ... Հայր:
մարմին, վասն զի մարմ 'ի մայրենոյ մյ.

1 Օրինակ ինչ.

ա̄ծ ցԱդամ “Ո՞ւր ես„։ Յորժամ լուիցես՝ ուր ես, մի անգիտութիւն կարծիցես զայդ։ Վասնզի ասէր ցնա բանսարկուն՝ եթէ “Յաւուր յորում ուտիցէք, լինիցիք իբրև զա̄ծս„. իբրև կարծէին թէ լինիցին ա̄ծք, վասն այնորիկ ասէր ցնա ա̄ծ՝ Ադամ, ուր ես. ցուցանէր նմա թէ մարդ մնացեր։ Ո՛չ պատուիրեցի քեզ չուտել ՚ի ծառոյ անտի. կերար, յանցեար։ Այն էր զոր ասէր՝ ուր ես։ Զտերև թզենւոյն արկեալ զիւրեամբք ծածկէին զանեսիլ մեղացն։ Այլ զինչ ասէր Ադամ. “Զձայն քո լուայ զի գնայիր ՚ի դրախտի աստ„. և դարձեալ ասէր. “Կին զոր ետուր ցիս, սա յանցոյց զիս„։ Այլ ասէ ցկինն. “Զի՞ գործեցեր„։ Այլ ասէ կինն. “Օձն խաբեաց զիս„։ Ո՛չ, ասէ, և համարեաց թէ զքեզ ետու առն քո. մի՞թէ զօձն ետու քեզ։ Զայս զնէին պատճառս, յայտ է եթէ զանձինս արդարացուցին։

Այլ ասէր ա̄ծ ցԱդամ. “Անիծեալ լիցի երկիր ՚ի գործս քո, փուշ և տատասկ բուսցին քեզ, և քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո„։ Այլ ցկինն ասէ։ “Տրտմութեամբ ծնցիս որդիս, և առ այր քո դարձ քո, և նա տիրեսցէ քեզ„։ Իսկ զօձն ասէ. “Ի վերայ որովայնի քո գնասցես, և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց. նա սպասեսցէ քում գլխոյդ, և դու սպասեսցես նորա գարշապարին„։ Այլ ընդէ՞ր զօձն անիծանէր և ասէր՝ “Ի վերայ պորտոյ և որովայնի քում գնասցես, և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց„։ Այլ ընդէ՞ր զորովայնն անիծանէր. քանզի ՚ի նմա էր սիրտն՝ որ իմացաւ զչարն. իսկ զպորտն՝ քանզի կերակրովք խաբեաց. այլ եթէ՝ հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց, քանզի Ադամ յերկրէ հողեղէն էր։ Այլ առնուն երկքեան զհրաման պատուհասին, քանզի երկքեանն անցին զպատուիրանաւն։ Այլ քանզի փայտիւն լինէր յանցանքն, որպէս և յառաջագոյն ասացի, վասն այնորիկ և նա զսկիզբն զանդուածոյ մերոյ բևեռեաց ընդ խաչափայտին. զի որպէս ՚ի ձեռն փայտին յանցանքն եղեն, նոյնպէս և ՚ի ձեռն փայտին փրկութիւն եղիցի։ Այսու ամենայնիւ փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։



Digitized by Google

## ՅԱՂԱԳՍ ՀՈԳԵԼՈՑ ՀԱՆԳՈՒՑԵԱԼՈՑՆ, ՄԱՆԱՒԱՆԴ ՈՐ ՏՂԱՅՔ ԱՆԺԱՄԱՅՔ ԹՈՂՈՒՆ ԶԱՅՍ ԿԵՆՑԱՂՍ

Որ այսու հետեւ մանաւանդ քան յառաջագունիցն[1] փութապէս[2] վարդապետութեանց մտցուք 'ի ներքս. քանզի բազում անգամ գիտէ քան մխիթարել զցաւս. գիտէ վարդապետութիւն չափաւորապէս լուծանել զտրտմութիւն: Վասն որոյ գնացեալն յորոց երէկ ընդ մեզ, այսօր ուսանիմք զի ոչ գոն ընդ մեզ. այլ կամ առ ուրն փախուցեալք, կամ անկեալք 'ի վերայ մահճուց. և այսոցիկ ամենեցուն մեզ ածել ունել է: Վասն որոյ բազումն առ մեզ ուսանիմք զայս, անզգամս յեկեղեցւոջ խռովութիւնս, սգաւորաց զարտասուս, զքաղցոց զանկարգ զկոծս: Վասն որոյ յուղարկողն յաղագս այսոցիկ աղաչեցի և յուշ արարի՝ թէ պարտ է գոհութեանց և հանգերուեանց տանել զզուարթաց իւրեանց զննջումն, և մի այսպէս ծանակ լինել, և մի իբրև կորուսեալ զերթեալսն առ Ած համարել, մանաւանդ որք աղայք անարատք թողին զայս կենցաղս: Վասն որոյ մի զնոսա, այլ մանաւանդ զմեզ զմեզէք զցածեալ զանձինս մեր ողբասցուք: Զի եթէ ոչ այսօր սթափեալ ուսուցանիք 'ի միտ, երբ ապա դարձցուք յաղթութիւն. և եթէ ոչ մահ եղբօր քո իմաստնացուցէ զքեզ, ով ապա դարձուսցէ զքեզ. եթէ ոչ մեռեալ ուսանելով եկեսցես յապաշխարութիւն, երբ ապա դարձցիս 'ի բարի. և եթէ ոչ 'ի գերեզմանս հայելով ուղղեսցես զվարս քո, երբ ապա դարձցիս յանձնիսն: Ահա զայսոցիկ ուսանիմք, ահա զնոյն կրեմք և ուսանիմք փորձիւ:

Վասն որոյ խնայեսցուք աղաչեմք, մի 'ի նանիր և 'ի զուր խռովեսցուք. մի իբրև անմահք բարբանջեսցուք: Քանզի մի է ճանապարհ մահուն, և ընդ այլ ոչ գոյ անց. մի է ժամանակին և աչաղին է ժամն. հասարակաց է բաժակն և ամենեցուն տուեալ. մի է կանոնըն

1 Իսկն՝ առաջնոց աւուրցն:

2 Օրինակ մի՝ յափշտակել:

և ընդ այլ ածոց ոչ ունի. ամենեցուն է պարգեւ և հասարակաց երկինքն. մի է պտուղն և սկիզբն, և ամենեցուն կատարածն։ Աստուածային է տուրքն և անկն ոչ տանու. վասն զի ոչ ՚ի թագաւորաց երկնչի, ոչ քահանայս պատուէ, ոչ յոսկիս գթոյ, ոչ գեղեցկութեան տղորմ, ոչ ՚ի մեծամեծս խնդրէ, ոչ ՚ի տղայոց զանց տանէ, ոչ յիշխանաց դողայ, ոչ ՚ի բանաւորաց երկնչի, ոչ զինուց գնի, ոչ յամենքէ ամեն առնու, ոչ զոք առնու ուրուք փոխանակ. այլ հասարակ ամենեցուն հասանէ մահ։

Նման որոյ և անտանելիք խակ, զի որ այսօր ընդ մեզ, ՚ի վաղիւ անդր յառաջեաւ քան զմեզ. որ այսօր բարեկամաւոր ողջունեն զմեզ, այդուցն ողորմելագոյնս յուղարկեն ՚ի մէնջ. որ այսօր ՚ի կենցաղումս, այդուցն ՚ի գերեզմանի. որ այսօր յերկինքն փառս, վաղիւն յարգահնս զազրութե. որ այսօր խաղաղիք անուշիւք օծեալք, այդուցն հոտեալք չարաչար. որ այսօր ատատ փափկանան, այդուցն անոզ սգան զառանցեալս. և պարզաբար որ այսօր յղփացեալ, վաղիւն դառնագարեալ։ Օրն բաղում անգամ խորհրդեալ, և զնմջումն նոցա լսեալ՝ առնելք առ միմեանս. ուր այս անուն իշխան. և լսեմք եթէ անցաւ։ Այլ ուր հզօրն և մեծն. և պարձեալ ասեմք թէ էանց։ Այլ ուր երևելի թագաւորն. անդ, ասեմք, յառաջեաց և նա։ Ուր. ուր ահաւորն ահաւորաց հզօրն և թագաւորն յաւիտենից, դատաւորն անհրաժեշտ։ Անդ. ուր արդեօք կամ յորում տեղւոջ իցեն յառաջեալքն՝ ոչ ոք կարէ ասել. այլ այնչափ միայն գիտեմք, թէ անդ՝ ուր թագաւորն թագաւորաց է և արարիչն արարածոց, հզօրն և թագաւորն յաւիտենականն, դատաւորն հոգւոց և մարմնոց։

Յայնժամ մեծի և ահագին ատենին ուր ոչ է աղաչել, այլ ողալ. ուր ոչ են պաճուճանք, այլ խուարումն. ուր ոչ է զգաղումն, այլ տանջանք. ուր ոչ են բամբասանք, այլ պատասխանատրութիւնք. ուր ոչ է մեծանալ, այլ տարտել և դողալ. ուր ոչ է ակնառութիւն, այլ արդարադատութիւն. ուր ամենեքեան մեք առաջի կամք ծառայք և ազատք, քաղաքաբնակք և անապատիք, մեղաւորք և արդարք, ոմանք պսակեալք և ոմանք ամաչեցեալք։ Ուր անդ թագաւորաց երևելի փառք, ուր իշխանաց ամբարտաւանութիւնք, ուր մեծատանց ան-

գթութիւնք կամ դատաւորաց անխտրութիւնք, ոչ գեղեցկութիւն միաբանութեանն բազմանդամեայ. միաբանութիւն՝ անզգամից[1], որ երկայն յոյս կենաց ունէր. միաբանութիւն՝ խաղաղական սիրոյն, բազմախոնարհոկին, յորժամ ընդ բազմօք անկեալ զբազմանմանս, որ չարաչարս գնէր խնամն մարմնոյն. միաբանութիւն՝ յորդեամանդն առ 'ի պատրուածս, մեղկոտ և թշուառական, խառն դիւրաթութեամբ, հասանի պատրաստ առ 'ի կորզել. միաբանութիւն՝ երագ դիւրամատուցանելի, ստուեր անցաւոր. միաբանութիւն՝ անմած ակք, անցաւ սիրտ, 'ի վեր ամբարձեալ ակն, ձգաց դիւրաշէջ. միաբանութիւն՝ եամանգն արեան և կայր յանցանաց, ամփոփութիւն անպատրաշաճից. միաբանութիւն՝ երկխոր բարեբախ, և աամեն նոյն երը անկարգս փափկերանս: Իսկ որ առ խոտ և յանդուգն, անդ ողորմելի. որ առա արբեալ է 'ի գինւոյ, անդ հարոտ լինի կամ թի մեղ չրոյ. որ արա 'ի զբօսանս[2] լեզուի, անդ լեզուն չարաչար տոչորի. որ առ պէսպէս հանդերձիւք դիպակաց զարդարեալ, անդ մերկ կայ տառապի ահաւոր բեմին:

Ո՛վ իմն ասեր, տուր ինձ զայս օր և առ զկայինն. զի ոչ տեսանեմ զքեզ զինչ ես առա, այլ անդ ակն ունիմ քեզ թէ ուր լինես: Ո՛վ իմն ասեր թէ մարդաւոր է ամծ. թէպէտ և մեղայ՝ կարեկից լինի ինձ: Այլ վանոյնորինի առա ներէ, զի անդ տանջէ. առա թոյլ տայ ոպէս մարդասէր, անդ քննէ. առա ակն ունի դարձի յուղղութիւն, անդ մատնէ հրոյն անշիջի, որդանն անքնոյ[3], տարտարոսին ցրտագնի. իսկ առա իբրև զարեբար ներէ յաւուր ուղղութեան: Ո՛ւր անդ իմաստունն, եղբարք. ո՛ւր հզօրն, ո՛ւր ամէնվեր և աղմուկք նոցա, ո՛ւր ձայնք և ընթրիք զանազանեալ խորտկաց, ո՛ւր ոսթմբկօք և պարուք զգլխեն ըմպեն, ո՛ւր պէսպէս կերակուրքն, ո՛ւր բազմախառն[4] ձիընթացքն և այլոց տեսարանաց, ո՛ւր[5] առանձ թէատրոնացն: Նոյն այս լինի յորժամ եղբարքն մեր քաղցեալք և ծարաւիք 'ի չարչարանս և 'ի դժնդակութեան, 'ի մերկութեան և յար-

1 Խմն. որպէս անզգայութիւք:

2 Օրինակ մի առաւ 'ի բամբասանս, անդ:

3 Երկու օր. անդնի:

4 Զօրս օր. բազմախոհ:

5 Մի օր. ուր թէատրոնն:

տառապու՝ մահու ցանկացեալք յանդաւ տրտմութենէն։ Նոքէ, ժամանկն որ ամենեցուն առաւելի՝ եղև աշխատելեացն կարօտելի, և կենդանար այս որ ամենեցուն ախորժելի՝ եղև նոցա դարշելի, և լոյսս այս որ ամենեցուն փափագելի՝ եղև նոցա ատելի։

Օրհնեալ է Տէր որ զամենայն ինչ յարդարէ յօգուտ մարդկան։ Այլ է չար մահ, ով եղբարք. և այս ոչ է իմ բանս, «Մահ մարդոյ հանգիստ է» Տէայինն Ճառէ Յոբ։ Զի որ մեռանին՝ արդարացեալ է 'ի մեղաց և դադարէ յաշխարհիս ժլատութենէ, և արգելու յաւելլուլ զչարիս, և ցածնու 'ի յաճախելոյ բեռինն մեղաց, և լաւ 'ի բարկացուցանելոյ զՏէր։ Մահ մարդոյ հանգիստ, տղայոց մխիթարութիւն, ծերոց ներումն, աշխատելոյ հանգիստ, պարտականաց վճարումն, հագացողաց լուծումն, վշտացելոց մխիթարութիւն, մեղաց խափանումն։ Իսկ եթէ ոչ կայր մահ առաջի, զմեռանս ուտէաք արդեօք. և եթէ ոչ զդատաստանի զակատեանն մնայաք, կենաց յոյս ոչ ունէաք. և եթէ տանջանաց ահն ոչ ունէաք, ոչ երբէք դադարէաք 'ի մեղաց, և ոչ 'ի յանցանաց 'ի բաց կայաք։

Տես զՏեառն մարդասիրութիւն, զիարդ որ յանցանացն պատիժք՝ եղեն պատճառք փրկութեան։ Զի եթէ արդար է վախճանեալն՝ խնդայ, վասն զի վստահութեամբ և հանգստիւ առ Տէրն գնայ. իսկ եթէ մեղաւոր է՝ մի արտասուեր և մի տրտմիր, վասն զի շահեցաւ չյաւելլուլ զեռևս մեղաց։ Եթէ մեք առէին մնայաք, յիրաւի արդեօք լայաք զվախճանեալսն. իսկ եթէ ամենեքեան ամենայն իրօք անդր եմք գնալոց, ապա մի զուարկուս յառաջեալսն քան զմեզ սգասցուք. և մի զոր 'ի վերայ ննջեցելոցն բարեաւ կատարեմք, զայն 'ի ձեռն չարաչար արտասուացն խափանեսցուք։ Ոչ տեսանէք որպիսի կարգս կատարեմք 'ի վերայ ննջեցելոցն. սաղմոսիւք և օրհնութեամբ յուղարկեմք զնոսա, զոր առ Տէրն գոհութիւն նշանակեմք. նորովք հանդերձիւք պատեմք, նոր զգեստ անապականութեան նշանակեալ. մեռոն և ձէթ հեղումք, զօծումն մկրտութեան գուշակեալ՝ երթալ ընդ նոսա թօշակ հաւատոյ. խնկօք և ջահընկալութեամբ յուղարկեմք, ցուցանելով թէ 'ի խաւարայլին կենցաղոյս լուծեալ՝ առ լոյսն ճշմարտու-

թեան չոգաւ. ընդդէմ արևելից գաւառացն ուղղեցի, զյաղթութիւնն 'ի ձեռն օրհնակի նշանակեաց[1]։

Նզա եթէ յաղթութեանն հաւատասցէ, մի այնպէս տրտմեսջիք որպէս այնոքիկ որոց ոչ գոյ յոյս յաղթեան. քանզի որ ոչ ունի զյոյս յաղթութեան, յիրաւի լայ զվարձատրութեանն իւրև զկորուսեալ հաւատարիմ։ Նաև զայս խօսք՝ արարցեն հեթանոսաց մանկունք, զայն արարցեն սաստկապաշտութեան ժողովք. բայց մեք Քրիստոսի լուիցուք և հաւատասցուք եթէ "Նշխեսցէ ժամանակ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն Այ, և որք լուիցեն կեցցեն"։ Նա զարձեալ թէ "Յարիցեն մեռեալք որ եղեալ են 'ի գերեզմանս, և նորոգեսցի երկիր"։

Նզա եթէ յառնեն մեռեալք, որպէս և է իսկ աննայն իրօք, մի այնպէս ծանեալ լիցուք 'ի վերայ մեռելոցն, աղաչեմ. մի հաւատացեալքս ընդ անհաւատից կարգս նախանձեսցուք. մի զհանդերձեալ մեր պատասխացուք, այլ մխիթարանօք բացցուք զախտս մեր 'ի զուարթութիւն, զի և մեզ նոյն բաժանի կայ առաջի։ Մի զարզուկս մերկացեալ տանջեսցուք, զի մի հեթանոսացն նմանեսցուք. և[2] մի լալականս կոչեսցուք, զի մի առաւելագոյն զպարկեշտութիւնն Այ շարժեսցուք 'ի մեզ. մի զհեր գլխոց մերոց հոլանեսցուք[3], զի մի զգլուխս մեր զՔրիստոս յամօթ արասցուք. մի լացցուք առաւել երկայն, զի մի անհաւատք յարութեանն լինիցիմք. մի լերուք մերովք հայհոյութեամբ խոտեսցուք, զի մի զանձինս և զմեզ կորուսցուք։

Արդ ի՛ եղբարք, զոհացի՛ր և օրհնեա, երկիրպագեա աւանդողին և առողին 'ի քէն. փառաւորեա զընդունողն զոր սանեղծ և ընկալեալ զարտուղ որդեակն քո անարատ. երկիրպագեա ընդ Յոբայ[4], մեծարեա ընդ առաքելովքն. զոհացի՛ր զի քեզ արժանաւորեցար մատուցանել պատարագ անարատ և խունկ ընդունելի փեսային Քրիստոսի որպէս երբեմն Աբրահամ։ Քրիստոս էառ, երկիրպագեացուք. սանեզծողն վերստին սանեղծ, մի տրտմեսցուք.

1 Երկեք օր. նախադասութեամբ։

2 Ցայգինական պահպանէր և մի լալականս կոչեսցուք. յաւելեալ 'ի յանէն։

3 Երկեք օր. խոլեսցուք։

4 Երկեք օր. ընդ Յոբայ մեծարեսցի և առաքելովքն։

սասացողն զառաջուածն խնդրեաց, մի խառնեսցուք, զի ՚ի կարեմք խսկ ոչ։ Աղքատին տուր, փառաւորեա զա-ւուրն զՔրիստոս, զի վասն քո եղեւ մահկանացու։ Տը-ղայն տուր, գոհացիր օրհնութեամբ, զի վասն քո եղեւ երբեմն տղայ եւ եդաւ ՚ի մսուր։ Ծառային եւս ՚ի քեն գոհացիր, զի վասն քո եւս զծառայի կերպարանս առեալ բերէր արարածոց։ Ազգի միածին թողեցեր՝ փառաւո-րեա, անկանելով առաջի նորա պաշտամբք, յիշեա զի վասն քո եւս զորդին իւր միածին եւս մարմնով ՚ի մահ։ Զաւ ՚ի կուսանացն եսուր զզուարթն՝ գոհացիր, մի գուցէ տրտմեալ ես՝ այլ եւս տացես։ Զանմահն քո յուզարկեցեր, օրհնեա եւ զգոյշ լեր. մի առհարկանիր ընդ տարարքն, զի մի եւ դու երթիցես։

Զինչ առնես, ով մարդ. տեսանես եղեալ զմե-ռեալն, եւ յանդգնիս հայհոյել. առ խորհրդոյս պարտիկ կաս, եւ ընդ բաժանողին զհոգիտ զգոյժ դնես։ Հանգար, առնելք ես, եւ դու զմեծ թշնամանես։ Զի դատիս ընդ դատաւորին, կամ զի առհարկանիս ընդ անյաղթին, եւ զի խռովիս տրտմութեամբ եւ արբենաս ներհակութեամբ[1]։ Զտեսանեն որպիսի աչհաղին է խորհուրդս այս, զի մեզ այսպիսի խսկ մեռան նոյն անցք դժնդակք. զի թէպէտ եւ չար եւ դառն է մահ, սակայն ընդ այն ա-մենեքեան անցանելոց եմք։ Տեսանեն զի թէպէտ եւ չար է Հանդարարհն, սակայն ամենեքեան ընդ նա գնամք։

Աթարես, ով մարդ, ՚ի տրտմութենէդ. նա անպէտ զնի, եւ դու որպէս ՚ի խաղոն կաս. նա տանջի, եւ դու ընդ վայր զմբաղիս. նա սարսեալ դողայ, եւ դու չարա-րատեն. նա զարհուրեալ խռովի բոլորովին հարեալ թնդմամբ, տեսանելով զոր ոչ երբէք եսեն եւ լսել զոր ոչ երբէք լուաւ. աշխատեալ եւ քրտնագին եղեալ որ-պէս ձիակ[2] ՚ի սաստ խորշակի, եւ յամենեցունց ՚ի մէջն հրաժարէ եւ ողջոյն տայ որքան հասատանեաց զնա տէր ՚ի միտս իւր, եւ կարէ լեզու նորա բարբառել։ Աղջ նմա-ցէք, ասէ, եւ վասն իմ աղօթս արարէք. քանզի Հա-նապարհ երթամ զոր ոչ երբէք գնացի, եւ յաշխարհ հեռաւոր զոր ոչ երբէք տեսի, եւ յերկիր հօղուոց տա-տի ոչ որք դարձաւ, եւ յօթեվանս աչհաղնս ուր ոչ որք

---

1 Օրհնակ մի արբենալամբեանմբ։ 2 Նրբիւա որ. ձիյոյ։

հեռանէ ընդ իս, և առ դատաւորն ահաւոր ուր ոչ գի- տեմ զինչ պատասխանէ ինձ, և 'ի գործս օտարս զոր ոչ գ- պատահեաց ինձ։ Ահա խնդրեմ օգնական, և ոչ որ է որ օգնէ. ահա խնդրեմ փրկող, և ոչ որ է որ փրկէ. ահա 'խնդրեմ ընկեր հեռանել ընդ իս, և ոչ որ է որ կարե- կից լինի ինձ։ Ո՞ւր է հայրն որ ծնաւ զիս. ո՞ւր է մայրն որ երկնեաց. ո՞ւր է եղբայրն, որ ոչ ապրեցուցանէ եղ- բայր զեղբայր և ոչ փրկէ մարդ զմարդ։

Օրինակ բարբառին առ մեզ, զարմանալիս խօսի և արդա հրաժարեալ գնաց. վասն զի «Ո՞վ է մարդ որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր 'ի ձեռաց դժոխոց»։ Օրհնեալ է տէր յաւիտեանս. զինչ է մարդ, ով եղբարք, ահա անկեալ դնի և յոչ- ինչ 'ի կենցաղումս հողի. ահա լռեալ դադարեաց յա- նայնութեա։ Փակեր ինչ ջերմին, և ամենայն խափանեցաւ. մի ժամ. և երևելին աներևոյթ եղև. 'ի մի[1] քթթել ական, ելանէ հոգին, և մարմինն դառնայ 'ի հող, և յայնժամ առաւել կորիցեն ամենայն խորհուրդք նորա։ Այ- նպէս ժամ թողցէ այր զհայր իւր և զմայր և զեղբայր և զազգատոհմ և զկին և զորդիս և զդստերս իւր, և գնասցէ միայն միայնացեալ զձեռնատուրս իւր յաւիտե- նականս։ Ընդ[2] նոսա միացուք 'ի ձեռն[3] ամենեցին որ ճա- նապարհորդեն յառաջ քան զերթալն մեր։ Արդարք և զանկեալսն մի անկէք աշխարհ. լուա լերուք և զարդա- րեցուցէք զաղմկեալ ամբոխս. լսեցէք և պատրաստ լի- նիջիք։ Հայեցեալ տեսէք զմեծ խորհուրդն. ապրեցէք և նմին անկն կալարուք։

Եղբարք, տեսէք և մի մեծամտէք. իշխանք և ազատք, հայեցարուք 'ի գերեզմանս և մի ամբարտա- նէք. քանզի տեսանելով զանկեալսն և զորս շեալսն 'ի կեն- ցաղոյս, մի ևս ասիցէս զքեզ իշխան կամ թագաւոր։ Քանզի որպիսի իշխան կամ թագաւոր է նա որ ոչ կարէ ապրեցուցանել զանձն իւր 'ի մահուանէ. այլ և նա դառնայ 'ի նմին բաժակէ. ահա իբրև զմի յամենե- ցունց եղև եղկելի. որ փոքր ինչ յառաջ ահաւորն էր,

1 Օրինակ մի մի քննական ական, և [illegible] մեզ։ եւյն։

2 Ցոյնն Ընդ նոսա [illegible] [illegible] 'ի ձեռս մեր։ նախընթաց [illegible] յառաջ քան զեր.

3 Չորս օր. յամենեցին որ ճանապարհ.

եղև մեռեալ։ Այլ ահա երթայ իբրև զպատանապատեալ, յորմէ երէկ ողջոյն պարտաւորք. ահա խաւարեցաւ և եղև ամենևին սարսեալ. ահա ամենայն իմաստութիւն և զօրութիւն նորա ընկլաւ. ահա բովանդակն զարհուրեալ թմբրեցաւ, և յիրաւի իսկ։ Ո՜վ եւս զիշխանութիւնս հրեշտակականս, և զիւր իշխանութիւնն մաշեցաւ. եւս զգիտութիւնս ահագինս, և զիւրն համարեցաւ սարդիոստայն. եւս կերպարանս անապականս, և եղև եղծեալ կերպարանօք. լուաւ զձայն հատման վճռոյ 'ի վերայ իւր, և առ հասարակ դողաց մարմնով. և այսպէս միախառն եղեալ՝ զարհուրելով ասէր յինքեան, ամենայն իշխանութիւն մարդկան սնոտի է։ Բաբէ, ահա դարք ճշմարիտք, ահա զօրութիւնք հզօրք, ահա իշխանութիւնք անսասանք, ահա պետութիւնք անփոփոխանորդելիք, կերպարանք ահագինք, պատուութիւնք յաւիտենականք։

Ո՜ այսոսիկ և առաւել ևս քան զսոյն ամենայն զմտաւ, զորմէ անդէն որք սակաւ մի յառաջեցին և առին զփորձ, ոմանք 'ի մահիճս տապալեալ վաղէն փախչել կամելով և ոչ կարեն. ոմանք զատամունս կրճեն, իսկ այլք զծնօտս հարկանեն. կեսք զաչս իւրեանց շրջշրջեն ողորմագինս՝ տեսանելով սակաւ ինչ զահագին զօրութիւնն 'ի մարմնոյն ձգեալ, զտոչորեալ լեզուն, և զաւանդութիւնն հաստատապէս[1] հանել 'ի վեր ոչ կարացեալ, տեսանելով և զընդդիմակաց զօրութիւնն առընթեր բանակեալս՝ ամբաստան լինելով զնմանէ յափշտակել ձեռնարկեն զհոգին։

Արդ գիտելով մտեալ զգողն և իմացեալ առ 'ի կորզել 'ի մարմնոյն զհոգին, տեսէք որչափ ինչ պէտք են մեզ յայնժամ բազում օգնականութեան աղօթից և գործոց բարեաց. քանզի օգնականութեան հրեշտակաց յոլովից մեզ պէտք են առաջնորդութեան առ 'ի յօդս համբարձման։ Ո՛ր եթէ աստ յաշխարհի ուրեք հեռաւոր երթալով՝ կարօտ լինիմք առաջնորդաց, որչափ ևս առաւել պէտս ունիմք օգնականութեանց և առաջնորդութեան առ 'ի վտարել և անցուցանել զմեզ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշ-

1 Օրինակ մի հաստատապէս։

խորհրդով խաւարիս օգոյս այսորիկ։ Այժմեւոր է մեզ յանուր ճանապարհորդութեան աղօթամտութիւն եւ վշտակցութիւն, որ կարօղն են անաշխատաբար տանել զմեզ 'ի դրունս երկնից։ Ծարի են մեզ ջատագով անդ մնանեկքն՝ որոց արարաք ասա ողորմութիւն յառաջ քան զմահն մեր։ Այսոր որոյ փութասցուք նախ քան ըղ-վախճանն մեր եւ ընթասցուք նախ քան զընկղմելն մեր, զի մի արկցուք զմեզ 'ի դատն տանջանսն։

Կենցաղս այս սուղ է, եւ դատաստանն երկայն, վախ-ճանն մերձ է եւ երկիւղ բազում, եւ որ փրկէն ոչ ոք է։ Երթիցուք 'ի գերեզմանս մինչդեռ եմք 'ի մարմնի, եւ տես-ցուք անդ զմնոտի մեր իմաստս՝ եթէ ուր անդ զմնա-կութիւնս. տեսցուք թէ զինչ լինելոց եմք յետ սակաւ ինչ իրի, եւ վախճանին հող տարցուք։ Որք 'ի գեղեց-կութիւնդ էք տրփացեալ, նայեցարուք 'ի գերեզման-սն. եւ տեսանելով անդ զեղեալսն՝ հող տարէք ան-ձանց։ Իշխանք եւ պետք, հայեցարուք 'ի գերեզմանս եւ երկերուք յայն. որք զսրտմտութիւն եւ զոխակալու-թիւն ժողովէք միմեանց եւ ոչ լուծանէք, եկայք տե-սէք զիարդ լուծանելոց էք։ Մտանարհնա 'ի տապանն եւ տես անդ զեղեալսն որ երբեմն թագաւոր էր եւ իշ-խան, տես ուր է ահագին տեսիլ իշխանացն. ասա, ո՞ է անդ իշխան կամ թագաւոր, ռամիկ կամ հեծեալ, տնանկ կամ մեծատուն, մանուկ կամ ծեր, հնդիկ կամ բարետեսիլ. մի թէ ո՞չ ունիս ասել՝ եթէ ամենայն մո-խիր եւ փոշի է եղեալ ժահահոտութեամբ։ Ո՞ւր ամենայն որ երբեմն ցանկալին էր, այժմ գարշելի։ Ո՜վ թշուա-ռական հարուածոյս, զիարդ մեծ այսօր առ իս խոր-հուրդ. որ երէկ խնձ կարօտելին էր, այսօր անկեալ կայ առաջի իմ իբրեւ զգարշելի. եւ որ երէկ իմ անդամն էր, այսօր իբրեւ զօտար համարիմ. զոր սակաւ ինչ յառաջ զիրկս արկեալ ունէի, այժմ մերձենալ անգամ ոչ կա-միմ. կամիմ զի արտաքուստ թանամ իբրեւ զիմ, եւ 'ի թարախոյն փախչիմ որպէս ոչ յիմոյ. մերձենալ 'ի մար-մինն հարկաւորեն զիս գութքն, այլ յորդանցն եւ յեղ-ծեալ մարմնոյն առնել զայս խափանիմ. եւ զոր փոքր ինչ յառաջ զմտաւ ածեմ զկերպարանսն, այլ ոչ ուրեք տե-սանեմ։ Ո՞ւր է գեղեցկութիւն պատկերին, ահա սե-ցեալ դարձաւ յաճիւն. ո՞ւր բարետեսիլն եւ ախորժելի

ուրքն, ահա շիջան. ուր հերային փայլելութիւնքն, ահա անկան. ուր վերամբարձեալ պալատացն, ահա խորտակեցան. ուր արագախօս լեզուն, ահա լռեաց. ուր հանդերձից զանազանութիւնքն, ահա ցեցակեր եղեն. ուր հասակին բարձրաշուք մեծութիւնն, ահա լուծեալ ծաղեաց. ուր խելքն և խունկքն, ահա հատեցան. ուր մեծակութեանն անզգամութիւնք, ահա էանց. և պարզաբար խոկ ուր է բազմապայծառ և երևելի այրն, ահա դարձեալ հողն փոշի եղև:

Այսպէս մի մինչև 'ի գերեզմանս հաստատեսցուք զմիտս մեր, այլ անդր 'ի յարութիւնն փոխադրեսցուք. և հաւատաս եթէ վախճանեալս այս որ ննջեալ դնի՝ դարձեալ յարիցէ, և լեզուս որ այժմ լռեաց՝ դարձեալ խօսեսցի, և յայնժամ կրկնեսցի ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, և ամենայն լեզու խոստովան լիցի եթէ տէր է Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ հօր: Նա և ըստ Դանիէլի ևս, "Տեսանէի մինչև աթոռք անկանէին և Հինաւուրցն նստէր. հանդերձ նորա իբրև ձիւն սպիտակ, և հեր գլխոյ նորա իբրև զասր սուրբ. աթոռ նորա իբրև բոց հրոյ, անիւք կառաց նորա իբրև հուր բորբոքեալ, և գետ հրոյ ձգէր առաջի նորա. հազարք հազարաց կային առաջի նորա և բիւրք բիւրուց պաշտէին զնա": Ահագին է երկիւղն և դողումն յայնժամ, ով սիրելիք. անպատմելի վիշտք, անսպառ արտասուք, անդադար հեծեծմունք: Յորժամ 'ի վերայ բարձր աթոռոյ նստի դատաւորն, յայնժամ գալարին երկինք և թօթափին աստեղք և զօրութիւնք երկնից ընթանան առաջի, գերեզմանք բանան, մեռեալք յառնեն, աղբիւրք ցամաքին, անդունդք սասանին, երկիր դողայ: Որպիսի՞ պարտ է մեզ լինել յայնժամ, և կամ զո՞րս տալ պատասխանիս վասն խորհրդոց, վասն մտածութեանց, վասն գործոց, վասն դատարկ բանից, վասն որք 'ի տունջեան և 'ի գիշերի, վասն կամայից և ակամայից:

Այսպիսի հաստատել կարեւոր է, զայս խորհել 'ի տուէ և 'ի գիշերի բարւոք է: Ո՞ր խրատացի բանս յառաջ բերել կարասցուք[1] յայնժամ: Ո՜ ինչ տագնապս պատառ

1 Պակասէր յօրինակին նորագոյն յայնժամ. յաւելաւ 'ի յունէն:

խաւնի էր, ով մարդ. ահա փափկանաս ամս յետուն կամ հարիւր, և հարստացեալ մեծանաս, որպէս ծնանիս և վարձկանս ստանաս, և անուանացուցանես զանտեսս և զգայունս, իշխես և թագաւորես ազգաց և ժողովրդոց. և յետ այնորիկ ապա մահ, և յետ մահու ատեան և դատաստան՝ որ ոչ ունի փախուստ և ոչ ապաշխարութիւն: Զի "Ոչ ոք է, ասէ, որ 'ի մահու յիշէ զքեզ, և կամ 'ի դժոխս որ խոստովան առնի առ քեզ": Թէպէտ և բազում անգամ խոստովանեցաք, այլ ոչ ոք է որ փրկէ: Վասն այնորիկ երանեմք զվախճանեալսն 'ի արդարութեան ասելով՝ երանի եթէ 'ի արդարութեան վախճանեալ էաք: Այս և մեք վասն այնորիկ աղօթեսցուք յոգնիս մեր, զի բաժանեն որ մեզ վշտագին է՝ այն մահկանացն փրկանակ, և որ ամենեցուն սարսեցի՝ այն նոցա ախորժելի, և զոր մեք համարիմք նոցա սկիզբն պատժոց՝ այն նոցա սկիզբն ուրախութեան. զի զերծան 'ի պատասխանատուութենէ ահագին դատաստանացն որ հանդերձեալ է լինել: Զի վասն որոյ պահանջին՝ որ բանիւ իսկ ոչ ընկալան մեզս, և ոչ հասին 'ի գիտութիւն բարւոյ և չարի: Ով մահ, երանելեաց աղայոց երանելի ննջումն. ով մահ, սկիզբն կենաց անապականից. ով մահ, փոխումն 'ի մահուանէ 'ի կեանս:

Զինչ ասեն կարծամիտքն: Որդի իմ էր, ասեն, միածին, գեղեցկատեսիլ և վայելուչ, և նա էր աչքի իմոյ փոխանորդ, ժառանգորդ ընչից իմոց, արամութեան ուրախութիւն, ծերութեանս յոյս, նա էր հայրենեացն պարծանք, իմոց արմատոց ոստ, ամենեքին պայծառացեալ տեսլեամբ, յամենայն իրս պատշաճ և աջողակ, գեղեցկախօս և փափագելի իւրոց և օտարաց, տեսողաց և լսողաց: Եւ այսպէս յանկարծակի որպէս հաւ թռուցեալ բարձաւ 'ի գրկաց իմոց. և զոր փոքր մի յառաջ տեսանէի, այժմ ոչ տեսանեմ զնա ապրնթեր. այլ թողեալ զծնողս գնաց առ ստեղծողն, թողեալ զունոցայս անց առ կոչողն, մեկնեալ 'ի ծնողաց մերոց եղև 'ի գերեզմանն յարգանդ մօրն ամենեցուն: Արդ ոչ լացից զնա, ասա ինձ. ոչ սգացից և ողբացից և կոծ [illegible] ական խնդրեցից զնա: Ոչ կարեմ, ասէ, ոչ է ինձ կարելի. Թէպէտ և բազում ինչ բերցես այսպիսի կարգս 'ի նեղս, և բիւր անգամ կամեսցես խրատել զծնողն

շխալ եւ չոգալ կենդանեաց իւրեանց, ոչ հաւանեցուցանէր վասն նոյ որ այնպէս անհեթեթեաց զերապայծառութիւն բնութեանն, դնելով զգութ տղայոց յորովայն ծնողաց:

Ոչ ասեմ զայդ, ով մարդ, եւ ոչ օրինաւորեմ բնական 'ի վերայ որդւոց, զի ոչ է մարթ: Այլ եւ նա մարդ եմ օրինօք բնութեանս, եւ 'ի ժամանակի կարեկցութեանն ոչ կամիմ հակառակ բնութեանս. զի եւ ես մարդ եմ եւ 'ի մօրէ ծնեալ եմ եւ 'ի նմին խակ 'ի ձեռաց բնութենէդ. եւ ես գիտեմ զհօր հառաչանս եւ զմօր հեծեծանս. գիտեմ զծախուցեալ տառապանութիւնս նոցա, զհոգիս խռովականս անպատ տառապանաց, զմնաւ ածելով զնոցա բարս եւ զգածս: Այլ սքանչելին Յոբ ոչ այսպէս. քանզի նա 'ի հասանել սատանայականն 'ի վերայ ստանեաց եւ զաւակաց իւրոց, ծառայից եւ անասնոց ընչից իւրոց, ոչ խռովեցաւ եւ լքաւ եւ ոչ հայհոյեաց. այլ յարուցեալ անկաւ յերկիր առաջի տեառն, եւ երկիր պագեալ նմա ասաց. "Ես մերկ խակ ելի յորովայնէ մօր իմոյ, եւ մերկ անդրէն դարձայց. տէր ետ եւ տէր առ. եղիցի անուն տեառն օրհնեալ": Այսպէս եմ, եւ պարտ է ինձ հնազանդել. ոչ է օտար գործս. մեռան որդիքն, այլ ոչ եթէ կորեան. Քանզի ո՞ր հայր է որ ոչ անձն իշխանութիւն հօրն իւրում առնել ընտանութիւն խաշանցն: Փոքր ինչ, եւ մեք երթամք.

Այսուհետեւ եւ մեք նմանեսցուք, եւ մի անչափ տրտմեսցուք եւ իբրեւ անհաւատք անմխիթարելիք եղիցուք. այլ լուիցուք որպէս Իսր. զ. Ա ասացին: Ամն զի քեզ չափ եւ սահման տառապանելոյ ետ. թէ ոչ՝ ընդէ՞ր տառապանելոց, զոր յետ փոքր ինչ եւս յարուցանելոց էր....

Այլ տէրն մեր որ սիրեաց զմեզ, սանձ տղայքն, որպէս 'ի բերանոյ առիւծու կորզեաց զմեզ 'ի սատանայ կենցաղոյս, եւ իբրեւ զվարդ 'ի փշոց քաղեաց զմեզ 'ի մեղաց աշխարհիս, եւ իբրեւ զգառինս սիրելիս քաջ հովիւն սիրեաց զմեզ, այն որ ընտրեաց զմեզ յառաջ քան զլինելն աշխարհի, նոյն ինքն առաջնորդեսցէ մեզ հասանել 'ի կէտ կոչման որդեգրութեանն զոր խոստացաւ սիրելեաց իւրոց. եւ հանցէ զմեզ 'ի խաւարէ 'ի լոյս, անդ յորում ամենայն հանդարտութիւնք լուսաւորք եւ աստուածահաճոյք. ուր ոչ ինչ անիրաւ եւ բռնաւորական տեսանի. ուր ոչ են մեղք եւ աղջամուղջ խաւարի, այլ

լոյս անմատոյց և ուրախութիւն անպատմելի, որք ոչ յանց և ոչ հիւանդութիւնք, ոչ հեծութիւնք և ոչ տրտմութիւնք, [illegible]

# ՅԱՂԱԳՍ ՀԱՒԱՏՈՅ

Բժշկի նման է եկեղեցւոյ վարդապետ. բազմաց և զանազան ախտից բժշկական դեղս տանելով, իւրաքանչիւր ումեք ախտացելումն ըստ պիտոյից ցաւոցն տայ ըզդեղն: Որպիսի ինչ. եկին ոմանք 'ի բժշկարան եկեղեցւոյս, յայդմանէ ախտէ ամբարտաւանութեամբն ըմբռնեալք. առեալ զդեղ խոնարհութեանն՝ յայտուցեալ ախտէ հպարտութեանն բժշկեցան: Եւ այլք ընթացան 'ի բարկութենէ բոցակիզեալք. զնստեալք և նոքա յերկայնմտութենէ վարդապետութեանն՝ զօգուտն զհիւանդութիւն շիջուցին: Ոմանք 'ի մարմնոյ ախտիցն 'ի պագշոտութիւն մոլորեալք՝ ընթացան և նոքա, առնլով զդեղ ողջախոհութեանն՝ սրբութեամբ զինքեանս ողողեցին:

Արդ եկայք, սիրելիք, վասն զի որ յառաջագոյն ժամանեալ վարդապետս զհիւանդացելոց զանձինս երեքայարմար հաւատովն բժշկեաց, և մեք սորա հետոցն երթիցուք զհետ: Քանզի կարծեմ զյոլովս որք աստ են, ախորժելով լսել յաղագս հաւատոյ. իբրև ոչ եթէ ինքեանք պէտս ինչ ունիցին, վասն զի առողջք են, այլ ախորժեն 'ի ձեռն այնորիկ զհիւանդացեալսն բժշկել. յոլովք են ինքեանք առողջք, բայց ոչ կարեն 'ի ձեռն ինքեանց զախտացեալսն բժշկել:

Յաղագս որոյ, սիրելիք, թէպէտ և յօժարութիւն ունէի այժմ յաւետարանի ընթերցուածոյն բանս առ ձեզ խօսել, և որ 'ի նմանէ հօգին՝ արթուցանել մերձաւորացդ, զայն առ այժմ յապաղեմ, և առնեմ զայս զոր խոստացայս մերձ կացելոց խնդրել: Վասն զի պարտ և արժան է մեզ աշակերտացս առաքելոյն ընդ ամենեսին ամենայն լինել, զի զամենեսին շահեսցուք: Աղաչեմ, եթէ սխալեցից ինչ 'ի բանս, թողութիւն ինձ ընձեռեցէք. վասն զի որք առանց պատրաստելոյ ասեն, բազում անգամ վրիպին, ոչ բաւական լինելով միտքն և զգիրսն տեսանել և զբանսն կազմել: Եւ դուք իսկ զներքին ձեր մարդ սրտից մերձ կացուցէք աստ մաքրա-

Digitized by Google

գոյն . զի խոստովանեսցուք ոչ զասացեալսն մի միայն լսելի, այլ և ուսանիցէ և զի խոստովանեսցուք նոր ուսանիցի զզօ-րութիւն:

Նախ ասացին հաւատ յանձ, որք են անշօշափելի անըմբռնելի անտեսանելի անքննելի անխոնարհելի անճա-ռելի, լաւութեամբ պատուեալ և մեօք երկրպագեալ: Հաւատ 'ի Հօրէ սկսանի և յորդի գայ և 'ի Հոգին լնու. Հաւատ աթոռ անձին, հիմն կենաց, արմատ անմահ. Հաւատոյ արմատ կենդանութեան հայր, ոստ անթա-ռամ որդի, պտուղ անմահ Հոգին սուրբ: Երրորդու-թիւն պարզ, առանց շարադրութեան, անխառնելի ան-ջատելի անպարագրելի, անորիշ ըստ միաբանութեան ըստ զօրութեան ըստ գործոյն ըստ ծնութեանն ըստ մեծու-թեանն, էութեամբ և անուամբք միայն բաժանեալք, բայց խօսք և զօրութեամբք միաւորեալք: Երրորդու-թիւն որ նախ քան զյաւիտեանս էր. ոչ 'ի ժամանակէ ուրեք սկիզբն էառ լինել, այլ անսկիզբն անժամանակ անծերանալի անապական անմահ անփոփոխանելի. ոչ աճէ ոչ նուազէ ոչ ծերանայ, այլ միշտ որպէս էն՝ կայ մնայ: Երրորդութիւն, ոչ այժմ գտեալ յերկրպագութիւն, այլ յաւիտենից 'ի հրեշտակաց յերկինս երկրպագեալ, և 'ի հարցն 'ի վերայ երկրի փառաւորեալ, 'ի մարգա-րէիցն պատուեալ, յառաքելոցն քարոզեալ. և յեկե-ղեցւոյ մինչև ցայժմ մեծացեալ:

Սկսանելով, սիրելիք, յերկնայնոցն առաքեալք սկիզբն՝ ցուցանել զերրորդութեանն զմի տէրութիւն և զերկր-պագութիւն և զմեծութիւն: Երից հրեշտակական զօրութիւնքն քերովբէից և սերովբէից, սուրբ սուրբ սուրբ, անդադար բերանով նուագերգելով 'ի մի տէրու-թիւն աւարտեն զփառսն: Երիս հրեշտակս Աբրահամ հայրապետն հանդիպեալ ընդ կաղնեաւ Մամբրէի 'ի խորանին ընդունելով, մի տէրութիւն զուգապատիւ եր-րորդութեանն հրեշտակացն ընծայեաց: Երեք հրեշ-տակք, և կաղնին և Աբրահամ և խորանն՝ երրորդու-թիւն, և խաչ և եկեղեցի և զաւակ մարդկան: Այն ինքն Աբրահամ նահապետ երից աւուրց գնաց, զոր-դին իւր զԻսահակ բոլորապտուղ ի մատուցանել: Ե-րեքօրեայ նահապետ և Իսահակ բոլորապտուղ լեալ. երեքօրեայ որ խաչին չարչարանք եղեն միածնին: Ե-

զՔրիստոսի խորհուրդն Աբրահամ Իսահակաւ ու-սանէր՝ Տէրն վկայէ ասելով. «Աբրահամ հայր ձեր ցանկացաւ զի տեսցէ զօրն իմ, ետես և զուարճացաւ»: Երից աւուրց ճանապարհ և Մովսէս գնայր զոհել Տեառն. և ասէր ցՓարաւոն. «Ճանապարհ երից աւուրց եր-թիցուք յանապատ զոհել Տեառն մերում»: Երիս չափս նաշհոյ Սառայի առնել զնկանակն արար. Երեք չափքն և նաշհն և Սառա և նկանակքն՝ երեքպատուարժան Հա-ւատ և եկեղեցի ծածուկ սրբոյ մարդկան պահեալ: Ե-րիս գաւազանս Յակոբայ առեալ, 'ի ջուրսն դնելով զոչ-խարսն Լաբանու արբուցանէր. Երեք գաւազանքն և ջուր և ոչխարքն որ ընկալէին՝ Երրորդութիւն և միութիւն և ժողովուրդ լուսաւորեալ: Երիս տիւս և երիս գի-շերս Յովնան 'ի ձկանն արար. Երեք տիւք և գիշերք և Յովնան և ձուկն՝ երեքօրեայ բնակութիւն միածնին 'ի դժոխս: Այլ զի ինքն այս այսպէս ունի, ինքն տէրն ասէ. «Որ օրինակ Յովնան 'ի ձկանն արար երիս տիւս և երիս գիշերս, նոյնպէս պարտ է որդւոյ մարդոյ 'ի սիրտ երկրի առնել երիս տիւս և երիս գիշերս»: Երիս ա-ւուրս և Նինուէացիք պահելով փրկեցան. Երեք աւուրքն և պահք և Նինուէացիքն կենդանիք՝ Երրորդութիւն լուսաւորեալ, և 'ի բաց լինել 'ի չարեաց, և աշխարհի կենդանութիւն: Երիցս Հեղիաս մարգարէ 'ի վերայ շերտիցն և անդրանկացն արջառոցն զջուրսն հեղլով՝ հուր 'ի յերկնից իջոյց 'ի վերայ պատարագին. Երիցս ջուրսն և շերտքն և անդրանիկ արջառոցն և երկնային հուրն՝ Երե-քպատուարժան միութիւն, և խաչ և մարմինն Քրիստոսի և երկնային ճառագայթքն: Երիցս յաւուր և Դա-նիէլ զպատուհանս տանն իւրոյ բանալով, ընդ արեւելս աղօթէր և հայցուածոցն հանդիպէր. ուսուցանէ խոր-հուրդն եթէ պարտ և արժան է մեզ զաչս ոգւոց բա-նալով հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ընդ արեւելս պա-շտել: Երեք մանկունքն առանց ապականութեան 'ի հնոցն անկեալք, ինքեանք ոչ ինչ չարչարեցան, բայց զքաղդէացիսն այրեցին. Երեք մանկունք անապական, և հնոց և քաղդէացիքն տանջեալք՝ Երրորդութիւն ա-նապական, և դատաստանն, և դևք կորուսեալք:

Երիս առաքինութիւնս երանելին Պաւղոս եկեղե-ցւոյ աւանդէ ասելով հաւատ, յոյս, սէր: Հաւատ 'ի

Հայր, յայտ ՚ի Մատթէոսէ, և զուանն որդւոյն ասէ է. քանզի պատուզ Հոգւոյն ասէ է։ Նոյնպէս և խօսն Պաւղոսի աղաչեաց զտէր ասելով. "Յաղագս այսորիկ երիս զտէրն աղաչեցի"։ Տես զխնամածութիւն առնն ՚ի սուրբ բանին յարմարեալ. ոչ ասաց՝ երիցս զտէր աղաչեցի, այլ երիս. քանզի Հայր և Որդի և Հոգին սուրբ, երեք գոյութիւնք և մի տէրութիւն։ Եւ "Երիցս, ասէ, ձաղկեցայ, այլ մի անգամ քարկոծեցայ". այս է՝ երիս էութիւնս խոստովանեցի, և ՚ի մի հաւատ երրորդութեան միութեան խոստովանութեամբ ՚ի մի ձայնակցութիւն զանձն իմ միաձայնեցուցի։ "Երիցս, ասէ, նաւաբեկեցայ". այս է՝ զգեան հրեշտական մեղացն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յաղթիւր մկրտութեանն ընկղմեցի։ Եւ երից գրուաց ալեր և արքայութիւնն երկնից նմանեցաւ. զոր կնոջ առեալ փոքր խմոր թաղեաց[1] և զամենայն զանգուածն խմորեաց. երեք գրիւ ալեր, փոքր խմորն, և կին որ խմորէր՝ իմաստութիւն է ՚ի ձեռն մարմնոյն Քրիստոսի զամենայն մարդկութիւնս յերրորդութեանն հաւատս դարձուցանելով։

Նոյնպէս խորհրդոց ամենեցուն իբրև զկնիք իմն դնելով տէր մեր՝ երիցս ընկղմամբ[2] ՚ի ջուրն մի մկրտութիւն աշակերտացն իւրոց աւանդեաց ասելով. "Երթայք աշակերտեցէք զամենայն հեթանոսս մկրտելով զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ"։ Եւ եթէ պարտ և արժան իցէ զգործն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ մի ցուցանել, պատրաստաբար ցուցցուք. միոյ գործոյ Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն ցուցանելով, հնարաւոր է ամենայն իրօք և մի բնութիւն հաւատալ. քանզի որոց գործն մի է, նոցա և բնութիւնն և զօրութիւնն մի է։ Արդ սկսցուք ասել յաղագս աշխարհարարութեանն և վասն որդեգրութեանն մարդկան, վասն ազատութեան, վասն երկնի և երկրի հաստատութեանն, և միանգամայն պարզաբար յաղագս ամենայն գործոց և այլոց պիտոյից կենաց մերոց, զպատճառն ՚ի Հօրէ և յՈրդւոյ և ՚ի սրբոյ Հոգւոյն կատարեալ։ Սկսցուք յառաջնոցն և եկեսցուք յերկրորդսն, և այնպէս ՚ի կարգի զբանս մեր անցուսցուք։

1 Գաղափարն յօրինակին ծածկոյ... ծածկէր խմորն. լրացաւ ՚ի յաւելին։

2 Յօրինակին գրեալ թաղեալ ընկղմեալ, լրացաւ ՚ի յաւելին։

Digitized by Google

Զերկինս արար Հայր, այլ ոչ առանց բանի և Հոգւոյ. քանզի «Բանիւն Տեառն երկինք հաստատեցան, և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա»: Զամենայն աշխարհ ելից Հայր, որպէս և գրեալ է. «Զերկինս և զերկիր ես լնում՝ ասէ Տէր»: Ելից և Որդի, որպէս և գրեալ է. «Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ»: Նաև իմաստութեանն որ ասէ յառակս Հոգւոյն. «Հոգի Տեառն ելից զաշխարհ»:

Զինչ է մեծ յարարածս. մարդ, ոչ 'ի Հօրէ միայն եղև, այլ գործակից եղև Որդի և կատարեաց սուրբ Հոգին. «Արասցուք, ասէ, մարդ ըստ պատկերի և նմանութեան մերում»: Արասցուք, ոչ արարից ես, ոչ արա դու, ոչ արասցէ նա, այլ արասցուք: Քանզի եթէ ասացեալ՝ արա դու, ցուցանէր արբանեակ. այլ զի 'ի բաց բարձցէ զարբանեկութեանն կարգ և զուգապատուութեանն ուսուցէ զկարգ, ասէ՝ արասցուք մարդ. Համապատիւ են կամքն, համապատիւ գործն, համապատիւ և աստուածութիւնն: Այլ զի Հայր և Որդի և Հոգին սուրբ արարին զմարդն, Դաւիթ ինձ վկայէ ասելով զայս. «Ձեռք քո արարին զիս և ստեղծին զիս»: Վասն զի երկինք և զօրութիւնք երկնից նովին ձեռաք եղեն: Ասէ և Դաւիթ. «Բանիւն Տեառն երկինք հաստատեցան, և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա»: Այլ մարգարէն Ովսէէ. «Որոյ ձեռք արարին զօրս երկնից». քանզի աստ նշանակէ Հոգւով և բանիւ զերկնից զզօրսն ասացեալս:

Արասցուքն յոգնական է, իսկ ըստ պատկերին միաւորական: Այլ զի մի ոք կարծեսցէ եթէ ըստ Հօրն կերպարանի միայն եղև մարդն, 'ի վերայ եբեր զմերումն: Յաղագս այնորիկ զի կերպարանն այն նախեղեալ Ադամայ, յանցանօքն աղտեղեցաւ և մեռաւ, կարօտացաւ նորոգման և մաքրութեան. ոչ յանուն Հօր միայն 'ի մկրտութեանն նորանայ, եթէ ոչ և յորդւոյ և 'ի սրբոյ Հոգւոյն. քանզի և 'ի ստեղծմանն այսպէս եղև: Յաղագս որոյ կնքէ Հայր 'ի մկրտութեանն, որպէս և Պաւղոս ասէ. «Որ գործեացն զմեզ 'ի սոյն յոյս՝ մեծ է, որ ետ զմեզ և կնքեաց»: Կնքէ և Հոգին սուրբ. «Մի տրտմեցուցանէք, ասէ, զՀոգին սուրբ այ̄ որով կնքե-

ցայք յաւուրն փրկութեան»։ Միջնորդ 'ի Հօրէն փրկութեան և յորդւոյ և 'ի Հոգւոյն սուրբ մեր, ոչ յեր-կուս 'ի պատկերս կերպարանեալ, այլ 'ի մի յորդւոյն, որպէս և Պաւղոս ասէ. «Զոր յառաջն ծանեաւ և կանխաւ սահմանեաց կերպարանակիցս որդւոյն իւրոյ»։ Յայտնապէս ժողովս մի գոլ Հօր և որդւոյ և որոց Հո-գւոյն պատկեր։ Նմանն եթէ 'ի Հոգւոյն որոց միջնորդ սիրոյ մեր, կերպարանակից լինելոց որդւոյն և պատկեր այ, որպէս գրէ Պաւղոս առաքեալ. «Այր ոչ պարտ է ծածկել զգլուխն, վասն զի պատկեր և փառք այ է»։ Եւ առաւել Հոգին սուրբ պատկեր է այ։

Մեծ է Հայր, մեծ է որդի, անբովանդակելի է և Հոգին սուրբ. «Մեծ է տէր մեր և մեծ է զօրութիւն իւր, Քրիստոս այ զօրութիւն. և իմաստութեան նո-րա ոչ գոյ թիւ», այս Հոգին սուրբ. քանզի «Հանգի-ցէ 'ի վերայ նորա Հոգի այ, Հոգի իմաստութեան և Հան-ճարոյ»։

Խաղաղութիւն է Հայր. «Ահա խոնարհեցուցանեմ 'ի նոսա իբրև զգետ զխաղաղութիւն»։ Խաղաղութի է և որդի, որպէս Պաւղոս ասէ. «Նա է խաղաղութի մեր, որ արար զերկոսեան մի»։ Խաղաղութիւն է և Հոգին սուրբ. «Իսկ պտուղ Հոգւոյն այս է՝ սէր, խնդութիւն, խաղաղութիւն»։

Աղբիւր է Հայր. զի «Ի քեն է, ասէ, աղբիւր կե-նաց»։ Աղբիւր է որդի. «Զիս թողին զաղբիւր ջրոյ կենդանւոյ»։ Եթէ ոչ էր աղբիւր և Հոգին սուրբ, ոչ արդեօք ասէր Պաւղոս. «Ամենեքեան զնոյն Հոգի ար-բաք»։ Աւետարանագրաւն ևս է 'ի սուրբ բանիցն ուսա-նել՝ եթէ աղբեր Հոգին սուրբ նմանեցաւ, քանզի կա-ցեալ Յիսուսի աղաղակեաց և ասէր. «Եթէ ոք ծա-րաւի է, եկեսցէ առ իս և արբցէ ջուր։ Որ հաւատայ յիս որպէս ա-սեն գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոյ կեն-դանւոյ։ Զայս ասէր վասն Հոգւոյն զոր ընդունելոց էին հաւատացեալքն 'ի նա»։

Լոյս է Հայր. վասն զի ած լոյս է։ Լոյս է և որդի. «Ես եմ լոյս աշխարհի»։ Եթէ ոչ էր լոյս և Հոգին սուրբ, ոչ արդեօք ասէր Պաւղոս. «Զ Հոգին մի շի-ջուցանէք»։ Բայց վասն զի բանագնացեալ լինի այս բազ-մաց թուի, Պաւղոս առանձնաբար ասասցէ. «Լու-

տով քով տեսցուք զլոյս", այս է որդւով քով տեսցուք զլոյս զՀոգին սուրբ:

Ազատէ Հայր զծառայս 'ի մեղաց. ազատէ եւ որդի, քանզի ասէր ցՀրէայսն. "Եթէ որդի զձեզ ազատեսցէ, ճշմարտապէս ազատք եղիջիք": Ազատէ եւ Հոգին սուրբ. "վասն զի ուր Հոգի տեառն է, անդ ազատութիւն է": Օրէնք Հօր ազատեն, օրէնք որդւոյ ազատեն, այլ եւ օրէնք Հոգւոյն կենաց ազատեցին զքեզ 'ի ծառայութենէ ապականութեան:

Բարի է Հայր, բարի է եւ որդի, որպէս ասէ, Թէ "Ակն քո չար է, զի ես բարի եմ": Բարի է եւ Հոգին սուրբ. "Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ":

Ուր կամի է Հայր, վասն զի ոչ զոք ունի ընդ որով զաւրի: Ուր կամի է եւ որդի, վասն զի ազատ է: Ուր կամի է եւ Հոգին. "Հոգին ուր կամի շնչէ, եւ զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի գայ եւ կամ ուր երթայ":

Զամենայն պարունակէ Հայր, զամենայն պարունակէ եւ որդի, զամենայն պարունակէ եւ Հոգին սուրբ, որպէս ասէն Դաւիթ. "Ո՞ երթայց ես յոգւոյ քումմէ, եւ յերեսաց քոց ուր փախեայց":

Ամենազօր է Հայր, որպէս ասէն Յոբ. "Գիտեմ ասէր զի զամենայն կարես, եւ անկարութիւն է քեզ եւ ոչ ինչ": Ամենազօր է եւ որդի, որպէս ասէ տէրն յաւետարանին՝ հաւատացելոյն ամենայն ինչ կարողութիւն է: Ամենազօր է Հոգին սուրբ. ասէ նոյն ինքն այ իմաստութիւն. Հոգին սուրբ Հոգի իմանալի, սուրբ, բազմամասն, յայտնի, անշիջա, սրագ, անխափան, բարեգործ, մարդասէր, հաստատուն, ամուր, անհոգ, ամենազօր եւ ամենատեսուն այցելու: Ոչ միայն այցելու է Հոգին սուրբ, այլ եւ զմարդիկ վերակացուս առնէ, որպէս վկայէ ինձ Պաւղոս 'ի գործս առաքելոցն. "Հայեցարուք յանձինս եւ յամենայն հօտդ յորում եդ զձեզ վերակացուս Հոգին սուրբ":

Առաքեաց մարգարէս Հայր, առաքեաց մարգարէս եւ որդի, առաքեաց մարգարէս եւ Հոգին սուրբ, որպէս եւ 'ի մարգարէին Եսայեայ բարբառի ասելով. "Եւ այժմ տէր տէր առաքեաց զիս եւ Հոգի նորա": Ի Հօրէ առաքեցան առաքեալքն եւ յորդւոյ. քանզի "Ահա զձեզ

առաքեմ իբրեւ զոչխարս 'ի մէջ գայլոց»։ Առաքեցան և 'ի հոգւոյն սրբոյ, որպէս ասէ 'ի գործս առաքելոցն. «Եւ նոքա առաքեալք 'ի հոգւոյն սրբոյ իջին 'ի Սելեւկիա»։ Կոչեաց հայր զառաքեալսն, կոչեաց և որդի, նմանապէս և հոգին սուրբ կոչեաց զնոսա։ Ի սոյն ամենեքին նոցա ուսեալն, յայտ է թէ առաքելոցն, «ասէ հոգին սուրբ. որոշեցէք ինձ զԲառնաբաս և զՍօղոս 'ի գործ յոր կոչեմ զդոսա»։ Որոշեցէք դուք ինձ զԲառնաբաս և զՍօղոս։ Նախ իբրեւ տէր, և յետոյ իբրեւ ծառայք «'ի պահել նոցա և 'ի պաշտել տեառն»։ Հաւատարուք «և 'ի պաշտելն» ասէ։ Յայսցե՞ն ոսք յանդիմանեն պաշտօնեայ զհոգին սուրբ ասելն։ Եւ թէ պաշտօնեայ է հոգին սուրբ, մի 'ի հրեշտակաց և 'ի սրբոց առաքելոցն է։ Որ առնէ զհրեշտակս իւր հոգիս և զպաշտօնեայս իւր 'ի բոց հրոյ։ Ապա չէ պաշտօնեայ հոգին սուրբ, այլ պաշտելի. «Ի պաշտելն նոցա, ասէ, տեառն՝ ասաց հոգին սուրբ. որոշեցէք ինձ»։ Հայեաց և յայն որ ասէն՝ որոշեցէք ինձ. Տէրունի իշխանութիւն. ծառայ ոչ երբէք ասէ որոշեցէք, այլ տէրն է ձայն «Որոշեցէք ինձ զՊաւղոս և զԲառնաբաս 'ի գործս յոր կոչեմ զդոսա». Այժմ դուք որոշեցէք ինձ զՊաւղոս և զԲառնաբաս. քանզի ես ահա որոշեցի զդոսա յառաջագոյն մեր իւրեանց։ Եւ զի 'ի հոգւոյն սրբոյ կոչեցաւ Պաւղոս և յայլոց առաքելոցն որոշեցաւ յաւետարանն, յառաջնում թղթին իւրում ասէ. «Պաւղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի կոչեցեալ առաքեալ որոշեալ յաւետարանն Այ»։

Այժմ զայն, սիրելիք, հայհոյութեան պատասխանեացն. չխոնարհեալ զի պասա և արժան էք պատարագել մեծազգի զքոյ, և ճանաչել զանէրն քան առաքելունս «Պարապեցէք և ծանիջիք զի ես եմ Այ»։ Այժմ այլ իմն հարցուածս հայհոյութեան զաւնս, և հարցանեմ զձեզ ասելով. ունի՞ աթոռ հայր։ Նշխեմ այս, գրեալ է յաղագս որդւոյ. «Աթոռ քո Այ յաւիտեանս յաւիտենից»։ Այլ աթոռ յորժամ լուիցես Այ, մտաւորացելոցն իմա. աթոռն այս է՝ իշխանութիւնն, զթագաւորութիւնն, դատաւորութիւնն. վասն զի ընդ մեզ գիտք իբրեւ ընդ մարմնոյն խօսին։ Ո՞ւր գրեալ թէ և հոգին սուրբ ունի աթոռ, զի յաթոռոյն խնդրեսցէ զհամարձակութեան ուժգնութիւն։ Տեսցուք առ սոյն հարցուածս պատասխանի։ Պաւղոս

և արժան է մանաւանդ և ոչ պատասխանի տալ այնպիսեացն։ Սակայն եթէ ծնաւայք յերկրէ լեալք, զառաքելոցն ասեմ, արժանիք եղեն յաթոռ նստել, աՀա դուք երկոտասանքդ, ասէ, "Նստջիք յերկոտասան աթոռս դատել զերկոտասան ազգ Իսրայելի"։ Եւ առաւել Հոգւոյն սուրբ։

Այլ առ այդոքիւք ո՞ւր Հոգւոյն փառք. փառաւորի Հայր, փառաւորի և որդի, ո՞ւր փառաւորի և Հոգին սուրբ՝ խնդրեն անՀաւատքն։ Լուասցեն Եսայեայ, և Պաւղոս վկայեսցէ. "Տեսի զտէր 'ի վերայ աթոռոյ բարձու", յաղագս Հոգւոյն ասէ, որպէս յինէն յաւէտ ցուցցի այս. "և ամբարձելոյ, ասէ. և լի էր տաճարն փառօք նորա. և սերովբէք կային շուրջ զնովաւ, վեց թեւք միոյ, և վեց թեւք միոյ, և աղաղակէին ասելով՝ սուրբ սուրբ սուրբ, տէր սաբաւովթ, լի է երկինս և երկիր փառօք քովք"։ Հայեաց աստանօր, և զաթոռն տեսանես և զփառսն։ "Այլ ասէ տէր ցիս զո՞ առաքեցից և ո՞ երթիցէ առ ժողովուրդն այն Հրէից և ասասցէ ցնոսա. լսելով լուիջիք և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք և մի տեսջիք. վասն զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ, և ականջօքն ծանունս լուան", և որ 'ի կարգին է։ Պաւղոս յետ բազում ազգաց Ճանապարհաւ մարգարէութեանն լինի 'ի Հռովմէ. միջի ընդ Հրեայս, տեղեկացուցանելով նոցա զմիածնին Քրիստոսի զՀաւատսն Իսկ նոքա 'ի բաց դառնային և ոչ Հաւանային. և յայնժամ յիշէր զմարգարէութիւնս զայս յորժամ լցաւ։ Այլ զինչ ասէր ցնոսա. բարւոք ասաց, ոչ Հայր, ոչ որդի, այլ "Բարւոք ասաց Հոգին սուրբ 'ի ձեռն Եսայեայ մարգարէին. լսելով լուիջիք և մի իմասջիք", և որ 'ի կարգին է։ Արդ եթէ Եսայիաս տէր սաբաւովթ ասէ 'ի վերայ աթոռոյ բարձու նստեալ և 'ի Հրեշտակաց փառաւորեալ, և Պաւղոս ասէ՝ եթէ Հոգին սուրբ. ո՞ իցէ արդեօք մոլեալ որ յերկուանայ թէ արդեօք ոչ իցէ տէր և ած Հոգին, և եթէ պաշտօնեայ իցէ։ Այս նմա փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

# ԱՆԲՆԱԳԻՐՔ

---

## ՆԵՐԲՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ, ԱՍԱՑԵԱԼ Ի ԿՈԿԻՍՈՆ ՄԻՆՉ ՅԱՔՍՈՐՄՆ ԷՐ

### ՃԱՌ Ա.

Հրաշալի է մեզ տօնս այսօր և աստուածայինն քան զամենայնական շարագրութիւնս։ Այս զինչ իցէ պատճառ, կամ ո՞վ արդեօք կոչնատէր բազմահոյլ հանդիսիս. ո՞ այլ ոք քան եթէ յոգներանեան հայրն մեր և մեծ խոստովանողն, զորոյ այսօր կատարեմք զյիշատակ. որ առ նորայն արիական քաջութեանցն պատմութիւն՝ զմիտս և զխորհուրդս հանդերձ ամենայն զգայարանօք մտացերոցուք, թերևս արժանի լինիցիմք ընդունել ՚ի հոգւոյն բանն իմաստութեան մատենագրութեանց զերանելոյ հօրն պատմել զառաքինութիւնն։ Եւ նորա կարօղով մարգարէական բարեբանութեան յաւելութիւն ինչ պատուոյ և փառաց, այլ մեզ մանաւանդ կարօտիմք առ ՚ի նմանէն բարեխօսութեան, որպէս առաքելոյն առաջնորդեմք ՚ի մարմնի. որոյ առիթ մխիթարութեան է և բարեբանելն միայն զգաղափարելիշտ նահատակին, այլ և նախանձաւոր եւս լինել կարեւոր է հրեշտակաձև վարուց նորին առաքինութեան, թէպէտ և անկարելի զորով ըստ համեմատութեան. զի ո՞վ ոք ՚ի հողեղինաց այնչափ անհամապատճառ կարիցէ չարչարանաց տևել կարացէ. զոր ոչ և ՚ի հարցն առաջնոց նահատակացն, և կամ որք զկնի անօրէնութեան փրկչին՝ չարչարանաց նորա հետևեցին Քրիստոսի և վկայք. միայն բաց կարողութեան մերում և յօժարական սրտից զօրաւորական հօրն եղջերութիւն բերելով մատուցուք ՚ի բանս, բառամբն խմբանիոց, եթէ յիշատակ արդարոց հանդերձ գովութեամբ. և ՚ի գովութիւնս արդարոց ցնծան ժո-

Digitized by Google

զմկուրգք ոչ 'ի փառս ինչ առաւելեալ նոցա, այլ բարե-բանողացն մեզ բազում այսու ընձեռեն շահս ։

Այս արդ քանզի այսոք առատածաղկեալ հայրն մեր հոգեւոր, հայրն և վկայ, յանեղծանելի կենաց տանն յեր-ջանիկն արդարև փոխադրեցաւ 'ի կեանս, ուր անպա-տում ուրախութիւնն է և անհասելի լոյսն, ուր բիւրք հրեշտակացն են և անդրանկացն բանակք, ուր առա-քելոցն աթոռքն են և մարգարէիցն տեսարանքն, ուր զուարճանք նահապետացն են և պսակք մարտիրոսացն, ուր վերինն Երուսաղէմ է և անսպառ խաղաղութիւն, ուր ժողովք սրբոցն է և արդարոցն բնակութիւն ։ Բայց մեք զինչ արասցուք այսքան թշուառացեալք վշտօք շրջա-պատեալ ։ քանզի ոչ գտանիմք արժանաւոր, որով զար-ժանին զովութեան բարեբանեսցուք ։ և զինչ, առա-քէն լսեսցուք ։ և էր վասն հանգստացուք յայսմ վայ-րի ։ այլ առնեմք եթէ վասն զի ոչ կարասցուք բանի հա-սանել զմեծութիւն գործոյն, և նորին աղաղակ ա-ռնել եւս պարտ և արժան էր խօսել ։ քանզի և այս 'ի մեծագունից զովութեանց է, ոչ կարել զառաւելու-թիւն իւրոյն բանի ցուցանել զաւգականն ։ զի յորժամ 'ի վեր քան զբնութիւնս լինին ուղղութիւնքն, քաջայայտ լինի է թէ առաւել քան զմարդկայինն մտածութիւնս վեր-ամբառնան զովասանութիւնքն ։ Բայց ոչ առնէ անտես երանելին զմեզ, և ոչ 'ի բաց մերժէ զաղքատիկ մերս բան ։ այլ ըստ նմանութեան փրկչին հաստատարանկաց զաղքատագոյն ընծայան որ 'ի մէնջ, մեծ ինչ համարի, և բիւրապատիկ փոխարէնս ընդ փոքունցն հատուցա-նէ ։ քանզի ոչ առ առաւելութիւն իրացն, այլ առ ա-ռատութիւն մտացն ևեթ հայի ։ վասն որոյ թէպէտ և յոյժ նուազագոյնք են մերքս, սակայն յորոց Ճոխա-նամքս՝ առատ մատուցանեմք ։ զի և Այ̃ սիրելիքն ըստ կա-րողութեան պահանջեն ։ Նա և այսու առաւել ևս Ճա-նաչի հանդէս մեծախոհութեան սորա, ոչ 'ի բաց մեր-ժել զգուզնաքեայ ընծայաբերութիւնս 'ի տկար մարմ-նոյ և բազմադիմի վշտօք պաշարեալ անձնէ ։ այլ ընկա-լեալ 'ի մէնջ զգովասանութեանս բան, որում ոչ եր-բէք կարօտանայ, հատուցանէ փոխարէնս գործովք ։ ո-րոց յոյժ մանաւանդ կարօտիմք և պիտոյանամք ։

Բեր այսուհետև զխոստմանն հատուսցուք տոկոսիս,

ախոյեանն սատանայական ամենայն բանիւ. բայց ոչ գիտեմ եթէ զինչ յաղթութեանց անուն յիշատակեսցից: Ո՜ւրախական միջնորդն յառաջադրութիւնն, եթէ զարեան չափ ժուժկալութիւնն զանազան տանջանացն. զքննութեան նահատակութեանն, եթէ զպատրաստեալ համբերութիւնն անպարտելի նահատակութեանցն 'ի խոր վիրապին. զառաքելական քարոզութիւնն, եթէ զշնորհս մարգարէութեան. զհովուական վերակացութիւնն, եթէ զանմարմնական յանապատի ճգնութիւնն. քանզի յամենայնի մեծախորհուրդ է այրն, յամենայնի բազմահանճար, յամենայնի առաքինի, յամենայնի ընտիր, յամենայնի համբերող. իբրև արեգակն անխափանելի, իբրև աշտարակ անպարտելի ընդդէմ հնարից սատանայի:

Սակայն 'ի սկզբանց անտի արար և արժան է բազում հարկանելոյ բանիւս. յորոց արդեօք. յայտ իսկ է եթէ 'ի կոչմանէ հօրս մերոյ ծնողաց, առաջնորդելով նմա 'ի մանկական տիոց անտի 'ի հաւատոյն ճշմարտութիւն. քանզի նախանձայոյզս յայտնեալ լինել իւր թուի երկնաւորի հայր մեր մեծին նահապետին և նմանօրն Աբրահամու. զի որպէս առ նա հրաման հասեալ յԱյ, ելանել յաշխարհէն հայրենի և յանհաւատութեան ազգէն, այնպէս նաև և երանելին այս իբր կոչմամբ Այ ելանելով 'ի խաւարին կռապաշտութեան աշխարհէն, մտանէր յարդարև երկնից աւետեաց, որ մեծ ազգին պատուոյ խրատնայն Քրիստոսի գնչելին ծագիչ, որ յայտնեալ փրկականն քարոզեր աւետարան, յորում անդուստ վարժեալ իսկ լինէր 'ի զաստիարակութիւն առաքելական խորհրդոյն Քրիստոսի, վերահասու լինելով 'ի դրդին ժառանգակին: Յետ այսր զարժեալ անտանութեան խորհուրդ, և զարժեալ վերստին անդրէն կոչումն, որ հանդերձեալ էր ընթացողն կատարել և զհաւատոյն պահել, և լինել հայր ազգաց բազմաց ըստ խոստացելումն ազգի ազգի չարչարանաց և ճգնութեանց, զի ոչ քաղաքս թագաւոր 'ի վերայ լերանց, և ոչ լուցեալ ճրագ դնել ընդ գրուանաւ, այլ 'ի վերայ աշտանակի, զի լոյս տայցէ ամենեցուն. ամենեքեան և տարայս և իրք և անուն պայծառագոյն քան զարեգակն, յորմէ ոչ ինչ արգելու զնա:

Նա և յայս առնել զանտանելիութիւն երանելոյս, զի 'ի կոչմանէ անտի ծանուցաք երկնային գրագարան-

բութիւն տայր, և առաքինանայր վարուք անմեղմեծնայն զօղ հանդիսաւ։ Պղնձագործիւն հակող առաքինութեանց, առողջութեան օրինակ, ՚ի Քրիստոսի արժանաւոր պատկաւոր, յառաջաբերելի ձգնութեան հաշտակաւոր, մեծ խոստովանող Նոյին և մկայ, գեղեցիկ գործարան հոգւոյն էր, քահանայից զաղափար, հովուապետաց նախարարիր, երկնային զօրաց քաղաքակից, մարտիրոսաց պարծանք, առաքելոց կցում, մարմնաւոր հրեշտակ յերկրի։ Պղնձագործ որ գեղեցկապէս զատս մտացն 'ի վերայ անշարժ միտքն հաւատոյ հաստատելով փութայր յերկինս բարձրանալ, զի անմեղոց զանգամաւոր լուսաւորութեան տեսանիցէ պայծառագոյն աչօք. զոր և տեսանէր խոկ հանապազ մտօք ըստ Պաւղոսի զանէր փառաց ընդ աշխարհ լուսէ, որով յերկրէ մտաց հեղեղատէ ոչ շարժէր, 'ի բանաւորագունից առեալ մտօքն և գիտաց։ Պղնձագործն որ 'ի մէջ ծննդեան չարչարանաց հալածեալ մտանէր, կերպ զՅովսէփ այն 'ի լերինն, ուստի ոչ ձեռանէր, այլ յաղթութեանն տեսլեանն 'ի սրտին գործարանի հոգւոյն մտաւորք զառախտականն գործեալ ընդունէր, և զժողովուրդ խոր տեղհական հրաշիցն զօրծովք օրինագրէր, և 'ի խաւարէ բարձրացեալ կառաջնորդութեան արտաքս հանել, ոչ յերկիր ժառանգութեան որպէս Յեսու Նաւեայ, այլ յերկինս առաքինագեալ ածէր յանձողականն։ Պղնձագործն որ զառաջնորդութիւն Ճշմարտիտ հաւատոյն առաքի բանաւոր աղբերաց քարոզէր հաւատարձակութեանց և ոչ զանազանեալ զարհուրէր առ 'ի նամանէն։ Պղնձագործն որ զմայրութիւն աշխարհի պատարագ և զկենդանական հեշտութեան կղերզան հանդարտելով առ առն հարկանէր, և զերկրային թագաւոր զինուորութիւն, լաւագունագոյն բարձն հարեալ Քրիստոսի հետևէր։ Պղնձագործն որ նախամարտիրոս թէ չարչարի արժանացեալ, մարգարէական հոգւոյն տեսանէ զուշակէր զհանդերձեալսն, և առաքելական աշակերտին միջնակեալ, անթիւ բազմութեան անձանց ընդարելոց ընծայէր մեզ. ուստի աղօթիւք չարչարանաց հոգւոյն որոց յաղթանակաց անգամնօք բղխեալ առ 'ի նամանէ։ Պղնձագործն որ զօծումն քահանայապետութեանն ոչ 'ի մարդկանէ և ոչ 'ի ձեռն մարդոյ, այլ 'ի վերուստ տեսութեամբ և 'ի հոգւոյն յայտնութենէ բուն Պաւղոսի կոչեցեալ ընկա-

րաւ ։ Գրիգորիոս որ 'ի միջումն հոգեւորական մարմնի ճգնեցեր մարմնաձնական վարուք ընդդէմ հակառակաւորք թշնամեացն հանապազորդ մեռանելով աշխարհի սրբու-թեամբ եւ պահօք եւ զանազան առաքինութեամբք վասն սիրոյն Քրիստոսի. յաղագս որոյ սերովբէիցն կցորդեալ զերեքսրբեանն 'ի բարձունս մատուցանես միշտ գոհու-թիւնս այ̃ ։

Այլ զի եւս երկրաբնակացն օրարից զբաւնս, քանզի յորժամ զմեռեալ տեսեալ զանհնազանդութեան սանձահարս զտ-բայն, զոգումն եւ առաքելութեամբ ընդդեմն զիւրեանց լոյս. զմահու մեղկութեան զօրով բնութեամբ եւ եղծանելի, զայն-չափ չարչարանս բերեր 'ի մարմնի. վասն զի թէպէտ եւ ընկալեալ զաստուածային խորհրդակցիլ որ 'ի սրբոցն առաք-եալ, այլ փոքու ինչ ժամանակաւ եւ նուաղակէք ։ Այլ-գեցաւ Խորվիրապ՝ այլ 'ի մէջ մեղկութեան. գլխաւորեցաւ Յովհաննէս, այլ 'ի քէթ թել ակամ. քարկոծեցաւ Ստե-փանոս, այլ առ ժամանակ եւս. խաչեցաւ Պետրոս, այլ արագ կատարմամբ. սղոցեաւ եւ Պօղոս գլխատեալ, այլ 'ի նոյն ժամու. չարչարեցան մարտիրոսքն ոմանք հնարիւք, բայց ոչ ամենեքեան միով օրինակաւ, այլ զանազանակես բազում պատուհասիւ ժամանակաւք եւ հնա-րից բանադատաց ։ Իսկ սքանչելիս այս միայն եւ հայր, անձամբ քան զինքն եւ գերահռչակ մարդկան մերթանգա-նաց հրաշիւք. վասն զի զամենայն առաւելս չարչարանս զոր ամենեքեան ընկալան, իւրն յօժարիւ ուրախ մարմնի յանձն էառ բերելով քաջութեամբ. անզգայանալով ուրեմն զգայութեամբ կերպս, ցանկացաւ եղանել 'ի մարմնոյն եւ լի-նել ընդ Քրիստոսի. ո՛վ տեսանելի անձին, ո՛վ քաջ նա-հատակն անսպասաւորել քարոզչին, ո՛վ Լուսաւորիչն հա-ւատոյն եւ առ Քրիստոս կատարեալ սիրոյն ։

Արդ յաւարտեցուք նախանձել լինել, ով սիրելիք. բայ Պօղոսի թէ՝ Նմանօղք ինձ եղերուք, որպէս եւ ես Քրիստոսի ։ Արդ հետեւեսցուք յօթեւանսն վերինն բա-առաքինութեան ընթացից, անտեսս առնելով ընդ նմին զկարծեցեալ արդարութիւն, զանցաւոր վայելս եւ զժամանակեայ զբօսանս, անմեղծանելի փառացն փա-փագեսցուք, անթառամ պսակին, անսպառ խնծան արքայու-թեան, հրեշտակացն արժանաւորութեան, Աստուածութեան ընծայութեան. գիտելով զի ոչ ունիմ առաջնորդ կեանս

այս բնաւորական յետքեան բարութիւն. բայց միայն արտասուս, տառապանս, թշուառութիւնս, վիշտս, ցաւս, ախտաժետութիւնս, նեղութիւն, անձկութիւն, հիւանդութիւն, ծերութիւն, մեղս ազգի ազգիս, և մահ 'ի կատարածի. այսքան և այնպիսիւք դժուարաւանելի ծանուցեալ զկենցաղս զայս երանելի հայրս մեր, վասն որոյ նուիրեաց զանձն իւր պատարագ այ, զհետ ընթացաւ չարչարանացն խաչին Քրիստոսի. գիտէր արդեօք ըստ մեծին Պաւղոսի թէ ոչ են արժանի չարչարանք յայժմեան ժամանակիս՝ հանդերձելոց փառացն որ յայտնելոց են 'ի մեզ:

Արդ գիտեմ, եղբարք, զի ցանկայ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ կցորդ լինել չարչարանաց նորին, զի և պատրաստեալ պսակացն որ 'ի տեառնէ հաղորդ գտանիցի. բայց զի չև է ժամանակ մարտիրոսութեան, և ոչ են այժմ ընթացք յասպարիզի նահատակութեան, վհատիցի՞ք արդեօք: Այլ այն մի՛ յաղագս այսորիկ տրտմեսջիք անյուսութեամբ. զի թէպէտ և նոցայն անձեռնարկելի է յայժմուս, այլ կրթեցէք զանձինս ըստ ժամանակիս նահատակութեան: Արհամարհեացն նա զբովանդակ կեանս, արհամարհեցէք և դուք գոնէ մասնաւորաբար զխրախութիւն սորա. մատնեաց նա զանձն հրոյ, շիջուցէք և դուք յանձանց զհուր ցանկութեան. եհեղ նա զարիւն, և դուք զարտասուս առաջի տեառն, ընդ նմին և զաւելորդս գդլիցն 'ի ձեռս աղքատացն. կախեալ նա զկայծակունս բոցոյն, շիջուցէք և դուք առ 'ի ձէնջ զբոց բարկութեան. համբերէր նա յետ բազում նեղութեանց՝ մահշաւնչ գազանացն կենակցութեան 'ի խոր վիրապի անդ, համբերեցէք և դուք փորձանաց աշխարհածուփ կենացս առանց կարճմտութեան. Մ՛ի կրանիր 'ի խրատու տեառն, ուսուցանէ իմաստունն. և Դաւիթ երանէ զմարդ խրատեալ 'ի տեառնէ. ընդ այսոսիկ և առաքելական բանն երանի տայ որք համբերեն փորձանաց, զի թէ ընտիր եւս գտանիցի, առնէ, առցէ զպսակն կենաց 'ի տեառնէ:

Յիշեցէք և զհամբերութիւնն սորին յանդնդային վիրապի անդ, որքան դառնաբեր վշտօք առլցեալ էր: Բայց որովհետև զխանդաւոր զայն տեղի յիշեցէք, պարտ է մեզ սակաւ ինչ բանիւք դեգերել անդանօր,

եղեւ հանդէս թուոցն, եւ քննել մտօք թէ որպիսի ար- գելոք ընկեցին զորս կեանք 'ի մէջ այնչափ անհամար զաղանաց բնակելով, որքան խորհուրդ բարեաց, եւ զինչ գործ։ Արդ թէպէտ յայսուհետեւ յաւելցուք հոգւոց ախտաւոր ոռ երանելւոյն, թերեւս կարասցուք շահել ինչ 'ի նմանէն, եւ խնդրել փոքր 'ի շատէ զժուժկալութիւն նորա եւ զանձնապատժական վարսն, զանտանելի առաքինու- թիւնն, զանդադար աղօթսն, զանհանգիստ աշխատութիւն, զանվախճան հսկումն, զանխախտելի հաւատսն, զան- խղճելի յոյսն, զարտասուաթոր պաղատանսն, զանպա- տմական մաղթանսն, զանկերպակերելի անմահութեանց նմա- նեալ կեանսն, քանզի անմահութեանց արդարեւ երեւէր քա- ղաքավարութիւն առաջարգոյն, անվաստակելի ճեղքն, տանելոց երկրոյ կերակուրն, յոյժ առաքինական եւս էր նմա եւ անասպառական բանութիւնն, որպէս փափագէր պար- պել միշտ երկնային տեսութեանցն, տանջեալ թէւս իւ- րեւ զաղաւնոյ եւ հեռանալ դադարել յանապատի։ Վերանաթիւն ոչ էր նորա այլ ինչ, քան եթէ անխա- տար մնալ յառաջարկելի անդ նահատակութեան։ Առ- կայն բովանդակ նորայն կեանք հանդէս էր մեկնութեան, համապատող պատերազմելով ընդ պետութիւնս եւ ընդ եղեմանութիւնս աշխարհականի խաւարին, նման արդարեւ աշխարհ 'ի խաչ ելեալ էր, եւ նա աշխարհի ըստ առա- քելոյ, 'ի ջանս եւ 'ի վաստակս, 'ի քաղց եւ 'ի ծարաւ, 'ի պահս եւ 'ի աղքատութիւն, 'ի ցուրտ եւ 'ի մերկութիւն։

Այլ մեք բաւական իցէ բանիս պատմել զանտանելի ճգնութիւն երանելւոյն, կամ օրինակաւ ցուցանել զան- համբուրժելի նեղութիւն նորա, որ 'ի մէջ խճից եւ քար- անց ունէր զբնակութիւնն, ուր ոչ խոսակից որ մերձ, ոչ վշտակից, ոչ բարեկամ, ոչ օգնական, ոչ սփոփիչ, ոչ սպասաւոր։ Այլ ունէր մեծաւ ժուժկալութեամբ իւրն կենդանւոյն եղեալ 'ի գերեզմանի, անյարկ, անծած- կոյթ, զայնչափ ժամանակս 'ի գիշերի եւ 'ի տուընջեան, 'ի տապոյ ամառնւոյ եւ ցրտասառնամանեաց ձմերայնոյն։ քանզի աստուածամուխ էր այրն, անմեռելանալ գիտու- թեամբ հոգւոյն շնորհաց առլցեալ միտացն աչօք պայ- ծառացոյն, հոգւովն մաքրեալ, յաշխարհական զբաղա- նաց հեռացեալ, զհանդերձեալսն միայն նկատէր, զա- պագայսն ատենին ահեղ ակնունէր, խորախուսէր տեղա-

նական խորատուն, զօրանայր ամենեցեն բանիւն. Յաշխարհի, ասէ, նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք զի ես յաղթեցի աշխարհի։ Յիշէր աւետեաց և զառաքելականն բան՝ զի թէ և Արտաքին մարդս մեր ապականի, ասէ, այլ ներքինն նորոգի օր ըստ օրէ, զի այժմու յաճախութիւնն նեղութեանս, զյաւիտենական փառսն գործէ 'ի մեզ։ Սաղմոսէր և ընդ Դաւթայ. Համբերելով համբերի տեառն և լուաւ աղօթից իմոց, հան զիս 'ի գբոյ տառապանաց 'ի կաւոյ և 'ի տղմոյ. և թէ Ե՞րբ եկից երևեցայց երեսացդ այ̃, քանզի խանդակաթ սիրով եմ ես, ցոյց ինձ, ասէ, զերեսս քո, և լսելի արա ինձ զձայն քո, զի ձայն քո քաղցր է և տեսութիւն քո գեղեցիկ, զհետ հոտոյ իւղոց քոց ընթացայց։ Ընդ այսպիսի աւետեաց բարբառէր հանապազ, այսպիսի աղօթիւք պաղատէր երանելին Գրիգոր, յայսպիսի մաղթանս խոնարհեցուցանէր զամենողորմ գթութիւնն այ̃, մինչև յայց ել հոգին քաղց մոլորեալ հօրն իւրոյ, այն որ կամի զամենայն մարդիկ զի կեցցեն և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն ամենեքեան, և այցելութեանն օրինակ էր. այսպիսի։

Այս ամ̃ն գեղեցկութեամբ հաշակեալ հոգիափայլեանուն, յարևմտից արեգակն ծագեալ արևելեան աշխարհին հանդերձ լուսափայլ աստեղօքն որ ընդ նմա, կատանաց վայելչութիւնն, մարտիրոսաց պայծառոքն, հրեշտակաց զուարճացուցիչն, գիւղաց տեսարկան, երկնաւոր փեսային հարսնացելոյն, այ̃ խնկնանուէր ընծայն, սրբութեան սիրողն, ամենամաքուր խորհուրդն, տաճարաբնակէր հոգւոյն, պսակեալն պատերազմողն, հակառակամարտիցն յաղթողն, պայծառագոյն շառաւեղն, քաղցրահեմիկ ուռն, պտղաբեր ձիթենին, նախանձելի վարդն, պարկեշտութեան օրինակն, արևմտից նորաբոյս ծաղիկն, արևելից զարդարիչն, վայելչագեղ տիպն, աստուածատեսակագոյն միտքն, ադամանդեայ պնդութիւնն, որ զանբաւ զօրութիւն սկայազին բռնաւորին 'ի պարտութիւն դարձուցանէր իբրև զտղայ, վասն որոյ երգէ աստուածայինն Դաւիթ. Ամենայն փառք դստեր թագաւորի 'ի ներքուստ 'ի վերջաւորս յոսկեհուռն պաճուճեալ։ Ո՞ւ ոչ և վասն իմաստախոհ նորուն զայեկի Գայիանէ ասացից, ողջախոհութեանց մօրն, ա̃ծահա-

ձեզ զաստուածախօսականսն, անմեկնելեաւ աւանդեցին, անզուգական հոգւոյն, անփոփոխագրելի խորհուրդն, որ ոչ յաղթէր 'ի փառաբանչական պատարագանաց բանաւորին, այլ շաւիղ փարէր, պաշտպանէր բանիւք, մտադրէր առ 'ի յաղթութիւն. դորանաւ քաջալերէր. Մ՛ի զեղեցկինք ինձ, ասելով, մարդ է կենդանաց, սուրբերն են խառնակեալքն, անմահութիւն են պատարագեալքն, ժամ ժամանակ փոքր միւս եւս. ընթացիր 'ի նեքին մեզ, բարեխօսք է անմահ. փեսայից հարանանալ, լուսաւորչին ընդ [illegible] կուսանաց միաբանել յաւազանաւն երկնային. Նոյնպէս խոնարհագոյնական բանիւք յորդորէ զկոյսն անխառնահեղի զծնունդն զիտութիւն ասնելով առ մեծ մինչեւ ցկատարումն. որոյ արխազար ձգձգութեամբ եւ մկրտութեան հանդիսի կատարեսցին անմեղեալ 'ի Հռիփսիմեանս:

Այս զինչ յետ այսորիկ. պատահեալ [illegible] բանաւորն համբերել զօրօք դժնդակագոյն հալածանաց, [illegible] փոփոխեալ ընթեռնուլ 'ի [illegible] բանութեանն 'ի կերպարանս խոզի՝ որպէս երբեմն [illegible] ներոյ 'ի ձեռն Դանիէլի, ոչ որկորական, այլ ապաշխարութեան, ոչ տանջելով, այլ ճշմարտութեամբ, [illegible] ուղղութեամբ, ողորմելի կերպարանաւ, յանդուգն ժամանակ, [illegible], միակերպ [illegible], [illegible] յաւանդ [illegible] որպէս [illegible] 'ի մէջ [illegible], որպէս 'ի պատուոյ էր եւ ոչ խնդալ, այլ հաւատացելոց [illegible]նոց [illegible]. Նոյնպէս պատահեաց նմա որք հալածեալ [illegible] յանդգնեալ, այսպէս հարուածովք խայտառակ զանհնազանդութեան պատուիրանաց եղբօր:

Այժմ ո՞ր է քո թագաւորական բարձրագոյնութի՛ն, ո՛ր հպարտութիւն, ո՛ր խրոխտալի ամբարտաւանութիւնդ, ո՛ր գերապատիւ աթոռն, ո՛ր թագդ արքայական, ո՛ր տիեզերական բազմականքն, ո՛ր պատուելի դասութիւն, ո՛ր անպարտելի քաջութիւնք, ո՛ր զօրավարքն հզօրք, ո՛ր պերճն բանաւորք, ո՛ր [illegible] նախարարքն, ո՛ր փառաւորութիւն եւ կառավարք, ո՛ր զօրավարական [illegible], ո՛ր [illegible], ո՛ր զահիճքն փութացեալք, ո՛ր շարահիւսք մեծամեծքն. ո՛ր են եւ [illegible] յոր յուսացեալ էիք [illegible] 'ի նմա, յաղթեցին այժմ՝ [illegible] ձեր թէ[illegible], [illegible] ոչ [illegible] 'ի [illegible] մեզ:

Տեսէք տեսէք թէ ես եմ, և ոչ է այլ Ա՛ծ բայց յինէն որ սպանանեմ և կեցուցանեմ, հարկանեմ և բժշկեմ. եթէ ոչ խոստովանեցայք յառաջագոյն բանիւ, խոստովանեսջիք այժմ 'ի ձեռն պատուհասի հարուածոցդ։ Բայց զի՞նչ առաւել քան զայս ներգործիւք առ արքայն Նաբուգոդոնոսորայ. ո՞չ ապաքէն և զնա իսկ խրատէր մարգարէն Դանիէլ և պատուիրէր յառաջագոյն, սակայն իբրև իժի և քարբի խցեալ զականջսն իւր ոչ լսէր զձայն թովչի հմայողի, և ոչ ընդունէր զդեղ 'ի դեղատուէն իմաստնոյ, մինչև արդեամբք իսկ ընկալաւ զբանն նախասացեալ պատուհասին։ Նմանապէս և աստանօր պատահեցին առ սոսա 'ի ձեռն մեծի ձկայնին ա՛յ. զի որք ոչ առեալն զարկ 'ի խրատուէ ա՛ծայնոյն բանից նորա, անարգ եղեն որպէս ջուր զի հեղու, և 'ի լարել աղեղան հզօրին տկարացան. վասն որոյ ուրախ լինէր արդարն 'ի տեսանելն զհատուցումն։

Այլ նոքա այնուհետև զզջացեալ խնդրէին զանէքն, յորժամ սպանանէր զնոսա, դառնային և առաւօտ առնէին առ Ա՛ծ, զի ծանեան ա՛ծասաստ գոլ զպատուհասն, անբժշկելի զհարուածսն, անյուսալի զախտն, որով ընկալեալ 'ի խոր տարակուսութեան յայնժամ յիշէին զԱ՛ծ և զքաջ նահատակ նորա զԳրիգորիոս։ Ո՞ արդեօք. զկաղանմանաւորն, զբանդեալն, զաղքատն, զանազգին, զանյարկն, զբազմամոլիչսն, զանհաւատարմեալն, ընկենդանութեան թագաւորին, զնա խնդրէին հաւատով, 'ի ձեռն նորա յուսային բուժիլ յանբժշկական ախտիցն, և 'ի խնդիր ելանելով սրբոյն, ոչ մարդկային ինչ յուսով, այլ յայտնութեամբ տեսլեանն որ երևեցաւ քեռ թագաւորին։ Այլ յիրաւի ուրեմն, քանզի զնորա յուսային յետ այնչափ ժամանակաց կեալ նմա յայնպիսի անհանդուրժական վայրին. անտանելի էին իրքն. անյուսալի զարմանիք, սակայն Ա՛յ ամենայն ինչ կարելի է. զի որ զՅովնան 'ի փոր կիտոսին պահեաց կենդանի, և ըզՊաւղոս 'ի խորոցն անդնդայնոյն փրկեաց, նա և զմեծն Գրիգորիոս պահեաց անարատ 'ի խոր վիրապի անդ, որ և նախ քան զհասանել խնդրողացն յայտնէր նմա տէր զհանդերձեալսն, ոչ 'ի մրրկէ և յամպոյ, այլ յանդիմանն տեսլեամբ երևէր այն որ ընդ նմա գոլով հանապազ և ոչ երբէք մեկնէր առ 'ի նմանէ, ըստ խոստման բանին, թէ



Digitized by Google

Որ սիրէ զնա՝ զգամանն իւր պատՀեացէ, և Այս և Հայր եկեղե-
ցւոյ և աԹեփանոս առ Նմա արարացուք, և եԹէ Ցն Հան-
դերձ եԹէ ոչ 'ի Հեղս և 'ի խանարՀս, և զիք զգայն 'ի
բանից իմոց. վասն որոյ բարեգուԹն և մարդասէրն նայ-
եաց առ նախաՀաւատակն իւր ստեղծ. Որպէս որ ննջեաց և
կանգնեաց 'ի մեռելոց, և լուսաւոր եւս եղիցի քեզ Վիշ-
սոյն քաջ նաՀատակդ իմ, որ զՀանդիսաւորդ բանսար-
կուն մեծամ ժուժկալուԹեամբ ընԹացեալ կործան-
ցեր. սոյն որ յաստուածախօս ընԹացիցն արժանաւոր նաՀա-
տակեցար ընդդէմ ԹշնամեացՆ. սոյն որ զանդամս
բեկեալ զգեստաւորեալ ընդ սուրբս մեռանէիր. սոյն Հաստա-
տեալ սիւնդ եկեղեցւոյ իմոյ և պարծանք առաքելոց.
սոյն առաջնորդ ուղղափառուԹեան և գեղեցկուԹեան
աշխարՀի. սոյն քարոզդ Հաւատոյ և առաջնորդ մարդ-
կան 'ի ճանապարՀս արդարուԹեան. սոյն և զօրացեր,
սոյն և սպասեալ արփաբար զմեզ քո. ոչ ընկզմեցար բազ-
մաՀաս աղեգան, զարԹիր և սԹափեցաւ, զի առՀաւ նորո-
գեցի իբրև զարծուոյ մանկուԹիւն քո. սոյն և քարո-
զեա զաւետարանն իմ, յաղագս որոյ բազում Հանդէ-
պեցեր կրից չարչարանաց. Որպէս և զաւարճանեցեր, զի ա-
րարից զքեզ յաղգ մեծ որպէս կանխաւ զԱբրաՀամ.
սոյն և ընկալ զպսակ վաստակոցն քոց, վասն սիրելի
երկրպագեցի զմեզ ջանադրաբար ժամանակաց քոց զի Հայք
ազգաց բազմաց արարից զքեզ, զի բազմացուցից զա-
ւակ քո իբրև զաստեղս երկնից և իբրև զաւազ ծովու.
Եւ Հաւանեցոցես այլ ազգ արարածոց առ քեզ յաղԹու-
Թիւն, բայց զի արդար երևեցայս, զի փառաւորեցայս,
զի երևեցի Հրեշտակացն և մարդկանն եղիցիս. Այլ
Հնար պարտիլ զքեզ մնալն յանԹակս առաջադրելոյն, առ
կայս բազմաց վաստակուն իւրոյ քեզ, յաղագս այսորիկ
երկրպագանեցի 'ի նեղուԹեանցն քոց, զի բարձրագոյն
փառաց արժանացուցից զքեզ, զի յետ աստուածուԹիւն
պատուոյ և աշխարՀական բարձրացուցից. ընկալար զպսակ
նաՀատակուԹեան, ընկալցիս և այժմ զանԹառ Հայրա-
պետուԹեան. բարձրացար կատարեալ առաքինուԹեամբ
ընդ Եղիայի, ընկալ և այժմ զՀոգւոյ նախատեսուԹի-
ւնն. ԶՀնեցար ընդ Յովհաննու 'ի ճգնողականդ յա-
նապատի, գոչես և դու ընդ նմա զձայն բարբառոյն յա-
նապատի. աշակերտեցար 'ի բանտի կապանաց ընդ Պօղ-

զոտի, ընծայել ընդ նմին և զանարգել քարոզութիւն բանի իւրոյ ընդ ամենայն. Միաբան զսիրականս ազգայութենաւ յիմեն, սա և զուր զնոյն իշխանութիւն կարգել և արձակել 'ի յերկինս և 'ի յերկիր. առաքելոցն իմ երկոտասանն 'ի վերայ ծագելոց քարոզութեանցն միջնորդս զընդհանուր աշխարհս, իսկ զսա մեծին ընդ համօրհնեալ միջնորդ քարոզեցեր զաւետարանն իմ. վասն որոյ ընկալեալ զանուն մարգարէութեան իւրոյ արժանին առաջնութեան կոչեցելոց ամենայնիւր.

Այսօր ամ վառեցեր կանթեղ իմաստութեան զերկրաւորս, և արարեր զմեզ լոյս ծանուցմանց. ոչ յաւիտենից, ոչ յերկնաւորաց, այլ վերակացուն ընծայեցեր 'ի կոչումն առաքելական, քանզի գիտեր զզօրութիւն կոչմանն յառաջագոյն, հաւատոյն իմ և համբերեր նմա արդարութիւն, զառաջնորդդ յիշատակի, հրճուեր հոգևորապէս, կարգաւեր խորհրդական, առաջնորդեր 'ի ձայն յիշատակի առ իմ առնելով. Այսպէս եւ զքեզ ասացաք անէր, երկրպագեմք ծառայութ և առաջնորդութ 'ի սմա.

Այսօր և քանոնական եղեալ 'ի միջոյ զառաքելոյն ընդ առաջ ընծայեցեր նմա, որ երբեմն թագաւոր՝ այժմ խոց անուանի, զարշելի անունեանն, զապաքարոյն կերպարանակս, կատարելի մարդութեանն, համեղերն աշակերտական քաղցրութեան, փափկեալ և զանձկութ ցանկալով, առ ասա արբեցին անկամեր, շարժ փարեր զհոգւոյ, ամբարեր զաղօթութիւնն կերպարանս, ձեռնադրեցաներ դհոգւոյ սուրբն. մինչև անկեալ նախարարն Սրբոյ 'ի վերայ երեսաց իւրոց, երկնի պատգամեր առ առն իմ, և առաքելոց առաքելոց հեղլով յարաց զահաբեկեալ զանուանս, բարեկրեալ ուրախ առնելով. Նա բարձր ցանկալի աւետարան իմոյ միաբանութիւն քո սուրբս աջոյ զանձն իմ, և մի խոսեցի զզօրութիւն քո անէր, որ զարմացեր զմեզն 'ի վերակս Հոգւոյ և զապաշխարն յաղթերանին. զի ահա և այժմ զկարծրութիւն որոց ժողովրդեանս ապարինել կանգնեցուցեր հզօր քարոզութեան քով իրք զմեզ, և 'ի սանձս և 'ի դանդաղանօք ձեռնեալ զհրաշագործս զարմացեր առ քեզ անէր. կարող ես և 'ի բանակց յարուցանել որդիս Աբրահամու, վասն որոյ աղաչեմ զանքան մարդասիրութիւն քո անէր իմ Սիմոն Պետրոս, միածին որդի և բան միաւորեալ ընդ Հօր.

առաքելոց նմանեցեալ և անէր բարութեց, որ բարձրանալով քո 'ի խաչին կապեցեր զՏէրն, և մեզ կապելոցս ազատութիւն յաւիտենական շնորհեցեր, զի թէ և այժմ 'ի անեղծութեան ձեռաց քոց, և առաքեա զզօրութիւն բազկի քո, և ազատեա զժառանգութիւնս զայս 'ի ծառայութենէ բանսարկուին, զուգանելով յայտնապէս թէ դու միայն ես ա̃ծ կենդանի և մշտնջենաւոր, և թագաւոր անվախճան, Հզօր և յաւիտենական. արդ բժշկեա զառաւեր 'ի բարկութենէ Հարուածոց քոց նայեցեալ 'ի խոնարհութիւն ծառայիս քո, և ինձ շնորհեա բան խոնարհութեան, զի քեզ զօրութեամբ կարացից մեկնել զազգս 'ի ծառայութենէ դիւաց, և ընծայել քեզ անուան ա̃յ ժողովուրդ սեպհական.

Այս նայեցեալ անէր յաղաչանս սրբոյն, շնորհեաց ամենեցուն առժամայն զլուծումն 'ի դիւական սխալից, և զմոլորականն սնոտիութիւն և զխոսս թագաւորին, և եկեալ վաղվաղակի նորա հանդերձ, խնդրէր անտանել զնշխարս մկրտելոյն ա̃յ. և անտեալ հաւատէր խնդութեամբ, և մեծաւ պատուով առաքէր զզանձն իմաստական 'ի Հնձանայարկս նոցունց. ուր և ինքեան վախճան կալեալ բազմամբոխ ժողովրդեամբն և թագաւորաւն, սկսանէր ուսուցանել զնոսա 'ի սկզբանց արարչութեանց անտի մինչև ցկատարումն յաւիտենից, զոր ոչ է մեզ կարելի ասել մի ըստ միոջէ. քանզի յոյժ իմաստուն էր այրն Հոգևորական գիտութեամբ ըստ շնորհաց ա̃ծայնոց. բայց թերևս ծանուցանէր զանմեղութիւն ա̃յ և զարարածոց ամենայն զեղծելութիւն, զգայութիւն մարդոյն, զշնորհքին պարգև, զանձնիշխան կամքն, զփոփոխելութիւն զրախտին, զթագաւորելն ամենայնի որ 'ի ներքոյ երկնից, զբանսարկուին նախանձ, զդաւաճանութիւն կնոջն, զյանցանելն զպատուիրանաւն, զարտահանելն 'ի ցանկալի վայելչութենէ հայրենեացն, զանհնազանդութիւն զաստուածպաշտութիւն, զյանձնելութիւն յետ այնր 'ի մեղս, զօտարանալն յա̃յ, զնուաղել ա̃ծապաշտութեանն, զջրհեղեղացն կործանումն, զընտրելն միայն զտանելն Նոյի, զաշտարակին զշինութիւն և կործանումն, զբազմաստուածութեանն դիւաց, զյանձնել կռապաշտութեանն ընդ տիեզերս, զՀաւատալն Աբրահամու, զծառայութիւնն Իսրայելի, զՀայրապետն Մո-

պլիպոսի, զկառավարողն Փարաւոնին, զամաձանութիւն ծաղուն, զանցանել ժողովրդեանն, զընկղմելն Փարաւոնին և զօրացն, զյանապատին պաշտելիս, զմովսիսական քարոզն, զգրաւորական օրէնքն, զառ 'ի յերկիրն աւետեաց փոփոխումն՝ զմարգարէիցն զգուշակութիւն, զգալուստն Քրիստոսի, զանօրինական խորհուրդն, զխաչելն որ վասն մեր, զմեռանելն ստուգապէս, զթաղելն 'ի գերեզմանի, զյառնելն յերրորդ աւուր, զփրկելն զմեզ 'ի սատանայէ, զյաղթելն մահու զօրութեանն, զվերանալն առ Հայր յերկինս, զիջանելն Հոգւոյն որպէս 'ի վերնատունն, զանձուն մեծագործութեանն, զառաքելական քարոզութիւնն, զհաւատոցն զալուստն Հայրենին փառօք, զյարութիւնն ամենայն մարդկութեան, և զհամառօտ մեծի պատասխանին յաւիտենից։ Նայեցիք ամենեքեան մեք յանձախապարզն գիտութեամբ և առաւել վարդապետութեամբ ըստ ժամանակին պիտոյից վկայութիւնք և օրինակօք յանձնառութեան գրոց հաստատեր զնոսա։

Եւ այսր դարձեալ պաշտանոք մաղթանաց հարուածելոցն առ երանելին, և նորուն պահպանութեամբ փարեալք առ տէր վասն բժշկութեան նորա, որով ոչ յապաղմամբ ընկալան զհայցեալսն։ Քանզի բաժանայր վաղվաղակի 'ի ձեռն աղօթից նորա հրամանաւ պատուհասին յամենեցուն, և կերպեալ զթագաւորն այլն ոչ նշանախաւչին, Թօթափէր նորնժամայն զգետ խաւարային, մերկանայր և զկերպարանս անասնոյն զոր զգեցա յաղագս մեղացն դատապարտեալ, և զգենոյր զառաջին կերպարանացն զվայելչութիւն, նա և զարմանագոյն և հրաշալի։ Մ՛ի մեծագունի երկին, ո՛վ անպատմելի հրաշիցն. արդարև ո՛վ խօսեսցի զզօրութիւն քո տէր, կամ լսելի թուով համարեսցի զպարգևելիս քո. զի ո՛վ որ ետես կամ լուաւ զայնպիսան ողորմութեան հարուածք 'ի միում վայրկենի ժամու բժշկեալ. Նմանապէս զկատա երկկեղծանաց իւրոց առնէ տէր և աղօթից նորա լսէ։ Բայց երանելին ոչ անձին, այլ ոչ ընծայէր փառաւորութիւն առնելով. Այս փոփոխումն աջոյն բարձրելոյ, և թէ Նա է տեառն արար զօրութիւն։

Յայնժամ առաջ և Թագաւորին Տրդատիոս, քանզի այս էր անուն արքային, Ջերմեռանդն հաւանեալ և մեծապէս ձայնիւ խոստովանեալ զտէր մեր Յիսուս Քրիս-

Digitized by Google

[illegible]

կանխի կենաց, զորոշեալ զժողովուրդդ տեառն 'ի նշան ան-քանոյ, զգեցոյց զոգի զՔրիստոս 'ի ձեռն մկրտութեան, պատրաստեալ զգոյս ժողովուրդ տեառն սեպհական, զի ահա աւետարանական քարոզն աւանդեցաւ, Ճշմարտութիւնն հաստատեցաւ, ճոխ փառաւորեցաւ, բան-ատրիւն յանձն եղև, սատանայ կործանեցաւ, բռնաւոր պարտեցաւ, ժողովուրդդ 'ի գիւտական պատուհասից բժշկեցաւ, ամենեքեան զհետ օրինացն Քրիստոսի ընթացան։ Որդ զի ես յապաղես, ընդէր ապաշխարես յերկուանս, հիմ արդեօք զանգաղիս, մկրտեա զամենեսեան, բռնաւորեա բռնով զխոստութեան, նորոգեա զերկրաւոր ծննդեամբ։

Որպիսի ուրեմն աղաչէր Թադէոսին, առ սոս անկանէր որքոյն, պատղաստեալ մնասցանեն։ Իսկ երանելին ոչ անտարժէր, ոչ հաւանէր փառաց մարդթանայն։ Ահաւասիկ, ասէ, յանդգնեալ յաշակերտն՝ որ առաքեալ է քան զիս, չեմ բաւական բառնալ զլուծն անբանական, ոչ կարացից յաղագս բանաւոր հօտից համար առ հօտապետն Քրիստոսի, վասն որոյ յերկնից յերկիր խոնարհեցաւ, սակս որոյ մեռաւ և թաղեցաւ և արեամբ իւրով ազատեաց զամենեսեան 'ի ծառայութենէ մեղաց. գիտեմ զանէր նորա 'ի վերայ ուխտրոց իւրոց, գիտեմ և զդասուէր նորա առ Պետրոս յարութենան, եթէ սիրես զիս, ասէ, Պետրէ, արածեա զոչխարս իմ. քանզի մեծագոյն է պատիւն, բայց դժուարակիր է բեռնն. գիտեմ և զհրամայելն Մովսէսի 'ի կոչմանէ անտի, վասն որոյ չեմ արժանի այդմ աստիճանի, և ոչ եղէց վերակացու հօտից որոց զարիւն 'ի հանդերձեալ յաւիտենին պահանջիցիմ։ Այսպէս ասելով երանելւոյն 'ի բաց հրաժարէր։

Այլ ինչ գործես, ով քաղցր, զխոր վեհերոս 'ի բարձրագունից պատուոյ, նեղութեանցն հանդերձեսցես, զամենայն տանջանաց կրեցեր, եռացեալ կարգաց հանդուրժեցեր, ամենայն չարչարանացն ժուժկալեցեր, զաժանդագունից զաղանացն անօթից եղեր, անօտարաթեանն Ճշմարիտ, զպատուական կարգն երկրպագութեամբ հեռացուցեր, զփառս անկոխազան խուսեցեր, զհնազանդութիւն տեղին 'ի պատուերութիւն հասուցեր, այժմ զանգազիս և 'ի բաց հրաժարես։ Այո, ասէ, քանզի զողամ

Digitized by Google

ընդ ահագնաւոր հրամանաւն տէրունական մարգարէին ասացեալ. Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի, զի եթէ ոչ զգուշացուցանիցես ասէ՝ զարիւն զորա 'ի ձեռաց քոց խնդրեցից. զիարդ իսկ զի որ մի-նոյն ընդ ա̃ծ և ընդ մարդիկ փափագէ լինել՝ հաւա-պետութին Քրիստոսի ապարանի նմանել, ըստ ասացելոյն Պաւղոսի թէ՝ Նմանօղք եղերուք ինձ որպէս և ես Քրիստոսի. որպիսի՞ օրինակք նմանութեանն: Ո՛չ ի զանձն-ական, ասէ, շահեցի, զի ոչ զանձին իւրոյ խնդրեաց միայն զօգուտութիւն, այլ զբազմաց զի ապրեսցին. նա և զանձն ես դնել 'ի վերայ ոչխարաց: Ո՛վ ա̃ծասէր հա-գւոյն, ո՛վ ծայրագոյն խոնարհութեանն, ո՛վ մեծագոյն առաքինութեանն: Նմանօր զտէրունականն կատարէր հրամանն. Յորժամ զամենայն կատարիցէք, առաւելք եթէ ծառայք անպիտանք եմք. այլ և հանգոյն Պաւ-ղոսի բարբառէր, եթէ Ոչ ինչ գիտեմ զանձին իմ խիղճ, այլ ոչ եթէ այնու արդարացայ, զի որ քննէն զիս Տէր է: Նա զի՞նչ յետ այսորիկ լինէր, կամ որպիսի հնար ցուցանէր 'ի տեսանել առաքինութեան գործոցն. յայտնէր նմա տեսլեամբ գիշերի և ասէր. Ո՛վ քաջ նահատակ իմ, զզեցիր զզօրութիւն 'ի բարձանց, զօրա-ցիր և ընկալար զաստիճան քահանայապետութեան. զա-նպիտան զքեզ վարկանիս, ես իբրև զլոյծ պիտանա-ցու զքեզ պսակեցից, զոր զիջանելովդ խոնարհիս, ես մեծաւ փառօք զքեզ բարձրացուցից. ոչ հաւանեալ բա քում կարծեացդ զմիտս, այլ զզեցիր զարդարութիւն քահանայութեան, և միրանեաց զծառայութեանդ իմ. զաւե-տարանի իմոյ կարապետ, զա միրենիչ, զա մանկնա-գարէ բարձրելոյ կոչեցիր, գնասցես առաջի իմ պատ-րաստել զճանապարհս տեառն, տալ զգիտութիւն փրկ-կութեան ժողովրդեան իմոյ, զթողութիւն անձնոյն մեղաց նոցա. և ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո: Ոչ ինչ այսուհետև ասասցես մեզ երա-նելիդ. զի՞նչ այլ ինչ իրաւաբանութեան պատասխանի. եթէ հաւանեսցիս ասացելոցդ, նայեա 'ի մեծութիւն կոչմանն, ընդդէմ որդեոց յապաղես, ա̃ծ է որ արդարա-ցուցանէ, իսկ զարդարն ո՞վ է որ դատապարտ առնիցէ: Ես, ասէ, անիմ այլ ինչ հակառակել. միայն զամ խօ-

մնացայ յերկրորդումն ոչ յաւելից, ահաւասիկ կամ հնազանդեալ տէրունական հրամանին, վստահացեալ 'ի զօրութիւն նորա : Ես տկար և ունայն, նա հզօր. ես հեղգացեալ, բայց նա արագ 'ի յօգնել, գիտեմ զի պատրաստ է բառնալ զտկարութիւն իմ, գիտեմ զի ընդերութիւն պակասութեան իմոյ : Օ՜ այնպիսի գովեմ ես հովիւ, զայնպիսին մերակացու, զնորայն ողջունեմ զտկարութիւն, զնորայն ընդունիմ հեզութիւն. զի ոչ նա զհետ պատուոյն, այլ զհետ նորա պատւին ընթանայր, զի ոչ խնդրէր զփառսն, այլ խնդրեալ լինէր 'ի փառացն : Այսպիսին վայելէ քահանայապետ ըստ Պաւղոսի, սուրբ անմեղ անարատ, զատեալ 'ի մեղաւորաց և բարձրացեալ քան զերկինս. զի որ այնպիսի ոչ լինիցի, ոչ հովիւ ուրեմն կոչի, այլ գող և աւազակ և գայլ ապականիչ օձանելով զհօտն Քրիստոսի. ըստ որում և առ մեզ իսկ երևեցան հակառակորդք ճշմարտութեանս, ոչ միայն գայլք, այլ և ժանտք և ամբարիշտք, թշնամիք և դաւաճանողք, հայհոյիչք և կեղծաւորք, պիղծք և սուտ վարդապետք, առաջնորդք կոյրք և մոլորեցուցիչք, նենգիչք և հոգեմարտք, որք թշնամանեն զհոգին շնորհաց, որոց ոչ թողցի ոչ յայժմուս յաւիտենի և ոչ 'ի հանդերձելումն, յորոց միշտ հայհոյի ճանապարհն ճշմարտութեան : Արդ որոց եթէ հաճոյ թուեսցի, պարտ և արժան է նախ և առաջին անսանել առ այնպիսիսն բանիս, և ապա զերանելի հօրս մերոյ աւարտել զներբողական ճառս :

Հովուապետի է ատեանս, քահանայապետի տօնախմբութիւնս, պարտ է զատանել զգայլս 'ի հովուաց և առ նորա փառացն պատիւ՝ սակաւ ինչ և զմերս յիշատակել զմիշտ, քանզի կատարած յաւիտենից արդէն իսկ հասեալ է. անօրէնութիւն բազմացաւ, սէր ցամաքեցաւ, մոլորեցուցիչք բազումք, և մոլորեալքն եւս առաւել : Նոր աստանօր բացցուք զմիծայլին գիրս յորս գտանեմք զճշմարտութեանն ճանապարհ, քանզի տեղի տայլն երանելի հօրս մերոյ, 'ի խորս բանից արկանէ ըզմեզ. ընթասցուք այսուհետև 'ի սուրբ լերինս, 'ի մարգարէսն ասեմ և յառաքեալսն, և զգուշասցուք, զի մի մանուկք ծփեսցեմք յամենայն հողմոց վարդապետութե, և մի մնասցուք 'ի ստորինս, այլ ելցուք 'ի լեառն զենի

աշակերտութեան բանիցն, և լուսոյս զինչ բաղդատեմ քան հովուապետին մերոյ Սրբոյ. Որդիք լուսոյ, ասէ, մի ոչ խաբեսցէ զձեզ. Պաւղոս, Որդիք լուսոյ 'ի բանից անտի, որդիք լուսոյ 'ի չար մեղաց անտի, և թէ ամենեքին որդիք գնացէք, և զարձեալ ասէ. Որդիք շնորհաց ասացաք ոչ միայն մեծանց, այլ և ամէն հօտիդ. և արդ ես փոքր ինչ յաւելեալ 'ի բանս աւետարանական և յառաքելոցն և մարգարէիցն. և [illegible] ուսումն, քան թէ յայտնեալ է որ ասէ, Ես եմ սկիզբն և ես կատարած. այլ պատմաբանեսցէք ինձ խորահանգիստ որ զմիտս, 'ի բաց դնելով զամենայն հոգաբե-[illegible]. Ըստ առաւօտեղէն բերանոյն աւէր մեր, Որդիք լուսոյ զի մի խաւարեսցիք, որ բազմաւ եկեսցեն յանուն իմ և ասասցեն թէ ես եմ Քրիստոսն, և զբազումս մոլորեցուցանիցեն, և զարձեալ զշնորհաւորք 'ի սուտ մարգարէիցն որ գան առ ձեզ մորթովք ոչխարաց, և 'ի ներքոյ են գայլք յափշտակողք. 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա այսինքն 'ի սուտ մարգարէութենէն, 'ի կեղծաւորութենէն, 'ի զօշաքաղութենէն և 'ի հայհոյութենէն. Որք մի որ 'ի ձեռն երևեցուցէ կամս մարմնաւորի զամենայն լուսոյն, քանզի ամէն է որ խօսին. մանաւանդ որք լուսաւորք հովիւք հովուապետի ձայնիւն, լուսաւորք և որդուշնորհաց հօտիդ, զի որ ոչ մնասցէ ընդ գունդն 'ի գաւիթ ոչխարաց, նա գող է և աւազակ, և զարձեալ որ ոչ է ընդ իս, հակառակ իմ է, և այլուր դուք ոչ էք յոչխարաց իմոց անտի. [illegible] ամենայն ուղէք արձանագրեցեալս զխորհրդականսն, զի մեք մի մոլորեսցուք. Մի՛ անմնացեալ մարդաւորութեանն, ո՜վ անձանձրելի խոնարհութիւն. զինչ ասասցուք արժանի յաղագս այսր ամենայնի, և կամ զինչ տացուք փոխարէն հովուապետին մերոյ. ո՜վ հարք և հովուապետք, քանզի նմա պարտիմք զշնորհս մեր գովեալ և յառաջադիմել, ոչ միայն աւետարանաւն, այլ և մարգարէիւքն և առաքելոցն աշակերտացն [illegible] բազումաւք, յաւետարանին խօսի որպէս և կամի. և վասն ինձ Պաւղոս առաքեալ, եթէ Ո՛վ փառք ինչ խնդրէք ըս-Քրիստոսի որ խօսի ընդ ձեզ խօսի. Եւ արդ այսոհետև 'ի մէջ բերեմ ձեզ զհնարաւորութեն զբանս, լսեցուք 'ի նոցանէ եթէ զինչ արդեօք պատուիրէն մեզ.

Ըստ այսմ և կրկնեալ Պետրոս, դարձ պատուական [illegible]

զգլուխ զոր ընծայեաց անդր մեր Սիմոնս Պետրոսս, առաւ մեզ յաղագս որոյ հանդերձեալ են պատմել զհաւատ Քրիստոսի, զոր աւանդեաց քեզ հաւատացեալն եւ անուշ անձանց մերոց եւ չարչարեաց հոգին սուրբ։ Իսկ Պետրոս. Սոյս զգուշացիք զի 'ի վախճան աւուրցս այսոցիկ եկեսցեն այպանողք բազ խորհրդոց ցանկութեանց երթալով, եւ եթէ 'ի ձեռն լինելոց են սուտ վարդապետաց որք մուծանեն հերձուածս կորստեան, եւ բազումք հետեւին պղծութեան նոցա, որոց դատաստանն ոչ դատարկանայ եւ կորուստն ոչ նիրհէ. մանկունք անիծից, թողեալ զուղիղ ճանապարհն մոլորեցան։ Սոյս Պետրոս բարբառի երանելին, Չքնաղին վէմն հաւատոյ, հաստատութիւն, յորոյ վերայ շինեաց Քրիստոս զեկեղեցի իւր. Պետրոս որ զփականս երկնից ընկալաւ, որ մեծաւ զօրութեամբ զՍիմոնին զայն յերկնից կործանեալ հերձեր, գլուխն եւ վերակացուն ամենայն հաւատացելոց 'ի Քրիստոս։ Իսկ զինչ եւ Յովհաննէս առաքեալ ասաց. Բազումք մոլորեցուցիչք ելեալ են յաշխարհ, մի ամենայն հոգւոյ հաւատայք. եւ դարձեալ, Ամենայն որ ոչ մնայ 'ի վարդապետութեանն Քրիստոսի, զԱծ ոչ ունի. Սոյնպէս Յովհաննէս որդին որոտման, որ քան զամենայն սուրբս սիրեցեալն էր, որ 'ի ծագաց մինչ 'ի ծագս աշխարհի հնչեաց զբարբառ աւետարանին, ընդ նմին եւ Յակոբոս առաքեալ ասէ. Որ կամիցի բարեկամ նոցա լինել, թշնամի անձին զԱծ իւր դնէ. եւ Յուդաս, 'Ի վախճան ժամանակի, ասէ, եկեսցեն այպանողք զհետ ցանկութեան խորհրդոց երթալով, անձինք անհոգիք, հողմակոծեալք, աստեղք մոլարք, որոց խաւարն պահի յաւիտեան. զայս եւ առաւել քան զայն Յուդաս պատուիրէ, Իսկ այսուհետեւ մի անօթընտրութեան, այս մեզ եւ զու յաղագս քոյ յաւիտենիս այսորիկ։ Պաւղոս ասէ. Գիտեմ ես զի յետ իմոյ երթալոյ եկեսցեն առ ձեզ գայլք ծանունք որ ոչ խնայեսցեն 'ի հօտդ. աւետարանս միաբանդամանցն առաքեալ եւ մարգարէ, աւետարանն ամենայն ուրեք զնոյն պատմելոյն բանս միաբանեալ ընդ վարդապետս, քանզի ասէ դարձեալ. Օձք լեզուք, զի ատուրքս չարութեան են, եւ թէ Մարգք եւ կախարդք յաղագս եկեղեցին 'ի չար ամպոյ, մոլորեալք եւ մոլորեցուցանօղն, եւ թէ որոց Ած դատաւորեսցէ

նոցա են, և փառք անոնց։ Այսպիսիկ Պաւղոս պատուիրէր, Պաւղոս երգարանն եկեղեցւոյ, Մեծաբարբառ նուագարանն, քարոզն Քրիստոսի, փողն մեծայն բանին, Ճարտասանն Ճշմարտութեան, որոտողն հեթանոսաց։ Արդ հաւանեցուցանեմք զձեզ այսօրիւք, եթէ ընդունելոյն վարդապետին. այլ թէպէտ և ոչ զամենեսեան, սակայն վասն փութացելոցն 'ի քարոզն ոչ կատարեցուցանել զբանս. քանզի և մարգարէքն սուրբք յառաջագոյն գուշակեցին յաղագս սորա վարդապետաց և առաքելոց հովուաց, վասն որոյ ասէ Դաւիթ. Ոչ գոյ 'ի բերան նոցա ճշմարտութիւն, և սիրտք իւրեանց նանրութեամբք լի. և թէ մեղաւորին ասէ Ած, ընդէր բնաւ պատմես զարդարութիւնս իմ, կամ առնուս զուխտ իմ 'ի բերան քո, և թէ ընդ գողս ընթանայիր և ընդ շնացողս դնէիր զբաժինս։

Արդ յաղագս ո՞յր արդեօք խօսի զայսպիսիկ մարգարէն, ո՞չ ապաքէն քո. ընդ հովիւս և վերակացուս, զի զվարդապետականն մեք իսկ խօսիմք, որք զաստիճան քահանայութեան ունիմք. և զիարդ ոչ լիցէ շուն յայտնապէս այն որ հանապազ խրատեալ մեզ շարժեաց զլեզու իւր և չխօսեցաւ ոչ բան մարգարէից, այլ բնաւ հոգւոյ. քանզի կենդանութեամբ խմել զաթոռ իմ յափշտակելեաց. բայց մեք յառաջիկայն երկիցուք։ Ասէ զայսոցանէն զարհեալ Դաւիթ. Խրատեցէք այսուհետև որք ընդարմացեալ էն արծաթով. և Սողոմոնի խրատ տայ և ասէ. Որդեակ, մի խրատեսցեն զքեզ արք անբարիշտք կցորդ լինել ընդ նոցին արեան արդարոյ. և Եսայիաս, մեծահանդէս թէ, Ած 'ի ձեռն Եսայեայ, զերկինս և զերկիր 'ի վկայութիւն դատաստանաւ ընդ Իսրայէլի, թէ Լուր երկինք և ունկն դիր երկիր, զի Տէր խօսեցաւ, և բնաւ կարգի մի ընդ մեկնեալ ասելով զբարկութիւն որոց նոցա ասէ 'ի հաստատութիւն քարկութեան. Մեծացայ զմեծ 'ի ցաւս և ամենայն սիրտ 'ի տրտմութիւն, յոտից մինչև 'ի գլուխ չիք 'ի նմա առողջութիւն, ոչ վէրք, և ոչ այտուցք և ոչ հարուածք խաղխայթեալք, ընդէր. քանզի վէր յաջորդ կայի, յարժամ այլ մարմնոյ առաջն լինիցի, և միով մասամբ յաղագս վիրին անհոգացոյ, խոկ եթէ ընդդիմին անդամանցն միրաւորիցի, չէին այսուհետև օգուտ լինել ոչ ձէթ և ոչ պատանումն, և ոչ սպեղանիս 'ի վերայ դնելոյ։

Այս որք լուսաւորք հոգիք և երկնաւորք, մի՛ լուք 'ի բանէն, այլ քաղցեցէք համբերութեանն, մի տայք տեղի սատանայի, նմանողք եղերուք մեծին Պետրոսի, զիարդ սաստեաց մեծաւ քաջութեամբ գաղջելոյն Սիմոնի, յորժամ աշխարհան ոչ խնդրէր արծաթով ստանալ. զոր նզովեալ հանդերձ կաշառօքն 'ի կորուստ մատնեաց: Ընկալարուք և զխրատ ածայնոյն Պօղոսի ըղգրեալն առ Տիմոթէոս. Զձեռս վաղվաղակի, ասէ, յումեք մի դնիցես, զի մի կցորդ լինիցիս մեղաց օտարաց: Լուսաւորք և զուարթնականն առաջելոյն, մի տայք ողորմութիւն շանց և մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, որ է բանին այ մաքրութիւն. զարձեալ, Նմանողք եղերուք քաջ հովուացն, առաքինեաց առիւծեան պատերազմողացն, և առաջին վերակացուացն եկեղեցւոյ, Թէոդէս և բազում ընտրութիւն սահմանեալ երանելի արանցն այնոցիկ և այսր ժամանակի անուանեալ հովուաց և վերակացուաց. նոքա քաջամարտիկ պատերազմողք, իսկ դոքա փախստականք 'ի հոգևոր պատերազմէն. նոքա ժուժկալք, իսկ դոքա փափկասունք. նոքա ածեղէն գրոց ընթերցմանն և գիտութե և կրօնից նախանձաւորք, և դոքա պճնողք հանդերձիւք և արծաթանօք, և յայնուհետև միայն ճեղեալք առաւելեալ քան զընկերս. նոքա զանձինս իւրեանց եդին 'ի վերայ ոչխարաց՝ նմանեալ քաջ հովուապետին և փրկչին, այլ դոքա իբրև վարձկանս թողեալ զոչխարսն փախչեն: Մեծ երանելի և ածային արանցն այնոցիկ որոց յիշատակն 'ի դպրութեան կենաց գրեալ է:

Որպէս երբեմն Դաւիթ յուշ առնելով զգթութին այ. Ո՞ւր են, ասէ, ողորմութիւնք քո առաջինք տէր, երդուացիր և ես նմանեալես ընդ Դաւթայ, և ասացից արտասուօք. Ո՞ւր են բազմութիւնք երանելի եպիսկոպոսացն առաջնոցն և վարդապետացն, որք ծաղկեցին իբրև զփայլակն յաշխարհի բանս կենդանականս ունելով յինքեանս յորոց մի է և մեր պատկառօր և վկայ, մանաւանդ թէ և առաջին քան զաւագունս որոյ առաջի կայ մեզ պատմութիւն տօնախմբութեանս. նոքա էին հովիւք ճշմարտութեան, իսկ դոքա գայլք սպականիչք. նոքա ջերմեռանդք 'ի գործ և 'ի բանս ածայինս, և դոքա ընկղմեալք յինչս և 'ի պատրուակս մարմնականս. քան-

Digitized by Google

զի յառաջագոյն արժանաւորս և հանդերձից խնամակալութեան, և [illegible] և Քրիստոսի և առաքելական եղանց և հօտից և խնամոց բազմամարդկաց և [illegible] զօրութեանց բազում [illegible] և խնամ 'ի մէջ այսպէս հաստատութեամբ [illegible]. իսկ վասն բանաւոր հօտից փրկութեան և քաջութեան նահատակաց, և ոչ մի ինչ բան կամ հաստատութիւն։ Մի՛ անմեղութեանն, այլ չար արժանաց արժանաւոր աւետութեանն, զհայրն կարապետն [illegible] ուսուցանել զեկեղեցի աստուածութիւնն Քրիստոսի, որ վասն մեր աղաղակագաւ, և աշակերտաց խորոց սրտարաց իւրեանց ոչ անել զմեզ 'ի գազանս. արդարև մեղաւորաց են զի ոչ խմանան զմեզ և ոչ զզօրութիւն տեսանելոյ բանից։ Մեզ լուսաւոր համբերք և մի զանձինս մեզ զանձս յերկրի. արժանի մեր բազմաց, և բանն նուաճեցաւ. զայն մեր աճեցին, և հաստատութիւնն լուսոյ. անմահական հոգւոյ բաղձացաւ, և բանաւոր մեր հօտքն [illegible], յառաջագոյն արոց հաստատ աղաղակ էք հովուապետութեան Քրիստոսի. ոչ անմեղութեանս [illegible] թէ [illegible] որ ընդ անմահ խորոց [illegible] աղաղակ է մեզ, իսկ զայս քահանայապետութեանս և քահանայս և առաքելութեան ընդ մեծաւ և ընդ ժողովրդեան որ հաւատացաւ մեզ 'ի սուրբ անուն. անտանէք մի [illegible] 'ի մեծն աստուածային սրտի. զայն լերուք անձանց և ամենայն հօտից, մի կորիցէ և մի որ [illegible] ձերոց, զի զարմանալի 'ի ձեռաց ձեր պահանջէ զաւազանն. արթուն լերուք ամենայն և քարոզեցէք զբանն կենաց, 'ի բաց ընկեցէք զամէն հոգս կենցաղականս, և պատրաստ եղերուք անբաժանելի զաւակաց, զի յորժամ գայցէ, [illegible] պահանջիցէ զհաւատացեալս ձեր առաջնորդ արժանի է։

Այս ամենայն [illegible] անձինք, [illegible], մի առաջնութեան [illegible] ժառանգ [illegible] թագաւորութեան. [illegible] մեր կայ [illegible] զերանելի հայր մեր [illegible] հաւատով կատարեալ [illegible], թէ [illegible] բազմամեղ [illegible] աստուածայնոյն [illegible] քաղցրութեանց, և կամ [illegible] 'ի կատարման [illegible] 'ի բաց [illegible] 'ի [illegible]ութենէն, [illegible] զի [illegible] ժառանգ [illegible] լուծ. [illegible] և [illegible] պատուիրեցայք [illegible] հովուութեան, [illegible] խոնարհութեանս որ ընդ ձեզ հօտ է մեզ, [illegible]

տեսչեսջիք, մի՛ ՚ի հարկէ այլ կամաւ, մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ, մի՛ իբրեւ տիրելով ժառանգութեանն, այլ լինել օրինակ հօտին. զի յերեւել Հովուապետին Քրիստոսի, ընդունիցիք զանթառամ փառաց պսակն. զայն և Պաւղոս դնէ առաջի, Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել որպէս Աստուծոյ տնտեսի, մի՛ յանդուգն, մի՛ բարկացող, մի՛ թշնամանող, մի՛ հարկանող, այլ հիւրասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ, վերակացու լինել հաւատարիմ բանին վարդապետութեան, զի կարող իցէ մխիթարել զհաւատացեալս, և զհակառակորդսն կշտամբել։ Տեսանես որպիսի վայելչութ յանձինս կալեալ ամենայնիւ առաքեալ՝ զգուշացուցանէ զեպիսկոպոսս բարեաց գործոց լինել նախանձաւորս, զի յետ օրինակին լինելոյ, կարող իցէ և զայլս ուսուցանել։ Պատրաստեալ ոչ միայն զբարեհամբաւս զգուշացուցանէ ամենայն օրինօք և ՚ի բարիս թեւակոխել միշտ, այլ և զամենայն հասարակ մարդկութեանս ըստ իւրաքանչիւր կարգի, զամենայն և զծերունս, զթագաւորս և զզաւտաւորս, զիշխանս և որք ընդ իշխանութեամբ, զմեծատունս և զաղքատս, զերիտասարդս և զկուսանս, զայրս և զկանայս, զծերս և զտղայս որք միաբանեալ ՚ի Քրիստոս միացեալ են և յանուն Քրիստոսի քրիստոնեայք անուանեալք, որոց պարտ է յիշել ամենայն հաւատացելոցդ Քրիստոսի զաւխտն ամենեցուն զոր առաջին բեմին Քրիստոսի հաստատեցէք, և բանիւ խոստովանեցէք զնա տէր և Աստուած, և հրաժարեցէք ՚ի սատանայէ և յամենայն գործոց նորա։ Տեսէք ո՞վ արդեօք ուխտեցէք զանձինս. ոչ հրեշտակի և ոչ երկրաւոր ումեք թագաւորի՝ այլ Թագաւորին թագաւորաց, և տեառն տերանց, նմա զաւանեցայք, զնա խոստովանեցէք առաջի բազմաց վկայից. որում և անհնարինք յայտ հետեւ զուղարկեսն նորա յերկնից, զի եկեսցէ բերցէ զձեռագիր ուխտադրութեան խոստովանութեան ձերոյ, և ընթերցի առաջի հրեշտակաց և մարդկան։ Նա ՚ի բաց կացէք այսուհետև ՚ի հեթանոսական գործոց, յուսացուք առաքելոյն որ ասէ. Զայս ասեմ և ուխտեմ ՚ի տէր, մի ևս ձեզ գնալ որպէս և այլ հեթանոսք գնան ունայնութեամբ մտաց իւրեանց խաւարեալք հոգւով. վասն որոյ, ասելով. որպէս ընկալարուք ՚ի ամենայն միտս Յիսուս Քրիստոս և ՚ի

Digitized by Google

որոց աշակերտաց նորա վարդապետութեամբ, 'ի նմին կարգ-ջեալք պտղութեանն։ Շնորհօք առաջնորդաց ձերոց հաստանօք լերուք, և 'ի արդեանն զգուշացարուք, զի առաւելքս չարութեան են, և փախստական հալածեալ զայլս մնասեն հօտապետաց, որք զկերպարանս ցուցանեն արտաքուստ հրեշտակի, և 'ի ներքոյ անգղի են սատանայի, բանս ձեռամբն բարեպաշտք և գործովք իւրեանց ուրացեալք։ Նոյն մի խաբեսցիք 'ի նոցանէն, այլ որպէս ընկալայք զանէր մեր Յիսուս Քրիստոս, 'ի նոյն պնդեսջիք մինչև 'ի վախճան, զի և ընդ նմին թագաւորեսջիք վայելեսջիք զյաւիտենականն կեանսն։

Այս արդ յաղագս այսորիկ աւարտեցուք աստանօր զբանս, և զերջանիկ հօրն մերոյ և նահատակին մեծին զներբողականս ճառից բաւական հարցուք վերստին։ Այն զի ծայրագոյն խոնարհութիւն նորա յորդորեաց զմեզ յաղագս ձգել երկարութիւն բանից, որպէս զի արդ է որք այժմ առաքինանի բաղձան, և ախորժեն բանաւոր հօտից վերակացու լինել, օրինակ առնուլ զերանելւոյն՝ մաքրել նախ և առաջին զանձինս յամենայն արարոց ըստ նմանութեան սորա, և ապա յանձնայցեն յայս մեծենալ սրբութիւն ըստ եկեղեցական հրամանին, եթէ Ճանաչեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, զի զգործս ձեր բարիս տեսեալ փառաւորեսցեն զՀայրն երկնաւոր։ Եւ և թէ մարմնական ինչ փորձութեանց հանդիպեսջիք, մի անժուժութեամբ վհատիցիք, այլ համբերեսջիք մեծաւ յուսով. տեսէք զմեծացեալ Հարան յառաջնոյ եթէ զինչ որ դառնութեանց և չարչարանաց ժուժկալեցին յաղագս հօտին Քրիստոսի, համբերութ բազմաւ 'ի վիշտս, 'ի չարչարանս, 'ի գանս, 'ի բանտս, 'ի խռովութիւնս, 'ի հալածանս, 'ի պահս, 'ի սէր սրբութեան, 'ի բանս Ճշմարտութեան, 'ի զօրութիւն Այ, փառօք և անարգութեամբ, գովութեամբ և պարսաւանօք, իբրև մոլորեցուցիչք և Ճշմարտասէրք կենդանիք, իբրև տրտմեալք և հանապազ ուրախք, իբրև աղքատիկք և զբազումս մեծացուցին։ Նա յամենայն զգեցաւ վասն նոցա յօրինակ մեզ զի և մեք զհետ շաւղաց նոցա երթիցուք։

Այլ և մարգարէքն սուրբք և նահատակեալքն զօրք աշխարհի փորձութեամբ, անցուցին զկեանս իւրեանց.

լուր խոհ Պաւղթայ յորժամ զգլխաւոր հայրոց 'ի Թիւ աո-կանէ զաւազանութիւն. Տէր իմ 'ի քեզ յուսացայ, փրկ-կեա զիս, և յիմոց հալածչացն ապրեցո զիս, և մինչև յե՞րբ ուեր մատանեաս զիս 'ի սպառ, և թէ Ես 'ի տան-ջանս պատուհասս եմ, և 'ի բաց արա յինէն զտանջանս, և թէ Եղխեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և ըղ-մախիք որպէս հաց կերայ, և պանդուխտ եմ ես և նըշ-դեհ որպէս և ամենայն հարք իմ: Տեսանե՞ս զի ոչ մի-այն զիւրն յայտ առնէ զնեղութիւս, այլ և զնախնեացն, և ոչ պարզաբար զմիոյ կամ զերկուց՝ այլ զամենեցուն. որպէս ամենայն հարքն իմ, ասէ, ցուցանելով և յայտ առնելով եթէ ոչ ոք 'ի նոցանէ յաշխարհիս յայսմիկ հանգստեան պատահեցաւ: Եթէ խոյսք եթէ աքսորք 'ի բազմամեծս նահատակս, յերանելին ասեմ Յովբ, և լուխացուք չափաւորապէս առ 'ի նմանէ զիւրոցն պատ-մելով զչարչարանս, որպէս զի կարասցուք թերևս առ նորայն նախանձու և զմերս թեթև նեղութիւն համ-բերութեամբ տանել: Ո՞չ ապաքէն իբրև զփորձութիւն են, ասէ, կեանք մարդոյ 'ի վերայ երկրի և կամ իբրև զաւօրեայ վարձու վարձկանի կեանք նորա. և դարձեալ Գիշերք ցաւագինք տուեալ են ինձ, եթէ ցաւօք լինիմ յե-րեկօրեայ մինչև յառաւօտ, և արգասք ծաղր լինին, զի մտանեն 'ի ձեռս անպարշտաց. խոկ առ իմ ասէ. Զար-հուրեցուցանես զիս տեսլեամբ գիշերոյ, մատնեցեր զիս 'ի ձեռս անօրինի, եդիր զիս բամբասանս ազգաց, պա-շարեալ եմ յամենեցունց: Տեսանե՞ս ցաւագին պատ-մութիւն, տեսանե՞ս բանաւորական վիշտք: Նման սմին և Երեմիաս բարբառի. Ո՜հ մայր իմ, ընդէ՞ր ծնար զիս. այր դատեալ և դատապարտեալ, տեսանել զթշուառու-թիւս մարդկան: Նոյնպէս և ամենայն արդարայն դասքն 'ի ցաւս և 'ի չարչարանս անցուցին զկեանս իւրեանց: Վասն որոյ աղաչեմ և փոխան ասեմ, մի հանապազ զանձուկն և զընդարձակն խնդրէք Ճանապարհի հե-տեւումն. քանզի և զինուոր որ պատաղիցի 'ի կեանս աշ-խարհիս և ոչ ըստ օրինաց զօրավարին մարտիցէ, ոչ պսակեսցի առ 'ի նմանէ. Նմանապէս և դուք, մի վասն և վեհերոտք յասպարիզի նահատակութեանն գտանի-ցիք, այլ նմանեալք երանելի արանցն, համբերեցէք հա-մենայն նեղութեանց որ վասն բարեպաշտութեանն. զի

ունք իսկ զի նեղութիւնք զհամբերութիւն գործեն, ըստ Պաւղոսի, համբերութիւն զհանդէս, հանդէսն զյոյս քաջերաց, յոյսն ոչ երբեք յամօթ առնէ զհաստատեալսն նովաւ։ Այլ արդ մի՛ 'ի նեղութիւնս միայն հայեսջիք, այլ և 'ի պսակն, մի յաշխատն եւեթ, այլ 'ի վարձատրին հատուցմունսն, մի 'ի տանջանսն, այլ յաջողութեանն խոստմանս. քանզի և այս մեծագոյն իմն երևի յաւելուածս, յաղագս հանդերձեալ բարեացն անտես առնել զներկայիս չարչարանս։

Նոյն այժմ բազմական վարկանեմք որ յաղագս սրբոցին ասացեալքս. բեր սրբոյ հետևն յառաջիկայն երթիցուք, մտանելով 'ի բանն ասացի երթանք։ Անտի երանելի հայրն մեր և մեծ խոստովանողն Գրիգորիոս յետ սքանչաւորագոյն յաղթութեանն որ 'ի վերուստ, հաւանեալ լինէր անբռնաւորական հրամանին, երթայր սրբոհետև ընդունել զձեռնադրութիւն քահանայապետութեանն, որ և անդանօր նշան մեծագոյն, երևէ ի վերայ Գրիգորիոսի՝ ցուցանէր Տէր, որպէս զի հոգին սուրբ աղաւնակերպ աներևութ յայտնէր 'ի վերայ նորա հանգչելով. և այնքան մեծավայելչութեան պատուով զանազան սքանչելի քահանայապետն էր յայցելութիւն նորամուտ ժողովրդեան իւրոյ. ընդ առաջ ընթանայր այնուհետև 'ի պատիւ նոսա մեծ արքայն Տրդատիոս հանդերձ ամենայն զօրօքն, և պատահեալ միաբանեալ առ գետովն Եփրատայ էր առնէր զամենեսեան խնդութեամբ բազմաւ. քանզի մկրտէր զնոսա յանուն սուրբ երրորդութեանն, յորում և լոյս անձեռնակերտ ծագէր 'ի յերկնից 'ի հրաշ զարմանալեաց տեսողացն, և յայնմ հետէ պատրաստէր տեսան ժողովուրդ մեծահասակս. շինէր և տաճարս էր քաղաքամարտիկս և հրաշալիս յաշխարհին հայաստանեայց. կացուցանէր եպիսկոպոսունս, երիցունս, և սարկաւագունս, զասս կղերիկոսաց և վանականաց, ուսուցանէր զնոսա զեղեցիկ և սաստ վարդապետութեամբ 'ի զօրութեանց ամենայնց տառից, ամրացուցանէր 'ի հաւատս, հաստատէր 'ի վերայ հիման առաքելական ուղղութեանցն. և այնքան՝ զի մինչև ցայժմ իսկ որ ըստ որէ 'ի լուսաւորեալն յառաջնական ընթացեալ նորայն ժողովուրդ և միջնակ։

Իսկ երանելիս յետ սուրբ ընդ ժամանակին հրամայէր

'ի վերակացութենէ անտի, զզանկանալն իւր երթեալ հանճարեղեր լնութիւն. քանզի յոյժ սիրելի էր նմա ընդ մեծին Նշիրայի և ընդ Մկրտչին Յովհաննու բնակելոյ յանապատի, վասն որոյ և ախորժէր իւր թագուցանել զանձն 'ի մտադրական առանձնութենէ, զի մաքրագոյնս ան-զանօք և անմխիթարար անմխիթարականին հանդերձելոյ առաքինութեանն էր:

Այսպիսի են որպիսանիք հոգին միոյ ուղղութիւնք, և այս նորայն քաջութեանն պատմութիւնք: Այսպիսի լաւագոյն առաքինութեանց քաղաքավարելոյ յայտնութ-հի, ոչ 'ի հեշտութիւնս ինչ կենցաղականս, այլ 'ի գանս և 'ի տանջանս, 'ի քաղց և 'ի ծարաւ, 'ի ցուրտ և 'ի մերկութիւն, 'ի բանդս և 'ի կապանս, 'ի լերինս և յա-նապատի, սիրեաց զԱծ և սիրեցաւ առ 'ի նմանէ, փա-ռաւորեաց և փառաւորեցաւ, Օ փառաւորիչս իմ, ասէ, փառաւոր արարից: Կորիզ որինս եղբայրութեանն քա-րոզն, ուղղափառութեանն հաստատիչն, ՝Քրիստոսի հօտին վերադիտողն, խնամատութեան հոգւոյն տամձարն, երկնային կառավարն, օդախաղաց թռչունն, տիեզե-րաց անշիջանելի լոյսն, պայծառագոյն արուսեակն, մե-ղուելոց տաճարողն, ընտրութեան անօթն, սրբութեան տաղաւարն, ա՟ծական նուէրն, հոգւոյն սրբոյ ընդու-նողն, միաստուածական եղբայրութեանն բնակարանն, ա-ռաքինութեանն օրինակն, պատուիրանաց ա՟յ գործա-րանն, հայրապետաց գեղեցկութիւնն, միայնաւորաց պայծառութիւնն, սրբութեան ուղղորդիչն, հաւատոյ հաստատութիւնն, եկեղեցւոյ ամրութիւնն: Կորիզա-բնոս քրիստոնէական օրինացն վարդապետն, աւանդու-թեանց նորին ուսուցիչն, դիւաց հալածիչն, նեղութեանց օգնականն, համբերութեան յաղթանակն, խոնարհու-թեան զարդարանն, Հզաւորաց նկարագիրն, անպար-տական տաճարանն, լուսափայլ արեգակնն, աստուածահաճ միաբանն, անմխիթարելի ակնն, ապաշխարութեան ուսուցիչն, զարմացելոց միջնորդն, մոլորելոց առաջնորդն, հիւանդաց բժիշկն, աղքատաց սատարիչն, որբական հայրն, անքուն պահապանն, համբերութեան առիթն, անձնանկելոց սնուցանողն, սատարչաց արհամարհողն, երկնաթռիչ ար-ծուին, հրեշտակաց պարտակիցն, առաքելոցն հաղորդա-կիցն, մարտիրոսաց չարչարակիցն, արքայութեանն ժառա-

կոչեն, ո՛չ հօր ժառանգաւորն, Քրիստոսի ժառանգա-կիցն որ աւանդէ երկրպագութեանն ընդ հրեշտակս բարեխօսէ միշտ վասն ամենայն աշխարհի։

Արդ դու ծով աստուածայինն և պատուական գլուխ որ զամենեցուն գլուխն զՔրիստոս յանձինս բերելով լուսերեցար տիեզերաց, ո՛վ աստուածազգեաց և երջանիկ հայր, որ գեղեցկապէս քաղաքավարելով ՚ի յերկրի զընթացն կատարեցեր, զհաւատոն պահեցեր, պսակագիր կենին ժառանգեալ հասեր, և աստուածագործական մտացդ մաքրութեամբ որքան կարելի է մարդկան՝ աստուածատես եղեալ վերնականաց յանհասանելեաց բարձրութիւն. դու զչարչարանացն բառնալով ՚ի վերայ ուսոց զխաչ, միաբանաբար զհետ Քրիստոսի ընթացար, որով զանկապտելին զանձեցեր զգանձ պահեալ քեզ ՚ի յերկինս։ Դու ըզկենցաղականս ամենայն փախուցեր, և զանցաւորսն փոխանակ ստացար մարգարիտ զՔրիստոս։ Դու ոչ ՚ի վերայ աւազոյ հեզգաբար շինեցեր զտունն, այլ ՚ի վերայ անքակտելի վիմին որ ՚ի Քրիստոս հաւատոյն հաստատեցեր զհիմն, ուստի և ՚ի շնչմանէ օդային այսոց զառնարեր հողմոց և յարուցեալ կասպաշտութեանց ուղխից մնացեր անսասանելի։ Դու զծանրութիւն տանջեան բովոր կենցաղոյս, և զտապ բոցակէզ միջօրեայ բարձեր ամենայնիւ, որով զվարձուցն ընկալար ՚ի տեառնէ վաշխիւ զփոխարէնսն։ Դու զտուեալն քեզ քանքարն առաջնորդ առ յԱյ, առատապէս բաշխելով բազմացուցեր, որով զերանաւէտն լուար ձայն. Օրհնեալ ծառայ և հաւատարիմ, մուտ յուրախութիւն տեառն քո։ Դու զպարտեզ հոգւոյդ ողորմածութեանն իւղովն անշիջանելի պահեցեր, պատրաստ գտանելով մտանել ընդ Քրիստոսի յերկնային առագաստ։ Դու ընդ նոյն և անձամբ ձանձրապարհորդելով շաւիղ առաքելութեանն, փայլելով այժմ ՚ի վերին գերաշխարհիկ կայանս։ Դու զկեանս քո խոհեմութեամբ մահու վարելով, զախտս մարմնականս յաղթանակաւ աստուածսիրութեամբ հոգւոյդ հնազանդեցուցեր. դու յանմատոյց դղեակ անխախտութեանն հասանելով՝ գերակատար առաքինութեամբ հաւատոյ սիրոյ և յուսոյ բարձրացար յանմատչելին կատարելով ըստ Եղիայի յերկինս ամենայնիւ յանձ մտուցեալ աստուածատեսակ մաքրութեամբ։ Այլ զի հանդիսաւորացս սա-

Digitized by Google

ցից, դու և զյաւիտենական արքայն ամենեցունց զառաքինութիւնս հաւաքելով խնկաստասիրաբար ըստ օրինակի մեղուաց զպազմատեսակ վարս ընտրելով զիւրաքանչիւրոցն 'ի քոյդ բերես նմանութիւն, զորոց բերեցուք առաջի մի ըստ միոջէ զանուանս ընտրելոյն յիշատակաւ:

Աբէլ արդար, անարատ պատարագաւն գովեցաւ. իսկ դու 'ի բազմերջանիկ հայր ընծայ բանաւոր բոլորովին զանձն քո մատուցեր նմա հանապազօր մաղթանօք առ նոյն հզելով: Ենովս անուանելի յուսով յուսացաւ 'ի տէր, իսկ դու զառաջիկայ յուսոյն օրինակ արդէն ցուցանես տակաւին: Ենովք հաճոյ եղեալ նմա փոխադրեցաւ յաստուածայնոցս, իսկ դու զհոգւոյդ առաւթիւն բոլորովին յերկրէ յերկինս փոխադրեցեր: Նոյ արդար գոլով և 'ի վերայ պատարագացն հաճոյ գտեալ, փայտեղէն տապանաւն զկենդանեացն ազգ ապրեցուցանէր 'ի ջրհեղեղին կործանմանէն, բայց դու նոր իմն տապան հաստատեցեր զեկեղեցի Քրիստոսի, և 'ի ջրհեղեղէ կռապաշտութեան զազգմութիւն մարդկան ապրեցուցեր: Աբրահամ ծնօղութեամբն և հիւրասիրութեամբն գովելի եղեալ, միանգամայն և պատարագ ընդունելի առանց զենման զորդին որ յաւետեացն էր՝ մատուցանէր նմա, բայց դու ոչ միանգամ այլ հանապազօր զՔրիստոս ընկալար հիւրասիրութեամբ 'ի դըրն տառապելոց, և զենեալ ոչ օչխար փոխանակ Իսահակայ մատուցեալ, այլ զքեզ ինքնին բոլորապտուղ ողջակէզ բանաւոր ընծայելով կենդանւոյն նմա: Իսահակ արդարութեամբն և օրինակ լինելովն փառաւորի. իսկ դու իբր քանոն արդարութեան զամենայն տեսակս առաքինութեան և զօրինակ բարեաց 'ի քեզ բերելով մաքրապէս: Յակոբ պարզմտութեամբ հոգւոյն և բազմորդութեամբն գովելի եղև, որով և զսանդուղքն տեսանէր յերկրէ յերկինս հասանելով, մեծագոյն իմն խորհրդոյ օրինակ մեզ ցուցեալ, բայց դու ծնար հոգիս և հովուապետս և հօտս բազումս հօտապետին Քրիստոսի. և ես 'ի մէջ դնելով քո, իբր աստիճանաց ելիւք ըստ իմանալի սանդղոց փառաց 'ի փառս փոխելով յերկրէ յերկինս վերափոխեցար. վասն որոյ ոչ նշանաւոր խաչիւն, այլ նշանաւ հոգւոյն շնորհաց բա-

Digitized by Google

զամ ողջոյն լուսոյ ածեր 'ի փառս ։ Յայնժամ յաղագս ա-
նարատութեան և հանճարատար ժուժկալութեան
երևելագոյն եղև, քայց ոչ նուաղագոյն քան զնորայն
երևեցաւ և քոյին չարչարանացն նահատակութիւն. զի
ոչ արտաքոյ քաղաքին յաղթէիր, այլ 'ի քաղաքամիջին խա-
խարատին զժողովրդեան անապատի, և փոխանակ ա-
զանցն զանձնատուական Թանուարացն խեղցն և քար-
բից համբերելով ։ Յովսէփ ողջախոհութիւն և անխա-
կալութիւն հաշակեցաւ. իսկ դու օրինակ պարկեշտութե
յամենայն երևեցար, և յիմանալին եղբայրութեան հոգւոյն 'ի բնու-
թենական ախտից զերծս մնացեալ, զարատաւոր ձեռն մեղացն
մերկացեալ, փախուցեալ յամօթոյ, որ և անպիղծ պարկեշտութե
զեղծապարագաս բանաւորն 'ի սմին մտածութիւն քանին ա-
ռատավերջ կերակրեցեր զխնութեան ճշմարտութեան
հոգևորականն հացին իմերոյ յերկնից ։ Մովսէս հեզու-
թեամբն և օրինադրութեամբ նկարագրեցաւ կոչել
նոր Փարաւոնին և առաջնորդ ժողովրդեանն Իսրայէ-
լի, սակայն և դու մի ընդդէմ հայր, հեզ առ ամենե-
ցեան, մանաւանդ առ քանաւորագունիցն երևեցար առ
ջանս, և 'ի մէջ նահատակութեան մնացեալ զենդ-
զինի օրինաց ընկալար զաւախտանս, յորում զհոգե-
բարեան պատուիրանն ոչ Իսրայէլի միայն, այլ ամենայն
տիեզերաց առանձնեցեր և զմեհեանս զիւրանձայ պատուե-
րացն իւրև զկուռս Փարաւոնի 'ի խորս քոյին քաղա-
թեամբքդ ընկղմեցեր ։ Սամուել նախ քան զյղանալն
յարգանդին՝ սոյ նուիրեցաւ, որ և շնորհս ընկալեալ մար-
գարէութեան զուշակէր զհանդերձեալսն. իսկ դու և
յառաջ քան զյղանալն ընծայեցար 'ի հոգւոյն նախա-
զուշակութեանց նորա, և անձնաւորեալ ստեղծեալ մար-
գարէական աչօք տեսեր զապագայիցն լինելութիւն ։
Դաւիթն Գաւիթ զամենապատանուանն Գողիաթ զինու հա-
գեղն պատերազմեալ պարսաքարիւն կործանէր. իսկ
դու զիմանալին Գողիաթ, այս ինքն զսատանայութիւն և
զդժխեմութիւնս աշխարհականին խաւարին, զօրութե
խաղքն Տրդատայ ընկճեալ յերկիր կործանեցեր, և
զամենայն զաւակն սպանեալ 'ի քերանց ստորաւ
զերկեցեր զամենայն մեղս 'ի հնազանդութիւն Տրդա-
տայ. Եղիա զօրէկի եղև նախանձաւն էր, զի զամօթոյ
մարգարէսն հանճարձակագոյնս ստանեալ կործանէր.

իսկ դու զանձնաւոր արքային, զապաստանն ամենայից ախտից՝ 'ի կերպարանս փոխարկեցեր զաղքատական անձանոյ, ոչ 'ի սատանայական մատնելով. այլ 'ի կեանս վերստին առաջնորդեցեր։ Յովհաննէս մեծ 'ի ծննդեան կանանց բարեբանեցաւ յարարչէն, ձայն բարբառոյ յանապատի, կարապետ և մկրտիչ Քրիստոսի, և դու ոչ նուազագոյն քան զնա երևեցար, որպէս թուի ինձ. քանզի 'ի դասս հայրապետաց նախամեծարեցար, ընդ վկայսն նահատակեցար, յառաքելոց մարտին ընթացար, յանապատի ճգնեցար, 'ի ձայն բարբառոյ ընդ նմին գոչեցեր, բանին նոյն կարապետեցեր, անթիւ բազմութիւնս որ հօտից Քրիստոսի մկրտեցեր, լոյս պայծառագոյն յետ արեգականն արդարութեան ծագեցար։ Նոյնպէս 'ի ձեռն գործոց առաքինութեան զամենայն արդարոցն տակաւին և ըզմարգարէիցն 'ի քեզ բերես զօրինակ. զամենից զնախանձն, զԵղիսայ զհամեստութիւնն, զամենից զնեղութիւնն, զայլոյն զձեռացն զբարձրութիւնն. և ոչ սոցա միայն, այլ և Քրիստոսի աշակերտացն, զորս շնորհք հոգւոյն 'ի աւետարանական օրինացն որոշեալ, զպաշտօն ճշմարտութեան հաստատագոյն մեզ զխորհուրդն եցցուցանէր։ Պետրոս և Պօղոս երկոքեան զօրով համաշունչք ըստ հոգւոյ, ամենք Քրիստոսի, ընտրեալք և առաքելոցն առաջինք, որք զհամաշխարհիւ տիեզերս ընկալան միջնակետաւք և գերահռչակ քաղաքին հաւանեցուց քարոզէին զաւետարանն տեառն, որք և զանօթն սատանայի զկախարդն Սիմոն 'ի բարձրացեալն հպարտութենէ նշանաւն Քրիստոսի յերկիր կործանեալ հերձուցին։ Իսկ դու, ով աստուածարեալ հայր, ոչ 'ի միում մասին կամ յանկեան ուրեք, այլ յարևելից մինչև յարևմուտս, 'ի ծագաց երկրէ մինչև 'ի ծագս նորին լցեր զաւետարանն Քրիստոսի. որ 'ի նոյն իսկ մայրաքաղաքն ընթացեալ Հռոմայ՝ միաբանելով ընդ առաքելաշնորհ հայրապետին և մեծաւէր արքային, ընկալեալք առաքելական սիրով զմիմեանս, ամ արևմտից աշխարհի ծագեալ լոյս ճշմարիտ աստուածգիտութեան, և միւսն ուստի ծագէ արեգականն լուսաւորիչ նմանապէս. որ և երկաքանչիւրոցն բարբառ ծաւալեալ լցին զտիեզերս հանդերձն։ Ընդ մարգարէսն մարգարէացար հոգւովն, ընդ առաքեալսն քարոզեցեր զՔրիստոս, ընդ աւետարանիչսն

աւետարանեցեր զողջին ծէ, ընդ հայրապետան փառքապետանեցեր զբանն կենաց, ընդ անապատաւորական ճգնեցար, ընդ մարտիրոսան նահատակեցար, ընդ հովիւս հովուեցեր զհօտ քո բանաւոր, 'ի բանաւորեւ Թշնամւոյն փորձեցար, ընդ Քրիստոսի յաղթեցեր։ Ո ինչ այսուհետեւ կոչեցից զքեզ. երկրագործ, արդարեւ ճշմարիտ, քանզի զբանաւոր երկիր արեւելեան աշխարհի կակղեցեր յերկրագործութիւն. յորմէ զփուշ անհաւատութեան արմատաքի խլեալ, զբանն բարեպաշտութեան սերմանեցեր փոխանակ, եւ զնորատունկ հոգեւորական այգին յատանելով, բազմապատուղ զնոյն գործեցեր, յորոց արմտիս երկրագործութեան ամփոփեցեր իբրեւ հոգեւորապէս շտեմարանի։ Ճարտարապե՞տ արդեօք կոչեսցուք զքեզ, եւ յիրաւի ուրեմն. քանզի զմեհեանս դիւաձոյլ պատկերացն քայլով արխաբար քաջութեամբդ տապալեալ յերկիր կործանեցեր, եւ փոխանակ սատանայական բնակութեանց, տաճարս գեղեցիկս եւ հրաշալիս յանուն Քրիստոսի ընդ ամենայն աշխարհս հաստատեցեր. նա իբրեւ իմաստուն ճարտարապետ զնորակերտ եկեղեցիս հաւատացելոց 'ի վերայ հիման առաքելական վիմին իմաստութեամբ հոգւոյն վերականգնեցեր։ Այլ զինչ եւս անուանեսցուք զքեզ. զինուո՞ր այր, քանզի որպէս քաջ զօրական սպառազինեալ հակառակ անհերեւոյթ Թշնամւոյն, մարտեար ընդ օրինաց եւ յաղթեցեր բազմատեսակ վիրօք մարմնոյդ, եւ վահանաւ փրկութեան զգլուխն հաւատոյ ամրացուցեալ ամբողջ պահեցեր իբրեւ զվէմ անդրդուելի եւ անշարժ, 'ի բերմանց բազմապատիկ ալեացն պատերազմաց, եւ յառաջ ընդդիմահարեալ զհակառակամարտսն քաջապէս պատերազմին ընկճեալ դարձուցեր անոթայս, հալածելով 'ի փառաւոր նահատակութեան քո աշխարհաց։ Հրեշտակ ուրեմն կոչեսցուք զքեզ. քանզի ոչ եւ 'ի հրեշտակաց անկարօտ բնութենէն գոլով քո հեռի, անմարմնապէս արդէն 'ի մարմնի կենցաղավարելով եւ իբրեւ երկնայնոյ անձն մարդ եւ յերեւելեացս գերաշխարհիկ հրեշտակական մարուց ցուցանիր օրինակ։ Ո ի զինչ առաւելագոյն գործիւք երգեսցուք 'ի ձեան հրեշտակին յառաջագոյն յափշտակեալ զՄիւռոնակում 'ի Սիոնէ եւ հաստուցանել 'ի Նաւասարդէ եւ 'ի գրի տարածմունս Պատմիչ

զձեռըն մատուցանելով, քանզի դու ես հրաշափառագոյն որպէս Թուի ինձ հաւատացեալս 'ի ձեռն հրեշտակի կերակրեիր 'ի բանդին: Աւուրցն արդեօք առաձյնեսցուք զքեզ, եւ յիրաւի ուրեմն. քանզի զորս ընդ մեծ եւ արձակ աշխարհիս այսորիկ դիւական անհաւատութեան ծովն նաւակոծեալ ծփէին, քոյով որբազանաբար առ ած հայցուածովք զամբոխութիւն մոլորութեան մրրկին 'ի հանդարտագոյն դարձուցանելով սիք, մեծաւ զգուշութեամբ զալեկոծեալսն ուղղելով նաւս, 'ի Քրիստոսի խաղաղութեանն հասուցեր նաւահանգիստ.

Արդ ով հայր սուրբ եւ առաջնորդ փրկութեան ամենայն հաւատացելոց, որոց ոչ պակասեցեր 'ի քոյոց սիրելեաց փոխադրելով յաշխարհէ, այլ զի Թէպէտ եւ զհասարակաց պարտն հատուցեր զմնութեանս օրինաց, սակայն յիշատակք քաջութեան քո մնայ առ մեզ յաւիտեան. նոյնպէս եւ յայսմ հետէ աղաչեմ ոչ եւս մեկուսանալ հոգեւորական այցելութեամբ առ 'ի մէնջ, այլ յիշել զմեզ անմոռաց խնդրելով 'ի հասարակաց յուսոյ փրկութեան մերոյ, զի եւ մեք զպատահումն սակաւագոյն վշտացս համբերութեամբ կատարեսցուք. քանզի ըստ առաքելոյ, որ զփորձ առեալ է՝ կարող է փորձանաւորաց օգնական լինել: Այլ զդուզնաքեայս ներբողական բանս առ 'ի մէնջ ընկալցիս բարերարաբար. զի Թէպէտ եւ անհանգէտ գոլով քումդ արժանաւորութեան՝ սակայն ջերմագոյն հաւատով եւ կատարեալ մատուցաք սիրով, եւ քոյին վշտամբեր նեղութեանցս յիշատակաւ 'ի մերումս մխիթարեալ սփոփեցաք. Ահա դու իբրեւ նմանող Քրիստոսի ընկալցիս որպէս եւ նայն զայրւոյն [illegible], զի եւ ես նմանապէս նմին նուազեալ 'ի զօրութենէ անզգամաց, սակայն գոլով մարմնով եւ վշտագին անձկութեամբ, մանաւանդ բանսարկուեալ սիրով 'ի քո հանդիպելոց 'ի բում վիճակիս, նշանակ սիրոյ հատուցի քեզ ընծայ ջերմագոյն սրտիւ. զի անհաւասարիկ նուիրեալ եմ եւ ես յայսմ հետէ լքանել զկենաս զայս սատանայական եւ լինել ընդ Քրիստոսի. Թէպէտ անդանօր հանդիպեսցուք միմեանց զուարճական եւ գեղեցկագոյն հանդիպմամբ, բնակելով 'ի միասին [illegible], եւ արժանաւոր լինել երանութեան խրախճանացն. որոց փոյթ ամենեցուն հասանել 'ի Քրիստոս Յիսուս 'ի

Digitized by Google

ակէր մէր, որում փառք և զօրութիւն հանդերձ Հարբ և ամենասուրբ Հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի Թուականիս ՌՂ Թարգմանեցաւ ճառս ՚ի յունականէն ՚ի մերս, ՚ի ձեռն Աղթամարցւոյ գաւառականիս ՚ի Հին և յԱրծ արբեանցս. իսկ յաւ-մարեցաւ ըստ բանից զօրութեան և բանից՝ յԱնձ նուաստութեան Ներսէսի, հրամանաւ տեառն իմոյ և հօրաքեռն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի։ Արդ որք ընթեռնուք կամ ընդօրինակէք յիշեսջիք զմեղուցեալ գրիչս աշխատաւորիս ՚ի սէր ըստ խորհրդակցիս տեառն ՚ի Քրիստոս Յիսուս. և զանձինս ձեր յիշատակի բանի գրեսջիք յիշա-տակին ողորմութեան. զի և զձեզ գրեսցէ ՚ի կենդանի մատե-անսն Քրիստոսի անջնջելի յիշատակաւ։

## Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ

### ՃԱՌ Բ.

Սրբատուածադաշտոց առանց զարմանալութիւն բա-ղում և զանազան է. որպէս և զանազանեսն յաղթանակա-ւորն զարմանաբանութեանս վկայելութիւն ծաղկանց, զանա-զանաձեւ պատգամութեամբ ամբոխ ազգի զաւնակ զոր ոչ բաւէ ոտանիլ աշխարհ ժողովել ՚ի շտեմարանս մտաց, վասն զի նոր ամբառնէ և ըստ զանին պատուեն ՚ի պարզեւել բազ-մաց։ Սկսանի և մտեալ ՚ի բաւբաւանս առաքինութեան քաջ նահատակին և մարտիրոսին, և արեգակնափայլ լուսաւորիչ քաջահանդիսականին մեծաց Հայոց. և ձգեալ ՚ի մերոյ ծաղկանցն վկայութեան նորա զաւշ մտաց իմոց, ոչ գիտեմ թէ զիա՞րդ կարողանամ բա-վանդակել առ խնդրաւէլ պատմութեամբ. քանզի ցանկամ զամենայն ժողովել, երկնչիմ զուցէ ՚ի բազ-մացն վրիպեցայց. այլ բարւոք վարկանիմ նմանել խնձ-մեղուին՝ փթթումն այն և անօսրութեան թաշնոյն. նա և որ-պէս զարդ նորա պարունակելի է, նոյնպէս և առաքինութիւն սրբոյն Գրիգորի. և որպէս ոչ ոք կարէ պատմել և կամ գիտել զզարմն այն պարունակի, այնպէս և զորս ասա զայս։

Որք որպէս մեղուն որ թեւեալ և յօժարի զամենայն ծաղիկն ամփոփել յինքն, սակայն ոչ ժուժկալէ, վասն զի տկար է զօրութեամբ և վասն այնորիկ ընտրէ զորս 'ի մէջն պայծառ և անոյշ և շահաւորանէ ընդ թևօք և գործէ նոքօք զխորխիխ մեղու, նոյնպէս և ես զորս բաւականանամ ընդունել և զայն շահաւորանեցից 'ի միտս և պատմեցից լեզուաւս առ 'ի քաղցրացուցանելոյ զքիմս ընծայելոցն որք փափագին լսել զգովասանութիւն սրբոյն Գրիգորի։

Որք զինչ կոչեցից զքահանայապետս զայս, եթէ ոչ արեգակն յարևելից ծագեալ, որոյ եհաս նշոյլք ճառագայթիցն մինչև 'ի ստորինս հարաւոց աշխարհին։ Մի՛ զարմանայցէք, տեսեալ կամելով ուրոյք բուրաստան, նախ հաստատին փուշք և խիլն արմատք միատակարք, և հազիւ խնի արմատանայ բուրաստանն. այլ այս բուրաստան մեծի նահապետին և քահանայից և վկայից 'ի մէջ փշոց բուսեալ և երկնաչափ բարձրացեալ՝ հրեշտակահաւասարութ ծաղկավայելչութ գունովք և զփուշ ստասակ և զայլ արմատս մնատակարս խառոց ոչ 'ի բաց հատեալ ընկեցեալ, այլ փոխակերպեալ 'ի ծաղիկս անուշահոտս ծառս պտղաբերս, զգժնիկն խնծորաբեր արար անուշահամ և զստատակն վարդաբեր և մանուշակաբեր անուշահոտս և վայելչացեալս, զերանելիսն ասեմ զՀռիփսիմէ և զԳայիանէ առեալ արմատս բազմատեսակս և սփռեալ ելից զաշխարհս Հայոց մեծաց, յորում ոչ մնաց խորշ ինչ 'ի հովանաւորութենէ ստացողացս։ Մի՛ զարմանայցէք, այլ մարմնաւոր նմանեալ դասուց անմարմնոցն, այլ և գերազանցեալ ևս, եթէ ոչ յանդգնութեամբ է ասել՝ քան զանմարմինսն, քանզի նոքա ոչ գոն վիշտք մարմնոյ և ոչ ցաւք անդամոց. իսկ սա յինքեան ընկալեալ զցաւս և զվիշտս և համբերեալ իբրև զայնս որ ոչ ունին զզգացումն մարմնոյ։ Նաև զայս և այլ ևս է սորա առաքինութիւնս. հաւասար ասեմ զսա Պետրոսի և Պաւղոսի, զի որպէս նոքա մեծամեծ առաքինութեամբ զաշխարհս արևմտից զարդարեցին 'ի կատարելութենէ 'ի ճանապարհս ա̃ծգիտութեան, այնպէս և երանելիս այս զկողմանս արևելից քարոզելով և ուսուցանելով, եթէ որպէս է պաշտել զՀայր և զորդի և զհոգին սուրբ. քանզի անմեկնելի 'ի հօրէ ասելով

մարմին 'ի կուսէն, կատարեալ ած՝ եղև մարդ կատարեալ, անայլայլ ծննդեանն առեալ անապական մարմին. անձեռն բանն ած առեալ անմահ մարմնով շրջեցաւ ընդ մարդկան, և որ ելից զօրէնսն թլփատութեան նոր և հինն, և քակեաց մկրտութեամբ, մատնեցաւ վասն մեր որ անմեղինքն էր 'ի ծոցոյ հօր, բարձրացաւ 'ի վերայ խաչին բանն, և մեռաւ մարդկային բնութեամբն և եկաց մնաց անմահ միացելովն 'ի նմա աստուածութեամբն. քանզի երկու բնութեամբն միացաւ 'ի մի Քրիստոսն, և վասն այնորիկ մահ մարմնոյն աստուածութեանն համարէր. ած էր մարմինն որ կրէր զչարչարանսն, և անմահ էր աստուածութիւնն որ զգեցաւ զմարմինն. աստուածութիւնն զմարմինն աստուածոյ հարթ հաւասար միաւորեալ ընդ բանին, որպէս զի այնու մեռանիցի և թաղեսցի վասն մեր, և նովին աստուածութեամբն յարիցէ և զգծողս աւերեսցէ. Զնա ծանիջիք, նմա երկրպագեցէք, զի նա է ած ամենեցուն.

Այս այսպիսի վարդապետութեամբ ուսուցանէր զազգն զայն զամբարտաւան և զհպարտ. Սա անձեցոյց զաւազանսն, ոչ եթէ զմինն երկուս, կամ թէ զերկուսն չորս կամ զհինգն տասն, այլ անհամար թիւս հազարաց. Սա լուաւ բանս 'ի տեառնէ. Ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո. Անուանեալ զերանելիս զայս՝ առաքեալ, որպէս և էն իսկ առաքեալ քարոզելով զանձն Քրիստոսի, քակելով զպաշտօնս և ուսուցանելով երկրպագել մի երրորդութեան, 'ի բաց թողուլ 'ի պաշտելոյ զտարապարտս և պաշտել զարարիչն արարածոց. Սա փարատեաց ուսուցանէր զմեռանելոյն աստուածաշունչ գրոց և գրեաց իմաստութեամբ Հոգւոյ և ուսոյց ժողովուրդս բազումս. զաւանեալ նոր Պօղոսիւ, զարքայն բարելաւուցող պատժելով Հարուածով եղն յանապատի, որպէս և եղև իսկ եղն, այնպէս հանապազորդ Տրդատիոս զգեցաւ զվերջադաստն խոզի և այլ թիւք սորայն փոխանորդեալ 'ի մարդ. Այս հաւատ ուսուցանէր բազում իրօք զհաւա մանաւանդ յաղագս ոչ կարէ որոյն առաքելութիւն բանն սորա՝ և նուաճեցուցանէր զպատուիրանութիւն հարցն. այլ այնպէս բերեաց զհաւատոյն վասն հացեալ եւթն կատարեալ զոր ետ և

հայցեսցէ. և եթէ լերինն իսկ սասանեալ փախեաւ՝ հնար էր փոխելոյ, թող թէ զմարդ խորշեցեալ փախարկել. թէպէտ և արդարև է այս նոր իմն սքանչելիք.

Նաև ես յայժ հիացեալ եմ ընդ առնն սքանչելիսն և յօժարիմ գովել, բայց զանգիտեմ յիմոց բանից գուցէ քան արժանեացն ոչ իցեմ բաւական, բայց անշուշտ առնել զցանկութիւն իմ ոչ կամիմ, քանզի յօժարութիւն իմ ջանայ յաղթել տկարութեանս, առաւել զոր բաւականանամ գովել յորոյ վերայ երևեցաւ այնմիկ. Մի՛ նոր սքանչելեացս, զորեգունն յայս երկնից արգելեալ ՚ի բարձանց անտի արձակել զճառագայթս ՚ի վերայ երկրի. իսկ զերանելիս զայս արկեալ ՚ի խոր գբի ՚ի բարձանս երկնից արձակեաց զճառագայթս իւր. զոր տեսեալ հրեշտակք և հրեշտակապետք երանեցին զնա և սպասաւորէին նմա ՚ի գբի անդ, զմարմինն նորա տեսանէին ՚ի գբին և զառաքինութիւն նորա պայծառացեալ յերկինս, մարմնով յերկինս և հրեշտակ յերկրի, մարմնով անմարմին երևեալ երկրաւոր մարդ և երկնաւոր հրեշտակ, սիւն հրեղէն յերկիր՝ որոյ գլուխն հասանէր յերկինս, լուսաւորիչ հայաստանեաց և հիմն հաստատութեան Հռոմոց, առաքեալ Քրիստոսի և առաջնորդ մարդկան.

Նախ երանեմ քեզ, Կեսարիա կապադովկացւոց; քանզի ՚ի քեզ ձեռնադրեցաւ հօտից բանաւորաց հովուապետն և ձեռնադրեալն հաւասար առաքինութեանց ձեռնադրողին. Որպէս բազումք արմատովք հաստատեալք, և նա իւրն միայն արմատ առեալ և զանազանեալն արմատացուցեալ. Որ բազում պտղաբերութիւնք ՚ի բազում միջակաց երկրագործեալ գիւղագացեալն, և նա իւրն մի միջակ՝ միով բաղկաւ կալեալ զմանկոյ արօրոյ, բազում կորդացեալ երկիր կակղեալ բանիւն ճշմարտութեան և միով խոփով ակօսս բազումս արկանելով և սերմանս հինգերորդ, և բազում պտուղս արդիւնաւորեալ, և բաւան հարեալ զմտայլին սերմանեացն բիւրահոս մտաւորքն սերմանէր անդս բազումս. Յայնժամ բուսանէր ՚ի միջէ սերմանացն ձեռանէ և յառկոտահատ բաղկէ բոյսք ազգի ազգի. Ո՞չ էր տեսանել աշուն և գարուն, հունձք և կալք, այլ և ձմեռն հասեալ սերմանէր ՚ի մի սերմանէ որ է բանն ամն, և ահա

Digitized by Google

տեսեալ բազում զանազանեալ զանձինս առ 'ի հասկս հասեալ և զայլս 'ի հասկին պարարտացեալ, և զկէսս 'ի հունձս եկեալ, և զայլն 'ի կալն անկեալ և կասեալ. և յարդեալ շեղջս բարդեալ և 'ի լուսոյ շտեմարանս ժողովեալ:

Նոյնց և 'ի մէջ գնդերան, տեսեալ զսերմանս ծաղկանց տատասկին որ ոչ տայր թոյլ բուսանել, զսերմանսն արկեալ 'ի վիրապն 'ի մէջ թունաւորաց. մեղմիկ խառնէր աստղերականց որոցն՝ տեսեալ զպտուղս թունաւոր զազանաց, և միշտաբերք մահաբերք թունաբերք առին զպտուղս հեղգաց արանց՝ և լեղուին զատս որոցն, և բերանովք զպտուղ մահացուցեալ սպասաւորին, այնու ստատուողին որոցն: Նոյն զինչ. ընդերկրայագաւ ձմեռան բազում ժամանակս, և զսերմանսն հանդերձին փոխեալ իւրեւ զսերմն որ արկեալ արկանէին 'ի մէջ սաստին. բացեալ սոյն զվիրաւորն խնդրէին փոխեալ մեղուամ մի սան, և լսէին զերգս բազում արանց. աւելի ունէին հաս զազրութեան 'ի թունաւոր միշտապայն 'ի հաստատեալն ընդունել, և բարերաց անսատ հաս անսաշութեան իւրեւ մերժեմ զղախտանէն. խնդրէին փոխեալ զռակերան, և տեսանէին արեզանկնաւսպայլ պատանիր. խնդրէին 'ի դրէ, և տեսանէին զի շղթէր նա 'ի մէջ անծագորդ տանջարի. խնդրէին ստախանաշեալ սակերս, և տեսանէին սասազեն և պարապերատ ամենայնն կերակրովք. խնդրէին զազանարէկ մարմին, և տեսանէին զի հեղացուցեալ էր զզազանսն. տեսանէին արհամարհողքն զի արհամարհեալ էին յարհամարհէն, պատուհասեալ տանջէին և պախուցեալ հիւանդանալ սակսին. Մեծ է անմն զոր քարոզէ մեծն Գրիգորիոս, տեսպարագաւ զէն մեր յաղթանակ զոր տեսաբացեալ կարծեաք 'ի թունաւոր միշտապարցն. զի թէ միշտաբերք ոչ էին անդ, բաւական էր սոյն մաշել զմարմինն, որ և անհնարին է տալով անմեռանիլ որ է մեռեալ: Նոյն պատմեցելի է անծ 'ի սուրբս իւր, բարեբանէին ըստ մարգարէին Դաւթի, զի փառաւորեսց զփառաւորիչս իւր, հեռացեալ տանջէին ընդ գործս իւրեանց և սակէին. Ըստ զոր արկաք 'ի դրէ և խաւարի, մեղ որ արդարեւ էաք որդիք խաւարի՝ փայլեաց իւրեւ զարեգակն; և հանեալ 'ի խաւարէ առաջ արդիւ լուսոյ: Այս ուսեալ 'ի մեծ հօատարեանէն որ խնդրէր քառաթիւն 'ի հօրէ իւրոյ քար-

չարողացն, մեք սորա տանջողք արկանելով 'ի վիրաւորս, և սա մեզ լուսաւորեցաւ լուսաւորիչ փայլակնահրաշ ուղ-ղեաց զոտս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան, և մեք սորա չարչարիչք և սա մեզ նախախնամող վերակացու։ Սա հայր գթած, և մեք որդիք ապստամբողք 'ի հօրէ, մանաւանդ թէ և սպանողք։ Սա զինուորեալ ծնծայլիւ բանահօք առ 'ի պարապաքարել զգայլսն ապականիչ 'ի փարախէ հօտից, և մեք մոլորեալք զհետ երթեալ յա-փշտակող գայլոյն որ փողոտեալ զահամէջ առանձին և կորուսանէր 'ի սպառ։ Սա հովիւ քաջ, և մեք հօտք բառաչողք և փախչողք 'ի սուրբ փարախէն։ Սա բժիշկ, և մեք հիւանդք անողորմք ձեռեալք զառողջացուցիչն մահացուցանել մարմնով, թէպէտ և չէր հնար, զի մեզ կենդանի էր հօգւով։ Սա փշաքաղ և ճանապարհորդ որ առ ճշմարիտ զգիտութիւնն տանի, և մեք կոյրք և ան-դգայք առ անկանել 'ի գուբ կորստեան, և խաւարեալ աչօք, հարեալ զառաջնորդն մեր և ընկեցաք 'ի վիհս, և մոլորեալ մնացաք և ոչ խնամեցաք։ Սա ճրագ լու-սաւորեալ, և մեք 'ի խաւարի նստեալք, ոչ երթայաք զհետ փայլակնաճառագայթ շաւղաց սորա։ Սա ծառայ մեզ, և զոր մեք մեծս անուանէաք՝ արարած ծառայք մարդ-կան, և վասն այսորիկ ծառայս մեզ արհամարհեաց զաս-տուածն զոր պաշտէաք։ Սիրող մեր ձեռէին և ոչ ի-մանայաք, այլ առեալ արկաք 'ի խորս անդնդոց, և նոյն-ժամայն տեսաք զխորս եկեղեցին արեգակն ունելով յին-քեան լուսաւոր մեզ, հանէաք զգազանս ապականիչս մարմնոյ նախախնամողին զմեզ, և տեսաք զսա Ադամ առաւելին առեղծուած՝ ոչ իշխեցեալ օձից և քարբից նախ քան զպատուիրանազանցութեն մերձենալ 'ի նա. մեզ երթեալ զհետ պատուիրանազանցութեանն Ադա-մայ արհամարհեալ եղաք 'ի գազանացն. մեք 'ի վերայ իշխանին իշխանութիւն տուաք իշխեցողն, և տեսաք տեղարարեալ զիշխանութիւն իշխողացն որ իբրև զաղա-նիս մնչէին հեզաբար, և մահացու ըմպելիքն, որ պա-տուիրանազանցութեան աղագաւ հրամանս առ սպանել գարշապարացն, տպաւորութեն պատուիրանապահին և աշակերտին Քրիստոսի։ Ո՛ինչ արդեօք առաւելից լե-զուաւ, կամ ոչ՞իւր համարձակին բերք աչաց մերոց բաց լինել, նկատել և տեսանել զզեթած հայրն մեր և

խնդրել զթողութիւն որ բանն ըմբռնսոխտասնաց զօ-րացնեալ արկանէաք 'ի վերայ, և զի ոչ գոյր չոր կէր 'ի սիրտս նոցա, այնու համարձակեցաք և եղեիցուք 'ի դուռս վիրապին և ասացաք. Տէր ծառայք քո ա-ռաքս, և ծառայեցո զապստամբեալ ծառայս քո, որ ու-րանք իշխանութիւն քեզ յայտնեսնէ զոր խորտակեցեր յանգուցողս խզանելով քո 'ի գուբս խոր, և որպէս ա-սար 'ի քում վարդապետէդ, նոյնպէս ասա և զու ա-շակերտաց քոց: Աղաղակեա բարի, եւ յաշխարհ հայաստանեայց որ երևեցաք կերպն Ռաբելոյն, և փա-խանակ հնոցի բորբոքեցաք զվիրապս, և բոց բորբո-քեալ արկաք զեթեղ վիշապացն. զոր ցօղացուցեալ էին առաքինութիւնք քո, շիջուցեր զմահաբեր բոց օձիցն և քարբից, և զնացեալ կախեցեր 'ի վերայ կայծակնա-կերպ վիշապացն, և վերստին երևեցար երկրորդ Դա-նիէլ, Անանիա և Միսայէլ պահպանելով զերրորդութիւն անբաժանելի դիր ու հաւատացաք: Որդ հաւատացաք և զոչեմք ընդ Նաբուգոդոնոսորայ աստուածային բարեկա-ցուց տեսանելով 'ի մէջ հնոցին ցօղ ամենայնին. Այլ ա-ռաքս ծառայք քոյ բարձրեալ, քև հաւատացաք խոստո-վանել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի, եւ արարաք 'ի հնոցէ վիրապէդ, և փառաւորեա զնա որ փառաւո-րեաց զփառաւորիչս իւր, և պարծեաց ամենայնին պարծա-նաք, և գոչեա ամենայնին ձայնիւ եթէ զնա պաշտեցէք զի ես համարձակութեամբ քարոզեցի, նա է արարիչ որ պա-հեաց զիս անարատ 'ի բերան ժանեաց վիշապին: Այլ արարաք նոր Դանիէլ և երևեցո զքեզ Աստուծոյ ա-քային բաբելացւոց որ է հայաստան, զի արկար 'ի գուբ, ոչ եթէ 'ի մէջ երկուց առիւծուց, այլ եւս առաւել բը-նութեամբ գազանաց, զի ամենայն գազան Թէպէտ և բեկանէ; է հնար Թերևս միանգամ առագձանել, իսկ Թունաւորք ժանիքք վիշապաց ոչ բեկանէ զմարմինն և ոչ նուազեցուցանէ զանդամսն, այլ փոքր ինչ առաւան չափ գանելով զմահն աններելի 'ի վերայ ածէ, և յայտնանէ մնացեր անվնաս, Թող Թէ չմահացար:

Որդ զայս ամենայն Թերևս 'ի դէպ էր ասել նոցա, այլ մեք 'ի մէջ ածեալ զնորա պատճառ չարչարանացն զավեսցուք: Որքայն Տրդատիոս յաղագս հօրն իւրոյ սպանմանն մղեցնեալ, և յետ այնչափ հարուածոց և

տանջանաց գանից և գելարանաց, ոսկրաբեկ և անդա-մահատ կախաղանաց և ամենայն կտտանաց որով կառե-ցին զնա չար մահուանբ, և նա բազում համարձակու-թեամբ հրեշ վասն անուան տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, և առ նոսա այսպէս ասէր. Դուք հարկանէք զիս գանիւք և տանջանօք մարմնաւորք, վայե-լելով զայս կեանս վաղանցուկ և երազական յուսա-հաս լինելով յանանց կենացն, այլ ես զանժամանա-կեայ կեանս հանդերձելութեանն ստանիմ յաղագս այնմ որ չարչարեցաւ վասն իմ. բացեալ լինի ինձ կեանքն անմահութեան, և դրախտին փափկութիւնն անուշա-հոտ բուրմամբ, յոր մտից և ժառանգեցից յաւիտեան և ուրախանամ և երախտիս համարիմ զոր դուք վար-կանիք անձին իմոյ արկանելով 'ի վերայ իմ զչարչա-րանսդ, զի թէպէտ ոսկրաբեկ առնէք գելարանօքդ զանդամսս զսուղ ժամ մի համբերելով, և յետ այնորիկ տանջեցեալ առաքս և հաստատարմատս իբրև զարմաւե-նիս բարձրացայց առաջի արարչին իմոյ բազմաստեղն տարածեալ սաղարթաւորձ և ծաղկազարդ, որ ոչ թառամեսցի յաւիտեան. այլ գարնանաբեր ընդարձակագ-մեալ և պայծառացեալ զուարթանալ 'ի բուրաստանս ա̄ծատունկ դրախտին, զի թէպէտ և դժնդակ բարձրա-բերձ մեքենայիւք և գելարանօք կախէք զիս գլխիվայր, սակայն վստահացեալ եմ թէ առ սուղ ինչ համբե-րութեամբ՝ գլխաւորութիւն իմ մինչև յերկինս բարձ-րասցի առաջի արարչին իմոյ. այլ և գաւազանդ և ար-ջասպիլ տանջանարանքդ որ մաշեն զմարմինս իմ, հա-ւատամ եթէ ամենահուանակալ զարդարեալ պսակք հիւսեսցին ինձ, զոր կապեսցէ թագաւորն 'ի գլուխն իմ, և նմանեցանէ յառագաստ երկնաւոր հարսանեացն. և արիւնս այս որ հոսեալ իջանէ 'ի մարմնոյ իմմէ, ներկէ ինձ բեհեզ և ծիրանիս թագաւորական զգեստ անմա-հութեան որ ոչ մաշի յաւիտեան: Զայս ամենայն Ձայն էր պատասխանել երանելւոյն:

Եւ զինչ ասաց յետ այսր ամենայնի. ոչ յագէր անօ-րէնութեամբ արքայն Տրդատիոս որքան կապեալ էր զնա և չարչարեալ, այլ իբրև զայն ես համանէր 'ի վե-րայ իւրոյն եղելոց, թէ արդարև սա է որդին Անակայ պարթևի որ սպան զԽոսրով զհայրն իմ, եւ հրաման



Digitized by Google

կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և պարանոցաւ խա-
ղացուցանել 'ի գաւառն Այրարատեան յաւանագի, ար-
կանել 'ի խոր վիրապին: Ո՛վ անմիտ, Թերևս ասէր
սուրբն Գրիգորիոս, զի Թէ Հայրն իմ մարմնաւոր զի-
նաւ պատահեալ անօրէն Հօրն քում, նա սպանաւ և կո-
րեաւ յանցաւորէս զոր կեանս Համարէր, բայց և չե-
զուալ խսկ յանմահ տանջանս մատնի, բայց դու խնդրե-
լով յինէն զվրէժ Հօրն քում որ ես որդի անօրէնին, զի
Թէ պարտ էր անդԹելի պահել զմարմինս իմ, ոչ յաղ-
Թեցին ինձ տանջանք քո, այլ անպարտելի տանջանօք
տանջէիր զՀոգիդ քո մարմնովդ Հանդերձ մինչև զըն-
ցեալ երկիր պարզանէիք այն խելք: Արդ դու տանջիր քո
տանջեա զիս, և դու խնդրեա զվրէժս տանջի իմ տան-
ջեալ և Հեռացեալ յինէն, և ոչ խնձեաս Թէ այնպէս
վրէժխնդիր է Թագաւորն իմ, զի զոր դու քեզ բարե-
կամս Համարիս, զնա պատրաստէ քեզ տանջող յաւի-
տենականս: Այսպիսի և աւելի քան զայս 'ի գետ
եր ասել սրբոյն առ Թագաւորն:

Բայց մեք այսուՀետև եկեսցուք առ գուբն վիրա-
պին, և տեսանիցեմք Թէ զինչ եղև անդ սքանչելիք.
ընկեցին զնա 'ի գուբ անդ և այն էր բնակուԹիւն օձից,
և այսպէս զինչ ասէր վիրապն. Որ Հնչեալ է գալուստ քո,
ծով Հայր Հրաշալի, քանզի նոքա պատրաստեցին զիս վէՀ
տանջանաց խորասոյզ անդնդոցին մԹացեալ Հաւատ,
և աՀա արարիչն քո պատրաստեաց զիս լինել բարա-
տան քեզ, ես բնակարան էի խաւարի և աՀաւորի
եղէ քև տաճար լուսեղէն. անուն իմ կոչեցեալ էր խոր
անդունդս, և քև վերացեալ ձգեցայ յօդս երկնից, և
Հալածեալ անուն յիս արեգական լուսաւոր որ լուսաւորէ
զաշխարՀս Հայաստանեայց. արկանելով յիս զմարմին
բազմաց ժաՀաՀոտուԹեանն տղմոյն սրբականէի, և առ
վախճան լցեալ զմարմինս ընդ ամերս քանցէի, զարշէի
և դառնանս բարբէի Հոտս և դառնացուցանէի զՀոտ-
տելիս բազմաց, բայց այժմ քև երևեցայ ծաղկաղարդ
ատրև, և զուարԹացեալ վարդագոյնս մանուշակաբեր
բարբեալ ազգի ազգի անուշաՀոտուԹիւնս: Արդ Թա-
նաքեր վիշապքն որ անդ բնակեալ էին, զինչ յարժամ
տեսին զսուրբն Գրիգորիոս անդ ընկեցեալ. զառաջինն
խնդրելին զարմանական բնուԹեանն խրատանց, տեսա-

նէին զի հրեշտակք սրովբէական թեւօք բարձեալ իջու-
ցանէին զնա առանց վնասու. և պահպանեցաւ հիւանդն և
առնէն. Մեք ծնունդ եմք որդանն որ պատրեաց զԵւա
ճաշակմամբ պտղոյն և աքսորեալ ՚ի վայր ընկէց ՚ի փափ-
կութենէ դրախտին, և զու զաւակ Ադամայ և թոռն
Եւայի որ ընկալան զփշաբերութեան անէծս, որ և ա-
ւեր հրամանն յարարչէն սպառել զկեանս մեր և մեք
քում զաշխատաւորացդ. և արդ ըստ այսմ հրամանի դի-
մեցաք ՚ի քեզ կատարել զմնական թշնամութիւնն մեր
՚ի քեզ, և տեսաք զմարմնով քով զօրք անմարմնոց, և
զքեզ պատուարեալ ընդ անմարմնական դասն և պա-
կասեցաք. այլ շլացան խայթոցք մեր, և ժանիք մեր
թունոք կակղացան, և եղեն իբրև զմոմ հալեալ յե-
րեսաց հրոյ ծածկադարդ պատկերդ քումմէ. Թոյնք մեր
որ բոցավառեալ գործէին զմուխ ՚ի մարմինս օտարս,
ծածաքուղիք աղբեր աղօթիւք քո դարձան և եղեն իբրև
զջուր ցուրտ, և փախանեակ փախչելոյ յերեսաց քոց, և-
կեացուք ՚ի սպասաւորութիւն հեզացուցչիդ զօդանային
բնութեանս մերոյ, զոր և մոռացաք իսկ վասն հրամա
պատկերի քում առանց երկիւղի քում. և արդ աղաւ-
նակերպ հնչմամբ մնամ ՚ի տան քում առանց երկիւղի.

Այլ և ես զարմացեալ եմ ընդ չորեքտասան ամ լի-
նելոյ նմա անդ. բայց եկեսցուք յայն եթէ զինչ լինէր
փոխձանն յետ այնչափ ամաց: Ասէ. Յայնմ ժամանա-
կի թագաւորն ժամ առեալ որոյ զօրացն և ինքն ե-
լեալ ՚ի կառս կամեցաւ ՚ի քաղաքէ անտի արտաքս ե-
լանել՝ և վաղվաղակի պատուհաս ՚ի տեառնէ ՚ի վերայ
հասեալ, այսոյն պղծոյն հարեալ զնա ՚ի կառացն ՚ի վայր
կործանէր, և մոլեգնեալ սկսաւ ուտել զմարմինս իւր.
նա և ըստ նմանութեան արքային բաբելացւոց Նա-
բուգոդոնոսորայ եղեալ արտաքս քան զմարդկային բնու-
թիւնս ըստ նմանութեան վայրենի խոզաց աղտեղեալ բնա-
կէր ՚ի մէջ նոցա, մնեալ այնուհետև խառնաձայնակ լի-
նէր. և այսոքիկ աքանչելի յայսմ վայրի: Իսկ առ թա-
գաւորն զինչ. պարտ էր առել. Մի թագաւոր, զհետ
երթալով քո սատանայի արհամարհեցեր զծառայդ
Աստուծոյ, վասն այնորիկ և նա որում սպասէիր՝ ըն-
կեալ տանջէ զքեզ հրամանաւ Ճշմարտին Աստուծոյ,
զոր պաշտէ մեծն Գրիգորիոս. զու արհամարհեցեր

զմարմինս երանելւոյդ չարչարելով և տանջանելով 'ի բանդս և 'ի վիրապ, վասն այնորիկ և զքո մարմինդ ամփոփէր 'ի մարմինս խոզի. քանզի և անմահացար չարաչար հակառակիլ ընդդէմ ճշմարտին Այ, ատեցեալ զհաւատարիմ ծառայ նորա. զանէ յայսմ հետէ զպատուոյն չարաչար հարուածովքդ, և կախեալ խոշտանեալդ զատատանաց որ կոխեաց զքեզ, զգեցեալդ քո զարձեալ զմարմինն Լուսաւորդ. առա անսասանական լեզուաւդ, մեղաց ատանջի ատեան, փոխանակ զի անարգեցի զայրդ կայդ առաջ Տարտարոսական լեզուաւ, խաւարհեցո զխաղաղերայ անհեթեթ գլուխդ որ սկզբէ զթուաւորեն 'ի տեղիս նեխեալ, փոխանակ զի հաստատեցաւ բարձրացեալ ունէիր զքո 'ի վերայ սրբոյ նահատակիդ. կարկատեալ զկճղակացեալ ձեռս քո և կալ զոտս մարտիրոսիդ, փոխանակ զի իշխանութեամբ շարժէիր զնա ատեան մատանեօք, և տայիր հրամանս կապել զոտս և զձեռս և զպարանոց ատամունք քո և վարդապետիդ. ծանիր անզգօնացեալ եթէ կենդանի է հնգետասանամեայ բազմելոյն զոր մեռեալ գոլով քո համարէիր մեռեալ դատեալ զոսկերս դորա. զխեթեա խաղացեալ մարմնովդ առ զուրս վիրապին, փոխանակ զի մարդ գոլով քո մեղեցեր ընկեցեր 'ի վիհս մահապարտս. աղաչեա խաղացեալ անձամբդ զքո զոր փոխեալ համարէիր զբժիշկդ քո, և տայ քեզ զառողջին մարմնոյն. երթ զնա խաղալվաս չորքոտանեօք առ ափն գբին, և աղաղակեա անդ եթէ եկ արտաքս ծառայդ բարձրելոյ, փոխանակ զի 'ի վերայ կառաց նստեալ բարձրամտէիր ամենազգեաց լուսաւորչին :

Այս արդ զայսոսիկ պարտ և պատշաճ էր ասել յայնժամ : Բայց ապա զինչ արդեօք իցէ կատարելին. և ապա տեսիլ ամենայն երևէր 'ի վերայ քեա թագաւորին. Ի զուր ջանայք բժիշկ 'ի մարդկանէ խնդրել. անբժշկելի ախտից ձերոյ չիք հնար, բայց եթէ մեծն Գրիգորիոս որ յԱյ առաքեցաւ ձեզ բժիշկ, զոր դուք արքսեցէք նախ բաժակ մահու, զի ես իսկ եմ Այ ծառայի իմոյ Գրիգորի, զոր դուք մահացուցէք վասն բազմաստուածութեան ձերոյ. զնա յարուցանեմ ձեզ բժիշկ զի բժշկեսցէ զձեզ, և 'ի ձեռն ծառայիս իմոյ հալածելոց եմ 'ի ձէնջ պատուհասքդ : Այս ահա հրաշեցաւ, ասէ, ընդ տեսիլն կնոջն այն որ կոչէրն Խոսրովիդուխտ,

և երթեալ պատմէր զամենայն։ Տեսի ասէ այր մի լու-
սաւորեալ որ երևեցաւ ինձ 'ի տեսլեանն, և ասաց թէ
ոչ գոյ ինչ այլ բժշկութիւն հարուածոցդ այդ որ հա-
սին 'ի վերայ ձեր, բայց եթէ յղեսջիք յԱրտաշատ և
հանջիք 'ի խոր վիրապէ անտի զկապեալն Գրիգորիոս,
նա եկեալ ուսուսցէ ձեզ բժշկութիւն։ Իսկ մարդիկն
իբրև լուեալ զայս ծիծաղէին և այպն առնէին զնա ա-
սելով. Ո՜ ինչ խօսիս, զի՞ ուրեմն հարաւ 'ի քեզ, և
դու մոլեգնեցար. զիա՞րդ հնար է փտեալ ոսկերաց խօ-
սել, և առնել զեղ բժշկութեան. որպէս բաւական լի-
նէր նմա հասանել յատակս վիրապին, զի և 'ի տեսլե-
նէ օձիցն որպէս ասէր, թող թէ 'ի խայթոցաց նոցա,
զի 'ի նոյն օր իբրև ընկեցին զնա 'ի վիրապն առժամայն
սատակեալ լինէր. և այժմ հնգետասան ամ է զոր և
փոշի համարիմք զոսկերս նորա, թող թէ փտեալ մի-
այն. երթ լուա զայդ յասելոյդ, զի մի ծաղր արասցեն
զբանս բերանոյ քո։ Եւ ապա զի՞նչ։ Հաւատաց կինն
բանից նոցա, և երթեալ լսէր 'ի տեսանելի խորում, և ոչ
զայլուցն ինչ համարեալ զնկատակն որ հրամանն առեալ
որ լուս օրէ ընկեցող 'ի վիրապն։ Յայնժամ կրկին ե-
րևեալ նմա տեսիլն այլ և հնգեկին և մեծաւ սպառ-
նալեօք ասէ. Եթէ ոչ պատմեսցես ասէլ, և մի երկրոր-
չիր առնել յայսմ առնելոյ զքեզ և անհնարին համարե-
լոյ հնգետասան ամ կենդանի մնալոյ նորա, զի հրեշ-
տակ տեառն առաքեցաւ սպասաւորել նմա, եւ ընդու-
նէր զնկանակն և մատուցանէր նմա որպէս Եղիայի
յանապատին, և նմա 'ի վերայ երկրի, այլ սմա 'ի խորս
երկրի ունելով յինքեան արեգակն լուսաւոր զաստուածա-
նութիւնն. զառաջինն յիրաւի լսոյ թերահաւատու-
թեան նոցա կարծեցեր, բայց այժմ հաւատա բանից
իմոց, եթէ ամենայն հնարաւոր է առ 'ի յԱյ. ո՞չ իցէ
լուեալ քո եթէ զիարդ ապրեցաւ Դանիէլ 'ի մէջ քաղ-
ցեալ առիւծուցն 'ի գբի անդ, և կամ երեք մանկունքն
'ի մէջ բորբոքեալ բոցոյն, և բարձրութիւն բոցոյն նշա-
նակելով զքառասուն և զինն օրեայ պահոցն զօրութիւն,
և կամ որպէս զոսկերսն զփտեալսն 'ի դաշտին պատուի-
րանապահին Եզեկիէլի հրամանաւն Այ 'ի չորից կող-
մանց հողմ շարժեալ և եկեալ ոսկր առ ոսկր, և ոչ առ
օտար ինչ, այլ իւրաքանչիւր ոսկր ընկեր առ ընկեր կց-

ցեալ՝ Ձիւք 'ի վերայ ակներացն ածեալ և մաղթ, և փը-չեալ շունչ կենդանութեան և կանգնեցան կացին 'ի վե-րայ ոտից իւրեանց, ժողովուրդ բազում յոյժ. Նա և այժմ նոյն ձեռն է զոր քարոզէ սուրբն Գրիգորիոս, կա-րող է տարբերացուցանել զնա 'ի վիրապէ անտի. և արդ դու հաւատա բանից իմոց, և երթ պատմեա ժողովր-դեանն :

Իսկ ապա կինն առաքեաց հրամանս և զգուշութի-մնեալ պատմեաց նախարարացն. և նոքա կոչեն զմա-տակարար թագաւորին, վաղվաղակի առաքեն յԱր-տաշատ. Ասեթ, ասեն, մատո աղաչանս ծառայքն քո այսմ զոր ոչ հաւանեցայք մարդ, երթ աղաչեա զբժիշկն զոր ոչ լուաք բանից նորա. երթ կոչեա զնա 'ի վիրա-պէն զայն որ կոչեցաւ է զմեզ յարուցանէ զժահուց. երթ աղաչեա զարհամարհեալն 'ի մեզ. զի արասցէ ողոր-մութիւն 'ի վերայ արհամարհողացս : Այս ասեմ և առաւել քան զայն թերեւս 'ի դէպ էր նոցա ասել:

Իսկ ապա գնացեալ նախարարքն 'ի քաղաքն անդր, և խորն հարցեալ եղև 'ի քաղաքացեացն պատճառս գալը-տեանն նորա, զոր խնդրեալ զգանձանայն 'ի միտս իւ-րեանց հիւանդեալքն և ասէին, որպէս խնդրէ կենդանի 'ի գերեզմանի հնգետասանամեայ փտեալ ոսկերս. զինչ խնդրէ աղբեալ մարմին որ ժահահոտեալ է յարգելան վիրապացն փտեալ և ընդ հող խառնեալ, որպէս խընդ-րէ զմարմին հողացեալ 'ի բժշկութիւն որ զինքն ապրե-ցուցանել ոչ կարաց: Իսկ ապա զի՞նչ. կառեցին առ կառս պարանաց երկայնս և առաւարս և արկին 'ի վերայ անդր, և աղաղակեաց մատակարարն 'ի ձայն մեծ և ա-սէ. Ելի արտաքս ծառայդ ա̃յ եթէ կենդանի, զոր գի-տեմ խակ եթէ առաւ գալդես կաս, որ է հրամայեալ ե-լանել առ ածն քո զօրութեամբ ա̃յ քո. Եկ արտաքս, եկ ծառայդ ա̃յ և աղօթեա զծառայքս քո 'ի ձեռաց ա-տուածացս զոր պաշտեմք. Եւ որդիդ լուայ և աղօթեա զմեզ 'ի խաւարէ ատուերացս. Եւ արեգակնդ 'ի խորոց անդնդոց և առաւել լուսաւորեա զմեզ քան զարեգակն որ հուրփի 'ի վերին յօդս, վասն զի նա լուսաւորէ զաչս մարմնոց, և դու լուսաւորես զաչս հոգւոց մերոց և ա-ռաջնորդես յերկինս առ ինքն. որ է լոյս անեղեալ և անճա-ռայց: Մինչ զայսպիսի պաղատէին ասելով նախարարքն, խոկ

նա շարժէր զհողս պարտիզացն. և նոցա խնացեալ ձգեալ հանէին զնա արտաքս և տարեալ զարեգական զի 'ի վերայ զգեցեալ էր զանձն, քանզի Թխացեալ էր մարմին նորա խարկել զանձուն սևացեալ. և խնացեալ տեսին եթէ մարմին էր որ կրէր զչարչարանս, և իբրև զանմարմին համբերէր և լուսաւորէր. և այս հանգերձ մատուցեալ զգեցուցին զնա, և հիւսցեալ զարմանալին ժողովուրդն այն զոր պատիւ և պատշաճ էր աղաղակել նոցա բառ խնամածոյն. Այսպիսեաւ կարգէ արդարոյն բազում համբերատարութեամբ համբերել նեղչաց խորոց, և որ անգամենէքին զխստատակս նորա տեսեալ զնա խառնեցին և 'ի վերայ պաշտելի փրկութեան նորա զարհուրեցին յոյժ. զինչ շահ եղև մեզ հաստատութիւնն, և զինչ ամբարտաւանութեանն նորա. արդ զղջացեալ 'ի զեղջ էր նոցա ասել:

Սոյն մեզ զովասանութեամբ հանդերձ պատմեցաք զայն խնչ որ յետ այնորիկ լինէին: Այս յորժամ եւ նա 'ի վիճակին ասէր, Թագաւորն և ամենայն մարդիկն մեծամեծամբ մերթք և խայտառակք զայնն առաջի նորա, և կոչեցեալ արտաքոյ քաղաքին սպասեցին նմա, և տեսեալ զնա 'ի հեռաստանէ զի գայր, սկսան մեծագոյն բարձրանալ զխուբեանց մարմինս, աղաղակէին և ասէին. Այդ մարմնաւոր հրեշտակ, և լուսաւոր քո համբերութեան զանձմարմին զխստութեանն համբերողս մեր, եկ համբերէ՛ լինելով մերոց որ զայլ պայմանեցայսն կյանքդնեալ սիրտս մեր. ա՛յ 'ի համբերել զզօրաւոր համբերողս խոր եղանց. եկ երեքին մարմնովդ և համբերեա զանմարմնոյն խաւար հաւաքս մերոց, եկ նիւ Թական մաշկեղէն պատմուճանաւդ, և համբերեա զանձնիւթ և զանմարմին ընդդիմամարտս որ համբերեն. եկ արեգական բարձրախորշակ, և ցամաքեցո զկուտակեալ ուղխս անօրէնութեան մերոց, և հրաշալին զօրութեամբ որ 'ի լիճ սատանայական մածեալ ներքեալ եմք, եկ զեա նմանին և տապեա զկորդացեալ անդս մեր, որպէս զի ղալարացեալ ծաղկեսցի սերմն չորացեալ որ քև անկաւ 'ի մեզ. առաքեալ զհաւատս, հնձեա նմանին մանկաղաւ, և կանեա եղանակաւ քո և կամենալ նմանին լեզուաւ քո և հովուաւ նմանին լեզուաւ և չորքեա առաւ նմանին բազկօք, և ած զարգելոս քո յնմանին

շառաւիղութեանց, և երկնաւորս և կայծակն վարդապետու-
թեամբդ քո վառեալ զփուշ զծնելիկ որ հեղձոյց զսեր-
մանսն վարդապետաց քոց. եւ մշակդ ՚ի վերայ այգւոյդ անդրա-
դաց որ սերմանեցեր ՚ի խորոց ՚ի վեր զսերմն վարդապետու-
թեանդ, եւ և ՚ի մէջ ասպնջականեացս հասեալ ըն-
թացդ յաշխարհն հարաւոյ, և զարծեալ ամենայն զերկիր՝ զոր
յառաջագոյն ոչ տեսեալ գործել, այլ զկուռսն որ ամ-
դանոց ՚ի խաւար արկեալ քանդեցեր շարաշար:

Այլ արդ ըստ արժանեաց գովել զերանելիդ ոչ է հը-
նար, բայց փափագումն հնարաւոր է գիտ. առաւելս կարճ
՚ի կարճոյ եթէ յեւ այսօրիկ զմեզ արդեօք: Արդ ա-
ռաքինչն ընդ հաւատարիմ ծառայն իւր. Արքի, ծառայ
բարի և հաւատարիմ, մի ենչ զմտաւ ածեր վասն սեր-
մանելութեանդ քո. վասն զի դու անկեցեր երկրորդ Պօ-
ղոս, և եւ մնացական, եկ մուտ յուրախութիւն տեառն
քո. մի երկնչիր երկրորդ Մովսէս, զի պաշտօն զեւտ-
հաւատս առաքեա յազգաց. դու սիրեցեր զգի առաւել քան
զմանկութիւնդ քո, և եւ զհանդիստ զոր պատրաստեցի սի-
րելեաց իմոց ասէ քեզ. եւ հանգիր ՚ի բազում աշխա-
տութեանց նոր Պետրոսի. եւ յառաջադաս հարսանեացդ
զոր յառաջագոյն խոստացայ քեզ. եւ զատաւորես ընդ
առաքելոցն կրկին աթոռոց, որ քարոզեցեր զամեն
Ճշմարտութեան յազգս հայաստանեայց. եւ պարես ընդ
հրեշտակաց զուարթնոյն, որ յերկրի նմանեցեր վարդացնե-
ցաս. եւ վայելեսցես ընդ հայրապետօք և անձկեալքն արժա-
նեւորդ սուրբ ՚ի տան տեառն և ՚ի գաւիթս ամ քո ծաղ-
կեալքն. եւ պսակաւորես ընդ վկայսն և զուարճասցես
ընդ դասս նահատակաց իմոց ՚ի սուրբ հարսնարանին ի-
մում, եւ ուրախասցիս ընդ զունդս Ճգնաւորացն որ սիրե-
ցեր զերկինս և զանմահութիւնս, այլ և ազօթիւք խա-
շակցեցար ինձ անդրադարձեալ. և վասն այսորիկ եւ առա-
քեցից զզունդս հրեշտակաց իմոց, և ժողովեսցեն զքեզ
առ իս, և մուծից զքեզ ՚ի զգեստուն յոր եմուտ առա-
ջակին խաչիւն իւրով, վասն զի դու բարձեր զխաչ քո և
եկիր զհետ իմ:

Այսպիսեաք եւ դու ՚ի հայրապետս, հայր սուրբ, հրեշ-
տակ ՚ի մարմնի և անմարմնոց ընդ անմարմնիցն դասել.
Երանեալ ես քաջ վերակացու որ զանկս զհաւատս կառա-
վարել թագաւորին քո ասպանց փրկութեան, և անձեալ ժա-

զովեցեր զնոսա 'ի գալուստ նորա. երանեմք եւ զքեզ որ քակեցեր զորմս դժոխոց եւ խորտակեցեր զդռունս ապականելիս, եւ պարսպեցեր զփարախ հօտի քում զօրութբ այնմ վիմին որ հատաւ առանց ձեռին, եւ արկեր զանձն ա̃ծային պատուիրանաւն եւ բազմացուցեր զհօտս թագաւորին քում, երանեմք եւ զքեզ կոչեցեալ առաքեալդ, որ քարոզեցեր զաւետարան որդւոյն ա̃յ եւ ծանուցեր զանփոփոխական մարդեղութիւնն ազգի օտարի եւ ուսուցեր երկրպագել անբաժանելի սուրբ երրորդութեանն եւ մի ա̃ծութեանն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ. երանեմք եւ զքեզ հաւատարիմ վկայ Քրիստոսի որ վկայեցեր վասն նորա ըստ նմանութեան երանելւոյն Պետրոսի թէ նա է որդի ա̃յ կենդանւոյ անմեկնելի 'ի ծոցոյ հօր. երանեմք զքեզ որ յանձն առեր զչարչարանս վասն նորա որպէս եւ նա վասն քո. երանեմք եւ որ զհնգետասան ամ ժուժկալեցեր 'ի վիրապին անդ: Գովեմ եւ զհոգին նորա սուրբ զոր դու քարոզէիր, զէակիցն հօր եւ որդւոյ. որում պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ԱՌ ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼՍՆ ԱՍԱՑԵԼՈՎՆ ԼՈՒԱՑՄԱՄԲ ՄԱՐԻԱՄԱՑ

Օրհնեալ է Ա̃ծ, ահա եւ յերկրէ աստեղք երեւին. աստեղք որ քան զերկնիս եւս պայծառագոյնք, որ 'ի յերկրիս են. աստեղք՝ յաղագս որոց յերկնից յերկիր երեւեցաւն. ոչ 'ի գիշերի միայն աստեղք, այլ եւ 'ի տուընջեան: Այս երկրորդ սքանչելիք, 'ի տունջեան աստեղք քան 'ի գիշերի պայծառագոյնք՝ քանզի նոքա յարեգականն երեւել ծածկին, իսկ սոքա յարդարութեանն արեգականն երեւել յաւէտ փայլեն: Տեսէ՞ր աստեղս երբեք ընդ արեգականն երեւեալս. նոքա 'ի կատարածին հատանել ապականին, իսկ սոքա 'ի գալ կատարածին առաւելագոյն երեւին. յաղագս նոցա ասէ՝ եթէ "Աստեղք երկնից անկցին որպէս անկանի տերեւ այգւոյ". բայց յաղագս սոցա ասէ՝ եթէ "Արդարք փայլեսցեն իբրեւ զաստեղս երկնից": Ո՛ ինչ է՝ որպէս անկանի տերեւ

ազգաց, այնպէս առաւելլ երկնից անձկցին։ Ո՛վ որ զգիտակ ոստոյ ցորեան մեռուցանել զողկոյզն, որպէս ասէ ծածկութի անուանցն, նախ յարգեալ 'ի բաց զնել զպտուղն՝ և զփտտութ ամբարացն 'ի բաց զնել. նոյնպէս և աշխարհաց ցորեան 'ի յիմացեալ զծնողացն բնութիւնն ունի, և զառաւել երկնից իբրև այգի զանգին. նախ յայնժամ ոչ ևս եղեալ՝ զիշխողացն և ոչ առաւելացն որպէս լինիցին այնու հետև. Զգաստացեալ է առաւելագոյն բնութիւն այնոցիկ, հրամանաւ է առաւելագոյն բնութիւն այլոցիկ. այլ ասէ հայր զդառնն, նախ առաս հայր խնամողն. քանզի "Ես զքեզ մկրտեցից 'ի հոգին սուրբ և 'ի հուր"։ Նմանին զանուանեալ ուսանել զերկնաւորաց այնց առաւելաց. անուանք պատուականք Հայր և Որդի, Եղբայրակից և Սրբոյն. նախ առաս երկրպագելոյ և ոչ որ այլ. լուսաւորեալք ամենեքեան։

Օրհնեալ է Տէր որ առնէ զարմանալիս միայն, որ անէ զամենայն և յօրինեալ փոփոխէ զնոսա. որ նախ քան զերկինս զերկիր, այժմ աղբերս և քաղաքակիցս եկեղեցւոյ. որք յառաջնոցն յանձն մեղացն, այժմ 'ի համարձակութեան և յարդարութեան. Նոյնպէս ոչ աղաւաղ միայն, այլ և սուրբք. և ոչ սուրբք միայն, այլ և արդարք. և ոչ արդարք եւեթ, այլ և որդիք. և ոչ որդիք միայն, այլ և ժառանգք. և ոչ ժառանգք եւեթ, այլ և եղբարք Քրիստոսի. և ոչ միայն եղբարք Քրիստոսի, այլ և ժառանգակիցք. ոչ ժառանգակիցք միայն, այլ և անդամք. ոչ անդամք միայն, այլ և տաճար. ոչ տաճար եւեթ, այլ և քնար հոգւոյն։ Օրհնեալ է Տէր, զարդարեալ տառապեալս, որ առնէ զհրաշալիս միայն։ Տեսէ՞ք միջնորդութեանն ողորմուն են պարգևք. և սակայն յաւելլից թուի զմեղաւորացն եւեթ ունել զթողութեանն պարգևս. բայց մեք թուեցաք պարտիս։ Ո՛յր տուզան և զխնամոցն միջնորդ, թեպէտ և մեղօ ոչ ունիցին, զի յառաջոյ սրբութիւն, արդարութիւն, որդեգրութիւն, ժառանգութիւն, եղբայրութիւն, Քրիստոսի անդամ լինել, բնակութիւն լինել հոգւոյն։

Ո՞չ ապա ցանկալի եղբարք, եթէ արժան է ինձ զձեզ եղբարս կոչել. քանզի երկնայինն ընդ ձեզ հաւատարիմ նոցին, այլ զինի այնոցիկ զազգականութիւն հաւատոյ և զհամբաւ կոչման։ Սակայն առաջ ինձ կոչել զձեզ եղբարս յաղագս սիրոյ. և ողջունեմ զձեզ ողջամբ առաւել

վայելեսցուք 'ի պտուղս, այնքան մեծագոյն ցուցէք զմեզ թըն: Ասուն զի նախ քան զայս ժամանակս հանդիսարան և կրթարան էր և թշուառութեան ընկեր գլորութեան. բայց յայսմ օրէ նախահաստատութիւնք և անդ հանդէսք 'ի վերայ կան, ամենայն գերագոյն նմանի. ոչ մարդկան բնութիւն, այլ հրեշտակաց զուարթ ամենայնեն զմարդն. վասն զի ամենաթիւ եղեալք աշխարհի, ոչ մարդկան միայն, այլ և հրեշտակաց. հրեշտակաց ամէրն նախահաստատեալ զիր լինի. այս ոչ պտուղ միայն է, այլ և զգուշութիւն: Յորժամ զանձն իւր եա յաղագս մեր, նա դատեսցէ զմարդն. քանզի յոլովկիական հանդէսն որք զմիջնորդանն ընծայեն 'ի միջի նախահաստատեցելոցն, ոչ սակս և ոչ նման ոչ ասանելով, այլ մեռեալ կատարածին: Ո՞չ յաղագս որոյ և 'ի մէջ անցեալ կայ, զի բարւոք միջնորդեսցէ. իսկ մեզ և ստատանայի ոչ 'ի մէջ կայ Մարիամ, այլ բարեր մեր է. և զի ոչ 'ի մէջ, այլ ընդ մեզ է բոլորովին. զմեզ 'ի մասունել 'ի հանդէսն մարդկայ, իսկ զնա կայսեաց. զմեզ եօծ իւղով ցնծութեան, և զնա կայսեաց անկրծ կապանօք զի խափանեսցի 'ի մարտն: Արդ եթէ տեսանէ զմեզ անկեալս, գնասջիք, ասէ, 'ի վերայ նորա. նմա զկնի յաղթութեանն գեհեն սպասանացս. իսկ եւ եթէ յաղթեմ պսակիմ. նա և թէ յաղթէ տանջի: Արդ զի ծանիցես եթէ յայնժամ մանաւանդ պատժի, յորժամ ընկալցի զյաղթութիւնն, զՄովամ ընկճեաց. և զինչ մեզանակ յաղթութեան. "Ի վերայ լանջաց քոց գնասցես և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց": Արդ թէ զերևելի օձն այնպէս պատուհասեաց, որո՛վք պատժովք տանջեսցէ զխմանալին. եթէ այնպիսի դատապարտութիւն գործոյն, քաջայայտ է եթէ յոլով եւս և մեծագոյն պատիժք արուեստաւորին: Օ՜ի զոր օրինակ հայր սիրուն զսպանող որդւոց իւրոց գտանելով՝ ոչ զսպանողն միայն պատժէ, այլ և զսուրն խորտակէ, նոյնպէս և Քրիստոս գտանելով զսատանայ որ սպան ըզմարդն, ոչ զնա եհեթ տանջեաց, այլ և զնոյն իսկ ըզսուրն խորտակեաց:

Ստահանալով պատուհեաւ մերկեսցուք զհանդէս, զի և զեն մեզ զգեցցց որ քան զամենայն ադէ պատուականագոյն եւս է, և քան զոսկի ազատանդ հզօրագոյն, քան զամենայն հուր ջերմագոյն և սաստկագոյն, քան

պատուիրանօքն զոր թեթեւացոյց։ Այլ ծանրացուցանէ ըն-ծանուցս զհնացս աղտեղին բնութիւն վասն նորին կարացս ոգէնք. մարդ եմ եւ ընդ դեւս մարտնչել հարկիմ. մար-մնով զգեցեալ եւ ընդ անմարմին զօրութիւնս կռուիմ. այսր աղաղակէ զզրահն ոչ յերկաթոյ, այլ յառաքինու-թեանց առնուլ մեզ. նորին աղաղակէ զվահանն ոչ ՚ի պղ-ղնձոյ, այլ ՚ի հաւատոյ յօրինեալ։ Ունիմ եւ զսուրն սրեալ զհոգւոյն բանն. նա արձակէ նետս ընդդէմ իմ, խոց եւ սաղաւարտ ունիմ. նա աղեղնաւոր է, եւ ես վահա-նաւոր եմ. ուսիր եւ առաջի զերկչոտութիւնս նորա։ Ո՛չ զեղծանողն մերձ երթալ ոչ համարձակի, այլ ՚ի հե-ռուստ ձգէ. վահանն ոչ արդեօք միայն կարգեաց ինձ, այլ եւ սեղանն պատրաստեաց՝ որ քան զամենայն զէն հզօրագոյն է, զի մի ազգատակացայց ՚ի պատերազմին. այլ փափկանալով յաղթեցից չարին։ Ո՛չ անզգի տեսցէն եթէ զսէր ՚ի տէրունական ընթրեացն եկեալ, իբրեւ առիւծ անտանելով հուր ՚ի բերանոյ արձակեալ, այնպէս փախ-չի ուժգնագոյն քան զամենայն հողմն. եթէ ցուցանես նմա զլեզուս յարեանն թացեալ, եւ ոչ կալ ձեռն կա-րասցէ. եթէ ցուցցես զշրթունս ներկեալ, իբրեւ զակոր գազան այնպէս յերեսս դառնայ։

Արժանես ուսանել զարեանն զայնորիկ զզօրութիւն. ըն-թացցուք զոր ՚ի նորա օրինակն ՚ի հին պատմութեանն Մովսիսական զոր կամէր առնել Աստուած զհարուածսն եգիպ-տացւոցն. զանդրանիկս նոցա հանդերձեալ էր սատա-կել, վասն զի զժողովուրդն անդրանիկն նորա արգե-լուին, եւ առաջ զի մի լիցի խառնակիլ ընդ եգիպտացիս Հրեայքն, վասն զի մի տեղի ունէր զնոսա։ Ուսիր յօ-րինակին զզօրութիւնս, զի ուսցիս զճշմարտութեանն զօրն. հարուած մեծամեծք հանդերձեալ էր գալ ՚ի մի-ջոցս եւ սատակել կամէր որք ՚ի տունսն էին։ Այլ զինչ Մովսէս. զենէք, ասէ, գառն ոչխար անարատ, եւ ա-րեամբ նորա շաղախեցէք զդրունսն։ Զինչ ասես. ա-րիւն անբան փրկել զբանական մարդիկ գիտէ։ Այո, ասէ, ոչ վասն զի արիւն է, այլ վասն զի տէրունական արեանն է օրինակ։ Զոր օրինակ պատկերք պղնձիք թագաւորականք անշունչք են եւ անզգայք, որ փախչին ՚ի նոսա մարդիկ՝ զշնչաւորս եւ որք ունին զզգայութիւն ապրեցուցանեն անշունչքն եւ անզգայքն, ոչ զի պղնձի

է, այլ վասն զի թագաւորի պատկեր է. նմանապէս և արիւնն այն անզգայ և անշունչ է. որք շունչ ունին մարդիկ՝ փրկեաց. ոչ վասն զի արիւն էր, այլ վասն զի արեանն այս օրինակ էր: Յայնժամ տեսեալ սատակիչն զդրունսն շաղախեալ արեամբն. և ոչ իշխեաց 'ի ներքս ընթանալ. և արդ եթէ տեսցէ սատանայ ոչ 'ի վերայ դրանց ցանեալ զարեանն զօրինակի, այլ զմտաւորս հաւատացելոցն՝ զշաղախեալ զարիւնն ճշմարտութեան 'ի դրունս քրիստոսազգեաց տաճարին, ո՜չ առաւել եւս զինքն 'ի բաց արգելցէ. քանզի եթէ հրեշտակ առանելով զօրինակն պատկառեաց, առաւել եւս եթէ սատանայ տեսցէ զճշմարտութիւնն փախիցէ:

Կամիս և այլուստ տեսանել զարեանն զայսորիկ զզօրութիւն. Հայեաց ուստի հոսեցաւն 'ի սկզբանէ զաղբերն ունելով 'ի վերուստ 'ի խաչին տէրունական 'ի կողէն: Վասնզի 'ի մեռանելն, ասէ, Յիսուսի մինչդեռ տակաւին 'ի խաչին էր՝ մերձեցեալ զինուորն խոցեաց զկողն տիգաւ, և ել, ասէ, ջուր և արիւն. մինն մկրտութեանն օրինակ և միւսն խորհրդոյն. յաղագս որոյ ոչ ասացեալ է արիւն և ջուր, այլ ջուր յառաջագոյն և ապա արիւն. զի նախ մկրտութիւնն է և ապա խորհուրդն: Խոցեաց զկողն զինուորն այն. փորեաց զորմ որմոյ տաճարին. և ես զգանձն գտի, զմեծութիւնն առի: Նոյնպէս և գառամբն եղև. Հրէայքն զենին զոչխարն, և ես զփրկութիւնն որ 'ի զենմանէն էր ընկալայ:

Ի կողէն ել ջուր և արիւն: Մի՛ զանց առներ վարկպարազի զխորհրդովն, սիրելի. քանզի ունիմք և այլ ինչ ասել խորհրդական բան: Ասացի եթէ մկրտութեանն օրինակ և խորհրդոյ էր արիւնն այն և ջուր՝ յերկուց յայսցանէ եկեղեցի ծնաւ, աւազանաւ վերստին ծննդեանն և հեղմամբ հոգւոյն որոյ 'ի ձեռն մկրտութեանն և խորհրդոյն որ 'ի կողէն էր: Ի կողէն արդեն զեկեղեցի արար Քրիստոս, որպէս 'ի կողէն Ադամայ զԵւա արար. յաղագս այսորիկ և Պաւղոս ասէ. "Ի մարմնոյ նորա և յոսկերաց նորա", զկողն զեկուցանելով: Զի զոր օրինակ զկողն յայնժամ էառ Ած և ըստեղծ կին, նոյնպէս և ետ մեզ ջուր և արիւն յիւրմէ կողէն և ստեղծ զեկեղեցի: Զոր օրինակ յայնժամ 'ի հիացմանն զկողն էառ 'ի քուն լինելն Ադամայ, նոյնպէս

և այժմ զինի մահուան զջուրն և զարիւնն նոր. և որ յայտնեալ 'ի հիւանդութեան էր, այն այժմ մահ. զի առանձինն եղեւ մահու այս քան է: Տեսէք զհարց յիմքն զհարն մաւուորեաց Քրիստոս. տեսէք որով կերպարանաւ զմեղ զանմահութեան կերպարանէ. և նովին կերպարանաւ զզգոյացեալ և կերպարանեալ. քանզի զոր որինակ կին ընծայեալ խոնարհարհեալքն կերպարանէ և կաթնաքն, նոյնպէս և Քրիստոս զսրբոյ ծննդեան իւրն խոնարհ արարեալքն կերպարանէ:

Այս արդ զի այսպէս արդարեւ մարմինեցաք, յորժամ զաւզաւք զմնեցին. և յիշեցուք զանխրատն զոր եղաքն ընդ նմա Ձեռ առեալ և որք այժմ 'ի խորհուրդ են եկեալ, և որ կանխեալ նախ քան զզաւզամ առն հաղորդեցանն. հաւատարհ առ անմահութեան ձեռ է բանս, վասն զի անմահքեան խեկ եղաք ընդ նմա զանխրատ. զրեցաք ոչ զեղել, այլ հոգւով. ոչ եղեգանեայ, այլ լեզուաւ. զի այսու խեկ եղեգանեայ որ առ ամձ ուխտն գրի. յաղագս այսորիկ և Պաւղոս ասէ. "Մեղու իմ եղեալ զայնի առաքածքէ": Խոստովանեցաք զնորա զանէրութիւնն, և ուրացաք ըշբանութիւնն սատանայական. այն ձեռագիր եղև, այս ուխտ, այս կտակ: Տեսէք մի զարձեալ պաբատական լիցուք այսպիսւոյ կտակի: Այնն մի անգամ Քրիստոս և եղիա զմեր հայրենի ձեռագիրն զոր գրեաց Ադամ. նա զանխրեալն 'ի նմանէ եսոյծ զպարտուցն, և մեք զվաղյն անձեցուցաք: Ոչնչի այսորիկ մեղացն նշանք էին այն, և մեղք և մահ և որինացն զատապարտութիւն. զամենայն վերացոյց Քրիստոս և եթող, և գրէ Պաւղոս առելով. "Զձեռագիր մեղաց մերոց որ էր հակառակ մեր. զայն եբարձ 'ի միջոյ բևեռելով ընդ խաչին": Ոչ ասաց ջնջեաց զայն և ոչ խանգարեաց, այլ բևեռեաց ընդ խաչին, զի և մի հետք նորա մնասցեն. վասն այսորիկ ոչ ջնջեաց, այլ պատառեաց. քանզի բևեռք խաչին պատառեցին զայն և ապականեցին, զի անպիտան լիցի այնուհետև. ոչ յանկերան կամ զաւդս, այլ 'ի մէջ աշխարհի և 'ի բարձրութեան խաչին զգեծուածն արար: Տեսցեն, ասէ, հրեշտակք, տեսցեն հրեշտակապետք, տեսցեն վերին զաւրութիւնքն, տեսցեն և չար դևքն և նոքին սատանայ՝ որք արարին զմեզ պարտականս այսպիսեաց պարտուց յանդիմանեալ փախստականեսցեն: Պատառեաց զձեռագիրն, զի մի յետ այսորիկ 'ի վերայ մեր զիմեսցեն:

Այս արդ զի ամենեքեան արտասուեցան, վասն Թովմայի զի մի վայր ժողովեալ այլ ձեռնարկէր. քանզի երկրորդ խորհ ոչ է, և ոչ երկրորդ Թագաւորութիւն. ուսուցանել վերստին ծննդեանն է, բայց ուսուցանել ոչ երկրորդ Թագաւորութիւն։ Որդ մի աշխարհագրացիք մեզ։ Յաղագս այսորիկ եղեւ յԱդրիանոսէ, ով մարդ, մի ևս խնչ զԱդրիանոսեան և զԱդրիանոսեանն խնդրեցեր զարքն. մի ևս զխաչն և զաղբիւրս յիշեցեր. խոս և արդեօք մերձակայ կենդանութեան իւրք են. զի և նոյն խնդրն ամենն նորա քան զմեռեալն ամենն՝ ոչ այլ խնչ է՝ բայց եթէ կուռ։ Տեսեր և դու այժմ զմեծամեծ աքանչելիսն, տեսցես և զպայծառագոյն քան եթէ յայնժամ Հրեայքն որ ելին յԱդրիանոսէ։ Ոչ տեսեր զՓարաւոն զխնայքն հեղձեալ, այլ տեսեր զատանայ հանդերձ զխնայքն ընկղմեալ։ Ընցին նոքա ընդ ծովն, անցեր և դու ընդ մահ. ազատեցան նոքա յեգիպտացւոց, ազատեցար և դու 'ի դիւացն ծառայութենէ. 'ի բաց ընկեցին զկռապաշտութիւն խոյս Հրեայքն, և դու յաւէտ ևս զդժնդակագոյն ևս զմեղս։

Ոխորհեաս և այլուստ ուսանել թէ զիարդ մեծազօրութիւն ևս արժանաւոր եղեր դու։ Հրեայքն յայնժամ ոչ կարացին տեսանել զերեսն Մովսէսի զփառաւորեալ, և այն զծառայակիցն և զազգակիցն. իսկ դու զերեսն Քրիստոսի 'ի փառսն տեսեր. և գոչէ Պաւղոս ասելով. "Մենք բացերեսն զփառսն Տեառն ամենեքեան տեսանեմք"։ Ունէին նոքա զՔրիստոս յայնժամ զհետ երթեալ, այլ առաւել ևս մեզ այժմ. նոցա յայնժամ Քրիստոս զհետ երթայր յաղագս շնորհին Մովսէսի, բայց մեզ ոչ վասն շնորհի նորոյ Մովսէսի միայն, այլ և յաղագս մեր խոկ հաւանութեանն. նոցա զկնի Ադրիանոսի երկին, ունիմք և մեք զօրավար քաջ, ունիմք մեք զմեծ առաջնորդ, ունիմք զՄովսէս մերձաւոր և զօրավար։ Զինչ էր նշանակ Մովսէսի. "Հեղ էր, ասէ, քան զամ մարդ որ 'ի վերայ երկրի"։ Զայս ոչ անսխալ և յաղագս Մովսէսի այսորիկ ոչ մեղանչէ. քանզի և 'ի սորա շքեղութեան հօգի հեղութեան նորա. հօգի հեղութեան ունէր զանձն. Մովսէս յայնժամ 'ի վեր ձգեալ զձեռս յերկինս, և խնդրէ մաննայ հաց զհրեշտակաց, և բերէ 'ի խոնարհ հաց երկնային. նա եհար զվէմն և եհան զջուրս վտակս. նա մերձէնոյ 'ի գեղջեմս, հարկանէ զհօ-

գեալ զկեանս և աղօթիւքս հօրն մերոյ բազմեցուցանէ ։ Այսպէս այսօրինակ կարգս աղօթից ի մէջ կայ սերբանս, զի ամենայն ուստեք հօտք՝ յամենայն կողմանց հասեալ աղօթիւք. զի վայելեսցեն ի վերկութեան փառաց ։ Այլ արդ զի սրբոյ իցէ աղօթիւքս, և ընդ որս սերբանս եր է բարեաց. և ամենայն ուստեք բազմեն մեզ հովուապետին շնորհօք, հանդերձ Քրիստոսիւ արարեալ մանկացուք մեծաց զիտակցութեան, զի տացուք զողորմութիւն և զօրացուք շնորհս ի գլուխ ժամանակի օգնականութեան շնորհօք տեառն մերոյ, որում փառք հօր հանդերձ սուրբ հոգւովն յաւիտենական յաւիտենից. ամէն ։

## ՅԱՆԴԱՄԱԼՈՅԾՆ

“Յետ այսորիկ տօն էր Հրէիցն, և ել Յիսուս յԵրուսաղէմ. և անդ էր աւազան մի հնգասրահեան, և անուն նորա Բեթհեզդա. անդ անկեալ դնէին բազում հիւանդք, կոյրք, գօսացեալք, անդամալոյծք, կաղք, կոմնացեալք ։ Այլ անդ էր այր մի որոյ երեսուն և ութ ամ էր հիւանդութեան նորա” ։ Ահա չարութիւն որ անցանէ քան զամենայն. ամենեցուն տօն, և նմա միայն տրտմութիւն ։ Ի մէջ որ ի պատահարաց, և է մէջ որ յայլոց թշուառութեանց տոկորութեան մեծամեծս ուրախ լինել ի տօնիս. ոչ միայն ի պէտս անձանց, այլ և օտարաց առնել զողորմութիւն. իսկ ոչ միայն զաւուրցն տօնութիւն զթափել յամենայն վէրասցեալս, և տալ յամենայն մշտապէս հիւանդս ։ Սոյն ոչ ի պատուիրանի, այլ ի բնութեան հատատեաց տն՝ ձանձրացել զկամս մեր. Ասէ Առաքեալն բնութեանն և անաշութեան օրինացն խրատ կրկին պարտ էր նոցա զգաստանալ, բազմացեալ են պատճառք կարօտեան ։

Երեսուն և ութ ամ էր հիւանդութեան նորա. քանի՜ ամք անցեալ էին ի վերայ, և կամ քանի՞ տրամութք աւուրց յորում ոչ կարաց գտանել բժշկութի՛ ։ Որպէս ցուցանէն մեզ գիրք պատմագրաց երբայեցւոց՝ Բեթհեզդա, այսինքն աւազանք հնգասրահեանք Սողոմոնի շինեալ ի տաճարին, պարապեալ ի պէտս զոհի-

կերպացն հեծող գաւառ Չմաց, որ զխորտակեալն լուանային և զձեռացն ոտիցն. և զհինգերորդն պատուականագոյն քան զչորեսինն, վասն զի առողջութիւնն պարգեւէր և ձգեր զազգն յառաջ, զի մի վրիպեսցին 'ի ճշմարիտ կենացն յորժամ եկեսցէ հասցէ տէր արարածոց առ նոսա ճանաչել զաւեղին նշանակագործ սքանչելեացն: Ուրբաթու ուրբաթու իջանէր հրեշտակն և շարժէր զջուրն. հազար և հինգ հարիւր և ութսուն և մի ուրբաթք էին երեսուն և ութ ամն, և ընդ այնչափ երկայնութեանն ոչ ոք գտաւ առողջացած որ առնուլ զհիւանդն 'ի ներքս ածիցէ առ 'ի յընդունել զբժշկութիւն ջուրցն:

Նման էր չարութիւնն նոցա, և անապատ աւազինութիւն հիւանդին. ոչ հեռացաւ 'ի տեղւոյն, և ոչ զյոյս իւր եհատ յանկնկալութենէ: Պաղեն գիրք զհամբերութիւնն Աբրահամու, բայց սա ոչ ինչ պակաս 'ի նմանէ. զԱբրահամ ձայնն էր 'ի վերուստ քաջալերէր և ասէր. «Ելք և զաւակի քում տաց զերկիրս զայս 'ի ժառանգութիւն»: Իսկ հիւանդս այս էր անյոյսթար. ոչ ոք յառողջաց հիւանդացն եկն և նստաւ առ նա սփոփել և զբօսեցուցանել և կամ յոյս առաջի դնել զիւրս պահականութեանն: Պարշեցան 'ի նմանէ մերձաւորքն, և զանց արարին 'ի նմանէ քահանայապետքն. արհամարհեցին զնա քահանայքն. չդարձան 'ի նա ղետացիքն. ոչ ընկալան զպաշտամանս նորա պաշտօնեայք տեղւոյն. չարարին փոյթ զնմանէ ժողովրդականքն. չգտաւ գութ յամենեսեան, ոչ յայս և ոչ 'ի կանայս, ոչ 'ի մերձաւորս և ոչ յօտարս. ատելի թուեցաւ յայս ամենեցուն. յերկար հիւանդութիւնն զազրացոյց զնա, յորում չիք ողորմութիւն և յառողջ մարմնոյն հիւանդացեալ զազրուածն, մանաւանդ յորմէ ոչ գտցէ փոխարէնս ըստ մարմնոյ:

Արտասուաց է տեղիս և ողբոց՝ ճառիս պատմութիւնս. և որ ոչ այսպէս այսու հետև ասէ, և նա մի 'ի նոցանէ տեսանէ: Մաշեցան ծակոտեցան անկողինք նորա, և ողորմելի էր տեղին ուր անկեալ դնէր, և յումեքէ ոչ գտաւ ողորմութիւն: Այլք ոչ տեսանեն, լսելով խանդաղատէին 'ի տառապանս ուրուք: Չար է կուրութիւն մտաց քան զկուրութիւն աչաց մարմնոյ. մտաւ լիցի զայս փորձել յանձն իւր, այլ փութասցի ուսանել զառաքինութիւն

հողեալ, ընդ նմին ստացի զանտրտունջ համբերութիւնն, որպէս անտանելով զայլն աղքատաց: Տեսան մարմինք անօգնականք նորա, և մհատութիւն ամենեքին ոչ գտաւ յաչս նորա. անտանելի զչար ընկերակից իւր, ընկուրացն փարելին աչացիքն, շուրջ զկապոցն արտաքսունքըն, զօսացելոցն 'ի ստրաւ կայլն հզօր երկնաւորացն սա 'ի պատրաստութիւն ընդոյն յուղելոյ. ամենայն հիւանդացն իւրաքանչիւր պահակ, զնոյն և զխուռն բժշկութեան. բայց ողորմ և եղկելի և անպատասխանելի անտանելն զայլս զայս խնչ որ 'ի մարդ ապրստան յամենայն կողմանց:

Այնք և եկաց լոյս կանթեղացն. մնան այլոցն էր անտանելի, և մխիթարութիւն 'ի նշխարաց կերակրոյն զոր տայլն նմա 'ի սփոփանացն: Միշտ էր նմա 'ի տուընջեան, զի ոք ոչ արբուցանէր նմա ջուր 'ի ծարաւ. և շարիք 'ի ժամ գիշերի, զի չունէր զոք օգնական 'ի ժամ տառապանաց: Յորժամ ամենախելին մարդիկն թէ մի քան զընկերն մազ 'ի ջուրն իջանիցէ, և նա հանապազ յուսայր, և նա հանապազ վրիպէր: Զանէր կերս 'ի քաղկի, չգտաւ մարձկան տրտսուքուա, չողորմեցաւ զյիշխանացն. հատեալ էր քուն յաչաց նորա, բարձեալ նիրհ յարտևանաց նորա. և թէ երբէք զգող ունէր, 'ի գիշերի ընդունէր զառաջնութիւն, և 'ի լուծի 'ի նոյն ցաւոն անտանէր զինքն տառապելոյ աւուրն. և եթէ էր նմա մխիթարեցեալ վաղու աւուրն, և եթէ էր նմա 'ի նոյն վարանս գտանել, հրեշտակք հոգայն 'ի վերայ տառապանաց նորա՝ զարմացեալ ընդ անգութ քահանայքն:

Ունանելին ամենք 'ի ժամանակս հաշտութեան զանձրև, և յԱրայէլ ոչ գտաւ գութ ողորմութեան. զթոյ զաղան 'ի գազան երամակից լինել առ միմեանս 'ի նեղութեան, և մարդիկ առ միմեանս ոչ առնեն ողորմութիւն. կանայք ծերացեալք ընկալան զծնունդ ըզանչելեօք, այլ սա ոչ գտանէր ողորմութիւն յումեքէ: Ո՜վ էն զեւք և չարչարիչք, չարագոյն քան զգեւս անողորմ մարդիկ. որ չար յանձնի է քան զչարութիւնս մեր. Ըղորմելի ումեք. առաւազգաւ բարերարութիւնն ոչ, զի յանձն արարցէ զանողորմութիւնս մեր: Ճշմարտեալ զխօսաց այլն երանելի եթէ 'ի մերաց եղեն պատմութիւն.

և մահք. ընդ մեզ կռուէր յայտնի և ծածուկ: Դար-ձեալ և երևէր իսկ յայտնի թշուառութիւնն. մաշեալ և պատառեալ անկողինն. ամբաստանէին հաւ 'ի հա-ւու վերայ սարդիոստայնքն: Այրի անողորմ էր տեսա-նել զանսեղանն, զանաթոռն, զանաշտանակն, զթախ-ծութիւն երեսացն, զգունոյն դեղնութիւն, զփաղե-քութիւն դեղնութեան տարոյն, զանխնամն, զանտառածն, զանյուսութիւն ձեռաց, զբոլոր աղտ մարմնոյն զեն-քեալք ունէր, զանմանարն, զանվերարկուն, զանոգն, զանուրեքն, զանապահակն, զամենևին անջատեալն յա-մենայն ումեքէ, անցեալ ըստ ակնկալութեան կենաց աշխարհիս:

Իսկ Յիսուս իբրև ետես, ասէ ցնա՝ եթէ ողջացիս 'ի հիւանդութենէդ: Իսկ զինչ այսմ տացէ պատաս-խանի այրն. վասն զի ոչ սովոր էր զայսպիսի օրհնու-թեան բարբառ լսել, ոչ ասաց՝ կամիմ ասէր, ողորմեաց ինձ. այլ անոյր յառաջին խորհրդոյն ընթացաւ որում ակն ունէր. յոր յուսայրն, որում այնչափ ընդ երկար մնայր, ասէ. "Տէր, պահակ իմ ոչ գոյ, զի յորժամ ջուրքն յուզեսցին արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ թէ սակաւիկ մի շարժեսցայց, այլ ոք քան զիս վաղագոյն իջանէ 'ի ջուրն": Ոչինչ խօսիս, այր դու: Ասէ. "Արի առ զմահիճս քո և երթ 'ի տուն քո": Արդ եցոյց եթէ ամենայն մարդ պանդուխտ է 'ի կեանս աշխարհիս այսորիկ, և բնակեալ են յիւրաքանչիւր հի-ւանդարան պիտանաբար և ոչ հաստատութբ: Նայց այնոցիկ որ կարացին զգլուխ իւրեանց 'ի վեր առնուլ և թեթևանալ յամենայն ծանրութեանց բեռանց սորա, առողջացեալք և զգաստացեալք փոխանակ մահճացն հոգիքն բառնան զմարմինսն և գնան, 'ի յերկար հի-ւանդութենէն հանգչին, և դադարեն աստէն յաշխար-հիս յուսով շաբաթապահ ամին, որ կայ պահի ամե-նայն արդարոցն նոցա որք արժանի եղեն անսուտ խոստ-մանցն նոցա:

Արդ առեալ այրն զմահիճսն ընդ անձին՝ երթայր ընդ մէջ քաղաքացն. լուռ էր բերանն 'ի խօսից. մահիճքն անձայնութեամբ աղաղակէին զգաւանչելիսն նոցա ընդ ժա-մանակին առ մի այրն, անուրի և առ այսր բոլոր մարդիկ. զի եթէ կամի և եթէ ոչ կամի, մահճօք յուղարկի 'ի

գերեզմանն. նա 'ի գերեզմանէն 'ի հրապարակս շրջէր մահճօք, 'ի խնդութենէն ոչ կարէր իմանալ զսքանչելեացն ումեք: Նոյն դու եթէ խոստովանութեամբ կայցես յաշխարհիս, փոխանակ զդիականն դագաղաւորացն հրեշտակք յերկնից եկեսցեն ընդ առաջ հոգւոյդ, և որպէս զՂազարոսն զքոյդ ընկալցին 'ի գոգ հայրապետացն Աբրահամու:

Այլ կայր և նախանձ և անհամար փառասիրութիւնն. զինչքն ոչ տեսանէ, և առ այլս զարմանան ոչ խնայոյ: Այս տեսեր և յայլ չերկնչես: Ամենաթագաւորքն քննեցեաւեալ տեսանել այնպիսին նախ. որպէս Հրեայքն ընդ առաջինն ոչ ամաչեցին, ընդ երկրորդն ոչ զարմացան. Թողին զմեծ զսքանչելիսն, սկսան զպահպանութիւնս պահանջել. փոխանակ հարցանելոյ զնա թէ որպէս ողջացար, 'ի ձեռն իմէր արդեւք և բժշկեցար. և զի շաբաթ չէ օրս, ձեռն 'ի շաբաթու չկարէր տալ քեզ զառողջութիւն. կամ թէ բժշկապետն Զաւրաւոր եկեալ է յաւտար քաղաքէ, և այդպէս առատ առատ ետ քեզ զբժշկութիւնդ. կամ թէ յերկնից ինչ նշանք երևեցան, որպէս սովոր է Ած առնել ազգիս մերում 'ի ձեռն մարգարէից մեռելոց յարութիւն, և կամ զկուրաց ինչ զլուսաւորութեան փրկութիւն: Փոխանակ այսր ամենայնի հարցանելոյ, կայր աչօք և կայր մտօք մատուցեալք առ այն տեսանելիս և ասէին. “Չէ պարտ քեզ այսօր առնուլ զմահիճս քո և շրջել 'ի հրապարակս”:

Արդ տեսես այն եթէ զաղանաբար զնա 'ի վերայ յարձակեալ, երկեաւ յահէ բարկութեանն. և զոր ոչ կամէր պատմել, սկսաւ ակամայ ասել. ասէ. “Այր առաց ցիս՝ արի առ զմահիճս քո և գնա”: Պատասխանեաց և այլ ևս. ոչ կամեցան հարցանել զնա ուղղակի թէ ո՞րպէս բժշկեաց, բայց եթէ գեղջակք. այլ ասէին՝ թէ ո՞վ է որ բժշկեացն զքեզ: Նոյն նա ասէ. ես ոչ գիտեմ. և զի բժշկեաց զիս, ողջութիւնս յայտ առնէ. եթէ յուրաստ կամ, մահիճքս աղաղակեն զինէն. եթէ երկուանցդ ոչ հաւատայք, երթայք անդրէն 'ի Բեթհեզդա. եթէ անդ գտանիցէք զմահիճսն և զհիւանդն 'ի վերայ, զիս որպէս կամիք չարչարեցէք, զի ես իսկ ամուր եմ տառապանաց: Ապա եթէ ես այն հիւանդն եմ, և մահիճքդ այն է յորոյ վերայ անկեալ զինէի զերե-

տուն և զութ ամ, և 'ի ձէնջ ողորմութիւն չգտի, զանէ այսօր ողորմեցարուք ինձ և մի՛ սատակէք զիս 'ի տարապարտուց եթէ զշարքաթուս վրէժս խնդրէք։ Ես եթէ եղէ կրկնապատիկ 'ի գաշտս, չարհամարհեցի զօրէնսն Մովսէսի, չգտայ 'ի գողութեան որպէս զՄաքարն. մի՛ վասն իմ զծածուկ նորա յիշէք, շնորհեցէք ինձ զնորագիւտ կեանս։ Զայս բանս ասացեալ այրն, ընդ արամբքն թաքուցեալ 'ի տաճարին անկաւ։ Իսկ Յիսուս թեպէտ և խօսս եռ յամբախոհ անտի, եկն եգիտ զնա 'ի տաճարին և ասէ. «Ահաւասիկ ողջացար, այլ մի՛ ևս մեղանչեր, զի մի՛ չար ինչ անցք անցանիցեն ընդ քեզ»։

Զի՞նչ արդեօք իցէ հրաման սաստիկ ահեղ ազդաչելեացն. զբոլոր շնորհս ձրի արար նմա, և յետ առողջութեանն յայժ սպառնայ նմա ասելով՝ զի մի՛ չար անցք անցանիցեն ընդ քեզ։ Թուի ինձ թէ ոչ են բանքս այս պատիժք պատուհասի, այլ խրատ իմաստութեան ուսուցանէ, և զառաջին յանցանսն մարդոյն յիշեցուցանէ՝ եթէ 'ի մեղացն եղեն ախտամութիւնքն և մահք. զերկրորդ սիրոյն շնորհս անմոռաց յիշատակս անկէ, և բժշկելոյն յայտ առնէ եթէ ոչ են կեանք աշխարհիս բաւանդակ արդարութիւն և անմեղութիւն։ Իսկ զի դարձեալ ասէ զի մի՛ չար ինչ անցք անցանիցեն ընդ քեզ, զահաւոր գեհեննէն յիշատակէ և զբորբոքումն անշէջ հրոյն, զորդանցն անմահից, զանսպառելի կրճել ատամանցն, զլացն անհատական, զահագին մռնչիւննն, զանգադար հեծութիւննն, զգբոյն ապականութիւննն, զխորին խաւարայլին տեղիսն, զտապ տապակին, զբոցակէզ զանձուկն, զանողորմ զհարուածսն, զչահճոյցն զանաչառութիւն, զվիհն ահագին, զանանցանելի արգելանսն, զկրճինս անքակելի, զանգութ և զանողորմ տարտարոսն, զանանձուկ և զանելը ժամանակն, զարդարոցն չհայել 'ի մեղաւորս, չհայել 'ի տառապանս մարդկան, հօր չողորմել, որդւոյ չարգահատել, սուրբ հոգւոյն չլինել բարեխօս, հրեշտակաց զերեսս 'ի բաց դարձուցանելով, առաքելոց և մարգարէից, մարտիրոսաց և ամենայն կատարեալ առաքինեաց անփոյթ արարեալ վասն մեղաւորացն. իբրև զի չեմք բաւական պատմել զնեղութեան ժամանակին դառնութիւնն, արտասուօք զկեանս մեր վճարեսցուք։ Այս են առաւել չարիքն որ անցանելոց են ընդ մարդս պատուիրանազանցս։

Digitized by Google

Ո՛վ, եղբարք, մի՛ պատրեսցեն զմեզ ժամանակեայ հանգիստքս, զի որպէս զերազ գիշերոյ են կեանքս մեր. Ո՛վ արդ այսուհետև պիտոյացի մեզ թափծեալ կեանք աշխարհիս. այլ զանէ առ ապագայս աղօթանօք լիցուք, առ սատար հիւրընկալք. մարդք սուրբք եղիցուք, և աղաւթք և աղաւօրդիք, անծառայական բարութք. զինել 'ի վերոյ քան զգրաւորական օրէնսն հրէից. 'ի պահս առանց վեհերելոյ, 'ի յաղօթս առանց ձանձրանալոյ, 'ի հաւատս աներկբայս, սէր առանց ատելութեան, 'ի սըր-բութիւն հրեշտակականման։ Ի վերայ այսր ամենայնի զանձինս մեր դիցուք 'ի վերայ վկայութեան տեառն մե-րոյ Յիսուսի Քրիստոսի, և ըստ նորա պատուիրանին վախճանեսցուք յաշխարհիս յայսմիկ, և ոչ զարհուրեցու-ցէ զմեզ ահ գեհենին և դժոխոցն, և մի՛ մաշեսցէ զմեզ բոցն բորբոքեալ, և մի՛ պիտոյացի մեզ անդ ջուր 'ի ծա-րաւու. այլ ընդ Աբրահամու հանգերձ ամենայն սր-բովք ընդ առաջ եկեալ ընկալցի զմեզ յիւր գոգն հայ-րենի։ Որով լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր, միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

## Ի ԿԻՆՆ ՄԵՂԱՒՈՐ ՈՐ ՕԾ ԶՏԷՐՆ ԻՒՂՈՎ

Մոլորութիւն է աշխարհական երաժշտութեանց փողով և քնարաւ և նոյն նմանեօք զուարճացուցանել զերգասիրաց[1] զմարդկան միտս. նոյնպէս և հարսանիք փողովք համեմատեալ յարդարին. նոյնպէս և հովիւք փողովք յանկուցանեն զխաշանցն հօտս. նոյնպէս և 'ի կոչունս երախանացն առ 'ի նոսա խրախճանագոյնս առ-րադրին ծափքն[2], և փողքն և քնարքն առ կաքաւիչ յորդորեն։ Իսկ արդ աշխարհական երաժշտութեանց հնարք յայսոսիկ ունին զպարապմունսն. բայց եկեղե-ցական համաձայնութեանն գոհութիւն ոչ համանգէտ

1 Յերից օրինակաց մին Երգա-ղանիրաց։ 2 Օրինակ մի ծափսն։

պնոցիկ, թէպէտ և մի իցեն յերկաքանչիւրսն փողոյն և քնարին անուն։ Այն յաշխարհական երաժշտականն է, իսկ այս յեկեղեցական դասուն. անդ փող երգողական զհանդարտութեան նուագս երգելով, իսկ աստ փող ա̃ծայնին զխաղաղութեանն լռութիւն պատմելով. վասն զի փող և բանն Ա̃յ պատմի վասն կարգօք և յարդարմամբք ունելով զվկայիցն զքաղցրութիւն։ Անդ քնարիցն արուեստք և աղեխնդութեանցն պատճանք, իսկ աստ քնար հոգևորական օգտութեան յանկուճն. անդ բարբառք մասն չքնաղականք, իսկ աստ բարբառք տիրաբանեալք. անդ ծնծղայք պղնձակուածայք, իսկ աստ մարգարէական երգք. անդ թմբուկք կաշեօք մեռելոտեօք ձկտեալք, իսկ աստ թմբուկք առաքելական կարգօք կենդանագրեալք։ Վասնզի ոչ միայն յաշխարհական երգսն, այլ և յեկեղեցական երգսն է փող և քնար և բարբառք և ծնծղայք և թմբուկք և որ նմանն սոցին։ Այլ ո՛վ է վկայ այսոցիկ. հաւանեցուցանէ զքեզ միշտ երանելին շնորհօք երգող ազգին Դաւիթ, որ զփող ա̃ծգիտութեանն քնարաւ հոգևորութեանն խառնեալ վարդապետական բանիւքն, անշփոթ դաշնելով քրիստոսասէր լսողաց զբարեպաշտութեան նուագս, և տակաւին ևս այսպիսեօք բանիւք աղաղակէ ասելով. "Եթէ զընտրութիւն ինչ բարբառոյն ոչ առացից, զիա՞րդ ծանուցեալ լինի հարուածն փողոյն կամ քնարին". այսինքն եթէ ոչ լսա պարտին, և յայտնաբար թարգմանեսցի։ Զինչ հայր, զինչ որդի, զինչ հոգին սուրբ, զինչ բանն, զինչ բարբառն, զինչ փողն, զինչ քնարն, զիա՞րդ հաւատարմացի բարեպաշտութեանն կարգք. եթէ ընտրութիւն բարբառոյն ոչ տայ, զիա՞րդ ճանաչիցի փողոյն հարկանելն կամ քնարին։ Բարբառ ասէ զբան վարդապետութեանն, և փող հարեալ զբանն տեառն, և քնար հարեալ զհոգւոյն հնչումն։ Արդ լուր իսկ անդէն Ղուկասու աւետարանչին գրչելոյն։

"Աղաչէր, ասէ, ոմն 'ի փարիսեցւոցն զՅիսուս զի ճաշկերիցէ ընդ նմա. և մտեալ 'ի տուն փարիսեցւոյն բազմեցաւ։ Այլ ահա կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր. ուսեալ թէ բազմեցաւ 'ի տան փարիսեցւոյն, առեալ շիշ մի իւղոյ ազնուի, և կացեալ առ ոտսն Յիսուսի՝ արտա-

արտասուօքն իւրովք թանայր զոտս նորա, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր, և համբուրէր զոտս նորա և իւղովն օծանէր։ Այս անուանեալ փարիսեցւոյն որ կոչեացն զնա, ասէր յինքեան. սա թէ մարգարէ էր, ապա գիտէր արդեօք թէ ով և որպիսի ոք կին մերձենայ 'ի սա, զի մեղաւոր է"։ Տես խիստ զփարիսեցւոյն թագուցեալ կարծիսն։ Փարիսեցին յանձին իւրում էած զմտաւ, ոչ շրթամբք պատմեաց, և յառաջ քան զմտաւ ածել փարիսեցւոյն եհաս 'ի սիրտ մեր հանդերձեալ փարիսեցւոյն մտածութիւնքն, և ոչ փարիսեցւոյն առաջնեալ լուաւ տէրն և ոչ կնոջն ինչ մեղաւորի։

Վասնզի եթէ կինն եած զոտսն իւղով և արտասուօքն թանայր և հերովն ջնջէր և յանձնարարէս համբուրէր զծեալ իւղով զոտսն սուրբ, զայս յայտ առնէ անտարակուսելի. բայց և ոչ մի անգամ յիշեաց եթէ խոստացաւ ինչ և կամ աղաչեաց կամ աղաղակեցաւ։ Եւ ինչ յայտնապէս առ զով ինչ ասէ կնոջն մեղաւորի. զի լռութեամբ անխաւս առաջի աստուծոյ մերոյ, ոչ աղաչեաց 'ի մեր որպէս քանանացին, և ոչ գոչեաց որպէս զՄարթայն, և ոչ աղաղակեաց որպէս զՄարիամն, և ոչ խօսեցաւ ինչ որպէս սամարացին. լռութեամբ առաջի զաղաչանսն. գիտէր հաստատութեամբ եթէ զկարգ լիած ցուցանելով սրտի։ Արժանեաց որդիական կնոջն առաւ-առնելն. զի որպէս նոյն ոչ բարբառեցաւ 'ի մեր՝ բայց միայն խորհէր յինքեան ասելով, եթէ "միայն հասից 'ի քղանցս հանդերձից նորա ապրիմ", նոյնպէս և կինն մեղաւոր, ոչ ինչ շրթամբք բարբառեալ՝ այլ առ անձինն խորհէր ասելով, եթէ միայն թողլ տացէ ինձ համբուրել զոտս վասն իմ մարգարեացեալ զոտս սուրբն, յամենայն մեղաց վճարիմ 'ի բաց. որ և եղև իսկ։ Վասնզի սուրբ սրտի եղելոց խնդիր որ առաջադրեն զկարգութիւնն՝ մերձ է։

Մի՛ որ ոչ խոստեցի, ոչ որ ոչ զարմանացի. փարիսեցին զտէրն 'ի սեղան կոչեաց, և կինն մեղաւոր մեծապէս յափշտակեաց զուրախութիւնն՝ յառաջ ճաշին ճաշեալ նորա։ Արդարև 'ի հանճարն ճաշի էր կինն. խոստովանութեամբն էր յանդուգն. 'ի բարիսն էր անպատկառելի. 'ի ձեռն օրինակացն տուեալ յանցեալն՝ նախքեալ և հաշտեցուցեալ զտէրն մեր. արդարև 'ի հանճարն ճաշի էր

կինն ։ Ծանօթ էր յաշխարհաւորս ուսանողացն, անծանօթ ևս եղև յապաշխարողական բժշկանոցին ․ յայլ փոխանակ այլոյ փոխեցաւ անծանօթութիւնն ։ Առաջին անծանօթութիւնն 'ի պատրաստս երիտասարդաց, իսկ երկրորդ անծանօթութիւն 'ի խնդութիւն հրեշտակաց ․ քանզի ասէր իսկ տէրն, "Ուրախութիւն լինի հրեշտակաց յապաշխարութիւն մեղաւորի միոյ"․ յայլ փոխանակ այլոյ փոխեցաւ յանծանօթութիւն կինն ։

Յորժամ 'ի պատանեկական տղայութեան ամաւքն էր՝ յայնժամ գիւղաց էր ծանօթ, իսկ յորժամ յապաշխարողական բժշկանոցին՝ յայնժամ առաքելոցն էր սիրելի․ յորժամ զհեր գլխոյն գանգրուստ[1] մանաւանդ հանդէպ ճակատուն յարմարէր՝ յայնժամ բանսարկուն իբրև զիւր ձևացուցանէր պատկեր, իսկ յորժամ զվարս և զծամս գլխոյն փշալից ապաշխարութեամբն 'ի բաց թօթափեաց երկրորդ նմանութեանն՝ յայնժամ տէրն մեր իբրև զիւր զաւակ համարէր զնա․ յորժամ զայտսն երկրային ծաղկօքն կարմրացուցանէր իբրև արարիչ յօրինելով զննջն՝ յայնժամ հաւրն անբաւ պատրաստէր նմա, իսկ յորժամ 'ի բաց լուաց զայտսն ապաշխարողական արտասուօքն և զնմանական պատկերն եցոյց մաքուր՝ յայնժամ հաւրն շինանէր և ցօղն առնեալ լինէր․ յորժամ զաչս իբրև զԱրուսեակն ծարրեալ սև՝ յայնժամ խաւարային բաժնոյն լինէր արժանի, իսկ յորժամ զարտասուանօք երաց յաչացն որպէս զԱնեայն երկնային ամ՝ յայնժամ առագաստն երևելի լինէր լցեալ, այլ փոխանակ այլոյ իւր եղեալ և ձևով և վարուք և բարբառով և սոգանելով։ Որ երբեմն յերգս մրմնջացն՝ այժմ նմանաբանէ, որ երբեմն զերգարանն՝ այժմ աղքատաց բաշխիչ, որ երբեմն անառակ գործոյն՝ այժմ վարձախնդիր․ և ոչ ևս երիտասարդացն տղայութ ձգելով, զի այլ ինչ փոխանակ այլ իրի եղև կինն սուրբ աղօթելով և ոչ կաքաւելով, որպէս զի կատարեալ 'ի վերայ նորա բանի ամ՝ եթէ "Այս է այլայլումն աջոյ բարձրելոյն"։ Ո՞չ ինչ ապա և աւետաբանիչն ։

"Ողջունեաց ամն 'ի փարթամացն զՅիսուս, զի կեր-

1 Օրինակ մի գանգուրս ։

ցէ ընդ նմա. և մնացեալ 'ի սուտ փառասիրութեանն բաղձացաւ ,,։ Այլ մանաւանդ սորա յաջողուածոցն ևս պատմելոյն. ոչ 'ի սուտ փառասիրութեանն այնքան բաղձացաւ, որքան յաղագս կնոջն եղև բաղձացեալ. քանզի ոչ պատշաճ օթեւան է անձն որ յաղագաշխարութեան է ։ "Այլ մնացեալ 'ի սուտ փառասիրութեանն բաղձացաւ ։ Այլ ահա կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր ,,։ Թշնամանականն էր կեչամինն, և ձոխ էր գիտութիւնն. քաղաքագնացարկէր կինն՝ հրապարակական վաճառաւն ամենեցեն կացեալ, անառականն խորան բացատրեալ, կամեցեալ ողջախոհանալ և ոչ առեալ թողլ, լուեալ զպարգևան սերմանն և զաղ անոր ոչ կարացեալ՝ հեծեէր յանձին խորամ ատելով. ելց կինն, Սիրք ապաշխարելոյ յանօրէն յայս բազում խաւարկութեանցս, ոչ անտեսելով սատուղ արգելծնութեան, հեղլով բաղձանաւորին մեղձանաբք վաճառեցայ յայս թշնամութիւն և 'ի թշնամանս, և ոչ ոք է որ զնէ զիս ։ Կամիմ ապրել, և ոչ ոք է որ օգնէ ինձ. լուեալ զՅիսուսէ թէ բանիւ միայն լուանայ զաղտ մեղացն, և սրբանել զնոս ոչ կարեմ ։ "Այս ընդ այս անեղբ ոչ անցանէ և ոչ գայ, քանզի զարշելի եմ ամենեցուն. և ես հասանել 'ի ժողովն ոչ կարեմ, և ոչ թողլ խոկ ոք առայ ինձ. լուեալ և ոչ կարեմ առնել ինչ ։

Զայսպիսի կնոջն մեղաւորի խորհելով, և առ ունէր զարդի ժամանակ ոչ առնելով ։ Նոյն այն որ զխօսէ զործոյս, ժամանակս ընդ ժամանակացն զտա 'ի զէնդ պատճառան առայ ազնուագնիկ ուր ապաշխէրն կամեին ։ Արկանէ առա խորհուրդս քաղցրանոս 'ի սուրբ փառասիրութեանն կոչել զՅիսուս 'ի ճաշ, առնելով կնոջն մեղաւորի մուտ զիւր ինպահանն ։ Սուտի լուաւ խոկ կինն մեղաւոր միայն սրտամ ցանկայրն, եթէ ունէր եկեալ 'ի սուտ փառասիրութեան և բաղձացաւ. և խորև զարմապարուս ինչ զտեալ զաւն, ցնծայր ասելով. ահա ժամանակ ընդունելի, ահա որ փրկութեան. Յիսուս առ փառասիրութեան է. ազդեցն մերձ է յիս, զի ոչ հանեամ զբժշկութիւն ծառայումերց 'ի կոչուման անամօթ առնէք և թող թշնամանեցայց միայն լոկ աղաղակեցայց 'ի նմանէ ։ Զայսպիսի առա զօրով կինն մեղաւոր, առաժամայն 'ի սուտ փառասիրութեան ընթացաւ, և ձեռպէր մտանել 'ի ներքս՝ զգուշանալ կենաց խնդրելով զՅիսուս Մրխասնա, 'ի ձեռան որոյ հանգե-

ձեռացն էր բառնալ նմա արքայութիւնն երկնից. և կինն առաջ այնու հետև փութայր մտանել։

Իսկ որոյ կոչեալն էր զանէրն մեր, և ծառայք նորա գիտելով զկինն թէ որպիսի ոք էր, և զի յանդգնէր, 'ի բաց մղէին զնա ատելով. 'ի բաց կաց 'ի դրացդ դաւեկ յայդրաս, զինչ կամիս, խախտեալդ զմեծարեալն[1] ըզՔրիստոս. ոչ է պարտ անցանել ընդ այս կնոջ; մանաւանդ որ ոչ պարկեշտ իցէ. զի մարդ է կոչեցեալն, և ոչ անաստուածական ոք. 'ի բաց կաց 'ի նախադրացդ յառաջ քան զմտանել մեր զերեսս քո ապաշաւկօք։ Այս այնպէս ծառայքն փարիսեցւոյն գիտելով զնա թէ որպիսի ոք կին էր, բազում թշնամանօք 'ի բաց մղէին զնա։

Իսկ կինն որպէս յաղթող ոք զթշնամանսն ընդունէր ասելով. 'ի բաց կացէք 'ի դրացդ, բարեաց խափանիչք. դուք ոչ գիտէք զոր զանձ ունիք 'ի ներքս, իսկ ես գիտեմ զմերձակայդ բժիշկ. և դուք ոչ որպէս զմարդասէր համարիք զնա, իսկ ես՝ ած գոլով զնա հաւատացի. 'ի բաց կացէք 'ի մտիցդ, մի՛ զիս խափանէք, զի վասն իմ իսկ խոնարհեցոյց զերկինս և էջ. վասն իմ եկն այսր, զի զիս 'ի բարեացդ խափանէք. գիտեմ ով պատուիրեալ ընդ իս 'ի ձեռն ձեր. բանսարկուն ընդ իս բարկանայ, որպէս զի թողեալ եմ զնա, զի նորա էի գործարան։ Ընդէ՞ր հալածէք զիս. եթէ զպատանեկական ինչ ունիմ զձև, որպէս զշուն ինչ կատաղի հալածեցէք զիս. իսկ եթէ խոնարհեալ կամ ապաշխարութեամբ գիմեմ, զի ոչ օգնէք ինձ, այլ հալածէք։ Տրտմեցայք ինչ 'ի դատանալը իմում, գիտեմ և ես. զի յորժամ 'ի պատանեկութեանն էի՝ ազերսէիք ինձ, իսկ յորժամ 'ի քաւարանիս՝ հալածէք։ Ի՞ զուր հալածէք զիս 'ի նաւահանգըստէս. գիտեմ զնաւապետն որ 'ի ներքս է, ոչ ընկղմիմ 'ի նաւահանգստիս. տեսի զմիշտ երևելի արուեստին; ուղղակի պարանաւեմ 'ի սատանայականացն ալիքն յարոգայթից. 'ի բաց կացէք 'ի մտիցդ, զի մտեալ անկայց առ ոտսն։ Ոչ եմ թուլագոյն քան զԱխաբ պատնիկն. նորա զդատաստան ընկալեալ ապրեցաւ, իսկ իմ զամենատեսոյն ած ծանուցեալ՝ մերձեալ և ոտսն ապրեցայց։

Այս մտեալ առաջ կինն 'ի տուն փարիսեցւոյն կայր

1 Երկու օր. զմեծարեալն։

մերձոյ Յիսուսի իւրև զգաստն հետևեալ. ոչ որպէս ընցուլ խայտացեալ, այլ որպէս զերինջ հանդարտացեալ. ոչ որպէս զձին վազեալ, այլ որպէս զորոջ կալով մերձոյ Յիսուսի, լսելով թանալով ընծելով հաւանելով զբանն Յիսուսի, ապաշէր զոտերն: Նաև զփարիսեցին զկծեցոյց կնոջն երկիւղածութիւնն, որպէս զի բամբասել զոտերն: Իսկ աւետարանչին ասելոյն. «Տեսեալ փարիսեցւոյն որ կոչեցոյն զՅիսուս, ասէ յանձին իւրում. սա թէ մարգարէ էր, ապա գիտէր արդեօք թէ ով և որպիսի ոք կին մերձենայ ՚ի սա, զի մեղաւոր է»: Տեսեալ, ասէ, փարիսեցւոյն, և ոչ եթէ գիտացեալ. կոչեցեալ և ոչ համձայնեցեալ. կերպարեալ և ոչ եթէ ուրախացուցեալ: Տեսեալ փարիսեցւոյն՝ ասէ յինքեան. ոչ զոտերն գիտացեալ և ոչ զկնոջն երկիւղածութիւնն զիարդ համբուրէր զոտսն տեառն, ոչ արհամարհանօք լնուլ, այլ աղաչանօք, զոր օրինակ ոք որ ՚ի մերձակայս կամիցի ՚ի բազում անիրաւութեանց ապրել՝ ՚ի նկարագիր թագաւորացն ընթացեալ ընդ սոսա պատկերին զինքն կապէ, այսպէս և կինն մեղաւոր կամելով փրկել ՚ի սատանայական բռնութենէն և ՚ի նորա զօրչականացն՝ ընդ աստուածային ոտսն տեառն զինքն բևեռեաց. զորս ծանուցեալ փարիսեցւոյն՝ բամբասեաց զտէրն մեր ասելով. «Սա թէ մարգարէ ոք էր». և ոչ որպէս ընմարգարէ համարեցաւ զտէրն:

Ա՛րդ զինչ տէրն. ցուցանելով թէ մարգարէ էր, ըստ որում և էրն, և Ած, ըստ որում խոնարհեցեալ լինէր, զթագուցեալ կարծիսն փարիսեցւոյն ձգելով առաջի՝ ասէ. «Սիմոն, ունիմ ինչ ասել քեզ. տեսանե՞ս զայս կին». չէ զոր տեսանեսդ, զի զոր էրն՝ զայն մերկացոյ: Սիմոն, տեսանե՞ս զկինս զայս, ոչ է Յիսուս. մեղաւ, այլ ոչ արհամարհեաց. անկաւ, այլ յարեաւ. կարթեցաւ, այլ փոխանակ կարթեաց զկարթողն իւր: Սիմոն, տեսանե՞ս զայս կին. զհերսն հոլանեցաւ, այլ ոչ տեսես թզենւոյ կարեաց. համբոյր եա, ոչ ընչեաց. զոտիս բանան եհար, և ոչ զպատուզն զողացաւ: Տեսանե՞ս զայս կին. համեմատես զարդոյս զործանութիւն ընդ քում ձաշաւորութեանդ, և ասա զի սա ապաշխարելով և զարհամարհեցեր: Մո՛տ ՚ի տուն քո, Սիմոն, և ոչ ջուր ոտից իմոց մատուցեր, զի ընկալցիս զմկրտութիւնն. իւ-

զոլ զնա ոչ ածեր, զի հաստատեցին ածմամբ. Համբերը յնա ոչ մերձեցուցեր, զի կատարեալսն խորհրդոցն հաստատեցին: Պատ ոչ ինչ յայտնեալ գործեցեր, իսկ սա համբերելով և աղջատելով զնա՝ զեղեղեցին կանխաւ վերակենդանացուցանելոյ, ածանելովն՝ ոչ խնկելով արդեօ ժողովք ձրեից և հեթանոսաց: Արդ որոյ քեզ առեալ, Տէր, զոր որ ինչ ետ՝ ծառայ համարեա զորթեալ և թողացին քեզ սպառողին բնաց յանցանացն. բայց սա եհաս ՚ի մեղացն թողութիւն: Այլ և զուարթ խոր կոչեցի, զի գործեաց զոր ինչ ես կամեցայ: Արդ նոյնժամայն առէ ցինն. "Օրհնեալ եղերուք, զուարթ, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ՚ի խաղաղութիւն": Նա մեծ յոյս փրկութեան շնորհեալ է մեզ հաւատացելոցս ՚ի Քրիստոս Յիսուս յորդին ըն: Որ ոչ կամի մերձենալ և բաղխել զդրանն նորա, համարձակ մտցէ և բացցի նմա յարարչէն ամենեցուն, որում փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ՅԱՂԱԳՍ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ[1]

Յորժամ երիտասարդն էիր, պարտ էր քեզ զանեցել զթաւ խորհել զկատարածին քո, եթէ բազում ծերքն մնացին, և բազում երիտասարդք վախճանեցան. և ոչ շրջել քեզ մնալութեամբ զամենայն կեանս քո՝ յեռին ժամանակին մնալով դառնալ ՚ի մեղաց. զի վասն այսորիկ յանկարծակի մեռեալ է ամենեցուն կատարած. վասն որոյ յայտնագոյն ասէ առաջ յիմաստնոցն. "Մի հեղգար դառնալ առ Տէր քո, և մի յապաղեր օր քան զօր. զի ոչ գիտես զինչ ծնցի բերէ քեզ վաղիւն": Առաւօտին զվատութեան բուռն հարեալ՝ զառաքինութիւն մոռացեալ ես, ասելով՝ եթէ եկեցէ ժամանակ յորժամ արժան իցէ ինձ դառնալ առ Աստուած:

1 Ի չորից օրինակաց երկաթագիրն վերնագրեալ էր ՚ի հին Բարգմանութիւնք. Նոր օրինակ մի ՚ի հին գիրը Բարգմանութիւնք. և երրորդն յանհատ գրոց:

Ահա եթէ քեզ եօթանասուն ամ, և ոչ ամեր ըն-մտու թէ քանիցս անգամ պատահեցար, արբեցար, ա-գահեցեր, յափշտակեցեր, և ոչ կարեր անձամբ զանձն առ վատթարն, որպէս և խիղճ մտաց քոց դատապար-տէր քեզ վասն գործելոյ մեղացն, և անդէն զմիտ դա-տաստանին մտաւ ածանէր քեզ, և դու վաղվաղակի մո-ռանայիր։ Զառաջեր երբեք թէ դարձայց՝ ծերութեան մնալով. ահա ծերացար, ո՞չ նոյն երբեք արբեցութեան, ո՞չ նոյն աղծութիւնք պոռնկութեան, ո՞չ նոյն թատերք, ո՞չ նոյն զանձք անօրէնութեան։ Մինչև յերբ անյագ ունիս[1] զչարութիւնդ ցանկութեան, որ հասեալ յա-թանասուն ամն՝ յութսունն ես. ակն ունիս. այլ ան-չափ յոյլ ես և թոյլ և տկարանաց արութեան։ Կրնես այսու հետև զապաշխարես, դարձիր 'ի խոնարհութի, խա-ռնվան լեր ատամն ողջ, գոհացիր զՏր՝ որ զքեզ անզրէն 'ի մեղս ոչ սատակեաց. և մի յանհերևույթս յաւուր և այլ յերկայնել զկեանս, և ասել եթէ ոչ յանկարծա-թելու յաւուր, այլ յՏր մարդասիրութիւնն։ Մարդա-սէր է Տր, զայն և ես գիտեմ. այլ և դատաւոր է ար-դար, և զդառզամ անզրէն 'ի մեղսն յափշտակեալ յու-խարհէս տարա յայտնի 'ի պատիժս պատուհասից։ Նոկիր զուցէ և ընդ քեզ նոյն անցք անցանիցեն։

Ո՛չ բազումք էին, որ շատ կեցին և այլ ես խնդ-րեին յՏր կեալ՝ զի ապաշխարութե ժամանակեսցեն, և ոչ ժամանեցին, զի և 'ի ծերութեան ևս հեղգագոյնք գտան։ Իսկ դու խորհիս զխոյս, յաւթանեարոցէն յիննսներորդն և յիննսներորդէն 'ի հարիւրորդն կալ։ Իսկ զոր խել թէ տայ քեզ այնչափ ժամանակս. և զինչ օգուտ է քեզ, զի և յետ հարիւր ամին ես հեղգագոյն և յեղծեալ գործս գտանիս. և գտանի 'ի վերայ քո որպէս ասացա-[illegible]. "Պակասեցան յունայնութեան աւուրք նո-ցա,,։ Իսկ երանի եթէ յունայնութեան միայն և ոչ 'ի չարութեան. զի յորժամ զնաս տեսի, զծանր ծանր բեռինս մեղաց առեալ ընդ քեզ տարցես կերակուր հրոյն, և ուղղանս աստուածայինս զարդարեալ որդանն ան-մահի։ Բայց և անյայտ խել է եթէ թողացուցէ զքեզ հասանել յութսուն ամն։ Արդ բուռն հար զքաջու-

. . .

1 Երկայնթաղիւրն անյագին զչարութիւնս ։

թեանն. և եթէ բուրաստանին ինչ իցեն վայելչական 'ի չարիս, մարթի և 'ի սակաւ ժամանակի սոսա զամենայնն 'ի բաց լուանալ։

Որդ մի ոք ապայուսեալ անյոյս լինիցի վասն իւրոյ անձինն փրկութեան. ամբարշտեալ ես, զմտաւ ած զմաքսաւորն. ապիղծ ես, զմտաւ ած զպոռնիկն. արիւնահեղ ես, զմտաւ ած զաւազակն. անօրէն ես, զմտաւ ած որ յետոյ աւետարանիչն եղև. բազում չարեաց յանցեար, անձինս ապաշխարեալ սրբոց օրինակաց, յոր և կամիս նախանձախնդիր առաքինեսցիր. մի զառաջնակութիւն վաստակութեանց 'ի մէջ բերեր։ Զյանցեալսն մեղաց, զղջացիր ապաշխարեա. բիւր անգամ յանցեար, բիւր անգամ ապաշխարեա, զի զառաքեալ չարիսն ջնջեսցես։ Պետական որչափ է խիղճ անօթոյ յանցաւորացն. զխանեմ որչափ ունայնութեանն լինէին։ Ի վերայ կայցես սատանայի ասէ զպայթարի բանս. զամենայն առ ուրս մասկութեան քո յանխթ արարեր, զամենայն վարս աղզութեան քո կորուսեր, նաև ընդ արանիկս. յետ այսորիկ յածրշաակեցեր, ապահեցեր, զրկեցեր, սուտ երդուար, զերդմունս անցեր, լուր լեր դատարկս. հայհոյեցեր, զինչ կայ ապաշխարեալ քեզ յայս փրկութեն, բայց եթէ կորուստ. վայելչա զննեա, ասէ, զայժմեան ժամանակս։ Այս բանք խորամանկ սատանայի են. նա ասէ մարդոյ եթէ կորիր։

Այլ կարող ես առնել եթէ կամիս. արանեկեցիր, կարող ես զգաստանալ. անկար, կարող ես կանգնել. փոքր ինչ է զղջումն ապաշխարութեան, այլ մեծ է քո առաւանն մարդասիրութիւնն. սանկեր, զղջացիր. շնացար, ապաշխարեա. վիրաւորեցար, բժշկեաց. մինչև 'ի ժամ մահուն յորժամ 'ի մահիճսն տագնապիցիս սա 'ի զոգիդ արտաքս փչել, յայնժամ զղջացիր և ապաշխարեա։ Ոչ մի ասեր թէ 'ի վերջին ժամուն զխարդ կամ որպէս ապաշխարեմ։ Կարես և յայժ կարես։ Աւուրս հրաժարեա 'ի ձեռս մեղանաց, և մի ասեր եթէ զխարդ կամ որպէս ապրիմ, և մի զհեռանաւողացն ըզբանս 'ի մէջ բերեր. յորժամ անծ բժշկէ, դու մի համարս պահանջէր և մի անյոյս լինիր։ Տես ապէ զխարդ աւազակն ապրեցաւ, որ զամենայն վարս իւր յարիւնահեղութեան ծախեաց. 'ի մարդկանէ դատապարտեցաւ,

այլ յԱյ փառաւորեցաւ. կենաց չեղև իշխան, այլ ար-
քայութեան եհաս. զանցաւոր կեանս եթող, այլ շնորհ-
ատուականն եգիտ միով բանիւ՝ եթէ “Յիշեա զիս
Տէր յարքայութեան քում”. որպէս և Քրիստոս ասէ՝
թէ մեղայ, և մարգարէն ասէ՝ և ասէր ամենեցուն զքեզ ըն-
մերոյ քո:

Ո՜վ եթէ Թագաւորն՝ միայն հրամանաւ կարող է ըն-
թերցող պատուհաս արժանեաց 'ի բանսն արձակել, և ոչ
իշխանքն կարող են ընդդիմել զատմանս, և ոչ բանսա-
րկուք և ոչ գիրք օրինաց, աստ որչափ ևս առ. Ո՛վ
Թագաւորն Թէպէտ և Թագ և ծիրանիս ունի, այլ ոչ
առնելիս ինչ ունի քան զիմ բնութիւն. իսկ առ որ հրեշ-
տակաց և հրեշտակապետաց անէր է, եթէ միայն ապա-
շխարեսցէ լալ, արգարեւ կարող է զամենայն Թողուլ:
Ապաշխարութեան քարի ինչ՝ մնաս, զի անէրն քո խնդրին յիշե-
ցէ. զարծեցէր չար, յիշեա զի անէրն քո 'ի մասնաւոր
արկցէ. զոր պատմեաց զմեզն, զի ջնջեսցին. Ծանիր
առնել հանդերձեալս զխոստովանութիւն մեղաց առել
ամեք. առա զնա հանապազօր որ ըստ որէ յորժամ
յաղօթս կացցես. զի ոչ առնել քեզ եթէ ծառայակցի
քում առա որ նախատակն և զգուշեն զքեզ, այլ առա Տն
որ բժշկեն զքեզ: Այլ զայս առնել ոչ եթէ ծուլացաւ-
նել ինչ զձեզ կամեցայ, այլ զի 'ի հաւատս ածից յա-
սով անհնարինութեան, զի մի անյոյսք լիցուք: Այլ Տն փառ
հանցուք այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ՅԱՂԱԳՍ ՈՂՋԱԽՈՀՈՒԹԵԱՆ

Գիտեմք հաւատարապէս և ստուգիւ մերազն բանից
զի յոգւոց և մեծամեծաց բարեաց ողջախոհութիւն
մարդկան պատճառ լինի. բայց ասելոյն ոչ ինչ խափա-
նէ և զիս դուզնաքեայ խօսիլ յաղագս նորին: Ընդէր
վասն այսր պատճառի բանիւ պատուեաց զմեզ Տն, որ-
պէս զի յեկեղեցի 'ի միասին յորդւք եկեալք և յաղագս
օգտակարացն խօսելով յանձախառեալս, հաւատովք և
հաստատուն պահպանք Քրիստոսի օրինացն եղեւ-
ցուք: Սա՛ն զի յայժ ղօղանելոյ կարաս և մեծութ...

թիւն. և՛ պէտս ունիմք ամենայն մարդիկ այսոցիկ, ոչ ինչ նուազ քան եթէ ծառք ջրոց, զի գեղեցիկ և փր-կական բանիւք զօրաւոր հակառակամարտ անձանց ախ-տից երևեսցուք: Եւ այնքան ունի զօրութիւն յորդո-րումն, մինչ զի ոչ միայն մարդկան, այլ և անասնոց յոգունս արկանէ զօրութիւնս: Քանզի և շուն և ձի՛ մին զորսորդին ընդունելով զյորդորումն, և միւսն զե-րասանակակալին զձայնն լսելով, զկնի ձայնին յընթացս արագոյնք լինին: Արդ մի մեք որք զողջախոհութեան ընթացս ընթանալ կարգեալ եմք յայդ, վատթարք ե-րևեսցուք քան զձի և զշուն: Այլ յորժամ լուիցեմք Պաւղոսի որ յողջախոհութիւնն յորդորէ զմեզ, պատ-կառեալք 'ի խրատողին ձայնէ, ցուցցուք զանձինս ար-ժանաւորս նորա խրատուն և յորդորմանն:

Եւ զինչ ասէ նա: Յաղագս ողջախոհութեան ընդ մեզ խօսելով ասէ. "Ոչ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի: Եւ արդ առեալ զանդամս Քրիստոսի առնիցեմ անդամս պոռնկի. մի լիցի": Բա-ւական են բանքս այսոքիկ զամենայն զզգաստութիւն և զսրբութիւն 'ի մեր յանձինս արկանել. բաւական են բանքս այսոքիկ երկնայնոցն արժանաւորս երևեցուցա-նել զմեզ: Որ այնմ բանից լսէ, քան ամենայն հեշ-տութիւնս և քան զբազմանդակ անմաքրութիւնս գեր 'ի վերոյ առնէ զանձնն, մինչև տեսանէ առնել զոր բանսն լուաւ: Արեգական երևեցելոյ ոչ ոք ներէ քունել, բայց եթէ ոք մարմնովն հիւանդանայ: Եւ զայս զփրկութեն ձայն ընկալեալ 'ի Պաւղոսի բերանոյն, ոչ ոք արդեօք անսայցէ ծառայել հեշտութեանց. բայց եթէ ոք ախ-տացեալ իցէ հոգւովն: Քանզի ճշմարտապէս զոր օրի-նակ արեգակն աչաց մերոց բերէ զքաղցր և զախորժելի զլոյսս, նոյնպէս և բանքս այսոքիկ զՔրիստոսի լոյսն 'ի մեր յանձինս բերեն. որպէս թէ ոք բանիցս այսոցիկ լսելով իշխէ ծառայել հեշտութեանց կուրացեալ միտք ողորմելի է քան զանշունչսն, որոյ ոչ իցէ հնար իմա-նալ ինչ: Զի և ոչ նա հաղորդութիւն ունի խորհելոյ որ պատուեցաւն այնպիսի ահաւոր բանիւք, և զիւր ըզ-հեշտութիւնսն և զգարշելի ցանկութիւնսն յաւէտ կա-տարեաց քան զտէրունականն պատիւն:

Ով մարդ, յիշեաց ով ոք ես, ում անուանեցար ան-

զամ. ոչ հրեշտակաց, ոչ հրեշտակապետաց։ Այս ակայն մեծ և այն լաւութիւն էր մերում արժանաւորութեան։ Իսկ այժմ որդին Այ բոլորեցուն արարիչն յինքն միաւորեաց և յարմարեաց զմեզ, զի մեծութեամբ պատուոյն պատկառեցուցեալ՝ ողջախոհութեանն ընկերս երեւելիս գործեսցէ։ Եւ ինչ պատուականագոյն է նմա իբրև զանձանց մերոց ազատութիւն և բարեպաշտութիւն ողջախոհութեամբ փայլեալ և ոչ ումեք զազրելեաց ծառայել։ Զայնպիսիս նա ախորժելով ասէ, և անդամս ասէ իւր, և զինքն կենացն կատարածիցդ և կեցուցանէ և պատուէ։ Զոր և Պաւղոս կամեցեալ ուսուցանել մեզ, "Զխաղաղութեան, ասէ, ընկեր երթայք առ ամենեսեան և զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանէ զՏէր"։ Յայտ է յասացելոյս, զի եթէ ողորմածք և քաղցունք և զգաստք երևիցիք, ոչ ինչ յայլոց բարեացն երևիցիք շահեալ, եթէ ոչ իցէ յանձինս ողջախոհութիւն, առանց որոյ ոչ ոք տեսանէ զՏէր։ Նոյն աւրէնս զոր ունի կարգ ամն առ բոլոր մարմինն, զնոյն և յոգւոյն առաքինութիւնս։ Ողջախոհութիւնն ընձեռէ անձինն զՔրիստոս տեսանել։ Իսկ առագանք են կոյրք ոչ տեսանել զարեգակն. որչափ ևս առաւել աղտք քրիստոնէի ոչ տեսանել զորդին զճշմարիտ լոյսն զճառագայթս Այ։ Զինչ, ասա ինձ, կամէիր ամենեցուն տեսանել զլոյսն ճշմարիտ, միայն զակուրացեալ զրկիլ 'ի լուսոյն, որ և զհրեշտակս առնէ երանելիս։

Ո՞չ ախորժես 'ի տեղ ինչ ժամանակի վայելել և քրտանց հանգչել, և յաւիտենական վայելել 'ի փառացն տեսութիւնս։ Ապա եթէ բժիշկ ոք մարմնոյ առողջութեան աղագաւ ոչ հրամայէր ջուր ցուրտ ըմպել, ախորժելով լսէիր որպէս քան զաղտոյն հեշտութիւն՝ քաղցր և կամակ զառողջութիւնն վարկանելով։ Իսկ յորժամ ոգւոց մերոց բժիշկ յորդորէ ժուժկալել 'ի հեշտութեանց, զմեծագին պարգևսն զայնպիսիկ խոստանալով անձանց՝ զանմահութիւն և զկեանսն յաւիտենից, ո՞չ փափագիցես, ասա ինձ, բարւոք խոստմանցն հաղորդել, այլ զգարշ ցանկութիւնս և զժամանակեայ հեշտութիւնս առաւելապատուես առնես քան զյաւիտենականն զկեանսն։

Այս հաւասարն եթէ կամիս ուսանել, որքան է միջոց պարկեշտութեան եւ ողջախոհութեան, լուր Պաւղոսի զոր անուանէ անդամս զցածունս զողջախոհսն, եւ զոր որք շռայլութեամբ ծառայեն : «Ո՞չ գիտէք, ասէ, եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի. արդ առեալ զանդամն Քրիստոսի առնիցե՞մ անդամս պոռնկի» : Տեսանե՞ս զմիջոց ողջախոհութեանն եւ պոռնկութեանն. ոչ այնքան է միջոց երկնի եւ երկրի, որքան զանազանութիւն է որք ժուժկալեն ՚ի հեշտութենէ եւ որք պղծութեանցն յաղթին ՚ի նմանէ : Պարտ եւ արժան էր ամենեցուն ձեզ գիտել արդիւնաւորաց բանից լսելք, եւ ուսանել զզանազանութիւն պոռնկութեան եւ ողջախոհութեան. զի որք յայսմ են նահատակեալք՝ տեսանեն բողոքեցուն անուանին, եւ որք ՚ի նմա գերին անմաքուրք՝ բազմաց ծակիցք, եւ ՚ի Պաւղոսի բանիցն անկան արտաքս : Պահեսցուք հաւատարիմ յանձինս զբանսն, եւ որք ՚ի մերոյ գան հեշտութիւնք՝ ՚ի բաց մերժեսցուք. զի երեւիցիւք ընդ առիւքն կացեալ Քրիստոսի, եւ ոչ ընկեցեալք ընդ բաղս, զորս վարեցեալքն նոքօք եւ կենակիցք լեալք տիկնայս իւրեանց զանմաքուրս արարին :

Ո՞չ տեսանես զհարսանիսն ՚ի փրկչէն մերմէ պատուեալ, եւ երթալովն տեսանեն պատուեալ, զարմանալիս ընկալեալ՝ գինի ՚ի ջրոյ լինելով, զհայրն կուսութեան՝ զհայրն Պետրոսի եւ Պաւղոսի զառաջնորդացն կուսութեան, զվարդապետացն ամենայն որբութեան : Ընդէ՞ր ոչ ողջանես զնա եւ պատուես զոր մեծ եցոյց ՚ի պատուականութիւն մերոյ ազգիս. այլ թողուս եւ անարգ առնես զայս պարգեւ, եւ ՚ի պոռնկական կործանիս, եւ կոտորիս ՚ի գեղեցկութիւն շռայլեալ կանանց : Ո՞չ լսես Պաւղոսի, որ թէպէտ եւ կամի զամենեսեան կուսութեան նահատակս գործել, սակայն թոյլատուեալ է ամուսնանալ, որ եւ զհարսանիսն բարեբանէ եւ զի պարգեւ անուանէ : Արդ ընդդէ՞ր անպատուես զաշխարհի խորատիչն. ընդդէ՞ր ոչ ախորժիս օրինաց զհետ երթալ : Եթէ կարգաւորութիւն է, պահեսցես զկուսութիւնն. ապա եթէ տկար ոք իցես՝ զնորա ընդունել զաշխատութիւնն, յամուսնութիւն երթ, եւ նմա լեր կենակից. միանգամայն եւ ՚ի կնոջն վայելեսցես, եւ պահեսցես զողջախոհութիւն անձինդ :

Ոչ ինչ ամաչեմ յաղագս ամուսնութեան խօսել ընդ եղբարս, վասն զի Պաւղոս կուսութեանն առաջնորդ բազում և գեղեցիկս արար բանս. զինչ ասելով. "Բարւոք է մարդոյ 'ի կին ոչ մերձենալ. բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի, և իւրաքանչիւր ոք կին զիւր այր,,: Տես ինձ զՊաւղոսի մաքրախոսութիւնն զիարդ և զլաւագոյնսն բարձեալ ընձեռել մարդկան: Կանանցն տեարս արար, միանգամայն և առաքինեացն եւս պատճառս առաքինութեանն, և զայր 'ի պարկեշտութեան պահեաց. քանզի զկէտն 'ի պայծառ ժուժկալութիւն ձայնիւ կոչեաց, և կիրսն ոչ թողացուցանէ արտաքոյ լինել կարգեալ սահմանացն: Այլ զի օրէնք են և սահմանք յոյժ հաստատեալք ամուսնանալ և կալ կուսութեամբ ժուժկալել. իսկ զպոռնկութիւն և զշնութիւն և զամենայն անմաքրութիւն յեկեղեցւոյ փրկչէն 'ի բաց վարեն օրէնքն: "Պատուական է, ասէ, ամուսնութիւն և անկողինքն անարատք. բայց զպոռնիկս և զշունս դատի ա̃ծ,,: Արդ եթէ ոք ամուսնացեալ և ընդ կնոջ բնակեալ, ապականել իշխեսցէ զա̃յ պարգևն, և թող 'ի ներքս ածել, առ որով ըստ օրինացն ա̃յ է բնակեալ, մի ինչ անգիտասցի զանօրէնութիւնն, վասն զի թշնամանէ զա̃ծայն հրամանն:

Ոչ ինչ և ինքն տէրն ասէր. "Զոր ա̃ծ զուգեաց, մարդ մի մեկնեսցէ,,: Ոչ ինչ ասես, ով մարդ. զոր ա̃ծ ընդ քեզ հաւատարեցոյց, քան զնա յանգգնիս պատուականագոյն առնել զաղջն: Ոչ ամաչես 'ի պսակացն, որովք հանդերձ կնաւն զարդարեցար իբրև յաղթող անօրէն հեշտութեանցն: Ոչ պատկառես 'ի Պաւղոսէ որ հրամայէ քեզ ընդ կնոջ բնակել, զի 'ի նմա վայելչով լաւագոյն երևեսցիս քան զպագշոտութիւնն՝ որ ըն-յաւիտենական հուրն առթէ անժուժկալիցն: "Բարւոք է, ասէ, մարդոյ 'ի կին ոչ մերձենալ. բայց յաղագս պոռնկութեան իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի, և իւրաքանչիւր կին զիւր այր,,: Եւ ոչ միայն զա մեկնեաց 'ի պոռնկութենէն, այլ կամելով հաւաստեաւ զողջախոհութիւնն բնակեցուցանել 'ի մարդկան յանձինս, իշխանս միմեանց զայրն և զկինն արար ասելով. "Կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն. նմանապէս և այրն մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ կինն,,: Ոչ իմ

ծառայեսցեն անօրէն հեշտութեանցն, ծառայս միմեանց արար։

Զիա՞րդ ոչ զարհուրիս տեսանելով զՊաւղոս, որ ըստ նմանութեան հրեշտակաց մաքրեալն էր համդերձ այսքան նախախնամութեամբ, ընդ եկեղեցիս յաղագս ամուսնութեան խօսէր. զի զամենայն անմաքրութիւն և զպոռնկութիւն յիւրաքանչիւր անձնէ արտաքս վարելով, ՚ի պարկեշտութեան պահեսցէ զաշխարհս։ Զիա՞րդ ոչ երկնչիս տեսանելով զայլս կուսութեամբ կեցեալս և նուիրեալս ժուժկալութեանն զենութիւնն, և դու ոչ ախորժելով մնալ յամուսնութեանն՝ անպատուես զնա անօրէն հեշտութեամբքն։ Քանզի որ կուսութիւն է կրօնաւորեալ, յոլով քրտանց համբերէ և աշխատութեանց, ընդ նմին իսկ մարտնչելով ընդ բնութեանն, և ոչ մի ինչ ունի հանգիստ, հրով բոցակիզեալ, ալէկոծութեամբք ամենայն ուստեք վտանգեալ։

Եւ զինչ նմա առ այն օգտակար դեղ ՚ի Քրիստոսէ տուաւ և կուսութեանն պահապանարան։ Զգուշոյ երկիւղն, որ մեծագոյն եւս զօրանայ քան զենութիւնս, և ՚ի բաց տանի զանձինն ՚ի հեշտութեանց։ Որպէս որ քաջ զինուոր յամբոխէ պատերազմողաց զպարտեալ զերիտասարդ արտաքս բերիցէ և ՚ի նոցանէ ապրեցուցանիցէ, այնպէս բժշկէ զանձն գրոցն խրատուք, և յիշատակաւն նոյ զօրացուցանէ՝ կոչելով զՊաւղոս զողջախոհութեան զփողարն։ Զի զոր օրինակ փողարքն ընդ զինուորացն ընդոստուցանեն զմիտս, նոյնպէս սաղմոսքն Դաւթայ յողջախոհութիւն զմանկունս յորդորեն, յորժամ ասիցեն «Զուարճասցին սիրտք մեր երկնչել յանուանէ քումմէ». վասն զի միայն ընդ նոյ երկիւղն խառնեալ է հեշտութիւն իմն և շնորհ, և զանձինս ուրախացուցանէ ՚ի վերայ եկեալ։ Որպէս որք յայլոցն երկնչին, կամ յիշխանացն սպառնալեաց, կամ ՚ի գազանաց սրտմտութենէ, կամ ՚ի դիւաց երեւութից, համդերձ ատելութեամբ և թախծանօք ընդունին զերկիւղն. միայն այն առ շնորհ իմն բերելով գայ, և զանձինս հեշտութեամբ և խնդութեամբ լնու, քան զամենայն զգօնծութիւն և զօծս հեշտալի և քաղցր է։ Եւ եթէ Պաւղոս ՚ի նորքս մնալ զայս բանս ասիցէ «Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի», ոչ ինչ ՚ի

լռողացն անձանց թողու զկիրճ ցանկութիւնն ընդունել։ Զի զոր օրինակ արեգական ծագեալ՝ 'ի բաց քայքայէ զխաւար, նոյնպէս և բանքս այսպիսիկ պայծառացեալ փայլեալ 'ի միտս մեր՝ զամենայն զգարշելի զհեշտութիւնս հալածեն։

Արդ վաղվաղակի ընկալարուք առաւելից զՊաւղոս, կոչողք և առաւօտացեալք, որ վասն զհնազանդել լսել, և ողջախոհութեամբ պարարէ զմեր անձինս։ Զի որ ընդ ունի առաջնորդ և խրատիչ երկնաւոր հանդիսիցն, հանդերձ բազում զգուշութեամբ նուէ 'ի մրցանաց կեանս. և լսեալ հօգևոր պանծիւքն, յանդիմանն կացցէ հանդերձ բազում համարձակութեամբ բեմին Քրիստոսի. ընդ որում փառք հօր հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ՈՉ ԳԻՏԷՔ ԵԹԷ ՄԱՐՄԻՆՔ ՁԵՐ ԱՆԴԱՄՔ ԵՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Որքա՞ն էին զխնդալոյ այսր կողմն խանարհեցուցանել զպատերազմն, յոր կողմն զօրավարն առաջնորդեցէ։ Արդ զի և մեզ քրիստոնէիցս մարտ է ընդ պղծութիւնս և ընդ մոլութիւնս, ընդ անակիրս և թշնամիս և պատերազմողս, խրատեցի է յայս կողմն դարձուցանել զբանն յոր առաջնորդեսցէ եկեղեցւոյ զօրավարն Պաւղոս։ Քանզի արդարեւ զօրավար է եկեղեցւոյ փրկչին ամենայնի առաքեալն, 'ի ձեռն որոյ անժուժկալութիւն և մոլութիւնք և ամենայն չիք և աւերէ որ այպիսի՝ արտաքս մերժի։ Իսկ ողջախոհութիւն և մաքրափառութիւն և ամենայն բարիքն փոխանակ չարեաց 'ի ներքս մտանեն. այնպէս զեւրաքանչիւր ուրուք զպատերազմն ածէ 'ի բարի կատարածն։ Ոչ առաւել հարուածահարէ զորդւոյ զիշխանութիւնն հեշտութեանցն, այլ զօրութեամբ բանիցն և ուժոյն խնամութեամբ զամենայն աղտս արտաքսեալ խալէ, որպիսի ինչ և այժմ արար։ Քանզի ո՛ որ լսելով 'ի նմանէ, որ ասէն եթէ "մարմինք ձեր անդամք են Քրիստոսի", և ոչ ամենայն ժուժկալութեան և ցածութեան հաւատաւոր կրօնաւոր լինիցի, այսպիսի բանիւք 'ի Քրիստոս, ա

րովք 'ի Պաւղոսէս պատուի։ Յաղագս որոյ յաջողեմ զմերձաւորս և զխոտոս որք կուսութեամբ էք նահատակք, և որք ամուսնութեամբ զպարկեշտութիւն պատուէք, զայս ծանուցանել յականջս հնչեցեալ, և իբրև զօգտակար ինչ դեղ զամենայն բանսն զայնոսիկ հաստատուն բերել յանձինս։ Սան զի զէն ողջախոհութեան է խրատն Պաւղոսի, և նմա լսելով հարկաւոր է զհեշտութիւնս ընդ բանութեամբ արկանել։

Զար է և դժուարակալի որ առ նոսա մարտն է, և դիւրաւ 'ի վայր ընկենու որ յամենայն մարտակցութենէ ամայի։ Եւ զոր օրինակ այլք տանելով զնաւ ամայի վաղվաղակի խորասոյզ առնեն, նոյնպէս և ալէկոծութիւնք հեշտութեանց եթէ առնուցուն զմեզ առանց զգուշութեան և ոչ պարսպեալ սպառազինութեամբ հոգւոյն, դիւրաւ գերիս տանի։ Արդ իրաւացի յորժամ զհեշտութեանցն ձմեռն փարատեսցէ յոգւոցն, յանձախապէս երգել մտօք զերկնաւոր զբանն, “Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի”. և այնպէս տեսցէ զանձինն ազատութեամբ կեցեալ, և ցանկութեանցն իշխանութեան անձաշակ։ Քանզի եթէ կախարդացն թովչութեանց դիւրաւ տեղի տան օձք, զի՞նչ սքանչելիք եթէ զգարշ հեշտութիւնսն Պաւղոսի բանքն դիւրաւ արտաքոյ վարիցեն. նա և դիւացն սաստելով փախստեայս զնոսա հալածեաց 'ի վերջին սահմանաց երկրին։ Այս ուրեմն և զձմեռն հեշտութեանցն՝ 'ի խաղաղութիւն և 'ի հանդարտութիւն փոփոխեալ յարմարիցէ դիւրաւ։ Նայց դու ինձ հաւանեցիր, և ըղնոյն ինքն զՊաւղոս վարկիր մերձ կացեալ խրատելով, և զամենայն զձայնն զայն արձակեալ յանձախապէս. “Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի. արդ առեալ զանդամն Քրիստոսի առնիցեմք անդամս պոռնկի”։ Բաւական է առնն և զյիշատակն միայն հանդիպեալ զամենայն առաքինութեան զհաստատութիւն 'ի ներքս ածեալ յոգին։ Իսկ եթէ և զամենայն եւս ըղբանս զայս ընդ նմին 'ի ներքս ածցէ ընդ յիշատակին, ոչ է հնար որպէս ոչ ժուժկալեսցէ յամենայն պիղծ ցանկութեանց։

Արդ եկեղեցի, ողջախոհութեանն կրթաւոր և ծառայ Քրիստոսի, որ զամենայն սիրէ. պահեա յինչ միշտ

զբազմանս զայս իբրեւ զաւանդ ինչ 'ի Պաւղոսէ առեալ, և համարեաց զառաքեալն 'ի քո տունն յաճախապէս մտեալ զմահճացն ունելով որբել զքո մարմինդ ձե-ռամբ, և պատուել բանիւքս զոր լուայք այժմ: Քան-զի ոչ դանդաղի Պաւղոս գլուխն առաքելոց 'ի տուն մեր մտանել, և իւրաքանչիւր ուրուք փրկութեան յօ-լով առնել նախախնամութիւն: Ոչ որոշէ զտեարս 'ի ծառայից, ոչ պատկառէ 'ի ճոխից, ոչ անպատուէ զաղ-քատութի, զամենեսեան միանգամայն անդամս Քրիս-տոսի անուանէ. քանզի "Ի Քրիստոս Յիսուս, ասէ, ոչ ծառայ և ոչ ազատ": Որք մտանէ 'ի տունս աղքա-տաց և ճոխից, ծառայից և ազատաց, զողջախոհութի դեղ ամենայն ումեք բերելով. զառողջն պահէ 'ի լ-ւութեանն, և զհիւանդացեալսն բժշկէ վաղվաղակի ցնցոցն զօրութեամբ: Վասն զի ոչ ինչ է այնպէս զօ-րաւոր ախտ անձին և ոչ անկանելի և ոչ կայուն, զոր ոչ արտաքս մերժեաց Պաւղոս. այլ միանգամայն բար-բառեալ, և փախչին 'ի բաց հալածեցան: Նա և 'ի կա-պարանն մտեալ և զբանտապահ կապարանին առն-լով տանջեալ և վիրաւորեալ և ամենայն ամբարշ-տութեան վիրօք լցեալ և ապականեալ վարուք՝ այն-պէս վաղվաղակի բժշկեաց, մինչ զի և ամենեւին նոր կատարեալ լինել և սուրբ, որ արդարութեամբ և վա-թարութեամբ և ամենայն չարութեամբ էր լի: Ա-րդ եթէ 'ի կապարանն մտեալ, ուր շղթայք և մա-ղապանք և կախարդք, զկապարանն եկեղեցի այ արար՝ օրհնութիւնս միայն երգելով այ, զինչ արասցէ եթէ 'ի տունս բարեպաշտից մտանիցէ, և զամենայն զբանս զայս յանձինս իմաստնոցն արկանիցէ: Ես գիտեմ յայտ-նապէս և հաւատամ եթէ անհնար է մարդոյ 'ի հեշ-տութեանցն յաղթել որ զփրկական զբանս զայս լուի-ցէ. այլ միանգամայն լսելով եթէ անդամք այ և փրկ-չին եմք, և զամենայն զցանկութիւնս 'ի բաց մերժեալ ընդ հրեշտակս հակառակել զմեզ հնարի ցածութեամբ վարուց:

Նուական է մեծութիւն պատուոյն լաւագոյնս ե-րեւեցուցանել քան զբնութիւնս զախորժողն զամենե-սեան: Ես դիւրին է զայս ուսանել յոմեշանց ժուժ-կալութենէ, որք բազում քրտանց և աշխատութեանց

համբերեն, յաղագս յաղթութեանն և պսակին զմնա-
տի զփառսն երևեալ տանին ։ Բայց մեզ յաղթանակ
առաջի կայ պարկեշտութեանն, ոչ տերև ձիթենւոյ
կամ դափնւոյ, այլ երկնային պսակըն, որ առաւելա-
գոյն քան զարժանաւորութիւն պատուեցելոյն գերա-
զանցեն ։

Արդ ոչ է պարտ և արժան մատնիչ լինել անձային
պարգևացն, այլ պահել յազատութեան զանձն. քան-
զի նոքա միայն են ճշմարիտ ազատք, որք երբեք ոչ ծա-
ռայեալք ցանկութեանց ։ Յաղագս որոյ վայելուչ է զան-
ժոյժ մարդ ծառայ կոչել և ստրուկ, թէպէտ և թա-
գաւոր կարծիցի և յոլով ազգաց իշխեսցէ. և ազատ և
բարեազգ որ պարկեշտութեամբ է զարդարեալ, թէ-
պէտ և ծառայ ոք դիպեսցի և ստրկաց ստրուկ ։ Քան-
զի ոչ մարդկային պատուով սահմանէ զարդարութիւնն
ա͞ծ, այլ զբարուցն զուգութիւնս խնդրէ, և յաղագս
իւրաքանչիւր ուրուք զհրամանն 'ի վերայ բերէ ։

Ուրեմն հնար է ծառային լինել քաջատոհմ և ա-
զատ, և թագաւոր կարծեցեալ լցեալն չարութեամբ՝
ծառայ ։ Ո ի որ զեղբօրն իւրոյ զկին անօրէնութեամբ
յանդգնեցաւ առնուլ, ոչ 'ի ծառայից ոք էր, այլ 'ի թա-
գաւորաց. և տակաւին ոչ 'ի ծիրանիսն և 'ի թագն հայե-
լով անձայինն Յովհաննէս պատկառեաց 'ի շնացողէն,
այլ զոգւոյ զծառայութիւն և զամօթն տեսեալ՝ իբրև
զստրուկ և զարծաթագին և զգերի ոք արհամարհեաց,
և յանդիմանեաց որ մարդկանն իշխել թուէր և հեշ-
տութեանց էր ծառայ ։ Իսկ եթէ ախորժիք ուսանել
ձր և որպիսի է ողջախոհութիւնն, զմտաւ ածէք յան-
ձինս որ յաղագս նորա մեռանել համարձակեցաւ. այլ
որ գեր 'ի վերոյ քան զմարդկան բնութիւն գործոցն պայ-
ծառութեամբ և սուրբ վարուք, որ զմարմին մարդոյ և
զոգին հրեշտակի ունէր ։ Իսկ որ այնպիսին էր, անձային
յայտնութեան փրկչին հրեշտակ և միայն արժանաւոր
այնպիսի փառաց լինել սպասաւոր, յաղագս պարկեշ-
տութեան սրտմտեալ մեռաւ ։ Այլ ներէր տեսանել զա-
նարգել բանաւորին զամուսնութիւնն թշնամանեալ և
զօրէնսն որք յերկնից իջին ։

Քանզի որք յաղագս ամուսնութեան և ողջախո-
հութեան են օրէնք, այս պարգևք են յերկնից իջեալք,

Digitized by Google

օգնականք առաքինութեան մարդկան. որք 'ի բնութենէս և կամ 'ի դիւացն յանցանաց ապականին անձինք, գեղեցկապէս ուղղեն. որպէս ոչ թողացուցանել առ սակաւ սակաւ 'ի հեշտութիւն անկանել, այլ զխորհուրդսն հակառակ կարգել պատուիրեն բնութեանն յարձակմանց՝ դատելով զհեշտութիւնն և զողջախոհութիւնն. զմին արտաքս վարեն, և զմիւսն քաղցրավայելչապէս 'ի ներքս մուծանեն և սիրելիս ա՟յ առնեն զաշխատեալսն. քանզի և արդար իսկ բազում և խիստ քրտանց համբերեն ողջախոհութեանն ընկերիչք: Իսկ եթէ ոչ էր այնպէս; ոչ արդեօք զնոսա անդամս Քրիստոսի անուանել Պաւղոս համարձակէր. այլ զմեծութիւն նահատակութեանն տեսանելով ուսաւ, և երկայնով բանիւքն զարդարեաց զմեզ. զի 'ի պատուոյն մեծութենէ պատկառեալք՝ ա՟ծային անուանն արժանաւորս զանձինս փութասցուք առնել, և մի կախարդութեամբ ցանկութեանցն պատրեալք՝ գերիք լինիցիմք չար հեշտութեանցն. այլ երկնաւոր բանիւքն պարապեալք լաւագոյնք երևեսցուք քան զգանձատարկուէին նշանս: Զի եթէ օրէնքն միայն կային մեզ յա՟յ որ ողջախոհութիւն 'ի մէնջ պահանջէին, պարտ և արժան էր և այնպէս ցածուցեալ լինել, և քան զպղծութիւնն լաւագոյն յօրինացն երկնչելով. իսկ յորժամ և յաղթանակս եւս ժուժկալութեան մեծ կայ առաջի լինել Քրիստոսի անդամ, մի ոք լիցի յողջախոհութեանն հանդէս և մի հեշտասէր ոք երևեսցի և քան զթշնամիսն վատթար, որպէս թէ զսուղ ինչ ցանկութիւն և զառժամանակեան առաջի ունել քան զերկնաւոր քաղցրաւէտութիւնն: Իսկ եթէ պարտ իցէ զճշմարիտն ասել, արդէն իսկ յերկնից արքայութեանն վայելեն ողջախոհութեանն նահատակք: Զի եթէ երկնից արքայութեանն սկիզբն է անդամ լինել Քրիստոսի, արդեօք խնդրեսցէ՞ պատիւ ինչ այլ քան զայս պատիւ, որ և քան զհրեշտակաց մեծավայելչութիւնն գերազանցէ. զի և նոքա մեծ քան զինքեանս վարկանին անդամն լինել ա՟յ և փրկչին:

Բայց չև եւս զզանազանութիւնն ուսաք զպոռնկութեանն և զողջախոհութեանն. լաւագոյն է և զայն յաւելուլ յասացեալս: Ողջախոհքն անդամ անուանի Քրիստոսի և տաճար հոգւոյն. իսկ պագշոտեալքն ան-

Digitized by Google

դամ պոռնկի և անասնոց հաւասար։ Արդ առեալ, ասէ, զանդամսն Քրիստոսի արասցո՞ւք անդամս պոռնկի․ մի լիցի։ Քաջայայտ է յառաքելոցն 'ի Պաւղոսէ, թէ ոչ այնքան չար է յերկնից վայր անկանելն 'ի տիղմ, որքան է չար անդամ լինել պոռնկի։ Որ Քրիստոսին է միաւորեալ 'ի ձեռն ողջախոհութեան, և յետոյ բռնղից հաւատարիցի ինքնակամ 'ի վայր ձգելով զինքն հակառակ խրատու փրկութեանն, ինձ ասել կայ 'ի Պաւղոսի առաքելոյն նշանակելով ասեալ՝ թէ որդէն խակ հանդիպեցան ցածունքն և գժողոց չարեաց զփորձ առին որ ցանկութեանցն ծառայեն․ զի որ միտս ունի, և գիտէ զգալ։ Քանզի արքայութիւնն երկնից պատուականագոյն է, և դառն քան զգժոխոյն տանջանս որ զկնի պատուոյն յայնմանէ 'ի բոցս անկանելով և անասնոց նմանել վարուքն։ Քանզի "մարդ, ասէ, 'ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անմտից և նմանեցաւ նոցա"․ և "Ձիք իգամոլք եղեն, իւրաքանչիւր ոք 'ի կին ընկերի իւրոյ վրնջելով"։

Քանզի ճշմարտապէս այս միայն է մեծ, մարդկան և անասնոց միջոց արար, երկնչել յԱյ և նորա օրինացն զանձինս ուղղել․ որպէս զի որ զԱյ երկիւղն 'ի մտաց արտաքս հանիցէ, յիրաւի ոչ մարդ անուանեսցի․ "ԶԱյ, ասէ, երկիր և զպատուիրանս նորա պահեա, վասն զի այս է ամենայն մարդ"։ Զառիւծ ոյժն զարդարէ, և զձի արագութիւնն, և զսիրամարգ գեղեցկութիւնն․ բայց զմարդ Այ երկիւղն՝ հաւասար նմա և հրեշտակաց լեալ։

Արդ վայել է մեզ որք ողջախոհութեամբն կրօնաւորիմք և մաքրաւորութեանն եմք կենակիցք և հեզութեամբ զուարճանամք, գործովք ցուցանել եթէ ճշմարտապէս եմք մարդիկ ծառայք Քրիստոսի Այ․ ընդ որում հօր փառք հանդերձ սրբով հոգւովն յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Digitized by Google

## ՎԱՍՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈԽԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ

Ի զանազան երանգս գունոց ծաղկանց նմանեցուզարդ առաքինութեանց։ Այլ զի զոր ունիցիմ ասել․ ողորմութիւնն, զանոխակալութիւնն որ 'ի վեր անցանէ քան զամ առաքինութիւնս, եթէ զչշնալն, զչսպանանելն, զչգողանալն, զչվկայելն ստութեամբ, զչերդնուլն, զչանիրաւելն զոք, և զայն որ ոչ եւս ագահէ, ոչ յափշտակէ, ոչ նախանձի, ոչ չարի, զչբամբասելն զոք, ոչ ատել ումեք, զոչ շոգմոգելն ումեք, զչարբենալն, զլռութիւնն, զոչ բարկանալն, զերկայնմտութիւնն, զչծուլանալն, զչդանդաղելն, զչմատնելն զոք, զչսիրելն զարծաթ որ է հիմն և հաստատութիւն ամենայն առաքինութեան, զանստացուածութիւնն, զչամբարտաւանելն, զչյանկալն, զհամբերութիւնն, զզօհութիւնն 'ի տրտմութիւնս, զմաքրապէս աղօթելն, զկատարելապէս կրօնաւորելն, և որ ըստ այսմ նման զբովանդակ առաքինութիւնս։

Բեր այսուհետև զգովութիւնս սորա 'ի մէջ ածցուք, զի օգտակարք իցեն ամենայնոց, և վասն շահի ոգւոց կարգեցան և հաստատեցան։ Այլ ոչ ոք իցէ որ զուգահաւասար կատարեաց զամենեսեան զայս, զի բանաւորկութիւն բռնադատեալ զխորհուրդս մտաց մերոց որդեցցէ յականջաց մերոց զմուտ բանից առաքինութեանց։ Այլ զի մի զամենայն զփոյթն 'ի վերայ առաքինութեան այնմիկ վատնեսցուք, որ առանց միւսոյն ոչ ինչ կարէ օգտել զմեզ, այլ զայն ընտրեսցուք յայսմ 'ի բազմութեան զանազան ծաղկանցս որ միայն կարող է մեզ ա․ 'ի շահ լինել և հանգիստ գտանել 'ի հանդերձեալ յաւիտենին․ և ոչ ոք իցէ որ խափան առնէ եթէ զծուլութիւն 'ի բաց թօթափիցեմք և զուարթամիտք լինիցիմք։

Այս զայս ասեմ ոչ յանպատշաճս, այլ յօգտութիւն անձանց ձերոց տնօրինեմք։ Ոչ եթէ անպատուեմ զառաքինութիւնն զայն, որ առանց միւսոյն ոչ լինիցի յօ-

Digitized by Google

գուտ, քան լցի։ Եթէ բովանդակ զամենայն առաքինութիւնս ող կատարեսցէ, զուարճացի ոգի իմ. ապա թէ ոչ՝ սակայն 'ի յայնմ առաքինութիւնս պարտ է ծախել զամենայն ջանս որ յօգտութիւնս լինիցի հոգւոց մերոց։ Եւ որ իցէ այն և ուստի, ասեմ։ Ի բանից անոխակալութեան և չնութեան ողորմութիւնն շահս բազումս առնէ. իսկ ուր անոխակալութիւն լինիցի, ամենայն առաքինութիւնք և ողորմութիւնք և բազմութիւնք բարեաց անպայտք լինիցին. որպէս և ընդդէմ այնոցիկ անոխակալութիւնն զբիւրս 'ի յանցանաց ջնջեսցէ և անյայտ արասցէ։

Եւ դարձեալ ողորմութիւնն այլ ինչ ունիցի զանազանութիւն։ Եւ որ իցեն այնոքիկ։ Որ առատապէսն առնիցէ և ոչ ճշդիւ. զի որպէս խնդրեսցես, այնպէս ջանասջիր առնել։ Լուր զինչ ասէ մարգարէն. “Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողորմութեան քում”։ Դու, ասէ, զայդ ամենայն ճանաչես և գիտես, և յաւէտ ընդ սաղմոսդ զայդ բերես 'ի բերան քո, և խնդրեք և ըստ խնդրուածոց ձերոց ոչ առնէք զողորմութիւն։ Ոչ սուղ ինչ խնդրէ ած, այլ առատապէս։ Մի դուք պատճառիք պատճառս մատուցանել՝ թէ որպէս ոչ ունիմ, ոչ պահանջիմ։ Պահանջի 'ի քէն որչափ և կար է քեզ։ Եւ զիարդ արդեօք. որպէս ասեմ, այն որ ունիցի բիւր դահեկանս՝ և որ ունիցի դահեկան մի և ծախէ զայն աղքատաց, հաւասար համարեսցի առաջի այ. զի որ բազում ունիցի, բազում պահանջեսցի 'ի նմանէ, և 'ի չքաւորէն նուազ։ Ո՛ի այն որ ունիցի յոլով և ծախէ սակաւ կարօտելոցն, զինչ իցէ շահն. մանաւանդ իբրև թէ ծածուկ եղեալ յայ՝ ոչ գիտելով զգաղտնիսն, առնելով զայնոսիկ և բարկացուցանէ զնա քան եթէ ողորմած առնէ սուղ ինչ բաշխելովն։

Եւ ոչ եթէ իմ է բանս այս, այլ վարդապետին իմոյ այ. “Եթէ ոչ յաւելուն գործք ձեր քան զդպրացն և զփարիսեցւոցն” և որ 'ի կարգին է. իսկ նոքա զտասանորդսն սովոր էին տալ աղքատաց։ Եւ զոր ասեմ այսպիսի է. առաջի դիցեն մեզ կարգք առաքինութեան՝ պահք, աղօթք, տքնութիւն. այլ եթէ զամենայն ընդփոյթ 'ի վերայ այսց առաքինութեանց դնիցեմք և զողորմութիւնն անտես առնիցեմք, 'ի զուր աշխատեցաք։

Digitized by Google

Այլ թէ հողով լնումք զմուտս կերակրոյ և փոշւով զանդ-ղի խորտակաց համեմմաց անուշից, և յարածամ զգի-շերն 'ի գլուխ հանիցեմք և յաղօթելոյ ոչ մերժիմք և ոչ տամք նինջ արտևանանց, 'ի զուր աշխատեցաք ձեռ-նարկել այդմ իրաց առանց ողորմութեան. առաւելն ընդ-մարտչին չարաչար տանջելոց անսպառական պարհօքն, խոկ ո-գիք մեր 'ի կեանսն յայն զյաւիտենականն տանջանսն ժառանգեսցեն:

Այս յաղագս այսմ բանիցս ծանեայց քեզ վկայ զմեծա-բանն Եսայիաս. «Ոչ պահք զայդպիսին ընտրեցի ա-սէ Տէր, և ոչ զօրն յորում տառապեցուցանէ այր զանձն իւր, և ոչ եթէ կորացուցանես որպէս ընդ օղով զպարա-նոց քո, և քուրձ և մոխիր տարածեսցես ներքոյ քո, և ոչ զայն կոչեսցի պահս և օր ընդունելի Տեառն. այլ լուծ զամենայն կապանս զկնճռին անիրաւութեան, ընդ-վաճառաց բռնութեան, արձակեա զկոտրեալսն թողու-թեամբ և զմուրհակս անիրաւութեան 'ի բաց պատառե-ա, քաղցելոց բրդեա զհաց քո և զաղքատս անյարկս ած ընդ յարկաւ քով, և եթէ տեսանիցես մերկ՝ զգե-ցո. յայնժամ ծագեսցի վաղվաղակի լոյս քո, և բժշկու-թիւն քեզ վաղվաղակի երևեսցի»: Տեսանե՞ր, սիրելի, զի ոչ 'ի զուր ինչ առաւելցի թէ ոչ օգտիս 'ի պահոց առանց ողորմութեան:

Ներելոց քեզ և այլ վկայս, ո՞չ ապաքէն կուսանքն այն զհրեշտակական զուարթնութիւն զգեցեալ էին զկու-սութիւն. ո՞չ զպահս ձգեալ էին յանձինս իւրեանց, որ է հիմն առաքինութեան. ո՞չ յարաժամ աղօթէին, որ աղօթքն մեծ ևս բարիս քարոզի. ունէին և ողոր-մութիւն, այլ յաւելորդաց և ոչ առատապէս. զինչ արդեօք վասն նոցա առասցես: Խցան դրունք փեսային և հարսանեացն, թէ ո՞չ յայտ է թէ զձայնն տէրունա-կան լուան որ ասէր՝ թէ «Ոչ ճանաչեմ զձեզ»: և ա-պա ապաշխարութիւնք մեծ կայ և ձայն նոցա. զի ամենայն զոր ած ոչ ճանաչէ, տանջանք տեառն ընդունեսցէ զնա: Իսկ նոքա որ զարդարեալ էին կուսութեամբն և պահօք և ա-ղօթիւք, և սուղ ողորմութիւն նոցա չօգնեաց, որչափ ևս առաւել մեզ որ դուզնաքեայ ստացեալ եմք յայդ առաքինութեանց, և զողորմութիւնն որպէս պատշաճ է ոչ առնիցեմք:

Այլ զոր ասէս այսպիսի ինչ է. որ բարի առնէ՝ նմա առնէ, նոյնպէս և որ զչարն։ Այս եմ, ասէ, որ զերկինս ձգեցի որպէս խորան, և զերկիր հաստատեցի 'ի վերայ ջուրց, և անսասանելի ունիմ զաթոռ իմ յերկինս, և իմանալի զօրութիւնքն և բազմաչեայ քերոբէքն և վեցթևեան սերոբէքն նկատել ոչ կարեն. բայց մտեալ 'ի փոքրկանց այտի յեղբարց իմոց տեսցես զիս դողալ 'ի մէջ փողոցացդ, ես ընդ նմա դողամ ստուգապէս. և եթէ ջեռուցես զթիկունս նորա, համարեաց զիս ջեռուցանել. և եթէ զնա արկանես ընդ յարկաւ քով, զիս արկեր. և թէ առ նա գնայցեր, առ իս եկիր. եթէ զնա անտես արարեր, զիս արարեր. եթէ անարգեցեր զաղքատն, զիս անարգեցեր. եթէ զնա ապտակեցեր, զիս ապտակեցեր. և եթէ բարի արարեր, ինձ արարեր։ Վասն զի չահ ողորմութեանն, մի՛ յապաղեր գործել զնոյն։ Ինչ է. այլ ունիմք, ասէ, որդիք հանդերձ մարքն և ոչ կարեմք ծախել զինչս։ Ահա դարձեալ պատճառս անհամս, թէպէտ և հասարակաց իցէ. մինթէ դու լաւագոյն հոգաս քան զԱծ։ Արդ որ ողորմի աղքատին, ողորմած իցէ. և որ բարի հատուսցէ չարին՝ Ած. և 'ի ձեռն այսց երկուց առաքինութեանցս քաւին ամենայն յանցանք։ Վասն որոյ աղաչեմ զձեզ մինչ և հանապազ զողորմութիւնն բառնալ 'ի վերայ ձեռաց։ Այլ զոր ասէս այս է. որ բարի առնէ առաւելացն, որ եդից զերախտիսն, հաւասար լիցի Այ։ Այլ ոչ է իմ բանս, այլ հասարակաց Այն և վարդապետին։

Այլ արդ բաւական է զոր յաղագս այդորիկ խօսեցաք բանս. բեր յաղագս անոխակալութեանն և որ բարի առնէ ատելեաց իւրոց, ոչ այլով իւիք և ոչ մի օգտիք, բայց եթէ սիրեսջիք զթշնամիս. զի որ սիրեաց զընկերն, կատարեաց զօրէնսն. զի որ սիրէ զընկերն, չար երբէք ոչ գործէ. և լրումն օրինաց սէր է, և ինքն Ած սէր է։ Այլ դարձեալ մի՛ ասասցես թէ զայսպիսիս սիրէ Ած որ մեծատունք են։ Օ բարոք համարիս թէ յԱյ իցէ. զի զոր տայ Ած, մարդկան զխարգ չնորհէ. մինթէ սիրէ Ած զմեծատունս և վասն այնորիկ տայ նոցա։ Վասն որոյ աղաչեմ և յաղաչելոյ ոչ դադարեմ, զի որ թողցէ ընդյանցանս ընկերին և ոչ պահէ ոխս, թողցի նմա և յանցանք իւր. նոյնպէս և որք ունիցին չնորհս ողորմութե,

'ի ձեռն շնորհաց իւրեանց ժառանգել զկեանս և հասանել մասին պարգևաց։ Արդ իւրաքանչիւր ոք զառին գործել ջանասցէ և արժանաւորեսցի արքայութեն երկնից։ Որոց լիցի ամենեցուն մեզ հանդիպել շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում հօր փառք համանգերձ հոգւովն սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Ի ՍՈՒՐԲՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՅԱՌԱՋՍԱՐԿԱՒԱԳ ԵՒ ՆԱԽԱՎԿԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ

Եկն Քրիստոս եհաս ճանապարհ հորդելոյ առ 'ի կեանս և 'ի փրկութիւն աշխարհի, և ընդ նմա բողբոջեալ աճեցին բարեպաշտութեանն պտուղք։ Ի մէջ ծագեաց վկայն ճշմարտութեան, և ընդ նմին պայծառացեալ լուսաւորեցան վկայք մեծի տնտեսութեանն. հետևեցան աշակերտքն վարդապետին տիրական շաղացն. ծառայքն ընդ Քրիստոսի, քրիստոսազգեացքն ընդ արեգականն արդարութեան, լուսաւորքն տիեզերաց։ Այլ նախ առաջին մեզ ծաղկեցաւ Ստեփաննոս, որ առ 'ի հրէական փշոց բողբոջեալ պտուղ. այլ յեկեղեցականն մեծութենէ ընծայեալ տեառն պտուղ առաջին։ Նախանձի հրէիցն արտածեալ պսակ 'ի փշոց եդին 'ի գլուխ փրկչին, զարժանիս ·իւրեանց չարաչար մշակութեան ցուցեալ զպտուղ այգւոյն տեառն։ Վասն որոյ Եսայիս նախաձայնեաց. «Այգի տեառն զօրութեանց տունն Իսրայէլի, և մարդն Յուդայ նորատունկ սիրեցեալ. մնացի զի արասցէ իրաւունս, և արար անիրաւութիւն»։

Նոյն ճշմարտութիւն աւետարանական մշակքն սկիզբն և նորընծայ և առաջին պտուղ մշակութեան ցուցանէն տեառն զՍտեփաննոս այր սուրբ։ Զոր օրինակ պտուղ ինչ ճշմարիտ առ 'ի բազում և 'ի զանազան առաքինութեանց պատրաստեալ. վասն զի նախ և առաջին սքանչելիս այս՝ զայրեացն հաւատացեալ սպասաւորութիւն, վկայեալ յառաքելոցն բանիւ և արդար դատողութեամբ գոլ զնա այր հաւատարիմ և լի հոգւով սրբով. և դարձեալ յաղագս զօրութեան հոգևոր իմաստութեանն։

Վասնզի ած̃եղէն բանիւք այնքան յաղագս քարոզու-
թեանն ցուցանէր ջատագովութիւնս, որպէս զի մեծա-
մեծ և հրաշագործ ած̃այնով վարդապետութեամբն
հաղորդեալ նմա ած̃եղէն ներգործութեանցն ։

Վասնզի "Ստեփաննոս լի հաւատովք և զօրութեամբ
առնէր նշանս և արուեստս մեծամեծս" ։ Սան զի ոչ
սպառ վերկաւ խափան գոլ նմա յաղագս բանին առա-
քինութեան որ վասն այրեացն փոյթ. այլ և զայս ու-
նէր յօժարութեամբ, և յայնմանէ ոչ նուազէր ։ Եւ
էր ՚ի վերայ նորա մեծապանչ զարմացումն. ոչ բարձ-
րամտութեան լինէր առիթ, վասն զի այր ՚ի սէր հա-
ւատացեալ և խնամատար հոգւոց լինէր, զոմանս հա-
ցիւ կերակրելով, իսկ զկէսս բանիւ խրատելով. և ոմանց
զմարմնականն դնելով առաջի սեղան, իսկ այլոց ոմանց
զհոգևորականն մատուցանելով զարմանս ։ Օ՜ր էր, ա-
սէ, այր բարի և լի հոգւով սրբով. ուստի բարեբարոյ
մտօք զաղքատացն հաւատացեալ լինէր արբանեկու-
թիւն ։ Իսկ համարձակութեամբն և զօրութեամբ հո-
գւոյն զթշնամիս ճշմարտութեանն վերջահարէր. ամե-
նեցուն ընդդէմ բախելով և ընդ ամենեսեան ճգնե-
լով՝ բարեպաշտութեան բանիւք զխորհուրդս քակէր,
և զամենայն բարձրութիւն հպարտացեալ ընդդէմ գի-
տութեանն այ̃ ։ Եւ այնքան էր զօրութիւն բանի նորա
մեծ, մինչ զի ըստ վկայութեան գրոց սրբոց ոչ ումեք
կար էր զդէմ ունել իմաստութեան և զհոգւոյն որով
խօսէր ։

Ստուստ սա ՚ի ժողով անհաւատութեան ձգեալ
լինէր քարոզ ճշմարտութեան. ուստի պարտ է մեզ զա-
մենայնիւ զայլովքն զանց արարեալ՝ զնախավկայիւն նախ
առաջին զպարտսն հատուցանել ։ Վասնզի նախ յառաջ
ոչ աւուրբք և ոչ ժամանակօք շուրջ սահմանեալ լինի
սրբոյն դրուատք և յիշատակք. և դարձեալ որոց բարքն
ոչ լինին բաժանեալ, նոցին և ոչ յիշատակքն սահմա-
նին ։ Ուստի ոչ այսուհետև մարտիրոսք առանց առա-
քելոց, և ոչ դարձեալ առաքեալք առանց մարտիրո-
սաց. քանզի վարդապետք մարտիրոսաց առաքեալք. իսկ
պատկերք առաքելոցն մարտիրոսք ։ Ուստի զպատկեր և
զնկարագիր նոցա բերելով երանելին Ստեփաննոս. որ
զի թէպէտ և ՚ի ձեռն մահուն նախ և առաջին զպր-

տանէն մարտիրոսութեան զգեցաւ, համանգն 'ի ձեռն համբերողական վկայութեանն զվարդապետս զցաստուցացանէր: Այս լինէր Ստեփաննոս ստուգապէս պսակ առաքելոցն. քանզի Ստեփաննոս առաջ բարիոք վարդապետացն եղև զարդացուցանող եկեղեցւոյ, որպէս զբէ աստուածայինն առաքեալ ասելով առ փիլիպեցիսն. “Եղբարք իմ և անձկալիք, ուրախութիւն իմ և պսակ, այսպէս հաստատուն կացէք 'ի Տէր, սիրելիք”: Այլ մեք յառաջիկայն վերստին երթիցուք:

Այժմս ահա 'ի ժողովս քրիստոսապատկերիցն քրիստոսակերպն. 'ի ներքս մաղեաց ոսկւոյն յաւհանս պայծառն. այլ էր ոչ պարզաբար և սոսկ ոսկւոյ զաղամանաւոր, այլ ոսկւոյ 'ի Քրիստոսէ հալեալ և ընդ պայծառն մարգարտացեալ: Յորոց ունիմք ահա զայրանայլն և կրճանէլն 'ի վերայ նորա զատուածուն և սպառնալեօք ղօշխարն խածանելն. իսկ սմն ընտա մանաւանդ յանդիմանելով և սպառնալեօք և անհաստատանութիւն կշտամբէր: Այլ աղաչեմ մի սակաւաբար զանց առնէր զատագելովքս: Իսկ արդ նա առ այնչափ ժողովս չարացելոցն և առ այնքան անօրէնաւորս 'ի վերայ յարձակեալ նորա քարոզն՝ վառահացաւ համարձակել և առել իսկ յետ բազում վարդապետութեանն այնորիկ. “Խստապարանոցք և անթլփատք սրտիւք և ականջօք”: Արդ մինչդեռ առ 'ի վերայ երկրիս երևէր, յերկինս լինէր ուսեալ, և ընմարդկան զգեցեալ զձև՝ առ 'ի հրեշտակական պատկեր և 'ի կերպարանս լինէր փոխեալ: Այս այն ոչ վայրապար էնչ. քանզի վայել էր ստուգապէս 'ի նախավկայն ցուցանել 'ի մարտիրոսաց պատուոյն, և ճանաչել այնուհետև բոլորից զնորա ուխտիս շնորհս:

Ով փափագ մարտիրոսի, որ ոչ միայն զհրեշտակականն շնորհէ պատիւ, այլ և զերկնիցն բանալ մեզ զդրունս. ոչ զի 'ի մահ զանձինս առաքիցէ, այլ զի 'ի ձեռն Քրիստոսի զնոսա աւանդիցէ: Քանզի որպէս տէրն մեր և փրկիչն իւրում հօրն գոչեաց 'ի խաչին ասելով, “Հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ”, նոյնպէս և նորին Քրիստոսի ծառայն Ստեփաննոս հայեցաւ առ Տէր իւր և ասաց. “Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ”: Եւ ապա դարձեալ թէ որպէս 'ի վերայ քարկոծչացն աղօթս առնէ ասելով. “Տէր, մի համարիր սոցա զայս մեղս”: Ով

Digitized by Google

ոչչափ անյիշաչարութիւն, ով գեղեցիկ յօժարութիւն, ով որ կամէր ոչ միայն զիւր ինքեան մտանել յարքայութիւն, այլ և զնաւին իսկ զապականողն, տէր Յիսուս, աւետեալն, ընկալ զոգի իմ: Այս իսկ և իսկ ընդ ձայնիւ այսորիկ աւանդեաց զոգին: Ի յերկինս հրեշտակք զնա ընկալան որպէս զդասակից իւրեանց, և տանել նոքա 'ի վերուստ մանկաւանդ առաքէին զզարդ-բաւարարս հնչումն նուագերգութեանց, քան զորեւիցէ մանկունք 'ի ներքուստ զքարանցն հզմեն:

Իսկ արդ Ստեփաննոս զանազան ձգնութիւնս 'ի վերայ երկրի ձգնեալ, զերկնից ընկալաւ զժառանգութի՛ն, զորոյ զգլխոյ կարգեցան քարինք պատուականք մի ըստ միոջէ զատուորեալք քարոզք ճծեղէն աւետարանացն նա 'ի նոցանէ զարդեալ մարտիրոսք, յորոց և որք փորձական առաքինութեամբք պայծառացեալք մեծացան մենակեցացն վարք: Նման արդ և մեք, սիրելիք, հաւաքեալք յիշատակաց սրբոցն, փառս մշտնջենաւորապէս տը 'ի բարձունս առաքեսցուք, որ այսպէս բարւոքապէս անօրինաբար յորինեաց աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց և սրբոյն Ստեփաննոսի. բաղձ զձեզ ՏՐ փրկեալ պարապահպանեալ, և տացէ զվիճակ ժառանգութեան ընդ ամենայն սուրբս 'ի հանդերձեալ կեանսն 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

## ՅԱԴԱՄ ԵՒ Ի ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆՆ

Բարւոք են համբերութեան պտուղք, քանզի բարւոք վաստակոց պտուղ բարեփառ: Վաստակք և աշխատութիւնք ծնանին զառաքինութիւնս. վաստակք պատրաստեցուցանեն զպահոցն աւետիս. վաստակօք ազգին պայծառ պատմուճանք վկայութեանց. վաստակոցն յաղթանակ արքայութիւնն երկնից հաստուցանելի է մեզ: Ընդ ձծայինն այնոցիկ վաստակոց ամենառաքինիս այս շարաւթ, և խայտա ընթերցան որ ամենեցունց նախակրթարան և փայլէ բարեպաշտութեանցն յաղթանակ: Այսօր է օրն ըստ որում Ադամ ստեղծաւ, ըստ

պտուղ լաւս պատկերի ոչ եղև։ Այլ զի երէկ մեզ ձայնէին զործարան ոչ լուաւ, հարկ է այսօր 'ի նմին աւուր լաւս պտուղ Ադամն ստեղծաւ, զյարութեան խոս 'ի կէր արկանել բանիւ։ Ստեղծ զնա մեծ, և յորում աւուր ստեղծ զնա, վերստին դարձեալ բանն ոչ լաւս նմին աւուր յարուցանէ զնա։ Այլ արդ զնախակարգ պատմութեան խոկ բուան հարցուք։

Յորժամ արար մեծ զտիեզերս, և զարդարեաց զերկին արեգակամբ և լուսնով և աստեղօք, և զանձանձնեաց զերկիր գետովք և ազգերբք, ծծեալ զօտի ընդ մէջ և ծաղկօք պսակեալ, և զծով զանազան ձկամբք և զեռնոց ազգօք 'ի բաց պարկեշտացոյց, և համանգամայն զամենայն եղեալքս յաշխարհիս, որպէս և յառաջ անգամ ասացի, ապա արարչագործեաց զաշխարհիս այսորիկ զտէրն։ Բայց ստեղծ զնա ոչ նմանապէս այլոցն. քանզի զչորքոտանիս և զջրազանս և զթռչունս բանիւ միայն հրամայէ և արտաքս բերէ յերկրէ, քանզի ասէ. "Հանցէ երկիր չորքոտանիս և գազանս և սողունս"։ Զծառայսն բանիւ կոչէ, իսկ զստեղծուածն մեծագին պատկերին ձեռօք ստեղծու։ Ոչ եթէ ձեռք ինչ կամ անդամք յայտնիկ, այլ զպատուին կամեցեալ ցուցանել զստեղծեցելոյն, 'ի ներքս ածէ ձեռս մեծ արարեալ ըղձմնել մարդոյն։ Որպէս և մեք զնուաստ ինչ 'ի գործոյ հրամայելով առնեմք, իսկ զփափագելին ինքեանքս խոկ մերէն առնեմք. զի վասն այսորիկ խոկ ասէ գիր. "Առ մեծ զհողն յերկրէ"։ Այլ առ հող, և ոչ կոշտ ինչ, այլ անօսրագոյն հող։

Տեսանեմս զի 'ի նմին խոկ յառաջնմէն յոյն յարութեան հաստատեցաւ։ Վասնզի հանդերձեալ էր 'ի հող դառնալ ըստ ասացելումն թէ "Ի հող մահու իջուցին զիս". զի մի ոք որ 'ի գերեզմանս հող տեսանելով 'ի բաց հատցէ զյոյս յարութեան մարդկան, անդէն իսկ յարարչութենն հաստատեաց զյոյս յարութեան. վասն որոյ և ասէ. "Առ մեծ զհողն յերկրէ"։ Այլ անդ հող և աստ հող. նա զօրութբ արուեստաւորին եղև փոխադրեալ; և սա իմաստութբ արարչին փոխարկի։ Այլ առ, ասէ, և ստեղծ։ Զուստ էառն և զով էառն ուստր. իսկ եթէ զիարդ փոխաբերեաց՝ զայն ոչ ասէր։ Զբանն եցոյց և զօրինակն թողոյց, զի ուսցիս մի ինչ

հետաքրքիր լինել ա̃յ արարչութեանցն ։ Եւ եթէ զա̃յ արարչութիւնն քննել ոչ հրամայեցար, որչափ ևս առաւել զա̃յ զծնունդն քննել ոչ պարտիս ։ Եւ ապա ը̃դ չորքոտանիսն անելով ա̃ծ, 'ի միասին ը̃դ մարմնոցն և զշունչսն ա̃ծ 'ի վերայ ։ Բայց զմարդն ստեղծանելով՝ նախ յարդարէ զզգայարանսն, և յայնժամ ապա զհոգին արարչագործեալ եմոյծ 'ի նա. ընդէ՞ր. զի յայտնի ցուցցէ զառաւելութիւն մարդոյն ։ Եւ զի այլ կենդանիքն լուծեալ մահուամբ և շունչն ը̃դ նմին ապականի, անդուստ ասէ և զնոցա լինելութիւնն ուր անդէն համդերձեալ էր ամենևին ապականել. իսկ զմարդն ստեղծեալ զմարմինն յերկրէ առնոյր, բայց զհոգին փչէ 'ի նա ։ Եւ փոքր ինչ անսա, զի և զբան փչմանն ըստ կարի իմում յայտնեցից քեզ. վասն զի 'ի բնմէն իսկն ը̃դ սորա յոյս յարութեան ստորագրէ ։

Ստեղծու նախ զմարմինն, և յառաջ էառ մարդն պատկեր մեռեալ, և ապա պատկեր կենդանի և կենդանի նկարագիր, և զկենդանի ազդումն ընկալաւ ։ Նախ ցուցաւ մեռեալ և ապա կենդանի. յառաջ ստեղծ մարմինն մեռեալ յոր կատարելոց էր զմարդն, և ապա յորժամ կատարեաց զմեռեալ մարմինն՝ յայնժամ և ը̃դ կենդանի նշանագիրն ։ Եւ ոչ առնէ զհոգին յառաջ քան զմարմինն, զի մի՛ եղիցի ինքնատես եղելոյն. ոչ առնէ հոգւոյն մերձ կալ յարարչութեանն, զի մի՛ պարծեսցի իբրև զգործակից ա̃յ. և ոչ միայն զի մի՛ պարծեսցի, այլ զի մի՛ և զօրինակն իսկ տեսցէ զեղելոցն ։ Ոնոյն և այժմ առնէ ա̃ծ, զի զիւրաքանչիւր ոք ստեղծու յորովայնի. և զիարդ ստեղծու, ոչ տայ թոյլ ումեք տեսանել ։ Ստեղծանիմք և ստեղծանիմք, և բնութիւնն զիւր կարգն կատարէ, և զպատճառ ստեղծմանն ոչ ոք կարէ գիտել ։ Մի՛ զքննչելեացս, շինի տաճար 'ի մարմնում, ստեղծանի տղայ յորովայնի, տուն 'ի տուն յարդարի, և որ արտաքոյ տունն ոչ զգայ ։

Եւ արդ առնէ զմարդն ըստ մեռեալ պատկերի, ապա ասէ՝ թէ "Փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն յոգի կենդանի" ։ Եւ բազումք կարծեն եթէ փչումն այն է շունչն, և զի յէութենէն ա̃յ փոխարկեցաւ տաճարին 'ի շունչ ։ Եւ այս ոչ բազում անմտութի միայն, այլ և լի բազում յառաւթեամբ. քան-

Digitized by Google

զի եթէ 'ի գոյութեանցն իւր է շունչն, պարտ էր նմա աս-
տուածական հաւասար լինել, և ոչ էր պարտ 'ի միում լինել իմաստուն, և 'ի միում յիմար և անհանճար. և 'ի սմա շունչ բարի, և 'ի սմա շունչ անիրաւ. վասն զի գոյութիւնն իւր ոչ բաժանի և ոչ այլայլի, այլ կայ անփոփոխելի. զի "Ես եմ, ասէ, և ոչ փոփոխիմ": Ապա, եղբարք, ոչ միայն գտանեմք մեղուցեալ զհոգիսն, յայտնանէ յանդիմանեալ որպէս զի չեն յէութեանցն իւր, այլ գտանեմք զնոսա ընդ դատապարտանօք արկեալս. քանզի տէրն ասէ. "Մի երկնչիք 'ի սպանողաց զմարմինս և զոգին ոչ կարողաց սպանանել, այլ երկերուք առաւել որ կարողն է զոգի և զմարմին կորուսանել 'ի գեհեննին": Արդ եթէ 'ի նմանէ է հոգին, ապա զինքն դատի նա:

Այլ արդ զինչ էր փչումն՝ կարևոր է տեսանել: Փչումն իւր՝ հոգւոյն սրբոյ է ազդումն. զի որպէս փրկիչն փչեաց յերեսս երանելի առաքելոցն և ասէ. "Առէք հոգի սուրբ", այսպէս զփչումն նորայն մարդկաբար լսելի լեալ՝ և նմանայնեցուցաբար ընդունելի գալ հոգի երկրպագելի: Նոյն հոգի մատուցեալ՝ ոչ եղև հոգի, այլ հոգի ստացոյց. և ոչ ինքն 'ի հոգի փոխարկեցաւ, այլ զհոգին արարչագործեաց. քանզի արարիչ է հոգին, և հաղորդ արարչութեան հոգւոյն և մարմնոյն ընդ հօր և ընդ որդւոյ, և նմայնն զօրութեամբն արարչագործէ զստեղծուածն: Այլ մի կարծիցես եթէ մասն ինչ լինի նպաստ հայր և մասն ինչ որդի և մասն ինչ հոգին սուրբ. այլ զայս ասեմ, զի թէպէտ հայր անուանիցէ, որդւոյ գործ է և հոգւոյն սրբոյ ուղղութիւն. և եթէ որդի արացէ, անն հօր արարչութիւն է և հոգւոյն սրբոյ ազդումն:

Նաև եթէ ոք իշխեսցէ ասել եթէ հոգին սուրբ չէր հաղորդ 'ի միում արարչութեանն, կշտամբեսցի: Որ եթէ ոչ 'ի սրբոյ երրորդութեանն էաք ստեղծեալք, զիա՞րդ յերրորդութեանն ծնանիմք մկրտանին. և եթէ ոչ 'ի հայր և յորդի և 'ի սուրբ հոգին հաւատալիս արարածք, զիա՞րդ 'ի հայր և յորդի և 'ի սուրբ հոգին մկրտեալ նորոգիմք. այլ յորժամ եղեալքն ստացեալք, ոչ եղեն պէտք հոգւոյն սրբոյ, բայց յորժամ նորոգիմք յայն ժամ, ապա տուեալ արարիչ է հոգին սուրբ, թէպէտ կամին թշնամիքն, թէպէտ ոչ: Այլ միայն Դա-

Digitized by Google

ւիթ առաքելական զօրութեան Հոգւոյն, զի յաղագս մարդկային կազմածոյս ձեռաւալ ասէ. "Ամենեքեան քեզ ակն ունին տալ կերակուր 'ի ժամու", և որ զկնի: Այս տալս զի՞նչ որ 'ի վերայ ածեալն. "Դարձուցանես զերեսս քո և խռովեսցին. հանցես զոգի 'ի նոցանէ, պակասեսցին և 'ի հող իւրեանց դառնան: Առաքես զոգի քո, և ստացեալք եղիցին": Որպէս ուրեմն ստացիչ և առաքչակից է Հոգին սուրբ: Այլ հայեաց 'ի ստուգութիւն բանին. յորժամ վասն մերոյ Հոգւոյս ասէ, ասէ՝ "զհոգի հանես 'ի նոցանէ", ոչ զքո, այլ զնոցայն. իսկ յորժամ վասն սրբոյ Հոգւոյն ասէ, "առաքես, ասէ, զհոգի քո, և ստացեալք եղիցին":

Իսկ եթէ առ այսոսիկ յանդգնեսցի ոք 'ի հերձուածողաց հակառակաբար տեսանել զճշմարտութիւնն, դարձեալ այլ վկայութիւն փայլատակեսցի՝ զհոգւոյն սրբոյ զարարչութիւնն քարոզելով, վասն զի լաւագոյն քան զամենայն արարածս և քան զերկինս և զերկիր և զծով Հոգւոյն սրբոյ գործ գտանի: Ո թէ և մարմինն Քրիստոսի ամենասուրբ երկրպագելի, 'ի ձեռն որոյ երկինք և երկիր և ամենայն արարածք փրկին, Հոգւոյն սրբոյ գործ է: Վասնզի սրբոյ կուսին տարակուսեալ առ աւետարանեալ օտար և ըզանչելի երկունսն, և ասացեալ եթէ "Ո՞րդ լինիցի ինձ այս, զի ես զայր ոչ գիտեմ", և ասէ ցնա հրեշտակն. "Հոգի սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո": Ոմանք կարծեցին զօրութիւն ասել զորդի: Այլ պարտ է տեսանել եթէ զհոգին սուրբ կոչեաց՝ հոգի սուրբ և զօրութիւն. քանզի որպէս Քրիստոս ասի ա̃յ զօրութիւն, նոյնպէս և Հոգին զօրութիւն անուանի, ասելով ցաշակերտսն տէրն. "Կացէք յԵրուսաղէմ մինչև զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց": Այս և հրեշտակն ասէր ցՅովսէփ. "Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ 'ի նմայն ծնեալ է, 'ի Հոգւոյն սրբոյ է":

Այլ արդ զի զմարմինն Քրիստոսի Հոգին սուրբ ստացաւ, ցոյց զզանազանութիւն արարչութեանն առ արարածս և տէս, մի ամօթ վարկանիր զհողեղէն պատակերն: Վասնզի եթէ ըստ քո բանից յորժամ եղեն Ադամ, հաղորդութիւն ոչ ունի յարարչութեանն Հո-

զկին սուրբ, այլ զատեալ լինի և անդ. զի հայր և որդի ստանալով զերկրային զմարդն, իսկ հոգին սուրբ զերկնայինն. զի "Փչեաց, ասէ, յերեսս նորա, և եղև յոգի կենդանի": Եւ նայեաց զգուշաբար. յորժամ ըստեղծաւն և արարաւն և զընտանին ընկալաւ զպատկեր, կինն չև ևս էր ստեղծեալ: Այլ զինչ. արար զնա ա՟ծ, որպէս զի ոչ կամեցաւ զհոգին Ադամայ մերձ լինել յարարչութեանն, այնպէս ոչ ետ թոյլ մահկանացու աչօք ումեք կալ մօտ յարարչութեանն: Վասն այսորիկ կամելով ստեղծանել զկինն, եարկ քուն 'ի վերայ Ադամայ, զի մի՛ հաւպ լինիցի և մի՛ քննեսցէ զա՟յ արարչութիւնն:

"Եւ արկ, ասէ, թմբրութիւն 'ի վերայ Ադամայ". այսինքն ննջուածն, և ննջեաց: "Եւ առ մի 'ի կողից նորա". որ կապեացն, և եղիծ. յորոց գործեաց՝ փոխանու. յորոց արարն՝ անու: "Եւ առ մի 'ի կողից նորա և ելից ընդ այնր մարմին": Եւ ուստի ելից. տարակուսի բանս, այլ զօրութիւնն ոչ տարակուսի: "Եւ շինեաց զկողն զոր առ՝ 'ի կին": Եւ զիա՞րդ շինեաց դարձեալ ոսկերս, կողս. զիա՞րդ փոխարկեցաւ յաչս, զիա՞րդ 'ի ձեռս ստեղծաւ, զիա՞րդ 'ի փորոտեացն դիրս փոխաձեւեցաւ, զիա՞րդ կցեցաւ լեզուն, զիա՞րդ ձախարակեցան շրթունքն, զիա՞րդ փոխաքանդակեցան ունչքն, զիա՞րդ վերաթողուցան ականջքն, զիա՞րդ ծաղկեցան հերքըն, ո՞ւր բուսան եղնգունքն, զիա՞րդ զեղաւ արիւնն: Մեկնեա զքո լինելութիւնդ. իսկ եթէ ոչ կարես ասել, ընդերանեա զքո հայհոյութիւնդ հակառակ մտածնին:

"Եւ արկ թմբրութիւն 'ի վերայ Ադամայ, և առ մի 'ի կողից նորա և արար կին": Եւ տես զամենիմաստ արարչութիւնն. 'ի միոյն ստեղծու երկուս, զի յերկուցն դարձեալ զմին կատարեսցէ առանց մերձաւորութեան. յԱդամայ եհատ զկինն, և 'ի միոյն արար երկուս, և յերկուցն դարձեալ առնէ զմինն. քանզի որ յառնէն և 'ի կնոջէն՝ 'ի մի կատարի մարմին. կողն շինի. բանն մարդկային, և իմաստն ա՟ծային: Մեկնեա զիարդ շինի կողն, և ոչ գտցես. շինեաց զկողն. զմինն ստեղծ, իսկ զմիւսն շինեաց: Մի 'ի այս է, ստեղծումն յերկրէ և շինելն 'ի կողէն. ստեղծ զԱդամ 'ի հողոյ և շինեաց զկինն 'ի կողէն. և յօրինէ զԱբէլ և զԿային և զայլս ըստ նոցայն,

Digitized by Google

և են եղեալքն ոմն ստեղծուած և ոմն ծնած, և անուանքն ոչ որոշեցան հաւասար գոյութեամբքն. և զայս ինչ 'ի դէպ ժամու է ասել:

Քանզի ասեն հերձուածողքն՝ եթէ լինելին և անլինելին ոչ են նմանք. այլ որչափ ունին զանազանութիւն անուանքն, այնքան և իրքն հեռութիւն ունին: Արդ տուր զերկուց զանազանութիւնն՝ Ադամայ և առ որս 'ի նմանէն. վասն զի Ադամ լինելի է և անլինելի. լինելի է ըստ որում եղեւն, և անլինելի ըստ որում ոչ ծնաւ. եղև և ստեղծաւ, այլ ոչ ծնաւ. իսկ կինն ոչ ծնաւ և ոչ ստեղծաւ: Նա անդէն զբանն և հաստատուն կալ զմիտդ: Ադամ ստեղծաւ և ոչ ծնաւ, իսկ կինն շինեցաւ և ոչ յերկրէ ստեղծաւ և ոչ յորովայնէ ծնաւ. և որք ըստ Կայենին են և Աբելին, ոչ ստեղծան և ոչ շինեցան, այլ ծնան:

Այս զի բազում զանազանութիւն ունին անուանցն միտք, քանզի այլ է ստեղծանելն և այլ է շինելն, ցոյց զզանազանութիւնն Ադամայ առ Եւա և առ որս 'ի նոցանէն: Ոչ եթէ հատանին յորջորջմամբքն և ոչ գոյութեամբքն, զինչ սքանչելի է եթէ զբնութիւնն իմաստաբար դարձուցես. փոխեա զարտաձայնութիւնն. ուսոյ քեզ լինելին և անլինելին: Ուրացիր զհօր և զորդւոյ զյորջորջումն. իմաստագոյն եղեր քան զհոգին յորջորջութեամբն. ո՞չ էր քան զքեզ հաւատարմագոյն ած. ո՞չ էր կարող յառաջ քան զքոյդ հնարաւորութիւն զիմաստութիւնս զայս գտանել. ո՞չ արդեօք կարէր ասել՝ մկրտեցէք զնոսա յանուն լինելոյն և անլինելոյն: Բայց արդ որ առ հերձուածողսն մարտ և որ յաղագս բարեպաշտութեանն հանդէս՝ այլում ժամանակի շտեմարանեսցի, և մեք յառաջիկայսն դարձցուք բան:

«Այս արկ 'ի վերայ Ադամայ ննջումն, և յայնժամ առ զկողն». վասն զի զուգահանդերձեալ էր 'ի կողէս յայսմանէ յառաջ գալ պատճառոյն յանցանաց: Կինն եմոյծ զմահն Ադամայ. և փրկիչն կամելով զվէրսն բժշկել, փոխադրեաց զկողն, և 'ի խաչին զնոյն կող տիգին աւանդեաց. զի ուստի ած զվէրսն 'ի վերայ, անդուստ ծաղկեսցէ փրկութիւնն. «Այս ել, ասէ, անտի արիւն և ջուր»: Նմա զխորհուրդն և պատուեա զանօ-

ըմբռնիչն։ Այլ սուտ զրպարտչելոյն, քանզի Ս՛ատանայ յետ քնոյն առաւ կողն եւ ոչ յարթնութենէն. եւ փորձիչն նոյնպէս ոչ ՚ի հակառակն լինելով բացայայտ կողն, այլ յետ ննջման մարմնոյն եւ զկողն զօրականին։

Այլ նայեաց սատուզարար, զի փորձիչն զա͞ծային անօրէնութիւնն ՚ի վերայ խաչին կատարէր, եւ կրէր զայն ամենայն ՚ի մարմնի գոլով եւ ձայնաւոր, եւ զայլսն ըստ մարդկային կարգի, զի յա͞ծ չարչարանք ոչ մերձենան, զա͞ծ չարչարանք ոչ թշնամանեն, զա͞ծ չարչարանք ոչ նեղեն, եթէ ոչ եւս իցէ նուաստագոյն քան զմեր հոգիս։ Օ՛ր եթէ վասն մերոյ հոգւոյս պատուիրեաց ասելով. «Մի՛ երկնչիք որ սպանանեն զմարմին, եւ զհոգի ոչ կարեն սպանանել», զիա՞րդ հաղորդ լինի չարչարանաց մարմնոյն։ Հոգի ոչ մեռանի. զամենայն սակս ըստ մարդկային աւանդութեան կատարէ զանօրէնութիւնն, զի ցուցցէ զիշխանութիւնն խնքնակամ եղեալ եւ ոչ ՚ի ներքոյ անկեալ օրինաց բնութեան։ Ա՛սէ ՚ի խաչին. «Կատարեալ է ամենայն. Հայր, ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ»։ Ձայնիւ զզօրութիւնն ելոյծ, եւ բանիւ ընդհերձուածն պապանձեցոյց. քանզի նա էր որ ասէրն. «Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ, եւ իշխանութիւն ունիմ առնուլ զնա»։

Այլ յորժամ աւանդեաց զհոգին ըստ մարդկային օրինակի մեռեալ նորա, մանաւանդ մեռուցեալ զմահ ՚ի ձեռն մահուան, զօրականացն ոչ հաւատացեալ վասն նորա յանկարծակի այնպէս մահուանն վճարելոյ, եւ զմտաւ ածեալ եթէ գերազանցէ քան զմարդկային բնութիւնս այնպէս սուղ բանիւ աւանդել զհոգին, մատեան փորձելով եթէ կենդանի է, եւ գտին ճշմարտապէս մեռեալ մարմնով եւ կենդանի ներգործութեամբ։ Այլ զոր սպանին իբրեւ զմարդ, յետ խաչին խոստովանին որդի ա͞յ։ Օ՛ր յորժամ զինուորն տիգաւ եբաց եւ ել արիւն եւ ջուր, որ օտար է ՚ի մեռելոց, քանզի ոչ երբեք ՚ի մեռելոյ բխէ խնչ, եւ յորժամ աղբիւրացաւ արիւնն՝ արիւն խորհրդական, յայնժամ եբաց կողն աղբիւր կենաց վասն կողոյն որ եբաց զանօրէնութիւն. յայնժամ ասէ հարիւրապետն որ կայր առընթեր. «Ճշմարտապէս որդի ա͞յ էր սա»։ Օ՛ կենդանականն ուրացաւ եւ ՚ի մեռեալոցն հաւատաց։ Այլ արդ նայեաց զզաւշաքար սատա-

ցեղացս. որպէս 'ի վերայ Ադամայ արկ զքունն ած և յայնժամ առ զկողն 'ի նմանէ, նոյնպէս և փրկիչն կատարեալ զննջումն ըստ մարմնոյ՝ յայնժամ բացաւ կողն. զի յայնժամ յետ քնոյն, և աստ յետ ննջմանն։ Զինուորացն տեսեալ զարիւնն որդի այ քարոզեցին, իսկ հերձուածողացն տեսեալ զսքանչելիսն արարած ասեն։

Այլ ընդէ՞ր արդեօք տիգին պատահեաց կողն. զի պարտ էր ձեւով խաչին ամենիցն լուծանել որ ըստ Ադամայն։ Վասնզի ած հանելով զնա 'ի դրախտէն՝ զբոցեղէն սուրն եդ շուրջանակի, որ արգելլոյր զնա չմտանել 'ի դրախտն։ Այլ սուրն էր դառնալի, և ամենայն դառնալի մինչև ոչ բախեսցի ումեք ընդդէմ անկելոյն՝ ոչ առկայի։ Գիտէք 'ի փորձմանէն զասացեալս. ամենայն դարձաւոր եթէ ոչ առ հարցի ումեք, ոչ կայ յիւրոց ընթացիցն։ Այլ զի այնուհետև ոչ ոք կարէր կալ ընդդէմ բոցեղէն սրոյն, 'ի տնօրէնութենէ խաչին ձեւով տիգին ընդդիմադրեաց զկողն, զի 'ի ձեռն զգալի տիգին իմանալի սուրն հարեալ 'ի կողն՝ դադարեսցէ ապա 'ի սպառնալեաց, և մի այլ ևս արգելցէ զմուտս դրախտին։ Արդ ընկալաւ տէրն զսուրն 'ի ձեռն կողոյն, և առժամայն բացաւ դուռն դրախտին, աղբիւրացաւ 'ի կողէն բժշկութիւն վիրաւորեցելոյն 'ի կողէն. 'ի ձեռն կողոյն եհան զնա 'ի դրախտէն զառաջինն, և դարձեալ 'ի ձեռն կողոյն եմոյծ զնա անդրէն յարքայութիւնն։ Խրատեաց, այլ ողորմեցաւ. եհան արտաքս, այլ ոչ ապականեաց խստիւ. դարձոյց, այլ ոչ արտաքս ընկէց։

Այլ զի ժամ է պաշտաման, թոյլ տալի է մեզ, քանզի ամենայն ինչ հնարելի է այ. որպէս զի և 'ի մեզ մուծանել զպակասեցելոցն զմիտս, և ձեզ փոքր 'ի շատէ յայտնել զամենայն բանի զօրութիւն. զի "Տուր, ասէ, իմաստնոյն պատճառս և իմաստնագոյն լիցի"։ Գոհացուք զայ, զի մի դրախտ կորուսաք, և բիւր դրախտս տնկեցաք ընդ ամենայն տիեզերս։ Գոհացուք զայ, զի զդրախտն կորուսեալ վասն յանցանացն, յարքայութիւն եղեաք կոչեցեալք 'ի ձեռն շնորհաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն։

## ՅՈՐ ԳԱՀՈՅՆ ՅՈՐՈՒՄ ՓՐԿԻՉՆ ԶՈՏՍ ԱՇԱԿԵՐՏԱՅՆ ԼՈՒԱՆԱՅՐ ՅԱՐՈՒՑԵԱԼ ՅԸՆԹՐԵԱՅՆ

Ողորմութիւն այ և զմարդասիրութիւն քարոզէ արարածս ամենայն. քարոզէ և աստուածս զանօրէնութիւնն: Վասն զի ոչ ինչ է յերևելեացս և յոչ երևելեացն որ ոչ քարոզէ զայ զօրութիւնն. այլ երկինք և երկիր և ծով և ամենայն տեսանելիքս և ոչ տեսանելիքն ողորմութեամբն այ եղեն և հաստատեցան և պահին: Յաղագս որոյ յիրաւի երանելին Դաւիթ քարոզէ 'ի մարդասիրութենէն զողորմածն ասելով. « Ողորմած և գթած և արդար է տէր ած մեր, ողորմի »: Խառնեաց ընդ մարդասիրութեն զարդարութին: Արդար կոչէ և մարդասէր. զի յորժամ արդար լուիցես՝ զարհուրեսցիս 'ի դատաստանէն, և յորժամ մարդասէր իմասցիս՝ և ընթասցիս ապաշխարութեամբ: Ոչ քարոզէ զմարդասիրութիւնն արձակ, և ոչ զարդարութիւնն մերկ. եթէ միայն քարոզէ զարդարութիւնն՝ զարհուրեցուցանէ զյուսացեալսն, և եթէ միայն ասէր զմարդասիրութիւնն՝ 'ի քամահանս ածէր զարհամարհողսն: « Ողորմած գթած և մարդասէր է տէր ած մեր, ողորմի »: Միաւորեաց զարդարութիւնն ընդ մարդասիրութեանն, բայց սակայն սկիզբն և կնիք բանին զողորմութիւն եդ. սկսաւ 'ի մարդասիրութենէն և կատարեաց 'ի մարդասիրութիւնն:

Երկինն յաղագս մարդասիրութեան եղև և ոչ վասն պիտոյից այ. քանզի յորմէ հետէ երկինն գործեցաւ, և ոչ ևս է վեց հազար ամ, և նախ քան զերկինն և յառաջ քան զանբաւ յաւիտեանսն զայնոսիկ որք սկիզբն ոչ ունին, ած էր և է, և նախ քան զմտածութիւնս էրն ասի: Ոչ եղև երկինն յաղագս պիտոյից այ, այլ վասն մարդասիրութեան: Յաղագս այսորիկ երկինք պատմեն ոչ զպէտս այ, այլ զփառս այ: Նստի ած յերկնի ըստ Դաւթայ, « Աստուած մեր յերկինս ». այլ ասի ոչ իբրև պէտս ունելով ած երկնի, այլ իբրև հանգուցեալ

ուրեք։ Յերկնի են հրեշտակք, որպէս և երկիր որք յերկրէս մարդիկ։ Այսպիսի իմն խօսի պատմութիւնն զեկուցանելով զժամ ճաշոյն. “Ամենայն երկիր ճաշէր„. փոխանակ եթէ ժամ էր ճաշոյ։ Արդ կոչին երկիր, որք յերկրէ են մարդիկ. կոչին և երկինք, որ յերկնի են հրեշտակք։ Եւ յայսմ եկն 'ի քարոզելն. “Ուրախասցին երկինք և ցնծասցէ երկիր„. այսպէս երկինք։ Որ յերկինս հրեշտակք՝ ընդէր ուրախ լիցին. վասն աշխարհի փրկութեան։ Եւ ո՞ երաշխաւոր լինի ձայնիս այսմիկ. ինքն հրեշտակաց թագաւորն. “Ամէն ամէն ասեմ ձեզ, խնդութիւն լինի առ՟ հրեշտակաց որ յերկինս են վասն միոյ մեղաւորի որ ապաշխարէ„։

Արդ եղև երկինք 'ի փառս ա՟յ և 'ի պէտս մեր, զի արեգակն զմեզ լուսաւորեսցէ և լուսին և ամենայն աստեղք. զի ոչ եթէ արեգական պէտս ունէր ա՟ծ արարիչն լուսոյ. ոչ ունէր պէտս զգալի լուսոյս, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ 'ի լոյս յանմերձենալի։ Եւ ոչ ինչ հրաշալի եթէ ա՟ծ զգալի լուսոյ պէտ ինչ ոչ ունի, զի և ոչ հրեշտակք ընդ երկնաւ լուսոյն պէտս ունին. այլ միայն որ 'ի վերայ երկնի, և երկնայինն լոյսն ինքն ա՟ծ։ Այսպէս վկայեն և գիրք գործոց առաքելոց. “Ի մէջ գիշերի հրեշտակ եկաց 'ի կապարանին յորում էր Պետրոս„։ Ոչ ինչ ասէ պատմագիրն, մանաւանդ եթէ հոգին սուրբ որ 'ի ձեռն նորա խօսէր. “Եւ ահա հրեշտակ եկաց 'ի գիշերին և լոյս ծագեաց 'ի տանն„։ Եւ արդ եթէ հրեշտակ ոչ ունի պէտս լուսոյ լեալն, արարիչն ամենեցուն լուսոյ պէտս ունիցի։ Ոչ ինչ են նմա պէտք լուսոյս այսմ, այլ զմեզ զուարճացուցանէ լուսովս, զմեզ կենագործէ, զմեզ փայփայէ. վասն զի ամենայնն եղև յաղագս փառաց նորա և մերոյ պիտոյից. արեգակն զի զմարդիկ լուսաւորեսցէ, ամպք յանձրևոյ սպասաւորութիւն, երկիր 'ի պտղոյն քաղցրութիւն, ծով 'ի վաճառականաց առատութիւն։

Ամենայն ոք սպասաւոր մարդոյ լինին, մանաւանդ կերպարանին տեառն. զի և ոչ յորժամ թագաւորական պատկերք և կերպարանք 'ի քաղաք բերեալ լինին, և ընդ առաջ հանդիպին իշխանք և ռամիկք հանդերձ բարեբանութեամբ և ահիւ, ոչ զտախտակին պատուեն և ոչ զմոմն եղեալ գիր, այլ զպատկեր թագաւորին։

Այնպէս և արարածս ոչ զերկնայինս անօթս պատուէ, այլ յերկնայինն 'ի պատկերէն պատկառէ: Նմանայն եղև 'ի դէտս մեր յաղագս մեր մարդասիրութեանն: Իբր վկայելով ողորմութեանս այսմ ասէր իմաստութիւնն. “Ողորմիս տէր ամենեցուն, վասն զի զամենայն կարես„ Ի սկզբանն սիրով արար, և այժմ անօրինէ յաղագս սիրոյն. ոչ ինչ առնէ գաղջելով. եթէ առնէյր, ոչ արդեօք անօրինէր. վասն այնորիկ և զիւրս ասէ. “Ոչ յումեքէ զարշի տէրն զորս արարն„. զի ոչ եթէ առելով ինչ արար զորս ստեղծն:

Նոյն ոչ ինչ եղև յերևելեացս և յաներևութից յաղագս պիտոյից մեր. այլ վասն փառացն մեր, զի փառաւորեսցի իւրն զմարդասէր. ոչ ինքն կարօտեալ զամենայն գործեաց: Խնայեաց և ընծայեաց մեզ որդեգրութիւնս, թէպէտ և չունէաք տուեալ, զմեզ ինքնանս պատուեաց և փառաւորեաց: Նոյնպէս զգարեմութիւնն ևեթ ընդունի. վասն այսորիկ և Պաւղոս քարոզէր, իբրև զղարեմն և զտածէր նախատանաւ զգարեկանութիւնն առնելով. խոստովանէր զմեր անկարօտութիւնն: Նմանի ասէ Դաւիթ. “Տէր տէր իմ ես դու, և բարեաց իմոց ոչ ունիս պէտս„. ոչ ինչ պէտս ունի որ աւ մերեն: Նորոգէն զգարեկարութիւնն մեր երևելիքս և աներևոյթքս. այլ սակայն ոչ այնպէս քարոզեն որպէս 'ի մարդիկ զգալութեան. որ 'ի կերպարանի մեր էր, 'ի պատկեր ծառայի լեալ ոչ փոփոխեաց զպատիւն, այլ նորեալ արար զմարդասիրութիւնն: Այս զիս ածէ բանիս կարգաւորութիւն որ յաւուրս յայսմ եղև ահաւոր խորհուրդ: Զինչ եղև այսօր:

Այսօր փրկիչն զաշակերտացն լուանայր զոտս: Դժուարանալէս առնել սորա ափինս է, և լսելն ահաւոր. երկնչիմ քարոզել, վասն զի իմանամ զմեծութիւն պատուոյն. զարհուրիմ և լսել, մի՛ գուցէ 'ի վտանգս ապերախտութեանն անկանիցիմ: Նայեցիկ և խանեցեալք արհաւիրս ունին և լսեալք, առացեալք յաղագս մեծութեանն, և լսեալք վասն ապերախտութեանն. բայց սակայն ասասցուք զահաւորն, զի և նա առնել զստորասահմանն ոչ հրաժարեաց:

Տէրն 'ի վերայ երկրի երևեցաւ, մարդկան արարիչն, ընդ ծառայն տէրն, արարիչն ընդ արարածս, 'ի

ծառայի պատկերի Աստուծոյ պատկերն. յաղագս որոյ ասէն Պաւղոս. "Որ ի կերպարանս Աստուծոյ էր, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ գոլ հաւասար Աստուծոյ. այլ զինքն թափեաց զկերպարանս ծառայի առեալ": Զաստուածանմանն զմարդկայինն պատկեր և ծառայի կերպարանս զգեցաւ ամենեցուն Տէրն. բայց առաւել ի մերձենութեանս այսմ զծառայի կերպարանս զգեցաւ, յորժամ յարեաւ յընթրեացն որ կերակրէ զամենայն զընդ երկնաւս, յորժամ բազմեալ էր ընդ առաքեալսն Տէրն ընդ ծառայսն, բանն ընդ այնոսիկ որոց զբանն ոչ էր ուսեալ, աղբիւրն իմաստութեան ընդ այնոսիկ որք զգիրս չգիտէին. յորժամ բազմեալ էր ուտելով ընդ նոսա որ զամենեսեան կերակրէ և զարմանէ, ընդ աշակերտսն որ զաշխարհ ամենայն կերակրէ. ոչ բաւական վարկաւ զմեծութիւն ճորհին այսորիկ, զի ընդ խումբ ծառայսն բազմեալ էր: Պետրոս և Մատթէոս և Յովհաննէս և Փիլիպպոս որք յերկրէս մարդիկ բազմեալ էին ընդ նմա, որում մերձ կային Գաբրիէլ և Միքայէլ և ամենայն զօրք հրեշտակացն: Ո՛վ սքանչելեացս. որում ահիւ մերձ կային հրեշտակք, ընդ նմա բազմեալ էին աշակերտքն հանդերձ բազում համարձակութեամբ:

Եւ ոչ շատացաւ այսու հրաշալեօքս. այլ յարուցեալ յընթրեացն, առեալ, ի բաց եդ զհիրկանսն, որ զգեցեալն է զլոյս իբրև զհանդերձ, և սփածաւ կտաւ: Սփածաւ կտաւ որ զգեցուցանէ զերկինս ամպովք. և արկ ջուր ի կոնքամանն, որ ի լիճս և ի գետս զջուրց բազմութիւն հեղու. և խոնարհեալ ի ծունկս զաշակերտացն լուանայր զոտս, որում կրկնի ամենայն ծունր երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց: Լուանայր զոտս աշակերտացն ամենեցուն Տէրն, ոչ թշնամանելով զպատուն, այլ ցուցանելով զանչափ մարդասիրութիւնն:

Սակայն թէպէտ և մեծ էր մարդասիրութիւն, Պետրոս ոչ անզգայացաւ զգերազանցութիւնն, որ միշտ ջերմ ի հաւատսն՝ ջերմագոյն եւս գտաւ ի գիտութիւն ճշմարտութեանն: Եւ այլքն ամենեքեան ընկալան զլուանալն նորա ոչ ինչ հրաժարելով, այլ դողացեալք ընդդէմ ոչ կարէին ասել տեառն. իսկ Պետրոս հակառակէր ընդ տեառնն յաղագս հաւատոյն և ասէր. "Դու զիմ ոտս լուանաս տէր. ոչ լուասցես զոտս իմ յաւի-

տեան ,,: Պնդեցիկ է համառօտ առհմանն[1] բարեմտութեանն, այլ անգիտանայր զանտեսութիւնն. հաւատով սպասաւորէ, և բարեմտութեանն հնազանդի. վասն զի պարտ և արժան իսկ էր այնպէս լինել բարեպաշտին՝ ոչ անգաղանալ[2] յընտրողութիւնս, այլ անշեղ տալ նմա կամացն: Հրաժարեցիր իբրև զմարդ, և ապաշաւեցիր իբրև զծառայ:

Փրկչին տեսեալ զնորա զընդդիմակացութիւն հազեցյն անխոնարհելի և քան զամենայն սալ զօրաւորագոյն, ասէ ցնա. "Եթէն ասեմ քեզ. եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս մասն ընդ իս ,,: Հայեաց զիարդ առհաւար էին իրքն, և որպէս զխոնարհութիւնն ելոյծ 'ի ձեռն մեծագոյն ևս խստութեան համառօտաբար ընդդիմ նմա երևեալ առաւ զնա ասնէ յիւրմէ մասնէն, զի մի յաղթեսցէ մարդկային ընդդիմակացութիւնն, այլ հերքեսցէն նմա ախորժակքն: Այլ տայ առաքինին և սքանչելին Պետրոս որ[3] որպէս հրաժարեալ՝ արագ արագ փոխեցաւ, և յորժամ ետես խիստ զհրամանն՝ համառօտ ընծայեաց զապաշաւանսն և ասէ. "Տէր, մի միայն զոտս, այլ և զձեռս և զգլուխս բովանդակ լուա ,,. զամենայն սրբեա, զի ասացից և ես ընդ Դաւթայ "Լուասցես զիս, և քան զձիւն սպիտակացայց ,,: Այլ տէրն ասէ ցնա. "Լուացեալն պէտս ինչ ոչ ունի, բայց զոտսն ևեթ ,,:

Ընդէր զոտսն միայն լուանայր. յաղագս ընթացից առաքելոցն: Լուանայր զոտսն, ոչ զաղտոսն միայն մաքրելով, այլ և զօրութիւն գնելով 'ի գարշապարսն սրբոցն: Այլ զայս գեղեցիկ լուացումն տեսանելով Եսայիաս 'ի հեռաստանէ 'ի վաղուց[4] ժամանակաց գոչէր. քանզի ետես եթէ ոչ մարդ լուաց, այլ Աստուած սրբեաց, աղաղակեաց ասելով. "Որքա՜ն զի գեղեցիկք են ոտք աւետարանչացն զբարիս ,,: Մեծենայ յոտսն, զի զօրացուցէ զերկրային ոտսն որք հանգերձեալ են ընթանալ ընդ ամենայն ընդ երկինս:

Այլ այլ միւս ևս խորհուրդ, եղբարք. վասն զի 'ի

1 Օրինակ մի բարեմտութեան ծառայն հաւատոյ, այլ:

2 Օրինակ մի յամառել:

3 Այլք որքանակի արագ արագ փոխեցաւ 'ի հրաժարելոյն կամ 'ի հրաժարէն:

4 Այլք 'ի վերուստ:

սկզբանն երեւեցոյց ա̃ծ հակառակ Եւայի առնելով օձին. “Նա սպառնասցէ քում գլխոյ, և դու սպառնասցես նորա գարշապարի”: Նուան հարկանէ զգարշապարին մեղուոյ, զորմէ հրամանն ետ. զի թմբրեցոյց զձեռն ի վերայ դնելով, և ոչ առցեն սկիզբն թոյնք օձին. և զի ուսցիս եթէ լուանալ զատոմն զօրութիւն ընձեռեր այնուհետեւ հակառակ դիւացն: Յառաջագոյն մատնեալ էր զգարշապարն օձին. իսկ զկնի այնորիկ զօրացեալ ի ձեռանէն կոխեաց զմարմնեցուցիչն, որ զօրացոյց զնոսա զոտս և ասաց. “Ահա ետու ձեզ իշխանութիւն գնալ ի վերայ օձից և կարճաց”: Պայծառանայ այսուհետեւ և խաչին շնորհ, և զամենեցուն զմեր լուանայ զմիտս բանիւ ճշմարտութեան ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

## Ի ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ*

Յորժամ զախրական ձեռան գործնական ժամանակն փոխանորդեսցէ, և զանազան հաւուցն յօդս թռուցեալ նուագաձայնութեամբ երգեն՝ զհեշտութիւն ժամանակին մարդկան նշանակելով, յայնժամ ծիծառունք հեշտախօսք երագաթռիչք զօդս հարկանեն ի վերայ գլխոց մարդկան անցանելով, զորէն ծաղկի զխրեանց ձայնն յականջս մարդկան արկանելով. յայնժամ է տեսանել մաքուր և զօդ առանց հողմոց, և ընդդէմն մարդկան զուարթս նման ցածութեամբ փոփոխմամբ այեաց ծովու յարմարեալս: Նաև զի և հաւուցն զանազան հնչմունք հեշտացուցանեն զլսելիս, և օդ մաքուր զուարճացուցանէ զաչս, և ազգի ազգի ծաղկանց պայծառութիւնք վայելչացուցանեն զհոտոտելիս: Արդ այս հրճուանք, սիրելիք, ընդ ձեռամբ մարդկան՝ երկրային և ժամանակեայ գարուն. իսկ ա̃ծայինն և անարատ գարունն Քրիստոս զեկեղեցի մանուշակօք և վարդօք և շուշանօք հոգևորօք զարդարեաց, հաւատովք

* Համառօտութիւն է այսր ճա- թեան Նանայի ասորւոյ:
ի վերլուծական Յովհաննու մեկնու-

զուարճացուցանէ զկանայս, և խնկօք անուշահոտովք զընդունարանս սրտից մերոց լնու : Քանզի ո՞ ոք 'ի հաւատացելոց այժմ ոչ ուրախանայ, ո՞ այժմ ոչ բերկրի յորժամ տեսանէ զնոր լուսաւորեալսդ ըստ օրինակի շուշանաց պայծառ սպիտակութիւք զգեստուց պճնեալ և 'ի միջի որոցն զգեցեալ զանկեղծանձանց հաւատս : Որ զգուցես, սիրելի, աչօք սրտի հայելով 'ի հրեշտակաց խաղացն զհաւատացելոցն զսիրտ արեամբն Քրիստոսի ծնընդեալս [1] . վասն զի բազմատեսակ վարդն յանապականէն Մարիամայ անապականաբար ծաղկեաց : Որ եղեւր այսօրիկ անուշահոտութիւն ասացեալ զոր մեր եղեւրն հոտաւետ շնորհին խնկեալ լինի : Հաստատեսցես 'ի հաղեար շուշանն լուսաւոր ; և զազգես 'ի նմա զհոտոյ անմահ անուշահոտութիւնն, զերկնայինն ասեմ զօծման իւղ : Որպէս հայրենեաց արմատենիք ատովք զլայղթութիւնն նշանակելով քաղցրապտուղ զտէրն ցուցանեն . ասա զեղեցկաբարբառ հաւք սաղմոսանուագացն միաձայնաբար անդ զօրհնութիւնս երգեն . ասա կուսութիւն զօրէն խնկոց մաքուր զանուշահոտութիւն ապօթիցն անդ ընծայելով խնդայ . ասա պարկեշտութիւն զուարճացուցանէ զասաս սրբութեան, որպէս Աբրահամ զԱստուածն պատարագելով զուարճանայր . ասա ողորմածութեան ստեղունք բազմապտուղ զասա բարեգործութեանն աղքատաց առաջի արկանեն, զուարճացուցանեն զտէրն և կերակրեն զաղքատակիցսն : Ասաւթիւն երգեսցէ ասելով . ուղղեսցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տէր . ողորմածն ասասցէ, եւ որպէս ձիթենի քաղցրապտուղ 'ի տան տեառն : Արդարն որպէս զարմաւենի ծաղկեսցի, իբրև զմայրսն Լիբանանու բազմասցի : Այժմ սատանայական խարդախութիւնքն յամօթ եղեն, և զուարթութիւնք անձանցն եկեղեցեացն պայծառացան . այժմ սուգ մեռելոցն փախըստականն եղև, վասն զի Ճառագայթք արեգականն եկին : Երգեսցուք ամենեքեան 'ի միասին երգ նոր, քանզի վայել է նորոյս նոր և երանելի երգ . երգեսցուք երգ նոր, զի ահա Ադամ նորոգեցաւ և Եւա յերկինս համբարձաւ և սատանայ 'ի հուր մատնեցաւ : Ասցուք

[1] Յերկուց օրինակաց երկաթագրեն ծնեալ :

զքեան Մ՛ովսէսի զերգան, վասն զի վայել է մեզ այժմ քան թէ յայնժամ նոցա. եկեսցէ և զհետ մեր և սըր-բոց կանանցն այնոցիկ պար, և ասասցէ զոր յայնժամ 'ի կարմիր ծովուն հնչէին. «Երգեսցուք տեառն, զի փառօք փառաւորեցաւ»: Այլ զի՞նչ արար. զհեծեալսն և զձիան ընկեց՝ զերիվարն և զհեծեալն, զձին՝ զիգամոլ զմեղսն, և զհեծեալն որ 'ի վերայ մեղացն նստէր ըղ-ձեն՝ 'ի մկրտութեան աւազանն 'ի վայր ընկղմեաց: Արդ երգեսցուք տեառն, վասն զի փառօք փառաւորե-ցաւ, և զՓարաւոն և զզօրս իւր ընկեց 'ի ծով, այսինքն զսատանայ և զխաւարային և զպիղծ դիւացն նորա զբա-նակս 'ի մկրտութեան աւազանին ծովասոյզ արար: Այլ եւ երկնչիմ լսելով՝ թէ հող եիր և 'ի հող դարձցիս. վասն զի մկրտութեամբն զհողն 'ի բաց եդի և զերկինս զգեցայ. և լսեմ թէ երկին ես և յերկինս երթիցես. վասն զի «Որք 'ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս զգեցայք»: և «Որպէս հողեղէնն՝ նոյնպէս և հողե-ղէնքս, և որպէս երկնայինն՝ նոյնպէս և երկրայինքս»: Պարտ է մեզ և յամպոց վերայ ելանել և յերկինս վերընթանալ: Այլ է անվկայ բանս, լուր Պաւղոսի որ ասէ. «Յափշտակեալ լիցուք ամպովք 'ի հանդիպումն տեառն, և այնպէս յամենայն ժամ ընդ տեառն լինի-ցիմք»: Յաղագս որոյ որպէս և այժմ լուայք սաղմո-սերգողին, որ մեզ պատուիրէր և ասէր. «Այսօր է զոր արար տէր, եկայք ցնծասցուք և ուրախասցուք 'ի սմա» ոչ արբեցութեամբ և ոխակալութեամբ թմբրեալք. վասն զի այն ոչ է ուրախութիւն, այլ անզգամութիւն և խաւար սրտի. այլ բերկրեսցուք 'ի տէր խայտալով և հոգւով ցնծասցուք, սիրով բերկրեսցուք, յուսով զուարճասցուք: Այլ է պարտ և արժան իսկ է զմիւսն ի-մանալ զուրախութիւն սրտի, զերկնային հացն մաքուր ձեռօք և սուրբ սրտիւ ընդունել յանձինս, առաքես-ցուք զյաւիտենական կենացն զպաշար: Սուրբ ձեռօք ասեմ, ոչ քնով հանգուցեալս, այլ բարեգործութեամբ պայծառացեալս, և զմնծայինն և զերկնայինն զխառնուածն վարդապետական շրթամբք ճաշակեալ. ոչ կարկութեամբ իւիք շառագունեալ, այլ արեամբն Քրիստոսի ծիրա-նացեալ:

Ո՛վ ճշմարտապէս բարւոյ աւուրս, յորում զառն զե-

նեալ լինի և Ադամ գտեալ և հովիւն մեր կենդանի է․ քանզի ասէ․ «Ես եմ հովիւն քաջ»։ Ո՛վ նոր խորհրդոյս և սքանչելեացս հրաշափառապատնից․ խաչն կանգնեցաւ և Քրիստոս բեւեռեցաւ, մահն անկանէր, երեւելի վարագոյրն սուրբ լեալ՝ խաչն էր երեւելին և առագաստ կատարեալն․ Երէկ կանգնեցաւ խաչն և այսօր ծանեաւ ժողովուրդն։ Ո՛վ մահ Քրիստոսի, որ մահու է մահ, քաղցր աղբիւր 'ի գլան մահուանէ բղխեալ․ աբրահամեան խորհուրդն 'ի Քրիստոս կատարեալ․ Խաչակ 'ի վերայ սեղանոյն կազմեալ լինի, և գառն փոխանակ նորա զենեալ․ որդին այ՛ 'ի խաչ ելանէր, Յիսուս վասն մեր չարչարեալ։ Հաստատեցաւ սիւն խաչին 'ի նաւի աշխարհիս, և աշխարհս առաւել նաւարկութեան կաց մնաց․ այսու սեւամբ նաւելով զնաւարկութիւն մահու ոչ դիմեսցես, այլ 'ի վեր յերկինս նաւեսցիս յանմահ կենդանութիւնն։

Ոչ ևս երկնչի Եւա, վասն զի Մարիամու յերկոց անիծիցն զերծաւ․ ոչ ևս Ադամ երկնչի յօձէն, քանզի Քրիստոս ջախջախեաց զգլուխ օձին 'ի վերայ ջուրց, այս է 'ի մկրտութեանն։ Ոչ ևս լամ, ոչ ևս ողբալով ասեմ՝ դարձաւ թշուառութիւն իմ 'ի ցցել յիս փշոցն, վասն զի եկեալ Յիսուս Քրիստոս զփուշ մեղաց մերոց արմատաքի խլեաց՝ յիւր գլխոյն վերայ եդեալ․ լուծան նզովքն, լուծան առաջինն անէծքն որ ասէրն ինձ «փուշ և տատասկ բուսցի քեզ»․ վասն զի չորացան փուշք և արմատաքի խլեցաւ տատասկն, և երկքկին հաւատոյ յօրինեալ պսակ և 'ի վերայ գլխոյ իմոյ եդաւ։ Ո՞րք 'ի Հրէից կամ 'ի հեթանոսաց հաւատացելոց ոչ խնդասցէ՝ եթէ փայտն կանգնեցաւ և կեանք ծաղկեցին, և նա հանապազօր 'ի հաւատացելոցն կթի․ և պտուղ ծաղկեցելոյ ծառոյն կայ մնայ։ Ամենայն ցեղք և բովանդակ հաւատացեալք յայս ծագնացիւք հոգւոյն ելանեն և զծոց մտացն անմահութե պտղովն լնուն։ Զամենեսեան բառնայ ծառս և զաղօրեսեան յագեցուցանէ, և զկնի այսորիկ յերկինս ձգի։

Վասն զի զինչ զօր ոչ յաղագս մեր համբերեաց Քրիստոս լինել․ ոչ կարեմք թուել զանուանս նորա, սակայն ձեռնարկեսցուք, ով սիրելիք։ Ճանապարհ; դուռն, աղ, ոչխար, հովիւ, մարգարիտ, լոյս, վէմ, ա-

րեգակն արդարութեան, հաւատ մանանխոյ, որդն, մարդ։ Բազմանուն Քրիստոս և մի է որդի. բազմանուն է և մի է., ոչ փոփոխելով և ոչ այլայլելով, վասն զի անփոփոխելի է ա͞ծութիւնն, այլ իւրաքանչիւր իրի ըստ գործոյն յարմարեցաւ, և զիւր անունն յիւրաքանչիւր 'ի գործն եդ։ Տեսցուք սիրելիք, եթէ կարասցուք իւրաքանչիւր ումեք անուան զգործն պատշաճեցուցանել։

Ճանապարհ կոչեցաւ, վասն զի "Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք". զի նա ինքն է առաջնորդ ամենայն առաքինութեան և յերկինս ճանապարհ ելանելոյ։ Այլ և դուռն, վասն զի "Ես եմ դուռն ոչխարաց". զի ընդ նա իբրև ընդ դուռն յերկնից արքայութիւնն մտանեմք։ Աղ անուանեցաւ, զի ըզժահահոտութիւն կռապաշտութեան մարդկան 'ի բաց մաքրեաց, և զանձինս մեր հոտոյն բարեպաշտութեան հաւատոյ համեմեաց, և զլուծեալ անդամսն մտաց ճըշմարտութեան աղիւն պնդեաց։ Ոչխար կոչեցաւ. "Իբրև զոչխար ածեալ 'ի զենումն, և իբրև զորոջ առաջի կըտրողի անձայն". ոչխար յաղագս զենմանն և վասն անդամոց նորա ճաշակմանն և սրբոյ արեանն նորա կնիք և պահապան։ Հովիւ անուանեցաւ, "Ես եմ հովիւն քաջ". զի զմոլորեալ ոչխարն դարձոյց և զոսոխն մեր զառիւծն ցցով խաչին սպան։ Մարգարիտ կոչեցաւ, զի իբրև ըզմարգարիտ 'ի գաղտակղի 'ի մէջ երկուց կուսական պատենից, մարմնոյ ասեմ և շնչոյ, առանց սերման եղեալ, և յաղագս լինելոյ զարդ յանձին, և վասն բազմաճառագայթ և մաքուր ամենայն ուրեք զա͞ծութեանն նըշոյլս փայլելոյ։ Լոյս անուանեցաւ, քանզի "Էր լոյսն ճշմարիտ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ եկեալ յաշխարհս յայս". յաղագս խաւարային մոլորութեան մթոյն մտաց մերոց 'ի բաց քակելոյ, զի տեսանիցեմք ճըշմարտապէս որոց երկիր պագանէաքն յառաջագոյն եթէ ոչ են ա͞ծք, այլ գործք ձեռաց մարդկան քարինք և փայտք։ Վէմ անուանեցաւ, զի զերկուս ժողովուրդս իբրև զերկուս որմս հաւատով շինեալ 'ի վերայ նորա կայ 'ի մի յարմարելով զմիութեանն հաւաքումն։ Արեգակն արդարութեան անուանեցաւ յաղագս լուսաւորութեան իւրոյ և երկոտասան ճառագայթից գնդին երկոտասան առաքելոցն։ Հաւատ մանանխոյ անուանեցաւ, վասն զի

փոքրկացուցանէ զմեզ և զիջանէ ըստ բնութեան մերոյ 'ի սկզբան հաւատոյն. և ապա յորժամ յակօս հաւատոց մերոց մտանելով 'ի խոր անկցի, երկնաբերձ 'ի վերայ մեր ամբառնայ 'ի բարեպաշտութեանն և յիմաստութեանն ջեռանուլ: Որդն անուանեցաւ, վասն զի "Ես որդն եմ և ոչ եմ մարդ". որպէս զի զփայլատակեալ ածութիւնն իբրև զկարթ յորդն մարմնոյն ծածկելով և կենցաղոյս այսորիկ 'ի խորս իջանելով՝ իբրև զձուկ ձկնորս 'ի վեր ձգեաց՝ ըստ գրեալսն "Ածցես զվիշապն կարթիւ": Մարդ կոչեցաւ, վասն զի ոչ 'ի հեշտութենէ և ոչ 'ի քնոյ, այլ 'ի կուսէ և 'ի հոգւոյն: Նայց զի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ, սիրելիք, անստահակ[1] մեղրասահման վարդապետութեանս աստանօր սկսեալ զճաշ բանիցս մերոց, կերիցուք հոգւոյն ըղձով. զի այլք եկեալ մեղրակաթ իմաստութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զընդունարան սրտից մերոց լցուսցէ, և զքաղցրաբուղխ պտուղ բարեպաշտութեան իւրաքանչիւր ոք 'ի մէնջ բուսուսցէ, ոմն բերցէ երեսուն և ոմն վաթսուն և ոմն հարիւր. զի պսակ շնորհաց ընկալցի 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

## Ի ՓՈՐՁԱՆՍ ՕՐԻՆԱԿԱՆԻՆ

ԵՒ Ի ԳԱՅԱՍՏԻԱՆԻՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌ Ի «ՍԻՐԵՍՑԵՍ ԶՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՔՈ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐՏԷ ՔՈՒՄՄԷ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՆՁՆԷ ՔՈՒՄՄԷ». ՈՐ ԱՍԱՑԱՒ ԶԿՆԻ ՅԱՌԱՋ ԱՍԱՑՈՒԱԾԻՆ

Վաստակք և ջանք առաջին վարդապետին եղեն, զի յիմում բուրաստանին տունկս արկի, զիմ անդս սերմանեաց, զիմ զգանձալի զտապանակն պատրաստեաց, որ ճշմարտութեամբ շնորհեացն իմս զգանձս: Արդարեւ երանելի գանձ: Ո՞ք իցէ որ զամենայն փառաւորութիւնս զկենաց աշխարհիս զմտաւ ածիցէ, և զամենայն ինչ ըստ զերևելիս համարիցի. այլ ոչ կարիցէ ինչ գտա-

1 Երկաթագիրն անստահակ հաւրցս:

նել յայնժամ կեանս մեծ և երևելի քան զայսն այ, և ոչ տաւել քան զտուչութիւն ուրախութեան: Ով որք 'ի մեծութիւնս յուսացեալ էն, նոքա երազոց և ստուերի նմանեն և կեան անհաստատութեամբ և մեռանին անյոյս: Իսկ որոց յոյսն իւր առ ած է; նորա վախճանն երանելի, կեայ և ուրախ է 'ի կենդանութեանն՝ յուսոյն համարձակութեամբ. Թէպէտ և յաճախեն ինչ նեղութիւնք կամ փորձութիւնք 'ի վերայ, սակայն մխիթարք յուրախութեան են յուսոյն որ առ ած. Հրաժարեալ յաշխարհէս ուրախութեամբ երթայ առ այն որ 'ի կենդանութեանն յուսայր, վասն որոյ փութայր և ձգնէր առ նա հասանել ըստ ընթացից վաստակոց իւրոց առնուլ զնահատակութեան պսակն: Ապա և պատերազմ մեծ ածապաշտաց է կենդանութիւն, կալ և կալի բազմադէմ և բազմապատիկ մաքառել ընդ ցանկութիւնս, ընդդէմ կալ ցասման, հեռանալ 'ի ստացուածոց և յընչից սիրոյ, և մերժել և 'ի բաց ընկենուլ զհիւանդութիւն նախանձու, և յամբարտաւանութիւնս խորհրդոց չըմբռնել, սանձահարել զչարախօսութեան սովորութիւն, 'ի նենգութեան գոհանալ և համբերել, 'ի խորհրդոց թերահաւատութեանց 'ի բաց փախչել, զախտակալութիւն 'ի բաց թօթափել, փախչել 'ի խառնախօսութենէ, խորշել 'ի սուտ երդմանէ, 'ի զայթակղութենէ հայհոյութեան համեստանալ: Եթէ զոք 'ի վաստակ ածապաշտութեան տեսանիցես, լեր պատմիչ յօժարութեամբ որոց զգլխաւորն ած է, տէր և պատերազմակից իւրև զօրորմած. քանզի գիտակ է վեհերկատ բնութեան մերոյ, որ տաղտկոտ է դժուարութեն: Այս թէ 'ի կամս նորա հայեսցի փութով յօժարութեան, առաջնորդէ և ուղղէ նմա զդժուարսն առ 'ի յուսալ նմա առ տէր. շնորհէ նմա զկամս մտաց իւրոց յորժամ հայի առ նա կամաւ ճշմարտութեան, մանաւանդ եթէ ոչ անփոյթ արարեալ արհամարհիցէ զվըկայեալ բարբառն այ՝ եթէ "Սիրեսցես զտէր ած քո յամենայն սրտէ քումմէ և յամէ անձնէ քումմէ":

Իսկ զինչ իցէ՝ յամենայն սրտէ քումմէ: Վասն զի մի երբեք մասն մի 'ի կամաց նորա յայլ կողմն բանդագուշեսցի, այլ պարզ և ուղիղ ընդ նմա հայեսցի. յորժամ այսր անդր մտաց աչօք ոչ սայթաքիցէ, զի մի առ

Digitized by Google

ած̄ և առ մխիթարս, և մի առ աղօթս և առ Ճգնաստագիրս, մի առ տենչ հոգեւորականս և առ վայելչութիւնս հեթանոսականն ցանկութեանց, յորժամ 'ի տենչ հեթանոսաց և 'ի ժողովս մարտիրոսաց, յորժամ 'ի խաչն և 'ի մեհեանս. քանզի ազատեաց զայն ած̄, ընդ որս կամիս և զնա սիրել: Մի՛ ոչ սէր իսկ կոչի սուրբ. զի Ճշմարիտ սէրն՝ այն որ ինքն ամենեւին ակամբն, ամենայն մարմնովն հայեցուածովք առ սիրելին իւր իցեն: Նկարեա և դու ինձ այնպիսի իրս ըստ մարմնական մտրոց բնութեանս զգեղեցկութիւն ցանկութեան սրտոց, և հայեաց ընդ նոսա և առնուս 'ի նմանէ զչափ և զհանգամանս՝ եթէ զիարդ հայեսցի ընդ գեղ նորա և բերանաբաց խօսեսցի, մինչ զնիցէ անձանձրոյթ, երկնչի և զգուշա ածէ՝ առաւելքս քան զկամս սրտոյ նորա եղանել. ընդ նմա յօղեալ և բեւեռեալ է, ընդ նմա ժողովէ զբովանդակ զհայեցուածս, զնա միայն բերէ 'ի խօսից ժամ 'ի մէջ, ընդ նա միայն հաճեալ է յեւս և 'ի մուտս իւր:

Այնպէս և զած̄ պարտ է սիրել, նորա բանին միայն հնազանդել, 'ի նորա վարդապետութեանն անձանձրոյթ կալ, ընդ նորա կամսն բեւեռել, զնորա հաճոյսն եւեթ առնել, նմա սատարեալ ստացուածս մտածութեան, և առ նա բովանդակել զհայեցուածս մտացն, զնա ունել 'ի խօսս իւր, զնա յիշել 'ի գործս իւր, ոչ բարկացուցանել և երկիր պագանել, ոչ հեռանալ և մերձիլ, ոչ պաշտամամբ պատուել և վարուք տրտմեցուցանել, և կամ վարուք պատուել և վարդապետութեամբ կշտամբել, ոչ զմասն մի սրտին առ ած̄ ողոքել և միւսն եւս մասն 'ի կեանս կռապաշտութեան: Այլ թէ զմինն շինեսցէ և զմիւսն եւս քակեսցէ, զի՞նչ շահեսցի աւելի, բայց միայն աշխատութիւն. զի վաստակ ընդ վայր լինիցի շինուածոյն ընդ որում միաբանեալ է աւերած[1]. աշխատութիւն քրտամբ լոկ պաւանց պտղի:

Արդ յո՞ր կոյս գլեսցէ հատուցումն արդարութեան, ասա ինձ. ողջոյնն պարգեւաց արժանի արասցէ զօգնան որ ընդ ած̄ հայիմ յուսով. ոչ թոյլ տայ և ներէ յոյլ կողմն ձգել և թիւրել. եթէ այն պատուի արժանի էր, ապա երկրորդն տանջանաց էր. և եթէ այն վատահու-

1 Օրինակ մի աւերոյս. և միւսն աւեր այս:

թիւն էր, ապա որ չէին 'ի նմին՝ այն յանցանաց էր ։ Սան այսորիկ արժան է խորշել յերկուց 'ի բաժանել կամաց՝ որ առ ած ոչ միաբանին. զի որպէս և զիարդ ընկալցի զմերոյ կամացս հայեցուածս յուսով առ նա, ըստ նմին և հատուցանէ զհատուցումն ։ Նոյնպէս և դատեսցէ ըստ օրինակի հայելով զկերպարանս հատուցմանն. զի թէ թիւր սրտիւ հայեսցի ոք ընդ ած, ընկալցի և առ 'ի նմանէ թիւրութե̃ զտեսիլն հատուցման ։

Լուր այ որ աղաղակէ առ Հրէայսն և ասէ՝ “Եթէ ոչ խորամտիցէք, այլ գայցէք առ իս խոտորնակի և թիւր մտօք, գնացից և ես ընդ ձեզ խոտորնակի „. ըստ ձեր կերպարանաց կերպարանիմ, և ընդ ձերոց օրինակի օրինակիմ ։ Եթէ միով կողմամբ հայիք ընդ իս և միւսով կողմամբ անփոյթ առնէք, ընկալջիք և դուք ըստ նմին օրինակի զհատուցումն առ յինէն ։ Ոչ ի եթէ կոչէք զիս տէր և ոչ առնէք զոր ասեմն, որպէս կոչեցից զձեզ և ոչ համարեցայց 'ի ժառանգս ։ Եւ այս առաւել քաղցրութեան նորա է, որ յառաջագոյն զիտէ ըղկամս, և ոչ ըստ կանխագիտութեանն դատի, այլ կըշտամբէ փորձութեամբք, զի մի ըստ իշխանութեանն[1] տանջիցէ, այլ ըստ վաստակոց երախտեացն հաւասարամիտ լինի ։ Եթէ եկիցէք առ իս խոտորնակի, եկից և ես առ ձեզ բարկութեամբ խոտորնակի ։ Եւ թէպէտ և ըստ հատուցմանէ[2] տանջանացն որ ոչ էր ձաւեալ և ասացեալ, վասն ընդ բազում ամենայն երախտեաց ածութեանն պարտ էր նոցա ամաչել, և զարթուցանել յամենայնի զմիտսն 'ի վեր անդ ։

Ո՞ ոք զիւրև շրջեալ հայեսցի և ոչ գտանիցէ յամենայնի զերախտիս պարգևաց նորա. ո՞չ 'ի գործ ապաքէն նորա լուսովն լուսաւորիմք. ո՞չ 'ի գործոյ նոյնպէս և նորա գիշերովք դադարեմք. ո՞չ նորա սերմամբք կերակրիմք. ո՞չ 'ի նորա աղբերացն ըմպեմք. ո՞չ 'ի նմանէ կեամք ագուռս[3]. ո՞չ տուեալ 'ի նմանէ վայելեմք. ո՞չ առ 'ի նըմանէ զխորհուրդս տկարութեան մերոյ մնուցիչս և կերակրիչս գտաք զարուեստս. ո՞չ նորա անասնօքն ծառայիմք. ո՞չ նորա կենդանի անասնօքն զենեալ վայե-

1 Երկու օր. իշխանութեանն ։ նորին ոչ էր ։
2 Մի օր. ըստ հատուցման դատելո-
3 Մի օր. օգտակ... ո՞չ ձեռնէ ։

լեալք. ոչ 'ի յերկիր որ 'ի նմանէ ելեալ՝ կրեալք. ոչ 'ի նորա հօտից ազատեալք պատուհասմունս. ոչ յանցուցեալքն՝ նորա աղօթամատութեամբն սիրեալք: Որչափ մեծ կամ փոքր կարօտութիւն մեզ յայն զի սիրեսցի մերով մասամբք սիրով, կամ ով կարիցէ զառաքելական պատուիրն պատմել բանիւք, կամ այժմ կամ առ յապա որ լինելոց իցեմք: Ոք որ տեսանիս՝ անչափ և անբաւ է, և որ 'ի ծածուկն՝ յոյժ մեծութիւն է. զի քան զերևելի տեսութիւնս[1] տէրունականն չէ նուազ որ 'ի ծածուկն է: Որչափ հիւանդաց 'ի ծածուկ բազում անգամ զայս մեծ բժիշկ. քանի՞ նեղութիւնս զաղտնիս ցրէ 'ի ծածուկ. քանիցս անգամ ճանապարհորդաց 'ի ծածուկ յարձակեցան դևքն 'ի վերայ նոցա, և հալածեալք փախստական եղեն աներևութ տէրունական շնորհօքն, և օգնեալք և զօգնութիւնն ոչ իմացան: Բազում անգամ և որ խոր 'ի քուն կային՝ երբեմն երթեալ մերձենայր բանսարկուն և զենուլ առնէր հեղձուցանել, և զսանայր անդրէն յետս անդարձ: Այս անաղարտ[2] չարութեանն անպատում օգնականութեան նորա կարծեալ և արգելեալ[3], յիրաւի է պատուէրս այս առ առաքեալսն որ աղաղակէ թէ "Սիրեսցես զտէր ԱԾ քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ": Ամենեցեան զմեզ յանուանէ սիրեաց յառաջագոյն, և պատուէր ետ մեզ զնմանն սիրել. քանզի սէր ծածկէ զբազմութիւն յանցանաց: Այլ մեծ առաքեալն Պօղոս եցոյց՝ եթէ 'ի հաւատոյն և 'ի մարգարէութեանցն և 'ի վկայութեանցն և 'ի լեզուաց շնորհացն սէր ոչ ունելով, ոչ ինչ մեծամեծս գործեցեր*:

Դժուար ես, ասէ, սուրբ հոգւոյն և անգամ Քրիստոսի, և չէ պարտ զդժուար հոգւոյն սրբոյ և զանգամ

1 Օրինակ մի [illegible]:
2 Մի օր. [illegible]. [illegible]:
3 Երկու օր. [illegible]:
* Ցայս [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] ԼԱ. Բազում ինչ է որ կրէ [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] 'ի [illegible] ԺԸ. և [illegible] Այլ [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ես, [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]:

՚Ի՞նչ առնել անդամ պոռնկի, քաւ լիցի. զի գրեալ է. «Պատուական է ամուսնութիւն և սուրբ են անկողինք սոցա, բայց պղծունն և զպոռնիկն դատի ած»: Որդ զերծիր յորոգայթից յայսմանէ և մի՛ լինիր ցանկասէր, այլ փափագեա երկնաւորին. զի ոչ է պարտ սիրողացն զՔրիստոս զերկնից արքայութիւնն և զուրախութիւնն արհամարհել վասն ունչիս այսորիկ և առօրեայ անցաւորիս: Զի՞նչ, ասէ, չարչարանք ժամանակիս համեմատ հանդերձեալ փառացն և անբաւ բարութեանցն և անձառելի կենացն պայծառութեան զոր ակն ոչ ետես, զոր ոչ ոք կարէ բանիւ ցուցանել զանբաւ բարութեանցն վայելումն զոր պատրաստեաց ած սիրելեաց իւրոց, զայն զանձառելի և զանբաւ: Դու թէ թագաւոր լեալ էիր ամենայն երկրի որ ընդ արեգակամբս են, և իշխան ծովու և ցամաքի, պարտ էր քեզ զայն ամենայն արհամարհել և ՚ի բաց ընկենուլ վասն երկնից արքայութեանն, զի ոչ համեմատի անցաւորս ընդ մշտնջենաւորն. թող թէ սիրտ միայն կակղել և ՚ի չար սովորութեանց հրաժարել և լսել պատուիրանացն այ:

Այլ արդ մի՛ լիցի ձեզ, եղբարք, զթիկունս դարձուցանել յայսմանէ, որ յակնարկելն իւրում դողացուցանէ զանդունդս: Ահա այսօր է, և վաղիւ մեռանել ունիմք. պարտ է երկնչել ՚ի սոսկալի բեմէն և յահեղ դիմաց դատաւորին: Այլ մի՛ կարծեր թէ ներումն ինչ լինիցի մեղօք վախճանելոյն, որ զմեղուցեալ հրեշտակն լուսաւորային կապանօք արկանէ ՚ի տարտարոսն՝ պահեալ յօրն դատաստանի, որ յաշակերտն Յուդա ՚ի մեղուցեալն ոչ խնայեաց, այլ ընդ սատանայի դատապարտեաց: Իսկ արդարքն դողան յաւուր յայնմիկ յահեղ դիմաց դատաւորին. «Եթէ արդարքն հազիւ ապրին, ամբարիշտքն և մեղաւորքն ու՞ր գտանիցին». և զի՞նչ կատարած մեղաւորացն որ ոչ հնազանդեցան այ հրամանին: Մեծ դողումն է, ով սիրելիք, զի ոչ թէ ընդ գործոցն միայն են պատիժք, այլ և դատարկ բանից և անդէպ խորհրդոց են պատիժք և պահանջումն: «Որ ասէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի գեհենին»: Ո՛չ ՚թէ փոքր համարելոյ մեղացն այնքան պատիժս պատուհասի է, իսկ վասն մեծամեծացն զի՞նչ պարտ է

Digitized by Google

տանել: Որդ. զարհուրեաց յահէն յայնմանէ, ով սիրելի, յորժամ երկիրս ամենայն հրայրեաց լինի և հրդեհեալ հալին ամենայն արարածք:

Նոյնպէս և զարհուրիրս հոգւոյն մեղուցելոյ յաւուրն վախճանին, և զդողումն անըմբերելի յահեղ դիմաց եկելոց պահանջողաց ոգւոցն. յորժամ կերպարանք մեղացն եկեալ կայցէ առաջի, և նա ցանկայ ապաշխարել, և չէ ժամանակ. կամի խոստովանել, երկնչի և դողայ. կարկի լեզուն. կամի առնել ողորմութիւն, և չէ ուէր ընչիցն. զի մեռելոցն մեռեալ են և ինչքն, դատարկ են և անշահ: Զայս ամենայն խնայեալ 'ի միտս իւր կածի և ողբայ և ոչ ինչ օգտի. այլ ստիպեալ հանեն զոգին 'ի մարմնոյն զազրալի մեղօք և խայտառականօք. զոր պարտ է այսօր ածել զմտաւ, զահեղ տագնապ աղէտիցն յիշել և զարհուրել, երկնչել և դողալ, և հնազանդել պատուիրանացն նոյ:

Նոյնպէս և զահագին օր ահեղ դատաստանին, յորժամ հնչումն փողոյն տագնապաւ և ահեղ բարբառ հրեշտակապետին զարհուրեցուցանէ զտիեզերս ամենայն, և զօրք հրեշտակաց յերկնից յերկիր ծաւալին, և զարքայն Քրիստոս եկեալ տեսանեմք և նստեալ յաթոռ դատողական, և աշխարհս ամենայն ժողովեալ 'ի տիեզերական հրապարակին, և ածեալ կացուցանեն զմեղաւորսն միգապատեալ առաջի աշխարհատես հրապարակին՝ առակ և ծանակ ամօթալից յահեղ դիմաց դատաւորին: Սոսկան դողալով ոսկերք մեղուցելոցն, դողայ մարմինն և կարկամի բերանն և կցի լեզուն 'ի քիմսն առ ոչ կարել տալ պատասխանի վասն անօրէնութեան գործոցն:

Որդ ած զմտաւ զահեղ արհաւիրս աւուրն այնորիկ, և մի ինչ ընդդէմ կամացն նոյ առներ, զի մի ընդ դատապարտսն պատժիցիս, որ յետ սակաւլի աւուրն մատնին տանջանաց, զոր մի կարծիցես եթէ իբրև զառակ տանջանարանքս է զոր թագաւորք երկրաւորք ածեն 'ի վերայ մահապարտաց: Այլ անդ է դառն լալումն և չարաչար կսկիծ և աղեխարշանք, յորդել գետոցն հրեղինաց որ հոսին 'ի վերայ, հալին և մաշին մեղաւորացն մարմինքն 'ի տարտարոսն և յաննշմ խաւարն 'ի մէջ որդանցն թունաւորաց, զոր ոչ ոք կարէ բաւել պատմե-

րանս աղէտիցն և անհներելի տանջանացն պատմել ։ Ոի եթէ աշխարհ ամենայն ողբային մեծապէս՝ փայտք և քարինք 'ի ձայն աղէտի և ողորմ աշխարանաց, ոչ կարէին արժանապէս ողբալ զայնոսիկ, սգալ որ այնմ չարչարանաց և դառն մահու մատնին. զոր պարտ է ամենեն ածել զմտաւ, յիշել և զարհուրել, և զգուշութեամբ անցանել ընդ սահմանավրէժ և ընդ ալիս ծփանաց մեղսաւէր կենաց աշխարհիս ։

Ոի անբաւ են յաւիտենականքն, ով սիրելիք, և պատիր և երազք են երկրաւորքս և տկարագոյնք քան զսարդոստայն ։ Ահա այսօր է և վաղիւն ոչ ևս երևի տեղի նորա. զի երկուց աւուրց են կեանք աշխարհիս, և անբաւ են յաւիտենականքն, և տանջանքն անսպառ և ամօթն ահեղ ։ Ահա այլ երկիր կայ անցանելոյ և ըղտէրն փառաց տեսանելոյ. սերտիւ զմիտս մեր քննեսցուք և ամենեն սրբեսցուք, զի յետ սակաւ աւուրց անդ եմք երթալոց առ ահեղ և անխաբելի Թագաւորն, որում գաղտնիքն մեր յայտնի են նմա և խորհուրդք մեր յանդիմանս, և ոչ ինչ ծածկի 'ի ճշմարտատես քննողէն ։

Արդ երկիր յահեղ դատաւորէն. մի՛ յերկար և աներևոյթ նետիւք թշնամեացն վիրաւորիր, և չար 'ի վերայ չարի յաւելուր, և յանկարծակի վախճանն քո հասանէ ։ Փութա մերձենալ առ Տէր, և Տէր մերձեսցի առ քեզ ։ Ոի գող է որ մահուն, գուցէ հասանիցէ քեզ տարաժամ. « Արթուն լերուք, ասէ տէրն, զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն », որ հասանէ յանկարծակի յորժամ ակն ոչ ունիս, և անկանի 'ի վերայ քո որպէս զորոգայթ ։ Երկիր յօրէն յայնմանէ, և փութա զղջացիր զոր գործեցեր մինչև մերձ է ժամանակս. մի՛ տրպաւորիր յերկրաւորս, զի 'ի մօտոյ փոխելոց եմք յերկնաւոր քաղաքն, և զոր ժողովեսդ՝ աստէն յաշխարհի մնայ. զի ոչ ինչ բերաք յաշխարհ և ոչ տանել կարասցուք, մերկ եկաք յաշխարհ և մերկ երթալոց եմք ։ Զմտաւ ած զերկիւղ աւուրն այնորիկ, և մի մոռանար զհուրն որ ոչ շիջանի. փութա մեկնել 'ի ձախակողմանեն, և Տէր լինի ընդ աջմէ քումմէ ։ Ի ձեռ հոգւոյն սըրբոյ պատուիրանին, և լուիցէ քեզ տէր յաւուր դատաստանին. յիշեա զի գան դատաստանք յետ յարու-

Digitized by Google

թեան և խնդիրք ամենայն գործոց, և հնազանդեա երկիւղիւ աստուածային պատուիրանացն. զմտաւ ած զը-մեղաց քոց բազմութիւն, և զսակաւն աւուրք մի՛ ապա-հանջեր. հայեաց 'ի կեանս աշխարհիս որ ստուեր է, և երկիր 'ի սակաւուկ բերմէն և փութա զած հաշտեցուցանել. հան և հալածեա 'ի քէն զհոգեկորուստ խոր-հուրդն սատանայի, զի վարձս առցես զարքայութիւնն այ բովանդակ 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

## ՅԱՂԱԳՍ ՆԵՐՈՒՄՆ

Աղօթեսցուք հանապազ զտիւ և զգիշեր և սպա-սեսցուք փրկչին որ գայ նա 'ի դատել զերկիր. սակս են նեղութիւնքս զոր պատրաստեալ է որոց յառաջ ժամանակաւ մինչ գնայ նա յերկրէ, և ոչ անարգու-թեամբ՝ այլ 'ի վերուստ յերկնից և հրաշալի փառօք. ոչ է նա արդ կալեալ Պիղատոսի առաջի, այլ անձամբ փա-ռօք գայ 'ի դատել զերկիրս: Նման նմին խօսի նախան-ձայոյզն Եղիա և բարեգութն Ենովք ընդ ազգի մարդ-կան. լինի յաւուրսն յայնոսիկ սով սաստիկ և մեծ նե-ղութիւն՝ որպէս ոչ եղև 'ի սկզբանէ աշխարհի. և թէ փրկիչն իսկ ասաց զայնմ նեղութենէ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ՝ ոչ կարէր ապրել ամենայն մարմին. այլ վասն ընտրելոցն կարճեսցին վտանգաւոր աւուրքն, զի մի լիցի յաւէտ սրբոցն չարչարանքն: Յայնժամ սա-զարշի երկիր 'ի մեռելոցն հոտոց՝ որ յամենայն կողմանս նեխեալ ապականին զազրանան ամենայն գէմք երե-սաց մարդկան 'ի նեղութենէ սովոյ և ծարաւոյ. ոսկի և արծաթ և գոյնագոյն պատմուճանք անկեալ դնին յա-ւուր յայնմիկ և ոչ ումեք օգնեն. մեռանին անողորմ ծերք և երիտասարդք և մարք ոչ օգնեն ծննդոց իւ-րեանց. ոչ պակասէ լալիւն 'ի հրապարակաց և 'ի տանց վասն սաստիկ չարեաց որ պաշարեսցեն զերկիրս. առա-յիշէ երկիր զգործն աղտեղութեան որ յամենայն ժա-մանակս գործեցաւ 'ի նմա, յայնժամ ասէ նեղեալն աղէ ժողովուրդն ասեն 'ի ձայնս մեղաւորութեանն. սոր

մեզ օգնութիւն 'ի նեղութեան մեծի, զի մի տրտմեալ լիցուք առ հասարակ ամենայնիւք. նա ոչ օգնել ինչ կարէ և ոչ զօրել, այլ քանիւք պարտէ զնոսա և մնասի յուսով 'ի նմին ժամու ընթանեալ լինին սուրբքն 'ի ձեռս պղծոյն՝ որ կամի զնոսա պատրանօք խաբել. և յորժամ ոչ հաւանին նուա պատրանաց նորա՝ ապա սպանանէ զնոսա առաջի բազմաց. խնդութիւն լինի մարգարէիցն սոցա 'ի տեսանել զմահ ճշմարիտ սրբոցն, գոչմամբ մեծաւ ասէ միշտայն ամենեցուն. տեսէք ժողովուրդք զօրութիւն իմ մեծ. զի որք 'ի բազում ամաց անմահ լեալ էին՝ ոչ կարացին ապրել 'ի զօրութեանցս իմոց. ոչ ոք կարէ յաղթել զօրութեանս իմում, և ոչ թագաւո ունեք է յերեսաց իմոց. և մինչ նա զայս խօսի 'ի լսելիս բազմաց, յանկարծակի լինի շարժումն ահեղ որոտման. 'ի նմին ժամուն խաւարեալ մաշին դողմամբ պաշտմունք միշտայլին 'ի յահէ սաստիկ գոչմանն: Որք 'ի հրէաստանի իցեն՝ նոքա փախիցեն 'ի լերինս, և որ 'ի տանիսն կայցեն՝ մի դարձցին 'ի տուն արագապէս. յայնժամ երևի յերկինս անճառելի փառօքն թագաւորն Քրիստոս, գալարին երկինք յահէ փառացնորա, և լերինք հալին իբրև զմոմ 'ի հրոյ. գետ մթագոյն և հրեղէն հոսի 'ի վերուստ 'ի վայր մաքրելով զերկիր յանօրէնութեանցս իւրոց., լուսափայլմամբ երևի նշանն արքունական 'ի զօրացուցանել զապաւինեալս 'ի նա. նա է պարծանք արդարոց, նոյն գովութիւնք սրբոցն, զի կապեցին զանձինս իւրեանց 'ի սէր նորա. թողին զմերձաւորս, թողին զմեծութիւնս, և ընկալան զնա ընդ ամենայնի. նովաւ ըղձերն ծանեան, նովիմբ անմահացան և դասակից եղեն վերին զուարթնոցն. գայ նա 'ի դատել զոչ դրոշմեալս նովաւ, քանզի ոչ ծանեան զնա յաշխարհ յիմարութեամբն իւրեանց. ոչ կարացին ճանաչել զարքունական նշանն թէ նա է փայտ կենաց և յաղթութեան նշան. վասն այնորիկ կոծին անմխիթար ոգով, որ արարածք ամենայն 'ի տեսանել զնոսա անհնարին սասանումն և դողումն լինի, զի շարժին ամենայն զօրութիւնք երկնից. դողումն և սասանումն ընդ տիեզերս լինի, և որոտմանց բոմբիւնք 'ի գալստեան նորա փառացն. առաջի հրեշտակապետացն ընթանան բազմապայծառ գնդիւք, վերինն զօրականօք. փող սաստիկ հնչմամբ գոչէ 'ի գերեզ-

մանս արիք մեռեալք 'ի հողոյ ընդ առաջ երկնաւոր Թագաւորին, արիք տեսէք զՔրիստոս զերկնաւոր փեսայն զի եկն եհաս հայրենի փառօք. արիք տեսէք զնշանն յաղթութեան նորա եւ զպահանջումն հակառակամարտին. արիք ամենեքեան արդարք եւ մեղաւորք եւ ընկալարուք զհատուցումն ձեր: Լսեն ընդարմացեալքն եւ նորոգին հողացեալքն եւ զգենուն փութապէս զանանցանական մարմինն. եթէ գազան զոք եկեր եւ թէ ձուկն յօշեաց՝ ոչ պակասէ մազ մի 'ի ժամուն յայնմիկ. քանզի որ զԱդամն յարոյց ահաւոր ձայնիւ, նոյն զօրութիւն ազդմամբ ժողովեսցէ զամենայն. ապա յառնեն մեղաւորքն բոտուերագոյն մարմնով, քանզի ներկեալ լինի գունով գործոց չարեաց: Յառաջագոյն եւս յառնեն պայծառ մարմնով ընտրեալքն եւ բարձրանան յերկրէ լուսեղէն ամպովք. Աբէլ առաջին որ եւ յառաջ խոկ մեռաւն՝ ամբարձեալ լինի 'ի հանդիպումն տեառն. Հարցանեն յայնժամ զմիմեանս ապա վերին զօրութիւնքն եթէ ոյք են սոքա որ գան երամովքն. եւ զարմացեալք լինին տեսլեամբ ընդ միմեանս եթէ զի՞նչ բարի է սոցա գործեալ յերկրի. զուարճացեալք իմն են եւ լուսափայլ մարմնով եւ ունին նշան բարի յանձինս իւրեանց: Ապա խօսի տէրն մեր ընդ զօրութիւնսն վերինս, եթէ սոքա ծառայքն իմ են եւ բարեկիր զինուորք. զանձինս իւրեանց ուրացան եւ մեկնեցան յերկրէ եւ ելին 'ի խաչ վասն սիրոյ իմոյ. եւ արդ ես տամ նոցա զոր պատրաստեալ է իմ զուրախութիւնն անապական եւ զանանցութեան: Ապա եւ զայլսեն հրեշտակապետքն 'ի տեառնէ, ձայնաշեն զուարթուն եւ ուրախական անդէն. ասէ ցնոսա՝ դուք էք օրհնեալք տեառն, արդ ուրախ լերուք յուրախութեան ձերում: Եւ 'ի նստել անմահին յաթոռ փառաց իւրոց՝ դողութեամբ հրեշտակք սպասաւորեն նմա. յառաջ կապի սատանայն առանց հարցափորձի, եւ ընկենու 'ի վիհ մեծի տարտարոսի. չարայլուկ կապին եւ զօրք նորա ձախողք որ մարտակիցք եղեն գործոց աղանդեղութեան. ոչ արժան է նմա 'ի դատաստանն մտանել՝ զի չէք պատասխանի առաջի Քրիստոսի: Անդէն մեկնեալ լինին Թագաւորին առաջի երկու ժողովուրդք պարտաւորացն եւ արդարոցն. կան 'ի յաջմէ նորա սուրբքն բարի յուսով, եւ յահեկէ մեծ ամօթով մեղաւորքն. անդ ասէ 'ի նոսա

դատաստանաւ գրեալն, և ապահանձեալն անաչառ ըստ իւ-
րաքանչիւր գործոց: Ահաւոր է ժամն և դատաստանն ա-
հեղ, զի չիք աչառութիւն անդ դատաւորին. ոչ որ կա-
րէ ապաւինել՝ և ոչ օգնել որ կարէ ընկերի իւրում 'ի
վտանգից իւրոց: Ահ և երկիւղ դողմանն ունի զամենե-
սեան եթէ զինչ արդեօք հատուցումն լինիցի անձին.
ատեանն նստեալ լինի և դպրութիւնք բանին, յանդի-
մանել զամենայն գործսն իւրաքանչիւր. կային զօրանն
խորձկուն և ընկենուն 'ի հուր որ ոչ շիջանի: Ոմանց
դրունք փակին յուրախութենէ հարսանեացն, և արտաքոյ
ձգեալ մնացեալ կուսանքն. հնչէ յականջս նոցա ձայն
ապախտութեան մեծի հարսանեացն ասացի նոքայն ան-
կան բաղում հառաչանօք արտասուալից տրտմեք: Այն-
մեա եթէ տեսցես զուրախութիւնս զայն, և ոչ լինի ինձ
խնդիր տեսանել նոցա. քանզի ոչ վառեցին զողորմու-
թեան լապտերսն, իսկոյն լսեն զահաւոր բարբառն ե-
թէ երթայք յինէն ես ոչ ծանեայ զձեզ: Ընդունայն
եղև նոցա ձայնել 'ի դրանն, և սնոտի վառատուկք կուսու-
թեան իւրեանց, առանց ձիթոյ գնացեալն յերանելեաց դրանն՝ և ոչ
մերձենայ խաւար արտաքոյ նոցա: Յաւէտ քան զայսուիկ
ընծայէ թագաւորն զախորժելս այնոցիկ արժանաւորացն
ասելով՝ եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք
զարքայութիւն որ պատրաստեալ է ձեզ 'ի սկզբանէ աշխար-
հի. փոխանակ նեղութեան ձերոյ ընկալարուք հանգիստ՝ և
ընդ տրտմութեան ձերոյ ուրախ լերուք ընդ իս. այս [illegible]
պտուղք են ջանութեանց ձերոց և այս ճաշակ քաղցրու-
թեան բաղում չարչարանացն վասն սիրոյն իմոյ: Ըն-
դունեցէք զփոխարէնս, և ուրացարուք վասն իմ զանձինս
ձեր. ժամանակեայ էին կարիքն և անպական ուրախու-
թիւնն զոր գտանիցէք ձեզ յաւիտենից յայսմիկ. Ե-
կայք առէք 'ի ձեզ զփոխարէնս սիրոյն զոր նուիրեցէք
զաւարթատեսս սիրով, խաղաղութիւն առաւելք ընդ ա-
մենեսեան և վասն այնորիկ կոչեցարուք իմ որդիք. ըն-
տանեցարուք սիրոյ սուրբ 'ի նենգութենէ, վասն այնորիկ
առ իս մերձեցարուք: Ո՜ինչ ինչ հեշտալի կացցէ քան
զայն ձայնն լսել՝ հարկաւոր բարբառն տուաղի վերին
զօրականացն: Հրեշտակապետացն ամենայն դաղութե-
լի՝ կան շուրջ զթագաւորաւն, իսկ երանեալքն և սուրբքն
ընտանեցեալք յինելեան և երկրպագեն փառաց թագա-



Digitized by Google

ւորին. պայծառանան յանձինս բուռով փառացն նորա, և փնծան յուսով ՚ի վաստակս խրատուց. ընծն և յանձնամ և ուղղն զառաքելոյ քարոզան եթէ երթայք յինէն անպատուհք ՚ի պատերազմաւոր ամենչանան, ընդ փափկու- թեանց ձերոց և ընդ անհոգութեանցն պատրաստե- ցէք որդւանցն անմահականաց, անզէն ընկալարուք զաս- տուածութիւնն ձեր. և ոչ պարապէք թոշակ ասուսս պտղի զարծաթն իմ և զոսկին և զմնալոց և զզեղեցիկ զար- դուցն, կառուցէք անձանց առ ՚ի կենդանին Հօրս. զգե- ցէք զխոնարհն և տարանէք զարդարն և ոչ ծանուրուք զիմս մեղացն ձերոց. քանզի քաղցեալ և ոչ եւսսք հա- ւատել, և ոչ զզօանալուքեալն զոհացուցէք զծարաւ. ոչ ըն- Հիւանդն անսէք և ոչ զբանտարգեալն, և ոչ զզգեցու- րուք զմերկս անձանց ձերոց, առաքեցի առ ձեզ զամուր մարգարէսն իմ թէ զարձարուք առ իս և ոչ լուայք նոցա. սաստն և տառապեալքն եթէ և մեք ամենեքեան քարոզեցաք եթէ ապաշխարեցէք և ոչ լուան զգոա. զա- ցանէ և որդի զգեստ բեհեզացն և զխոցուածն կողին զոր ընկալաւ յանձն իւր. սակ՝ եւ զայս ամենայն վասն ձեր կրեցի զի դուք զարձջիք ՚ի մեղաց ձերոց. դուք ամենե- քեան ոչ դարձեցէք զսուսս իմ, այլ փութացարուք ՚ի մեղս խոստանացիւր. և արդ երթայք յինէն ՚ի խաւա- րայլին Հուրն որ չիք ձանձանչ լուսոյ և ոչ շիջումն այր- մանն: Ընդէն կարգեալ մարտնսին և կարգեալ միջոյ անսկզբնութիւն քաղցրութիւնքն յանձնեալքն ամենչանան առաջ- նոյ երկրի զօրականացն. և զգեցեալ լինէին զթանձրամած խաւարն և խաւչին իւրև զխաշն լալով և ողբալով, և ոչ լինէ օգուտ լինէր ՚ի քաղում աշխատութեանն: Զայն- ժամ փայլեն արդարքն իբրև զարեգակն և զաստղա- նան յուրախութեան խրատուց զանազանեալ փառօքն, Հրճուելոյ ՚ի պարս սրբոցն, և մերձ բնակին ՚ի Համբերս մեծին՝ ՚ի խորանի Հոգեխռաւն սիրով վառեալ ՚ի զգոյշ- ութիւն, և պատրաստանան անմահական պարգևաց. նորանայ երկին և նորագի երկիր, և ոչ եւս լինի անդ աշխատու- թիւն քրտանց. ոչ է անդ օձն խաբող, և ոչ կինն պատ- րող, այլ ծառքն անթառամք և քաղցրութեան պա- տուղք. մերձեալ են անտի քրտինք և աշխատութիւնք, այլ փափկութիւն և Համապատ ուրախութիւն, անբա- սուեր փառօք և անմահ զգեստուք զարդարեալ լինին

պայծառացեալ զարդուք։ Մանկունք իբրեւ զարեգական փայլեն եւ ծանունք իբրեւ զլուսին, եւ աստղ քան զաստղ առաւել է փառօք․ զանազանեալ լինելին կերպարանք եւ բազմապատկեալ զարդք փառաց նոցա։ Արարչագործ լինելին մարմնաւորացն պատիւք եւ պատուանիչք խորհրդոց, եւ անդ շուշանազարդ կուսանքն պաճուճին․ վասն զի այլ փառք արեգականն եւ այլ փառք լուսնի, եւ այլազանեալ պարծանաց փայլէ․ Նոյնպէս լինելոց է ՚ի յարութեանն աղօթից, քանզի բազում է անդ օթեւանք որդոցն․ Հոտ խնկոց եւ խաղող բուրէ յամենեցունց եւ անուշահոտութիւն ՚ի խորանն սրբութեան․ ՚ի դալարի վայրի է բնակութիւն նոցա, եւ ընդերձի շայեկան նորոգութիւն նոցա․ արտաքին նոքա ՚ի լերլեան սուրբ, եւ ուրախանան յԱստուածայեղն վերլին․ Հոտ մի լինի անդ եւ մի հովիւ ճշմարիտ, եւ ընդ միով ածով պահպանեալք լինին։ Որք այսու հետեւ միրեկք զգուշասցուք ամենայն եւ պատրաստեսցուք թօշակ Ճանապարհին եւ խեղ ամենայնք բարձցուք . . .

## ՎԱՍՆ ՄԻՒՍԱՆԳԱՄ ԳԱԼՍՏԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Որք փոխեն երկինք եւ եղիցին երկինք նոր, եւ փառքն այն իբրեւ ստուեր անցանէ, իբրեւ երազ եղծանի մեծութիւնն, եւ ոչ ուրեք գտանի երկրաւոր համարձակութիւն․ որ եւ աստեղք իբրեւ զտերեւ յերկնից անկանին, եւ ամենայն իբրեւ զծուխ անցանէ, եւ ոչ ումեք կարեն օգնել, ոչ հայր որդւոյ եւ ոչ մայր դստեր, ոչ այր կնոջ եւ ոչ կին առն, ոչ ծառայ տեառն․ ոչ մեծութիւն ժողովելելոց, ոչ ոսկի եւ ոչ արծաթ, ոչ հանդերձ պատուականք, ոչ տաճարք գեղազարդեալք, ոչ գեղք, ոչ բազմութիւն ընչից․ այլ մեր գործքս եթէ բարի լինի եւ եթէ չար։ Այլ բացցի նոր երկինք եւ նոր երկիր, եւ ահաւասիկ որդի մդ̄ գայ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք, եւ իջանէ յԱստուածաղէմ եւ ՚ի Սիոն անբաւ։ Այլ զնի երկնաւորական աթոռ՝ երկնաւորական աշակերտացն․ եւ նա որպէս փայլակն ծագի յարեւելից, եւ երեւի մինչեւ ՚ի մուտս արեւու․ եւ յահէ

նոցա և 'ի տառապանաց նոցա երկինք խորին. ընծայա-
ղաւթ գալարոյն . հրեշտակք դողան , և երկիր շարժի .
լեռինք ծխին , և ամենայն արարածք խոնարհեալ եր-
րին : Գետոք հրեղէնք պատրաստեալ են և տանջանս մե-
ղաւորաց . և որդանց բացեալ զերախս խորխոց ծարա-
ւեն արեանց մեղաւորաց . խաւարին ճանճանչ լուսոյ ոչ
ունի սխրելի . 'ի տարտարոսն ջերմութիւն ոչ գտանի : Անդ
հայեցարուք 'ի յարհաւիրսն յայնոսիկ զոր հրեշտակք
որ ընդ ոչ մեղան՝ դողան 'ի յաւուրն յայնմիկ . ու-
րեմն ահ տագնապ անձանց մեղաւորաց 'ի յաւուրն յայն-
միկ , որ է սոսկալի : Յայնժամ երկիցէ կրճկել ատամանց
և լալումն և ողբումն դառնադունս , և մի ոք առ աջօք կար-
ծիցէ զդատաստանն և յիրաւի զտանջանս : Անդ 'ի յա-
ւուրն յայնմիկ ոչ է այլ ուրեք մարմինք՝ և ոչ այլ ա-
րեք շունչք , այլ միաբան մարմինք և շունչք և հոգիք
կայ առաջի ատենին , ուր գիրք բացեալ , դատաւորն ա-
նաչառ , դատաստանն անփոփոխելի . և 'ի բազում փա-
ռաց զամենեսեան յանուանէ կոչէ . և ամենեքեան կա-
լոց եմք առաջի ահաւոր բեմին . ոչ է անդ աւել բան
ճառամտութեան , և ոչ յաղթել իրաւամբք սուտին , ոչ
է անդ լեզու տալ պատասխանի , ոչ է անդ պատարա-
գօք զոք հաշտեցուցանել . այլ գործք միայն ընտրու-
թեան , և ամենայն ոք զիւր բեռն բառնալոց է : Անդ
ծերութեան ոչ ոք հաւատայ , անդ իշխանութիւն ոչ
պատուի , անդ երևելիք ոչ երևին , անդ աղքատին
մարմնոյ ոչ է խնդիր , անդ մեծն և փոքրն առ հասարակ
դատին : Նա և որդիք դատապարտեն զծնողս իւրեանց .
զի թէ ոք ծնցի որդիս և ոչ հաւասար սնուցէ , և ըղ-
'միւսն ունայն արձակեացէ , կամ զմինն սիրեացէ և ըղ-
միւսն ատիցէ՝ առնլոց է պատիժս . կամ առանց խրա-
ւանց 'ի բաց ընկէց զիւր անդամսն , կամ թէ չէր մե-
ղուցեալ և գոն եհար . վասն այնորիկ յանդիմանելոց
են զծնողսն իւրեանց : Մի՛ կարծէք եթէ մեծախնդրու-
թիւնքն այսպիսի իցեն անդ որպէս երկրաւորիս . քան-
զի աշխարհիս այսորիկ դատաւորքս տեսեն , եթէ արժան
է ծնողաց զամենայն ինչ առնել ընդ որդիս եթէ չար
և եթէ բարի : Այլ ամենայն ինչ մարթի առ Պաւղոս ,
այլ ոչ եթէ ամենայն ինչ մարթի և օգուտ է : Այլ և
կացցէ ծառայ առաջի տեառն իւրոյ , և ազատին զսի-

Digitized by Google

նաջէ իւրմէ, և աշակերտն յառաջ քան զվարդապետն, և ամենեքեան սոքա կալոց են առաջի ահաւոր դատաւորին, ուր իւրաքանչիւր գործք յայտնեսցին. վասն այնորիկ առաքեալն Պաւղոս զայս պատուիրէ ասելով ամենեցուն. “Որդիք հնազանդ լերուք, ասէ, 'ի տէր. հարք մի զայրացուցանէք զորդիս ձեր. ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց. տեարք հաւասարութիւն պահեցէք 'ի վերայ ծառայից ձերոց, գիտասջիք զի ձեր և նոցա տէր գոյ յերկինս. զի ամենեքեան կալոց եմք առաջի ահաւոր դատաւորին„: Երկերուք 'ի յօրէն յայնմանէ, սիրելիք, յորժամ հանդերձէ հովիւն մեկնել զոգիսն 'ի յայծեացն, և կացուսցէ զոգիսն ընդ աջմէ իւրմէ, և զայծիսն ընդ ձախմէ, և ասէ ընդ այնոսիկ որ ընդ աջմէն իցեն. “Եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի, զի քաղցեայ և ետուք ինձ ուտել, ծարաւի և արբուցէք ինձ, հիւանդ էի և 'ի բանտի՝ եկիք առ իս„: Արդ ած զմտաւ զզօրութիւն արդարոց, որ կան առաջի հրեշտակաց առաքելոց և մարգարէից, և տէրն ասէ. “Եկայք օրհնեալք հօր իմոյ„: Արդ դու ով մարդ, զի կաս որ զայս լսես՝ բաշխեա զինչս քո աղքատաց, զի որ աղքատին տայ՝ զայն տեառն տայ. որպէս և ասէ, եթէ ումեք արարէք 'ի փոքրկանցս յայսցանէ՝ զայն ինձ արարէք. զի որ կերակրէ զաղքատն՝ զՔրիստոս կերակրէ, նոյնպէս և որ հալածեն զաղքատն զինքն զՔրիստոս հալածեն. վասն այնորիկ կացուցանէ զնոսա ըստ ձախմէ իւրմէ. և որպէս նոքա հալածեցին զաղքատս, նոյն օրինակի հալածեսցէ զնոսա՝ երթայք յինէն անիծեալք 'ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց և կրճել ատամանց: Արդ ած զմտաւ, ով Թշուառական, որ առաջի տիեզերական հրապարակին յանդիմանիս. ուր բիւրք բիւրոց հրեշտակաց, գունդք մարտիրոսաց, և դասք առաքելոց և մարգարէից և անթիւ բազմութիւն. անդ քննին աշխարհս ամ: Եւ ասիցէ դատաւորն. “Երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենից զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա, զի քաղցեայ և ոչ ետուք ինձ ուտել, ծարաւի և ոչ արբուցէք ինձ, մերկ էի և ոչ զգեցուցէք ինձ, հիւանդ էի և ոչ ողորմեցայք ինձ: Արդ զինչ պատասխանիս, ով Թշուա-



Digitized by Google

ռականն, զի հասարի զպատճառս քո, ոչ ունիս պատասխանի և ոչ մի ինչ ասել. եթէ ասացեալ էր միայն քեզ, եթէ հաց ոչ տասջ ինձ ուտել, ունէիր ասել եթէ հաց ոչ ունէի. հաց ոչ էիր և ջուր ոչ, և յարկս անգամ ոչ ունիս արգելք, նա և ոտս ոչ ունիս երթալ 'ի տես հիւանդաց, և որք 'ի նեղութեան էին մշտակից լինել նեղելոցն. արդ ոչ ունիս պատասխանի և ոչ մի։ Նաև գտանես մի հարկանել զնա լեզուաւ քո. զի եթէ օգնես ոչ կարօտելոցն, սակայն մի տար նոցա ժամանակ հեծել 'ի վերայ քո, քանզի հեծութեան նոցա վաղվաղակի լսէ Տր. զի այնչափ արդարոց աղօթիցն լսէ Տր, որչափ աղքատին. զի աղքատն ոչ զոք ունի իւր պաշտպան, զի վասն չքաւորութե չգարշի 'ի նմանէ. նա և իւր ընտանիքն ատեն զաղքատն, և ազգականքն անտես առնեն, բարեկամքն չհային 'ի նա, դրացիքն ծաղր առնեն, ամենայն ուրեք արհամարհեալ են, և ամենայն ուրեք անօգնականն է, բայց միայն զՏր իւր օգնական. վասն այնորիկ լսէ նմա Տր և հատուցանէ այնոցիկ որ լլկեն զնոսա։ Գիտէր մարգարէն Դաւիթ եթէ վաղվաղակի լսէ նոցա Տր և ասէ. ծանեայ զի առնես տէր դատաստան աղքատին և իրաւունս տնանկին, և զկապեալն իւր ոչ արհամարհեաց։ Արդ գիտելով զայս ամենայն սիրելիք, մի տար ժամանակ հեծել զքէն առ Տր. եթէ ունիս հաց՝ տուր, և թէ այլ ինչ որ զտկարութիւն նորա մխիթարէ՝ մի արգելուր, և եթէ ոչ՝ սակայն աղերս բանիւք զմիտս նորա հաճեցո։ Զգուշեա մի տրտմել ընդ նմա, աղօթս մատո 'ի վերայ նորա. զի թէպէտ և 'ի քեզ է թերևս, այլ մեղէն գտցեն մխիթարութիւն, և եթէ առնես զայս առաւել քան զայնոսիկ որ արծաթ և ոսկի տան՝ շահեցար զվարձս։ Մեծ երախտիք են սիրելիք, ոչ այնպէս առաքինին քաւէ զմեղս՝ որպէս ողորմածութիւն, և ոչ մի առաքինութիւն հաւասարէ նմա։ Վասն այնորիկ աստուածային գիրն ասէ, թէ որ ողորմին աղքատին փոխ տայ Աստուծոյ։ Արդ յորժամ փոխ տաս, նա յորժամ վճարել կամի զպարտսն՝ եթէ հնար լինի՝ զերեսս քո ոչ կարէ տեսանել. այլ առաջի Այ ոչ է այդպէս, այլ որ աղքատին տայ Տր իւր կոչէ, և ձեռնատու լինի հաճեալ։ Ո փոխն զոր տուր աղքատին, փութայ լուծանել զերաշխաւորութիւնս

Digitized by Google

քո, և ոչ լոկ հատուցանէ, այլ բազում պատուով և բազում օրհնութեամբ. ոչ միայն զպարտսն լուծանէ և 'ի բաց մերժէ զոր ետուր աղքատին, այլ յառաջ կոչէ և ժառանգակից իւր առնէ. «Եկայք, ասէ, օրհնեալք Հօր իմոյ ժառանգեցէք զարքայութիւն զոր պատրաստեալ է ձեզ յառաջ քան զաշխարհս». յորժամ դու զաղքատն ընդ յարկաւ քո մուծանէիր, ես զարքայութիւնն պատրաստէի քեզ. յորժամ դու հիւանդաց և որք 'ի բանտի էին այց առնէիր, մի՞ կարծէիր եթէ ես անտես առնէի. այլ 'ի խնարհ առնէիր զողորմածութիւնն և յերկինս առաջի իմ գտանէր այն ամ։ Քանզի ասէր հրեշտակն ցԿոռնելիոս. ասէ՝ աղօթք քո և ողորմութիւն քո ելին առաջի իմ։ Եւ զինչ արարին և զինչ պատրաստեցին ողորմածութիւնքն. իբրև զբարի կարապետ, զի յորժամ ելանիցես 'ի մարմնոյդ մի հոգար եթէ անտեղեակ ինչ իցես օթևանիցն, զի նոքին իսկ տանուտէրքն ընդ առաջ ելանեն քեզ և ասեն, բարի և հաւատարիմ ծառայ մուտ յուրախութիւն տեառն քո, զի քաղցեայ և ետուք ինձ ուտել, ծարաւի և արբուցէք ինձ, մերկ էի և զգեցուցէք զիս, հիւանդ էի և 'ի բանտի և եկիք առ իս։ Տեսանե՞ս ողորմածութեան զմեծութիւն, զի ոչ մի առաքինութիւն հաւասարէ նմա։ Ոչ եթէ վասն իմ կուսութիւն պահեցէք, վասն իմ պահս պահեցէք, վասն իմ աղօթս արարէք. բայց միայն զայս ասէ եթէ քաղցեայ և ետուք ինձ ուտել։ Մեծ է կուսութիւն և այլ առաքինութիւնք, բայց քան զողորմածութիւն նուազ գտանի. պահեցին և զկուսութիւն հինգ կուսանքն, բայց յիմարս անուանեցան, զի ձէթ ոչ ունէին և ողորմածութիւն ոչ արարին, վասն այնորիկ արտաքս մնացին առագաստին, և փակեցաւ դուռնն իսկ. յիմարքն զկուսութիւնն միայն պահեցին, հանդերձ պահօք և աղօթիւք համարէին զանձինս իւրեանց եթէ այսու ամենայնիւ մտցուք յարքայութիւնն, ասէ ցնոսա տէրն՝ 'ի բաց կացէք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական, ոչ գիտեմ զձեզ. ասեն և նոքա. ընդէ՞ր տէր, ո՞չ վասն քո մեծի խորշակի համբերեցաք, և զկուսութիւնս պահեցաք։ Այո, ասէ, զկուսութիւն պահեցէք, գիտեմ ես, բայց աղքատին ոչ ողորմեցայք. յորժամ աղքատն զդուռն բաբախէր, երկիւղիւ և դո-

ըմխանձայնեաւ աղերսէր՝ ողորմեա ինձ, 'ի սովոյս ապակա-
նիմ, 'ի սովոյս մաշիմ, սիրտ իմ ծարաւ 'ի բանջարոյս,
աչք իմ 'ի ծփանս կան, չկալով հաց՝ մարմինս դողայ,
ատամունքս բախբախեն, և երեսս խորշոմեալ են, և
ամենայն մարմինս խորտակեալ 'ի ցրտոյս. արդ ողորմեա
ինձ։ Զայս ամենայն լսէիր և անտես առնէիր։ Արդ
զի՞նչ է ինձ եթէ զկարօտութիւնդ արհեցեր. այսպիսի
աղերս մատուցանէր քեզ, և ողբայր զայս անձինն խո-
րոյ, նա և զգութս ոչ բացեր նմա, և ոչ ողորմեցար ազ-
գականին քո. վասն այսորիկ փակեցան ընդդէմ քո դը-
րունք արքայութեան. 'ի բաց կացէք, ոչ գիտեմ զձեզ.
վասն այնորիկ յիմարք անուանեցան, զի զմեծն արա-
րին, և 'ի փոքրէն յաղթահարեցան։ Զոր օրինակ
ճրագ որ լուցանէ և ձէթ ոչ արկանիցէ, ո՞չ ապաքէն
զխուրաւ շիջանի։ Նոյնպէս և կուսութիւն շիջանի եթէ
ոչ ձիթովն ողորմութեան կերակրեսցես։ Որպէս եթէ
տնկեաց ոք ծառ բարի և ջուր ոչ տացէ 'ի կարեւոր ժա-
մու՝ թառամի և պտուղ ոչ տացէ, ո՞չ ապաքէն հատա-
նի և 'ի հուր այրի. այսպէս և կուսութիւն եթէ ոչ ձի-
թովն ողորմութեան ոռոգանիցէ թառամեալ է։ Նաև
յորժամ զարգանաս դու գնել հանդերձս պատուա-
կանս կամ այլ ինչ մարմնական, ո՞չ ապաքէն առնես
զարծաթն և երթաս 'ի ճանապարհ հեռի, և աշխա-
տութեամբ համբերես և 'ի խորշակի տօթս, և քաղ-
ցնուս և ծարաւես և տեսես ամենայնի, և հազիւ եթէ
կարես գիւտել կամաց քոց. և եթէ կարես գիւտել, ոչ
եթէ քանց դու կամիս՝ նա տայ քեզ որ վաճառէն, այլ
քանց իւր հաճոյ լինի. երդնուս դու ոչ գնեմ այդչափ
ծանրագնոյ, երդնու նա ոչ տամ այդքանոյ պակաս, և
լինի 'ի մէջ ձեր նախ մեղք, և ապա վաճառն։ Որպէս
և Սողոմոն ասէ, եթէ 'ի մէջ տուրեւառ վաճառացն մտ-
անէն մեղաց. հարկ է միանգամ սուտ երդնուլ, նաև ար-
դեօք երկաքեանն. զի բնաւ ոչ որ վաճառէն 'ի միում բանի
կայ, և ոչ որ գնէն. քանզի որ վաճառէն մեծու ասէ և
փոքու վաճառէ, և որ գնէն փոքու ասէ և մեծու գնէ.
և այնչափ մեծի աշխատութեամբ ստանաս, ոչ գիտես
եթէ պիտեսցի, զի մինչև 'ի քո տուն հասանել իցէ՝ մե-
ռանի եթէ անասուն լինի, և կամ կորնչի և կամ ան-
պիտան ինչ դիպեսցի եթէ հանդերձ լինի, և լինի կը-

Digitized by Google

կրեն աշխատութիւն։ Իսկ վասն արքայութեանն երկնից ոչ կրես այդպիսի աշխատութիւն, ոչ ճանապարհ երթալ, ոչ խորշակ որ լքանէ, ոչ ստիպումն 'ի ցրտոյ, ոչ կասկած 'ի գողոց և ոչ այլ ինչ այսպիսի, այլ նստիս 'ի ներքնատան՝ գայ աղքատն և վաճառէ զարքայութիւն և զդրախտն. տուր հանդերձիկ ինչ մաշածոյ, և առ զարքայութիւնն ա̃յ, և ոչ ինչ խնդրէ 'ի քէն շատ, զի մի զաղքատութիւն 'ի մէջ բերիցես. քանզի և կամիս գնեա զարքայութիւնն և զդրախտն. զկամելն միայն խնդրէ 'ի քէն ա̃ծ. տուր հացիկ, տուր բաժակ մի ջուր ցուրտ, տուր զինչ և կամիս, միայն գնեա զարքայութիւնն։ Նմանող լեր այրւոյն այնմիկ որ զջուրն եառ, և զարքայութիւն երկնից ժառանգեաց։ Եւ դարձեալ միւս օրինակ որ յաւետարանին յիշեցաւ, որ ինչ ոչ ունէր՝ բայց միայն երկու 'հարէժս, այսինքն երկու դանկ արծաթոյ, և զայն էարկ 'ի յաղքատանոցն և ժառանգեաց զարքայութիւնն։ Ոչ եթէ բազում ինչս աք ծախէ յաղքատն և գնէ զարքայութիւն երկնից, այլ անձն ողորմած և սիրտ յօժարական. տուր ասէ սակաւ ինչ աղքատին յօժար սրտիւ և սիրով, և ունիս պարտական զա̃ծ. զի որ ողորմի աղքատին, փոխ տայ ա̃յ։ Իսկ երբ հատուցանէ զփոխն զոր առնու. յորժամ աստ բաշխես զինչս քո, և այդու երթաս մերկ զամենայն ինչ մատակարարեալ, և նա որ փոխն էառ ընդ յառաջ գայ քեզ, և գոհութեամբ հատուցանէ և բազում օրհնութեամբ. բարի և հաւատարիմ ծառայ ասէ, մուտ յուրախութիւն տեառն քո. այլ և բազմեցուցէ և անցեալ պաշտեսցէ զնոսա։ Արդ սիրելի յղարկեա յառաջ զինչս քո, և ապա դու գնաս զկնի, մի մնար ատուր վախճանին, աներևոյթ են կեանքս, ոչ գիտես եթէ երբ ելանես յաշխարհէս. որպէս գող գիշերի, այնպէս հասանէ մահ 'ի ժամու յորում ոչ գիտես. դու գնաս, և ինչ քո աստ մնայ. և դու ցանկանաս անդր շիթ մի ջրոյ, որ զովացուսցէ զշրթունս քո. և լսես զայն զոր մեծատունն լուաւ. և Քրիստոսի ա̃յ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

# ՑԱՆԿ

## ՃԱՌԻՑ Ի ՀԱՏՈՐԻՍ


| | | յորն հատոր | էջ |
|---|---|---|---|
| Հատուածք Գործոց մեկնութեան | 569 | Թ. | 1 |
| Հատուածք Յովհաննու մեկնութեան | 579 | Ը. | 1 |


### ԵՐԿԲԱՅԱԿԱՆ ՃԱՌՔ


| | | | |
|---|---|---|---|
| Դարձեալ Հերովդիայ [illegible] | 613 | Ը. | 1* |
| Յորժամ [illegible] | 621 | ԺԳ. | 250 |
| Ամենայն [illegible] | 630 | Ը. | 236* |
| Դարձեալ [illegible] | 634 | Բ. | 797 |
| Որք 'ի [illegible] | 640 | Զ. | 604 |
| [illegible] | 647 | Զ. | 607 |
| [illegible] | 654 | Ե. | 572 |
| [illegible], 'ի [illegible] | 672 | Ե. | 566 |
| [illegible] 'ի [illegible] | 676 | Ա. | 820 |
| [illegible] | 684 | Ը. | 33* |
| [illegible] | 694 | Ը. | 177* |
| [illegible] | 716 | Ժ. | 824 |
| [illegible] | 726 | Զ. | 544ա |
| [illegible] | 734 | Ժ. | 823 |
| [illegible] | 739 | | |
| Յորժամ [illegible] | 744 | Ը. | 45* |
| [illegible] | 750 | Ը. | 207* |
| [illegible] | 757 | Գ. | 780 |
| [illegible] | 762 | Բ. | 820 |
| [illegible] | 770 | Թ. | 806 |
| [illegible] | 783 | Թ. | 854 |


* [illegible] 'ի նոյն հատորն [illegible] են :

Digitized by Google

## ԱՆԲՆԱԳԻՐՔ


Հրաշալի է մեզ տեսս այսօր . . . . . . . . 792
Աստուածաղարդէից տերանց զօրհնութիւն . . 826
Օրհնեալ է նա, ահա և յերկրէ տանեղը . . . 841
Ցեա այսօրիկ տան էր Հրէից և եւ Ցճատւ . . . 848
Սովորութիւն է աշխարհական երածշտութեանց . 854
Ցորժամ երկնատարդնեփր, ազդրա էր . . . 861
Գիտեմք հաւատարտակեան և տանց մերոցս . . 864
Օրէնք են զքնուսրաց յայն կողմն խոնարհեցու-
ցանել . . . . . . . . . . . . . . 870
Ի զանազան երանգս գունոց ծաղկանց . . . 876
Եկն Քրիստոս եհաս Ճանապարհ հարգելով . . 880
Բարեաց են համբերութեան պտուղք . . . . 883
Զողորմութիւն ոյ և զմարդասիրութիւն . . . 892
Ցորժամ զտխրական ձմեռն . . . . . . . . 897
Վաստակք և ջանք տաժանքն վարդապետաց եղեն . 902
Աղօթեսցուք հանապազ զտիւ և զգիշեր . . . 910
Արդ փոխանին երկինք և կայցեն երկինք նոր . . 915


Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

THE BORROWER WILL BE CHAR
AN OVERDUE FEE IF THIS BOOK IS
RETURNED TO THE LIBRARY ON
BEFORE THE LAST DATE STAM
BELOW. NON-RECEIPT OF OVER
NOTICES DOES NOT EXEMPT
BORROWER FROM OVERDUE FEES.

JUN 14 1982 ILL
7370582

Digitized by Google

Widener Library
3 2044 079 354 262
Google